

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԳՈՐԾԱԾ ՈՏԻՐԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները
Օսմանյան կայսրությունում

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
ԵՎ ԶՈՂԵՐԻ ԱՆՄԱՐ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գիրքը տպագրվում է
«Ժիրայր Նիշանյան հիմնադրամի» մեկենասությամբ
"Jerair Nishanian Foundation" (ԱՄՆ)

Գիրքը թարգմանվել և հրատարակության
է հանձնվել հեղինակի՝ դր. Թաներ Աքչամի
արտոնությամբ:

9(47.925)
Նհ-98

ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ
ԳՈՐԾԱԾ ՈՃԻՐԸ
ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՍ

5099

Հայոց ցեղասպանությունը
և էթնիկ գտումները
Օսմանյան կայսրությունում

ԵՐԵՎԱՆ

2015



ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3
Ե 859

ՍՄԾԸՅ ԴԺՄՅՈ

(ՀՏԴ.ԳԿ)Ե
ՅԲ-ԿՆ

Ե 859 ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԳՈՐԾԱԾ ՈՃԻՐԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ
ԴԵՄ.- ԵՐ.: ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, 2014.- 632 էջ:

Թարգմանեց՝
Հասմիկ Հարությունյանը

Խմբագիր՝
Վրթանես Ա. Քին. Գալայճյան

Սրբագրիչ՝
Անահիտ Հարությունյան

«Տիգրան Մեծ»
հրատարակչություն

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3

Ծան. Սույն գրքի հայերեն թագմանությունն ու հրատարակումը հնարավոր են դարձնել Ժիրայր Նշանյան հիմնադրամի շնորհիվ, հեղինակի՝ Թաներ Աբչամի անսխչական արտոնությամբ: Վերահրատարակումները կարող են կատարվել միայն Հիմնադրամի թույլտվությամբ: Գրքի չարտոնված վերահրատարակումները կդիտվեն իբրև հեղինակային իրավունքի համապատասխան օրենքների խախտում: Հարկ եղած դեպքում տեղեկությունների համար կապվեցեք Tagvor@jertag.com:

ԳՐԱՆՄԱՌՈՒԹՅՈՒՆ

Գրքի ներածություն	5
Գրքի ներածությունը բաժանելի և անբաժանելի հարաբերակցություններով	10
Հարաբերակցություններ	15
1 Չափանիշի ստրուկտուրայի և նրանից կախվածության հարցը	17
2 Անալոգիայի միաստորությունը	37
3 Չափանիշի ստրուկտուրայի և նրանից կախվածության հարցը	47
4 Անալոգիայի միաստորությունը	51
5 Անալոգիայի միաստորությունը	123
6 Անալոգիայի միաստորությունը	196
7 Անալոգիայի միաստորությունը	254
8 Անալոգիայի միաստորությունը	284
9 Անալոգիայի միաստորությունը	314
10 Անալոգիայի միաստորությունը	331
11 Անալոգիայի միաստորությունը	356
12 Անալոգիայի միաստորությունը	377

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	ix
Օսմանյան թուրքերեն բառերի և անունների արտասանության ուղեցույց	xliiii
Հապավումներ	xlv
1 Օսմանյան աղբյուրները և նրանց գտնվածության հարցը	3
2 Անատոլիայի միատարրացման ծրագիրը	37
3 Բալկանյան պատերազմների հետևանքները և Արևելյան Թրակիայի ու Էգեյանի առափնյա շրջանների «պարպումը» 1913-14 թթ.	80
4 Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության՝ հույների նկատմամբ օսմանյան քաղաքականության փոխակերպումը	123
5 Հակահայ քաղաքականության սկզբնական փուլը	157
6 Վերջնական քայլեր որոշման կայացման գործընթացում	196
7 Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը և բնաջնջման մտադրությունը	254
8 Ժողովրդագրական քաղաքականությունը և հայերի բնաջնջումը	284
9 Ուժացում, քրիստոնյա երեխաների հավատափոխումն ու բռնի ամուսնացումը	354
10 Հայերից բռնագրավված գույքի հարցը	420
11 Թուրքիայի կողմից ցեղասպանության պաշտոնական ժխտման որոշ փաստարկեր և օսմանյան ներքին գործերի նախարարության փաստաթղթերը	458
12 Վերջաբանի փոխարեն	551
Օգտագործված գրականության ընտրանի	556
Անվանական և առարկայական ցանկ	573

ԿՈՑՈՒՄՆԱՆԿԸ

xi	մեղսագրք	
iii	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	0
xix	Հատկություն	
3	Մեղսագրքի մասին	1
37	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	5
69	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	3
121	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	4
151	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	2
190	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	6
191	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	7
192	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	8
193	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	9
194	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	10
195	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	11
196	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	12
197	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	13
198	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	14
199	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	15
200	Իրանում և Իրանի մեղսագրքի մասին	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օսմանյան պետության վախճանը մեկ գործողությամբ դրանա էր, որը տևեց մեկ դար, ուր փոփոխվում էին դերակատարները և, սակայն, կրկին ու կրկին վերարտադրում միևնույն տեսարանները: Մեծ կայսրության փլուզումից հետո ազգային ու կրոնական տարբեր խմբեր միմյանց հերթափոխելով նրա կրճատվող բեմահարթակին պայքարեցին իրենց անկախության համար՝ բնակչության բոնի տեղահանությունների, կոտորածների ու էթնիկ զտումների ֆոնի վրա:

Օսմանյան պետությունը, որը ժամանակակից մեծ կայսրություններից վերջինն էր, իր համար երկարաձիգ տասնիններորդ դար մուտք գործեց՝ քարշ տալով Բյուզանդիայի ժառանգությունը, սակայն արդիականացման միջոցներից զուրկ: Առանց քաղաքական ու սոցիալական հարկ եղած կառույցների և ազգ-պետության հանրային համերաշխության, «մահմեդական երրորդ Հռոմն» այլևս չէր կարողանում շաղկապել իր լայնածավալ տարածքում բնակվող զանազան ժողովուրդների խմբերը²:

«Նախ բախվում ես սահմանների հարցին», գրում է ֆրանսիացի պատմաբան Ֆերնանդ Բրուդելը: «Մնացած ամեն բան բխում է դրանից: Սահման գծելու համար անհրաժեշտ է այն սահմանել, հասկանալ այն և վերաստեղծել դրա նշանակությունը»³: Օսմանյան կայսրության համար տասնիններորդ և քսաներորդ դարերը այն դարերն էին, որոնց ընթացքում որոնվել են այդ հարցերի պատասխանները, իսկ պատասխաններն արնաշաղախ էին:

Դժվար չէ հասկանալ պատճառը: Ազգ-պետության տրամաբանությունը ծայրագույնս հակասում է կայսրության տրամաբանությանը: Մինչ կայսրությունը, ըստ երևույթի սահմանման, ընդգրկում է մի շարք տարածքներ և տարբեր ժողովուրդներ, ազգ-պետությունը

1 Iber Ortaylı, İmparatorlugun En Uzun Yüzyılı (Istanbul: Hil Publications, 1983).
 2 Iber Ortaylı, Son-İmparatorluk Osmanlı, 2nd ed. (Istanbul: Timas Publications, 2006), 44.
 3 Մեքերվաժ է ըստ Hagen Schulze, Gibt es überhaupt eine deutsche Geschichte? (Berlin: Corso, bei Siedler, 1989), 20:

սահմանափակվում է հստակորեն զատորոշված երկու՝ աշխարհագրական ու սոցիալական սահմաններով: Աշխարհագրական սահմանները զատում են ֆիզիկական տարածքը, իսկ սոցիալական սահմանները գծագրում են հավաքական, ցանկալի է՝ միատարր ինքնությունը, որն աշխարհագրական սահմաններում միմյանց է կապում բոլոր բնակիչներին: Այսպիսով, ազգ-պետության դարաշրջանը նշանավորեց «մյուսին» սահմանելու նոր մի ժամանակաշրջան:

Օսմանյան կայսրության ազգ-պետության վերածվելուն զուգընթաց ազգային ու կրոնական խմբերը, որոնք մինչ այդ ապրում էին ոչ միայն միևնույն տարածքում, այլև կողք-կողքի՝ միևնույն գյուղերում, սկսեցին պայքարել իրենք իրենց Օսմանյան պետության և իրենց իսկ հարևանների դեմ սահմանելու ուղղությամբ՝ գյուղերից, քաղաքներից և Բալկաններից արևելք ընկած շրջաններից գտելով «դրսեցի» նշանակվածներին: Տասնիններորդ դարում ազգ-պետության կազմավորմանն ուղեկցած գանգվածային բռնությունները ժայթքեցին քսաներորդ դարի առաջին երկու կիսամյակում: Իրարահաջորդ պատերազմներն ու հեղափոխությունները, դաժանորեն ճնշված ապստամբությունները, ազգաբնակչության բռնի փոխանակումները, տեղահանություններն ու էթնիկ գտումները, կոտորածներն ու ցեղասպանությունը՝ մինչ այդ երևակայությունից դուրս մարդկային ապակառուցողականությունը ավարտվեց միայն 1923 թվականին՝ Լոզանի պայմանագրով, որն ապահովեց ժամանակակից Թուրքիայի անկախությունը:

Եվ, սակայն, տարածքային ու հավաքական ինքնության սահմանների վերագծումը բավարար չէր, քանի որ զարգացող ազգ-պետության համար պահանջվում է մի երրորդ գործոն՝ հավաքական հիշողություն, որը միավորում է մյուս երկուսը: Ընդհանուր այդ հիշողությունն ստեղծելու նպատակով նորովի գրվեց նախկին օսմանյան հողերի պատմությունը՝ էթնիկ, կրոնական ու ազգային ողջ բազմազանությամբ, որ կրել են Բալկանների, Միջին Արևելքի ու Կովկասի ժողովուրդները: Սակայն զարմանալիորեն, այս անմիջական անցյալի տարամետ նկարագրությունները կարող են հանգեցվել երկու հակասական թվացող պատմություններից մեկնումեկին: Մեկն այն է, թե ինչպես մեծ տերությունները քանդեցին ու կործանեցին Օսմանյան կայսրությունը՝ գործածելով դրա քրիստոնյա հպատակներին, իսկ մյուսը օսմանյան իշխանությունների իրա-

կանացրած հայաձանքների ու կոտորածների նկարագրությունն է: Այս երկու պատմությունները զարգացել և այսօր շարունակվում են մեզ մրցակից ու փոխբացառող պատմագրություններ:

Առաջին պատմությունն առնչվում է մահմեդական թուրք համայնքներին, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար նույնացան իրենց այլապես կոսմոպոլիտ ու բազմազգ օսմանյան կառավարիչների հետ: Մահմեդական թուրքերն սկսեցին հավատալ, որ իրենց հատկապետությունն իրենք հիմնադրել են Մեծ տերությունների և նրանց դավաճան գործակիցների՝ օսմանյան քրիստոնյաների հետ կենաց ու մահու պայքարի արդյունքում և, որ վերջիններիս միակ նպատակը օսմանյան պետությունն ու մահմեդական թուրքերին աշխարհիս երեսից ջնջելն էր: Այդ պատճառով, դարակցրի առաջին տարիներին, իրենց (օսմանյան) պետությունն անհետացումից փրկելու հրամայականն ամուր հաստատվեց մահմեդական թուրքերի՝ հատկապես իշխանությունների ու մտավորականների մեջ. «Նրանց մեծագույն նպատակն ու մեծագույն մտահոգությունը, նրանց մտածումներն սկիզբն ու վախճանը պետությունը պահպանելն էր»⁴: Ի պատասխան քրիստոնյաների անունից միջամտելու վերաբերյալ տերությունների հայտնած փաստարկման, ասվում էր, որ «Եվրոպայի մարդասիրությունն ու արդարությունը բաղկացած է զուտ կեղծավորությունից [hiyakârlık]»⁵:

Շրջապատող սպառնալիքի պատկերացումը ոչ միայն նպաստեց քրիստոնյաների, հատկապես հայերի կոտորածի ու բնաջնջման հրահրմանը, այլև, հետադարձ հայացքով, նպաստեց ավերածություններն արդարացնելուն՝ իբրև օրինակարգ, ազգային ինքնապաշտպանություն: «Մեկ բան է ասել, թե թուրքերը հայերին սպանել են տարերայնորեն, — գրում է թուրք նշանավոր պատմաբան Յուսուֆ Հիքմետ Բայուրը իր «Թուրքական հեղափոխության պատմությունը» փառահեղ աշխատության մեջ, — և մեկ այլ բան է ասել, թե, երբ հայերը ապստամբեցին, թուրքերը, որոնք գտնվում էին կենաց ու մահու պայքարի փակուղու մեջ, չափազանց մեծ ուժ գործադրեցին և շատ մարդ սպանեցին»⁶:

4 Şerif Mardin, Jön Türkler ve Siyasi Fikirleri (Istanbul: İletişim Publications, 1983), 14.

5 Մեջբերված է նույն տեղից, իթթիհադականների հանդես, 117:

6 Yusuf Hikmet Bayur, Türk İnkılabı Tarihi, vol. 3, part 3 (Ankara: Türk Tarih

«Այս տեղահանության գործը, ինչպես գիտեք, ամբողջ աշխարհն իրարանցման մեջ է գցել և մեզ՝ բոլորիս, իբրև մարդասպան պիտակել», — 1920 թ. նոր խորհրդարանում հայտարարել է մահմեդական թուրք մի պատգամավոր: «Նույնիսկ դա կատարվելուց առաջ մենք գիտեինք, որ քրիստոնյա աշխարհը դա չէր հանդուրժելու և, որ իրենց ցասումն ու ատելությունը դրա պատճառով նրանք մեր դեմ էին ուղղելու: Սակայն, ինչո՞ւ պետք է մենք մեզ մարդասպան կոչենք: Այն բաները, որ արվել են, արվել են մեր հայրենիքի ապագան ապահովելու նպատակով, որը մեզ համար ավելի սուրբ է ու սիրելի, քան մեր իսկ կյանքը»⁷:

Ամեն գնով պետությունը պահպանելու հրամայականն ընդունվեց իբրև պաշտոնական Թուրքիայի քաղաքականության ու պատմագրության հիմք: «Ազգային անվտանգությունը» ոչ միայն բացատրում ու արդարացնում էր անցյալի ցավագին իրադարձությունները, այլև ապագայում օգնելու էր դրա հիման վրա կառուցելու ցեղասպանության ժխտումը: Այդուհետև պատմության բաց ու անկեղծ քննարկումն ընկալվելու էր իբրև պետության մասնատմանը միտված քայքայիչ գործողություն: Նույնիսկ նոր հազարամյակում, Թուրքիայի այն քաղաքացիները, որոնք պահանջում էին պատմության ազնիվ նկարագրություն, դեռևս դիտվում էին իբրև ազգային անվտանգության դեմ սպառնալիքներ, պիտակավորվում իբրև հայրենիքի դավաճաններ կամ օտար թշնամական տերությունների զոհեր և դատում սպառնալիքների թիրախ:

2009 թ. փետրվարին, ծայրահեղ ազգայնական ահաբեկչական Էրզնենկոն կազմակերպության դեմ արշավի ընթացքում, որի անձնակազմը, ենթադրվում էր, բաղկացած էր զինվորական ու պետական ծառայողներից, ոստիկանությունը ձեռք գցեց «Ազգային անվտանգության դավաճաններ» անունով մի թղթապանակ: Այդ «խփելու ցուցակի» մեջ ընդգրկված էին ստամբուլահայ լրագրող Հրանտ Դինքը, որն սպանվեց 2007 թվականին, Նորեյյան մրցանակի դափնեկիր՝ Օրհան Փամուկը և տողերիս հեղինակը⁸:

Kurumu, 1983), 35.

7 Խորհրդարանի գաղտնի նիստին Հասան Ֆեմի քեյի ելույթից, 1920 թ. հոկտեմբերի 17, TBMM Gizli Celse Zabıtları, h. 1 (Ankara: Türkiye İş Bankası Yayınları, 1985), 177:

8 Radikal, 11 February 2009. Էրզնենկոնի մասին ավելի հանգամանալից

Հայերի բնաջնջումն ու դրա ժխտումը «ազգային անվտանգության» նկատմամբ արդարացնելը չի սահմանափակվել քաղաքական շրջանակներով կամ ծայրահեղ ազգայնական կազմակերպություններով, այլ նաև դարձել է թուրքական իրավագիտության հիմքը: 2007 թվականին երկու թուրքահայ լրագրող՝ Սարգիս Սերոբյանն ու սպանված լրագրող Հրանտ Դինքի որդի՝ Արատ Դինքը մեկ տարվա պայմանական ազատազրկման դատապարտվեցին, որովհետև 1915 թ. իրադարձությունների առնչությամբ գործածել էին «ցեղասպանություն» տերմինը: «Ցեղասպանության մասին խոսակցությունը թե՛ Թուրքիայում և թե՛ այլ երկրներում բացասականորեն է անդրադառնում ազգային անվտանգության և ազգային շահի վրա», — հայտարարել էր դատարանը: «Ցեղասպանության հայտը... դարձել է այն հատուկ ծրագրերի մասն ու միջոցը, որոնց նպատակն է Թուրքիայի աշխարհագրական քաղաքական սահմանները փոխելը... և նրա ֆիզիկական ու իրավական կառույցը քանդելու արշավը»: Նկատելով, որ Թուրքիայի Հանրապետությունը գտնվում է «ցեղասպանության բանաձևերից կազմված թշնամական դիվանագիտական պաշարման մեջ», որոշումը նախազգուշացնում էր, որ «այդ հայտի ընդունումը հետագա դարերում կարող է հանգեցնել Թուրքիայի Հանրապետության ինքնիշխանության իրավունքները հարցականի տակ դնելուն այն հողերի նկատմամբ, որոնց վրա, ըստ այդ հայտի, կատարվել են այդ իրադարձությունները»: Այն պնդումը, թե 1915 թ. ցեղասպանություն է կատարվել, խոսքի ազատություն չէ, ասում էր դատարանը՝ նկատելով, որ «այս ազատությունների գործածությունը կարող է սահմանափակվել՝ համաձայն այնպիսի նպատակների, որպիսին են ազգային անվտանգությունը, հանրային կարգը, հանրային անվտանգությունը»⁹:

Ամփոփելով, կարելի է ասել, որ, ըստ այդ մտայնության, դժվար է լինելու թուրքական մատենագրության մեջ որևէ հղում գտնել տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած բռնի տեղահանությունների, կոտորածների ու ցեղասպանության վերաբերյալ: Փոխարենը, օսմանյան քրիստոնյա համայնք-

տեղեկությունների համար տե՛ս <http://www.turkishgladio.com/>:

9 Դատարանի որոշում, Շիշլիի շրջանի առաջին ատյանի երկրորդ քրեական դատարան, գործ № 2006/1208, որոշում № 2007/1106, մեղադրական ակտ № 2006/8617:

ները պատկերված են իբրև իմպերիալիստական Մեծ տերությունների խոռվարար գործակալներ, որոնք շարունակաբար դավադրություն են հյուսել պետության դեմ:

Երկրորդ պատմությունն առնչվում է ազգային ու կրոնական փոքրամասնություններ ներկայացնող խմբերին, որոնք այդ նույն ժամանակաշրջանում համակարգված կերպով, թեպետև տարբեր չափերով ու ձևերով, ենթարկվել են բռնությունների: Այս մատենագրությունն առաջնային պլան է բերում տասնիններորդ դարի ընթացքում փոքրամասնությունների կողմից սոցիալական ու քաղաքական իրավունքների որոնումը, որը ժամանակ առ ժամանակ խթանվել է Մեծ տերությունների միջամտություններով: Կայսրության վախճանը դիտվում է իբրև բռնակալ օսմանցիների, այսինքն «թուրքերի» դեմ ազգային ազատագրական պայքարում տեղի ունեցած դրական զարգացում:

Մահմեդական թուրքերի պաշտոնական պատմագրության և ազգային կրոնական այլ խմբերի պատմագրությունների միջև ավելի հստակ հակադրություն չի կարող լինել՝ անկախ նրանից, թե այդ խմբերը հաստատել են ազգ-պետություն, թե՛ ոչ: Առաջինը ողբում է մեծ կայսրության անարդար ավարտը, իսկ երկրորդով ողջունվում է դրա մասնատումն ու վախճանը: Առաջինը Մեծ տերություններին քննադատում է չափից ավելի միջամտության համար, մինչդեռ երկրորդը նրանց մեղադրում է ոչ բավարար միջամտության համար: Երկու ուղղությունների կողմնակիցները մնում են համոզված, որ իրադարձությունների մյուս կողմի մեկնությունն անստույգ է կամ անպատեհ: Սակայն, իրականում օսմանյան պետության վերջին դարի գրականության հանգամանալի գնումը վեր է հանում պատմական այնքան հակադիր տեսակետներ, որքան հակադիր են մանրադրամի երկու երեսները. դրանք նկարագրում են միևնույն իրադարձությունները, սակայն տարբեր դիտակետերից: Մահմեդական թուրք պաշտոնական պատմագրությունն իրեն նույնացնում է պետության անկման հետ, մինչդեռ ազգային կրոնական մյուս խմբերի տարբերակները հակված են կենտրոնանալու այդ գործընթացում իրենց խմբերի կրած տառապանքների վրա: Հետևաբար, զգացվում է այնպիսի պատմագրության անհրաժեշտություն, որն այդ երկու տեսանկյունները կմիավորի մեկ միասնական պատմության մեջ: Այդ ձևով, կոտորածներն ու ցեղասպանությունը կարող են ներկայանալ պատմական լիակատար նշանակալիությամբ:

Այս գիրքն այդ է անում՝ ի մի բերելով նախորդ՝ «Ամոթալի գործողություն» գրքում¹⁰ ներկայացված դատողությունները: Օսմանյան արխիվների մեծապես ընդարձակ ու չիրատարակված, հատկապես 1913 թ. և հետո թվագրված փաստաթղթերով հույս ունեն նոր լույս ափռելու հետզհետե ավելի արմատականացած որոշումների վրա, որոնք հանգեցրին Անատոլիայի էթնիկ գտմանն ու մասնավորապես հայերի ցեղասպանությանը:

1914 թ. և հետագայի օսմանյան արձանագրությունները վճռորոշ դեր ունեն որոշումների կայացման գործընթացն ըմբռնելու հարցում: Դրանցից բացահայտվում է, որ օսմանյան իշխանությունները, վստահ լինելով, որ 1914 թ. փետրվարին ռուսների կողմից ստորագրված հայկական բարենորոգումների համաձայնագիրն առաջնորդելու է կայսրության տարրալուծմանը, վճռական էին այն ամեն գնով կանխելու հարցում: Պատերազմի ժայթքումը սաստկացրեց գոյատևման այս վախը և, հետևաբար, պետությունը փրկելու հրամայականը՝ շրջանառության մեջ դնելով հետզհետե ավելի ու ավելի արմատական քաղաքականություն, որի զագաթնակետը եղավ Անատոլիայից հայերին արմատախիլ անելու արշավը: Հարյուրամյա դրամայի ավարտին մոտենալուն զուգընթաց ազգային անվտանգության մտահոգությունները, մյուս գործոնների հետ միասին, հիմք պատրաստեցին ցեղասպանության համար:

...

Բեմահարթակը բացվեց 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներից անմիջապես հետո, երբ կայսրությունն ամբողջ տասնիններորդ դարի ընթացքում ստիպված էր եղել զիջելու իր տարածքի 60 տոկոսից ավելին, այժմ պետության առջև ծառայած էր նրա մեծագույն կորուստը՝ մի աղետալի ամսից կարճ ժամանակամիջոցում իր եվրոպական հողերի 80 տոկոսից ավելին (և իր եվրոպական մասի ազգաբնակչության գրեթե 70 տոկոսը): Օսմանյան պատմության մեջ վատագույն պարտությունը նաև տեղափոխության էր ենթարկել քաղկանյան մահմեդականների մի հսկա ալիք՝ նրանց շարժելով հարավ-արևելք՝ դեպի Անատոլիա, որը քրիստոնյա մեծաթիվ բնակչության հայրենիքն էր և թե՛ Մեծ տերությունների, թե՛ Օսմանյան կայս-

10 Taner Akçam, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility (New York: Metropolitan Books, 2006).

րության նոր սևեռումը¹¹: Իշխող կուսակցությունը՝ Միություն և առաջադիմություն կումիտեն (այսուհետև՝ ՄԱԿ)¹², սկսել էր մտածել, որ կործանումը մոտ էր: «Անհնար է Անատոլիան փրկել Ռումելիային սպասող ճակատագրից»¹³, — գրում էր ՄԱԿ-ի պաշտոնաթերթ «Թահնիր»: Հատուկ կազմակերպության (Teşkilat-ı Mahsusa, այսուհետև՝ ՀԿ) ակտիվ անդամ Քուշուրբաշի Էշրեֆը պատմել է ՄԱԿ-ի եռապետերից մեկի՝ պաշտպանության նախարար Էնվեր փաշայի հետ 1914թ. փետրվարի 23-ին ունեցած իր խոսակցության մասին¹⁴: Նկարագրելով երկրի կործանման պատկերը՝ Էնվերն ասել է, թե երկրի «ոչ-թուրք տարրերը» (իմա՝ քրիստոնյաները) ցույց են տվել, որ իրենք հակառակ են կայսրության գոյության շարունակությանը: Հետևաբար, պետության փրկությունը կախված էր նրանց դեմ միջոցներ ձեռնարկելուց: Քուշուրբաշի Էշրեֆի խոսքերով, «ոչ-թուրք տարրերը»

11 Մինչև Բալկանյան պատերազմները Օսմանյան կայսրության ու Մեծ տերությունների քաղաքականության մեջ Անատոլիան մեծ կարևորություն չէր ներկայացնում: Այդ տարածքը ռուսական քաղաքականության համար կարևոր դարձավ 1905թ. հետո: Ռուսաստանի ու Մեծ տերությունների քաղաքականության և հայկական բարենորոգումների հարցի մասին ավելի հանգամանալից տես հետևյալ տեղում. Roderic H. Davison, "The Armenian Crisis, 1912-1914," *American Historical Review* 53, №3 (April 1948), 481-505:

12 Այն հարցը, թե այդ կազմակերպությունը պետք է կոչել կումիտե, թե կուսակցություն, բարդ հարց է: Այն հիմնադրվել է իբրև Միություն և առաջադիմություն կումիտե, սակայն 1908թ. հեղափոխությունից հետո, երբ այն խորհրդարանում մեծամասնություն շահեց, ՄԱԿ-ը կազմակերպվեց նաև իբրև քաղաքական կուսակցություն՝ իրականացնելու համար խորհրդարանական իր գործունեությունը: Մինչև 1913թ. կուսակցությունը խորհրդարանում գործեց իբրև կումիտեի իրավական թագուկը, և կուսակցության ու կումիտեի միջև հարաբերությունները կարգավորվում էին հատուկ կանոնադրությամբ: Ըստ այդ համաձայնության, կումիտեն վերին, իսկ կուսակցությունը ստորին մարմին էր: 1913թ. համագումարի ժամանակ կումիտեն վերակազմավորվեց իբրև կուսակցություն, և վերջ տրվեց կուսակցություն-կումիտե երկվությանը: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Tarik Zafer Tunaya, *Türkiye'de Siyasal Partiler*, h. 3, İttihat ve Terakki: Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi (Istanbul: Hürriyet Vakfı Yayınları, 1989), 200-204:

13 Aram Andonian, *Balkan Savaşı* (Istanbul: Aras Yayıncılık, 1999), 227. Ռումելիա անունը գործածվում է՝ սահմանելու համար մոտավորապես այսօրվա Բալկանների տարածքները:

14 Հատուկ կազմակերպության ավելի հանգամանալից քննության համար տես գլուխ 10:

«ներքին ուռուցք էին», որից «ձերբազատվելը» «ազգային կարևորության խնդիր էր»¹⁵:

1912-1913թթ. Բալկանյան պատերազմներում իրենց ջախջախիչ պարտությունից հետո ՄԱԿ-ի առաջնորդները, որոնք աստիճանաբար համոզվում էին, որ օսմանյան քրիստոնյաներին հանդուրժելը հանգեցնելու էր երկրի կործանմանը, քաղաքական մի շարք որոշումներ ընդունեցին, որոնք միտված էին Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացմանը: ՄԱԿ-ի հիմնավորումը բավական պարզ էր և շիտակ: *Կառավարելիության* ու ժողովրդագրության միջև ուղիղ կապ ենթադրելով՝ կուսակցության առաջնորդները մտածում էին, որ օսմանյան պետությունն իր մնացած տարածքների վրա վերահսկողությունը կարող էր պահպանել միայն այն դեպքում, եթե բնակիչների մեծ մասը մահմեդական թուրքեր լինեին: Կառավարելիության նման ընկալումը կարող է համարվել ազգարնակչության մասին տեղեկություններ հավաքելու հսկողական քաղաքականություն՝ նրան իբրև մեկուսի, հավաքական առարկա պատկերացնելու համար: Կառավարելիությունը կարող է նաև հասկացվել իբրև «տեղաշարժ իշխելու նպատակի հարցում, տեղաշարժ տարածքային հասկացությունից զեպի կառավարական հասկացություն: Կառավարական պետությունը ջանում է կառավարել բնակչությանը, այլ ոչ թե սոսկ իշխել տարածքների վրա»¹⁶: Վարչական այս նպատակին հասնելու համար, հետևաբար, Անատոլիայի բնակչությունը պետք է վերակազմավորվեր: Քրիստոնյա բնակչությունը պետք է կրճատվեր, որ նշանակում է՝ հեռացվեր, իսկ ոչ-թուրք մահմեդական խմբերը պետք է ձուլվեին միմյանց:

Գիտության հանդեպ հավատքը կենտրոնական տեղ էր զբաղեցնում ՄԱԿ-ի փիլիսոփայության մեջ: Միություն և առաջադիմություն կումիտեի անդամները բժիշկների պես պետք է բուժեին հասարակության հիվանդությունները՝ հավուր պատշաճի կիրառելով գիտությունը¹⁷: Այս կողմնորոշմանը հավատարիմ՝ նրանց ժողովրդագրական

15 Քուշուրբաշի Էշրեֆի հուշերից, հղված հետևյալ տեղում. Celal Bayar, *Ben de Yazdim*, h. 5 (Istanbul: Baha Matbaası, 1967), 1578:

16 Peter Holquist, "Information Is the Alpha and Omega of Our Work": Bolshevik Surveillance in Its Pan-European Context," *Journal of Modern History* 69, №3 (September 1997), 419.

17 ՄԱԿ-ի վերաբերյալ հավելյալ մանրամասների համար տես Taner Akçam,

քաղաքականությունը բնութագրվել է իբրև «սոցիալական ինժեներություն»¹⁸: Այս մտտեցման արգասիքը 1913 թ. հետո այն բանի իրագործումն էր, ինչը ես անվանում եմ *ժողովրդագրական քաղաքականություն*՝ միտված Անատոլիայի ազգաբնակչության արմատական վերակազմավորմանը: Այդ քաղաքականության նպատակը միայն քրիստոնյաները չէին. այն նշանառության տակ էր վերցրել նաև ոչ-թուրք մահմեդական համայնքներին: Ամեն դեպքում, այդ քաղաքականությունը կիրառվեց տարբեր ձևերով՝ ելնելով տվյալ խմբի կրոնական պատկանելությունից: Քրիստոնյաները պետք է վերացվեին աքսորով կամ կոտորածով: Ոչ-թուրք մահմեդականները, ինչպիսին են քրդերը, արաբներն ու Բալկաններից եկածները (քրիստոնյաների հալածանքներից փախածները) տեղափոխվել էին ու բաշխվել թուրք մեծամասնության մեջ՝ ներծուլվելու համար գերիշխող մշակույթի մեջ: Սույն հատորը մանրամասնորեն վերականգնում է այդ քաղաքականության իրականացումը:

Ներկա հետազոտության հիմնական նյութը «5-ից 10 տոկոսի սկզբունքի» նշանակալիությունն է: Այդ սկզբունքը ժողովրդագրական քաղաքականությունը և մասնավորապես 1915 թ. հայերի ոչնչացումն իրագործելու հիմնաքարն էր: Օրինակ, քրիստոնյաները (հատկապես հայերը) տեղահանվել և այլ շրջաններում էին վերաբնակեցվել այնպես, որ նրանց թիվը տեղական ազգաբնակչության 5-ից 10 տոկոսից չանցներ: Նույն կերպ վերաբնակեցվել և թուրք մահմեդական մեծամասնության մեջ 5-10 տոկոսի սկզբունքով վերաբաշխվել են նաև ոչ-թուրք մահմեդականները¹⁹:

Ինչպես Միություն և առաջադիմություն կոմիտեն հանգեց «կախարդական» այս համամասնությանը: Այն կարծես թե նախապես

A Shameful Act, 47–67:

18 Nesim Şeker, "Demographic Engineering in the Late Ottoman Empire and the Armenians," *Middle Eastern Studies* 43, №3 (2007), 46–474; Ugur Ümit Üngör, "Geographies of Nationalism and Violence: Rethinking Young Turk 'Social Engineering,'" *European Journal of Turkish Studies* 7 (2008), <http://ejts.revues.org/index2583.html>.

19 Այս տեղեկությունից բխում է, որ հայկական բարենորոգումների ծրագրերի (ներառյալ 1890-ականներինը) և ցեղասպանության միջև ավելի սերտ կապ կա, քան ենթադրվել է Հայոց ցեղասպանությամբ զբաղվող գիտնականների կողմից: Ես ուսումնասիրում եմ 1895 և 1913 թթ. բարենորոգումների ծրագրերը և դրանց ազդեցությունը ցեղասպանության վրա:

եղվել է 1890-ականների բարենորոգումների վերաբերյալ խոսակցությունների ընթացքում և 1895 թ. բրիտանացի գնդապետ Վիլիամ Էվերեթի գեկույցի վաղ նախագծի մեջ: Այդ գեկույցի նպատակն էր երկու ծառայել վարչական մի բարեփոխման համար, որը հայերին բոլոր կտար պաշտոններ զբաղեցնել կառավարական այնպիսի գեղատեսչություններում, ինչպիսին էին ժանդարմերիան և ոստիկանությունը²⁰: 1913 թ. հայկական բարենորոգումների վերաբերյալ բանակցությունների վերջին փուլում կողմերը համաձայնել էին Էվերեթի գեկույցը գործածել իբրև բանակցությունների մեկնակետ:

Անատոլիայի էթնիկ նկարագիրը հիմնավորապես փոխակերպվում էր՝ համաձայն ՄԱԿ-ի ժողովրդագրական քաղաքականության: Նախապատերազմական ազգաբնակչությունը (որը 1914 թ. հաշվվում էր մոտավորապես 17,5 միլիոն) հետագա վեց տարվա ընթացքում ամբողջապես փոխվեց, և բնակիչների գրեթե մեկ երրորդը ենթարկվեց վերատեղաբաշխման, աքսորի կամ բնաջնջման:

...

Ժողովրդագրական այս քաղաքականությունը իրականացվեց և ընթացավ ուղղազիծ, ճշգրիտ ու անփոփոխ ձևով: Իրականացման ընթացքի ու մեթոդների զիզգազաձև փոփոխությունները փորձարկվեցին պատերազմի ընթացքի զանազան հանգրվաններում: Մասնավոր հետաքրքրություն են ներկայացնում քաղաքականության տարբերակված կիրառումները, որոնք գործադրվեցին քրիստոնյա երկու համայնքների՝ հույների ու հայերի նկատմամբ:

Թրակիայի և Էգեյանի առափնյա բնակավայրերի օսմանյան հույն բնակիչները հատկապես 1913 և 1914 թթ. ենթարկվում էին կոտորածների և Հունաստան վտարման: Ժամանակակից տերմինաբանությամբ «էթնիկ գտումը» կասեցվեց 1914 թ. նոյեմբերից հետո՝ մասնավորապես Գերմանիայի ճնշման ներքո: Պատերազմի տարիներին օսմանյան հույների նկատմամբ քաղաքականությունը սահմանափակվեց ռազմական անհրաժեշտության թելադրանքով նրանց ծովափնյա շրջաններից դեպի երկրի խորքերը տեղափոխելով: Անատոլիայից հույն ազգաբնակչության վերջին տեղահանումը և հատ-

20 Զեկույցի ամբողջական տեքստի համար տես Fuat Dündar, *Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question (1878–1918)* (New Brunswick, NJ, Transactions, 2010), appendix 3, 178–81:

կապես պոստական հույների ցեղասպանական կոտորածներն ու Հունաստանի հետ բնակչության բռնի փոխանակումը կատարվել են 1923 թ.²¹ Թուրքիայի հանրապետական ժամանակաշրջանում:

Ի հակադրություն օսմանյան հույների, հայերը պատերազմական շրջանում դարձան լիակատար բնաջնջման թիրախ: Տեղահանություններից փրկվածները բռնի կերպով վերաբնակեցվեցին ներկայիս Սիրիայի ու Իրաքի անապատներում, ինչի պատճառով լիովին հայաթափվեց արևելյան Անատոլիայի պատմականորեն հայկական վեց նահանգ: Բոլորովին ոչ պատահականորեն, նշանառության տակ էին վերցվել այն նահանգները, որոնցում, ըստ 1914 թ. փետրվարի Հայկական բարենորոգումների համաձայնության, հայերին թույլատրված էր մասնակցել տեղական կառավարմանը:

Արևմտյան Անատոլիայից ևս հայերի մեծ մասը տեղահանվեց դեպի ներկայիս Սիրիայի ու Իրաքի անապատները, սակայն այստեղ նույնպես քաղաքականությունը տարբեր կերպ իրագործվեց: Հայերին թույլատրվեց որոշակի սահմաններում մնալ այնքան ժամանակ, քանի դեռ նրանց թիվը չէր գերազանցում մահմեդական ազգաբնակչության 5 տոկոսը: Ինչ վերաբերում է Սիրիայում և Իրաքում վերաբնակեցված հայերին, մեծ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ նրանց թիվը չանցներ տեղի մահմեդական ազգաբնակչության 10 տոկոսը:

Ինչ կապ կար ժողովրդագրական քաղաքականության ու ցեղասպանության մտադրության միջև: Ինչո՞ւ հայերի հանդեպ քաղաքականությունը ցեղասպանության ձև ստացավ: Սույն աշխատությունն ամբողջությամբ նվիրված է կարևորագույն այդ հարցերի պատասխանները գտնելուն: Առայժմ միայն ասենք, որ հայերի գանգվածային կոտորածն ինքնին 1913 թվականից ի վեր հույների հանդեպ ուղղված ժողովրդագրական քաղաքականության արգասիքը չէր: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան իշխանությունները, կրած լինելով ռազմական պարտությունների ծանր հետևանքները, սկսեցին վախենալ կայսրության ողջ տարածքը կորցնելու հեռանկարից՝ զարհուրելով այն հնարավորությունից, որ կարող էր կիրառվել 1914 թ. փետրվարի բարենորոգումների համաձայնությունը: Ազգային անվտանգության մտահոգությունն էր, որ հայերի հանդեպ քաղաքականությանը հաղորդեց ցեղասպանության բնույթ: Բարենորոգումների այդ համաձայնությամբ, հայերը հավասար հի-

մանքներով պետք է մասնակցեին ներկայիս Թուրքիայի արևելյան նահանգները կազմող վայրերի (մի տարածք, որը հայտնի է նաև յլթրև պատմական կամ Արևմտյան Հայաստան) տեղական կառավարմանը. վայրեր, ուր հայերը բնակվում էին մեծ խտությամբ: Բարենորոգումների համաձայնության բանակցություններին մասնակցող բոլոր կողմերը գիտեին, որ դա լինելու էր հայկական անկախ պետության սկիզբը:

Բնաջնջման օսմանյան քաղաքականության մեջ միահյուսված էր երկու հիմնական խնդիր. Անատոլիայի ժողովրդագրական վերակառուցումը, ինչն արդեն իսկ ընթացքի մեջ էր հույների առնչությամբ, և 1914 թ. հայկական բարենորոգումների նկատմամբ ունեցած վախը, որը ՄԱԿ անդամների համար գոյության խնդիր էր: Ժողովրդագրական քաղաքականության ու ցեղասպանության միջև կապը այս գրքի առանցքն է: Օսմանյան կայսրության ժողովրդագրական վերակառուցումը և հատկապես դրա 5-10 տոկոսանոց կարգը, կարելի է ասել, սկսեցին այն հիմքը, որի վրա հենվելու էր հայոց ցեղասպանությունը: Հայ մտավորական Տիգրան Քելեզյանը (Տիրան Քելեզյան), որը լավ ծանոթ էր ՄԱԿ-ին և նրա անդամների հետ ընկերություն էր անում, կանխագուշակեց կատարվելիքը՝ 1915 թ. ապրիլի 24-ին իր ձերբակալությունից հետո արած հետևյալ ազդու հայտարարությամբ. «Նրանք պատրաստվում էին հայերի կոտորածներն իրականացնել մաթեմատիկական ճշգրտությամբ»²¹: 50-10 տոկոսի սկզբունքը կարծես մարմնավորում էր մաթեմատիկական այդ ճշգրտությունը:

Հալեպում վերաբնակեցման գրասենյակի պատասխանատու Աբդուլլահադ Նուրին կենտրոնական կառավարությանը 1916 թ. հունվարի 10-ին ուղարկած իր մի հեռագրում անպատկառորեն ամփոփում է այս գրքի հիմնական փաստարկը. «Հարցուփորձ է արվել, և պարզ դարձել, որ ընդհանուր տեղահանման ենթարկված հայերի հազիվ 10 տոկոսն է հասել նրանց համար նշանակված վայրերը. մնացածը մահացել են բնական պատճառներով, ինչպիսին են սովս ու հիվանդությունը: ձեզ տեղեկացնում ենք, որ աշխատում ենք միևնույն արդյունքն ստանալ նրանց նկատմամբ, ովքեր դեռևս ողջ են՝ կիրառելով

21 Aram Andonian, Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed, trans. and ed. Rita Soulahian Kuyumjian (London: Gomidas Institute & Tekeyan Cultural Association, 2010), 160.

խիստ միջոցներ»²²: Միրիայի Դեր Զոր անապատում 1916 թ. ամռանը տեղի ունեցած կոտորածների երկրորդ մեծ ալիքի շարժառիթը կարծես թե հիմնականում ժողովրդագրական մտահոգությունն էր՝ անվտանգության նկատառումների հետ միասին:

Հայերի նկատմամբ օսմանյան կառավարության պատերազմական շրջանի քաղաքականությունը երբեք ռազմական անհրաժեշտության արգասիք չի եղել, ինչպես պնդել է այդ կառավարությունը: Հայերի հանդեպ իրենց միջոցառումները ծրագրելիս իշխանությունները շատ լավ գիտեին, որ այն խնդիրը, որ իրենք ցանկանում էին լուծել, պարզապես պատերազմի արդյունք չէր: Հայերի նկատմամբ քաղաքականությունն իրականում հղացվել, ծրագրվել և գործի է դրվել այսպես կոչված հայկական բարենորոգումների ծրագիրը վերացնելու հստակ մտադրությամբ, ինչը հայկական նահանգներում քաղաքացիական կառավարման համար մեծ լուծ էր: Նույնիսկ պատերազմից առաջ, նշել է ներքին գործերի նախարար և ՄԱԿ-ի եռապետերից մեկը՝ Թալեաթ փաշան, օսմանյան իշխանությունները մոտեցում էին որդեգրել «վերացնելու [այս խնդիրը] բազմակողմանի և բացարձակ կերպով» և այս ուղղությամբ մի շարք նախատեսումներ ու նկատառումներ էին կատարել²³: Այս գրքում ցույց եմ տալիս, թե

22 Aram Andonian, *The Memoirs of Naim Bey* (1920; 2nd repr., Newton Square, PA: Armenian Historical Research Association, 1965), 57–58. Արամ Անտոնյանը հայ լրագրող ու մտավորական էր, որը ենթարկվել էր տեղահանության: 1920 թ. նա Նային բեյ անունով թուրք մի պաշտոնային (որը Հալեպի մի գրասենյակում աշխատել էր հայերի վերաբնակեցման հետ կապված հարցերի վրա) մի քանի հեռագիր է ձեռք բերել, որոնց մեջ կային հայերին սպանելու հրամաններ: Դրանք հրատարակվել են Անտոնյանի գրքում: Պնդումներ են եղել, թե հեռագրերը կեղծ են (Sinasi Orel and Süreyya Yuca, *The Talat Pasha Telegrams: Historical Fact or Armenian Fiction?* [Nicosia: K. Rustem & Brother, 1986]): Այդ փաստաթղթերի իսկության հարցի քննարկումների համար տես Vahakn N. Dadrian, “The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide,” *International Journal of Middle East Studies* 18, №3 (August 1986), 311–36: Վերը նշված Արդուլահադ Նուրիի հեռագրի նման ուրիշ շատ հեռագրեր են տեղ գտել այս գրքում: Ռոստի հարկ եմ համարում վերաբացել Անտոնյանի հրապարակած փաստաթղթերի իսկության վերաբերյալ քննարկումը:

23 “Այս հոգսի լիակատար վերացում այն լուծելով ու կարգավորելով հիմնավորապես»: Թալեաթ փաշայի պաշտոնական հաղորդագրությունը Մեծ վեզիրի գրասենյակ, թվագրված 1915 թ. մայիսի 26: *Ati*, 1920 թ. փետրվարի 24:

ինչպես են ժողովրդագրական քաղաքականությունն ու ազգային անվտանգությունը միահյուսվել այնպես, որ հնարավոր են դարձրել ցեղասպանությունը:

...

Օսմանյան արխիվային աղբյուրների մեջ, որոնց վրա հիմնված է սույն ուսումնասիրությունը, մեծ կշիռ է տրված Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության գրասենյակին ու դրա բաղկացուցիչ միավորներին, ինչպես նաև Ծածկագրերի վարչությանը, որն անկախ միավոր էր: Թեև հույներից ու հայերից բացի քրիստոնյա մյուս բնակիչների նկատմամբ կառավարության ծրագրերն այդ փաստաթղթերում չեն բացահայտվում, որոշ փաստաթղթեր նշում են, որ օսմանյան իշխանությունները տեղեկություններ էին հավաքում մյուս քրիստոնյա խմբերի սոցիալական, քաղաքական ու տնտեսական պայմանների վերաբերյալ²⁴: Օրինակ, համաձայն 1914 թ. մի հեռագրի, երբ պատերազմի բռնկումն ու կայսրության մասնակցությունն այդ պատերազմին դեռևս ստույգ չէին, Ներքին գործերի նախարարությունը Մոսուլի շրջանային գրասենյակից հանգամանակից զեկույց է պահանջել նահանգի նեստորականների վերաբերյալ, որոնց մեջ պետք է լինեին նրանց թվերն ու բաշխվածությունը, նրանց քաղաքական ու սոցիալական ներկա պայմանները և այն քարոզությունը, որին նրանք ենթակա են եղել, ինչպես նաև ապագայում նրանց նկատմամբ կիրառվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր կառավարության տեսակետները²⁵:

Հետագա՝ պատերազմական տարիներին նման հրահանգներ են հեռագրվել նախարարության մեծ թվով նահանգային գրասենյակներ: 1916 թ. սեպտեմբերի 10-ի մի հեռագրում հրամայվում է. «Հավելյալ մեկնաբանություններով զեկույցեք պատերազմից ի վեր ասորիների կեցվածքի մասին կառավարության նկատմամբ, այն տա-

24 Հիմնականում Անատոլիայի Մարդինի, Հաքքարիի ու Դիյարբեքրիի նահանգներում բնակված քրիստոնյա այդ խմբի պատմական մյուս անուններն են «ասորեստանցի», «քաղդեացի», «նեստորական», «ասորի», «սիրիացի»:

25 BOA/DH.ŞFR, №42/263, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության (Emniyet-i Umumiye Müdürlüğü. այսուհետև՝ ԱԳՎ) ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1914 թ. հուլիսի 12:

րածքներն ու շրջանները, ուր գտնվում են նրանք, ինչպես նաև նրանց թվերը, և թե առևտրի ու վաճառականության համար նրանք ճանփորդում են արդյոք դեպի օսմանյան տիրույթի այլ մասերը»²⁶: Այս կացությունը կարելի է դիտել 1919 թ. մայիսի մի փաստաթղթի միջոցով, որով կառավարությունը հարցնում է «նահանգում ասորի ազգաբնակչության թվի մասին, և թե նրանցից քանիսն են տեղահանվել հայերի հետ, և այնտեղ նրանց դրության ու վիճակի մասին»²⁷: Ինչպես երևում է այս փաստաթղթից, կառավարությունը կարծես թե անտեղյակ է, թե հայերի հետ միասին քանի ասորի է տեղահանվել: Հիմնական հարցը սակայն այն է, թե արդյո՞ք ասորիների ու արևելյան Անատոլիայի մյուս քրիստոնյաների հետ այլ կերպ են վարվել, քան հայերի: Ինչպես կարելի է նկատել 1915 թ. դեկտեմբերին արևելյան նահանգներ ուղարկված մի հրամանից, որում ասվում էր, որ «ենթաբաժնում/նահանգում գտնվող ողջ ասորի ժողովրդին տեղահանելու փոխարեն» նրանց պետք է պահել «իրենց ներկա վայրերում», կարելի է պնդել, որ քրիստոնյա այս խմբերի հետ վարվել են որոշ չափով տարբեր կերպ, քան հայերի հետ²⁸: Այնուամենայնիվ, նրանք ենթարկվել են նմանատիպ քաղաքականության և հաճախ ոչնչացվել հայերի հետ կողք-կողքի՝ չնայած հակառակի մասին տրված հաճախակի հրամաններին²⁹:

Վերջապես, այդ ժամանակաշրջանում դիտարկված ազգաբնակչության ոչ բոլոր տեղաշարժերն են լավ սահմանված ու ծրագրված

26 BOA/DH.SFR, № 68/98, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ և Մամուրեթյուպահիզի (Էլազիզ), Դիյարբեքիրի, Բիթլիսի ու Մոսուլի նահանգներ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 23:

27 BOA/DH.SFR, № 87/40, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի, Դիյարբեքիրի, Մոսուլի, Մամուրեթյուպահիզի ու Բիթլիսի նահանգներ և Ուրֆայի գավառ, թվագրված 1919 թ. մայիսի 1:

28 BOA/DH.SFR, № 57/112, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի, Բիթլիսի, Մամուրեթյուպահիզի (Էլազիզ) ու Հալեպի նահանգներ և Ուրֆայի գավառ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 25:

29 Քրիստոնյաների այս խմբի նկատմամբ իրականացված քաղաքականությունը լուսաբանող ժամանակակից և խիստ կարևոր աշխատություն է David Gaunt, *Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I* (Piscataway, NJ, Gorgias Press, 2006):

ներքին սկզբանե: Հատկապես պատերազմի ընթացքում բնակիչները տեղաշարժվում էին բազմաթիվ մասնավոր պատճառներով: Այդպիսի օրինակներից են արևմտյան ու կենտրոնական Անատոլիայում գտնվող մեկ միլիոն մահմեդական գաղթականների վերաբնակեցումը, որոնք փախել էին 1915 թ. առաջացող ռուսական զորամիավորումներից, 1916 թ. վերջերից սկսած ծովափնյա ռազմավարական տարածքներից դեպի Անատոլիայի խորքերը քրիստոնյաների, հատկապես հայերի վերաբնակեցումը զինվորականության պահանջով և Միջագետքում ու Լիբանանում արաբ ընտանիքների տեղահանությունը քաղաքական նպատակներով: Այս իրադարձությունների վերաբերյալ հանգամանակից տեղեկություններ են ամփոփված սույն աշխատության մեջ: Այսպիսով, ես հույս ունեմ արմատապես վերակառուցել օսմանյան պատմության 1913-1918 թթ. շրջանի, ինչպես և Անատոլիայով մեկ ՄԱԿ-ի գործադրած «Էթնիկ գտման» քաղաքականության վերաբերյալ բանավեճի ներկա շրջանակը:

Այս գիրքը կարող է «առաջինը» լինել այն առումով, որ հայերի դեմ ժողովրդագրական քաղաքականությունն ու գործողությունների ցեղասպանական բնույթն այստեղ բացատրվում են օսմանյան արխիվային արձանագրությունների հիման վրա: Գրքում ներկայացված օսմանյան մոտ վեց հարյուր փաստաթղթերի մեծ մասն առաջին անգամ են երևան բերվում: Մասնավորապես հայերի նկատմամբ քաղաքականության նրանց բնաջնջմանը միտված լինելու հանգամանքի ցուցադրումը և այդ փաստարկն ամբողջությամբ օսմանյան արխիվների տվյալների հիման վրա հաստատումը, հուսով եմ, նշանակալի ներդրում կլինեն գոյություն ունեցող գրականության մեջ:

Նյութի կարևորության և աննախադեպ թվով երբեմնի օսմանյան արձանագրությունների քննության պատճառով ես ընտրել եմ նյութը ներկայացնելու որոշ չափով արտասովոր միջոց: Ի տարբերություն պատմության դասական ներկայացման, երբ արխիվային զանազան աղբյուրների լույսի ներքո վերլուծվում է տրված պատմության ժամանակագրությունը, սույն ուսումնասիրությունը կենտրոնական դեր է հատկացնում մեկ աղբյուրի՝ օսմանյան արխիվներին, իբրև հիմք վերականգնելու իրադարձությունների հաջորդականությունն այնպես, ինչպես դրանք դիտվել ու արձանագրվել են կենտրոնական իշ-

խանությունների կողմից: Հարկ եղած դեպքերում, համեմատության համար, ներկայացվում են նաև գերմանական ու ամերիկյան արձանագրություններ, ինչպես նաև հայերի կարծիքները՝ ցույց տալու համար այն հետևողականությունը, որ գտնում ենք բոլոր աղբյուրներում: Այս ժամանակաշրջանի բնությունը կառավարության տեսակետից հարուցում է հարցեր, որոնց ջանացել եմ անդրադառնալ ժամանակագրական կարգով, սակայն իմ մոտեցումն ավելի թեմատիկ է, քան խստորեն պատմողական:

Երկրորդ, ասվածը հաստատելու համար, կրկնվելու վտանգի տակ, ամբողջ ուսումնասիրության մեջ խիստ առատորեն են ներկայացված ապացուցողական արձանագրությունները: Մասնավորապես այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է «ցեղասպանությունը հաստատելուն կամ հերքելուն», հաճախ ցանկություն է առաջանում բացականչելու «էվրիկա. գտա պակասող այն փաստաթուղթը, որը վերջ կդնի բանավեճին»: Եվ սակայն պետք է որ ակնհայտ լինի, որ ոչ մի սոցիալական քաղաքականություն, ներառյալ ցեղասպանությունը, չի կարող ապացուցվել մեկ եզակի փաստաթղթով: Եթե իրականում քաղաքականություն է եղել, ապա այն պետք է ակներև լինի տասնյակ, եթե ոչ հարյուրավոր կամ հազարավոր փաստաթղթերից, և այդ ժամանակաշրջանի փաստաթղթերի ամբողջությունից պետք է օրինաչափորեն նկատելի պատկեր բխի: Այդքան մեծ թվով փաստաթղթեր ներկայացնելով՝ ես փորձել եմ հավաստիանալ հատուկ քաղաքականության գոյության և դրա իրականացման օրինաչափականության մեջ:

Երրորդ, այս աշխատանքով կարելի է հայտարարել, որ վերջապես վերացավ հայոց ցեղասպանությունը հետազոտողների մեջ գոյություն ունեցող տարուն: Մինչև վերջերս առկա էին օսմանյան ու թուրքական պետական արխիվների գնահատման երկու իրարամերժ գնահատականներ: «Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման» համաձայն, հայերի հետ կատարվածը պատերազմի ողբերգական, սակայն չնախատեսված արգասիք էր, և համակարգված սպանությունների դիտավորյալ քաղաքականության հավաստի վկայություն չկա: Այս տեսակետից, նյութի վերաբերյալ հավաստի վկայության միակ աղբյուրը Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվն է: Արտասահմանյան աղբյուրները՝ ամերիկյան, բրիտանական, գերմանական ու ավստրիական, ինչպես նաև Ստամբուլի ռազմական տրի-

բուսալի ներքին դատավարությունները մեկդի են դրվում՝ իբրև իրապարծությունների աղճատում քաղաքական շարժառիթներով:

Իրան հակառակ, նրանք, ովքեր գտնում են, որ հայերի հանդեպ քաղաքականությունն իրենից ներկայացնում է ցեղասպանություն, անտեսում են օսմանյան արխիվները՝ իբրև տեղեկության անհուսալի աղբյուր: Այս տեսակետի համաձայն, օսմանյան արձանագրությունները կեղծվել են՝ կոծկելու համար ցեղասպանությունը, և հետևաբար օսմանյան իշխանությունների մտադրությունը կարող է ցուցադրվել միայն արևմտյան արխիվների գործածությամբ: Երկու կողմերի փաստարկումների հիմքում ընկած տրամաբանությունն այն է, որ օսմանյան ու արևմտյան աղբյուրներն անհամատեղելի հակասություններ են պարունակում: Ճամբարներից յուրաքանչյուրը պնդում է, որ իր իսկ նախընտրած արխիվային աղբյուրներն են հեղինակափորը, իսկ մյուս կողմի փաստաթղթերը սխալ են ու անհուսալի:

Հույս ունեմ, որ այս աշխատության մեջ, առաջին անգամ լինելով, ցուցադրել եմ այս ակնհայտ հակասության սխալականությունը: Աղբյուրները ոչ միայն միմյանց հակադիր չեն, այլև լրացնում են միմյանց. նրանք միևնույն պատմությունն են պատմում, սակայն տարբեր տեսանկյուններից: Այս առումով, արխիվային աղբյուրների շուրջ վեճերը զուգադրելի են մահմեդական թուրքերի և փոքրամասնությունների պատմագրությունների միջև հակադրությանը:

Իրենց ամբողջության մեջ, օսմանյան և արևմտյան արխիվները միասնաբար հաստատում են, որ իշխող ՄԱԿ կուսակցությունը նպատակադրված կերպով իրագործել է Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացման քաղաքականություն, որի նպատակն էր հայ ազգաբնակչության վերացումը: Իբրև զանազան արխիվների մեջ հետևողականության ցուցադրում՝ ես ըստ անհրաժեշտության ընդգրկել եմ գերմանական ու հայկական փաստաթղթեր՝ ցույց տալու համար, որ օսմանյան արձանագրությունները հաստատում ու ամրապնդում են արտասահմանյան արխիվներում գտնվող փաստերը:

Նախագգուշացնող մի վերջին խոսք այստեղ ներկայացված օսմանյան փաստաթղթերի բնույթի և խնդրո առարկա վայրերում տեղի ունեցած զարգացումների հետ նրանց հարաբերության մասին: Թեև Ստամբուլից ուղարկված «գաղտնի» և «հույժ գաղտնի» հեռագրերը արտակարգ կարևոր ապացույց են տրամադրում իշխող կուսակցության ու կենտրոնական կառավարության պաշտոնյաների իրա-

կան նպատակի ու մտայնության վերաբերյալ, շատ քիչ պատասխաններ կան, որ ցույց տան, թե տարբեր շրջաններում ինչպես և ինչ պայմանների ներքո են կատարվել հեռագրված այդ հրամանները: Այդ հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ են ավելի շատ շրջանային հեռագրություններ:

Երբ հրապարակվում են փաստաթղթեր, որոնցում նկարագրվում է, թե ինչպես են քրիստոնյաներին բռնի կերպով քշել Անատոլիայից և ենթարկել տեղահանությունների ու կոտորածների, պետք է ընդգծվի հավելյալ մի պահ: Ինչպես նկարագրված է այս գրքում, ՄԱԿ-ը մշակել էր 1913 և 1914 թվականների ընթացքում օսմանյան հույներին Հունաստան տարհանելու և հայերին տեղահանելու ու սպանելու «երկճյուղ» մեխանիզմ:

Մի ճյուղը իրավական շրջանակն էր, որն ստեղծվել էր տեղահանություններն իրականացնելու համար: Այս ճյուղի մեջ էին մտնում պետության պաշտոնական ակտերը, ինչպիսին էին 1913-1914 թթ. բնակչության փոխանակման վերաբերյալ համաձայնագրերը Սերբիայի, Բուլղարիայի ու Հունաստանի հետ: Իրավական ճյուղի մի օրինակ է 1915 թ. մայիսի 27-ի այն հրամանագիրը, որն արտոնում էր հայերի տեղահանությունը և որը վկայակոչում էր պատշաճ ընթացակարգի մասին կառավարության մեկ այլ որոշում: Տեղահանությունների պաշտոնական չափումները, ինչպես, օրինակ, հայերի ունեցվածքի տնօրինումը և վերաբնակեցման խնդիրները, քննարկվում էին բացառապես հաղորդակցության կառավարական խողովակներով:

Անպաշտոն ճյուղը բաղկացած է բռնությունների արտաօրինական ակտերից, ինչպես բռնի արտաքսումները, սպանելու հրամաններն ու կոտորածները: Օրինակ, 1913 և 1914 թթ. օսմանյան հույների գյուղերի տեղահանումները, կոտորածները և օսմանյան հույներին բռնի կերպով ծով ճանապարհելը՝ բոլորը կատարվել և հավանաբար քննարկվել ու հաղորդվել են կառավարական ուղիներից դուրս միջոցներով: Առավելագույն ջանքեր են գործածվել այն տպավորությունն ստեղծելու համար, որ ՄԱԿ-ի գործակալների այդ արարքներից ոչ մեկը երբևէ կապված չեն եղել պետության հետ: Այդպես նաև, հայ տեղահանվածներին ոչնչացնելու այդ հրամանները նահանգներ են ուղարկվել մասնավոր խողովակներով, որոնց մեջ գլխավորը եղել

է ՄԱԿ-ի այսպես կոչված պատասխանատու քարտուղարները: Իրոքում, կոտորածները ծրագրողները բժախնդրորեն հավաստիանում էին, որ ոճրագործությունների վերաբերյալ ոչ մի փաստաթուղթ չաղնեն իրենց հետևից:

Բազմաթիվ ակնատեսներ վկայել են, որ պաշտոնական խողովակներից դուրս միջոցներով հատկապես Թալեթաթ փաշան է ուղարկել տեղահանությունները՝ անձնական հրամանները շրջանային գրասենյակներ ուղարկելով իր տան մասնավոր հեռագրագծով: Այդ ակնատեսների մեջ են մտնում ոչ միայն ժամանակի քաղաքական այնպիսի գործիչներ, ինչպիսին են օսմանյան խորհրդարանի ղեկավար Հալիլ Մենթեշեն ու Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուն, այլև Թալեթաթ փաշայի սեփական կինը: 1982 թ. հոկտեմբերին տված իր մի հարցազրույցի մեջ, որն առաջին անգամ հրապարակվել է 2008 թվականին, Հայրիյե Թալեթաթը (Բաֆրահ) ընդունել է, որ մասնավոր այդ գիծն իր ամուսնուն թույլ է տվել ամբողջ գիշեր տեղահանությունների մասին տեղեկություններն ուղարկել շրջանային գրասենյակներ³⁰:

ՄԱԿ-ը կազմակերպչական մի կառույց էր ստեղծել, որը խիստ հարմար էր երկճյուղ այդ մեխանիզմին: Ստամբուլի ռազմական տրիբունալում 1919 թ. ՄԱԿ-ի Կենտրոնական կոմիտեի անդամների դատավարության հիմնական մեղադրական ակտի ժամանակ դատախազը նշել է, որ, ՄԱԿ կուսակցության կառուցվածքի ու աշխատելու պայմաններին համապատասխան, ստեղծվել է «գաղտնի ցանց» (şebeke-yi hafıye)՝ իրագործելու համար նրա ապօրինի գործողությունները: ՄԱԿ-ն ինքը, ինչպես ասվում է մեղադրական ակտում, «երկու իրարամերժ բնույթ (İki mâhiyet-i mütezádde) էր կրում. առաջինը՝ տեսանելին ու հանրայինը, հիմնված էր [հանրային] ծրագրի և ներքին օրենսդրության վրա (nizâmnâme-i dâhilıye), մյուսը հիմնված էր գաղտնիության վրա և [գործում էր համաձայն չգրված] բանավոր հրահանգների³¹:

Գաղտնիության այս հակման հետևանքով Վարչապետական օսմանյան արխիվում փաստորեն հնարավորություն չկա բնաջնջման

30 Murat Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi: Sadrazam Talat Paşa'nın Öze Arşivinde Bulunan Ermeni Tehciri Konusundaki Belgeler ve Hususi Yazışmalar (İstanbul: Everest, 2008), 211.

31 Takvim-i Vekayi (այսուհետև՝ TV), № 3540, 5 May 1919. Դատավարության առաջին նիստը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 27-ին:

ծրագրերի արձանագրություններ, եթե կուզեք՝ «ծխացող ատրճանակ» գտնելու: Մրան ավելացրեք նաև այն հանգամանքը, որ ժամանակ առ ժամանակ մաքրագարդվում էին արխիվային փաստաթղթերը, ինչպես մանրամասնորեն նկարագրել եմ ստորև: Եվ այնուամենայնիվ, թեև ՄԱԿ-ն ամեն ջանք գործադրել է կոծկելու համար իր ոճիրները, անհրաժեշտ էին պետության բոլոր ռեսուրսները՝ իրագործելու համար պատմական ահռելի մի գործողություն, որն առնչվում էր միլիոնավոր մարդկանց կյանքին: Նման վիթխարի ոճրագործությունն անխուսափելիորեն իր հետքերն է թողել պետության պաշտոնական փաստաթղթերում: Օսմանյան հույների էթնիկ գոումը և հայերի դեմ իրականացրած ցեղասպանության քաղաքականությունը կարող են ցուցադրվել զուտ այդ փաստաթղթերով, և այս գրքում փորձ է արվում հենց դա անել:

Այս աշխատանքը կարող է ընթերցվել նաև իբրև քննադատական անդրադարձ օսմանյան պատմագրության մեջ տիրող լռության, որ մինչև վերջերս կիրառվել է թե՛ Եվրոպայում և թե՛ Միացյալ Նահանգներում: Ուշ օսմանյան շրջանի պատմաբաններից շատերը շրջանցել են կայսրության անկման ընթացքում տեղի ունեցած ներքին տեղահանությունները, արտաքսումները, կոտորածներն ու ցեղասպանությունը: Այդ իրադարձությունները «գոյություն չեն ունեցել» նրանց աշխատություններում³²: Ավելին, այդ նյութի քննարկումը հիմնականում դադարեցվել է՝ իբրև տուժած ազգային խմբերի անդամների կողմից նեղմիտ ազգակենտրոնության մտահոգիչ դրսևորում: Ոչ այնքան վաղ անցյալում ընդունված էր խուսափել որևէ մեկից, ով կփորձեր այդ հարցը շոշափել այս ասպարեզի գիտաշխատողների հովանի կազմակերպության՝ Միջինարևելյան հետազոտությունների ընկերության տարեկան ժողովների ժամանակ: Այն տպավորությունն էր, թե տեղահանություններն ու քնաջնջումն անտեսելը գիտական արժանիք էր ու պատվավոր գործողություն:

Գիտությանը դրա պատճառած վնասը չի սահմանափակվում սոսկ պատմական այդ ժամանակաշրջանը լուսաբանելու ձախող-

32 Այդպիսի աշխատության համեմատաբար նոր նմուշ է Şükrü Hanioğlu, A Brief History of the Late Ottoman Empire (Princeton and Oxford: Princeton University Press, 2008):

մամբ: Մերժելով հետազոտել զանգվածային քնաջնջումները՝ օսմանյան ավանդապահ պատմաբաններին չի հաջողվել ծառանալ այն մարդկանց մտայնության դեմ, ովքեր իրականացնում են հրեշափոր կործանիչ այդ դրվագները: Նրանք վատնել են սոցիալական ու քաղաքական խնդիրները լուծելու համար զանգվածային բռնությունների կիրառումն ըմբռնելու և հետևաբար դրանց կանխմանը նպաստելու կարելիությունը և մարդասիրական ու ժողովրդավարական այն արժեքների հարուցումը, որը հնարավոր է դարձնում մտավորական ազատ հետազոտությունը: Այս ձախողման հետևանքները ոչ մի տեղ այնքան ակներև չեն, որքան Թուրքիայում, հանրային քննարկումների մեջ իշխում է Հայոց ցեղասպանության ժխտման իսկական արդյունաբերություն՝ վախեցնելով գիտնականներին և արդարացելով կրոնական ու ազգային փոքրամասնությունների դաժան հալածանքները:

Փիլիսոփա Յուրգեն Հաբերմասի «գաղտնի բռնության» գաղափարը, որը նստած է հասարակության հյուսվածքի ու հաստատությունների մեջ, պարզաբանում է, թե ինչ եմ ցանկանում ասել: Հաբերմասը բացատրում է, որ այդ «գաղտնի բռնությունը» արդյունավետ կերպով օրինականացնում է որոշակի թեմաների վրա անխոս արգելքներն ու բացառումը հանրային բանավեճի³³: Այն թեմաները, որոնցից հանրությունն ընդհանուր համաձայնությամբ կամենում է խուսափել, չեն կարող միայն անցյալ քշված լինել. դրանք նաև մոռացվում են: Ֆրոյդը սոցիալական հոգեբանության այս գործընթացը շատ սովորական է համարում և նկատում, որ «այն, ինչ հասարակությունը տհաճ է համարում, վերածում է սխալի»³⁴: «Անցյալի մտահոգիչ դրվագներն անհետանում են հավաքական հիշողության սև փոսի մեջ: Այստեղ կարելի է խոսել հասարակության «հաղորդվող իրականության» մասին»³⁵: Հաղորդվող այս իրականությունը սահ-

33 Jürgen Habermas, “Die Utopie des guten Herrschers,” in Kultur und Kritik, ed. Jürgen Habermas (Frankfurt am Main: Suhrkamp, 1973), 386–87.

34 Sigmund Freud, Vorlesungen zur Einführung in die Psychoanalyse, vol. 11, Gesammelte Werke (Frankfurt am Main: Fischer Verlag, 1999), 16.

35 “Die kommunikativen Wirklichkeit” արտահայտությունը փոխ եմ առել Էլիաս Միրեքսկիից, որն այդ տերմինը գործածում է իբրև ընդհատակյա կազմակերպությունների հիմնական հատկանիշներից մեկը (Elias Siberski, Untergrund und Offene Gesellschaft, Zur Fragen der strukturellen Deutung des sozialen Phaenomens [Stuttgart: F. Enke, 1967], 51):

մանում է համոզմունքների այն համակարգն ու հասարակական հարաբերությունների ցանցը, որի սահմաններում մարդիկ նկարագրում են իրենց գոյությունը, իրենց զգացմունքները և մտածողության իրենց կերպը: Այն կարելի է նկարագրել իբրև հասարակության ընդհանուր գաղտնիք, որ հիմնված է լուր համաձայնության վրա:

Սա այն է, ինչ պատահել է Հայոց ցեղասպանության և այդ տարածաշրջանում դարասկզբին տեղի ունեցած մյուս զանգվածային բռնությունների դեպքերում: Հանրապետության ստեղծումից ի վեր Թուրքիայում ազգային ինքնությունը կառուցվել է հաղորդվող մի իրականության վրա, որն ընդգրկում է միասնությամբ կրվող ընդհանուր հասարակական մի գաղտնիք: Իբրև դրա հետևանք, հասարակությունը կորցրել է անցյալի ցեղասպանության, ինչպես նաև զանգվածային բռնության ներկայի և հավանաբար նաև ապագայի դրվագների հանդեպ իր բարոյական զգայունությունը: Հանրային քննարկումից Հայոց ցեղասպանության և զանգվածային այլ բռնությունների անհետացմամբ լռելյայն օժանդակություն է շնորհվում նաև տիրող մտայնությանը, որը հնարավոր է դարձնում ապագայի զանգվածային ոճիրները:

Թուրքիայի հասարակությունն այսօր դիմագրավվում է իր ժողովրդավարության ու մարդու իրավունքների բոլոր խնդիրների աղբյուրը: Այդ խնդիրների մեջ մտնող խոշոր հարցերից մի քանիսն են քրդական հարցը, քաղաքական կյանքում զինվորականության գերիշխանությունը և ռազմական չորս հեղաշրջումները, որոնցից երեքն ուղեկցվել են արյունահեղությամբ: Աղբյուրը լռության այդ միասնությունն ու հաղորդվող իրականությունն են, որ հնարավոր են դարձրել դրանք: Ամեն բան՝ հաստատությունները, մտայնությունները, համոզմունքների համակարգը, դավանանքները, մշակույթը և նույնիսկ հաղորդակցությունը վիճարկելի են: Եկել է ժամանակը, իրականում նույնիսկ անցնում է ժամանակը, որ սոցիալական գիտություններն իրենց ներդրումը կատարեն Թուրքիայի ժողովրդավարության ու քաղաքացիական մշակույթի ոլորտներում:

Հայտնի է, որ Ռաֆայել Լեմկինը, որն ստեղծել է «ցեղասպանություն» (գենոցիդ) տերմինը, ցանկացել է սահմանել մի երևույթ, որը տարբեր էր այն հասկացությունից, ինչն իր արտահայտությունն է

գտել Ցեղասպանության ոճրի կանխման ու պատժման կոնվենցիայում (1948 թ.): Այդ տարբերությունը չէր սահմանափակվում ցեղասպանության մշակութային ոլորտով, ինչպես սովորաբար համարվում է: Կասկած չկա, որ «մշակութային ցեղասպանությունը» կարևոր էր Լեմկինի համար, սակայն այն գոհարեցրել էր, որպեսզի ընդունվեր ցեղասպանություն հասկացությունը քրեական օրենքի շրջանակներում:

Որքան էլ այս տարբերությունը կարևոր լինի, պետք է նկատել Լեմկինի մոտեցման մեջ եղած մեկ այլ տարբերություն: Լեմկինը ցեղասպանությունը հասկանում էր ոչ թե իբրև մեկ եզակի գործողություն, այլ իբրև շաղկապված գործողությունների շարք, իբրև գործընթաց, որը բացահայտվում է ժամանակի ընթացքում: «Ընդհանուր առմամբ, — գրում է Լեմկինը «Առանցքային կանոն նվաճված Եվրոպայում» աշխատության մեջ, ուր ներկայացրել է ցեղասպանության հասկացությունը, — ցեղասպանությունն անպայմանորեն չի նշանակում ժողովրդի անմիջական ոչնչացում»³⁶: Ի հակադրություն դրա, 1948 թ. Ցեղասպանության կոնվենցիան փարվեց ցեղասպանության ավելի նեղ հասկացության՝ իբրև եզակի իրադարձություն կամ գործողություն, որը հանգեցնում է «ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի» անմիջական կործանման: Ցեղասպանության՝ իբրև երկարատև գործընթացի լայն հասկացության մոռացության մատնվելուց հետո հաջորդող բոլոր քննարկումները պտտվեցին այն հարցի շուրջ, թե զանգվածային բռնության տվյալ դրվագը համապատասխանում է արդյոք ցեղասպանության Միացյալ Ազգերի Կազմակերպության սահմանմանը և ուրեմն կարո՞ղ է որակվել իբրև այդպիսին: Սա ցեղասպանությունն իբրև քրեական օրենքի հասկացություն ընդունելու ցավալի հետևանքն է:

Իրավական որակման մեկ այլ հետևանք է ցեղասպանությունը գուտ որպես ֆիզիկական ոչնչացման գործողություն սահմանելը: Տերմինն ստեղծողի համար սակայն ֆիզիկական ոչնչացումը ցեղասպանության գործընթացի սուկ մեկ կողմն էր: Լեմկինը հասկանում էր, որ ցեղասպանությունն իբրև հասարակական իրողություն կառուցում է այնքան, որքան կործանում է: Կրկին հղենք Լեմկինին. «Ցեղասպանությունը երկու փուլ ունի. մեկը ճնշվող խմբի ազգային

36 Stiu Raphael Lemkin, Axis Rule in Occupied Europe (New York: Carnegie Endowment for Inter-national Peace, 1944), 79:

պատկերի ոչնչացումն է, մյուսը՝ ճնշողի ազգային պատկերի պարտադրումը»³⁷: Թեև այս երկրորդ փուլը կարող է զանազան ձևեր ընդունել, թիրախի տակ առնված խումբն ի վերջո հարկադրված է լինում ընդունելու տիրապետող խմբի կենսակերպը, մշակույթն ու հաստատությունները: Ուծացումն, անկասկած, այդ արդյունքին հասնելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Ցեղասպանության գիտական քննարկումներում չափազանց երկար ժամանակ անտեսվել է ցեղասպանության այդ կառուցման փուլը:

Ջարմանալի չափի հնչի, եթե պնդեն, որ չնայած Լեմկինը ծանր պայքար է մղել ցեղասպանությունն իբրև իրավական հասկացություն ընդունել տալու համար, ցեղասպանությունն ըմբռնում էր շատ ավելի լայն սահմաններով՝ իբրև սոցիալական ու քաղաքական գործունեություն: Ցեղասպանությունն այս լայն իմաստով նա կարծես համարում էր հասարակությունը կառուցելու ձևի հիմքում ընկած փիլիսոփայության համապարփակ գործարկում: Լեմկինի համար ցեղասպանությունը շարժուն, այլ ոչ թե անշարժ հասկացություն էր, և տերմինի նրա կիրառումը այդ գործընթացը կարծես նկարագրում է՝ ելնելով այդ փիլիսոփայությունից:

«Որքանով է իրավաչափ պետությունների միջև քաղաքական փոխզիջումից բխող միջազգային իրավական կարգի ընդունումը իբրև պատմական, սոցիոլոգիական ու մարդաբանական հետազոտության հիմք», — հարցնում է ցեղասպանության մասնագետ Ժակ Մեմելինը³⁸: 1948 թ. սահմանումը հարուցեց ոչ միայն այս խնդիրը, այլև մի շարք հավասարապես կարևոր ու փոխկապակցված առեղծվածներ ցեղասպանագիտության համեմատաբար նոր գիտակարգում:

Ցեղասպանությունը համարվում էր մեկ եզակի իրադարձություն, և խնդրո առարկա այդ իրադարձությունը (որը սովորաբար ֆիզիկական բնաջնջումն էր) քննարկվում էր այն տեսանկյունից, թե դա համապատասխանում է 1948 թ. Ցեղասպանության կոնվենցիային, թե ոչ:

Սոցիալական գիտությունների այն մասնագետները, ովքեր համաձայն չէին (արդարացիորեն կամ ոչ) Միացյալ Ազգերի

37 Նույն տեղում:

38 Jacques Semelin, *Purify and Destroy: The Political Uses of Massacre and Genocide* (New York: Columbia University Press, 2007), 321.

Կազմակերպության սահմանմանը, սկսեցին իրենց սեփական առաջարկել: Գրեթե յուրաքանչյուր ցեղասպանագետ իր սահմանումն ուներ, և այդ պատճառով քննարկումների մեծ մասը կենտրոնանում էր դասակարգման ու պիտակավորման վրա³⁹:

Հոլոքոսթն այս քննարկումներում կենտրոնական տեղ էր զբաղեցնում իբրև sine qua non (անհրաժեշտ պայման):

Հոլոքոսթին նմանությունը դարձավ այն չափանիշը, որով դեպքը կարող էր գնահատվել իբրև ցեղասպանություն կամ ոչ: Հոլոքոսթից բացի, զանգվածային մյուս բռնությունների որևէ մասնագետ հսկայական եռանդ էր վատնում՝ ջանալով ապացուցել, որ իր ուսումնասիրած իրադարձությունն ընդհանուր գծեր ունի Հոլոքոսթի հետ՝ համատեղելու համար ցեղասպանության փաստը⁴⁰:

Մոդելներ մշակելու և դինամիկ որևէ գործընթաց բացատրել փորձելու փոխարեն, ցեղասպանագետներն աշխատում էին ստատիկ այն հասկացության հետ, որը սահմանված էր իբրև մեկ եզակի պարզություն: Չափազանցություն չի լինի ասել, որ այդ սահմանումը սրբազը հասցրել է մեթոդաբանական ինքնասպանության աստիճան: Ցեղասպանագետները ցեղասպանության իրենց սեփական սահմանումներն են կառուցել՝ հունական դիցաբանության պրոկրոստոսի մահճի պես: Նրանք սոցիալական իրադարձությունները վերլուծել են այն սահմանման համաձայն, որն իրենք են ընտրել՝ ձգելով սրբազը պահեր ու կրճատելով այլ պահեր և ընդհանուր առմամբ «կլորտել-կացնելով» այն պատմությունները, որոնք կհամընկնեն իրենց «մահճին»: Ժամանակային մի հատվածում տեղի ունեցած պատմական դինամիկ գործընթացը հասկանալը նվազ կարևոր էր, քան իրադարձությունների տվյալ հաջորդականությունն իրենց առաջարկած հասկացության սահմանմանը համապատասխանեցնելը:

39 Տարբեր սահմանումների և միմյանց նկատմամբ դրանց հարաբերությունների համար տես Scott Strauss, "Contested Meanings and Conflicting Imperatives: A Conceptual Analysis of Genocide," *Journal of Genocide Research* 3, № 3 (2001), 349-75; Henry R. Huttenbach, "Towards a Conceptual Definition of Genocide," *Journal of Genocide Research* 4, № 2 (2002), 167-76:

40 Հոլոքոսթի ու մյուս ցեղասպանությունների միջև հարաբերությունն այսօր այն աստիճան լայն քննարկման առարկա է, որ այդ հարցի վերաբերյալ գոյություն ունի մեծածավալ գրականություն: Դրա վերաբերյալ ակնարկի համար տես Dirk Moses, "The Holocaust and Genocide," in *The Historiography of the Holocaust*, ed. Dan Stone (New York, Palgrave Macmillan, 2004), 533-55:

Բարերախտաբար, այս իրադրությունն սկսում է փոխվել, քանի որ մասնագետները լքում են պրոկրուստյան մողելը՝ հանուն ցեղասպանության բավական ճկուն հասկացության, որը, «արվեստ» տերմինի նման, գործածվում է հանրության կողմից՝ առանց դրա նշանակության հարցում ընդհանուր համաձայնության ձգտելու: Սահմանման շուրջ անվերջանալի վիճարարությունների փոխարեն նոր բանավեճեր են երևան եկել՝ ցեղասպանության երկար գործընթացում տեղ գտած կառույցների, մտայնությունների, շարունակականության ու պոռթկման շուրջ: Այս հարցերի մեջ գլխավոր դեր է կատարում այն գաղափարը, որ զանգվածային ոչնչացումը պետք է հասկանալ ու բացատրել իբրև իրադարձությունների դինամիկ հոսք: Ինչպես ճանաչել մտային կերտվածքներն ու հաստատությունների կառուցվածքները, որոնք հասցնում են զանգվածային բռնությունների, ինչպես են այդ կառուցվածքներն ու մտային կերտվածքները գործում, և որտեղ են ընդհատումներն ու շարունակականությունը. ահա սրանք են այսօրվա գլխավոր հարցերը:

Ցեղասպանությունների հետազոտությունների մեջ Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումները նույնպես տուժել են նոր զարգացող բնագավառի ընդհանուր թերություններից և ստիպված են եղել բախվելու նմանատիպ հարցերի՝ հատկապես ելնելով զանգվածային բնաջնջման վերաբերյալ Թուրքիայի Հանրապետության որդեգրած ժխտման կեցվածքից: Այն հարցը, թե ցեղասպանության 1948 թ. սահմանումը, կամ որևէ այլ սահմանում, կարո՞ղ է արդյոք պատշաճորեն կիրառվել 1915 թ. իրադարձությունների առնչությամբ, դարձել էր բոլոր քննարկումների փորձաքարը: Այն վախճ, թե 1915 թ. դեպքերը ցեղասպանություն չեն համարվի, եթե չնմանվեն Հոլոքոսթին, խանգարում էր դինամիկ հասարակական գործընթացների մեջ կատարելիք լուրջ վերլուծությանը և այն տանում այն քանի ապացուցման ուղիով, թե Հայոց ցեղասպանությունը որքան նման է Հոլոքոսթին: Միևնույն ժամանակ, համաձայնեցված կերպով ջանք էր գործադրվում անտեսելու բոլոր այն տարբերությունները, որոնք բնականորեն պետք է լինեին զանգվածային բռնության երկու տարբեր դեպքերի միջև:

Նմանություններն ապացուցելու պայքարը երբեմն հասնում էր այնպիսի անհեթեթ չափերի, որ Հայոց ցեղասպանության կառուցվածքի ամենանշանակալի բաղադրիչների մի մասը, ինչպիսին են

այս երեխաների կրոնափոխությունը կամ ուծացումը մահմեդական քնտանիքներում, գրեթե ամբողջովին դուրս էին մտում 1915 թ. իրադարձությունների վերլուծություններից, քանի որ այդ տարրերը դեր չէին կատարել Եվրոպայում հրեաների բնաջնջման մեջ: Քաոսային, չկազմակերպված ու հաճախ չհամակարգված կառուցվածքն ու տեղական մակարդակներում կրած փոփոխությունները բացատրվում էին իբրև Օսմանյան կայսրության չարագործ ծրագիր:

Այս գրքում ներկայացված փաստաթղթերը ցույց են տալիս, որ միջև հայկական համայնքների ֆիզիկական ոչնչացումը որոշում էր կայացվել հայ երեխաներին հավաքելու քաղաքային որբանոցներում և նրանց ստիպելու հրաժարվել իրենց կրոնից, լեզվից ու մշակույթից: Քանի դեռ ցեղասպանությունն ընկալվում ու բացատրվում էր սոսկ իբրև մարդկանց ֆիզիկական ոչնչացում, ըստ էության անտեսվում էին Հայոց ցեղասպանության կառուցվածքային բոլոր տարրերը. տեղահանությունների առաջին ամիսների ընթացքում որոշ շրջաններում կրոնափոխության թույլտվությունը և դրա հետևանքով տեղահանումից ազատումը, հայերի տեղափոխման վայրերում կրոնափոխության ընթացակարգերի կասեցումն ու վերականգնումը, այդ վայրերում կրոնափոխության արտոնության ընտրողաբար շնորհումը և այն միջոցները, որոնցով կրոնափոխվածները կարողացան վերապրել և, վերջապես, 1915 թ. օգոստոսի և 1916 թ. հունվարի ընթացքում հայկական բնակավայրերի ստեղծումը Հալեպում ու Դեր Զոքում՝ այն նկատառման հետ միասին, թե ինչպես իրականացնել այդ վայրերում հայերի ներծուլումը: Թեև սույն հետազոտության նպատակն այս բոլոր հարցերին ու խնդիրներին պատասխանելը չէ, ես մտադիր եմ տրամադրելու Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների վիճակի համառոտ պատկերը, կարգավիճակի ներկայացումը:

Իրավիճակի այս կերպ ծավալվելն անկասկած հետևանք է մի կողմից այն հանգամանքի, որ Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվը, որն իր մեջ պարփակում է օսմանյան կառավարության պաշտոնական արձանագրությունները, խիստ թերի է գործածվել իբրև 1915 թ. դեպքերի վերաբերյալ փաստարկումների հիմք, և, մյուս կողմից, ցեղասպանությունից փրկված հայերի պատմությունները վատ են ներգրավվել հետազոտությունների ու քննարկումների մեջ: Ամեն դեպքում, այն, ինչ կարելի է ասել առհասարակ ցեղասպանու-

թյունների հետազոտությունների վերաբերյալ, ճիշտ է նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունների առնչությամբ, նոր ժամանակաշրջան է ծագել, և մենք առաջնորդվում ենք դրա առաջին ճառագայթներով: Կցանկանայի այս գրքում ներկայացված մոտավորապես վեց հարյուր օսմանյան փաստաթղթերին ու հարակից տեղեկություններին վերաբերվել իբրև նոր այդ ժամանակաշրջանի մունետիկների: Նույնիսկ եթե սույն նյութի այլ հետազոտողներ լիովին չհամաձայնեն այստեղ շարադրված մտքերին, հույս ունեմ, որ արձանագրությունների այս նոր աղբյուրը կօգնի լուսաբանելու նրանց սեփական վերլուծություններն ու կարծիքները:

«Հիմա, սա վերջը չէ», ասել է Վինսթոն Չերչիլը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, «սա նույնիսկ վերջի սկիզբը չէ, սակայն սա թերևս սկզբի վերջն է»:

Հայոց ցեղասպանության հետազոտությունների վիճակը այս պահին սրանից ավելի լավ չի կարող բնութագրվել: Հետազոտության մեր ոլորտն անցել է լուրջ ակադեմիական արտադրանքի առաջին փուլը: Մենք իսկապես հասել են «սկզբի վերջին»⁴¹: Կուզեի, որ այս գիրքը ծառայեր իբրև նշան այն բանի, որ Հայոց ցեղասպանության շուրջ քննարկումներն ընթանում են դեպի «սկզբի վերջը», դեպի 1913-1918 թթ. օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների դեմ պետության քաղաքականության ընկալման նոր հորիզոններ:


...

Երախտագիտության մի քանի խոսք: Այս գիրքն առաջին անգամ լույս է տեսել թուրքերենով՝ “Ermeni Meselesi Hallolunmuştur”: Osmanlı Belgelerine Göre Savaş Yıllarında Ermenilere Yönelik Politikalar (Istanbul: İletişim Yayınları, 2008) վերնագրով: Ձեր ձեռքի տակ եղած այս գիրքը, սակայն, նկատելիորեն տարբերվում է թուրքերեն տարբերակից: Որոշ հատվածներ հեռացվել են, մի քանիսն ամբողջապես վերանայվել և վերանշակվել են, իսկ մի մասն էլ ամբողջապես նորից են գրվել: Ավելին՝ ավելացվել են մի քանի լիովին նոր գլուխներ ու հատվածներ:

Ձեր ծանոթությունն այս գրքի հետ հնարավոր է դարձել բազմաթիվ անհատների ու հաստատությունների աջակցության շնորհիվ: Նախ և առաջ, ցանկանում եմ խորագին շնորհակալություն հայտնել Ժիրայր Նշանյան հիմնադրամին գրքի անգլերեն և հայերեն թարգմանությունների ու խմբագրման հարցում ցուցաբերած օժանդակության համար: Եթե չլիներ նրա շոյալ նվիրատվությունը, այս գիրքը գոյություն չէր ունենա: Երախտագիտություն եմ անգլերեն հրատարակության թարգմանիչ Պոլ Բեսսեներին և դրա վրա իրենց վաստակն անեցած Արամ Արքունին, Գաֆեսճյան հիմնադրամին (Լու Անն Մաթոսյան), Էրիկ Վեյթզին ու Սառա Վոլֆին: Հայերեն հրատարակության հարցում իրենց նախաձեռնության և օժանդակության համար երախտագիտությունս եմ հայտնում Արք. Վիզեն Այկազյանին, Ժիրայր Նշանյան հիմնադրամին, և հատուկ շնորհակալություն Հասմիկ Հարությունյանին՝ այն թարգմանելու համար: Ինձ համար աննախադեպ ուրախություն է, որ գիրքս հասանելի է դառնում հայ ընթերցողին: Հույս ունեմ, որ այս աշխատանքն իր ավանդը կներդնի Հայոց ցեղասպանության ճանաչման և արդարության հաղթանակի որոնումներում, որը սոսկ հայության պահանջը չէ, այլ ամբողջ մարդկության: Հայոց ցեղասպանության հարցում արդարության ձգտումը մեծ կարևորություն ունի զանգվածային հետագա վայրագությունները կանխելու համար մարդկության պայքարի գործում:



41 Stephan H. Astourian, “The Road Ahead for Armenian Genocide Studies,” paper presented at the workshop “The State of the Art of Armenian Genocide Research: Historiography, Sources, and Future Directions,” Clark University, April 2010. Շնորհակալություն եմ հայտնում Մթիվ Աստորյանին՝ թույլ տալու համար գործածել իր գեկուցման մեջ ներկայացրած մեջբերումը:



Քարտեզ 1. Օսմանյան կայսրությունը 1914 թվականին և տեղահանությունների ճանապարհները


ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԶԵՐԵՆ ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԼԵՑՈՒՅՑ

Տառադարձման և արտասանության բանալի

Տառ	Հայերեն տառադարձում և արտասանություն
c	Չ
ç	չ
ğ	ղ
ı	ը
j	ժ
ö	զերմաներեն ö-ի նման, ինչպես ÖI կամ öffentlich բառերում, համապատասխանում է ֆրանսերեն eu-ին, ինչպես seul բառում
ş	շ
ü	զերմաներեն ü-ի նման, ինչպես Lüge բառում. փափուկ ու՝ o-ի և j-ի խառնուրդով
y	յ

Օսմանյան վարչական կառավարիչների ստորակարգությունը

Պաշտոնը թուրքերեն	Պաշտոնը հայերեն	Իրավասության ոլորտը թուրքերեն	Իրավասության ոլորտը հայերեն
Vali	Նահանգապետ	Vilayet	Նահանգ
Mutasarrif	Գավառապետ	Sancak, liva Mutasarrıflık	Գավառ
Kaymakam	Մարզպետ	Kaza	Մարզ
Müdür	Վարիչ	Nahiye	Ավան
Muhtar	Գյուղապետ	Karye	Գյուղ



Քարտիկ 2. Օսմանյան նահանգները: Արդյուրը վերաբնակված Միլիթար Տեղ-Միլիթարյանի քարտիկից

Օսմանյան հրամանատարության հրամանատարական կազմը և կոչումները

Կոչումները ըստ ստորակարգության		Համապատասխանող զինվորական ստորաբաժանումները		
Օսմանյան կոչումը	Հայերեն համարժեքը	ժամանակակից թուրքերեն	Օսմաներեն	Հայերեն
Müşir	Ֆելդմարշալ	Maresal	Ordular Grubu	Բանակային խմբավորում
General	Դաշտային գեներալ	Orgeneral	Ordu	Բանակ
Birinci Ferik	Լեյտենանտ	Korgeneral	Kolordu	Բանակային կորպուս
Ferik	Գեներալ մայոր	Tümgeneral	Firka	Դիվիզիա
Mirliva	Բրիգադային գեներալ	Tüğgeneral	Liva, Tugay	Բրիգադ
Miralay	Գնդապետ	Albay	Alay	Գունդ (գորագունդ)
Binbaşı	Մայոր	Binbaşı	Tabur, Müfreze	Գումարտակ
Yüzbaşı	Կապիտան	Yüzbaşı	Bölük (piyade, süvari)	Վաշտ (հետևակ կամ հեծյալ)
Tegmen	Կրտսեր լեյտենանտ	Tegmen	Takim, Müfreze	Ջոկատ, դասակ
Başçavuş	Sergeant Major	Başçavuş		
Çavuş	Սերժանտ	Çavuş		
Onbaşı	Կապրալ	Onbaşı		

ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐ

ԳՐԶՈՒՄ ԳՈՐԾԱԾԿԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԸ

- AGUS** The Armenian Genocide in the U.S. Archives, 1915–1918 (Alexandria, VA, Chadwyck-Healey, 1991–1994), ed. Rouben Paul Adalian (Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ արխիվներում, 1915–1918 թթ., Վիրջինիա, ԱՄՆ, Չադվիկ-Հիլի, 1991–1994, խմբ. Ռուբեն Պոլ Ադալյան)
- ԱԸՎ** Անվտանգության ընդհանուր վարչություն (Emniyet Umum Müdürlüğü)
- ՀԿ** Հատուկ Կազմակերպություն (Teşkilâtı Mahsusa)
- ՄԱԿ** Միություն և առաջադիմություն կումիսե (İttihad ve Terakki), անդամները՝ իթթիհադականներ
- ՑՆԲԳՎ** Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման գլխավոր վարչություն (AMMU Aşair ve Muhacirin Müdiriyeti Umumiyesi)
- ՑՆԿՎ** Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության (Dahiliye Nezareti İskan-ı Aşair ve Muhacir'in Müdüriyeti)
- TV** Takvim-i Vekayi (Օսմանյան կառավարության պատոնաթերթը, որը հրատարակել է նաև Թուրքիայի ռազմական տրիբունալի որոշ փաստաթղթեր)

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱԿՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՎ ԵՐԵԿԵԼԻՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- MAZC** Meclis-i Ayan Zabıt Ceridesi (Օսմանյան Երեսիների պալատի արձանագրությունները)
- MMZC** Meclis-i Mebusan Zabıt Ceridesi (Օսմանյան Պատգամավորների պալատի արձանագրությունները)

ԱՐԽԻՎՆԵՐ

ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ԵՇՊԱ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ
ԵՇՊԱ

ՕՍՄԱՆՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

DH.EUM.AYŞ Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Asayiş Kalemi (Ներքին գործերի նախարարության Հասարակական կարգի քարտուղարություն)

DH.EUM.EMN Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Emniyet Şubesi Evrakı (Ներքին գործերի նախարարության անվտանգության մասնաճյուղի Արձանագրությունների վարչություն)

DH.EUM.KLU Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Kalemi Umumi (Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության գլխավոր քարտուղարություն)

DH.EUM.MEM Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Memurin Kalemi Evrakı (Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության պաշտոնյաների արձանագրությունների գրասենյակ)

DH.EUM.MH Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Muhasebe Kalemi Evrakı (Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության հաշվապահական գրասենյակ)

DH.EUM.VRK Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Evrak Odası Kalemi Evrakı (Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության փաստաթղթերի գրասենյակի սրահ)

DH.EUM, 1. Şube Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Birinci Şube (Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության առաջին բաժանմունք)

DH.EUM, 2. Şube Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye İkinci Şube (Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության երկրորդ բաժանմունք)

DH.EUM, 3. Şube Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Üçüncü Şube (Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության երրորդ բաժանմունք)

DH.EUM, 5. Şube Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Beşinci Şube (Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության հինգերորդ բաժանմունք)

DH.KMS Dahiliye Nezareti Dahiliye Kalem-i Mahsus Evrakı (Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության արձանագրությունների գրասենյակ)

DH.ŞFR Dahiliye Nezareti Şifre Kalemi (Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչություն)

DH.SN.THR Dahiliye Nezareti Sicill-i Nüfus Tahrirat Kalemi (Ներքին գործերի նախարարության Բնակչության արձանագրման քարտուղարություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎ

1

ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՉՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ԱՌԿԱ ԱՐԲՅՈՒՐՆԵՐ

1915 թվականի վերաբերյալ բանավեճերի կենտրոնական հարցե-
րից մեկն այն է, թե ինչ փաստաթղթեր են մատչելի, և թե որքանով են
դրանք վստահելի: Աղբյուրների շարքում հատուկ տեղ են զբաղեցնում
ժամանակին օսմանյան կառավարությանը պատկանած պաշտոնա-
կան փաստաթղթերը, որոնք գտնվում են Թուրքիայի Հանրապետու-
թյան Վարչապետական պետական արխիվի Ընդհանուր վարչության
օսմանյան արխիվում (T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü
Osmanlı Arşivi, այսուհետև՝ Վարչապետական օսմանյան ար-
խիվ), որոնց ունեցած արժեքի կապակցությամբ տարբեր տեսակե-
տեր են հնչել: Այս արխիվի փաստաթղթերի «գտված» լինելու գորեղ
վկայությունները լուրջ կասկած են սփռում մնացած փաստաթղթերի
վստահելիության վրա: Դրա մասին կարծիք կազմելու համար հար-
կավոր է նախ ընդհանուր տեղեկություն ունենալ, թե իրենցից ինչ են
ներկայացնում այդ աղբյուրները: Ստորև ներկայացվում է մի ցանկ,
որը հստակություն է մտցնում մասնավորապես այն հարցում, թե երբ
և ինչպես են գտվել արխիվային նյութերը: Մատչելի նյութերը գնա-
հատելու եղանակի մասին ճիշտ գաղափար հնարավոր է կազմել՝
հիմնական տեղեկության վրա այս կերպ հենվելու միջոցով միայն:
Ընդհանուր քննության համար նպատակահարմար է այդ աղբյուր-
ներն ամփոփել յոթ առանձին խմբերում:

Վարչապետական օսմանյան արխիվը, առաջին խումբը Ստամ-
բուլի Վարչապետական օսմանյան արխիվում գտնվող օսմանյան
լեզվով փաստաթղթերի հավաքածուն է: Այստեղ են պահվում Ներ-
քին գործերի նախարարության (Dahiliye Nezareti Evraki) փաստա-
թղթերը, որոնց մեջ գտնվում են քննարկվող նյութին ուղղակիորեն
առնչվող մեծածավալ տեղեկություններ: Այս գրքի նախապատրաս-
տության ընթացքում մեծապես գործածվել են Ներքին գործերի նա-
խարարության Ծածկագրերի վարչության, ինչպես նաև Անվտան-

գության ընդհանուր վարչության (Emniyet-i Umumiye Müdürlüğü. այսուհետև՝ ԸԱՎ) գանազան ոլորտների պատկանող փաստաթղթերը:

Թուրքիայի պետական արխիվի պաշտոնական կայքէջը Ծածկագրերի վարչության վերաբերյալ տրամադրում է հետևյալ տեղեկությունը.

1914 թվականին Ներքին գործերի նախարարությանը կապված բյուրոների շարքում հանդիպում ենք Ծածկագրերի վարչությանը, որը գործել է իբրև առանձին գերատեսչություն... Օսմանյան կենտրոնական վարչակազմի և նրա նահանգային այլևայլ պաշտոնյաների միջև հաղորդակցությունների գործում, հեռագրային հաղորդակցությամբ և մասնավորապես իբրև միջգերատեսչական և ներգերատեսչական հաղորդակցության միջոց՝ դրա ներմուծմամբ հետզհետե աճող կարևորություն ստացավ «Ծածկագրերի վարչությունը»... Հստակ է, որ Ծածկագրերի վարչությունն ընդհանուր առմամբ այն միջոցն էր, որով [կատարվում էր] հաղորդակցությունը. մի կողմից՝ Ներքին գործերի նախարարության և նրան առընթեր բաժանմունքների ու վարչությունների միջև, իսկ մյուս կողմից՝ տարբեր նահանգների ու գավառների միջև: Սակայն, ի լրումն այս գործառույթների, վարչությունը գործում էր նաև իբրև միջնորդ գրասենյակ, որի միջոցով մյուս նախարարություններն ու պետական վարչությունները երբեմն ծածկագրում էին իրենց հրատապ կամ գաղտնի հաղորդագրությունները: Գոյություն ունի ծածկագրերի վարչության վավերագրերը կազմող 20.640 փաստաթուղթ: Դրանք ընդհանուր առմամբ բաղկացած են «ծածկագրված» այն հեռագրերի բնօրինակներից, որոնք ուղարկվել են Ներքին գործերի նախարարություն: Ներկայումս պատրաստված և ուսումնասիրողների համար մատչելի է Ծածկագրերի վարչության [փաստաթղթերի] 10 հատորանոց մի կատալոգ¹:

1914 թ. փետրվարի 9-ին տարածաշրջանային բոլոր վարչություններին ուղարկված մի հեռագրում ամրագրված են որոշակի հաղորդագրություններ Ծածկագրերի վարչության միջոցով առաքելու հրա-

1 Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Başbakanlık Osmanlı Arşivi Rehberi (Istanbul: Başbakanlık Basımevi, 2010), 375.

հանգները: Այդ հեռագիրը, որը տարածաշրջանային բոլոր վարչություններին է ուղարկվել «Ծածկագրված հրահանգների հանդեպ զգուշություն պահանջող հարցեր» վերնագրի ներքո, գաղտնի հաղորդակցության վերաբերյալ փոխանցում է հետևյալը.

Հաղորդակցության բարձր անվտանգության ու գաղտնիության դեպքերում և տեղեկատվության լավ հոսքն ապահովելու նպատակով հաստատվել է հետագա բոլոր նյութերում անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների վավերացումը:

... [Դ]ետտության քաղաքական կամ ռազմական գաղտնիքներին ու դրանց հաղորդմանը վերաբերող հարցերում իրենց հաղորդման սահմանափակումների կարիք առաջացնող բովանդակությամբ ծածկագրված ուղերձները պետք է պարունակեն (հույժ գաղտնի. հանձնել անձնապես) բառերը՝ գրված վերևում:

... [Ա]յս բառերի գործածությամբ հեռագրերով ուղարկվող հրահանգները պետք է հանձնվեն անձամբ ձեռ կողմից: Այդ բառերը չպիտի զետեղվեն սովորական գաղտնիություն պարունակող ծածկագրված ուղերձների վրա²:

Ծածկագրման վարչության փաստաթղթերը, որոնք հիմնականում բաղկացած են կայսրության մայրաքաղաքից նահանգների իր մասնաճյուղերին ուղարկված համառոտ հեռագրերից, դժբախտաբար, չեն ընդգրկում նահանգներից ստացված պատասխաններն այդ հեռագրերին: Կարելի է գտնել միայն մի քանի պատասխան՝ ցրված Անվտանգության ընդհանուր վարչության Առաջին, Երկրորդ և Երրորդ բաժանմունքներով մեկ, սակայն նահանգներից եկած պատասխանների ահռելի մի հատված քացակայում է:

2 BOA/DH.ŞFR, №49/243, Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Ասկարայի, Այդի-նի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդադի, Բեյրութի, Հիջազի, Հալեպի, Հուդավեն-Դիզարի (Բուրսա), Դիյարբեքիի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Քաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի, Մուսուլի, Վանի ու Եմենի նահանգներ, Ուրֆայի, Կարահիսար-ի-Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Իզմիրի, Բոլուի, Ջանքքի, Չաթայջայի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալե-ի-Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշի, Թեքեի ու Կեսարիայի գավառներ և լուսավորյալ Մեդինայի հրամանատարին ուղղված Ներքին գործերի նախարարության 1915 թ. փետրվարի 9 թվակիր ծածկագրված հեռագիրը:

Հարկավոր է նշել, որ նահանգային այդ պատասխանների մեջ հայերի տեղահանությունների վերաբերյալ ուղիղ տեղեկությունները գրեթե իսպառ բացակայում են: Եվ սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, ներքին գործերի նախարար եղած ժամանակ Թալեաթը նահանգների իր ենթականերից պահանջում էր մշտապես գեկուցել այնպիսի հարցերի մասին, ինչպիսին էին հայ բնակչության սոցիալական, տնտեսական ու քաղաքական վիճակը, նրանց իրական թիվը և կայսրության ազգային-կրոնական մյուս խմբերի հետ նրանց հարաբերությունները: Ավելին, հայերի տեղահանության ողջ ընթացքում մայրաքաղաք էին ուղարկվում հատուկ տեւորեր ու արձանագրություններ, որոնց մեջ գեկուցվում էր, թե քանի հայ է տեղահանվել, քանիսն է դեռևս մնում և այլն: Այն փաստաթղթերի ճակատագիրը, որոնք նման տեղեկություններ են պարունակել, մնում է խնդրո առարկայի վերաբերյալ անպաստասխան մնացած մեծագույն հարցերից մեկը³:

Բացի Ներքին գործերի նախարարության նշված փաստաթղթերից, Պետական արխիվի ընդհանուր վարչությունը համացանցում հրապարակել է օսմանյան կառավարության այլ գերատեսչությունների, ինչպես, օրինակ, Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերի մի մեծ ընտրանի: Այցելելով Պետական արխիվի կայքէջ՝ տեսնում ենք, որ հայերի տեղահանությունների վերաբերյալ առցանց տրամադրված է ավելի քան հազար հինգ հարյուր նման փաստաթուղթ⁴: Հանրության համար համացանցում արխիվային այդքան շատ փաստաթղթերի բնօրինակների գետեղումն, ամեն դեպքում, պետք է գնահատվի իբրև խիստ նշանակալի և դրվատելի քայլ:

Սույն աշխատության մեջ ես առատորեն գործածել եմ թե՛ առցանց փաստաթղթերը և թե՛ Վարչապետական օսմանյան արխիվում գտնվողները: Չսայած արխիվի պարունակության անխուսափ թերություններին՝ այս պահոցը կարող է համարվել քննարկվող ժամանակաշրջանը լուսաբանող խիստ հարուստ աղբյուր. ի դեպ, այնքան հարուստ, որ չի կարող լիովին հետազոտված լինել ուսումնասիրողների կողմից (մի շարք պատճառներով), և չի կարելի թերագնահատել

դրա ինչպես ընդունված, այնպես էլ դեռևս չհայտնաբերված արժեքը⁵:

Ետպատերազմյան ռազմական տրիբունալի դատավարությունների արձանագրությունները. այս ժամանակաշրջանի համար երկրորդ կարևոր աղբյուրը Ստամբուլի ռազմական տրիբունալի (Divan-i Harb-i Örfi) 1919-1921թթ. փաստաթղթերի խումբն է: Տրիբունալով դատվել են ՄԱԿ-ի առաջնորդները և նրանց նահանգային ներկայացուցիչները՝ 1908-ից 1918 թթ. կատարած տարբեր ռժիբների համար: Ընդհանուր առմամբ վաթսուներեք գործից բաղկացած այս դատավարությունների վերաբերյալ տեղեկությունների հիմնական աղբյուրը դատական նիստերի օրական հաշվետվություններն են և դատարանի պաշտոնական փաստաթղթերը (մեղադրական ակտերը, դատապարտությունները և այլն), որոնք հրապարակվել են օսմանյան «Takvim-i Vekayi» լրագրում: Այս տեղեկությունները սակայն հեռու են սպառիչ լինելուց, քանի որ հրապարակված հաշվետվությունները կեսկատար են՝ ներկայացնելով վաթսուներեք գործից միայն տասներկուսը: Այդուհանդերձ, եղած փաստաթղթերը վճռորոշ կարևորություն ունեն և վերաբերում են այնպիսի նյութերի, ինչպիսին են իթթիհադական կառավարության (Merkez-i Umumi), ինչպես նաև նրա կիսազաղտնի Հատուկ կազմակերպության⁶ (Teşkilat-ı Mahsusa, այ-

5 Պատճառներից մեկը, թե ինչու գիտնականները մինչև հիմա չեն կարողացել ամբողջությամբ գործածել արխիվները, մասնավորապես քննարկման առարկային վերաբերող նյութերը, այն է, որ դեռևս ավարտված չէ հսկայածավալ պահոցների կատալոգների կազմությունը: Հստակ չէ, թե մեղքի ո՞ր բաժինն է ընկնում տեխնիկական բարդությունների, որը՝ կառավարության գիտակցված քաղաքականության վրա: Արխիվների հետ աշխատել ցանկացող գիտնականները երբեմն այնպիսի նվաստացումների են ենթարկվել, ինչպիսին են իրենց մտադրությունների ու հետազոտման առարկայի մասին հարցաքննությունները, փաստաթղթեր տրամադրելու մերժումները և նույնիսկ հենց արխիվներից վտարումները: Օրինակ, տևն Ara Sarafian, "The Ottoman Archives Debate and the Armenian Genocide," Armenian Forum 2, №1 (Spring 1999), 35-44: Վերջին տարիներին սակայն նշանակալի փոփոխություններ են կատարվել: Կազմվել են ուսումնասիրողներին մատչելի նոր կատալոգներ, և վերջ է տրվել վերը նշված նվաստացումներին: 2006 թ. իմ այցելության ընթացքում ես քաղաքավարությունից և իմ աշխատանքին նպաստելուց բացի այլ երևույթի չեմ առնչվել և կցանկանայի իմ խորին երախտագիտությունը հայտնել արխիվի բոլոր աշխատակիցներին և մասնավորապես Մուստաֆա Բուդակին:

6 Թեև տարբեր մոտեցումներ կան այն հարցի վերաբերյալ, թե երբ է հիմնադրվել Հայոց ցեղասպանության մեջ կենտրոնական դեր խաղացած այս կազմակերպությունը, ՌԳՌ-ՀՎ-ի արխիվներում գտնվող մի փաս-

3 2006 թ. ամռան ընթացքում, արխիվներում աշխատելիս, ես պատասխան չստացա իմ այն հարցին, թե որտեղ կարելի է գտնել նահանգներից ստացված պատասխանները նախարարության հետագրին:

4 Տե՛ս <http://www.devletarsivleri.gov.tr>:

սուիետն՝ ՀԿ) անդամների գործերի ամնչությամբ դատավճիռներն ու վկաների ցուցմունքները: Սկզբում այս խմբերի դատն ընթացել է մեկ մեծ դատավարությամբ, սակայն հետագայում դրանք բաժանվել են երկու անջատ վարույթների՝ մեկը կատավարության պաշտոնյաների, իսկ մյուսը՝ ՀԱԿ անդամների ու գործիչների գործով, թեև երկուսն էլ ավարտվել են բոլոր մեղադրյալների համար միասնական մեկ դատավճռով: Երկու դատավարություններն էլ ավարտվել են ընդհանուր առմամբ տասնչորս առանձին նիստերով, և այդ նիստերի արձանագրությունները, մեղադրական երկու ակտերի ու միացյալ դատավճռի հետ միասին, ամբողջությամբ հայտնվել են «Takvim-i Vekayi»-ի հաջորդ օրվա համարում:

Միևնույն ժամանակ տեղի է ունեցել մեկ այլ դատավարություն ևս՝ այսպես կոչված պատասխանատու քարտուղարների (kâtib-i me suller) դատավարությունը, որոնք կիսապաշտոնական լիազորությամբ ուղարկվել էին նահանգները, որպեսզի ապահովեին կոմիտեի իրական քաղաքականության պատշաճ իրագործումը, սակայն «Takvim-i Vekayi» թերթում հաղորդումներ հայտնվեցին միայն դատական առաջին երեք նիստերի (թվով տասներեքից) և վերջնական դատավճռի մասին: Մնացած տասը դատավարություններից, որոնցից գրավոր մի քանի հաշվետվություն կա, պահպանված են սոսկ թերի արձանագրություններ, ինչպիսին են Յոզղաթ գավառի և Տրապիզոն նահանգի պաշտոնյաների դեմ հարուցված գործի դատավճիռները կամ Երզնկայում ու Բայբուրտում (գավառում) դատավարությունների վճիռների հաստատումը սուլթանի կողմից⁷:

տաթղթի համաձայն ՀԿ-ը պաշտոնապես հիմնադրվել է Էնվեր փաշայի 1913 թ. նոյեմբերի 30-ի հրամանով: Այդ փաստաթուղթը վերարտադրվել է Փոլատ Սաֆիի «Օսմանյան Հատուկ կազմակերպությունը՝ Թեշքիլաթ-ի Մահաուսան. Պատմական գնահատական՝ բրիտանացիների կողմից օկուպացված Եգիպտոսի (1914-1916 թթ.) դեմ դրա գործողությունների մասնավոր անդրադարձով» չիրատարակված դիպլոմային աշխատանքում. Բիլքենդ համալսարանի Տստեսագիտության ու սոցիալական գիտությունների ինստիտուտ, սեպտեմբեր, 2006 թ.: Ստամբուլում տեղի ունեցած ռազմական տրիբունալում մեղադրյալների պատմած հուշերի ու վկայությունների վրա հենվելով՝ կարելի է վստահությամբ պնդել, որ ՀԿ-ը վերակազմավորվել է 1914 թ. օգոստոսի 2-ին՝ Կովկասի, Պարսկաստանի, Հնդկաստանի ու Աֆրիկայի մահմեդականներին անզիպացիների ու ռուսների դեմ հանելու և Անատոլիայում հնարավոր «հայկական վտանգի» դեմ գործելու նպատակով: ՀԿ-ի մասին հավելյալ տեղեկությունների համար տես Akçam, A Shameful Act, 93–97, 130–40:

7 Սկզբնապես TV-ում հրապարակված սղագրությունների ու արձանագրու-

Ստամբուլի մամուլի 1918–1922 թթ. հաղորդումները. այս ժամանակաշրջանի երրորդ կարևոր աղբյուրը Ստամբուլի մամուլն է 1918 և 1922 թվականների ընթացքում: Այդ շրջանի լրագրերը, հատկապես 1918 թ. նոյեմբերից հետո, երբ, դաշնակիցների կողմից քաղաքը զավթելու շնորհիվ, մամուլն օգտվում էր մասնակի ազատությունից, ժամանակակից իրադարձությունների վերաբերյալ խիստ մանրակրկիտ հաղորդումներ են պարունակում՝ նախևառաջ հայերի նկատմամբ օսմանյան կատավարության քաղաքականության վերաբերյալ: Մանրակրկիտ հաղորդված նյութերի շարքում են մայրաքաղաքում և ողջ կայսրությունով մեկ այդ ժամանակ տեղի ունեցող դատավարությունները: Արժեքավոր լրացում են դատական այդ գործերին առընչվող մեծ թվով այնպիսի փաստաթղթեր, ինչպիսին են Երզնկայի ու Բայբուրտի վերոհիշյալ դատերի դատավճիռների տեքստերը, որոնք չկան «Takvim-i Vekayi» լրագրում: Դրանցից բացի, Ստամբուլի մամուլը պարունակում է դատավարություններում տրված վկայությունների զեկույցներն ու սղագրությունները և հայերի տեղահանումների հետ կապված իրադարձությունների մեջ ներգրավված անձանց կամ անմիջական վկաների հիշողությունները: Դրանց լավագույնս հայտնի օրինակներից են Երրորդ բանակի հրամանատար Վեհիպ փաշայի, Հալեպի նահանգապետ Ջելալի և Չերքեզ քեռի Հասանի (Çerkes Hasan Amca) վկայությունները⁸:

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվը. խնդրո առարկա իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունների չորրորդ աղբյուրը Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արխիվն է: Այս պահոցը նշանակալի է Ռճիրների հետաքննության հանձնաժողովի (Tedkik-i Seyyat Komisyonu) մի շարք փաստաթղթերի պարունակությամբ: Այդ հանձնաժողովը կազմվել էր 1918 թ. նոյեմբերի 24-ի զինա-

թյունների համար տես V. N. Dadrian and Taner Akçam, “Tehcir ve Taktıl”: Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihat ve Terakki'nin Yargılanması (Istanbul: Bilgi Üniversitesi Yayınları, 2009):

8 Հալեպի նահանգապետ Ջելալ բեյի հուշերը երեք մասով լույս են տեսել «Վաթիթ» օրաթերթում՝ դեկտեմբերի 10-ից 13-ի ընթացքում, մինչդեռ Վեհիպ փաշայի պատմությունը միևնույն թերթում հայտնվել է 1919 թ. մարտի 31-ին: Չերքեզ Հասան Անջայի «Տեղահանությունների իրական պատմությունը» [Tehcirin İç Yüzü] հոդվածաշարը տպվել է «Ալեմդար»-ում՝ 1919 թ. հունիսի 19-ից 28-ը: Թեև վերջին հատվածը վերջանում էր «շարունակելի» բառով, հետագա որևէ հատված լույս չի տեսել:

դադարից հետո՝ հայերի տեղահանման ու կոտորածների ոճիրների վերաբերյալ վկայություններ հավաքելու և մեղավորներին դատական պատասխանատվության ենթարկելու նպատակով⁹: Ցավոք, ինչպես այս հանձնաժողովի, այնպես էլ 1919-1922 թթ. ընթացքում գործած ռազմական տրիբունալի փաստաթղթերի բնօրինակներն ու գործերի թղթապանակները կորել են կամ ոչնչացվել: Այդ տարիներին ռազմական տրիբունալում աշխատած հայ որոշ պաշտոնյաներ ձեռագիր պատճեններ են թղթապանակների որոշ փաստաթղթեր, և այդ պատճենները պահպանվել են Հայկական պատրիարքարանի արխիվում¹⁰:

Թեև այժմ կորած բնօրինակների հետ նրանց համապատասխանությունը պարզելու անհնարինության պատճառով վիճարկվում է այդ պատճեններն առաջնային աղբյուրներ համարելու հարցը՝ շատ դեպքերում դրանց պարունակած տեղեկությունների իսկությունը կարող է ստուգվել և հաստատվել զանազան այլ աղբյուրների օգնությամբ: Բերենք մի քանի օրինակ: 1915 թ. մայիսի 26-ի Թալեաթ փաշայի մի փաստաթուղթ, որը կարելի է գտնել թուրքական բազմաթիվ աղբյուրներում, առկա է այս պահոցում թե՛ օսմանյան բնագրով և թե՛ հարակից հայերեն թարգմանությամբ¹¹: Պատրիարքարանում է պահվում նաև Թալեաթ փաշայի կողմից Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգային վարչություններին 1915 թ. մայիսի 23-ին ուղարկած հեռագրի պատճենը, որով նրանց տեղեկացվում է, թե հայերին ո՞ր շրջաններից պետք է հանել և ո՞ր շրջանները տեղափոխել: Այդ փաստաթղթի բնօրինակը պահվում է Ստամբուլում՝ Վարչապետական օս-

մանյան արխիվում¹²: Երուսաղեմի պատրիարքարանում են գտնվում նաև Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության (Dahiliye Nezareti İskan-ı Aşair ve Muhacir'in Müdüriyeti, այսուհետև՝ ՑՆԿՎ կամ Ցեղային կարգավորման վարչություն) կողմից 1915 թ. հուլիսի 5-ին Անատոլիայի բազմաթիվ վայրեր ուղարկած հաղորդագրությունների պատճենները¹³: Այդ հաղորդագրությունների նպատակն էր նահանգային ու շրջանային պաշտոնյաներին տեղեկացնել, որ ավելացվել են հայերի վերաբնակեցման տարածքները, և որ հայերը պետք է վերաբնակեցվեն այդ վայրերում՝ 10 տոկոսի սկզբունքով. դա նշանակում էր, որ վերաբնակեցվող բնակչության թիվը չպետք է գերազանցեր ամբողջ ազգաբնակչության 10 տոկոսը¹⁴:

Եվս մեկ օրինակ է 1915 թ. օգոստոսի 26-ի այն հեռագրի մի պատճենը, որը գործածվել է իթթիհադական ղեկավարների ղեմ գլխավոր մեղադրանքի մեջ: Մամուրեթուլագիզի նահանգապետի կողմից այն ուղարկվել է Մալաթիայի իր պաշտոնակցին և վերաբերում է տեղահանման ճանապարհներին կուտակված դիակները հավաքելու հրամաններին¹⁵: Վերջապես, գոյություն ունի Օսմանյան երրորդ բանակի վերը նշված հրամանատար Վեհիպ փաշայի վկայությունը, որը

9 Vakit, 24 November 1918.

10 Ցավոք, արխիվը բաց չէ հետազոտողների համար, այդ պատճառով ղեկավար է որևէ հավաստի բան ստել դրա պարունակության մասին: Հարկ չկա շեշտելու այնպիսի աններելի քաղաքականության արատավորությունը, ինչպիսին նման արժեքավոր հնարավորություն ընձեռող աղբյուրի մատչելիության մերժումն է: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Վ. Ն. Տատրյանին, որին թոյլ է տրվել աշխատել Հայկական պատրիարքարանի արխիվում, և որը մեծաժողովար ինձ է տրամադրել որոշ փաստաթղթերի պատճենները:

11 Թուրքական աղբյուրներում այս փաստաթղթի հիշատակությունների ու վերաբարտությունների համար տե՛ս Kamuran Gürün, *Ermeni Dosyası* (Ankara: Türk Tarih Kurumu, 1983), 228 և Muammer Demirel, *Birinci Dünya Harbinde Erzurum ve Çevresinde Ermeni Hareketleri (1914-1918)* (Ankara: Genelkurmay, 1996), 52: Երուսաղեմի հայկական պատրիարքարանի արխիվում (այսուհետև՝ ԵՀՊԱ) դրա դասակարգման թիվն է տուի 17, գործ H, փաստ. № 571-72:

12 ԵՀՊԱ, տուի 17, գործ H, փաստ. № 571-72, Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվում՝ BOA/DH.SFR, № 53/93.

13 ՑՆԿՎ-ն սկզբնապես հիմնվել է 1913 թ. ղեկամերերին՝ իբրև Ներքին գործերի նախարարության վարչություն: Հետագայում այդ վարչությունն օրենքով փոխակերպվել է՝ կոչվելով Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային վարչություն (Aşair ve Muhacirin Müdüriyeti Umumiyesi) և ընդլայնելով իր իրավասությունները, ներառել է բազմաթիվ ենթաբաժիններ: Տարիների ընթացքում ավելացել են նրա հզորությունն ու ազդեցությունը: Սույն հատրի հետագա շարադրանքում այդ կառույցի մասին ներկայացված են հավելյալ տեղեկություններ:

14 BOA/DH.SFR, № 54/315, ՑՆԿՎ-ի 1915 թ. հուլիսի 5-ի ծածկագրված հեռագիր Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթուլագիզի (Էլազըզ) ու Մաուլի նահանգապետերին, Ադանայի ու Հալեպի Լքված ունեցվածքի հանձնախմբի նախագահին և (Դեր) Ջորի, Մարաշի, Ջանիկի, Կեսարիայի ու Իզմիրի գավառների (Mutasarrıflik) ղեկավարներին. ԵՀՊԱ, տուի 17, գործ H, փաստ. № 585.

15 ԵՀՊԱ, տուի 7, գործ H, փաստ. № 635: TV-ում դրա հայտնվելու վերաբերյալ տե՛ս 1919 թ. մայիսի 5-ի 3540 համարը: Մեղադրանքն ընթերցվել է 1919 թ. ապրիլի 27-ին՝ դատավարության առաջին նիստին:

հետագայում հրապարակվել է օսմանյան «Vakit» օրաթերթում: Դրա օսմաներեն բնագրի մի պատճենն նույնպես գտնվում է պատրիարքարանում¹⁶:

Փաստաթղթերի մեկ այլ խումբ, որի պարունակած տեղեկությունների իսկությունը կարելի է ցուցադրել ուրիշ փաստաթղթերի բնօրինակների հետ համեմատությամբ, զինվորական տարբեր գործիչների միջև հեռագրային հաղորդակցության հավաքածուն է, ինչպես, օրինակ, Բողազլըյանում ու դրա շրջակայքում հայերի գործողությունների վերաբերյալ (օսմանյան) շտաբների ղեկավարների (Başkumandanlık Vekaleti) գրասենյակին ուղղված Հինգերորդ բանակի հրամանատարի պաշտոնակատար, գնդապետ Հալիլ Ռեջայիի 1915 թ. հուլիսի 23-ի հեռագրի մի պատճենը¹⁷: Այստեղ են նաև Բողազլըյանի շրջանի ղեկավար Քեմալի դատավճռի ու դրա ի կատար ածման մեջ կենտրոնական դեր խաղացած հաղորդագրությունների պատճենները: Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվում գտնվող բազմաթիվ փաստաթղթերում կան նշվում է, կան հղվում հեռագրային այս հաղորդակցության բովանդակությունը: Այդ հեռագրերից շատերն ընթերցվել են Յոզղաթի դատավարության տարբեր նիստերի ընթացքում, և դրանց պատճենները տեղ են գտել Երուսաղեմի պատրիարքարանի արխիվում: Այն հանգամանքը, որ այդ հեռագրերի միևնույն հղման թիվը նշված է բոլոր երեք աղբյուրներում, պետք է դիտել իբրև Երուսաղեմի պատճենների բովանդակության իսկությունը հաստատող կարևոր վկայություն¹⁸:

Հինգերորդ բաժանմունքի արձանագրությունները, հինգերորդ աղբյուրը կազմում է այն փաստաթղթերը, որոնք պատկանում են Օսմանյան խորհրդարանի հինգերորդ բաժանմունքին (5. Şube), որը կազմավորվել է Պատգամավորների պալատի կողմից 1918 թ. նոյեմ-

բերին՝ օսմանյան կառավարության պատերազմական հանցագործությունները հետաքննելու նպատակով¹⁹:

Օսմանյան խորհրդարանի արձանագրությունները, վեցերորդ աղբյուրը բաղկացած է օսմանյան պատգամավորների պալատի արձանագրություններից: 1918 թ. նոյեմբերին ու դեկտեմբերին Պատգամավորների պալատը հայերի տեղահանությունների ու սպանությունների հարցով անհամար բանավեճերի ասպարեզ էր: Դրանց արձանագրությունները վերածվել են լատինատառի ու հրապարակվել Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից:

Հուլեր. Յոթերորդ և վերջին աղբյուրը բաղկացած է տարբեր հուշերից ու հուշագրություններից, որոնք վերջերս հայտնվել են թուրքական մամուլում կամ դեռևս սպասում են հրատարակման:

ՄԵՐԿԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՂՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

Վերոնշյալ փաստաթղթերի տարբեր խմբերի միջից անհետ կորել են այն փաստաթղթերը, որոնք կապված են Ստամբուլի ռազմական տրիբունալի և 1918 թ. նոյեմբերին հիմնված (պատերազմական) հանցագործությունների հետաքննության հանձնաժողովին, և նրանց հնարավոր ճակատագրի մասին որևէ հավաստի տեղեկություն չկա:

19 Հինգերորդ բաժանմունքի հարցաքննչական վարոյթներն արձանագրվել են Նեյմեթին Սահիր (Silan) քեյի կողմից և հրապարակվել հետևյալ երկարաշունչ վերնագիրը կրող գրքի տեսքով. "Said Halim ve Mehmed Talat Pashalar Kabinelerinin Divanı Ali'ye sevkleri hakkında Divaniye Mebusu Fuat Bey merhum tarafından verilen takrir üzerine berayı tahkikat kura isabet eden Beşinci Şube tarafından icra olunan tahkikat ve zabt edilen ifadati muhtevidir" (Այն հետաքննությունների և արձանագրված վկայությունների բովանդակությունը, որոնք կատարել է Հինգերորդ բաժանմունքը, որն ընտրվել էր վիճակահանությամբ՝ որոշելու համար Սաիդ Հալիմ փաշայի և Մեհմեդ Թալեթ փաշայի կառավարությունները (կառավարությունների անդամներին) (օսմանյան) Գերագույն դատարանին հանձնելու կապակցությամբ Դիվանիյեի հանգուցյալ պատգամավոր Ֆուաթ քեյի տված ցուցմունքների ճշմարտացիությունը (Պատգամավորների պալատ, № 521, ընտրական երրորդ ժամկետ, հինգերորդ նիստ) (Istanbul. Istanbul Meclis-i Mebusan Matbaası [1334]1918): Ավելի նոր, լատինատառ հրատարակության համար տե՛ս Osman Selim Kocahanoglu, İttihat ve Terakki'nin Sorgulanması ve Yargılanması (Istanbul: Temel Yayınları), 1998: Այն հանգամանքը, որ հարցաքննչական վարոյթները կատարվել են Հինգերորդ բաժանմունքում, պայմանավորված չէ բաժանմունքի հատուկ հատկանիշներով: Օսմանյան խորհրդարանը մի շարք «բաժանմունքներ» ուներ, և վիճակահանությամբ էր որոշվում, թե՛ դրանցից որը պետք է իրականացնե՛ր գործողությունը:

16 Վկայության ամբողջական տեքստը հրապարակվել է «Վարիթ»-ի 1919 թ. մարտի 31-ի համարում: ԵՀԳԱ-ի տեղադրության համարն է. տուփ 17, գործ H, փաստ. № 171-82:

17 Փաստաթղթի բնօրինակը տե՛ս Askeri Tarih Belgeleri Dergisi 31, № 81 (դեկտեմբեր, 1982 թ.), 171, Doc. № 1835: Պատճենը գտնվում է ԵՀԳԱ-ում, տուփ 17, գործ H, փաստ. № 1794:

18 Այդ հեռագրերի և դրանց բովանդակության հանգամանալի բնության համար տե՛ս V. N. Dadrian, "Ermeni Soykırımı Faillerinin Türk Askeri Mahkemesinde Yargılanması: Başlıca Dört Divan-ı Harb-i Örfi Davası," Ermeni Soykırımında Kurumsal Roller: Toplu Makaleler, h. 1 (Istanbul: Belge Yayınları, 2004), 275-319:

Նկատի առնելով այն հանգամանքը, որ 1922թ. նոյեմբերից հետո Ստամբուլն անցավ Անկարայի կառավարության տնօրինության տակ՝ անհիմն չի լինի ենթադրել, որ քաղաքի Ռազմական դրոշման հրամանատարությունը (Sikiyönetim Komutanlığı) կարող է դրանք հանձնած լինել Թուրքիայի գլխավոր շտաբի (Sikiyönetim Komutanlığı) գրասենյակներին: Եվ սակայն դարձյալ տեղեկություն չկա այն մասին, թե հնարավոր է արդյոք այդ փաստաթղթերը գտնել Գլխավոր շտաբի Ռազմական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչությունում (Genelkurmay Askeri Tarih ve Stratejik Etüt ve Denetleme Başkanlığı կամ ՌՊՌՀՎ): Կիրառվող խիստ սահմանափակումների պատճառով քաղաքացիական անձանց կամ օտարերկրացի ուսումնասիրողների համար ՌՊՌՀՎ արխիվները համագործ են փակված լինելուն²⁰:

ՌՊՌՀՎ արխիվի որոշ փաստաթղթերի վերաբերյալ ստորև բերվող թվերը բավական են՝ ցույց տալու համար, թե ինչպիսի մեծ դժբախտություն է այդ արխիվների փակ մնալը. «ՌՊՌՀՎ հավաքածուները պարունակում են 1911թ. Տրիպոլիտանիայի պատերազմին վերաբերող 41.491 փաստաթուղթ, 1912-1913թթ. Բալկանյան պատերազմներին վերաբերող 902.800 և Առաջին համաշխարհային պատերազմին վերաբերող 3.671.470 փաստաթուղթ, որոնք բոլորը նշանակալի թվով տեղեկություններ են պարունակում ռազմական հետախուզության վերաբերյալ, հատկապես Թեշկիլաթի [Հատուկ կազմակերպություն, այսուհետև՝ ՀԿ] գործակալների և հետախուզության կազմակերպման մասին: Առաջին համաշխարհային պատերազմի

20 ՌՊՌՀՎ-ի արխիվների առնչությամբ իմ կողմից «փակված» տերմինի գործածությունը բխում է այն հանգամանքից, որ խիստ վերահսկողությամբ ու քննությամբ է որոշվում, թե ում կարելի է արտոնել աշխատել այնտեղ: Այդ անհասանելիության վառ օրինակ է այն հանգամանքը, որ այսքան ժամանակ այդ արխիվի հետ աշխատելու հայցի ստանդարտ ձև չկա. այդտեղ աշխատել ցանկացող հետազոտողները պետք է լրացնեն ոչ-գինվորական անձնակազմ վարձելու համար Գլխավոր շտաբի գործածած ձևը: Դիմող գիտնականներն այսուհետև ստիպված են լինում պատասխանելու մի քանի տասնյակ հարցերի, որոնք բոլորովին կապ չունեն գիտական հետազոտության հետ. ասենք՝ իրենց ազգականների մեջ որևէ մեկը հանցանք կատարել է, թե ոչ. իրոք որ հետաքրքիր ընթացակարգ է: Այսուհետև, նույնիսկ երբ հետազոտողին շնորհվում է արխիվներում աշխատելու արտոնություն, իսկ ոմանց շնորհվում է, խիստ վերահսկողություն է սահմանվում արխիվներում հետազոտողի գտնվելու ամբողջ ընթացքում:

կատարվածները, որոնց մեջ կարելի է գտնել հսկայական թվով Թեշկիլաթի պաշտոնական փաստաթղթեր (մոտ 40.000), դասավորված են ըստ վարչությունների գործերի, և յուրաքանչյուր թղթապանակ կրում է պարունակած նյութի համառոտակի բացատրությունը²¹:

Բացի ՌՊՌՀՎ-ի շուրջ եղած հարցականների, կան նաև անհերքելի ապացույցներ այն մասին, որ այս ժամանակաշրջանի մի շարք փաստաթղթեր, ներառյալ նրանք, որոնք այլապես պատկանելու էին Վարչապետական օսմանյան արխիվին, գողացվել են կամ ոչնչացվել: Այս խնդրի վերաբերյալ ամենաանկեղծ տվյալները գտնում ենք Ստամբուլի ռազմական տրիբունալում ՄԱԿ ղեկավարների մեղադրական ակտերի մեջ: Դատախազը նշում է, որ փաստաթղթերի երեք խումբ է կամ ոչնչացվել, կամ «վերցվել» (asırılmış): Առաջին խումբը, որ բաղկացած է եղել ՀԿ-ին պատկանող փաստաթղթերից, ոչնչացվել է: ՄԱԿ ղեկավարների հիմնական դատավարության մեղադրական ակտի մեջ դատախազը հայտարարում է, որ «գործը հետաքննելուց հետո [վճռվել է և] Հատուկ կազմակերպությանը պատկանող փաստաթղթերի նշանակալի մասը... վերցվել է»²²:

Երկրորդ խումբը բաղկացած է ՄԱԿ Կենտրոնական կոմիտեին պատկանող թղթերից: Նշված մեղադրականի մեջ դատախազը կրկին հայտարարում է. «Հասկանալի դարձավ, որ Կենտրոնական կոմիտեի բոլոր փաստաթղթերն ու տետրերը գողացվել են»: Բացի այդ, դատավարության տարբեր նիստերի ընթացքում վկաներ Միդհաթ Շուքրուն, Բյույյուկ Թալեաթը և Զիյա Գյոքալփը նույնպես ցուցմունք են տվել, որ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի փաստաթղթերը վերցվել են Կենտրոնական կոմիտեի անդամ դր. Նազիմի կողմից:

Գլխավոր դատավոր (Ռեիս). Քանի որ Միություն և առաջադիմություն կոմիտեն վերածվեց Նորոգում կուսակցության (Tencedüü Fırkası), ... սկզբնապես Միություն և առաջադիմություն [Կ]ենտրոնական կոմիտեին պատկանող փաստաթղթերն ու մյուս թղթերը նոյնպես հանձնվել են Նորոգում կուսակցությանը²³:

21 Safi, "The Ottoman Special Organization," 33.

22 "Tedkikât-ı vâkıadan bu daireye [Teşkilât-ı Mahsusa'ya] âid evrâkdan bir kısm-ı mühimminin ... asırılmış," TV, № 3540, մայիսի 5, 1919թ.: Դատավարության առաջին նիստը գումարվել է 1919թ. ապրիլի 27-ին:

23 ՄԱԿ վերջին համագումարը բացվել է 1918թ. նոյեմբերի 1-ին՝ Թալեաթ

Միդիաթ Շուքրու. Իհարկե, Ձերդ ազնվություն: Բայց, դժբախտաբար, հետագայում ես իմացա, որ դր. Նազիմ քեյը դրանք լալել է: Ես այդ մասին լսեցի [տարբեր] սպաների (memur) քացատրությունների ժամանակ:

Գլխավոր դատավոր. Նորոգում կուսակցությունն ինքը երբևէ զբաղվել է այս հարցով:

Միդիաթ Շուքրու. Ոչ, Ձերդ ազնվություն: Ինձ այս մասին հարցաքննել են, երբ Նորոգում կուսակցությունը [տոր] էր կազմվել. նրանք ինձ կանչեցին Կենտրոնական կոմիտե, և հարցեր տրվեցին այդ փաստաթղթերի վերաբերյալ, և այդ ժամանակ պաշտոնատար անձանցից ես իմացա, որ դրանք բոլորը վերցրել է դր. Նազիմը²⁴:

Իր տված ցուցմունքների ընթացքում նման մի պատմություն է պատմում նաև Կենտրոնական կոմիտեի մեկ այլ անդամ՝ Զիյա Գյոքալիը:

Գլխավոր դատավոր. Հավաստի են արդյոք ասված այն բաները, որ կարևոր փաստաթղթերը գողացվել են դր. Նազիմի կողմից:

Զիյա Գյոքալի. Ես [կուսակցության] Կենտրոնական քարտուղարությունից լուր ստացա, որ դր. Նազիմն ուզել էր կոմիտեի պատմությանը վերաբերող փաստաթղթերը: Ես դրանք բերեցի Եվրոպայից, և նա ասաց, որ մենք պետք է դրանք պահպանենք: Վերցրու լավերը, ասաց նա: Դրանից հետո դրա մասին ես լսեցի Միդիաթ Շուքրու քեյից: Հետո, երբ նրանց բանտարկեցին, ես իմացա, որ նրանցից ոչ ոք չի կարողացել

փաշայի ելույթով: Նոյեմբերի 5-ին համագումարը հայտարարել է, որ կուսակցությունը հասել է իր վախճանին և դադարեցնում է իր գործունեությունը, սակայն համագումարում հռչակվել է նոր՝ Նորոգում կուսակցության ստեղծումը: ՄԱԿ-ի կազմակերպչական կառույցն ու ունեցվածքը փոխանցվել են նոր կուսակցությանը: Ավելի վաղ հնչած վկայության ընթացքում նիստի նախագահող դատավորը Միդիաթ Շուքրուին հարցեր է տվել այդ փոխանցման մասին: Sönü Zeki Sarıhan, Kurtuluş Savaşı Günleri: Mondros'tan Erzurum Kongresine, h. 1 (Ankara: Öğretmen Yayınları, 1986), 19, 25. Նորոգում կուսակցության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տես Tarık Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, h. 2, Mütareke Dönemi (Istanbul: Hürriyet Vakfı Yayınları, 1986), 92-138:

24 TV, № 3543, մայիսի 8, 1919թ.:


դրանք կարգավորել: Հետո իմացա, որ փաստաթղթերը սնդուկով են բերել, և որ դրանք այդ ձևով են դուրս տարվել²⁵:

5099

Երրորդ խումբը բաղկացած է Ներքին գործերի նախարարությանը պատկանող որոշ թղթերից: Վերոհիշյալ մեղադրական ակտի ընթացքում տրվել է հետևյալ տեղեկությունը. «Ներքին գործերի մեծարգո նախարարի հուշագրի բովանդակությամբ և նրա արձանագրված վկայությամբ ապացուցվել է, որ Հնդկանուր անվտանգության նախկին տնօրեն Ազիզը, որը մինչև Թալեթաթ քեյի [Ներքին գործերի նախարարությունից] հրաժարականը վերցրել է [Ներքին գործերի նախարարության] կարևոր տեղեկություններ ու զեկույցներ պարունակող թղթապանակները, դրանք չի վերադարձրել [վերջինիս] հանգստի կոչվելուց հետո»²⁶: Լրացուցիչ հիմնավորում ենք գտնում այդ ժամանակաշրջանի մի շարք հուշագրություններում, որոնց մեջ հավաստվում է, որ մինչև արտասահման մեկնելը Թալեթաթ փաշան «նախ [զնաց] մի ընկերոջ ծովափնյա առանձնատունը... Առնավուտքոյի եզերքին... Հաղորդվել է, որ այս փաստաթղթերն այրվել են առանձնատան նկուղի հնցում»²⁷:

Իթթիհադականները միակը չեն, որ փաստաթղթեր են տարել: Գերմանացի սպաները նույնպես մեծ թվով փաստաթղթեր են վերցրել իրենց հետ: Հանս Ֆ. Լ. Ֆոն Զիքթը, որը պատերազմի ընթացքում ծառայել էր Օսմանյան բարձրագույն հրամանատարությունում, նույն այդ հրամանատարությանը վերաբերող շատ կարևոր արձանագրություններ է դուրս տարել՝ չնայած իր այն խոստմանը, «թե ոչ մի փաստաթուղթ չի տանի իր հետ»: 1918թ. նոյեմբերի 6-ի մի նամակում մեծ վեզիր Իզզեթ փաշան բողոքել է դրանից և պահանջել վերադարձնել փաստաթղթերը, ինչպես նաև այդ ժամանակ Գերմանիայում գտնվող նախկին իթթիհադական պաշտոնյաներին, որոնց մեջ՝ զլխավորապես Թալեթաթին, Էնվերին ու Ջեմալին: Բեռլինը խոստացավ, սակայն

25 Նույն տեղում:
26 "Emniyet-i Umûmiye Müdir-i esbakı Aziz Bey'in Talat Bey'in istifasından evvel dâireden aldığı malûmât ve muhâberât-ı mühimmeye dair dosyaları infisâlınden sonra îade etmediği Dâhiliye Nezâret-i celilesinin tezkeresi mündericâtı ve şahâdât-ı mazbûta delâletıyla sübût bulunmakda(dır)," TV, № 3540, մայիսի 5, 1919թ.:
27 Şevket Süreyya Aydemir, Makedonya'dan Ortaasya'ya Enver Paşa, 1914-1922, h. 3 (Istanbul: Remzi Kitabevi, 1978), 468.



չկատարեց փաստաթղթերը վերադարձնելու խոստումը²⁸: Նահանգներում ևս պետական մի շարք պաշտոնյաների հրամայված է եղել այրել իրենց ձեռքի տակ եղած փաստաթղթերը: Օրինակ, համաձայն ՄԱԿ ղեկավարների վերոհիշյալ մեղադրական ակտի, Դեր Ջորի գավառապետ (mutasarrif) Ալի Սուաթին հեռագրով հրահանգվել է կարդալուց հետո այրել հեռագիրը²⁹: Յոզղաթի դատի ժամանակ (երրորդ նիստ, 1919 թ. փետրվարի 10) դատավորն ընթերցել է բանտարկության ընթացքում հարցաքննող հանձնախմբին մեղադրյալի՝ Բոդազլըյանի մարզպետ (kaymakam) Քեմալի տված ցուցմունքները: Քեմալը հայտնել է, որ իրեն ուղարկված հեռագրերն, ընթերցվելուց հետո, պետք է ոչնչացվեն³⁰: Մարտի 24-ին՝ հաջորդ նիստի ընթացքում, նիստը վարող դատավորը հիշեցրել է, որ Քեմալը «[պատերազմական] հանցագործությունների հետաքննության հանձնաժողովի առջև տված իր ցուցմունքներում» ասել է, «որ իրեն հրաման է տրված եղել տեղահանությունների վերաբերյալ որոշ փաստաթղթեր այրել՝ դրանք ընթերցելուց հետո»³¹:

Նշանակված վայրեր հասնելուն պես տեղահանված հայերին բնաջնջելու մասին մեկ այլ տեղեկություն է տվել Ահմեդ Էսաթը (հետագայում հայտնի իբրև Էսաթ Ուրաս): Էսաթը, որը պատերազմի ժամանակ ղեկավարում էր Անվտանգության վարչության երկրորդ բաժանմունքը (Emniyeti Umumiye II. Şubesi Müdürlü) և հետագայում ձերբակալվեց բրիտանացիների կողմից, ասել է, որ տեղահանվածներին սպանելու մասին հրամանները սուրհանդակի միջոցով ուղարկվում էին տարբեր նահանգապետների, և որ կարդալուց հետո

28 DE/PA-AA/Türkei 158/21, A48179, Ահմեդ Իզնեթ փաշայի հեռագիրը Գերմանիայի կառավարությանը (որը ներկայացվել է Բեռլինում Օսմանյան դեսպանի կողմից, 1918 թ. նոյեմբերի 11-ին): Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիայի զինվորական արխիվը գտնվում էր Բեռլինում: Դրա փաստաթղթերից շատերը ոչնչացան դաշնակիցների ուժերի կողմից: Միջոցով վերցրած փաստաթղթերի վերաբերյալ տես նաև V. N. Dadrian, German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity (Cambridge, MA: Blue Crane Books, 1996), 159-60:

29 TV, № 3540, 5 May 1919, բացման նիստի արձանագրությունը (ապրիլի 27, 1919 թ.):

30 İkdam, փետրվարի 11, 1919 թ.:

31 Alemdar, մարտի 25, 1919 թ.:

հեռագրերի բնօրինակները պետք է հետ վերադարձվեն սուրհանդակին³²:

Ահմեդ Էսաթի հաղորդածը հաստատել է Յոզղաթի գավառապետ Քեմալը: Վերոհիշյալ հետաքննող հանձնաժողովին ուղղված 1918 թ. դեկտեմբերի 12-ի իր գրավոր հաշվետվության մեջ Քեմալը հաղորդել է հետևյալը. «[ՄԱԿ կուսակցության քարտուղար] Նեջաթի բեյը եկավ Յոզղաթ... նա կարդաց իր [ձեռքերում] բռնած նամակի բովանդակությունը, որ գրված ու ստորագրված էր նահանգապետ Աթըֆ բեյի կողմից... Երբ ես Նեջաթի բեյից ուզեցի վերը նշված նամակը, նա այն ինձ չտվեց»³³: Քեմալն այս վկայությունը կրկնել է Յոզղաթի դատավարության տասնամեկերորդ նիստին՝ 1919 թ. մարտի 5-ին³⁴:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.

«ՎԵՐԱՑՆԵԼ ԸՆԹԵՐՑԵԼՈՒՄ ՅԵՏՈՒ»

Փաստաթղթերի այրման և վերացման այլ միջոցների տվյալները, սակայն, չեն սահմանափակվում Ստամբուլի դատարանի սրահում տեղի ունեցած ու հետաքննող հանձնախմբերի կատարած հարցաքննություններով: Վարչապետական օսմանյան արխիվում կան նաև Ներքին գործերի նախարարության մի շարք հաղորդագրություններ, որոնցում հասցեատերերին հրահանգվում է ընթերցելուց հետո այրել դրանք: 1915 թ. հունիսի 22-ի ծածկագրված մի հեռագրով, որ ստորագրված է Թալեաթ փաշայի կողմից և Անվտանգության գլխավոր վարչության կողմից ուղարկված մի քանի նահանգապետների (vali), գավառապետների (mutasarrif) և պաշտոնատար այլ անձանց, մի շարք հրահանգներ են տրվում տեղահանվող խմբերի մեջ եղած հավատարմի լեղաձների հետ վարվելու մասին: Հեռագիրն ավարտվում է հետևյալ բառերով. «Տեղեկացրեք նրանց, ովքեր կատարելու են մեր հեռագրի [հրամանները], հեռագրատնից վերցրեք այս հեռագրի պատճենը և վերացրեք այն»³⁵:

32 FO 371/4172/31307, 1919 թ. փետրվարի 10 թվագրված զեկույցը:

33 ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. № 494:

34 Renaissance, մարտի 6-7, 1919 թ.:

35 BOA/DH.ŞFR, № 54/100, 1915 թ. հունիսի 22-ին Վանի նահանգապետ Ջեվդեղ բեյին, Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմի բեյին, Էրզրումի նահանգապետ Թաշին բեյին, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա բեյին, Մանուրեթյուլաիզի նահանգապետ Սաբիթ բեյին, Դիյարբեքիրի նահանգապետ Ռեշիդ բեյին, Սվազի նահանգապետ Մուամեր բեյին և Ջանիկի

Եվս մեկ օրինակ. Ներքին գործերի նախարարության 1915 թ. հունիսի 23-ի հեռագրով Մոսուլի ու Դեր Զորի օսմանյան պաշտոնյաներին հրամայվում է «այս խնդիրն անձնապես լուծել»: Այդ հեռագիրը խիստ կարևոր հրահանգներ է պարունակում տեղահանված հայերի վերատեղավորման մասին.

Մեծ ուշադրություն պետք է ցուցաբերել այն հարցում, որ [Ժամանող] հայ բնակչության վերատեղավորման ժամանակ նրանք [մասնատվեն] և տեղավորվեն լիովին անջատ վայրերում, շրջանի [տեղացի] բնակիչների մեջ, որ նրանց թույլ չտրվի հայկական դպրոցներ բացել վերաբնակեցման շրջաններում, այլ փոխարենը նրանց երեխաներն ստիպված լինեն իրենց ուսումը շարունակելու պետական դպրոցներում, որ [նրանց համար] հիմնվելիք տարբեր քաղաքների ու գյուղերի միջև լինի [առնվազն] հինգ ժամվա ճանապարհ, և որ նրանք չտեղավորվեն [ոռավարակական] վայրերում, որը նրանց [շրջակա միջավայրը] վերահսկելու կամ [ինքնա]պաշտպանության [հնարավորություն] կտա:


Վերջում տեղական պաշտոնյաներին հրահանգվում է «նրանց [ուլքեր պետք է կատարեն այս հանձնարարությունները] տեղեկացնելուց հետո վերացնել այս հեռագիրը»³⁶:

Երրորդ և վերջին օրինակը 1915 թ. հուլիսի 12-ի մի հեռագիր է, ուր հրամայվում է, որ «երեխաներին, որոնք բազմաթիվ վայրեր ուղարկված հայերի տեղափոխության ու փոխադրության ընթացքում ամենայն հավանականությամբ այժմ մնացել են առանց մեծահասակների հսկողության, իրենց դաստիարակության ու կրթության նպատակով բաժանել այս քաղաքների ու տարածքների ամենաերևելի ու պատվավոր մարդկանց, որոնք ոչ հայ են և ոչ էլ օտարերկրացի»: Հեռագիրը եզրափակվում է հետևյալ հրահանգով. «Հրամայված է, որ այս ծածկագիրը, հարկ եղած մարդկանց ցույց տալուց հետո, ամբողջովին ոչնչացվի»³⁷:

գավառապետ Նեջմի բեյին ուղղված ներքին գործերի նախարար Թալեթի փաշայի ծածկագրված հեռագիրը:

36 BOA/DH.SFR, № 54/122, ՑՆԿՎ-ի 1915 թ. հունիսի 23-ին Մոսուլի նահանգ և (Դեր) Զորի գավառ ուղարկված ծածկագրված հեռագիրը:

37 BOA/DH.SFR, № 54/411, ՑՆԿՎ-ի 1915 թ. հուլիսի 12-ի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Դիյարբեքի, Էրզրոմի, Բիթլիսի, Վանի, Տրապիզոնի, Սվազի, Տյուրքմենչիգարի (Բուրսա), Էդիրնեի ու Մոսուլի նա-



Նկար 1. Օսմանյան 54/100 փաստաթուղթը. Կրոնափոխության հարցի մասին Թալեթի 1915 թ. հունիսի 22-ի հեռագիրը մի քանի նահանգապետների, գավառապետների և պաշտոնատար այլ անձանց: Այն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Այս հեռագրի պատճենը վերցրեք հեռագրատնից և ոչնչացրեք այն»:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՎԵՐԱՅՈՒՄԸ ԸԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈ

Հնարավոր մերկացնող փաստաթղթերի ոչնչացման փորձերն էլ ավելի մեծ թափ են առել, երբ պարզ է դարձել, որ Կենտրոնական տերությունները, ներառյալ Օսմանյան կայսրությունը, տանուլ են

հանգներ և Իզմիրի, Ջանիկի, Կեսարիայի, Մարաշի, (Դեր) Զորի ու Ուրֆայի գավառներ:

տալիս պատերազմը: Պատերազմական շրջանի կառավարության նախարարների ռազմական տրիբունալի 1919 թ. հունիսի 3-ի նիստի ժամանակ փոստային նախկին նախարար Հուսեյին Հաշիմը հաստատել է Պատերազմի նախարարությանը պատկանած փաստաթղթերի ոչնչացումը: Հաշիմի ու նիստի նախագահող դատավորի միջև տեղի է ունեցել հետևյալ երկխոսությունը:

Գլխավոր դատավոր. Չաթալջայի պաշտոնյաների հարցաքննության ընթացքում պաշտպանական կողմի տված ցուցմունքներից ի հայտ եկավ, որ Փոստի ու հեռագրային նախարարությունում ձեր եղած ժամանակ հեռագրային հաղորդագրությունների քննարկներն այրելու կամ վերացնելու ընդհանուր հրահանգ է եղել. դուք հիշո՞ւմ եք, թե այդ հրահանգն ինչու է տրվել:

Հաշիմ բեյ. Բոլորովին չեմ կարող հիշել, Ձերդ ազնվություն: Սակայն Գլխավոր շտաբի վարչությունից (Karârgâh-ı Umumi) ծանուցում (tebliğ) կար, որ զինվորական հաղորդագրությունները թշնամու ձեռքը չընկնեն, և նրանք գործել են ըստ այդմ: Այդ [քայլը] կլիներ [ընդհանուր ջանքի] մի մասը: Մի մասը՝ որոշ հեռագրեր, չեն այրել, այլ փոխարենը պատռել են կամ վաճառել՝ իբրև մակուկատորա: Ես նախարար էի նշանակվել ընդամենը երկու կամ երեք օր առաջ: Նախարարությունը հանձնել էր հաշվապահական բոլոր պաշտոնյաներին (muhâsebe memûrîni), և նրանք մտածել են, որ անպայման պետք է այրեն: Հնարավոր է, որ սա կապված է դրան, բայց չեմ կարող հիշել: Նախարարությունը ամբողջը հանձնել էր իր հաշվառող պաշտոնյաներին (muhâsebe memûrîni), և նրանք մտածել են, որ դրանք անպայման պետք է այրվեն: Կարծես թե դա կապված է սրան, բայց չեմ կարող հիշել:

Գլխավոր դատավոր. Միայն զինվորական հաղորդակցությանն առնչվողներն էին [հրամայված ոչնչացնել], ճիշտ է, պարոն:

Հաշիմ բեյ. Այո, պարոն, միայն [փաստաթղթերը], որ առնչվում էին զինվորական հաղորդագրություններին, ոչ մի այլ բան: Զինվորական թե՛ ներքին և թե՛ Գլխավոր շտաբի վարչության հետ հաղորդագրությունները³⁸:

Այն դատավարությունը, որի ընթացքում տեղի է ունեցել վերը շարադրված խոսակցությունը, սկսվել է 1919 թ. օգոստոսի 4-ին և ըստ էության բացվել է Չաթալջայում Փոստի ու հեռագրային վարչության նախկին տնօրեն Օսման Նուրի էֆենդու (վերոհիշյալ «Չաթալջայի պաշտոնյաներից» մեկի) դեմ՝ փաստաթղթերն այրելու գործով: Իր ցուցմունքների ընթացքում մեղադրյալը հայտարարել է. «Ես որոշ փաստաթղթեր այրել եմ՝ համաձայն տրված հրահանգի: Իմ վերադասները, որոնք գործում էին իրենց սեփական լիազորություններով, ասացին այրել թղթերը՝ մի մասն այս տարվա, մյուսը՝ մյուս տարվա, և հետևաբար ես այդպես արեցի»: Դատավարության վերջնական արդյունքի մասին տեղեկություն չկա³⁹: Ստամբուլի հայկական «Ժողովուրդ» օրաթերթի համաձայն, Օսման բեյն ընդունել է, որ ոչնչացված փաստաթղթերը կապված էին հայերի տեղահանության ու կոտորածների հետ⁴⁰:

Փաստաթղթերի ոչնչացումը շարունակվել է Օսմանյան կայսրության պարտությունից հետո և զինադադարի շրջանում: Թալեաթ փաշայի կառավարության հրաժարականին 1918 թ. հոկտեմբերի 14-ին հաջորդեց նոր կառավարության ձևավորումը Ահմեդ Իգեթ փաշայի գլխավորությամբ, որը ծառայել էր իբրև մեծ վեզիր և պատերազմի նախարար: Իր առաջին գործադիր քայլերից մեկով Իգեթ փաշան ՀԿ վարչությանը (Պատերազմի նախարարությունում դրան տրվել էր «Արևելքի գործերի վարչություն» խարուսիկ անունը) հրահանգել է «անմիջապես դադարեցնել գործունեությունը և ոչնչացնել արխիվները»⁴¹: Վերը հիշատակված Ահմեդ Հաթթը նման մի բացատրություն է տվել իրեն հարցաքննող բրիտանացիներին՝ ասելով, որ «զինադադարի համաձայնությունից քիչ առաջ [պետական] պաշտոնյաները տարբեր գիշերներ գնացին արխիվային բաժանմունք և վերացրեցին փաստաթղթերի մեծ մասը»⁴²:

39 Alemdar, օգոստոսի 5-6, 1919, թ.:

40 Ժողովուրդ, օգոստոսի 6, 1919 թ.՝ հղված ըստ V. N. Dadrian, "Documentation of the Armenian Genocide in Turkish Sources," in Genocide: A Critical Bibliographic Review, vol. 2, ed. Israel W. Charny (London: Mansell; New York: Facts on File, 1991), 105:

41 Hüsamettin Ertürk, "Milli Mücadele Senelerinde Teşkilat-ı Mahsusa" (ձեռագիր) (Ankara: Stratejik Araştırmalar ve Askerlik Tarihi Enstitüsü, n.d.), 14, հղված ըստ Bilge Criss, İşgal Altında İstanbul (Istanbul: İletişim, 1983), 147:

42 FO 371/4172/31307, folio 385, report by Heathcote-Smith, dated 4 February 1919.

Կայսրության մայրաքաղաքից դուրս ևս տեղի է ունեցել միևնույն գործընթացը, քանի որ նահանգային պաշտոնյաներին հրամայվել է ոչնչացնել իրենց ձեռքի տակ եղած փաստաթղթերը: Ռեֆիկ Հալիդ Քարայը, որը զինադադարի շրջանում ծառայել է իբրև Փոստի և հեռագրային վարչության ընդհանուր տնօրեն, տարիներ անց (1948 թ.) «Աղեղե» ամսագրում հրապարակել է իր հուշերը, ուր նշում է Փոստի, հեռագրային ու հեռախոսային վարչությունում ծառայած պաշտոնյա Հ. Սադրը Դուրանից ստացած երկարաշունչ մի նամակի մասին: Նամակի մի հատվածում, որը հետագայում տեղ է գտել նրա հուշագրությունների առանձին հրատարակված գրքում, ասվում է հետևյալը.

Ցանկանում եմ Ձերդ վսեմությանը հիշեցնել մի իրադրություն, որի վկան եմ եղել զինադադարի շրջանի կառավարության մեջ: Ինչպես ձեզ քաջ հայտնի է, Մուդրոսի պայմանագրից հետո Անտանտի տերությունները մեկը մյուսի հետևից սկսեցին ներխուժել մեր հայրենիքը՝ իրենց բանակներն ուղարկելով ու գանազան կողմերից մտնելով մեր երկիրը: Քանի որ վախ կար, որ այդ ներխուժման ընթացքում կարող են բռնագրավվել բոլոր հաղորդագրություններն ու գոյություն ունեցող փաստաթղթերը, որոնք գտնվում էին Փ. Հ. Հ. կենտրոնական վարչության ու դրա նահանգային մարզերի տնօրինության տակ, Մեհմեդ Էմին բեյը հեռագրով և նախարարության անունից [նահանգային ու գերատեսչական] բոլոր կենտրոններին հրահանգներ ուղարկեց՝ գոյություն ունեցող պաշտոնական բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև հեռագրերի թե՛ բնօրինակներն ու թե՛ [կրկնօրինակված] բոլոր պատճեններն ամբողջովին ոչնչացնելու անհրաժեշտության մասին⁴³:

Ինչպես երևում է՝ նահանգներ ուղարկված վերոնշյալ հեռագրերից մի քանիսը, որոնցում կարգադրվում էր այրել փաստաթղթերը, արդեն իսկ բրիտանացիների ձեռքն էին ընկել: Օրինակ, 1919 թ. հունվարի 24-ին բրիտանական ուժերը կարողացան ձեռք բերել Ներքին գործերի նախարարության Այնթափի նահանգ ուղարկված մի հեռագրի բնօրինակը, որով նահանգային պաշտոնյայից պահանջվում էր ոչնչացնել ընդհանուր գորակոչից (1914 թ. օգոստոս) մինչև ներկա

պահը շրջան ուղարկված բոլոր պաշտոնական հեռագրերի բնօրինակները⁴⁴: 1919 թ. հունիսի 17-ին արտաքին գործերի նախարար Սաֆա բեյը մի միջադեպի կապակցությամբ բողոք է հղել Բրիտանիայի բարձրագույն հանձնակատարի գրասենյակ, որի մեջ ընդունում է, որ Դիարբեքիի Հեռագրային վարչությունից մի շրջաբերականով նահանգի շրջանային ու մարզային կենտրոններին հրահանգվել է ոչնչացնել 1914-ից 1918 թվականների ընթացքում ստացված բոլոր փաստաթղթերի բնօրինակները⁴⁵:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՂՆՉԱՑՄԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԻՆԸ

Թեև փաստաթղթերի ոչնչացումը մեծ մասամբ կատարվում կամ ուղղորդվում էր պետական հաստատությունների կողմից, կային նաև որոշ անհատներ, հատկապես հայերի տեղահանություններին ու կոտորածներին ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցածների մեջ, որոնք «ապացույցները թաքցնելու» նախաձեռնությունը երբեմն վերցնում էին իրենց ձեռքը: Ստամբուլից ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ Քյոռ Ալի Իհսան բեյը, երբ Անկարայի Անկախության տրիբունալի (stiklal Mahkemesi) կողմից դատի էր ենթարկվում 1926 թ. Իզմիրում Մուստաֆա Քեմալի դեմ մահափորձի մեղադրանքով, հարցաքննության ժամանակ ընդունել է, որ այրել է իր տրամադրության տակ եղած բոլոր փաստաթղթերը⁴⁶: Նման անկեղծությունն անսովոր չէր, և հետագա տարիներին նույն կերպ վարված շատերն իրենց հուշերում նշում էին այդ փաստը: Բերենք երկու օրինակ:

«Ի պատասխան հակառակորդ Իթիլաֆ կուսակցության⁴⁷ անդամների խրախուսանքների ու հորդորների, թե՛ պատերազմական

44 FO 371/4174/15450, folio 182, հղված ըստ Dadrian, "Documentation in Turkish Sources," 105:

45 FO 371/4174/102551, folios 108–11, հղված ըստ Dadrian, "Documentation in Turkish Sources," 105.

46 Անկարայի Անկախության դատարանում 1926 թ. «Իզմիրի դավադիրների» դատավարության մեղադրական ակտի և պաշտպանական վկայությունների չիրատարակված պատճենը:

47 Ալի Մյունիֆն այստեղ հղում է Ազատություն և համաձայնություն կուսակցությանը, որը իթթիհականների կողմից օրենքից դուրս էր հռչակվել, սակայն կրկին ասպարեզ էր եկել զինադադարի շրջանում (1918 թ. հոկտեմբերից հետո):

43 R. H. Karay, Minelbab İlelmihrab (Mütareke Devri Anıları) (Istanbul: İnkılap Kitabevi, 1992), 271–72.

ժամանակաշրջանում կատարած հանցագործությունների մեջ կասկածվողները և թե՛ բոլոր բարձրաստիճան իթթիհադական քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները ձերբակալվեցին ու դատվեցին», հիշում է ՄԱԿ նշանավոր անդամ, հանրային աշխատանքների վերջին իթթիհադական նախարար և նախկին նահանգապետ, մարզպետ ու նահանգային վարչարար Ալի Մյունիֆ բեյը (հետագայում՝ Ali Münif Çetinkaya): Ադանայի նահանգում հայերի տեղահանության համար հետախուզման մեջ լինելով՝ նա հանձնվել է բրիտանացիներին և բանտարկվել Մալթա կղզում:

Սակայն, Ալի Մյունիֆն զգուշացված էր իր վերահաս ձերբակալության մասին. «Նրանք ինձ տեղեկացրին, որ իմ տունը խուզարկվելու էր: Թեև չէի կարծում, թե կարևոր բան էի թողել, մեր տունը հարձակման ենթարկվեց, և [ես] ձերբակալվեցի՝ այնտեղ նրանց գտած մի քանի հաղորդագրությունների պատճառով»: Մերկացնող այդ փաստաթղթերի վերաբերյալ Ալի Մյունիֆն ասում է հետևյալը. «Հայերի տեղահանությունների առնչությամբ իմ դեմ հարուցված քրեական գործի մեջ նրանք փորձեցին ցույց տալ, որ ես [մեղավոր եմ] եղել այս խնդիրը հրահրելու մեջ... Նրանք ճամպրուկի կողքի գրպանում գտան մի քանի հեռագրերի սևագրություններ, որոնք ես Ադանայից ուղարկել էի Ներքին գործերի նախարարություն... Թեև ժամանակին ոչնչացրել էի ավելի կարևոր փաստաթղթերը, այս մեկը մոռացել էի ճամպրուկի փոքրիկ գրպանում... Այդ փաստաթղթերը, որը չէր ստացվել ոչնչացնել, գործածվեց իմ դեմ՝ իբրև իմ մեղքի ապացույց»⁴⁸:

Թուրքիայի անկախության պատերազմի ընթացքում Անկարայում ազգայնական կառավարության արդարադատության նախարար Ահմեթ Ռիֆաթ Չալըքայի հուշերը հրապարակվել են նրա ավագ որդու՝ Հուրշիթ Չալըքայի կողմից, որը նշում է իր հոր զարմանալի հատկանիշը.

Մի հատկություն, որ նրան զանազանում էր իր ժամանակի թուրք մյուս մտավորականներից, այն էր, որ նա ամեն օր նշումներ էր կատարում իր տեսած իրադարձությունների վերաբերյալ և գրի առնում դրանց մասին իր անձնական կարծիքներն ու գնահատականները: Նա չի վարանել պահել իր տրամադրության տակ հայտնված որոշ փաստաթղթեր, որպեսզի նրանք գործած-

48 Taha Toros, Ali Münif Bey'in Hatıraları (İstanbul: İsis Yayınları, 1996), 96–97.

վեն իրենից հետո գալիք սերունդների կողմից... Որքան ամոթալի է, որ այնպիսի պատճառներով, որոնք նա բացատրում է իր հուշագրության ներածականում, հետագայում նա ստիպված եղավ ձերբագատվելու դրանցից կամ այրելու դրանք⁴⁹:

Պատճառները շատ հստակ են: Ահմեթ Ռիֆաթը նախ լուր էր ստացել, որ իրեն որոնում է Ստամբուլի ռազմական տրիբունալը: Այնուհետև նա անցել է մեղադրող դատախազի ու դատավորի հատուկ պահպանության տակ, որոնք նրան հարցաքննել են, և ժանդարմերիայի գնդի հրամանատարի խնամքի տակ, որը կատարել է ձերբակալությունը: Ինչպես Ռիֆաթ բեյն է հիշում.

Մի օր դատախազն ինձ տեղեկացրեց, ... որ նահանգ[ապետի գրասենյակում] ծածկագրված հեռագիր է ստացվել, [ուր ասվում է,] որ միացյալ հանձնաժողով պիտի գա Կեսարիա՝ հետաքննելու համար տեղահանությունը [1915 թ. գործողությունները], և որ նրանք հարցաքննություններ ու քրեական հետաքննություն են անցկացնելու այն մարդկանց նկատմամբ, ովքեր կասկածյալ են թվում, ինչպես նաև խուզարկելու են տները: Մենք միասին գնացինք իմ դպրոցական մի ընկերոջ տուն, որտեղ ես վառեցի [զանազան] փաստաթղթեր և իմ հուշագրությունները⁵⁰:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՅՄԱՆԱՓԱԿ ԱՐՔՅՈՒՐՆԵՐ ՅԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՂՁԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերը ներկայացված տեղեկությունների հիման վրա սխալ կլինի վստահորեն եզրակացնել, թե թուրքական արխիվային փաստաթղթերը բծախնդրորեն պահպանվել են մինչև այժմ, և կամ որ հետևողականորեն հեռացվել ու ոչնչացվել են միայն «զգայուն» կամ մեղացնող արձանագրությունները: Թուրքիայում արխիվների պահպանության հարցը լուրջ ու հիմնավոր խնդիրներ ունի, որոնք այս համեմատաբար բացահայտ հարցի սահմաններից շատ ավելի հեռու են ձգվում: Անդրադարձնելով պատմության նկատմամբ խիստ անփույթ ու ինքնագոհ վերաբերմունքը՝ պատմական նյութերի գի-

49 Hürşit Çalika, ed., Kurtuluş Savaşında Adalet Bakanı Ahmet Rifat Çalika'nın Anıları (İstanbul: Suçlu İddiaların Kolluğu, 1992), 7.

50 Նույն տեղում, 7, 15–16:

տակցված ոչնչացումը բացահայտում է մի մշակույթի առկայություն, մի մտածողություն, որը չի կարողանում տեսնել պատմական որևէ տեսակի արժեք, առավել ևս փաստաթղթեր պահպանելու կարևորությունը⁵¹:

Լրագրող Մուրատ Բարդաքչըն, որը հայտնի է հանրամատչելի պատմության իր աշխատություններով, պնդում է, «որ Վարչապետական օսմանյան արխիվներում այսօր գտնվող միլիոնավոր փաստաթղթերի մեջ մի հատիկ օգտակար քաղաքական փաստաթուղթ չկա, որ վերաբերի [օսմանյան վերջին ու գահընկեց] սուլթան Վահիբեդինին», և ավելացնում է. «[նրա կյանքի] տարբեր իրադարձություններ[ը], որ գտնում ենք, պալատի արարողակարգի [պահապանների] միջև հինգերորդական կամ նույնիսկ տասներորդական կարգի գրագրություններ են, այնպիսի բաներ, ինչպիսին են մեդալների ու պարգևների հանձնումը, օսմանյան գահին բարձրանալու տարելիցին կամ իր տարեդարձին ստացած շնորհավորանքները... սակայն ամենից ողբալին [այն է], որ այսօր ոչ ոք գաղափար չունի, թե որտեղ են քաղաքական փաստաթղթերը, որոնք պետք է արխիվներում լինեն»⁵²:

Անտարբերության ու ինքնագոհության նմանօրինակ կարելի է տեսնել Տրապիզոնի նահանգային արխիվի ճակատագրում, որը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ուղարկվեց Սամսունի խորքերը՝ այն պահպանելու նպատակով: Երբ Տրապիզոնն ազատվեց ռուսական զրավումից, զինադադարից հետո արխիվը վերադարձվեց Տրապիզոն, բայց 1982 թվականին հինգ հարյուրամյա

վաղեմության այդ արխիվը «պատահականորեն ծովը նետվեց»⁵³: Վաղ օսմանյան ժամանակաշրջանում կենտրոնական Անատոլիայի նահանգային նստավայր Քոնյայում դժբախտաբար այլևս գոյություն չունի նահանգային արխիվ, որի արմատները հասնեն մինչև օսմանյան դարաշրջան, որովհետև 1987 թվականին, առանց գիտական կամ համակարգված գույքագրման, յոթանասունվեց բեռնատար մեքենայով արխիվային փաստաթղթեր դուրս բերվեցին և հետո ուղարկվեցին Ցելյուլոզի ու թղթի արտադրության պետական ձեռնարկություն (այսուհետև՝ ՑԹԱԶ)⁵⁴:

Այդպես նաև, 1931թ. Ստամբուլի Գրանցումների ծառայությունը Ֆինանսների նախարարության արխիվից մոտ հիսուն տոննա օսմանյան շրջանի փաստաթուղթ է վաճառել Բուլղարիային «երեք դուրուշով, մեկ օկկան տասը փարայով»⁵⁵: Փաստաթղթերը բաց թափքերով բեռնատարներով տեղափոխվել են Սիրբեջիկայարան՝ իրենց հետևից ճանապարհին թողնելով թղթերի երկար, կայուն շարան, որը քամին քշում էր Սուլթան Ահմեդ (Գյուլհանե) այգով մեկ: Աղբահավաքները հավաքել են թափոնները և Ստամբուլի Քումքափը շրջանի ավից լցրել օվկիանոսը⁵⁶:

2000թ. թուրքական լրագրերը հաղորդում են, որ ՑԹԱԶ-ի աղբակույտերի մեջ անհատ քաղաքացիների կողմից հայտնաբերվում են օսմանյան ժամանակաշրջանի փաստաթղթեր, ինչպես նաև կրո-

51 «Ռեալիզմ» օրաթերթի 2004թ. դեկտեմբերի 19-ի համարում Այշե Հյուրի կողմից գրված մի շատ հետաքրքիր նյութ կա «Եվս մի արխիվ ոչնչացվեց. որտեղ որն է սա» [Bu İmha Edilen Kaçınıcı Arşiv] վերնագրով, ուր հեղինակը մի շարք ցնցող օրինակներ է բերում, թե ինչպես են անգիտակցաբար ոչնչացվել թուրքիայի տարբեր արխիվների փաստաթղթերը, կամ թե ինչպես են պաշտոնյաները պարզապես մեկդի կանգնել և թույլ տվել դրանց ոչնչացումը: Հյուրն իր հոդվածում չի նշում իր աղբյուրները՝ նյութի ծավալի սահմանափակության և լրագրողական ձևաչափի պատճառով, սակայն, այդուհանդերձ, նրա բերած օրինակներն արժե կրկնել՝ ցույց տալու համար, թե որքան լուրջ է այս հիմնախնդիրը: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Այշե Հյուրին՝ տեղեկությունների իր աղբյուրներն ինձ տրամադրելու և այս ու այլ տեղեկություններ ինձ հաղորդելու համար:

52 Մեջբերված է ըստ Mustafa İslamoğlu, «Şahbabanın Kemikleri Sızlamaz mı?», Yeni Şafak, փետրվարի 10, 1999թ.:

53 Դր. Յուսուֆ Քյուլուկդաղ, Սելջուկյան համալսարանի Թուրքական հետազոտական կենտրոնի դասախոսական կազմի անդամ, նշված Enis Berberoğlu, “Dünn unutma yoksa soyulursun,” Hürriyet, հունիսի 26, 1998թ. հոդվածում:

54 Նույն տեղում: Ցելյուլոզի ու թղթի գործարաններ (Selüloz ve Kâğıt Fabrikaları) ձեռնարկությունը սեփականաշնորհվեց 1990-ականներին ու 2000-ականներին: Sönü A. Erinc Yeldan, “Assessing the Privatization Process in Turkey: Implementation, Politics and Performance Results,” Global Policy Network, 12 April 2006, http://www.gpn.org/research/privatization/priv_turkey_en.pdf/:

55 Մեկ օկկան 1.2 կիլոգրամ է: 1930-ականներին ամերիկյան մեկ դոլարն արժեք 2 լիրա 12 դուրուշ: Թուրքիայի կառավարությունն այս վաճառքից շահել է մոտ հարյուր հազար դոլար:

56 Bulgaristan’a satılan evrak ve cumhuriyet dönemi arşiv çalışmaları (Ankara: Devlet Arşivleri Genel Müdürlüğü, 1993); Necati Aktaş and Seyit Ali Kahraman, Bulgaristan’daki Osmanlı Evrakı (Ankara: n.p., 1994), xvii: Sönü İsmail Doç. Dr. Fethi Gedikli, “Osmanlı Devletinin kuruluşunun 700. yılında Osmanlı Arşivlerinin Durumu,” www.osmanli.org.tr/web/makaleler/017.asp-43k.

նական ու բարեգործական տարբեր կազմակերպությունների ու հիմնադրամների (evkaf), այդ թվում և սուլթան Բեյազիդ II-ի ստեղծած Հարեմեյն հիմնադրամի փաստաթղթեր⁵⁷: Թեև հատկապես ո՛վ է հրամայել այդ փաստաթղթերն ուղարկել ՑԹԱԶ՝ առեղծված է մնում, քանի որ այս կապակցությամբ որևէ հարցում կամ հետաքննություն չի կատարվել, թեև կարելի է արդարացիորեն ենթադրել, որ դրանց պահպանումը եղել է Բարեգործական հիմնադրամների Ստամբուլի շրջանային վարչության (Istanbul Vakıflar Bölge Müdürlüğü) խնդիրը:

Սեփական երկրի պատմության հանդեպ այս արհամարհանքը երբեմն այնպիսի չափերի է հասել, որ վերածվել է պետական քաղաքականության: «Պահպանման անհրաժեշտություն չունեցող թղթերի ու փաստաթղթերի ոչնչացման մասին»⁵⁸ 1932 թվականի մի որոշմամբ նախատեսվում էր տասը տարուց հին բոլոր պետական փաստաթղթերի ոչնչացումը: Պետական կենտրոնական կազմակերպությունների և նրանց նահանգային ճյուղերի միջև ոչնչացման մեթոդների (որոնք որոշմամբ հստակեցված չէին) մասին անվերջանալի թվացող նամակագրություններից հետո որոշվել է, որ ժամանակին գաղտնի համարված այն փաստաթղթերը, որոնք հետագայում կորցրել են իրենց ակտուալությունը կամ կարևորությունը, կվաճառվեն թղթի առևտրականներին⁵⁹: 1939 թ. այս որոշումը կասեցվել է՝ դրա իրագործման քառսային եղանակի պատճառով, իսկ 1957 թ. մի նոր «Ոչնչացման օրենք» փոխարինել է հին որոշմանը: Եվ սակայն նոր օրենքի վարչարարությունն ու կիրարկումը կրկին այնքան անհամաչափ էին ու քառսային, որ անհնար են դարձրել դրա իրականացումը, և 1959 թ. օրենքն ուժը կորցրած է ճանաչվել՝ այն հիմնավորմամբ, թե Ֆինանսների նախարարությունն անկարող է վճարումներ հատկացնել փաստաթղթերի ոչնչացման համար: Իրենց սեփական արխիվները վերացրած պետական ու կիսապետական կառույցների, ինչպես նաև ոչնչացված փաստաթղթերի թիվը տառացիորեն անհաշիվ է,

քանի որ որևէ գրանցում չի պահպանվել այսպես բազմաքանակ կերպով ոչնչացված թղթերի թվի, էլ չսասած բովանդակության մասին⁶⁰:

Խոսակցություններ կան, որ Ոչնչացման օրենքը չեղյալ հայտարարելու (1959 թ.) և 1980-ակաների միջև ընկած ժամանակահատվածում պետական կամ պետական հիմնարկներին կից տասնյոթ հաստատություն իրենց փաստաթղթերը ոչնչացրել են Թուրքիայի Ազգային մեծ ժողովի թույլտվությամբ⁶¹: Տպագրության և հրատարակությունների նախկին տնօրեն՝ (1974, 1978-79 թթ.) Օրհան Քոլոդլուն հեռուստատեսային մի քննարկման ընթացքում պատմել է, որ իր պաշտոնավարման ընթացքում նա խնդրել է ուսումնասիրել Անկախության պատերազմից ի վեր եղած բոլոր ելույթների, պաշտոնական հայտարարությունների ու հոչակագրերի արխիվները, սակայն նրան հայտնել են, որ բոլոր այդ փաստաթղթերը արխիվներից տեղափոխվել են ՑԹԱԶ, «երբ նրանք փոխել են շենքերը»⁶²:

1980 թվականի ռազմական հեղաշրջումից հետո ձեռնարկվել է մեկ այլ «մաքրություն»՝ իբրև թե նպաստելու համար պետության կողմից թղթի պահանջի բավարարմանը, ինչպես նաև արխիվային փաստաթղթեր պահող հաստատություններում տարածք ազատելու նպատակով: Ամեն դեպքում, ցավալիորեն ակնհայտ է, որ այս մաքրագտումը կատարվել է նախ և առաջ երկրի նոր ղեկավարների գաղափարաբանական մտահոգությունները բավարարելու նկատառությամբ: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի խոսնակ Հյուսամեթին Ջինդորուքի համաձայն, այս ընթացքում վերացվել են Հանրապետական ժողովրդական կուսակցության (Cumhuriyet Halk Partisi) բոլոր արխիվները. այդ կուսակցությունը միայնակ կառավարել և իր կնիքն է թողել Թուրքիայի վրա հանրապետության գոյության առա-

57 "Osmanlı Arşivi'nin Belgeleri Kâğıt Yapılsın Diye SEKA'ya Gönderildi," Yeni Şafak, հունիսի 17, 2000 թ.:

58 "Muhafazasına Lüzum Kalmayan Evrak ve Vesaitin İmhasına Dair," Resmi Gazete, № 2820, հոկտեմբերի 4, 1934 թ.:

59 "Resmi dairelerde lüzumsuz kâğıtların ne suretle yok edileceğine dair olan 1282 sayılı nizamna menin tefsirine dair kararname," Resmi Gazete, № 2913, հունվարի 26, 1935 թ.:

60 Prof. Dr. Oğuz İçimsoy, "Özelleştirme uygulamaları ve özelleştirilen kamu kuruluşlarının arşivleri" գեկույցը՝ ներկայացված "Privatization and Institutional Archives" [Özelleştirme ve Kurum Arşivleri] քննարկմանը, որը հյուրընկալել էր Թուրքիայի տնտեսական ու սոցիալական պատմության հիմնադրամը [Türkiye Ekonomik ve Toplumsal Tarih Vakfı], հոկտեմբեր, 1998 թ.:

61 Atilla Çetin, "TBMM Hükümeti'nin, Osmanlı Devlet Arşivi ve Mülga Sadâret Evrakının Muhafazası Hakkında Aldığı Kararlara Ait Bazı Belgeler," Tarih Enstitüsü Dergisi (պրոֆեսոր Թայիբ Գյոքքիլզինի հիշատակին նվիրված հատուկ թողարկում) 12 (1981-82): 593-610.

62 Նախ ես հեռուստատեսությամբ էի լսել Քոլոդլուի այդ հայտարարությունը, ինչը նա հաստատեց հետագայում՝ 2005 թ. հունվարի 28-ի հեռախոսային մեր խոսակցության ժամանակ:

ջին քառորդ դարում (1923–50 թթ.): Վերացվել են 1960 և 1970-ականների մեծ մասի ընթացքում այդ կուսակցության ախոյան և հաջորդ կառավարող կուսակցությունների՝ Դեմոկրատական (Demokrat) և Արդարություն (Adalet) կուսակցությունների արխիվների նշանակալի մասը, Թուրքիայի սենատում 1960–1980 թթ. գոյություն ունեցած վերին պալատի բոլոր արձանագրությունները և Անկախության պատերազմից մինչև 1920-ականները գործած Անկախության տրիբունալների արձանագրությունների մեծ մասը: Դրանք բոլորն ուղարկվել են ՑԹԱՁ⁶³:

Այդպես նաև, 1980 թվականի հեղաշրջումից հետո, մեծ մաքրագարդման են ենթարկվել Գլխավոր շտաբի Զինվորական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչության արխիվները: Թուրքիայի գլխավոր շտաբ էր հրավիրվել արաբերեն և օսմանյան թուրքերեն իմացող մի պատմաբան՝ փաստաթղթերի դասակարգմանն օժանդակելու համար: Պատմաբանն ինձ հայտնել է, որ «Գլխավոր շտաբի կենտրոնակայանում մենք ընթերցում էինք փաստաթղթերը, և սպան, որը դեկավարում էր մեզ, մեր թարգմանության հիման վրա փաստաթղթերը դասակարգում էր կամ որպես «վսասակար», կամ «անվսաս»: «Իբրև «վսասակար» դասակարգված փաստաթղթերն այնուհետև ոչնչացվում էին: Այդ ընթացքում ես բավական մեծ թվով փաստաթուղթ փրկեցի ոչնչացումից՝ հաջողեցնելով դրանք գետեղել «անվսասների» շարքում»:

Մեփական ժառանգության նկատմամբ մեծամասշտաբ այս անփութությունը բնորոշ է բռնատիրական հիմունքով մշակույթներին, որոնք հակված են պատմությունն ու պատմական փաստաթղթերը գնահատել իբրև հնարավոր «սպառնալիքներ», որոնք որոշ դեպքերում կարող է անհրաժեշտ լինել ոչնչացնել: Մեփական անցյալը պահպանելու մեջ ոչ մի հատուկ արժեք չգտնելով՝ Թուրքիայի բյուրոկրատիան նախընտրում է ձեռքազատվել դրանից: Ուստիև զարմանալի չէ, որ Հանրապետության արխիվների վարչությունը հիմնվեց ընդամենը 1976 թվականին, որ արխիվացման գործի մասնագիտական կրթությունն սկսվեց միայն համալսարանական մակարդակում, և որ արխիվիստների մասնագիտական միություն հիմնադրվեց

1988 թվականին: Մինչև օրս Թուրքիայում ոչ մի օրենք թույլ չի տալիս ստեղծել ազգային արխիվ, երկրի արխիվների ինստիտուցիոնալացման խոչընդոտները վերացված չեն, և գոյություն ունեցող արխիվների տնօրեններն ստիպված են գործել վարչապետական հիմնարկության սահմանափակող կանոններով⁶⁴

ԻՆՉՊԵՕՍ ՊԵՏՔ Է ԳՆԱՅԱՏԵԼ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ԳՏԼՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Արխիվների հաջորդական մաքրագտումներից և փաստաթղթերի մեծաքանակ ոչնչացումից հետո հիմք չկա հուսալու, թե Վարչապետական պետական արխիվը կամ ՌՊՈՒՀՎ-ն ավելի լուսաբանող տեղեկություններ կտրամադրեն 1915 թ. իրադարձությունների վերաբերյալ: Փաստաթղթերի ոչնչացումը կարծես թե բավական չէր ուսումնասիրողի եռանդը վատնելու համար, դեռ Հայկական հարցին առնչվող «բոլոր» փաստաթղթերն ու արձանագրությունները պարունակող Վարչապետական օսմանյան արխիվների գլխավոր վարչության հրատարակած բժախնդրորեն ընտրված հավաքածուների շարքն էլ, հետաքրքիր պատահականությամբ, ամբողջովին բաղկացած է Օսմանյան կայսրության ու Թուրքիայի պատմության թուրքական կառավարության պաշտոնական տեսակետը հաստատող փաստաթղթերից: Սա բավական հարգելի պատճառ է օսմանյան արխիվներին ու դրանց կազմակերպմանը զգուշությամբ վերաբերվելու համար⁶⁵: Եվ իրոք, այդ շրջանի որոշ մասնագետներ եզրակացրել են, որ օսմանյան փաստաթղթերը կեղծվել են՝ կատարվածը քողարկելու համար: Վահագն Ն. Տատրյանի խոսքերով՝ «փաստերի ուշա-

64 Fahrettin Özdemirci, "Arşivlerimiz Kurumsal Yapılanma Gereksinimleri," http://80.251.40.59/humanity.ankara.edu.tr/odemirci/diger_sayfa_metinleri/fo/arsivmekanlari.pdf.

65 Վարչապետական պետական արխիվների հրատարակած հավաքածուների օրինակներ են T. C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Osmanlı Belgelerinde Ermeniler (1915–1920) (Ankara: Başbakanlık Basımevi, 1995); Arşiv Belgelerine Göre Kafkaslar'da ve Anadolu'da Ermeni Mezâlimi [Հայերի հանդեպ բռնություններն ու կոտորածը Կովկասում և Ասատուրիայում՝ հիմնված արխիվների վրա], 4 հատոր (1: 1906–1918; 2: 1919; 3: 1919–1920; 4: 1920–1922) (Ankara: Başbakanlık Basımevi, 1995–1998); Ermeniler Tarafından Yapılan Katliam Belgeleri [Փաստաթղթեր հայերի կոլոնիալ իրազորված կոտորածի վերաբերյալ], 2 հատոր (1: 1914–1919; 2: 1919–1921) (Ankara: Başbakanlık Basımevi, 2001).

63 "Devlet arşivi imha ediliyor; Cumhuriyet tarihi yazılamayacak," Zaman, հունիսի 17, 2002 թ.:

դիր զննումը սակայն ցույց է տալիս, որ այդ ձևով մատչելի դարձրած նյութը ոչ միայն տարակուսելի է, այլև անվստահելի»⁶⁶:

Օսմանյան արխիվների և հատկապես Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվի հուսալիության հարցում ժամանակի ընթացքում ձևավորվել է երկու հիմնական ճամբար: Այդ երկու ճամբարները, բնականաբար, մեծապես անդրադարձնում են 1915 թվականի իրադարձությունների նկատմամբ երկու հիմնական դիրքորոշումները: Նրանք, ովքեր հավատում են հայերի տեղահանությունների վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական տեսակետին, հակված են օսմանյան արխիվների փաստաթղթերը համարել միակ հուսալի աղբյուր՝ անտեսելով օտարերկրյա այնպիսի արխիվային նյութեր, ինչպիսին են Գերմանիայի, Ավստրիայի ու Միացյալ Նահանգների տրամադրության տակ եղած փաստաթղթերը և դրանք ի սկզբանե կանխակալ ու անվստահելի համարելով: Ի հակադրություն նրանց, գիտնականների նշանակալի մասը, որը պնդում է, որ 1915 թվականի իրադարձությունները ցեղասպանություն են եղել, արտասահմանյան նյութերն անհամեմատ ավելի հավաստի է համարում՝ ելնելով Թուրքիայի կառավարության խստագույն վերահսկողության խնդրից, ոչնչացված ու կորած փաստաթղթերի բազմաթիվ դեպքերից և օսմանյան արխիվների սահմանափակ մատչելիությունից: Ես գտնում եմ, որ այս վերջին դիրքորոշումը խիստ թերի է, և այդ հարցը կարոտ է վերանայման. իրականում անհրաժեշտ է ամբողջապես վերագնահատել ներկայումս մատչելի օսմանյան փաստաթղթերը: Կատարելապես սխալ է օսմանյան բոլոր առկա փաստաթղթերը կեղծիք համարել՝ 1915 թ. ոճրագործությունները քողարկելու նպատակով: Ճիշտ հակառակը. նույնիսկ օսմանյան արխիվների բազմաթիվ գտումներից և հավանաբար միտումնավոր մաքրագերծումներից հետո այնտեղ մնացող նյութերն առատ տեղեկություններ են պարունակում, որոնք հիմնովին հակասում են Թուրքիայի կառավարության և նրա

պաշտակիցների տևականորեն մատուցած պաշտոնական վարկածներ:

Առաջին հերթին, հնարավոր «վսասակար» արխիվային նյութերի լիակատար վերացումը գործնականում աներևակայելի է: Անշուշտ, ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի նման կազմակերպության համար դժվար չէր հասնել կուսակցության արխիվների ոչնչացման: Սակայն Ներքին գործերի նախարարության նման հսկայական, բազմաճյուղ և շատ ավելի խճճված կազմակերպության համար՝ իր կենտրոնական վարչակազմի անթիվ-անհամար բաժինների ու բաժանմունքների միջև, ինչպես նաև կենտրոնի և նրա մի քանի տասնյակ նահանգային ու գավառային ներկայացուցիչների միջև մշտական, բազմահատորանոց հաղորդագրությունների առկայության պայմաններում, նման խնդրի իրականացումը գրեթե անհնարին է: Բյուրոկրատական կառավարությանը հատուկ ավելորդաբանությունն ապահովում է հսկայական քանակով կրկնօրինակներ, պատճեններ և վերադարձված ու կցված հաղորդագրություններ, որոնք բոլորը մեծապես նվազեցնում են մեկ ճյուղից կոնկրետ թղթերի ու փաստաթղթերի պարզ հեռացմամբ խնդիրը լուծելու հավանականությունը:

Երկրորդ, հարկավոր է նշել, որ կայսրության հայ ազգաբնակչության տեղահանման ու կոտորածի որոշումը կամ որոշումները հիմնականում կայացրել է ՄԱԿ Կենտրոնական կոմիտեն: Ինչպես ստորև ցույց կտանք, Միություն և առաջադիմություն կոմիտեն (հետագայում՝ կուսակցություն) երկճյուղ մեխանիզմ էր մշակել, որը գործածում էր տեղահանությունների ընթացքում, մինչ կառավարության միջոցները գործածվում էին տեղահանությունների միայն «պաշտոնական» կողմի (ինչպես տեղահանության հրամանները, հավաքելու և ուղարկելու ամսաթվերը, ժամանման վայրերը և այլն) վերաբերյալ հաղորդակցությունների համար: Տեղահանվածներին վերացնելու հրամանները համապատասխան նահանգներ էին ուղարկվում մասնավոր խողովակներով, որոնց մեջ ամենազվախվորն էին իթթիհադականների այսպես կոչված քարտուղարները: Բացի այդ, կոտորածները ծրագրողները ջանասիրաբար ապահովում էին, որ ոճրագործությունների վերաբերյալ գրավոր որևէ փաստաթուղթ չպահպանվի:

Երբ այս փաստը գումարվում է փաստաթղթերի վերացման վերը նշված դեպքերին, անհրաժեշտ է դառնում եզրակացնել, որ Վարչա-

66 V. N. Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280. Այստեղ հարկավոր է շեշտել, որ Տաուրյանի և այլ գիտնականների հայտնած կասկածներն ու անվստահությունն անհիմն չեն: «Սարքված» կասկածելի փաստաթղթերի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս այդ հատորի 6-րդ՝ «Սարիդամիշի պարտությունը, շրջադարձային կետ» գլուխը:

պետական օսմանյան արխիվում հստակ, աներկբայորեն մերկացնող փաստաթղթեր հայտնաբերելու հավանականությունն իրոք շատ քիչ է: Այդուամենայնիվ, հարկավոր է նաև հիշել, որ որքան էլ բնաջնջման հրամաններն ու դրանց կատարումը սահմանափակվեին Իթթիհադական կուսակցության ապարատում, բուն տեղահանությունը օսմանյան պաշտոնական քաղաքականություն էր, և դրա իրականացման համար գործի էին դրվել կառավարության բոլոր լծակները: Զանգվածային նման գործողության ընթացքում հազարավոր գրավոր հաղորդագրություններ են փոխանակվել բարձրագույն գերատեսչությունների և նրանց նահանգային պաշտոնատարների միջև, ինչպես նաև նրանց ենթակայության տակ գտնվող նահանգային մասնաճյուղերի և ամենափոքր ենթաշրջանների ու քաղաքային իշխանությունների միջև: Ուստի լիովին տրամաբանական է ենթադրել, որ այդ գրավոր հաղորդագրություններից առնվազն մի քանիսը դեռևս գոյություն ունեն և հստակ «ներքին» տեղեկություններ են պարունակում տեղահանությունների ու կոտորածների մանրամասնությունների ու եղանակների մասին: Իրականում, սույն գրքի կենտրոնական հավակնություններից մեկն այդ է, և ես պետք է փորձեմ ցույց տալ, որ Վարչապետական օսմանյան արխիվում գտնվող տեղեկությունները հստակորեն մատնանշում են իր հայ ազգաբնակչությանը բնաջնջելու օսմանյան կառավարության կանխատեսված քաղաքականության ընթացքը:

2

ԱՆԱՏՈՒԿԱՅԻ ՄԻԱՏԱՐՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Չնայած բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականություն մշակելու և իրագործելու իր երկար պատմությանը՝ Օսմանյան կայսրությունը տասնիններորդ դարի երկրորդ կեսին ստիպված եղավ բախվելու լիովին նոր մի խնդրի հետ¹: Վերջին ժամանակներում օսմանյան կորցրած տարածքներից գաղթող, ինչպես նաև այլ երկրներից արտաքսված հսկայական թվով մահմեդականներ սկսեցին հեղեղել օսմանյան փոքրացող պետությունը, և շատերը շարժվեցին դեպի կայսերական երկրի խորքերը: 1912-13թթ. բալկանյան պատերազմները դարձան այս ներգաղթի գագաթնակետն ու շրջադարձային պահը:

Մինչ այդ, օսմանյան իշխանությունները ներգաղթի ու վերաբնակեցման խնդիրը միշտ լուծել են պահին արձագանքելով՝ ժամանակավոր հիմունքով: Այժմ սակայն հարցին անդրադառնալու էին և այն լուծելու էին կանոնակարգված ձևով՝ իբրև Անատոլիայի «միատարրացման» համընդհանուր ծրագրի մի մաս: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը նախագծած և Էգեյանի տարածքում իրականացրած լինելով իրենց բառերով «ոչ-թուրք տարրերից ձերբազատվելու» մի ծրագիր՝ ՄԱԿ-ը (Միություն և առաջադիմություն կոմիտեն), պատերազմի քողի տակ, ընդարձակել էր այդ ծրագիրը և ընդգրկել ողջ Անատոլիան: Ծրագրի, որը կարելի է բնութագրել իբրև Անատոլիայի «էթնիկ-կրոնական միատարրացում», նախնական նպատակն էր երկրի թուրք մահմեդական ազգաբնակչության հիմքի վրա տարածաշրջանի ժողովրդագրական բնույթի գիտակցված

¹ Մինչև տասնիններորդ դարը բնակեցման օսմանյան քաղաքականության համար տե՛ս Cengiz Orhonlu, Osmanlı İmparatorluğunda Aşiretlerin İskanı (İstanbul: Eren, 1987); Yusuf Halaçoğlu, XVIII. Yüzyılda Osmanlı İmparatorluğu'nun İskân Siyaseti ve Aşiretlerin Yerleştirilmesi (Ankara: Türk Tarih Kurumu, 1988) և Kemal Karpat, Osmanlı Nüfusu (1830-1914): Demografik ve Sosyal Özellikleri (İstanbul: Tarih Vakfı Yayınları, 2003), 1-36, 102-21, 300-11.

վերաձևավորումը: Այս քաղաքականության երկու հիմնական հենակետերը, որոնք կարելի է բնորոշել իբրև կառավարության «բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականություն», հետևյալն էին: Առաջինն ընդգրկում էր Անատոլիայի ոչ-մահմեդական (ինչը հիմնականում նշանակում էր քրիստոնյա) բնակչության «գտում». նրանք համարվում էին մահացու սպառնալիք պետությանը և նույնիսկ նկարագրվում իբրև «քաղցկեղ» կայսրության մարմնում: Երկրորդը ամբողջ Անատոլիայի ոչ-թուրք մահմեդական համայնքների ձուլումն էր (իմա՝ թուրքացումը): Այս գլխում ցանկանում եմ ներկայացնել ժողովրդագրական այդ քաղաքականության հիմնական առանձնահատկությունները:

**ԲՆԱԿԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ
ՄԱԿ ԶԱՆԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.
ՄԿՉԲՈՒՆՔԱՅԻՆ ՄԻ ԶԱՆԻ
ԱՌԱՆՁԱՅԱՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացումը բնակեցման ու վերաբնակեցման հատուկ քաղաքականություն էր, որն սկսվեց իրականացվել բալկանյան պատերազմներում կրած կորուստներից հետո: Այդ քաղաքականությունը գործադրվում էր պաշտոնական ու անպաշտոն երկնյուղ միջոցներով: Պաշտոնական ուղիներով արտաքսումն ու հարկադիր արտագաղթն իրականացվում էին կամ երկկողմանի՝ «բնակչության փոխանակման» պաշտոնական համաձայնագրերի շրջանակներում, ինչը կատարվեց Հունաստանի, Սերբիայի ու Բուլղարիայի հետ՝ իբրև արտաքսում, կամ միակողմանիորեն՝ իբրև տեղահանում, ինչը կատարվեց հայերի հետ: Անպաշտոն ուղիով, պետական պաշտոնական քաղաքականության տրամադրած հովանու ներքո, կատարվում էին ահաբեկչության ծածուկ, ապօրինի, սակայն պետական հովանավորչությամբ իրականացվող գործողություններ:

ՄԱԿ-ն ստեղծեց երկակի այդ մեխանիզմներին լավ համապատասխանող կազմակերպչական կառույց: Ստամբուլի Ռազմական տրիբունալում 1919 թ. ՄԱԿ կենտրոնական կոմիտեի անդամների 1919 թ. դատավարության հիմնական մեղադրանքի մեջ մեղադրող կողմը հայտարարեց, որ, կուսակցության կառուցվածքին ու աշխատանքային պայմաններին համահունչ, ձևավորվել է «գաղտնի ցանց»

(*şebeke-yi hafıye*)՝ իրականացնելու համար դրա ապօրինի գործողությունները: ՄԱԿ-ն ինքը, ասվում էր մեղադրանքի մեջ, «երկու իրաքամերժ բնույթ ունեւ (iki mâhiyet-i mütezâdde). առաջինը՝ տեսանելին ու հանրայինը, հիմնված էր [հանրային] ծրագրի և ներքին կանոնակարգի (*nizâm-nâme-i dâhilîye*) վրա, մյուսը հիմնված էր գաղտնիության վրա և [գործում էր համաձայն չգրված] բանավոր հրահանգների»²:

Բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականությունը, որը երկնյուղ մեխանիզմներով իրականացվել է 1913-18 թթ. ընթացքում, հիմնավորապես կերպարանավոխեց Անատոլիայի ազգային նկարագիրը: Այդ վեց տարվա ընթացքում Անատոլիայի բնակչությունը³, որը 1914 թ. հաշվվում էր 17,5 միլիոն մարդ, այն աստիճան էր ամբողջապես խաթարվել, որ բնակիչների գրեթե մեկ երրորդը ներքնապես տեղահանված էր, աքսորված կամ ոչնչացված: Ստորև թվարկված են բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականության որոշ սկզբունքային հատկանիշներ⁴:

2 TV, № 3540, 1919 թ., մայիսի 5: Դատավարության առաջին նիստը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 27-ին:

3 Օսմանյան կայսրության 1914 թ. մարդահամարի համաձայն, կայսրության, ներառյալ արաբական նահանգների, բնակչությունը եղել է մոտ 18,5 միլիոն: Վերջիններին չհաշվելու դեպքում Անատոլիայի բնակչությունը կլիներ մոտավորապես 15-ից 17,5 միլիոն: Կայսրության բնակչության իր ուսումնասիրության մեջ Քեմալ Կարապաշը Անատոլիայի բնակչությունը հաշվում է մոտ 15 միլիոն (*Ottoman Population, 1830-1914: Demographic and Social Characteristics* [Madison: University of Wisconsin Press, 1985], 190): Այս թվերն ուղղելու հետևանքով դրանք ավելացնելով՝ Ջաթին ՄըքՔարթին միայն Անատոլիայի բնակչությունը հասցնում է 17,5 միլիոնի (*Muslim and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire* [New York: New York University Press, 1983], 110):

4 Ցանկանում եմ շեշտել, որ այս նյութին մոտեցել եմ 1915 թ. հայերի դեմ իրականացրած տեղահանումների ու բնաջնջման գործողությունների, այլ ոչ թե արտաքսումների, գաղթի ու բնակեցման օսմանյան քաղաքականության ընդհանուր քննարկման տեսանկյունից: 1913 թվականից հետո բնակչության ու (մահմեդականների) վերաբնակեցման օսմանյան քաղաքականության թեման լուսարանված է հետևյալ երկու համակողմանի աշխատության մեջ. Fuat Dündar, *İttihat ve Terakki'nin Müslümanları İskân Politikası* (1913-1918) (Istanbul: İletişim Yayınları, 2001) և միևնույն հեղինակի դոկտորական թեզում՝ "L'ingénierie ethnique du Comité Union et Progrès et la turcisation de l'Anatolie (1913-1918)," EHESS, Paris, 2006: Բալկանյան պատերազմներից առաջ ու հետո ներգաղթողներին ու արքայախնայներին վերա-տեղավորելու հարցի մասին այլ գործերի համար տե՛ս Karpas, *Ottoman Population*; Bilal Şimşir, *Rumeli'den Türk Göçleri*, 3 vols. (Ankara: Türk Tarih

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆԱՏՈՒԿԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒԹՅԱԾՔԻ ԶԱՐՏԵՂՆԵՐ

Բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականությունն իրագործելու համար ամենից առաջ հարկավոր էր վերակառուցել օսմանյան բյուրոկրատիան, մասնավորապես Ներքին գործերի նախարարությունը: Այդ նախարարությունն էր պատասխանատու Գաղթականների բնակեցման կանոնագրքի (İskân-ı Muhacirin Nizamnamesi) իրականացման համար, որն օսմանյան կառավարությունն ընդունել էր 1913 թ. մայիսի 13-ին՝ ի պատասխան քալկանյան պատերազմների հաջորդած բռնի գաղթի: Դեկտեմբերին հիմնադրվեց Ներքին գործերի նախարարության նոր ՑՆԿՎ-ն, որը, համաձայն իր նախնական ներքին կանոնակարգի, խնդիր ուներ «հոգալու ցեղերի բոլոր կարիքները արտասահմանից եկող ներգաղթողների վերաբնակեցման համար տրամադրելու փոխադրամիջոցներ (sevki), օժանդակություն ու [միջոցներ ու տարածքներ] և կանխելու արտագաղթը օսմանյան հողերից»⁵: Այդ կանոնակարգում որոշակի փոփոխություններ կատարվեցին 1916 թվականին՝ նպատակ ունենալով նպաստելու ավելի համակարգված ներգաղթի ու վերաբնակեցման գործընթացի: Նույն թվականի փետրվարի 10-ին, Նախարարների խորհրդի որոշմամբ, Ներքին գործերի նախարարության շենքում ստեղծվեց Զարգացման ընդհանուր վարչությունը (İsti'mar Müdüriyeti Umumiyesi): Հինգ շաբաթ անց (մարտի 14-ին) դրան հաջորդեց մի օրենք, որով ստեղծվում էր Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման գլխավոր վարչություն (Aşair ve Muhacirin Müdiriyeti Umumiyesi, այսուհետև՝ ՑՆԲԳԿ): Այդ գործակալությունն ընդարձակվեց հետագա հինգ տարիների ընթացքում, և Ներքին գործերի նախարարությունում ավելի շատ գրասենյակներ ստացավ⁶:

Kurumu, 1988: Այս հատորներից երկրորդի մեջ, որը լուսարանում է 1877-85 թվականները, առկա է հեղինակի գրած հանգամանալից մի ներածություն: Bedri Habıçoğlu, Kafkasya'dan Anadolu'ya Göçler (Istanbul: Nart Yayıncılık, 1993); Abdullâh Saydam, Kırım ve Kafkas Göçleri (1856-1876) (Ankara: Türk Tarih Kurumu, 1997); Arsen Avagyan, Osmanlı İmparatorluğu ve Kemalist Türkiye'nin Devlet-İktidar Sisteminde Çerkezler (Istanbul: Belge Yayınları, 2004); Nedim İpek, Rumeli'den Anadolu'ya Türk Göçleri (Ankara: Türk Tarih Kurumu 1994); Ahmet Halaçoğlu, Balkan Harbi Sırasında Rumeli'den Türk Göçleri (1912-1913) (Ankara: Türk Tarih Kurumu, 1994).

5 Վերաբարտարված հետևյալ տեղում. Fuat Dündar, İttihat ve Terakki'nin, 60:

6 Նույն տեղում, 60-61:

Կազմակերպչական այս զարգացումների հետ միասին անցկացվեցին մարդահամարներ՝ պատկերագրելու համար Անատոլիայի ազգային ու սոցիալական կառուցվածքը: Ինչպես հայտնի է, օսմանյան մարդահամարի ընթացքում ժողովրդագրության դասակարգման հիմնական սկզբունքն ավանդաբար եղել է կրոնը: Դրա հետևանքով կայսրության մահմեդական բնակչությունը համարվել է մեկ խումբ: Թեև իթթիհադական իշխանության (1908-18թթ.) օրոք պաշտոնական մարդահամար չի կատարվել, մահմեդական բնակչությունը ենթադասակարգվել է համաձայն նախորդ (1882, 1895 և 1905 թթ.) մարդահամարների հաշվարկների և վերադասակարգվել ըստ ազգային պատկանելության: Մարդահամար անցկացնողներին ուղարկում էին նահանգները՝ արձանագրելու համար թաղի ու շրջանի ավագների ու կրոնական առաջնորդների տրամադրած թվերը: Այդ պաշտոնյաները պարտավոր էին երեք ամիսը մեկ գեկուցագրեր ներկայացնել իրենց տարածքի բնակչության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ:

Բնակչության հաշվումներն ընդհանրապես կարգավորվում էին եռամսյա պարբերականությամբ: Պաշտոնյաների հաշվումները սովորաբար ուղարկվում էին կենտրոնական կառավարություն՝ նման հրահանգների ուղեկցությամբ. «Քանի որ, ըստ բնակչության կանոնավորման որոշումների, յուրաքանչյուր նահանգից պահանջվում է եռամսյա հիմունքով պատրաստել իր տարածքի վրա պատահող միջադեպերի վիճակագրություն և այն ուղարկել կենտրոնական վարչակազմին, ներկայացնում եմ 1919 թ. մարտին, ապրիլին [ու] մայիսին նշանավոր այս նահանգում կատարված իրադարձությունների աղյուսակագրված ցանկը, որպեսզի այն ուղարկվի երևելի Ներքին գործերի նախարարությանը՝ օրենքի պահանջին համապատասխան»⁷: Սակայն, ինչպես բացահայտում է այդ գրությունը, համակարգը լավ չէր գործում և ուներ բազմաթիվ թերություններ: Թեև «յուրաքանչյուր ամսվա վերջին ոչ-մահմեդական միլլեթների (էթնիկ-կրոնական համայնքներ) հոգևոր առաջնորդների կողմից [ներկայացվում էին] տեղ գտած ամուսնությունների [գրանցման] տեսրերը», և պահանջվում էին անշարժ գույքի բոլոր տեսակի գնումների ու վաճառքների հաշվետվությունները, «շատ մարդիկ չեն գրանցվել,

7 BOA/DH.SN.THR, № 49/41, Ստամբուլի նահանգային քարտուղարությունը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1911 թ. օգոստոսի 1:

որովհետև մինչև հիմա այդ ընթացակարգերից ոչ մեկը լիովին համաձայնեցնել չի ստացվում»: Պատերազմի նախարարությունն ամենից շատ էր բողոքում այդ իրավիճակից՝ գորակոչման գործի խաթարման պատճառով: Նա «չարժական քարտուղարներ» էր ուզում մարդահամարը նրանց վստահելու համար⁸: Մեծ խնդիր էր նաև տեղական պաշտոնյաների անգրագիտությունը, ինչը խոչընդոտում էր ժողովրդագրական տեղեկությունների կանոնավոր հավաքմանը⁹:

Մահմեդական ու ոչ-մահմեդական բնակչության հաշվարկների մեջ փոփոխությունները գրանցվում էին նույնիսկ շրջանային մակարդակներում: Ներքին գործերի նախարարության Բնակչության գրանցման գրասենյակին (Sicil-i Nüfus İdaresi) ուղարկված եռամսյա զեկույցներում թվարկվում ու ցուցակագրվում էին ծնունդները, մահերը, ներս ու դուրս տեղաշարժերը և վիճակագրական այլ տվյալներ. գրասենյակն իր ստացած տեղեկությունները մշակում էր համապատասխան ձևով և ուղարկում կենտրոնական կառավարություն¹⁰:

Չնայած Բալկանյան աղետի նախօրեին նման գործողությունների նկատելի աճին՝ Անատոլիայի ազգային-կրոնական խմբերի մասին ստույգ թվեր ձեռք բերելու երիտթուրքերի ջանքերը մինչև պատերազմն արդեն իսկ ընթացքի մեջ էին: Դեռևս 1910-ականների սկզբներին «Մինդիրգիի, Բիլեջիկի ու Ինեգյուլի բնակչության գրասենյակներին խնդրել էին, որ առանձին-առանձին հավաքվեին հայ, մահմեդական ու ոչ-մահմեդական [այլ] համայնքների 1884-1905 թթ. [1300 ve 1321] բնակչության [տվյալները] և ուղարկվեին երկու առանձին ցուցակներով»¹¹: Բացի այդ, նույնիսկ նախապատերազմյան շրջանում այդ ջանքերն իրականացվում էին հանգամանալի բժախնդրությամբ, ինչպես պարզ է դառնում Ազգաբնակչության գրանցման գրասենյա-

8 BOA/DH.SN.THR, № 49/41, Պատերազմի նախարարության և Գլխավոր շտաբի վարչության (Harbiye) հաղորդակցությունը, թվագրված 1914 թ. հունվարի 26:

9 BOA/DH.SN.THR, № 49/19, Հաղորդագրություն Ստամբուլի նահանգի Բնակչության վարչության աշխատանքի կազմակերպման վերաբերյալ, թվագրված 1914 թ. հունվարի 13:

10 Հավելյալ տեղեկությունների համար տես Fuat Dündar, İttihat ve Terakki'nin, 84–85:

11 BOA/DH.SN.THR, 68/676 (200/1-A/90/1328.RA.9/1), Ներքին գործերի նախարարության հեռագիրը Մինդիրգիի, Բիլեջիկի և Ինեգյուլի մարզեր, թվագրված 1910 թ. սեպտեմբերի 14:

կի ու դրա Բիթլիսի մասնաճյուղի միջև 1912 թ. փետրվարին այդ նահանգում հաշվառման ընթացակարգին վերաբերող մանրամասն հաղորդակցությունից¹², ինչպես նաև Ներքին գործերի նախարարության 1913 թ. այն հրահանգից, որ «անհապաղ ուղղվեն Նալլիհանի ու Ինչեսուի հայ ու հույն [ազգաբնակչությունների] ցուցակներում խոնդ գտած» սխալները»¹³: Նման ջանքերով հավաստիանում էին, որ նույնիսկ «[մ]ինչև Առաջին համաշխարհային պատերազմը բնակչության բաշխումն ըստ ազգությունների հստակեցված լինի բնակչության բոլոր վայրերում»¹⁴:

Բացի այդ, խիստ վերահսկվում ու տեսչությանն էին ենթարկվում ոչ-մահմեդականների, մասնավորապես հույների ու հայերի նախապատերազմական շրջանի տեղաշարժերը: Համայնքների կրոնական իշխանություններն ու տեղական աշխարհիկ պաշտոնյաները պատասխանատու էին կարգված «բնակչության գրանցման [գրասենյակ] զեկույցելու... ոչ-մահմեդականների [բոլոր] պսակներն ու ամուսնալուծությունները, ... [բոլոր] ծնունդները, մահերն ու վայրերի փոփոխությունները»¹⁵:

Այն իշխանավորները, որոնք զլանում էին իրականացնելու իրենց վրա դրված պարտավորությունները, պատժվում էին: Օրինակ, Իզմիրի գավառային վարչությունից (Mutasarrıflik) Ներքին գործերի նախարարություն 1914 թ. փետրվարի 16-ին ուղարկված հաղորդագրության մեջ տեղական պաշտոնյաները զեկույցում են, որ «Կարամյուրսեղ քաղաքին կից փոքրիկ բնակավայր Քրզդերբենդիի գյուղապետն [մուխթար] ու քահանան հիշյալ պաշտոնյային չեն զեկույցել 70 ծնունդ, 17 նշանադրություն ու 40 մահ»: Շարադրանքից հասկացվում է, որ պաշտոնյաները հարցնում են, թե ինչ պատիժներ պետք է սահմանել օրինազանցների համար: Նախարարության պատասխանի մեջ ասվում է, որ ոչ-մահմեդական կրոնական գործիչների արտոնությունները սահմանափակվել են՝ համաձայն նրանց ընդունած երդման, և որ խնդրո առարկայի դեպքում ո՛չ կրոնական, ո՛չ հա-

12 BOA/DH.SN.THR, 48/75, 564–71.

13 BOA/DH.SN.THR, 42/58.

14 Fuat Dündar, İttihat ve Terakki'nin, 85.

15 BOA/DH.SN.THR, 2517/55/23, Հայոց պատրիարքի կողմից ցուցումների խնդրանքն այն մասին, թե օրենսդրական համապատասխան ակտերն ինչպես կիրառել, թվագրված 1914 թ. սեպտեմբերի 6:

մայնքային պատկանելությունը նրանց որևէ հատուկ արտոնություն չեն տալիս, հետևաբար խորհուրդ է տրվում օրինազանց անձանց տուգանել, իսկ տուգանքը չվճարելու դեպքում պետք է կանգնեն դատարանի առջև¹⁶:

Անատոլիայի ազգային-կրոնական համայնքների վիճակագրական դիտարկման մեջ էր մտնում նաև սոցիալ-տնտեսական տվյալների հավաքումը: Նահանգներ ուղարկված հույժ գաղտնի հեռագրերում Ներքին գործերի նախարարությունը տեղական պաշտոնյաներին հրահանգում էր «խիստ գաղտնի կերպով» ցուցակներ լրացնել քրիստոնյաների հարստության, կրթության ու հասարակական կարգավիճակի և իրենց համայնքների նշանավոր կամ ազդեցիկ անդամների մասին և այդ տեղեկությունն ուղարկել նախարարություն¹⁷: Նշանակալի տեղ պետք է հատկացվեր բիզնեսներին և շարժական ու անշարժ գույքին:

Հավաքված տեղեկությունը պետք է դառնար Անատոլիայի քրիստոնյաների բռնի տեղահանման և նրանց փոխարեն մահմեդականներ բնակեցնելու ինչպես նախապատերազմական, այնպես էլ պատերազմական շրջանի քաղաքականության հիմքը: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում թերակղզու մշտապես փոփոխվող ժողովրդագրությունը պահվում էր խիստ հսկողության տակ: Ինչպես ցույց կտրվի ստորև, նահանգային պաշտոնյաներից պահանջվում էր պարբերական զեկույցներով կենտրոնական կառավարությանը ներկայացնել բնակչության կառուցվածքի փոփոխությունների բժախնդիր ու մշտական արձանագրություններ: Նույնիսկ բռնի արտաքսումների ու ներքին տեղահանությունների խառնիճաղանջ ժամանակներում կառավարությունը տարբեր շրջանների փոփոխվող ժողովրդագրության ամենօրյա զեկույցներ էր ակնկալում: Պահպանված բազմաթիվ փաստաթղթերում Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչությունը պահանջում էր այնպիսի տվյալներ, ինչպիսին էին «մինչև երեկո հունական գյուղերի վերաբերյալ պա-

16 BOA/DH.SN.THR, 49/39, Իզմիրի գավառապետի գրասենյակից 1914 թ. փետրվարի 16-ին Ներքին գործերի նախարարություն ուղարկված հեռագրին այդ նախարարության իրավական հարցերով խորհրդակցանի գրավոր պատասխանը, թվագրված 1914 թ. փետրվարի 19:

17 BOA/DH.SFR, № 58/42, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Թեքեի գավառապետի գրասենյակ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 15:

հանջված զեկույցների ներկայացումը»¹⁸ և «ամենաուշը առաջիկա քսանչորս ժամի ընթացքում հայերի թվի մասին 1915 թ. դեկտեմբերի 23-ի հեռագրի պատասխանը»¹⁹:

Տեղական այս զեկույցագրերի վրա հենվելով՝ գրանցվում էին բնակչության ընդհանուր փոփոխությունները և պատրաստվում կայսրության մնացած նահանգների ազգագրական քարտեզները: Այս քաղաքականության իրագործման մի նմուշ է բոլոր նահանգապետերին ու գավառապետերին 1915 թ. հուլիսի 20-ին ներքին գործերի նախարար Թալեթ փաշայի ուղարկված հեռագիրը: Նա պաշտոնյաներին հրահանգում էր. «առանց բացառության, մեկ ամսվա ընթացքում ուղարկել ամբողջական ու մանրամասն քարտեզ, որը ցույց տա նահանգում, ընդհուպ մինչև գյուղերի մակարդակով, առկա [բոլոր] վարչական միավորներն ու ստորաբաժանումները, ինչպես նաև երկու ցանկ, որոնք պարունակեն թե՛ ավելի վաղ [եղած] և թե՛ ներկայումս առկա [ազգաբնակչությունը]՝ ըստ տարբեր քաղաքների ու գյուղերի բնակիչների [համապատասխան] ազգությունների»²⁰: Ինչպես կարելի է տեսնել հեռագրից, այդ «երկու ցուցակները» նախատեսված էին իշխանություններին օգնելու նահանգային ու շրջանային մակարդակներում հետևելու ժողովրդագրական փոփոխություններին և դրանով դիտարկելու ու վերահսկելու ազգային վերակերտման ընդհանուր գործընթացը:

Նույնիսկ հայերի տեղահանությունների ավարտից հետո, օսմանյան կառավարությունը պատերազմի ողջ ընթացքում շարու-

18 BOA/DH.SFR, № 63/73, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Balıkesir) գավառապետի գրասենյակ, թվագրված 1916 թ. ապրիլի 18:

19 BOA/DH.SFR, № 60/32, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Բեյրութի նահանգ և (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 16:

20 BOA/DH.SFR, № 54-A/51, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդադի, Բեյրութի, Հիջազի, Հալեպի, Հյուդավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Մամուրեթյուլագիզի, Մոսուլի, Կանի, Եմենի նահանգապետերին և Ուրֆայի, Իզմիրի, Իչելի, Սիդդեի, Մարաշի, Բոլուսի, Ջանիկի, Չաթալչայի, (Դեր) Ջորի, Ասիրի, Երուսաղեմի, Քալե-ի-Սուլթանիյեի (Çanakkale), Մենթեշեի, Թեքեի, լուսավորյալ Մեդի-նայի, Էսքիշեհիրի, Քյութանիայի ու Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար) գավառապետերին, թվագրված 1915 թ. հուլիսի 20:

նակեց հետևել ներքին ազգաբնակչության տեղաշարժերին: 1916 թ. օգոստոսի «հրատապ ու գաղտնի» հեռագրում Թալեաթ փաշան, հրահանգելով «այս խնդիրը լուծել անձնապես», մի քանի շրջանների պաշտոնյաների կարգադրում է «արագ պատրաստել և ուղարկել մի ցանկ, որն առանձին-առանձին ցույց տա գոյություն ունեցող հույները ի ազգաբնակչության թվերը նահանգի յուրաքանչյուր գյուղում ու քաղաքում»²¹: Ինչպես ցույց կտրվի ստորև, նմանատիպ հարցումներ ու պահանջներ մշտապես կատարվում էին հայ ազգաբնակչության առնչությամբ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարկավոր է ընդգծել, որ տեղական պաշտոնյաների պատրաստած զեկուցագրերն ու գրանցումները շատ ավելի տվյալներ էին պարունակում բնակչության վերաբերյալ, քան սոսկ թվերն ու հարաբերակցությունն էին: Նրանք տրամադրում էին նաև տեղեկություններ գլխավոր ազգային խմբերից յուրաքանչյուրի սոցիալ-տնտեսական կառուցվածքի, նրանց լեզվի ու մշակույթի բնույթի, նրանց կրթության եղանակի ու մակարդակի և մյուս խմբերի հետ նրանց հարաբերությունների մասին: 1916 թ. ապրիլի ծածկագրված մի հեռագրում ՑՆԿՎ-ն Տրապիզոնի նահանգին հարցում է անում, թե «քանի՞ քուրդ է ապրում նահանգում, որտեղ են նրանք ապրում, թուրք ազգաբնակչության հետ նրանց հարաբերությունների կարգավիճակը, և նրանք պահպանում են արդյոք իրենց ավանդույթներն ու լեզուն»²²: Միևնույն օրվա մեկ այլ հեռագրում ՑՆԿՎ-ն հարցում է ուղարկում Սվազ. քրդերն ինչ չափով փոխադարձ հարաբերություններ

21 BOA/DH.ŞFR, №52/188, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Դիյարբեքիի, Ադանայի, Սվազի, Քոնյայի, Անկարայի, Տրապիզոնի, Այդինի, Կաստամունուի, Մամուրեթյուլագիզի ու Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգապետներին և Բոլուի, Ջանիկի, Չաթալջայի, Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշի, Թեքեի, Կեսարիայի, Մարաշի, Իզմիրի, Նիդոնի, Էսքիշեհիի, Իչելի, Քյութահյայի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառապետներին, թվագրված 1915 թ. օգոստոսի 9:

22 BOA/DH.ŞFR, №62/188, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1916 թ. ապրիլի 1:

ու համերաշխության զգացում ունեն հարևան թուրքական քաղաքների ու գյուղերի բնակչության հետ, իրար հետ ինչ լեզվով են խոսում, քուրդերն ինչ հմուտ են»²³:

Ներքին գործերի նախարարության կողմից 1916 թ. մայիսի 1-ին Բաղդադի նահանգապետի գրասենյակ ուղարկած հեռագիրը որոշակի պատկերացում է տալիս հավաքվող տեղեկությունների բնույթի մասին: Շեշտելուց հետո, որ, ըստ կառավարության քաղաքականության, կարևոր է հուսալի ու ճշգրիտ տեղեկություններ ունենալ «այն թուրքերի թվի ու սոցիալական պայմանների մասին, որոնք գտնվում են վաղուց Իրաքում հաստատված բնակչության մեջ», հեռագիրը նահանգային պաշտոնյաներին հարցուփորձ էր անում.

[Բ]անի թուրք կա նահանգի մյուս շրջաններում... [Բ]անի թուրք կա ընդամենը], ո՞ր նահանգներում, շրջաններում ու մարզերում են նրանք գրանցված: Իրենց ապրած շրջանների արար ու քուրդ բնակչության համեմատությամբ նրանք հարմարավետ մեծամասնությունն են: Բնավ ազդվել են [այդ] լեզուներից ու սովորույթներից և, եթե այո, ինչ չափով: Ընտանիքներում ինչ լեզվով են խոսում և, տեղական տարրերի առնչությամբ, ինչ չափով են կառավարության հետ նրանց հարաբերությունները կապված նրանց տնտեսական կարգավիճակի հետ: Ինչ տեսակի հաստատություններում և ինչ լեզվով են նրանք նախնական կրթություն տալիս իրենց երեխաներին: Կան [թուրք] ընտանիքներ, որոնք իրենց ներքին անցուդարձում նմանվել են արաբներին ու քրդերին կամ հակված են դրան»²⁴:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶՐԻՍՏՈՆՅԱ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական կառավարության կողմից տեղեկությունների պահանջը առաջնություն էր տալիս նաև քրիստոնյա համայնքների տնտեսական կարգավիճակի ու դրության մասին տվյալներին, այդ

23 BOA/DH.ŞFR, №62/187, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1916 թ. ապրիլի 1:

24 BOA/DH.ŞFR, 63/151, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Բաղդադի նահանգապետին, թվագրված 1916 թ. ապրիլի 1:

թվում և անհատների մասնագիտությունների, աշխատավայրերի ու անշարժ գույքի մասին զեկույցներին: Ներկայումս մատչելի փաստաթղթերից կարելի է տեսնել, որ մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմից առաջ մանրակրկիտ տեղեկություններ էին հավաքվում քրիստոնյաների ձեռքերում գտնվող գույքի և ունեցվածքի վերաբերյալ և տեղ գտնում կանոնավոր կերպով կազմվող զեկույցագրերի ու գրանցումների մեջ: 1914 թ. սեպտեմբերի 5-ին նկատելի թվով հունական համայնքներ ունեցող Այդինի ու Տրապիզոնի նահանգներ ու Ջանիկի (Սամսուն) գավառ առաքված մի հեռագրով Ներքին գործերի նախարարությունը պահանջում է «պատրաստել և ուղարկել մի զեկույց, որը հստակեցնում է հունական համայնքին պատկանող բոլոր գույքերի ու ծածկով շենքերի [ինչպիսին են տները, քիզնեսի կենտրոնները, խանութները և այլն] արժեքն ու սեփականատերերին, ինչպես նաև տեսակն ու քանակը»²⁵: Տասն օր անց նման մի պահանջ է ուղարկվում կայսրության գրեթե բոլոր նահանգներ: Հեռագրի հասցեատերերը պետք է «նահանգում գտնվող հույներին պատկանող ազարակների ու գյուղատնտեսական գույքերի թվերի ու արժեքի մանրագին հետաքննություն անցկացնեն և պատշաճ արագությամբ ուղարկեն [մայրաքաղաք]»²⁶: Հոկտեմբերի 6-ին կրկին պահանջն ուղարկվում է Այդինի ու Տրապիզոն (և Իզմիր), սակայն այս անգամ արդեն որպես հրաման՝ պահանջելով, որ անմիջապես մի զեկույց պատրաստվի, որը «նշի [նահանգի] բոլոր քաղաքներում ու գյուղերում հունական համայնքի [անդամներին] պատկանող բոլոր գույքերի ու ծածկով կառույցների տեսակը, թիվը և սեփականատերերին»²⁷:

Հստակ է, որ կենտրոնական կառավարության այս հրահանգներն իրոք իրագործվում էին տարբեր նահանգներում, և որ պա-

25 BOA/DH.ŞFR, № 45/200, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի ու Տրապիզոնի նահանգներ և Ջանիկի գավառ, թվագրված 1914 թ. սեպտեմբերի 5:

26 BOA/DH.EUM, 3. Şube, 2/24, Ներքին գործերի նախարարության հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Այդինի, Տրապիզոնի ու Կաստամունուի նահանգներ և Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Քարեսիի (Բալքեշիր) Անթալիայի ու Մենիեշի գավառներ, թվագրված 1914 թ. սեպտեմբերի 15:

27 BOA/DH.EUM, 3. Şube, 2/31, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի ու Տրապիզոնի նահանգներ և Ջանիկի գավառ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 6:

հանջված զեկույցները պատրաստվում էին ու ներկայացվում Ստամբուլ: Ահա այդ պատրաստականության մի քանի օրինակներ: 1. Բերգամայի մարզի ղեկավարի կողմից 1914 թ. սեպտեմբերի 16-17-ին մայրաքաղաք ուղարկված ծածկագրված մի հեռագրում զեկույցվում է, որ «նարկային գրանցամատյանից երևում է, որ մարզում կա հույներին պատկանող յոթանասուն ազարակ՝ 61.345 դունամ մակերեսով, և որ դրանց արժեքը կազմում է 10.259.635 դուրուշ. պահանջվել է, որ վաղը փոստով ձեռք ուղարկվեն այն գրանցումները, որոնք պարունակում են այն մարդկանց անուններն ու այլ [անձնական] տվյալներ, ում պատկանում են այդ վայրերը, որոնցում դրանք գտնվել են»: 2. Այդինի նահանգի նահանգապետի գրասենյակից 1914 թ. սեպտեմբերի 26-ին Ստամբուլ ուղարկված ծածկագրված պատասխան հեռագրի մեջ ասվում է, որ «նահանգի հույներին պատկանող 169 ազարակ կա: Դրանցից 81-ը չափով 1.000 դունամից մեծ են, իսկ մյուս 88-ը 1.000 դունամից փոքր են: Ընդհանուր հաշվով դրանք կազմում են 542.978 դունամ՝ 36.535.700 դուրուշ արժողությամբ: Այդ ազարակներից յոթը կամ ութը պատկանում են Ռուսաստանի, Բրիտանիայի, Ամերիկայի կամ Իտալիայի քաղաքացիություն ունեցող հույների», ապա եզրափակում՝ զեկույցելով, որ «մանրամասնություններ պարունակող ցուցակը [կուղարկվի] փոստով»²⁸: Հետագա փաստաթղթերից հստակ է դառնում, որ գալիք ամիսներին այդ զեկույցները շարունակվելու էին²⁹:

1915 թ. նոյեմբերին Թեքեի գավառ ուղարկված հույժ գաղտնի հեռագրում պահանջվում էր, որ «շրջանի հույների համայնքային ու կրոնական հաստատությունների, ինչպես նաև ներկայում դրանցում աշխատողների» մասին տեղեկությունները հավաքվեն խիստ գաղտ-

28 BOA/DH.EUM, 3. Şube, 2/24.

29 Օրինակ, նշանակալի մեծության հունական համայնք ունեցող Տրապիզոնի ու Այդինի նահանգներում պատրաստված զեկույցները Ստամբուլ ուղարկվեցին 1914 թ. դեկտեմբերի 24-ին: Մինչև օրս ուղարկված պատասխան իր հեռագրում Տրապիզոնի նահանգապետը նշում է, որ դա «պատասխանն է [Ներքին գործերի նախարարության] № 45 ծածկագրված հեռագրի, որն ստացվել է էլյուլի 23-ին [1]330 [1914 թ. հոկտեմբերի 7-ին]», և զեկույցում է, որ «ներփակ երեք առանձին տետրերը պարունակում են ունեցվածքների թիվը, տեսակը, դրամական արժեքն ու սեփականատերերի անունները և ներկայացնում են Տրապիզոն, Օրդու և Գիրեսուն քաղաքներում հունական համայնքի [անդամներին] պատկանող կառույցները» (BOA/EUM, 3. Şube, 2/31):

նաբար և ուղարկվեն մայրաքաղաք՝ «հունական [համայնքի] նշանավոր ու ազդեցիկ անձանց հարստության, կրթության ու սոցիալական դիրքի» հետաքննության հետ միասին³⁰: 1915 թ. դեկտեմբերի 22-ին Ադանա ուղարկված մեկ այլ հեռագրով Ներքին գործերի նախարարության Անվտանգության վարչությունը պահանջում է շրջանում հույներին պատկանող գործարանների ամբողջական ցանկը, ինչպես նաև տեղական ու օտարերկրյա սեփականություն հանդիսացող ֆիրմաներում աշխատող հույների տնտեսական պայմանների ու քաղաքական հակումների հետաքննությունն ու զեկույցը: Բացի այդ, պահանջվում են տեղեկություններ հունական համայնքի երևելի անդամների ու դպրոցների մասին³¹:

Փակագծերում պետք է նշել, որ այս, հատկապես հույների վերաբերյալ, հանգամանալից տեղեկությունների կուտակումը կատարվում էր մի հանձնախմբի աշխատանքի հետ համընթաց, որը հետագոտում էր թուրք և հույն ազգաբնակչությունների փոխանակման հնարավորությունը: Խիստ հավանական է, որ այդ ցուցակները պատրաստվում էին հենց նման հնարավորության համար: Մինևույն նկատառությամբ, բոլոր նահանգներն ստացել էին տասնվեց կետից բաղկացած հանգամանալից «Ներգաղթյալների փոխանակման ցուցակների լրացման հրահանգները»³²:

Այդպիսի ցուցակներ պատրաստվում էին նաև հայերի վերաբերյալ: Կենտրոնական կառավարությունը տեղահանությունների ընթացքում հանգամանալից զեկույցներ էր պահանջել հայերի ղեկավարած կամ վարած ստամբուլահայերին կամ օտարերկրացիներին

30 BOA/DH.SFR, № 58/42, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Թեքեի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 17:

31 BOA/DH.SFR, № 59/62, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 22: «Ելնելով այն հանգամանքից, որ Ադանայի նահանգում որոշ հույներ գործարաններ ունեն, անհրաժեշտ է, որ [այս հարցը] մանրակրկիտ հետազոտվի և զեկույց [պատրաստվի] այն հույների քաղաքական ու տնտեսական պայմանների մասին, որոնք աշխատում են և օտարերկրյա ֆիրմաներում, և մասնավոր սեփականություն հանդիսացող առևտրային տներում, ինչպես նաև [համայնքի] երևելի [անդամների] և նրանց դպրոցների թվի ու տեղանքների մասին»:

32 Հրահանգների ամբողջական տեքստի համար տե՛ս BOA/DH.EUM, 3. Şube, 2/26-A:

պատկանող առևտրական ու անշարժ գույքերի վերաբերյալ. «[Խընդրում ենք] շտապ, հստակ ու սպառիչ (muvazzahen) զեկույցել, թե Ստամբուլում և այն նահանգներում, որոնցից հայերը դեռ պիտի տեղափոխվեն այնտեղ, դեռևս գոյություն ունեն հայ առևտրականներ կամ առևտրի տներ, անշարժ գույք, գործարաններ և այլն, որոնք ղեկավարում են հայերը՝ կամ օսմանյան այլ քաղաքացիների, կամ օտարերկրացիների պատկանող հաստատություններում իբրև տեղական ներկայացուցիչներ կամ բաժնեկիցներ. եթե այո, ապա [ներկայացրեք նաև] նրանց անունները, որոնց այդտեղից տեղահանել են, ինչպես նաև սեփականատերերի և թե՛ այստեղի ու թե՛ արտասահմանի բիզնեսների անունները»³³:

Քրիստոնյաների գույքի և ունեցվածքի մանրամասն հաշվառումը շարունակվում է նույնիսկ հայերի տեղահանությունից հետո:

ՑՆԿՎ-ի Վիճակագրական բյուրոն, Էզեյանի տարածքի նահանգներ ու գավառներ 1916 թ. հուլիսի 2-ին ուղարկված իր ծածկագրված հեռագրով, պահանջում է «հետաքննություն անցկացնել և տեղեկություններ հավաքել նահանգում [շրջանում] եղած ազարակների ու հողային մեծ տարածքների վերաբերյալ, որոնք գտնվում են ոչ-մահմեդականների ձեռքերում՝ դրանց նախահաշվարկային չափների ու արժեքների հետ և դրանց տերերի անունների ու համբավների հետ միասին. [այդ խնդիրն] ավարտելուց և յուրաքանչյուր մարզի համար հանգամանալի զեկույցի մեջ [այդ տեղեկությունները] գրելուց հետո խիստ շտապ այն պետք է ուղարկեք [բյուրո]»³⁴:

33 BOA/DH.SFR, № 57/24, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Մարաշի, Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա), Դիյարբեքի, Սվազի, Տրապիզոնի, Ջանկի, Մամուրեթյուզգոլի ու Քոնյայի նահանգների և Իզմիրի, Էսքիշեհիրի, Նիդեդի, Կեսարիայի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառների Լքված սեփականության հանձնախմբերի նախագահին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 1:

34 BOA/DH.SFR, № 65/140, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի Վիճակագրական բյուրոյի ծածկագրված հեռագիրը Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա) Ադիսի, Ադանայի, Էդիրնեի նահանգներ և Մենթեշեի, Անթալիայի, Իչելի, Քարեաի (Բալըքեշիր) ու Իզմիրի գավառներ, թվագրված 1916 թ. հուլիսի 2:

ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՅՆԵՂԱԿԱՆՆԵՐԻՆ ՈՒՃԱՑՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես փորձելու են ներկայացնել այստեղ, կայսրության մահմեդականներից շատերին նույնպես տեղահանում էին և ստիպում տեղափոխվել: Անկախ այն հանգամանքից, թե ինչ պատճառով էին նրանք հեռացել իրենց նախկին տներից, կայսրության ոչ-թուրք մահմեդական համայնքների նկատմամբ երիտթուրքերի կառավարության բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականության հիմնական ու վերջնական նպատակը նրանց ուժացնելն էր: Տրամաբանությունն այն էր, որ թուրք մեծամասնության մեջ լիովին ձուլվելու համար այդ խմբերը նախ պետք է հրաժարվեին իրենց լեզուներից ու մշակույթից: Ի տարբերություն քրիստոնյա համայնքների, մահմեդականների վերաբերյալ սոցիալական ու մշակութային հանգամանալի տեղեկությունների հավաքումը ձևակերպված էր բացեփակ ու հստակորեն: Բացատրվում էր, որ եթե մահմեդական գաղթականները չկարողանան ձուլվել իրենց նոր համայնքներին, կարելի էր գտնել այլընտրանքային վայր: Թուրքերը, սակայն, պետք է պահպանեին իրենց լեզուն ու մշակույթը:

Ինչպես ստորև ցույց կտրվի այլ փաստաթղթերով, temsil li temessil տերմինների հաճախակի գործածությունը, որ նշանակում են «նմանվել» կամ «ձուլվել», պարզ է դարձնում, որ կառավարության կողմից մահմեդականների բնակեցման քաղաքականության հիմնական նպատակն իրոք հենց դա էր: 1916 թ. հունվարի 23-ին Դամասկոսի նահանգ ուղարկված ծածկագրված մի հեռագրում կարդում ենք.

Ինչպես հաղորդվել է Դամասկոսի նահանգ, պատշաճ է համարվում լայնորեն ցրված ձևով վերաբնակեցնել և ձուլել Տրիպոլիտանիայից ու Ալժիրից գաղթածներին, որոնք ուղարկվել են և այժմ բնակվում են Սիրիայում, պետք է տեղեկություններ հաղորդվեն վերոհիշյալ գաղթականներին հնարավորինս մեծ չափով վերաբնակեցնելու ցայժմ ձեռնարկված անհրաժեշտ քայլերի, վերոհիշյալ նահանգի հետ հաղորդակցություն ձեռնարկելու, նրանց [վերա]բնակեցումն ապահովելու և դրա արդյունքների մասին³⁵:

35 Այս նահանգն ընդգրկում է Սիրիայի այսօրվա մայրաքաղաք Դամասկոսը և Համայի, Հավրանի ու Քերեքի գավառները:

Վերաբնակեցման քաղաքականության նպատակներին հասնելու համար կառավարությունն ստիպված էր համարակալել պատերազմող շրջաններից եկած մահմեդական գաղթականներին և նրանց զատակարգել ըստ սոցիալական ու մշակութային ծագման: Նման տեղեկությունների պահանջներով հաճախ հեռագրեր էին ուղարկվում նահանգներ: Օրինակ, 1915 թ. մայիսի 17-ին ՑՆԿԿ-ն պահանջեց, որ նահանգային իր պաշտոնյաները «անհապաղ գեկուցեն այն գաղթականների թվի մասին, որոնք պատերազմի պատճառով ստիպված են եղել տեղափոխվելու և այդտեղ [ձեր համապատասխան վայրերում] են, այն ծախսերի մակարդակի մասին, որ անհրաժեշտ կլինի նրանց ապաստանի ու օժանդակության համար, ովքեր իրոք կարիքի մեջ են»³⁶: Պատերազմի ընթացքում նման հեռագրերով պահանջվում էր «մշտական ու կանոնավոր կարգ հաստատել» [Ներքին] գործերի նախարարություն տեղեկություններ ուղարկելու համար պատերազմական գոտուց գաղթածների և հետագայում գաղթողների թվի, արտաքսման ձևի ու վայրի և [վերա]բնակեցման մասին»³⁷: Փաստորեն, այս տեղեկությունների հիման վրա էին ծրագրվում ու իրականացվում կառավարության վերաբնակեցման աշխատանքները³⁸:

Հետաքննության ու ստուգումների էին ենթարկվում այն մահմեդականների ազգային պատկանելությունները, ովքեր փախչում էին պատերազմի գոտիներից, և հաճախ հետևյալ բնույթի հարցումներ էին ուղարկվում. «Որքան է պատերազմի գոտուց փախչող քրդերի թիվը: Որո՞նք են այն ցեղերի անունները, որոնց նրանք պատկանում են: Նրանց շարքերում քանի երիտասարդ ու որբ է ճանապար-

36 BOA/DH.SFR, № 60/93, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Դամասկոսի նահանգ, թվագրված 1916 թ. հունվարի 23:

37 BOA/DH.SFR, № 53/26, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի, Սվազի, Անկարայի, Կաստամունուի, Էդիրնեի ու Հյուսիսկենտրոնի (Բուրսա) նահանգներ և Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1915 թ. մայիսի 17:

38 BOA/DH.SFR, № 62/268, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի, Դիյարբեքիրի ու Տրապիզոնի նահանգների և Թորաթի գավառի Տեսչության հանձնաժողովի (Hey'et-i Tefişsiye Müdüriyeti) տնօրենին, թվագրված 1916 թ. ապրիլի 7:

հորդում: Խնդրում ենք զեկուցել»³⁹: Կամ՝ «Պատերազմի գոտիներից նահանգ եկող գաղթականներից ո՞ր քաղաքները կամ ցեղերն են թուրքական, քրդական կամ պարսկական, և, ինչ վերաբերում է պարսիկներին, ո՞ր քաղաքից կամ ցեղից են նրանք գալիս: Նրանք շիա՞ են, թե՞ սուննի [մահմեդական]: Ո՞ր լեզվով են [խոսում]: Ո՞ր ցեղին են պատկանում քրդերը: Որտեղից [են նրանք], քանիսն են և ո՞ր են ուղարկվել»⁴⁰:

Որոշելու համար, թե թուրք ու ոչ-թուրք մահմեդականներին կարելի է արդյոք միմյանցից անջատ բնակեցնել, հնարավոր վայրերից յուրաքանչյուրի համար հատուկ հարցեր են ուղարկվել: Օրինակ, հույս կար թուրք գաղթականներին Բաղդադի շրջան ուղարկելու, և այդ նպատակով 1916 թ. հունիսին մի հեռագիր է ուղարկվել նահանգային վարչություն, որով հարց էր տրվում, թե թուրք գաղթականներն այդ տարածք ուղարկվելու դեպքում կկարողանան արդյոք պահպանել իրենց սեփական լեզուն ու ազգային ինքնությունը. «[խնդրում ենք] զեկուցել ձեր կարծիքը այն մասին, թե հարմար կլինի արդյոք թուրք գաղթականներին ուղարկել Շեհիրբան ու Դելի Աբաս ավանները կամ այլ տարածքներ, որոնք մասնակիորեն բնակեցված են թուրքերով, ինչպես նաև այն մասին, թե այդ տարածք ուղարկված թուրքերին ինչ անհրաժեշտ կլինի, որպեսզի կարողանան պահպանել իրենց լեզուն ու ազգային ինքնությունը և իրենց [թուրքական] կենսակերպը»⁴¹:

Ոչ-թուրք մահմեդականներին ուժացնելու կառավարության ծրագրի հիմքում ընկած սկզբունքները բացահայտվում են քրդերի հանդեպ նրանց ձեռնարկած գործողություններից: Կենտրոնական ու արևմտյան Անատոլիայի ազգային ու մշակութային հանգամանակի դիտարկման հիման վրա, իշխանություններն այդ շրջանները դիտում էին իբրև բնիկ որոշ քրդերի վերաբնակեցնելու հարմար վայր՝ նրանց ուժացումը դյուրացնելու նպատակով: Կայսրության արևմտյան նա-

39 BOA/DH.SFR, № 60/136, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Բիթլիսի, Դիյարբեքիրի, Մոսուլի, Մամուրեթյուլագիզի ու Էրզրումի նահանգներ, թվագրված 1916 թ. հունվարի 26:

40 BOA/DH.SFR, № 63/224, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 6:

41 BOA/DH.SFR, № 65/30, ներքին գործերի նախարար Թավաթի ծածկագրված հեռագիրը Բաղդադի նահանգ, թվագրված 1916 թ. հունիսի 18:

հանգներ 1916 թ. հունվարին ուղարկված հեռագրի համաձայն, ՑՆԿԿ-ն մտածում էր «տեղափոխել (sevki) այն քրդերին, որոնք պատերազմական պայմանների պատճառով փախել էին դեպի երկրի խորքերը՝ Անատոլիայի արևմտյան նահանգները»: «[Իբրև հետևանք] ավելի վաղ տրված հրամանների, այժմ [համապատասխան] ներքին նահանգներում գտնվող քրդերի ու քրդական գյուղերի մասին տեղեկությունների» կարիքի մասին զեկուցելուց հետո, հեռագրի մեջ հարցեր են տրվում. «Որտեղ են քրդական գյուղերը, [և] քանիսն են դրանք, քանի մարդ կա: Նրանք պահպանել են իրենց մայրենի լեզուն ու սովորույթները: Ինչպիսին են նրանց հարաբերությունները այն թուրքական գյուղերի ու գյուղացիների հետ, որոնց հետ շփվում են: Անմիջապես սկսեք հետաքննությունը և ներկայացրեք հանգամանակի զեկույց, ինչպես նաև [անձնական] գնահատական»⁴²:

Երբ վերաբնակեցման տարածքը հաստատվում էր իբրև հարմար վայր մահմեդական որոշ գաղթականների ուժացման համար, հոգ էր տարվում, որ ազգային այլ խմբեր չուղարկվեին միևնույն վայրը: Օրինակ, «Քոնյայի, Անկարայի, Կաստամունուի նահանգներն ու Նիդդեի, Կեսարիայի, Բյուրսիայի, Էսկիշեհիրի, Ամասիայի ու Թոքատի գավառներն» ընտրվել էին տեղահանված քրդերի համար⁴³: Եթե արտոյալների թիվը գերազանցեր տվյալ նահանգի կամ շրջանի կլանման նախանշված հզորությունը, ավելորդ շնչերին պետք է ուղարկեին այլ շրջաններ, սակայն ոչ թե պատահականորեն ընտրված, այլ փախստականների ազգային կերտվածքին համապատասխան և նրանց հատկացված նշանակման վայրեր: 1916 թ. մայիսի 21-ին Մամուրեթյուլագիզ նահանգ ուղարկված հեռագրով, օրինակ, ՑՆԿԿ-ն տեղական իշխանություններին հրահանգում է, որ «այն թուրք փախստականներին, որոնց թիվը գերազանցում են նահանգի կլանման հզորությունը, պետք է Էրզանի-Դիյարբեքիր-Միվերեք ճանապարհով ուղարկել Ուրֆայի, Ջորի [Դեր Ջորի], Մարաշի ու Այն-

42 BOA/DH.SFR, № 60/140, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի, Կաստամունուի, Ադանայի, Անկարայի, Սվազի, Այդինի և այլ նահանգներ և Կեսարիայի, Ջանիկի, Էսքիշեհիրի, Կարահիսարի ու Նիդդեի գավառներ, թվագրված 1916 թ. հունվարի 26:

43 BOA/DH.SFR, № 63/215, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 6:

թափի տարածքներ, իսկ քուրդ փախստականներին պետք է Մալաթիա-Սվազ-Թոքթաթ երթուղիով, իսկ ապա Մալաթիա-Դարենդե-Շարըզ-Ազիզիյե ճանապարհով ուղարկել Կեսարիա, Յոզղաթ, Անկարա և Ջանիկ»⁴⁴: Քոնյայի նահանգ մեկ այլ հեռագիր է ուղարկվել թուրք փախստականներ տանելու մասին այդ շրջանը, որը հատկացված էր քրդերի վերաբնակեցմանը: Ջեկուցելուց հետո, թե «լուր է ստացվել, որ Տրապիզոնից եկած թուրք փախստականներից 185-ը ուղարկվելու են Քոնյա», ՅՆԲԳՎ-ն խնդրել է, որ «թուրքերին Քոնյա չուղարկեն, քանի որ այդտեղ, համաձայն նախորդ ցուցումների, պետք է վերաբնակեցվեն քուրդ փախստականները»⁴⁵: Քրդական խմբերին արաբների կամ քրդերի գերակշռությամբ շրջաններ ուղարկելն արգելված էր, քանի որ այն ըմբռնումը կար, որ նման միջավայրում նրանց ներծուլումը թուրք լայն հասարակության մեջ գրեթե անհնար էր լինելու: Այն վայրերում, ուր արդեն իսկ տեղի էին ունեցել կամ դեռևս ընթացքի մեջ էին նման վերաբնակեցումները, հրամայվեց անմիջապես դադարեցնել գործընթացը: ՅՆԲԳՎ-ն նույնիսկ պատերազմի նախարար Էնվեր փաշային 1916 թ. մայիսի 3-ի հեռագրով տեղեկացրեց, որ «արևելյան նահանգներից տեղահանված քրդերին այնպիսի շրջաններում վերաբնակեցնել, որտեղ արդեն ներկա են քրդեր ու արաբներ, հարմար չի թվում», և որ հետևաբար որոշում է կայացվել «պատերազմի գոտուց նրանց ուղարկել Անատոլիայի խորքերը»⁴⁶: Դրանից երկու օր առաջ Դիյարբեքիրի նահանգապետին ուղարկված մեկ այլ հեռագրում նախ նշվում է, որ քուրդ աքսորյալներին կայսրության հարավային ու հարավ-արևելյան նահանգներում գտնվող այնպիսի վայրեր ուղարկելու որոշումը, ինչպիսին են Ուրֆան ու Դեր Ջորը, սխալ որոշում է եղել, և որ «այն ցանկալի արդյունքի չի հանգեցնի, քանի որ նրանք այնտեղ կմասնանվերահսկելի տարր՝ կան արաբանալով, կան պահպանելով իրենց

լատանձնակի գաղթականի կարգավիճակը»։ հետևաբար, փոխաբան անմիջապես պետք է քրդերի ճամփան փոխել և նրանց ուղարկել այն տարածքները, որոնք ավելի վաղ նշանակված են եղել նրանց համար: Բացի այդ, հեռագիրը ներկայացնում էր հինգ տարբեր կետեր, որոնց հարկավոր էր ուշադրություն դարձնել քրդերին վերաբնակեցնելիս⁴⁷:

Մայիսի 6-ին Ուրֆա է ուղարկվել նման մի հեռագիր, որը բացառում էր նոր որոշումը և քրդերին Դեր Ջորի, Մարաշի ու Այնթափի գավառներում չբնակեցնելու պատճառները.

[Խնդրում ենք], քրդերի բռնի ցրման և իրենց ցեղային կյանքը, հետամնաց արժեքներն ու սովորույթները թողնելու և ուժացման միջոցով օգտակար վիճակի բերելու նպատակով նրանց Անատոլիայի խորքերում թուրք ազգաբնակչության մեջ վերաբնակեցնելու վերաբերյալ տեղեկություն տրամադրեք: Տրամադրեք նաև տեղեկություն [Դեր] Ջոր ու Մարաշի և Այնթափի հարավային մասերն ուղարկված քուրդ փախստականների մասին, որոնք ժամանում են այդտեղ և որոնք բացարձակապես չպետք է ուղարկվեն այնտեղ, այլ շրջանի այն մասերը, ուր բնակվում են թուրքեր: Քանիսն են [ուղարկվել], ո՞ր են ուղարկվել և ո՞ր օրերին⁴⁸:

Չնայած Մարաշը հայտարարված էր մի շրջան, ուր տեղահանված քրդերը չպետք է բնակեցվեին, նրանց ուղարկել են այնտեղ, որից հետո շրջակա մի քանի նահանգների ծանուցում է ուղարկվել, ինչպիսին է 1916 թ. նոյեմբերի 1-ին Դիյարբեքիրի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ ուղարկված հետևյալ հեռագիրը. «Չնայած հրահանգների ցանկի իններորդ կետում հստակորեն ասված է, որ Մարաշի գավառը քուրդ փախստականներին վերաբնակեցնելու վայրերից չէ, տեղական զեկույցներից տեղեկացել ենք, որ հազարավոր տեղահանված քրդեր ուղարկվել են վերոհիշյալ շրջան, և որ նրանցից ոմանք կեղծ

44 BOA/DH.ŞFR, №64/93, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 21:

45 BOA/DH.ŞFR, №67/49, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 19:

46 BOA/DH.ŞFR, №63/190, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը պատերազմի նախարար Էնվեր փաշային, թվագրված 1916 թ. մայիսի 3:

47 BOA/DH.ŞFR, №63/172, Ներքին գործերի նախարար Թալեթաթ փաշայի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 2:

48 BOA/DH.ŞFR, №63/222, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 6:

փաստաթղթեր են ներկայացրել [որոնք նրանց թույլ են տալիս հաստատվելու այդտեղ]... Չպետք է թույլ տալ, որ [սման իրադրությունը] կրկնվի»⁴⁹:

Քրդերի վերաբնակեցման համար արգելված մեկ այլ տարածք էր Դիյարբեքիրի նահանգը: Ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից 1916 թ. նոյեմբերին նահանգապետին ուղարկված մի հեռագրի համաձայն, զեկույցներ են ստացվել այն մասին, որ «[ո]րոշ ցեղապետեր, որոնք իրենց ցանկությանը անջատվել են իրենց ցեղերից, պահանջել են իրենց ընտանիքների հետ միասին վերաբնակեցվել Դիյարբեքիրում», սակայն սման պահանջներն անընդունելի են: Այդ մերժման պատճառը հստակ է. «Քրդերին Դիյարբեքիրում բնակեցնելը պատշաճ չէ, քանի որ այն թուրքերի վերաբնակեցման տարածք է»⁵⁰:

Որպեսզի նրանք լիովին հրաժարվեին իրենց քոչվորական կենսակերպից, լեզվից ու սովորույթներից, մեծ կարևորություն էր տրվում այն հանգամանքին, որ տեղահանված այդ մարդիկ, որոնց նախատեսվում էր ներծուլել, չտեղավորվեին մեծ խմբերով: Հատկապես քուրդ փախստականներին ջանում էին ավելի ցրված տեղավորել, իսկ նրանց ավանդական առաջնորդները՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ, բաժանվում էին և բնակեցվում իրենց համայնքներից առանձնացված: Իրականում, ինչպես Քեմալ Կարպատն է բնութագրել, «գլուխն անջատելով մարմնից»՝ «քոչվորների առաջնորդներին (շեյխերին, բեյերին, աղաներին) քոչվորների հիմնական խմբերից առանձնացնելու և ապա նրանց քաղաքներում ու ավաններում տեղավորելու» քաղաքականությունը գալիս է տասնիններորդ դարից⁵¹: 1916 թ. մայիսին նահանգներ ուղարկված հեռագրերում բացեփակ նշվում են քրդերի վերաբնակեցման քաղաքականության հարցում կառավարության սկզբունքային ուղղությունները: Ինչպես

մայիսի 4-ին Ուրֆայի, Մարաշի ու Այնթափի գավառներն են տեղեկացվել:

Եթե կան քուրդ փախստականներ, որոնք արդեն ուղարկվել են [,] բացարձակապես անհրաժեշտ է, որ այդ ցեղի անդամներն անջատվեն իրենց առաջնորդներից, առաջնորդները տեղավորվեն քաղաքներում, իսկ [մնացած] անհատ [անդամ]ները տեղաբաշխվեն շրջանի հարավային մասում կուտակված թուրքական գյուղերում, ամեն գյուղում երկու կամ երեք ընտանիք, որպեսզի նրանք բոլորը միասին մեկ վայրում իբրև խումբ չվերաբնակեցվեն. Սա [արվում է], որպեսզի նրանք հրաժարվեն քոչվոր կենսակերպից, որով ապրել են [մինչև հիմա], ինչպես նաև իրենց լեզվից ու սովորույթներից:

Ապա պահանջվում է, որ «շեյխերն ու իմամները ցեղի [մյուս] անդամներից առանձին տեղավորվեն, իսկ ցեղի մյուս անդամները նույնպես պետք է վերաբնակեցվեն ցրված կերպով, և որ ցեղապետերի, շեյխերի և անհատ անդամների միջև հարաբերությունների շարունակումը չպետք է թույլատրվի»⁵²:

Մինևույն բովանդակությամբ և մինևույն օրը Սվազի, Մամուրեթյուլազիզի և Էրզրումի նահանգներ ուղարկված մեկ այլ հեռագիր տեղական պաշտոնյաներին տեղեկացնում է, որ տեղահանված քրդերը չպետք է ուղարկվեն արաբներով և ուրիշ քրդերով բնակեցված վայրեր: Փոխանակ թույլատրելու քրդերին «այնտեղ իրենց սովորույթներն ու ազգային ինքնությունը պահպանելու և, հետևաբար, շարունակելու գոյություն ունենալ իբրև չգրանցված միավոր», հեռագրի մեջ կրկնվում է, որ «անհրաժեշտ կլինի ցեղի [շարքային անդամներին] առանձնացնել երևելի անդամներից», և որ քրդերը պետք է տեղավորվեն «թուրք փախստականների շարքերում ու թրքացած քաղաքների բնակչության մեջ և նահանգի սահմաններում կամ հարևար այլ միջավայրերում..., որպեսզի այն վայրերում, ուր ուղարկվում են, ի վիճակի չլինեն շարունակելու ցեղային իրենց գոյությունն ու պահպանելու իրենց ազգային ինքնությունը»⁵³:

49 BOA/DH.ŞFR, №69/141ve 144, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 1:

50 BOA/DH.ŞFR, №70/111, ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 26:

51 Karpat, Osmanlı Nüfusu, 19.

52 BOA/DH.ŞFR, №63/187, Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ծածկագրված հեռագիրը Ուրֆայի, Մարաշի ու Այնթափի գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 4:

53 BOA/DH.ŞFR, №63/189, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի

1916 թ. մայիսի 6-ին Մոսուլի նահանգ ուղարկված մի հեռագրում թվարկվում է այս քաղաքականության համար իրագործվելիք յուրաքանչյուր քայլը.

1. Քրդական տարրը բարեփոխելու և այն կառուցողական միավորի փոխարկելու համար անհրաժեշտ է անմիջապես նրանց տեղահանել և ուղարկել Անատոլիայի ստորև նշված վայրերը:
2. Վերաբնակեցման վայրերն են. Քոնյայի, Անկարայի ու Կաստամոնուլի նահանգները, Նիդդեի, Կեսարիայի, Քութահյայի, Էսքիշեհիի, Ամասիայի ու Թոքատի գավառները:
3. Վերաբնակեցման վայրերում շեյխերը, առաջնորդներն ու մուլաները առանձնացվելու են ցեղի մնացած մասից և ուղարկվելու են տարբեր շրջաններ. ցեղի [մյուս] անդամներից կամ առաջ, կամ հետո. Այլ կերպ ասած՝ այնպիսի վայրեր, որոնցից նրանք ի վիճակի չեն լինի հարաբերություններ պահպանել մյուս անդամների հետ⁵⁴:

Տեղահանված քրդերին ոչ թե Անատոլիայի արևելյան ու հարավարևելյան, այլ արևմտյան ու կենտրոնական գավառներն ուղարկելու, ինչպես նաև քուրդ կրոնական ու աշխարհիկ առաջնորդներին իրենց ցեղերից առանձնացնելու և այլուր տեղավորելու հարցում հավաստիանալը թերևս այս քաղաքականության երկու հիմնական պատվարներն էին, սակայն կար ևս մեկ, գուցեև հավասարապես կարևոր մեկ այլ նկատառում. հոգ տանել, որ իրենց նոր բնակավայրերում քրդերը ամբողջ բնակչության հինգ տոկոսից ավելին չկազմեն: Այս մտահոգությունն արտահայտված է կենտրոնական կառավարությունից նահանգներ ուղարկված բազմաթիվ հաղորդագրությունների մեջ և բացեիքաց ու պարբերաբար կրկնված է ընթացիկ հրահանգների մեջ.

Քանի որ հարմար չի, որ պատերազմի գոտուց նահանգ եկող քուրդ փախստականները տեղավորվեն հարավային նահանգ-

ծածկագրված հեռագիրը Սվազի, Մամուրեթյուլագիզի և Էրզրումի նահանգներ, թվագրված 1916 թ. մայիսի 4:

54 BOA/DH.ŞFR, № 63/215, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 6:

ներում կամ այն վայրերում, ուր քրդերը մեծամասնություն են կազմում, [համապատասխան] վայրերին տեղեկացվել է, որ տեղահանված այն անձինք, որոնք ներկայումս գտնվում են Դիյարբեքիրի, Սվազի, Էրզրումի ու Մամուրեթյուլ-Ագիզի նահանգներում, ուղարկվեն Անատոլիայի խորքերը, որպեսզի նրանց հնարավոր լինի համոզել հրաժարվել իրենց ցեղային ապրելակերպից և չգրանցված ու չվերահսկվողից վերածվել «հողին կպած» ու կարգավորված համայնքի: [Նշանակված] վայր ժամանելուց հետո նրանց տեղավորումը [պետք է ընթանա] հետևյալ կերպ. 1. Ցեղի առաջնորդները պետք է առանձնացվեն մյուս անդամներից, երևելի ու ազդեցիկ անդամները պետք է տեղավորվեն նահանգային, գավառային կամ մարզային կենտրոններում՝ նայած անհրաժեշտության, իսկ մյուսները պետք է լայնորեն ցրվեն քաղաքների ու գյուղերի վրա և այդ վայրերում տեղավորվեն այնպես, որ ոչ մի տեղ նրանց թիվը չգերազանցի տեղական ամբողջ բնակչության հինգ տոկոսը: 2. Շեյխերն ու իմամները պետք է առանձնացվեն ցեղի մյուս անդամներից և առանձին տեղավորվեն [անընթեռնելի] ձևով: 3. Առաջնորդներին ու շեյխերին չի թույլատրվելու շարունակել հաղորդակցվել ցեղի մյուս անդամների հետ⁵⁵:

ԻՐԱԳՈՐԾԵԼՈՎ ՅԻՆԳԻՑ ՏԱՍ ՏՈԿՈՍԻ ՍԿԶԲՈՒԼԸ

Ինչպես կարելի է տեսնել նախորդ փաստաթղթերից, կառավարության բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականության հիմնական նկատառումներից մեկն այն էր, որ վերաբնակեցվող մարդկանց որևէ խմբի թիվը որևէ վայրում չգերազանցեր ամբողջ բնակչության 5-ից 10 տոկոսը: Այն հարցը, թե թվային այս սահմանն ինչպես է որոշվել, և թե որն է դրա պատմական նախադրյալը, առանձին քննարկման նյութ է, որին ես չեմ անդրադառնա՝ բացի նշելուց, որ

55 BOA/DH.ŞFR, № 63/188, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի, Քոնյայի, Հյուդավենդիզարի (Բուրսա) ու Կաստամոնուլի նահանգներ և Քյութահյայի, Կեսարիայի ու Նիդդեի գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 1:

այն տարածվում էր ոչ միայն քրդերի, այլ նաև բոլոր ոչ-թուրք խմբերի վրա՝ անկախ նրանց կրոնից⁵⁶:

1915 թ. հոկտեմբերի 5-ին Անկարայի նահանգ ՅՆԿՎ-ի ուղարկված ծածկագրված հեռագիրը ցույց է տալիս, որ Բնակեցման գրասենյակը երեք օր առաջ հաղորդագրություն էր ուղարկել, որը «վերաբերում էր մահմեդական այն փախստականների հետ վարվեցողությանը», ովքեր գալիս էին Անկարայի շրջան: Ի թիվս այլ կետերի, ավելի վաղ ուղարկված այդ հեռագրում շեշտվում էր, որ «[շրջան ուղարկված] ալբանացիներն ու բոսնիացիները ցրված ձևով տեղավորվեն թուրք բնակչության մեջ՝ 1:10 հարաբերակցությամբ»⁵⁷:

Պարզ է դառնում, որ 1916 թ. ամռանը նման գործողություններ են իրականացվել Բուրսայի (Hüdâvendigâr) և նրա շրջակայքի հույն ազգաբնակչության հետ: Հուլիսին Բուրսայի նահանգապետը հրամայել է, որ հույն ներգաղթյալներին բաշխեն թուրքական գյուղերի վրա, սակայն այնպես, որ նրանց թիվը չանցնի ընդհանուր բնակչության 10 տոկոսը: Հունական ուղղափառ եկեղեցու հետագա մի հաղորդման մեջ նշվում է, որ «նահանգապետ[ը] պարզապես հետևում էր ՄԱԿ-ի կազմակերպած ծրագրին, որի նպատակն էր նրանց հավատափոխել՝ դարձնելով մահմեդական»⁵⁸:

56 5-10 տոկոսի սկզբունքը ուսումնասիրության հետաքրքիր առարկա է: Այստեղ կսահմանափակվեն՝ բարձրաձայնելով մի կասկածի մասին: Հնարավոր է, որ 1913-14 թթ. հայկական բարենորոգումների քննարկումները խիստ կարևոր դեր խաղացած լինեն այդ սկզբունքն այդպես կարևորելու հարցում. բարենորոգումները պետք է վերաբերեին այն նահանգներին, որտեղ հայ ազգաբնակչության հարաբերակցությունն ընդհանուր բնակչության նկատմամբ վճռորոշ էր համարվում: Ըստ 1914 թ. բարենորոգման համաձայնագրի, «գլխավոր տեսուչի գլխավորությամբ ամենաուշը մեկ տարվա ընթացքում պետք է բնակչության ճշգրիտ մարդահամար անցկացվեր, [և] պետք է որոշվեին... ազգային-կրոնական խմբերի ու նրանց խոսացած լեզուների համամասնությունները» (Ramazan Yıldız, "Vilayat-ı Sitte'de Ermenilerle İlgili Reformlar," Ermeni Araştırmaları 25 [2007]), <http://www.eraren.org/index.php?Lisan=tr&Page=Dergilerik&IcerikNo=497/>:

57 BOA/DH.ŞFR, №56/290, Ներքին գործերի նախարարության ՅՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 5:

58 Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 1914-1918 (Constantinople and London: Hesperia Press, 1919), 56.

Թեև ներգաղթյալների ճշգրիտ հարաբերակցությունը տեղացիների նկատմամբ հաղորդված չէ, պարզվում է՝ նման գործընթաց էր իրականացվում նեստորական քրիստոնյաների նկատմամբ: 1914 թ. սեպտեմբերին, օրինակ, ռազմական նկատառումներով որոշում ընդունվեց «արտաքին հրահրումների ենթակա» նեստորական քրիստոնյաներին տեղահանել և տանել երկրի խորքերը՝ այնպիսի վայրեր, ինչպիսին են Անկարան ու Քոնյան: Տեղահանվողներին արգելված էր մեծ խմբեր կազմել. միջոցներ էին ձեռնարկվում նրանց լայնորեն տարածելու ուղղությամբ, որպեսզի որևէ վայրում քսանից ավելի նեստորական ընտանիք չլինեին⁵⁹:

5-10 տոկոսի չափանիշը կիրառվում էր նաև հայերի նկատմամբ, սակայն երկու ուղղությամբ: Արևմտյան որոշ նահանգներում հայերը նահանգի սահմաններում վերաբաշխվում էին այնպես, որ բնակչության 5 տոկոսից ավելին չկազմեին: Ինչ վերաբերում է այն հայերին, որոնք պետք է վերաբնակեցվեին Սիրիայի ու Իրաքի անապատներում, խստորեն հրամայված էր հայ եկվորներին այնպես տարածել մահմեդականների մեջ, որ չգերազանցեին բնակչության 10 տոկոսը: Այս կարգադրությունը կարելի է համարել օսմանյան իշխանությունների կողմից ցեղասպանական քաղաքականության հստակ ցուցիչ. քաղաքականություն, որին հարկ է հատուկ անդրադառնալ: Հայերի նկատմամբ այս քաղաքականությունը կքննարկվի 3-րդ գլխում:

ՄԱՅՆԵՂԱԿԱՆ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՑԱՆԿԱՑԱԾ ՎԱՅՐՈՒՄ ՉԱՍՏԱՏԿԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

Տեղահանվածների ու փախստականների բնակեցումն ըստ նախապես մշակված ծրագրի իրականացնելու նշանակալի ապացույցներից մեկն այն հանգամանքն է, որ նրանց չէին թույլատրում իրենց ցանկացած վայրում հաստատվել, այլ ստիպում էին վերաբնակվել իրենց համար նշանակված վայրերում: Վերաբնակեցման ընթացքում պահպանվելիք քայլերը սահմանված էին 1915 թ. օգոստոսի 25-ին համապատասխան նահանգներ ու գավառներ ուղարկված հաղորդագրության մեջ: Այդ շրջաբերականից պարզ է դառնում, որ փախստականների մի մասը, փոխանակ հաստատվելու իրենց հատկացված վայրերում, փախել են այլ վայրեր: Հաղորդագրության մեջ այնուհետև

59 BOA/DH.ŞFR, №46/78, Ներքին գործերի նախարար Թալեթի հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 26:

հրահանգվում է, որ իրենց հատկացված վայրեր չգնացած բոլոր մարդկանց բռնությամբ ուղարկեն սահմանված վայրերը:

Չնայած անհրաժեշտ էր այդ փախստականներին հնարավորինս շուտ հեռացնել այդ վայրերից և վերաբնակեցնել այն վայրերում, որոնցից տեղահանվել են հայերը, վերոնշյալ փախստականները ցանկություն չեն ցուցաբերել այդտեղ գնալու: Տեղեկություններ կան, որ նրանցից ոմանք ամեն միջոցի ու հնարավորության դեպքում ճանապարհից շեղվել են՝ ցրվելու այսուայնտեղ. անհրաժեշտ է ցրված այդ մարդկանց անհապաղ ուղարկել այդտեղ, իսկ նրանց, ովքեր դեռ պետք է վերաբնակեցվեն և դեռևս այստեղ են, բռնի կերպով տեղահանել՝ առանց հաշվի առնելու այդ հարցում նրանց համաձայնությունը:

Հաղորդագրության մեջ նշվում է, որ այդ պատճառով նրանց պետք է ուղարկել «իրենց համար նշանակված վերաբնակեցման վայրերը՝ նրանց որևէ հնարավորություն չտալով վազելու կամ փախչելու ուրիշ տեղ»⁶⁰:

Չնայած հստակ հրահանգներին, հայտնի է, որ տեղահանվածներից շատերը գնացել են իրենց ընտրած վայրերը. այս երևույթը կանխելու փորձերը կառավարությունից խլում էին հսկայական մտամտուք ու ջանքեր: Նահանգներ ուղարկված բազմաթիվ հեռագրեր վկայում են դրա մասին: 1916 թ. ապրիլի 15-ին Ուրֆա ուղարկված մի հրահանգի մեջ բողոք է հնչում, որ «բացարձակապես անընդունելի է, որ տեղահանվածներն այլ վայրեր գնան՝ փոխանակ իրենց [համար նշանակված] վերաբնակեցման վայրերը, և պահանջվում է «տեղահանվածներին չթույլատրել դուրս սպրդել, և միջոցներ ձեռնարկել դա կանխելու համար»⁶¹: Մեկ այլ հեռագրի մեջ, որը 1916 թ. մայիսին

ուղարկվել է Մամուրեթյուլազիզի նահանգ, Բնակեցման գրասենյակը նշում է, որ զեկույցներ է ստացել այն մասին, որ «տեղահանվածներից ոմանք չեն գնացել իրենց հատկացված վայրերը, այլ փախել են և քարքարվել Դիյարբեքիի շրջակայքում»: Մեծագույն հրատապությամբ հանձնարարվում է տեղահանվածներին թույլ չտալ որևէ այլ տեղ գնալ, բացի այն վայրերը, ուր նրանց տանում են»⁶²: Այդպես նաև, հաջորդ ամիս Տրապիզոն ուղարկված մեկ այլ հեռագրում հաստատվում է, որ «Տրապիզոնից տեղահանվածներից ոմանք, որոնց ուղարկում էին Մերզիֆոն, հայտնվել են Իզմիրի գավառի ճանապարհին», և պահանջվում է, որ նման բան չկրկնվի: Շրջանային պաշտոնյաներին հիշեցվում է, որ «պատերազմի գոտուց փախչողները պետք է ուղարկվեն վերաբնակեցման վայրերը»⁶³:

Երբ ավելի շատ նման դեպքեր հայտնվեցին, 1916 թ. հունիսի 26-ին մեկ այլ հեռագիր ուղարկվեց՝ այս անգամ Կաստամունուի նահանգ և Բոլուի գավառ, որով պահանջվում էր, որ, «քանի որ անհրաժեշտ է պատերազմի գոտուց փախչող տեղահանված այդ անձանց ուղարկել հրահանգների հատուկ ցուցակում թվարկված վերաբնակեցման վայրերը, նրանց բացարձակապես հնարավորություն չպետք է ընձեռվի որևէ այլ տեղ գնալու՝ իրենց համար նշանակված վայրերից բացի»⁶⁴: Երբ հայտնի է դառնում, որ տեղահանվածներից շատերը հակառակվել են կառավարության հրահանգներին, հրաման է ուղարկվում հետաքննություն սկսելու այն տեղահանվածների նկատմամբ, ովքեր «ասում են, որ փաստաթղթեր չունեն, և ապա, թաքցնելով իրենց ազգությունը, խաբում են պաշտոնյաներին և իրենք իրենց ուղարկում իրենց համար նախանշված վայրերից տարբեր տեղեր»⁶⁵:

60 BOA/DH.ŞFR, № 55/256, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Բիթլիսի, Դիյարբեքիի, Կաստամունուի, Ադանայի, Անկարայի, Հալեպի, Սվազի, Մամուրեթյուլազիզի, Տյուրքմենդիգարի (Բուրսա), Տրապիզոնի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Քարեսիի (Բալիքեսիր), Քյուստանայի, Էսքիշեհիրի, Ջանկիլի, Կեսարիայի ու Մարաշի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

61 BOA/DH.ŞFR, № 63/9, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 15:

62 BOA/DH.ŞFR, № 63/283, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 11:

63 BOA/DH.ŞFR, № 65/64, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1916 թ. հունիսի 22:

64 BOA/DH.ŞFR, № 65/78, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ և Բոլուի գավառ, թվագրված 1916 թ. հունիսի 24:

65 BOA/DH.ŞFR, № 65/93, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի,

Որոշ շրջաններում, նույնիսկ վերաբնակեցվելուց հետո, փախստականները շարունակել էին փախչել իրենց նոր տներից: Ի պատասխան դրա՝ կառավարությունը խիստ միջոցներ է ձեռնարկել այդ երևույթը կանխելու համար: Ներքին գործերի նախարարությունը 1917 թ. դեկտեմբերի 31-ին հեռագիր է ուղարկել Բուրսա (Hüdâvendigâr), նշելով, որ «Hüdâvendigâr [Բուրսայի] նահանգից [լ]ուրեր են հասել, որ Բաթումից տեղահանվածների մի մեծ խումբ է հասել Բուրսա, և որ նրանցից շատերը ճամփորդության ընթացքում փախել են կամ անհետացել: Թեև նրանք պնդում են, որ այդ նահանգն իրականում նրանց վերաբնակեցման [ճիշտ] վայրը չէ, ... բացարձակ ոչ մի տեղահանվածի չպետք է թույլատրվի այս ձևով փախչել, ... և որևէ [պաշտոնյա], որ բարեհոգություն կամ անփութություն կդրսևորի [այս հարցում], խստորեն կպատժվի»⁶⁶:

Այս արգելքն ու խիստ հարկադրանքը վերաբերում էին նաև թուրք փախստականներին: 1918 թ. հունվարին Ներքին գործերի նախարարության կողմից Ադանայի նահանգ ուղարկված հեռագիրը որոշ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես էր վերահսկվում այս հարցը:

[Մահմեդական] այն փախստականներից, ովքեր Բալկանյան պատերազմ[ներ]ից հետո փախել են Ռումելիայից, և այն թուրք ու քուրդ փախստականներից, ովքեր Վանի, Բիթլիսի ու Էրզրումի նահանգներից տարվել են Ադանա, քրդերը գրանցվել են որոշակի տարածքներում վերաբնակեցվելու համար, և նրանց որևէ այլ վայր գնալու բացարձակ ոչ մի թույլտվություն չի տրվելու: Ինչ վերաբերում է թուրքերին, երբ արձանագրություններն ուղարկվեն նահանգի ներգաղթի գրասենյակ, նրանք արձանագրության մեջ պետք է գրանցվեն իբրև «օտարերկրացիներ», և

Բեյրութի, Հալեպի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Իչելի, Էսքիշեհիբի, Բուրսի, Թեքեի, Ջանիկի, Լեոնալիքանանի [Լեոնալիքանանի], (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսի), Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Բյուրսեի, Մենթեշեի, Մարաշի ու Նիդ-դեի գավառներ, թվագրված 1916 թ. հունիսի 26:

66 BOA/DH.ŞFR, №72/131, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի ու Կաստամունուի նահանգներ, թվագրված 1917 թ. դեկտեմբերի 31:

նրանց գրանցումը պետք է նշվի հիմնական արձանագրություններում, և [պետք է] ձևակերպվեն թղթերը»⁶⁷:

Այն տեղահանվածների առնչությամբ, որոնք տեղավորվել էին անոսոս կառավարության հրահանգների ու վերահսկողության, հրաման է արձակվել անմիջապես ազատելու իրենց նոր տները: Իզմիրի գավառ ուղարկված 1914 թ. հուլիսի 2 թվակիր մի հեռագրում նշվում է, որ «լուրեր են հասել, որ Յալովայի մարզի հունական գյուղերում մահմեդական գաղթականներ են տեղավորվել», և կարգադրվում է, որ «այդ անձանց ոչ մի պարագայում թույլ չտրվի [այդտեղ] հաստատվել»⁶⁸: Այս կոշտ ու նույնիսկ դաժան վերաբերմունքը բոլոր՝ նաև թուրք ու ոչ-թուրք մահմեդական գաղթականների նկատմամբ հստակորեն մատնանշում է, որ կառավարության բնակեցման ու վերաբնակեցման քաղաքականությունն իրականացվել է բազմակողմանի ու հանգամանալի մի ծրագրի համաձայն, որն ունեցել է վերաբնակեցման համար հստակորեն սահմանված չափանիշներ:

ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ «ԹՈՒՐԵԱԿԱՆՑՈՒՄԸ»

Տառացիորեն հարյուրավոր քրիստոնեական բնակավայրերի բռնի պարպմանը զուգընթաց սկսվեց թերակզոն աշխարհագրական անվանացանկի համակարգված փոփոխումը: 1916 թվականի մի փաստաթղթից երևում է, որ ոչ-թուրքական բնակավայրերի անունների փոփոխման գործն արդեն իսկ որոշ ժամանակ ընթացքի մեջ էր: Այդ փաստաթղթում նշվում է պատրաստված մի ցուցակի մասին, որը «մատնանշում է բոլոր այն քաղաքներն ու գյուղերը, որոնց անունները փոխվել են 1910 թվականից ի վեր»⁶⁹:

Տեղանունների վերաբերյալ մի հոդված հայտնվեց կառավարության 1913 թ. գաղթականների կարգավորման վերաբերյալ փաստա-

67 BOA/DH.SN.THR, №1857/77/47, Ներքին գործերի նախարարության հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1918 թ. հունվարի 7:

68 BOA/DH.ŞFR, №42/176, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1914 թ. հուլիսի 2:

69 Մեջբերված է ըստ Erdal Aydoğan, İttihat ve Terakki'nin Doğu Politikası, 1908-1918 (Istanbul: Ötüken Neşriyat, 2005), 68:

թղթի մեջ, ուր նշվում է «այն գյուղերին տրվելիք «հարմար անունների» կարիքը, որոնք կառուցվելու են գաղթականների համար»: Սակայն տեղահանության փոփոխությունը չէր սահմանափակվում նոր կառուցվող բնակավայրերով. այն ընդգրկում էր ոչ-թուրքական անուններ ունեցող բոլոր բնակավայրերը: Սկզբնապես, սակայն, համընդհանուր համակարգ գոյություն չուներ, և այդ փորձերն արվում էին տեղական մակարդակում՝ յուրաքանչյուր նահանգի վարչական կանոնների համապատասխան:

Անվանափոխության գործընթացի համակարգման առաջին քայլերը համընկան Առաջին համաշխարհային պատերազմին Թուրքիայի մասնակցության ժամանակաշրջանին և արագացան պատերազմի ընթացքում: Մեծ համակարգման այդ փորձը կարելի է տեսնել Ներքին գործերի նախարարության կողմից 1916 թ. հունվարի 12-ին Մամուրեթյուպզիզի նահանգ ուղարկած մի հեռագրում, ուր նշվում է, որ այդ հարցով նախորդ հաղորդագրությունը նահանգներ է ուղարկվել 1915 թ. հոկտեմբերի 17-ից ամիսներ առաջ: Այդ նախորդ հաղորդագրությամբ նախարարությունը պահանջել էր, որ տեղական պաշտոնյաները պատրաստեին «այն քաղաքների, ավանների ու գյուղերի ցանկը, որոնք օսմանիզմի [իմա՝ օսմանյան թուրքերենի] հետ կապված չեն»⁷⁰:

1916 թ. հունվարի 5-ին լույս տեսած կենտրոնական կառավարության նոր կանոնագիրքը պետք է բնակավայրերի ու Անատոլիայի աշխարհագրության վերանվանման գործը վերածերկառավարության քաղաքականության կենտրոնական ոլորտի: Այդ փաստաթղթի առաջին հոդվածը նշում է, որ «որոշվել է, որ օսմանյան տիրապետության ներքո գտնվող բոլոր նահանգները, գավառները, գյուղերը, քաղաքները, լեռները, գետերը... և այլն, որոնք ունեն ոչ-իսլամական՝ հայկական, հունական ու բուլղարական անուններ, պետք է փոխվեն թուրքականի»⁷¹: Օգտվելով նպաստավոր այն հանգամանքներից, որ նման քայլի համար պատերազմն էր ընձեռել նոր կանոնները ոչ միայն կոչ էին անում նման անունների շուտափույթ փոփոխության, այլ նաև տեղեկություններ ու խորհուրդներ էին տալիս, թե դա ինչպես պետք է արվեր, այդ թվում և ապահովում էր ուղեցույցով և նույնիսկ նոր անունների օրինակներով: Նահանգային իշխանությունները

70 Erdal Aydoğan, İttihat ve Terakki'nin Doğu Politikası, 68.

71 Dündar, İttihat ve Terakki'nin, 82.

պետք է իրականացնեին «նահանգների բոլոր քաղաքների, գյուղերի և ավանների գոյություն ունեցող անունների... ցուցակներ կազմելու նախնական աշխատանքը և որոշեին այն նոր անունները, որոնցով դրանք պետք է կոչվեին»: Շրջանային կառավարություններն սկսել են աշխատել այս խնդրի վրա և կանոնավոր կերպով գեկուցել կենտրոնական կառավարությանը: 1916 թ. հունվարի 27-ի մի փաստաթուղթ ցույց է տալիս, որ Ներքին գործերի նախարարության հավաքած փաստաթղթերը պարբերաբար ուղարկվում էին Բարձր հրամանատարության գրասենյակ⁷²:

Չնայած այդ փորձերին, անվանակոչության գործընթացն արագ ավարտելու կառավարության ցանկությունը խառնաշփոթ է ստեղծել տեղերում. մի իրադրություն, որ նույնիսկ սպառնում էր լրջորեն վսասելու պատերազմական իրադրությունը, քանի որ զինվորականության շարքերում ստորաբաժանումների միջև հաղորդակցությունը ոտնակոխել էր անըմբռնողության ու շփոթմունքի նոր հարթություններ: 1916 թ. հունիսի 15-ին վերջիվերջո հրաման է տրվել կասեցնելու գործընթացը⁷³: Սակայն պարզվում է, որ կասեցումն ընդամենը ընդմիջում էր, և տեղահանության ու աշխարհագրական առարկաների անունների թուրքացումը շարունակվելու էր մինչև Թուրքիայի Հանրապետության հաստատումն ու այդուհետև՝ աստիճանաբար վերացնելով ոչ միայն քրիստոնեական ու եվրոպական, այլ նաև արաբական, պարսկական, քրդական, լազական, վրացական ու չերքեզական անունները⁷⁴:

ՏԵՂԱՅԱՆԱՆ ՈՒ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԾԿԵԼ Է ՏԱՐԲԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ

Թյուրքմբռնումներից խուսափելու համար հարկ է նշել, որ 1913-ից 1918 թթ. ընթացքում կատարված ոչ բոլոր տեղահանություններն ու տեղափոխություններն են եղել կենտրոնական կառավարության մշակած բնակեցման ու վերաբնակեցման այն ծրագրի արգասիքը,

72 Aydoğan, İttihat ve Terakki'nin Doğu Politikası, 68.

73 Նույն տեղում, 83:

74 Նյութի մասին ընդհանուր ակնարկի համար տես Harun Tunçel, "Türkiye'de İsmi Değiştirilen Köyler," Fırat Üniversitesi Sosyal Bilimler Dergisi 10, №2 (2000): 23-34:

որի բոլոր մանրամասները նախօրոք մշակված էին: Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության փաստաթղթերը բացահայտում են, որ այդ ժամանակաշրջանում գոյություն է ունեցել ազգաբնակչության տեղաշարժերի հինգ հիմնական պատճառ, որոնք հանգամանալից կներկայացնեն ստորև:

ՄՊԱՌՆԱԼԻՔԻ ԶԳԱՑՈՒՄ

Քրիստոնյա (մասնավորապես Էզեյանի առափնյա շրջաններում հույների, Մարդին-Դիյարբեքիի տարածքում ասորի քրիստոնյաների և բոլոր հայերի) խմբերը, որոնց ներկայությունը սպառնալիք էր համարվում, արտագաղթի կամ արտաքսման միջոցով պետք է հեռացվեին Անատոլիայից, և այդ շրջաններում նրանց փոխարեն պետք է վերաբնակեցվեին մահմեդականները: Էզեյանի հույների դեպքում այդ տեղաշարժը մասնակիորեն ավարտվել է 1914թ. գարնանն ու ամռանը՝ նրանց Հունաստան արտաքսելով, սակայն մեծամասամբ տեղի է ունեցել սպառնալիքների, ահաբեկումների, կողոպուտի և սահմանափակ թվով սպանությունների միջոցով: Իսկ հայերը տեղահանվել են 1915թ. մայիսից սկսած, և շատերին սպանել են տեղահանության ճանապարհին կամ թողել անապատի ամայության մեջ մեռնելու: Հայերից բացի սպանվել են նաև նշանակալի թվով քրիստոնյա ասորիներ:

Բալկաններից ու Կովկասից մահմեդական նորեկներին համակարգված կերպով բնակեցնում էին քրիստոնյաների դատարկված գյուղերում: Վերաբնակեցման այդ աշխատանքները, որոնք Էզեյանի շրջակայքում սկսվել էին 1913 թվականին, 1915թ. նոր մակարդակի են հասել հայերի գյուղերի մեծաքանակ պարպմամբ և տևականորեն շարունակվել են նաև պատերազմի ընթացքում: Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվը լեփ-լեցուն է այնպիսի փաստաթղթերով, որոնք նկարագրում են ազգաբնակչության տեղաշարժման ծրագրերը: Դրանցից է Քոնյայի նահանգապետին ուղղված ծածկագիրը, որով հրամայվում է. «Ժամանակավորապես նահանգի ներսում՝ Էրեղլիի, Կարաաղաի, Իլգինի, Աքշեհիի ու Կարամանի շրջաններում տեղավորված 64 ալթանացի ու 181 բոսնիացի ընտանիքները իրենց պատկանող իրերի հետ միասին պետք է դուրս բերվեն՝ վերաբնակեցվելու համար Դիյարբեքիի ու Սվազի նահանգների լքված գյուղերում: Վերոնշյալ շրջանների 78 թուրք ընտանիքները

պետք է ուղարկվեն Ադանայի նահանգ»⁷⁵: Ընդհանուր առմամբ փորձ էր արվում նոր եկվորների նյութական կարիքները հոգալ հայերի ու հույների հետացումից հետո «լքված գույքի, գոյություն ունեցող պանեամթերքի, հագուստեղենի և այլ ունեցվածքի» հաշվին. փաստորեն, գույքի լուծարման հանձնախմբերը, որոնք ստեղծվել էին հայերի բողոքած գույքին հետևելու նպատակով, ժամանակի ընթացքում սկսել են զբաղվել նորեկների կարիքները հոգալու խնդրով⁷⁶:

Որոշ շրջաններում հայկական քաղաքներն ու գյուղերն իրենց բնակիչներից պարպելու և դրանք մահմեդական գաղթականներով վերաբնակեցնելու միջև ընկած կարճ ժամանակամիջոցը կարող է դիտվել իբրև ևս մեկ ցուցիչ այն փաստի, որ հայերի փաստացի տեղահանման համար արդեն իսկ նախապատրաստական աշխատանքներ էին կատարվել: Այս երևույթի լավագույն և կարևորագույն օրինակը թերևս հայերի տեղահանումն էր Ջեյթունից: Հայ բնակիչներին հանելու գործընթացն սկսվել է 1815թ. ապրիլի 8-10-ը⁷⁷, իսկ երկու շաբաթ չանցած՝ 1915թ. ապրիլի 20-ին, սկսվել է Այնթափի շրջակայքից բերված մարդկանց վերաբնակեցումը⁷⁸: Նկատի ունենալով, որ Ջեյ-

75 BOA/DH.ŞFR, № 54/246, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915թ. հունիսի 30:

76 BOA/DH.ŞFR, № 61/120 and 61/122, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Բիթլիսի, Տրապիզոնի ու Սվազի նահանգներ, թվագրված 1916թ. փետրվարի 26: Հեռագրերը ցույց են տալիս, թե ինչպես էին գործում այդ հանձնախմբերը:

77 Ապրիլի 8-10-ը Ջեյթունից առաջին ընտանիքների հեռացման վերաբերյալ տես James Bryce and Arnold Toynbee, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-16: Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs by Viscount Bryce, ed. Ara Sarafian (Princeton and London: Gomidas Institute, 2005), 491, footnote (by Ara Sarafian): Ապրիլի 9-ի իրադարձությունների համար տես NA/RG 59, 867.00/761, Report from the consul in Aleppo, J. B. Jackson, to Ambassador Morgenthau, dated 21 April 1915, reproduced in United States Official Records on the Armenian Genocide, 1915-1917, ed. Ara Sarafian (Princeton and London: Gomidas Institute, 2004), 10 և Aram Arkun, "Zeytun and the Commencement of the Armenian Genocide," in A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire, ed. Ronald Grigor Suny, Fatma Müge Göçek, and Norman Naimark (Oxford and New York: Oxford University Press, 2011):

78 BOA/DH.ŞFR, № 52/51, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915թ. ապրիլի 20:

թունի նախնական «պարպամբ» սահմանափակ թվով ընտանիքներ են դուրս բերվել, և որ Զեյթունի հայկական համայնքի մեծաքանակ տեղահանումը կատարվել է այդ մասին հրաման պարունակող ծածկագրված հեռագրի ստացումից հետո միայն, որը մայիսի 4-ին ուղարկվել է Մարաշի գավառապետին, պարզ է դառնում, որ մահմեդական նորեկների վերաբնակեցումն սկսվել է տեղահանումներն ավարտելուց շատ ավելի վաղ⁷⁹:

Պերճախոս մեկ այլ օրինակ է 1915 թ. հունիսի 22-ին Բնակեցման գրասենյակի կողմից Դամասկոսի նահանգ ուղարկված հեռագիրը: Այդ հեռագիրը, որն առաքվել է, երբ Հալեպի ու Ուրֆայի հայերը դեռևս չէին տեղահանվել, տեղական կառավարությանն իրազեկում է, որ այդ ժամանակ նահանգում գտնվող գաղթականներին «ավելի ուշ պետք է վերաբնակեցման ուղարկել Հալեպի, Ադանայի ու Ուրֆայի շրջակայքը, որը հայագրվել է», և, հետևաբար, գաղթականները կարիք չեն ունենա «իրենց ձեռքերով իրենց տները կառուցելու»⁸⁰: Ինչպես հստակորեն երևում է այդ հաղորդագրություններից, փաստացի տեղահանումների սկսվելուց դեռևս ամիսներ առաջ արդեն որոշումներ էին կայացվել, թե որ նորեկները որտեղ պետք է տեղավորվեն:

Այսպես, 1915 թ. մայիսի 17-ին Մարաշի գավառ ուղարկված հեռագիրը ևս ցույց է տալիս, որ կառավարական մի պաշտոնյա արդեն սկսել էր նորեկներին բնակեցնել Մարաշի շրջակայքի հայկական գյուղերում⁸¹: Մայիսի 25-ին Մամուրեթյուլագիզի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրով պահանջվում է, որ «այն նորեկներին, որոնք դեռևս չեն կարողացել վերատեղավորվել, ավելի ուշ պետք է ուղարկել Ադանա, որպեսզի տեղավորվեն դատարկված քաղաքներում»⁸²:

Մինչև այն օրը Ադանա ուղարկված մեկ այլ հեռագրով պահանջվում է, որ տեղական պաշտոնյաները տրամադրեն ներկայումս դատարկ մնացած քաղաքների անունները, ինչպես նաև այն հայերի թիվը, որոնք մինչ այդ արդեն տեղահանվել են⁸³:

Մերսինում Ամերիկայի հյուպատոս Էդուարդ Նաթանը մայիսի 28-ին շրջանում տիրող իրադրության մասին մի զեկուցագիր է ուղարկել դեսպանություն, որի մեջ նշել է, որ Դյորթյուում տեղահանված հայերի տներում մահմեդականներ էին բնակեցվում⁸⁴: Էրզրումում Գերմանիայի հյուպատոսը մայիսի 22-ին իր վերադասներին զեկուցել է, որ նման մի գործընթաց է իրականացվում Էրզրումի շրջակայքում⁸⁵: Հայկական և մյուս բնակավայրերը պարպելու և դրանք վերաբնակեցնելու միջև ընկած համեմատաբար կարճ ժամանակամիջոցը կարող է համարվել այն հանգամանքի վկայությունը, որ այդ գործողությունների նախապատրաստությունները վաղօրոք են կատարվել:

ՈԱՉՄԱԿԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐ

Տարբեր ժամանակամիջոցներում մեծ թվով Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյաներ տեղահանվել կամ բռնի այլ միջոցներով տեղաշարժերի են ենթարկվել ռազմական նկատառումներով. այդպիսի դեպքերից է Պարսկաստանի սահմանամերձ տարածքից «նեստորական [քրիստոնյա]ներին, որոնք ենթակա են օտարերկրյա հրահրումներին,» տեղափոխելու և նրանց կենտրոնական Անատոլիայի այնպիսի վայրերում վերաբնակեցնելու 1914 թ. որոշումը, ինչպիսին են Անկարան ու Քոնյան⁸⁶: Այն հանգամանքը, որ հույն ուղղափառ քրիստոնյաների, հատկապես Սև ծովի ու Էգեյանի մերձափնյա բնակիչների բռնի տեղահանումը և Անատոլիայի խորքերում նրանց վերատեղավորումը (մի գործընթաց, որ հետագա գլուխներում կեն-

79 BOA/DH.ŞFR, № 52/286, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 5:

80 BOA/DH.ŞFR, № 54/95, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Դամասկոսի նահանգ, թվագրված 1915 թ. հունիսի 22:

81 BOA/DH.ŞFR, № 53/21, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 17:

82 BOA/DH.ŞFR, № 53/115, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլագիզի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 25:

83 BOA/DH.ŞFR, № 53/113, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներ, թվագրված 1915 թ. մայիսի 25:

84 NA/RG 59, 867.00/768, Report from Mersin consul Edward I. Nathan to Ambassador Morgenthau, dated 28 May 1915, in United States Official Records, ed. Sarafian, 48.

85 DE/PA-AA/Bo.Kons., vol. 168, Report from Erzurum consul Scheubner to the German Embassy, Istanbul, dated 22 May, 1915.

86 BOA/DH.ŞFR, № 46/78, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 26:

թարվվի ավելի հանգամանալից ուսումնասիրության) 1916 թ. վերջերին և 1917 թ. ընթացքում ծավալներով նկատելիորեն մեծացել էր, բնակչության ուղղորդված տեղափոխությունների օսմանյան քաղաքականության մեկ այլ օրինակ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՂԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բռնի տեղահանությունների ու վերաբնակեցման գործողությունները նշանակալի չափով քաղաքական մտահոգությունների արգասիք էին: Այս կարգի գործողությունների մեջ կարելի է դասել առաջին տեղահանությունները, որոնք կիրառվում էին հայկական համայնքի նկատմամբ և որոնք տեղի են ունեցել 1915 թվականի փետրվարից ապրիլ ընկած ժամանակահատվածում Չուկուրովայի շրջանում: Քանի որ վախ կար, թե շրջանի հայերը կարող էին ռազմական օգնություն ստանալ դրսից և խռովություն բարձրացնել, նրանց նախ հանել են Իսկենդերունի ու Դյորթյուլի շրջակայքից ու տեղափոխել Ադանա⁸⁷, իսկ ավելի ուշ՝ ապրիլի սկզբին, տեղահանել և Քոնյա են տեղափոխել Ջեթունի հայությանը:

Միևնույն ձևով և միևնույն նկատառումներով Սիրիայի նշանավոր արաբ առաջնորդների ու ընտանիքների մի մասը, որոնց առնչությամբ մտահոգություն կար, թե ի վիճակի էին օսմանյան ռեժիմի դեմ խռովություն բարձրացնելու, Չորրորդ բանակի զորահրամանատար և իթթիհադական եռասյուններից մեկի՝ Ջեմալ փաշայի կողմից տեղահանվել և տեղափոխվել են Անատոլիայի խորքերը: Այս մասին վկայող փաստաթղթերում բացեփբաց նշվում է, որ այդ քայլը կատարվել է «քաղաքական պատճառներով»⁸⁸: Քաղաքական դրդապատճառներով մեկ այլ տեղահանության թիրախ էր Պաղեստինի հրեա-

87 Այս նյութի մասին ավելի հանգամանալի տեղեկություններ կտրվեն հետագա բաժիններում: 1915 թ. փետրվարին Դյորթյուլից, Իսկենդերունից և հետագայում՝ մարտ ու ապրիլ ամիսներին Ջեթունից ու Մարաշից տեղի ունեցած տեղահանությունների վերաբերյալ հավելյալ՝ ավելի լայն բնութագրումների համար տե՛ս Taner Akçam, A Shameful Act, 146–47, 159–61:

88 BOA/DH.ŞFR, №72/66, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Հյուսիսային Բուրսայի, Սվազի, Կաստամունուի, Քոնյայի, Իզմիրի, Էսքիշեհիրի, Բոլուի, Քարեհի (Բելըքեսիր), Մենթեշի, Թեքեի, Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Քյուրթահյայի, Մարաշի ու Նիդդեի նահանգներ, թվագրված 1917 թ. հունարի 22:

կան մի նոր բնակավայր: Այսպես, 1915 թ. օգոստոսին ներքին գործերի նախարարը Չորրորդ բանակի հրամանատարին հրահանգ է ուղարկել և պահանջել, որ «ոտլի պետությունների հրեա այն քաղաքացիները, որոնք գտնվում են Պաղեստինի հողերում և որոնք թշնամաբար են [տրամադրված] օսմանների նկատմամբ, տեղափոխվեն Չորում»⁸⁹: Տեղահանությունների այս ցանկին կարելի է ավելացնել նաև Անատոլիայի կենտրոնական մասեր տեղափոխելու փաստը քրդական որոշ՝ առավել խնդրահարույց ցեղերի, որոնց պետությունը դժվարանում էր վերահսկել⁹⁰:

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄԸ

Պատերազմի գոտուց մահմեդականների բռնի վերաբնակեցումը Անատոլիայի խորքերում նախապես ծրագրված գործողություն չէր, այլ պատերազմից առաջացած անհրաժեշտություն: Այդ շարքի մեջ կարող են դասվել մասնավորապես կովկասյան ճակատում կրած ռազմական անհաջողությունների հետևանքով ժամանող գաղթականների զանգվածային ու անսպասելի ներհոսքը տեղավորելու՝ վերաբնակեցնելու փորձերը: Հայկական ու հունական պարաված քաղաքներում ու գյուղերում ևս մահմեդական փախստականներ են տեղավորվել և դրանով մասնակցել կառավարության ծրագրած բնակության ու վերաբնակեցման քաղաքականությանը:

Ինչպես ցույց է տրված քրդերի ու ծագմանն ուղղված ջանքերի վերաբերյալ հատվածում, բավական թվով փաստագրված վկայություններ կան «պատերազմի պատճառով տեղափոխվել ստիպված փախստականների» տեղահանման ու վերաբնակեցման վերաբերյալ՝ հատկապես Ռուսաստանի դեմ պայքարի ընթացքում ռազմական

89 BOA/DH.ŞFR, №55/235, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

90 1917 թ. հուլիսին Ուրֆայում «բերքը, սերմացուն ու ապրանքները ոչնչացրած ու կողոպտած» և «[ղեպի վայր] ուղարկված ժանդարմների վրա հարձակված» Ջիրանլի ցեղի տեղահանումը Քոնյա այս տեսակի գործողությունների օրինակ է (BOA/DH.ŞFR, №79-A/173, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գործերի ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1917 թ. սեպտեմբերի 27):

իրադրության շրջումից հետո⁹¹: Բռնությանը իրենց տները թողած մարդկանց թվերի ու կարիքների մասին տեղեկությունների խնդրանքով պատերազմի առաջին տարիներին բազմաթիվ հեռագրեր են ուղարկվել նահանգներ⁹²: Պատերազմի գաղթականներից շատ-շատերը տեղավորվել են հայերի լքված տներում ու բնակավայրերում⁹³: Ըստ որոշ աղբյուրների, միայն 1915 և 1916 թթ., մինչև ռուսական բանակների առաջանալը, մոտ 702.900 մահմեդականներ էին փախել այդ փախստականները մեծամասամբ բնակություն են հաստատել կենտրոնական ու արևմտյան Անատոլիայում⁹⁴:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՅԱՅՏ ՏԵՂԱՅԱՆՈՒՄՆԵՐ

Տեղական իշխանությունների կողմից երբեմն տեղահանություններ էին իրականացվում՝ առանց կենտրոնական կառավարության հետ խորհրդակցելու կամ նրան իրազեկելու: 1914 թ. դեկտեմբերին Երուսաղեմ ուղարկված հեռագրից կարելի է հասկանալ, որ նման «վտարումներ» իրականացվում էին մինչև տեղահանումների լայնա-

91 Մեկ օրինակ կարելի է տեսնել հետևյալ տեղում՝ BOA/DH.SFR, №61/120, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Բիթլիսի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 26:

92 Բերենք երկու օրինակ. BOA/DH.SFR, № 53/26, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Տրապիզոնի, Սվազի, Անկարայի, Կաստամունուի, Էլիզնեի ու Հյուսիսկենդիզարի նահանգներ և Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1915 թ. մայիսի 17, և BOA/DH.SFR, № 62/268, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի, Դիյարբեքիրի ու Տրապիզոնի նահանգներ և Թոքատի Տեսչության հանձնախմբին, թվագրված 1916 թ. ապրիլի 7:

93 BOA/DH.SFR, № 63/261, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Անկարայի, Ադանայի, Հալեպի, Հյուսիսկենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Կաստամունուի, Մամուրեթյուլագիզի, Սվազի ու Տրապիզոնի նահանգներ և Իզմիթի, Էսքիշեհիրի, Ուրֆայի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի ու Նիդդեի գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 6:

94 Մի փաստաթուղթ, որի մեջ Ներքին գործերի նախարարությունը բացատրում է ներգաղթի ու արտագաղթի իրադրությունը, հրապարակվել է հետևյալ տեղում. Askeri Tarih Belgeleri Dergisi 31, №81 (December 1982): 223-34, Doc. № 1845.

ծավալ գործողությունների սկսվելը: Նահանգապետին ուղարկած հեռագրի մեջ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան բողոքում է այն «լուրերից, որ կառավարությունը նախօրոք չի տեղեկացվել, որ Ջաֆֆայում բնակվող 500 ռուսաստանցի հրեա է արտաքսվել [երկրից]»⁹⁵: Փաստաթղթերից երևում է, որ այդ հրեաների վտարումը թշամական վերաբերմունք է ստեղծել օսմանյան կառավարության նկատմամբ: Այդպես նաև 1915 թ. փետրվարի 6-ին Երուսաղեմի գավառ Թալեաթի ուղարկած մեկ այլ հեռագրի մեջ ներքին գործերի նախարարը բողոքում է այդ իրադրությունից և պահանջում, որ այլևս առանց նախնական թույլտվության մարդիկ չտեղահանվեն. «Այդ հեռագրերը, որ Ջաֆֆայից վտարված մեծ թվով հրեաներ Պորտ Սաիդից ու Իսկանդերիյեից ուղարկվել են ամբողջ աշխարհով մեկ, ամերիկյան հանրային կարծիքի մեջ թշամանքի տրամադրություն են հարուցել մեր նկատմամբ... Այս հարցում ավելի մեղմ վերաբերմունք է պետք դրսևորել և, ամեն դեպքում, բացարձակապես ոչ մի հրեա չպետք է տեղահանվի՝ առանց նախ [թույլտվություն] հարցնելու մեզանից»⁹⁶:

Այդ տեղահանությունները, որոնցից կենտրոնական կառավարությունը տեղյակ չէր, մեծամասամբ կատարվել են այն շրջաններում, որոնք գտնվում էին Ջեմալ փաշայի Չորրորդ բանակի վերահսկողության տակ: Բանակի հրամանատարը, առանց տեղեկություն ուղարկելու Ստամբուլ, հրաման էր տվել մի շարք արտաքսումներ կատարելու, որոնք քաղաքական և/կամ ռազմական նկատառումներով նա անհրաժեշտ էր համարել: Օգոստոսի 23-ին զայրացած Թալեաթը գեներալին հեռագրել է, որ «իմացել ենք, որ այս անգամ մոտ 1.700 հրեա պետք է արտաքսվի այդտեղից: Մեզ մանրամասնորեն տեղեկացրեք այդ մարդկանց ինքնությունների և նրանց արտաքսման պատճառների մասին»⁹⁷:

95 BOA/DH.SFR, № 48/110, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Երուսաղեմի գավառ, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 22:

96 BOA/DH.SFR, № 49/216, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Երուսաղեմի գավառապետին, թվագրված 1915 թ. փետրվարի 6:

97 BOA/DH.SFR, № 55/182, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Երուսաղեմի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 23:

3

ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՐԻ ԴԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹՐԱԿԻԱՅԻ ՈՒ ԷԳԵՅԱՆԻ ԱՌԱՓՆՅԱ ԾՐՁԱՆՆԵՐԻ «ՊԱՐՊՈՒՄԸ» 1913-14 ԹԹ.

1913 և 1914թթ. ընթացքում, մինչև պատերազմի մեջ մտնելը, օսմանյան կառավարությունը, մասնավորապես Թրակիայում և Էգեյանի առափնյա շրջաններում բնակվող հույների նկատմամբ, «էթնիկ գտման» բացահայտ քաղաքականություն էր իրագործում՝ լայնորեն կիրառելով «երկճյուղ» մեխանիզմը: Մի կողմից բալկանյան պետությունների կառավարությունների հետ թուրքերն ստորագրել էին «բնակչության փոխանակման» համաձայնագրեր, իսկ մյուս կողմից, դիմելով ընդհուպ մինչև կոտորածների, ահաբեկում էին Օսմանյան կայսրության հույն հպատակներին, որպեսզի նրանց ստիպեն տեղափոխվել Հունաստան: Գրեթե երեք հարյուր հազար հույն հարկադրված են եղել փախչել և կամ վտարվել են բռնի կերպով: Լայնածավալ ճնշումների այս քաղաքականությունը 1914թ. ամռանը Օսմանյան կայսրությանը հասցրեց Հունաստանի հետ պատերազմի շեմին: Էթնիկ խմբերի բռնի վտարումների քաղաքականությունն, անշուշտ, յուրահատուկ չէր միայն օսմանցիներին, քանի որ բալկանյան այլ երկրներ ևս կիրառել էին այն, սակայն մահմեդականների նկատմամբ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Բալկանյան պատերազմներից հետո Բուլղարիայի ու Հունաստանի հետ կնքված փոխադարձ համաձայնագրերով, սահմանամերձ բնակչությունների երկուստեք փոխանակությամբ սկսված բռնի տեղափոխության ու վերաբնակեցման օսմանյան քաղաքականությունն աստիճանաբար, իսկ 1914թ. հունվարին Էնվեր փաշայի ներքին գործերի նախարար դառնալուց հետո էլ ավելի շեշտակիորեն, վերաճեց ավելի լայնածավալ մի ծրագիր, որն իր մեջ էր ամփոփում ամբողջ Անատոլիան ու Թրակիան:

Քանի որ միաժամանակ բալկանյան մյուս պետությունները նույնպես նման քաղաքականություն էին իրականացնում, 1912 թվականից հետո տարածաշրջանում տեղի ունեցան բնակչության մեծազանգված գաղթեր ու փոխանակումներ: Թերես, Մակեդոնիայի օրինակը ընթերցողին կարող է պատկերացում տալ այդ ժամանակաշրջանի ժողովրդագրական փոփոխությունների ծավալի մասին: 1912 և 1925 թվականների ընթացքում տեղի է ունեցել բնակչության առնվազն տասնյոթ տեղահանություն, որոնց մի մասը կատարվել է բռնի ու միակողմանի, մյուսը՝ տարածաշրջանի երկու կամ ավելի պետությունների փոխադարձ համաձայնությամբ¹:

Այդ փոփոխությունների նշանակալի մասն արգասիք էր երկու կամ ավելի երկրների միջև բնակչությունների փոխադարձ փոխանակումների, որն սկսվել էր Բալկանյան երկրորդ պատերազմից հետո՝ Թուրքիայի ու Բուլղարիայի միջև 1913թ. սեպտեմբերի 29-ին Ստամբուլում կնքված համաձայնությամբ: Պայմանագրի համապատասխան հատվածում ասվում է.

Երկու կառավարությունների միջև համաձայնություն է կայացվել [երկու] երկրների ընդհանուր ամբողջ սահմանի 15 կիլոմետր երկայնքով երկու կողմերի բուլղար[ացի ուղղափառ] ու մահմեդական բնակիչների, ինչպես նաև ունեցվածքի կամավոր, փոխադարձ փոխանակումը դուրսացնելու շուրջ: Փոխանակումը կկատարվի իբրև ամբողջ գյուղերի փոխանակում: Ապրանքի կամավոր դուրս հանմամբ ունեցվածքի փոխանակումը կիրականացվի երկու կառավարությունների պաշտպանության ներքո, իսկ գյուղերը, որոնք [որոնց բնակչությունները] պետք է տեղերը փոխեն, կփոխանակվեն գյուղերի ավագների խորհուրդների հետ միասին: Խառը հանձնաժողովը, որը կնշանակվի երկու կառավարությունների կողմից, անմիջապես կանցնի նշված գյուղերի և դրանցում բնակվող անձանց փոխանակումն իրականացնելու իր առջև դրված խնդրի կատարմանը և, անհրաժեշտության դեպքում, կշտկի այդ փոխանակման ընթացքում առաջացող [բաժանված ունեցվածքի] անհավասարակշռությունները²:

1 Stephen Lades, The Exchange of Minorities, Bulgaria, Greece and Turkey (New York, Macmillan, 1932), 15-16.
2 Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 2, մաս 2, 486: Ֆրանսերեն քնոթխակի համար

Բնակչության փոխանակումն իրականացնելու համար ստեղծվել էր միացյալ մարմին՝ Բնակչության փոխանակման խառը հանձնաժողով³: 1913 թ. նոյեմբերի 15-ին հանձնաժողովը նիստ է գումարել Էդիրնեում՝ բնակչությունների փոխանցումների և հետագա գործարքների վերաբերյալ համաձայնագիր ստորագրելու նպատակով: Թուրքական պատվիրակության նախագահ՝ Շուքրու Քայան «պետք է 1914 թ. ուղարկվի Իզմիրի հույների արտաքսումը վերահսկելու»⁴:

Թուրք-բուլղարական միացյալ հանձնաժողովը 1914 թ. մայիսի 23-ին կրկին նիստ է գումարել, որի ընթացքում կազմվել են երկու ենթահանձնաժողովներ, որոնք իրենց աշխատանքը շարունակել են մինչև հոկտեմբեր: Չնայած Առաջին համաշխարհային պատերազմի պոռթկումը պատճառ դարձավ, որ հանձնաժողովը ցրվի, այն արդեն հասցրել էր Բուլղարիայից Օսմանյան պետություն գնացող 9.714 մահմեդական ընտանիքների (48.570 մարդու) և հակառակ կողմով ընթացող 9.427 բուլղարացի ընտանիքների (46.764 մարդու) հողերի ու գույքի գնահատման համաձայնագրի հիմքը դնել: Սակայն, պատերազմի պատճառով, համաձայնագիրը երբեք չիրականացավ:

Սկզբից ևեթ հանձնաժողովը պայքարում էր մեծ գաղթի արդյունքների դեմ՝ կամավոր թե բռնի, որն սկսվել էր Բալկանյան պատերազմների ժամանակ և շարունակվել դրանից հետո⁵: Բալիքեսիրի գավառապետին ուղարկված 1914 թ. մարտի 31-ի մի հեռագրից երևում է, որ գյուղերն իրենց բնակիչներից դատարկվում էին նույնիսկ այն ժամանակ, երբ հանձնաժողովը նիստ էր գումարում, և որ օսմանյան վարչակազմն սկսել էր մահմեդական գաղթականներին տեղավորել լքված բնակավայրերում. «Լավ կլինի [բալկանյան] գրավված քաղաքներից եկող նոր ներգաղթողները բնակեցվեն Բուլղարիա արտագաղթածների դատարկ թողած տներում, բայց այդ տների վրա դեռ գին չի դրվել, և այդ նպատակով կազմվելիք վավերացված գրանցման երկու պատճեններից մեկը պետք է այստեղ ուղարկվի»⁶:

տնս Stephen Lades, *The Exchange of Minorities*, 18:

- 3 Kazim Öztürk, *Türk Parlamento Tarihi: TBMM-II: Dönem, 1923–1927*, h. 3 (Ankara, TBMM Vakfı Yayınları, 1995), 616.
- 4 Նույն տեղում: Բուլղարացի և հույն բնակիչների փոխանակումներից ձեռք բերած փորձառությունը 1915 թ. Շուքրու Քայային, իբրև այդ ժամանակ ՑՆԿԿ-ի ղեկավարի, կրկին պետք էր գալու, երբ վերջինս հատուկ դեր էր խաղալու հայերի տեղահանությունների ու կոտորածների մեջ:
- 5 Lades, *The Exchange of Minorities*, 18–20.
- 6 BOA/DH.ŞFR, № 39/133, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծած-

Բուլղարիայի հետ համաձայնագրին շուտով հետևեցին Սերբիա-ի (1913 թ. հոկտեմբերի 14) և Հունաստանի (1913 թ. նոյեմբերի 14) հետ համաձայնությունները, որոնք պարունակում էին բնակչությունների փոխանակման միևնույն պայմանները: Բոլոր համաձայնագրերում ընդունվում էր նշանակված որոշակի ժամկետում իր ազգությունը փոխելու և իրենց իսկ ազգային-կրոնական երկիր գաղթելու որևէ մեկի (ինչն այդ ժամանակ նշանակում էր միայն տղամարդկանց) իրավունքը⁷:

1914 թ. գարնանն ու ամռանը տեղի ունեցած հետագա երկկողմ բազմաթիվ հանդիպումներում բնակչության փոխանակումներն ավելի լավ համակարգելու նպատակով կնքվել են նոր համաձայնություններ: Օրինակ, մայիսին՝ Աթենքում, օսմանյան դեսպան Գալիք Քեմալի րեյը (*Söylemezoğlu*), առաջարկել է Ալդինի հույներին փոխանակել Մակեդոնիայի մահմեդականների հետ⁸: Դրան հաջորդած

կազմված հեռագիրը Քարեսիի գավառ (*Balıkesir*), թվագրված 1914 թ. մարտի 31:

- 7 Ahmet Halaçoğlu, *Balkan Harbi, 23–24*. Համաձայնագրի թուրքերեն ամբողջական տեքստի համար տես *Canlı Tarihler: Galip Kemal Söylemezoğlu Hatıraları; Atina Sefareti (1913–1916) (Istanbul, Türkiye Yayınevi, 1946)*, 56–66:
- 8 Գալիք Քեմալի րեյն իր հուշերում պնդում է, որ այս հարցով առաջին առաջարկն անձամբ ինքն է արել Հունաստանի վարչապետ Վենիզելոսին, և որ հարցը պաշտոնականացվել է միայն Վենիզելոսի ընդունելուց հետո: Բնականաբար, հնարավոր չէ այդ պնդումն ստուգել, սակայն օսմանյան աղբյուրները հաստատում են, որ թե՛ բնակչության փոխանակման և թե՛ այն կարգավորելու համար հանձնաժողով կազմելու առաջարկներն առաջինը օսմանյան կառավարությունն է արել, և որ Հունաստանի կառավարությունը հետագայում երկու առաջարկին էլ համաձայնվել է: Օրինակ, տես Ներքին գործերի նախարարության հեռագիրը Քարեսիի գավառ (*Balıkesir*), թվագրված 1914 թ. հունիսի 28, ուր ասվում է. «Ի պատասխան Բարձր դռանը, Հունաստանը երեկ դիվանագիտական նոտա ուղարկեց: Նոտան [իր ոճով] շատ մեղմ է և բարձր գնահատանք է հայտնում մեր կառավարության քայլերի համար... և ընդունում է կամավոր հիմունքով բնակչության փոխանակման [գաղափարը]... Բացի այդ, ստացված հեռագրով [հունական կողմը համաձայնվել է կազմելու] խառը հանձնաժողով [որը հիմնադրվելու է] Իզմիրում՝ վերահսկելու համար փոխանակման մանրամասները՝ ըստ մեր կողմից նախապես արված առաջարկության» (*BOA/DH.ŞFR, № 42/136*): 1914 թ. մայիսի 27-ի այս գեկույցում Օսմանյան կայսրությունում Բրիտանիայի դեսպան սըր Լուի Մալեթը նշում է, որ Մալիք Խալիմ փաշան իրեն ասել է, որ «մի քանի օր առաջ ինքը պր. Վենիզելոսին առաջարկել է, որ խառը հանձնաժողով կազմվի՝ կազմակերպելու ու կանոնակարգելու համար Թրակիայի ու Մակեդոնիայի միջև բնակչու-

նամակագրությունն ու դեմառդեմ հանդիպումները եզրափակվել են հուլիսի 1-ի «Մակեդոնիայի թուրքերին Արևելյան Թրակիայի ու Մակեդոնիայի նահանգների հույների հետ փոխադարձաբար, կամավոր փոխանակման մասին» համաձայնագրով⁹: Այնուհետև մի հանձնաժողով է ստեղծվել՝ համակարգելու համար երկկողմանի ներգաղթերը: Երկու երկրների (նրանց մայրաքաղաքների ու համապատասխան նահանգների) միջև հաղորդակցություններում, այդ հանձնաժողովի ստեղծումը քննարկելիս, երկու կողմերը հստակորեն պարզաբանել են այն ըմբռնումը, թե «Մակեդոնիայից արտագաղթող մահմեդականների և [Այդինից ու Արևմտյան Թրակիայից] արտագաղթող հույների փոխանակման հիմքը կամավոր արտագաղթն է»¹⁰:

Հանձնաժողովի առաջնային խնդիրներից մեկն էր մասնավոր անշարժ գույքի ուղիղ փոխանակումների ապահովումը: Այսպես, 1914թ. նոյեմբերի 16-ին Անվտանգության վարչությունից Այդինի նահանգապետի գրասենյակ ուղարկված հեռագրում ասվում է, «որ այն հույների ազարակները, որոնք այդպիսի ունեցվածքի տեր են օսմանյան տիրույթներում, և այն մահմեդականներինը, որոնք ազարակներ ունեն այն հողերում, որոնք կցված են Հունաստանին, թույլ տրվի փոխանակել մասնավոր [անհատ առ անհատ] հիմունքով, [որպեսզի] Օսմանյան կայսրությունում գտնվող հույների ունեցվածքները վաճառվեն կամ դրանց սեփականատերերի կողմից հանձնվեն, այսպես կկորչեն պետության համար»¹¹: Սակայն, պատերազմի պատճառով, 1914թ. օգոստոսին այնպիսի նահանգներում հիմնված հանձնախմբերը, ինչպիսին են Իզմիրն ու Էդիրնեն, դեկտեմբերին դադարեցրին իրենց գործունեությունը, և, դրա հետևանքով, նրանց որոշումներից ու ծրագրերից և ոչ մեկը երբևէ չիրականացավ¹²:

թյան փոխանակումը» (մեջբերված է հետևյալ տեղում. Constantinos Emm. Fotiadis, *The Genocide of the Pontus Greeks by the Turks*, vol. 13, *Archive Documents of the Ministeries of Foreign Affairs of Britain, France, the League of Nations and S.H.A.T. (Thessaloniki: Herodotus, 2004)*, 48:

9 Ahmet Halaçoğlu, *Balkan Harbi*, 27.

10 BOA/DH.ŞFR, № 42/136, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Balikesir) գավառ, թվագրված 1914թ. հունիսի 28:

11 BOA/DH.ŞFR, № 47/44, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1914թ. նոյեմբերի 16:

12 Bayur, *Türk İnkılap Tarihi*, h. 2, մաս 3, 262: Հունական փաստաթղթերի

ԷԳԵՅԱՆԻ ԾՐՁԱՆՈՒՄ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ԵՐԿՃՅՈՐԸ ՄԵԽԱՆԻՉՄԸ

Համայնքների ոչ բոլոր բռնի տեղաշարժերն ու վերաբնակեցումներն էին, որ իրագործվում էին պաշտոնական երկկողմանի համաձայնագրերի հիման վրա: Այսպես, հաճախ արտագաղթեր էին պարտադրվում պատերազմից ու տարածքների կորստից անմիջապես հետո, մինչև պատերազմող կողմերի միջև պաշտոնական քննարկումներ սկսելը, իսկ այդ քննարկումները հաճախ պարզապես վերածվում էին արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող տեղաշարժերն արդարացնելու և կազմակերպելու փորձի:

Այս ժամանակաշրջանում, բարձր մակարդակի երկկողմ բանակցությունների հետ միաժամանակ, սակայն դրանցից անկախ, պատերազմները սկիզբ դրեցին ժողովրդագրական մեկ այլ անպաշտոն քաղաքականության, որի ժամանակ տեղի գերիշխող ազգաբնակչությունը կարող էր անխոս, սակայն փոխադարձ ըմբռնման տեսքի տակ, բռնությամբ ու ահաբեկմամբ արտաքսել ստորադաս ազգային-կրոնական խմբերին¹³: Այդ իսկ պատճառով, այդ գաղթերի մասին

հիման վրա հանձնաժողովների գոյության ընթացքում կատարած աշխատանքների մասին մանրամասն տեղեկությունների համար տես Yannis G. Mourellos, "The 1914 Persecutions and the First Attempt at an Exchange of Minorities Between Greece and Turkey," *Balkan Studies* 26, № 2 (1985), 389–413:

13 Ապրիլի 26, 27 և 28-ին Փարիզ ուղարկված երեք իրար հաջորդող հեռագրերով Ֆրանսիայի դեսպան պր. Բոմպարը օրինակներ է բերում, թե ինչպես են բալկանյան բոլոր պետություններն իրենց սահմաններում դիմում էթնիկ գտումների գրեթե նույնական մեթոդների: Դեսպանի հեռագրերի տեքստի համար տես Bayur, *Türk İnkılap Tarihi*, h. 2, մաս 3, 256–58: Բալկաններում փոխադարձ էթնիկ գտումների երևույթը բազմաթիվ գրքերի նյութ է դարձել, սակայն այդ գրքերի մեծ մասի սկզբունքային խնդիրը դրանց խիստ կողմակալ քնույթն է. հեղինակները սովորաբար ջանում են չափազանցնել մյուս խմբերի կողմից իրենց խմբի նկատմամբ իրակալացրած անարդարությունները: Բալկանյան պատերազմների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ամենաօբյեկտիվ աշխատությունը թերևս այդ իրադարձություններից անմիջապես հետո Քարենգիի հանձնաժողովի հրապարակված զեկույցն է: Այն լույս է տեսել իբրև George F. Kennan, *The Other Balkan Wars: A 1913 Carnegie Endowment Inquiry in Retrospect with a New Introduction and Reflection on the Present Conflict* (Washington, DC: Carnegie Endowment for International Peace; Brookings Institution Publications), 1993: Այս աշխատության մեջ ես չեմ խորանա Բալկաններում փոխադարձ էթնիկ գտման հարցի մեջ, քանի որ կենտրոնացումս սահմանափակվելու է հայերի հետ կատարվածի քննարկմամբ:

խոսելիս, հարկավոր է ուշադիր լինել երկնյուղ մեխանիզմի գոյության ու գործառության հարցում:

Վտարումներին ու գաղթերին պաշտոնական ու իրավական շրջանակ հագցնելու լուրջ ջանքերով հանդերձ, օսմանյան իշխանությունները քրիստոնյաներին ահաբեկումներով և հարկ եղած դեպքերում նույնիսկ կոտորածներով հանում էին իրենց մնացած տարածքներից: «Անպաշտոն» այդ գործելակերպը շարունակվում էր ընթացող բանակցություններին զուգահեռ՝ սակայն մնալով դրանց կողմից անկասելի և դրանցից անմասն: Կայսրության Էգեյանի տարածքի հույների դեմ առաջին անգամ գործածված այդ երկնյուղ մեխանիզմը վերածավալվելու էր հայերի տեղահանությունների ու կոտորածների ընթացքում: Քուչուրաշի Էշրեֆի, Հալիլ Մենթեշեի, Ջելալ Բայարի և առանցքային այլ դերակատարների հուշերը առատ տեղեկություն են տրամադրում մինչև պաշտոնական համաձայնագրերի կնքումն իրականացրած բռնի տեղահանություններին զուգահեռ ու ծածուկ ծրագրի հիմնական ուրվագծերի վերաբերյալ¹⁴: Կառավարության քաղաքականության հիմնական նպատակը, հատկապես Էգեյանի և արևելյան Թրակիայի առնչությամբ, քրիստոնյաների թվի նշանակալի կրճատումն էր, քանի որ նրանք սպառնալիք էին համարվում ազգային անվտանգությանը: Վերհիշելով 1914 թ. գարնան ընթացքում Էգեյանի շրջանում կիրառվող քաղաքականությունը՝ Հալիլ Մենթեշեն նշում է, որ «[ներքին գործերի նախարար] Թալեաթ բեյը հանձնարարեց, որ երկիրը մաքրվի այն տարրերից, որոնք համարվում են պետությանը դավաճանելու ընդունակ»¹⁵:

Ժամանակի գերմանական փաստաթղթերը հաստատում են, որ ներքին գործերի նախարարը գերմանացի դիվանագետների հետ խոսել է նույնպիսի անկեղծությամբ. «Թալեաթ բեյը... առանց երկմտանքի բացատրեց, որ կառավարությունն ուզում է Համաշխարհային պատերազմն իբրև պատրվակ գործածել՝ երկիրը ներքին թշնամիներից, այսինքն բոլոր դավանանքների քրիստոնյաներից մաքրելու համար»¹⁶: Էթնիկ գտումների գործողություններում կենտրոնա-

կան դերակատար Քուչուրաշի Էշրեֆի խոսքերով, ոչ-մահմեդականները օսմանյան պետության մարմնի մեջ աճող «ներքին ոտուցքներ» էին և պետք է «մաքրվեին»։ ինչպես նա է պնդում, դա «ազգային հարց» էր¹⁷:

Հիմնական նպատակն էր այնպես անել, որ քրիստոնյա գյուղացիները հեռանային՝ լինել դա համոզելու, թե, հարկ եղած դեպքում, ահաբեկման միջոցով: Դրան հասնելու համար կիրառված գլխավոր միջոցներից էին «հետևելը, ստորացումը, սպանությունը, իրենց հողերի վրա աշխատելու խոչընդոտումը, դաժանորեն ծանր հարկումը, գույքի բռնագրավումը [և] բռնի զինվորագրումը»¹⁸, իսկ Հունաստանի կամ օտարերկրյա որևէ կառավարության կողմից բողոքի հանդիպելու դեպքում երկնյուղ մեխանիզմի գործողությամբ կարելի էր ժխտել այդ իրադարձություններին որևէ մասնակցություն ունենալը:

Արևելյան Թրակիայից վտարումներն ու բռնի գաղթերն սկսվել են 1913 թ. գարնանն ու ամռանը: Տեղական քրիստոնյաների վրա հարձակումները շարունակվել են ամբողջ տարին, սակայն 1914 թ. մարտից հետո տեղահանություններն սկսել են շատ ավելի համակարգված բնույթ ստանալ: Ինչպես կտեսնենք ստորև, դրանք ընդհատվել են քաղաքական պատճառներով՝ համաշխարհային պատերազմի սկսվելով: Սակայն, արևմտյան Անատոլիայում մնացած հույն բնակիչները պատերազմի ընթացքում տեղափոխվել են երկրի խորքերը՝ ելնելով ռազմական ու քաղաքական նպատակահարմարությունից: Ժամանակավոր այդ տեղափոխությունները, հատկապես Թրակիայից, խթանվել էին Դարդանելում (Գալիպոլի) Անտանտի տերությունների ներկայությամբ. աշխարհագրական այդ հարևանության շտրիկիվ նրանք կարծես թե մոտակա մի քանի գյուղերի խրա-

թյանն ուղղված Հալեպի հյուպատոս Ռոսլերի 1915 թ. հունիսի 6-ի գեկույցի վրա նշումն ավելացված է Կոստանդնուպոլսում Գերմանիայի գլխավոր հյուպատոս և հայկական հարցերի փորձագետ՝ Յոհաննես Մորդոսյանի կողմից:

- 17 ՀԿ գլխավոր անդամներից մեկի Քուչուրաշի Էշրեֆի հուշերից, որը պատասխանատու էր Անատոլիան իր ոչ-մահմեդական բնակչությունից «զտելու» համար, մեջբերված է հետևյալ տեղում. Bayar, Ben de Yazdim, h. 5, 1967:
- 18 Elisabeth Kontogiorgi, "Forced Migration, Repatriation, Exodus: The Case of Ganos-Chora and Myriophyto-Peristaros Orthodox Communities in Eastern Thrace," *Balkan Studies* 35, №1 (1995), 22-24.

14 Այս նյութի վերաբերյալ ավելի հանգամանալից տեղեկությունների համար տես Taner Akçam, *A Shameful Act*, 102-8:

15 Halil Menteşe, *Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları* (Istanbul, Hürriyet Vakfı Yayınları, 1986), 165.

16 DE/PA-AA/Bo.Kons. 169, Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանու-

խուսել են «ինքնավարություն» պահանջել¹⁹: 1918 թ. Մուղղոսի գինադադարի պայմանագրի ստորագրումից հետո, Մակեդոնիա կամ Անատոլիայի խորքերն արքայազնի հույն գյուղացիների մի մասը վերադարձել է իր նախկին բնակավայրերը, ընդամենը, որպեսզի կրկին դուրս նետվի 1921 թ. հոկտեմբերի 11-ի Մուղանյայի գինադադարից հետո²⁰:

Արևելյան Թրակիայի Թեքիրդաղ շրջանում կատարվածն այնուհետև կրկին տեղի էր ունենալու Էգեյանի արևելյան ափերին: 1913 թ. սկսվել և 1914-ի ընթացքում սաստկացել է արևելյան Անատոլիայի հույն գյուղացիների ահաբեկումներով ու սպանությաններով վտարումն ու նրանց մահամեղական փախստականներով փոխարինումը. և դա կատարվել է բնակչության փոխանակման երկկողմ ջանքերով: Անպաշտոն այդ քաղաքականությունը հիմնականում իրականացվում էր. 1. հունական գյուղերի ու գյուղացիների վրա Հատուկ կազմակերպության միավորումների հարձակումներով, որոնց ամբողջ ընթացքում կենտրոնական կառավարությունը պնդում էր իր անտեղյակությունը և գործում այնպես, ասես ներգրավված չէր այդ ամենի մեջ, 2. անհատներին ու համայնքներին իրենց տներից հեռանալ ստիպելու համար գործադրվող ահաբեկումներով ու սպանություններով, 3. ամբողջական գյուղերի պարպումը և գինապարտության տարիքի արական սեռի բնակիչներին աշխատանքային ջոկատներ գինակոչելով, 4. հույներին պատկանող բիզնեսների առգրավումը և դրանք մահամեղականներին վերաբաշխելով²¹: 1913 թ. մարտ ու ապրիլ ամիսներին Բարձր դռան ուղղված անվերջանալի նամակների տարափով Ստամբուլի հունական պատրիարքարանը բողոքել է Էգեյանի հունական գյուղերի վրա կատարվող հարձակումների, տների կողոպուտի, առգրավումների և առանց պատճառի ձերբակալությունների ու արտաքսումների դեմ²²:

19 Նույն տեղում, 25–26: Ընդհանուր առմամբ, 1915 թ. հունիսից օգոստոս ամիսներին գրեթե տասը հազար հույն է բռնի վերաբնակեցվել երկրի խորքերում:

20 Նույն տեղում, 28–29:

21 Էգեյանի շրջանի հունական գյուղերի վրա հարձակումների մանրամասն նկարագրությունը կարելի է գտնել հետևյալ տեղում. Archimandrite Alexander Papadopoulos, Persecution of the Greeks in Turkey before the European War (New York, Oxford University Press, 1919):

22 Նույն տեղում, 27–29:

Ինչպես արդեն նշել ենք, կառավարության երկճյուղ համակարգով կատարած գործերի վերաբերյալ հանգամանալից տեղեկությունների ամենահարուստ աղբյուրներից մեկը ՀԿ գործիչների հուշերն են: Հայիլ Մենթեշեն, օրինակ, գրում է, որ «նահանգապետերն ու մյուս պաշտոնյաները կարծես թե կառավարության անունից չէին միջամտում, [Միություն և առաջադիմություն] կոմիտեի կազմակերպությունն էր հոգ տանում այդ հարցով»²³: Վստահ լինելու համար, որ իրադարձությունները վերահսկվելու են ճիշտ մարդկանց կողմից, և որ դեպքերն ընթանալու են ըստ նախատեսվածի՝ նշանակումները կատարվում էին ամենաբարձր մակարդակներում: Էշրեֆ Քուչուրբաշին գրում է.

Էգեյանի ափը [քրիստոնյա բնակչությունից] «մաքրագարդելու» գործողությունը պետք է իրականացնեին Չորրորդ բանակային կորպուսի հրամանատար՝ Ջաֆեր Թայյար բեյը (հանգուցյալ գեներալ Ջաֆեր Թայյար Էդիլմեզը), որը Փերթև փաշայի (Փերթևե Դեմիրհան) ենթակայության տակ էր, որը պետք է հանդես գար բանակի անունից, Իզմիրի (հանգուցյալ) նահանգապետ Ռահմի բեյը՝ իբրև քաղաքացիական պատասխանատու, և Մահմուդ Ջելալ բեյը (նախկին հանրապետական նախագահ՝ Ջելալ Բայար), որը ՄԱԿ-ի պատասխանատու ներկայացուցիչն էր և գործում էր նրանց անունից: Պետության բոլոր ուժերը այս ծրագիրն իրագործելու համար պետք է գործեին Պատերազմի նախարարության և բարձրագույն հրամանատարության հրամաններով²⁴:

Ծրագրի իրագործման պատասխանատվության մի մեծ բաժին ընկած էր Քուչուրբաշիի վրա: «Հույները հալածվում էին զանազան ձևերով և իրենց դեմ իրականացրած բռնությունների ու ճնշումների պատճառով ստիպված էին հեռանալ: Հատուկ գործերի հրամանատար Քուչուրբաշի Էշրեֆի բեյի ղեկավարության ներքո գործող գինված հրոսակախմբերը... ասպատակության էին ենթարկում հունական գյուղերը...: Այն հույն երիտասարդներին, որոնք կարող էին

23 Halil Menteşe, Osmanlı Mebusan Meclisi Reisi, 166.

24 Cemal Kuşay, Birinci Dünya Harbinde Teşkilat-ı Mahsusa ve Hayber'de Türk Cengi (Istanbul, Ercan, 1962), 62.

զենք վերցնել, որսում էին՝ աշխատանքային գումարտակներում [նրանց տեղավորելու] համար և աշխատեցնում ճանապարհաշինության, անտառատնտեսության ու կառուցապատման վրա»²⁵:

ԵՐԿՃՅՈՒՂ ՄԵԽԱՆԻԶՄԸ՝ ԸՍՏ ՎԱՐՉԱՊԵՏԱԿԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԱՐԽԻՎԻ

Ստամբուլում գտնվող Վարչապետական օսմանյան արխիվում տեղ գտած փաստաթղթերը ցույց են տալիս, որ կառավարությունն ստեղծել էր երկնյուղ մեխանիզմ, որի միջոցով կարող էր այն տպավորությունը թողնել, թե ինքն ամբողջովին տեղյակ չէր քրիստոնեական գյուղերի պարպումից, թեև մշտապես ու համակարգված ձևով տեղեկություններ էր հավաքում նույն այդ գյուղերի վերաբերյալ՝ դրանցում մահմեդականներին բնակեցնելու մտադրությամբ: Այդ գյուղերում կատարվող իրադարձություններին ուշադիր հետևելն ու դրանց վերահսկումը հիմնական վկայությունն են այն հանգամանքի, որ կառավարությունը լիարժեքորեն տեղեկացված էր արտաքսումների մասին:

Մինչև այժմ, սրան առնչվող ամենակարևոր փաստաթուղթը Թեքիրդաղի նահանգապետին 1915 թ. ապրիլի 14-ին Թալեաթ փաշայի ուղարկած «չափազանց հրատապ ու հույժ գաղտնի» հեռագիրն է: Թալեաթը տեղեկացնում է, որ մեծ թվով հույն գյուղացիներ են կուտակվել ծովափին, և պահանջում է «հավաստիանան, որ նրանք շոգենավ են բարձրանում և արտագաղթում՝ սակայն առանց ցույց տալու, որ դա [կառավարության] հրահանգի արդյունք է»²⁶:

Ճիշտ այդ երկնյուղության պատճառով, առկա փաստաթղթերի մի մասից այն տպավորությունն է ստեղծվում, թե կառավարությունը լուր չունեի քրիստոնյաների գյուղերի վրա հարձակումներից ու նրանց բռնի տեղահանություններից, և կամ որ նրանք այդ դեպքերի մասին տեղեկացան Հունական ուղղափառ եկեղեցու բողոքներից: Այսպես, 1914 թ. ապրիլի 22-ին Էդիրնեի նահանգապետին ուղարկած հեռագրում Անվտանգության ընդհանուր վարչությունը պահանջում էր, որ, «եղնելով Մյուրֆեթե [գյուղից] [Ստամբուլի] պատրիարքարան

ուղարկված հեռագրից, որում ասվում է, որ [Կոստանպոլիս] գյուղը պաշարվել է հարևան մահմեդական գյուղերի կողմից, և որ քրիստոնյաների գույքն ու ունեցվածքը կողոպտվել են, խնդրում ենք անմիջապես զեկուցել, թե ինչ է պատահել, և թե ինչ հանգամանքներ են տիրում այդ իրադարձությունների շուրջ»²⁷:

1914 թ. օգոստոսին Բոլոյ ուղարկված մեկ այլ հեռագրում Անվտանգության վարչությունը նկարագրում է հունական մի աշխատավայրի վրա վերջերս կատարված հարձակումը: Հունական այդ բիզնեսի սեփականատիրոջը սպառնացել են սպանել և ավերել իր խանութը, եթե մի քանի օրում չհեռանար քաղաքից: Չնայած նրա կյանքի ու ապրուստի նկատմամբ սպառնալիքների մասին իրենց տեղեկացվածությանը, անվտանգության ուժերը կանխարգելիչ որևէ միջոցառում չեն ձեռնարկել, և օսմանյան քաղաքացի հույնն ստիպված է եղել փակել խանութը: Ներքին գործերի նախարարությունը ոչ մի այլ քայլ չի կատարել՝ բացի խանութի սեփականատիրոջ գործն առանց ընդհատելու շարունակելը չխոչընդոտելու խնդրանք ուղարկելուց²⁸:

Իհարկե, դժվար է վստահաբար պնդել, որ այդ ամբողջ գործընթացն իրականացվել է կառավարության լիակատար վերահսկողության ներքո, և որ մահմեդական ներգաղթողների ինքնարույն հարձակումները նույնպես կատարվել են կառավարության ներգրավվածությամբ: Նախարարության մի քանի հեռագրերից կարելի է մտածել, որ բալկանյան երկրներից եկած մահմեդական փախստականներն իրենց սեփական նախաձեռնությամբ են հրահրել այս տեսակի հարձակումներն ու կողոպուտները: Նահանգներից հնչող բազմաթիվ բողոքներին ի պատասխան, Ներքին գործերի նախարարությունը պահանջել է դադարեցնել «հարձակումները, որոնք, ըստ պնդումների, ներգաղթողներն են կատարել»²⁹: 1914 թ. ապրիլին Չաթալջայի գավառ ուղարկված մի հեռագրի մեջ նշվում է, որ «անհայտ

27 BOA/DH.ŞFR, № 40/71, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914 թ. ապրիլի 22:

28 BOA/DH.EUM, 3. Şube, 1/25, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Բոլոյի գավառ, թվագրված 1913 թ. օգոստոսի 19:

29 BOA/DH.ŞFR, № 40/38, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914 թ. ապրիլի 18:

25 Nurdogan Taçalan, Ege'de Kurtuluş Savaşı Başlarken (Istanbul, Milliyet Yayınları, 1970), 71-73.

26 BOA/DH.ŞFR, № 40/11, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Թեքիրդաղի գավառ, թվագրված 1915 թ. ապրիլի 14:

անձանց մի խումբ, որն ինքն իրեն հրոսակախումբ է անվանում, հարձակումներ է գործել գյուղերի վրա և վերցրել գյուղացիների անասունները» և կատարել «կողոպուտներ ու գողություն», և սակայն նույն այդ հաղորդագրությունը ջանքեր է գործադրում ընդգծելու, որ կառավարությունն այդ հրոսակախմբերի հետ որևէ առնչություն չունի: Հրահանգվում է «հայտարարություն անել այն մասին, որ կառավարության իմացությամբ Ստամբուլից բացարձակապես ոչ ոք չի եկել և չի ուղարկվել, և որ [այդ գործողությունները կատարած] մարդիկ լավագույն դեպքում անհատներ կամ հրոսակախմբեր են՝ կազմավորված հույների արտագաղթից օգուտ քաղելու նպատակով, որպեսզի էժան գնեն կամ այլ կերպ ձեռք ձգեն նրանց գույքն ու ունեցվածքը»: Նշվում էր նաև, որ այդ մարդկանց բռնելու ու ձերբակալելու համար պետք է կազմակերպել «շարժական զորախումբ» (kuvve-i seyyâre)³⁰:

Այսօր այդ հրահանգների ամենախոստուն կողմը լքված գյուղերի թալանը կանխելու մեծ շահագրգռության ցուցադրությունն է կառավարության կողմից: Մտահոգությունը բխում է այն հանգամանքից, որ այդ գյուղերում վերաբնակվելու էին մահմեդական գաղթականները: Այդ նպատակով, դատարկված գյուղերը պահպանելու անհրաժեշտության պարզաբանմամբ, վճռական հրամաններ են տրվել և նախագգուշացվել, որ այն պաշտոնյաները, ովքեր դրանց չեն հետևի, կպատժվեն: Ի թիվս այլ փաստաթղթերի, դրանում կարելի է համոզվել նաև 1914թ. մայիսի 27-ին Անվտանգության վարչության կողմից Էդիրնեի նահանգապետին ուղարկած հետևյալ հեռագրով.

Անկախ հունական գյուղերի դեմ ուղղված հարձակումների ու ահաբեկումների հանգամանքներից՝ մեղավոր կողմին հարկավոր է անմիջապես ձերբակալել և այստեղ ուղարկել, որպեսզի պատժվելու համար հանձնվեն ռազմական տրիբունալ, իսկ գյուղերը պետք է դրվեն [մեր] պահպանության տակ: Եթե այ[դ] գյուղերը պահպանություն չստանան, և նման դեպքերը շարունակվեն, և կամ եթե հանցագործները չձերբակալվեն, գյուղի

30 BOA/DH.ŞFR, №40/63, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Չաթալջայի գավառ, թվագրված 1914թ. ապրիլի 21: Նույնական մի հեռագիր ուղարկվել է նաև Էդիրնեի նահանգ (40/64):

տեղական պահակախմբերն ու ժանդարմները, ցածր մակարդակի սպաներն ու զինվորականները [կպատժվեն]՝ ուղարկվելով Եմեն ծառայության, իսկ բարձրաստիճան սպաները խստորեն [կպատժվեն]՝ ազատվելով զինվորական ծառայությունից³¹:

Եվ, սակայն, նույն այդ շրջաններն ուղարկված այլ՝ վերը նշված հաղորդագրություններից ավելի վաղ թվագրված հեռագրերում առատ վկայություններ կան այն մասին, որ այդ գյուղերի դեմ իրականացված ահաբեկումների ու «բռնի տեղահանությունների» գործողությունները քաջ հայտնի էին կառավարությանը: Նահանգներ ուղարկված բազմաթիվ հեռագրերով հրահանգվում է, որ որևէ բարդություն չպետք է հարուցվի այն գյուղացիների հանդեպ, ովքեր ցանկանում են արտագաղթել, որ հարկավոր է ներողամտություն ցուցաբերել արտագաղթողների հարկային պարտավորությունների և չմարված այլ պարտքերի նկատմամբ, որ զինապարտության տարիքի արտագաղթողներից ոչ մի վճար չպետք է պահանջվի բանակից ազատելու համար, որ նրանց պետք է օգնել վաճառելու այն ունեցվածքը, որից ցանկանում են ձերբազատվել, և որ հարկավոր է հոգատարություն ցուցաբերել՝ իրենց գյուղերը լքելուց հետո նրանց անվտանգությունն ապահովելու համար:

Բավական է բերենք մի քանի օրինակ: 1. Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության կողմից 1914թ. ապրիլի 1-ին Էդիրնե ուղարկված մի հեռագրում նշվում է, որ «եթե արտագաղթողների դեմ բան չկա ասելու, ապա, անշուշտ, չի կարող ընդունելի լինել, որ իրենց ճամփորդության ընթացքում նրանք հարձակման ենթարկվեն», և պահանջվում է համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ հավաստիանալու համար, որ դա չի պատահի³²: 2. Հաջորդ օրը Բալիքեշիր ուղարկված մեկ այլ հեռագրում քարտուղարությունը հաստատում է այն լուրերը, որ «արտագաղթող բուլղարացիների ճանապարհին որոշ բարդություններ են հարուցվել, որոնք նրանց կա-

31 BOA/DH.ŞFR, №41/91, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ և Չաթալջայի ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1914թ. մայիսի 27:

32 BOA/DH.ŞFR, №39/138, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914թ. ապրիլի 1:

րող են խոչընդոտել արտագաղթելու: Դրանցից են [զինվորական] տարիքի մարդկանցից զինապարտությունից ազատվելու համար դրամական վճարի պահանջը և իրենց գույքն ու ապրանքները վաճառելու արգելքը»: Շարունակության մեջ պահանջվում է, որ դադարեցվի այդ գործելակերպը, և որ հավանական արտագաղթողներին «ամեն տեսակի օժանդակություն ու դյուրություն տրամադրվի՝ ապահովելու համար նրանց շուտափույթ մեկնումը», և ապա ավելացվում է, որ նման խնդիրներ հարուցողների մասին պետք է անմիջապես զեկուցել իշխանություններին³³:

1914թ. ապրիլի 13-ին Բնակեցման գրասենյակից Իզմիթի Նահանգ ուղարկված հեռագրում պահանջվում է «թույլ տալ հեռանալ նրանց, ովքեր ցանկանում են դա անել»³⁴: Տասն օր հետո Բալիքեշիր հղված հրահանգում ասվում է, որ Բուլղարիա մեկնող բուլղարացիների թողած հողերը բավական են Գյուղատնտեսական բանկին (Ziraat Bankası) ունեցած նրանց պարտքերը մարելու համար, և հրամայվում է, որ այդ պարտքերը փակելուց հետո մեկնել ցանկացողների ճանապարհին ոչ մի խոչընդոտ չհարուցվի. «նրանց մեկնումին նպաստելն ու այն դյուրացնելը բխում է պետության լավագույն շահերից»³⁵: Բացի այդ, հրամայվում է, որ, երբ քրիստոնյաները լքում են իրենց գյուղերը, ուրիշներին չպետք է թույլատրել շահագործել արտագաղթողների նեղությունները՝ էժան գնով նրանց գույքը ձեռք բերելու կամ թալանի մեջ ներքաշվելու նպատակով: Պատճառն այն էր, որ այդ ամենը պետք է գործածելին մահմեդական գաղթականները³⁶:

Այն հանգամանքի բացեիբաց ընդունումը, որ մինչ այդ հունական գյուղերի բռնի պարպումը եղել է կառավարության կենտրոնական հենասյունը, անուղղակի կերպով կատարվեց 1914թ. նոյեմբերին, երբ կառավարությունը պաշտոնապես դադարեցրեց այդ քաղաքականությունը: Նոյեմբերի 2-ին Թալեթաֆ փաշան ընդհանուր մի հրահանգ ուղարկեց նահանգներ՝ ի պատասխան գերմանացիների հետ իր ձեռք բերած փոխըմբռնման և նրանց տված իր խոստմանը համահունչ: Այդ հեռագրով նա նահանգային պաշտոնյաներին հրահանգում էր, որ «ելնելով երկրի ներկա քաղաքական իրադրությունից, հույների վրա հարձակումներ կամ ճնշումներ չպետք է թույլատրվեն, քանի որ ճնշումների նման գործողությունները նպատակահարմար չեն լինի»³⁷:

Նահանգների հետ կայուն հաղորդակցությունների հոսքով Ներքին գործերի նախարարությունը պահանջում էր ներկայացնել պարպված գյուղերի թիվը, վայրը, պայմաններն ու բնակեցման տարողունակությունը և նահանգային պաշտոնյաներին հարցնում էր, թե մահմեդականները կարո՞ղ էին արդյոք այնտեղ վերաբնակեցվել: Այսպես, 1914թ. ապրիլի 13-ին Բալիքեշիր ուղարկված հեռագրում կարգադրվում է, որ «Սալոնիկից ժամանող գաղթականները տեղավորվեն արտագաղթած հույների ու բուլղարացիների թափուր թողած տներում», և այդ նպատակով նահանգային պաշտոնյաները զեկուցեն «դրանց տարողունակության» մասին³⁸:

Արտագաղթի, ներգաղթի ու վերաբնակեցման վերաբերյալ տվյալները չէին սահմանափակվում բնակչության հաշիվներով: Բավական հաճախ պահանջվում էին նաև խնդրո առարկա տարածքների սոցիալական ու տնտեսական բնույթի վերաբերյալ հանգա-

33 BOA/DH.ŞFR, № 39/152, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Քարեսիի գավառ (Բալիքեսիր), թվագրված 1914թ. ապրիլի 2:

34 BOA/DH.ŞFR, № 39/223, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Իզմիթի գավառ, թվագրված 1914թ. ապրիլի 13:

35 BOA/DH.ŞFR, № 40/89, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Քարեսիի գավառ (Բալիքեսիր), թվագրված 1914թ. ապրիլի 23:

36 BOA/DH.ŞFR, № 40/160, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Չաթալջայի գավառ, թվագրված 1914թ. մայիսի 7: Հաղորդագրության մեջ այսպիսի մի հատված կա. «Ջեկույցներ կան այն մասին, որ արտագաղթող հույները իրենց անասունները վաճառել են շատ ցածր գներով, և որ դրանք ընկել են վերավաճառողների (muhtekir) ձեռքը: Հաշվի առնելով մահմեդական գաղթականների հրատապ կարիքները՝ հարկավոր է կանխել այդ վերավաճառողներին, և նախընտրելի է,

որ անասունները վաճառվեն գաղթականներին»:

37 BOA/DH.ŞFR, № 46/133, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Ալդինի, Հալեպի, Հյուդավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Տրապիզոնի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիթի, Ջանիկի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Անթախայի և Կեսարիայի գավառներ, թվագրված 1914թ. նոյեմբերի 2:

38 BOA/DH.ŞFR, № 39/222, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ-ի ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914թ. ապրիլի 13:

մանալից տեղեկություններ, ինչպիսին են, օրինակ, լքված հողերի տեղադրությունն ու պայմանները, մեկնողների ու ժամանողների գրադմունքները և նրանց աշխատանքների բնույթը: Իրականում, վերաբնակեցման վերջնական որոշումներից շատերը կայացվել են հենց այդ տեղեկությունների հիման վրա:

1915 թ. հունիսի 30-ին մի հեռագիր է ուղարկվել Էգեյանի մի քանի նահագներ ու գավառներ, այդ թվում և Այդին, որից կարելի է ավելի հստակ պատկերացում կազմել պահանջվող տեղեկությունների բնույթի մասին.

Խնդրում ենք զեկուցել, թե [ձեր] նահանգից մինչև հիմա քանի հույն է արտագաղթել, քանի քաղաքից ու գյուղից և հատկապես քանի բնակարանից: Ինչ են այդ գյուղերի ու քաղաքների անունները, բնակարանների թիվը, նրանց թողած արտերի տեսակն ու չափսերը, համայնքային ու մասնավոր գյուղական տնտեսությունների [քանակ]ը և այն արդյունաբերությունների ու գյուղատնտեսական արտադրանքի տեսակը, որի մեջ նրանք ներգրավված են եղել, և արդյո՞ք [նախնական սեփականատերերի] արտագաղթից հետո այդ վայրերում տեղավորվել են մահմեդական գաղթականներ, նրանցից քանիսը կմասն իրենց եղած տեղերում³⁹:

Այստեղ նշանակալի է այն հանգամանքը, որ այս բոլոր գործողությունները կատարվում էին այն ժամանակ, երբ Հունաստանի հետ պաշտոնական որևէ համաձայնություն ձեռք չէր բերված:

Արտագաղթի ու վերաբնակեցման դիտարկման ու վերահսկողության գործընթացներն այնքան խիստ էին, որ երբ որոշ նահանգներում նոր գաղթականներ էին տեղավորվում՝ խախտելով կամ չխախտելով կենտրոնական կառավարության հրամանները, այնուհետև հրահանգ էր տրվում տեղափոխելու մահմեդական այդ վերաբնակիչներին: Վերը բերված օրինակում երևում է, որ երբ հայտնի է դարձել, որ Յալովայի մերձակայքի հունական գյուղերում մահմեդական գաղթականներ են տեղավորվել, 1914 թ. հուլիսի սկզբին Իզմիրի

գավառապետից հեռագրով պահանջվել է «բացարձակ ոչ մի թույլտվություն չտալ նրանց [այդտեղ] վերաբնակվելու»⁴⁰:

Այլ դեպքերում կառավարությունն ուղիղ ու հստակ հրամաններ էր տալիս այն ձեռնարկությունների վերաբերյալ, որոնցից պետք է հեռացվեին կամ արտաքսվեին քրիստոնյա ծառայողների որոշ խմբեր: Այսպես, դեպք է եղել, երբ կառավարությունը միջամտել է՝ կասեցնելու համար Թերքոսի մարզում (Չաթալջայի գավառում) ֆրանսիական մի ընկերությունում աշխատող բուլղարացիների արտաքսումը, քանի որ վտանգ կար, որ Ստամբուլի ջրային մատակարարումը կկտրվեր:

Ֆրանսիայի դեսպանությունը, որը պնդում է, որ ընկերության աշխատող բուլղարացի մեքենավարներին Թերքոս քաղաքից հեռացնելու կամ արտաքսելու և նրանց փոխարեն մեքենաները գործարկելու գիտելիքներ ու ունակություններ չունեցող գաղթականներ տեղավորելու որևէ փորձ, անկասկած, պատճառ կդառնա, որ մեքենաները դադարեն աշխատելուց, ինչի արդյունքը կլինի ոչ միայն ընկերության վնասը, որը ֆրանսիական է, այլև այն կմերժի Ստամբուլին ջուր տալ, և խնդրել է, որ վերոհիշյալ բուլղարացի աշխատ[ուծի]ն ձեռք չտրվի: Ի պատասխան այդ խնդրանքի, Ներքին գործերի նախարարությունը համաձայնել է այդ պահանջին: Խստիվ խորհուրդ է տրվում, որ կամ դուք ինքներդ գնաք, կամ հատուկ պաշտոնյա ուղարկեք՝ [ապահովելու համար], որ [այդ աշխատողներին] ազատելու ու արտաքսելու գործընթացը արագորեն և ընդմիշտ դադարեցվի, և ապահովվի մեքենաների ներկա աշխատուժի անխափան աշխատանքը⁴¹:

Արտագաղթող հույն քրիստոնյաների համար օսմանյան կառավարությունը շոգենավեր էր տրամադրում և վճարում նրանց Հունաստան մեկնելու ծախսը: 1914 թ. ապրիլի 20-ին Թեքիրդաղի գավառ ուղարկված իր մի հեռագրում ՑՆԿՎ-ն խնդրում է հետևյալը. «Հունա-

40 BOA/DH.ŞFR, № 42/176, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1914 թ. հունիսի 2:

41 BOA/DH.ŞFR, № 40/85, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Չաթալջայի գավառ, թվագրված 1915 թ. ապրիլի 25:

39 BOA/DH.ŞFR, № 42/158, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ և Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) ու Քարեսիի գավառներ, թվագրված 1914 թ. հունիսի 30:

կան դրոշով «Կարմալա» շոգենավը, որը վարձվել է հույն արտագաղթողներին այդտեղից Մալոնիկ բերելու համար, մեկնելու է վաղն առավոտյան: Խնդրում ենք ուղևորներին պատրաստ պահել [նավ նստելու համար], քանի որ, եթե այն երեք օրից ավելի մնա [նավամատուցում], հարկ կլինի վճարում կատարել»⁴²: Կառավարությունը տեղահանումները կազմակերպելու լիակատար իշխանություն ունեցող կազմակերպությունից՝ ՑՆԲԳՎ-ից (Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման գլխավոր վարչություն) պաշտոնյաներ էր նշանակել նավերի վրա՝ իբրև նավակազմի անդամներ՝ դրանով ապահովելով, որ արտագաղթի ընթացքը մնա իր խիստ վերահսկողության տակ: 1914թ. մայիսի 26-ին Չանաքքալե ուղարկված իր հեռագրում ՑՆԿՎ-ն տեղեկացնում է, որ «հունական դրոշով մի շոգենավ է ուղարկվել՝ հույն արտագաղթողներին վերցնելու համար», և ավելացնում, որ ՑՆԿՎ-ից Ադիլ բեյը կլինի «այդ նավի վրա՝ ձևացնելով, թե ընկերության գործակալներից մեկն է»⁴³: Եթե երևում էր, որ մեկնող հույն ուղևորները նյութական միջոցներ ունեին, սովորաբար այդպիսիներից պահանջում էին, որ վճարեն ճանապարհածախսի գինը, թեև այն ընթրնումը կար, որ ուղևորությունը չէր մերժվելու նրանց, ովքեր չունեին հարկ եղած միջոցները: 1914թ. ապրիլի 15-ին Տրապիզոնի նահանգ ուղարկված մի հեռագրում տեղեկացվում է, որ Մալոնիկ գնացող հույներից պահանջվել է «10 դուրուշ ուղեվարձ», և ապա հարց է տրվում, թե ո՞րն է «ուղևորների մեջ եղած մարդկանց թիվը, որոնց կարելի է նավ նստել՝ նույնիսկ հարկ եղած ուղեվարձը չունենալու դեպքում»: Բացի այդ, հեռագրում հարց է տրվում, թե արդյո՞ք արտագաղթողների թիվն այնքան մեծ է, որ արժե մեկ այլ նավ ուղարկել»⁴⁴:

Ինչպես ցույց տվեցինք ավելի վաղ, պետությունն այս երկնյուղ համակարգի շնորհիվ, առանց սպասելու միջազգային քննարկումներին ու համաձայնագրերին, կարողացավ դատարկել արևմտյան Անատոլիայի հունական գյուղերը և դրանք վերաբնակեցնել մահմե-

դականներով: 1914թ. մայիսի 21-ին Այդինի նահանգ ուղարկված հեռագրում Թալեաթ փաշան նշում է, որ «Վենիզելոսի առաջարկի հիման վրա... Այդինի նահանգի հույների հետ Մակեդոնիայի մահմեդական բնակչության գաղթի ու փոխանակման սկզբունքով» բնակչության փոխանակման հարցերով զբաղվող հանձնաժողովի հիմնադրման համար երկար ժամանակ կպահանջվի, «Մակեդոնիայի մահմեդական բնակչությունը, որն այստեղ է եկել ոտքով, պետք է տեղավորվի հունական գյուղերում՝ սկսելով առափնյա [գյուղերից] և տանելով դեպի երկրի խորքը»⁴⁵: Հունիսի 30-ին Էդիրնե ուղարկված մեկ այլ հեռագրով ՑՆԿՎ-ն հրատապ տեղեկություն է խնդրում այն բուլղարացիների ու հույների վերաբերյալ, ովքեր վերջին ժամանակներում հեռացել են տարածքից, և այն հողերի վիճակի վերաբերյալ, որոնք թողել են արտագաղթողները: Ավելի վաղ (մայիսի 19-ի ու հունիսի 20-ի) երկու հեռագրերով պահանջվում են համանման տեղեկություններ⁴⁶:

1914թ. հուլիսի 27-ին Բելիքեսիրի շրջան ուղարկված մեկ այլ հեռագրով ՑՆԿՎ-ն խնդրում է տեղեկություններ հաղորդել այն ներգաղթողների թվի մասին, որոնք տեղավորվել են լքված գյուղերում. «Քանի գաղթական է տեղավորվել հույների ու բուլղարացիների լքած տներում: Քանի դատարկ [տուն] կա: Խնդրում ենք տեղեկացնել անմիջապես»⁴⁷: Գրասենյակը 1914թ. օգոստոսի 24-ին նույն բովանդակությամբ մեկ այլ հեռագիր է ուղարկել Բուրսա (Hüdâvendigâr)՝ նահանգապետին հիշեցնելով, որ «1.500-ի չափ գյուղատնտեսությամբ չզբաղվող ալբանացիներ կան, որոնք դեռևս պետք է տեղավորվեն ձեր նահանգում. նրանց հարկավոր է Թեքֆուրդաղիի ճանապարհով

42 BOA/DH.ŞFR, № 40/58, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Թեքֆուրդաղիի գավառ, թվագրված 1914թ. ապրիլի 20:

43 BOA/DH.ŞFR, № 41/80, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1914թ. մայիսի 26:

44 BOA/DH.ŞFR, № 40/13, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1914թ. ապրիլի 15:

45 BOA/DH.ŞFR, № 41/37, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1914թ. մայիսի 21:

46 BOA/DH.ŞFR, № 42/163, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914թ. հունիսի 30: Հեռագրով պահանջվում է, որ «անմիջապես տրամադրվեն նահանգը լքած հույների ու բուլղարացիների թվերի և նրանց թողած հողերի վերաբերյալ այն տեղեկություններն ու նկարագրությունը, որ պահանջվել է գրավոր հաղորդմամբ [1914թ. մայիսի 19-ին ու հունիսի 20-ին]»:

47 BOA/DH.ŞFR, № 43/116, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914թ. հուլիսի 27:

ուղարկել Էդիրնեի նահանգի շրջանները, որտեղ դեռևս կան դատարկ տներ ու դաշտեր»⁴⁸:

Օսմանյան կառավարությունը ոչ միայն չէր ցանկանում բնակչության փոխանակման համար սպասել համաձայնության կայացմանը, այլև չէր պատրաստվում նույնիսկ սպասել դրա մասին քննարկումներին: Վարչակազմը 1914 թ. մայիսի 20-ին Հունաստանի վարչապետ Վենիզելոսին բանավոր հաղորդեց բնակչության փոխանակման իր վերոնշյալ խորհուրդը: Հաջորդ օրն առաջարկը կրկին ներկայացվեց, այս անգամ՝ գրավոր ձևով, իսկ մայիսի 22-ին Վենիզելոսը նամակ գրեց՝ նշելով, որ ինքն սկզբունքորեն ընդունում է առաջարկը: Հաջորդ օրը Հունաստանի Արտաքին գործերի նախարարությունը բանավոր պատասխանեց, որ ինքը ևս նույն դիրքորոշումն ունի⁴⁹, սակայն Աթենքը միայն հունիսի 27-ին տվեց իր պաշտոնական պատասխանը՝ նշելով, որ Հունաստանն «ընդունել է [բնակչության] փոխանակման սկզբունքը՝ իր ժողովրդի կամքով»⁵⁰: Ինչպես վերը տեսանք, բնակչության մեծածավալ շարժը կարգավորելու նպատակով արժարժվել է միջազգային հանձնաժողով ստեղծելու գաղափարը. այն ընդունվել է 1914 թ. հուլիսին, և, ի թիվս այլոց, հաջորդ ամիս ենթահանձնաժողովներ են հիմնվել Իզմիրի ու Էդիրնեի շրջաններում: Սակայն հստակ է, որ օսմանյան կառավարությունը չի սպասել, որ միջազգային վավերացումներն առաջ ընկնեն վերաբնակեցման իր սեփական քաղաքականությունից:

Այդ փաստը չի վրիպել մյուսների ուշադրությունից: 1914 թ. հոկտեմբերին օսմանյան կառավարության դեսպան Գալիբ Քեմալի բեյի հետ իր հանդիպման ընթացքում Վենիզելոսը բողոքել է այդ հանգամանքից և խնդրել, որ Բարձր դուռը վերջ տա հույն քրիստոնյաների

տեղահանությանը՝ մինչև ինչ-որ համաձայնություն կնքվի: Հետագայում այդ խոսակցության մասին իր պատմության մեջ Քեմալի բեյը պնդում է, որ զայրացած Վենիզելոսը նշել է. «Ես ինչ անեմ այդ խեղճ հոգիների հետ: Եթե նրանց տեղավորեմ մահմեդական գաղթականներին պատկանած հողերի վրա, դուք դա կվկայակոչեք իբրև վերջերս տված խոստումն չկատարելու ապացույց», և օսմանյան պետության ներկայացուցիչը խնդրել է, որ «նման իրադրության կրկնության հնարավորություն չտրվի»՝ փոխարենն անձնապես խնդրելով, որ «[դա ապահովելու համար սուլթանը] հրամայի խառը հանձնաժողով ստեղծել»⁵¹: Ի լրումն անձնական այդ հաղորդման, հոկտեմբերի 22-ին (մինչև հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ քննարկումների ավարտը) Ստամբուլում Հունաստանի դեսպանությունը Բարձր դռանն է հանձնել իր հույն քաղաքացիների ընթացիկ արտաքսման դեմ իր կառավարության պաշտոնական բողոքի նամակը: Ի թիվս այլ հարցերի, նշվում էր, որ բռնի այդ տեղահանությունները առաջացրել են «մեծ վրդովմունք... Հունաստանի հանրային կարծիքի մեջ» և «խաթարել երկու երկրների [միջև] լավ հարաբերությունները»⁵²:

ՅՈՒՐԱՍՏԱՆԻ ԴԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵԶՐԻՆ

Գյուղերը պարպելու և բնակիչներին տեղափոխելու օսմանյան քաղաքականությունը, սակայն, առանց բարդությունների չէր ընթանում և լուրջ դիմադրության էր հանդիպում թե՛ երկրի ներսում և թե՛ արտասահմանում, և պահ եղավ, որ այն կայսրությանը հասցրեց Հունաստանի հետ պատերազմի եզրին: Թեև Բարձր դուռը շարունակում էր հերքել այդ իրադարձությունների հետ իր առնչությունը, եվրոպական պետությունների մեծ մասը և առավել ևս Հունաստանը չէին համոզվում: Եվրոպական կառավարություններն իրենց դեսպանների միջոցով համառորեն բողոքներ էին ներկայացնում՝ ի պատասխան Թրակիայի ու Էգեյանի շրջաններում հակահունական

48 BOA/DH.ŞFR, № 45/181, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի ծածկագրված հեռագիրը Հյուդավնդիզարի (Բուրսա) նահանգ, թվագրված 1914 թ. օգոստոսի 24:

49 Mourellos, "The 1914 Persecutions," 393-94 (Վենիզելոսի պատասխանը գտնվում է հավելվածում՝ 413-14). Դեսպան Քեմալի բեյը պնդում է, որ առաջին առաջարկը ներկայացվել է 1914 թ. մայիսի 18-ին (Canlı Tarihler: Galip Kemali Söylemezoğlu Hatıraları, 102-3 [պարունակում է Վենիզելոսի նամակի անգլերեն թարգմանությունը]):

50 BOA/DH.ŞFR, № 42/136, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914 թ. հունիսի 28:

51 BOA/DH.EUM, 3. Şube, 2/25, Օսմանյան արտաքին գործերի նախարարի հաղորդագրությունը ներքին գործերի նախարար Թալեաթին, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 18:

52 BOA/DH.EUM, 3. Şube, 2/35, Հունաստանի կառավարության հաղորդագրությունը օսմանյան Մեծ վեզիրությանը, որը Կոստանդնուպոլսում Հունաստանի դեսպանությունը 1914 թ. հոկտեմբերի 22-ին հանձնել է օսմանյան Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության միջոցով:

բռնությունների ու սահարեկումների վերաբերյալ հյուպատոսների գեկույցների:

Մեծ տերությունների հյուպատոսները դեսպաններին ուղարկած իրենց գեկույցներում, հակասելով օսմանյան պաշտոնական դիրքին, հաճախ էին պնդում, որ գյուղացիների վրա հարձակումները, սպանությունները, կողոպուտներն ու բռնի տեղահանությունները կատարվում են պետության ծրագրած գործողությունների շրջանակում⁵³: Այդ պնդման պատճառներից մեկն այն էր, որ առնվազն որոշ շրջաններում գործողությունները բացեիքաց կազմակերպում էին օսմանյան կառավարության տեղական պաշտոնյաները, և իրականացնում էր ժանդարմերիան⁵⁴: Մասնավորապես, Հունաստանի դեսպանությունը օսմանյան Արտաքին գործերի նախարարությանն անդադար բողոքում էր նահանգներում տիրող չարաշահումներից: Նրանց փաստարկները որոշ դեպքերում այն աստիճան ճշգրիտ էին, որ մատնանշում ու թվարկում էին գործողություններին մասնակցող ժանդարմներին:

Այդ գեկույցներում տեղեկությունների ճշգրտության մի օրինակ է Ստամբուլում Հունաստանի դեսպանության չթվագրված հետևյալ բողոքը.

53 NA/RG 59, 867.700/630. Իբրև դրա մեկ օրինակ, կարելի է քերել Իզմիրում ամերիկյան հյուպատոս Ջորջ Հորթոնի 1914թ. հունիսի 9-ին ուղարկած գեկույցը: Rouben Adalian, *The Armenian Genocide in the U.S. Archives, 1915-1918* (Alexandria, VA, Այս աղբյուրն այստեղ կհղվի իբրև AGUS: Հայկական աղբյուրների վերաբերյալ նման այլ տեղեկությունների համար տես Rouben Paul Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: The United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, №1 (2001), 31-48:

54 Չանաքքալեում (Բալե-ի Սուլթանիյե), օրինակ, 1914թ. մայիսին առափնյա որոշ քաղաքների պարսպները կատարվել է գավառապետի ուղղակի վերահսկողության ներքո: Միննույն ամսին նման հարձակումներ ու գյուղերի պարսպումներ կազմակերպվել են նաև Մենեմենի ժանդարմերիայի հրամանատար Թալեաթ բեյի կողմից (Հունական պատրիարքարան, *Persecution of the Greeks in Turkey, 1914-1918*, 61-62, 70-71): Այդ «Թալեաթ բեյի» անունն առկա է այս շրջանի հյուպատոսների մի շարք գեկույցներում: Ամերիկացիների գեկույցներում նրա մասին ասվում է, որ «մահն ու ավերածությունն այնտեղ են, ուր Թալեաթ բեյն է»: Տես NA/RG 59, 867.700/630, Իզմիրում ամերիկյան հյուպատոս Ջորջ Հորթոնի Կոստանդնուպոլսի ամերիկյան դեսպանությանն ուղղված գեկույցը, թվագրված 1914թ. հունիսի 15, AGUS, Adalian, microfiche №5:

Ամսի քսանհինգին մի 29 ժանդարմ, անկանոն զորքերի (başıbozuk) ուղեկցությամբ եկան «Սանդուքի» քաղաքը, որը կցված է [գավառ] Մալքարային [Թերիդաղի նահանգ] և, բնակիչների ունեցվածքը զավթելուց հետո, ծեծեցին նրանցից ոմանց, որից հետո նստեցին նրանց վրա և ստիպեցին ժողովրդական երգեր երգել՝ մինչև որ նրանք ցանկանան գնալ: Այդ վերաբերմունքի պատճառով բնակիչներից շատերը վնասվածքներ ստացան... Մյուրեֆթեում մարզի գլխավոր պաշտոնյան (kaymakam) «Միտրո Կոնստանդինոս» անունով 16-ամյա մի աղջկա առևանգեց՝ նրան իսլամի հավատափոխվել տալու նպատակով: Աբիդին քաղաքում «Յորգի Չելուսի» անունով մի ծերունի անհայտացավ: Մտածում են, որ նրան սպանել են... Ուրլայում Յանի և Վանգելի անուններով [երկու] հույն է սպանվել Անադեբե հրապարակի կենտրոնում: Մարդասպանների անուններն են Մուստաֆա և Հասան Իսմայիլ⁵⁵:

Իրականում, նույնիսկ առանց այլ երկրների բողոքների, Բարձր դուռը քաջատեղյակ էր, թե նահանգներում իրենց ռազմական ու քաղաքացիական ծառայողներն ինչեր էին անում: Անվտանգության վարչության կողմից 1914թ. հոկտեմբերի 26-ին Էդիրնեի նահանգ ուղարկած հեռագրում տրվում է ֆիզիկական հարձակումների, կողոպուտի ու քրիստոնյա այն գյուղացիների նկատմամբ իրականացվող դաժանությունների մանրամասն ցուցակը, որոնք նշված են Հունաստանի դեսպանության վերոհիշյալ բողոքի մեջ, և պահանջվում է, որ հետաքննվեն այդ գործողությունները⁵⁶: Այդինի նահանգ Ներքին գործերի նախարարության ուղարկած մեկ այլ հեռագրում հետագա խժդժությունների ու քրեական գործողությունների ցանկին հետևում է մի հայտարարություն, որ լուրեր են հասել մայրաքաղաք այն մասին, որ այդ չարաշահումներն իրականացրել են զինվորները: Հեռագրով ավելի հանգամանալի տեղեկություն է պահանջվում կատարվածի մասին, և տեղական պաշտոնյաներին հրահանգվում է

55 BOA/DHEUM, 3. Şube, 2/35, Ստամբուլում Հունաստանի դեսպանության գրությունը Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարություն (չթվագրված):

56 BOA/DH.EUM, 3. Şube, 2/35, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914թ. հոկտեմբերի 26:

համապատասխան միջոցառումներով վերականգնել խաղաղությունը⁵⁷:

Հակահունական բռնությունների ու ահաբեկումների արշավի հանդեպ օտար տերությունների զայրացկոտ հակազդեցությունների հոսքն ի վերջո օսմանյան կառավարությանն ու հատկապես Արտաքին գործերի նախարարությանը խայտառակեց Եվրոպայի առջև: Խորհրդական Ռեշադ Հիքմեթը, Արտաքին գործերի նախարարության անունից գրելով Ներքին գործերի նախարարությանը, նշում է Փարիզում Օսմանյան կայսրության դեսպանության 1914 թ. հունիսի 7-ի զեկույցի մասին, ուր դեսպանությունը տեղեկացնում է, որ Անատոլիայում հույն քրիստոնյաների կոտորածների ու նրանց բնակավայրերի կողոպուտների վերաբերյալ հունական աղբյուրներից ծագած լուրերը լայնորեն շրջանառում են Եվրոպայով մեկ: Այնուհետև նա ողբում է այն փաստի կապակցությամբ, որ այդ լուրերը օսմանյան վարչակազմը դրել են հանրային անհարմար վիճակի մեջ. «Հարկ չկա ընդգծելու [վնասարար] այն ազդեցությունը, որ օսմանյան տիրույթներում քրիստոնյա բնակիչների մասին հրապարակված նման լուրերը կարող են գործել Եվրոպայի հանրային կարծիքի ավելի պահպանողական հատվածների վրա»: Այնուհետև պաշտոնյան խնդրում է, որ այդ լուրերն անմիջապես հերքվեն, եթե սուտ են, իսկ եթե ճշմարտության նշույլ են պարունակում, միանգամից միջոցներ ձեռնարկվեն՝ հետագա չարաշահումները կանխելու համար⁵⁸:

57 BOA/DH.EUM, 3, Şube, №1/19, Ներքին գործերի նախարարության հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1914 թ. օգոստոսի 12: Հեռագրում հիմնականում ասվում է, որ «[տեղեկություն է ստացվել, որ Ուրլայի Հելվաջիլար հրապարակում կրակել են երկու հույն վրա, և որ նրանցից մեկը մահացու վիրավորվել է: Որ այս անսխի քսաներկուսին մի քանի զինված անձինք հարձակվել են Հըրիստո Կարանդրեաս ընտանիքի վրա՝ Եսի Էֆեսի նրանց ազարակում՝ վիրավորելով վերոնշյալին և նրա կնոջն ու երեք երեխաներին, իսկ տասներեքամյա երկու տղաները խեղդամահ են արվել, այս անսխի քսանին զինվորները հարձակվել են Սամպոս անունով մի անձի վրա՝ իր ազարակում, որը գտնվում է Միլեթի շրջակայքում, Իզմիրից մոտ մեկ ժամ հեռավորության վրա, և նա մեծ դժվարությամբ է մրայն փախել: Միևնույն վայրում և միևնույն օրը զինվորների կողմից սպանվել է Կրիստոնի անվամբ մի հույն քաղաքացի: Այս լուրերի առնչությամբ խնդրում ենք ներկայացնել այդ պնդումների մասին ճշմարտությունը և արդյունավետ միջոցներ ձեռնարկել օրենքն ու կարգը վերահաստատելու համար»:

58 BOA/DH.EUM, 3, Şube, №2/1, Ներքին գործերի նախարարության Քաղա-

Եվրոպայի հանրության վրա նման զեկույցներից թողած ազդեցությունից բացի, բուն կայսրության մեջ հունական համայնքն արդեն դիմում էր զենքի: Տուժած շրջանների հունական եկեղեցիները Ստամբուլի իրենց պատրիարքարանին պարբերաբար տեղեկացնում էին, որ բռնությունների այդ արշավը կամ կազմակերպվում էր կառավարության կողմից, կամ պետական պաշտոնյաները տեսնում էին չարաշահումները, սակայն դրանք կանխելու համար չէին միջամտում: Պատրիարքարանն այդ լուրերն ուղարկում էր կառավարություն: Օրինակ, 1914 թ. մայիսի 31-ին Ներքին գործերի նախարարության կողմից Չանաքքալեի նահանգ ուղարկված հեռագրում հղվում է մեկ այլ հեռագիր, որը «Չանաքքալեից ուղարկվել է պատրիարքարան և ստորագրված է Գալիպոլիի մետրոպոլիտնի կողմից», և որում պատմվում է գյուղերի վրա գործած հարձակումների մասին և տեղեկացվում, որ զինված խմբերը «սպառնում են այն հույն գյուղացիներին, ովքեր փորձում են արտագաղթել»⁵⁹:

1914 թ. ընթացքում պատրիարքարանը նախորդ տարիների նման շարունակել է բողոքներ ներկայացնել: 1914 թ. փետրվարի 25-ին նա Բարձր դռանը բողոքի նոտա է ուղարկել, որից հետո հաջորդ ամիս մի պատվիրակություն է ստեղծել՝ այցելելու համար օսմանյան կառավարության անդամներին⁶⁰: Այդ այցելությունների ընթացքում պատվիրակությանն անդադար ասվել է, որ 1. կառավարությունը ներքաշված չէ այդ հարցի մեջ, 2. Բալկանյան պատերազմների հետևանքով խաթարվել են հանրային բարքերը, և 3. հույն բնակչությունն, ամեն դեպքում, կամավոր կերպով է արտագաղթում՝ ելնելով իր պատճառներից⁶¹: Երբ այդ հանդիպումները ոչ մի արդյունքի չեն հանգեցրել, պատրիարքարանը հունիսին որոշել է, «իբրև սգո նշան

բալկան գործերի գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Արտաքին գործերի նախարարությանը (չթվագրված):

59 BOA/DH.SFR, №41/122, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1914 թ. մայիսի 31:

60 Այդ այցի ընթացքում պատվիրակությունը խնդրել է բողոքի նոտա ներկայացնել, սակայն, երբ արդարադատության նախարարը մերժել է այն ընդունել, հետագայում բողոքի առանձին նամակ է ուղարկվել մեծ վեզիրին: Archimandrite Alexander Papadopoulos, Persecution of the Greeks, 77–81:

61 Hasan Babacan, Mehmet Talat Pasha (Ankara, Türk Tarih Kurumu, 2005), 92.

և բողոքի խորհրդանիշ՝ փակել հունական եկեղեցիներն ու դպրոցները: Հունական գյուղերի ավագները նույնպես դադարեցրել են իրենց աշխատանքը և նույնիսկ մի շարք գործադուլներ կազմակերպել»⁶²:

Իրականում, հույների բողոքների ու գործադուլների համար մեկ այլ պատճառ ևս կար: 1913 թվականից սկսած բոյկոտովում էին հունական ապրանքներն ու բիզնեսները: Այդ, այսպես կոչված, մահմեդականների բոյկոտը (1913-14թթ.) սկսվել էր Բալկանյան պատերազմներից հետո և կազմակերպվել ու վերահսկվում էր ՄԱԿ-ի կողմից⁶³: Ներքին գործերի նախարարությունը հաճախակի հեռագրեր է ուղարկել նահանգներ՝ կայսրության բացառապես հույն ազգաբնակչության դեմ ուղղված բոյկոտի կոչով: Այդպիսի հաղորդագրությունների օրինակ է 1913 թ. հունիսի 14-ին Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության կողմից մի շարք նահանգներ ուղարկված հեռագիրը, որով պահանջվում էր, որ «[չնայած այն հանգամանքին, որ] հայտարարվել է, որ հույների դեմ բոյկոտը վերաբերելու է նաև բուլղարացի վաճառականներին, որոնք այդտեղ թվով սակավ են, ի պատասխան [Բուլղարիայի] դեսպանության ճշումների՝ մեծ վեճի շրջանում հրամայել է, որ նրանց դեմ բոյկոտ չիրականացվի. խնդրում ենք զեկուցել [այդ քայլի] արդյունքների մասին»⁶⁴:

Բարձր դոսանն ուղարկված բողոքներից բացի, հունական պատրիարքարանը մի պատվիրակություն է կազմել և ուղարկել Եվրոպա՝ տարբեր տերությունների կողմից կայսրության վրա ճշում բանեցնելու խնդրանքով: Օսմանյան կառավարությունը արձագանքել է սե-

փական դիվանագիտական խողովակների միջոցով, օտար տերություններին համոզելով, որ չընդունեն այդ պատվիրակությանը: Օսմանյան կայսրության Արտաքին գործերի նախարարության կողմից օգոստոսի 4-ին Ներքին գործերի նախարարությանն ուղղված հեռագրից կարելի է հասկանալ, որ Հոռոմում օսմանյան դեսպանության կատարած աշխատանքների շնորհիվ, Իտալիայի կառավարությունը խոստացել է չընդունել Պատրիարքարանի պատվիրակներին⁶⁵:

Դեռ դրանից առաջ, ներքին ու արտաքին ճշումների տակ, 1914 թ. ապրիլին Թալեթ փաշան շրջել էր Թրակիայի տարածքում և իր հավաքած տվյալների հիման վրա մի զեկույց էր պատրաստել⁶⁶: Ավելի ուշ, երբ բողոքներն ավելացան, կառավարությունն ստիպված եղավ մեկ այլ պատվիրակություն ուղարկելու Էգեյանի շրջան, որը կրկին գլխավորում էր Թալեթ փաշան, և որին ուղեկցում էին մեկական պաշտոնյաներ՝ տարբեր դեսպանություններից՝ հեռաքննելու համար հակահունական գործողությունների մասին տեղեկությունները: Օսմանյան կառավարությանը 1914 թ. հուլիսի 1-ին ներկայացրած իր զեկույցի մեջ Թալեթ փաշան ընդունում է, որ հույն ազգաբնակչության դեմ իրագործվել են ահաբեկման ու բռնությունների գործողություններ. «Հեռացող [հույները] թողնում են տեղափոխման ենթակա [իրենց] ունեցվածքի մեծ մասը, ոչ միայն մահճակալներ և այլն: Կան կողոպուտների դեպքեր, և եղել են կոիվներ ու սպանություններ»⁶⁷: Ելնելով մատչելի վկայություններից՝ կարող ենք ասել, որ Թալեթի «որոշ սպանություններ» բնութագրումը թերագնահատում է կատարվածը. համաձայն թե՛ ամերիկյան և թե՛ գերմանական փաստաթղթերի, միայն Ֆոչայում 1914 թ. հունիսի կոտորածի ժամանակ սպանվել է մոտ հիսուն մարդ⁶⁸: Սալոնիկում ամերիկյան հյուպատո-

62 Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 2, մաս 3, 254:

63 Ջաֆեր Թոփրակը պնդում է, որ բոյկոտի հիմնական պատճառը հունական Ավերոֆ ակնակիրն էր: Բալկանյան հակամարտության ընթացքում օսմանյան նավատորմն այդ նավի պատճառով չի կարողացել մտնել Էգեյան ծով և, հետևաբար, իրականացնել կայսրությանը պատկանող տարբեր կղզիների կամ Սալոնիկի նավահանգստի պաշտպանությունը: Բացի այդ, պատերազմի ընթացքում օսմանյան հույները նշանակալի նյութական օժանդակություն են տրամադրել Հունաստանին: Հավելյալ տեղեկությունների համար տես Zafer Toprak, Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950), Milli İktisat-Milli Burjuvazi (Istanbul, Tarih Vakfı Yurt Yayınları, 1995), 107-11:

64 BOA/DH.ŞFR, № 42/8, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Այդինի ու Տյուրկվենդիգարի (Բուրսա) նահանգներ և Չանաքքալեի ու Քարեսիի (Բալիքեսիր) գավառներ, թվագրված 1914 թ. հունիսի 14: Գոյություն ունեն նման այլ հեռագրեր, տես BOA/DH.ŞFR, № 42/7, 42/30, 42/32 և 42/35:

65 BOA/DH.EUM, 3. Şube, 1/6, Արտաքին գործերի նախարարության քաղաքական գործերի գլխավոր տնօրեն Ահմեդ Ռեշիդ բեյի հաղորդագրությունը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. օգոստոսի 4:

66 Papadopoulos, Persecution of the Greeks, 95-98. Ներքին գործերի նախարար Թալեթ փաշայի կողմից մեծ վեճի Սաիթ Հալիմին ուղարկված զեկույցի համար տես Canlı Tarihler, Galip Kemalî Söylemezoğlu Hatıraları, 101:

67 Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 2, մաս 3, 255:

68 NA/RG 59, 867.00/630, Ամերիկայի դեսպան Սորգենթի զեկույցը, թվագրված 1914 թ. հունիսի 9, հետևյալ աղբյուրից. AGUS, Adalian, microfiche № 5: Գերմանական աղբյուրներում այդ իրադարձությունների մասին հավելյալ տեղեկությունների համար տես DE/PA-AA/R 13925, Գերմանիայի դեսպան Վանզենհայմի զեկույցը, թվագրված 1914 թ. հունիսի 30:

սուրբյան հունիսի 25-ի զեկույցի մեջ այդ նույն ժամանակաշրջանում Իզմիրում ու դրա շրջակայքում սպանվածների թիվը նշվում է հինգ հարյուրից մինչև վեց հարյուր հոգի⁶⁹:

Օսմանյան կառավարությանն ու իրեն արտաքսումներից ու սպանություններից անտեղյակ ներկայացնելու Թալեաթի ջանքերը (մի պնդում, որը հետագայում հերքվում է իրադարձությունների հետ ուղղակի կապ ունեցող բազմաթիվ թուրքերի հուշագրություններում) պետք է նկատել իբրև վերը ներկայացված երկնյուղ մեխանիզմով քաղաքականության ևս մեկ օրինակ: «Զուման» այդ գործողությունների գլխավոր դերակատարներից մեկը՝ Քուշուբաշի Էշրեֆը, պատմում է, որ Էզեյանի շրջան Թալեաթի կատարած շրջայցի ժամանակ ինքը Մանիսայում գաղտնի հանդիպել է Թալեաթի հետ, և Թալեաթը նրան ասել է. «Աշխատիր հիմա շատ չերևալ՝ առնվազն մինչև իմ [Ստամբուլ] վերադառնալը... Նույնիսկ մի երկու-երեք օր Իզմիր չգաս: Խուսափիր առափնյա շրջաններում սադրիչ այնպիսի տարրերի կողմից նկատվելուց, ինչպիսին են օտարերկրյա դեսպանություններն ու հյուպատոսությունները, նույնիսկ եթե դրանք մեր դաշնակիցներին են»⁷⁰:

Երկնյուղ այդ մեխանիզմը կարելի է տեսնել նաև բոյկոտի գործողություններում: Թե՛ երկրի ներսից և թե՛ դրսից ենթարկվելով մեծ ճնշումների՝ օսմանյան կառավարությունը հեռագրեր է ուղարկել նահանգներ՝ հրամայելով վերջ տալ այդ գործողություններին՝ պնդելով, որ նրանց հետ ոչ մի կապ չունեն, և նույնիսկ պահանջել է ձևի համար մի քանի պատիժներ կիրառել: Մեկ այլ հեռագրում, որը հուլիսին ուղարկվել է Այդինի նահանգապետ Ռահմի բեյին, կարդում ենք հետևյալը. «այն ժամանակամիջոցին, երբ շարունակվում են քաղաքական քննարկումները, անհրաժեշտ է վերացնել բոյկոտը: Դուք այս զգուշացումները պետք է հաղորդեք հարկ եղած կողմերին և, եթե անհրաժեշտ եք համարում, պատժեք այս զգուշացումն անտեսողներից աչքի ընկնող մի քանիսին: Կարճ ասած՝ հարկ եղած բոլոր միջոցները գործածեք՝ առայժմ կանխելու համար բոյկոտի շարունա-

69 NA/RG 59, 867.00/632, Սալոնիկում ամերիկյան հյուպատոսության զեկույցը, թվագրված 1914թ. հունիսի 25, հղված հետևյալ տեղում. Adalian, AGUS, microfiche № 5.

70 Cemal Kutay, Etniki Etyarya'dan Günümüze, Ege'nin Türk Kalma Savaşı (İstanbul, Boğaziçi Yayınları, 1980), 226.

կությունը: Այս հարցի վերաբերյալ հրահանգներն ուղարկվել են բոլոր նահանգներ»⁷¹:

Ինչպես նշվում է հեռագրում, կայսրության բոլոր նահանգներ հրահանգներ են ուղարկվել, որոնցում ասվում էր. «Այս ժամանակահատվածում, երբ կառավարությունը գտնվում է քաղաքական բանակցությունների մեջ, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն՝ դադարեցնելու համար հույն ազգաբնակչության դեմ կիրառվող բոյկոտը, քանի որ այն, բնականաբար, վնասակար հետևանքների կհանգեցնի: Բացի այդ, համապատասխան զգուշացումը պետք է հաղորդվի հարկ եղած կողմերին, և նրանց, ովքեր կդիմադրեն ու կշարունակեն կիրառել բոյկոտը, պետք է պատժել՝ բոլորին անխտիր»⁷²:

Կառավարության այս նոր միջոցառումների պատճառն այն էր, որ հույների կոտորածները, հատկապես Իզմիրի շրջանում, այնպիսի չափերի էին հասել, որ օսմանյան կառավարությանն ու Հունաստանին հասցրել էին պատերազմի եզրին: Այսինքն, Թալեաթի կողմից այդ շրջաններ կատարած այցի իրական նպատակը երկկողմ լարվածությունը թուլացնելն էր⁷³: Իզմիրում Բրիտանիայի հյուպատոսի հետ հանդիպման ընթացքում նա ընդունել է այդ: «Ես այստեղ եմ եկել մեծ վեզիրի հրամանով», — ասել է Թալեաթը: «Նորին գերագանցություն

71 BOA/DH.\$FR, № 42/198, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգապետ Ռահմի Բեյեֆենդում, թվագրված 1914թ. հուլիսի 5:

72 BOA/DH.\$FR, № 42/199, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր հաղորդագրությունների գրասենյակի (Muhâberât-ı Umumiye Dairesi) չորրորդ բաժանմունքի ծածկագրված հեռագիրը Էշիրեֆի, Այդինի, Հուրադվեղիզարի (Բուրսա)ու Տրապիզոնի նահանգներ և Իզմիրի, Մենթեշի, Թեքեի, Ջանիկի, Չաթալջայի, Քարեսիի (Բայիքեսիր) ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1914թ. հուլիսի 5:

73 Մասնավորապես գերմանական ու ամերիկյան դիվանագիտական զեկույցները մեծ տեղ են հատկացնում օսմանյան հույների ճգնաժամի և պատերազմի վտանգի հարցերի քննարկմանը: Օրինակների համար տես DE/PA-AA/R 7356, Սալոնիկում Գերմանիայի հյուպատոս դր. Շվյորբելի զեկույցները, թվագրված 1914թ. ապրիլի 26 և մայիսի 4. DE/PA-AA/R 7464 և DE/PA-AA/R 13924, Աթենքում Գերմանիայի դեսպան կոմս Ալբերտ ֆոն Քուադտի զեկույցները, թվագրված 1914թ. հունիսի 11 և DE/PA-AA/R 13875, թվագրված 1914թ. հունիսի 23: Հունիսի 11-ի իր զեկույցի մեջ Քուադտն ասում է, որ «իրադրությունն իրոք սպառնալից է, և եթե տեղահանություններն ու կոտորածներն այս արագությամբ շարունակվեն, կարող է հույները որոշեն գրավել [արևմտյան] Անատոլիան»:

Փաշան [իշխան Սաիդ Հալիմը] չի ցանկանում հույների դեմ պատերազմի գնալ: Ես իմ ուժերի ներածը կանեմ՝ այն կանխելու և իրադրությունը կայունացնելու համար»⁷⁴:

Էզեյանի մյուս կողմում Աթենքը վաղուց որոշել էր պատերազմ սկսել, սակայն ի վիճակի չէր եղել բավարար օժանդակություն ստանալու Սերբիայից ու Ռումինիայից⁷⁵: Եվրոպական տերությունների արխիվները լեցուն են ինչպես օսմանյան վարչակարգի կողմից հակահունական ահաբեկումների ու բռնությունների ծավալման մեջ օսմանյան վարչակազմի ուղիղ ներգրավվածության, այնպես էլ պատվիրակություն ձևավորելու և ուղղակի բանակցություններ վարելու միջոցով Ստամբուլի ու Աթենքի միջև ճգնաժամը հարթելու և թշնամական գործողությունների պոռթկումը կասեցնելու անհրաժեշտության շուրջ քննարկումների վերաբերյալ տեղեկություններով⁷⁶:

ԹՎԵՐԸ

Ջանազան թվեր են բերվում մահմեդական այն գաղթականների վերաբերյալ, որոնք Բալկանյան պատերազմներից հետո փախել կամ կամավոր կերպով հեռացել են թերակղզուց և գնացել Անատոլիա: Թվերի միջև երբեմն բավական նկատելի տարբերությունը բխում է հետազոտողների կողմից գործածված տարբեր ժամանակամիջոցների ընդգրկումից և այն հանգամանքից, որ, ճշգրիտ ցուցակների ու «չոր» փաստերի սակավության պատճառով, բոլոր այդ եզրակացությունները մեծ հաշվով հիմնված են մի շարք կռահումների ու գնահատականների վրա: Օսմանյան տվյալների վրա հիմնված որոշ աղբյուրներ հանգում են այն եզրակացության, որ պատերազմների ընթացքում մոտավորապես 113.000 մահմեդական է փախել Բալկաններից, մինչդեռ միևնույն ժամանակահատվածում կայսրություն ներգաղթած բոլոր մահմեդականների թիվը 413.922 է⁷⁷:

74 Bayar, Ben de Yazdim, h. 5, 1967.

75 Օսմանցիների դեմ պատերազմի մասին հույների առաջարկների և բալկանյան մյուս պետությունների պատասխանների համար տես Mourellos, "The 1914 Persecutions," 396-99:

76 Ամերիկյան աղբյուրներում այս հարցի արծարծման քննարկումների համար տես Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime":

77 Lades, The Exchange of Minorities, 15-16 և ծան. 11: Տվյալները համապատասխանում են Թոյնբիի բերած տվյալներին:

Թուրքական այլ աղբյուրներում փախստականների համար նշվում է 640.000 թիվը⁷⁸: Հունական աղբյուրները պնդում են, որ 1912-ից 1920 թվականների ընթացքում Հունաստանից հեռացել է 143.189 մահմեդական⁷⁹: Գերմանական աղբյուրները, հենվելով տեղական իշխանություններից ստացած վիճակագրական տվյալների վրա, պնդում են, որ Բալկանյան պատերազմների և 1914թ. ապրիլի միջև մոտ 430.000 մահմեդական է լքել թերակղզին⁸⁰: Բրիտանիայի հյուպատոսության 1914թ. հոկտեմբերի 16-ի զեկույցում նշվում է, որ բալկանյան հակամարտության սկզբից մինչև զեկույցի օրը Սալոնիկի նավահանգստից Անատոլիա ներգաղթած մահմեդականների թիվը մոտավորապես 250.000 է⁸¹: Այս հատվածի համար Թոյնբիի ավելի ճշգրիտ թվեր է բերում, որոնք, նրա հավաստմամբ, վերցված են ՅՆԲԳՎ-ից, և դրանք դասակարգում է ըստ տարիների: Համաձայն նրա դասակարգման, Բալկաններից 1912 և 1913 թթ. ընթացքում կայսրություն է եկել 177.352 գաղթական, 1914-1915 թթ.՝ 120.566, իսկ 1912-1920 թվականների ընթացքում՝ 413.922⁸²:

Միևնույն պատճառներով միմյանցից մեծապես տարբերվում են նաև Օսմանյան կայսրությունից Հունաստան գնացած հույն ուղղափառ քրիստոնյաների առնչությամբ բերվող թվերը: Այսպես, որոշ աղբյուրների գնահատմամբ, 1914թ. արևելյան Թրակիայից Հունաստան է մեկնել 115.000 հույն, իսկ 85.000 հույն տեղահանվել ու տարվել

78 Թուրքական աղբյուրների մեծ մասը 1878 թվականից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը բալկանյան գաղթականների թիվը նշում են 1.5 միլիոն, սակայն Երևելիների պալատի (իմա՝ օսմանյան սենատի) առջև 1916թ. մարտի 7-ի իր ելույթում ՅՆԿՎ-ի տնօրեն Շուքրու Քայան ասել է, որ պետությունը 1878-ից հետո եկած գաղթականների ճշգրիտ թիվը չունի: Նա նաև պնդել է, որ մոտ 250.000 մարդ է ներգաղթել կայսրություն: Քայայի բացատրության քննարկման ու գնահատականի և նրա տրամադրած թվերի մասին տեղեկությունները կարելի է գտնել հետևյալ տեղում. Dündar, İttihat ve Terakki'nin, 56-57, 215-17 և 262:

79 Mourellos, "The 1914 Persecutions," 392n15.

80 DE/PA-AA/R 13923, Սալոնիկում Գերմանիայի հյուպատոս դր. Շվյորբելի հեռագիրը Գերմանիայի կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1914թ. ապրիլի 4:

81 FO 371/1999, 48-3202, Ջեյմս Մորգանի զեկույցը, թվագրված 1914թ. հոկտեմբերի 16:

82 Arnold Toynbee, The Western Question in Greece and Turkey: A Study in the Contact of Civilization (New York, Howard Fertig, 1970), 138.

է Անատոլիայի խորքերը⁸³: Հունաստանի կառավարության պաշտոնական տվյալներով, 1914 թ. առաջին վեց ամսվա ընթացքում արևելյան Թրակիայից մոտավորապես 15.572 ընտանիք (60.926 մարդ) է վտարվել Հունաստան⁸⁴: Նույն այդ տվյալների համաձայն, արևմտյան Անատոլիայից Հունաստան գնացած հույների թիվն ամբողջ այդ տարվա ընթացքում եղել է մոտավորապես 150.000⁸⁵: Աթենքում ամերիկյան դեսպանի ավելի ուշ գրած (1930 թ.) մի զեկույցում նշվում է, որ մոտ 150.000-ից 200.000 հույն է ներգաղթել Հունաստան մինչև համաշխարհային պատերազմը⁸⁶, թեև այս տվյալները թվում են համեմատաբար պահպանողական: Այդ ժամանակ Օսմանյան պետությունում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի զեկույցում, որը հիմնված է Իզմիրում տեղակայված գանազան օտարերկրյա հյուպատոսների կատարած հետաքննությունների վրա, ասվում է, որ միայն 1914 թ. մայիսի 28-ից մինչև հունիսի 12-ը տարածաշրջանից հեռացել է մոտ 117.000 հույն⁸⁷:

Զինադադարի շրջանում Ստամբուլում Բրիտանիայի օկուպացիոն ուժերի հրամանատարության շնքում հաստատված Հայ-հունական միացյալ գրասենյակի հույն ներկայացուցիչ Թեոտակասը մի զեկույց էր կազմել, ուր պատերազմի ընթացքում միայն Թրակիայից վտարված հույների թիվը նշվում էր 240.000⁸⁸: Զինադադարի ժամա-

83 Lades, *The Exchange of Minorities*, 15–16.

84 Mourellos, "The 1914 Persecutions," 391–92.

85 Lades, *The Exchange of Minorities*, 16n11.

86 Դեսպան Սքինների 1930 թ. հունիսի 20-ով թվագրված նշումը հղված է հետևյալ տեղում. Ayhan Aktar, "Homogenizing the Nation; Turkifying the Economy: Turkish Experience of Population Exchange Reconsidered," in *Crossing the Aegean: An Appraisal of the 1923 Compulsory Exchange between Greece and Turkey*, ed. Renée Hirschon (New York and Oxford, Berghahn Books, 2003), 79–95:

87 NA/RG 59, 867.00/634, Letter from American ambassador in Constantinople, Morgenthau, to the State Department, dated 16 July 1914, in AGUS, Adalian, microfiche № 5 (վերջնական փաստաթուղթը) and № 6 (առաջին երկու փաստաթղթերը).

88 *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919–1922: The Armenian-Greek Section*, comp. Vartkes Yeghiayan (Glendale, CA, Center for Armenian Remembrance, 2007), 13. Այդ գրասենյակի և դրա գործունեության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տես Akçam, *İnsan Hakları, 444–46* և *A Shameful Act*, 290–91:

նակ ինչ-որ պահի թուրքական «Ալեմդար» օրաթերթը վերատպել է հունական մամուլի հաղորդումն այն մասին, որ փախստականների հարցով հետազոտություն է կատարվել, և որ այդ հետազոտությունը հույն փախստականների վերաբերյալ մի շարք վիճակագրական տվյալներ է պարունակում: Թուրքական թերթում ասվում էր, որ, համաձայն հունալեզու օրաթերթերի այդ հաղորդումների, վերջերս հաստատվոր մի հատոր է տպվել՝ «Աղետները, որոնց ենթարկվել են Թուրքիայի հույները»: Հպանցիկ պատմելով Ստամբուլի նվաճումից ի վեր հույների կրած հալածանքների ու հետապնդումների մասին գիրքը, մի շարք փաստաթղթեր ու վիճակագրական տվյալներ է ներկայացնում Օսմանյան երկրորդ սահմանադրական ժամանակահատվածից (1908 թ.) սկսած հույների դեմ գործադրված հալածանքների մասին: Այնտեղ նշվում է, որ միայն Բալկանյան պատերազմներից ի վեր 274.614 հույն է բռնի կերպով վտարվել տներից, նրանցից 116.438-ը Թրակիայից են եղել, իսկ մնացածը՝ Անատոլիայից, հատկապես Չեշմեի ու Բուշադասիի տարածքներից: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղահանվել է ևս 481.109 հույն՝ 129.727-ը Թրակիայից, մնացածն Անատոլիայից: Երիտթուրքերի վարչակարգի գոյության վերջին հինգ տարվա ընթացքում տեղահանված հույների թիվն ընդհանուր առմամբ կազմում է 755.823⁸⁹:

Թուրքական աղբյուրները բերում են մեծապես տարբերվող թվեր, որոնք տատանվում են կոպիտ չափազանցության և մեծ թերագնահատման միջև: Զելյալ Բայարն, օրինակ, նշում է, որ իբրև հետևանք «ոչ-թուրք (ժողովուրդների) խտության վերացման... ովքեր խմբվել էին ռազմավարական կետերում, մինչև պատերազմը միայն Իզմիրից ու դրա շրջակայքից մոտավորապես 130.000 հույն տեղահանվեց Հունաստան»⁹⁰: Սակայն մինևույն շրջանի տեղահանվածների համար Հալիլ Մենթեշեն բերում է 200.000 թիվը⁹¹: Այս երկու աղբյուրները վերաբերում են միայն Էզեյանի տարածքին: Օսմանյան Պատգամավորների պալատը 1919 թ. քննարկել է Թրակիայից հույների արտագաղթերի հարցը: Պալատի գնահատմամբ, այն հույների թիվը, որոնք 1913-ից 1918 թթ. ընթացքում կամավոր արտագաղթել են կամ վտարվել Թրակիայից, տատանվում է 300.000-ց մինչև 500.000-

89 Alemdar, 15 February 1919.

90 Bayar, *Ben de Yazdim*, vol. 5, 1967.

91 Menteşe, *Osmanlı Mebusan Meclisi Reisi*, 166.

ի միջև⁹²: Էշրեֆ Քուչուրաշին պնդում է, որ 1914 թվականին, միայն պատերազմի առաջին ամիսներին «Էգեյանի շրջանում, հատկապես ծովափի երկայնքում կենտրոնացած հույն և հայ ազգաբնակչության շարքերից» տեղահանվածների թիվը կազմել է 1.150.000 մարդ⁹³: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզի խաղաղության կոնֆերանսի ընթացքում Հունաստանի վարչապետ Վենիզելոսը պնդել է, որ պատերազմի ընթացքում սպանվել է մոտ 300.000 հույն, իսկ ևս 450.000 հույն ապաստան է գտել Հունաստանում⁹⁴:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱԼՔ

Այստեղ, թերևս, հարկ է նշել քննարկվող ժամանակաշրջանում բնակչության շարժերի վերաբերյալ թուրք և հույն հետազոտողների միջև գոյություն ունեցող փոքրիկ, սակայն կարևոր մի ընդհանուր առանձնահատկություն: Երկու կողմերի հետազոտությունները հակված են իրենց սեփական երկիրը լքածներին բնութագրելու՝ իբրև կամավոր արտագաղթողներ, մինչդեռ մեկ այլ երկրում իրենց կրոնակիցները ներկայացվում են՝ իբրև բռնի վտարվածներ: Հույն գիտնականները խոսում են բալկանյան մահմեդականներին Անատոլիա ներգաղթել հորդորելու օսմանյան լայնածավալ քարոզարշավի մասին: Հետազոտողները պնդում են, որ այդ քարոզչության ուղղակի հետևանքով են մեծ թվով հունաստանցի մահմեդականներ մեկնել Օսմանյան կայսրություն⁹⁵:

Հունաստանում Գերմանիայի դեսպան՝ Ալբերտ ֆոն Քուադտը Աթենքից ուղարկած 1914 թ. մարտի գեկույցի մեջ իր վերադասներին պատմում է, որ Հունաստանի արտաքին գործերի նախարար Ռեպուլիսը (որը միաժամանակ գործում էր նաև իբրև Մակեդոնիայի գլխավոր նահանգապետ) իրեն տեղեկացրել է, որ այդ տարածքի մահմե-

դականները ցանկանում են հեռանալ, և, չնայած դա կանխելու ուղղությամբ ձեռնարկված հսկայական քայլերին, Հունաստանի կառավարությունն ի վերջո չի կարողացել նրանց համոզել՝ մնալ⁹⁶: Տարածաշրջանում ծառայող Գերմանիայի բազմաթիվ հյուպատոսներ իրենց գեկույցների մեջ ընդգրկել են հունական մամուլում հաճախակի կրկնվող այն պնդումները, որ երկրի մահմեդականներն իրենց կամքով են հեռանում, սակայն անպայման ավելացրել են, որ այդ լուրերն ամբողջովին կեղծ են: Այսպես, Մալոնիկից ուղարկված 1914 թ. մարտի 25-ի գեկույցում նշվում է, որ «Թուրքիայի բոլոր քաղաքայինները քարոզչություն են տարածում՝ իրենց բարեկամ մահմեդականներին՝ արտագաղթելուց տարահամոզելու համար», և տեղեկացվում, որ Թուրքիայի նորանշանակ հյուպատոսն այս մասին խոսել է իր հետ⁹⁷: Ըստ հյուպատոսի, միակ պատճառը, որից ելնելով թուրքերը ցանկանում են հեռանալ այդ շրջանից, իրենց նկատմամբ հունական կառավարության վարած քաղաքականությունն է: Բացի այդ, Անատոլիայից ժամանող հույները տեղական բնակչությանը գրգռում են թուրքերի դեմ⁹⁸:

Միևնույն իրավիճակն է իշխում թուրքական աշխատություններում: Դրանցում հաճախ հանդիպում են այնպիսի պնդումներ, որ թե՛ Աթենքը և թե՛ Ստամբուլի հունական պատրիարքարանը լայնածավալ քարոզչություն են իրականացրել օսմանյան հույների շարքերում, և որ վերջիններս կամավոր կերպով Հունաստան էին մեկնում հոծ շարքերով: Իրականությունը, սակայն, լրիվ հակառակն էր: Հունաստանի պաշտոնյաները օսմանյան հույներին կոչ էին անում «չքել իրենց հայրենիքը» և խրախուսում էին նրանց մնալու այնտեղ, ուր գտնվում էին⁹⁹: Պատրիարքարանը նույնիսկ գնացել է այն քայլին, որ այդ խնդրով զբաղվելու համար հատուկ հանձնաժողով է հիմնել¹⁰⁰:

92 Meclis-i Mebusan Zabıt Ceridesi (այսուհետև՝ MMZC), Period 3, Assembly Year 5, vol. 1 (Ankara, TMMM Basımevi, 1992), 285, 287.

93 Kutay, Birinci Dünya Harbinde, 6. Ձեյալ Բայարը, որը մանրամասնորեն մեջբերում է Քուչուրաշու հուշերը, յուրաքանչյուր քաղաքի համար թվեր է ներկայացնում: Ավելի վաղ հղված թվերը պարզապես նրա տրամադրած առանձին թվերի գումարն են (Bayar, Ben de Yazdim, h. 5, 1967):

94 Հղված Doğan Avcioğlu, Milli Kurtuluş Tarihi, h. 3 (Istanbul, Tekin Yayınevi, 1987), 1138:

95 Lades, The Exchange of Minorities, 15–16; Kontogiorgi, “Forced Migration,” 21.

96 DE/PA-AA/R 7356, Աթենքում Գերմանիայի դեսպան Ա. Քուադտի գեկույցը, թվագրված 1914 թ. մարտի 20:

97 DE/PA-AA/R 7442, Մալոնիկում Գերմանիայի հյուպատոս դր. Շվյորբելի գեկույցը, թվագրված 1914 թ. մարտի 25:

98 DE/PA-AA/R 7336, Մալոնիկում Գերմանիայի հյուպատոս դր. Շվյորբելի գեկույցը, թվագրված 1914 թ. մարտի 30:

99 Kontogiorgi, “Forced Migration,” 23.

100 Archimandrite Alexander Papadopoulos, Persecution of the Greeks in Turkey, 91.

Օսմանյան Ծածկագրերի վարչության փաստերն լիովի հաստատում են այդ պնդումը: Ուղղափառ եկեղեցականները օսմանյան տեղական պաշտոնյաներին խնդրել են կանխել հույների արտաքսումը՝ բացատրելով, որ այդ հպատակները կայսրությունից հեռանալու ցանկություն չունեն, բայց հնարավոր եղած բոլոր միջոցներով նրանց ստիպել են երկրից դուրս գալ: Օսմանյան պաշտոնյաներն իրենց կողմից Բարձր դռանն են ուղարկել այսպիսի խնդրանքներ. «Գալիպոլիի շրջանից, Հարալամբոյի որդի Յանակիի կողմից ստորագրված, Մյուրեֆթե մարզի Ուլմաքներե գյուղի բնակչության անունից ուղարկված հայցագիր, որով փորձ է արվում հորդորով ու հրահանգով հետ կանգնեցնել նրանց, ովքեր դեռևս չեն արտագաղթել, թեև նրանք վաղուց են հայտնել Հունաստան արտագաղթելու իրենց ցանկությունը», կամ «Գավառ[ապետի գրասենյակ] ուղարկված և Գանաժորայի մետրոպոլիտեն Տիմոտիոյի ստորագրած հեռագիրը, [որի մեջ նշվում է], որ Ուլմաքներե գյուղի անունից վերջերս ոչ մեկին թույլտվություն չի տրվել արտագաղթելու խնդրանքները բավարարել, և, ամեն դեպքում, այս գյուղում մեկ մարդ իսկ չկա, որը մտածի արտագաղթելու մասին»¹⁰¹: Իբրև ևս մեկ օրինակ կարելի է բերել Էդիրնեի կրոնական դատավոր՝ (qadi) Սուլեյման էֆենդու 1914 թ. մայիսի 31-ի հեռագիրը (այդ ժամանակ Ստամբուլում գտնվող) գավառապետին: Դրա մեջ դատավորը տեղեկացնում է հույն բնակիչներին իրենց տեղերում մնալու ուղղությամբ շրջանային պատրիարքարանի գործիչների ձեռնարկած քարոզչական աշխատանքի մասին¹⁰²:

Անվտանգության վարչության Երրորդ բաժանմունքը ևս պնդում էր, որ Անատոլիայի այն հույները, որոնք ստիպված են եղել փախչելու Էգեյանի կղզիներից, Միդիլի (Միթիլենե, Լեսբոս) կղզուց մի հուշագիր են ուղարկել Հունաստանի Պատգամավորների պալատ, որի մեջ փախստականները պնդում են, որ «Երիտթուրքերի կառավարության կողմից Թրակիան ու Անատոլիան իրենց հույն ազգաբնակչությունից դատարկելը Հունաստանի պատմությանը հասցրած անտա-

101 BOA/DH.EUM, 3. Şube, 1/14, Էդիրնեի նահանգապետ Աղիլ բեյի հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. օգոստոսի 2:

102 BOA/DH.ŞFR, 41/125, Էդիրնեի նահանգի դատավորի հեռագիրը Էդիրնեի գավառապետին (որն այդ ժամանակ գտնվում էր Ստամբուլում), թվագրված 1914 թ. մայիսի 31:

նեղի և անուղղելի անարգանք է», և պահանջում են պաշտպանել Անատոլիայի հույներին¹⁰³:

Հույների մեջ կային մարդիկ, որոնք կողմ էին, որ հույները կամավոր դուրս գային Անատոլիայից ու Թրակիայից, սակայն նրանց մեծ մասն ալբանացիներ էին, որոնք հունարեն գիտեին, և Ստամբուլի երիտթուրք կառավարության կողմից ուղարկվել էին հունական բնակավայրերը: Տեղ հասնելուց հետո նրանք պետք է ձևացնեին, թե իրենց Հունաստանից են ուղարկել, և տեղացիներին համոզեին արտագաղթել այնտեղ¹⁰⁴: Բացի այդ, օսմանյան իշխանությունները սատարում էին օտարերկրյա տարբեր դեսպանությունների կողմից ծագումով իրենց հայրենակից օսմանյան հպատակներին «հայրենիք» վերադառնալ խրախուսելու աշխատանքները: 1914 թ. մարտին Բալիքեսիր ուղարկված մի հեռագրում հաղորդվում է, որ Ստամբուլում Բուլղարիայի դեսպանությունից Նեզլակո Չոլակով էֆենդի անունով մի պաշտոնյա է ժամանել տարածաշրջան՝ Բանդիրմայի, Բալյայի և Քարեսիի (Բալիքեսիր) որոշ այլ շրջանների բուլղարացիներին համոզելու համար տեղափոխվել Բուլղարիա: Դեսպանության այդ աշխատակցին մի փաստաթուղթ է տրվել «քաղաքացիական ծառայության անձնակազմի կողմից՝ այդ ջանքերը դյուրացնելու նպատակով»: Այնուհետև հեռագրում պահանջվում է, որ նրա յուրաքանչյուր քայլ ու գործողություն «հետաքննեն և ուշադիր հետևեն՝ առանց նրա գիտության, և եթե նկատվի որևէ բան, որ հակասում է պետության ու երկրի շահերին, անմիջապես [զեկուցեն]»¹⁰⁵:

Նախաձեռնություններից մեկն էլ քարոյալներից ստորագրված ցուցմունքներ վերցնելն էր, որոնց մեջ ասվում էր, որ նրանք հեռանում են կամավոր և իրենց ունեցվածքը նվիրաբերում օսմանյան զանազան հաստատությունների¹⁰⁶: Որոշ շրջաններում հույն բնակիչները,

103 BOA/DH.EUM, 3. Şube, 2/21 (չթվագրված. միևնույն թղթապատակի նման փաստաթղթերից կարելի է ենթադրել, որ դա Արտաքին գործերի նախարարության գրածն է Ներքին գործերի նախարարության երրորդ բաժանմունքին, հավանաբար թվագրված 1914 թ. հոկտեմբերի 30):

104 Archimandrite Alexander Papadopoulos, Persecution of the Greeks in Turkey, 83.

105 BOA/DH.ŞFR, 39/31, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914 թ. մարտի 19:

106 Ընդհանուր առմամբ ենթադրվում է, որ բոլոր այն շրջաններում, որտեղ կատարվել են այդ գործողությունները, դրանք ընթացել են միևնույն ձևով

այդ իրադրությունից բողոքելով, գրել են ուղղակի Հունաստանի թագավորին¹⁰⁷: 1918 թ. զինադադարից հետո այդ հարցը բարձրացվել է օսմանյան խորհրդարանում, որտեղ մի շարք հույն պատգամավորներ տեղեկություններ են հաղորդել և պատմել իրենց աչքի տեսածը: Էֆկալիդիս էֆենդին, օրինակ, վկայություն է տվել բռնի արտագաղթի քաղաքականության մասին, որը նա նկարագրել է իբրև «ոչնչացման ու բնաջնջման քաղաքականություն»: «Կասկած կա, որ Վենիզելոսի գործակալների կողմից որոշ մասնաճյուղեր են հաստատվել այդտեղ, և որոշ մարդիկ հրապուրվել են այդ գործակալների բառերով, և... այդ մարդկանց կողմից ազատման փաստաթղթեր են ստացվել, որոնց մեջ նշվում է, որ իրենք դժգոհ են վատ կառավարումից, և ցանկություն են հայտնում գնալու Հունաստան. ապա նրանք, իրենց սեփական կամքով ու գիտությամբ, գնացին չինացած տեղեր»¹⁰⁸: Էֆկալիդիս էֆենդին նույնպես պատմել է, որ երբ ինքը դիմել է Թալեաթ փաշային, ներքին գործերի նախարարն իրեն հեռագրեր է ցույց տվել, որոնք այսպիսի հայտարարություններ են պարունակել. «Մենք հիմնավորապես դժգոհ ենք Թուրքիայից: Մենք Վենիզելոսի կուսակցության անդամներ ենք: Մենք գնալու ենք Հունաստան... ինչո՞ւ մեզ թույլտվություն չեք տալիս»¹⁰⁹:

Ինչպես կարելի է հասկանալ այս աղբյուրներից, ճշմարտությունն այն է, որ թե՛ քրիստոնյաների հողերում բնակվող մահմեդականները և թե՛ Օսմանյան կայսրության քրիստոնյաները հիմնականում ցանկանում էին մնալ իրենց տեղերում, և որ այդ ցանկությունը հիմնականում սատարվում էր պետությունների օսմանյան և քրիստոնյա կառավարությունների կողմից, ուր ապագա արտագաղթողները պետք է գնային: Ըստ էության, սա այդ բնակչությունների կողմից խիստ խելամիտ ընտրություն էր, սակայն փոխադարձ թշնամանքով ու ան-

(Archimandrite Alexander Papadopoulos, Persecution of the Greeks in Turkey, 86, 90, 95):

107 Իզմիրի շրջանում նման գործողությունների դեմ հույների բողոքներին վերաբերող փաստաթղթի համար, որոնք Հունաստանի թագավորի կողմից Բարձր դռանն են ուղարկվել օսմանյան Արտաքին գործերի նախարարության միջոցով, տես BOA/ DH.SFR, 42/57, Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914 թ. հունիսի 17:

108 MMZC, 1991, Period 3, Assembly Year 5, vol. 1, 24 December 1918, Session 24, 288.

109 Նույն տեղում:

վստահությամբ լցված երկու պետություններում՝ իբրև կրոնական փոքրամասնություններ, նրանց սոսկ ներկայությունը պատճառ էր հառնում, որ յուրաքանչյուրի կառավարությունը նրանց դիտի իբրև մշտական պատրվակ, որ մյուս երկիրը միջամտի իրենց ներքին գործերին և որոշակի իրավունքներ ու հովանավորություն պահանջի¹¹⁰:

ՀՈՒՅՆԵՐԻ 1913-14 ԹԹ. ԱՐՏԱՔՍՈՒՄՆԵՐԸ.

1915-17 ԹԹ. ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄ

1914 թ. գարնանը արևմտյան Անատոլիայի ոչ-մահմեդականների դեմ սկսված «զտման գործողությունները» և հատկապես օսմանյան հույների արտաքսումը մեծ ընդհանրություն ունեին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անատոլիայի հայերի հետագա «զտման» հետ: Թեև առայժմ ուղղակի ապացույց չկա, որ զտման այդ առանձին գործողությունները մեկ համընդգրկուն ծրագրի արտացոլումն են, կարելի է առնվազն վստահորեն մատնանշել այդ երկուսի միջև առկա հստակ շարունակականությունը՝ թե՛ կազմակերպման հիմնական գծերի և թե՛ ներգրավված անձանց առումով: Այն քաղաքականությունը, որ 1913 և 1914 թթ. գործի էր դրվել հույների դեմ, նախանշում էր հայերի տեղահանությունները պատերազմական ժամանակաշրջանում¹¹¹:

110 Այնպես Արթարը օսմանյան (իսկ հետագայում թուրքական) կառավարության կողմից տասնամյակներով իրականացրած թրքացման քաղաքականության վերաբերյալ իր աշխատանքում, իբրև իր այն պնդման հիմք, թե Չեչենից ու դրա շրջակայքից հույների արտագաղթը հիմնականում կամավոր է եղել, օգտագործում է Հիլմի Ուրանի հուշերը, ով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Չեչենում ծառայել է իբրև մարզպետ (կայմակամ): Ըստ Արթարի, «քանի որ նրանց իրավական կարգավիճակը հստակ չէր, Հունաստանի կառավարությունը Անատոլիայի հույն բնակիչներին խրախուսում էր [լքել մայր- ցամաքը և] հաստատվել [հունական Էգեյանի] կղզիներում» (Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları [İstanbul, İletişim Yayınları, 2000], 28): Ինչևէ, որևէ փաստաթուղթ երևան չի եկել, որը հաստատեր այն պնդումը, թե Հունաստանի կառավարությունը Չեչենի հույներին խրախուսել է կամավոր կերպով հեռանալ: Ընդհակառակը, ինչպես ցույց տրվեց, վկայություններ կան այն մասին, որ արտագաղթը հիմնականում կատարվել է բռնությամբ, և որ կղզիներ փախչող հույները տենդագին կերպով բողոքում էին իրենց վտարման դեմ: Այս փաստի լուսի ներքո Հիլմի Ուրանի ներկայացրած տեղեկությանը հարկավոր է մոտենալ վերապահությամբ:

111 Այստեղ ես սոսկ մի քանի սահմանափակ դիտարկում կանեմ այդ հարցի մասին: Իրականում, օսմանյան կառավարության հակահույն ու հակահայ

Այդ ժամանակաշրջանի մասին իր հուշերում Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն պատմում է, որ Ստամբուլի ու տիկանության կոմիսար Բեդրի բեյը իր (Մորգենթաունի) քարտուղարներից մեկին պատմել է, որ «թուրքերը հույներին այնպիսի հաջողությամբ են վտարել, որ որոշել են միևնույն մեթոդը կիրառել կայսրության բոլոր մյուս ազգերի նկատմամբ»¹¹²:

Մորգենթաուն 1915 թ. նոյեմբերի 18-ի դեսպանության իր զեկույցի մեջ այդ զուգահեռն է անցկացնում՝ շեշտելով, որ 1914 թ. մայիսին ու հունիսին մեծ տերությունների աչքի առջև 100.000-150.000 մարդու բարենհաջող արտաքսումը մեծ խրախուսանք եղավ պատերազմի ժամանակ հայերի տեղահանության համար¹¹³:

Ինչ վերաբերում է գտման երկու արշավանքների ընթացքում գործող կադրերի շարունակականությանը, իբրև հիմնական օրինակ առանձնանում է Շուրբու Քայայի կերպարը: Ինչպես տեսանք, ավելի վաղ, Քայան աշխատել էր այն հանձնախմբում, որը ղեկավարում էր Բալկանյան պատերազմներից հետո թուրք-բուլղարացի բնակիչների փոխանակումը: Այնուհետև նա աշխատել է Թուրք-հունական հանձնաժողովում, որը նույնպես նման խնդիր էր լուծում, իսկ հետո, իբրև Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի գլխավոր տնօրեն, դարձել է հայերի տեղահանությունների գլխավոր կազմակերպիչներից մեկը:

Այս գործում մեկ այլ կարևոր անձնավորություն է եղել ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ դր. Նազիմը: Իբրև ՀԿ ղեկավար անդամներից մեկը՝ դր. Նազիմը հայերի տեղահանությունների ու սպանությունների կենտրոնական ծրագրողներից մեկն էր: Ավելի վաղ նա օգնել էր մշակելու Իզմիրի շրջանում 1914 թ. ամռան հակահույն գործողությունների նախագիծը: Իզմիրի ամերիկյան հյուպատոսի զեկույցներում նա նշվում է՝ իբրև շրջանի «խառնակիչ»¹¹⁴: Իզ-

քաղաքականության մեջ ներգրավված անձնակազմի շարունակականության աստիճանը կարևոր հարց է, որը ծարավի է առանձին ուսումնասիրության:

112 Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story* (Garden City, NY, Doubleday, Page, 1918), 323.

113 NA/RG 59, 867.00/798.5, Դեսպան Մորգենթաունի զեկույցը, թվագրված 1915 թ. նոյեմբերի 18, հետևյալ տեղում. *United States Official Records*, ed. Sarafian, 372:

114 NA/RG 59, 867.00/636, 3-4, Իզմիրում ամերիկյան փոխհյուպատոս Վ. Հ.

միրում այդ ժամանակ Հոլանդիայի հյուպատոս Ալֆրեդ վան դեր Ջիի համաձայն, «խաղաղ ու աշխատասեր» հույների դեմ «լայնամասշտաբ, համակարգված ու դաժան պատժիչ» գործողությունները կարգադրել էր կառավարությունը, և ղեկավարել էր դր. Նազիմը¹¹⁵:

Այդ երկու գործողությունների միջև երրորդ կապող օղակը, հայերի տեղահանությունների ժամանակ, Դիյարբեքիի նահանգապետը եղած դր. Ռեշիդն էր: Բալիքեսիի շրջանից 1914 թ. գարնանն ու ամռանը հույների տեղահանման ու վտարման գործում ցուցաբերած իր օգնությամբ դառնալով նշանավոր՝ դր. Ռեշիդը նշանակվել է Մոսուլի նահանգապետ, ապա տեղափոխվել Դիյարբեքի, ուր նա չերքեզ ժանդարմների գորախումբ է բերել, որոնք տեղահանությունների ընթացքում սերտորեն համագործակցել են նրա հետ¹¹⁶:

Թե՛ հույների և թե՛ հայերի դեպքերում վտարումներն ու տեղահանություններն ակնհայտորեն իրականացվում էին Օսմանյան կայսրության բնակչության հանդեպ վարվող քաղաքականության հովանու ներքո, սակայն, պահպանելով երկճյուղ մեխանիզմը, անպաշտոն ծրագիր էր իրականացվում սովերային մի կազմակերպության կողմից, որը հարձակվում ու ահաբեկչության էր ենթարկում օսմանյան քրիստոնյաներին: Հունական ու հայկական գործողությունների միջև ամենացնցող զուգահեռներից է եղել հատուկ գործողությունների միավորումների ստեղծումը և զինվորական տարիքի տղամարդկանց զինվորագրումը աշխատանքային գումարտակներում:

Այդ նմանությունները չեն վրիպել ո՛չ Մորգենթաունի, ո՛չ Թոյնթիի ուշադրությունից: Այդ ամբողջ ժամանակամիջոցում Ամերիկայի դեսպանն իր զեկույցներում ուշադրություն է հրավիրել այն մեթոդների միջև նմանության վրա, որոնք օսմանյան կառավարությունը 1913 և 1914 թթ. գործածել էր հույներին արտաքսելու համար, իսկ հաջորդ տարի գործածում էր հայերի դեմ.

Անդերսոնի զեկույցը, թվագրված 1914 թ. հուլիսի 18, հետևյալ տեղում. AGUS, Adalian, microfiche № 6:

115 Matthias Bjørnlund, "The 1914 Cleansing of Aegean Greeks as a Case of Violent Turkification," *Journal of Genocide Research* 1, № 2 (2006), 43.

116 «Այն ընթացքում, երբ դր. Ռեշիդ բեյը Քարեսիի [Բալիքեսիի] գավառապետ էր, ուր գտնվում էր հուլիսի 23-ից ի վեր, մեծ նշանակություն էր տալիս շրջանի հույներին արտագաղթել ստիպելուն և հանրային աշխատանքի ծառայություններին». Nejdet Bilgi, Dr. Mehmed Resid Şahingiray Hayati ve Hatıraları (İzmir, Akademi Kitabevi, 1997), 21–22, 87–89:

Հույների դեմ թուրքերը գրեթե նույնությամբ որդեգրել էին այն միևնույն ընթացակարգը, ինչ որդեգրել են հայերի դեմ: Նրանք սկսել էին հույներին օսմանյան բանակ մտցնելով և ապա նրանց աշխատանքային գումարտակներ տեղափոխելով՝ նրանց գործածելով Կովկասում և գործողությունների այլ թատերաբեմերում ճանապարհներ կառուցելու նպատակով: Հույն զինվորները, ճիշտ ինչպես հայերը, հազարներով մահացան ցրտից, սովից և այլ զրկանքներից... Ամենուր խմբերով հույներ էին հավաքված և, թուրք ժանդարմների այսպես կոչված պահպանության տակ, հիմնականում ոտքով տեղափոխվում էին երկրի խորքերը¹¹⁷:

Այդ երկու գործողությունների համակարգված ու կազմակերպված բնույթի վերաբերյալ նման դիտարկումներ է արել նաև Առնոլդ Թոյնբին. «Եվ այսպիսով, Բալկանյան պատերազմները զոհերի երկու բերք ունեին. առաջինը Ռուսելիայի թուրքերն էին մի կողմից, իսկ... Անատոլիայի հույները՝ մյուս կողմից»: Այնուհետև ավելացրել է.

Հույների ամբողջական համայնքներ էին կտրվում իրենց տներից ահաբեկչության միջոցով, նրանց տներն ու հողերը և հաճախ նրանց շարժական գույքը բռնագրավվում էին, իսկ անհատներն սպանվում էին այդ ընթացքում... Գործընթացը պարունակում է համակարգված լինելու տվյալներ: Ահաբեկչությունը գրոհում էր մի շրջանից մյուսը և իրականացվում «chetté» հրոսակախմբերի կողմից՝ հավաքագրված Ռուսելիայի փախստականներից, ինչպես նաև տեղական բնակչությունից և անվանապես իբրև համալրում կցված օսմանյան կանտնավոր ժանդարմներիային... թուրք քաղաքական «չեթներն» իրենց առաջին գործն արեցին 1914 թվականին արևմտյան ծովափին... իրականացրեցին Միություն և առաջադիմություն կոմիտեի կառավարության հայերի դեմ ուղղված ծրագրերը¹¹⁸:

117 Morgenthau, Ambassador Morgenthau's Story, 324–25. Մորգենթաուն նաև նշել է, որ, ի տարբերություն հայերի, հույներն ընդհանուր կոտորածի չեն ենթարկվել:

118 Toynbee, The Western Question in Greece and Turkey, 139, 280.

4

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՕՍՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության մատչելի փաստաթղթերի ուսումնասիրությունից նկատվում է, որ Օսմանյան կայսրության հույների դեմ իրականացրած քաղաքականությունը կարևոր փոփոխություն է կրել 1914 թ. նոյեմբերին, երբ դադարեցվել են հույների նկատմամբ համատարած բռնությունն ու նրանց հարկադիր վտարումը: Պատերազմի տարիներին հույների հանդեպ քաղաքականությունն այդուհետև սահմանափակվել է ծովափնյա շրջաններում ապրողների մի մասին՝ ռազմական նկատառումներով երկրի խորքերն ուղարկելով: Այդ գործընթացը, կապվելով 1916 թ. վերջերին ու 1917 թվականի ընթացքում Ռուսաստանի ռազմական հաջողությունների հետ, իրականացվել է համակարգված ձևով՝ հատկապես Սև ծովի տարածքում: Որոշ վայրերում նկատվել են հույների կոտորածներ, սակայն ընդհանուր առմամբ հույն ազգաբնակչությունը զերծ է մնացել հայերի նկատմամբ կիրառված տեղահանությունից ու բնաջնջումից:

ՍԱՀՄԱՆԱՓՈՎԵԼՈՎ ԲԱԿԱՆՆԵՐԻՑ ՍԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ

Հույների վտարումը Հունաստան պատերազմի պատճառով փոխված միակ երևույթը չէր: Օսմանյան կառավարությունն այդ ժամանակ փորձել է նաև սահմանափակել Բալկաններից մահմեդականների հոսքը՝ ապօրինի դարձնելով ներգաղթը: Դրա մի օրինակ է Բուլղարիայից ներգաղթածների դեպքը: 1916 թվականին Էդիրնեի նահանգապետը հեռագրով նախազգուշացվել է, որ «առանց օսմանյան կառավարության [նախապես] համաձայնության չընդունել այն գաղթականներին, որոնց ուղարկել է Բուլղարիայի կառավարությունը»:

նը»¹, իսկ տասն օր անց նահանգապետին հրահանգ է ուղարկվել, որ նման հնարավոր գաղթականներին պետք է «Բուլղարիայի սահմանից հետ նետել»²:

Սահմանային միևնույն նահանգն ուղարկած ևս մի քանի հեռագրից երևում է, որ երբեմն բացառություններ լինում էին: 1916 թ. հուլիսի 30-ի մի հեռագրում խոսվում է այն մասին, որ «հանուն պետության համբավի, առաջվա պես կրկին ընդունել մահմեդական գաղթականներին, որոնք, որոշ վաղեմի քաղաքական ու տեղական պատճառներով, ապաստան են որոնել [այստեղ]», իսկ այնուհետև, գաղթականների որոշակի խմբի երկիր մուտք գործել թույլատրելով հանդերձ, հստակորեն նշվում է, որ որոշ գաղթականներ ցանկալի չեն. «Անհրաժեշտ է, որ եկող այն փախստականներին, որոնց կառավարությունը չի արտոնել անցնել սահմանի դարպասները, թույլ չտրվի մուտք գործել»: Այդպես նաև օգոստոսի 3-ի մի հեռագրում շատ ավելի խստիվ պարզաբանվում է, որ ձեռքերին փաստաթղթեր ունեցող արտոնված գաղթականներին պետք է ընդունել, իսկ նրանց, ովքեր նման փաստաթղթեր չունեն, պետք է արգելել. «Թեև թույլատրվում է ընդունել այն գաղթականներին, որոնք Բուլղարիայից դուրս են եկել՝ ունենալով օսմանյան հյուպատոսի կամ այլ պաշտոնյայի կողմից ստորագրված փաստաթղթեր, հրամայված է, որ նրանց, ովքեր նման փաստաթղթեր չունեն, բոլոր դեպքերում պետք է մերժվի մուտք գործել օսմանյան տիրույթներ»³:

Մահմեդական գաղթականներին ընդունելու հիմնական չափանիշն այն էր, թե նրանք ծագումով թուրք էին, թե՛ ոչ: Ինչպես օգոստոսի 6-ին էդիրնե ուղարկված մեկ այլ հեռագրում է կարգադրվում, «սահմանի մոտ սպասող [հնարավոր] գաղթականներին ոչ մի դեպքում չպետք է թույլ տրվի մուտք գործել երկիր, սակայն փախածներից նրանք, ովքեր թուրք են, չպետք է հետ վերադարձվեն, բայց ոչ մի

1 BOA/DH.ŞFR, №66/15, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 18:

2 BOA/DH.ŞFR, №66/104, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 28:

3 BOA/DH.ŞFR, №66/130, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 3:

գնչուի չպետք է թույլատրվի մտնել [երկիր]»⁴: Սակայն միևնույն օրն ուղարկված մեկ այլ հեռագրի մեջ ավելացված է, որ բացառություններ կարելի է անել մեծ դժվարությամբ՝ նույնիսկ թուրքերի նկատմամբ: Այնուհետև պահանջվում է. «Ինչ վերաբերում է երեկվա հեռագրում նշված գաղթականներին, առանց արտոնության երկիր մուտք գործել հաջողացրածներից միայն թուրքերին կարելի է ներս թողնել, և այն էլ՝ մեծ դժվարությամբ: Մյուսներից ոչ ոքի չի կարելի որևէ կերպ թույլատրել ներս մտնել»⁵:

1916 թ. օգոստոսի 10-ի մեկ այլ հեռագրում ևս կրկնվում է, որ ընդունելու սկզբունքը վերաբերում է միայն մեկ բացառիկ դեպքի, և ընդհանուր քաղաքականություն չէ. «Բոլոր գաղթականների ընդունումը կատարվել է... մեկ պայմանով, որ բուլղարացի պաշտոնյաներին ասվի, որ սրանից հետո ոչ մի նոր գաղթական չի ընդունվելու»⁶:

Որոշ իրադրություններում գաղթականների որոշ խմբեր, ամեն դեպքում, ընդունվում էին: 1916 թ. սեպտեմբերի 23-ի մի հեռագրում պահանջվում է, որ, «քանի որ Մոֆիայի դեսպանատնից հայտնել են, որ ֆրանսիացիների ու բրիտանացիների կողմից նվաճված Գևգիլիից ու Պորոյից 129 գաղթական է ընդունվելու, սահմանն անցնել պետք է թույլատրվի միայն այդ անձանց»⁷: Մի խոսքով, կառավարությունը հիմնականում դադարեցրել էր Թրակիայից եկող գաղթականների ընդունումը, բացառություններ կատարվել են միան ծագումով թուրք գաղթականների համար, այն էլ՝ միայն հատուկ դեպքերում:

4 BOA/DH.ŞFR, №66/147, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 6:

5 BOA/DH.ŞFR, №66/157, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 6:

6 BOA/DH.ŞFR, №66/168, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 10:

7 BOA/DH.ŞFR, №68/92, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 23:

ՀՈՒՅՆԵՐԻ ՀԱՆԴԵՂ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՏԱՌՆԵՐԸ

Ճիշտ այն ժամանակ, երբ Բալկաններից գաղթականների հոսքը հասել էր նվազագույնի, օսմանյան կառավարությունը հրաժարվել է հույն ուղղափառ քրիստոնյաներին Հունաստան արտաքսելու իր քաղաքականությունից: Ուղղության այս փոփոխությունը պայմանավորված էր երկու մեծ գործոնով: Առաջինն այն էր, որ Աթենքը, Աստանտի տերություններին միանալու փոխարեն, որոշել էր պատերազմի ընթացքում մնալ չեզոք: Ակնկալելով Կենտրոնական տերությունների հետ միանալու հնարավորությունը՝ Բեռլինը պահանջել էր, որ օսմանյան կառավարությունն ըստ այդմ փոխեր իր քաղաքականությունը: Երկրորդ գործոնն այն էր, որ Հունաստանը հիմնականում զերծ էր մնացել իր մահմեդական ազգաբնակչության նկատմամբ նման գործողություններ ձեռնարկելուց: Փորձելով Հունաստանին համոզել անցնել Կենտրոնական տերությունների կողմը՝ Գերմանիան չէր ցանկանում այդ հնարավորությունը վտանգել՝ իր թուրք դաշնակցի կողմից օսմանյան հույների հանդեպ վատ վերաբերմունքի պատճառով: Ուստիև, պատերազմի առաջին իսկ օրերից, այդ հարցով քննարկումներ էին անցկացվել Բեռլինի ու երիտթուրք ղեկավարների միջև, և վերջիններս որոշակի խոստումներ էին տվել:

Ստամբուլում Գերմանիայի դեսպանության նավատորմային կցորդ և պատերազմի նախարար Էնվերի մտերիմ ընկեր լեյտենանտ Հանս Հումանը 1914թ. նոյեմբերի 1-ին զեկուցել է, որ Վենիզելոսը Աթենքում Գերմանիայի դեսպանին խոստացել է, որ Թուրքիայի և Աստանտի պետությունների միջև պատերազմի դեպքում Հունաստանն անխոս «չեզոք կմնա»: Հունաստանի վարչապետի խոստումը պայմանավորված էր միայն երկու հանգամանքով. Թուրքիան Էգեյանի ափի հունական կղզիների նկատմամբ սադրիչ քայլեր չպետք է կատարեր, և պետք է դադարեցվեր օսմանյան հույների տեղահանությունը⁸: Տասնվեց օր հետո գրած իր հաջորդ զեկույցի մեջ Հումանն ասում է, որ Թալեաթ փաշան իրեն անձնապես խոստացել է, որ այդուհետև օսմանյան հույների հետ կվարվեն մեծագույն հանդուր-

8 Ernst Jäckh Papers, Manuscript and Archival Collection, Yale University Library Papers, խումբ № 467, տուփ 1, գործ 17, Ստամբուլի դեսպանատան զինվորական կցորդ Հանս Հումանի զեկույցը, թվագրված 1914թ. նոյեմբերի 1:

ժողականությանը ու զսպվածությանը, և որ նա պետական բոլոր պաշտոնյաներին ու զերատեսչություններին կարգադրել է վերջ տալ նրանց հանդեպ բոլոր բռնություններին: Հումանն ավելացնում է, որ «հունական ազդեցիկ շրջանակներում կառավարության այդ մոտեցման մասին խիստ դրական են խոսում»⁹:

Իր հույն ազգաբնակչության հանդեպ օսմանյան կառավարության քաղաքականությունը փոխելու հիմնական պատճառը Վենիզելոսի այն սպառնալիքն էր, որ եթե այդ գործողությունները չդադարեցվեն, Հունաստանը կպատասխանի իր մահմեդական ազգաբնակչության հանդեպ նույն տեսակի գործողություններով: Այդ սպառնալիքը հնչել էր Աթենքում՝ Ավստրիայի ու Գերմանիայի դեսպանների ներկայությամբ, որոնք այդ մասին հայտնել են իրենց մայրաքաղաքներ, որոնցից էլ այն հաղորդվել է Բարձր դուռ¹⁰: Ժամանակակից որոշ հետազոտողներ նշել են, որ օսմանյան կառավարության քաղաքականության այդ նկատելի փոփոխությունը ոչ թե մտափոխության արգասիք է, այլ բխել է դիվանագիտական անհրաժեշտությունից: Թոյնբեյն «Արևմտյան հարցը Հունաստանում ու Թուրքիայում» իր աշխատության մեջ նշում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև 1916թ. ամռան կեսերը Անատոլիայի հույն ազգաբնակչությունը ընդհանուր իրադրությունից բխող դժվարություններից բացի հատուկ այլ փորձություններով չի անցել¹¹:

Հումանի նշած քաղաքականության փոփոխության անդրադարձներին կարելի է հանդիպել նաև հենց օսմանյան փաստաթղթերում: 1914թ. նոյեմբերի 2-ին Թալեաթ փաշայի կողմից օսմանյան բոլոր նահանգներն ուղարկված ընդհանուր շրջաբերականը նահանգային իշխանություններին իրազեկում է հույն ազգաբնակչության հանդեպ կառավարության քաղաքականության փոփոխության մասին. «Ելնելով երկրի քաղաքական ներկա իրադրությունից՝ հույների հանդեպ ճշումներ բանեցնելը նպատակահարմար չէ», սկսում է նա՝

9 Նույն տեղում, գործ 18, Հումանի զեկույցը, թվագրված 1914թ. նոյեմբերի 17:

10 FO 371/2480/2622, "Secret" Doc. № 281, folio 252, Report sent by the British Embassy in Athens to the Foreign Ministry, հղված հետևյալ տեղում. V. N. Dadrian, German Responsibility, appendix C, 230 (Տառլյանը չի տալիս փաստաթղթի ճշգրիտ անսաթիվը, սակայն ասում է, որ այն գրվել է «պատերազմի սկսվելուց ամբողջ երկու ամիս հետո»):

11 Toynbee, The Western Question, 142.

ավելացնելով. «Նրանց վրա հարձակվելու կամ նրանց ճնշելու ոչ մի արտոնություն չպետք է տրվի»¹²: Երեք օր անց, այս անգամ արդեն Էդիրնեի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրում, կրկնվում է այս փոփոխությունը և նախագգուշացվում այդ նոր քաղաքականությանը հակասող գործողություններ կատարողների հանդեպ պատժամիջոցների մասին. «Տեղեկություններ կան, որ Բաբասեկի մարզի Նահիրի ու Կարախալիլ ավաններում հույն ազգաբնակչությունը ենթարկվել է բռնության և արտագաղթելու պարտադրանքի: Այդ պաշտոնյաներին ու գործիչներին պետք է ևս մեկ անգամ զգուշացնել, որ ներկա իրադրության մեջ այսպիսի ճնշիչ վերաբերմունք չի արտոնվում. այնպես որ, նման վարքագծին պետք է վերջ տալ, իսկ այն գործադրողներին՝ պատժել»¹³:

Եվ սակայն, չնայած կենտրոնական կառավարության քաղաքական ուղղության փոփոխությանը, որոշ տարածքներում հույն բնակիչների դեմ հալածանքները և նույնիսկ նրանց սպանությունները շարունակում էին: Այսպես, 1915 թ. փետրվարին Անվտանգության վարչության կողմից Մուղլա ուղարկված հեռագրում նշվում է, որ «վերջին օրերին մեկը մյուսի հետևից տեղեկություններ են ստացվել, որ Մուղլայի մարզից երեք հույն և Միլասից վեց հույն են սպանվել ջրաղացպանի հետ միասին, իսկ ուրիշներն ստիպված են եղել այրելու իրենց ունեցվածքը»: Այնուհետև հեռագրում կրկնվում է, որ պայմանները փոխվել են, և պահանջվում է. «Իբրև քաղաքական ներկա իրադրության արգասիք, կառավարությունը հրատապ կերպով պահանջում է, որ հունական համայնքի դեմ այդ հարձակումների կրկնությունը կանխվի, և, ելնելով այդ կարիքից, վերոհիշյալ հանցագործությունները կատարողները եռանդագին կերպով հետապնդվեն ու խստագույնս պատժվեն»¹⁴:

12 BOA/DH.ŞFR, № 46/133, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Հալեպի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքի, Տրապիզոնի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալեի Մուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Աթալիայի ու Կեսարիայի գավառներ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 2:

13 BOA/DH.ŞFR, № 46/190, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 5:

14 BOA/DH.ŞFR, № 50/39, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

Մարտի 4-ին Բալիքեշիր ուղարկված մեկ այլ հեռագրից տեղեկանում ենք Անատոլիայի հույների դեմ շարունակվող բռնությունների կապակցությամբ Հունաստանի կառավարության բողոքներին, և որ կենտրոնական կառավարության քաղաքականության փոփոխությունը, առնվազն որոշ դեպքերում, ամեն տեղ չի իրագործվել. «Հունաստանի կառավարությունը հեռագրով տեղեկացրել է, որ Այվալիկում իրադրությունը լրջացել է, և որ անհայտ բովանդակությամբ կնքված ծրարներ են հանձնվել տարածքի մահմեդական բնակչությանը, որ կառավարությունը կանխել է հացահատիկի ու սննդամթերքի տեղափոխությունը քաղաք, որ քաղաքի մոտ հինգ հույնի սպանությունից հետո այն պաշարվել է հրոսակների կողմից, և, վերջապես, որ հույն [ազգաբնակչության] վրա հարձակման սպառնալիքի վախ կա»: Հեռագրում նշվում էր, որ «այս ժամանակաշրջանում քաղաքական ներկա իրադրության վճռորոշ կարևորությունը պահանջում է, որ մեծ ուշադրություն հատկացվի նրան, որ անհրաժեշտ է, որ ոչ մի այնպիսի դեպք չկատարվի, որը բողոքի առիթ կտա, ինչպես նաև [խնդրո առարկա միջադեպերի կապակցությամբ] լուրջ հետաքննություն անցկացվի, և վճռական միջոցներ ձեռնարկվեն: Խնդրում ենք զեկուցել [այդ գործողությունների] արդյունքների մասին»¹⁵:

Պատերազմի պատրվակով և գյուղերի ու քաղաքների պաշարման միջոցով հույն ազգաբնակչության դրամական ու նյութական միջոցների շորթումը, կամայական ձերբակալություններն ու սպանությունները, տների ու հողերի բռնագավթումը, անասունների հափշտակումը և նման գործողությունները դարձել էին էլ ավելի հաճախակի իրադարձություններ: Ինչպես վերը նշված է, 1915 թ. ապրիլին Լյուլեբուրգազի շրջակայքում տեղի ունեցած հարձակման ժամանակ, որոշ դեպքերում հանցագործները հանդես էին գալիս կառավարության ուղղակի հրամաններով: Նույնիսկ երբ կառավարության գործիչները ներգրավված չէին լինում, տեղական պաշտոնյաները հաճախ պարզապես չտեսնելու էին տալիս կատարվածը¹⁶: Բռնություն-

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մենթեշեի գավառ, թվագրված 1915 թ. փետրվարի 18:

15 BOA/DH.ŞFR, № 50/164, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1915 թ. մարտի 4:

16 Greek Patriarchate, Persecution of the Greeks. Այս ամբողջ գործը լեցուն է

ներն այնքան էին հաճախացել, որ պատերազմի ընթացքում օսմանյան հույների համայնքի դեմ կատարված զանազան ոճրագործությունների հանգամանալից թվարկման մեջ 1919 թ.-ին Ստամբուլի պատրիարքարանն արդեն հաճախ գործածում էր «սովորական ճշումներն սկսվել են» դարձվածքը¹⁷:

Մատչելի փաստաթղթերից տեղեկանում ենք նաև, որ իր հույն ազգաբնակչության հանդեպ Օսմանյան կայսրության դաժան վերաբերմունքը դարձել էր Հունաստանի ներքին քաղաքականության կենտրոնական հարցը: Օսմանյան կառավարությունն իր կողմից հարցին մոտենում էր այն տեսանկյունից, որ այդ ժամանակ պաշտոնավարող Վենիզելոսին ռազմաժողովը չտար Աթենքի կառավարության դեմ գործածելու համար, և նահանգներ այս մասին զգուշացում է ուղարկվել: Այսպես, 1915 թ. հուլիսին Բալիքեսիր ուղարկված իր մի հեռագրում Ներքին գործերի նախարարությունը գավառապետին տեղեկացնում է Աթենքի դեսպանության մի զեկուցագրի մասին, որ «Վենիզելոսի կողմնակիցները կառչել են Այվալիկի հույների դեմ հարձակումներից ու ճշումներից՝ [իբրև միջոց] ներկա կառավարության վրա հարձակվելու համար», և կարգադրում, որ, ելնելով Բեռլինի հետ Բարձր դռան հարաբերություններից և այս կապակցությամբ տված խոստումներից, օսմանյան պաշտոնյաները բոլորովին զերծ մնան այնպիսի գործողություններից, որոնք կարող են ծանր վիճակի մեջ դնել Հունաստանի կառավարությանը¹⁸:

Հուլիսի վերջին մեկ այլ հեռագիր՝ այս անգամ ծածկագրված և մակագրված «հույժ գաղտնի», ուղարկվեց կայսրության գրեթե բոլոր այն նահանգներն ու շրջանները, ուր հույներ էին բնակվում: Կրկնվում էր նույն ուղերձը. խուսափել հույն ազգաբնակչության դեմ բոլոր այն գործողություններից, որոնք կարող են բողոքի պատճառ դառնալ:

այս տեսակի գործողությունների օրինակներով. գյուղերի շրջափակման և բռնությամբ դրան հավաքելու դեպքերի համար՝ 10, հրոսակների կողմից հարձակումների, թալանի ու բռնաբարությունների համար՝ 35, հարձակումների ժամանակ ժանդարմների կողմից աջակցության դեպքերի համար՝ 35-36, 52.

17 Նույն տեղում, 6-7.

18 BOA/DH.SFR, №54-A/68, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Քարեսիի գավառ (Բալիքեսիր), թվագրված 1915 թ. հուլիսի 22:

Այդ բոլոր ուղերձներում հետաքրքիր է հակահույն գործողությունների համար տրվող արդարացումը: Հստակ է, որ օսմանյան կառավարության որոշման կենտրոնական գործոնը եղել է Բեռլինի պնդումը.

Աթենքում մեր դեսպանից լսել ենք, որ Վենիզելոսի կողմնակիցները զանազան ճշումներ ու բռնաբարքներ են գործադրել որոշակի շրջանների հույների նկատմամբ՝ իբրև ներկա կառավարության վրա հարձակվելու միջոց, և քանի որ մեր դաշնակիցը՝ Գերմանիայի կառավարությունը, խորհուրդ է տվել Գոնարիսի կառավարության իշխանությունն ավելի դժվարացնող հանգամանքներ չստեղծել, համապատասխանաբար [պահանջում ենք] հույների հանդեպ միայն թույլատրելի վերաբերմունք ցուցաբերել, և [որ] ոչ մի հնարավորություն չտրվի, որ այնպիսի իրադրություններ [ստեղծվեն], որոնք կարող են բողոքի առիթ տալ¹⁹:

Այդ զգուշացումը կրկնվում է 1915 թ. հուլիսի 29-ին Ադանա ուղարկված հեռագրի մեջ՝ մի խումբ հույն քաղաքացիների առնչությամբ, որոնց հողերը բռնագավթվել էին: «Այս ընթացքում, երբ Հունաստանի կառավարության հետ մեր հարաբերությունները որոշակի նրբություն են ձեռք բերել», շեշտվում էր հեռագրում, «չպետք է թույլ տալ, որ մեր հույն քաղաքացիների հետ կապված ստեղծվեն այնպիսի իրադրություններ, որոնք կարող են բողոքի տեղիք տալ»²⁰:

Օսմանյան զանազան նահանգներ ուղարկված Ներքին գործերի նախարարության հեռագրերում կրկին ու կրկին տեսնում ենք կենտրոնական կառավարության քաղաքականության փոփոխության հրատակ անդրադարձը, ինչպես նաև այն հանգամանքի հանդեպ զգայնությունը, որ օսմանյան հույների դեմ բռնությունները հույն քաղաքական գործիչներն օգտագործում էին թե՛ ներքին և թե՛ արտաքին

19 BOA/DH.SFR, №54-A/109, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բեյրութի, Հալեպի, Հյուդավնդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, Չաթալջայի, Երուսաղեմի, Քալե-ի Մուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Քյուրթախյայի, Մարաշի, Կեսարիայի, Էսքիշեհիրի ու Նիդդեի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 26:

20 BOA/DH.SFR, №54-A/165, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 29:

նպատակներով: Այդ մտահոգություններն ակնառու են դառնում 1914 թ. նոյեմբերի 9-ին նահանգների մեծ մասն ուղարկված հեռագրից.

Հայտնի է դարձել, որ Վենիզելոսի կողմակիցները, չափազանցելով օսմանյան տիրույթների հույների նկատմամբ ձեռնարկված որոշ հատուկ միջոցառումներ, Հունաստանի [հանրային] կարծիքը սաղորում են պատերազմի և մեծ ջանքեր գործադրում Հունաստանի [ներկայիս] կառավարությանը դրա հետևանքով հրաժարական հարկադրելու ուղղությամբ: Քանի որ թե՛ Օսմանյան պետության և թե՛ նրա դաշնակիցների քաղաքական ու ռազմական շահերից բխում է, որ ներկայումս առկա կառավարությունը մնա իշխանության, պետության կողմից որոշվել է, որ հիմա [կայսրության] հույն [ազգաբնակչության] նկատմամբ պետք է իրականացնել բարեկամական ու հանդուրժողական քաղաքականություն, և չպետք է ծագեն այնպիսի իրադրություններ, որոնք որևէ կողմի կարող են բողոքի առիթ տալ: Հետևաբար, պատշաճ ձևով պետք է հրահանգներ տրվեն նրանց, ովքեր պետք է հսկեն, որ ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցները: Բացի այդ, պետք է հաղորդվի, որ այդ հրահանգներն անտեսողները կպատժվեն²¹:

Այդ նույն օրը Բուրսայի (Հյուղավենդիզար) նահանգ ուղարկված ծածկագրված հեռագիրը հիշեցնում էր «օսմանյան հույների հանդեպ լավ վարվելը» Հունաստանին ցույց տալու անհրաժեշտությունը, և որ «ընդհանուր մի հաղորդագրություն պետք է տարածել այն մասին, որ այդ օրից սկսած հույներն այլևս չպետք է [բռնի կերպով] վտարվեն»²²: Երբ հույների հանդեպ դաժան վերաբերմունքի մասին Բարձր դուռ

21 BOA/DH.SFR, № 57/366, ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բեյրութի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, Քարեսի (Բալիքեսի), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Իչելի, Էսքիշեհիրի ու Քյուսահայի գավառներ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 9:

22 BOA/DH.SFR, № 57/358, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուղավենդիզարի (Բուրսա) նահանգ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 9:

ուղարկվող բողոքները շարունակվեցին, կայսրության վարչական կենտրոնների մեծ մասին դեկտեմբերի 22-ին ուղարկվեց մեկ այլ ընդհանուր հուշագիր. «Չնայած [օսմանյան] հույների նկատմամբ որդեգրած հանդուրժողական ու բարեսիրտ քաղաքականությանը, հունական մամուլի մի մասը շարունակում է պնդումներ հրապարակել, թե օսմանյան տիրույթներում հույները դեռևս ճշումների են ենթարկվում»: Այնուհետև հուշագրով պահանջվում է, որ կառավարության ներկա քաղաքականության և իրենց համայնքների հանդեպ վարվեցողության վերաբերյալ խնդրո առարկա շրջանների հույն կրոնական գործիչներից ու երևելիներից գովասանքի նամակներ հավաքվեն և ուղարկվեն Ստամբուլի մամուլին²³: 1916 թ. սկզբին Չանաքքալեի գավառ ուղարկված հեռագրում վերստին շեշտվում է «հույների հանդեպ ներկայումս հանդուրժող ու բարեսիրտ քաղաքականություն պահպանելու» անհրաժեշտությունը²⁴:

ՈՐՈՇ ԶԱՂԱՔՆԵՐԻ ՈՒ ԳՅՈՒՂԵՐԻ «ԷՎԱԿՈՒՄՏԻԱՆ» ՌԱԶՄԱԿԱՆ ԿԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ

Չնայած իր հույն ազգաբնակչության հանդեպ օսմանյան կառավարության քաղաքականության հստակ փոփոխությանը, հունական բնակավայրերի պարպումը, թեև ավելի նվազ չափերով, շարունակվել է նաև պատերազմն սկսվելուց հետո: Այդ «էվակուացիաները» հիմնականում կատարվում էին ռազմական ու անվտանգության մտահոգությունների հիմնավորմամբ և սահմանափակվում էին որոշակի շրջաններով: 1915 թ. ապրիլի 25-ին Քոնյայի գավառապետին ուղարկված հեռագրից տեղեկանում ենք, որ օսմանյան Բարձր հրամանատարությունը հունվարի 23-ին արդեն որոշել էր, որ ծովափնյա շրջան-

23 BOA/DH.SFR, № 59/85, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի ու Մամուրեթյուլագիզի նահանգներ և Իզմիրի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Նիդղեի, Իչելի, Բուրսի, Ջանիկի, Չաթալայի, Քարեսի (Բալիքեսի) Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կեսարիայի, Էսքիշեհիրի ու Քյուսահայի գավառներ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 22:

24 BOA/DH.SFR, № 59/260, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 10:

ների հույն բնակիչները, որոնք ինչ-որ ձևով «անվստահելի» էին համարվում, պետք է տեղահանվեին ու վերաբնակեցվեին: Նույն օրը Քոնյա ուղարկված մեկ այլ հեռագրում ասվում է, որ վերոնշյալ որոշումը չպետք է իրականացվի երկրի ներսում բնակվող հույների նկատմամբ, և կարգադրվում է, որ Սպարտայից առանց կենտրոնական կառավարության հավանության տեղահանված մոտ երեսուն հույները վերադարձվեն իրենց տները²⁵:

Ստամբուլի Հունական պատրիարքարանի 1919 թ. վերոհիշյալ զեկույցի մեջ նշվում է, որ ռազմական էվակուացիաներից առաջինը կատարվել է 1915 թ. փետրվարին, ինչը համապատասխանում է Բարձր հրամանատարության որոշումը կայացնելու ամսաթվին՝ հունվարի 23-ին, որից հետո կայսրությունով մեկ ուղարկվել էր նշված հուշագիրը: Զեկույցի մեջ խոսվում է նաև էվակուացիայի ընթացքում այդ գյուղերի վրա հարձակման, ներառյալ թալանի ու սպանությունների դեպքեր²⁶: Նշվում է, որ շատ դեպքերում գյուղացիներն էվակուացիայի մասին տեղեկացել են դրանից ընդամենը մի քանի ժամ առաջ, և նրանց հաճախ արգելվել է իրենց հետ որևէ բան վերցնել: Դրա հետևանքով շատերը մահացել են ճանապարհին՝ փոխադրամիջոցների ու մթերքի պակասի, ինչպես նաև այն պատճառով, որ իրենց տեղափոխման վայրերը եղել են բնակություն հաստատելու համար ոչ պիտանի²⁷:

Տվյալ ժամանակաշրջանի օսմանյան փաստաթղթերում զարմանալիորեն պարզաբանվում է, որ բնակչության տեղափոխությունների հիմքում ընկած են եղել ռազմական ու անվտանգության նկատառումներ, այլ ոչ թե ամբողջ հույն ազգաբնակչության նկատմամբ համընդհանուր քաղաքականություն: Օրինակ, 1916 թ. մայիսին Տրապիզոն ուղարկված մի հեռագրում տեղական պաշտոնյաներին հիշեցվում է, որ «Հունաստանի հանդեպ իրականացվում է բարեհոգի ու հանդուրժող քաղաքականություն», և որ հարմար չէ «ծովափնյա

25 BOA/DH.SFR, № 52/104, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. ապրիլի 25:

26 Էդիրնեից ու դրա շրջակայքից բռնի արտաքսումների ընթացքում կատարված թալանի, կողոպուտի և սպանության դեպքերի համար տե՛ս Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 23–24.

27 Նույն տեղում, 23, 42, 44, 48.

բոլոր շրջաններից հույների տեղափոխումը երկրի խորքերը», այլ երկրի խորքը պետք է տեղափոխել միայն նրանց, ովքեր գտնվում են այն շրջաններում, որոնք, ելնելով ռազմական նկատառումներից, համարվում են անբարենպաստ²⁸:

Նահանգներին ուղարկված հրահանգներն արտացոլում են հույների հանդեպ գիտակից և ըստ տարածքների սահմանված քաղաքականությունը: Ռազմական առումով խոցելի համարվող շրջանների հույներին տեղափոխում էին երկրի խորքերը, իսկ մնացածներին թողնում իրենց տեղերում, թեև որոշ դեպքերում տեղահանվածներին թույլատրում էին տուն վերադառնալ: 1915 թ. հուլիսի 25-ին մի շարք նահանգներ ուղարկված «գաղտնի և հույժ հրատապ» հրամանով պահանջվում է, որ, «ինչպես հաղորդվել է հունիսի 23-ի շրջաբերականով, ներկա քաղաքական իրավիճակի թելադրանքով, հարկավոր է համապատասխան կողմերին անհապաղ հայտնել ու հասցնել անհրաժեշտ հրահանգները, որ Մարմարայի ավազանում բնակվող հույն ազգաբնակչությանը պետք է թողնել տեղում»²⁹:

Միևնույն գործողությունը կատարվել է նաև Անթալիայում ու շրջակայքում, որտեղ տեղահանված հույներին թույլատրվել է վերադառնալ իրենց գյուղերը կամ վերաբնակվել այլ վայրերում. «Անթալիայի այն հույների նկատմամբ, որոնք իրենց բնակավայրերից վտարվել էին պատերազմի պատճառով և տեղահանվել դեպի Բոզքարա, Էլմալի ու Թուրգոթ, պետք է դրսևորել ամեն տեսակի քաղաքավարություն ու ազատություն... Անթալիայում իրենց տները վերադառնալու համար, նրանք, ովքեր չեն ցանկանում վերադառնալ, ազատ են գնալու ուր որ ուզում են՝ արգելված ռազմական շրջաններից բացի»³⁰: Այդպես նաև, 1915 թ. հոկտեմբերի 9-ի մի հեռագրով Բուրսայի (Հյուղավենդիզար) պաշտոնյաներին կարգադրվում է «այն

28 BOA/DH.SFR, № 64/29, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 15:

29 BOA/DH.SFR, № 54-A/116, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուղավենդիզարի (Բուրսա) ու Էդիրնեի նահանգներ և Բզմիրի ու Չաթալջայի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 27:

30 BOA/DH.SFR, № 54-A/82, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անթալիայի գավառ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 6:

հույներին, որոնք պատերազմի պատճառով հանվել են զանազան տարածքներից, թույլ չտալ փաստաթղթեր ստանալ [որոնք նրանց թույլ կտան] Ստամբուլ գալու, բայց, անվստահելի կամ կասկածելի թվացողներից բացի, բոլորին թույլ տալ գնալու ուր ցանկանում են՝ Ստամբուլից ու արգելված ռազմական տարածքներից գալու»³¹: Հույն գյուղացիների փտարման յուրահատկություններից մեկն այն էր, որ յուրաքանչյուր բնակավայրի համար առանձին որոշում էր կայացվում³²: 1915 թ. օգոստոսին Էդիրնե ուղարկված մի հեռագրում նշվում է, որ «գյուղերի բնակչությանը երկրի խորքը տեղափոխելը, որի կարիքը հստակորեն կար, հաստատվել է», հետևաբար հրահանգվում է սկսել այդ գործը³³:

Սև ծովի շրջանից հանված հույները պետք է վերաբնակեցվեին Կաստամունուի ու Սվազի շրջաններում: 1916 թ. մայիսին Տրապիզոն ուղարկված վերոհիշյալ հեռագրում հաստատվում է «նրանց առաքումը, ովքեր պետք է վերաբնակեցվեն Կաստամունուի խորքերում և Սվազ նահանգի այն շրջաններում, ուր մահմեդական փախստականներ չկան»³⁴: Կան այլ հեռագրեր, ինչպիսին են 1916 թ. հունիսի վերջին բազմաթիվ նահանգներ ուղարկված ստորև բերվող օրինակները, որոնց մեջ տեղեկացվում է, որ «պարզ է դարձել, որ այն հույները... [որոնց մասին նախապես] ասվել է, ռազմական նկատառումներով տեղափոխվել են Սվազ»³⁵, կամ՝ «ռազմական ծրագրի պատճառով

31 BOA/DH.SFR, № 56/332, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուսիսվենդիգարի (Բուրսա) նահանգ և Քարեսիի (Բալիքեսիր) ու Իզմիրի գավառներ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 9:

32 Այդ իրադրությունը հստակորեն գիտակցվում է Պատրիարքարանի զեկույցում: Օրինակ, Ցալովայի շրջակայքի որոշ գյուղերից բնակիչներին տեղափոխել են Բուրսայի (Հյուսիսվենդիգար) շրջան՝ այն պատրվակով, որ նրանք իբրև թե վառելանյութ են մատակարարել բրիտանական սուգանավերին: Sten Greek Patriarchate, Persecution of the Greeks, 53.

33 BOA/DH.SFR, № 55/219, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 24:

34 BOA/DH.SFR, № 64/29, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 15:

35 BOA/DH.SFR, № 65/126, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1916 թ. հունիսի 29:

կենսական անհրաժեշտություն է դարձել հույներին ուղարկել [Կաստամունու] նահանգի հարավային հատվածները»³⁶:

Որոշակի տարածքներ ուղարկված տարբեր հաղորդագրություններում նշվում է, որ նման միջոցներ ձեռնարկելու կարիք չկա այն տարածքներում, որոնք ռազմական տեսակետից համարվում են «անվտանգ»: Իբրև օրինակ կարելի է բերել Քարեսիի (Բալիքեսիր) մարզ Անվտանգության վարչության ուղարկված ծածկագրված հեռագիրը. «Ծովափնյա շրջաններից հույներին երկրի խորքերը տեղափոխելու հարցով որդեգրված ու իրագործված միջոցները սահմանափակվել են ծովափնյա այն գյուղերով, որոնցում բացակայում էին [անվտանգությունը և] կարգուկանոնը [իմա՝ բավարար թվով ժանդարմներ] [պահելու] միջոցները, սակայն այն վայրերում, ուր այդ միջոցները գոյություն ունեն բավարար քանակությամբ, որպիսին են Բանդիրման ու Էրդեկը, պետք է բավարարվել արդեն ձեռնարկված քայլերով»³⁷:

Ինչպես նշեցինք, ռազմական նկատառումներով էվակուացիայի որոշումը ժամանակի ընթացքում փոխվել է, ինչպես տեղի է ունեցել Այդինի նահանգի Ուրլա բնակավայրի դեպքում: 1916 թ. փետրվարին, ի պատասխան բանակից եկած խնդրանքի, կայացվել է «Ուրլան ու շրջակայքը էվակուացնելու» որոշում³⁸: Սակայն, մի քանի օր անց Անվտանգության վարչության ուղարկված հեռագրում նշվում է, որ «ռազմական որևէ անհրաժեշտության բացակայության պատճառով Ուրլայի էվակուացիայից առայժմ պետք է հրաժարվել»³⁹: Որոշումը,

36 BOA/DH.SFR, № 65/136, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 1:

37 BOA/DH.SFR, № 54/363, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 8:

38 BOA/DH.SFR, № 61/53, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 19:

39 BOA/DH.SFR, № 61/149, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 28: Պատրիարքարանի զեկույցի մեջ բերվում են նաև բազմաթիվ շրջանների օրինակներ, որոնք սկզբնապես նշվել են ռազմական նկատառումներով էվակուացվելու համար, սակայն հետագայում ծրագիրը փոխվել է: Օրինակ, տնն Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 49.

սակայն, ևս մի անգամ փոխվել է 1916 թ. մարտի 9-ին՝ հրահանգի մեջ բացատրելով, որ «ոազմական կողմը վերջերս [կրկին] քննարկվեց: Եթե էվակուացնելը բացարձակ անհրաժեշտություն է թվում, պատշաճ է թվում նաև, որ էվակուացիան կատարվի խաղաղ ու կարգուկանոնով և հնարավոր բոլոր դյուրություններով ու թեթևությամբ»: Էվակուացիան պետք է «այնպես երևա, ասես [կատարվում է] բնակչության պաշտպանության համար»⁴⁰:

Ինչպես հաղորդագրություններն են ցույց տալիս, ուրիշ տարածքներում կարիք չի եղել տեղահանելու հույն ազգաբնակչությանը: ՑՆԿՎ-ի 1916 թ. մայիսի մի հեռագրում, օրինակ, նշվում է, որ Իսկեներումի շրջանի հույն բնակիչները «չպետք է ենթարկվեն տեղափոխության»⁴¹: Նման ծանուցման պատճառը նախնառաջ այն էր, որ Իսկենդերունի շրջանում Էրզրոյի մարզի հույն բնակիչները տեղահանվել էին՝ առանց կենտրոնական կառավարության գիտության կամ արտոնության: Այնուհետև այդ հեռագրում պահանջվում է, որ «գեկուցվի այդ հույների ինքնության և նրանց տեղահանելու պատճառների մասին»⁴²: Նման միջադեպ է տեղի ունեցել նաև 1916 թ. օգոստոսին՝ Բիգայում: Այդ շրջան ՑՆԿՎ-ի ուղարկած հեռագրում ասվում է, որ «Բիգայում ապրող հույներին տեղափոխելու կարիք չկա»⁴³:

40 BOA/DH.SFR, №61/231, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 9:

41 BOA/DH.SFR, №64/62, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անթաթյայում (ըված գույքի) Լուծարման հանձնախմբի նախագահությանը, թվագրված 1916 թ. մայիսի 18:

42 BOA/DH.SFR, №64/72, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 18:

43 BOA/DH.SFR, №66/224, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 12:

ՀՈՒՅՆ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ՓՈՒՄԿՈՒՄ Է 1916 Թ. ՎԵՐՋԻՆ

1916 թ. աշնանը հույների հանդեպ օսմանյան քաղաքականությունն ակնհայտ է ավելի համապարփակ տեղահանության ձև ընդունել: Հույների նկատմամբ իր քաղաքականության շրջանակն ընդլայնելու կառավարության որոշման հիմնական գործոններն էին. 1. նախորդ զարնանը Անտանտի կողմից Էզեյան ծովի Միդիլի (Միթիլենե, Լեսբոս), Մաքիզ ու Միսամ կղզիների գրավումը, 2. ռուսների առաջխաղացումը դեպի արևելյան Անատոլիա, և 3. այն մոտավորտ ակնկալությունը, որ Հունաստանը կարող էր պատերազմի մեջ ներքաշվել՝ Ռուսաստանի ու Բրիտանիայի կողմում: Թալեաթ փաշայի կողմից 1916 թ. սեպտեմբերին նահանգներ ուղարկած մի շարք ծածկագրված հեռագրերից կարելի է տեսնել, որ նման իրադրությունն ակնկալվում էր, և որ տեղական պաշտոնյաներին հրահանգվում էր պատրաստվել հույն բնակիչներին իրենց բնակավայրերից տեղահանելուն: Այսպես, 1916 թ. սեպտեմբերի 11-ի մի հեռագրով հրամայվում է. «Ելնելով ներկա իրադրությունից՝ արդեն պետք է հարկ եղած քայլերն ու պատրաստությունները կատարված լինեն, որպեսզի, այն հավանականության դեպքում, որ Հունաստանը միանա մեր դեմ պատերազմին, սահմանամերձ շրջաններում ապրող [օսմանյան] հույներին, այստեղից ելնող առաջին իսկ հրամանով, հնարավոր լինի անմիջապես տեղափոխել երկրի խորքը և բնակեցնել այնտեղ հարմար վայրերում: Այս իրավիճակը պետք է խիստ գաղտնի պահվի և [գործողության կարգավիճակի վերաբերյալ] տեղեկությունը գեկուցվի մեզ»⁴⁴:

Եվ նորից, Չաթալջայի գավառ միևնույն օրն ուղարկված մեկ այլ հեռագրով Թալեաթը գավառապետի գրասենյակին տեղեկացնում է, որ «ելնելով Հունաստանի ներկա իրադրությունից, որը մեծապես սաստկացնում է այն բանի հնարավորությունը, որ այն պատերազմի մեջ կմտնի մեր թշնամիների կողմից», հարկավոր է տեղափոխել հույն բնակչությանը, և նախարարությանը պետք է հաղորդել բոլոր

44 BOA/DH.SFR, №67/243, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հյուդավենդիզարի (Բուրսա), Այդինի ու Էդիրնեի նահանգներ և Իզմիթի, Բալիքեսիրի, Չանաքքալեի (Քալե-ի Սուլթանիյե) ու Մենթեշի գավառներ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 11:

այն քաղաքների ու գյուղերի մասին, որոնցից վտարվելու են հույները, ինչպես նաև նրանց տեղափոխման վայրերի մասին»⁴⁵:

Որպեսզի «անհրաժեշտ» այդ նախապատրաստությունների հարցում շփոթություն չլինի, այն բացատրված էր ամենայն մանրամասնությամբ. «պատրաստությունների նպատակն այն է, որ անհրաժեշտ միջոցներն ու միջոցառումները մինչև վերջ հաշվի առնվեն և ամբողջանան, որպեսզի, երբ այստեղից հրաման տրվի, այն տարածքներն ու շրջանները, ուր պետք է հաստատվի երկրի խորքը տեղափոխվելիք հույն ազգաբնակչությունը, արդեն որոշված լինեն, իսկ դանշանակում է պատրաստվին, որպեսզի տեղահանություններն ընթանան հանդարտ ու կարգուկանոնով»⁴⁶: Մյուս շրջաններին հարցումներ են ուղարկվել, թե նրանք տեղահանված քանի հույնի ի վիճակի կլինեն ընդունելու. «Քանի որ ծրագրված է, որ, եթե Հունաստանը պատերազմի մեջ մտնի մեր թշնամիների կողմից, ծովափնյա շրջանների հույները տեղափոխվելու են երկրի ներքին շրջանները, և որ Իզմիրից եկող տասներկուսից քսան հազար հոգին տեղափոխվելու են Սպարտա, [սնդրում ենք, որ] ուսումնասիրեք այդ տարածքում այդքան մարդու տեղավորելու ու միջոցներ տրամադրելու հնարավորությունը և մեզ տեղեկացնեք [ձեր եզրակացությունների մասին]»⁴⁷: Նահանգներ ուղարկվող այս բնույթի հեռագրերի աճող հաճախականությունից կարելի է հանգել այն հետևության, որ 1917 թվականին բնակչության մեծ մասշտաբով տեղափոխություններ են սկսել իրագործվել⁴⁸:

Այդ ամիսների ընթացքում նահանգներ ուղարկվող հեռագրերի մեջ կրկնվող նյութերից մեկն այն պնդումն է, որ կառավարության տեղական ներկայացուցիչները գերծ մասն գործողություններից՝

45 BOA/DH.\$FR, № 67/241, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Չաթայայի գավառ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 11:

46 BOA/DH.\$FR, № 68/80, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 21:

47 BOA/DH.\$FR, № 68/146, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 1: Նման հարցումներով մի հեռագիր է ուղարկվել նաև Կարահիսար-ի Շարքի (տե՛ս BOA/DH.\$FR, № 68/163):

48 Նույն ոգով այլ նահանգներ ու գավառներ ուղարկված հեռագրերի համար տե՛ս BOA/DH.\$FR, №№ 68/30, 35, 48, 80:

մինչև զինվորական իշխանություններից հրաման ստանալը: Թալեաթը մի շարք արևելյան նահանգներ է ուղարկել հետևյալ հրահանգը. «Քանի դեռ բանակի [Բարձր] հրամանատարությունը հատուկ թույլտվություն չի տվել, ռազմական հատակ կարիքներից ելնելով, ոչ մի ավան կամ քաղաք չի թույլատրվում էվակուացնել, և բնակչությանը չի կարելի թույլատրել փախչել»⁴⁹: Հետագա ամիսներին նորից ու նորից կրկնվում է, որ էվակուացվելիք տարածքները նշվելու են զինվորական իշխանությունների կողմից: 1917 թ. ապրիլի մի հեռագրից երևում է, որ Քարեսիի (Բալիքեսիր) գավառը «ռազմական նկատառումներով» էվակուացվելու էր⁵⁰:

Կառավարությունը վախենում էր հատկապես նրանից, որ կենտրոնական ու արևելյան սևծովյան շրջանների հույները կարող էին համագործակցել առաջացող ռուսական զինվորական ստորաբաժանումների հետ: Այդ պատճառով 1917 թ. հունվարի 21-ին հյուսիս-կենտրոնական Անատոլիայի նահանգների մեծ մասին զգուշացվել է, որ «Երրորդ բանակի հրամանատարությունը հրատապ անհրաժեշտություն է համարել, որ Սամսունի ավազանի շրջակայքի հույն ազգաբնակչությունը տեղափոխվի դեպի երկրի ավելի խորքն ընկած վայրեր, և որ կենսականորեն կարևոր է, որ նրանք տեղավորվեն Սվազի, Կաստամունուի ու Անկարայի նահանգների և Բոլուի գավառի գյուղերում»⁵¹: 1917 թ. հունվարի 11-ի Սամսունի գավառ Թալեաթի ուղարկված հեռագիրը պարունակում է հետևյալը. «Ես խոսեցի էնվեր փաշայի հետ: Նա սասց, որ Երրորդ բանակն արել է կարգադրությունները: Նպատակը առափնյա հույներին մի երեսունից հիսուն կիլոմետր դեպի ներս տանելն է: Դրանով հանդերձ, խիստ կարևոր է, որ տեղահանության ընթացքում ոչ մի անձի կամ ունեցվածքի վրա բռնություն չկիրառվի»⁵²:

49 BOA/DH.\$FR, № 68/161, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Սվազի, Դիյարբեքիրի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 2:

50 BOA/DH.\$FR, № 75/81, ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1917 թ. ապրիլի 19:

51 BOA/DH.\$FR, № 72/62, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի, Կաստամունուի ու Անկարայի նահանգներ և Բոլուի գավառ, թվագրված 1917 թ. հունվարի 21:

52 BOA/DH.\$FR, № 71/234, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Սվազի, Դիյարբեքիրի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ, թվագրված 1917 թ. հունվարի 21:

Իրականում, այդ հրամանի կատարումն այնպես չի ընթացել, ինչպես պահանջվել էր: Որոշ գյուղերում բնակիչները տեղահանվել են ծանուցվելուց մի քանի ժամ անց, այլ տեղերում տղամարդկանց զորակոչել են աշխատանքային գումարտակներ, կանանց ու երեխաներին չի թույլատրվել իրենց հետ որևէ բան վերցնել, իսկ գյուղերը կողոպտվել են հարևան մահամեղականների կողմից: Ընդ որում, հարձակման ու կողոպուտի ենթարկված գյուղերի բնակիչներին հաճախ ստիպել են վկայություն ստորագրել, որ իրենց վրա հարձակվողները հայեր են եղել⁵³: Ստամբուլից եկող հրահանգներից բացահայտվում է, որ կենտրոնական կառավարությունը քաջատեղյակ է եղել կատարվածին: Այսպես, 1917 թ. փետրվարի սկզբին Սամսուն ուղարկված ծածկագրված հեռագրերից մեկում կարդում ենք հետևյալը. «Տեղեկացել ենք, որ ոչ միայն հանձնաժողովներ չեն կազմվել՝ պահելու, պաշտպանելու և կառավարելու համար էվակուացված հույների ունեցվածքներն ու անասուններին, այլև չեն կնքվել պահեստները, և թույլ է տրվել, որ տներն ավերվեն ու ոչնչացվեն»⁵⁴:

Հունական գյուղերի, մասնավորապես Սամսունի շրջակայքի տեղահանության մեջ գլխավոր դեր կատարած անձանցից է եղել ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ Բահաեդին Շաքիրը: 1916 թ. դեկտեմբերին այդ շրջան նրա ժամանումից հետո էվակուացիայի գործընթացն ավելի համակարգված բնույթ է ստացել. մինչև դեկտեմբերի վերջն առնվազն տասնութ գյուղ ամբողջովին էվակուացվել է, իսկ տասնհինգ գյուղ պարպվել է մասնակիորեն: 1917 թ. առաջին ամսվա ընթացքում Սամսունի մոտ ութսուն երևելիներ ձերբակալվել են, և չորս հազար բնակիչներ տեղահանվել են՝ նախ Հավզա, իսկ այնուհետև՝ Չորում: Տեղահանված հույները տեղավորվել են արտաքսված հայ գյուղացիների նախկին տներում: Շուտով դրան հետևել է Գիրեսունի ու Ամասիայի շրջանների պարպումը: Սկզբից նեթ կենտրոնական կառավարությունը քաջատեղյակ է եղել այն թալանին ու ավերածություններին, որոնք ուղեկցել են այդ շրջանների գյուղա-

գրված հեռագիրը Սամսունի գավառ, թվագրված 1917 թ. հունվարի 11:

53 Գիրեսունի տարածքից վկայված իրադարձությունների համար տես Greek Patriarchate, Persecution of the Greeks, 103–7:

54 BOA/DH.ŞFR, №72/181, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Սամսունի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 8:

ցիների վտարումներին: 1917 թ. փետրվարի 26-ին Ջանիկի գավառ ուղարկված հեռագրով Թալեաթ փաշան պահանջում է, որ «հետաքննություններ անցկացվեն այն հարցով, թե մինչև հիմա ավազակային հարձակումների ընթացքում ո՞ր գյուղերն են այրվել ու ավերվել, և արդյունքների մասին զեկուցվի»⁵⁵:

Ստամբուլի պատրիարքարանին գրած մի շարք նամակներում Սամսունի Հունական ուղղափառ եկեղեցու պատրիարք Գերմանոս Կարավենգելիսը նշում է, որ այդ տարածքից մոտ երեսուն հազար մարդ է տեղահանվել և տարվել Անկարայի նահանգ: Երեք-չորս առանձին հարձակումներով պարպված գյուղերն այնուհետև կողոպտվել ու ավերվել են: Բացի այդ, հարձակման են ենթարկվել տեղահանվածների պահակախմբերը, և սպանվել են կանայք ու երեխաներ⁵⁶: 1917 թ. մարտին Ամասիայի եպիսկոպոսը զեկուցել է, որ Ամասիայից Անկարա տեղահանվածների երկու երրորդը սպանվել է⁵⁷:

Հունական, հատկապես սևծովյան տարածքի հունական համայնքների տեղահանության վերաբերյալ հրահանգների ցանկ է պատրաստվել և 1917 թ. փետրվարի 3-ին ուղարկվել շրջաններ: «Բացարձակ պահանջ է, որ քաղաքացիական վարչակազմը մանրակրկիտ կերպով ու ամբողջովին պահպանի կարգուկանոնը», ասվում էր հաղորդագրության մեջ: «Բանակը կորոշի և կթելադրի, թե հունական ո՞ր ավաններն ու բնակչությանը պետք է էվակուացնել և ո՞ւմ փոխադրել երկրի խորքը»: Խիստ կարևոր էր, որ «ծովափնյա հատվածներից վտարումների ու տեղահանության գործողություններն» ընդլայնվում էին և ընդգրկում «քաղաքներից անհատների»⁵⁸: Եվ, չնայած ծովափնյա հույներին տեղահանելու գործողություններին, որոշ տարածքներում բնակչությունը հիմնականում մնացել է իր տեղում⁵⁹:

55 BOA/DH.ŞFR, №73/79, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 26:

56 Այս շրջանի իրադարձությունների մանրամասն նկարագրության համար տես Stefanos Yerasimos, Milliyetler ve Sınırlar, Balkanlar, Kafkasya ve Orta-Doğu (Istanbul, İletişim Yayınları 1994), 351–427:

57 Greek Patriarchate, Persecution of the Greeks, 120–22.

58 BOA/DH.ŞFR, №72/148, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 3:

59 BOA/DH.ŞFR, №78/154, Ներքին գործերի նախարարության Ցեղային և

Ամփոփելով, կարող ենք վստահությամբ ասել, որ ավելի սահմանափակ նախորդ գործողության համեմատ այս «էվակուացիաները», որոնք սկսվել էին 1916 թ. ամռանն ու շարունակվել մինչև 1918 թվականը, «իրականացվել են մեծագույն դաժանությամբ»⁶⁰:

**ՄԱՅՄԵՂԱԿԱՆ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԵՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՊԱՐՊԿԱԾ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ**

Գոյություն ունեցող փաստաթղթերից բացահայտվում է, որ թեև ծովափնյա տարածքների հույները երկրի խորքն էին տեղափոխվում ռազմական նկատառումներով, կենտրոնական կառավարությունը մտադրություն չի ունեցել երբևէ թույլ տալու տեղահանվածներին տուն վերադառնալ, քանի որ հունական պարպված գյուղերում արագ ու համակարգված կերպով բնակեցվել են մահմեդականները: Որոշ նահանգների հատկորեն հրահանգված է եղել, որ «ոչ մի արտոնություն չպիտի [տրվի] հույներին հետ վերադառնալու և բնակվելու ծովափին»⁶¹: Նահանգային պաշտոնյաները հրահանգ էին ստացել՝ պահելու էվակուացիաների արձանագրությունները: Ինչպես 1915 թ. հուլիսի 5-ին IAMM-ն էր պահանջել, «պետք է զեկուցվի այն հույների թիվը, որոնք մինչև հիմա ռազմական նկատառումներով էվակուացվել են ծովափնյա շրջաններից և ուղարկվել այլ շրջաններ, ինչպես նաև այն տարածքները, ուր նրանք ուղարկվել են՝ դեռևս տեղահանվողների վերաբերյալ հետազոտված քայլ առ քայլ զեկուցյաների հետ միասին»⁶²:

IAMM-ի կողմից 1915 թ. սեպտեմբերին Մարմարայի շրջան ուղարկված մի հեռագրով պահանջվում է էվակուացիայի/վերաբնակեցման արձանագրությունները վավերագրել հատուկ գրանցամատյաններում: Քարեսիի (Բալիքեսիր) գավառապետի գրասենյակին ասվել է, որ «ի մի բերվեն և ուղարկվեն... պահանջված գրանցամատյանները,

ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 30:

60 Toynbee, The Western Question in Greece and Turkey, 143.

61 BOA/DH.SFR, № 63/264, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 10:

62 BOA/DH.SFR, № 54/312, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էդիրնեի ու Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգներ և Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) ու Քարեսիի (Բալիքեսիր) գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 5:

որոնք պարունակում են Մարմարայի առափնյա նահանգի այն մասերի բնակավայրերի անունները, որտեղից մինչև հիմա էվակուացվել են, ինչպես նաև այնտեղից տեղահանված հույների թիվը և այն տարածքները, ուր նրանք ուղարկվելու են»⁶³: Ժամանակ առ ժամանակ կառավարությունը նահանգային իշխանություններին հիշեցնում էր, որ վերջիններս հավաստիանան իրադարձությունների պատշաճ փաստագրման մեջ: Այսպես, 1916 թ. օգոստոսի 6-ի մի հեռագրով Անվտանգության վարչությունը նահանգային ղեկավարներից պահանջում է «կազմել մի ցուցակ, ուր նշվի նահանգի և [նրա] շրջանների քաղաքներում ու գյուղերում ապրող հույների թիվը»⁶⁴:

Հունական պարպված գյուղերում մահմեդական փախստականների վերաբնակեցումն սկսվել է պատերազմի առաջին ամիսներին: Թերքոզի շրջանում, որտեղ 1915 թ. փետրվարին կատարված տեղահանության մասին վերը խոսվեց, երկու ամսվա ընթացքում վերաբնակեցվել են մահմեդական գաղթականներ ու փախստականներ⁶⁵: 1916 թ. հունվարի 12-ին նահանգներ ու գավառներ ուղարկված մի հեռագրում շեշտվում է, որ անհրաժեշտ է գաղթականներին ուղարկել «ծովափնյա այն տարածքները, որոնք պարպվել են հույներից, և վերոնշյալ քաղաքներն ու գյուղերը մեկը մյուսի հետևից բնակեցնել մահմեդականներով»՝ դրանով իսկ ցույց տալով, որ կառավարությունն արդեն իսկ կայացրել էր այդ կերպ վարվելու որոշումը⁶⁶:

1916 թ. ապրիլին Էդիրնեի ու Չանաքքալեի նահանգներ ուղարկված մեկ այլ հեռագրում տեսնում ենք, որ Անվտանգության վարչու-

63 BOA/DH.SFR, № 56/73, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 18:

64 BOA/DH.SFR, № 66/194, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի, Այդինի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Սվազի, Կաստամունուի, Անկարայի, Տրապիզոնի, Քոնյայի ու Մամուրեթյուրազիի նահանգներ և Ջանիկի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կեսարիայի, Իզմիրի, Մարաշի, Նիդղեի, Էսֆիզեի, Իչելի, Գյուլիստանի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1916 թ. Օգոստոսի 9:

65 Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 26.

66 BOA/DH.SFR, № 59/279, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգ և Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 12:

թյունը կամեցել է տեղեկություններ ստանալ, «թե կան արդյոք հունական գյուղեր, որոնք էվակուացվել են թշնամու սուզանավերի պատճառով, և թե արդյոք այդ գյուղերը բնակեցվել են մահմեդական փախստականներով»⁶⁷: 1916 և 1917 թթ. ողջ ընթացքում կառավարությունը շարունակել է պարպել հունական գյուղերը և դրանք վերաբնակեցնել մահմեդական փախստականներով ու գաղթականներով: Նահանգներից մշտապես տեղեկություն է պահանջվել էվակուացված հունական քաղաքների մասին: 1916 թ. ապրիլի 18-ին Քարեսի (Բալիքեսիր) ուղարկած հեռագրում Անվտանգության վարչությունը հարցնում է. «Շրջանում հունական ճր ավաններն ու բնակավայրերն են էվակուացվել ինչպես մինչև, այդպես էլ [հեռագրի ամսաթվից] հետո, և դրանք ամբողջովին են պարպվել, թե մասնակիորեն: Այս պահին քանի հույն է մնացել այդ բնակավայրերում, և որոնցում են տեղավորվել [մահմեդական] գաղթականները»⁶⁸:

Այդպիսի հարցումներ ուղարկվում էին որոշակի պարբերականությամբ, նույնիսկ մինևույն շրջանները⁶⁹: «Հունական գյուղերի բնակիչներից որևէ մեկը վերադարձել է իր գյուղը: Եթե այո՝ քանիսը, և այնտեղ կան մահմեդական գաղթականներ ու հույն բնակիչներ: Յուրաքանչյուրից քանիսը կա և ճի գյուղերում: Խնդրում ենք տեղեկությունները հաղորդել հեռագրով»⁷⁰:

Ելնելով այն հանգամանքից, որ կենտրոնական կառավարությունը մտածում էր, որ կարող է պահանջել, որ նման տեղեկությունները հաղորդվեն հենց հաջորդ օրը («Խնդրում ենք մինչև վաղը՝ երեկոյան, զեկուցեք, թե նահանգի/գավառի հունական ճր գյուղերն են մասնակիորեն կամ ամբողջովին էվակուացվել թշնամու սուզանավերի

67 BOA/DH.SFR, № 63/101, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը էլիքրնեի նահանգ և Չանաքքալեի գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 25: Տե՛ս նաև BOA/DH.SFR, № 63/257:

68 BOA/DH.SFR, № 63/34, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 18:

69 Էրզնկի մարզին վերաբերող հեռագրի համար տես BOA/DH.SFR, № 63/80, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 23:

70 BOA/DH.SFR, № 63/88, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուդավնդիգարի (Բուրսա) նահանգ, թվագրված 1916 թ. ապրիլի 24:

պատճառով, և թե արդյոք գաղթականներ տեղավորվել են դրանցում»⁷¹, «Խնդրում ենք մինչև վաղը տրամադրեք էվակուացված հունական գյուղերի մասին պահանջվող տեղեկությունները»⁷²) և նույնիսկ մինևույն օրվա ընթացքում («Մինչև այս երեկո [խնդրում ենք տրամադրել] տեղեկություններ հունական գյուղերի վերաբերյալ»⁷³), տրամաբանական է ենթադրել, որ տեղահանման ու վերաբնակեցման ամբողջ գործընթացն իրականացվել է խստագույն բռնադատությամբ և աշախույժ վերահսկողության ներքո:

Հունական դատարկ գյուղերի վերաբնակեցումը մահմեդական գաղթականներով ու փախստականներով շարունակվել է 1917 թ. ընթացքում: Այդ թվականի ապրիլին Աֆյոն ուղարկված հեռագրով, օրինակ, պահանջվում էր, որ «քանի որ ձեր գավառի հունական գյուղերում տեղավորելու համար 1.000 գաղթական է ուղարկվել, [խնդրում ենք] որոշել և մեզ տեղեկացնել մինչև նրանց ժամանելը ճանապարհի իջևանների, ինչպես և այն թաղամասերի ու տարածքների մասին, ուր նրանք տեղավորվելու են»⁷⁴: Ծովափնյա պարպված բնակավայրերի հույները հիմնականում տեղաբաշխվել են ներքին նահանգների հունական գյուղերի վրա⁷⁵, իսկ որոշ դեպ-

71 BOA/DH.SFR, № 63/101, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը էլիքրնեի նահանգ և Չանաքքալեի գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 25:

72 BOA/DH.SFR, № 63/46, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 19:

73 BOA/DH.SFR, № 63/73, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 18:

74 BOA/DH.SFR, № 75/113, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառ, թվագրված 1917 թ. ապրիլի 25:

75 Այս նյութի վերաբերյալ գոյություն ունեն հսկայական քանակությամբ փաստաթղթեր: Իրրև մի քանի օրինակ տես BOA/DH.SFR, № 75/114, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1917 թ. ապրիլի 14, BOA/DH.SFR, № 75/119, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Քյուլայի գավառ, թվագրված 1917 թ. ապրիլի 25 BOA/DH.SFR, № 75/120, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղ-

քերում վերաբնակեցվել են տեղահանված հայերից պարպված գյուղերում⁷⁶:

ՏԵՂԱԿԱՆ ԿԱՏՈՒՄԻՆԻ ՄԱՅԱՏ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ էր լինելու երկրի խորքերը տեղափոխված հույների սեփականության ճակատագիրը: Առկա փաստաթղթերը ցույց են տալիս, որ սկզբում այս հարցի շուրջ միասնական քաղաքականություն չի եղել. գործողությունների միասնականությունը տարածվել է, սակայն դանդաղորեն: Այդ հարցի վերաբերյալ ամենաառաջին հեռագիրը Բալիքեսիրի գավառ ուղարկված Թալեաթ փաշայի 1914 թ. հունիսի 10-ի հեռագիրն է, որով ներքին գործերի նախարարը պահանջում է, որ «արտագաղթածների անշարժ գույքը լավ պահպանվի, իսկ շարժական ունեցվածքի հետ կապված փոխանցումները պատշաճորեն գրանցվեն՝ առանց քյուրուկրատական քաջքուքի ու խոչընդոտների»⁷⁷:

Հաջորդ հեռագիրը, որը 1914 թ. հուլիսի 6-ին ուղարկվել է բազմաթիվ նահանգներ ու շրջաններ, վերաբերում էր տեղահանված հույներից մնացած գույքին ու ունեցվածքին, որոնք գտնվում էին գողացվելու վտանգի տակ. հետևաբար, պահանջ է ներկայացվել, որ դրանց չդիպչեն, այլ հանձնեն տարածքային Տեղական եկամուտների պահոցներին (Mahalli Mal Sandıkları):

Ելնելով մեկնող հույն բնակիչների տները, այգիները, կոմերցիոն ապրանքները, անասուններն ու մյուս իրերն ու ապրանքները պահելու ու պահպանելու բարդություններից և ժամանակի ընթացքում դրանց ավելի ու ավելի խարխուլվելու ու վնասվելու, ինչպես նաև դրանց գողության, չարաշահման կամ շահարկման [վտանգից] պաշտոնական հրաման է տրվելու, որ այ[դ] ունեց-

թային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էսքիշեհիրի գավառ, թվագրված 1917 թ. մայիսի 6:

76 Օրինակ, Ուզունքյուփրյուից 1915 թ. սեպտեմբերին ու հոկտեմբերին մի քանի փուլով տեղահանված հույն բնակիչները վերահաստատվել են Մալքարայի շրջակայքում, տեղահանված հայերից մնացած դատարկ տներում: Sine Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 33:

77 BOA/DH.ŞFR, № 41/208, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914 թ. հունիսի 10:

վածքները հանձնվեն Տեղական եկամուտների պահոցներ՝ այն պայմանով, որ դրանք պետք է դրվեն որոշ տեսակի ապահով միջոցներով հավատարմագրված պահոցում, իրենց տերերի անունները գրանցվեն՝ այնպես, որ պահանջի դեպքում հնարավոր լինի դրանք վերադարձնել իրենց սեփականատերերին: Այս հարցը պետք է իրականացվի նշված կարգով⁷⁸:

Մեկ այլ հեռագիր՝ այս անգամ Ներքին գործերի նախարարության Հաղորդակցության վարչությունից և ուղարկված 1914 թ. հուլիսի 11-ին, վերաբերում է հույների թողած ունեցվածքի տնօրինմանը.

Վերջերս արձակված և Նախարարների խորհրդի կողմից հաստատված կայսերական հրամանագրով կարգադրվել է, որ այն ունեցվածքները, որոնք մնացել են մեկնող հույներից հետո և կարող են պահպանվել, պետք է հավաքվեն և դրվեն պատշաճ թաղամասերի պահեստներում, իսկ նրանց որոշ անասուններ և այլ ունեցվածքներ պետք է ապահովվեն՝ դրանք հանձնելով վստահելի անձանց խնամքին: Հարկավոր է անհրաժեշտ քայլերը ձեռնարկել՝ այս հրամանը պատշաճորեն կատարելու համար⁷⁹:

Հետագա ամիսներին հույների և նրանց գույքի վերաբերյալ հիշեցումներ են ուղարկվել նահանգներ, որոնք տարբերվում էին հայերի հանդեպ քաղաքականությունից: 1916 թ. հունվարի մի հեռագրով Չանաքքալեի գավառին հիշեցվում է, որ «ներկա իրավիճակում պետք է հետևել հանդուրժողականության ու բարյացակամության քաղաքականության, և Գալիպոլիի [շրջանի] անշարժ գույքերի հետ պետք է վարվել համապատասխանաբար», մինչդեռ՝ «հայերին

78 BOA/DH.ŞFR, № 42/211, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Այդինի ու Հյուդավնեղիզարի (Բուրսա) նահանգներ և Իզմիրի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1914 թ. հուլիսի 6:

79 BOA/DH.ŞFR, № 42/255, Ներքին գործերի նախարարության Հաղորդակցության գլխավոր վարչության Չորրորդ բաժանմունքի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Այդինի ու Հյուդավնեղիզարի (Բուրսա) նահանգներ և Իզմիրի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառներ, թվագրված 1914 թ. հուլիսի 11:

պատկանող գույքերի վերաբերյալ... կտրվեն առանձին հրահանգներ»⁸⁰:

1917 թ. հունվարի 16-ին Տրապիզոնի ու Մամսունի սեծովյան նահանգներ ուղարկված հեռագրում նշվում է, որ «[հույների կողմից] դատարկ թողած տարածքներում, հատկապես ծովափնյա շրջաններում, տեղավորվում են [մահմեդական] գաղթականներ: Շարժական գույքը պետք է պահպանվի եկեղեցիներում ու պահեստներում»: Տեղական պաշտոնյաներին ծանուցվել է, որ «ներկայումս փոստով ուղարկվում է հույների գույքի վերաբերյալ հրահանգների առանձին խումբ»⁸¹: Հրահանգների այդ խմբերից մեկից, որը 1917 թ. փետրվարի 24-ին ուղարկվել էր Ջանիկի գավառ, երևում է, որ դրանք առաքվել են տասնմեկ օր առաջ, և որ «հույների ունեցվածքները ենթական չեն լուծարման, ինչպես հայերին էին»: Փոխարենը, «նրանց [իմա՝ հույներին] պատկանող շարժական ու անշարժ գույքը պետք է հսկվի, և այն իրերը, որ կտրվող են կամ փչանալու ենթակա, պետք է տրվեն [նոր] գաղթականներին ու զինվորականությանը՝ փոխարենն ստացական վերցնելով»⁸²:

Եվ սակայն, չնայած հույների ու հայերի լքված գույքերի տնօրինման վերաբերյալ մի շարք հեռագրերով այդ ընթացքում ուղարկված տարբեր հրահանգներին, շեշտվում էր այն կետը, որ հայերի ունեցվածքին վերաբերող հրամանները վավեր էին նաև հույների ունեցվածքի առնչությամբ: Հյուղավենդիգարի (Բուրսա) նահանգ 1915 թ. հուլիսին ուղարկված մի հեռագրով, օրինակ, նահանգապետի գրասենյակը տեղեկացվում էր, որ «քանի որ տեղափոխվելիք հույների վերաբերյալ առանձին հրահանգներ գոյություն չունեն, պետք է կիրառվեն այն հրահանգները, որոնք նախկինում ուղարկվել են հայերի

լքած գույքի պաշտպանության ու պահպանման առնչությամբ»⁸³: Այն հանձնախմբերը, որոնք, այդ հրահանգների համաձայն, ստեղծվել էին հայերի գույքի տնօրինման նպատակով, պետք է պատասխանատու լինեին նաև հույների գույքի համար: 1917 թ. փետրվարին Ջանիկ ուղարկված մի հեռագրում ևս նշվում է, որ հայերի գույքի համար նախկինում կազմված Լուծարման հանձնախումբը պետք է զբաղվի հույների լքած գույքով⁸⁴:

Եվ սակայն, չնայած այն հանգամանքին, որ հայերի ու հույների գույքերի տնօրինման հարցով զբաղվում էին միևնույն հանձնախմբերը, վերջիններիս գույքն ամբողջությամբ չի լուծարվել. հույների ունեցվածքի մեծ մասը «պահպանվել» է: Ավելին, այդ երկու տարբեր համայնքների ունեցվածքների տնօրինման միջև ուշագրավ տարբերություն կար, որովհետև այդ գործընթացի վերահսկողությունն ու վարչարարությունը հանձնարարված էին երկու տարբեր նախարարությունների: Ջանիկի գավառ IAMM-ի ուղարկված վերը մեջբերված հեռագրում (1917 թ. փետրվարի 24-ի) Վերաբնակեցման վարչությունը նշում է, որ «հույների լքած գույքը պատկանում է քաղաքացիական վարչությանը [mülkiye], ոչ թե Ֆինանսների նախարարությանը, ինչը հայերի ունեցվածքի դեպքում էր: Հետևաբար, հույների ունեցվածքը «լուծարման ենթակա չէ: Բացի այդ, կարիք չկա լուծարման նոր հանձնախումբ ստեղծելու, քանի որ այդ հանձնախմբերն արդեն իսկ գոյություն ունեն, կարող են զբաղվել այդ հարցով՝ կենտրոնական կառավարության օժանդակությամբ»: Այս տեղեկությունը վերը քեր-

80 BOA/DH.ŞFR, №59/260, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Չանաքքալեի գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 10:

81 BOA/DH.ŞFR, №72/28, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ և Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. հունվարի 16:

82 BOA/DH.ŞFR, №73/69, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 24:

83 BOA/DH.ŞFR, №54/296, Ներքին գործերի նախարարության ՑՆԿ-ի ծածկագրված հեռագիրը Հյուղավենդիգարի (Բուրսա) նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 6:

84 BOA/DH.ŞFR, №72/229, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 13: Առանձին գրությամբ այս մասին հաղորդվել է նաև Ջանիկի Լուծարման հանձնախմբի նախագահությանը՝ նշելով, որ «հույների [լքած] գույքի առնչությամբ գործառնությունները Լուծարման հանձնախումբը պետք է իրականացնի այն տարածքներում, ուր այն կա, իսկ այն տարածքներում, ուր այն չկա, դրանք պետք է կատարվեն հանձնախմբերի կողմից, որոնք պետք է կազմվեն քաղաքացիական վարչության ամենաարձրաստիճան պաշտոնյաների նախագահության ներքո (BOA/DH.ŞFR, №74/69, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի Լուծարման հանձնախմբին, թվագրված 1917 թ. մարտի 20):

ված նամակում կրկնվում է հանձնախմբի առջև և ասվում, որ, «ի տարրերություն հայերի ունեցվածքի, հույների ունեցվածքը լուծարման ենթակա չէ, և տեղահանված անձանց պատկանող իրերը պետք է թողնել ընտանիքի անդամներին կամ [գործ]ընկերներին»: Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր «պաշտպանել ու պահպանել շարժական ու անշարժ գույքը», որ պատկանում էր հույներին, և միայն «այն իրերը, որոնք կոտրվող են կամ փչանալու ենթակա, պետք է տրվեն [մահմեդական] գաղթականներին ու զինվորականությանը՝ փոխաբենն ստացական վերցնելով»⁸⁵:

ԵՉՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ.

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՅՈՒՅՆԵՐՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՆ ՏԱՐԲԵՐԱԿԿԱԾ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐ

Անատոլիայում ճամփորդող մի շարք օտարերկրացի ճանապարհորդներ ականատես են եղել պատերազմի ընթացքում հույների ու հայերի նկատմամբ տարբերակված վերաբերմունքի: Նրանք իրենց հուշատետրերում ու գեկույցներում հաճախ գրանցել են, որ հայերի համեմատ հույները չէին ենթարկվում առանձնահատուկ բռնի կամ դաժան միջոցառումների: Թիզկա անունով մի թղթակից «Kölnische Zeitung»-ի համար երկարաշունչ մի հոդվածում Մարմարայի շրջանից հունական քաղաքներից ու գյուղերից տեղահանությունը բնութագրել է իբրև «պարպում՝ առանց բռնություն գործադրելու»⁸⁶: Մարզվանի (Մերզիֆոն) հայկական քոլեջի մի ուսուցիչ նկատել է. «Կոստանդնուպոլիս ճանապարհորդելիս անցանք Թուրքիայի եվրոպական մասից արտաքսված հույների մոտով: Նրանք կարծես թե այնպիսի ողորմելի վիճակում չէին, ինչպես հայերը, որովհետև նկատելի ունեցվածք ունեին իրենց հետ: Քանի որ նրանք նավով ու գնացքով էին ճամփորդում, իրենց ճանապարհին նվազ վտանգներ ու դժվարություններ էին կրում»⁸⁷:

85 BOA/DH.SFR, №73/69, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 24:

86 DE/PA-AA/R 14087, Թիզկայի «գաղտնի» գեկույցը Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 5:

87 NA/RG 59, 867.4016/106, Դեսպան Մորգենթաուի 1915 թ. հուլիսի 26-ի գեկույցը: Գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 143:


Էդիրնեի ամերիկյան հյուպատոսարանի մի ներկայացուցիչ 1916 թ. մարտի 5-ին իր վերադասներին տեղեկացրել է, որ Թրակիայի թյուրքացման կառավարության քաղաքականությունն անշեղորեն շարունակվում է. «Այս մարդկանց հալածանքները, որոնց ես ժամանակ առ ժամանակ անդրադարձել եմ, և որոնք կատարվում են իշխանությունների կողմից՝ Թրակիան թյուրքացնելու և իրենց ավելի խելացի ու բարգավաճ հայրենակիցների հաշվին մուսուլմաններին հարստացնելու նպատակով, երբեք չեն դադարել, սակայն հայերի ընդհանուր արտաքսումից հետո դրանք կատարվում են ավելի հանդարտ և նվազ բարբարոսությամբ, ասում են՝ Գերմանիայի խորհրդով»⁸⁸: Եվ իրոք, նույնիսկ հայերի տեղահանությունների ու կոտորածների ամենասաստիկ շրջանում այն հույներին, որոնց հայերի հետ շփոթելով սխալմամբ տեղահանել էին, թույլ էր տրվում վերադառնալ իրենց տները: Դա կարելի է տեսնել հեռագրերում, ինչպես, օրինակ, 1915 թ. նոյեմբերին Կարահիսար-ի Մահիբ (Աֆյոն Կարահիսար) ուղարկված հեռագրում, ուր հաստատվում է, որ «հայցվոր Գարիգոր օղլուին, որն [այժմ] հասկացված է, որ հույն է, պետք է թույլ տալ վերադառնալ իր՝ Արիստինյոս գյուղը»⁸⁹:

Բացի այդ, քազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ տեղահանությունների ժամանակ հայերին իրենց հույն և մյուս հարևանները թաքցնում էին: Իբրև օրինակ, այստեղ կարելի է բերել ամերիկացի միսիոնների վկայությունը, որը Մարզվանից գրել է, որ հույների լեռնային գյուղերում թաքնված հայերի թիվը միայն իր շրջանում հասնում է «հազարների»⁹⁰: Այդ երևույթն այնքան տարածված է եղել, որ


88 NA/RG 59, 867.00/786, Էդիրնեում ամերիկյան հյուպատոսի տեղակալ Չարլզ Է. Ալենի գեկույցը Ստամբուլի ամերիկյան հյուպատոսություն, թվագրված 1916 թ. մարտի 5: Գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 493.

89 BOA/DH.SFR, №58/36, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Մահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 16:

90 NA/RG 59, 867.4016/252, Մարզվանում գործող ամերիկյան միսիոներ օրիորդ Ֆրանսես Քեյջի 1915 թ. դեկտեմբերի 22-ի գեկույցը՝ ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի միջոցով հանձնված Պետքարտուղարությանը: Վերաբարտված է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 407, 414: Հայերի քննաշնչման ընթացքում Անատոլիայի հույների վիճակին վերաբերող հավելյալ նյութերի համար տե՛ս Ioannis K. Hassiotis, "The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-23)", որ գտնվում է հետևյալ տեղում. History, Politics, Ethics, Hovannisian, 129-52.




Քարտեզ 3. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը թուրքական կայսրությունում: Աղբյուրը՝ վերամշակված Հայ ազգային ինստիտուտի (Armenian National Institute--ANI) քարտեզից



Քարտեզ 4. 1915 թ. Հայոց ցեղասպանությունը թուրքական կայսրությունում: Աղբյուրը՝ վերամշակված Հայ ազգային ինստիտուտի (Armenian National Institute--ANI) քարտեզից

որոշ շրջաններում, ինչպես Թոքատում, իշխանությունները ավերել են հույն գյուղացիների տները, որպեսզի գտնեն, ենթադրաբար, այնտեղ թաքնվող հայերին⁹¹:

Չնայած պատերազմական ժամանակաշրջանի հետզհետե ավելի խստացող քաղաքականությանը, հատկապես 1916 թ. վերջերին ու 1917 թ. առաջին ամիսներին, հույների հետ կառավարության վարվելակերպը, հայերի դեմ ձեռնարկած միջոցառումների հետ որոշ առումներով համեմատելի լինելով հանդերձ, տարբերվում էր իր ծավալով, նպատակով ու դրդապատճառով: Հաջորդ գլուխներում ամենայն մանրամասնությամբ կհետազոտենք հայերի նկատմամբ օսմանյան կառավարության քաղաքականությունը:



Օսմանյան կայսրության քաղաքականությունը 1914 թ. ընդհանուր առմամբ: Աղբյուրը՝ «The Ottoman National Archives»:

5

ՀԱԿԱՅԱՅ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ

Օսմանյան ժամանակաշրջանի պահպանված փաստաթղթերից քացահայտվում է, որ իթթիհադական կառավարության պատերազմական շրջանի քաղաքականության մեջ հստակ տարբերակում կար կայսրության հայկական և քրիստոնյա մյուս համայնքների նկատմամբ: Հույներն, ինչպես տեսանք, տեղահանվել ու արտաքսվել են դաժանորեն, սակայն հայերը եղել են լիակատար ոչնչացման թիրախ: Նրանց բնաջնջելու որոշման մեջ, անկասկած, կարևոր դեր է խաղացել Անատոլիան միատարրացնելու երիտթուրքերի համընդգրկուն նպատակը, սակայն սխալ կլինի եզրակացնել, թե այդ երկուսի միջև պատճառահետևանքային ուղիղ կապ կա: Առկա փաստերից չի բխում, որ ընդհանուր բնակչության վերակազմակերպումն ինքնըստինքյան հանգեցրել է մի որոշակի խմբի բնաջնջման: Հիմնական հարցն ուրեմն ժողովրդագրական քաղաքականության և ցեղասպանության միջև հարաբերության բնույթն է: Բացի այդ, թեև ցեղասպանության համատեքստում չի կարելի անտեսել Առաջին համաշխարհային պատերազմի կարևորությունը, Օսմանյան կայսրության հայերի տեղահանությունը ոչ ռազմական անհրաժեշտություն էր, ոչ էլ պատերազմի պատահար, ինչպես հաճախ պնդել են պատմության թուրքական տարբերակի ջատագովները: Տեղահանության որոշումն իր մեջ շատ ավելին է պարփակում, քանի որ մինչև թշնամական գործողություններն սկսելը երիտթուրքերի մեծագույն խնդիրը եղել է հայկական բարենորոգումների հարցը: Ինչպես հայտարարել է հենց ինքը՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան, իրենց հիմնական մտադրությունը, որը ոչ մի կապ չունի պատերազմի հետ, «[հայկական խնդիրը] վերացնելն է այնպես, որ դա լինի սպառիչ ու բացարձակ [esashi bir suretde hal ve fasli ile külliyyen izalesi]»:

91 Greek Patriarchate, Persecution of the Greeks in Turkey, 98.

Պատերազմի ընթացքում կրած մի շարք պարտություններից հետո օսմանյան ղեկավարներն սկսել էին հավատալ, որ հայկական բարենորոգումների հարցը վերածվել է կայսրության ազգային անվտանգության ու տարածքային ամբողջականության դեմ մահացու սպառնալիքի: Հետևաբար, հայերի հանդեպ քաղաքականության որոշումները կարելի է դիտել Անատոլիայի ընդհանուր էթնիկ գտումների և ռազմական պարտությունների երկակի համատեքստերում, որոնք հայկական բարենորոգումների հին հարցը փոխակերպեցին օսմանյան պետության համար ազգային անվտանգության ճակատագրական հարցի²:

Այս գլխում օսմանյան արխիվների փաստագրական նոր վկայությունների լույսի ներքո կներկայացվի հայերի հանդեպ երիտթուրքերի քաղաքականության զարգացումը երկակի այդ համատեքստում՝ սկսած պատերազմի սկզբին ձեռնարկված առաջին միջոցներից, վերջացրած հետզհետե հայ ժողովրդի վերացման ծրագրի վերաճած արմատական որոշումներով:

ՄԻ ԸԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հայոց ցեղասպանության ժամանակագրության քննարկումներում կենտրոնական նշանակություն ունի դիտավորության հարցը՝ մտահղացումից ու ծրագրումից մինչև իրականացում: Մի կողմից, այն գիտնականները, որոնք շեշտում են շարունակականության պահը, փորձում են բնաջնջման որոշումը բացատրել մշակութային, գաղափարախոսությամբ կամ մտայնությամբ: Նման մտեցման դեպքում կարևոր տեղ են զբաղեցնում այնպիսի դրույթներ, ինչպիսին են «կոտորածի ենթամշակույթը», «սուր հակամարտությունները... բռնությամբ լուծելու օսմանյան թուրքերի հակումը», ինչպես նաև հետևյալ կարգի պնդումները. «խլամական վարդապետություններն ու ավանդույթները... փոփոխության հանդեպ բնածին դիմադրություն են մարմնավորում»³: Հայոց ցեղասպանությունը դիտվում է իբրև մի որոշման արդյունք, որը կայացվել է Առաջին համաշխարհային պա-

2 Հայերին բնաջնջելու վերաբերյալ երիտթուրքերի որոշման վրա ռազմական անհաջողությունների դերի ավելի հանգամանակից քննարկման համար տե՛ս Akçam, A Shameful Act, 111–29:

3 Այդ դրույթների համար տե՛ս V. N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus (Providence and Oxford, Berghahn Books, 1995), 4–6, 121:

տերազմն սկսվելուց առաջ ինչ-որ պահի և պատեհապաշտորեն իրականացվել ռազմական հակամարտության բարենպաստ միջավայրում⁴: 1914 թ. օգոստոսին հայերի դեմ ձեռնարկված առաջին քայլերը ներկայացվում են իբրև «ցեղասպանության առաջին անդամալուծող նախաձեռնությունը», այսինքն՝ իբրև քաղաքական հին որոշման գործադրում⁵: Այս դրույթի գլխավոր պաշտպան Վահագն Ն. Տատրյանն այդ որոշման երկու տարբեր դեպք է ներկայացնում. Միություն և առաջադիմություն կոմիտեի 1910 և 1913 թվականների համագումարները⁶:

Գիտնականների մեկ այլ խումբ, չբացատրելով հանդերձ «շարունակականությամբ» բացատրվող փաստերը, պատերազմը դիտում է ոչ միայն իբրև պատեհ պահ, այլև իբրև պատճառ և վճռորոշ գործոն: Այս դեպքում ավելի շեշտադրվում է պատահականության դրույթը, ինչպես տեսնում ենք հետևյալ պնդման մեջ. «Ցեղասպանությունը հիմնականում հայերի հանդեպ թուրքերի ռասայական կամ կրոնական ատելության... կամ ռազմատենչ ազգայնականների երկարատև ծրագրման արդյունք չէր: Ցեղասպանությունն ավելի շուտ կործանման եզրին գտնվող կայսրության նախաձեռնած դիպվածային իրադարձություն էր, երբ երիտթուրքերը վերջին, հուսահատ ջանքը գործադրեցին վերակենդանացնելու և ընդլայնելու կայսրությունը»⁷:

4 "The Armenian Genocide and the Pitfalls of a 'Balanced' Analysis," Armenian Forum 2 (Summer 1998), 73–131. Այդ հոդվածում Վ. Ն. Տատրյանը մանրամաստորեն ամփոփում է այս հարցի վերաբերյալ իր տեսակետները և առաջարկում մի երկրորդ հայացք նետել իր ավելի վաղ աշխատությունների վրա. "Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide," International Journal of Middle East Studies 18 (1986), 311–60; "Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications," Yale Journal of International Law 14, №2 (Summer 1989), 300–301; "The Armenian Genocide in Official Turkish Records," special issue containing the collected essays of V. N. Dadrian, Journal of Political and Military Sociology 22, №1 (Summer 1994), 29–96; History of the Armenian Genocide, 324–26:

5 V. N. Dadrian, "The Armenian Genocide: An Interpretation," in America and the Armenian Genocide of 1915, ed. Jay Winter (New York and Cambridge, Cambridge University Press, 2003), 62.

6 V. N. Dadrian, "The Convergent Roles of the State and a Governmental Party in the Armenian Genocide," in Studies in Comparative Genocide, ed. Levon Chorbajian and George Shirinian (London, Macmillan; New York, St. Martin's Press, 1999), 92–125.

7 Ronald Grigor Suny, "Empire and Nation: Armenians, Turks, and the End of

Հայոց ցեղասպանության մեջ շարունակականության ու դիպվածայնության այս բանավեճերը նմանվում են Հոլոքոստի մասին «ֆունկցիոնալիստների» ու «միտոմնավորականների» միջև բանավեճերին⁸: Ժամանակին այս բանավեճին կողմ կազմած կամ մեջտեղում ինչ-որ տեղ դիրք գրաված գիտնականները նկատելի ավանդ են ներդրել Հոլոքոստը հասկանալու գործում, սակայն Հոլոքոստի ուսումնասիրությունն արդեն շատ առաջ է անցել այդ տարբերակումից: Մասնավորապես, Արևելյան Եվրոպայի արխիվների բացումն ու աղբյուրային նյութերի հավելյալ մատչելիությունը հանգեցրել են շատ ավելի հարուստ մեկնաբանությունների⁹: Դժվար չէ կանխատեսել, որ հայկական ցեղասպանագիտությունը նույնպես կընթանա նման ուղղությամբ:

Թեև այդ գիտնականների մտքերի ուսումնասիրությունը չի մտնում սույն աշխատության շրջանակի մեջ, հարկավոր է շեշտել ևս երեք պահ: Առաջինը վերաբերում է Հայոց ցեղասպանության աղբյուրային մատչելի նյութերի սահմանափակությանը, որը հայկական ցեղասպանագիտության ամենանշանակալի մարտահրավերներից մեկն է: Ռուսական ու օսմանյան արխիվային աղբյուրները, հայկական զանազան սկզբնաղբյուրների հետ միասին, դեռևս բավարար չափով ընդգրկված չեն Հայոց ցեղասպանության մեր հասկացության մեջ՝ այն անխուսափելի հետևանքով, որ շարունակականության, դիպվածայնության և նման քննարկումները կարող են երբեմն շահարկող բնույթ ստանալ: Անբավարար տվյալների վրա հիմնված բանավեճի փոխարեն, սույն հատորն առաջնությունը տալիս է օսմանյան փաստաթղթերում առկա նոր վկայությունները ներկայացնելուն, որոնք օգնում են լուսավորելու ցեղասպանության մերկացվող գործընթացի զանազան հատկանիշները:

the Ottoman Empire,” in *Armenian Forum* 2 (Summer 1988), 17.

- 8 Այս հարցի վերաբերյալ տարբեր տեսակետների ավելի ծավալուն ամփոփման համար տես Richard Hovannesian, “The Armenian Genocide: War-time Radicalization or Premeditated Continuum”, in *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, ed. Richard Hovannesian (New Brunswick and London, Transaction, 2007), 3–19:
- 9 Այս հարցի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տես Ian Kershaw, *Hitler, the Germans, and the Final Solution* (New Haven and London, Yale University Press, 2008), 237–81; Richard Bessel, “Functionalists vs. Intentionalists: The Debate Twenty Years On or Whatever Happened to Functionalism and Intentionalism?”, *German Studies Review* 26, №1 (Feb. 2003), 15–20:

Երկրորդ, Հայոց ցեղասպանության մեջ շարունակականության ու դիպվածայնության հարցը կախված է այն կասկածելի ենթադրությունից, թե կարելի է ցուցադրել միակ, վերջնական մի որոշում: Հոլոքոստի վերաբերյալ երկար տարիների բանավեճի ընթացքում ֆունկցիոնալիստներն ու ստրուկտուրալիստներն ի վերջո հասկացան, որ բնաջնջման այդ «վերջնական որոշման» որոնումը շատ իմաստալից չէր: Փոխարենը նրանց առջև էր որոշումների մի հերթագայություն, որոնցից յուրաքանչյուրը ծնունդ էր տվել հաջորդին: Գործընթացը հասկանալն սկսվեց դիտվել իբրև ավելի կարևոր հանգամանք, քան եզակի մեկ որոշման վրա կենտրոնանալն ու դրա ամսաթիվը պարզել փորձելը¹⁰: Տողերիս գրողը, հենվելով իր ձեռքի տակ եղած օսմանյան փաստաթղթերի վրա, իրեն ավելի մոտ է զգում գործընթացի գաղափարին: Հայերի բնաջնջումը կոնկրետ օրվա մեկ որոշման արդյունք չի թվում, այլ, ավելի շուտ, ցեղասպանությունը թվում է հետզհետե արմատական դարձած մի շարք որոշումների միասնական արգասիք, որոնցից յուրաքանչյուրը իրադարձությունների միմյանց հերթագայող հեղեղի մեջ ծնել է հաջորդին:

Երրորդ, շարունակականության ու դիպվածայնության հստակ տարանջատումն ու հակադրումը չեն կարող շատ բովանդակալից լինել: Հարկավոր է նշել, որ պատմական գործընթացներն իրենց մեջ ներառում են երկու չափումներն էլ, և այդ առումով բանավեճի երկու կողմերն էլ պարունակում են որոշ ճիշտ տեսակետներ և իրենց նշանակալի ավանդն են ներդրել ցեղասպանության գործընթացի մեր ըմբռնման մեջ: Սակայն կարևորը բնաջնջման գործընթացում այդ երկու դրույթների փոխկապակցվածությունն է: Այս գլխում ներկայացվող նոր փաստերից ելնելով՝ Հայոց ցեղասպանության մեջ շարունակականության հարցն ընդդեմ դիպվածայնության կարող է ձևակերպվել հետևյալ կերպ. 1913 թ. իթթիհադականների կողմից որոշված Անատոլիայի միատարրացման ժողովրդագրական ծրագիրը ինչու հայերի դեպքում վերածվեց ցեղասպանության: Այս հարցին հնարավոր չէ պատասխանել մտադրության կամ «եզակի որոշման» մասին մտահայեցողական վարկածներով, այլ դիմամիկ այն գործընթացների վերլուծությամբ, որոնք բացահայտվում են պահպանված փաստաթղթերով:

10 Christopher R. Browning, “The Decision-Making Process”, in *The Historiography of the Holocaust*, ed. Dan Stone (New York, Palgrave Macmillan, 2004), 173–97.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄՆԵՐԻ 1914 Թ. ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԹԱԼԵԱԹԻ ՉԵԿՈՒՅՑԸ

Պատմական իրադարձությունների բացատրության մեջ վճռորոշ շրջադարձների բացահայտումը վաղեմի ավանդույթ է: 1878 թ. Բեռլինի պայմանագիրը, 1894-1896 թթ. ջարդերն ու Ադանայի 1909 թ. կոտորածները հաճախ նշվում են իբրև «Հայկական հարցի» շրջադարձային կետեր¹¹: Եթե 1912-13 թթ. Բալկանյան պատերազմներն ընդունում ենք իբրև Անատոլիայի վերակառուցման ժողովրդագրական քաղաքականության պատմական առանցք, 1914 թ. փետրվարին Ռուսաստանի հետ Հայկական բարենորոգումների համաձայնագիրն այդպիսի մեկ այլ կետ է այն գործընթացի համար, որի գագաթնակետը եղավ հայերի բնաջնջումը¹²:

Բալկանյան պետությունների հաջողությամբ խրախուսված՝ հայերն սկսել էին իրենց խնդիրների լուծման համար օտար պետությունների կողմից օժանդակություն որոնել: Այդ որոնումը համընկավ Օսմանյան կայսրությունից մնացած տարածքները բաժանելու վերաբերյալ Մեծ տերությունների քննարկումներին: Բեռլինում Ֆրանսիայի դեսպանը, որը Մեծ տերությունների միջև բանակցությունների պատասխանատուն էր, 1913 թ. սեպտեմբերի 25-ին գրել է, որ ընթացող քննարկումները «միասնաբար ու վերջնականապես [կկարգավորեն] ապագայի մասնաբաժինները և կներկայացնեն Փոքր Ասիայում ազդեցությունների ոլորտները»¹³: Այդ բանակցությունների վերջնական արդյունքը եղավ Ֆրանսիայի, Գերմանիայի, Բրիտանիայի ու Իտալիայի միջև երկկողմ համաձայնությունների մի շարք, որոնցով

Անատոլիան բաժանվում էր տնտեսական ազդեցության գոտիների: Մակայն, ինչպես Ֆրանսիայի վերը նշված դեսպանն է նկատել 1914 թ. մարտի 16-ին, «այս սակարկության նպատակը... Փոքր Ասիան սոսկ տնտեսական առումով բաժանելը չէր, ...այլ նաև այն քաղաքականորեն մասնատելը»¹⁴: 1914 թ. մարտին Մեծ Բրիտանիայի հետ Բաղդադի պայմանագրի ստորագրումից հետո Լոնդոնում Գերմանիայի դեսպան իշխան Լիքնովսկին Բեռլին ուղարկած իր գրության մեջ նշել է, որ «իրականում այս համաձայնագրի նպատակը Անատոլիան ազդեցության գոտիների բաժանելն է: Մակայն սույթանի իրավունքների հանդեպ հարգալից երևալու համար հարկավոր է մեծագույն զգուշավորություն ցուցաբերելով երբեք չգործածել այդ արտահայտությունը»¹⁵: 1905 թվականից հետո Անատոլիայի ու Միջին Արևելքի նկատմամբ Ռուսաստանի աճող հետաքրքրությունը գաղտնիք չէր տերություններից ոչ մեկի համար: Նման պայմանների ներքո անխուսափելի էր այն հեռանկարը, որ հայերի կողմից օտարերկրյա օժանդակության որոնումը մրցակցություն էր ստեղծելու Մեծ տերությունների միջև¹⁶:

Հայկական բարենորոգումների վերաբերյալ բանակցություններն սկսվել են 1913 թ. գարնանը՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի մասնակցությամբ: Այդ Մեծ տերությունները համաձայնություն ունեին մի հարցում, որը օսմացիներն ըստ էության համարում էին «քայլ մասնատման ուղղությամբ»¹⁷: «Ասիական Թուրքիան չի կարող շատ երկար ապրել», ասել է Սանկտ Պետերբուրգում Ֆրանսիայի ժամանակավոր հավատարմատարը, որն առաջարկել է Անատոլիայում «ստեղծել ազգությունների վրա հիմնված փոքր պետություններ, ինչպես հայկական, սիրիական ու արաբական»¹⁸:

11 Հայերի ցեղասպանության վերաբերյալ բոլոր աշխատություններում կարելի է մանրամասն տեղեկություններ գտնել վերոհիշյալ շրջադարձային կետերի մասին: Ընդհանուր համառոտ ամփոփման համար տես Richard Hovannisian, "The Armenian Question in the Ottoman Empire", in *The Armenian People from Ancient to Modern Times*, vol. 2, *Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century*, ed. Richard Hovannisian (New York, St. Martin's Press, 1997), 203-38:

12 Ցավոք, Հայկական բարենորոգումների շուրջ Բալկանյան պատերազմներից անմիջապես հետո սկսված բանակցությունների վերաբերյալ սպառնիչ աշխատություն չկա: Այդ նյութի շուրջ մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել հետևյալ տեղում. Türk İnkılabı Tarihi, h. 2, մաս 3, 18-187: Sini նաև Taner Akçam, *A Shameful Act*, 98-102:

13 Նույն տեղում, 144:

14 Նույն տեղում, 477:

15 Նույն տեղում, 475:

16 Ռուսաստանի քաղաքականության և Հայկական բարենորոգումների վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տես Roderic Davison, "The Armenian Crisis, 1912-1914", in *American Historical Review* 53, №3 (April 1948), 481-505:

17 Բարենորոգումների ու բանակցությունների նկարագրությունը՝ ըստ Ստամբուլում Բրիտանիայի ժամանակավոր հավատարմատար Մարլինգի հանդիպումների վերաբերյալ Լոնդոն ուղարկած զեկույցի (տես Bayur, *Türk İnkılabı Tarihi*, h. 2, մաս 3, 131):

18 Նույն տեղում, 140:

Ստամբուլում Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանզենհայմը 1914 թ. հունիսի 30-ին հայտարարել է, «այս գործը նշանակում է մասնատման սկիզբ»¹⁹: Ռուսաստանի ներկայացուցիչ Անդրե Մանդելշտամը, որը Ռուսաստանի կողմից պատրաստել էր բարենորոգումների առաջին առաջարկը, նախաձեռնությունը նկարագրել է իբրև «Հայաստանը Թուրքիայի ճշումներից փրկելու առաջին քայլ»²⁰: Օսմանյան կայսրությունում Ավստրիայի դեսպան կոմս Պալավիցինին ռուսներից լսել էր, որ բարենորոգումների իրականացմամբ գրեթե ավարտված կլինի ասիական Թուրքիայի մասնատումը²¹:

Կողմերն ի վերջո հանգել են փոխըմբռնման, որը հայտնի է իբրև Ենիքյոյի համաձայնություն, որն օսմանցիներն ստիպված եղան ստորագրելու 1914 թ. փետրվարի 8-ին՝ չնայած դրան սաստիկ ընդդիմանալուն: Ըստ այդ համաձայնության, արևելյան նահանգները պետք է միավորվեին երկու մեծ նահանգի մեջ, և յուրաքանչյուրում պետք է նշանակվեր լիակատար իշխանությամբ օժտված օտարերկրյա տեսուչ: Իթթիհադական ղեկավարների համար սա ճակատագրական, թերևս աղետալի քայլ էր, քանի որ սուկ այդ գործընթացով կայսրության համար կորչում էին Սերբիան, Հունաստանը, Ռումինիան ու Բուլղարիան: Դրանից հետո հայերն, իբրև այդ բարենորոգումների համար նախատեսվող շահառուներ, դիտվում էին իբրև կայսրության գոյության շարունակության դեմ լուրջ ու մշտական սպառնալիք: Ստամբուլում Անգլիայի զինվորական կցորդի չարագույժ բառերը 1915 թվականին դարձան մարգարեական. «Եթե Մեծ տերություններն առանց Թուրքիայի հետ խորհրդակցելու փորձեն նրան ստիպել ընդունելու... Հայաստանի... ինքնավարությունը, այսօր Ստամբուլում իշխանության եղածներն ավելի շուտ կրակի կմատնեն բոլոր նահանգները, քան կենթարկվեն դրան»: Այնուհետև շարունակել է. «Եթե Ռուսաստանի ծրագիրն ընդունվի, երկրով մեկ կոտորածների ճանապարհ կբացի»²²: Այն, ինչ ի վերջո ընդունվեց,

19 Նույն տեղում, 117:

20 André Mandelstam, Das Armenische Problem im Lichte des Volker und Menschenrechts (Berlin, G. Stilke, 1931), 31

21 HHStA PA 12, 463, Yeniköy, 11 July 1913, №38/B, in Österreich-Armenian, 1872-1936: Faximiliesammlung Diplomatischer Aktenstücke, ed. Artem Ohandjanian, vol. 5 (Vienna, Self-published, 1995), 4069.

22 Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 2, մաս 3, 83-84:

որոշ չափով տարբեր էր ռուսների ծրագրից, սակայն արդյունքը նույնը եղավ:

1914 թ. Հայկական բարենորոգումների համաձայնության անհանդուրժելի բեռը հրատապ դարձրեց պատերազմի մեջ մտնելու օսմանյան որոշումը: «Մեր միակ նպատակը համաշխարհային այս պատերազմի միջոցով գոյություն ունեցող բոլոր այն օտարերկրյա պայմանագրերից ձեռքբազատվելն էր, որոնցից յուրաքանչյուրն հարված էր ներկայացնում մեր ներքին անկախությանը», մտաբերում է իթթիհադական ղեկավար Ջեմալ փաշան և ավելացնում, որ «ցանկալի էր նաև պատառոտել արևելյան Անատոլիայի բարենորոգումներին վերաբերող համաձայնագիրը»²³: Բուլղարիան հարկադրված չլինելով մտնելու պատերազմի մեջ, իթթիհադականները ողջունեցին այն, ինչպես 1914 թ. դեկտեմբերի 29-ին հաստատում է Ջեմալ փաշան: «Ես հավաստիացնում եմ, որ Գերմանիան մեզ չի ստիպել մտնել պատերազմի մեջ, ինչպես պնդում են ոմանք», հայտարարել է Ջեմալը, «ոչ, մենք ձգտում ենք Գերմանիայի հետ դաշինքի, որովհետև գիտենք, որ մեր ապագան կապահովվի միայն պատերազմի միջոցով»²⁴:

Բարենորոգումների քանակությունների ժամանակի հայ քաղաքական ղեկավարները հետագայում պատմել են, որ երիտթուրքերն իրենց սպառնացել էին՝ Մեծ տերություններին դիմելու և դրանով Օսմանյան կայսրության կործանման ճամփան քանալու համար: Երիտթուրքերը հայտարարել էին, որ դա կավարտվի ամբողջ հայ ժողովրդի բնաջնջմամբ²⁵: «Պատմական» մի հանդիպում է կայացել

23 Cemal Pasha, Hatıralar ve Vesikalar (Istanbul, Vakıf, n.d.), 502. Անգլերեն թարգմանության համար տես Memories of a Turkish Statesman, 1913-1919 (New York, George H. Doran, 1922), 276: Տեղեկանալու համար, թե երիտթուրքերն ինչու մտան պատերազմի մեջ, և որոնք էին մյուս պատճառները, տես Taner Akçam, A Shameful Act, 111-26:

24 DE/PA-AA/R 19951/24-33/A4492/№50, enclosure 1, Ambassador Wangenheim to Chancellor Bethmann-Hollweg, թվագրված 1914 թ. հունվարի 28: Վանզենհայմը հաղորդում է, որ Ջեմալ փաշան այդ ելույթն ունեցել է 1914 թ. դեկտեմբերի 29-ին «Դամասկոսի արևելյան ակումբում», և որ, համաձայն Գերմանիայի հյուպատոսի զեկույցի, այն լավ տպավորություն է թողել արաբական շրջանակներում: Ընդհակառակը տես հայտնում Վոլֆգանգ Գուստին՝ այդ փաստաթղթի վրա ուշադրությունն հրավիրելու համար:

25 Այդ հուշերի և զգուշացումների վերաբերյալ տես V. N. Dadrian, "The Con-

իթթիհադական ու դաշնակցական ղեկավարների միջև Պետրոս Հալաջանի տանը, որն ինքն էլ իթթիհադական էր: «Թուրք պետական գործիչները ծայրահեղ բարկացած էին հայերի վրա... Թալեթի, Ջեմալի ու Հալիլի և Արգունու, Շահրիկյանի, Բաստրմաջյանի, Վարդգեսի ու Ջոհրապի միջև հանդիպումներում օսմանյան պետական գործիչներն ապարդյուն խնդրել էին ելնել ու Պողոս Նուբար փաշայի դեմ կանգնել... Այդ գիշեր թուրք քաղաքական գործիչները Պ. Հալաջանի տնից դուրս եկան նյարդային վիճակում և գտան, որ իրենց միակ լուծումը կոտորածն ընտրելն է»²⁶: Այլ աղբյուրներում նշվում է, որ հայերն «զգուշացվել են» իթթիհադական այնպիսի ղեկավարների կողմից, ինչպիսիք են Էնվերը, Ջեմալը, Թալեթն ու Հալիլ Մենթեշեն²⁷: Այսպիսով, 1914 թ. նոյեմբերին պաշտոնապես մտնելով պատերազմի մեջ՝ երիտթուրքերն անվավեր դարձրին բարենորոգումների համաձայնությունը²⁸, սակայն 1915 թ. ձմռանը դրա վերականգնման վտանգ գոյացավ: Ռուսական բանակներն առաջանում էին, և բարենորոգումների ենթակա նահանգների գրավումը կարող էր կատարվել որևէ պահի և հանգեցնել անկախ Հայաստանի հիմնադրմանը: Իթթիհադականները միայն մեկ միջոց էին տեսնում այդ զարգացումը կասեցնելու համար՝ հայերի զոտումը:

1915 թ. քննաչնչման և հայկական բարենորոգումների միջև կապի ամենացայտուն վկայությունը օսմանյան Ներքին գործերի նախարարության 1915 թ. մայիսի 26-ի գրությունն է մեծ վեզիրի գրասենյակ:

vergent Roles of the State and a Governmental Party,” 120–24; History of the Armenian Genocide, 208, 211; and Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict (New Brunswick and London, Transaction, 1999), 125–26:

- 26 «Ծերուկին հիշատակները», Ճակատամարտ, 1919 թ. մարտի 2 (շնորհակալություն Ստեփան Օհանյանին՝ համապատասխան հատվածների թարգմանության համար):
- 27 Հալիլ Մենթեշենի «զգուշացումների» համար տես Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşenin Anıları (İstanbul, Türkiye İş Bankası Yayınları, 1986), 175: Թալեթ փաշայի մասին տես Johannes Lepsius, Der Todesgang des armenischen Volkes: Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges (Potsdam, Der Tempelverlag, 1919), 220–22: Էնվեր փաշայի մասին տես DE/PA-AA/Bo.Kons./Band 170, “Notes of Marine Attaché Humann about a Conversation with Enver”, թվագրված 1915 թ. օգոստոսի 6:
- 28 Համաձայնագիրը չեղյալ հայտարարվելու օրը 1914 թ. դեկտեմբերի 16-ն է (Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 3, մաս 3, 12):

Համաձայն այդ փաստաթղթի, հայերի տեղահանությունը հնարավորություն է ստեղծել «վերացնելու [Հայկական հարցը] այնպիսի ձևով, որն ամբողջական է ու բացարձակ»²⁹: Հայերի վերաբերյալ այդ որոշումների հիմնավորումը բացատրվում է այսպես.

Քանի որ բարենորոգումների հարցը, որն ամբողջովին Օսմանյան պետության ներքին խնդիրն է, հիմա օտար երկրների միջամտության պատճառով դարձել է միջազգային հարց, և քանի որ օսմանյան որոշ նահանգներ այժմ օտարերկրյա ազդեցության տակ են անցնում, պահանջվում է, որ որոշակի զիջումներ [շնորհվեն], և վարչական հատուկ կազմակերպություն ստեղծվի: Սակայն, քանի որ դառը փորձության միջով տեսել ենք, որ օտարերկրյա ազդեցությամբ ու ճնշումներով ստեղծված բարենորոգումներն ու կազմակերպությունները հանգեցրել են Օսմանյան հայրենիքի մասնատմանը, և քանի որ ներքին հարցերի ցուցակում, ի վերջո, հայերի մի մասը համագործակցեց թշնամու հետ՝ երկրի ներսում զինված գրոհներ կատարելու [մեր] զինվորական ուժերի ու քաղաքացիական անմեղ անձանց վրա... Կատավարությունն սկսեց ակտիվացնել բանակը, որը պայքարում էր [զանազան] ճակատներում՝ խորհրդակցելով տեղական պաշտոնյաների ու զինվորական հրամանատարների հետ, թե ինչ է հարկավոր անել... այս քայլն անհրաժեշտ էր՝ կանխամտածված կերպով կարգը վերականգնելու համար և համապատասխան օրենքների ու սկզբունքների [և այլն] հիման վրա³⁰: (Շեղագիրն ավելացված է:)

29 Չնայած այդ փաստաթուղթը հղվել կամ նշվել է նյութին առնչվող զանազան հրատարակություններում, այն երբեք ամբողջությամբ չի թարգմանվել ժամանակակից թուրքերենի: Խնդրո առարկա հղման համար տես Gürün, Ermeni Dosyası, 277–78 և Azmi Süslü, Ermeniler ve 1915 Tehcir Olayı (Van, Yüzüncü Yıl Üniversitesi Rektörlüğü Yayını, Yayın №5, 1990), 110: Փաստաթղթից ժամանակակից թուրքերեն երկար մեջբերման (սակայն, ցավոք, ոչ ամբողջ տեքստի) համար տես Muammer Demirel, Birinci Dünya Harbinde, 53:

30 Atı, 24 February 1920. Օսմանյան քննադրի առանցքային հատվածը հե-

Թալեաթը օտարերկրյա դիվանագետների հետ իր քննարկումների ընթացքում հաճախ էր նման դատողություններ անում: Կանցլեր Բեթման-Հոլվեգին ներկայացրած 1915 թ. հունիսի 17-ի իր զեկույցում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը նշում է, որ «շատ հստակ էր, որ հայերի տեղահանությունները պարզապես ռազմական նկատառումներով չեն կատարվում», և հաղորդում է ներքին գործերի նախարարի ու Գերմանիայի գլխավոր հյուպատոս Մորդթամանի միջև տեղի ունեցած հանդիպման բովանդակությունը: Ըստ դեսպանի, դր. Թալեաթը Մորդթամանին ասել է, որ ինքը ցանկանում է «համաշխարհային պատերազմն օգտագործել իբրև երկիրը ներքին թշնամիներից, այսինքն քրիստոնյա բնակչությունից, մաքրելու պատրվակ՝ առանց ստիպված լինելու դիմակայելու օտար երկրների դիվանագիտական միջամտությանը», և ավելացրել է, որ նաև «նպաստավոր կլինի Գերմանիայի համար, որը Թուրքիայի դաշնակիցն է», որովհետև «այս ձևով Թուրքիան կուժեղանա»³¹:

Այդ ժամանակաշրջանի մասին իր գրած հուշերում Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուն նշում է Թալեաթի հետ հետևյալ խոսակցությունը, որը տեղի է ունեցել 1915 թ. հուլիսի 9-ին. «Թալեաթն ասաց, որ իրենք հարցը քննարկել են խիստ հանգամանալից և հանգել մի որոշման, որին հավատարիմ են մնալու: Երբ ասացի, որ աշխարհը նրանց կդատապարտի, նա ասաց, որ իրենք գիտեն ինչպես պաշտպանել իրենց. այլ կերպ ասած՝ նրա հոգն էլ չէ»³²:

Թալեաթի 1915 թ. մայիսի 26-ով թվագրված պաշտոնական հուշագրի մեջ էական է հետևյալ հատվածը. «այս անախորժությունը [Հայկական հարցը] վերացնելու ... միջոցներ՝ այն ձևով, որ ամբողջական ու կատարյալ լինի»: Ինչպես էլ մեկնաբանելու լինենք այդ արտահայտությունը՝ հստակ է, որ վճռական լուծման հասնելու վերջնական քայլերը կապված չէին սոսկ պատերազմի պատահականություններին: Որպես Հայկական հարց բնորոշվող խնդիրը, որը Թա-

ունյալն է. «esâhî bir suretde hal ve faslı ile külliyyen izâlesi esbâbının tehiyye ve ihzârı tasavvur ve mülâhaza edilmekte iken»:

31 DE/PA-AA/R 14086, Report from Ambassador Wangenheim to Chancellor Bethmann-Hollweg, dated 17 June 1915.

32 Henry Morgenthau, *United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913–1916*, comp., ed., and intro. Ara Sarafian (London, Taderon Press with Gomidas Institute, 2004), 273.

լեաթը ներկայացնում է իբրև «անախորժություն» կամ «հոգս» (gaille), արևելյան այն վեց նահանգներում վարչական բարենորոգումների վերջնական արդյունքն էր, որտեղ կենտրոնացած էր հայ ազգաբնակչության մեծ մասը: Ելնելով ընդգրկված տարածքներից՝ այդ հարցն այնպիսի չափերի էր հասել, որ վերածվել էր Օսմանյան պետության հետագա մասնատման հեռանկարի: Կուպիտ ասած՝ լուծում պահանջող «անախորժ» (մտահոգիչ) այդ խնդրի ետևում ընկած էր այն հավանականությունը, որ հայերը ժամանակի ընթացքում կարող են փորձել հիմնել իրենց սեփական անկախ պետությունը: Երիտթուրքերի տեսանկյունից, այդ հավանականությունը հարկավոր էր մեջտեղից վերացնել:

Ավելի ուշ (1915 թ. օգոստոսի 29-ին) օսմանյան նահանգների մեծ մասն ուղարկված մի հեռագրում Թալեաթը բավական հստակ է ձևակերպում այդ մտահոգությունը. «Այն նպատակը, որին կառավարությունն ակնկալում է հասնել հայերին իրենց ապրած տարածքներից արտաքսելու և նրանց նշանակված այլ վայրեր տեղափոխելու միջոցով, հավաստիանալն է, որ այդ համայնքն այլևս ի վիճակի չի լինի կառավարության դեմ նախաձեռնություններ ու գործողություններ ձեռնարկելու, և որ նրանք այնպիսի մի վիճակի կհասցվեն, որ անկարող կլինեն հետապնդելու իրենց ազգային իղձերը, որոնք կապված են [անկախ] Հայաստանի կառավարության համար պայքարելու հետ»³³:

ԲՆԱԶՆՁՄԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՎԵԼ Է ԵՐԿԱՐ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Լրացուցիչ վկայություններ կան այն մասին, որ 1915 թ. գարնանը հայերի առնչությամբ ընդունված որոշումները ՄԱԿ Կենտրոնական

33 BOA/DH.ŞFR, №55/292, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուսիսվնդիզարի (Բուրսա), Անկարայի, Քոնյայի, Իզմիրի, Ադանայի, Մարաշի, Ուրֆայի, Հալեայի, (Դեր) Ջորի, Սվազի, Գյութանյայի, Քարսիի (Բելիքեսիր), Նիդդեի, Մամուրեյոլագիզի, Դիյարբեքիրի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Էրզրումի ու Կեսարիայի նահանգներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 29: Այս հեռագիրը հիմնականում գրվել էր գերմանացիներին համոզելու համար: Թալեաթ փաշան 1915 թ. օգոստոսի 31-ին այդ փաստաթղթի գերմաներեն թարգմանությունը ձեռքով է հասցրել Գերմանիայի դեսպանություն: Թարգմանությունը ներկայումս գտնվում է Գերմանիայի արխիվներում:

կոմիտեի երկարատև ու ջանասեր քննարկումների հետևանք են եղել: Համաձայն իթթիհադական առաջնորդների Ստամբուլի 1919 թ. մեղադրական ակտի, «Հայերի սպանություններն ու ոչնչացումը Իթթիհադական Կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումների արդյունքն էր», բացի այդ, որոշումները կայացվել էին «լայնածավալ ու խորքային քննարկումներից» հետո միայն: Մեղադրականում մեջբերվում է նաև Կենտրոնական կոմիտեի անդամ դր. Նազիմը, որը Հայկական հարցն անվանել էր «խնդիր, որի վերաբերյալ, երկարատև ու խորը քննարկումներից հետո, Կենտրոնական կոմիտեն որոշում կայացրեց», և նշել էր, որ «այս նախաձեռնությամբ կլուծվի Արևելյան հարցը»³⁴:

Ջելալը, որը տեղահանությունների ժամանակ Հալեպի նահանգի ընդհանուր նահանգապետն էր, 1918 թ. դեկտեմբերին օսմանյան «Vakit» օրաթերթում տպել է իր հուշերը: Դրանց մեջ նա վերհիշում է, որ նույն այդ հայտարարությունն իրեն է հաղորդել խորհրդարանի Քոնսյայից ընտրված մի պատգամավոր: Նա գրում է.

Ստամբուլից վերադառնալուց հետո [խորհրդարանի] այդ պատգամավորներից մեկը հաղորդեց Կենտրոնական կոմիտեի անդամներից մի անձի ողջույնները և ասաց. «Քանի որ այդ հարցի շուրջ որոշումը Կենտրոնական կոմիտեն կայացրել է երկար ու խորը քննարկումներից հետո միայն, անհնար կլինի փոխել [այն], և հայերի տեղահանությունն անհրաժեշտ է՝ հանուն մեր ազգային իղեալների», և ուրեմն ես պետք է մի կողմ դնեի այդ հարցի վերաբերյալ իմ անձնական նկատառումները: Ի վերջո, նա ասաց. «Եթե ես ընդդիմանայի այս հարցի վերաբերյալ նրանց տեսակետին, նրանք կձերբազատվեին ինձնից, և Քոնսյան այլևս կմնար առանց ինձ»³⁵:

Թալեաթի 1915 թ. մայիսի 26-ի հեռագիրը, իթթիհադական առաջնորդների մեղադրական ակտը և Հալեպի նահանգապետ Ջելալի վկայությունն ու հուշերը հաստատվում են ևս մի պատմությամբ: Այն հանգամանքը, որ հայերի տեղահանությունն ավելի շուտ փորձ էր

34 TV, №3540, 1919 թ. մայիսի 5: Դատավարության առաջին նիստը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 27-ին:

35 Celal Bey, "Ermeni Vakâyi-i ve Esbâb-ı ve Tesirâtı," Vakit, 12 December 1918.

«Արևելյան հարցի» համար հիմնավոր ու մշտական լուծում գտնելու, **եթե** ծրագրված ու իրականացված ռազմական ժամանակավոր անհրաժեշտության բերումով, նշված է Բահաեդդին Շաքիրի նամակում (ըստ թուրք լրագրող ու գրող Ահմետ Հմին Յալմանի հաղորդման)³⁶: Շաքիրը, որին Յալմանը ներկայացրել է իբրև հայերի «ընդհանուր քննաչնջման» քաղաքականության ջատագովի, գրել է. «Հստակորեն հասկանալի էր, որ Ռուսաստանի սահմանի մոտ բնակվող հայերի ներկայությունը մեծագույն վտանգ էր երկրի կենսունակության շարունակման համար: Ազգային բարեկեցությունը պահանջում է անել **ին**արավոր ամեն բան՝ այդ վտանգը վերացնելու համար»³⁷: Յալմանն այնուհետև ավելացրել է, որ «քաղաքական որոշ գործիչների» կողմից այդ քաղաքականության նպատակն ըմբռնվել ու իրականացվել է իբրև «հայ փոքրամասնության ոչնչացում՝ Անատոլիայում ազգային միատարրություն ստեղծելու նպատակով»³⁸:

ՀԱՆԳԵԼՈՎ ԲՆԱԶՆՁՄԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ

Ինչպես Թալեաթ փաշան է նշում իր ավելի վաղ նշված 1915 թ. մայիսի 26-ի երկար նամակում, պատերազմն սկսվելուց հետո մի քանի ժամանակավոր միջոցառումներ են ձեռնարկվել հայերի դեմ, սակայն հետագայում անհրաժեշտ է դարձել դրանք ձևափոխել՝ փորձելով հիմնավորապես լուծել «բարենորոգումների» խնդիրը և «[անկախ] պետության համար հայերի ազգային շարժման» հարցը: Հակահայ այդ միջոցառումները և, ըստ Թալեաթի վերոհիշյալ հեռագրի, դրանց շարժառիթները ամենապարզ ձևով հերքում են 1915 թ. իրադարձությունների վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական տեսակետը, ըստ որի հայերի հանդեպ քաղաքականությունը բխել է

36 Մեկ այլ նշանակալի պահ են Բահաեդդին Շաքիրի այստեղ նշված և Յալմանի վերաբարտադրած նամակի նմանությունները հրապարակված այն նամակների հետ, որոնք, ըստ Արամ Աստուխյանի պնդումների, գրել է Շաքիրը: Sîni Andonian, *Memoirs of Naim Bey*, 49–52:

37 Ahmet Emin Yalman, *Turkey in the World War* (New Haven, Yale University Press, 1930), 220. Թեև հեղինակը Շաքիրի այդ նույն նամակը հղում է իր շատ ավելի ծավալուն թուրքերեն հուշերում Yakın Tarihte Gördüklerimiz ve Geçirdiklerimiz (1888–1918), h. 1 (Istanbul, Yenilik Basımevi, 1970), 332, դրանց մեջ նա չի գործածում մեղադրական այն արտահայտությունները, որոնք առկա են անգլերեն տարբերակում:

38 Նույն տեղում, 220:

պատերազմի թելադրած անհրաժեշտությունից: Իթթիհադական քաղաքականության նպատակն, իրականում, հայկական բարենորոգումների հարցը վերջնականապես լուծելն էր:

Օսմանյան արխիվային նյութերի ընթերցումից հասկանում ենք, որ վաղ միջոցառումները, ինչպիսին են օսմանյան Երրորդ բանակում հայ զորակոչիկների զինաթափումը և նրանց տեղափոխումը աշխատանքային գումարտակներ, զենք գտնելու նպատակով հայկական գյուղերի խուզարկությունները և այդ գյուղերի վրա կատարված ասպատակությունները՝ պատերազմի համար ուտելիք և անհրաժեշտ այլ պարագաներ հատկացնելու համար, կարող են ժամանակավոր միջոցառումներ եղած լինել, այլ ոչ թե կանխորոշված ծրագրի առաջին քայլերը³⁹: Ամեն դեպքում, այս նյութի շուրջ վկայությունների բացակայության պատճառով հարկավոր է զերծ մնալ ենթադրական քննարկումներից: Կասկած չկա, որ երիտթուրքերը հայկական բարենորոգումները համարում էին գոյության խնդիր և վստահաբար ցանկանում էին ձերբազատվել 1914 թ. փետրվարի Հայկական բարենորոգումների համաձայնությունից: Սակայն խնդիրը մահացու համարելը և մի խմբի (հայերի) բնաջնջումն իբրև կուսակցության քաղաքականություն որդեգրելը միևնույն բանը չեն: Հարցական է մնում այս երկուսի միջև եղած կապը:

Մտադրության խնդրի վրա չափազանց մեծ կենտրոնացումը (ինչպես՝ «էրր է բնաջնջման մտադրությունը ձևավորվել երիտթուրքերի մտքում») լուրջ խոչընդոտ է ստեղծում ցեղասպանությունն իբրև քաղաքական գործընթաց ընկալելու հարցում: Մտադրության ձևակերպման որոնումը կարող է ենթադրել իրադարձությունների անողորմ առաջընթաց Ա կետից մինչև Ֆ կետը: «Դա հիմնականում քաղաքական զարգացման թյուր մեկնաբանություն է՝ հետադարձ հայացքով վերակառուցված (քանի որ իրադարձության վերջը հայտնի է). Հիտլերի ռեժիմի ամենասկզբում Գերմանիայի հրեաների հալածանքները որևէ կերպ չէին նշանակում, թե Աուշվիցի սցենարն արդեն զրված էր»⁴⁰: Այդ պատճառով, ավելի լավ է խնդիրը դիտել իբրև գործընթաց, այլ ոչ թե «հերթագայություն»: Դրանով կարելի է խուսափել

39 1914 թ. օգոստոսին հայերի դեմ ձեռնարկված միջոցառումները քննարկված են այլ տեղում: Այդ նյութի ավելի հանգամանալից քննարկման համար տե՛ս Taner Akçam, A Shameful Act, 140–48.

40 Jacques Semelin, Purify and Destroy, 325.

արդյունքը կանխորոշելուց և ենթադրել բնաջնջման դյուրափոխ դինամիկա, որը որևէ պահի ենթակա է փոփոխության: Առաջին մտտեցման մեջ կա նաև անուղղակի նպատակապաշտություն, որը բնաջնջման վերջին կետին (Աուշվից, Դեր Զոր) մոտենում է իբրև սկզբնակետի և դեպի հետ նայում՝ հանցագործների վաղ ելույթներում ու գրվածքներում վայրագության արտահայտություններ գտնելու համար, և դրանց վերաբերվում իբրև «մտադրության լուրջ հոչակման»:

Բացի այդ, «մտադրության նշանները կապակցող» մտտեցումը խանգարում է պատմական գործընթացները հասկանալուն: Այդ մտտեցումն անպայման փորձում է սոցիալական ու քաղաքական բոլոր գործընթացներն ընկալել ու բացատրել իբրև նախապես գոյություն ունեցող մտադրություն, իսկ սոցիալական բախումներն էապես դասավորվում են այդ կաղապարում: Այդ մտտեցումը, բացի նպատակապաշտական լինելուց, ճիշտ տեղեկություններ չի տրամադրում տեղի ունեցող պատմական գործընթացների մասին: Այսպես օրինակ, 1908–13 թթ. ընկած ժամանակահատվածում, մինչև 1913 թ. ռազմական հեղաշրջմամբ իշխանությունը գրավելն ու բռնատիրական ռեժիմ հաստատելը, երիտթուրքերն անկարող էին միայնակ կառավարելու⁴¹: Նրանք, հաճախակի ներքին պառակտումներից հյուծված, շատ հեռու էին միասնական, որոշակի ծրագրի շուրջ համաձայնության հանգած կուսակցության տպավորություն թողնելուց: Նրանք երբեմն մտնում էին ընդդիմության շարքերը և կանգնում փակվելու վտանգի առջև:

Ավելին. այդ ժամանակաշրջանի քաղաքական իրադարձությունները չէին ընկալվում իբրև հայերի ու թուրքերի միջև ազգային հակամարտություն: Քաղաքական գործընթաց գոյություն չունեղ մի կողմից թուրքերի ու նրանց քաղաքական կուսակցությունների և, մյուս կողմից, հայերի ու նրանց քաղաքական կուսակցությունների միջև: Այդ ժամանակի զարգացումները շատ ավելի բարդ էին, շատ ավելի խճճված, ինչպես 1912 թ. ընտրությունները, երբ ՄԱԿ-ն ու Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) միասին կոալիցիա էին կազմել⁴²:

41 1908 թվականից հետո քաղաքական զարգացումների ընդհանուր ամփոփման համար տե՛ս Erik Zürcher, Turkey: A Modern History (London, Tauris & Co. Ltd., 2005), 93–133; Feroz Ahmad, The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908–1914 (Oxford, Clarendon Press, 1969):

42 Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) քննարկվող ժամանակա-

Միևնույն ժամանակ, երիտթուրքերին ընդդիմադիր Ազատություն և միասնություն կուսակցությունը (Hürriyet ve İtilaf Fırkası)⁴³ համագործակցում էր հայկական մեկ այլ՝ Հնչակյան կուսակցության⁴⁴ հետ, և այդ երկու կուսակցություններն իրենց դաշինքի մասին հայտարարել էին ութ կետանոց ընդհանուր ծրագրով⁴⁵: Իսկ 1915 թ. ամռանը սպանված հայ մտավորականներից մեկը՝ Գրիգոր Զոհրապը, գործում էր խորհրդարանի պատգամավորական մեկ այլ խմբի հետ, որը հայտնի էր իբրև Անկախականների խումբ (Müstakiller Grubu), և փորձում հավասարապես հեռու մնալ մյուս խմբավորումներից⁴⁶: Կարևոր հանգամանք է նաև այն, որ 1912 թ. գարունից մինչև 1913 թ. հունվարի ռազմական հեղաշրջումը ՄԱԿ-ի համար եղել է խիստ դժվարին ժամանակաշրջան: Կուսակցությունը պառակտված էր ներքին վեճերից: Այն վերածվել էր ընդդիմադիր կուսակցության, նրա կենտրոնական գրասենյակները ժամանակավորապես փակվել էին, կուսակցության հիմնադիրներից մի քանիսը, այդ թվում և Թալեաթը, ձերբակալվել էին, իսկ պաշտոնյաներից ոմանք թաքնվել էին կամ փախել արտասահման⁴⁷:

շրջանում հայերի ամենանշանակալի քաղաքական կուսակցությունն էր: Հիմնադրված լինելով Թիֆլիսում 1890 թվականին՝ դարասկզբին այն առաջնորդող դեր էր ստանձնել Հայկական բարենորոգումների շարժման մեջ: ՄԱԿ-ի և ՀՅԴ-ի հարաբերությունները քավարար ուսումնասիրված չեն: Այդ նյութի միակ լուրջ ուսումնասիրության համար տևե Dikran Kaligian, *Armenian Organization and Ideology under Ottoman Rule: 1908–1914* (New Brunswick, NJ, Transaction, 2009):

43 Այդ կուսակցությունը հայտնի էր իր ազատական հայացքներով: Այն տեղի էր 1911 թ. նոյեմբերին՝ ՄԱԿ-ին ընդդիմադիր կուսակցությունների միավորմամբ: Կուսակցության մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տևե Ali Birinci, *Hürriyet ve İtilaf Fırkası: II. Meşrutiyet Devrinde İttihat ve Terakki'ye Karşı Çıkanlar* (Istanbul, Dergah Yayınları, 1990):

44 Հնչակյան կուսակցությունը հայերի պատմության մեջ ամենահին կուսակցություններից է, որ հիմնադրվել է 1887 թ. Շվեյցարիայի Ժնև քաղաքում: Այդ կուսակցության մասին որոշ ընդհանուր տեղեկությունների համար տևե Louise Nalbandian, *The Armenian Revolutionary Movement: The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century* (Berkeley, University of California Press, 1975, third printing), 104–32:

45 Ali Birinci, *Hürriyet ve İtilaf Fırkası*, 139–40.

46 Նույն տեղում, 53:

47 Tunaya, *Türkiye'de Siyasal Partiler*, h. 3, 215–27, 422–27.

Քաղաքական խճճված հարաբերությունների այդ ուստայնում, որն այստեղ չեն քննարկի, բնույթով խիստ թեական է այն փաստարկը, թե ՄԱԿ-ը բնաջնջման քաղաքականության որոշում էր ընդունել և պատեհ առիթի էր սպասում այն իրագործելու համար:

1914 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ ԸՆԴՅԱՆՈՒՐ ՉՈՐԱՅԱԿԱԸԸ ԵՎ ԴԻՍ ԶԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության գրանցումները ցույց են տալիս, որ մինչև օսմանյան բանակի 1914 թ. հունվարի ընդհանուր գորահավաքը ՄԱԿ ղեկավարները հայ ազգաբնակչությանը, հատկապես արևելյան Անատոլիայում, արդեն առել էին խիստ հսկողության տակ: Փաստաթղթերից շատերը նշում են հայկական հրոսակախմբերի մասին, որոնք ռուսներն էին կազմակերպել և իբրև ավագակների ու ասպատակողների ուղարկել Օսմանյան կայսրության ներքին հատվածները: Բավական տեղեկություններ կան նաև սահմանային շրջաններում այդ հրոսակախմբերի գործողությունների մասին: Փաստաթղթերից պարզ է դառնում, որ Ստամբուլում կառավարությունը սարսափած էր հայերի ապստամբության հեռանկարից: Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչությունը 1914 թ. օգոստոսի 28-ին արևելյան նահանգներ ուղարկած մի հեռագրով տեղական պաշտոնյաներին տեղեկացնում է, որ կառավարությունը

լիովին վստահելի տեղեկություններ է ստացել այն մասին, որ ռուսները, Կովկասի հայերի օգնությամբ, մեր մեջ գտնվող հայերին հրահրել են՝ խոստանալով, որ նրանց կհանձնեն օսմանյան հողերի իրենց նվաճելիք հատվածն ու կապահովեն նրանց անկախությունը, և նրանք [իմա՝ ռուսները] ներկայումս փորձում են զինված հրոսակախմբեր կազմել՝ մեծ թվով գյուղացու տարագով անհատների ուղարկելով հայկական գյուղերը: Բացի այդ, նրանք զենք ու զինամթերք են բերել՝ սահմանային որոշակի վայրերում դրանք պահելու մտադրությամբ, որպեսզի, եթե պատերազմ հռչակվի, [մեր] բանակում եղած հայ անձինք զենքերով անցնեն Ռուսաստանի կողմը: Եթե մեր բանակը [հաջողության հասնի և] առաջանա, [հայերը] լուր կմսան և հաճոյակամ, սակայն եթե մեր բանակը նահանջի, [այդ հայերն] այդ ժամանակ

կզինվեն և, կազմավորվելով զինված հրոսակախմբերի, կանցնեն մեր դեմ գործողությունների⁴⁸:

Եվ, այդ իրադրության դեմն առնելու համար, Ստամբուլն առաջարկում է տարբեր հակամիջոցներ (այդ մասին՝ քիչ հետո):

Սահմանի երկայնքին հայ կամավորական գորամիավորումների գործողություններն արդեն իսկ ուշի ուշով հսկվում էին: Նրանց գործողությունների վերաբերյալ կանոնավոր զեկույցներ էին ուղարկվում մայրաքաղաք: Օգոստոսի կեսերին արևելյան նահանգներ ուղարկված մի հեռագրի մեջ ամփոփված է հետևյալ տեղեկությունը.

Կովկասի հայերը, հատկապես զինված հրոսակախմբերի անդամները, իրենց ընտանիքներն ուղարկել են Երևան, և Էրզրումի հրոսակախմբի բոլոր անդամները նույնպես իրենց ընտանիքները դուրս են բերում Ռուսաստանի ու Երևանի ուղղությամբ: Իսկ Ռուսաստանի հայերը հալածում ու նվաստացնում են [տահկիր] այնտեղի մահմեդականներին: Նրանք ասել են, որ պատրաստվում են վրեժ լուծել 1894-1895 թթ. [իրադարձությունների] համար, և տոնում են [իրենց ակնկալված հաղթանակը] և Կովկասի ընդհանուր կառավարության համար բանկետներ անում ու նվերներ տալիս դրա անդամներին:

Հեռագրում այնուհետև տեղական պաշտոնյաներից պահանջվում է զեկույցել, թե այսպիսի գործողությունները «պարզապես տեղական, թե ավելի ընդգրկուն բնույթ ունեն»: Այնուհետև պահանջվում է, որ նշված պաշտոնյաները «հետաքննեն և արագ զեկույցեն...», թե այս պահի դրությամբ քանի՞ հայկական ընտանիք է մեկնել Կովկաս, և թե այդտեղ ապրող հայերի մեջ ներկայումս արդյոք կան այդպիսի հեղափոխական շարժում կամ այդպիսի զգայուն վիճակ, թե՛ այն

48 BOA/DH.ŞFR, № 45/115, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի, Բիթլիսի, Մամուրեթյուլագի, Ադանայի, Դիյարբեքիրի ու Սվազի նահանգներ, թվագրված 1914 թ. օգոստոսի 28: Մեկ այլ ծածկագրված հեռագրում, ուղարկված 1914 թ. սեպտեմբերի 24-ին Երրորդ բանակի հրամանատար գեներալ Իզեթ փաշայի կողմից և հասցեագրված օսմանյան բարձրագույն հրամանատարությանը, հառակեցվում է, որ այդ հրամանները բաժանվել են բանակային տարբեր ստորաբաժանումների: Sını Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (March 1983), 7, Doc. № 1894:

սահմանափակված է [արդեն նշվածներով]»⁴⁹: Էրզրումի նահանգից օգոստոսի 17-ին ուղարկված հեռագիրը ցույց է տալիս, որ խնդրոտարկա նահանգներից հանգամանալից պատասխաններ են ուղարկվել այդ հարցումներին: Հեռագիրը տեղեկացնում է.

Ելնելով նահանգի զանազան վայրերից ստացված պատասխաններից՝ [կարծես թե] ոչ մի հայ ընտանիք [նշված] շրջաններից վերջերս Ռուսաստան չի գնացել: Փոխարենը, հունիսի սկզբից մինչև հուլիսի 20-ը Էրզրումի [նահանգի] վերոնշյալ շրջանից 23 ընտանիքից 101 տղամարդ ու կին են գնացել միայն, իսկ հուլիսի 20-ից մինչև հիմա՝ մոտ 15 մարդ վեց ընտանիքից: Բացի այդ, վերջին երկու ամսում Էլեշքիրդի մարզից երկու ընտանիքի անդամներ գնացել են Ռուսաստան՝ անձնագրերով և միայն այցելության, այնպես որ ներկայումս խոռվություն, ապստամբություն կամ հեղափոխական հուզում բոլորովին չկա, և մահմեդականների հետ բարեկամական հարաբերություններն ու համակեցությունը շարունակվում են⁵⁰:

Ծածկագրված մեկ այլ հեռագրում, որն ուղարկվել է 1914 թ. հոկտեմբերի 8-ին Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմիի կողմից, հաղորդվում է սահմանին գտնվող հայ կամավորականների թիվը, որոնք զինվում էին ռուսների կողմից, և թվարկվում են այն տարածքները, ուր նրանք գտնվում էին⁵¹:

Մի քանի հեռագրերում հաղորդվում է սահմանամերձ շրջաններում որոշ հայ կամավորականների շարժերի և դրա հետևանքով օսմանյան բանակի հետ նրանց բախումների մասին: 1914 թ. սեպտեմբերի 3-ի մի հեռագրից երևում է, որ նման բախումներից մեկի հե-

49 BOA/DH.ŞFR, № 44/43, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Մամուրեթյուլագի, Տրապիզոնի, Դիյարբեքիրի, Սվազի ու Ադանայի նահանգներ, թվագրված 1914 թ. օգոստոս (սայելով նախորդ և հաջորդ փաստաթղթերին/հեռագրերին՝ ապահով կերպով կարելի է եզրակացնել, որ փաստաթղթի ամսաթիվը պետք է լինի 1915 թ. օգոստոսի 15-18-ը):

50 BOA/DH.EUM, 2. Şube, № 1/39, Էրզրումի նահանգապետ Ջեմալի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. օգոստոսի 30:

51 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, № 81 (December 1982), 35, Doc. № 1809.

տևանքով մի հայ սպանվել է, և չորսը՝ գերի վերցվել⁵²: Կան հեռագրեր, որոնք վերաբերում են Ռուսաստան փախչող կամ ռուսական կամավորական ռազմական միավորումներին միացող հայերին՝ հատկապես սահմանամերձ գյուղերում: Էրզրումի նահանգից 1914 թ. հոկտեմբերի 31-ին Երրորդ բանակի շտաբ ուղարկված մի հաղորդագրության մեջ տեղեկացվում է, որ Բայազետում ու շրջակայքում կային «մեծ թվով հայեր. թե՛ նրանք, ովքեր բանակում էին, և թե՛ նրանք, ովքեր գյուղերում էին, որոշակի քուրդ ուղեկցողների օգնությամբ փախել են Ռուսաստան՝ նպատակ ունենալով միավորվելու Իգդիրի [İğdir] զինված բանդային, որը կազմավորել է Սուրին անունով մի անձ»⁵³:

Բուլղարիան ու Ռումինիան, Ռուսաստանի բացահայտ օժանդակությամբ, հայկական կամավորական զորամիավորումների ստեղծման համար կարևոր բազաներ էին դարձել: Բուլղարիայում ու Ռումինիայում օսմանյան դեսպանություններն ու հյուպատոսությունները ուշի ուշով հետևում էին այդ իրադարձություններին և մանրամասն տեղեկություններ հաղորդում Ստամբուլ, այդ թվում և կամավորական ջոկատներին միացող մարդկանց թվի մասին: Այսպես, 1914 թ. նոյեմբերի 20-ին դեսպանը Սոֆիայից տեղեկացրել է, որ «վերջին երկու շաբաթվա ընթացքում ավելի քան վեց հարյուր հայերի մեծ մասը, որոնք Ռուսչուկում գտնվող օսմանյան հպատակներ են և հասել են զինվորական ծառայության տարիքի, վերոնշյալ քաղաքում Ռուսաստանի հյուպատոսի կողմից աստիճանաբար ուղարկվել են Ռուսաստան և օսմանյան հողերն են մտնելու՝ իբրև ասպատակող հրոսակներ [çete]»⁵⁴:

1914 թ. նոյեմբերի 21-ին մեծ թվով նահանգներ ու շրջաններ ուղարկված հեռագրից երևում է, որ պատերազմի առաջին շաբաթների

52 BOA/DH.EUM.EMN, № 30/12, Հեռագիր Էրզրումի նահանգից Ներքին գործերի նախարարության Ընդհանուր հաղորդագրությունների բաժանմունքի չորրորդ մասնաճյուղին, ստացված 1914 թ. սեպտեմբերի 3-ին:

53 Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (March 1983), 27, Doc. № 1899.

54 BOA/HR.SYS, № 2871/1-13, Սոֆիայում դեսպանի զեկույցը մեծ վեզիրին և արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշային, թվագրված 1914 թ. նոյեմբերի 20: Բուխարեստում դեսպանության զեկույցի համար, որը տեղ է հասել 1914 թ. դեկտեմբերի 21-ին, տես Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, 1914-1918, h. 1 (Ankara, Genelkurmay Basım Evi, 2005), 49-50:

ընթացքում օսմանյան կառավարությունն արդեն պահանջում էր իր այն հպատակների ցուցակները, որոնք կամավոր գնացել էին Ռուսաստան, ինչպես նաև տեղեկություններ նրանց ընտանիքների անգամների մասին: Այդ նահանգներ ուղարկված հեռագրում ներքին գործերի նախարարը խնդրում է «տեղեկություններ այն հայերի մասին, ովքեր կամավոր գնացել են Ռուսաստան՝ նրանց ընտանիքի այն անդամների ինքնությունների հետ միասին, որոնք դեռևս մնում են այդ տարածքներում [Օսմանյան կայսրության մեջ]»⁵⁵: Ստամբուլը փորձում էր նաև տեղեկանալ, թե քանի հայ էր հատում սահմանը⁵⁶: Իրականում, ի պատասխան այդ նամակի, Սոֆիայում դեսպանությունը հայտնել է, որ հյուպատոսությունը պատրաստում էր այն հայերի տվյալների մանրամասն ցանկը, ովքեր օսմանյան հպատակներ էին⁵⁷:

Փոստային ճանապարհների վրա հարձակումները, հեռագրալարերը կտրելը, ոստիկանատների վրա գրոհներն ու թշնամական մյուս գործողությունները ժամանակին և կանոնավոր կերպով հազորդվում էին մայրաքաղաք: Այսպես, 1914 թ. դեկտեմբերի 20-ին ներքին գործերի նախարար Թալեաթի կողմից Վանի նահանգ ուղարկված նամակից բացահայտվում է, որ նախորդ օրը Վանի նահանգապետ Ջևդեղը տեղեկություն է ուղարկել այն մասին, որ «հայերը կտրել են Ռեշադիյեի ու Ոստանի միջև և Ոստանի ու Վանի միջև հեռագրալարերը, իսկ Փելիի ոստիկանատան հրամանատարը սպանվել է դրանց [նույն հայերի] կողմից, լուրջ բախումներ են տեղի ունեցել հայերի և Գևաշի շրջանային պաշտոնյայի շքախմբի անդամների միջև, որոնք այդ տարածքում էին»⁵⁸:

55 BOA/DH.ŞFR, № 47/107, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի ու Էրզրումի նահանգներ, թվագրած 1915 թ. նոյեմբերի 21:

56 BOA/HR.SYS, № 2879/19, doc. № 2, Արտաքին գործերի նախարարության Բաղաքական գործերի ընդհանուր վարչության հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. ապրիլի 25:

57 BOA/HR.SYS, № 2871/1-13, Սոֆիայում դեսպանության զեկույցը մեծ վեզիրին և արտաքին գործերի նախարար Սաիդ Հալիմ փաշային, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 3:

58 BOA/DH.ŞFR, № 48/85, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգապետ Ջևդեղին, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 20: Նման այլ հեռագրերի համար տես BOA/DH.ŞFR,

Հարկավոր է ավելացնել, որ որոշ դեպքերում Ստամբուլ հաղորդվող այն տեղեկությունները, թե «փոստային [ճանապարհները] հարձակման են ենթարկվել ավազակների կողմից... ճշմարտության որևէ հիմք չեն պարունակում»⁵⁹, և օսմանյան փոստային մեքենաների ու պաշտոնյաների վրա հարձակում գործած անձինք փաստորեն դասալիք զինվորներ են եղել: Այդ նախկին զինվորները շրջում էին խառը խմբերով, որոնք կարող էին կազմված լինել հասարակության տարբեր շերտերի հայերից, հույներից ու մահմեդականներից: Ավելին, շատ դեպքերում այդ հարձակումները քաղաքական որևէ դրդապատճառ չունեին: Օրինակ, 1914 թ. հոկտեմբերի 21/22-ի ծածկագրված հեռագրում Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին գեկուցում է մի խմբի անդամների ինքնությունների մասին, որը Գյումուշխանեի մոտակայքում հարձակվել էր Էրզրումի փոստատար կառքի վրա. «Հասկանալի է, որ Էրզրումի փոստային կառքի վրա հարձակված թվով [մոտ] 20 ավազակների մեծ մասը հայեր են, իսկ փոքրամասնությունը մահմեդական ու հունական համայնքներից են. նրանցից երեքը կանոնավոր զորամիավորումներին, իսկ մնացածը՝ Բայբուր[տ]ի աշխատանքային գումարտակին պատկանող [նախկին զինվորներ] են»⁶⁰: Հանցագործներից ոմանք ձերբակալվել են և խոստովանել իրենց մեղքը⁶¹: Կարելի է նման հարձակումների լրացուցիչ օրինակներ բերել. «Մոսուլի [դեպի Նուսայբին] փոստային ճանապարհի վրա... մոտ հինգ ժամ Նուսայբին չհասած... ամբողջ 20 եզդիներով» հարձակումը, որի ժամանակ «ծեծել են կառապանին և խլել նրա փոստային տոպրակները»⁶²:

№№ 48/7, 48/182, և 48/188:

59 BOA/DHEUM, 2. Şube, № 2/40/2, Coded telegram from Van governor, Tahsin, to the Interior Ministry, dated 21 October 1914.

60 BOA/DHEUM, 2. Şube, № 2/33/1-2-3, Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 21/22:

61 Երրորդ բանակի դաշտային տեսուչի պաշտոնակատարի (Üçüncü Ordu Menzil Müfettiş Vekili) գեկույցը Էրզրումում Երրորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1914 թ. նոյեմբերի 9/10, գտնվում է հետևյալ տեղում. Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (March 1983), 31, Doc. № 1900: Այն գնդապետը, որը վարել է հետաքննությունը, որի վրա հիմնված է գեկույցը, նույնպես տրամադրում է ձերբակալված անհատների անունները:

62 BOA/DH.ŞFR, № 51/2, ներքին գործերի նախարար Թավանթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915 թ. մարտի 14:

Պատերազմում օսմանյան պետության գործերի վատացմանը զուգընթաց, Անատոլիայի ազգային ու կրոնական բոլոր խմբերի անդամներից և հատկապես դասալիքներից կազմված զինված հրոսակախմբերի խնդիրն աստիճանաբար սկսել է կառավարության համար հսկայական ծավալներ ընդունել⁶³: Դասալիքները նախընտրում էին լեռնային շրջանները, որտեղ հեշտությամբ չէին բռնվի կամ սպանվի: Այդ շրջաններում նրանց խտությունն այնպիսի չափի էր հասել, որ, որպեսզի հնարավոր լիներ պահպանել անվտանգությունը, ժանդարմները կամ բանակային ուժերը չէին կարողանում հեռանալ իրենց տեղերից: Դա վերածվել էր բացասական գործոնի, որն իր ազդեցությունն է ունեցել պատերազմի ընթացքի վրա: Այսպես, 1915 թ. հունվարի 20-ին Դերսիմից եկած մի գրության մեջ նշվում էր, որ «էլազիզի տասնմեկերորդ բանակային կորպուսի հրամանատարությունից... ընթացող հաղորդակցությունից պարզվել է, որ Դերսիմի ժանդարմներիայի շարժական գումարտակը, որը մնացել էր՝ զավառում խաղաղություն պահպանելու համար, նույնպես ուղարկվելու է պատերազմի վայր»: Այնուհետև նշվում էր, որ, քանի որ շրջանում «բազմաթիվ մահմեդական ու ոչ-մահմեդական դասալիքներ կան», զինվորական միավորումների հեռանալու լուրն իսկ ավելացրել է բնակչության վրա դասալիքների հարձակումները, հետևաբար, անմիջապես հարկավոր էին համապատասխան միջոցներ⁶⁴: Որոշ դեպքերում այս բնույթի գործողությունների մասին նահանգներից

63 Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ դասալիք զինվորները մեծ խնդիր էին, և պատերազմի վերջին շրջանում նրանց թիվը դարձել էր կանոնավոր բանակի գրեթե կեսի չափ: Թուրքական բանակի գլխավոր շտաբի աղբյուրների վրա հենված մի աշխատանքում նշված է, որ դասալիքների թիվը հասել էր հինգ հարյուր հազարի, և միայն այդ թիվը բավական է՝ ցույց տալու համար հարցի լրջությունը (Edward Erickson, Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War [Westport, CT, Greenwood Press, 2001], 243):

64 BOA/DHEUM, 2. Şube, № 4/60/8, Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչություն Դերսիմից ուղարկված ծածկագրված հեռագիրը, թվագրված 1915 թ. հունվարի 20: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում դասալիքների պատճառով ստեղծված անվտանգության հարցի վերաբերյալ տես Mehmet Beşikçi, «Birinci Dünya Savaşı'nda Devlet İktidarı ve İç Güvenlik: Asker Kaçakları Sorunu ve Jandarmanın Yeniden Yapılandırılması», in Türkiye'de Ordu, Devlet ve Güvenlik Siyaseti, comp. Evren Balta Paker and İsmet Akça (Istanbul, Bilgi Üniversitesi Yayınları, 2010), 147-74:

ելող լուրերից հետո Ստամբուլը հարցում էր ուղարկում, թե «նշված զինված հրոսակախումբը մահմեդական, հայկական, թե հունական բանդա է: Հետաքննեք և զեկուցեք [դրա անդամների] ազգությունները»⁶⁵:

1914 թ. դեկտեմբերի 30-ին Վանի նահանգ ուղարկած «գաղտնի և հրատապ» հեռագրով ներքին գործերի նախարար Թալեաթը նահանգապետին նկատողություն է անում իր տարածքում ավազակների խմբի դեմ կոշտ միջոցներ չձեռնարկելու համար: Թալեաթն ասում է. «Թեև հնարավոր էր [մի շարք] վճռական ու զորեղ հարվածներով հիմնովին արմատախիլ անել ու վերացնել [այդ հրոսակախմբերը], նահանգապետն այդպես չի վարվել, փոխարենը բավարարվել է անարդյունավետ միջոցառումներով՝ քննչական ու խորհրդատվական պատվիրակություն [կազմելով ու] առաքելով և խորհրդարանի պատգամավորներ ուղարկելով [գյուղացիներին հարցաքննելու համար], ինչը շատ թույլ ու անարդյունավետ միջոց է»: Այնուհետև նախարարն ասում է, որ այդ միջոցները համագոր են թույլ տալու փախչել «զինված հրոսակախմբերի մարդասպաններին, որոնք, ինչպես հայտնի է, իրենց շարքերում օտարերկրյա հայեր ունեն»⁶⁶:

Միայն հայ կամավորականները չէին, որ ակտիվ էին այդ տարածքում: Օսմանյան ուժերը բախվում էին նաև քրդական տարբեր ցեղերի հետ, որոնք, հատկապես Վանի շրջակայքում, համագործակցում էին Ռուսաստանի հետ: 1914 թ. նոյեմբերի 13-ին նահանգապետարան ուղարկած ծածկագրված հեռագրում Անվտանգության վարչությունը նշում է «Էրզրումից հասած լուրերը, որ Վանի [մոտակայքում] սահմանի մոտ Աբդյուրեզաբի ու իր հանցակիցների գրոհները հաջողությամբ հետ են մղվել», և խնդրում հավելյալ մանրամասներ բախումների և դրանց արդյունքների վերաբերյալ⁶⁷:

65 BOA/DH.SFR, № 57/85, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 23:

66 BOA/DH.SFR, № 48/220, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգապետ Ջեղեղին, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 30:

67 BOA/DH.SFR, № 47/2, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 14:

Պատկերն ամբողջացնելու համար հարկավոր է կողմնակիորեն ավելացնել, որ Կովկասում ու Վանի նահանգում կատարվող հարձակումները միայն հայկական կամավորական խմբերի գործը չէին: Տարածքում շատ ակտիվ էր նաև օսմանյան կառավարությունը՝ գերմանացիների հետ միասին: 1914 թ. օգոստոսի 2-ի ընդհանուր գործառնականից հետո ՄԱԿ-ը վերաձևավորեց Հատուկ կազմակերպությունն այնպես, «որ մեր բանակի գործողությունները հեշտանան թշնամու հողի վրա՝ անկախ նրանից, թե մենք համաշխարհային պատերազմի մեջ կմտնենք, թե՛ ոչ: Պատերազմն սկսվելիս անկանոն խմբավորումները, որոնք կզինվեն Հատուկ կազմակերպության կողմից, հարձակումներ կգործեն թշնամու տարածքի վրա»⁶⁸: Այդ հատուկ միավորումները պետք է գործեին հատկապես Կովկասում և Վանա լճի մոտակայքում՝ «խսմանական միասնականությանն ու թուրքական ազգայնականությանը, որը կայանում է Թուրքիայից դուրս թուրքերին միավորելու մեջ» նպաստելու մտադրությամբ⁶⁹: ՀԿ-ն ուներ նաև ներքին առաջադրանք. «Երկրի ներսում կան անհատներ, որոնց պետք է վերացնել: Մենք գործում ենք այդ տեսակետի համաձայն»⁷⁰: Նշված «անհատները» հայերն էին: Այդ որոշումներից հետո օսմանյան կառավարությունն իր հատուկ հրոսակախմբերն ուղարկեց սահմանից այն կողմ՝ Կովկաս ու Իրան⁷¹: Ծրագիրը կայանում էր Կովկասում, Իրանում ու Հնդկաստանում անգլիացիների ու ռուսների դեմ խոռվություններ հրահրելու և նրանց պատերազմ մտնել սադրելու մեջ⁷²: Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության փաստաթղթերից հեշտությամբ կարելի է հասկանալ, որ օսմանյան ղեկավարները Ռուսաստանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականություն էին վարում, հատկապես Կովկասում: Օսմանյան կայսրության Հատուկ կազմակերպության և Ներքին գործերի նախարարության միջև հարաբերությունները կքննենք ավելի ուշ,

68 A. Mil, "Umumi Harpte Teşkilat-ı Mahsusa," մաս II, Vakit, 2 November 1933.

69 Նույն տեղում:

70 Mil, "Umumi Harpte," մաս 13, 15 November 1933.

71 Այս հարցի մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Taner Akçam, A Shameful Act, 130–40:

72 Wolf Dieter Bihl, Die Kaukasus-Politik der Mittelmächte, Teil I: Ihre Basis in der Orient-Politik und ihre Aktionen, 1914–1917 (Vienna, Cologne, Graz, Böhlau, 1974), 4.

իսկ այժմ բավարարվենք Վանի մոտակայքի սահամանամերձ շրջաններում տեղի ունեցած զինված գործողությունների մի քանի օրինակ բերելով:

Առաջինը 1914 թ. սեպտեմբերի 6-ին Վանի նահանգ ուղարկված հեռագիրն է, որով նահանգապետի գրասենյակին հրահանգվում է խնդիրը «լուծել անձնապես»: «Մեր քաղաքական իրավիճակը հիմա ավելի անվտանգ է դառնում և [հենվում] ավելի հավաստի հիմքերի վրա», նշվում է հեռագրում: «Մենք բոլոր հարցերի վերաբերյալ փոխըմբռնման ենք հանգել բուլղարացիների հետ: Զինված խմբավորումներն արդեն պետք է որ լիովին կազմակերպված լինեին Իրանում: Գործի անցնելու հրամանը կտրվի առանձին»⁷³: Այդ զինված հրոսակախմբերն այնուհետև պետք է գնային Իրան և այնտեղ սկսեին իրենց գործունեությունը: Հարկավոր է նկատել, որ օսմանյան կառավարությունը չեզոք էր և 1914 թ. վաղ սեպտեմբերի դրությամբ դեռևս պաշտոնապես պատերազմի մեջ չէր մտել:

1914 թ. հոկտեմբերի 17-ին ծածկագրված հեռագրով Ջևդեղ բեյի ուղարկած զեկույցը մանրամասն տեղեկություններ է պարունակում սահմանից այն կողմ՝ Ռուսաստան կատարած ասպատակությունների վերաբերյալ.

[Ա]րդեն մեկ ամիս է, ինչ զինված հրոսակախմբերը, սահմանապահ զորամիավորումներն ու [քրդական] ցեղերից կամավորները բախումների մեջ են թշնամական ուժերի հետ, որոնք բաղկացած են մոտ 2.000 հետևակ զինվորից և մի ամբողջ մարտկոց ձիաքարշ հրետանուց Իրանի Սալմասի շրջանում ու շրջակայքում և Ջահարիի ու Խանասորի միջև: Տեղեկացել ենք, որ դաժան բախումների ժամանակ, որ տեղի են ունեցել երեկ ամբողջ օրը և շարունակվել երեկոյան, թշնամու կորուստները եղել են երկու սպա և ամբողջ 100 նորակոչիկ: Մեր կողմից սպանվել է ինը հոգի, որոնցից մեկը սպա էր, և վիրավորվել են քսանը⁷⁴:

73 BOA/DH.ŞFR, № 44/201, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. սեպտեմբերի 6:

74 BOA/DH.EUM, 2. Şube, № 2/72/2, Վանի նահանգապետ Ջևդեղ բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 17:

Այն հրոսակախմբերը, որոնցում քրդերն ու օսմանյան զինվորները համատեղ էին գործում, հարձակվում էին քրիստոնյա գյուղերի վրա և զանգվածային ջարդեր իրականացնում: 1914 թ. հոկտեմբերի 11-ին Վանի ու Մոսուլի նահանգներ ուղարկված հեռագրում ներկայացվում են նախորդ ամսվա իրադարձությունները.

Օսմանյան պահեստային ուժերը, առաջնորդվելով կապիտանի կոչումով մի սպայի կողմից, գործողություններ իրականացրին Բեյքիկ-Մասֆորանի ու Սերոս Սարթիկի շրջաններում՝ ինչպես ծալված, այնպես էլ իրենց զինվորական համագգեստներով, և, Ռուսիայի շրջակայքում հատելով սահմանը, օսմանյան քրդերը վերադարձան օսմանյան տարածք՝ իրենց ձեռք բերած ավարով ու կողոպուտով: Փերեստանիի[?], Քոչգայի ու Ռուստեմ բեյի հեծելագորային միավորումները Բարադը կողոպտելուց հետո օսմանյան տարածքից մեկնեցին Թերջեղեր, իսկ սեպտեմբերի 19-ին քրդերը կրկին գրոհեցին ու ավարի ենթարկեցին Քեվիիրը, որտեղ բնակվում են Մավարայի քրիստոնյաները, և, մինչև քըշվելը, ամենաբարբարոս գործողություններ ու արարքներ իրականացնելով անպաշտպան քրիստոնյաների դեմ, [նրանք] տանջամահ արեցին մոտ տասը մարդու՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ՝ կանանց⁷⁵:

Հեռագրում հստակեցվում էր, որ այդ արարքների մասին լուրերն ստացվել են Ռուսաստանի հյուպատոսությունից, և որ օսմանյան կենտրոնական կառավարությունն իր տեղական իշխանություններին խնդրել է պարզել ստացված տեղեկությունների իսկությունը: Հաջորդ օրը (1914 թ. հոկտեմբերի 18-ին) Ստամբուլում Ռուսաստանի դեսպանությունը բանավոր բողոք է հայտնել օսմանյան կառավարությանը սահմանը հատելով իրականացված բազմաթիվ հարձակումների կապակցությամբ: Այդ բողոքում Ռուսաստանի դեսպանը խոսել է յոթ տարբեր հարձակումների մասին, որոնք իրականացվել էին ընդամենը օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 11-ը⁷⁶:

75 BOA/DH.ŞFR, № 45/242, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի և Մոսուլի նահանգներ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 11:

76 BOA/DH.EUM, 2. Şube, № 2/34/8, Ստամբուլում Ռուսաստանի դեսպանության բանավոր ծանուցման արձանագրությունը՝ Բարձր դոնան Ներքին

Ինչպես պետք է որ պարզ լինի այս փաստաթղթերից, դեռևս 1914 թ. սեպտեմբերից Կովկասում չհայտարարված պատերազմ էր ընթանում Օսմանյան կայսրության ու Ռուսաստանի միջև: Թե՛ն Ստամբուլը և թե՛ Սանկտ Պետերբուրգը իրականացնում էին տարածաշրջանի ազգային-կրոնական տարբեր խմբերի շահագործման քաղաքականություն և այդ խմբերն օգտագործում միմյանց վրա հարձակվելու նպատակով՝ գրոհներն իրականացնելու համար հատուկ ստորաբաժանումների մեջ մտցնելով նույնիսկ այդ խմբերի անդամներին: Ինչպես այդ ժամանակաշրջանի թուրք պատմաբան Յուսուֆ Հիքմետթ Բայուրն է նշել, մինչև սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսները «իսկական պատերազմն արդեն սկսվել էր օսմանյան սահմանին»⁷⁷:

1914 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1915 Թ. ՄԱՐՏ ԱՄԻՍԸ ՁԵՌՆԱՐԿԿԱԾ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծածկագրերի վարչության մատչելի փաստաթղթերից, այդ թվում և 1914 թ. օգոստոսին ուղարկված հեռագրերից պարզ է դառնում, որ, նույնիսկ մինչև համաշխարհային պատերազմի պաշտոնական հոչակումը, օսմանյան տեղական պաշտոնյաները տեղեկացված էին երկու կայսրությունների միջև սահմանամերձ տարածքներում ռուսահայերի գործողությունների մասին: Հիշատակման արժանի է այն հրամանը, որ սահմանն անցնող յուրաքանչյուր մահմեդական պետք է սպանվի, և օսմանյան բանակում չճանաչող մահմեդականներից զինված խմբեր կազմելու որոշումը՝ հայ կամավորական խմբերի գործողություններին հակահարված տալու նպատակով:

1914 թ. օգոստոսի 28-ի նշված հեռագրում օսմանյան Անվտանգության վարչությունը պահանջում է սահմանամերձ շրջաններում ռուսահայերի գործողությունների դեմ ձեռնարկել հետևյալ միջոցները. «[Այն ոչ-մահմեդական անձինք, որոնք փորձում են սահմանն անցնել՝ առանց ձեռքերին անձնագիր ունենալու, [պետք է] ձերբակալվեն, իսկ նրանք, որոնք փորձում են զենք ու զինամթերք անցկացնել սահմանից, պետք է անմիջապես մահապատժի ենթարկվեն»:

Բացի այդ, «այն մահմեդական բնակիչները [Երրորդ բանակի իրա-

վասության տարածքում գտնվող], որոնք բանակում չեն ծառայում, պետք է մնան իրենց գյուղերում և կարիքի դեպքում մտնեն կազմակերպված զինված ջոկատների մեջ»⁷⁸: Հեռագրի մեջ նշվում է, որ այդ միջոցառումների հրահանգները նախապես ուղարկվել են «Կայսերական երրորդ բանակի հրամանատարության կողմից Էրզրումի նահանգ»: Նախարարությունը կրկնում է, որ այդ տեղեկությունը շատ կարևոր է, և որ նահանգները պետք է այս հարցերով հետաքննություն անցկացնեն: Խորհուրդ է տրվում նաև, «խորհրդակցելով բանակային կորպուսի հրամանատարի հետ՝ գործել այդ ձևով և ձեռնարկված քայլերի մասին տեղեկություններ հաղորդել այստեղ»⁷⁹:

Օսմանյան հողերից Ռուսական կայսրություն փախչող, ինչպես և ռազմական գործողություններ կատարելու նպատակով Ռուսաստանից ներս մտնողների դեմ կիրառված միջոցներից էին նաև դաժան ճնշումները երկրում մնացած նրանց ընտանիքների և այդ փախստականներին ապաստան տված գյուղացիների նկատմամբ, նրանց տեղահանությունը և նրանց գյուղերի ավերումը: 1914 թ. հոկտեմբերի 1-ի մի փաստաթղթից պարզ է դառնում, որ փախստականների դեմ ձեռնարկելիք քայլերի մասին սեպտեմբերի 23-24-ին մի շրջաբերական է ուղարկվել: Նշելուց հետո, որ «Տեղեկություններ ունենք, որ ռուսները Կովկասում զինել են Ռուսաստանի և Օսմանյան կայսրության հայերին ու հույներին և նրանցից զինված հրոսակախմբեր կազմել, իսկ ապա նրանց ուղարկել սահմանից այս կողմ՝ օսմանյան տարածքում ավելացնելու համար այդ կազմակերպությունների թիվը, ... և դրանից մեծացել է [օսմանյան զորա]միավորումներից հայ դասալիքների թիվը»՝ հաղորդագրությունը հետևյալ ուղղորդումն է տալիս. «1914 թ. սեպտեմբերի 23/24-ի թիվ 347 շրջաբերականով ձեզ ներկայացրել են այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն այս առնչությամբ: Բացի այդ, կոշտ միջոցառումներ պետք է ձեռնարկվեն դասալիքների ու դավաճանների ընտանիքների նկատմամբ, և խիստ պետք է պատժվեն զինված խմբավորումների [անդամներին] ապաստան տվող գյուղացիները: Բոլոր այն գյուղեր[ի բնակիչներին], որոն-

78 BOA/DH.ŞFR, № 45/115, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի, Բիթլիսի, Մամուրեթյուպազիզի, Ադանայի, Դիյարբեքիրի ու Սվազի նահանգներ, թվագրված 1914 թ. օգոստոսի 28:

79 Նույն տեղում:

գործերի նախարարության կողմից հանձնված Կայսերական արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 18:

77 Bayur, Türk İnkilabi Tarihi, h. 3, մաս 1, 226.

ցում զինված խումբ է հանդիպել, պետք է ցրել, իսկ այդ գործողությունների պատճառները պետք է [հանրայնորեն] տարածել»⁸⁰:

Սեպտեմբեր 23/24-ով թվագրված թիվ 347 շրջաբերականում, որը հիշատակվում է այդ փաստաթղթում, կրկնվում է կառավարության վերը հղված 1914թ. օգոստոսի 29-ի տեղեկությունը: Սակայն այն պարունակում է մի կարևոր հավելյալ որոշում. բանակում ծառայող հայ զինվորները, «հնարավորինս առանձնացվելով ոչ-մարտական [ծառայողներից], մեր դեմ շարժման դեպքում պետք է անմիջապես ուժով ճնշվեն, իսկ հանդուգները պետք է սպանվեն»⁸¹: Հրամանը հստակ էր. բոլոր դեպքերում, առաջին սպանվողները պետք է լինեին այն հայերը, որոնք ընդգրկված էին բանակում:

Գործադրվելիք առաջին որոշումներից մեկը մահմեդական աշխարհագրի ստեղծումն էր. մի գործընթաց, որն սկսվել է Երրորդ բանակի կազմում: Էրզիջանի [Երզնկա] նահանգապետի գրասենյակ և Բայբուրտի, Թերջանի ու Քիդիի գավառների պաշտոնյաներին ուղարկված մի հեռագրում, օրինակ, նշվում էր, որ «Երրորդ բանակի հրամանատարի խորհրդով իսլամական աշխարհագրային միավորում է կազմվել դր. Բահաեդին Շաքիր բեյի առաջնորդությամբ»⁸²: Այդ միավորումները պետք է գործողություններ իրականացնեին Կովկասում ու Իրանում: Գերմանացիները ևս ընդգրկված էին այդ հրոսակախմբերի գործունեության մեջ: Այսպես, Կարս-Արդվինի շրջակայքում գործող խմբերը գտնվում էին գերմանացի գնդապետ Շտանգեի տնօրինության տակ⁸³: Հավելյալ տեղեկության պատահիկ

կա այն մասին, որ որոշ նահանգապետեր ընդդիմացել են հայերի դեմ ուղղված այդ միավորումների ստեղծմանը և այս հարցում իրենց մտահոգությունները կիսել կառավարության հետ⁸⁴:

Սկսվել էր հայ զինվորների աշխատանքային գումարտակների կազմավորումը: Հարկ է նշել, որ այդ քայլը վերաբերում էր բոլոր քրիստոնյա զինվորներին, սակայն նրանցից միայն սահմանափակ թվով մարդկանց էին ընդգրկում, ըստ անհրաժեշտության, ճանապարհաշինության համար: Այդ մասին որոշումն ընդունվել էր զորահավաքի հոչակման հետ մեկտեղ⁸⁵: Մինևոյն ժամանակ, հայ և քրիստոնյա մյուս զինվորները շարունակում էին ծառայել մարտական զորամիավորումներում: Կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը 1914թ. հոկտեմբերի 16-ին տեղեկացրել է, որ 1914թ. հոկտեմբերին կազմվել են հույներից ու հայերից բաղկացած աշխատանքային գումարտակներ⁸⁶:

սին ենթակա եր Շտանգեի իշխանությանը (Mil, "Umumi Harpte," մաս 94, 1934թ. փետրվարի 6)՝ դրանով հստակորեն հաստատելով ՀԿ գործողություններում Շտանգեի ներգրավվածությունը:

84 BOA/DH.EUM, 2. Şube, №2/32/1, Քոնյայի նահանգապետ Ազմի բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914թ. հոկտեմբերի 21. «Ես տեղեկացա, որ Էրզրումի բանակային կորպուսի հրամանատար Իզեթ փաշան բանակային տարբեր ստորաբաժանումների հրամայում է գզոն լինել, քանի որ հայկական հեղափոխական կոմիտեների սադրանքների պատճառով օսմանյան հողերի հայ բնակչության անդամները կարող են ապստամբել, և, անհրաժեշտության դեպքում, հարկավոր է կանխել հարձակումները՝ պաշտպանելով մահմեդական բնակչությանը և այլն, և որ ընդհանուր հաղորդագրության միջոցով այս հրահանգները տրվել են հրամանատարության ողջ շղթային՝ զինվորական հավաքագրման բոլոր գրասենյակների տարբեր ճյուղավորումների դեկավարներին: Եթե նույնիսկ այդ լուրերն իրոք հավաստի են, ես համարում եմ, որ աներևակայելի է այն վնասը, որ պատճառվելու է այս ձևով տարածելով և մահմեդական ժողովրդի հանձնվելու ծանուցումը և այլն մարդկանց հասցնելով»:

85 BOA/DH.ŞFR, №43/214, Ներքին գործերի նախարարության Ընդհանուր հաղորդակցության բաժանմունքի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդադի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Բուրսայի, Դիյարբեքրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունի, Քոնյայի, Մանուրեթյուլազիզի, Մուսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիթի, Բոլուի, Ջանիկի, Չաթալջայի, Ջոդի, Քարեսիի (Բալիբեսի), Երուսաղեմի ու Քալե-ի Մուլթանիի գավառներ, թվագրված 1914թ. օգոստոսի 10:

86 Christopher Dinkel, "Der Einfluss hoher deutscher Offiziere im Osmanischen

80 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, №81 (December 1982), 39, Doc. №1810.

81 Այդ շրջաբերականի համար տե՛ս Askeri Tarih Belgeleri Dergisi 32, №83 (March 1983), 7, Doc. №1894:

82 Mil, "Umumi Harpte," մաս 13, 15 November 1933.

83 ՀԿ մեջ Շտանգեի ընդգրկվածության վերաբերյալ երկու հիմնական աղբյուր կա: Առաջին անգամ նրա ընդգրկվածության մասին վկայել է ՀԿ ստորաբաժանումների Տրապիզոնի շտաբի հրամանատար և Շտանգեի գործակից Յուսուֆ Ռիզան, որը ցուցմունք է տվել Ստամբուլում 1919-ից 1921թթ. գումարված ռազմական տրիբունալում: Նշելուց հետո, որ սերտորեն համագործակցել է Շտանգեի հետ, նա հայտարարել է. «Մեր հաղորդակցությունն իրականացնում էին Շտանգեի ծածկագրերի միջոցով (TV, 15 May 1919, №3549, 1919թ. մայիսի 8, չորրորդ նիստ): Երկրորդ վկայությունը ՀԿ օպերատիվ պետ Բահաեդին Շաքիրին է, որը Տրապիզոնի շրջանում գործող ՀԿ ստորաբաժանումների պետերին ուղարկված իր ծածկագրված հեռագրերից մեկում հայտնել է. «Դուք ձեր գորբերի հետ միա-

Կառավարության 1914թ. օգոստոսի 28-ի որոշմանը կարծես թե հաջորդել է մեկ այլ որոշում՝ կայացված սեպտեմբերի սկզբին: 1914թ. սեպտեմբերի 6-ին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի կողմից մի շարք նահանգներ ու գավառներ ուղարկված և «գաղտնի և անձնապես ստանձնելիք» [bi'z-zat hal olunacakdir] մակագրված հեռագրում հասցեատեր պաշտոնյաներից պահանջվում է պատրաստվել ձերբակալելու նրանց, որոնց մասին հայտնի է, որ եղել են հայերի քաղաքական ու խոռվարար գործունեության ղեկավարների մեջ, քանի որ այդ մասին շուտով հրաման է ստացվելու: «(Պահանջվում է) հետևել և դիտել հայկական քաղաքական կուսակցության ղեկավարներից այդտեղ եղած մարդկանց և կոմիտեի ղեկավարների վարքն ու շարժերը, ովքեր գերծ չեն մնում օսմանականության դեմ խոռվության կոչեր տարածելուց ու գարշելի գործերից և ովքեր երկար ժամանակ քաղաքական նպատակներ են հետապնդել. հարկ եղած դեպքում քայլը պետք է համապատասխանի տեղի ունեցող հաղորդագրություններին»⁸⁷:

Միևնույն օրը մեկ այլ հեռագիր է ուղարկվել Ջանիկի (այսօրվա Սամսունը) գավառապետարան (mutasarrıflik)՝ բավականին նշանակալից բովանդակությամբ. «Կանանց ու երեխաների տեղափոխությունը երկրի խորքերը, հատկապես Սև ծովի առափնյա շրջաններից, այս պահին չի կարող քննարկման առարկա լինել: Որպեսզի հետագայում շփոթության պատճառ չլինի, հարկ եղած միջոցառումները պետք է նախապես կազմակերպել և սահմանել հիմա, բայց երբ բացահայտ կարիք չկա, անհրաժեշտ է քայլ չկատարել և թույլ չտալ, որ հուզումների հնարավորություններ ստեղծվեն»⁸⁸: Հստակ չէ, թե հեռագրում խոսքը գնում է հույներին, թե՛ հայերի մասին, սակայն երբ հրահանգը համադրվում է միևնույն օրն արձակված մեկ այլ հրամանի

Reich auf die zum Völkermord and den Armeniern führenden Massnahmen: Ratgeber und/oder Vollzugsgehilfen”, չիրապարակված ձեռագիր, 38:

87 BOA/DH.ŞFR, № 44/200, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնսեի, Էրզրումի, Ադանայի, Բիթլիսի, Վանի, Հյուրդանդիզարի (Բուրսա), Հալեպի, Սվազի, Մանուրեթյուլագիզի ու Դիյարբեքիի նահանգներ և Իզմիրի ու Ջանիկի գավառներ, թվագրված 1914թ. սեպտեմբերի 6:

88 BOA/DH.ŞFR, № 45/206, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1914թ. սեպտեմբերի 6:

հետ, չափազանց մեծանում է խոսքը հայերի մասին լինելու հավանականությունը: Ամեն դեպքում, նկատի առնելով, որ Օսմանյան կայսրությունը սեպտեմբերի սկզբին դեռևս պատերազմի մեջ չէր մտել, տղամարդկանցից անջատ կանանց ու երեխաների տեղափոխությունը երկրի խորքերը ավելին էր, քան սոսկ գաղափար. այն արդեն գոյություն ուներ իբրև քաղաքական կոնկրետ այլընտրանք, որը կարող էր հարկ լինել իրագործելու⁸⁹:

Առաջին հետևությունը, որին կարելի է հանգել վերը բերված փաստաթղթերից, այն է, որ քաղաքացիական ու զինվորական իշխանությունները սեպտեմբերի սկզբի դրությամբ կարծես թե արդեն ընդունել էին հայերի վերաբերյալ առաջին լուրջ որոշումները: Որոշվել էր, որ դասալիք զինվորների և «զինված հրոսակախմբերի անդամներին» իրենց տներում թաքցրած անձանց ընտանիքները պետք է պատժվեին, և որ պետք է կազմվեին հայ զինվորների աշխատանքային գումարտակներ և մահմեդական աշխարհագոր: Երևում է, որ այս հարցի պատասխանատվությունն ստանձնել էին զինվորական իշխանություններն ու Հատուկ կազմակերպությունը: Ինչ վերաբերում է քաղաքացիական իշխանություններին, նրանք ծրագրում էին երևելի հայերին խիստ հսկողության տակ պահել և, անհրաժեշտության դեպքում՝ հետագայում ուղարկվելիք հրամանով, պատրաստ էին նրանց ձերբակալելու⁹⁰:

1914թ. հոկտեմբերի 10-ին Ներքին գործերի նախարարության կողմից Էրզրում ուղարկված հեռագիրը, թվում է՝ վերաբերում է այդ հրամաններն ի կատար ածելուն: Հեռագրից երևում է, որ սկսվել էր այդ շրջանում հայերի «շուրջկալների ու բռնի խուզարկությունների» իրագործումը: Տեղական պաշտոնյաները պետք է «առայժմ գոհանային սրանով և գերծ մնային հետագա ճշումից ու հետաքննությունից»՝ սակայն, «այդուհանդերձ, մնալով զգոն և այլևս չհանդուր-

89 Ճիշտ չի լինի պնդել, թե այդ փաստաթղթում խոսքը վերաբերում էր մահմեդական կանանց ու երեխաներին: Օսմանյան պետությունը պատերազմի մեջ չէր մտել, և Սամսունի գրավման հավանականությունը, ուր ուղարկվել էր այդ հեռագիրը, հորիզոնում գոյություն չուներ: Բացի այդ, տարօրինակ կլիներ երբևէ մտածել, թե մահմեդական ընտանիքները կարող էին առանձնացվել իրենց տղամարդկանցից ու տեղահանվել:

90 Erdal Aydoğan, İttihat ve Terakki'nin, 66.

ժելով հայերի հրահրումներն ու սադրանքները»⁹¹: Լեյտենանտ-կապիտան Հանս Հումանը ևս գրել է, որ նոյեմբերի սկզբից ի վեր իրականացվում էին «Հայկական պատրիարքարանի, հայ ղեկավարների ու կասկածելի հայ մարդկանց հսկողության տակ պահելու ծավալուն միջոցառումներ»⁹²:

Պատերազմն սկսվելիս արդեն ծրագրեր կային նաև տեղահանելու կամ արտաքսելու օտարերկրյա այն կազմակերպությունների աշխատակիցներին, որոնք ծառայել էին օսմանյան հայերին՝ հատկապես արևելյան Անատոլիայում. «Նախատեսված է, որ պատերազմի դեպքում օտար հաստատությունների գործիչները, որոնք արևելյան նահանգներում բավական շատ են, և հատկապես բոլոր նրանք, ովքեր զբաղվում են հայերի կրթությամբ ու ուսուցմամբ, պետք է կալանավորվեն և բոլորը միասին տեղափոխվեն պատերազմի գոտուց հեռու ընկած տարածքներ, ուր նրանց պետք է ստիպել մնալ ու բնակվել»: Տեղական պաշտոնյաներից խնդրում են «այդ կապակցությամբ նրանց կարծիքը» և զեկուցել, «թե ինչ օտար հաստատություններ կան, եթե այդպիսիք կան, ձեր [համապատասխան] նահանգ[ներ]ում, ինչ տեսակի և քանի աշխատող ունեն, և ուր հարմար կլինի նրանց վերաբնակեցնել»⁹³:

Դատելով այդ երեք հեռագրերի ձևակերպումներից՝ հայերի վերաբերյալ որոշումների առումով նոյեմբերը կարևոր ամիս է եղել: Առաջին հեռագրից, որն Էրզրում էր ուղարկվել նոյեմբերի 18-ին, երևում է, որ հայերի մասին համընդհանուր որոշումը մոտ էր: Էրզրումից պահանջվում էր «գործեք՝ ելնելով ձեր շրջանի պահանջներից... այնպիսի միջոցներով, որոնք վայել են տիրոջը՝ մինչև տրվեն հայերի վերաբերյալ հստակ հրահանգներ»⁹⁴: Նույն բովանդակու-

թյամբ մեկ այլ հեռագիր 1914 թ. նոյեմբերի 29-ին ուղարկվել է Վան. «Մինչև հայերի վերաբերյալ հաստատուն ու հստակ հրամաններ ստանալը հարկավոր է իրականացնել այն բաները, որոնք տեղական պայմաններն անհրաժեշտ են դարձնում, և դրանք կատարել տիրական ու իշխող եղանակով»⁹⁵: Երրորդ միջոցը այն սարքերի առգրավումն էր, որոնք հայերը գործածում էին՝ միսյանց հետ և արտասահմանում գտնվողների հետ հաղորդակցվելու համար: Օրինակ, Վանի նահանգային իշխանություններին Անվտանգության վարչության ուղարկած մի հեռագրում պահանջվում է պատասխանել, թե ինչպիսին են Վանի հայկական դպրոցից ռադիոհաղորդիչ/ հեռագրական սարք առգրավելու արդյունքները⁹⁶:

Այս բոլոր փաստաթղթերից հստակորեն գծագրվում է հետևյալ իրականությունը. մինչև 1914 թ. օգոստոսը երիտթուրք ղեկավարներն արդեն գտնվում էին օսմանյան հայերի նկատմամբ ներկա և ապագա քաղաքականություն որոշելու գործընթացում: Այդ քաղաքականության հիմնական թիրախներն էին քաղաքական խմբերն ու այն շրջանակները, որոնք ենթադրաբար կապ ունեին Ռուսաստանի հետ և հավանաբար կարող էին օգնություն հատկացնել հայ կամավորական ջոկատներին: Որոշումներից մի քանիսը, ինչպես կառավարության պաշտոնյաների և ուրիշների հեռացումն ու տեղահանությունը, մոտ էին և, այդ նպատակով, տեղական պաշտոնյաներն արդեն հրաման ունեին մայրաքաղաքից սպասվող հրահանգների երկրորդ փուլի «անհրաժեշտ պատրաստությունները» տեսնելու: Մինչև այս պահը, հավանաբար, արդեն որոշված էր (կամ որևէ պահի որոշվելու էր) Սև ծովի ափերից կանանց ու երեխաների փոխադրությունը դեպի երկրի խորքերը, սակայն այդ միջոցառման իրագործումը դեռևս ցանկալի չէր: Կառավարությունն ինքն իրեն գոտեպնդում էր՝ հայերի վերաբերյալ «հաստատուն ու հստակ հրամաններ» տալու համար:

91 BOA/DH.ŞFR, № 45/237, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 10:

92 Dinkel, "Der Einfluss," 38.

93 BOA/DH.ŞFR, № 46/119, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Մամուրեթյուլագիզի, Դիյարբեքրի ու Մոսուլի նահանգներ, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 31:

94 BOA/DH.ŞFR № 46/303, ներքին գործերի նախարարի ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 18: Հեռագիրը տարօրինակ ձևով է վերջանում՝ հետևյալ բառերով. «Մուսիղիսի ճողված-

քի օպերացիան մի քիչ հետաձգվում է: Եթե ցանկանում եք, ուրիշ մեկին կուղարկեն»:

95 BOA/DH.ŞFR, № 47/236, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 29:

96 BOA/DH.ŞFR, № 47/60, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 17:

1914 թ. դեկտեմբերի 27-ին Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթներ Թալեաթ փաշայի ուղարկած գաղտնի հրամանից կարելի է եզրակացնել, որ այդ ամիս, սակայն դրանից ավելի վաղ, Ստամբուլում որոշ որոշումներ արդեն կայացվել էին: Նահանգներում կառավարության մեջ աշխատող բոլոր հայ գործիչներին աշխատանքից ազատելու վերաբերյալ Թալեաթի կոչը զարգացման շիկացած փուլի անդրադարձն է.

Քանի որ անհրաժեշտ էր դադարեցնել ոստիկանության կոմիսարի ու պաշտոնյաների ծառայությունը, որոնք հայկական համայնքի անդամներ են և, ամենայն հավանականությամբ, իրենց պաշտոնների բերմամբ, կարող են չարի ու խարդավանքի գործիք լինել, [պահանջվում են նշանակման պաշտոնական] փաստաթղթերը այդ մարդկանց, որ ըստ այդմ ավելի վաղ բացահայտվելու պատճառով ոչ մի վստահություն չի մնացել, և որոնց փաստաթղթերն անվավեր դարձնելու դեպքում [վարչական] խոչընդոտ չի կարող նախատեսվել, անվավեր դարձնել տեղական վարչակազմի կողմից: Եթե նման գործողություններ կատարելիս բարդություններ ծագեն, նահանգ [ային իշխանություններն այդ մարդկանց] պետք է ուղարկեն նահանգի հեռավոր վայրերը, ստիպեն հրաժարական տալ և անվավեր դարձնեն նրանց [պաշտոնական] փաստաթղթերը: Եթե դա անհրականա՛նալի կամ անսխորժ լինի, [տեղական իշխանությունները] պետք է այդ մարդկանց անունների ցուցակ ուղարկեն, որպեսզի այստեղի [պաշտոնյաները] նրանց ուղարկեն այլ նահանգներ⁹⁷:

Մեկ այլ աղբյուր հաղորդում է, որ որոշումները կայացվել են 1914 թ. դեկտեմբերին: Կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը դեկտեմբերի 30-ին գեկուցում է, որ որոշում է կայացվել «երբ [եթե?] անհրաժեշտ է, կազմել զինված ջոկատներ, որոնք որևէ ժամանակ կարող են քայլեր ձեռնարկել Անտանտի քրիստոնյա տարրերի դեմ, ինչպես նաև Թուրքիայի քաղաքականության մեջ ընդդիմության դեմ⁹⁸:

97 BOA/DH.SFR, № 48/166, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներ, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 27:

98 Hans Humann, "Vertrauliche Mitteilung", 30 December 1914, in Yale University Library, Ernst Jäckh Papers, Group № 467, Box 1, Folder 19.

Մինչ հայերի դեմ այս որոշումներն էին ընդունվում, պատերազմի ընթացքը փոխվում էր, և այդ փոփոխությունն Օսմանյան կայսրության օգտին չէր: Թուրքերը պարտվել էին երկու ճակատում՝ Սարիղամիշում (դեկտեմբեր-1915 թ. հունվար) ռուսների ձեռքով և Մինայում (Եգիպտոս, 1915 թ. փետրվար) բրիտանացիների կողմից: Ստամբուլի շուրջ օղակը սեղմվում էր:

6

ԿԵՐՏՆԱԿԱՆ ԲԱՅԼԵՐ
ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ

Սարիղամիշի ճակատամարտն (1915 թ. հունվար) իսկական աղետ դարձավ օսմանյան բանակի համար, որը, իր իսկ հաշվարկով, կորցրեց վաթսուն հազար զինվոր, որոնց մեծ մասը մահացավ Կովկասյան լեռներում՝ սառչելուց: Հսկայական այդ կորստից բացի, բազմաթիվ զինվորներ փախան բանակից և, ողջ մնալու համար, դիմեցին ավազակության¹: Բանակը մեկ այլ, թեև ոչ նույն չափի, անհաջողության մատնվեց Եգիպտոսում, երբ Ջեմալ փաշայի հրամանատարության ներքո գտնվող Չորրորդ բանակը 1915 թ. փետրվարին լուրջ պարտություն կրեց անգլիացիներից, ինչը հայտնի է Ջրանցքի առաջին արշավախումբ անվամբ: Մինչույն ժամանակ, Եգիպտոսում ու Հնդկաստանում բնակվող մահմեդականներին Անգլիայի դեմ ապստամբության հրահրելու ծրագիրը, որը Ջեմալ փաշան համարում էր Եգիպտոս հաջող արշավանքի պայման, ոչ մի արդյունքի չհանգեցրեց²: ՀԿ ստորաբաժանումները, որոնց հետ Օսմանյան կայսրությունը մեծ հույսեր էր կապում, Կովկասի ու Վանի շուրջ հաջողության չհասան և սկսեցին խնդիր դառնալ օսմանյան բանակի համար³:

Այն մտավախությունից, թե անգլիացիները պատրաստվում էին Իսկենդերունի շրջակայքում ինչ-որ տեղ իջնել և ապա, Ստամբուլն ու Չանաքքալեն գրավելու նպատակով, ռազմածովային մեծ շարժում սկսել, երիտթուրքերն սկսել էին հավատալ, որ կայսրության վախճանն իրոք մոտ է: Գրեթե բոլորը վստահ էին, որ Ստամբուլի գրավումն անխուսափելի էր: Պատերազմից հետո երիտթուրքերի հիմնական դատավարության ժամանակ Ջևաթն իր վկայության մեջ

ասել է. «Հայտնի չէր, թե ութ ժամ հետո Ստամբուլն ինչ վիճակի մեջ էր հայտնվելու»⁴: Ստամբուլի համար սղված Գալիպոլիի 259 օր տևած ճակատամարտն իսկական տարտարոս էր⁵ «կրակի ու մահվան ծիսակարգ»⁶: Այդ 259 օրից յուրաքանչյուրը կենաց ու մահվան միջև ընթացող պայքար էր:

Տեղահանությունների առաջին որոշումն ընդունվել է այդ պայմաններում: Ռազմական ու քաղաքական պատճառներով որոշակի շրջաններից հայերի տեղահանումը մեկ այլ կարևոր շրջադարձ էր նախանշում: Ինչպես ավելի ուշ ցույց կտանք մանրամասնորեն, այն հանգամանքը, որ եվրոպական պետությունները պատերազմի մեջ էին, կարևոր դեր է խաղացել այդ տեղահանությունների մեջ, որոնք նախ իրականացվել են Դյորթում, իսկ ապա Ջեյթունում՝ երկուսն էլ Կիլիկիայի շրջանում: 1915 թ. մարտի սկզբին Ջեյթունի իրադարձությունների ժամանակ Ստամբուլից Չորրորդ բանակի հրամանատարությանն ուղարկված մի հեռագրում խոսվում էր «այսպիսի մի ժամանակ, երբ եվրոպական պետություններն զբաղված են, հայերին... պատժելու կարիքի» մասին: Սակայն հեռագիրն ավարտվում էր այսպես. «Հստակ է, որ այս պահին նման ձեռնարկումը հարմար չի լինի»⁷: Երիտթուրքերը վստահ էին, որ պատերազմն իրենց համար նպաստավոր պայմաններ է ստեղծել, բայց ճիշտ ժամանակը դեռևս չի եկել:

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ԸՐՁԱԴԱՐՁԱՅԻՆ ԿԵՏ

Սարիղամիշում Օսմանյան կայսրության պարտությունը և փետրվարին Դարդանեղ ճեղքելու Անտանտի անհաջող փորձը (իբրև երկու ամիս անց Գալիպոլիում ցամաք դուրս գալու նախերգանք) շրջադարձային դեր խաղացին, քանի որ թուրքերն սկսեցին բոլոր կողմերից իրենց վտանգներով շրջապատված զգալ: Հատկապես ոռոսական ճակատում օսմանյան ուժերի կրած անընդմեջ պարտու-

1 Mareşal Fevzi Çakmak, Birinci Dünya Savaşında Doğu Cephesi (Ankara, Genelkurmay Basımevi, 2005), 73–74.
2 Ջեմալ փաշայի արշավանքի մասին տես Nevzat Artuç, Cemal Pasha: Askeri ve Siyasi Hayatı (Ankara, Türk Tarih Kurumu, 2008), 219–30:
3 Akçam, A Shameful Act, 137–42.

4 Հինգերորդ նիստ, Takvim-i Vekayi (այսուհետև՝ TV), №3554, 14 May 1919:
5 Tarık Zafer Tunaya, Türkiye’de Siyasal Partiler, h. 3, 514.
6 Şevket Süreyya Aydemir, Makedonya’dan Ortaasya’ya Enver Paşa, h. 3 (İstanbul, Remzi Kitabevi, 1972), 228.
7 BOA/DH, 2.Şube, №68/30/2, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի, Բեյրութի, Հալեպի ու դրանց շրջակայքի զինվորական շտաբներին, չթվագրված (հավանաբար՝ 1915 թ. մարտի 9):

թյունների մեղքը գնալով ավելի ու ավելի բարդվում էր հայ աշխարհագորայինների վրա, որոնց մասին ասվում էր, թե նրանք օսմանյան տարածքում գործում են իբրև ռուսական ուժերի հինգերորդ շարայուն:

Եվ այդպես, փետրվար ու մարտ ամիսների ընթացքում երիտթուրք ղեկավարներն սկսեցին ավելի չարագույժ բացատրություններ կայացնել պատերազմի մեջ հայերի գործողությունների ծավալի ու նպատակի մասին և չափազանցված այդ պատմությունը տարածել ողջ երկրով մեկ: «Հայերի զինված ապստամբությունների» պնդումը քավության այն նոխսագն էր, որի տակ երիտթուրք ղեկավարները ջանում էին թաքցնել կամ, առնվազն, արդարացնել ռազմի դաշտում և հատկապես Մարիդամիշում իրենց պարտությունները: Հետագայում հակահայ այս նոր քարոզչությունը ծառայելու էր իբրև կայսրության հայ ազգաբնակչության զանգվածային տեղահանությունների և բնաջնջման հիմնական արդարացումներից մեկը⁸:

Փետրվարին սկսեցին ավելի հաճախակի դառնալ հայերի ապստամբությունների կամ դրանց պատրաստությունների մասին խոսակցությունները՝ ինչպես պատերազմի նախարարի պաշտոնակատար Էնվեր փաշայի կողմից տուժած վայրեր ուղարկված հեռագրերում, այնպես էլ օսմանյան Երրորդ բանակի իրավասության տակ գտնվող տարածքների պաշտոնյաների ու բանակային սպաների կողմից մայրաքաղաք ուղարկված հեռագրերում: 1915 թ. փետրվարի 25-ին Էնվեր փաշայի ուղարկված «գաղտնի» մի հեռագրում նշվում է, որ «որոշ հայ հրոսակներ են հայտնվել Բիթլիսում, և ավազակության են դիմել բանակի դասայիք ուրիշ հայեր ևս: Հայերի կողմից զինվորական անձնակազմի ու ժանդարմերիայի վրա հարձակումներ են եղել Հալեպում ու Դյորթում, իսկ Կեսարիա գավառում հայերի տներում ռումբերի մեծ պահեստ է հայտնաբերվել»⁹:

Իբրև թե նման արարքների պատճառով, բոլոր հայ զինվորներին հարկադրում էին վերադարձնել իրենց զենքերը և հեռանալ զինվո-

րական շտաբներում զբաղեցրած իրենց պաշտոններից: Հրաման արձակվեց, որ «առանց բացառության, հայ զորակոչիկներն այլևս չպետք է աշխատեն բանակային որևէ ծառայության մեջ՝ ո՛չ բանակային ակտիվ ու շարժական ստորաբաժանումներում և ո՛չ էլ ժանդարմերիայի շարժական կամ անշարժ միավորումներում, նրանց այլևս չի թույլատրվում ծառայել զինվորական անձնակազմի կամ շտաբի շքախմբերում կամ գրասենյակներում»¹⁰:

Բացի այդ, բանակային ստորաբաժանումներին արտոնություն տրվեց «վերացնելու [imha etmek]» բոլոր նրանց, ովքեր չեն ենթարկվի կառավարության հրամաններին. «Եթե նկատվի, որ բնակիչներից որևէ մեկը որևէ կերպ գործում է կառավարության հրամաններին հակառակ կամ մասնակցի զինված հարձակումների կամ խռովությունների, բանակն ու կորպուսի հրամանատարները, կորպուսներն ու ստորաբաժանումների հրամանատարներն ու կայազորների հրամանատարները պարտավոր են ամիջապես գործել զինվորական ուժերով՝ հնարավոր խստագույն ձևով ճնշելու [նման դեպքերը], իսկ բռնությամբ ուղեկցվող խռովությունների ընթացքում իրավասու են վերացնելու [բոլոր օրինագանցներին]»: Զինվորական հրամանատարները կարող էին նաև «անմիջապես ռազմական դրություն հռչակել որևէ վայրում, ուր անհրաժեշտ կգտնեն դա անել»¹¹:

Հաջորդ մի քանի ամսում կառավարությունն անդադար տեղեկանում էր, որ հայերն ապստամբում են, և որ նման իրադրությունը վտանգ է ներկայացնում բանակի համար: Այդպիսի հաղորդագրությունների մեջ հատկապես առանձնանում են Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշայի հեռագրերը: Այսպես, 1915 թ. ապրիլի 22-ին ուղարկված մի հեռագրում Քամիլ փաշան նշում է, թե «[ա]յսօր Սվազի նահանգի որոշ մասերում և Վանի ամբողջ նահանգում հայերը գտնվում են խռովության ու ապստամբության վիճակում: Հարկավոր է ենթադրել, որ հարմար պահի մյուս նահանգները կհետևեն դրանց [այդ նահանգների ապստամբությանը]»: Նա ավելացնում է, որ «հարձակումները նախապես ծրագրված են և կազմակերպված Դաշնակցության և [հայ հեղափոխական] այլ կոմիտեների կողմից»¹²: Ըստ Քամիլ փաշայի, հայերը «տարածայնու-

8 Այստեղ կսահմանափակվենք Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության որոշ փաստաթղթերով, որոնք բացահայտում են քայլերն այն գործընթացում, որով կայացվել է ընդհանուր տեղահանության որոշումը: Այդ մասին հավելյալ տեղեկությունների համար տես Akçam, A Shameful Act, III-49:

9 Askeri Tarih Belgeleri Dergisi 34, №85 (1985թ. հոկտեմբեր): 23, փաստ. №1999:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում:

12 Askeri Tarih Belgeleri Dergisi 34, №85 (1985թ. հոկտեմբեր): 45-46, փաստ.

թյուն են սերմանում բանակի թիկունքում... հայ մարդիկ [ովքեր զինված էին, բոլորը] փախել են թշնամու կողմը կամ վերջինիս երկրները»: Գեներալը, որը խոտվության նշաններ էր տեսնում Սվազի նահանգում և լայնամասշտաբ ապստամբություն Վանում, կարծում էր, թե այդ իրադարձությունները, որոնք կատարվում էին «մի ժամանակ, երբ կայսերական բանակը գտնվում է պատերազմի մեջ... հաստատում են ու ապացուցում [օսմանյան] կառավարության հանդեպ հայերի դավաճանությունը և նրանց համագործակցությունը թշնամու հետ և նրան օժանդակելը»: Այդ դեպքերի հետևանքով նա հետևյալ որոշումն է կայացրել և հաղորդել Ստամբուլ.

Պահպանելու համար մեր երկրի կյանքն ու գոյությունը, անհրաժեշտ է դարձել, որքան էլ ցավալի լինի, ամենայն խստությամբ պատժել ու տեղահանել նրանց, ովքեր ապստամբել են, [և այդ նպատակի համար] նահանգային պաշտոնյաներն ու բանակային կորպուսների գործող հրամանատարները [1915 թ.] ապրիլի 7-ին ու 8-ին հեռագրերով տեղեկացվել են, որ բոլոր զենք կրողները վերցվել են աշխատանքի, և որ [ի լրումն 18-46 տարեկանների] բոլոր 46-50 տարեկան անհատները զինվել են, և որ ջանալով չվսասել պետությանը դեռևս հավատարիմ բնակիչներին կամ նրանց [ովքեր] անպաշտպան [են], որոշում է կայացվել մինչև վերջին մարդը արմատախիլ անել բոլոր դավաճաններին, որոնք զինված ապստամբություն են անում կառավարության դեմ¹³:

№ 2004. Այդ աշխատանքում փաստաթղթի ամսաթիվն արձանագրված է սխալ՝ իբրև 9.12.[13]31 (իմա՝ 1915 թ. մայիսի 22): Նույն փաստաթուղթը, սխալների ուղղումով, հրատարակվել է հետևյալ տեղում. Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 123:


13 Նույն տեղում: Նյութից շեղվելու գնով ցանկանում են այստեղ ուշադրություն հրավիրել 1915 թ. ապրիլի 22-ին ու մայիսի 27-ին հրապարակված տեղահանությունների հրամանների և Բարբարոսայի հրամանի միջև եղած զուգահեռի վրա: Բարբարոսայի հրամանն արտոնում էր քաղաքացիական անձանց դեմ հավաքական ճշմարիտները, եթե նրանք դիմադրեին կամ խանգարեին գերմանական ուժերին: Բոլոր պարտիզանները՝ լինելիս նրանք իրական, թե իբրև այդպիսիք կասկածվող, պետք է առանց դատաստանի սպանվեին ճակատային գծի մարտական ստորաբաժանումների կողմից: Վերամիստի իրավական ճյուղի գեներալ-լեյտենանտ Օյգեն Մյուլլերը պարտիզաններին սահմանել է իբրև «քաղաքացիական այն անձինք, ովքեր դիմադրություն են հրահրում Գերմանիայի զինված

Հայ ազգաբնակչության ապստամբության մեջ ներգրավված լինելու վերաբերյալ նման հեռագրեր են ուղարկվել մայրաքաղաք Երրորդ բանակի տարբեր բաժանումների կամ պաշտոնյաների կողմից՝ բանակի վերահսկողության ողջ տարածքից: Օրինակ, զինվորական չթվագրված մի զեկույցում, որը կրում է «Շուքրու» ստորագրությունը և ուղարկվել է Վանից, մեկ առ մեկ թվարկված են շրջանում տեղի ունեցող ապստամբությունների տարբեր դեպքերը և նշված, որ «վերը նշված տարբեր պատրաստություններից ու միջոցառումներից Երրորդ բանակը հասկացել է, որ երկրի ներսում պատրաստվում է մեծամասշտաբ հեղափոխական գործողություն»¹⁴:

Այս բնույթի հեռագրերը շարունակվել են ամբողջ հունիս ու հուլիս ամիսների ընթացքում: Մահմուդ Բամիլ փաշան 1915 թ. հունիսի 19-ին նշել է, որ «Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներում հայերը, դասալքությունից ու թշնամու կողմը փախչելուց հետո, գործում են իբրև զինված հրոսակախմբեր և կտրում ճանապարհները, սպանում բնակիչներին, գրոհում [մթերքի ու զենքի] պահեստները և այդպիսով ցույց տալիս իրենց իսկական դեմքը», և ավելացրել է, որ «հայերը միևնույն օրակարգն են հետապնդում Սվազի, Դիյարբեքի ու Էլազիզի [Մամուրեթյուլազիզ] նահանգներում»: Այնուհետև զենեքալը գրել է, որ «բանակի մատակարարման ու անվտանգության տեսանկյունից մեծ վտանգ է ներկայացնում այն փաստը, որ բանակի սննդամթերքն ապահովող տարածքը, ինչպես նաև այն տարածքները, որտեղով մեր սահմանն է անցնում, լի են մի համայնքի անդամներով, որը թշնամական նկրտումներ ունի»: Այդ պատճառով գտնում է, որ «այս պահից վերոհիշյալ նահանգների հայերը պետք է տեղահանվեն և վերաբնակեցվեն Հալեպի ու Մոսուլի շրջաններում», և խնդրում է,

ուժերի դեմ (օրինակ՝ պրոպագանդիստական թուղիկներ բաժանող կամ Գերմանիայի հրամաններին չենթարկվող բաշիրոկուները, հրծիգները և այլն): Վստահ չլինելու դեպքում սուկ կասկածը բավական է» (Horst Boog, Jürgen Förster, and Joachim Hoffmann, Das Deutsche Reich und der Zweite Weltkrieg, Bd.4: Der Angriff auf die Sowjetunion [Stuttgart, DVA, 1983], 428-29): Տեղահանության 1915 թ. մայիսի 27-ի պաշտոնական որոշման մեջ օսմանյան բանակի հրամանատարներին արտոնություն էր տրվում «այլ տեղեր փոխադրել ու տեղավորել... գյուղերի ու քաղաքների բնակիչներին, որոնք ընկալվում են իբրև լրտեսներ ու դավաճաններ» (TV, 1 June 1915): Զուգահեռն ակնբախ է:

14 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 100. Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել 97-108-ում և 389-418-ում:



Նկար 5.1. Գերմանական արխիվի փաստաթուղթ: Տե՛ս Կովկասում գերմանական ու օսմանյան զինվորականության հիմնած Գաղտնի կազմակերպության աղյուսակը: Աղբյուրը. DE/PA-AA/R 21016, Der Weltkrieg 1914, Geheime Akten, Ուսղնն Հ. Մ. Գասավաթի զեկույցը գերմանական շտաբին, 1915թ. դեկտեմբերի 13: Հատուկ շտրիակալությունս Մեմետ Ուլուրջըրին այս փաստաթուղթը տրամադրելու համար:

որ «օժանդակություն ցուցաբերվի և հանձնարարվի, որ այս հարցով քանակի կողմից նահանգապետերին ուղարկված հաղորդագրություններն ու հրահանգները չուշանան»¹⁵:

Այն հարցը, թե ուղիղ կապ կան արդյոք Երրորդ բանակի Ստամբուլ ուղարկված այս և նման զեկույցների և որոշ նահանգներից հայերի տեղահանության միջև, կարևոր խնդիր է, որը դեռևս կարող է հետազոտության, սակայն ներկա աշխատության շրջանակից դուրս է: Ինչպես հայտնի է, օսմանյան Խորհրդարանի Հինգերորդ բաժանմունքի (այն հանձնաժողովի անունը, որը կազմվել էր Պատգամավորների պալատի կողմից 1918թ. նոյեմբերին՝ հետաքննելու համար օսմանյան կառավարության անդամների պատերազմական հանցագործությունները) անցկացրած ունկնդրումների ընթացքում երիտթուրքերի պատերազմական շրջանի կառավարության անդամները պնդել են, որ հայերի տեղահանություններն իրականացնելու որոշումը կայացնելիս իրենք, իբրև կառավարության անդամներ, գործել են բացառապես իրենց իրավասությունների շրջանակում, իսկ որոշումն ամբողջությամբ պայմանավորված է եղել ռազմական անհրաժեշտությամբ¹⁶: Այստեղ կսահմանափակվեմ այդ պատմությունների որոշ կողմերի քննությամբ:

ԿԱՐԵՎՈՐ ՆԿԱՏԱՌՈՒՄ ՉԻՆԿՈՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՐԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երրորդ բանակի զեկույցագրերում՝ իբրև «հայերի ապստամբություններ» բնորոշված իրադարձություններին ուշադիր հայացք նետելիս, բացահայտվում է այդ զեկույցագրերի զարմանալի բնույթը:

15 Նույն տեղում, 187:

16 Հետաքննող հանձնաժողովի արձանագրությունները հետագայում հրատարակվել են գրքի տեսքով (տե՛ս սույն հատորի առաջին գլխի 19-րդ ծանոթագրությունը): Հայերի տեղահանությունների ու քաջնջման գործողությունների մեջ օսմանյան Պատերազմի նախարարության ու բանակի ներգրավվածության ճշգրիտ աստիճանը լուրջ բանավեճի առարկա է, սակայն այդ ներգրավվածության չափերը դեռևս ծարավի են ամբողջական բացահայտման: Այդ հարցի քննարկման համար տե՛ս V. N. Dadrian, "The Role of the Turkish Military in the Destruction of Ottoman Armenians," Journal of Political and Military Sociology 20, №2 (Winter 1992): 257-88 և "Party Allegiance as a Determinant in the Turkish Military's Involvement in the World War I Armenian Genocide," Hakirah: A Journal of Jewish and Ethnic Studies 1, №1 (2003), 57-67:

Մասնավորապես, Սարիղամիշի պարտությունից հետո Երրորդ բանակի հաղորդագրություններում կարելի է նկատել ձևակերպումների փոփոխությունը: Սակայն, զարմանալիորեն, քննարկվող իրադարձությունների բնույթի հարցում փոփոխություն չկա:

Նախ և առաջ, չնայած «ապստամբություն» ու «խռովություն» տերմինների հաճախակի գործածությանը, զեկուցագրերն ուշադիր ընթերցելիս պարզ է դառնում, որ քննարկվող դեպքերն իրականում դասալիքների հետ զինված բախումներն են: Այսպես, 1914 թ. հոկտեմբերի 29-ին Բիթլիսի նահանգից «Մասունի ճանապարհով» ուղարկված հաղորդագրությունը վերաբերում է մի խումբ ժանդարմների սպանությանը: Հաղորդագրության մեջ պարզաբանվում է, որ հարձակվողներից քսանմեկը դասալիք են եղել, և որ «դասալիքներից հինգի տները հողին են հավասարեցվել»: Այդտեղ նշվում է նաև, որ «հայերի ղեկավարները և կոմիտեի [տարբեր] անդամներ պնդում են, որ իրադարձություններն [իրենց բնույթով] ծրագրված գործողություն չեն, այլ անձնական»: Գյուղի քնակիչներին տրվել է երեք օր՝ մեղավորներին հանձնելու համար, և վերջիններս «Գելիգյուզան քնակավայրի առաջատար անձանց օժանդակությամբ և ուղղորդմամբ տրված ժամանակահատվածի երկրորդ օրը հանձնվել են կառավարությանը»¹⁷:

1915 թ. փետրվար ու մարտ ամիսներին Մուշում ու Բիթլիսում տեղի ունեցած բազմաթիվ միջադեպեր նույն բնույթն ունեին: Ընդհանուր առմամբ, դրանք դասալիքների հետ բախումներ էին, որոնք հեշտությամբ ավարտվում էին կառավարական ուժերի հաղթանակներով: Համաձայն Բիթլիսի նահանգից 1915 թ. փետրվարի 25-ին ուղարկված մի հեռագրի, «Մուշի դաշտի երկու տարբեր վայրերում մեր ժանդարմների դեմ զենք է գործածվել, զենք է գործածվել նաև Սևենգ քնակավայր եկած մեր գումարտակի դեմ, որը կցված է Մուշի մարզի մայրաքաղաքին՝ դասալիքներին ձերբակալելու նպատակով... Գյուղը [շրջապատվել և] և շրջափակման է ենթարկվել: Այդ բախումների հետևանքով հարձակվողներից ինը հոգի սպանվել է: Դասալիքների տները կրակի են մատնվել»¹⁸:

Երրորդ բանակի հրամանատարության մեկ այլ հեռագրում, որ 1915 թ. փետրվարի 27-ին ուղարկվել է Ստամբուլի Բարձրագույն հրամանատարության գրասենյակ (Պատերազմի նախարարությունում), նշվում է, որ հայերի հետ առաջին միջադեպն սկսվել է Մուշի մատույցներում 50 հոգանոց զինված հրոսակախմբի հետ [օսմանյան ռժմերի] բախումով... Թեև դրանից հետո Բիթլիսի նահանգի տարբեր վայրերում ևս միջադեպեր եղան, դրանք արագորեն ճնշվեցին»¹⁹:

Այդ զեկուցագրերի ուշադիր ընթերցումից առաջացած հիշատակման արժանի մյուս երկու պահերը հետևյալն են. առաջին՝ խնդրո առարկա դեպքերն իրենցից կազմակերպված ապստամբություն չեն ներկայացրել, և երկրորդ՝ քնակչությունը դրանց մեջ ներգրավված չի եղել: Ավելի վաղ նշված Վան ուղարկված զինվորական անթվակիր զեկույցի մեջ հեղինակը (Շուքրուն), խոսելով «հեղափոխական մեծ շարժման» մասին, ներկայացրել է Մուշում ու Բիթլիսում տեղի ունեցած դեպքերը և ասել, որ «և՛ Մուշի, և՛ Բիթլիսի հայերի ղեկավարները, որոնք Դաշնակցություն [հեղափոխական կազմակերպության անդամներ] չեն, հրապարակավ դատապարտել են այդ իրադարձությունները»: Այդ զեկույցից երևում է նաև, որ Վանից հտորհրդարանի հայ պատգամավոր Վահան Փափագյանն այդ ժամանակ եղել է շրջանում: Ըստ զեկույցի հեղինակ Շուքրուի, Փափագյանը պնդել է, որ դաշնակները (Դաշնակցություն կուսակցության անդամները) կապ չունեն միջադեպերի հետ, և դաշնակների հետ միասին ցանկություն է հայտնել «օգնելու պետությանը»:

Այդ և այլ փաստաթղթերում նշվում է նաև, որ հայոց պատրիարքը դեպքերից հետո պաշտոնական նամակ է ներկայացրել՝ բողոքելով դասալիքների պատճառով քաղաքացիական քնակչության հանդեպ կիրառված ծայրահեղ դաժան միջոցառումներից, և որ, ի պատասխան այդ բողոքի, Երրորդ բանակը հետաքննություն կանցկացնի, և պատվիրակություն կուղարկվի այն գյուղերը, որոնցում տեղի են ունեցել միջադեպերը, և հարցի շուրջ զեկույց կներկայացվի²⁰: Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշան 1915 թ. ապրիլի 22-ին ուղարկված իր վերոհիշյալ հեռագրում կետ առ կետ պատաս-

17 BOA/DHEUM, 2.Şube, №2/48/2-3, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 28-29:

18 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, №81 (1982թ. դեկտեմբեր), 61, փաստ. №1815:

19 Askeri Tarih Belgeleri Dergisi 34, №85 (1985թ. հոկտեմբեր), 33-34, փաստ. №2001:

20 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 107-8, 416-17.

խանում է հայոց պատրիարքի բողոքներին՝ նշելով. «Օրական իրադարձությունների մասին վերոնշյալ նահանգներից, ինչպես նաև իմ կողմից ուղարկված [նախորդ] բոլոր հեռագրերը ցույց են տվել, որ հայերը ժանդարմների բռնությանն ու ճնշումներին բարի կամ օրինական ինքնապաշտպանությամբ պատասխանողի վիճակում չեն եղել, այլ հենց իրենք են եղել թշնամական հարձակումներ գործողի դերում»²¹:

Պատերազմի նախաբար Էնվեր փաշայի ընդհանուր հաղորդագրությունը, որը 1915 թ. ապրիլի 20-ին ուղարկվել է Երրորդ բանակի հրամանատարությանը՝ հրահանգելով տեղեկություններն ուղարկել մյուս ստորաբաժանումներին, քննարկվող դեպքերի բնույթի առումով բավական պերճախոս է: Այդ հաղորդագրության մեջ Էնվերը նշում է, որ «փոքր հրոսակախմբերը՝ բաղկացած հայերից ու հույներից, որոնց փոքր մասը կանոնավոր բանակի ստորաբաժանումներից, իսկ մեծ մասը՝ [անզեն] աշխատանքային գումարտակներում ծառայելուց հետո փախած դասալիքներ են, թափառում են այստեղ և զենքերը գործածում բոլոր ժանդարմների դեմ, որոնք ուղարկվել են նրանց ձերբակալելու համար»:

Էնվերը, որն ասում է, որ դասալիքները բաղկացած են ինչպես մահմեդականներից, այնպես էլ ոչ-մահմեդականներից, ասում է նաև, որ դասալիքների թիվն աճում է՝ ժանդարմների անբավարար թվի պատճառով: Դասալիքների առնչությամբ Էնվերը գտնում է, որ «պետք է ջանքեր գործադրել՝ տեղական բնակչությանն ընդգրկելու համար նրանց ձերբակալման աշխատանքներում... Անկախ այն բանից, թե նրանք ովքեր են, որևէ տեղական բնակիչ, որը բռնի այդ մարդկանցից որևէ մեկին՝ մահմեդականի, թե ոչ-մահմեդականի, և նրանց հանձնի տեղական պաշտոնյաներին կամ զինվորական իշխանություններին, [պետք է ստանա] 1.000 լիրայից ոչ նվազ դրամական պարգև»²²:

Այս գեկուցագրերում նկատվող հիշատակման արժանի երկրորդ պահն այն չափազանցությունն է, որ հաճախ կիրառվում է այդ միջադեպերի նկարագրության մեջ կամ, ուրիշ դեպքերում, այնպիսի իրադարձությունների նկարագրությունը, որոնք երբեք չեն պատահել: Վերջինիս լավ օրինակ է Երրորդ բանակի հրամանատարությանը

21 Նույն տեղում, 123–25, 419–21:

22 Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (1983 թ. մարտ), 91, փաստ. № 1907:

1915 թ. ապրիլի 6-ին Սվազից մի սպայի՝ «կամավորական հատուկ կազմակերպության զորագնդի հրամանատարի» գեկույցը: Ի թիվս այլ բաների, գեկույցի հեղինակը նշում է, որ հայկական Դաշնակցություն կազմակերպությունը զինել ու մարզել է Սվազի տարածքի բոլոր երիտասարդներին և, ընդհանուր զորակոչի հոչակմամբ, մաուզերներով ու մարտիինի [հրացաններով] լիովին զինել նշված նահանգի հայ բնակիչներից մոտ 30.000 մարդու և նրանցից 15.000-ին ուղարկել Ռուսաստան՝ մյուս 15.000-ին թողնելով տեղում: Պատերազմի ընթացքում գալիք մի պահի, հրահանգ ստանալով դուրս գալ Ռուսաստանից, յուրաքանչյուր զորակոչիկի տալով 1.000 փամփուշտ՝ նրանց հրամայվելու է [զինված] ապստամբության ու հեղափոխության միջոցով մեկ ամիս շարունակել իրենց խռովությունը²³:

Մինևույն տեղեկությունը հաղորդված է Սվազի նահանգապետ Մուամերի 1915 թ. ապրիլի 22-23-ի ծածկագրված հեռագրում. «Բռնված կասկածյալների ասածներից տեղեկացել ենք, որ հայերը մարզել և զինել են նահանգից 30.000 հոգու, նրանցից 15.000-ն այդուհետև միացել է ռուսական բանակին, իսկ [մյուս] 15[000] հոգուն հանձնարարվել է [մարտական] գծերի հետևից [տարածքներ] գրավելու և [օսմանյան ուժերին ու գյուղացիներին] սպառնալու առաջադրանքը՝ այն դեպքում, երբ, աստված մի արասցե, մեր բանակն անհաջողության մատնվի»²⁴:

Ինչպես կարելի է պարզորոշ տեսնել, այս երկու փաստաթղթերի պարունակած տեղեկությունը լիովին չի համապատասխանում իրականությանը: Ըստ օսմանյան տվյալների, Սվազի նահանգում այդ ժամանակ բնակվել է 143.406 հայ²⁵: Եթե տրամաբանորեն ընդունենք, որ նրանց մոտ կեսը կանայք են եղել, և որ մոտ 72.000 տղամարդու որ կեսը կամ երեխաներ են եղել, կամ ծերեր, ապա կարող հասուն տղամարդկանց թիվը չէր կարող 36.000-ից շատ ավելի լինել: Բացի այդ, հայտնի է, որ 1914 թ. օգոստոսի 2-ի ընդհանուր զորահավաքով այդ նույն մարդկանց տարել են զինվորական ծառայության: Հետևաբար, այս հաղորդումները բացարձակ արժեքով ընդունելու դեպքում, կարելի է մտածել, թե Սվազի նահանգում ապրող զինապարտության տարիքի գրեթե բոլոր հայ տղամարդիկ փախել են

23 Նույն տեղում, 85–86, փաստ. № 1906:

24 Նույն տեղում, III, փաստ. № 1911:

25 Karpat, Osmanlı Nüfusu, 226.

գինվորությունից և կազմել կամ ընդգրկվել թշնամական գինված խմբավորումներում և ապա իրենք իրենց թաքցրել այդ շրջանում 1914թ. օգոստոսից մինչև 1915թ. մարտ ամիսը:

Հարկավոր է ավելացնել, որ այդ փաստաթղթերը գործածվել են Ջասթին ՄրքՔարթիի պես գիտնականների ու հետազոտողների կողմից, որոնք սատարում են իրադարձությունների վերաբերյալ Թուրքիայի պաշտոնական վարկածը. այդ օժանդակությունը կարևոր է հետևյալ եզրահանգման համար. «1915թ. իրադարձություններն իրականում քաղաքացիական պատերազմ էին հայերի ու թուրքերի միջև»²⁶: Կիրառելով բնակչության տվյալների և մարդկանց ըստ սեռի ու տարիքի դասակարգելու ՄրքՔարթիի իսկ մեթոդը՝ Վահագն Ն. Տատրյանը ցույց է տվել այդ պնդման անհեթեթությունը: Լիովին արդարացիորեն, նա հետևյալ հոետորական հարցերն է բարձրացնում: Որտեղ էին այս 30.000 հոգին թաքնվում 1914թ. օգոստոսից մինչև 1915թ. ապրիլը: Որտեղից էին գալիս 30.000 հոգու համար պահանջվող ապրանքները, զենքերն ու մթերքները, և որտեղ էին դրանք թաքցվում: Ո՞վ էր նրանց ապահովելու կամ ղվ կարող էր ապահովել ուտելիքով, կացարանով և գինվորական պատրաստությամբ: Ավելին՝ ինչպես է հնարավոր, որ մոտ 15.000 գինված մարդ դուրս գար կենտրոնական Անատոլիայում գտնվող Սվազի նահանգից, ճամփորդեր հարյուրավոր մղոններ ողջ տարածաշրջանով մեկ, որն ամբողջովին գտնվում էր օսմանյան Երրորդ բանակի վերահսկողության տակ, և ապա ժամաներ Ռուսաստան՝ առանց որևէ մարդու կողմից նկատվելու, առանց մեկ հատիկ ձերբակալության կամ գինված բախման²⁷:

Կարելի է բերել ևս մեկ օրինակ՝ այս անգամ Յոզղաթի գավառում գինված ապստամբությունների մասին պնդումների վերաբերյալ:

26 McCarthy, Muslim and Minorities, 136, and Justin McCarthy and Carolyn McCarthy, Turks and Armenians: A Manual on the Armenian Question (Washington, DC, Publication of Committee on Education, Assembly of Turkish American Associations, 1989), 48.

27 Ինչպես բացատրել են առաջին գլխի «Ինչպես պետք է գնահատել արխիվներում գտնվող փաստաթղթերը» մասում, այնպիսի փաստաթղթեր կան, որոնք Վ. Ն. Տատրյանի մեջ կասկած են հարուցել օսմանյան փաստաթղթերի հավաստիության նկատմամբ առհասարակ: Տատրյանի կողմից այդ հարցի քննարկման ու վերլուծության համար տե՛ս «Ottoman Archives and Denial,» 291–94:

1915թ. հուլիսի 23-24-ին Առաջին բանակային կորպուսի հրամանատարությանն ուղարկված մի հեռագիր հետևյալ պատմությունն է պարունակում. «Բողազլըյանի մարզի մոտ գտնվող մի տարածքում Ավանոսի կողմերից մոտ 30 գինված հայ ապստամբներ ժամանել են Բողազլըյան [որտեղ նրանք] սպանություններ են կատարել և հողին հավասարեցրել շենքեր... Ստացված հեռագրից տեղեկացել ենք, որ գրեթե 250 զորակոչիկ է ուղարկվել այնտեղ»²⁸: Նույն օրը Անկարայում Հինգերորդ բանակային կորպուսի գործող հրամանատար, գնդապետ Հալիլ Ռեջափն այս լուրն ուղարկել է Ստամբուլի Բարձրագույն հրամանատարությանը՝ հետևյալ հավելմամբ. «Տեղական պաշտոնյաների և կառավարական հիմնարկների ղեկավարների զեկույցների հիման վրա Կեսարիայի 15-րդ զորաբաժանման գործող հրամանատարությունը հայտնել է, որ հայ ազգաբնակչության մի մասն այնքան հանդուգն է գտնվել, որ հարձակվել է Բողազլըյանի մահմեդականներով բնակեցված տարածքների վրա, սպանել, կոդպատել ու ավարի ենթարկել դրանք»²⁹:

Ասվում է նաև, որ Բողազլըյանի շրջակայքից բացի, «ապստամբություն» էր սկսվել նաև Աքղաղմաղենիի շրջանում. դրանք երկուսն էլ գտնվում են Յոզղաթի գավառում: 1915թ. հուլիսի 22-ին գնդապետ Հալիլ Ռեջափին ուղարկած իր հեռագրում Կեսարիայի հինգերորդ զորաբաժանման հրամանատար գնդապետ Շահաբեթինը հաղորդում է մի լուր՝ ստացված «Աքղաղմաղենիի բաժանմունքի գործող ղեկավարի հեռագրից, որ մոտ 250 ազրեսիվ հայ ավազակներ հարձակումներ են գործել Էմիրբեյ ու Դերե... [անընթեռնելի] բնակավայրերի վրա»³⁰: Նույն օրն ուղարկված պատասխան հեռագրում գնդապետ Հալիլ Ռեջափն պահանջում է, որ «Բողազլըյանի ու Աքղաղմաղենի մարզերի գյուղերում ու փոքր քաղաքներում հայտնված հեղափոխական ու արյունալի շարժումները» ճնշվեն «ուժով և անհապաղ, սակայն առանց վնասելու օրինապահ բնակիչներին»³¹:

Ծածկագրերի վարչության արխիվներում բավական փաստաթղթեր կան այդ միջադեպերի և դրանք ճշելու վերաբերյալ: 1915թ.

28 Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (1983թ. մարտ), 145, փաստ. № 1919 and 1920 (մեջբերումն առաջին փաստաթղթից է):

29 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, № 81 (1982թ. դեկտեմբեր), 171, փաստ. № 1835:

30 ԵՀՊԱ, տուի 17, File H, փաստ. № 593:

31 Նույն տեղում, փաստ. № 595:

օգոստոսի 3-ին Անկարայի նահանգ Թալեաթ փաշայի ուղարկած ծածկագրված հեռագրով հաղորդվում է Սվազի նահանգից ստացված մի տեղեկություն, որ (անվտանգության) ուժեր են ուղարկվել՝ «տեղափոխելու համար հայերին, որոնք մեծ թվերով գտնվում են Թենոսի մարզին սահմանակից Աքդադմադենի ու Բողազլյանի մարզերի բնակավայրերում, ովքեր, հավանաբար, կմասնակցեն ապագա հարձակումներին», և պահանջվում է այդ հարցով կապ հաստատել Սվազի հետ³²: 1915 թ. սեպտեմբերի 15-ին Սվազի նահանգ ուղարկված մի հեռագրով Ստամբուլում գտնվող Անվտանգության վարչությունը տեղական պաշտոնյաներից պահանջում է «Անկարայի նահանգ լուր տալ, [որ] միացնեն իրենց ջանքերն ու գործողությունները և արագ ձեռնարկեն [անհրաժեշտ] միջոցառումները՝ տեղափոխելու համար Բողազլյանի ու Աքդադի շրջակայքում հայտնված հայ ավագակներին»³³:

Յոզղաթի գավառում իբրև թե պայթած ապստամբության պնդումները կրկնվել են թուրքերենով վերջերս լույս տեսած աշխատանքներում, որոնց մեջ գլխավորը 1916 թ. օսմանյան կառավարության հրապարակած քարոզչական գործի վերահրատարակումն է՝ «Հայկական [հեղափոխական] կոմիտեների նպատակներն ու հեղափոխական գործունեությունը. [Երկրորդ] սահմանադրական հեղափոխության հոչակումից առաջ և հետո»: Թուրքիայի պատմության պաշտոնական վարկածի կողմնակիցները նույնիսկ այսօր շարունակում են հղել «Յոզղաթի ապստամբությունը»՝ իբրև հայերի տեղահանության հիմնական արդարացում³⁴:

Վերը նշված փաստաթղթերում հայերի խռովության վերաբերյալ ամբաստանությունները իրականում որևէ հիմք չունեն, այլ միտումնավոր հորինված են: 1918 թ. նոյեմբերին Ոճիրների հետաքննության

32 BOA/DH.ŞFR, № 54-A/257, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 3:

33 BOA/DH.ŞFR, № 56/14, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 15:

34 Erdoğan Cengiz, ed., Ermeni Komitelerinin Âmâl ve Harekât-ı İhtilâliyesi: İlân-ı Meşrutiyetten Evvel ve Sonra (Ankara, Başbakanlık Basımevi, Ankara, 1983), 253–55; Taha Niyazi Karaca, Ermeni Sorununun Gelişim Sürecinde Yozgat'ta Türk Ermeni İlişkileri (Ankara, Türk Tarih Kurumu 2005), 189–93.

հանձնաժողովը³⁵, որն ստեղծվել էր հետաքննելու համար պատերազմական ժամանակաշրջանում հայերի դեմ կատարված ոճրագործությունները, ձեռք էր բերել իթթիհադականների իշխանության շրջանում ուղարկված մի շարք հեռագրեր, որոնք հստակորեն ցույց էին տալիս, որ այդ փաստաթղթերի պարունակած տեղեկությունները միշտ չէին: Այդ հեռագրերն ընթերցվել են Յոզղաթի դատավարության նիստերի ընթացքում՝ 1919 թ. փետրվարի սկզբին: Նյութը քննարկվել է դատավարության երկրորդ նիստին՝ փետրվարի 8-ին:

Ոսկնդրության ժամանակ նիստը վարող դատավորը մարզի պաշտոնյա Քեմալին հարցրել է Բողազլյանում հայերի ապստամբության մասին: Երբ Քեմալը պնդել է, որ ապստամբություն կար, դատավորը նրան մեղադրել է ստելու մեջ և ընթերցել Կեսարիայի գործող հրամանատար գնդապետ Շահաբեթինի 1915 թ. հուլիսի 27-ի հեռագիրը՝ ուղղված Անկարայում գտնվող Հինգերորդ բանակային կորպուսի հրամանատար Հալի Ռեջաիին: Շահաբեթինը գեկուցում էր, որ «Բողազլյանի մարզում ապստամբության ոչ մի կտոր վկայություն չկա»: Ավելին, ըստ Շահաբեթինի, շրջանում մնացած հայերը այն աստիճանի խուճապի մեջ էին, որ չէին համարձակվում ոտքերն իրենց տներից դուրս դնել, որովհետև ողջ շրջանով մեկ «գարհուրելի կողոպուտ ու ավար էր իրականացվում ժանդարմների, հեծյալ չերքեզների ու մահմեդական բնակիչների կողմից»³⁶:

Յոզղաթի գավառի ապստամբությունների ու խռովությունների նյութը շարունակել է շոշափվել դատավարության հետագա նիստերի ընթացքում, իսկ ութերորդ նիստին (1919 թ. փետրվարի 19-ին) վկայություն է տվել ինքը՝ գնդապետ Շահաբեթինը: Սկզբում ցուցմունք տալով այն մասին, որ ինքը երկու հարյուրից ավելի զինվոր է ուղարկել՝ ճնշելու համար Բողազլյանի ապստամբությունը, խաչաձև հարցաքննության ընթացքում ընդունել է, որ խնդրո առարկա դեպքն իրենից ավելին չի ներկայացրել, քան հինգ կամ վեց դասալիքի հե-

35 Vakit, 1918 թ., նոյեմբերի 24:

36 Դատավարության նիստերի թերթերի նկարագրությունները քաղված են «Նոր կեսնք», «Ժամանակ», «Ժողովրդի ձայն», «Renaissance» և «Stanbul» հայալեզու ու անգլալեզու լրագրերի 1919 թ. համարներից և ներկայացված Վ.Ն.Տատյանի չհրատարակված «Trials of Yozgat and Trabzon» հոդվածում: Վերը նշված հեռագրի պատճենը կարելի է գտնել հետևյալ տեղում. ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. № 479:

տապալդում³⁷: Դատավարության տասնմեկերորդ նիստի ժամանակ՝ 1919 թ. մարտի 5-ին, Յոզղաթի գավառի ղեկավար Ջեմալը նույն քանն է պատմել՝ ասելով, որ շրջանում ապստամբության նշան չկար, կար «միայն մի քանի դասալիք»³⁸:

Այսպիսով, եթե Յոզղաթում նման ապստամբություններ կային, ինչն ալիտի հեռագրեր ուղարկելին մայրաքաղաք՝ հակառակը պնդելով: Թերևս Երրորդ բանակի այդ զեկույցների վերաբերյալ ամենացնցող վկայությունը տվել է պաշտոնաթող գեներալ Փերթն փաշան, որը հայերի տեղահանության ժամանակ ծառայել էր Սվազում՝ Երրորդ բանակի տասներորդ գումարտակի անձնակազմում: «Հայերի հանդեպ ոճրագործությունների համար ամենից ավելի պատասխանատու անձը [Երրորդ բանակի հրամանատար] Քամիլն էր», հայտարարել է գեներալը: «Իր զեկույցները ներկայացնելիս նա չափազանցում էր փոքրիկ դեպքերը և հայերին մեղադրում [մեր ուժերի կրած] բոլոր պարտությունների համար: Ես գերծ եմ [այդ ոճրագործությունների համար] որևէ պատասխանատվությունից, քանի որ իմ տրամադրության տակ ունեմ [Քամիլի կողմից մեզ ուղարկված] հեռագրերը, որոնք ջարդեր էին կարգադրում»³⁹:

Այդ փաստաթղթերից բխող իրականությունն այն է, որ խնդրո առարկա միջադեպերը պարզապես մահմեդական ու ոչ-մահմեդական դասալիքների զինված ավազակախմբերի կատարած գործերն էին, հատկապես արևելյան նահանգներում, Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու առաջին ամիսներին՝ 1914 թ. աշնան և 1915 թ. սկզբի մի քանի ամսվա ընթացքում. պարզապես հնարավոր չէ խոսել հայերի կողմից ծրագրված, կազմակերպված խռովության մասին: 1915 թ. սկզբին, հատկապես Սարիղամիշում օսմանյան բանակի պարտությունից հետո, Իթթիհադական կուսակցությունը և կառավարությունը փոխելին այդ իրադարձությունների հանդեպ իրենց հայացքն ու դրանց մեկնաբանությունը:

37 Renaissance, Yeni Gazete, 1919 թ. փետրվարի 21: Գնդապետ Շահարթինը, որն սկզբում իրավիրվել էր դատավարությանը՝ իբրև վկա, հետագայում ձերբակալվել է և Յոզղաթի ու Կեսարիայի հայերի սպանությունների համար դատվել առանձին:

38 Renaissance, Yeni Gazete, 1919 թ. մարտի 6:

39 Մեջբերված է հետևյալ տեղում. V. N. Dadrian, "Party Allegiance," 57-67:

ԽՈՌՎՈՒԹՅԱՆ ՎԱԽԸ

Ծածկագրերի վարչության փաստաթղթերից պարզ է դառնում, որ պատերազմի սկզբից ի վեր օսմանյան ղեկավարները պաշարված են եղել հայերի ապստամբության մշտական վախով. վախ, որն ահագնանում էր 1915 թ. սկզբներին Ռուսաստանի ու Բրիտանիայի կողմից կրած ռազմական պարտությունների շարքով և աճում՝ անկախ հայերի հետ առնչվող միջադեպերի իրական չափերից ու ներկայացրած սպառնալիքի ներուժից:

Սակայն պետք է նկատել, որ Ստամբուլը նահանգային խռովությունից մահացու կերպով վախենում էր նույնիսկ մինչև պատերազմի սկիզբը, և այդ մտահոգությունից էր, որ նահանգներից կանոնավոր զեկույցներ ստանալու պահանջ առաջացավ: Ծածկագրերի վարչության փաստաթղթերից կարելի է հասկանալ, որ 1914 թ. օգոստոսի վերջերին հետազոտվում էր խռովության հավանականությունը: Այդ նպատակի համար նահանգային պաշտոնյաներին հարցերի ցանկ էր ուղարկվել: Նշանակալի է, որ տարբեր նահանգապետերի պատասխանները զարմանալիորեն միանման էին. նրանցից յուրաքանչյուրը Ստամբուլին տեղեկացնում էր, որ ապստամբության կամ նման որևէ վտանգի ոչ մի հավանականություն չկա: Այսպես, 1914 թ. օգոստոսի 17-ի վերը նշված ծածկագրված հեռագրում Էրզրումի նահանգապետի տեղակալը մայրաքաղաքի իր վերադասներին հաղորդել է, որ իր նահանգի հայերը որևէ տեսակի խռովության մեջ ընդգրկված չեն, այլ ապրում են մահմեդականների հետ սերտ հարաբերությամբ, նրանց մեջ խառնված և բավականին համերաշխ⁴⁰:

Միննույն պատկերն է Վանի (իսկ այնուհետև՝ Էրզրումի) նահանգապետ Թահսին բեյի 1914 թ. օգոստոսի 25-ի զեկույցում: Դրա մեջ Թահսին բեյը նշել է, որ «ոչ մինչև ընդհանուր զորահավաքը, ոչ դրանից հետո հայ բնակչության մեջ որևէ մարդ չի եղել, որը գաղթած լինի Ռուսաստան [կամ] Իրան կամ փախած [իր տնից]: Տեղի հայերի մեջ ոչ խռովության մտքեր կան, ոչ էլ նույնիսկ կառավարության հանդեպ ընդդիմության...»: «Ընդհակառակը», ավելացրել է նա, «ընդհանուր զորահավաքի և պատերազմի կապակցությամբ դաշնակների մեջ կարելի է տեսնել բարձրաձայն աջակցության և օժանդակության

40 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, №81 (1982 թ. դեկտեմբեր): 35, փաստ. №1809:

[վերաբերմունք] կառավարության հանդեպ»: Ի դեպ, միակ դիտարկումը, որ նահանգապետը համարել է զեկուցելու արժանի, այն է, որ «մասնավոր ակումբներում, որտեղ հանդիպում են երիտասարդ հայ առևտրականներն ու ղեկավարները», խոսում են, որ «չեն ուզում, որ ռուսները պարտություն կրեն գերմանացիներից, և որ Հայկական բարենորոգումների [հարցը] կարող է առաջ գնալ՝ [միայն] եթե Ռուսաստանը Եվրոպայում գերիշխող դառնա»: Թահսինը եզրափակել է՝ ասելով, որ «բացի այդ համառ ցանկություններից, հայերի մեջ ոչ մի ջանք չկա քայլ անելու դեպի [քաղաքական կամ ռազմական] որևէ գործողություն»⁴¹:

Բիթլիսի նահանգապետի այդ նույն օրն ուղարկած (1914թ. օգոստոսի 25/26) պատասխանի բովանդակությունը նման է Թահսին բեյի հաղորդած տեղեկությանը: Նշելուց հետո, որ «նահանգի հայերի մեջ հեղափոխական գործունեության հետքերի մասին լուր կամ վկայություն [չ]կա», նահանգապետն ավելացրել է, որ չկա նաև «որևէ մեկը, ով ներկայումս նահանգից հայ ընտանիքներ է տեղափոխում Կովկաս: Թեև մինչև ընդհանուր զորահավաքը հայ որոշ առևտրականներ, հարձակվելու ու ավարի նպատակով, ճամփորդել են Կովկաս, նրանք թվով շատ քիչ են եղել»: Աներկբայորեն պնդելով, որ այդ բնույթի լուրջ խնդիրներ չկան իր նահանգում՝ նահանգապետը տեղի մահմեդականների ու քրիստոնյաների հարաբերությունների վերաբերյալ հետևյալ դիտարկումն է արել, որը, հետաքրքիր կերպով, սերտ զուգահեռներ ունի էրզրումի իրավիճակի մասին հաղորդումների հետ. «Ներկա պատերազմում բոլոր մահմեդականները, մինչև վերջին համեստ գյուղացին, գերմանացիների կողմնակիցն են, մինչդեռ հայերն առանց բացառության ռուսների կողմն են բռնում, և թեև նրանց միջև իսկապես վեճեր կան՝ [փոխադարձ] թնամանքի պատճառով, դրանք մնում են բանավոր մակարդակի վրա: Հակոտնյա այդ զգացումների ներկա վիճակից բացի, երկու համայնքների միջև թշնամանք գոյություն չունի»:

Իրականում, Բիթլիսի նահանգի վերաբերյալ նահանգապետի հիմնական մտահոգությունն, ըստ էության, մահմեդական-քրիստոնյա հակադրությունը չի եղել, այլ ավելի շուտ քրդերի ու հայերի միջև

41 BOA/DH.EUM, 2.Şube, №1/31/1, Վանի նահանգապետ Թահսին բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915թ. օգոստոսի 25:

քայտումների հնարավորությունը, և այդ պատճառով նա սխալ է համարել «[նահանգի] զինվորական բոլոր ստորաբաժանումների ու ժանդարմերիայի ուժերի ուղարկելը [նահանգային] սահմաններ և [բուն Բիթլիսն] ամբողջությամբ դատարկ թողնելը»: Նա նշել է, որ, իր կարծիքով, հայերը չեն համարձակվել դա անել, քանի որ գիտեին, որ նման քայլը «կհակադարձվի ահռելի դաժանությամբ»: Ինչ վերաբերում է նահանգում հայ հեղափոխական կազմակերպությունների դրությանը, նահանգապետն ասել է հետևյալը.

Ընդհանուր զորակոչին հաջորդած հայրենասիրության պատվավոր ցուցադրմամբ, Մուշի հայերից դաշնակներն սկսեցին մարդկանց համոզել ու խրախուսել [մասնակցելու] և հեշտացնելու զորահավաքը, մինչդեռ հնչակներն ու [հայկական] եկեղեցին խանգարում էին նրանց կատարել իրենց ազգային պարտքը: Եկեղեցուն ու հնչակներին հստակ հրահանգներ տալուց չորս թե հինգ օր անց նրանք հասկացան, որ ազգային շահն ապահովելու նպատակով բոլոր դժվարությունները դիմագրավելու հաստատուն որոշում է կայացվել, և նրանք բոլորն սկսեցին լիովին կատարել կառավարության հրահանգները⁴²:

1914թ. հոկտեմբերի 5-ին միևնույն ոգով մեկ այլ զեկույց է ուղարկվել մայրաքաղաք Մամուրեթյուլազիզի (ներկայիս Էլազիզ) նահանգից: Նահանգապետը հաղորդել է, որ ոչ մի նշան չկա այն բանի, թե հայերը ծրագրում են ապստամբություն կազմակերպել, այնպես որ մահմեդական աշխարհագորի կարիքը չկա: «Ինչ վերաբերում է աշխարհագոր կազմելու մասին խոսակցություններին, այս նահանգի [պաշտոնյաները] հրատապ գործողության կարիք չեն տեսնում [նման] կազմակերպություն [ստեղծելու] համար, որը վերապահված լինի բացառապես մահմեդական ազգաբնակչությանը», նշել է նա՝ իր վերադասներին հավաստիացնելով, որ ինքը «կշարունակի [այդ միտքը] քննարկել [տեղի] բանակային կորպուսի հրամանատարի հետ» և, «եթե անհրաժեշտություն ծագի, հարկ եղած միջոցներն ու

42 BOA/DH.EUM, 2.Şube, №68/17/1, Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915թ. օգոստոսի 25/26:

քայլերը կձեռնարկի [այդպիսի կազմակերպություն] ստեղծելու համար»⁴³:

Ծածկագրերի վարչության փաստաթղթերի միջոցով կարելի է հետևել մայրաքաղաքում հետզհետե աճող մտահոգությանը, հատկապես 1915 թ. փետրվար ու մարտ ամիսների ընթացքում: Անվտանգության վարչության կողմից փետրվարի 28-ին արևելյան տարբեր նահանգներ ուղարկված հեռագրում թվարկվում են Բիթլիսի, Զեյթունի ու Դյորթոյի վերջին իրադարձությունները՝ դրանք բնութագրելով իբրև «վկայություններ, որ հեղափոխական աշխատանք է պատրաստվում երկրի ներսի մեր թշնամիների կողմից», և նշելով, որ «իբրև նախագուշակական միջոցառում՝ ընդհանուր ու մասնավոր հրահանգներ [են ուղարկվել] Կայսերական բանակի շտաբի պետերի գրասենյակից, որոնք վերաբերում են հայ անհատներին, ովքեր ներկայումս գտնվում են զինվորական ծառայության մեջ, ինչպես նաև այն քայլերին, որոնք պետք է ձեռնարկվեն այդ շրջաններում, որտեղ նման իրադարձություններ են կատարվել»⁴⁴:

Ինչպես վերը տեսանք, «հրահանգները» վերաբերել են օսմանյան շտաբի պետերի կողմից 1915 թ. փետրվարի 25-ին բանակի դաշտային հրամանատարներին ուղղված ընդհանուր հաղորդագրությանը, որոնցով նրանց իրավասության շրջաններում ծագելիք դեպքերի պարագայում նրանց շնորհվում էր որոշակի միջոցներ ձեռնարկելու լիազորությունը⁴⁵: Օսմանյան Ներքին գործերի նախարարությունը նահանգների իր քաղաքացիական պաշտոնյաներին հրահանգել էր տեղի զինվորական հրամանատարների հետ հաղորդակցության գիծ հաստատել՝ պարզելու համար, թե նման դեպքերում իրենց վրա ինչ պարտականություններ են դրվելու: «Վճռականորեն առաջարկ-

43 BOA/DH.EUM, 2.Şube, №2/10/1, Մամուրեթյուլագիզի նահանգապետ Սաբիթ բեյի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1914 թ. հոկտեմբերի 5:

44 BOA/DH.ŞFR, №50/127, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1915 թ. փետրվարի 28:

45 Askeri Tarih Belgeleri Dergisi 34, №85 (1985 թ. հոկտեմբեր), 23, փաստ. №1999:

վում է անհապաղ և զինվորականության հետ ուղիղ խորհրդակցություններով արտակարգ ուշադրություն ու ջանքեր հատկացնել [գործողության] այն բնագավառներին, որոնք վերաբերում են քաղաքացիական վարչակազմին»⁴⁶:

1915 թ. մարտի 14-ին առանձին մի հրաման է ուղարկվել կայսրության արևելյան նահանգների քաղաքացիական նահանգապետներին, ուր հրահանգվում էր հայերի դեմ ձեռնարկելիք միջոցառումների հարցով կապի մեջ մնալ Երրորդ բանակի հրամանատարության հետ. «Բարձրագույն հրամանատարության գրասենյակը [ձեզ] տեղեկացրել է հայերի գործողությունների և հարկ եղած ձեռնարկելիք [պատասխան] միջոցների վերաբերյալ Երրորդ բանակի հրամանատարության հետ կապվելու անհրաժեշտության մասին»⁴⁷:

Պահպանված թղթակցությունից երևում է, որ իթթիհադական ղեկավարները մասնավորապես մտահոգ էին, որ հայերը կարող էին ընդհանուր խնդրի շուրջ միավորվել քրդերի հետ: Այդ վախը բացեիքաց արտահայտված է Թալեաթ փաշայի կողմից 1915 թ. մարտի 9-ին արևելյան նահանգներ ուղարկված «զաղտնի» հրահանգում, որտեղ նա պարզաբանում է պահանջել, թե այդ կապակցությամբ հրաման արձակվել է, թե ոչ. «[Խնդրեմ] գեկուցեք, թե որոշ շրջաններում գոյություն ունի արդյոք այն հնարավորությունը, որ հայերը միասան քրդերին, որոնք հակված են մուրեցնելու [müsta'idd-i igfâl] և կառավարության դեմ գործելու, կամ թե [ձեր] նահանգում հնարավորություն կան նման գործունեության կամ նման շարժման ծագման»⁴⁸:

1915 թ. մարտի 14-ին Վանի նահանգապետ Ջնդեղին ուղարկված Թալեաթի մեկ այլ հեռագրից երևում է, որ հայ ու քուրդ ղեկավարներն

46 BOA/DH.ŞFR, №50/127, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1915 թ. փետրվարի 28:

47 BOA/DH.ŞFR, №51/15, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Վանի, Բիթլիսի ու Դիյարբեքիի նահանգներ, թվագրված 1915 թ. մարտի 14:

48 BOA/DH.ŞFR, №50/210, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի, Բիթլիսի ու Էրզրումի նահանգներ, թվագրված 1915 թ. մարտի 10:

արդեն այդ մասին մի շարք հայտարարություններ են արել: Պնդելուց հետո, որ «Բաղիիրհանի Քամիլի ու Բաստրմաճյանի միացյալ հայտարարությունները» ընկալվել են որպես հայ-քրդական համագործակցությունը նշանավորող քայլ, ներքին գործերի նախարարը պահանջել է, որ «եթե հետագա իրադարձությունները հաստատեն, որ նկատվել է այդ համայնքների որոշ ղեկավարների ներգրավվածությունը կասկածելի գործողությունների ու նախաձեռնությունների մեջ, նրանց պետք է ձերբակալել և տեղահանել՝ առանց հապաղելու»⁴⁹: Այդպիսի խիստ վախով ընկալվող համագործակցության օրինակ է Մալաթիայինը, ուր մի շարք դասալիք հայեր հրոսակալանքներ էին կազմել քրդական ալևի ցեղի հետ:

Մամուրեթյուլազիզի նահանգ ուղարկած Թալեաթի հեռագրում ասվում էր.

Սվազի նահանգը զեկուցել է, որ այդ տարածքից մի խումբ [դասալիք] հայ զինվորներ, որոնք մտել են Բյուրեջիկ ավանը [nahiye], որը գտնվում է Մալաթիայի գավառի Աքչադաղի մարզում և սահմանակից է Դարենդեին, միավորվել են ալևի քրդերի հետ, որոնք այնտեղ են ապրում, և կազմել են ավազակային խումբ: Սվազի նահանգի կողմից փորձեր են եղել նրանց հետապնդելու ու ձերբակալելու, և [այդ ընթացքում] պարզվել է, որ Մալաթիայի մի քանի պաշտոնյաների ապօրինի ճնշումները պատճառ են դարձել, որ քրդերից ոմանք դրանից հետո գնան լեռները՝ ապստամբության: Բայց ավազակների ղեկավար Մեհմեդ Ալիից և նրա գործընկերներից լուրեր կան, որ պատրաստ են հանձնվելու և հնազանդվելու կառավարությանը, եթե իրենց հանդեպ ցուցաբերվեն հարկ եղած արդարացի միջոցներն ու վերաբերմունքը: [Կարգադրվել է, որ] հետաքննություն անցկացվի, և ամբողջովին ու հանգամանորեն իրագործվեն հարկ եղած միջոցները⁵⁰:

49 BOA/DH.ŞFR, №51/14, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգապետ Ջնդեղին, թվագրված 1915 թ. մարտի 14:

50 BOA/DH.ŞFR, №51/130, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1915 թ. մարտի 25:

1915 թ. առաջին ամիսներին «ապստամբության վախի» առնչությամբ տեղի ունեցած փոփոխությունները կարելի է դիտել իբրև հայերի հանդեպ քաղաքականության փոփոխություն: Այդ փոփոխությունների, և հատկապես այդ տարվա ապրիլին տեղի ունեցած քաղաքականության հիմնական փոփոխության մեջ, չի կարելի թերագնահատել իթթիհադական ղեկավար դր. Բահաեդին Շաքիրի կատարած դերը: Շաքիրը, որը բացասական զարգացումներ էր ապրել Կովկասում Սարիդամիշի պարտությունից և՛ առաջ, և՛ հետո, ընդ որում՝ ինքն էլ հազիվ էր մահից փրկվել, «այն կարծիքին էր, որ ներքին թշնամուց հարկավոր է վախենալ նույնքան, որքան սահմաններից դուրս գնտվողներից»՝ «Թուրքիայի հանդեպ հայերի ընդունած ընդդիմադիր կեցվածքի և ռուսական բանակին նրանց հատկացրած օգնության» պատճառով⁵¹: Շրջանում հայկական զինված խմբերի գործունեության մասին մի շարք փաստաթղթեր ձեռք բերելուց հետո Շաքիրը փետրվարի վերջին մեկնել է Ստամբուլ, որտեղ աշխատել է իր իթթիհադական գործընկերներին համոզել, որ անհրաժեշտ է վերացնել վտանգը⁵²:

1915 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՊՐԻԼ ԿԱՏԱՐՎԱԾ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1915 թ. փետրվար և մարտ ամիսներին օսմանյան կառավարությունն սկսեց քաղաքական ու ռազմական նկատառումներով որոշակի խմբերի տեղահանումը: Առաջին տեղահանությունների ընթացքում Դյորթյուլի շրջակայքում բնակվող հայերը տեղափոխվեցին Անատոլիայի խորքում գտնվող նահանգները: Ելնելով 1915 թ. փետրվարի 26-ին Ադանայի նահանգապետի ուղարկած ծածկագրված հեռագրից՝ որոշվել է, որ հայերը կապեր էին հաստատում ավերի մոտ գտնվող բրիտանական ռազմական նավերի հետ, և այդ պատճառով նահանգապետը վճռել է, որ «Դյորթյուլի բոլոր հայերը [պետք է] տեղահանվեն Օսմանիյե, Ջեյհան ու Ադանա, որպեսզի ոչ մի հայ չմնա

51 Mil, "Umumi Harpte," մաս 98, 1934 թ. փետրվարի 10:

52 «Դր. Բահաեդին Շաքիր բեյը, դրանք [ձեռք բերված փաստաթղթերը] հանձնելով ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի ուշադրությանը, զբաղվեց այն քայլերը քննարկելով, որոնք անհրաժեշտ էր ձեռնարկել՝ բանակը մեծ վտանգից փրկելու համար»: Mil, "Umumi Harpte," մաս 100, 1934 թ. փետրվարի 12:

շրջանում»⁵³: Իր պատասխանի մեջ Ներքին գործերի նախարարությունը հաստատել է «դեպի փետրվարի 26-ի ձեր հեռագրում զեկուցված վայրեր Դյորթյուլի հայերի տեղահանության» նպատակահարմարությունը: Բացի այդ, նախարարությունը պահանջել է. «ոչ մի պայմանով չթողատրել, որ որևէ վայր հայտնվի, ուր կարող է խոտվություն կամ ապստամբություն գոյանալ», և որ տեղական իշխանությունները «գործեն առավելագույն ուժով ու արագությամբ», «անհրաժեշտ է որևէ միջադեպ հիմնովին ճշտել դաժան ու վճռական միջոցներով՝ ամեն առանձին իրադարձության անմիջական պատճառների հետ միասին»⁵⁴:

Գերմանական փաստաթղթերից կարելի է ավելի մանրամասն տեղեկություններ քաղել Դյորթյուլի շրջակայքից կատարված առաջին տեղահանությունների վերաբերյալ: Համաձայն այդ աղբյուրների, մինչև հայ ազգաբնակչությանը վերոհիշյալ վայրեր տեղափոխելը ամբողջ բնակչությանն արգելվել էր քաղաքից ներսուղուրս անել, և ամբողջ շրջանը խուզարկության էր ենթարկվել՝ հայտնաբերելու համար, թե բրիտանացիների կողմից որևէ ջանք գործադրվել է արդյոք այդ շրջանում դաշնակիցներ գտնելու նպատակով, ինչպես նաև դասալիքներին բռնելու համար⁵⁵: Այնուհետև տղամարդկանց հեռացրել են շրջանից և տարել Հալեպի շրջանում ճանապարհաշինության վրա աշխատանքի⁵⁶: Ոմանց ձերբակալել և ուղարկել են Ադանա, ուր նրանց դատել և մահապատժի են ենթարկել⁵⁷:

53 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 55.

54 BOA/DH.ŞFR, №50/141, ներքին գործերի նախարար Թավեթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. մարտի 2:

55 DE/PA-AA/Bo.Kons., h. 168. Իսկենդերունում (Ալեքսանդրետ) Գերմանիայի հյուպատոսի պաշտոնակատար Հոֆմանի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին, թվագրված 1915 թ. մարտի 7:

56 DE/PA-AA/Bo.Kons., h. 168. Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուզեի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին, թվագրված 1915 թ. մարտի 13: Այս գիրքը գրելու ընթացքում Արամ Արքունն ավարտում է Չուքուրովայի տարածքում տեղի ունեցած զարգացումների վերաբերյալ իր դոկտորական թեզը, որ վերնագրված է «The Fall of the Eagles' Nest: The Fate of Armenians of Hajin, Zeitun, Sls and Marash, 1914–1921»:

57 Կասկածյալներին բռնելու ու դատելու վերաբերյալ հրամանի համար տես Genelkurmay Baş Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 56, իսկ նրանց մահվան դատավճիռների ու մահապատժիների համար տես DE/PA-AA/R 14085, Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի

Դյորթյուլի հայերի տեղահանությանը 1915 թ. ապրիլին հաջորդել է դեպի Անատոլիայի խորքերը Զեյթունի հայերի տեղահանությունը, որը կատարվել է հիմնականում ի պատասխան նախորդ ամիսներին տեղի ունեցած իրադարձությունների: Զեյթունի դեպքերի վերաբերյալ աշխատություններում մինչև այժմ գերակշռում է Թուրքիայի պաշտոնական վարկածը, որով այդ դեպքերը ներկայացվում են իբրև հայերի կողմից օսմանյան իշխանությունների դեմ ընդհանուր ապստամբություն բարձրացնելու առաջին համակարգված փորձ⁵⁸: չնայած այն հանգամանքին, որ դրանք զուտ տեղական բնույթ են կրել, և դրանց հիմնականում մասնակցել են ոչ թե քաղաքական գործակալներ, այլ բանակային դասալիքներ:

Օսմանյան, գերմանական ու ամերիկյան փաստաթղթերում այս առնչությամբ բավական համաձայնություն կա, և երեք արխիվների փաստաթղթերն էլ խնդրո առարկայի վերաբերյալ հաղորդում են հիմնականում միևնույն տեղեկությունը: Առաջին միջադեպն իրականում ընդամենը պարզ բախում է եղել մի խումբ հայ դասալիքների և տեղի ժանդարմների ստորաբաժանման միջև, այնուհետև նշված խումբն ինքն իրեն փակել է հայկական եկեղեցում և հրաժարվել հանձնվելուց: Մարաշի գավառապետ Մյումթագը, որն այդ միջադեպերի մասին առաջին զեկույցներն ուղարկել է 1915 թ. մարտի 9-ին և 13-ին, հաղորդել է, որ ոչ մի բան չկար՝ բացի պարեկություն անող ժանդարմներից, որոնց վրա կրակել են «ավազակները [eşkıya]»⁵⁹: Մարտի 30-ի զեկույցի մեջ նա գրել է. «Իսկ այսօր դասալիքներից և կասկածելի մյուս անձանցից շատերն են բռնվել: Հետաքննող հանձ-

զեկույցը կանցյել Բեթման-Հոլվեզին, թվագրված 1915 թ. ապրիլի 15: Դյորթյուլի մասին ավելի հանգամանակից տես Lepsius, Der Todesgang, II, 43:

58 Երկու օրինակների համար տես Azmi Süslü, Ermeniler ve 1915, 71–72 և İhsan Sakarya, Belgelerle Ermeni Sorunu (Ankara, Genelkurmay Başkanlığı, 1984), 185–87: Այս աշխատություններում տեղ գտած տեղեկությունը գրեթե բառացի կրկնվում է բազմաթիվ հանրաճանաչ աշխատանքներում, որոնցից մեկն է Dr. Ali Güler և Dr. Suat Akgül, Sorun Olan Ermeniler (Ankara, Berikan, 2003), 201–2:

59 BOA/DHEUM, 2.Şube, №№68/30/1 and 68/31/1, Մարաշի գավառապետ Մյումթագի «կարևոր և հույժ հրատապ» մակագրությամբ ծածկագրված հեռագրերը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. մարտի 9 և 13:

նաժողովը շարունակում է հետաքննությունը»: Նա եզրափակել է՝ նշելով, որ միջադեպերն, ըստ էության, ավարտված են⁶⁰:

1915 թ. մարտի 14-ին օսմանյան Չորրորդ բանակի հրամանատարությանն ուղարկված մի գեկույցի մեջ հեղինակն ասում է, որ «չի կարծում, թե հայերի ընդհանուր ապստամբության հավանականություն կա», և նշում է, որ «Զեյթունում որոշ դասալիքների ցուցաբերած ընդդիմադիր և ապստամբ կեցվածքից ելնելով՝ նահանգը ջանացել է [նրանց պատժելու] միջոցներ ձեռնարկել»: Տեղի բնակչության վերաբերմունքն այդ դեպքերի հանդեպ նա հետևյալ կերպ է հաղորդել. «Մեր հայ հայրենակիցների մեծ մասը խիստ վշտացած է սոսկ մի փոքր, չար մնացուկների այդ գործողություններից. հայրենիքին կապվածության նրանց զգացումը որևէ կասկածից ու տարակուսից վեր է»: Բացի այդ, գեկույցի մեջ տեղեկություն է հաղորդվել այն մասին, որ դասալիքները «[ժամդարմների հետ իրենց զինված] բախումների հետևանքով չեն ձերբակալվել, այլ Զեյթունի առաջատար [հայ] բնակիչների օժանդակությամբ», որոնք նրանց հանձնել են իրենց սեփական կամքով⁶¹:

Այս տեղեկությունը հաստատված է ժամանակի բազմաթիվ հուշերով: Հովսեփ Բշտիկյանը նշել է, որ «Սահակ Խաբայանը, որն այդ ժամանակ Կլիկիայի թեմի կաթողիկոսն էր, գրավոր ուղերձ է ուղարկել [պատմաբան Վահրամյանին]՝ ասելով. «Աստու սիրույն, խիղճ ունեցեք. ձեր զենքերն ուսերիդ մի՛ առեք, հանձնվեք»: Նա նույնիսկ հասավ Զեյթուն: Մենք՝ բոլորս այդ ժամանակ դպրոցական էինք, մեզ բերեցին նրա հետ հանդիպելու: Նա բնակչությանը հանգստացրեց՝ մեզ խոստանալով և համոզելով, որ ամեն բան լավ է վերջանալու, և դա է պատճառը, որ Զեյթունի բնակչությունը չզնայց կռվելու»⁶²:

Ամերիկյան աղբյուրներում ևս կան տեղեկություններ այն մասին, որ դասալիքներին ի վերջո համոզել են Զեյթունի հայերի օգնությամբ

60 BOA/DH.EUM, 2.Şube, № 68/35/1, Մարաշի գավառապետ Մյունթազի «հրատապ» մակագրությամբ ծածկագրված հեռագիրը՝ Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. մարտի 30:

61 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 71-72, 355-61.

62 Հովսեփ Բշտիկյանի հուշերի համար տես <http://ermeni.hayem.org/turkce/vkayutyun.php?tp=ea&lng=tr&nmb=138>:

հանձնվել⁶³: Այդ տեղեկությունները հաստատվում են նաև Զեյթունի բողոքական հովվի հուշերով, որը հիշում է, որ Զեյթունի հայերը, որոնք «անկեղծորեն չէին սիրում ու սարսափում էին» դասալիքներից, հանդավեցին նրանց գործողությունների մասին գեկույցել օսմանյան կառավարությանը՝ «ապահովելու համար իրենց սեփական անվտանգությունը և Կիլիկիայի մյուս հայերի անվտանգությունը»⁶⁴: Տեղի հայերի այդ կեցվածքի մասին նման պատմություն է պատմում նաև գերմանացի ժամանակակից լրագրող Թիգուկան: Ըստ նրա, դեպքերի ժամանակ հայերի պատրիարքն ինքն է այցելել Թալեաթ փաշային, և ներքին գործերի նախարարը նրան ասել է, որ «շատ գոհ է [այդ հարցում] Զեյթունի հայերի վարքից»⁶⁵:

1915 թ. մարտի վերջին Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը Բեռլինում իր վերադասներին տեղեկացրել է, որ, հիմնվելով Ադանայի ու Հալեպի գերմանական հյուպատոսությունների հաղորդած տեղեկությունների վրա, որոնք երկուսն էլ ուշի ուշով հետևել են շրջանում տեղի ունեցող իրադարձություններին, «հնարավոր չի լինի [խնդրո առարկա դեպքերի մասին] խոսել իբրև հայերի կողմից կանխամտածված ու կազմակերպված ապստամբություն. դրանք գորակոչի հարուցած որոշակի հուզումներ են»⁶⁶: Իր հուշերում իրադարձությունների նման նկարագրություն է հաղորդում Հալեպի նահանգապետ Զելալ բեյը: Այդ հուշերը զինադադարի շրջանում տպվել են թուրքական «Vakit»-ի օրաթերթում: Խոսվու-

63 NA/RG59,867.00/761, Ամերիկայի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի գեկույցը Ստամբուլում Ամերիկայի դեսպան Միրզենթաուին, թվագրված 1915 թ. ապրիլի 21, վերաբաղված հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 10:

64 Bryce and Toynbee, The Treatment of Armenians, 489.

65 DE/PA-AA/R 14088, Ստամբուլում գերմանացի լրագրող Թիգուկայի գեկույցը Արտաքին գործերի նախարարության խորհրդակալի տեղակալ Զիմերմանին, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 1:

66 DE/PA-AA/R 14085, Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. մարտի 26: Տարածաշրջանի զարգացումների խիստ հանգամանակից նկարագրությունը գտնում ենք Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյուպերի գեկույցում ուղղված կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. ապրիլի 12 (DE/PA-AA/R 14085): Զեկույցը հիմնված է հյուպատոսի կողմից անձամբ հավաքված տեղեկությունների վրա, որը 1915 թ. մարտի 28-ից մինչև ապրիլի 10-ը շրջագայել էր այդ տարածքում:

թյուններից հետո Ջեյթունի բնակչությանը Քոնյա ու Սուլթանիյե տեղահանելու մասին խոսելիս Ջելալն այդ քայլն անվանում է «անհարկի գործողություն»⁶⁷:

Երկու հարակից գործոն ևս կարծես թե կարևոր դեր են խաղացել Ջեյթունի և Դյորթյուլի հայության զանգվածային տեղահանման ու արտաքսման մեջ: Սկսել էին լուրեր ստացվել, թե Իսկենդերունում (Ալեքսանդրետ) բրիտանացիները գրոհային ուժեր ավի հանելու պատրաստություն էին տեսնում: Ընդհանուր ապստամբության հանդեպ արդեն իսկ գոյություն ունեցող վախը խորանում էր չարագոյժ այն հնարավորությունից, որ նման խռովությունը կարող էր համակարգվել և զուգակցվել վերահաս ներխուժմանը: Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուզեն 1915 թ. մարտի 13-ին նշել է, որ բրիտանական ռազմաճակատն ու դեսանտային խմբերը ներկայումս կարող են ազատորեն մոտենալ ավիին՝ գործի անցնելու նպատակով: Այսպիսով, բրիտանացիների մոտ ծառայողների միջոցով, տեղացի որոշ հայեր ի վիճակի են եղել կապ հաստատելու այլ շրջանների հայերի հետ⁶⁸: Համաձայն Ջեյթունում բռնված մի հայի, «նրանք [հայերը] կոմիտեի կողմից տեղեկացվել էին, որ բրիտանացիներն արդեն ավի են իջել Իսկենդերունում»: Այն, ինչ հայերին խնդրել էին, հետևյալն էր. «օգնել անգլիացիներին՝ ապստամբելով և դրանով կառավարության գործերն ավելի դժվարացնելով և խոչընդոտելով մոբիլիզացիայի նրանց ջանքերը»⁶⁹:

Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոսլերը 1915 թ. գարնանը երկու շաբաթ է անցկացրել՝ ուսումնասիրելով, թե որևէ կապ կա՞րոյոք Դյորթյուլի ու Ջեյթունի հայերի միջև: Հետաքննության ավարտից հետո իր վերադասներին նա զեկուցել է հետևյալը.

Համաձայն այն տեղեկությունների, որ ինձ հաղորդել է անկողմնակալ մի անձնավորություն, որը սերտ կապեր ունի հայերի հետ և շատ լավ տեղեկացված է, սկզբում Դյորթյուլում ապրող-

67 Celal Bey, "Ermeni Vakâyi-i."

68 DE/PA-AA/Bo.Kons./Band 168, Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուզենի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմին, թվագրված 1915 թ. մարտի 13:

69 İsmet Parmaksızoğlu, ed., Ermeni Komitelerinin İhtilal Hareketleri ve Besledikleri Emeller (Ankara, DSİ Basım ve Foto, 1981), 79–80.

ների կողմից որոշ նամակներ են գրվել Ջեյթուն՝ ասելով, որ այժմ ապստամբության համար պատեհ ժամանակ է: Կապ է հաստատվել [արևելյան Միջերկրականի] բրիտանական ռազմաճակատի հետ: Իմ աղբյուրը տեղյակ չէ, թե նամակներն ի վերջո հասնել են իրենց հասցեատերերին, թե՛ ոչ: Եթե իմ աղբյուրի աղբյուրները հուսալի են, ապա սա կարող է համարվել վկայություն, [որ այդ նամակները] ապստամբության կոչ են: Հայտնի չէ, թե հասցեատերերն այդ կոչին ինչպես են վերաբերվել⁷⁰:

Տարբեր աղբյուրներ կրկնել են, որ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանի համատ պնդումներով, իրոք մտածում էր այդ շրջանում ռազմական ավիանման ու ներխուժման մասին⁷¹: Որքան կարելի է հասկանալ բրիտանական աղբյուրներից, փորձեր են եղել ոչ միայն կապ հաստատելու Չուկուրովայի շրջանի հայերի հետ, այլև մի քանի հանդիպում է եղել երկրից դուրս գտնվող հայկական կազմակերպությունների հետ, որոնց ընթացքում Հայ հեղափոխական կոմիտեի ներկայացուցիչը պնդել է, որ իր կազմակերպությունը կարող է մոտավորապես քսան հազար կամավոր հավաքել՝ Չուկուրովայի ու Իսկենդերունի շրջաններում բրիտանացիների կողմից պայքարելու համար: Նման առաջարկներ են արվել Ամերիկայի Հայ ազգային պաշտպանության կոմիտեի կողմից: Ուն Վարանդյան, խոսելով այդ կազմակերպության անունից, ասել է, որ կամավորների կեսն արդեն Ամերիկայում ու Բալկաններում է և գնալու պատրաստ, և առաջարկել է, որ բրիտանացիների վերահսկողության տակ գտնվող Կիպրոսը գործածվի իբրև գործողությունների բազա⁷²: Ամեն դեպքում, Մեծ

70 DE/PA-AA/R 14086, Ստամբուլում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի զեկույցը կանցելը Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. մայիսի 27: Նամակին կից ուղարկվել է նաև Ռյոսլերի վերոհիշյալ զեկույցը:

71 Այս նյութի մասին հավելյալ տեղեկությունների համար տես Donald Bloxham, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians* (Oxford and New York, Oxford University Press, 2005), 78–83:

72 Այդ խոսակցություններին առնչվող համապատասխան պատմությունների համար տես Muammer Demirel, *Ermeniler Hakkında İngiliz Belgeleri* (1896–1918) Բրիտանական փաստաթղթեր հայերի մասին (Ankara, Yeni Türkiye, 2002), փաստ. №№ 417, 418, 419, 420, 421, և 667–71: Որքան կարելի է հասկանալ այս աշխատանքում հրապարակված փաստաթղթերից՝ Բալկանների Հայ հեղափոխական կոմիտեն նման առաջարկներ է արել թե՛

Բրիտանիան այդ առաջարկները լուրջ չի ընդունել և շուտով հրաժարվել է Իսկենդերունում կամ շրջակայքում նավերն ափ հանելու գաղափարից:

Ծածկագրերի վարչության հեռագրերը ցույց են տալիս, որ օսմանյան ղեկավարները, առնվազն 1914թ. գարնանը, վախեցել են Դյորթյոլ-Ջեյթուն տեսակի միացյալ ինչ-որ ապստամբությունից: 1914թ. ապրիլի 19-ին Ադանայի ու Հալեպի նահանգապետարաններ ուղարկած ծածկագրված մի հեռագրում բացեիքաց հայտնվում է այդ մտավախությունը՝ նշելով, որ «որոշակի աղբյուրից տեղեկացել ենք, որ այն ապստամբությունը, որ Ջեյթունի հայերը որոշել էին սկսել, շուտով սկսվելու է Դյորթյոլում, [որը գտնվում է] Իսկենդերունի շրջակայքում: Այդ ժամանակից սկսած, խոսակցություններ կան [Հայ Հեղափոխական] կոմիտեի Եգիպտոսում գտնվող որոշ ղեկավարների խոստովանությամբ, որ հայկական քաղաքական բոլոր կուսակցությունների օժանդակությամբ մեծամասշտաբ գործողություն է ձեռնարկվելու, և որ փորձեր են արվել ամեն տեսակի զենք շրջան ներմուծելու»:

Ներքին գործերի նախարարությունն ինքը համոզված չի եղել այդ տեղեկությունների վստահելիության հարցում և լրացուցիչ տեղեկություններ է պահանջել նահանգում գտնվող հայերի գործողությունների վերաբերյալ: Նախարարությունը հեռագրով հետևյալ հարցն է ուղղել նահանգապետարան. «Ինչպիսին է նահանգի հայերի ներկայիս վերաբերմունքը կառավարության և մյուս համայնքների նկատմամբ, և ինչ տեսակի ջանքերի ու նախապատրաստությունների մեջ են նրանք ընդգրկված»⁷³:

Չափագանցություն չի լինի պնդելը, որ օսմանյան ղեկավարության մի մասի կողմից «ընդհանուր ապստամբության» նկատմամբ տաժած վախը կենտրոնական դեր է խաղացել Ջեյթունի դեպքերին նման դաժան և խիստ անհամաչափ միջոցներով պատասխանելու որոշման մեջ: Այդպես նաև, գերմանացի գեներալ Բրոնսարտ ֆոն Շելենդորֆը 1915թ. մարտի 18-ի վերը նշված հեռագրով պահանջել է, որ «հանցագործները խստիվ պատժվեն»: Չորրորդ բանակի հրա-

նուսներին, թե՛ ֆրանսիացիներին:

73 BOA/DH.ŞFR, №40/45, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի ու Հալեպի նահանգներ, թվագրված 1914թ. ապրիլի 19:

մանատար Ջեմալ փաշան ավելի հեռուն է գնացել՝ ասելով. «Խիստ կարևոր է, որ և՛ նրանք, ովքեր գթություն կհայցեն [և կհանձնվեն], ինչպես և նրանք, ում Ջեյթունում ու Մարաշում ապրել [շարունակելը] կարող է վնասակար լինել, քվեն Քոնյա»: Հրամանատարի մոտ հրատապության այդ զգացումը բխում էր այն վախից, որ բրիտանացիները կարող են մեկ անգամ ևս իրենց ուժերը կուտակել եգիպտական ճակատում, և որ այդ մարդկանց չտեղահանելը «անհրաժեշտ կդարձնի [Ջեյթունի ու Մարաշի] շրջաններում շատ մեծ ուժերի կենտրոնացումը՝ պարզապես կարգուկանոն պահպանելու նպատակով»⁷⁴: Ի վերջո, հաջորդ օրը՝ ապրիլի 9-ին, սկսվել է Ջեյթունի հայերի մի մասի տեղահանությունը⁷⁵: Ինչպես վերն արդեն տեսանք, ապրիլի կեսերին Ջեմալ փաշայի քննարկած միջոցներից մյուսը մահմեդական գաղթականների ու փախստականների տեղավորումն էր շրջանում:

Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ նույնիսկ 1915թ. ապրիլին դեռ օսմանյան զինվորական ու քաղաքացիական ղեկավարները, ինչպես նաև գերմանացի զինվորական ու դիվանագիտական գործիչները, որոնք տեղակայված էին կամ շրջագայում էին տարածաշրջանում և, դրա շնորհիվ, կարող էին անմիջական տեղեկություններ հավաքել, իրենց վերադասներին հաղորդում էին, որ հայերի կողմից նախապատրաստվող ոչ մի ապստամբություն գործնականում չկա: Սակայն հիմնական մի ականատես՝ Մարաշի գավառապետ Մյումթազը, մարտի 30-ի իր զեկույցի մեջ կարծես թե կանխորոշում էր տեղահանությունը. «Ջեյթունի անախորժությունը նոր բան չէ, այն հին է: Եթե հիմնական քայլ չարվի, կասկած չկա, որ դա կկրկնվի ապագայում»: Ըստ նրա, նման միջադեպերի հիմնական պատճառը անցյալում և ապագայում այն է, որ «տեղանքը լեռնային է, և շրջանի գյուղերը բնակեցվում են նույն հայացքների տեր հայերով»: Հետևաբար, որպեսզի նման միջադեպեր չկրկնվեն, անհրաժեշտ էր «որոշ հայ ընտանիքների, որոնց հանցագործ լինելը նախօրոք հաստատված է, տեղահանել դեպի այլ վայրեր»: Գավառապետ Մյումթազը

74 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, №81 (December 1982), III, փաստ. №1823:

75 NA/RG 59, 867.00/761, Հալեպում Միացյալ Նահանգների հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի զեկույցը դեսպան Մորգենթաուին, թվագրված 1915թ. ապրիլի 21, գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 10:

խորհուրդ է տալիս, որ ժամանակն է շրջանում վերատեղավորում կազմակերպելու: Նրա բառերով՝ «Այս իրավիճակում, երբ ես հավատում եմ, որ հայ բնակչությունը նվազեցնելու և մահմեդական բնակչությունն ավելացնելու համար պայմանները նպաստավոր են, նպատակահարմար է որոշ կարևոր հայ գյուղացիների հավաքագրել ու վերաբնակեցնել՝ նրանց հարթավայրեր տեղափոխելով, իսկ գաղթականներին, որոնց դեռևս պետք է տեղավորել, տեղափոխել նրանց տեղերը»⁷⁶: Իթթիհադականները կարծես թե ցանկանում էին պատերազմից առաջացած նպաստավոր պայմանները գործածել հին խնդիրը լուծելու համար: Ջեյթունի հայերին դեպի Ասատուլիայի խորքում գտնվող Քոնյա տեղահանելու գաղափարը պետք է որ նման մտքի արգասիք լիներ:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՆԱԽՆԱԿԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ

Հայ ազգաբնակչության բնաջնջման վերջնական որոշումը, ամենայն հավանականությամբ, կայացվել է մարտի վերջին Ստամբուլում տեղի ունեցած քննարկումների ընթացքում: Այդ քննարկումների արդյունքում «Ստամբուլում որոշվել է, որ մինչ Հատուկ կազմակերպությունն զբաղվում է [երկրի] արտաքին թշնամիների հարցերով, Բահաեդին Շաքիր քեյը կզբաղվի երկրի ներքին թշնամիներով»⁷⁷: Այլ կերպ ասած՝ Բահաեդին Շաքիրին վստահվել էր կայսրության հայ ազգաբնակչության ոչնչացումը: Արիֆ Ջեմիլը, որը նույնպես, Շաքիրի հետ միասին, ակտիվ գործում էր ՀԿ-ում, նշել է, որ «այդ խոսակցություններն ի վերջո ավարտվեցին Տեղահանության մասին օրենքի հրապարակմամբ», և որ հստակ էր, որ Բահաեդին Շաքիրը դրանից կարճ ժամանակ անց Կովկասյան ճակատ վերադարձավ լիովին նոր [պարտավորություններով ու] պաշտոնով»⁷⁸: Օսմանյան վարչապետական արխիվում տեղեկագրեր կան, որոնք հաստատում են այն լուրը, որ Արիֆ Ջեմիլն է հաղորդել Բահաեդին Շաքիրի Ստամբուլ ճանփորդության և հետագայում տարածաշրջան նրա վե-

րադարձի վերաբերյալ: Այդ տեղեկագրերի շարքում ամենից կարևորը հետևյալ հրահանգներով ուղարկված գրությունն է. «Հանձնել անձնապես, հույժ հրատապ և գաղտնի», որը թվագրված է 1915 թ. հունվարի 24-ով, և որով Բահաեդին Շաքիրը, շրջանում տիրող պայմանների մասին զեկուցելու նպատակով, Ստամբուլ ուղևորվելու թույլտվություն է խնդրում: Շաքիրը նշում է, որ «հրամանատարներն այստեղի [Կովկասյան ճակատի] իրադրությանն այնպես տեղյակ չեն, ինչպես մենք», և ասում է, որ եթե որոշակի միջոցներ չձեռնարկվեն, «կարելի է խոսել ինչպես զգայական, այնպես էլ նյութական ավերածության մասին»: Համաձայն Շաքիրի, «այս պատերազմի հիմնական կենտրոնացման պահերը Եգիպտոսում կամ Բասրայում կամ Ռումելիայում [Բալկաններում] չեն»: Նրա մտադրությունը բավական հստակ էր. «այս և հարակից այլ հարցեր քննարկելու նպատակով հանդիպելու համար... Ստամբուլ ժամանելուս թույլտվություն ուղարկեք»⁷⁹: 1915 թ. ապրիլի 5-ին Ներքին գործերի նախարարության ուղարկած մեկ այլ ծածկագրված հեռագրից, ուր նշվում է, որ «Բահաեդին Շաքիր քեյը պետք է շուտով վերադառնա, և [բյուջետային] հատուկ հատկացումներ են ուղարկվելու [մահմեդական] գաղթականների համար», կարող ենք ենթադրել, որ այս հարցին առնչվող որոշումները կայացվել են մարտի վերջին կամ ապրիլի սկզբին⁸⁰:

Հավելյալ վկայություն կա այն մասին, որ 1915 թ. մարտ ամիսը շրջադարձային կետ է եղել որոշ մեծ որոշումների համար: Ազգային մեծ ժողովը (խորհրդարանը) ժամանակից շուտ՝ մարտի 1-ին արձակուրդ է գնացել՝ «արտակարգ հանգամանքների բերումով»⁸¹: Արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն մարտի 18-ին մեկնել է Բեռլին՝ հայերի տեղահանությունների վերաբերյալ Գերմանիայի կառավարության հետ խորհրդակցելու համար: (Այդ ժամանակ Գերմանիայում էր գտնվում նաև ֆինանսների նախարար Ջավիթ քեյը, որը դեմ էր Օսմանյան կայսրության մասնակցությանը պատերազմին, սակայն հայերի հետ կապված հարցերը նրան չեն վստահվել:) Ստամբուլ վերադառնալիս Մենթեշեին կայարանում դիմավորել

76 BOA/DH.EUM, 2.Şube, №68/35/1, Մարաշի գավառապետի ծածկագրված և «հրատապ» մակագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. մարտի 30:

77 Mil, "Umumi Harpte," մաս 98, 1934 թ. փետրվարի 10:

78 Նույն տեղում, մաս 100, 1934 թ. փետրվարի 12:

79 BOA/DH.ŞFR, №459/4, Բահաեդին Շաքիրի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հունվարի 24:

80 BOA/DH.ŞFR, №51/215, ներքին գործերի նախարար Թավեթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1915 թ. ապրիլի 5:

81 MMZC, փուլ 3, գումարման տարի I, հ. 1, 1915 թ. մարտի 1, նիստ 33, 480-82:

է Թալեաթը՝ նրան ողջունելով հետևյալ կերպ. «Միրելի» Հալիլ, ասա ինձ. Բեռլինում ինչ խոսեցիք հայերի տեղահանությունների մասին»⁸²:

Այդ հանդիպումների ընթացքում մարտի վերջերին, ամենայն հավանականությամբ, Ստամբուլում երկու առանձին որոշում է կայացվել: Հայ ազգաբնակչությանը ներկայիս Միրիայի ու Իրաքի տարածքներն արտաքսելու որոշումը նահանգապետերին է ուղարկվել Ներքին գործերի նախարարության պաշտոնական խողովակներով: Այնուհետև հայերին բնաջնջելու որոշումը շրջաններ է ուղարկվել ՄԱԿ պատվիրակների՝ մասնավորապես կուսակցության այսպես կոչված «պատասխանատու քարտուղարների» կողմից: Կարելի է վստահությամբ պնդել, որ 1914 թ. գարնանն ու ամռանը հույն ազգաբնակչության դեմ գործածված երկնյուղ մեխանիզմին շատ նման մեխանիզմ է կիրառվել հայերի տեղահանության ու բնաջնջման համար ևս: Երբ Վանի իրադարձությունների վերաբերյալ լուրերը հասել են մայրաքաղաք, գրեթե անմիջապես սկսվել է մի շարք համակողմանի քայլերի իրագործումը՝ դրանով հստակ տպավորություն ստեղծելով, որ այդ քայլերի պատրաստությունը պետք է որ շատ ավելի վաղուց կատարված լիներ:

Սկզբում, ապրիլի 23-24-ին, Ստամբուլում զանգվածային ձերբակալությունների են ենթարկվել հայերի ղեկավարներն ու «անցանկալի» մյուս մարդիկ⁸³: Ապրիլի 24-ին Անկարայի նահանգ ուղարկված մի հեռագրով տեղեկացվել է, որ «ձերբակալված հայերն ուղարկվելու են Այաշ», և պահանջվել, որ Այաշի ռազմական պահեստը պատրաստվի այս իրադարձության համար⁸⁴: Հաջորդ օրն ուղարկված մեկ այլ հեռագրով Ներքին գործերի նախարարությունը հրահանգել է Ստամբուլի 180 ձերբակալվածների ժամանելուց հետո նրանց բաժանել երկու խմբի և տեղափոխել Այաշ ու Չանքիրի⁸⁵: Իրականում

82 Այս ամբողջ տեղեկությունը հաղորդվել է հենց Մենթեշի կողմից (Halil Mentese, Osmanlı Mebusan Meclisi Reisi, 213-16):

83 Ստամբուլում գիշերային ձերբակալությունների առաջին ալիքի հանգամանալի նկարագրության համար և տեղահանված ու Այաշ ու Չանքիրի տեղափոխվածների ցուցակի համար տես Balakian, Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide, 1915-1918, trans. Peter Balakian and Aris Sevag (New York, Alfred A. Knopf, 2009), chapter 13, sections 6-10:

84 BOA/DH.ŞFR, № 52/94, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. ապրիլի 24:

85 BOA/DH.ŞFR, № 52/102, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

թիվն ավելի մեծ է եղել, որովհետև օսմանյան փաստաթղթերից երևում է, որ Այաշում հսկողության տակ է առնվել 71 մարդ, իսկ Չանքիրիում՝ 155 հոգի⁸⁶: Նահանգներ ուղարկված հաջորդ հեռագրով հստակեցվել է, որ վերջին խումբը «ձերբակալված չի», և որ, «քանի որ նրանց փախչելը հավանական չէ, պետք է նրանց թողնել քաղաքում ազատ տեղաշարժելու» և պահպանել⁸⁷:

1915 թ. ապրիլի 24-ին մի շարք հեռագրեր են ուղարկվել բոլոր նահանգների ու գավառների ղեկավարներին: Առաջին հեռագրով արգելվել է ճամփորդելը՝ հրամայելով «արտասահման գնալու որևէ ճամփորդական փաստաթուղթ կամ թույլտվություն չտալ հայերին, որոնց կառավարությունը համարում է կասկածելի, հատկապես ծրա-

գրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. ապրիլի 24: Հեռագրում ասվում է մինևույն բանը. «Մոտ 180 հայ՝ հեղափոխական կոմիտեների ղեկավարներն ու մյուսները, որոնց [շարունակվող] բնակությունն այստեղ անցանկալի է համարվում, 75 հոգանոց ուժեղացված պահակախմբով՝ բաղկացած ոստիկանական 15 պաշտոնյայից, երկու զինվորական սպայից, մի կոմիսարից, մի հանձնակատարից, քաղաքացիական ծառայողից և ուրիշներից, այս երեկո տեղավորվելու են Հայդար փաշա [կայարանից] ժամը 10:23-ին ուղևորվող համար ութ գնացքի մեջ, իսկ հետո ուղարկվելու են համար 124 գնացք, որը Անկարա կժամանի հաջորդ օրը, առավոտյան ժամը 8:00-ին: Նրանցից մի 60-70 հոգի ձերբակալված են մնալու Այաշի զինվորական պահեստում, ինչպես գրված է երեկվա ծածկագրված հեռագրում, իսկ մնացած մի հարյուր հոգին Անկարայի ճամփով ուղարկվելու են Քանգիրի [իմա՝ Չանքիրի] վերաբնակության: Այաշ ուղարկվելիքները բերվելու են Սինջանքոյ կայարան և, պատրաստ վիճակում սպասող անվտանգության ուժերի հետ, պահվելու են վերոհիշյալ կայարանում՝ մինչև միայնացից անջատելն ու Այաշ ուղարկելը: Նրանք բոլորը հաջորդաբար ուղարկվելու են Անկարա, որտեղ բաժանվելու են երկու առանձին խմբերի և այնտեղից ուղարկվելու են Այաշ ու Քանգիրի: Պահպանության և այս խնդրում պահպանության ու պարզության [հարցերում] [վերջնական] որոշումը թողնում ենք ձեզ»:

86 Չանքիրիում հսկողության տակ պահվողների մասին հավելյալ տեղեկությունների համար տես BOA/DH.EUM, 2.Şube, № 10/73: Այաշում պահվածների ցուցակի համար տես BOA/DH.EUM, 2.Şube, № 67/31:

87 BOA/DH.ŞFR, № 52/184, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 2: Թեև այդ մարդիկ սկզբնապես կալանվել են իբրև լայնածավալ խողովություն ղեկավարողներ, իսկապես տարօրինակ առեղծված է մտում այն հանգամանքը, որ Չանքիրի արքայականները նույնիսկ «ձերբակալվածներ» չեն համարվել՝ ընդհուպ մինչև փախչելու վտանգ չներկայացնելու աստիճան, ուստի նրանց թույլ է տրվել ազատորեն շրջել քաղաքում:

գրող ու ակտիվ կոմիտենների ղեկավարներին ու նշանավոր անդամներին»⁸⁸:

Հետագա ամիսներին ճամփորդության արգելքի շրջանակն ընդլայնվել է, և որոշմանն ավելացել են հետևյալ հրահանգները. «Բացարձակ ոչ մի հայի՝ տղամարդ թե կին, չպետք է թույլատրվի արտասահմանից մուտք գործել օսմանյան տիրույթ, իսկ 17-ից 50 տարեկան հայ տղամարդկանց բոլորովին չպետք է թույլ տալ ճամփորդել արտասահման՝ առանց Բարձրագույն հրամանատարության գերագույն գրասենյակի հատուկ արտոնությունն ստանալու»⁸⁹: Այդ որոշմանն անմիջապես հետևել են էլ ավելի խիստ միջոցառումներ. 1915 թ. օգոստոսի 21-ի մի շրջաբերականով բոլոր նահանգապետներին ու շրջանային պաշտոնյաներին հրահանգվել է, որ «որևէ տարիքի ոչ մի հայի՝ կին թե տղամարդ, չթույլատրվի հեռանալ երկրից՝ առանց Բարձրագույն հրամանատարության հրամանի»⁹⁰:

1915 թ. ապրիլի 24-ին կառավարությունը մի քանի վճռորոշ որոշումներ է կայացրել և տեղական իշխանություններին հրամաններ

88 BOA/DH.SFR, №52/95, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Ասկարայի, Այդինի, Բիթլիսի, Հալեայի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Քուստայի, Կարահիսար-ի Սահիրի, Բոլուի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Մարաշի, Նիդդեի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. ապրիլի 24:

89 BOA/DH.SFR, №53/334, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Ասկարայի, Այդինի, Բիթլիսի, Բասրայի, Բաղդադի, Բեյրութի, Հալեայի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Նիդդեի, Իչելի, Բոլուի, Ջանիկի, Չաթալցայի, Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չաթանքալե), Մենթեշեի, Թեքեի, Գյուլիսայի, Մարաշի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. հունիսի 13:

90 BOA/DH.SFR, №55/141, ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Ասկարայի, Բիթլիսի, Հալեայի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Կեսարիայի, Մարաշի, Նիդդեի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 21:

ուղարկել այն մասին, որ, հատկապես Ջեթունի, Բիթլիսի, Սվազի ու Վանի իրադարձությունների լույսի ներքո, երկրով մեկ պետք է ձերբակալել հայերին և պահել հսկողության տակ⁹¹: Ըստ այդ հրաման-

91 Այդ հեռագրերը, որոնք արժեքավոր փաստաթղթեր են, ունեն նաև ճիշտ միևնույն պատմությունը պատմելու առավելությունը. «Իբրև հետևանք օսմանյան պետության մեջ հայկական [հեղափոխական] կոմիտենների հեղափոխական ու քաղաքական կազմակերպությունների և իրենց համար վարչական վերահսկողություն ձեռք բերելու ուղղությամբ բավական ժամանակ նրանց գործածած ջանքերի՝ պատերազմի հոչակումից ի վեր Դաշնակցական կոմիտեի և ռուսահայերի թշնամական գործողությունները մեր նկատմամբ և այն որոշումը, որ օսմանյան պետության հայերը, տեսնելուց հետո [օսմանյան] քանակի թուլացած վիճակը, իրենց ամբողջապես նետեցին ապստամբության գործի մեջ՝ նպատակ ունենալով ամեն հնարավորություն գործածելով ընդգրկվելու դավաճանական գործողությունների մեջ, որոնք կարող էին ազդել պետության կյանքի ու ապագայի վրա, և հատկապես այս ժամանակաշրջանում, երբ երկիրն ընդհանուր պատերազմի մեջ է, ինչը ևս մեկ անգամ հաստատվել է Ջեթունի ու Բիթլիսի, Սվազի ու Վանի վերջին ապստամբ իրադարձություններով... և Կեսարիայում, Սվազում ու այլ շրջաններում հայտնաբերված ռուսերով, հայկական [հեղափոխական] կոմիտենների ղեկավարների գործողություններով, ովքեր, ռուսական բանակից կամավորական միավորումներ կազմելով, ռուսների հետ համակարգելով հարձակվել են երկրի վրա, քայքայելով ծագումով օսմանյան հայ համայնքի անդամներ են, այն ձևը, որով նրանք սպառնացել են օսմանյան բանակին թիկունքից, և այն քայլերը, որ նրանք կատարել են, և այն հրատարակումները, որ շատ մեծ թվերով թողարկել են: Բնականաբար, քանի որ կառավարությունը չի կարող երբևէ տանել կամ հանդուրժել այդ ծրագրերն ու ջանքերը, որոնք նրա աչքում [երկրի համար] կենսական հարց են ներկայացնում, ոչ էլ [հեղափոխական] անկարգության ու խռովության աղբյուր հանդիսացող կոմիտենների շարունակվող գոյությունը դիտել օրինական, այն հրատապ կարիք է զգացել վերացնելու [ilga] [հայկական] քաղաքական բոլոր կազմակերպությունները: Այդ պատճառով ողջ հրատապությամբ հանձնարարվել է, որ նահանգում գտնվող Հնչակյան, Դաշնակցական և [հայ հեղափոխական] նման կոմիտեններ[ի] մասնաճյուղերը փակվեն... և նրանց [զանազան] մասնաճյուղերի կենտրոնակայաններում գտնվող բոլոր թղթերն ու փաստաթղթերն անհապաղ բռնագրավվեն՝ առանց նրանց հնարավորություն տալու դրանք վնասելու կամ ոչնչացնելու, որ անմիջապես ձերբակալվեն կոմիտենների առաջնորդներն ու երևելի անդամները՝ այն հայերի հետ միասին, որոնք կառավարության կողմից կարևոր կամ վնասարար կհամարվեն, որ նրանք, ում քնակության շարունակումը ներկայիս շրջաններում անխոհեմ կթվա, կենտրոնացվեն գավառի այնպիսի վայրերում, որոնք հարմար կթվան և նրանց հնարավորություն չեն տա փախուստ տալու կամ փախչելու, որ գնեքի որոնումը պետք է սկսվի [զինվորական] հրամանատարների հետ համակարգված՝ դեմ-հանդիման ծագող որևէ իրադրության, որ դրանք եղել են անհատներ, որոնք կձերբակալվեն] ստացվող

ների, որոնք ինչ-որ ձևով ուղարկվել էին նաև օսմանյան Բարձրագույն հրամանատարությանը⁹², պետք է լուծարվեին դաշնակցական ու հնչակյան բոլոր կազմակերպությունները, դրանց թերթերը պետք է փակվեին, ղեկավարները պետք է ձերբակալվեին և կանգնեին ռազմական տրիբունալի առջև, որը նոր պետք է կազմավորվեր: Երկու օր անց պատերազմի նախարար Էնվեր փաշան հատուկ հաղորդագրություն է ուղարկել բանակային ողջ հրամանատարությանը՝ նրանց տեղեկացնելով հայկական կազմակերպությունները փակելու, նրանց փաստաթղթերը բռնագրավելու, անդամներին ձերբակալելու և զենք գտնելու նպատակով շենքերը խուզարկելու կառավարության որոշման մասին: Հրամանատարներին կարգադրվել է «այս հարցով կապի մեջ մնալ քաղաքացիական պաշտոնյաների հետ», և «կարևորություն տալ օժանդակության բոլոր ձևերին, որոնք կարող են պահանջվել իրենցից»⁹³: 1915 թ. մայիսի 2-ի «հրատապ ու գաղտնի», նահանգային բոլոր պաշտոնյաների կողմից «անձնապես ստանձնելիք» շրջաբերականից երևում է, որ ապրիլի 26-ին, համաձայն ապրիլի 24-ի որոշման, ժամանակավոր օրենք է ընդունվել զենքի որոնման մեծածավալ խուզարկություններ կատարելու մասին: Շրջաբերականում բացատրվում է, որ «[1915 թ. ապրիլի 26-ի] ժամանակավոր օրենքը վերաբերում է ոչ-մահմեդական համայնքների և մասնավորապես հայերի ձեռքբերում եղած զենքի ու ռումբերի բռնագրավման

թղթերի ու փաստաթղթերի գննության արդյունքում, [որոնց բովանդակությունը] ամբողջությամբ կբացահայտվի այդ գործողության ընթացքում, նրանք կհանձնվեն ռազմական տրիբունալ, որ բանակային Բարձր հրամանատարության հետ քննարկումների միջոցով որոշված անհրաժեշտ միջոցառումները պետք է հանգամանորեն և անհապաղ իրագործվեն, և գործողությունների ու ձերբակալված անհատների թվի վերաբերյալ անդադար գեկույցներ պետք է ուղարկվեն» (BOA/DH.SFR, № 52/96-97-98, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքրի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Կարահիսարի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Բուլուի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Մարաշի, Նիզդեի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. ապրիլի 24):

92 Genelkurmay Başkanlığı Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 127–29, 423–25.

93 Genelkurmay Başkanlığı, Askeri Tarih Belgeleri Dergisi 31, № 81 (դեկտեմբեր 1982), 137–38, փաստ. № 1829:

հարցում հավաստիանալուն»: Բացի այդ, շրջաբերականում հատուկ ուշադրություն է հատկացվում ղեկավարներին այն հանգամանքի հիշեցմանը, որ ժամանակավոր օրենքը չպետք է այնպես ընկալվի, թե «զենքերը պետք է հավաքվեն մահմեդական ազգաբնակչությունից», և որ պաշտոնյաները պետք է վարվեն դրան համապատասխան ձևով⁹⁴:

Մահմեդականների ու ոչ-մահմեդականների միջև միևնույն տարբերակումն է կատարված Ներքին գործերի նախարարությանն ուղղված Պատերազմի նախարարության 1915 թ. հուլիսի սկզբի պաշտոնական պատասխանի մեջ, ուր հիշատակված է ավելի վաղ գրությունը. «Սա թիվ 262 [1915 թ. հուլիսի 3-ի] պետական հուշագրի պատասխանն է: Զինամթերքի ու պայթուցիկ նյութերի հավաքմանը վերաբերող հրամանը պետք է իրագործվի միայն ոչ-մահմեդական համայնքների նկատմամբ, որոնք համարվում են արտակարգ վսասակար կամ խռովարար, քանի որ պատշաճ է թվում մյուս զենքերը մնացող մահմեդականների ձեռքբերում թողնելը՝ նրանց ստորագրած փաստաթղթի դեմ, և այս կապակցությամբ գրավոր հաղորդագրություն է ուղարկվել բանակային միավորումներին... Այս հարցով որոշումը ձերն է»⁹⁵:

1915 թ. ապրիլի 24-ին սկսված ձերբակալություններին, ճամփորդության և այլ արգելքներին զուգահեռ փոխվել է նաև Զեյթունից ու Մարաշից տեղահանվածների նշանակման վայրը, որն, ըստ նախնական որոշման, Քոնյան էր: Ապրիլի 25-ին Ջեմալ փաշային ուղարկված մի հեռագրով պահանջվում էր, որ «արդեն ուղարկվածներից բացի այլևս հայեր չուղարկվեն շրջան, և համաձայն Փաշայի ցանկության, որը զինված ուժերի հրամանատարն է, համապատասխան անձինք պետք է տեղեկացվեն այն մարդկանց տեղահանության հրամանի մասին, որոնց Իսկենդերունի [Ալեքսանդրետ], Դյորթյուլի,

94 BOA/DH.SFR, № 52/188, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքրի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Մարաշի, Նիզդեի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. մայիսի 2:

95 BOA/DH.EUM, 2.Şube, № 8/101/1, Օսմանյան կայսերական Պատերազմի նախարարության հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը (անթվակիր):

Ադանայի, Հաճընի, Ջեյթունի ու Միսի շրջաններից հեռացնելն ու հարավ-արևելյան Հալեպի, Դեր Ջորի ու Ուրֆայի շրջաններ [ուղարկելը] անհրաժեշտություն է դիտվում»⁹⁶: Տեղահանությունների գլխավոր ուղղությունը ներկայիս Միրիան ու Իրաքն էին: Հաջորդ օրը՝ ապրիլի 25-ին նման մի հեռագիր է ուղարկվել Ադանայի ու Հալեպի նահանգներ և Մարաշի գավառ, որով տեղի պաշտոնյաները տեղեկացվում էին, որ իրադրության մասին զեկուցված է նաև Չորրորդ բանակի հրամանատարությանը⁹⁷: 1915 թ. մայիսի 5-ին Մարաշի շրջան ուղարկված մեկ այլ հեռագրով պահանջվում էր Ջեյթունի հայերի «լիակատար տեղահանություն»⁹⁸: Միևնույն հրամանը կրկնվել է չորս օր անց ուղարկված երկրորդ հեռագրում⁹⁹:

Ապրիլի վերջին Վանի իրադարձությունների հետևանքով Վանից ու շրջակա գավառներից հայ ազգաբնակչության տեղահանությանը վերաբերող ամենաառաջին հայտնի հեռագիրն ուղարկվել է 1915 թ. մայիսի 2-ին: Այդ հեռագրում ոմն Իսմեթ (հետագայում հայտնի իբրև Իսմեթ Իսյոնյու, որը Մուստաֆա Քեմալի գրագիրն է եղել և ապա նրա հաջորդը՝ Թուրքիայի երկրորդ նախագահը) Օսմանյան կայսերական բանակի Բարձրագույն հրամանատարության գրասենյակի» անունից գրել է Ներքին գործերի նախարարությանը և առաջարկել, որ «Վանա լճի շրջակայքի և հատկապես այն վայրերի, որ հայտնի են Վանի նահանգլային կառավարությանը... հայերին պետք է հանել այդտեղից, իսկ ապստամբության օջախները՝ ցրել»:¹⁰⁰ Հեռագրում ասվում է, որ ապրիլի սկզբին ռուսներն իրենց սահմաններում գտնվող մահմեդական ազգաբնակչությանն արտաքսել են Օսմանյան կայսրություն, և նշվում է, որ խոռվությունը ձևելու և

96 BOA/DH.ŞFR, № 52/93, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915 թ. ապրիլի 24:

97 BOA/DH.ŞFR, № 52/112, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության «գաղտնի» մակագրությամբ ծածկագրված հեռագիրը Ադանայի ու Հալեպի նահանգներ և Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. ապրիլի 25:

98 BOA/DH.ŞFR, № 52/253, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 6:

99 BOA/DH.ŞFR, № 52/286, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 9:

ռուսներին իրենց կատարածի համար փոխադարձելու նպատակով «անհրաժեշտ է վերը նշված հայերին ու նրանց ընտանիքներին կամ արտաքսել Ռուսաստան, կամ ցրել Անատոլիայի խորքերի զանազան վայրերում»:¹⁰⁰ Բարձրագույն հրամանատարությունն այնուհետև պահանջում է, որ «ընտրվի և իրագործվի այդ երկու ուղիներից ամենահարմարը»¹⁰⁰: Հասկանալի է, որ Ներքին գործերի նախարարությունն այդ առաջարկը կատարելիս ի վերջո ընտրել է երկրորդ տարբերակը:

Այս հարցով երկրորդ հեռագիրը մայիսի 6-ին ուղարկվել է միայն Վանի ու Բիթլիսի գավառների ղեկավարներին: «[Հարցը] դիտել անձնապես» ցուցումից բացի, այդ հեռագրում գավառների պետերը տեղեկացվել են, «որ Վանա լճի շրջակայքի և մյուս վայրերի հայերը, որոնք Վանի գավառապետարանի կողմից հայտնի են ու ճանաչված, և ովքեր ապստամբության ու խռովության մշտական տարածման հիմք են եղել, պետք է հեռացվեն [նշված] շրջաններից ու վայրերից և քարտրվեն դեպի հարավ»:¹⁰¹ Բացի այդ, «Բարձրագույն հրամանատարության գրասենյակից Երրորդ ու Չորրորդ բանակների հրամանատարներին հաղորդվել է, որ իրենք պետք է հնարավոր ամեն տեսակի օժանդակություն ցուցաբերեն գավառապետներին՝ այդ որոշման արագ իրագործման համար»:¹⁰¹ Տեղահանության գործողության ծանուցումը պետք է ուղարկվեր «Վան, Էրզրում[ի նահանգի] հարավային հատված և [վարչականորեն] Բիթլիսի նահանգային կենտրոնին կցված համապատասխան մարզեր և հատկապես Մուշ և Սասունի ու Թալոզի տարածքներ»:¹⁰¹ Վերջապես, պահանջվում էր, որ Էրզրումի նահանգապետ Թաշին քեյին նույնպես լուր տրվի իրադրության մասին, և տեղահանության գործողությունն «ի կատարածով արագ ու կանոնավոր ձևով»¹⁰¹: Հրավիրված լինելով վկայություն տալու Խարբերդի (ներկայիս Էլազիգ) շուրջ կատարված տեղահանությունների ու կոտորածների մեջ ներգրավված իթթիհադականների գործով պատերազմից հետո գումարված Ստամբուլի ռազմական

100 Askeri Tarih Belgeleri Dergisi 31, № 81 (դեկտեմբեր 1982), 139–42, փաստ. № 1830:

101 BOA/DH.ŞFR, № 52/282, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգապետ Ջեմալ քեյին և Բիթլիսի նահանգապետ Մուստաֆա Արդուպիայի քեյին, թվագրված 1915 թ. մայիսի 6: Էրզրումի նահանգապետ Թաշինի ուղարկված համանման հեռագրի համար տե՛ս BOA/DH.ŞFR, № 52/281:

տրիբունալում Թաշին բեյը 1919 թ. օգոստոսի 2-ի դատական նիստի ժամանակ ասել է, որ Էրզրումից ու դրա շրջակայքից տեղահանությունների վերաբերյալ հրամանն ստացել է 1915 թ. մայիսի 12-ին¹⁰²:

Սակայն, ինչպես վկայել են որոշ ականատեսներ, և ինչպես հաղորդվել է շրջանի գերմանական հյուպատոսների գեկույցներում, Էրզրումի շրջակայքի գյուղերի տեղահանությունն սկսվել է ապրիլի վերջերին: Այսպես, Բաշբադիփզադե Ռագիփի բեյն իր հուշերում մտաբերում է, որ ինքն Էրզրում էր ժամանել 1915 թ. ապրիլի 14-ին և մեկնել 12 օր անց՝ ապրիլի 26-ին: Այդ օրերի մասին նա գրում է, որ «խեղճ հայ աղջիկների ու կանանց խառնակ, թշվառ, ստորացված ու այլասերած վիճակից մեր սրտերը ծվեն-ծվեն եղան»¹⁰³: Գերմանական հյուպատոսական նշված գեկույցներում հաղորդվում է, որ Էրզրումի շրջակայքի գյուղերի պարպումն սկսվել էր մայիսի սկզբին: Նրանցից մեկը նշում է, որ «մինչև մայիսի 15-ը բոլոր գյուղերն էվակուացված էին»¹⁰⁴:

Մայիսի սկզբից Թալեաթ փաշան սկսել է անձամբ զբաղվել այն հարցերով, թե քանի հայ է տեղահանվել պարպման ենթակա վայրերից, և թե տեղափոխման համար նշանակված վայրերից հատկապես որտեղ են նրանց տարել: 1915 թ. մայիսի 3-ին Մարաշի գավառ ուղարկված հեռագրում Թալեաթը հարցնում է. «[Բ]անի հայ է դեռևս մնում Ջեյթունում: Մինչև հիմա քանիսն են տեղահանվել և ո՞ր են ուղարկվել»¹⁰⁵: Մայիսի 11-ին Ադանայի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրում նա պահանջում է գեկույցել, թե «մինչև հիմա [ք]անի հայ է հանվել Հաճընից, Դյորթոյից և այլ վայրերից... և ո՞ր են ուղարկվել»¹⁰⁶: Մայիսի 5-ին Հալեպ ուղարկված հեռագրով նա նահանգապետին տեղեկացրել է, որ եկող հայերին պետք է տեղավորել նահանգի

արևելյան մասերում¹⁰⁷, իսկ մայիսի 12-ին Հալեպի պաշտոնյաներին հրահանգել է «[եկող] հայերին հարմար [համարվող] որևէ ձևով ցրել [տարածքի տարբեր] գյուղերի վրա կամ նրանց տեղավորել նոր վայրերում»¹⁰⁸: Այդ նույն ժամանակամիջոցում էր, որ Բալկաններից, Կովկասից ու այլ վայրերից մահմեդական փախստականներն սկսել էին տեղավորվել հայերից պարպված տարածքներում:

1915 թ. ապրիլի 20-ին Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային ուղարկված հեռագիրը հայտնում էր, որ «համաձայն տրված հրամանի... Այնթափի [ներկայիս Գազիանթեփի] [մահմեդական] փախստականներին սկսել են ուղարկել Ջեյթուն», որտեղ տեղահանումներն իրականում սկսվել էին ապրիլի 8-10-ը¹⁰⁹: Թեև կարող է թվալ, թե Ջեյթունից առաջին պարպումը միայն սահմանափակ թվով ընտանիքներ է ընդգրկել, և Ջեյթունի հայերի «լիակատար տեղահանությունը» մայիսի 5-ից ու մայիսի 9-ից շուտ չի սկսվել¹¹⁰, կառավարության կողմից այդ վայրերում մահմեդականների արագ տեղավորումը կարծես ցույց է տալիս, որ նման քայլի պատրաստություններն սկսված են եղել շատ ավելի վաղուց:

Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան մայիսի 18-ին «գաղտնի և հրատապ» պատասխան է ուղարկել տեղացի հայերի մի խումբ Կաստամոնու ու Սվազ ուղարկելու վերաբերյալ Էրզրումի նահանգապետ Թաշին բեյի խնդրանքին: Թալեաթի հեռագրից բացահայտվում է տեղահանությունների գործողության նոր բնույթը. «Բացարձակապես անընդունելի է այդտեղից հանված հայերին Կաստամոնուում ու Սվազում տեղավորելը: Բարձրագույն ղեկավարությունը նախապես հրահանգ է ստացել այդ անձանց հարավ[ային] նահանգներում տեղավորելու մասին: Հետևաբար, այն հայերը, որոնք հայտ-

102 Yeni Gazete, 1919 թ., օգոստոսի 3:

103 Başkâtipzade Ragıp Bey, Tarih-i Hayatım (Ankara, Kebikeç Yayınları, 1996), 59–60.

104 Lepsius, Der Todesgang, 43.

105 BOA/DH.SFR, № 52/203, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 3:

106 BOA/DH.SFR, № 52/338, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 11:

107 BOA/DH.SFR, № 52/267, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 5:

108 BOA/DH.SFR, № 52/335, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 12:

109 BOA/DH.SFR, № 52/51, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915 թ. ապրիլի 20:

110 BOA/DH.SFR, № 52/253 and 286, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 9:

նի է, որ Էրզրոմի ճանապարհով ուղարկվել են Սվազ, պետք է անհապաղ հետ դարձվեն և ուղարկվեն Ուրֆայի ու Մոսուլի հարավային մասերն ու [Դեր] Ջորի գավառ»։ Հետագա բոլոր տեղահանվածներին պետք է ուղարկել այդ նույն վայրերը, ավելացրել է Թալեաթը¹¹¹։

1915 թ. մայիսի 23-ին հայերի տեղահանության աշխարհագրական շրջանակն ընդլայնվել է՝ ընդգրկելով նոր շրջաններ, և առաջին անգամ հստակորեն նշվել է այն վայրերի ցանկը, որոնցից նրանց պետք է տեղահանեին։ Համաձայն Ջեմալ փաշայի ստացած հրահանգների, որոնց մեջ նշվում էր, որ «տեղեկությունը տրվել է հարկ եղած նահանգներին», հայ ազգաբնակչությունը պետք է դուրս հանվեր «1. Էրզրոմի, Վանի ու Բիթլիսի նահանգներից, 2. Ադանայի, Մերսինի, Քոզանի ու Ջերեզ-ի Բերեքեթի նահանգներից՝ բացի Ադանա, Սիս ու Մերսին [քաղաքների] բնակիչներից, 3. Մարաշի գավառից՝ բացի Մարաշ [քաղաքի] բնակիչներից, 4. Իսկենդերունի, Բիլանի, Ջիշրիշուգուրի ու Անթալիայի մարզերում գտնվող քաղաքներից ու գյուղերից՝ բացի Հալեպի նահանգի կենտրոնական մարզից»։ Ինչ վերաբերում է այն շրջաններին, որոնցում պետք է տեղավորեին տեղահանված հայերին, փաստաթղթի շարունակության մեջ ասվում է.

Նրանք, ովքեր տեղահանվել են Վանի, Էրզրոմի ու Բիթլիսի նահանգներից, պետք է տեղավորվեն Մոսուլի նահանգի հարավային հատվածում, սակայն ոչ [նահանգի] հյուսիսային մասում, որը սահմանակից է Վանի նահանգին, և Ուրֆայի գավառում, սակայն ոչ [Դեր] Ջորի գավառում կամ դրա գավառային կենտրոնում։ Նրանք, ովքեր տեղահանվելու են Ադանայի, Հալեպի ու Մարաշի տարածքներից, կառավարության կողմից տեղափոխվելու են Դամասկոսի արևելյան հատվածում և Հալեպի նահանգի արևելյան ու հարավ-արևելյան հատվածներում արդեն նշանակված վայրեր և վերաբնակեցվելու են այնտեղ¹¹²։

Համաձայն այս նոր ծրագրի, այն շրջանների նահանգապետերը, որոնցից պետք է տեղահանվեին հայերը, և այն շրջանների տեղական

111 BOA/DH.SFR, №53/48, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրոմի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 18:

112 BOA/DH.SFR, №53/94, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կայսերական չորրորդ բանակի հրամանատարին, թվագրված 1915 թ. մայիսի 23:

իշխանությունները, որտեղ նրանց պետք է տեղավորեին, բոլորն առանձին-առանձին հեռագրերով իրազեկված են եղել այդ մասին¹¹³։

ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿՈՏՈՐԱՃՆԵՐԸ. ԵՐԿՃՅՈՒՂ ՄԵԽԱՆԻՉՄԸ

Ինչպես վերը բացատրվեց, ամենայն հավանականությամբ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեն մարտի վերջից մինչև ապրիլի սկիզբն ընկած ինչ-որ ժամանակ երկու առանձին ու զուգահեռ որոշում է կայացրել Անատոլիայի հայ ազգաբնակչությանը տեղահանելու և ապա բնաջնջելու վերաբերյալ։ Այդ որոշումների փոխանցման երկակի ձևի ամենապերճախոս ճանաչումը գտնում ենք Ռեշիդ Աքիֆ փաշայի ելույթի մեջ։ Ռեշիդ Աքիֆը ծառայել է Նախարարների խորհրդում, Ահմեդ Իգեթ փաշայի կառավարության կազմում, որը Ջինաղադարի ժամանակ կազմավորված առաջին կառավարությունն էր՝ այն բանից հետո, երբ Թալեաթ փաշան հրաժարական է տվել և 1918 թ. հոկտեմբերին փախել երկրից։ Նոյեմբերի 21-ին, ելույթ ունենալով Պատգամավորների պալատի առջև, Ռեշիդ Աքիֆ փաշան նշել է, որ կոտորածներն սկսվել են Ներքին գործերի նախարարության կողմից տեղահանության գաղտնի հրամանները նահանգներ փոխանցելով.

Որոշ գաղտնիքներ կան, որոնց մասին իմացել եմ իմ ամենավերջին, կարճատև ծառայության ընթացքում [Իգեթ փաշայի] կառավարության կազմում, որը 25-30 օրից ավելի կյանք չունեցավ։ Ի թիվս այլ բաների, ես բախվեցի արտառոց մի բանի։ Տեղահանության այս հրամանը բացեիքաց և պաշտոնական ձևով տրվել էր Ներքին գործերի նախարարության կողմից և հաղորդվել նահանգներ։ Սակայն պաշտոնական այդ հրամանը [տալուց] հետո, չարաբաստիկ այդ հրամանը, Կենտրոնական կոմիտեն տարածել էր բոլոր կողմերում, որպեսզի զինված հրոսակախմբերը [չեթե] կարողանային շտապ կատարել իրենց հանձնարարությունը։ Այդպիսով, զինված հրոսակախմբերն իրենց ձեռքն առան իրադրությունը, և ապա տեղի ունեցան բարբարոսական կոտորածները¹¹⁴։

113 BOA/DH.SFR, №53/91, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. մայիսի 23, և ծածկագրված հեռագիր Ադանայի ու Հալեպի նահանգներ և Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 23:

114 Meclis-i Ayan Zabıt Ceridesi [Օսմանյան երևելիների պալատի արձանա-

Այս ելույթը, «նկատի առնելով դրա հատուկ կարևորությունը», հետագայում հրապարակվել է մի շարք լրագրերում, որոնք այն համարել են «ծայրահեղ ուշադրության արժանի»¹¹⁵:

Ռեշիդ Աքիֆ փաշայի հաղորդածին նման տեղեկություն է տրամադրել նաև Վեհիպ փաշան: Իր գրավոր ցուցմունքի մեջ, որը հիմնված էր այն կասկածյալների վկայությունների վրա, որոնց ինքն էր հարցաքննել, Վեհիպ փաշան հաստատել է, որ տեղահանության պաշտոնական հրամանները շաղ են տրվել նահանգների քաղաքացիական ղեկավարների կողմից, մինչդեռ բնաջնջման հրամանը, ըստ էության, կազմակերպվել է Բահաեդին Շաքիրի կողմից: Այնուհետև Վեհիպ փաշան նշել է, որ Երրորդ բանակի հրամանատարի պաշտոնում իր նշանակվելուց հետո սկսել է հետաքննել և ձերբակալել է ժանդարմներին ու նրանց օգնականներին, որոնց պատասխանատու է նկատել Սվազից տեղահանվողների պահակախմբի կոտորածի համար, և ինքն էլ արձանագրել է նրանց վկայությունները: Այդ կասկածյալները Վեհիպ փաշային ասել են, որ «այդ ձևով գործելու իրենց հրամաններն իրենք ստացել են Մեմդուհ բեյից, որն այդ ժամանակ աշխատում էր իբրև Էրզինջանի գավառապետ, իսկ նրանք, ովքեր ակտիվորեն մասնակցել են այդ ահավոր իրադարձություններին, իրենց հրամաններն ստացել են դր. Բահաեդին Շաքիր բեյից»¹¹⁶:

Երկնյուղ մեխանիզմը կարծես թե գործել է մոտավորապես հետևյալ ձևով. տեղահանության հրամանները Ներքին գործերի նախարարության կողմից պաշտոնական խողովակներով հաղորդվել են նահանգապետներին, որոնք այնուհետև այն տարածել են շրջանի անվտանգության ծառայության միավորումների մեջ՝ այսինքն՝ Ներքին գործերի նախարարությանն ու ժանդարմերիային կցված անվտանգության կազմակերպության շարքերում: Ինչ վերաբերում է տեղահանվողների պահակախմբի կոտորածին՝ մի գործողություն, որ ղեկավարել է ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ Բահաեդին Շաքիրը, սպանելու ծածկագրված հրամանները նահանգներ են հաղորդվել հիմնականում կուսակցության պատասխանատու քարտուղարների միջոցով:

գրությունները, պայտուհետև՝ MAZC], ընտրական 3-րդ ժամկետ, գումարման 5-րդ տարի, հ. 1 (Ankara, TBMM Basimevi 1990), 123:

115 İkdam, 1918թ. դեկտեմբերի 5:

116 Վեհիպ փաշայի վկայությունը:

Բազմաթիվ աղբյուրներ հաստատում են, որ պատասխանատու քարտուղարներն իրոք հրամաններ են փոխանցել, երբ ժամանել են այն շրջանները, որոնցում պետք է գործեին: Այսպես, պատերազմից հետո իթթիհադական նախկին ղեկավարների դատավարության ժամանակ նախագահող դատավորը հաճախ կրկնել է, որ ձեռքի տակ եղած փաստաթղթերը լիովին հաստատում են, որ Իթթիհադական կուսակցության քարտուղարներն են հրամանները բերել նահանգներ, և որ այն նահանգապետերը, որոնք չեն ենթարկվել քարտուղարների կողմից բանավոր հաղորդված հրամաններին, վերջիններիս հանձնարարականներով հեռացվել են աշխատանքից: Եվ իսկապես, ամեն անգամ, երբ հնչել են այսպիսի խոսքեր, թե «պատասխանատու լիազորները եկան Անկարայի, Կաստամունուի, Էրզինջանի, Յոզղաթի, Տրապիզոնի, Սվազի և այլ տարածքներ, նրանք որոշակի գաղտնի հրահանգներ հաղորդեցին [շրջանի համապատասխան] նահանգապետներին, դատավորը գրեթե բոլոր վկաներին առանձին-առանձին հարցրեց. դուք տեղյակ [է]իք դրանից»¹¹⁷: Դատավարության նիստերի ընթացքում դատավորը կրկնել է, որ տարբեր նահանգապետեր, ինչպես Անկարայի նահանգապետ Մազհար բեյը, Կաստամունուի նահանգապետ Ռեշիդ փաշան և Յոզղաթի գավառապետ Ջեմալ բեյը, աշխատանքից հեռացվել են այդ քարտուղարների պահանջով¹¹⁸:

Այդ հանգամանքը հաստատող վկայություններ են տվել նույն այդ նահանգապետերը՝ նախ Ոճրագործությունների հետաքննության հանձնաժողովում (Tedkik-i Seyiyat Komisyonu), իսկ հետագայում՝ գինվորական տրիբունալում երիտթուրքերի դատի տարբեր նիստերի ընթացքում: Անկարայի նախկին նահանգապետ Մազհար բեյը, օրինակ, այսպես է բացատրել իր հեռացումը. «Ես այնպես վարվեցի, կարծես թե չէի հասկացել հայերի տեղահանության մասին հրամանները, որոնք ստացել էի Ստամբուլի ներքին գործերի նախարարից: Ինչպես գիտեք, մյուս նահանգներն արդեն վերջացրել էին տեղահանության իրենց գործողությունները, որոնք ես դեռ չէի սկսել: [Հետո] Աթիֆ բեյը ժամանեց... Նա ինձ բանավոր հաղորդեց հայերին սպանելու ու բնաջնջելու հրամանը: Ես նրան ասացի՝ ո՛չ, Աթիֆ բեյ,

117 Օրինակ, տե՛ս դատավարության չորրորդ նիստի նկարագրությունը հետևյալ տեղում. TV, № 3549, 1919թ. մայիսի 8:

118 TV, № 3557, վեցերորդ նիստ, 1919թ. մայիսի 14:

ես նահանգապետ եմ, ես ավագակ չեմ. ես վեր կկենամ [նահանգապետի] աթոռից, դու արի և արա դա»¹¹⁹:

Կաստամունուի նահանգապետ Ռեշիդը ևս նման պատմություն է պատմել: Երիտթուրք պատասխանատու քարտուղարների դատավճռում նշվում է, որ Ռեշիդը աշխատանքից հեռացվել է պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմիի պահանջով, քանի որ ասել էր «ես չեմ կարող ձեռքերս այդքան արյան մեջ թաթախել (ben elimi kana boyamam)»¹²⁰: Յոզղաթի գավառապետ Ջեմալը իր գրավոր ցուցմունքի մեջ նման մեկ այլ պատմություն է պատմել, որը 1918 թ. դեկտեմբերի 12-ին հանձնվել է Ոճրագործությունների հետաքննության հանձնաժողովին: Ջեմալը վկայել է, որ պատասխանատու քարտուղար Նեջաթի բեյն իրեն ցույց է տվել հայերին բնաջնջելու պաշտոնական հրամանը, սակայն մերժել է այն իրեն հանձնել: Գավառապետն իր հերթին մերժել է կատարել հրամանը՝ Նեջաթի բեյին ասելով. «Քանի որ դուք պաշտոնական կոչում չունեք, ես պետք է նախ պաշտոնական գրավոր պահանջ խնդրեմ, իսկ [մինչ այդ] ես չեմ կարող կատարել այդ գործողությունը»: Մի քանի օր անց Ջեմալն ազատվել է իր գրադեցրած պաշտոնից¹²¹: 1919 թ. մայիսի 5-ին՝ Յոզղաթի դատավարության տասնամեկերորդ նիստի ժամանակ, Ջեմալը վկայություն է տվել, որ Նեջաթին իրեն ասել է, որ հրամանն արտացոլում է ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի կամքը¹²²:

Ի լրումն իրենց աշխատանքը կորցրած նահանգային ու գավառային պաշտոնյաների, տեղական որոշ պաշտոնյաներ հատուցել են իրենց կյանքով: Լիջեի մարզի վարչական ավագ պաշտոնյա Հյուսեյին Նեսիմին մերժել է կատարել իր մարզի հայ բնակիչներին կոտորելու հրամանը: Նա նախ պահանջել է դրա գրավոր հրամանը, որից հետո շուտով նրան հեռացրել են աշխատանքից, կանչել Դիյարբեքիր և ճանապարհին սպանել¹²³: Նրա որդին՝ Աբիդին Նեսիմին, պատմել է,

119 ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. № 492:

120 Այս տեղեկությունը գտնվում է պատասխանատու քարտուղարների դատավարության ժամանակ 1920 թ. հունվարի 8-ին դատավորի հրապարակած վճռի մեջ, վերարտադրված հետևյալ տեղում. TV, № 3772, 1920 թ. փետրվարի 10:

121 ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. № 494:

122 Renaissance, 6, 7 March 1919.

123 Lepsius, Der Todesgang, 76.

որ պետական պաշտոնյաներին հեռացնելու հրամանն եկել էր Դիյարբեքիրի նահանգապետ դր. Ռեշիդ բեյից, և տվել է նահանգային ու մարզային մի քանի ղեկավարների անուններ, որոնք միևնույն բախտին էին արժանացել. «Սպանվածների թվում էին Բասրայի նահանգապետ Ֆերիթը, Սյունթեֆակի շրջանի ղեկավար Բեդի Նուրին... Բեշիրիի մարզպետի պաշտոնակատար Սաբիթը [և] լրագրող Իսմաիլ Մեսթանը»: Կրտսեր Նեսիմին բացատրել է, որ հայերի բնաջնջումն իրականացնելու նպատակով «անխուսափելի էր վարչական այն կադրերի վերացումը, որոնք ըստ ամենայնի հակադրվելու էին [այդ միջոցառմանը]: Այդ պատճառով... անհրաժեշտություն է ծագել վերացնելու վերը նշված անձանց»¹²⁴: Միդյաթի մարզի ավագ պաշտոնյային սպանել են «Դիյարբեքիրի նահանգապետի հրամանով... իր մարզի քրիստոնյաներին սպանելու հրամանին դիմադրելու պատճառով»¹²⁵: Տրայիզոնի դատավարության 1919 թ. մայիսի 11-ի նիստի ժամանակ Արդարադատության նախարարության տեսուչ Քենան բեյը վկայություն է տվել այն մասին, որ այդ ժամանակամիջոցում ինքը ճամփորդել է Սամսուն՝ իր սեփական հետաքննությունն անցկացնելու նպատակով, և այնտեղ եղած ժամանակ «տեսել է տեղահանությունների իրականացումը... և Բաֆրայի մարզպետին սպանեցին»¹²⁶:

Իթթիհադական նշանավոր լրագրող Հյուսեյին ընձեռթը (Յալչըն) իր հուշերում գրել է, որ, բացի պատասխանատու քարտուղարներից, Բահաեդին Շաքիրն ինքը «շրջագայում էր արևելյան նահանգներում և հանդիպում նահանգապետների, գավառապետների ու մյուսների հետ» և նրանց տեղեկացնում Կենտրոնական կոմիտեի որոշման մասին¹²⁷: Երիտթուրք ղեկավարների հիմնական դատավարության ընթացքում նախագահող դատավորը նշել է, որ Բահաեդին Շաքիրը հանկարծ նշանակվել է ՀԿ բոլոր ստորաբաժանումների

124 Abidin Nesimi, Yılların İçinden (Istanbul, Gözlem Yayınları, 1977), 39–40.

125 DE/PA-AA/Bo.Kons./Band 169, Մոսկովում Գերմանիայի հյուպատոս Հուլտայի հետազոտող Ստամբուլում ղեսպան Վանգենհայմին, թվագրված 1915 թ. հուլիսի 16:

126 Alemdar, 1919 թ. մայիսի 11:

127 Hüseyin Cahit Yalçın, Siyasi Anılar (Istanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1976), 236.

ընդհանուր հրամանատար¹²⁸: Բացի այդ, նա նշել է, որ «Նախի բեյն ու Բահաեդին Շաքիրը շրջագայել են [Տրապիզոնի] նահանգի կենտրոնական շրջանների որոշ գավառներում՝ հաղորդելով գաղտնի հրամանները», և հարցրել է վկաներին, թե նրանք տեղյակ են դրանից¹²⁹:

Լրացուցիչ վկայություններ կան այն մասին, որ հայերին բնաջնջելու վերաբերյալ Կենտրոնական կոմիտեի որոշումը նահանգներ է ուղարկվել հատուկ սուրհանդակների միջոցով: Հայերի տեղահանությունների ժամանակ Ահմեդ Էսաթը (հետագայում հայտնի Էսաթ Ուրաս անվամբ) Ներքին գործերի նախարարությանը կից Անվտանգության ընդհանուր վարչության երկրորդ բաժանմունքի պետն էր: Զինադադարի ընթացքում նա կապվել է անգլիական օկուպացիոն ուժերի հետ և փորձել նրանց վաճառել այն ժողովի արձանագրությունները, որի ընթացքում կայացվել են հայերի կոտորածների վերաբերյալ որոշումները: Անգլիացիներին նրա հանձնած չորս փաստաթղթերից երկրորդով, որը գրված էր հենց Էսաթի կողմից, բացահայտվում էր այն հանգամանքը, որ հրահանգները տարբեր նահանգապետերի են ուղարկվել սուրհանդակների միջոցով, որոնց հրահանգված է եղել դրանք ընթերցել նահանգապետերի համար, իսկ ապա հետ վերադառնալ ուղերձների բնօրինակներով և ոչնչացնել դրանք¹³⁰:

Ստամբուլում կայացած ռազմական տրիբունալի դատավարության բազմաթիվ մեղադրական ակտերում ու դատավճիռներում կրկնվել է, որ բնաջնջման հրամանը նահանգներ է ուղարկվել հատուկ սուրհանդակների միջոցով: Այսպես, Բայբուրտի դատավարության դատավճռում մի քանի անգամ նշվում է, որ հայերին ոչնչացնելու որոշումը կայացրել էր Կենտրոնական կոմիտեն և նահանգներ փոխանցել հատուկ սուրհանդակի միջոցով: Դատավճռում հստակեցվում է, որ հատուկ ուշադրություն է հատկացվել ոմն Նուսրեթի վկայությանը, որը մահապատժի էր դատապարտվել, և այն ի կատար էր

128 TV, № 3549, 1335թ. [1919թ.] մայիսի 8:

129 Նույն տեղում:

130 FO 371/4172/31307, 1919 փետրվարի 10-ով թվագրված գեկույցը: Այդ փաստաթղթի մասնակի թարգմանության ու վերլուծության համար տես V. N. Dadrian, "The Secret Young-Turk Ittihadist Conference and the Decision for the World War I Genocide of the Armenians," Journal of Political and Military Sociology 22, №1 (Summer 1994), 173-77:

ածվել: Իր հարցաքննությունների ընթացքում Նուսրեթն ասել էր, որ ինքը «ոչ մի հայ չթողնելու» հրաման էր ստացել, և որևէ հայ մնալու զեպարում իրեն «սպառնացել էին մահապատժով»: Այնուհետև պահակախումբ է «ուղարկվել... հատուկ հաղորդագրությամբ»: Նուսրեթին հարցրել են, թե ինչու նա փաստաթղթեր չի ստացել, որոնք ցույց կտային, որ հայերին ապահով ու լավ տեղ է հասցրել: Նա պատասխանել է. «Այդ ժամանակ խնդիրն ավարտված էր»¹³¹:

Բացի այդ, բազմաթիվ վկայություններով հաստատվում է, որ այն հեռագրերը, որոնցով հրամայվում էր կոտորել հայերին, պարունակում էին նաև ընթերցելուց հետո դրանք ոչնչացնելու հրահանգներ: Ինչպես տեսանք վերը, իթթիհադական ղեկավարների դատավարության հիմնական մեղադրական ակտի մեջ հիշվում է, որ Դեր Զորի գավառապետ Ալի Սուաթին հրահանգ է տրվել ընթերցելուց հետո ոչնչացնել իր ստացած հեռագիրը¹³²: Յոզղաթի դատավարության երրորդ նիստի ժամանակ (1919թ. փետրվարի 10-ին) դատավորն ընթերցել է Ոճիրների հետաքննության հանձնաժողովի առջև Բողազլույանի մարզի ղեկավար Քեմալի տված ցուցմունքները: Քեմալը, իր ընթերցելուց հետո, հաստատել է, որ սպանությունների հրամանով հեռագրեր են ուղարկվել¹³³: Այդ նույն հարցը բարձրացվել է դատավարության հետագա նիստերից մեկի ժամանակ (1919թ. մարտի 24-ին), երբ դատախազը նշել է, որ այդ վկայությունը Քեմալը գրել է «երեք թե չորս ժամ դրա մասին մտածելուց» հետո¹³⁴:

«ՏԵՂԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ» ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՐ ԲՆԱՋՆՋՈՒՄ

1915թ. ապրիլից սկսած՝ հայ ազգաբնակչության տեղահանությունը նշանակել է նրանց վերացում, և, ինչպես ցույց է տրված վերը, փաստաթղթերի մեծ մասից այս կամ այն ձևով բխում է այդ հանգամանքը: Հարցին առնչվող բազմաթիվ արձանագրություններ են հղվել իթթիհադական ղեկավարների ետպատերազմական հիմնական դատավարության ընթացքում: Մասնավոր կարևորություն ունեն Իհսան բեյի վկայությունները, ով ետպատերազմական ժամա-

131 Tercüman-ı Hakikat, 1920թ. օգոստոսի 5, Vakit, 1920թ. օգոստոսի 6:

132 TV, № 3540, 1919թ. մայիսի 5: Մեղադրական ակտն ընթերցվել է դատավարության առաջին նիստին՝ 1919թ. ապրիլի 27-ին:

133 Renaissance, 1919թ. փետրվարի 11, 12, İkdam, 1919թ. փետրվարի 11:

134 Alemdar, 1919թ. մարտի 25:

նակաշրջանում ծառայել է իբրև Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության տնօրեն: Իր գրավոր վկայության մեջ Իհսան բեյը հիշում է, որ այն ժամանակ, երբ ինքն աշխատում էր իբրև Քիլիսի մարզի ղեկավար պաշտոնյա, Ստամբուլից Հալեպ գնալիս իր մոտ է եկել Աբդուլլահ Նուրի բեյը և պարզաբանել, որ տեղահանության իրական նպատակը հայերին քնաջնջելն է: «Ես կապի մեջ էի Թալեաթ բեյի հետ և անձամբ նրանից եմ ստացել քնաջնջման հրամանը», բացատրում է Նուրի բեյը. «Երկրի անվտանգությունը կապված է սրան»¹³⁵:

Վեհիպ փաշան, որը 1916 թ. փետրվարին նշանակվել էր Երրորդ բանակի հրամանատար, հետաքննող հանձնաժողովին ուղղված վերոհիշյալ գրավոր իր վկայության մեջ հայտնել է, որ «հայերի կոտորածն ու ոչնչացումը և մարդասպանների կողմից նրանց կողոպուտն ու թալանը Միություն և առաջադիմություն [կոմիտեի] [Կ]ենտրոնական [կ]ոմիտեի կայացրած որոշման հետևանքն էին»: Նա հաստատել է նաև, որ «բռնության այդ գործողությունները, որոնք իրականացվել են» համընդգրկուն ծրագրի համաձայն և հստակ մտադրությամբ, կատարվել են հրահանգներով ու հարկադրանքով և պետական գործիչների վերահսկողությամբ ու վերստուգումներով, ովքեր գործիք էին նախ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի ու նրա լիազոր անձանց ձեռքին, իսկ երկրորդ՝ հենց ՄԱԿ-ի ցանկությունների ու ձգտումների ձեռքին, որն (ՄԱԿ-Ը) անտեսել էր օրենքի ու խղճի [բռնոր նկատառումները]»¹³⁶: Չնայած պետական պաշտոնյաներն անձամբ տեսել կամ լսել են այդ ոճիրների մասին, ոչ մի քայլ չեն արել

135 TV, № 3540, 1919 թ. մայիսի 5. այդ համարում ներկայացված է դատավարության առաջին նիստը, որը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 27-ին:

136 Վեհիպ փաշայի գրավոր ցուցմունքից, որը հանձնվել է «Ոճիրների հետաքննության հանձնաժողովի նախագահին՝ Անվտանգության ընդհանուր [վարչության] գրասենյակում», թվագրված 1918 թ. դեկտեմբերի 5: Ես գործածել եմ այն պատճենը, որ գտնվում է հետևյալ տեղում. ԵՀՊԱ, տուփ 7, գործ H, փաստ. № 171-82: Վեհիպ փաշայի ցուցմունքը վճռորոշ դեր է ունեցել ամբաստանյալների դատապարտման մեջ՝ ոչ միայն իթթիհադական ղեկավարների հիմնական դատավարությունում, այլև նրանց դատերին, ովքեր դատվել են Տրապիզոնում ու Հարպուտում կատարված կոտորածների համար: Ըստ էության, ամբողջ ցուցմունքն ընթերցվել և մտցվել է Տրապիզոնի դատավարության երկրորդ նիստի արձանագրության մեջ, որը տեղի է ունեցել 1919 թ. մարտի 29-ին և ներառել է Հարպուտի դատավարության ժամանակ դատավորի վճիռը:

դրանք կանխելու համար, նույնիսկ շատ դեպքերում հրահրել են դրանք, ավելացրել է գեներալը: Սա ամենակարևոր ցուցմունքներից մեկն էր, որը վկայում էր տեղի ունեցած իրադարձությունների ընդհանուր ծրագրված բնույթի մասին¹³⁷:

Ողբերգության համար կառավարության վարչակազմի անդամների ուղիղ պատասխանատվության Վեհիպ փաշայի բերած ամենահամոզիչ ու հավաստի ապացույցներից մեկը Տրապիզոնի միջադեպերի մասին պատմությունն է, որի ակնատեսն էր եղել այդ շրջանի իթթիհադական պատգամավոր Հազիֆ Մեհմեդ Էմին բեյը. Տրապիզոնում տեղացի շատ հայերի՝ տղամարդկանց, կանանց ու երեխաների, բարձրացրել էին նավերը և ապա տարել-լցրել Սև ծովը:

Օսմանյան Պատգամավորների պալատում այդ հարցի քննարկումների ընթացքում՝ 1918 թ. դեկտեմբերի 11-ին, Մեհմեդ Էմին բեյը, որն ինքն էլ հավատարիմ իթթիհադական էր, հաստատել է, որ ինքը «ակնատեսն է եղել այդ միջադեպին... այսինքն, հայերի հետ կապված միջադեպին», և ավելացրել հետևյալը.

[Այնտեղ էր ռազմական շրջանի մարզային ղեկավարը: Նա հայերին [նավով] Սամսուն ուղարկելու պատրվակով լցրեց նավը, իսկ ապա նետեց ծովը: Ես լսել եմ, որ [Տրապիզոնի նահանգի] նահանգապետ Ջեմալ Ազմին այդ գործողությունն անձամբ է կատարել... [Ստամբուլ] ժամանելուն պես ես ներքին գործերի նախարարին պատմեցի այդ բաների մասին, որ ինքս էի տեսել ու լսել:... Բայց անկարող եղա նրան համոզելու որևէ քայլ ձեռնարկել նահանգապետի նկատմամբ: Ես փորձեցի թերևս երեք տարի, բայց դա լինելու բան չէր: Նրանք պնդում էին, որ [դա պատահել է] պատերազմի գոտում, նման բաներ էին ասում, և [այդ հարցի] հետապնդում կամ եզրակացություն երբեք չեղավ¹³⁸:

Ինչպես կարելի է տեսնել երիտթուրք ղեկավարների դեմ Ստամբուլի հիմնական դատավարության մեղադրական ակտում, ներքին գործերի նախարարի պահանջածը երիտթուրք պաշտոնյաներից այն չէր, որ նրանք կանխեին սպանությունները, ոչ էլ նույնիսկ որ հետաքննեին նման միջադեպերը, այլ նրանց հրամայված էր ճանապարհ-

137 Նույն տեղում:

138 MMZC, երրորդ փուլ, գումարման 5-րդ տարի, հ. 1, 1918 թ. դեկտեմբերի 25, նիստ 24, 300:

ները մաքրել բոլոր դիակներից, որոնցով ծածկված էին դրանք: Տեղական պաշտոնյաներին ուղարկված իր հեռագրերում Թալեաթը նրանց զգուշացնում էր, որ ով գլանա կատարելու դիակները հեռացնելու հրամանները, խստագույնս կպատժվի: Այսպես, 1915 թ. հուլիսի 21-ին Դիյարբեքիի, Մամուրեթյուլազիզի, Ուրֆայի ու Դեր Ջորի նահանգապետերին ու գավառապետերին ուղղված ծածկագրված հեռագրում պահանջվում էր, որ «ճանապարհներին մնացած մեռելներին հարկավոր է հավաքել և նրանց դիակները նետել հովիտներում, լճերի կամ գետերի մեջ, իսկ ճանապարհներին թողած նրանց ունեցվածքը պետք է [վերցնել] ու այրել»: Բացի այդ, մի հրամանի մեջ, «որը Մամուրեթյուլազիզի նահանգապետի կողմից ծածկագրով ուղարկվել է Մալաթիայի գավառապետին... տեղեկացվում [է], որ չնայած [հակառակի մասին] հստակ հրամանների, դեռևս բազմաթիվ դիակներ կան ճանապարհներին», և նահանգապետն իր ենթականերին իրազեկում է, որ «այն պաշտոնյաները, որոնք անփութություն կցուցաբերեն այս հարցում, դաժանորեն կպատժվեն կայսերական Ներքին գործերի նախարարության կողմից»¹³⁹:

Ի լրումն վերոհիշյալ փաստերի, կա նաև անուղղակի ապացույց այն բանի, որ հայերին տեղահանելու որոշումն իրականում կայացվել է նրանց բնաջնջելու լիակատար մտադրությամբ: Օրինակ, ահա մի հեռագիր, որ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ Բահաեդին Շաքիրը 1915 թ. հունիսի 21-ին ուղարկել է Հարպութի [Խարբերդի] իթթի-հադական պատասխանատու քարտուղար Ռեսնելի Նազիմին: Այդ հեռագրում Շաքիրը հարցնում է. «Այդտեղից ուղարկված հայերը լուծարման ենթարկվել [ե]ն (*tasfiye ol-*), այդ վսասակար ու վտանգավոր անձինք, որոնց մասին զեկուցել ես, որ արտաքսվել և հեռացվել են, ոչնչացվել են (*imhá' edil*), թե՛ պարզապես ուղարկվել արտորի ուրիշ մի վայր: Խնդրեմ զեկույցիդ մեջ հստակ եղիր, եղբայր»¹⁴⁰: Այս հեռագիրը գործածվել է իբրև կարևոր վկայություն ոչ միայն իթթիհադականների գլխավոր դատավարության, այլև Մամուրեթյուլազիզում տեղական պաշտոնյաների, իթթիհադական պատասխանատու քարտուղարների և մի քանի այլ դատավարությունների ժամանակ:

139 TV, №3540, 1919 մայիսի 5, դատավարության առաջին նիստի զեկույցը (1919 թ. ապրիլի 27):

140 Նույն տեղում:

Յոզդաթի դատավարության ժամանակ, որն սկսվել է 1919 թ. փետրվարի 5-ին, ընթերցվել և արձանագրությունների մեջ են մտցվել նման բովանդակությամբ այլ հեռագրեր ևս: Տասներկու այդպիսի հեռագրեր, որոնք ներկայացվել են իբրև վկայություն և ընթերցվել դատավարության իններորդ նիստի (1919 թ. փետրվարի 22-ին) ժամանակ, պարունակում են տեղահանությունների նկարագրություններ, որոնցից հստակորեն հասկացվում է, որ դրանք եղել են կոտորածներ ու լայնածավալ սպանություններ: Օրինակ, 1915 թ. օգոստոսի 5-ին հաղորդագրությունների փոխանակման մեջ Բողազլիյանի ժանդարմերիայի հրամանատար Մուստաֆան քանակային հինգերորդ կորպուսի գործող հրամանատար Հալի Ռեջաիին զեկուցել է, որ մի խումբ հայ «չարագործներ», որոնց նախորդ գիշեր հավաքել էին տարածքի քաղաքներից ու գյուղերից, «ուղարկվել են կանխորոշված վայրերը»¹⁴¹: Երբ Ռեջաին խնդրում է հստակեցնել «ուղարկվել են կանխորոշված վայրերը» բառակապակցությունը¹⁴², Մուստաֆան հաղորդում է, որ հայերին սպանել են, «որովհետև նրանք վսաստուններ էին»¹⁴³: Բողազլիյանի ժանդարմերիայի հրամանատար Հույուսիի հեռագիրը, որն ընթերցվել է դատավարության տասներկուերորդ նիստին, պարունակում է միննույն բառապաշարը և հակիրճ կերպով բացատրում, որ «տեղահանություն» տերմինը «նշանակում է ոչնչացում»¹⁴⁴:

Գերմանիայի դեսպանության ու հյուպատոսարանների և հատկապես գերմանացի սպաների դաշտային զեկույցների մեջ կարելի է հանդիպել բազմաթիվ հատվածների, ուր ասվում է, որ երիտթուրք ղեկավարները կազմել և իրականացրել են մի ծրագիր, որից, թվում էր, պետք է պարզապես բխեր հայ ազգաբնակչությանը տեղահանելու հրամանը, մինչդեռ իրականում այն նպատակաուղղված է եղել նրա բնաջնջմանը¹⁴⁵: 1915 թ. հունիսի 30-ի իր զեկույցի մեջ Գերմանիայի

141 ԵՀՊԱ, տուփ 17, գործ H, փաստ. №616:

142 ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. №511:

143 Նույն տեղում: Դատավարության իններորդ նիստին անսլոդ հավելյալ տեղեկությունների համար տե՛ս Renaissance, Yeni Gün և İkdam լրագրերի 1919 թ. փետրվարի 23-ի համարները:

144 ԵՀՊԱ, տուփ 21, գործ M, փաստ. №506: Renaissance, 1919 թ. մարտի 7:

145 Երկու օրինակի համար տե՛ս գերմանական արխիվները. Grosses Hauptquartier 194, Türkei 41/1, Վոլֆ-Մեթերնիխի հեռագիրը արտաքին գործերի նախարար Յագոֆին, թվագրված 1916 թ. հուլիսի 1, և DE/PA-AA/R 14094,

հյուպատոս Մորդոմանն իր վերադասներին վերապատմել է օսման-յան ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հետ մի խոսակցություն, որի ընթացքում Թալեաթը շատ պարզորոշ կերպով բացատրել է տեղահանությունների նախատեսված նպատակը: Տեղահանության վերաբերյալ Թալեաթը նրան ասել է, որ «այն, ինչի մասին խոսում ենք այստեղ... հայերի բնաջնջումն է»¹⁴⁶: Դրանից բացի, հատուկ կարևորություն է ներկայացնում գերմանացի սպա Շտանգեի 1915 թ. օգոստոսի 23-ին «հույժ գաղտնի» մակագրությամբ ուղարկված զեկույցը: Շտանգեն, որը 1914-1915 թթ. Բահաեդին Շաքիրի հետ ծառայել է ՀԿ-ում, իր անձնական դիտարկումների հիման վրա գրել է, որ հայերի ո՛չ տեղահանությունները, ո՛չ կոտորածները ռազմական նպատակներով չեն իրագործված, ոչ էլ պատերազմական պայմանների հետևանքով, այլ «այստեղ գործ ունենք երկար ու լավ մտածված ծրագրի հետ», որը գործի է դրվել ակնհայտորեն ի պատասխան որոշ հատուկ նշանակություն ունեցող ի պատերազմական նպատակների: «[Հայ ազգաբնակչությանը] տեղահանելու ու բնաջնջելու որոշումը կայացրել է Երիտթուրքերի կոմիտեն Ստամբուլում», և համակարգել է Բահաեդին Շաքիրը Էրզրումում, ավելացրել է Շտանգեն¹⁴⁷:

Բազմաթիվ պատմաբաններ բարձրացրել են Հատուկ կազմակերպության խաղացած վճռորոշ դերի հարցը: Հիմնական պնդումն այն է, թե հայերի բնաջնջման մեջ ՀԿ կամ դրա զինված հրոսակախմբերի (չեթե) ուղղակի մասնակցության որևէ ապացույց չկա: Այդ փաստարկը կարևոր է Հայոց ցեղասպանությունը կենտրոնական կառավարության կողմից ծրագրված քաղաքականություն չլինելն ապացուցելու տեսանկյունից: Եթե իսկապես, ինչպես այդ պնդումներն են նշում, հնարավոր չէ ցուցադրել ՀԿ-ի և դրա զինված խմբերի ուղիղ դերը Հայոց ցեղասպանության մեջ, կարելի է հեշտությամբ ժխտել կենտրոնական կառավարության հիմնական դերն այդ կոտորածներում: Կարող են ներկայացնել, որ սպանությունները տեղական կառույցների ձեռքի գործն են եղել, որոնք վերահսկողությունից

Շոյբներ Ռիխտերի զեկույցը, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 4:

146 DE/PA-AA/Bo.Kons./Band 169, Գլխավոր հյուպատոս Մորդոմանի զեկույցը, թվագրված 1915 թ. հունիսի 30:

147 DE/PA-AA/Bo.Kons./Band 170, Շտանգեի զեկույցը, թվագրված 1915 թ. օգոստոսի 23:

դուրս էին: Այս և նման փաստարկները կքննարկվեն հաջորդ բաժիններում, և փորձ կարվի ցույց տալու, թե Ներքին գործերի նախարարության փաստաթղթերն ինչ տեղեկություններ են պարունակում այդ հարցի վերաբերյալ:

7

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԲՆԱՋՆՋՄԱՆ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Չնայած արխիվային գրանցումներն անլացնելու բոլոր փորձերին, Օսմանյան վարչապետական արխիվի Ներքին գործերի նախարարության բաժնում պահպանված փաստաթղթերը, ինչպես ասվել է սույն հետազոտության սկզբում, բավական են՝ ցույց տալու համար պատերազմի ժամանակ հայերի դեմ օսմանյան թուրքիայի ձեռնարկած միջոցառումների առանձնահատուկ բնույթը: Արմատախիլ արվելով և տեղահանվելով Անատոլիայից՝ հայերը գրկվելու էին կենցաղային նույնիսկ ամենատարրական պայմաններից: Ինչպես ցույց ենք տվել 6-րդ գլխում, հայ ազգաբնակչությանը վերացնելու հրամանները նահանգային ու մարզային իշխանություններին ուղարկվել են ոչ թե կառավարական սովորական խողովակներով, այլ հանձնվել են առձեռն, իթթիհադական հատուկ կատարածուների միջոցով: Եվ, այդ պատճառով, պաշտոնական թղթագրության մեջ թեև դժվար է գտնել հրամանների բնօրինակները, հայերի դեմ ուղղված քաղաքականության իրականացման գործում պետական մեքենայի բազմաթիվ ճյուղերի ու գործակալությունների ներգրավվածությունն անխուսափելիորեն թղթերի երկար շարան է թողել օսմանյան պետական արխիվում:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՔ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ, ՈՐ ՁԵՂՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿ ԵՂԵԼ Է ԲՆԱՋՆՋՈՒՄԸ

Անկարա

Ամենահստակ հաղորդագրությունն այն մասին, որ հայերի նկատմամբ կառավարության քաղաքականության նպատակը եղել է բնաջնջումը, գտնում ենք ներքին գործերի նախարարի 1915 թ. օգոստոսի 29-ին Անկարա ուղարկած Թալեաթի հեռագրում. «Հայկական հարցն արևելյան նահանգներում լուծված է», հայտարարում է նա:

«Կարիք չկա ավելորդ վայրագություններով (fuzuli mezâlim) արատավորելու երկիրն ու կառավարության պատիվը»¹: Թալեաթի ասածից ակնհայտորեն բխում է, որ մինչև 1915 թ. օգոստոսի վերջը այդ ոճիրներն իրոք կատարվել էին: Այդ փաստաթուղթն ինքնին արդեն պետք է վերջ դրած լիներ այդ հարցի շուրջ երկարատև ու անհարկի բանավեճերին:

Նույն այդ հեռագրում Թալեաթը, թեև հպանցիկորեն, այնուամենայնիվ նշում է բողոքի սկզբնական պատճառը. «Կենտրոնական կառավարությունը մեծապես վշտացած է մասնավորապես այն ձևից, որով հայերը հարձակումների են ենթարկվել Անկարայի մոտ մի վայրում՝ այն մարդկանց ընդհանուր վարչական անձեռնհասության պատճառով, ում վստահված էին տեղահանությունները, և [տեղական] բնակչության կենդանական ազդակների սանձազերծման ու այդ տարածքում նշանակված ժանդարմների գործած բռնաբարությունների ու գողությունների պատճառով»:

Թալեաթն, անկասկած, խոսում է Անկարա քաղաքից դուրս հայ կաթոլիկների ոչնչացման մասին. մի լուր, որը, ի տարբերություն ավելի հեռավոր վայրերում տեղի ունեցած կոտորածների, արագ հաղորդվել է Ստամբուլ հայ երկաթուղայինների կողմից: Հայկական մի աղբյուրի համաձայն, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կառավարությունները և հատկապես Հոմի կաթոլիկ եկեղեցին այդ դեպքի կապակցությամբ իրենց բողոքն են հայտնել օսմանյան կառավարությանը²: Բացի այդ, տվյալ պահին Թալեաթն զբաղված էր Գերմանիային տված խոստումների իրականացմամբ, որը թուրքիայի վրա գնալով ավելի ու ավելի մեծ ճնշում էր բանեցնում կաթոլիկներին չտեղահանելու հարցով:

Տեղահանությունների դաժան պայմանները թեթևացնելու գործում մինչ այդ իր միջամտության տապալումից հետո Բեռլինն օսմանյան կառավարությանը 1915 թ. հուլիսի 4-ին նոտա էր հանձնել, որպեսզի պատասխանատու չնկատվեր «թուրքերի այդ դաժան միջոցառումների մեջ» և «ի վիճակի լինել դիմակայելու իրենց թշնա-


1 BOA/DH.ŞFR, №55/290, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 29:
2 Անկարայի կաթոլիկ ազգաբնակչության բնաջնջման ակնատեսի վկայությունը վերաշարադրված է հետևյալ տեղում. Grigoris Balakian, Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide, 1915-1918, թարգմ. Peter Balakian և Aris Sevag (New York, Alfred A. Knopf, 2009), գլուխ 13:

միսերի հետագա հարձակումները»: Այդ նոտայով Ստամբուլը տեղեկացվում էր նաև, որ, թեև Գերմանիայի կառավարությունը հավանություն էր տվել «հայերի տեղահանությանը, որը կատարվել էր ռազմական անհրաժեշտության հետևանքով և խոտվությունների կանխարգելման նպատակով, իբրև պատշաճ [միջոցառում]», տեղահանվածներին «հարկավոր էր պաշտպանել թալանից ու կողոպուտից»³:

Նոտայի մեջ հաստատվում էր կոտորածների լուրերի ստացումը և նշվում.

Ցավալի է, որ, համաձայն մեր դեսպանությանը հասած լուրերի, տեղական իշխանություններն անկարող են եղել կանխելու այդպիսի դեպքերը, որոնք ստահոգիչ են բոլոր առումներով: Թշնամական ուժերը կշահարկեն այդ իրադրությունը՝ հայերի մեջ գայրույթ ու վրդովմունք հարուցելու նպատակով... Իբրև Թուրքիայի բարեկամ ու դաշնակից տերություն, Գերմանիայի կառավարությունն իրեն պարտավորված է համարում Բարձր դռան ուշադրությունը հրավիրելու ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ ապագայում մեր փոխադարձ շահերի մեջ հնարավոր բացասական հետևանքների վրա... Մեր դեսպանությունն անհրաժեշտ է գտնում անմիջապես և վճռական հրամաններ տալու այն մասին, որ պաշտպանվեն արտագաղթել ստիպված հայերի կյանքն ու գույքը՝ սկսած այն կետից, երբ նրանք տեղափոխվում են, [մինչև] իրենց բնակության նոր վայրերը [հասնելը]⁴:

Նոտան ստանալուց կարճ ժամանակ անց բռնկվեց «Դիյարբեքի միջադեպը» (որի մասին կխոսվի ստորև), և Գերմանիան սկսեց օսմանյան Բաճր դռան գործերին միջամտելու «ավելի հրատապ» փորձեր ձեռնարկել⁵: Դրանով հանդերձ, շարունակվող կոտորածների մասին լուրերը Բեռլինին ստիպեցին օգոստոսի 9-ին ուղարկել երկրորդ՝ փոքր-ինչ ավելի խիստ նոտան. «Իրենց տներից տեղա-



Նկար 7.1. Օսմանյան 55/290 փաստաթուղթը. Ներքին գործերի նախարար Թավելաթ փաշայի 1915թ. օգոստոսի 29-ի հեռագիրը, ուր գրված է: «Արևելյան նահանգներում Հայկական հարցը լուծված է: Կարիք չկա արատավորելու ազգն ու կառավարությունը հետագա վայրագություններով [fuzull mezâllm]:»

3 DE/PA-AA/R 14086, Գերմանիայի դեսպան Վանգենհայմը Բարձր դռանը, զեկույց կանցրել էր Բեռլան Հոլվեգին, թվագրված 1915թ. հուլիսի 7:

4 Նույն տեղում:

5 DE/PA-AA/R 14093, Գերմանիայի Ռայխստագի համար Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության պատրաստած զեկույցը, թվագրված 1916թ. սեպտեմբերի 27:

հանված հայ ժողովրդի հետևողական ջարդը վերջին շաբաթներին այնպիսի չափերի է հասել, որ հրամայական պահանջ է թվում մեր կողմից կրկին ու հարկադրված հանդես գալը կոպիտ այդ գործողության դեմ, որը կառավարությունը ոչ միայն հանդուժել, այլև ակնհայտորեն օժանդակել է՝ հատկապես, որ տարբեր վայրերում այլ ազգությունների ու դավանանքի քրիստոնյաները նույնպես այլևս չեն խնայվում»⁶: Ավելին, «Գերմանիայի դեսպանը ցավով ստիպված է որոշել, որ, համաձայն անկողմնակալ և անկասկած հուսալի աղքյուրներից ստացած տեղեկությունների, տեղական իշխանությունների կողմից կանխվելու փոխարեն, նման բնույթի միջադեպերն այնպիսի ձևերով են պարբերաբար ուղեկցել հայերի վտարումներին, որ նրանց մեծ մասը մահացել է մինչև իրենց նշանակման վայրեր հասնելը... որոշ վայրեր[ով]... բոլոր քրիստոնյաները, անկախ իրենց ազգությունից կամ դավանանքից, արժանացել են միևնույն ճակատագրին»⁷:

Նոտան առձեռն հանձնվել է Թալեաթին, և դրան հաջորդած խոսակցության ընթացքում Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարը խոսք է տվել, որ կկանխի նման միջադեպերը, և որ Ստամբուլից ոչ մի հայ չի տեղահանվի: Իրականում, սակայն, ոչինչ չի փոխվել: Շարունակվող այդ իրադրությանն ի պատասխան, Գերմանիայի դեսպանն առանձին-առանձին հանդիպել է մեծ վեզիրի ու ներքին գործերի նախարարի հետ և յուրաքանչյուրի վրա ճնշում բանեցրել՝ արդյունքի հասնելու նպատակով: Օսմանյան պետական այրերն իրենց հերթին հայտարարել են, որ հակահայ միջոցառումներն ավարտվել են⁸:

6 DE/PA-AA/R 14087, Բարձր դռանը Գերմանիայի դեսպան Հոհենլոխե-Լանգենբուրգի զեկույցը կանցլեր Բեթման Հոլվեգին, թվագրված 1915 թ. օգոստոսի 12: Օգոստոսի 9-ով (1915 թ.) թվագրված գրառումը ներկայացված է իբրև զեկույցի հավելված:

7 Նույն տեղում:

8 «Վերաբնակեցման ընթացքի վերաբերյալ նոր դժբախտ լուրերից հետո դեսպանը՝ իշխան Հոհենլոխեն, օգոստոսի 8-ի կցված հուշագրով նորոգել է ուղարկելու եղանակի նկատմամբ իր բողոքը: Անսի վերջին [1915 թ. օգոստոսին] կրկին, ավելի հրատապորեն կներկայացվի մեծ վեզիրի առջև: Բարձր դուռը հայտարարել է, որ հայերի դեմ միջոցառումներին վերջ կտրվի...»: (DE/PA-AA/R 14093, Գերմանիայի Ռայխստագի համար Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության պատրաստած զեկույցը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 27):

Օգոստոսի 31-ին, երբ տեղի էին ունենում այս քննարկումները, Թալեաթն այցելել է Գերմանիայի դեսպանություն՝ հետը վերցնելով մի քանի հեռագրերի թարգմանություններ, որոնք նահանգային իշխանություններն էին ուղարկել: Գերմանիայի դեսպանի հետ իր խոսակցության ընթացքում Թալեաթը կրկնել է իր պնդումը, թե հակահայ միջոցառումները դադարեցվել են՝ արտաբերելով այժմ հանրահայտ այս նախադասությունը. «Հայկական հարցն այլևս գոյություն չունի (La question arménienne n'existe plus)»⁹: Միևնույն հավաստումը նա արել էր երկու օր առաջ (օգոստոսի 29-ին) Անկարա ուղարկած հեռագրում:

Թալեաթի բերած հեռագրերից մեկը, որից մեջբերում է արված հինգերորդ գլխում, կարծես թե շարադրված է գերմանացիներին համոզելու նպատակով: Հեռագրում բացատրվում է, որ հայերի տեղահանությունների նպատակը «հավաստիանալն էր, որ այդ համայնքը [հայերը] այլևս ի վիճակի չի լինի կառավարության դեմ նախաձեռնություններ ու գործողություններ ձեռնարկելու և այնպիսի մի դրության կրելի, որ անկարող կլինի հետապնդելու Հայաստանի [անկախ] կառավարության իր ազգային իդձերը»: Տեղահանությունների նպատակը «վերոհիշյալ երևելի անձանց ու անհատների բնաջնջումը» չէ: Բացի այդ, «բողոքական ու կաթոլիկ հայերը չեն տեղահանվելու»¹⁰: Ինչպես ցույց կտրվի ստորև բերվող օրինակներով, Թալեաթը օգոստոսի 31-ին (Գերմանիայի դեսպանությունում իր խոսակցության օրը) մեկ այլ հեռագիր է ուղարկել Անկարա՝ պահանջելով հետաքննություն սկսել ստամբուլահայ նշանավոր մտավորական բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանի [Ռուբեն Սևակի] ու նրա չորս ուղեկիցների սպանության գործով:

9 DE/PA-AA/R 14087 և DE/PA-AA/Bo.Kons., h. 170, Բարձր դռանը Գերմանիայի դեսպան Հոհենլոխե-Լանգենբուրգի զեկույցը կանցլեր Բեթման Հոլվեգին, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 4: Օգոստոսի 31-ի գրույցի ընթացքում Թալեաթի խոսքերն արձանագրվել են Գերմանիայի դեսպանության մեկ այլ պաշտոնյայի՝ Գյոլփերտի կողմից ևս (DE/PA-AA/Bo.Kons., h. 170):

10 BOA/DH.SFR, № 55/292, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուդավենդիգարի (Բուրաս), Անկարայի, Քոնյայի, Իզմիրի, Ադանայի, Ուրֆայի, Հալեայի, (Դեր) Ջորի, Սվազի, Գյութահյայի, Քարեսիի (Բալիքեսիր), Նիդդեի, Մամուրեթյուվազի, Դիյարբեքիրի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Էրզրումի ու Կեսարիայի նահանգներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 29:

ԴԻՅԱՐԲԵՔԻՐԸ ԵՎ ԼԱՅԱՆԳԱՊԵՏ ՌԵՇԻԴԸ

Իբրև երկրորդ օրինակ կարելի է բերել փաստաթղթերի մի երկրորդ խումբ, որոնցից երևում է, որ հայերի տեղահանությունների իրական նպատակը բնաջնջումն է եղել: Այդ խումբը բաղկացած է չորս հեռագրից, որ Թալեաթն ուղարկել է Դիյարբեքիի նահանգապետ դր. Ռեշիդին: Դրանցից առաջինում, որն ուղարկվել է 1915 թ. հուլիսի 12-ին¹¹, Թալեաթը նահանգապետին տեղեկացրել է, որ ինքը լուրեր է ստացել այն մասին,

... որ վերջին օրերին կոտորածներ են ծրագրվել նահանգի հայերի, ինչպես նաև մյուս քրիստոնյաների դեմ՝ առանց աղանդի ու դավանանքի տարբերակման... և որ Մերդինում հայ եպիսկոպոսը և հայ ու քրիստոնյա մյուս բնակչությունից մոտ 700 մարդ քաղաքից դուրս են տարվել և ոչխարների պես մորթվել ինչ-որ մարդկանց կողմից, որոնք եկել են Դիյարբեքիից: Ըստ հաշվարկների, այդ կոտորածների ընթացքում մինչև հիմա մոտ 2.000 մարդ է սպանվել, և վախ կա, որ եթե դրա [այդ երևույթի] համար լուրջ ու վճռական լուծում չգտնվի, շրջակա նահանգների մահմեդական ազգաբնակչությունը ոտքի կկանգնի և կկոտորի քրիստոնյա ամբողջ ազգաբնակչությանը:

Այդ պատճառով, Թալեաթը կարգադրում է.

Քանի որ հայերի նկատմամբ որդեգրած կարգապահական ու քաղաքական միջոցառումները որևէ կերպ չեն տարածվում մյուս քրիստոնյաների վրա, պետք է անմիջապես վերջ տրվի նման ղեկավարին, որոնք ծայրահեղ բացասական ազդեցություն կու-

նենան հանրային կարծիքի վրա և որոնք պատահականորեն սպառնում են մասնավորապես քրիստոնյաների կյանքին: Խնդրեն ստույգ տեղեկություններ հաղորդեք ներկա իրադրության մասին¹²:

Այդ հեռագիրն իրականում գրվել է ոչ թե Թալեաթի մղումով, այլ խթանվել է Գերմանիայի դեսպանության կողմից, որը կայսրությունով մեկ սփռված իր հյուպատոսություններից կանոնավոր ստացվող հաղորդագրությունների պատճառով ցանկանում էր ճշում գործադրել օսմանյան վարչակազմի վրա՝ դադարեցնել տալու համար ծավալվող սպանությունները: Համաձայն այդ շրջանից եկած հյուպատոսական հաղորդումների, նահանգապետ Ռեշիդը ժանդարմերիաքի տեղական միավորումներին հրամայում էր կոտորել քրիստոնյաներին: Վախ կար, որ, եթե կանխարգելիչ միջոցառումներ չձեռնարկվեին, «ցածր դասակարգերը» նույնպես կմիանային այդ գործողություններին: Այդ դեպքերի վերաբերյալ հյուպատոսության տեղեկությունների հիմնական աղբյուրներից մեկը Մերդինի գավառապետն էր, որն այդ ժամանակ Դիյարբեքիում էր: Գերմանիայի դեսպանությունն այդ հաղորդագրությունները հանձնել է ուղիղ Թալեաթ ֆաշային և պահանջել, որ վերջինս կանխարգելիչ քայլեր ձեռնարկի: Եվ իրոք, օսմանյան ներքին գործերի նախարարն իր հեռագրերում գործածել է միևնույն ձևակերպումները, որոնք գործածված էին հյուպատոսական հաղորդումների մեջ. դրանցից են քրիստոնյաներին «ոչխարների պես մորթելու» նկարագրությունը, ինչպես նաև զոհերի թվերի կրկնությունը:

Ցույց տալու համար գերմանական հյուպատոսների և Թալեաթի գործածած արտահայտությունների նմանությունը, բերենք մի օրինակ գերմանական հյուպատոսի զեկույցից.

Դիյարբեքիի նահանգապետ Ռեշիդ բեյը իր նահանգի քրիստոնյաների մեջ սուղեզնում է հետախույզ շան նման. հատուկ Դիյարբեքիից ուղարկված ժանդարմների միջոցով նա Մերդինում մի գիշերվա մեջ հավաքել է 700 քրիստոնյայի (մեծամասամբ հայերի), որոնց մեջ նաև հայ մի եպիսկոպոսի, և նրանց

11 Սա ամենահայտնի էր և արդեն իսկ վերարտադրվել է բազմաթիվ այլ աշխատություններում: Հեռագիրն առաջին անգամ երևան է եկել հետևյալ տեղում. Devlet Arşivleri Genel Müdürlüğü, Osmanlı Belgelerinde Ermeniler, 1915-1920, փաստ. №71, էջ 69: Փաստաթուղթը, որը նշված է №54/406 կատալոգում, նշված չէ Օսմանյան վարչապետական արխիվի կատալոգներում: Ծածկագրերի վարչության փաստաթղթերի համարակալումը 54/405-ից ցատկում է 54/407-ի: Եթե Թուրքիայի պետական արխիվների գլխավոր վարչությունն այդ փաստաթուղթը հրապարակած չլիներ վերոնշյալ գրքում, ոչ ոք չէր իմանա դրա գոյության մասին: Անպատասխան է մնում այն հարցը, թե փաստաթուղթն արխիվային կատալոգից արդյո՞ր դիտմամբ է հանվել:

12 BOA/DH.SFR, №54/406, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 12:

մորթել է ոչխարների պես: Ռեշիդ բեյը շարունակում է արյունոտուշտ իր արարքները անմեղ մարդկանց հանդեպ, որոնց թիվը, ինչպես վստահեցնում է ինձ գավառապետը, ներկայումս անցնում է 2.000-ից¹³:

Այս զեկույցից կարելի է հանգել այն եզրակացության, որ Թալեաթի «հանրային կարծիքի» վկայակոչումն ակնարկում է գերմանացիների դժգոհությունը և իր վրա բանեցրած ճնշումը: Թալեաթի հեռագրի ձևակերպումներն աներկբայորեն հստակ են: Հեռագրում նշված մարդիկ, որոնցից ոմանք պետական աշխատողներ էին, սպանվում էին նահանգապետի կարգադրությամբ, սակայն դա չէր այն հարցը, որի դեմ ներքին գործերի նախարարն առարկություն ուներ. Թալեաթի բողոքն այն մասին էր, որ հատուկ հայերի համար ձևակերպված քաղաքականությունն իրականացվում էր մյուս քրիստոնյաների նկատմամբ ևս, և նրա պահանջն այն էր, որ հայերին սպանելու գործողություններն այնպես չկատարվեին, որ տարածվեին քրիստոնյա մյուս բնակիչների վրա ևս:

Եվ, սակայն, Դիյարբեքիի տեղահանություններն ու կոտորածները շարունակել են ներառնել բոլոր քրիստոնյաներին: Դրան ի պատասխան, տասն օր անց (1915թ. հուլիսի 22-ին) Թալեաթը նահանգապետ Ռեշիդին է ուղարկել «գաղտնի, նայել անձամբ» մակագրությամբ երկրորդ հեռագիրը, որի մեջ բավական հստակ հայտարարել է, որ բնաջնջման քաղաքականությունը պետք է սահմանափակվի հայերով և չտարածվի քրիստոնյա մյուս խմբերի վրա: «Չնայած նահանգին տրված ամուր և հստակ հրահանգներին», գրում է նա, «լսում ենք, որ գործողություններ են ձեռնարկվել հայերի և քրիստոնյա բոլոր մյուս [խմբերի] դեմ անխտիր, և որ այս իրադրությունը, որը շարունակական բողոքների պատճառ է դարձել, այժմ տարածվում է հարևան նահանգներում: Այս իրադրության շարունակումը... որն ապագայում կառավարությանը կդնի ծանր վիճակի մեջ, բոլորովին անընդունելի է»¹⁴:

13 DE/PA-AA/Bo.Kons., h. 169, Մոսուլում Գերմանիայի հյուպատոս Հուշտայնի զեկույցները դեսպան Վանգենհայմին, թվագրված 1915թ. հուլիսի 10 և 15, և Գերմանիայի դեսպանի կողմից Թալեաթին առձեռն հանձնված նոտան (ֆրանսերենով), թվագրված 1915թ. հուլիսի 12:

14 BOA/DH.SFR, № 54-A/73, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915թ. հուլիսի 22:

Երկրորդ հեռագիրը ևս նկատելի արդյունք չի ունեցել: Դիյարբեքիի նահանգապետը շարունակել է հալածել նահանգի բոլոր քրիստոնյա բնակիչներին՝ առանց խտրություն դնելու հայերի և մյուսների միջև: Դրա հետևանքով օգոստոսի 2-ին Թալեաթն ուղարկել է երրորդ հեռագիրը՝ նահանգապետ Ռեշիդին մեկ անգամ ևս տեղեկացնելով, որ, ըստ լուրերի, «չնայած ամուր և հստակ հրահանգներին, նահանգում որոշ զինված հրոսակախմբեր շարունակել են հալածել ու սպանել քրիստոնյաներին», և որ, «ինչպես արդեն իսկ հայտարարվել է, այդ իրադրության շարունակումը բացարձակապես անընդունելի է... Չպետք է մոռանալ, որ իբրև ներկայիս կառավարության պատասխանատու ներկայացուցիչ, դուք պարտավոր եք պատեղից ստացված հրամաններն ու հրահանգները կատարել անվերապահորեն և [դրանց իմաստի] մեր մեկնաբանության համաձայն»: Թալեաթը եզրափակում է հստակ նախագրուշացմամբ այն մասին, որ նահանգապետը պատասխանատու է համարվելու «բոլոր գործողությունների ու միջադեպերի համար, որոնց մեջ ներգրավված են եղել ավագակները կամ զինված ավագակախմբերը»¹⁵:

Խիստ կարևոր է այն հանգամանքը, որ երբևէ քրեական հետաքննություն չի իրականացվել Ռեշիդի նկատմամբ, որը, սոսկ հայերի փոխարեն բոլոր քրիստոնյաների նկատմամբ տեղահանությունների ու սպանությունների գործողություններ իրականացնելու և երկու հազարից ավելի մարդու «ոչխարների պես մորթելու» հրաման տալու համար բացեիքաց մեղադրվել է կառավարության հրամաններին հակառակ գործելու մեջ: Նրա նկատմամբ իրավական որևէ տույժ չի կիրառվել: Դրանից թերևս ավելի կարևոր է այն փաստը, որ Մերդինի գավառապետ Հիլմին, որն այդ դեպքերի մասին տեղեկացրել էր Գերմանիայի հյուպատոսությանը և ընդդիմացել Ռեշիդի ոճիրներին, հետագայում ենթարկվել է կառավարական տույժի՝ հեռացվելով իր պաշտոնից¹⁶:

Ավելին՝ Ռեշիդի ենթակայության տակ աշխատող պաշտոնյաները պարզևատրվել են Դիյարբեքիում ու դրա շրջակայքում հայերի դեմ կառավարության քաղաքականությունն իրականացնելու գոր-

15 BOA/DH.SFR, № 54-A/248, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915թ. օգոստոսի 2:

16 Gaunt, Massacres, Resistance, Protectors, 170.

ծում դրսևորած հաջողության համար: 1915թ. հուլիսի 28-ին «ուսուկանության ու հանձնաժողովների որոշ անդամներ, որոնք կարևոր դեր են կատարել Դիյարբեքիի նահանգում հայկական հեղափոխական կոմիտեների առաջնորդներին ու մյուս անդամներին բռնելու մեջ... ներբողվեցին, դրամական պարզևատրումներ ու զովասանագրեր ստացան»¹⁷:

Ինչ վերաբերում է Ռեշիդին, միակ հաշվետվությունը, որ կառավարությունը պահանջել է նրանից, վերաբերել է սպանված հայերից առգրաված ոսկեղենին ու մյուս ունեցվածքներին, որոնք նա խոստացել էր ուղարկել Ստամբուլ: Այդ առիթով նահանգապետին «հարցով անձամբ զբաղվելու» պահանջ էր ուղարկվել: 1915թ. հոկտեմբերի 6-ի հեռագրի մեջ, որը նշված շարքում չորրորդն է, Թալեաթը Ռեշիդին տեղեկացրել է, որ «խորհրդարանի պատգամավորների կողմից հաղորդվել է, որ տեղահանված և ճանապարհին կողոպտված հայերին պատկանող փողը, ոսկեղենն ու մյուս ունեցվածքները չեն կորել, այլ ապահով կերպով ուղարկվել են մայրաքաղաք՝ ձեր նախաձեռնած միջոցառումների շնորհիվ: Խնդրեմ զեկուցեք [արժեքավոր իրերի] քանակի և դրանց արձանագրման եղանակի մասին»¹⁸: Թալեաթի մտահոգությունը կոտորածի ենթարկված հայերի ճակատագիրը չէր, այլ նրանց արժեքավոր իրերը: Ո՛չ անարդարության, ո՛չ արժեքներն իրենց օրինական տերերին վերադարձնելու կարիքի զգացողություն չի հայտնվել և նույնիսկ չի առաջարկվել հեռագրի որևէ կետում:

Դիյարբեքիում կատարված յուրացումների հետաքննությունից հետո Ռեշիդը տեղափոխվել է Անկարայի նահանգ և մի դրյակ գնել Բոսֆորի ափին, սակայն, երբ Թալեաթը պարզել է անշարժ գույքի այդ գնումը, Ռեշիդը հեռացվել է նահանգապետի պաշտոնից: Սրա մասին խիստ հակիրճ արտահայտվել է լրագրող Սյուլեյման Նազիֆը. «Դրանից ավելի մտահոգիչ է այն փաստը, որ թեև նրան համարում էր և նրա մասին խոսելիս անվանում «մարդասպան», Թալեաթ փաշան Ռեշիդին հեռացրեց «գող» եղած լինելու պատճառով»¹⁹:

17 BOA/DH.EUM.MEM, № 2042/67/31/1333.N.15, 1915թ. հուլիսի 28:

18 BOA/DH.SFR, № 56/315, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915թ. հոկտեմբերի 6:

19 Hadisat, 1919թ. փետրվարի 8:

Տասնամյակներ անց ի հայտ է եկել այս պատմությունը լրացնող հավելյալ տեղեկություն, որը լույս է սփռում հեռագրերում Թալեաթի մտահոգության առարկաների՝ ոսկեղենի ու թանկարժեք քարերի ճակատագրի վրա: Դիյարբեքիի, Սղերդի ու Մերդինի նահանգներում բնակվող ռաման ցեղի մի անդամի համաձայն, Ռեշիդը հավաքել է այդ ցեղի անդամներին և ասել.

Ես ձեզ իրար հետևից հայերի շարայուներ կտամ... Ինչքան ոսկի, փող, ոսկեղեն ու արժեքավոր իրեր նրանք ունեն՝ մենք միասին կվերցնենք: Նրանց Տիգրիսի վրայով կբերեք քելեքներով (kelek. կենդանու մաշկից պատրաստված ջրի երեսին մալու փչովի հարմարանք, լաստանավ): Երբ կհասնեք այնպիսի տեղ, որտեղ ոչ ոք չի կարողանա տեսնել կամ լսել, կսպանեք նրանց բոլորին և [մարմինները] կզցեք Տիգրիսի մեջ: Կպատռեք նրանց փորերը, քարերով կլցնեք, որպեսզի ջրի մակերևույթին չմնան: Ձեր գտած ամբողջ ունեցվածքը ձեր ժողովրդի համար է: Ոսկու, փողի ու ոսկե զարդերի կեսը ձերն է, իսկ մյուս կեսը կբերեք ինձ, որպեսզի տամ Կարմիր Մահիկին: Սակայն ոչ ոք չպետք է լսի կամ իմանա այս գաղտնիքի մասին: Եթե այդ գաղտնիքը երբևէ քացահայտվի, դուք էլ, ես էլ կկործանվենք²⁰:

ԲՈՂԱԶԼԸՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵԿԱՎԱՐ ԶԵՄԱԼԸ

Յոզղաթի դատավարության ժամանակ, որն սկսվել էր 1919թ. փետրվարի սկզբին Ստամբուլի ռազմական տրիբունալում, զանազան նիստերի ընթացքում, մի շարք հեռագրեր են ներկայացվել՝ որոնք ապացույցներ Քեմալի դեմ, որը Բողազլըյանի ու դրա շրջակայքի համար պատասխանատու մարզային պաշտոնյան էր: Իր մարզում հայերի կոտորածներ կազմակերպելու համար Քեմալը հեռագրային դատապարտվել և 1919թ. ապրիլի 10-ին մահապատժի է ենթարկվել Ստամբուլի Բեյազիդ հրապարակում: Այդ հեռագրերը քաջուցիչ կերպով հաստատում են իմ պնդումները:

20 Այն անձի ինքնությունը, որը պատմել է այս պատմությունը և ցանկանում է մնալ անհայտ, հայտնի է հեղինակին: Այստեղ բերված իրադարձությունները գրի են առնվել 1983 թվականին՝ «Haver Delal» վերնագրով (անտիպ ձեռագիր), էջ 70-71:

Ծածկագրերի վարչության փաստաթղթերի մեջ մի հեռագիր կա, որը Թալեաթ փաշան 1915 թ. օգոստոսի 9-ին ուղարկել է Անկարա: Այդ հեռագրում ներքին գործերի նախարարը նշել է, որ «մինչև այժմ, Բողազլյանի քաղաքներում ու գյուղերում գտնվող հայերից մոտ 3.160-ը սպանվել է Բողազլյանի մարզային պաշտոնյայի կողմից»²¹: Համաձայն հեռագրի, այդ տեղեկությունն ստացվել է Բողազլյանում գտնվող ռազմական ստորաբաժանման ղեկավարից, որտեղ այն հանձնվել է տասնհինգերորդ զորաբաժանման հրամանատարությանը, իսկ այդտեղից էլ՝ բանակային կորպուսի հրամանատարությանն ու բանակի Բարձրագույն հրամանատարությանը: Թալեաթը պահանջում է հանգամանալից հետաքննություն և կանոնավոր հաղորդումներ դրա արդյունքների մասին:

Բողազլյանի տեղական հրամանատար Մուստաֆա բեյի հեռագիրն իրոք Ստամբուլ է հասել զինվորական խողովակներով: Մուստաֆա բեյը իրադրության մասին ծածկագրված հեռագրով զեկուցել է Կեսարիայի տասնհինգերորդ զորաբաժանման գործող հրամանատար Շահաբեթին, որն այդ տեղեկությունն ուղարկել է Անկարայի բանակային հինգերորդ կորպուսի գործող հրամանատար Հալիլ Ռեջափին: Այնուհետև Հալիլ Ռեջափն զեկույցը փոխանցել է օսմանյան Բարձրագույն հրամանատարությանը: Կան այլ հեռագրեր ևս, որոնք հաստատում են Քեմալի կազմակերպած ռճագործությունները²²:

Ստամբուլի դատավարությանը նախորդած հետաքննությունների ու հարցաքննությունների ընթացքում այդ հեռագրերն ընթերցվել են նրա համար, և նրանից հավելյալ տեղեկություններ են ուզել այդ հարցի մասին: Ըստ հարցաքննության արձանագրության, հանձնաժողովի նախագահ Մազհար բեյը հետևյալ հարցերն է տվել.

21 BOA/DH.ŞFR, № 54-A/326, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 9:

22 Նման հեռագրերի օրինակներ կարելի է գտնել ԵՀՊԱ-ում: Բոլոր այդ փաստաթղթերը, վերը նշված արխիվում իրենց կողային համարների հետ միասին, բերված են Յոզղաթում կատարված իրադարձությունների վերաբերյալ հայերենով շարադրված աշխատության մեջ: Տե՛ս Քրիզեր, Յոզղաթի հայասպանության վաղեմական պատմությունը (Նյու Յորք, 1980 թ.): Խնդրո առարկա փաստաթղթերի համար տե՛ս մասնավորապես էջ 324-29:

Հարց. Վկայության հիման վրա, Բողազլյանի ճյուղի հրամանատար Մուստաֆա բեյը զորաբաժանման հրամանատարությանը տեղեկացրել է, որ Բողազլյանի քաղաքներում ու գյուղերում ավելի քան 1.500 հայ է սպանվել: Այնուհետև Կեսարիայի զորաբաժանման հրամանատարը տեղեկացրել է բանակային կորպուսի [հրամանատարին]:

Կարդացեք [արձանագրության համար] Բողազլյանի ճյուղի հրամանատարի 1915 թ հուլիսի 14-ի թիվ 18 և Շահաբեթին բեյի 1915 թ. հուլիսի 14-ի թիվ 17 ծածկագրված [հեռագրերի] թարգմանությունը... Կարդացեք նաև զորամասի հրամանատարի կողմից բանակային կորպուսի [հրամանատարին] ուղարկված 1915 թ. հուլիսի թիվ 169 հեռագրի ծածկագրի վերծանությունը... Հարց. Ջորաբաժանման հրամանատար Շահաբեթին բեյի կողմից 1915 թ. հուլիսի 23-ին բանակային կորպուսի [հրամանատարին] ուղարկված թիվ 207 ծածկագրի թարգմանության մեջ զրված է, որ նա [իմա՝ Քեմալը] մինչև [այդ օրը] 3.600 հայ է սպանել տվել Բողազլյանի գյուղերում ու քաղաքներում: Սա հենց այն հայերի թիվն է, որոնք սպանվել են մինչև հուլիսի 23-ը²³:

Յոզղաթի դատավարության և հատկապես 1919 թ. փետրվարի 22-ի նիստի ժամանակ ընթերցված մեկ այլ հեռագրում Բողազլյանի տեղական մի հրամանատար զեկուցել է, որ Քեմալը կազմակերպել է 1.500 հայի սպանությունը: Դրանից հետո դատավորն ընթերցել է զինվորական հրամանատարության շղթայի հեռագրերից մեկ այլ հեռագիր, որի մասին Թալեաթը հիշատակում էր 1915 թ. օգոստոսի 9-ի իր հեռագրերում: Հաջորդ օրվա լրագրերը մեջբերել են այդ հեռագիրը, որի մեջ տեղեկացվում էր 3.160 հայերի սպանության մասին²⁴:

Պատճառներից մեկը, որի համար ես որոշեցի երկար և հանգամանորեն կանգ առնել այս նյութի վրա, անշուշտ, Ստամբուլի Վարչապետական օսմանյան արխիվում, Երուսաղեմի հայկական պատրիարքարանում և ժամանակի լրագրային հաղորդումներում առկա փաստաթղթերի մեջ գոյություն ունեցող հետևողականության

23 Հավելյալ տեղեկություններ համար տե՛ս նույն տեղում, 328-30:

24 Alemdar, Yeni Gazete, և Renaissance, 1919 թ. փետրվարի 23:

ցուցադրումն էր: Սակայն կա ևս մեկ պատճառ: Որևէ հետաքննություն չի անցկացվել մարզային այդ ղեկավարի գործողությունների առնչությամբ, որոնց վերաբերյալ այդքան մերկացնող ապացույցներ կան և եղել են այդ ժամանակ: Ճիշտ հակառակը. նա առաջ է քաշվել՝ իր պարտականությունների կատարման ընթացքում արձանագրած «հաջողությունների» համար: «Ստամբուլի հետաքննող հանձնաժողովի նախագահի առջև 1918 թ. դեկտեմբերի 19-ին և հետագայում [Յոզղաթի դատավարության ժամանակ] տված իր վկայությունների մեջ Յոզղաթի պատգամավոր Շաքիր բեյը նշեց, որ Քեմալ բեյը... պարծեցել է, որ հայերին մորթելու [համար] իրեն առաջ են քաշել՝ դարձնելով Յոզղաթի գավառապետի պաշտոնակատար»: Նրա ասելով, Քեմալն իրեն ասել է. «Ես մորթեցի հայերին Բողազլըյանում, ևս դարձա գավառապետի պաշտոնակատար: Ես նրանց սպանում եմ նաև այստեղ: Ես կդառնամ գավառապետ կամ գուցե նահանգապետ»²⁵: Եվ իրոք, դեռևս իբրև Բողազլըյանի մարզի ղեկավար աշխատելիս նա առաջխաղացում է ստացել՝ 1915 թ. օգոստոսի 19-ից մինչև հոկտեմբերի 8-ը աշխատելով իբրև Յոզղաթի գավառապետ, իսկ այնուհետև նորից է պաշտոնի բարձրացում ստացել²⁶:

Մրանից, սակայն, շատ ավելի նշանակալի է թերևս այն փաստը, որ թեև Քեմալի կարգադրած սպանությունների առնչությամբ նրա դեմ հետաքննություն չի անցկացվել, նա հետագայում է ենթարկվել հետաքննության ու դատվել՝ հայերի տեղահանությունների ընթացքում իր տրամադրության տակ հայտնված գույքի ու ունեցվածքի կապակցությամբ: Յոզղաթի դատավարության առաջին նիստի ժամանակ (1919 թ. փետրվարի 6-ին) պաշտպանող կողմն ասել է, թե Քեմալն արդեն դատվել է հայերի տեղահանությունների համար և ազատ արձակվել, այնպես որ չի կարող կրկին դատվել միևնույն հանցանքի համար: Դրան ի պատասխան, դատավորն ընթերցել է (հարցաքննության փաստաթղթերի մեջ գտնվող) մի գեկույց, որ գրել էր Քեմալի դեմ հարուցված մեղադրանքը հետաքննող տեսուչը: Համաձայն այդ գեկույցի, Քեմալն իրականում դատվել է «տեղահանությունների ընթացքում տեղ գտած չարաշահումների» (suistimal) համար²⁷:

25 ԵՀՊԱ, գործ M, № 494:

26 Nejdet Bilgi, Ermeni Tehciri ve Boğazlıyan Kaymakamı Mehmed Kemal Bey'in Yargılanması (Ankara, Köksav Yayınları, 1999), 85.

27 Alemdar, Yeni Gazete, İkdam, և Memleket, 1919 թ. փետրվարի 6:

Դատապաշտպանների պնդմամբ, դատարանը հեռագիր է ուղարկել Յոզղաթ՝ իրադրության մասին այնտեղից տեղեկանալու համար: Դատավարության երկրորդ նիստին՝ փետրվարի 8-ին, ընթերցվել է ստացված պատասխանը. «Հաղորդվել է, որ, քանի որ Քեմալ բեյը չարաշահել է պետական իր դիրքը՝ հայերի լքած ունեցվածքը գնելով դրանց իրական արժեքից շատ ցածր գներով, քաղաքացիական վարչության պատրաստած պաշտոնական հաղորդման հիման վրա դատարանը որոշել է [նրան դատապարտել] հինգ ամսվա բանտարկության և պաշտոնից հեռացնել հինգ ամսով: Դրան հաջորդած բողոքարկման ժամանակ որոշվել է նրան անմեղ ճանաչել և ազատ արձակել: Որևէ փաստ չի գտնվել այն մասին, որ նա արդեն դատվել է սպանությունների համար»²⁸:

Փաստորեն, Անկարայի նահանգի Վարչական խորհրդի (1917 թ. ապրիլի 12-ին) և Նախարարների խորհրդի (1917 թ. ապրիլի 12-ի) վարչական որոշումներով, Բողազլըյանի մարզի ղեկավար աշխատելու ընթացքում Քեմալն արդեն դատապարտվել էր՝ հայերի լքած ունեցվածքները ձեռք բերելու ընթացքում խախտումների և պաշտոնի չարաշահման պատճառով: Դրա հետևանքով 1917 թ. հունիսի 13-ին նա հեռացվել է իր պաշտոնից: 1917 թ. հոկտեմբերի 7-ին սկզբում դատապարտվել է երեք ամսվա բանտարկության «իր պաշտոնական պատասխանատվության տակ գտնվող առարկաներ գնելու համար», սակայն 1918 թ. հուլիսի 25-ին ավելի բարձր ատյանի դատարանի կողմից ազատ է արձակվել²⁹: Քեմալի ու Ռեշիդի դեպքերում հանգամանքների և դրանց ելքերի այս նմանությունը ակնառու վկայությունն է հայերի տեղահանությունների հանդեպ կենտրոնական կառավարության որդեգրած քաղաքականության:

ՄԱՐԴԱՄԱՍՆԵՐԻՆ ԱՉԱՏԵԼՈՒ ՀՅՈՒՄԿ ՉԱՆԹԵՐ. ԲԺԻՇԿ ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻԿԻՐՅԱՆԻ ՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռեշիդի ու Բողազլըյանի մարզի ղեկավար Քեմալի վերաբերյալ բերված օրինակներից բացի Անկարա ուղարկած մի հեռագիր ևս գալիս է հստակորեն ցույց տալու, որ Ստամբուլը քաջատեղյակ էր նահանգներում կատարվող սպանություններին ու մյուս ոճիրներին:

28 İkdam, 1919 թ. փետրվարի 9:

29 Այս տեղեկությունը գտնվում է հետևյալ տեղում. Bilgi, Ermeni Tehciri ve Boğazlayan, 86:

Սակայն, ինչպես կտեսնենք բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանի դեպքի քննարկմամբ, Ստամբուլի իթթիհադական կառավարությունը ոչ միայն տեղյակ էր այդ ոճիրներից, այլև, ի հակադրություն բարի մտադրություններով տեղական մի քանի վարիչների, որոնք արտակարգ ջանքեր են գործադրել մարդասպաններին հայտնաբերելու և արդարադատությանը հանձնելու ուղղությամբ, պետությունը եռանդագին ջանացել է ապահովել մեղավորների ազատության մեջ մատնելը³⁰:

Այդ երևույթի մասին պատկերացում կազմելու համար քննենք հայ մտավորականների գանգվածային ձերբակալությունների ժամանակ բանտարկված Ռուբեն Չիլինկիրյանի սպանության հետ կապված դեպքերը: Ձերբակալություններն սկսվել էին 1915 թ. ապրիլի 24-ին և շարունակվել հետագա ամիսներին: Ռուբեն Չիլինկիրյանը ձերբակալվել է 1915 թ. հունիսին և տեղահանվել դեպի Չանքիրի: Համաձայն Չանքիրիի գավառապետի գրասենյակի պատրաստած 1915 թ. օգոստոսի 24-ի զեկույցի, բժիշկ Չիլինկիրյանն ու նրա չորս ընկերները Ներքին գործերի նախարարության 1915 թ. օգոստոսի 4-ի որոշմամբ ներում են ստացել, և նրանց թույլ է տրվել դուրս գալ Չանքիրիից³¹: Սակայն օգոստոսի 26-ին՝ զեկույցն ուղարկելուց երկու օր անց, Ռուբեն Չիլինկիրյանն ու նրա չորս ընկերները տարվել են Անկարայի մատույցներն ու սպանվել³²:

Ինչպես ցույց են տալիս պատերազմից հետո Ստամբուլում գումարված ռազմական տրիբունալի արձանագրությունները, իրականում դեպքը տեղի է ունեցել հետևյալ կերպ. բժիշկ Չիլինկիրյանն ու

30 Բժիշկ Չիլինկիրյանի հետ կապված դեպքի համար ավելի հանգամանալից տես Taner Akçam, "The Chilingirian Murder: A Case Study from the 1915 Roundup of Armenian Intellectuals," *Holocaust and Genocide Studies* 25, №1 (Spring 2011), 128–45:

31 BOA/DH.EUM, 2.Şube, 10/73 20 L 1333, Ներքին գործերի նախարարությանը Կաստամունուի գավառապետի ուղարկված ծածկագրված հեռագիրը, թվագրված 1915 թ. օգոստոսի 31:

32 Այստեղ քննարկվող օսմանյան փաստաթղթի վերաբերյալ մի կարևոր հանգամանակ է, որ արժանի է հիշատակության: Չանքիրիի Կաստամունուի նահանգում գտնվող շրջան է, և Չանքիրիի գավառապետի պատրաստած զեկույցն առաջին անգամ նահանգային կենտրոն է ուղարկվել օգոստոսի 24-ին: Այն Ստամբուլ է փոխանցվել միայն օգոստոսի 31-ին՝ յոթ օր անց: Բժիշկ Չիլինկիրյանին ու նրա ընկերներին արդեն սպանված էին գտել զեկույցն ուղարկելուց չորս օր առաջ:

չորս ընկերները դարանակալվել են քուրդ Ալոյի ու նրա ընկերների առաջնորդած քրդական ցեղի կողմից և սպանվել Անկարայի մոտ գտնվող Թյունեյի ժանդարմերիայի կենտրոնակայանի մերձակայքում³³: Դարանն ու սպանությունը կազմակերպել են Չանքիրիի գծով իթթիհադական պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզն ու մի քանի այլ պաշտոնյաներ: Սակայն Չանքիրիի գավառապետի պաշտոնակատար Իզեթ բեյը, երդվելով իր պատվի վրա, բժիշկ Չիլինկիրյանին խոստացել էր, որ նա իր ընկերների հետ միասին ապահովու անվտանգ տեղափոխվելու էր Այաշ: Կաստամունուի նահանգի ռազմական ոստիկանության հրամանատարը և մի շարք քննիչներ ու ոստիկանական պաշտոնյաներ, միանալով Իզեթ բեյին, մեկնել են հանցագործության վայր՝ ստուգայցի: Նրանց հետաքննությունը հանգեցրել է նշված քրդերի ձերբակալությանը՝ սպանության մեղադրանքով³⁴:

Ստամբուլը լիովին տեղեկացված էր հանցագործությունների մասին: Թալեաթը հեռագրով պահանջել է զեկույցել, թե «որ նահանգում են տեղի ունեցել Ռուբեն Չիլինկիրյանի ու նրա չորս գործակիցների վրա հարձակումները, Չանքիրիից տեղահանվելիս ովքեր են սպանվել Հաջի Ալի Օղլուի [Քուրդ Ալո] ու նրա 11 ուղեկիցների կողմից»՝ ավելացնելով, որ «մեղավորներին հարկավոր է հետապնդել ու

33 Այստեղ հղվող անձը օսմանյան փաստաթղթերում նշվում է տարբեր անուններով՝ քուրդ Ալո, քուրդ Ալի կամ հաջի Ալի: Ես այստեղ ետև կգործածեմ քուրդ Ալո անունը, քանի որ այն ամենից ավելի հաճախ գործածվածն է: Թալեաթ փաշայի հեռագրերում Ալի անունը գրված է 'ayn-lam-ya (عـدـى): Օսմանյան TV տեղեկատուում (թիվ 3540) և Alemdar-ի 1919 թ. ապրիլի 29-ի համարում տպված մեղադրական ակտում այդ բառը գրված է իբրև ayn-lam-vav (عـدـى) կամ «Ալո»: 1920 թ. փետրվարի 9-ին Ջեմալ Օղուզի դատավարության ընթացքում դատավորների որոշման մասին հաղորդման մեջ Ademar-ը քուրդ Ալի անունը տպել է 'ayn-lam-ya (عـدـى), մինչդեռ Ati-ն ու Peyam-ի Sabah-ը գրել են «Քուրդ Ալո»՝ ayn-lam-vav (عـدـى): Peyam-ի Sabah-ն իր 1920 թ. մայիսի 2-ի համարում անունը կրկին տպել է իբրև «Քուրդ Ալո»՝ վերատպելով Ստամբուլի ռազմական տրիբունալի այն որոշումը, որով մերժվում էր ռազմական վճարքի դատարանը: Հայկական աղբյուրներում խնդրո առարկա ավագակախումբը միշտ հղվում է իբրև «քուրդ Ալոյի ավագակախումբ»: Stüv Dadrian and Akçam, "Tehcir ve Taktik"-ի առաջաբանը:

34 Սպանությունների հանգամանալի նկարագրության համար տես Grigoris Balakian, *Armenian Golgotha*, գլուխ 14:

ձերբակալել [անմիջապես]»³⁵։ Ձերբակալվելով տեղական պաշտոնյաների նախաձեռնությամբ և դատապարտվելով Անկարայում հիմնադրված ռազմական տրիբունալի կողմից՝ մեղավորները, ներառյալ Քուրդ Ալոն, դատապարտվել են ութ տարվա բանտարկության։ Դրանով հանդերձ, դատավարության իրական արդյունքը մնացել է անորոշության մշուշի մեջ։

Քուրդ Ալոյի ու նրա մեղսակիցների դատավարության ու պատժի մասին առաջին անգամ նշվել է Միություն և առաջադիմություն կոմիտեի ղեկավարների Անկարայում տեղի ունեցած դատավարության առաջին նիստի ժամանակ՝ 1919 թ. ապրիլին հնչած մեղադրական ակտում։ Մեղադրական ակտի 18-րդ փաստաթղթի մեջ կա ոմն Ջեմալ Ասաֆի վկայությունը, որը վերապատմում է բժիշկ Չիլինկիրյանի սպանությանն առնչվող իրադարձությունները³⁶։ Իթթիհադական պատասխանատու քարտուղար Ջեմալ Օղուզին պաշտոնապես մեղադրանք է ներկայացվել այդ հանցագործության համար. նա ձերբակալվել է 1919 թ. ապրիլի 3-ին, սակայն անհասկանալի պատճառով հետագայում ազատ է արձակվել³⁷։ Սակայն Օղուզը վերստին ձերբակալվել է, իսկ նրա գործը միացվել է պատասխանատու քարտուղարների դատավարությանը 1919 թ. հոկտեմբերի 27-ին՝ ամենայն հավանականությամբ, այդ դատավարության հինգերորդ նիստի ժամանակ։

35 Այդ օրերին Թալեթ փաշայի վրա գերմանացի դաշակիցները հսկայական ճնշում էին բանեցնում, և կարգադրված հետաքննությունն ամենայն հավանականությամբ կարող էր հենց այդ ճնշումների ուղղակի արդյունքը լինել (BOA/DH.ŞFR, №55/338, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 31)։

36 «Ջեմալ Ասաֆ բեյի արձանագրված վկայությունը այն եղանակի մասին, որով ավելի վաղ տեղահանվածներից ոմանց սպանել է Քուրդ Ալոյի ավագակալությամբ, որը կազմավորվել է Քանգիրիի [իմա՝ Չանքիրիի] Պատասխանատու Քարտուղար... Ջեմալ Օղուզ բեյի կողմից, կոմիտեի ներկայացուցիչների արարքների ու գործողությունների ընդամենը մեկ մասն է, որը պետք է որ կապված լինի Կոմիտեի կենտրոնական կազմակերպության հետ [փաստ. №18]», TV, №3540, 1919 թ. մայիսի 5: Դատավարության բացման նիստի հաղորդումը, նույն տեղում, 1919 թ. ապրիլի 27 (ձայնակողմյան սյունակը)։

37 Ջեմալ Օղուզի և նրա գործողությունների ավելի հանգամանալից քննարկման համար տես Dadrian and Akçam, "Tehcir ve Taktıl." Օղուզի վերաբերյալ տեղեկությունները գտնվում են առաջաբանում (Տարոյանի գրած) և դատավարության վերաբերյալ գլուխներում։

Օղուզի դեմ հիմնական մեղադրանքն այն է եղել, որ նա կազմակերպել է բժիշկ Չիլինկիրյանի ու նրա չորս ընկերների սպանությունը։ Այդ պատճառով հարցը շոշափվել է դատավարության մի քանի նիստի ընթացքում, և մի շարք ականատեսներ վկայություն են տվել այդ դեպքերի մասին³⁸։

Դատավարության 1919 թ. նոյեմբերի 29-ի նիստի ժամանակ Ջեմալ Օղուզի դեմ գործն անջատվել է մյուս պատասխանատու քարտուղարների գործից՝ նրա առողջության պատճառով³⁹։ Ամեն դեպքում, Ջեմալ Օղուզի գործն իբրև առանձին գործ շարունակվել է 1920 թ. հունվարի 27-ին⁴⁰։ Սպանությունների հարցը բարձրացվել է այդ դատավարության 1920 թ. փետրվարի 5-ի նիստին, որի ժամանակ Միխաիլ Օհանես էֆենդին տվել է ականատեսի հետևյալ վկայությունը.

[Իմ] ընկերներից հինգն ուղարկվեցին Այաշ։ Նրանց տանող կառքերը մեկնեցին հինգշաբթի և տեղ հասան ուրբաթ օրը։ Հայտնի է, որ պահակները հետո այդ հինգ ընկերներին տվեցին ավագակների ձեռքը։ Ի պատասխան, գավառապետի պաշտոնակատար Իզեթ բեյը գնաց միջադեպի վայրը և հետաքննություն անցկացրեց։ Հայտնի է նաև, որ Ջեմալ Օղուզ բեյն ու Նուրեդին բեյը շատ բավարարված էին այդ միջադեպերով։ Հարցաքննու-

38 Օրինակ, 1919 թ. հոկտեմբերի 27-ի նիստի ժամանակ արձանագրության համար ընթերցվել է Ռահիբ (քահանա) Կարապետյան էֆենդու գրավոր վկայությունը. իր պատմության մեջ վկան պնդում է, որ Ջեմալ Օղուզը սպանել է հինգ հոգու, որոնք տեղահանվել են դեպի Այաշ (Atı, 1919 թ. հոկտեմբերի 28)։ 1919 թ. նոյեմբերի 12-ի նիստի ժամանակ հնչել է դեղագործ Գրիգոր էֆենդու վկայությունը։ Այդ վկայության մեջ նա նշել է, որ «այդ ժամանակ գավառի գործող գավառապետը Իզեթ բեյն էր», և պատմել է, որ այդ Իզեթ բեյը մի հայ ընկերոջ ասել է, որ ինքը Չիլինկիրյանի ու մյուսների սպանությամբ խիստ վշտացել և «անզուսպ հեկեկացել է» (Atı, 1919 թ. նոյեմբերի 13)։ Դատավարության 1919 թ. նոյեմբերի 22-ի նիստին ճարտարապետ (mimar) Սիմոն էֆենդին պատմել է. «Ես Քանգիրիում [իմա՝ Չանքիրիում] էի, երբ Թյունեյի ոստիկանատան մոտ հինգ հայ սպանվեց։ Կատավարությունն այս հարցով հետաքննություն անցկացրեց։ Ըստ իմ լսածի՝ նրանք մեկին ձերբակալեցին» և Ջեմալ Օղուզին պատասխանատվության ենթարկեցին այդ դեպքի համար (Atı, 1919 թ. նոյեմբերի 23)։

39 Atı, Alemdar, 1919 թ. դեկտեմբերի 30։

40 Atı, 1920 թ. հունվարի 28։

թյուն[ից] հետո այդ երկու ավագակները ձերբակալվեցին ու քանտ նետվեցին⁴¹:

1920 թ. փետրվարի 8-ի նիստի ժամանակ Ջենալ Օղուզը դատապարտվել է բանտարկության՝ Չիլինկիրյանին սպանելու հրաման տված լինելու համար: Դատավճռի մեջ դատավորները գրել են, որ Օղուզը մեղավոր է երկրորդ աստիճանի սպանության մեջ՝

խմանալու և այդ դեպքերի մեջ ներգրավված իրական հարձակվողներին օգնելու ու դրդելու համար, դասալիք կապիտան Նուրեդին բեյին ու Քուրդ Ալիին [Չանքիրի] ուղարկելու, նրանց հարկ եղած հրահանգները տալու և ծրագրելու համար բժիշկ Չիլինկիրյանի ու նրա չորս հայտնի ուղեկիցների սպանությունը, որոնք բոլորն սպանվել են Չանքիրիում՝ Թյունեյի ոստիկանատան շրջակայքում, նրանց ուղիները ցույց տալու համար, այլ մարդկանց սպանությունները կազմակերպելու և ապահովելու համար, որ հանցագործներին դիմադրություն ցույց տվող և խանգարող չլինի [իրենց հանցանքներում], վերոնշյալ հանցագործությունների սկզբում դրանց նպաստելու և հետագայում ավարտն ապահովելու համար⁴²:

Այս մեղադրանքով Ջենալ Օղուզը դատապարտվել է հինգ տարի չորս ամիս բանտարկության, իսկ վերը նշված կապիտան Նուրեդինը հետակա կարգով ստացել է վեց տարի ութ ամիս⁴³:

Ջենալ Օղուզը հետագայում տեղափոխվել է ռազմական վճռաբեկ դատարան, և 1920 թ. մարտի 23-ին դատարանը բեկանել է Չիլինկիրյանի ու նրա ուղեկիցների սպանությունների համար ստացած նրա դատավճիռը: Դատարանի պատճառաբանությունը եղել է հետևյալը. Անկարայում 1915 թ. հիմնվել է ռազմական տրիբունալը, և Ջենալ Օղուզն ընդգրկվել է նշված մեղադրանքով ամբաստանյալների ցանկում: Հետևաբար, այդ նույն գործը Ստամբուլում կրկին դատելու փորձերն ապօրինի են, քանի որ. 1. գործը Ստամբուլի դատարանի իրավասություններից դուրս է, և 2. միևնույն գործով չի կարելի մարդուն դատել երկու անգամ:

41 Alemdar, 1920 թ. փետրվարի 6:

42 Նույն տեղում, 1920 թ. փետրվարի 9:

43 Նույն տեղում:

Այնուամենայնիվ, 1920 թ. ապրիլի 20-ին Ջենալ Օղուզի գործը վերաքննվել է Ստամբուլի ռազմական տրիբունալում, որը մերժել է ռազմական վճռաբեկ դատարանի ավելի վաղ ընդունած վճիռը և պնդել իր վճռի իրավացիությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «Իրականում, թեև վերոնշյալ հանցագործությունների իրական մեղավորները 1915 թ. դատվել ու դատապարտվել են Անկարայի ռազմական տրիբունալի կողմից, վերոնշյալ ամբաստանյալը [Ջենալ Օղուզը] մինչ այդ չի նշվել [դատարանում], և այդ դատարանի [այս հարցի կապակցությամբ կայացրած] վճիռը մինչև օրս չի վերջնականացվել: Ջենալ Օղուզ բեյի առնչությամբ հետագայում [համապատասխան] բնագավառի որևէ դատավարություն տեղի չի ունեցել»⁴⁴:

Ես տևականորեն կանգ առա բժ. Չիլինկիրյանի ու նրա գործընկերների սպանության շուրջ իրադարձությունների և դրանց հաջորդած դատավարությունների վրա՝ ավելի հանգամանակից ներկայացնելու համար Ստամբուլում Թալեաթ փաշայի և երիտթուրքերի կառավարության այլ անդամների կողմից Քուրդ Ալոյի ու մյուս ավագակների համար գործադրած ծավալուն ջանքերը, որոնք բռնվել ու դատվել էին տեղական իշխանությունների, այլ ոչ թե կենտրոնական կառավարության նախաձեռնությամբ: Ինչպես կտեսնենք ստորև, Թալեաթ փաշան հետագայում ազատել է տվել Քուրդ Ալոյին ու նրա ընկերներին՝ չնայած սպանության մեղադրանքին: Ռազմական տրիբունալի պնդումը, թե Անկարայի դատարանի որոշումը «երբեք չի վերջնականացվել», ճիշտ է, և պատճառն այն էր, որ Թալեաթ փաշան ամեն ջանք գործադրել էր այդ արդյունքն ապահովելու համար:

Այդ սպանությունների ու դրանք կատարողների նկատմամբ Թալեաթ փաշայի վերաբերմունքն ընդգծող հիմնական փաստաթղթերից մեկը 1916 թ. մայիսի 13-ին Անկարա ուղարկած «գաղտնի» հեռագիրն է: Դրա մեջ Թալեաթ փաշան նշել է, որ «այն անձինք, ռվքեր դատվել կամ ձերբակալվել են իրենց կատարած հանցանքների համար, հատուկ որոշման համաձայն, եթե ցանկանում են, կարող են արձակվել [և ուղարկվել] բանակ՝ բանակում ծառայելու համար՝ կամ դատական ներումով, կամ [դատավճռի կատարման] հետաձգմամբ», ապա ներքին գործերի նախարարն ավելացրել է, որ «նպատակահարմար է համարվում, որ վերոնշյալները, որոնք բանտարկված են ռազմական տրիբունալի կողմից, [գործերը] վարող գրասենյակի

44 Peyam-ı Sabah, Vakit, 1920 թ. մայիսի 2:

կողմից միայնակ կամ զույգերով ուղարկվեն բանակ՝ զեկուցելով Արդարադատության նախարարությանը»⁴⁵: Այսպիսով Թալեաթը Անկարայի նահանգային գրասենյակին կարգադրում էր համագործակցել Արդարադատության նախարարության հետ և ազատ արձակել կալանվածներին:

Այս հեռագիրն ընթերցելով մյուս փաստաթղթերի համատեքստում՝ կարելի է հասկանալ, որ այն անձինք, ում համար Թալեաթը ներում էր խնդրում, Քուրդ Ալոյի ավազակախմբի անդամներն էին: Թալեաթն, ամենայն հավանականությամբ, հղում էր դատապարտյալներին բանտից ազատելու մասին 1914թ. աշնանն ընդունված ժամանակավոր օրենքը: Այդ հատուկ որոշման նպատակը եղել է բանակի հետ առնչվող ռազմականացած ստորաբաժանումներն աշխատուժով ապահովելը:

1914թ. աշնանն ընդունված օրենքի շնորհիվ⁴⁶ կալանավայրերի ու բանտերի առաջին պարպումից մոտ տասնութ ամիս անց Թալեաթը կրկին խնդրել է կիրառել այդ օրենքը՝ ազատելու համար մարդասպանության համար Անկարայի բանտերում գտնվող դատապարտյալներին: Ստորև բերվող հեռագրերը քավական հստակորեն ցույց են տալիս, թե Թալեաթ փաշան և ուրիշներն ինչ հսկայական ջանքեր են գործադրել ձերբակալված ու արդարադատությանը հանձնված մի շարք մարդասպանների փրկելու նպատակով: Այդ հրահանգներից առաջինով, որն ուղարկվել է 1916թ. հունիսի 5-ին, Թալեաթը պահանջել է, «որ այդ գործողություններն անհրաժեշտ համարվեն՝ համաձայն թիվ 788 և 832 գրավոր պաշտոնական հաղորդագրությունների, որոնք համապատասխանաբար ուղարկվել են

45 BOA/DH.ŞFR, №63/301, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916թ. մայիսի 13:

46 Ներքին գործերի նախարարությունն ու Բանտերի գլխավոր վարչությունը 1914թ. նոյեմբերի 4-ին «գաղտնի» մակագրությամբ ընդհանուր մի կարգադրություն են ուղարկել բոլոր նահանգները և տեղեկացրել, որ պետք է համաներում հռչակվի, և բանտերն ու կալանավայրերը պետք է դատարկվեն: Տե՛ս BOA/DH.ŞFR, №46/186, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բասրայի, Բեյրութի, Հիջազի, Հալեպի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի, Վանի ու Եմենի նահանգներ, Բոլուի, Ջալիկի, Ասրիի, Քարեսիի (Բալիքեսիի), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշի, Թեքեի ու Կեսարիայի գավառներ և Մեդիսայի խնամակալություն (Muhâfizlik), թվագրված 1914թ. նոյեմբերի 4:

1916թ. ապրիլի 26-ին ու 30-ին և վերաբերում են [անընթեռնելի] և Անկարայի բանտից Նալիհանլի Մեհմեդ Ալիի կողմից ստորագրված ու 1916թ. մայիսի 18-ին ՄԱԿ Կենտրոնական կոմիտեին ուղարկված հեռագրի պատճենի մեջ արտահայտած տեսակետներին, արագացվեն, և զեկուցվի դրանց արդյունքների մասին»⁴⁷: Վերջին փաստաթուղթը հստակորեն ցույց է տալիս, որ չնայած Թալեաթ փաշայի 1916թ. մայիսի 13-ի «գաղտնի» հեռագրին, Ալին դեռևս ազատված չէր՝ ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Արդարադատության հետ զրազրությունը դեռևս տեղ չէր հասել: Ի պատասխան դրա, Ալին մայիսի 31-ին հեռագիր է ուղարկել ՄԱԿ Կենտրոնական կոմիտեին, Թալեաթը պատասխանել է հունիսի 5-ին՝ խնդրելով, որ մայիսի 13-ի իր հաղորդագրության մեջ ամփոփված հրամաններն ի կատար ածվեն:

1915թ. հունիսի 7-ին կամ 8-ին ուղարկված «գաղտնի» մակագրությամբ երկրորդ մի հեռագիր նշանակալիորեն պարզաբանում է այն խոչընդոտները, որոնք ծագել են, երբ սկսել են պտտվել կառավարական ու բյուրոկրատական անիվները: Ըստ այդ հեռագրի, ամբաստանյալները մինչև ներում ստանալը պետք է դատված ու դատապարտված լինեն, սակայն դատավարությունը դեռևս այդ պահին չի հասել: Մյուս կողմից էլ Թալեաթը մտահոգ էր, որ անվերապահ ներումը կարող էր հարուցել Բեռլինի դժգոհությունը:

«Բանի դեռ ռազմական տրիբունալների կողմից ոչ մի որոշում չի տրվել վերոհիշյալ կալանավորների վերաբերյալ, հնարավոր չէ ներում շնորհել, ինչպես նաև հնարավոր չէ ներում արձակելն առանց որևէ պայմանի կամ նախապայմանի այդ հարցում, որը քաղաքական հետևանքներ է կրում իր մեջ», գրել է ներքին գործերի նախարարը: «Այն աստիճան, որ, թեև ցանկալի չէ, որ սրանց նման մարդիկ շարունակեն կրել իրենց բանտարկությունը, փաստորեն նախընտրելի է, որ խնդիրը լուծվի... նախ [սրանց դատական հետապնդման] հետևանքները կասեցնելու որոշում ընդունելով»⁴⁸: Այլ կերպ ասած, հարցի լուծումն այն էր, որ իրավական գործընթացը դադարեցվեր, որպեսզի ներումներն անհրաժեշտ չլինեին:

47 BOA/DH.ŞFR, №64/214, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916թ. հունիսի 5:

48 BOA/DH.ŞFR, №64/257, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916թ. հունիսի 7/8:

Ըստ 1918 թ. հուլիսի Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագրի, Քուրդ Ալոն ու նրա ավագակախումբը շարունակել են օգնություն խնդրել օսմանյան կառավարությունից, որը նրանց հայցին դրական լուծում է տվել: Անկարայի նահանգ ուղարկված «հույժ գաղտնի» հեռագրում կարդում ենք. «Ավագակ Քուրդ Ալոյի և Կարասուի ավագակախմբի կողմից, ասենք, սիրիական ճակատում ծառայության մեջ մտնելու դիմաց պաշտպանություն ուզելու հայցը ընդունելի է»⁴⁹: Այդ մարդասպանների վերջնական ճակատագրի վերաբերյալ ուրիշ տեղեկություն երևան չի եկել:

Հեռագրերից պարզորոշ երևում է, որ դատական գործընթացի ենթարկված ամբաստանյալները ժամանակի ընթացքում ազատվել են բանտարկությունից և պաշտպանության արժանացել կառավարության ուղղակի միջամտությամբ՝ հաճախ հետագա մի քանի տարիների ընթացքում: Փաստաթղթերը ոչ միայն բացահայտում են կառավարության վերաբերմունքը սպանություն կատարողների, ինչպես և հայերի դեմ հանցանքներ կատարելու մեջ մեղադրվողների վերաբերյալ դատավճիռների նկատմամբ, այլև ցույց են տալիս, որ եղել են նաև տեղական իշխանավորներ, որոնք չեն երկնչել քրեական պատասխանատվության ենթարկելու հանցագործներին:

ԼԵՇՈՒ, ՈՐԸ ՄԱՏՆՈՒՄ Է ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆԸ

Օսմանյան պաշտոնական փաստաթղթերի լեզուն ու կառուցվածքն արժանի են առանձին, լուրջ ու հանգամանալից ուսումնասիրության: Այստեղ փորձ ենք անում ընդգծելու օսմանյան գրագրության մի առանձնահատկություն, որը նկատվել է սույն հետազոտության ողջ ընթացքում:

Ծածկագրերի վարչության թղթերի մեջ կան բազմաթիվ փաստաթղթեր (մի մասը շարադրված հենց Թալեաթի կողմից), որոնք բացահայտում են կատարված ոճրագործություններին իրագեկությունը և դրանց հանդեպ անտարբերությունը: Այսպես, լայն շրջա-

նառության մեջ դրած 1915 թ. հուլիսի 26-ի հեռագրով, որը հրահանգում է «հարցով զբաղվել անձամբ», Թալեաթը տեղական պաշտոնյաներին կարգադրել է «հնարավոր առավելագույն ճշգրտությամբ պարզել նահանգի այն հայեր[ի] թիվը, որոնք պատերազմի սկզբից մինչև հիմա տուժել են հիվանդությունից, խռովությունից ու զինվորական գործողություններից, և արագ գեկուցել»⁵⁰:

Թալեաթի անտարբերության ցուցիչներից մեկը նման իրադրությունները նկարագրելիս նրա կողմից իմաստով չեզոք բառերի (ինչպես «տուժել» կամ «գոհվել»՝ telef ol-) գործածությունն է՝ հատկապես հայերի առնչությամբ⁵¹: Ճարտասանական նման հնարքը, այլ փաստաթղթերի համատեքստում, կարելի է համարել որոշակի մտայնության արտացոլում: Դիտենք, օրինակ, 1915 թ. հունիսի լայնածավալ կոտորածների մասին լուրերին ի պատասխան Թալեաթի ուղարկված հեռագիրը: Նշելուց հետո, որ «Էրզրումի նահանգից լուրեր են հասել, որ Էրզրումից տեղահանված 500 հայերի շաքայունը կոտորվել է քրդերի կողմից Էրզինջանի ու Էրզրումի միջև», Թալեաթը նկատում է.

Բնականաբար, այնքանով, որքանով հնարավոր է, ջանքեր են գործադրվում պաշտպանելու տեղահանված հայերի կյանքը

50 BOA/DH.SFR, № 54-A/112, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի, Էրզրումի, Սվազի, Դիյարբեքիրի, Մամուրեթյուլագիզի, Ադանայի ու Բիթլիսի նահանգներ և Մարաշի ու Ջանիկի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 26:

51 Նույն ձևով, 1915 թ. ապրիլին Վանի իրադարձությունների ընթացքում ուղարկված և «հրատապ ու գաղտնի. տեսնել անձամբ» մակագրությամբ հեռագիրը պարունակում է հետևյալ հատվածը. «Մինչև հիմա քանի՞ զինվոր ու մահմեդական քաղաքացիական անձ են գոհվել ու վիրավորվել այն տարածքներում, որոնց վրա հարձակվել են հայերը» (BOA/DH.SFR, № 52/200, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 3): Սակայն կան նաև այլ փաստաթղթեր, որոնց մեջ խիստ զգույշ ու ճշգրիտ ձևակերպումներ են գործածվում մահմեդական բնակչության վերաբերյալ: Հայերի առնչությամբ, սակայն, կարելի է նկատել լեզվական որոշակի հետևողականություն: Օրինակ, տե՛ս Ուրֆայում 1915 սեպտեմբերին տեղի ունեցած դեպքերից հետո ուղարկված հեռագիրը. «Զեկուցեք այն զինվորների ու քաղաքացիական անձանց թիվը, որոնք նահատակվել են, վիրավորվել ու առևանգվել են միջադեպի սկզբից մինչև օրս, և քանի՞ [?] ապստամբներից, որոնք գոհվել են... կամ սո՛վով (derdest edil)» (BOA/DH.SFR, № 57/178, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 28):

49 Հեռագիրն ուղարկվել է ի պատասխան Անկարայի նահանգապետի 1918 թ. հունիսի 27-ի հեռագրի: Լուսանցքի գրառման մեջ նշված է. «Կրկին ուղարկվել է 1918 թ. հուլիսի 11-ին»: BOA/DH.SFR, № 89/39, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1918 թ. հունիսի 8:

[երբ նրանք գտնվում են] իր[ենց] ճամփորդության ընթացքում, և կարգի հրավիրելու նրանց, ովքեր տեղահանության ընթացքում փորձում են փախչել, և նրանց, ովքեր պատասխանատու են հարձակումների համար նրանց վրա, ում [շարայունների] պաշտպանությունն իրենց է հանձնված: Սակայն [տեղական] բնակչությունը երբեք չպետք է ընդգրկվի այս [գործողության] մեջ, և բացարձակ ոչ մի տեղիք կամ հնարավորություն չպետք է տրվի, որ այնպիսի միջադեպեր ծագեն, որ տարբեր համայնքների միջև բախումներ հարուցեն և միաժամանակ շատ վատ երևան դրսի աշխարհին⁵²:

Փաստաթղթի հիմնական նյութը հինգ հարյուր մարդու կոտորածն է: Թալեաթը հաստատում է, որ փախչելու կամ պահակախմբի վրա հարձակվելու փորձ անող հայերին պետք է պատժել՝ առանց բացառության: Այդ համատեքստում նա նշում է, որ հայերին պաշտպանելու համար ջանքեր են գործադրվում՝ «այնքանով, որքանով հնարավոր է»: Իրականում, հայերի կյանքի պաշտպանությունը Թալեաթի հիմնական մտահոգությունը չի թվում: Նա, ավելի շուտ, ցանկանում է կանխել քաղաքացիական բնակչության մասնակցությունը կոտորածներին, այլապես նման իրադրությունը կարող է բացասական տպավորություն առաջացնել հանրության մեջ կամ աշխարհում⁵³:

52 BOA/DH.ŞFR, № 54/9, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի, Մանուրեթյուլագիզի ու Բիթլիսի նահանգներ, թվագրված 1915 թ. հունիսի 14:

53 Նույն տեղում: Հեռագրի վերջում Թալեաթն ասում է. «Հետևաբար, անհրաժեշտ է լիովին կիրառել բոլոր միջոցներն ու հնարավորությունները՝ կանխելու համար ճանապարհին գտնվող այդ [քրդական] ցեղերի ու գյուղացիների հարձակումը հայերի վրա, որոնք ճամփորդելու են այդ ճանապարհներով, և ուժով պատժելու համար նրանց, ովքեր կհանդգնեն սպանել կամ կողոպտել նրանց կամ նրանց պաշտպաններին»: Սակայն պարզվելու է, որ այդ պահանջը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ուշացած թոուցիկ միտք, լավագույն դեպքում՝ ժամանակավոր, քանի որ վկայության պատասխանի իսկ չկա, որը ցույց տար, թե որևէ տեսակի՝ քրեական կամ այլ բնույթի հետաքննություն է սկսվել նման հանցագործների նկատմամբ: Փոխարենը ավելի քան բավարար ապացույցներ կան, որոնք վկայում են, որ Թալեաթն այդ հեռագիրը գրել է հայ տեղահանվածներին պաշտպանելու ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկելու հարցով Գերմանիայի դեսպանության կողմից իր վրա գործադրած ճնշումների հետևանքով:

Հեռագրերից երևում է, որ կառավարությունը քաջատեղյակ էր, սակայն բավական անտարբեր հայերի բնաջնջման նկատմամբ: 1916 թ. փետրվարի 10-ին Անվտանգության վարչությունից Անկարա ուղարկված մի հեռագրում պահանջվում է հայտնել, թե «հայտնաբերված հայերը, որոնք տեղահանվել ու արքայվել են, դեռևս ո՞րք են և [եթե այդ] ներկայումս նրանց գտնվելու վայրը»⁵⁴ Ըստ էության, կառավարությունը պարզապես ցանկանում էր իմանալ ողջ մնացած հայերի տեղը, եթե այդպիսիք կային:

Օսմանյան Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը նույնպես արդացողում են հայերի սպանություններին տեղեկացվածությունն ու անտարբերությունը դրանց նկատմամբ: Հայերի տեղահանությունների ամբողջ ընթացքում Թալեաթը խիստ տեղեկացված է եղել շարայունների ճակատագրերի մասին: Նահանգներ ուղարկված հեռագրերում նա հաճախ տեղեկություններ էր պահանջում անհատ տեղահանվածների կարգավիճակների մասին: Այսպես, 1915 թ. սեպտեմբերի 11-ի «գաղտնի» հեռագրում կարդում ենք.

Թալեաթյանը, Ֆադկյանն [ու] Մարյանը, որոնց առնչությամբ հաղորդվել է ավելի վաղ կատարված հետաքննությունների ու նրանց գտնվելու վայրի պարզումը, Սենատի [օսմանյան Երևելիների պալատի] Արամ էֆենդու ազգականներից են: Անհրաժեշտ է գտնել նրանց, եթե [ողջ] են, և, ամեն դեպքում, որպեսզի ճշմարտությունն իմացվի գաղտնի ձևով: Կատեգորիկ կերպով պետք է զեկուցեք այս անձանց մասին ձեր ունեցած տեղեկությունը⁵⁵:

Հարցը միանշանակ էր. Թալեաթը, քաջ իմանալով, որ այդ մարդիկ ամենայն հավանականությամբ արդեն սպանված էին, պահան-

Stü Hilmar Kaiser, " 'A Scene from the Inferno': The Armenians of Erzurum and the Genocide," in Der Völkermord an den Armeniern und die Shoah, ed. Hans-Lukas Kieser and Dominik J. Schaller (Zürich, Chronos Verlag, 2002), 129–87:

54 BOA/DH.ŞFR, № 60/288, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 10:

55 BOA/DH.ŞFR, № 55-A/208, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 11:

ջում էր գաղտնի տեղեկացնել, թե արդյո՞ք խնդրո առարկա անձինք իսկապես արդեն սպանվել էին:

Այդպես նաև, 1916 թ. հունվարի 17-ին Սվազի նահանգ ուղարկված հեռագրով պահանջվում էր, որ հեռագիրն ստացողը «հետաքննելուց հետո զեկուցի [[ստրիդարանի] պատգամավոր Թոմայանի հորաքրոջ ու Օսիկի որդու այրու՝ Մերիեմի տեղահանության ժամանակն ու ուղղությունը, և թե արդյո՞ք նա այսօր դեռևս ողջ է»⁵⁶: Ելնելով ստացված պատասխանից՝ Թալեաթը շարունակելու էր հետապնդել հիշյալ անձի ճակատագիրը: 1916 թ. փետրվարի 3-ին նա հեռագրել է Մամուրեթյուլազիզի նահանգ. «Ինչպես հասկացվեց Սվազի նահանգից եկած հաղորդումից, Սվազի պատգամավոր Պարսամյան էֆենդու քույր և հանգուցյալ Օզմեքյան Ակոբի այրի Մերիեմ Քադիինը [մահադամ Մերիեմ] օգոստոսին տեղահանվել է Մալաթիա. խնդրեմ հետաքննեք, թե ներկայումս նա որտեղ է գտնվում և դեռևս ողջ է, թե ոչ»⁵⁷: Կենտրոնական կառավարությունը հրաշալի գիտեր, որ հայերին կոտորում էին ամբողջ Անատոլիայով մեկ: Այդ պատճառով որոշ մարդկանց դեռևս ողջ լինել-չլինելու հարցումները կարող էին կատարյալ անփութությամբ արվել, ինչպես և արվում էին շարունակաբար:

Այդ առումով նշանակալի է 1916 թ. հուլիսի 20-ին Թալեաթ փաշայի կողմից բոլոր նահանգներն ուղարկված հեռագիրը, ուր հայտարարվում էր, որ Անատոլիայից տեղահանությունները մեծամասամբ ավարտված են: Հեռագիրն սկսվում էր այսպես. «Պատերազմական պայմանների և այլ պատճառների հետևանքով շատ վայրերում բնակչության որոշակի անդամների կյանքը, ազատությունն ու ունեցվածքը ուղղակիորեն կամ անուղղակիորեն ոտնահարվել են մի շարք հրամաններով, որոնք կամայականորեն արձակել են նահանգային որոշ պաշտոնյաներ՝ առանց հաշվի առնելու օրենքն ու կարգը»: Տեղական պաշտոնյաներին հիշեցվում էր, որ այդ իրադրության պատասխանատվությունն ընկնում է իրենց և միմյայն իրենց վրա, և իրենք պետք է կանխարգելիչ քայլեր ձեռնարկեն. «Նույնիսկ եթե որոշ պայմաններ ու բացառիկ միջոցառումներ բխել են պատերազ-

56 BOA/DH.SFR, №60/40, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1916 թ. հունվարի 17:

57 BOA/DH.SFR, №60/218, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 3:

մական անհրաժեշտությունից, այդ պայմաններն ու վերոհիշյալ միջոցառումները սահմանափակված են ու ամրագրված հատուկ օրենքներով [որոնք փոխանցվել են] պատերազմի սկզբից»⁵⁸: Հեռագիրն ավարտվում էր ասելով, թե ապօրինի այդ գործողությունները պատժվելու են:

Այդ հայտարարությունը կարևոր է երեք առումով: Առաջինն այն է, որ նրանում բացեփրաց ընդունվում է, որ ոտնահարվել են մարդկանց «կյանքը, ազատությունն ու ունեցվածքը»: Երկրորդ, հեռագրում ընդունվում է, որ պատերազմի ընթացքում որոշակի «պայմաններ ու բացառիկ միջոցառումներ» են մշակվել՝ պատերազմական հանգամանքների պատճառով, իսկ ապա բացահայտվում է, որ այդ միջոցառումները սահմանափակված են եղել «հատուկ օրենքներով»: Թալեաթի նպատակը հստակորեն ազդարարելն էր, որ կենտրոնական վարչակազմը (զլխավորապես՝ ինքը) պատասխանատվություն չի կրելու այդ հանցանքների համար: Երրորդ, հեռագիրը լուր է հետաքննության հնարավորության կամ կառավարության կողմից հանցագործներին արդարադատության ձեռքը հանձնելու որևէ փորձի մասին: Դա պետք է ընկալվի իբրև մեղքի ևս մեկ խոստովանություն:

58 BOA/DH.SFR, №66/44, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Բաղդադի, Բելրոսի, Հալեպի, Հյուսիսկենտրոնի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Իչլի, Մարաշի, Քյութահյայի, Բոլուսի, Ջանիկի, Չաթալկայի, (Դեր) Ջորի, Քարեսի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշի, Թեքեի, Կեսարիայի, Նիդդեի, Էսքիշեհիրի ու Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1916 թ. հուլիսի 20:

8

ԺՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԶԱՆԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՅԱՅԵՐԻ ԲՆԱՋՆՁՈՒՄԸ

Եթե հայերի բնաջնջումը որոշումների մի շարան էր, որոնցից յուրաքանչյուրը սկիզբ էր առել նախորդից, ուրեմն երևան են գալիս ժողովրդագրական քաղաքականության ու ցեղասպանության իրականացման միջև հնարավոր կապին վերաբերող հարցեր: Արդյո՞ք դրանք գանազան կարիքների թելադրանքով տարբեր հակազդեցություններ էին: Թե՛ ցեղասպանությունը ժողովրդագրական մտապատրանքի վերջնական իրագործումն էր: Ես ցույց եմ տալու, որ պատճառային նման կապ կար: Հայերի տեղահանությունները ձևավորվել են ժողովրդագրական տազնապններից՝ որոշիչ է եղել ազգաբնակչության բաշխվածությունն այն վայրերում, որտեղից տեղահանվել են և ուր մնացել են հայերը, և տեղահանությունները կատարվել են դրան համաձայն:

Պատերազմի ընթացքն ու անվտանգության հարակից վախերը մեծ ազդեցություն են գործել հայերի բնաջնջման մասին որոշումների ձևավորման վրա: Եթե Օսմանյան կայսրությունը չպարտվեր Սարիղամիշում, և եթե 1915 թ. մարտին Ստամբուլը կորցնելու հեռանկարը սոսկ օրերի հարց չլիներ, հայերի դեմ վերջնական, ճակատագրական հարվածը կարող էր տեղի չունենալ: Սակայն Թալեթ փաշայի մայիսի 26-ի հուշագրից երևում է, որ «Հայկական բարենորոգումների հարց» անվամբ ճանաչված սպառնալիքի վերացումը իթթիհադականների շարքերում համատարած կերպով անհրաժեշտություն է համարվել նույնիսկ պատերազմից առաջ, և ջանքեր են գործածվել ենթադրյալ այդ սպառնալիքը վերացնելու ուղղությամբ:

Ժողովրդագրական քաղաքականությունն սկզբում ձևակերպվել է ազգային անվտանգության համար մեկ այլ ենթադրյալ սպառնալիքի՝ արևմտյան Անատոլիայի հույների դեմ, և իրականացվել է 1914-1913 թթ. ընթացքում: Օսմանյան հույների էթնիկ գտումը ցեղասպանության վերածվելը կարծես կանխվել է երեք գործոնով. Մեծ պա-

տերազմը դեռևս չէր սկսվել, կար մի երկիր, ուր հույները կարող էին արտաքսվել, իսկ արևելքում հայաբնակ շրջանները ենթակա էին Ռուսաստանի հնարավոր գրավման և հետագայում՝ հայկական պետություն դառնալու: Զեյթունի 1915 թ. դեպքերի ընթացքում Ստամբուլից Չորրորդ բանակի հրամանատարությանն ուղղված մի հեռագրում խոսվում է «հայերին... պատժելու կարիքի» մասին, քանի դեռ «եվրոպական պետություններն զբաղված են»¹: Երիտթուրքերը ակնհայտորեն գիտակցում էին, որ պատերազմը նպաստավոր պայմաններ է ստեղծել, և մտադիր էին լիովին օգտվելու այդ հնարավորությունից:

Բաց է մնում այն հարցը, թե հայերի նկատմամբ ժողովրդագրական քաղաքականությունը գոյություն ունեցել է արդյոք մինչև պատերազմը: Այդպես, հստակ չէ նաև այն պահը, թե իթթիհադականներն արդյո՞ք երբևէ լրջորեն նկատի են առել հայերին Ռուսաստան արտաքսելու հնարավորությունը: Բացի 1915 թ. ապրիլի 24-ի որոշումից, ո՞ր պահին նրանց համար կանխորոշվեցին Սիրիայի ու Իրաքի անապատները: Պատասխանները դեռևս անհայտ են, և ավելորդ շահարկումների հարկ չկա: Հայերի դեպքում ժողովրդագրական ճարտարագիտությունը ցեղասպանության տեսք ստացավ: Կարևորն այն է, որ 5-10 տոկոսի չափանիշը վճռորոշ եղավ նրանց բնաջնջման գործում:

Այս հատվածում կլուսաբանվի ժողովրդագրական քաղաքականությունն իբրև հայերի տեղահանության նախադրյալ, և կքննարկվի 5-10 տոկոսի սկզբունքի դերն այդ քաղաքականության մեջ: Ես հույս ունեմ այս կերպ հստակեցնելու ժողովրդագրական քաղաքականության և Հայոց ցեղասպանության հարաբերակցությունը: Քննարկման մեջ կանդրադառնանք նաև այնպիսի անհիմն գնահատականների, ինչպիսին է «1915 թ. իրադարձություններն իրականում քաղաքացիական պատերազմ էին հայերի ու թուրքերի միջև» համարումը²: Պե-

1 BOA/DH, 2.Şube, №68/30/1, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի, Բեյրութի, Հալեպի և շրջակայքի ընդհանուր հրամանատարությանը, չթվագրված (հավանաբար՝ 1915 թ. մարտի 9-ին):

2 McCarthy, Muslim and Minorities, 136, և McCarthy and McCarthy, Turks and Armenians, 48:

տության ամենաբարձր մակարդակներում բացարձակ գաղտնի մեկ փաստաթուղթ իսկ չկա, որ թեթևակի ակնարկ պարունակի քաղաքացիական պատերազմի կամ «միջհամայնքային պատերազմի»³ մասին: Ընդհակառակը, օսմանյան փաստաթղթերը ցույց են տալիս, որ հայկական շրջանները պարպվել են կառավարության խիստ հսկողության ներքո:

ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻԲՐԵՎ ԲԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԿ ՄԱՍԸ

Բախվելով ամբողջ հայկական համայնքը միանգամից տեղահանելու տեխնիկապես անհնարին իրողությանը՝ կառավարությունը հրամայել է ժամանակի ընթացքում հայերին շարասյուններով դուրս հանել: Նահանգային իշխանություններին հրահանգվել էր թույլ չտալ «հայերի դասավորումը քարավաններով», որոնք «խճողում... և ռազմական փոխադրումների ընդհատում կառաջացնեն»⁴:

Օսմանյան ժանդարմերիայի վրա դրվել էր շարասյունները կազմելու, հսկելու և տեղափոխելու պարտականությունը. դրանք տեղափոխվելու էին մինչև նահանգային սահմանը, որտեղից տեղահանվածներն անցնելու էին նոր պահակախմբերի հսկողության տակ: Ներքին գործերի նախարարության արձանագրությունները երբեմն հստակեցնում են այն նահանգը, որտեղից պետք է ժանդարմները գային ու ստանձնեին շարասյան հսկողությունը, և այն հատման կետը, որտեղ դա պետք է կատարվեր: Այսպես, Մոսուլի իշխանությունները մի ծանուցում են ստացել այն մասին, որ Դիյարբեքիրի նահանգային կառավարությունը ցանկանում է, որ Էրզրումից եկած շարա-

սյան հսկողությունը Դիյարբեքիրի սահմանի մոտ ստանձնեն Մոսուլի ժանդարմները⁵:

Հայերի շարասյունների փոխադրությունների մասին կանոնավոր կերպով հաղորդվում էր Ստամբուլ: Այսպես, 1915 թ. հուլիսի 20-ին Թալեաթ փաշան Մամուրեթյուլազիզի իշխանություններին հրահանգել է, որ «ժամանելիք շարասյունները պետք է հանձնել նահանգի սահմանի վրա»⁶: 1915 թ. հուլիսի 28-ին Մարաշի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրում Թալեաթը նկատել է, որ հանձնելու ժամանակ խնդիր է առաջացել, և պահանջել է, որ նման բան չկրկնվի⁷:

Նահանգային ժանդարմների հսկողության ներքո շարասյունների տեղափոխության ու փոխանցման մասին պաշտոնական փաստաթղթերի կարևորության հարցը ծագել է նաև Ստամբուլի 1919-1921 թթ. ռազմական տրիբունալների ժամանակ: Թե՛ նախաքննությունների և թե՛ դատավարությունների ընթացքում դատավորները շարունակ հարցրել են ամբաստանյալներին, թե նրանք ստացել են նման փաստաթղթեր⁸: Բացի փոխանցումների մասին զեկուցելուց, նահանգային ու ենթանահանգային վարիչներն վերադասներին պարբերաբար տեղեկացրել են դուրս ուղարկված և դեռևս մնացած հայերի թվերի մասին, և այդ ցուցանիշները Ստամբուլում քննարկվել են կանոնավոր զեկույցների տեսքով: Յուրաքանչյուր նահանգ ու գավառ գրանցել է իր սահմաններում կատարվող գործողություններն ու շարժը:

Բերում ենք մեկ օրվա՝ 1915 թ. սեպտեմբերի 17-ի ընթացքում նահանգի զանազան վայրերից ստացված հեռագրերի մի քանի սահմանափակ օրինակներ: Հանգամանակից այդ հաշվետվությունն ուղարկել է Անկարայի նահանգապետը:

Նահանգի կենտրոնից ու շրջակա տարածքներից մինչև այժմ տեղահանված հայերի թիվը 21.237 է: Յոզղաթի գավառում

3 Նկարագրությունը Ջասթին ՄըքԲարթին է: Նրա աշխատություններից մեկի համար, որտեղ հեղինակը հանգամանորեն քննարկում է այն թեզը, թե 1912-1923 թթ. իրադարձություններն իրենցից ներկայացնում էին «օսմանյան քաղաքացիական պատերազմ», տես Justin McCarthy, *Death and Exile: The Ethnic Cleansing of Ottoman Muslims, 1821-1922* (Princeton, NJ, Darwin Press, 1995), 181-203:

4 BOA/DH.ŞFR, № 54-A/392, Ծածկագրված հեռագիր Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուդավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլազիզի, Մոսուլի ու Վանի նահանգների և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Էսքիզեիի ու Նիդդեի գավառների (լքված գույքի) Լուծարման հանձնախմբերին, թվագրված 1915 թ. օգոստոսի 13:

5 BOA/DH.ŞFR, № 56/387, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 13:

6 BOA/DH.ŞFR, № 54-A/59, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 20:

7 BOA/DH.ŞFR, № 54-A/157, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 28:

8 Բայբուրտի դատավարության դատավճռի արձանագրությունը (տես Ter-cüman-i Hakikat, 1920 թ. օգոստոսի 5):

գտնվում են 1.916, Քիրշեհիրի կենտրոնում՝ 747, Հայմանայում՝ 60, Նալիհանում՝ 479, [և] Սունգուրլուում՝ 576 հայեր. Յոզղաթի խորքում նրանք բաղկացած են ընտանիքներից ու երեխաներից, որոնց տեղահանությունը մասամբ դեպի նշված գոտիներ, և մյուսների բաշխումը մահմեդական գյուղերի վրա՝ որոշված ըստ կարիքի, անհրաժեշտ է: Ներկայումս տեղահանության ընթացքում գտնվող 550 մարդ կա Անկարայի կայանում: Նրանց ճամփորդությունների ուղղությունը դեպի Հալեպի և [Դեր] Ջորի տարածքներն է: Նահանգի կենտրոնը տեղահանելով՝ ներկայումս մնացած բնակչության թիվը և Քեսկին Քալաջիկում մնացողների ու մահմեդական գյուղերի վրա բաշխվողների խումբը ցույց կտրվի առանձին⁹:

Իզմիթից ուղարկված հեռագրում հաղորդվում է. «Ներկայացվում է, որ կենտրոնում ու շրջակայքում գտնվող մոտավորապես 58.000 հայերն ամբողջապես տեղահանված լինելով, այսօր գավառի [երկայթուղային] կայարաններում հայերի կուտակումներ չկան»¹⁰: Էսքիշեհիրից գրել են, որ «մոտակայքում գտնվող հայերը» «ամբողջությամբ տեղահանվել են»¹¹:

1915 թ. ապրիլի վերջին ու մայիսի սկզբին՝ տեղահանություններն սկսվելուն պես, Ստամբուլից հեռագրեր են ուղարկվել բոլոր նահանգները: Դրանցով կենտրոնական կառավարությունը պահանջում էր դուրս ուղարկվող հայերի թվերը, տեղահանվողների ուղղության վերջնակետերը, նրանց երթուղին և մնացող հայերի թիվն ու վիճակը: «Մինչև հիմա [ք]անի հայ է հանվել Հաճընից, Դյորթյուլից և այլ վայրերից և ո՛ր են ուղարկվել նրանք». այս հարցումը մայիսի սկզբին ուղարկվել է Ադանայի նահանգ և պահանջվել են հավելյալ ցուցա-

նիշներ¹²: Այնուհետև նահանգին հրահանգ է տրվել. «Հայկական գյուղերի պարավելուն պես պետք է կազմակերպվեն կանոնավոր հաշվետվություններ, որոնք պարունակեն [տեղահանվածների] թիվը, տեղահանման գյուղերի ու վայրերի անունները»¹³:

Հայերի տեղահանությունների առաջին իսկ օրերից նահանգներ ուղարկված հեռագրերը ցույց են տալիս, որ այդ քայլերը օսմանյան կառավարության բնակեցման համընդհանուր քաղաքականության մասն են կազմել: Պահանջվող տեղեկությունները չեն սահմանափակվել դուրս հանված կամ դեռևս մնացած հայերի թվերով: Հաճաճայն 1915 թ. հունիսի 14-ի ընդհանուր հաղորդագրության, նահանգները պետք է անհապաղ զեկուցեին հետևյալը.

Հայերի դատարկված գյուղերի անունները, դրանց աշխարհագրական դիրքը, դրանց հողերի բնույթն ու վիճակը և մշակման ներուժը, ազգաբնակչությունից այն անձանց թիվը, ովքեր տեղահանվել են, և թողած գույքերի ու հողերի քանակն ու բնույթը և լավագույն գնահատումներն ու կարծիքներն այն մասին, թե ամենից ավելի որտեղ է ձեռնառու տեղավորել [մահմեդական] ներգաղթողներին, ինչպես նաև [վերջիններիս] որ տեսակին ու որտեղից [ժամանաձևերին]¹⁴:

Դիյարբեքիի նահանգին, որը հապաղել էր պատասխանելու հարցում, խստիվ հիշեցվել է, թե, «քանի որ կենտրոնական կառավարությունը ծայրահեղ անհրաժեշտ է համարում, որ հայերի գյուղերի վերաբերյալ ցանկալի տնտեսական [ու] շրջակա միջավայրի տեղեկությունը հաշվի առնվի ընդհանուր տեղահանությունների ու վերաբնակեցման [իրականացման] գործում, պետական բյուրոկրատները պետք է հավաքվեն [այդ մասին] համապարփակ տեղեկություններ»¹⁵:

9 BOA/DH.EUM, 2.Şube, № 68/66, Ծածկագրված հեռագիր Անկարայի նահանգից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 17: Այս և հետագա հեռագրերի բնօրինակներում բնակչության թվերը գրված են բառերով, սակայն ընթերցանությունը հեշտացնելու համար ես դրանք ներկայացրել եմ թվերով:

10 BOA/DH.EUM, 2.Şube, № 68/67, Ծածկագրված հեռագիր Իզմիթի գավառից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 17:

11 BOA/DH.EUM, 2.Şube, № 68/15, Ծածկագրված հեռագիր Էսքիշեհիրի գավառից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 17:

12 BOA/DH.ŞFR, № 52/338, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 12:

13 BOA/DH.ŞFR, № 53/113, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներ, թվագրված 1915 թ. մայիսի 25:

14 BOA/DH.ŞFR, № 54/15, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի ու Դիյարբեքիի նահանգներ և Սարաշի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 14:

15 BOA/DH.ŞFR, № 54/39, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915 թ. հունիսի 17:

Ստամբուլը, նահանգների պայմաններից բացի, պահանջում էր նաև տեղահանված կամ իրենց գյուղերում մնացած հայերի մասին մանրակրկիտ մատենավարություն, և գրանցամատյանների պատրաստման ու ներկայացման համար խիստ վերահսկողական ապարատ էր ստեղծել՝ արձանագրելու համար «տեղահանված հայերի թվերը»՝ այն ավանների ու գյուղերի անունների հետ միասին, որոնցից նրանք տեղահանվել են: Տվյալների ներկայացման հապաղումներին հետևել են նահանգային պաշտոնյաներին ուղղված հետևյալ կարգի զգուշացումներ. «նախկինում պահանջված արձանագրությունը դեռևս տեղ չի հասել. ուղարկեք անհապաղ»¹⁶: Դրանց հաճախ ուղեկցել են ժամկետների ու ներկայացման հրահանգներ: 1915 թ. հուլիսի 25-ին արևելյան մի շարք նահանգներ ուղարկված հեռագրով Անվտանգության վարչությունը հրահանգել է, որ «պարբերաբար և խիստ ճշգրիտ կերպով պետք է հաղորդել, թե այդ օրը նահանգում/գավառում քանի հայ է տեղահանվել, ինչպես նաև ովքեր են գտնվում տեղահանության ընթացքի մեջ, և քանիսն են դեռևս մնում»¹⁷:

1915 թ. օգոստոսի 13-ին օսմանյան գրեթե բոլոր նահանգներին հնգօրյա ժամկետ է տրվել իրենց հաշվետվությունները ներկայացնելու համար.

Քանի որ անհրաժեշտ է նկատվում իմանալ [ձեր] նահանգ[ներ] ում անցյալում բնակվող հայերի թիվը, մինչև այս պահը տեղի ունեցած տեղահանությունների արդյունքում մինչև այժմ տեղահանված նման անձանց ու ընտանիքների թիվը, [իրենց տներում] այսօր մնացած անձանց թիվը, ինչպես նաև թե ինչ կարգադրություն կամ արտոնություն է տրվել նրանց այդ կերպ վարվելու համար, խնդրեմ ի մի բերեք և ձեզ համար հնարավոր առաջին միջոցով և ամենաուշը հինգ օրվա ընթացքում ուղարկեք այս տեղեկությունը պարունակող անհատական տետրեր»¹⁸:

16 BOA/DH.SFR, № 54-A/97, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ և Ջանիկի գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 24:

17 BOA/DH.SFR, № 54-A/100, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի ու Մարաշի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 25:

18 BOA/DH.SFR, № 56/57, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

Այդ հեռագրերի մեջ ամփոփված է եղել հարցարան՝ վստահապաշտ համար, որ տրվող պատասխանները կլինեն ամբողջական, անսխալ և շատ մանրամասն: 1915 թ. օգոստոսի կեսերին մեկ տասնյակից ավելի նահանգների ու գավառների տեղական պաշտոնյաներ ստացել են հետևյալ հարցերը.

1. Տեղահանվելիք հայերից քանիսն են դեռևս մնում նահանգում/գավառում: 2. Ներկայումս այդտեղ քանի հայ կա, որոնց նախատեսված է տեղահանել դեպի նշանակված վայրեր: Եվ որտեղ են այդ անձինք: Ներկայումս տեղահանվող հայերից քանիսն են ճանապարհներին, [երկաթուղային] կայարաններում և գյուղերում: 3. [Ձեր] նահանգում/գավառում քանի կաթոլիկ ու բողոքական հայ կա: Այս պահին նրանցից քանիսն են արդեն դուրս հանվել, և քանիսն են դեռևս մնում: Ինչ են [հայ] բողոքականների ու կաթոլիկների համապատասխան տոկոսները մահմեդական ազգաբնակչության նկատմամբ:

Պատասխաններն ակնկալվում էին «երեք օրվա ընթացքում»¹⁹: Տեղահանությունների ավարտին մոտ՝ 1916 թ. սեպտեմբերին Անվտանգության վարչության ուղարկված հեռագիրը պատկերացում էր ալիս հայերի վերաբերյալ «գրանցամատյանների» շրջանակի ու մանրամասնությունների մասին: Հայերը պետք է թվարկվեին ըստ կրոնի ու սոցիալական կարգավիճակի՝ հետևյալ դասակարգմամբ.

1. Տեղացի հայեր, 2. օտար հայեր, 3. նրանք, ովքեր չեն տեղահանվել կաթոլիկ կամ բողոքական լինելու պատճառով, 4. նրանք, ով-

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարաբաղի (Բուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Կարահիսարի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) Գյուրեթիայի, Ջանիկի, (Դեր) Ջոնի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Մարաշի, Եսքիշեհիրի ու Նիղոնի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 18:

19 BOA/DH.SFR, № 55/208, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարաբաղի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի ու Մամուրեթյուլագիզի նահանգներ և Իզմիրի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կարահիսարի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Կեսարիայի, Մարաշի, Նիղոնի ու Գյուրեթիայի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

քեր ազատվել են [տեղահանությունից], որովհետև զինվորի ընտանիք են եղել, 5. նրանք, ովքեր հավատափոխվել են [մահամեղականության] և [այդ պատճառով] չեն տեղահանվել, 6. նրանք, ովքեր չեն տեղահանվել ինչ-որ հատուկ կարգադրությամբ²⁰:

Ամենասկզբից եեթ, ինչպես տեսանք, նահանգային պաշտոնյաներից մանրամասն զեկույցներ են ակնկալվել ոչ միայն ընդհանուր հայ բնակչության, այլև այնպիսի հատուկ ենթակարգերի վերաբերյալ, ինչպիսին են արդեն ուղարկված հայերը, տեղահանության ենթակա, սակայն դեռևս չուղարկվածները (և դեռևս փոխադրության մեջ գտնվողների վայրը) և տեղում մնացածները: Այդպես, 1916 թ. ապրիլին «հստակ ու ճշգրիտ զեկույցներ» են պահանջվել «առավելագույնը երկու օրվա ընթացքում՝ չտեղահանված ու տեղում մնացած տեղացի հայերի թվի վերաբերյալ, մյուս շրջաններից եկողների վերաբերյալ, որոնց ժամանակավորապես թողել են [ձեր նահանգում/գավառում], և թե քանիսն են ներկայումս գտնվում այլ տարածքներ տարանցման մեջ»²¹:

Հաջորդ ամիս՝ 1916 թ. մայիսին, հեռագրով նման հարցումներ են ուղարկվել նահանգներ²²: Հրահանգների մի մասը բացատրում է նման մանրամասնությունների ու հստակության պատճառը.

20 BOA/DH.SFR, № 68/112, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Ադիսի, Բիթլիսի, Բաղդադի, Բեյրութի, Հալեպի, Հյուդավենդիգարի (Բուրսա), Դիյարբեքրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, Չաթալջայի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիի), Երուսաղեմի, Քալե-ի Մուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կեսարիայի, Կարահիսարի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Իչելի, Քյուրթանյայի, Մարաշի, Նիդղեի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 25:

21 BOA/DH.SFR, № 63/72, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի, Անկարայի, Էդիրնեի, Հալեպի, Հյուդավենդիգարի (Բուրսա), Դիյարբեքրի, Դամասկոսի, Սվազի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Մոսուլի նահանգներ և Իզմիրի, Բուլուի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիի), Կեսարիայի, Ուրֆայի, Իչելի, Քյուրթանյայի, Նիդղեի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1916 թ. ապրիլի 22:

22 BOA/DH.SFR, № 64/49 և 51, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կարահիսարի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառ և Հյուդավենդիգարի (Բուրսա) նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 17:

Ինչպես հաղորդվել է 1916 թ. ապրիլի 22-ի հեռագրով, նահանգում հայերի թիվն [իմանալու] պահանջի նպատակը հասկանալն է, թե տեղացի քանի հայ կա, որ փրկվել է տեղահանությունից և տեղում մնացել, և քանիսն են եկել ուրիշ շրջաններից և ժամանակավորապես մնացել [ձեր նահանգում], ինչպես նաև քանիսն են ներկայումս ճանապարհներին՝ մեկնելով այլ տարածքներ: [Խնդրեմ] պատասխանեք արագ՝ այս հարցերից յուրաքանչյուրին տալով առանձին պատասխաններ²³:

Նման հանգամանալի տեղեկությունների, մասնավորապես Էթնոկլոնական տարբեր համայնքների բնակչության ճշգրիտ համամասնությունների պահանջն անդրացում է տեղահանության ու վերաբնակեցման կառավարական քաղաքականության որոշիչ գործոն լինելու հանգամանքը: Եվ իրոք, այդ փաստը հստակորեն նշված է որոշ փաստաթղթերում: 1915 թ. դեկտեմբերի 5-ին Քոնյայի նահանգապետարանից պահանջել են զեկույցել, թե «նահանգի ընդ տարածքներում են [վերա]բնակեցվելու այդ հայերը՝ համաձայն բնակչության [թվի] հարաբերակցության»²⁴: Երբ նահանգներից եկած պատասխաններում չեն ճշգրտվել խնդրո առարկա բնակչության ազգային պատկանելությունները, հետագա հարցումներ են ուղարկվել. «Պետք է շեշտենք, որ տեղեկություն չենք գտնում այն անհատներից ոմանց ծագման վայրի մասին, որոնց անունները թվարկված են ներկայացված գրանցամատյաններում»²⁵:

Ժողովրդագրական նման սպառնիչ զեկույցներն անհրաժեշտ էին նկատվում՝ հայերին կանոնավոր կերպով տեղահանելու համար: Այդ պատճառով, նահանգային ղեկավարներն ուշադիր էին բաց թողած տեղեկություններն անհապաղ ուղարկելու հարցում.

Քանի որ որոշ կողմեր կան դեռևս զլացել են պատասխանելու այն տեղեկությունների սկզբնական կամ հավելյալ պահանջին,

23 BOA/DH.SFR, № 63/259, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 9:

24 BOA/DH.SFR, № 58/202, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 5:

25 BOA/DH.SFR, № 57/368, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 10:

որոնք վերաբերում են տեղահանված հայերի թվին, տեղահանվածների ու այն վայրերի անուններին, որոնցից նրանք տեղահանվել են, կամ քանի որ [նրանց ուղարկված զեկույցները] չեն պարունակել հիմնական տեղեկությունները՝ որոշելու համար [վերա]քնակեցման քաղաքականությունը կամ [ի վիճակի լինելու համար իրագործել] նոր ներգաղթողներին ու փախստականներին վերաքնակեցնելու հրամանները, անհրաժեշտ է կրկին [խնդրել, որ այդ կողմերը] զեկույցեն... տեղահանված հայերի թիվը, այն ամսաթվերը, երբ նրանք տեղահանվել են, և այն վայրերը, ուր ուղարկվել են, [ինչպես նաև] այն գյուղերի ու քնակավայրերի անունները, որոնք մասնակիորեն կամ ամբողջապես ընդգրկվել են [տեղահանությունների մեջ], վայրերի [անուններ] ը, և արդյոք անհրաժեշտ է, թե՛ ոչ այնտեղ ներգաղթողներ ուղարկել և՛ ինչ թվերով: [Խնդրեմ] ուղարկեք [պահանջվող անհրաժեշտ տեղեկությունն ու գնահատումը]²⁶:

Կենտրոնական կառավարությունը տեղահանությունների ընթացքում ճանապարհի բոլոր կետերից շարունակել է պահանջել մանրամասն վիճակագրական տեղեկություններ: Հայերի ծագման վայրերը, նշանակման վայրերը և դրանց ճանապարհին կանգառի բոլոր վայրերը ուշի-ուշով հսկվում էին, որպեսզի կառավարությունը սկզբից մինչև վերջ կարողանար ժողովրդագրական ճշգրիտ տվյալներ ունենալ: 1915 թ. օգոստոսին շրջաններին հարցում է ուղարկվել. «Նշանակված վայրերն ուղարկվելու սպասող քանի՞ հայ կա ներկայումս»: «Որտեղ են այդ [մարդիկ] հիմա: [Ո՛ր] վայրն են նրանք ուղարկվում և ի՞նչ ճանապարհով: Քանի՞ [տեղահանված] հայ է ժամանել մինչև այժմ: Քանի՞ հոգի կա տեղահանության սպասող: Ամենաուշը երեք օրվա ընթացքում հաղորդեք [այս տեղեկությունները]»²⁷:

1915 թ. դեկտեմբերին նահանգային իշխանություններից պահանջվել է «ամենաուշը երեք օրվա ընթացքում հստակորեն ու ամ-

բողջապես զեկույցել տեղացի այն հայերի թիվը, որոնք ազատվել են տեղահանությունից և թողվել տեղում, նրանց թիվը, որոնք այլ վայրից են եկել [ձեր նահանգը կամ գավառը] և ժամանակավորապես այդտեղ են մտնում՝ համաձայն վերոհիշյալ օրենքների ու կանոնների, ինչպես նաև այն հայերի թիվը, որոնք ներկայումս դեպի այլ վայրեր տարանցման մեջ են»²⁸: 1916 թ. ապրիլին Թալեաթ փաշան Քոնյայի նահանգ է ուղղել հետևյալ հարցերը.

1. Այս պահին քանի՞ հայ կա նահանգի սահմաններում: Նրանցից քանիսն են տեղացի և քանիսը նահանգի դրսից: 2. Քանի՞ հայ է ուղարկվել նահանգ տեղավորվելու և ո՞ր են ուղարկվել նրանք: Տոկոսային ինչ հարաբերակցության մեջ են մահմեդական քնակչության հետ և որտեղից են այդ հայերը: 3. Այդ [հայերից] տեղահանության համար ուղարկվածները և այդտեղ [նահանգում] թողվածները թվով քանիսն են և ինչ քնակչությունից են²⁹:

Ինչպես վերը նշվեց, ուշադիր հսկվում էին տեղահանության ճանապարհին ընկած կանգառները: Անվտանգության վարչության 1915 թ. ապրիլի վերջին ուղարկված հեռագրում ամփոփված են հետևյալ հարցերը. «Քանի՞ հայ է հավաքվել տեղահանության կայաններում և դեռևս չի տեղահանվել, և որտեղ են նրանք հավաքվել: Ակնկալվում է և շատ կարևոր է, որ [այս տեղեկությունը] հաղորդվի մեզ ամենաուշը այս երեկոյան»³⁰: 1915 թ. հոկտեմբերի 23-ին Թալեաթը Ջեմալ փաշային խնդրել է զեկույցել «առանձին, թե քանի [տեղահանված] հայ կա տարանցման մեջ, և որտեղ են նրանք»³¹:

28 BOA/DH.SFR, № 59/76, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Ասկարայի, Հալեայի, Հյուզլինդիգարի (Քուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Քոնյայի, Մամուրեթյուպզիզի, Բիթլիսի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Հաքիշեհիրի, Նիդեհի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Գյութահյայի, Իզմիրի, Քարեհի (Բալիքեսիր), Կեսարիայի, (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 21:

29 BOA/DH.SFR, № 63/119, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. ապրիլի 26:

30 BOA/DH.SFR, № 55/279, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ և Իզմիրի, Գյութահյայի, Հաքիշեհիրի ու Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 28:

31 BOA/DH.SFR, № 57/80, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

26 BOA/DH.SFR, № 54/412, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրոմի, Բիթլիսի, Հալեայի, Դիյարբեքիրի, Տրապիզոնի, Մամուրեթյուպզիզի, Մարաշի, Իզմիրի, Ջանիկի ու Կեսարիայի նահանգներ ու գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 12:

27 BOA/DH.SFR, № 55/211, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի, Ադանայի, Քոնյայի, Ասկարայի ու Հալեայի նահանգներ և Էդիրնեի, (Դեր) Ջորի, Մարաշի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

Տեղահանության ճանապարհները կուտակումների պատճառով երբեմն փոխվում էին, ինչպես տեսնում ենք 1915 թ. սեպտեմբերի 26-ին Մամուրեթյուլազիզի նահանգ ուղարկված հեռագրում: Պահանջվում է «վերոհիշյալ ճամփայով գնացող քարավանների առատության պատճառով ստեղծված կուտակումները նվազեցնելու համար... այսուհետև քարավանները Դիյարբեքիում ուղարկել Մոսուլ»³²: Դիյարբեքիում ծանուցվել է մինևույն օրը: Պահանջվել է, որ «ղեպի Մոսուլ տեղահանվելու նպատակով նահանգ եկող հայկական քարավանները Ուրֆայում չուղարկվեն, [այլ] ուղարկվեն Մարդինով, և այս ձևով վերացվի Ուրֆայում առաջացած կուտակումը»³³: 1916 թ. մարտի 16-ին Կաստամոնուլին տեղեկացվել է, որ, քանի որ Սվազի նահանգը «խիստ զբաղված է», և հայերին այնտեղից առաջ ուղարկելու «հնարավորություն գոյություն չունի», այդ ճանապարհի երկայնքով տեղահանություն չպետք է կատարվի³⁴:

Նույն բովանդակությամբ հրահանգներ են ստացել հայկական շարայումների վերջնական նշանակման վայրերը: Պարբերաբար հեռագրեր են ուղարկվել նշանակված նահանգներն ու ենթանահանգային շրջանները, որոնցով պահանջվել են ժամանումների թվերն ու դրանցից առաջացած տեղական բնակչության տոկոսները: 1915 թ. հուլիսի 1-ին Ցեղային ու ներգաղթային հարցերի կարգավորման վարչությունը (ՅՆԿԿ) Մոսուլի ու Ուրֆայի վարչակազմերին հարցրել է. «Մինչև այժմ [ք]անի հայ է ժամանել [ձեր տարածք]՝ այդտեղ հաստատվելու համար, և որտեղից են նրանք: Որո՞նք են այն վայրերը, ուր որոշված է տեղահանել ու վերաբնակեցնել նրանց: [Խնդրեմ] արագ զեկույցեք և նրանց ժամանելուն պես կանոնավոր կերպով տեղեկություններ հաղորդեք»³⁵:

գրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 23:

32 BOA/DH.\$FR, № 56/168, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 26:

33 BOA/DH.\$FR, № 56/180, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 26:

34 BOA/DH.\$FR, № 62/50, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կաստամոնուլի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 16:

35 BOA/DH.\$FR, № 54/271, Ներքին գործերի նախարարության ՅՆԿԿ ծած-

կյա տեսակի հեռագրերը, որոնցով պահանջվում էր «արագ զեկույցել մինչև այժմ ժամանած այն հայերի թվերի և նրանց ծագման ու վերաբնակեցման վայրերի մասին», նահանգներ էին ուղարկվում կանոնավոր պարբերականությամբ³⁶: «[Խնդրեմ] զեկույցեք արագ և նախարարինս ճշգրիտ թվերով հայկական ընտանիքների ու անհատների մասին, [որոնք] մինչև այժմ տեղավորվել են [ձեր] շրջանում, քանի հայ ընտանիք է ժամանել, և ո՞ր նահանգի բնակչությունից են նրանք եկել և ո՞ր են ուղարկվել»³⁷: Ակնկալվել է, որ այդ զեկույցները ներկայացվելու էին պատշաճ ու կանոնավոր կերպով:

1915 թ. օգոստոսի 21-ին հարավ-արևելքի շրջանային վարչակազմերը հրամաններ են ստացել, որ «զեկույցներ կազմեն մինչև այս պահը այլ նահանգներից ժամանած հայերի թվի մասին, և որ անձանց թվերի ու նրանց ընդհանուր վիճակի մասին զեկույցվի նրանց ժամանելուն պես»³⁸: Որոշ դեպքերում նույնիսկ պահանջվել է տեղեկությունը հաղորդել քսանչորս ժամում: «Մինչև վաղը երեկոյան հաղորդեք այն հայերի թիվը, որոնք մինչև այժմ տեղահանվել են մայրաքաղաքից ու շրջակայքից, ինչպես նաև տեղահանության սպասողների թիվը, որոնք ներկայումս ընթացքի մեջ են ու գտնվում են հավաքման կետերում, և նրանց ներկա դրությունը», տեղական իշխանություններին կարգադրել է Անվտանգության վարչությունը 1915 թ. սեպտեմբերին³⁹: Այդպես նաև 1916 թ. մայիսի «հրատապ» մի կարգադրությամբ

կազմված հեռագիրը Մոսուլի նահանգ և Ուրֆայի գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 1:

36 BOA/DH.\$FR, № 54-A/58, Ներքին գործերի նախարարության ՅՆԿԿ ծածկագրված հեռագիրը Մոսուլի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 20:

37 BOA/DH.\$FR, № 54-A/106, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի ու Դամասկոսի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 25:

38 BOA/DH.\$FR, № 55/140, Ներքին գործերի նախարարության ՅՆԿԿ ծածկագրված հեռագիրը Հալեպի, Դամասկոսի ու Մոսուլի նահանգներ, Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ և Հալեպի Լքված գույքի լուծարման հանձնախմբի նախագահին, թվագրված 1915 թ. օգոստոսի 21:

39 BOA/DH.\$FR, № 56/45, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուսիսային հայկական (Բուրսա), Սվազի, Մամուրեթյուլազիզի ու Դիյարբեքիի նահանգներ և Կեսարիայի, Նիդղեի ու Ուրֆայի գավառներ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 16:

պահանջվել է « հայերի թվի մասին զեկուցելու խնդրանքով 1916 թ. ապրիլի 9-ի հեռագրին... պատասխան մինչև վաղը երեկոյան»⁴⁰:

Տեղահանությունների ողջ փուլում մոռոշակի հաճախականությամբ հատուկ օրեր են ընտրվել գործողությունների «ընդհանուր գույքագրման» համար: Օրինակ, «1915 թ. նոյեմբերի 6-ին զեկուցեք ձեր նահանգում կամ շրջանում ապրող հայերի թվի մասին, ինչպես նաև թե քանիսն են տեղահանվում, կամ ով է եկել այլ շրջաններից՝ ավելի հեռու ուղարկվելու համար»⁴¹: Կանոնավոր հսկողության էին ենթակա նաև տեղահանված հայերի վերջնական նշանակման վայրերը, մասնավորապես Դեր Ջորի շրջանը, ինչպես նաև այն հայերի թիվը, ովքեր արդեն հասել էին այնտեղ: Ինչպես կտեսնենք ստորև, պարբերաբար հեռագրեր են ուղարկվել այդ վայրերը:

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՍԵՎ ԳԻՐԸ ԿԱՄ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՄՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄԸ

Թուրք լրագրող Մուրատ Բարդակչին 2008 թ. հրատարակեց որոշ փաստաթղթեր, որոնք կոչեց «Թալեաթ փաշայի օրագիրը»: Կարևոր են չթվագրված այդ փաստաթղթերի վերնագրերը. 1. «Տեղահանված հայերի թվերը», 2. «Հայ ազգաբնակչության ընդհանուր հաշվառում տեղահանությունից հետո», 3. «Հայ որբերը (Մահմեդականների մեջ բաշխվածների և այսօր գոյություն ունեցողների թվերը)», 4. «Հայերի լքած դատարկ տների քանակը», 5. «Հայերի լքած ազարակները ցույց տվող աղյուսակ», և 6. «Հայերի պատասխանատվության տակ եղած հանքարդյունաբերությունը»: Մասնավորապես, «Հայ ազգաբնակչության ընդհանուր հաշվառում տեղահանու-

թյունից հետո» փաստաթղթում թվային ցուցանիշներ են բերվում յուրաքանչյուր նահանգի ու գավառի քաղաքներում «տեղացի հայերի», «գրախ հայերի և նրանց եկած վայրերի» և այդ քաղաքի հայերից այլ քաղաքներում գտնվողների մասին⁴²:

Փաստաթղթերի վրա ամսաթվեր չկան, սակայն շատ հավանաբար է, որ դրանք պատրաստվել են 1918 թ. սկզբին և պարունակել տեղահանության ընդհանուր հաշվարկները: Դրանց վրա աշխատանքն սկսվել է 1916 թ. վերջին: 1916 թ. վերջին ամիսներին փորձ է արվել վերջնական գույքագրում կատարելու՝ որոշելու համար, թե քանի հայ է ողջ մնացել տեղահանություններից ու սպանության գործողություններից հետո: Այդ նպատակի համար 1916 թ. սեպտեմբերի 24-ին Թալեաթ փաշան ընդհանուր հաղորդագրություն է ուղարկել բոլոր նահանգներն ու շրջանները՝ տեղական վարչակազմերին խնդրելով իրենց իրավասության սահմաններում մնացած հայերի թվերը պարունակող ցուցակներ կազմել: Այդ խնդրանքը կրկնվել է հոկտեմբերի 29-ին ու 30-ին ուղարկված հաջորդ հեռագրերում, որոնք տեղական իշխանություններին հիշեցնում էին «ուղարկել ձեր նահանգում/գավառում եղած հայերի թվերին վերաբերող ցուցակի առաջին նախագիծը, ինչպես պահանջվել էր 1916 թ. սեպտեմբերի 24-ին»⁴³:

Ցուցակները պետք է պատասխանեին նախապես շրջաններն ուղարկված մի շարք հարցերի: Ներքին գործերի նախարարությունն ուշի ուշով հետևում էր, թե որ նահանգներն են ժամանակին ներկայացրել իրենց զեկույցները: Նրանք, որոնք զլացել էին այդ անել, պահանջվող տեղեկությունը ներկայացնելու լրացուցիչ հիշեցումներ էին ստանում՝ քողարկված զգուշացումներով: 1916 թ. դեկտեմբերի 5-ին Ադանա ուղարկված հեռագրում պահանջվում է «հայերի թվերի

40 BOA/DH.SFR, № 63/253, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի, Դամասկոսի, Սվազի, Կաստամունուի ու Մուսուլի նահանգներ և Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 9:

41 BOA/DH.SFR, № 57/282, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Մուսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Կեսարիայի, Նիդեի, Էսքիշեհիի, Քյութահյայի, Մարաշի ու Ուրֆայի գավառներ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 5:

42 Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, 76, 89-94, 101-3 և 108-45. Բարդակչին գտնում է, որ այդ փաստաթղթերը չեն կարող 1915-1916 թթ. փաստաթղթեր լինել:

43 BOA/DH.SFR, № 69/120, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Բաղդադի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Մամուրեթյուլագիզի ու Մուսուլի նահանգներ և Ուրֆայի, Ջանկիլի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Մենքեշեի, Թեքեի, Կեսարիայի, Քյութահյայի, Մարաշի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 29:

վերաբերյալ արագ ցուցակ կազմել և ուղարկել»⁴⁴: Միննույն օրը Ուրֆայի գավառն ստացել է հետևյալ պահանջը. «Արագ ուղարկել [ձեր տարածքի] հայերին վերաբերող ցուցակը՝ առանց մեկ իսկ վայր բաց թողնելու»⁴⁵: Հավելյալ օրինակ են Դիյարբեքիի, Դամասկոսի ու Մամուրեթյուպահիզի նահանգներ և Դեր Ջորի գավառ 1916 թ. դեկտեմբերի 25-ին ուղարկված հեռագրերը. «Առաջին փոստով կրկին ուղարկեք [ձեր] նահանգի/գավառի հայերի թիվը պարունակող 1916 թ. սեպտեմբերի 24-ին պահանջված ցուցակը»⁴⁶:

Որոշ հաղորդագրություններ պարունակել են ցուցակների պահանջի բացահայտ հիմնավորումներ: Քյութահյա ուղարկված 1917 թ. փետրվարի 17-ի հեռագրում, քննադատելով տարբեր զեկույցներում «գավառում գտնվող հայերի ծագման վայրերը չպարզաբանելու» հանգամանքը, բացատրվում է, որ «այդ [մարդկանց] թվերը խնդրելու նպատակն այն է, որ հասկանանք նրանց ծագման վայրը, այն վիճակը, որով ժամանել են ու մնացել այդտեղ: Անհրաժեշտ է, որ այս հարցերը հստակորեն ու լիովին պարզաբանվեն»⁴⁷:

Համաձայն երեք օր անց մի շարք շրջաններ ու նահանգներ ուղարկված հեռագրի՝

Գավառում/նահանգում գտնվող հայերի թիվը հարցնելու նպատակը նրանց ծագման վայրը և այն նահանգն ու գավառը հասկանալն է, որտեղից նրանք եկել են այդտեղ... Այդ պատճառով, [խնդրեն] նահանգի [ըլդր վայրերի] մանրակրկիտ քննություն կատարեք և հեռագրով զեկույցեք այդ մարդկանց ընդհանուր թիվը, քանիսն են տեղացի և քանիսը՝ [ոչ, ինչպես նաև] այն նահանգը, գավառն ու մարզը, որտեղից եկել են [մյուսները], իսկ

44 BOA/DH.SFR, №70/183, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 5:

45 BOA/DH.SFR, №70/186, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 25:

46 BOA/DH.SFR, №70/190, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի, Դամասկոսի ու Մամուրեթյուպահիզի նահանգներ և (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 25:

47 BOA/DH.SFR, №73/5, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քյութահյայի գավառ, թվագրված 1917 թ. փետրվարի 17:

ապա նրանց ծագման վայրում անձանց թիվը, ներառյալ նրանց տոհմը և մարզը գրանցեք այս կերպ պատրաստվելիք ցուցակներում և դրանք ուղարկեք առաջին փոստով»⁴⁸:

1917 թ. մարտի 26-ին մի շարք նահանգներ ուղարկված «հույժ երատապ» մի հեռագրով պահանջվում է յուրաքանչյուրի իրավասուբթան ներքո մնացած հայերի թիվը: Վարչակազմի աշխատողներին հիշեցվում է, որ մինչ այդ՝ փետրվարի 11-ին ու 18-ին, միննույն բովանդակությամբ առանձին հեռագրեր են ուղարկվել: Որոշ դեպքերում, երբ մնացող հայ ազգաբնակչության տվյալներն ուշացել են, Թալեաթ փաշան ինքն է հեռագրեր ուղարկել նահանգապետերին՝ պահանջելով այդ ուշացումների պատճառները և կարգադրելով երեք օրվա ընթացքում ուղարկել զեկույցները: Այդ կարգադրություններում ասվում է, որ «հարկավոր է... շտապ հաղորդել մարզերի ղեկավարների անունները, որոնց պատճառով տեղի է ունեցել [այդ] հապաղումը»⁴⁹:

1917 թ. հուլիսի 29-ի մի հեռագրից պարզվում է, որ, վերապրած հայերի թվերից բացի, հարցեր են տրվել հայերին պատկանած ապրանքների, դրանց արժեքի և արդեն մահմեդականներին բաշխված քանակի մասին.

1. Ինչ է ձեր նահանգից կամ գավառից որևէ այլ վայր տեղահանված հայերի թիվը, ինչպես նաև նրանց պատկանող լքված գույքի արժեքը: 2. Ներկայումս [ձեր նահանգում կամ գավառում բնակվող] քանի հայ կա, և նրանցից քանիսն են բնակվում իրենց սեփական տներում: 3. Տեղահանված հայերին պատկանող լքված տներից քանիսն են տրվել [մահմեդական] ներգաղթող-

48 BOA/DH.SFR, №73/29, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Անկարայի, Այդինի, Բերդոսի, Հալեպի, Դամասկոսի, Սվազի, Կաստամոնուի, Քոնյայի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Իչեի, Էսքիշեհիի, Բոլուի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի ու Նիդղեի գավառներ, թվագրված 1917 թ. փետրվարի 17:

49 BOA/DH.SFR, №74/115, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Այդինի ու Դամասկոսի նահանգներ և Ուրֆայի, (Դեր) Ջորի ու Քարեսիի (Բալիքեսիր) գավառներ, թվագրված 1917 թ. մարտի 13: Այդ օրը միննույն ուղերձով մեկ այլ հեռագիր է ուղարկվել Կաստամոնուի ու Քոնյայի նահանգներ (BOA/DH.SFR, №74/118):

ներին և քանին են դրվել աճուրդի Ֆինանսների նախարարության կողմից: Վերը նշված հարցերի վերաբերյալ տեղեկությունների գոյության մասին խնդրեմ զեկուցեք արագ ու ծածկագրված⁵⁰:

Օգոստոսի 21-ին նահանգներ ուղարկված մեկ այլ հեռագրով պահանջվում է, որ «առանձին հետաքննություն անցկացվի ներկայումս նահանգում մնացած հայերի թվի, ինչպես նաև տեղացիների քաղաքային վերաբերյալ [այլ վայրերից եկածների համեմատ] և այն նահանգների ու գավառների, որտեղից նրանք եկել են, և դա ուղարկել հեռագրով. այնուհետև այդ տեղեկությունը պետք է մտցնել ցուցակներ, որոնք պետք է պատրաստվեն այս հարցով, և դրանք ուղարկել առաջին փոստով»⁵¹:

Այս ամբողջ նյութը պարզաբանում է, որ Բարդակչու հրատարակած Թալեաթ փաշայի փաստաթղթերը երկար ժամանակ տևած խստապահանջ ջանքերի արգասիք են: Դրանք ցույց են տալիս, որ տեղահանության ամբողջ գործողությունն իրականացվել է կառավարության խիստ հսկողության ներքո և ժողովրդագրական քաղաքականության համաձայն: Այժմ ավելի հանգամանալիորեն ուսումնասիրենք 5-10 տոկոսի սկզբունքը՝ իբրև այդ քաղաքականությունը սահմանող գործոն:

50 BOA/DH.\$FR, №78/225, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Բեյրութի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա), Գոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Մոսուլի նահանգներ և Էսքիշեհիրի, Ուրֆայի, Իչելի, Բոլուի, Թեքեի, Ջանիկի, Չաթալջայի, (Դեր) Ջորի, Երուսաղեմի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Քարեսիի, Կեսարիայի, Բյուրսայի, Մարաշի, Նիդղեի ու Լեոնալիբանանի նահանգներ, թվագրված 1917 թ. հուլիսի 29:

51 BOA/DH.\$FR, №72/210, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Անկարայի, Այդինի, Բեյրութի, Հալեպի, Դամասկոսի, Կաստամունուի, Գոնյայի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Էսքիշեհիրի, Իչելի, Բոլուի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Երուսաղեմի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Բյուրսայի, Մարաշի ու Նիդղեի գավառներ, թվագրված 1917 թ. օգոստոսի 8:

5-ԻՑ 10 ՏՈԿՈՍԻ ԿԱՐԳԸ ԵՎ ՅԱՅԵՐԻ ՈՂՆԱՑՈՒՄԸ

Եթե երիտթուրքերը 5-10 տոկոսի չափանիշը կիրառել են թե՛ հայերի և թե՛ էթնիկ-կրոնական այլ խմբերի բնակեցման նկատմամբ, որևէ կապ կա՞ այդ հարաբերակցության և հայերի բնաջնջման միջև: Այստեղ առաջարկվում է այն դրույթը, որ Հայոց ցեղասպանությունն իրականացվել է ոչ թե սոսկ որպես ժողովրդագրական մեքենայություն, այլև իբրև ոչնչացում ու բնաջնջում, և որ այդ նպատակին հասնելու գործում վնասորոշ է եղել 5-10 տոկոսի սկզբունքը: Հոգ է տարվել, որ դեպի Սիրիա տեղահանված և տեղերում մնացած հայերի թիվը չգերազանցի այն վայրերի բնակչության 5-ից 10 տոկոսը, որտեղ գտնվել են հայերը: Նման արդյունքի կարելի էր հասնել միայն բնաջնջմամբ:

Տիգրան Քելեկյանի պատմությունը լուսաբանում է Հայոց ցեղասպանության ընթացքում վիճակագրության խիստ կարևորությունը: Հայ մտավորական Քելեկյանը, որը 1905-1906 թթ. օգնել էր վերակազմակերպելու Միություն և առաջադիմություն կոմիտեն, մտերիմ էր հատկապես ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի անդամ Բահաեդին Շաքիրի հետ: «Ինձ համար սրբազան պարտք է կարողացածս ամեն ձևով օգնել մի նախաձեռնության, որն անկեղծությամբ ու անարատությամբ օգնել է քեզ նման մի եղբայր», գրել է Քելեկյանը Շաքիրին՝ ավելացնելով, թե «քանի որ իմ անձնական կապը քեզ հետ հավերժական է, ինչ հանգամանքներում և որտեղ էլ որ գտնվելիս լինեմ... կասկած չունենաս, որ ինչ օգնություն որ կարողանամ տալ, ինձ համար բարեբախտություն կլինի»⁵²: Այս օգնության ժամանակ էր, որ փորձ է արվել աուլթան Արդուլիամիդի դեմ մահափորձ կազմակերպել⁵³: Ի դժբախտություն Քելեկյանի, Շաքիրը ցեղասպանության հիմնադիրներից էր, և նրա «եղբայրը» գտնվում էր այն հայ մտավորականների շարքերում, որոնք ձերբակալվել են 1915 թ. ապրիլի 24-ին: Հետագայում Քելեկյանը ՄԱԿ-ի մասին ասել է. «Նրանք պատրաստվում էին հայերի կոտորածներն իրականացնել մաթեմատիկական ճշգրտությամբ»⁵⁴:

52 Քելեկյանը նույնիսկ կեղծ անձնագիր է պատրաստել Շաքիրի համար, որպեսզի վերջինս կարողանա ճամփորդել: Erdal Aydoğan ve İsmail Eyyüpoğlu, Bahaeddin Şakir Bey'in Biraktığı Vesikalara Göre İttihat ve Terakki (İstanbul, Alternatif Yayınları, 2004), 317, 339, և 347:

53 Նույն տեղում, 326–28 և 340–45:

54 Andonian, Exile, Trauma and Death, 160.

Անկախ այն հանգամանքից, թե Քելեկյանը նկատի ուներ 5-10 տոկոսի սկզբունքը, թե ոչ՝ պատահականություն չէր անշուշտ, որ Վիճակագրական բաժանմունքը Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի կարևորագույն միավորումներից մեկն էր, իսկ տեղահանության բոլոր խնդիրները ՑՆԿՎ-ի պատասխանատվության տակ էին⁵⁵:

Այստեղ մեր առջև ծառանում է ցեղասպանությունն իբրև մեծ տարածքի վրա ժողովրդագրական բանաձև տարածելու հաշվարկված փորձը⁵⁶: Վավերագրական փաստաթղթերը ցույց են տալիս, որ կատարյալ այդ հարաբերակցությունը խստիվ իրագործվել է Օսմանյան կայսրության արևմտյան նահանգներում և հարավ-արևելյան նշանակման վայրերում, ուր տարվել են տեղահանված հայերը (որոնք հիմնականում համապատասխանում են այսօրվա Սիրիայի ու Իրաքի տարածքներին): Արևելյան նահանգներում իրագործումը թեթևակիորեն տարբեր է եղել:

Հայերը զանգվածայնորեն տեղահանվել են նաև արևմտյան Անատոլիայից: Սակայն արևմտյան որոշ նահանգներում, որտեղ հայ ազգաբնակչությունը շատ խիտ չէր, տարվել է այն քաղաքականությունը, որ նրանց կամ թողնեն իրենց եղած վայրերում, կամ ենթարկեն «ներքին ցրման» իրենց հայրենի նահանգում՝ համաձայն 5 տոկոսի սկզբունքի: Օրինակ, Անվտանգության վարչության կողմից

55 Nedim İpek, İmparatorluktan Ulus Devlete Göçler (Istanbul, Serander, 2006), 142-67.

56 Ֆուաթ Դյունդարն առաջինն էր, որ ուշադրություն է հրավիրել հայերի տեղահանությունների հարցում վիճակագրության մեծ կարևորության վրա: Այս խնդրին վերաբերող աշխատանքում նա գրել է, որ իր գլխավոր թեզը «հիմնական այն դերի վերահանումն է, որ վիճակագրությունն ու մաթեմատիկան են խաղացել ազգային հարցերում», և որ «երիտարքների գործողությունը մաթեմատիկական գործողություն էր» (Fuat Dündar, Modern Türkiye'nin Şifresi, 21 և 32): Տես նաև նրա Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question, 1 և 105-6: Եվ անգլերեն, և թուրքերեն հրատարակություններում աներկայորեն ընդունվում են Թուրքիայի պետության կողմից ցեղասպանության ժխտման որոշ փաստարկեր: Դյունդարի որոշ տեսակետների քննադատության համար տես Taner Akçam, "Ermeni Meselesi Hallolunmüstür" Kitabına Yönelen Eleştiriler ya da Tarihçinin Belgeyle İlişkisi Üzerine," Akçam, 1915 Yazıları (Istanbul, İletişim Yayınları, 2010), 39-111: Գրքի բազմակողմանի քննադատության համար տես Ayhan Aktar և Abdulhamit Kırmızı, "Bon Pour L'Orient": Fuat Dündar'ın kitabını deşifre ederken. . . ." Tarih ve Toplum №8 (2009թ. գարնան), 157-86:

1915թ. օգոստոսին Անթալիայի գավառ ուղարկված հեռագրով տեղահան պաշտոնյաները տեղեկացվել են, որ «նկատի առնելով նրանց փոքր թվերը՝ ներկայումս կարիք չկա հայերին այդտեղից տեղահանելու»⁵⁷: Հունիսի սկզբին վարչությունը Չանաքքալեի շրջանին խոփուրդ է տվել, որ «եթե շրջանի սահմաններում կարելի է գտնել տեղահանության ու վերաբնակեցման հարմար վայր [նրանց ուղարկել այնտեղ], սակայն, եթե նման վայր չի գտնվի, նրանց Քարեսի (Բալիքեսիր) ուղարկելը»⁵⁸: Համաձայն Ցեղային վարչության (ՑՆԿՎ) հեռագրի, Բուրսայից (Հյուդավենդիգար) ուղարկված հայերը պետք է վերաբնակեցվեին Բիլեջիկի պարպված հայկական գյուղերում: Այդ գործողության արդյունքների մասին ևս զեկույց է պահանջվել⁵⁹:

Կեսարիայի գավառապետարանին Անվտանգության վարչությունը հրահանգել է, որ «Բյույուկ Ինջեսու գյուղի հայերը տեղահանվեն Քոնյայի նահանգի ներսում դեպի որևէ վայր, որտեղ ներկայում ոչ ոք չկա, ինչպես Աքսարայն է»⁶⁰: Իզմիրը ևս նման ցուցումներ է ստացել: 1915թ. օգոստոսի սկզբին Անվտանգության վարչությունը պահանջել է, որ հայերից ոմանց «ազատեն տեղահանությունից»⁶¹: Գավառապետը պետք է «հավաստիանար, որ [անընթաց] ընկերությունում աշխատող բանվորներն ու պաշտոնյաները իրենց ընտանիքների հետ հաստատվեն մահմեդական գյուղերում՝ պայմանով, որ նրանք չգերազանցեն [ամբողջ բնակչության] 5 տոկոսը, և այն ձևով, որը կապահովի նրանց ծառայության շարունակումը, մինչև նրանց [ինա-

57 BOA/DH.ŞFR, № 55/59, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անթալիայի գավառ, թվագրված 1915թ. օգոստոսի 17:

58 BOA/DH.ŞFR, № 53/289, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի գավառ, թվագրված 1915թ. հունիսի 8:

59 BOA/DH.ŞFR, № 54/335 և 336, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հյուդավենդիգարի (Բուրսա) նահանգ և Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1915թ. հուլիսի 7:

60 BOA/DH.ŞFR, № 53/246, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1915թ. հունիսի 5:

61 BOA/DH.ŞFR, № 54-A/263, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1915թ. օգոստոսի 4:

րավոր լինի) փոխարինել»⁶²: Համաձայն միևնույն օրն ուղարկված հաջորդ հեռագրի, «Բարձրագույն հրամանատարությանը զեկուցվել է, որ այն հայ աշխատողները, որոնց ծառայության շարունակումը Իզմիրի թաղիքի գործարանում ներկայումս անհրաժեշտ է, ելնելով իրենց տեղահանությունից, պետք է տեղավորվեն մահմեդական գյուղերում [այնպես, որ կազմեն ոչ ավելի քան] 5 տոկոս, և այնպես, որ նրանց աշխատանքի շարունակումը չխաթարվի»⁶³:

Որոշ վայրերում, ինչպես Հալեպում ու Կեսարիայում, միայն բողոքական ու կաթոլիկ հայերը պետք է բաշխվեին տեղական մահմեդականների մեջ: 1915 թ. օգոստոսի 28-ին Հալեպի իշխանություններին կարգադրվել է

ատանձին զեկույցներ ներկայացնել հայ բողոքականների ու կաթոլիկների վերաբերյալ, որոնք մինչև այդ չեն տեղահանվել և գտնվում են այդտեղ, և, եթե նրանց ապրած վայրերում դեռևս չտեղահանվածների թվերը մահմեդական բնակչության համեմատ շատ մեծ չեն, նրանց տարածք ու բաշխեք [շրջակայքի] մահմեդական գյուղերի վրա՝ համաձայն համապատասխան շրջաբերականներում կամ հատուկ հաղորդագրություններում ամփոփված ուղեցույցների⁶⁴:

Կեսարիայի գավառապետը 1915 թ. սեպտեմբերի 18-ին զեկուցել է.

62 BOA/DH.SFR, № 54-A/293, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 7:

63 BOA/DH.SFR, № 54-A/294, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 7: Շատ հնարավոր է, որ այս հեռագիրը և նախորդ ծանոթագրության մեջ նշվածը վերաբերում են միևնույն դեպքերին: Քննարկման նյութը հայ աշխատավորների տեղահանության ժամանակավոր հետաձգումն է: Երկու հեռագրերի ձևակերպումների մեջ («մինչև նրանց փոխարինումը») չկա ոչինչ, որ քաջառի այն հնարավորությունը, որ այդ հայերն ավելի ուշ ենթարկվել են տեղահանության:

64 BOA/DH.SFR, № 55/265, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 28: Այս և հղված նախորդ հեռագիրը թերևս ուղարկվել են ճիշտ այն ժամանակ, երբ ներքին գործերի նախարար Թալեթը վստահեցնում էր գերմանացի պաշտոնյաներին, որ հայ բողոքականներն ու կաթոլիկները (ի հակադրություն Հայ առաքելական եկեղեցու անդամների) կազատվեն տեղահանություններից:

Ներկայացվել է, որ կենտրոնում ու արվարձաններում 46.463 [հայաստանյաց եկեղեցու] հայ կա, 1.517 կաթոլիկ [հայ] և 1.957 բողոքական [հայ], այսպիսով ամբողջ հայ ազգաբնակչությունը գրանցված է իբրև 49.947, որոնցից 44.271-ը տեղահանվել է դեպի Հալեպ, Դամասկոս ու Մոսուլ, և թեև 765 մարդ ուղարկվել էր ավելի վաղ՝ փախչելու, վերադառնալու և թաքնվելու պատճառով կրկին բռնվել է և տեղահանության ընթացքի մեջ է, իսկ զինվորների ընտանիքների գավառում մնացող 4.911 [անդամները], աննշան թվով բողոքական ու կաթոլիկ մնացողներով, 5 տոկոսի համամասնությամբ բաշխվել են գյուղերի վրա⁶⁵:

Թե՛ սկզբունքային և թե՛ գործնական առումներով 5 տոկոսի սկզբունքով բաշխման ամենահանգամանակի պարզաբանումը տրբվել է 1915 թ. օգոստոսի 16-ին: Այդ փաստաթուղթը բանակի հրամանատարությանն ու Ներքին գործերի նախարարությանն ուղարկված կարգադրության պատճենն է.

Տեղաշարժվելիք հայերը, որոնց խնամակալները զինվորներ են կամ պաշտոնյաներ, մնալու են այն վայրերում, ուր գտնվում են մինչ այդ: Եթե այդ [հայերը] հինգ տնից ավելի են այն քաղաքում կամ գյուղում, ուր մնում են, ավելցուկը, սկզբում զինվորների ընտանիքներից, պետք է բաշխվի իրենց ցանկացած մահմեդական գյուղերի վրա այն մարզերում ու գավառներում, որոնց հպատակն են իրենք՝ պայմանով, որ նրանց խտությունը չավելանա, և հարգվի հարյուրի մեջ մինչև միայն հինգ տոկոսի հարաբերությունը: Այդ ձևով քսան տուն ունեցող մահմեդական գյուղում հայերի միայն մեկ տուն կարող է գտնվել, իսկ հարյուրից ավելի տուն ունեցող գյուղերում ու քաղաքներում կարող է գտնվել ոչ ավելի քան հինգ տուն: Ներքին գործերի նախարարությունը ևս նահանգներին շրջաբերականով իրագեկել է այս ձևի մասին: Պետք է արագ պատրաստվեն զինվորական ընտանիքների ցուցակները և բաժանվեն քաղաքացիական ծառայության տեղական պաշտոնյաներին⁶⁶:

65 BOA/DH.EUM, 2,Sube, 68/75, Կեսարիայի գավառապետի ծածկագրման գրասենյակից Ներքին գործերի նախարարություն ուղարկված հեռագիրը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 18:

66 BOA/DH.EUM.VRK, № 15/49, Առաջին, Երրորդ ու Հինգերորդ բանակային

Որոշ վայրերում տների թվի վրա հիմնված հաշվարկները չեն արտացոլել բաշխվելիք բոլոր հայերի ճշգրիտ գումարը: Այսպես, 1916 թ. հունվարի 6-ին Քյուրթահյայի գավառից պահանջվել է երկու օրվա ընթացքում գեկուցել, թե «քանի հայ է գտնվում 67 տան մեջ»⁶⁷:

Որոշ փաստեր վկայում են այն մասին, որ հայերն իրենք տեղյակ էին 5 տոկոսի կիրառման հանգամանքին: Այդ է վկայում Քոնյայի նահանգի Կարահիսար բնակավայրի հայերի հայցագիրը, որոնց արտաքսել էին 1915 թ. օգոստոսի 5-ին⁶⁸. «Քանի որ... ակներև է ձեր բարձր կառավարությանը, որ Օսմանյան հավերժական պետության կազմավորումից ի վեր մեր գավառում ապրող բնակչության մտավորապես 2 տոկոսը կազմող հայ ժողովուրդը ոչ մի պարագայում թույլ չի տվել, որ հավատարմության իր համրափն արատավորվի, խնդրում ենք, որ կայսերական գթությունը, որով ձեր արդարամիտ կառավարությունը առատորեն տնօրինել է Բուրդուրի ու Մպարտայի հայ ժողովուրդին, արժանի ձևով կարգադրի նաև մեր հողի անմեղ մարդկանց առնչությամբ»⁶⁹:

Արևելյան նահանգներում իրարամերժ տեղեկություններ կան 5 տոկոսի կարգի վերաբերյալ: Պաշտոնական որոշ փաստաթղթերում ասվում է, որ այդ տարածքում կարգը չի կիրառվել: Տեղահանվել են բոլոր հայերը՝ առանց առանձնացման կամ ներքին բաշխման: 1915 թ. մայիսին՝ տեղահանությունների սկզբնական փուլում, ներքին գործերի նախարարն հաղորդել է Էրզրում. «Քանի որ նահանգը գտնվում է Ռուսաստանի հետ սահմանին, համաձայն մեր հետևած սկզբունքի,

կորպուսներին Ջինվորական գերագույն հրամանատարության ուղարկած հրամանի պատճենը, թվագրված 1915 թ. օգոստոսի 16:

67 BOA/DH.SFR, № 59/232, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քյուրթահյայի գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 6:

68 BOA/DH.SFR, № 54-A/276, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի ու Նյուդավնեղիզարի (Բուրսա) նահանգներ և Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Նիդղեի, Էսքիշեհիբի ու Քարեսիի (Բալիքեսիբ) գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 5:

69 BOA/DH.EUM, 2.Şube, № 12/11/1, Քոնյայի Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) ժողովուրդի անունից Նիկողոս օղլու Օհաննեսի, Ազրալյան Արթինի, Փափագ օղլու Մտեփանի ու Ներսես օղլու Մարքադայի հեռագիրը Վարչապետական բարձր գրասենյակ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 5: Նամակից հասկացվում է, որ առաջին խնդրանքը կատարվել է 1915 թ. սեպտեմբերի 1-ին:

ոչ մի հայի չի կարելի թույլ տալ մնալու այդտեղ»⁷⁰: 1915 թ. հունիսի 20-ին արևելյան նահանգներին հրահանգվել է, որ «նահանգի քաղաքներում ու գյուղերում ապրող բոլոր հայերին պետք է տեղահանել իրենց ընտանիքների հետ միասին [և] առանց բացառության ուղարկել Մոսուլի նահանգ և Ուրֆայի ու [Դեր] Ջորի ուղղություններով»⁷¹:

Սակայն այլ աղբյուրներում նշվում է, որ այդ նահանգներում իրականացվել է 5 տոկոսի կարգը: Ալի Ֆուաթ Էլդենը, որը ծառայել է Ջենալ փաշայի (Միրիայի նահանգապետ և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Չորրորդ բանակի հրամանատար) ջախմբում և տարբեր բարձրաստիճան, ինչպես շտաբի հրամանատարի, պաշտոններում, իր հուշագրության մեջ ընդգրկել է Բահաեղին Շաքիրի մի հեռագիրը Ջենալ փաշային: «Տրապիզոնի, Էրզրումի, Սվազի, Մամուրեթյուլագիզի [և] Դիյարբեքիրի տեղահանվածների 95 տոկոսին ուղարկում ենք Մոսուլի հարավը», գրել է Շաքիրը⁷²: Այլ փաստաթղթերում ևս նշվում է, որ որոշ հայերի այդ տարածքից չեն տեղահանել: Ակնհայտորեն, որոշ բացառություններ կատարվել են: Օրինակ, Մալաթիայի գավառապետը հաղորդել է Բիթլիսի նահանգ, որ «Մալաթիայում 1.582 տներում գրանցված 3.341 տղամարդկանցից 3.594 կանանցից տեղահանվել են 3.246 տղամարդ ու 3.492 կին 1.550 տնից, իսկ մնացած 32 տնից 95 տղամարդ ու 102 կին թողվել են իրեն արհեստավորներ»: Բացի այդ, 315 կաթոլիկ, 130 բողոքական և 30 լատինական եկեղեցու ուղղափառ մնացել են նրանց հետ, ովքեր եկել են այլ վայրերից⁷³: Բիթլիսի նահանգապետ Սաքիթ բեյը, ի պա-

70 BOA/DH.SFR, № 53/129, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 27:

71 BOA/DH.SFR, № 54/87, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի, Սվազի ու Դիյարբեքիրի նահանգներ և Ջանկիլի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 20:

72 Ali Fuad Elden, Birinci Dünya Harbinde Suriye Hatıraları (İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları, 2005), 150. Ալի Ֆուադը «ներգաղթող» (göçmen) գրելով նկատի ունի հայերին: Այս հեռագիրն ընդգրկված է նրա գրքի այն հատվածում, որը վերաբերում է հայերի տեղահանությանը, և, հեռագրից հետո, նա շարունակում է պատմել տեղահանությունների վերաբերյալ իր հիշողությունները:

73 AAPJ, արկղ 7, գործ H, փաստ. № 109, Մալաթիայի գավառից հեռագիր Բիթլիսի նահանգ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 13:

տասխան այս հեռագրի, նշել է. «Արհեստավոր կանանց թողնելուց վաաս չկա՝ այն անհրաժեշտ պայմանով, որ նրանք առավելագույն չափով ընտրված լինեն կաթոլիկներից ու բողոքականներից և [թվով] տաս-տասնհինգից չանցնեն»⁷⁴: Հարկավոր է ավելացնել, որ, թեև այդ նահանգի բոլոր հայերը պետք է դուրս բերվեին, տղա ու աղջիկ երեխաներին հավաքում էին՝ մահմեդական ընտանիքներում ուծացնելու նպատակով:

10 ՏՈԿՈՍԻ ԿԱՐԳԸ ԱՅՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ, ՈՒՐ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԷԻՆ ՅԱՅԵՐԸ

Հայերի բնակության համար որոշված տարածքների և տեղական բնակչության համեմատ նրանց համամասնության վերաբերյալ ամենավաղ հաղորդագրությունները թվագրված են 1915 թ. ապրիլի վերջով: 1915 թ. ապրիլի 24-ին Ներքին գործերի նախարարության մի հեռագրում բնակեցման տարածքները բնորոշված են իբրև «Հալեպի [նահանգի] հարավ-արևելյան հատված և [Դեր] Ջորի ու Ուրֆայի մերձակայք»⁷⁵: Ավելի մանրամասն նկարագրություն ենք գտնում Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային և Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգապետերին մայիսի 23-ին ուղարկված հեռագրում: Դրա մեջ ասվում է, որ հայերին պետք է բնակեցնել «Մոսուլի նահանգի հարավային հատվածում՝ հյուսիսային հատվածից հեռու, որը սահմանակից է Վանի նահանգին, [Դեր] Ջորի գավառում ու Ուրֆայում (կենտրոնական մասից հեռու), Դամասկոսի նահանգի արևելյան մասում և Հալեպի նահանգի արևելյան ու հարավ-արևելյան մասերում»⁷⁶:

74 AAPJ, արկղ 7, գործ H, փաստ. № 645, Բիթլիսի նահանգապետ Սարիթի ծածկագրված հեռագիրը Մալաթիայի գավառապետին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 25:

75 BOA/DH.ŞFR, № 52/93, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915 թ. ապրիլի 24:

76 BOA/DH.ŞFR, № 53/94, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կայսերական չորրորդ բանակին, թվագրված 1915 թ. մայիսի 23: Մինևույն տեղեկությամբ մեկ այլ հեռագիր մինևույն օրն ուղարկվել է Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգներ. տե՛ս BOA/DH.ŞFR, № 53/93:

Ներքին գործերի նախարարությունը մեծ վեճի զրասենյակին 1915 թ. մայիսի 26-ին տեղեկացրել է, որ հայերի տեղահանություններն ավելի են: Հայերին տեղափոխելու էին «Մոսուլի նահանգ՝ բացառությամբ Վանի նահանգին սահմանակից հյուսիսային մասի և Ջորի գավառի, Ուրֆայի գավառի հարավային մասը՝ բացառելով Ուրֆայի կենտրոնը, Հալեպի նահանգի արևելյան ու հարավ-արևելյան մասերը և Դամասկոսի նահանգի արևելյան մասը»⁷⁷:

Մայիսի 31-ին Նախարարների խորհուրդը տասնհինգ կետանոց շրջաբերական է պատրաստել՝ այդ տարածքները սահմանելով հայերի վերաբնակեցման վայրեր⁷⁸: Մայիսի 26-ով թվագրված մի գրության մեջ, որ օսմանյան Պատերազմի նախարարությունն ուղարկել է Ներքին գործերի նախարարությանը, նշվում է, որ «հայ բնակչությունը այն վայրերում, ուր ուղարկվում է, չպետք է գերազանցի [քոչվոր] ցեղային ու մահմեդական բնակիչների 10 տոկոսը»⁷⁹:

Հետագա մի քանի ամիսների ընթացքում վերաբնակեցման տարածքներն ընդարձակվել են: 1915 թ. հուլիսի 5-ին մեծ թվով նահանգային ու տեղական պաշտոնյաների ուղարկված ծածկագրված հեռագրում սահմանները վերահաստատվել են իբրև.

1. Պարսկաստանի սահմանից ութսուն կիլոմետր հեռավորության վրա Քերքյուքի շրջանում գոյություն ունեցող քաղաքներն ու գյուղերը, Մոսուլի նահանգից հարավ և արևմուտք ընկած տարածքները,
2. Դիյարբեքիրի սահմանից քսանհինգ կիլոմետր այն կողմ ընկած Դեր Ջորի շրջանի հարավային ու արևմտյան տարածքները և ներառյալ Խարուրի ու Եփրատի հովտում բնակեցված բոլոր վայրերը,
3. Բացառությամբ Հալեպի նահանգի հյուսիսային հատվածի՝ արևելքի և հարավի ու հարավ-արևմուտքի բոլոր գյուղերն ու քաղաքները և ներառյալ Դամասկոսի նահանգի Հավրան ու Քերեք շրջանները, երկաթուղուց քսանհինգ կիլոմետր հեռավորության վրա ընկած բոլոր գյուղերն ու քաղաքները:

77 Համապատասխան թղթակցության համար տե՛ս Bayur, Türk İnkilap Tarihi, h. 3, մաս 3, 37–42:

78 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 131:

79 İhsan Sakarya, Belgelerle Ermeni Sorunu, 224; Kamuran Gürün, Ermeni Dosyası (Ankara, Bilgi Yayınevi, 1988), 277.

Փաստաթուղթն ավարտվում էր այն հիշեցմամբ, որ հայերին «պետք է բաշխել ու բնակեցնել մահմեդական բնակչության մեջ՝ 10 տոկոսի հարաբերակցությամբ»⁸⁰: Իրադրությունը Դեր Ջորի գավառային վարչակազմին բացատրվել է միևնույն օրը, միևնույն հեռագրով և պահանջվել է, որ ժամանողները տեղավորվեն այդ համամասնությանը համապատասխան⁸¹:

Երկու օր անց Դեր Ջորի գավառը զեկուցել է, որ «արդեն ժամանած և ճանապարհին գտնվող հայերի [թիվը] փաստորեն գերազանցում է գավառի գրանցված ամբողջ բնակչության 10 տոկոսը»⁸²: Հեռագրում ասվում էր նաև, որ Դեր Ջորի ցեղերը քոչվոր էին, և նշվում էին մարդահամարի ու բնակեցման հարցերում առկա բարդությունները: Ի պատասխան, 1915 թ. հուլիսի 12-ին ՑՆԿՎ-ն մի հեռագիր է ուղարկել մի շարք շրջաններ և տեղի պաշտոնյաներին հիշեցրել, որ «հայերին պետք է տեղավորել Հալեպի նահանգի հարավային մասում, Դամասկոսի նահանգի և Քերքյուքի գավառի արևելյան մասում», հետևաբար, «նրանք, ովքեր պետք է տեղահանվեին և ուղարկվեին [Դեր] Ջորի գավառ, որն արդեն գերազանցել է իր 10 տոկոսի [սահմանը]», այլևս չպետք է ուղարկվեն այնտեղ, այլ փոխարենը՝ նշված նոր նշանակման վայրերը⁸³: Մի առիթով, Դամաս-

80 BOA/DH.SFR, № 54/315, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Մոսուլի նահանգներ, Ադանայի ու Հալեպի Լքված գոյքի լուծարման հանձնախմբի նախագահին և (Դեր) Ջորի, Մարաշի, Ջանիկի, Կեսարիայի ու Իզմիրի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 5:

81 BOA/DH.SFR, № 54/308, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Դեր Ջորի գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 5:

82 BOA/DH, 2.Şube, 3/60/1, Դեր Ջորի գավառի անունից Քամիլի հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հուլիսի 7:

83 BOA/DH.SFR, № 54/413, Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Մամուրեթյուլագիզի ու Ուրֆայի նահանգներ և Կեսարիայի, Ջանիկի ու Իզմիրի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 12: Միևնույն օրը միևնույն վայրերն ուղարկված մեկ այլ հեռագրով տեղեկացվել է, որ Դեր Ջոր ուղարկված հայերն անցել են այնտեղի բնակչության 10 տոկոսը: Ինչպես կտեսնենք ստորև, 1916 թ. սկզբին հայերին կրկին սկսել են համատարած կերպով ուղարկել Դեր Ջոր՝ չնայած 10 տոկոսն անցած լինելու հանգամանքին: Դա նշանակում է, որ այդ ժամանակ երիտթուրքերը հրաժարվել էին բնակեցման իրենց քաղա-

կառի նահանգի սահմաններում հայերին ցրելու համար, թույլատրվել է բնակչության ընդամենը 2 տոկոսի համամասնություն: 1915 թ. հոկտեմբերի 18-ի ծածկագրված հեռագրում նշվում է.

30.000 [հայերի] բաշխման վերաբերյալ, որոնք գտնվում են Հալեպում... բացառապես նրանցից ոմանց տեղավորումը, որոնք պաշտոնյաներ են կամ ծառայում են պետությանը, և նրանց, ովքեր պետությանը լավ ծառայություն են մատուցում և ապստամբ գաղափար չեն աջակցել, նրանց պայմանները մի աստիճան բարելավելու նպատակով, որոշվել է Չորրորդ բանակի հրամանատարության համաձայնությամբ, այն պայմանով, որ չանցնի քաղաքներում ու գյուղերում ներկա մարդկանց 2 տոկոսը, բացառությամբ այն վայրերի, որոնք գտնվում են երկաթուղու վրա, և Դամասկոս, Խամա ու Խոմս քաղաքների, և նրանց Հալեպի ոստիկանապետի տված հատուկ փաստաթղթերով ուղարկելը, որ ընդգրկված է հատուկ հրահանգների մեջ, սկսվել է⁸⁴:

Ինչպես հասկացվում է հեռագրից, երեսուն հազարի մեջ մի խումբ հայ մասնագետներ իրենց ծառայությունների հիման վրա ազատվել են, և նրանց թույլ է տրվել վերաբնակվել ոչ-ռազմավարական շրջաններում, որտեղ նրանք թվով կգերազանցվեին 50:1-ի հարաբերությամբ (այս բաշխման մասին ավելի երկար կխոսենք ստորև՝ ուժացմանը վերաբերող հատվածում)⁸⁵: ՑՆԿՎ-ի տնօրեն Շուքրու Քայայի ուղարկված հեռագրից կարելի է հասկանալ, որ Դամասկոսի նահանգում կատարված բաշխումների մեջ այդ ամիսների

թվականությունից: Հայերին ուղարկում էին Դեր Ջոր՝ քանցնելու համար:

84 BOA/DH.EUM, 2.Şube, № 68/80, Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի ու Հալեպի նահանգներ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 18: Այդ որոշումը մեկ այլ հեռագրով՝ թվագրված 1915 թ. հոկտեմբերի 25, հաղորդել է Շուքրու քեյը, որն այդ ժամանակ Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու ներգաղթողների բնակեցման վարչության (ՑՆԿՎ) տնօրենն էր Հալեպում (տե՛ս BOA/DH.SFR, № 57/125):

85 Երվանդ Օտյանը համեմատաբար հաջողակ այն հայերից էր, որը կարողացել էր փաստաթղթեր ձեռք բերել և հաստատվել Համայում (Yervant Odian, Accursed Years: My Exile and Return from Der Zor, 1914-1919 [London, Gomidas Institute, 2009], 96-97):

ընթացքում պահպանվել է 10 տոկոսի կարգը: 1915 թ. հոկտեմբերի 26-ի մի հեռագրով Շուքրու Քայան հայտնում է, որ «այն տեղեկությունների ձեռքբերման արդյունքում, որոնք վերաբերում են գաղթականներին, որոնց պետք է տեղավորել սիրիական նահանգի հետ կապված վայրերում, Չորրորդ բանակի հրամանատարության հետ խորհրդակցության միջոցով», նահանգում կանխորոշված տարածքում, պայմանով, որ սահմանված գծից արևելք չլինի, նահանգում գտնվող հայերին «պետք է տեղավորել այնպես, որ քաղաքի ու գյուղերի բնակչության 10 տոկոսը չանցնեն»⁸⁶: Ինչպես ցույց տրվեց, բացի մի դեպքից, 5-10 տոկոսի կարգը հետևողականորեն պահպանվում է բոլոր փաստաթղթերում: Տեղահանության ու վերաբնակեցման ողջ գործընթացում շարունակվել է հատուկ ուշադրություն հատկացվել բնակչության համամասնությանը: Հենց որ հայերի խտությունը որևէ վայրում գերազանցում էր սահմանված թվերը, կառավարությունն անմիջապես միջամտում էր՝ կարգադրելով հայերին տեղափոխել այլ շրջաններ:

1915 թ. սեպտեմբերի 8-ին Հալեպի նահանգ ուղարկված հեռագրում Անվտանգության վարչությունը խորհուրդ է տվել «անընդունելի է զանազան վայրերից այդտեղ ուղարկված [բոլոր] հայերի մեծաքանակ ընդունումը և [նահանգային] կենտրոնում ու շուրջը նրանց վերաբնակեցումը, քանի որ այն հետագայում կհանգեցնի տարածքում նրանց համեմատական մեծամասնություն կազմելուն», հետևաբար «նրանց պետք է մշտապես հսկել այս նկատառմամբ, և բոլոր այն [տեղահանված հայերին], բացի արդեն ժամանածներից, չպետք է ուղարկել նահանգի խորքերը, այլ փոխարենը ուղարկել Ուրֆայի շրջակա տարածքը»⁸⁷:

1916 թ. հունվարի 11-ին կրկին Հալեպի նահանգ ուղարկված համանման բովանդակությամբ մեկ այլ հեռագրում հարց է տրվում Իսլահիյեում հայերի անցանկալի կուտակումների մասին.

Ադանայի նահանգից տեղեկացել ենք, որ Հալեպից հայերը շարունակ Իսլահիյե են գալիս ցամաքով ու գնացքով՝ առանց նահանգին տեղեկացնելու, թե իրենք փաստաթղթեր ունեն, թե ոչ, և Իսլահիյեում ու դրա շրջակայքում տասնհինգ, քսան հազար հայի հավաքելը, չնայած այսքան ինքնագոհությանը, չի կարող հարմար լինել: [Պահանջվում է] հետաքննության միջոցով այն բանի հստակեցման հաղորդագրությունը, թե որտեղ և որ օրն է արձակվել նրանց այդ տարածք ուղարկելու հրամանն ու թույլտվությունը⁸⁸:

Տեղահանությունների ողջ ընթացքում վճռական նշանակություն է ունեցել բնակեցման նպատակային տարածքներում հայերի բնակեցման համամասնությունը: Բացի նշված եզակի բացառությունից, 5-10 տոկոսի սկզբունքը հետևողականությամբ պահպանվում է բոլոր փաստաթղթերում:

ԿԱՊ ԿԱ՝ ԱՐԴՅՈՔ 5-10 ՏՈԿՈՍԻ ԶԱՆԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

5-10 տոկոսի կարգը պետության բարձրագույն մակարդակների ծածկագրված ու հույժ գաղտնի թղթագրության մեջ է, և դրա կառուցությունը կասկած չի հարուցում: Եթե հայերի բաշխումն այն ձևով, որ սահմանված բնակչության վայրերում նրանք տեղի մահմեդական բնակչության 10 տոկոսից չանցնեն, ծրագրված է եղել նախապես, դա կարելի է համարել այն փաստի հստակ ցուցիչը, որ հայերի հանդեպ քաղաքականությունն իրոք եղել է ցեղասպանության քաղաքականություն: 10 տոկոսի համամասնությունը ցեղասպանության ողջ ընթացքում կարծես թե եղել է այդ քաղաքականության իրականացման գործուն նպատակը, հատկապես 1916 թ. ամռանը կոտորածների երկրորդ ալիքի ժամանակ⁸⁹:

88 BOA/DH.SFR, № 59/277, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. հունվարի 11:

89 Ողջ մնացած հայերը, որոնք հասել էին վերը նշված բնակեցման վայրերը, կոտորածների երկրորդ ալիքի թիրախն էին. Երկրորդ ալիքի կոտորածները սաստկացան 1916 թ. ամռան ամիսներին և շարունակվեցին մինչև տարեվերջ: Կոտորածների մասին մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Raymond Kévorkian, ed., "L'extermination des déportés arméniens

86 BOA/DH.SFR, № 494/109, Ներգաղթողների գործերի տնօրեն Շուքրու Քայանի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 26:

87 BOA/DH.SFR, № 55-A/145, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 8:

Ներքին գործերի նախարարությունը տեղահանության քաղաքականության ընդհանուր շրջանակը ներկայացրել է 1915 թ. նոյեմբերին Հալեպ ուղարկված հաղորդագրության մեջ. «Որոշ մարդկանց հեռու ուղարկելու նպատակը ապագայի համար մեր հայրենիքի բարօրության ապահովումն է, որովհետև նրանք ուր էլ ապրեն, չեն լքելու իրենց ապստամբ գաղափարները, ուրեմն մենք պետք է փորձենք նվազեցնել նրանց թիվը այնքան, որքան հնարավոր է»⁹⁰: Արդուլահադ Նուրին, որը ղեկավարում էր Հալեպի վերաբնակեցման գրասենյակը, պարզ հասկանում էր 5-10 տոկոսի կարգի և «որոշ մարդկանց» թիվը հնարավորինս նվազեցնելու ջանքերի միջև եղած կապը: «Հարցումներ են արվել[,] հասկացվել է, որ ընդհանուր տեղահանության ենթարկված հայերի հազիվ 10 տոկոսն է հասել իրենց համար որոշված վայրերը, մնացածը մահացել է բնական պատճառներից, ինչպիսին են սովի ու հիվանդությունները», գեկուցել է Նուրին 1916 թ. հունվարի 10-ին: «Ձեզ տեղեկացնում ենք, որ աշխատում ենք միննույն արդյունքներն ստանալ նրանց նկատմամբ, ովքեր դեռևս ողջ են՝ կիրառելով խիստ միջոցներ»⁹¹:

Թվերի լեզուն խիստ հստակ է: Օսմանյան 1914 թ. մարդահամարի համաձայն, կայսրության, ներառյալ արաբական նահանգների, բնակչությունը մոտավորապես 18,5 միլիոն մարդ էր: Հանելով այդ վերջիններին՝ Անատոլիայի բնակչությունը պետք է լիներ 15-ից 17,5 միլիոն⁹²: Անատոլիայի հայ ազգաբնակչությունը մինչև պատերազմը,

օսմանյան մարդահամարի, 1,3 միլիոն էր (Ջասթին ՄըքՔարթիի համաձայն՝ մոտ 1,5 միլիոն), մինչդեռ համաձայն Հայ լուսավորչական կենտրոնի, նրանց թիվը 2,1 միլիոն էր⁹³: Ինչպես տեսանք, օսմանյան վերջակազմը նպատակ ուներ հայերին տեղահանելու դեպի օսմանյան մի քանի նահանգներ, որոնք այսօրվա Սիրիան ու Իրաքն են՝ առանց գերազանցելու տեղի բնակչության, ճնշող մեծամասնությամբ մահմեդականների հարաբերությամբ նրանց 10 տոկոսը: Ինչպես էր դա կատարվելու:

Հենվելով ձեռքի տակ եղած 1914 թ. օսմանյան պետական վիճակագրության վրա՝ ավելի մանրամասն ուսումնասիրենք այդ շրջանների մահմեդականների թվերը⁹⁴: Մահմեդական բնակչության հաշվարկներն անելիս կցանկանայի ընդգծել մի հանգամանք: Կառավարության 1915 թ. մայիսի ու հունիսի հաղորդագրությունները, նշելով հանդերձ, որ հայերին պետք է տեղավորել այնպիսի նահանգների նահանգներում, ինչպիսին են Հալեպը, Դամասկոսն ու Մոսուլը, միևնույն ժամանակ նշում էին որոշ սահմանափակումներ, ինչպես «բացառելով Հալեպի նահանգի հյուսիսային հատվածը», կամ «Մոսուլի նահանգի հարավային մասում՝ բացի հյուսիսային հատվածից», իսկ հետագայում, կրկին Մոսուլի վերաբերյալ՝ «նահանգի հարավային ու արևմտյան հատվածները»: Ես ցանկանում եմ այդ շրջանի բնակչությունը դիտարկել՝ առանց հատուկ ուշադրություն դարձնելու այդ սահմանափակումների վրա:

ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915-1916),” հատուկ թողարկում, Revue d’histoire arménienne contemporaine 2 (1998): Հավելյալ տեղեկությունների համար տես [http:// www.imprescriptible.fr/rhac/tome2/](http://www.imprescriptible.fr/rhac/tome2/):

90 Aram Andonian, *Memoirs of Naim Bey*, 4. Այս հեռագրի բովանդակությունը գրեթե նույնն է, ինչ Թավեաթ փաշայի 1915 թ. օգոստոսի 29-ի հրահանգը բոլոր նահանգներին (BOA/DH.SFR, № 55/292, տես սույն հատորի գլուխ 5, ծան. 33): Արամ Անտոնյանի հրատարակված հեռագրերի նմանությունն այս և օսմանյան մյուս պահպանված փաստաթղթերին անհրաժեշտ է դարձնում Անտոնյանի հեռագրերի վավերականության հարցի վերաբնարկումը:

91 Aram Andonian, *Memoirs of Naim Bey*, 57-58.

92 Քենալ Կարպատը Անատոլիայի բնակչությունը հաշվում է մոտ 15 միլիոն (*Ottoman Population, 188*): Այդ թիվն ավելացնող մի շարք ճշգրտումների վրա հենվելով՝ Ջասթին ՄըքՔարթին միայն Անատոլիայի բնակչության թիվը հասցնում է 17,5 միլիոնի (*Muslims and Minorities, 110*):

93 Մեր նպատակն այստեղ հայ ազգաբնակչության թվերի ու նրանց կորուստների հարցի քննարկումը չէ, այլ պարզապես լույս սփռելը 5-10 տոկոսի քաղաքականության և ցեղասպանության միջև առկա կապի վրա: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության թվին, բացի Քենալ Կարպատի ու Ջասթին ՄըքՔարթիի վերոհիշյալ գործերից, լավ գտված մատչելի աղբյուրներ կարելի է գտնել հետևյալ տեղում. Hikmet Özdemir et al., *Ermeniler: Sürgün ve Göç* (Ankara, Türk Tarih Kurumu, 2004), 5-53: Հայկական աղբյուրների համար տես Kevork Pamukciyan, “Zamanlar, Mekânlar, İnsanlar,” *Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar*, h. 3 (Istanbul, Aras Yayıncılık, 2003), 289-92 և Levon Marashlian, *Politics and Demography: Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire* (Toronto, Zoryan Institute, 1991):

94 Օսմանյան կայսրության 1914 թ. վիճակագրության համար տես Karpas, *Ottoman Population, 188-90*: Թե որքանով են այդ թվերը ճշգրիտ, տարբեր քննարկման հարց է, որի մեկ օրինակ տես Levon Marashlian, *Politics and Demography*: Ամեն դեպքում, այդ հարցի քննարկումը կարևոր չէ այս նյութի տեսանկյունից:

Մոսուլի դեպքում ճշգրիտ թվեր չկան: Սակայն, Ջասթին Մըք-Քարթին, հենվելով օսմանյան վիճակագրության վրա, 1909 թվականի համար հաշվարկում է 828.000 բնակչություն⁹⁵: Տարածքը 1919 թ. գրավելուց հետո բրիտանացիների անցկացրած մարդահամարի համաձայն, նահանգի ամբողջ բնակչությունը եղել է 703.378 մարդ, որից 601.893-ը մահմեդականներ էին⁹⁶: Մըք-Քարթիի թվերի հիման վրա հաշվելիս Մոսուլի մահմեդական բնակչությունը հասնում էր լինել 750.000⁹⁷:

Դամասկոսի նահանգի ամբողջ բնակչությունը 1914 թ., համաձայն օսմանյան ցուցանիշների, եղել է 918.409 մարդ, որից 791.582-ը մահմեդականներ են եղել⁹⁸: Նույն այդ ցուցանիշների համաձայն, Դեր Ջորի գավառն ունեցել է 66.294 բնակիչ, որից 65.770-ը՝ մահմեդականներ⁹⁹:

1914 թ. մարդահամարի տվյալներով Հալեպի նահանգի բնակչությունը եղել է 667.790 մարդ, որից 576.320-ը եղել է մահմեդական: Պետք է ավելացնել նաև, որ Հալեպի այնպիսի մարզեր, ինչպիսին են Այնթափը, Իսկենդերունը, Անթաքյան ու Քիլիսը, նախատեսված չեն եղել որպես տեղահանված հայերին տեղավորելու բնակավայրեր. ընդհակառակը՝ այնտեղ բնակվող հայերն իրենք ևս տեղահանվել են: Ինչ վերաբերում է Հալեպ քաղաքին, նահանգային այդ մայրաքաղաքն սկզբում նախատեսված էր իբրև տեղահանվածների նպատակակետ, սակայն հետագայում այնտեղ հասած հայերն արտաքս-

95 Justin McCarthy, *Population History of the Middle East and the Balkans* (Istanbul, ISIS Press, 2002), 205 n. 4.

96 İhsan Şerif Kaymaz, *Mosul Sorunu* (Istanbul, Otopsi Yayınları, 2003), 27.

97 Ջասթին Մըք-Քարթին իր *Population History* աշխատության մեջ հաշվում է, որ 1909-ից 1914 թթ. բնակչությունն աճել է 0,011 գործակցով: Որևէ արձանագրություն չկա այն մասին, թե այդ աճի որ մասն է եղել մահմեդականության կամ ոչ-մահմեդականության հաշվին: Եթե 100.000 տարբերության համար հիմք է ընդունվել Անգլիայի 1919 թ. վիճակագրությունը, իմ գործածած 750.000-ը բավական շոյալ թիվ է:

98 Karpas, *Ottoman Population, 188–200*: Ջասթին Մըք-Քարթին 1911-1912 թթ. ամբողջ բնակչության համար տալիս է 1.017.322 թիվը, որից 876.835-ը եղել են մահմեդական (McCarthy, *Population History*, 185):

99 Karpas, *Ottoman Population, 190*. Հենվելով 1911-1912 թթ. Մըք-Քարթիի տվյալների վրա, որոնցով Դեր Ջորի շրջանի ամբողջ բնակչությունը համարվում է 83.120՝ Կարպատն ավելացնում է 25 տոկոսի ճշտում՝ այդ թիվը հասցնելով 103.900-ի (McCarthy, *Population History*, 198):

վել են դեպի Մոսուլ ու Դեր Ջոր¹⁰⁰: Այդ վայրերի ամբողջ բնակչությունը եղել է հետևյալը (մահմեդականների թվերը տրվում են փակագծում). Հալեպ քաղաքում՝ 126.676 (93.976), Իսկենդերունում՝ 18.875 (14.140), Անթաքյայում՝ 91.573 (78.054), Այնթափում՝ 110.810 (89.769) և Քիլիսում՝ 84.814 (78.905):

Ըստ այդ թվերի, Հալեպի նահանգի այն վայրերում, որոնք հայտարարված չեն եղել իբրև հայերի բնակեցման տարածքի մաս, և որոնցից կատարվել են տեղահանություններ, մահմեդական ամբողջ բնակչության թիվը եղել է 354.844: Դա նշանակում է, որ Հալեպի նահանգի մնացած մասերում, որոնք համարվել են հայերի բնակեցման վայրեր, մահմեդական բնակչության թիվը եղել է 221.476¹⁰¹: Եթե Մոսուլի բնակչությունը համարվել է 750.000, և ընդգրկված է եղել Հալեպի ամբողջ մահմեդական բնակչությունը, ուրեմն մահմեդականների թիվն այդ շրջանում, որը նախատեսված է եղել հայերի բնակեցման համար, եղել է 2.183.672-ի շուրջ: Հանելով Հալեպի նահանգում բնակեցման համար նախատեսված վերը թվարկված վայրերը՝ կատանանք 1.850.000 մահմեդական:

Այս պատկերին հարկավոր է ավելացնել օգտակար ևս մեկ տեղեկություն: Չնայած Մոսուլը հայտարարված էր տեղահանվածների վայր, հայերին այնտեղ ուղարկելն, ըստ էության, կատարվել է պատերազմի պատճառով, և միայն խիստ սահմանափակ թվով հայեր են ուղարկվել այնտեղ. «Մոսուլի նահանգի խորքերը տեղահանվող հայերի համակրանքը Վանի հարավում գտնվող ռուսական ուժերի

100 Հալեպի իբրև տեղահանվածների ժամանման վայր ընտրելու մասին տես BOA/DH.SFR, № 54-A/389, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հետագիրը Հալեպի նահանգ և (Լքված գույքի) հանձնախմբի նախագահին, թվագրված 1915 թ. հուլիսի 23: Հալեպից կատարված տեղահանությունների վերաբերյալ բավականաչափ տեղեկություններ կան: Այստեղ բավարարվում են սուկ մի քանի փաստաթղթերի դասակարգման համարները՝ ներկայացնելով. BOA/DH.SFR, №№ 57/53; 62/135; 63/306; 63/307; 64/175; 65/32-1 և 65/51: Չնայած պատերազմի հանգամանքին՝ Գերմանիայի ու Ամերիկայի կառավարությունները մեծ ջանքեր են գործադրել և համագործակցել են, որպեսզի փորձեն կանխել Հալեպից կատարվող տեղահանությունները, և այս նյութի վերաբերյալ առատ տեղեկություններ կան այդ երկու երկրների արխիվներում: Մեկ օրինակի համար տես NA/ RG 59, 867.4016/296, Հոֆման Ֆիլիպի զեկույցը պետական քարտուղարին, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 1, հղված հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 534–40:

101 Karpas, *Ottoman Population*, 176–72.

նկատմամբ հավանական է, և, նրանց վարքագիծը հեշտ կառավարելու տեսակետից, հարմար է դիտվում նրանց տեղահանումը Ուրֆա և Ջոր», նշված է Ներքին գործերի նախարարության հրահանգում և ավելացված, որ «գործողության ըստ այդմ [հ]ամապատասխանեցումը [ցանկայի է]»¹⁰²:

1915 թ. հոկտեմբերին մանրամասն մի շրջաբերական է պատրաստվել հայերի համար նախատեսված նոր բնակավայրերի և գոյություն ունեցող ճամբարների կարգուկանոնի վերաբերյալ, սակայն դրանում Մոսուլը նշված չէ իբրև բնակեցման վայր¹⁰³: Թեև 1915 թ. աշնանը սահմանափակ թվով շարայություններ են ուղարկվել Մոսուլ, դրանք դադարեցվել են 1916 թ. հուլիսի սկզբից, քանի որ Մոսուլը հայտարարվել էր պատերազմական գոտի¹⁰⁴: Տեղի գերմանական հյուպատոսը 1916 թ. սեպտեմբերին գեկուցել է, որ «այդ պատճառով արդեն 3 ½ ամիս է, ինչ ոչ մի նոր քարավան Մոսուլ չի ժամանել»¹⁰⁵: Եթե Մոսուլը հանենք հայերի բնակեցման համար նախատեսված վայրերի ցանկից, ընդհանուր բնակչության թիվը կհասնի 1,85 միլիոնի, իսկ Մոսուլի հետ միասին կլինի 2,18 միլիոն: Եթե թվերը կլորացնենք, օսմանյան կառավարության 10 տոկոսի սահմանը պետք է որ թույլ տված լինի ոչ ավելի քան 185.000-ից 218.000 նորաբնակ հայերի ներհոսք: Այդ դեպքում հաշվարկը պարզ է: Օսմանյան վիճակագրության համաձայն, անհրաժեշտ է հայերի մինչպատերազմական 1,3 միլիոն թիվը նվազեցնել մոտավորապես 200.000-ի:

Մի քանի ցուցանիշներ մոտ են իրենց տներից տեղահանված և նախատեսված վայրերը ժամանած հայերի ճիշտ թվերը ներկայացնելուն: Թալեաթ փաշային պատկանած փաստաթղթերից երկուսը, որոնք հրատարակել է Մուրատ Բարդակչին, մանրամասն տեղե-

կություններ են պարունակում դրա մասին: Առաջին փաստաթուղթը կրում է «Տեղահանված հայերի թիվը» վերնագիրը և իբրև ամբողջական քանակ տալիս է 924.158 թիվը: Այս թվին հարկավոր է որոշ հավելումներ անել, քանի որ նահանգների ու գավառների ցանկից բացի են մնացել շատ ու շատ վայրեր, որոնցից հայերի տեղահանությունների աներկբա ապացույցներ կան¹⁰⁶: Այդ «դուրս մնացած» վայրերից շատերը՝ Ստամբուլը, Էդիրնեն, Այդինը, Բոլուն, Կաստամունուն, Վանը, Թեքեն (Անթալիա), Քալե-ի Սուլթանիյեն (Չանաքքալե), Բիզան, Էսքիշեհիրը, Իչելը (Սիլիֆքե), Քյութահյան, Մենթեշեն (Մուղլա), Չաթալքան և Ուրֆան, հայերի բնակության բնավ աննշան տարածքներ չէին¹⁰⁷:

Երկրորդ փաստաթղթում հաշվված են այն հայերը, որոնք տեղահանություններից հետո ողջ են մնացել, և նրանց թվերը համեմատված են 1914 թ. ցուցանիշների հետ: Այդ փաստաթուղթը պատրաստած օսմանյան պաշտոնյաները մի կարևոր նշում են ավելացրել. «Տեղին է այս թիվը մեծացնել 30 տոկոսով»¹⁰⁸: Այսպիսով, հենվելով այդ երկու փաստաթղթերի վրա, կարելի է վստահորեն ասել, որ տեղահանված հայերի թիվը եղել է 1,2 միլիոն: Հետևաբար, Թոյնբիի 1,2 միլիոն հաշվարկը կամ գերմանացի հոգևորական Լեփսիուսի ներկայացրած տեղահանված հայերի 1,3 միլիոն թիվը թերևս մոտ են իրականությանը¹⁰⁹:

102 BOA/DH.ŞFR, № 54-A/198, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի ու Մամուրեթոյազիզի նահանգներ, թվագրված 1915 թ. հուլիսի 31:

103 BOA/DH.EUM.VRK.15/71-1-6, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ տնօրեն-Քայայի հաղորդագրությունը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 8:

104 BOA/DH.ŞFR, № 64/239 and BOA/DH.ŞFR, № 64/248, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ջորի գավառ, թվագրված 1916 թ. հունիսի 7:

105 DE/PA-AA/R 14093, Մոսուլի հյուպատոս Հոֆմանի գեկույցը Գերմանիայի դեսպանություն, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 5:

106 Փաստաթուղթը պարունակում է միայն տասնութ նահանգի և գավառի անուն: Sîiu Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, 77:

107 Ժամանակի նահանգների ու գավառների ամբողջական ցանկի համար տե՛ս Dahiliye Nezâreti İdare-i Umumiye-i Dahiliye Müdüriyeti, Teşkilât-ı Hâzıra-i Mülkiyeyi ve Vilâyet, Livâ, Kazâ ve Nâhiyelerin Hurûf-i Hecâ Sırasıyla Esâmisini Hâvî Cedveldir (Istanbul, Matbaa-i Âmire, [1331] 1915):

108 Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, 109.

109 Bryce and Toynbee, The Treatment of Armenians, 646; Johannes Lepsius, Deutschland und Armenien, 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke (Potsdam, Der Tempel Verlag, 1919), lxxv. Նման թվեր են հրատարակվել ժամանակի արաբալեզու լրագրերում: Էլ-Մոքաթամ օրաթերթի 1916 թ. մայիսի 30-ի համարում տեղահանված հայերի թիվը նշվում է 1,2 միլիոն (իղված հետևյալ տեղում. Faiz El-Ghusein, Martyred Armenia [New York, Montreal, and London, Tankian, 1975], 58):

Աղյուսակ 1. Տեղահանված հայերի թիվը

Նահանգների և նահանգային ենթաբաժանումների անունները	Տեղափոխված քնակչությունը
Անկարայի նահանգ	47.224
Էրզրումի նահանգ	128.657
Ադանայի նահանգ	46.031
Բիթլիսի նահանգ	109.521
Հալեպի նահանգ	34.451
Բուրսայի նահանգ ^ա	66.413
Դիյարբեքիրի նահանգ	61.002
Սվազի նահանգ	141.592
Տրապիզոնի նահանգ	34.500
Էլազիզի նահանգ ^բ	74.206
Իզմիրի նահանգային ենթաբաժանում	54.370
Սամսունի նահանգային ենթաբաժանում ^գ	26.374
Բալիքեսիրի նահանգային ենթաբաժանում ^դ	8.290
Կարահիսարի նահանգային ենթաբաժանում	7.327
Կեսարիայի նահանգային ենթաբաժանում	47.617
Մարաշի նահանգային ենթաբաժանում	27.101
Նիդղեի նահանգային ենթաբաժանում	5.101
Քոնյայի նահանգ	4.381
Ընդհանուր գումարը	924.158

Աղբյուրը. Murat Bardakçı, Talat Paşa'nın Evrak-i Metrukesi: Sadrazam Talat Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehciri konusundaki belgeler ve hususi yazışmalar [Թալեաթ փաշայի լքված փաստաթղթերը. Վեզիր Թալեաթ փաշայի մասնավոր արխիվում գտնված արձանագրություններն ու մասնավոր թղթակցությունը հայերի տեղահանությունների վերաբերյալ], (Istanbul, Everest Publications, 2008), 77:

- ա Բուրսան նախկինում հայտնի է եղել իբրև Հյուդավեդիզար:
- բ Էլազիզը նախկինում հայտնի է եղել իբրև Մամուրեթյուլազիզ:
- գ Սամսունը նախկինում հայտնի է եղել իբրև Ջանիկ:
- դ Բալիքեսիրը նախկինում հայտնի է եղել իբրև Քարեսի:

Մտում է այն հարցը, թե քանի վերապրող հայ է ժամանել քնակչության նոր վայրերը: Այդ թվերը նույնպես հետևողական են: Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեսի Բ. Ջաքսոնը գեկուցել է, որ, համաձայն վստահելի աղբյուրների, 1916 թ. փետրվարի 3-ից ի վեր մոտ 486.000 հայ է քնակվել Հալեպի ու Դամասկոսի մերձակայքում և Եփրատ գետի երկայնքին՝ մինչև Դեր Ջոր¹¹⁰: Հալեպում Գերմանիայի հյուպատոսը կանցյլեր Բեթման-Հոլվեզին 1915 թ. դեկտեմբերի 20-ին գեկուցել է, որ «առավելագույնը 500.000 [հայ] է եկել Սիրիա ու Միջագետք»¹¹¹:

Աղյուսակ 2. Տեղահանություններից հետո հայ ազգաբնակչության ընդհանուր հաշվարկ (հավանաբար՝ 1915-1916 թթ)ա

	Ներկայիս տեղի քնակչությունը	Օտար քնակչությունը	Տեղացիները այժմ այլ վայրերում	Ըստ քնակչության 1912 [1330] թ. արձանագրումների
Անկարա	12.766	410	4.560	44.661
Մոսուլ	253	7.033	0	0
Նիդղե	193	850	547	4.939
Իզմիր	3.880	142	9.464	56.112
Քյուրթահյա	3.932	680	0	4.023
Էսքիշեհիր	1.258	1.096	1.104	8.620
Բոլու	1.539	551	56	3.002
Աֆյոնկարահիսար	2.234	1.778	1.484	7.498
Իչել	252	116	0	350
Բալիքեսիր	1.852	124	1.696	8.663
Կայսերի	6.650	111	6.778	47.974

110 NA/RG 59, 867.48/271, Հալեպի հյուպատոս Ջեսի Բ. Ջաքսոնի գեկույցը դեսպան Հենրի Սորգենթաուին, վերաբարդրված հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 489-90:

111 DE/PA-AA/R 14089, Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյուսլերի գեկույցը կանցյլեր Բեթման-Հոլվեզին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 20: 1916 թ. հոկտեմբերի 4-ին Ստամբուլի դեսպանությունից կանցյլեր Բեթման-Հոլվեզին ուղարկված մեկ այլ գեկույցի մեջ ողջ մնացածների թիվը նշվում է 425.000 (DE/PA-AA/R 14093, Ստամբուլում Գերմանիայի դեսպանության գեկույցը կանցյլեր Բեթման-Հոլվեզին, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 4):

Աղանա	12.263	4.257	19.664	51.723
Մարաշ	6.115	198	2.010	27.306
Սվլազ	8.097	948	3.993	141.000
Բեյրութ	50	1.849	0	1.224
Կաստամունու	3.437	185	211	9.052
Քոնյա	3.730	14.210	3.639	13.078
Այդին	11.901	5.729	0	19.710
Սիրիա	0	39.409	0	0
Ջոզ	201	6.778	0	63
Բուրսա	2.821	178	10.251	59.038
Հալեպ	13.679	13.591	19.091	37.031
Էրզրում	0	0	3.364	125.657
Բիթլիս	0	0	10.061	114.704
Վան	0	0	160	67.792
Դիյարբեքիր	0	0	1.849	56.166
Տրապիզոն	0	0	562	37.549
Էլիզազ	0	0	2.201	70.060
Ստամբուլ	97.247	106.910	94.206 ^բ	1.032.614
	80.000	0	0	80.000
	177.247	106.910	94.206	1.112.614
	106.910			
	284.157			

Աղբյուրը. Murat Bardakçı, Talat Paşa'nın Evrak-i Metrukesi: Sadrazam Talat Paşa'nın özel arşivinde bulunan Ermeni tehciri konusundaki belgeler ve hususi yazışmalar [Թալեաթ փաշայի լքված փաստաթղթերը. Վեզիր Թալեաթ փաշայի մասնավոր արխիվում գտնված արձանագրություններն ու մասնավոր թղթակցությունը հայերի տեղահանությունների վերաբերյալ], (Istanbul, Everest Publications, 2008), 109:

Ծան. Ամփոփման մեջ 1912 [1330] թ. տվյալներով հայ լուսավորչական բնակչության ընդհանուր թիվը նշված է 1.187.818, կաթոլիկ հայերինը՝ 63.967, իսկ երկուսի գումարը՝ 1.256.403: Քանի որ գրավոր արձանագրություններում ամբողջ բնակչությունը ճշտորեն չի արտացոլված, ոչ միայն իրական թիվը կարող է 1.500.000-ի մոտ լինել, ապահովության համար տեղի և օտար բնակչության վերը տրված միացյալ 284.157 թվին հարկավոր է գումարել մոտավորապես 30 տոկոս, որի դեպքում իրական թիվը կլինի 350.000-400-ի մոտ:

ա Մուրատ Բարդակչու բերած 1915-1916 թվականները ճիշտ չեն: Տարեթիվը պետք է լինի 1918 թ.:

բ Այս թվի մեջ փաստորեն ներառված է օտար բնակչության թիվը: Ըստ 1912 թվի բնակչության հաշվարկի, այդ թիվը 68.433 է:

Աղյուսակ 3. Օսմանյան բնակչության ամփոփումը

Վարչական տարածք	Մահմադականներ	Հույներ	Հայեր	Հրեաներ	Կաթոլիկներ	Կաթոլիկ հայեր	Բողոքականներ	Ուղղափառներ	Ասորի քրիստոնյաներ	Հին ասորիներ
Էդիրն	360.417	224.459	19.725	22.515	221	48	115			
Էրզրում	673.297	4.859	125.657	10	5	8.720	2.241	1	88	
Ստամբուլ	560.434	205.375	72.962	52.126	387	9.918	1.213	2.905	562	
Ադանա	341.903	8.537	50.139	66	437	2.511	5.036	174	467	
Անվարա	877.285	20.226	44.507	1.026	14	7.069	2.381	479	1.793	2
Այդին	1.249.067	299.096	19.395	35.041	1	892	479	3.992	491	
Բիթլիս	309.999		114.704			2.788	1.640	3.367	2.956	
Բնյուբ	648.314	87.244	1.188	15.052	24.210	277	3.823	8.643		
Հալեպ	576.320	13.772	35.104	12.193	8.182	5.739	8.643	1.776		
Բուրսա	474.114	74.927	58.921	426		1.278	992			4.133
Դիյարբեքիր	492.101	1.822	55.890	2.085	113	9.960	7.376	2.991	37.976	
Սիրիա	791.582	60.978	413	10.140	27.662	247	1.873		3.079	
Սվլազ	939.735	75.324	143.406	344		3.693	4.575		3	
Տրապիզոն	921.128	161.574	37.549	8		1.350	1.338			
Կաստամունու	737.302	20.958	8.959	8						
Քոնյա	750.712	25.071	12.971	4	79		254	1		
Էլազիզ	446.379	971	76.070	67.792		3.751	8.043	715	2.234	
Վան	179.380	1	67.792	1.383						
Էսքիշեհիր	140.578	2.613	8.271	728		316				

Անթալիա	235.762	12.385	630	250		1.557	1.652	39	2.328
Ուրֆա	149.384	2	15.161	865					
Իչել	102.034	2.500	341	10	7				
Իզմիր	226.859	40.048	55.403	428		449	1.937	10	3
Բոլու	399.281	5.146	2.961	20	5	9	2	1	1
Սամսուն	265.950	98.739	27.058	27		261	1.257		
Չաթալբաշ	20.048	36.797	842	1.480					
Զոր	65.770	18	67	2	27	215	1	1	141
Երուսաղեմ	266.044	26.035	1.310	21.259	1.086		1.733	9.880	427
Աֆրոն	277.659	632	7.437	7		2	9		
Բալիքընսիր	359.804	97.497	8.544	362		109	51	2	
Չանաքքալեբ	149.903	8.541	2.474	3.642	9		67		
Կեսարիա	184.292	26.590	48.659			1.515	2.018		
Քյութահյա	303.348	8.755	3.910			638			
Մարաշ	152.645	11	27.842	251	23	4.480	6.111	1.189	
Մենքեշե	188.916	19.923	12	1.615					
Նիզդե	227.100	58.312	4.890						
Ընդամենը	15.044.846	1.729.738	1.161.169	187.073	62.468	67.838	65.844	24.845	54.750
						769			4.133

Աղբյուրը. Kemal Karpat, Osmanlı Nüfusu (1830-1914): Demografik ve Sosyal Özellikleri (Օսմանյան բնակչությունը [1830-1914]. Ժողովրդագրական ու սոցիալական բնութագիր) (Istanbul, Tarih Vakfı Publications), 226:

ա Աֆրոնը նախկինում հայտնի է եղել իբրև Կարահիսար-ի Սահիր:

բ Չանաքքալեն նախկինում հայտնի է եղել իբրև Քալե-ի Սուլթանիյե:

1915 թ. մայիսից սկսած և ամռան ու աշնան ընթացքում տեղա-
 նակեցված հայերի Սիրիա տեղափոխվելու ճանապարհին հազարավոր
 մարդիկ են մահացել սովից, հիվանդությունից և այլ պատճառներից:
 Հրահրված հանդերձ, ողջ մնացածների թիվը պետք է որ տեղի մահ-
 անցական բնակչության 10 տոկոսից շատ ավելի մեծ լիներ: Մինչև
 196 թ. փետրվարը մոտավորապես 275.000 ավելի հայ էր մնացել,
 որոնց բնաջնջումն անհրաժեշտ էր նկատվում: Եվ դա իրականացվել
 է կոտորածների երկրորդ փուլով, որոնք սկսվել են 1916 թ. մարտին
 հայերի ճամբարները պարպելով և իրենց գազաթնակետին հասել
 այդ տարվա ամռանը: Դրանից հետո, ինչպես միաձայն գտնում են
 բազմաթիվ աղբյուրներ, միայն 200.000 հայ է ողջ մնացել¹¹²: Օսման-
 յան կառավարությունը հաջողությամբ իրականացրել էր 10 տոկոսի
 քաղաքականությունը:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԲՆԱԿԵՑՄԱՆ
 ԶԱՆԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ

Կարծում եմ, որ օսմանյան կառավարությունն ակնկալել է, որ
 Սիրիա հասնող հայերի թիվը կլիներ երկու հարյուր հազարի շուրջ, և
 գնահատել է իրագործել դրան համապատասխան սահմանափակ
 թնակեցման քաղաքականություն: Չնայած օսմանյան, հայկական և
 օտարերկրյա դիվանագիտական աղբյուրները լեցուն են բնակեցման
 գերազանցության մասին վկայություններով, Հայոց ցեղա-
 կանության այս կողմը գրեթե ուշադրության չի արժանացել: Հա-
 ղաքերական այս անտեսումն, ըստ ամենայնի, բացատրվում է ցեղա-
 կանություն հասկացության խիստ նեղ սահմանմամբ, ինչպես նաև
 Թուրքիայի պետության ժխտման քաղաքականությանը հակադար-
 ձելու հարցում հետազոտողների կողմից Հայոց ցեղասպանության
 այն ոլորտների վրա կենտրոնանալու միտումով, որոնք ամենից
 ավելի են հիշեցնում Հոլոքոսթը:

112 Lepsius, Deutschland und Armenien, lxx. Ռեյնոլդ Գևորգյանը, որը ցեղա-
 սպանության երկրորդ փուլի վերաբերյալ հանգամանալի աշխատություն
 է գրել, Սիրիա հասած հայերի թիվը նշում է 870.000՝ հենվելով հայկական
 աղբյուրների վրա, և ասում է, որ նրանցից հազիվ 240.000-ն է ողջ մնացել:
 Մնացած 630.000-ից մինչև 1916 թ. փետրվարը ճամբարներում սովից ու
 հիվանդությունից մահացել է 130.000 մարդ: Դեռևս ողջ մնացած 500.000
 մարդուց 200.000-ը երևի Դեր Զորի տարածքում ոչնչացվել է 1916 թ.
 ամռան ընթացքում: Steu Kévorkian, “L’extermination des déportés armé-
 niens,” 16, 61:

Ձեռքի տակ եղած օսմանյան փաստաթղթերում բնակեցման վաղ քաղաքականության մեջ կարելի է նկատել երկու կարևոր պահ: Առաջինն այն է, որ հայերը պետք է տեղափոխվեին կամ գոյություն ունեցող գյուղերն ու մարզերը, կամ դրա փոխարեն իրենց համար նշանակված նոր տարածքները: Շրջաններ ուղարկված բոլոր հեռագրերում բժախնդիր տարբերակում էր մտցված հին ու նոր բնակավայրերի միջև: Երկրորդ, տեղական համայնքներին թույլ էր տրվելու մարդասիրական օգնություն հատկացնել:

Քաղաքականության ամենավաղ ուղեցույցը՝ 1915 թ. մայիսի 12-ի «գաղտնի» հեռագիրը, ուղարկվել է տեղահանությունների առաջին մեծ ալիքն սկսվելուց առաջ: «Հայեր[ը], որոնք տեղահանվել են այդ տեղ, պետք է բաշխվեն գյուղերի վրա և հաստատվեն ըստ նրա, թե որ գյուղերն են հարմար որոշվել՝ կախված տեղից, և, քանի որ նրանց կենսամիջոցը չի կարող տևականորեն ապահովվել կառավարության կողմից, այսուհետև այն պետք է ձեռք բերվի ուղղակիորեն իրենցից», կարգադրել է ներքին գործերի նախարար Թալեաթը: «Ջեկուցեք այն գումարը, որ պահանջվում է ակնկալվող ծախսերը հոգալու համար, որը պետք է վճարվի անսպասելի ծախսերի բյուջեից»¹¹³: Ինչպես կտեսնենք ստորև, Սիրիայի հայկական համայնքին (հատկապես Հալեպում) իրոք թույլատրվել է օգնել ժամանող տեղահանվածներին:

Երկրորդ հեռագրով, որը 1915 թ. մայիսի 23-ին ուղարկվել է Մոսուլ ու Դեր Ջոր և հաջորդ օրը շրջանառել մյուս նահանգներում, ինչպես նաև Չորրորդ բանակի հրամանատարության մեջ, իրենց նոր տարածքներում հայերի բնակեցումն ավելի հստակորեն էր ուրվագծվում. «Ուղարկվելիք հայերը կտեղափոխվեն կառավարության որոշած վայրերը», ասվում էր հրահանգի մեջ: «Բնակեցման վայրեր ժամանող հայերը կտեղավորվեն տների մեջ, որոնք կկառուցվեն գոյություն ունեցող գյուղերում ու քաղաքներում՝ ըստ իրադրության պահանջի կամ վայրի, կամ էլ ցրված ձևով և կամ նոր հիմնվելիք գյուղերում՝ այն վայրերում, որոնք կորոշվեն կառավարության կողմից»: Միակ սահմանափակումն այն էր, որ «հայկական բնակավայրերում գյուղերի ու քաղաքների, ինչպես նաև Բաղդադի երկաթուղով նոր հիմնվե-

լիք հայկական գյուղերի սահմանների շփման կետերը» լինեն առանձին քսանհինգ կիլոմետր հեռավորության վրա¹¹⁴:

Այս հարցի մանրակրկիտ սահմանումը գտնում ենք Նախարարների խորհրդի 1915 թ. մայիսի 31-ի որոշման մեջ: Կարգի սահմանմանը կցված է տասնհինգ ուղենիշից բաղկացած մի հավելված: Ուղենիշներից չորրորդում նշված է. «Կախված այն հայերի պայմաններից ու տեղից, որոնք հասել են բնակության սահմանված վայրերը, նրանք [հայերը] պետք է տեղավորվեն կամ եղած գյուղերում ու քաղաքներում տներ կառուցելով, կամ գյուղեր հիմնելով հատկացված վայրերում, որոնք կորոշվեն տեղական իշխանությունների կողմից»: Հինգերորդ ուղենիշում ավելացված է. «Այն դեպքում, երբ այն հողը, որը հարմար է ազատ է լքված է կամ պատկանում է պետությանը, տրամադրելի է բնակության տարածքում հաստատված գյուղերում, կարելի է հոգաբարեկալում կատարել պետական ագարակներից ու գյուղերից»¹¹⁵:

1915 թ. հոկտեմբերի 7-ով թվագրված մի փաստաթղթում սահմանվում են մինչև այդ օրը ստեղծված առկա ճամբարներն ու դրանց վարչական կարգավիճակները¹¹⁶: Այդ տեղեկությունը համապատասխանում է Ռեյմոնդ Գևորգյանի գործածած հայկական աղբյուրների տեղեկությանը: Ռաքան, Հավրանն ու Դեր Ջորը ճանաչված էին իբրև բնակեցման վայրեր, Հալեպը, Քաթման, Մյուսլիմլին, Սուրուչն ու Ռաս ու Այնը՝ իբրև «կենտրոնական հավաքման ու պահման տարածքներ», իսկ Դեյրյույ-ի-հաֆրը, Մեսքենեն, Էբու Հյուրեյրեն, Համամը, Սիհիյեն, Մադեն Շերիասին ու Թիբսին՝ իբրև «ճանապարհին ընկած հանգստի կանգառներ»: Հայերին պետք է կենտրոնացնելին

114 BOA/DH.SFR, № 53/91, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ և (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1915 թ. մայիսի 23: Միևնույն օրը նույն բովանդակությամբ հեռագիր են ուղարկվել Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգային գրասենյակներ (BOA/DH.SFR, № 53/93) և Չորրորդ բանակի կայսերական հրամանատարի գրասենյակ (BOA/DH.SFR, № 53/94):

115 Այստեղ հիշատակված տասնհինգ կետից բաղկացած շարքի վերնագիրն է «Պատերազմի թելադրանքով և քաղաքական արտակարգ անհրաժեշտության պատճառով այլ վայրեր փոխադրած հայերի տեղավորման ու մատակարարման ուղենիշ»: Stü Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni, 131–33, 427–31:

116 BOA/DH.EUM.VRK.15/71-1-6, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ տնօրեն Շուքրու Քայայի հաղորդագրությունը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 8:

113 BOA/DH.SFR, № 52/335, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 12:

ժամանակավոր հիմնական վայրերում, ինչպիսին Հալեպն էր կամ Քաթանն, իսկ հետո ուղարկեին կանխորոշված բնակեցման վայրերը: Այդ փաստաթղթում ուրվագծվում են նաև նոր «տեղահանության գրասենյակների» կազմակերպումը և դրանց գործունեությունը «Հալեպում, Մեսքենեում, Դեր Ջորում ու Ռաբայում» հիմնված գրասենյակների հսկողության ներքո:

Հայկական աղբյուրները և օտարերկրյա դիվանագետների գեկույցները նշում են, որ առաջին ամիսներին կատարվել են բնակեցման սահմանափակ աշխատանքներ: Տարածաշրջանից վերադարձող գերմանացի մի պաշտոնյա 1915 թ. նոյեմբերի 11-ին գեկույցել է. «Սարչա [Մերկա/Ռաքա]... բնակեցման առաջին վայրը: Նախկինում այստեղ մի քանի հարյուր բնակչություն է եղել, այժմ 7.000 մարդ կա (ավանի վարչակազմի բառերով)... բնակեցման նոր տեղն ընդլայնվում է սարի փեշին... քարերի երկար շարքեր են ընկած այդտեղ... 100 տուն է առանձնանում... կարճ ժամանակում ևս 250 տուն պատրաստ կլինի... շատերը դեռևս վարձած տներում են ապրում»: Գերմանացի մի բժիշկ նման դիտարկումներ է արել Դեր Ջորում. «Պաշտոնյաներն օրական մեծ հոգատարությամբ մաքրում են բոլոր անկյուններն ու փողոցները, բնակելի նոր թաղամասեր կառուցում Սարչայում, մարդկանց փող բաժանում, ինչպես և հաց ու այլուր՝ բացառությամբ [սրանց], ովքեր մահը նախընտրում են կյանքից [իմա՝ այն հայերից, որոնք մերժում են կառավարության այս ուտելիքը]:¹¹⁷ Դեր Ջորի այն պատկերը, որ հյուպատոս Վիլիելմ Լիթենն է նկարագրել, ավելի վարդագույն է. «Դեր Ջորը բարեկամական փոքր մի քաղաք է ուղիղ փողոցներով ու մայրերով: Հայերը բացարձակ ազատություն են վայելում. նրանք կարող են անել ինչ ցանկանում են... նաև իրենց ուտելիքի հետ կապված, որոնք պետք է իրենք գնեն: Ով դրամ չունի, ոչինչ չի ստանում»¹¹⁸:

Նման տեղեկություններ ենք գտնում հայկական աղբյուրներում: 1915 թ. մայիսին առաջին տեղահանվածների Հալեպ ժամանելու ըն-

117 DE/PA-AA/R 14089, Կապիտան բժիշկ Շախտի 1915 թ. նոյեմբերի 11-ի գեկույցը, կցված կանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված Հալեպի հյուպատոս Ռյուպերի գեկույցին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 16:

118 DE/PA-AA/R 14090, Հյուպատոս Լիթենի 1916 թ. փետրվարի 6-ի գեկույցը, կցված կանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված Հալեպի հյուպատոս Ռյուպերի գեկույցին, թվագրված 1915 թ. փետրվարի 9:

թացքում տեղի հայկական եկեղեցում, նահանգային կառավարության արտոնություններով, կազմավորվել է գաղթականների հանձնաժողով: Այդ հանձնաժողովը, որի գործունեությունը շարունակվել է մինչև 1917 թվականը, իր ժողովների արձանագրություններում կարևոր տեղեկություններ է հաղորդում «բնակեցման քաղաքականության» մասին, որն իրականացվում էր Սիրիայում 1915 թ. ամռանն ու աշնանը¹¹⁹: Հիշատակման արժանի առաջին նյութը օգնությունը բաժանելու գործում հանձնաժողովի ու կառավարության համակարգված քանքերն են: Այսպես, երկու կողմերն օգնության իրենց ոլորտներն այնպես են սահմանել, որ օժանդակությունը կարողանան հասցնել ավելի մեծ հատվածների: Հանձնաժողովի արձանագրություններում նշված է, որ գաղթականների կառավարական հանձնաժողովը յուրաքանչյուր հասուն մարդու տվել է հինգ մեթեղիկ (կես բոքոնից պակաս հացի համարժեք. մեկ մեթեղիկը հավասար է ԱՄՆ մեկ ցենտի), յուրաքանչյուր անչափահաս գաղթականի՝ երեք մեթեղիկ, և եկեղեցու հանձնաժողովի անդամները նույնպես ներկա են գտնվել բաշխմանը¹²⁰: Մեկ այլ կարևոր պահ է պետական պաշտոնյաների մասնակցությունը եկեղեցու հանձնաժողովի նիստերին: Այդ նիստերից մեկի ժամանակ՝ 1915 թ. հունիսի 17-ին, պետական մի պաշտոնյա պահանջել է Հալեպում գտնվող հայ որբերի ցանկը, և հանձնաժողովը ենթարկվել է Հոկտեմբերին հանձնաժողովը հիմնել է իր սեփական որբանոցը, որն իր գործունեությունը շարունակել է մինչև 1917 թ. սկիզբը¹²¹:

119 Այս տեղեկությունը վերցված է Վահրամ Լ. Շենասյանի չիրատարակված ձեռագրից, որը վերնագրված է «Հալեպի հայկական թեմի մարդասիրական միջամտությունը Ցեղասպանության առաջին ամիսների ընթացքում»: Շնորհակալությունս եմ հայտնում Վահրամին այդ խիստ կարևոր աշխատանքն ինձ հետ կիսելու և այն գործածելու թույլտվության համար: Այստեղ հղված էջերի համարները ձեռագրի իմ տրամադրության տակ եղած տարբերակից են:

120 Նույն տեղում, 12: Մեթեղիկը 10 փարայանոց մետաղադրամի խոսակցական անվանումն է, որոնցից չորսը հավասար են մեկ դուրուշի՝ դրամական հիմնական միավորին: 1 կգ քաշով մթերքների համար Ստամբուլում 1914 թ. հուլիսին գործում էին սպառողական հետևյալ գները. «շաքար՝ 3 դուրուշ, բրինձ՝ 3 դուրուշ, մակարոնեղեն՝ 3 դուրուշ, սպիտակ լոբի՝ 4 դուրուշ, պանիր՝ 12 դուրուշ, ոչխարի միս՝ 7 դուրուշ»: Tefvik Çavdar, Milli Mücadele Başlarken Sayılarla Vaziyet ve Manzara-ı Umumiye (İstanbul, Milli-yet yay, 1971), 116:

121 Նույն տեղում, 10:

Հալեպ ժամանող առաջին գաղթականները Կիլիկիայի շրջանից էին: Նրանցից ոմանց անմիջապես բաժանել են շրջակա քաղաքների ու գյուղերի վրա: Գերմանական փաստաթղթերն արձանագրել են նրանց ժամանումն ու Հալեպի գյուղերի վրա բաշխման հրամանը¹²²: Հանձնաժողովի անդամները գնացել են այդ վայրերը և փորձել այնտեղ օգնություն բաժանել: Հանձնաժողովի այն անդամները, որոնք գնացել էին Մուրբուջ ու Բաբ, օրինակ, գտել են, որ թեև կառավարության օգնությունը բավարար չէ, պաշտոնյաներն «իրենց հոգածության համար գովեստի են արժանի»: Մուրբուջի գաղթականները հայտնել են իրենց «գոհունակությունը տեղի չերքեզ ազգաբնակչությունից», ինչպես նաև գավառապետից¹²³: Մաարա բնակավայրում տեղական պաշտոնյան երախտագիտության նամակ է հղել Նևրուզ փաշային՝ տեղահանվածների հանդեպ նրա «հոգատարության ու պաշտպանության» համար¹²⁴: Հանձնաժողովի զեկույցներից պարզվում է, որ Իդլիբի շրջանում կառավարությունը տեղահանվածներին տեղավորել է «վայելուչ տներում»¹²⁵: Այնուամենայնիվ, կառավարության կողմից օգնության բաշխումն ամենուր ուղեկցվել է նաև մշտական խախտումներով¹²⁶:

Տեղահանվածների գծով պատասխանատու պաշտոնյա Նաիմ բեյը նույնպես նշել է բնակեցման այդ քաղաքականության գոյությունը. «Տեղահանությունների սկզբում հայ գաղթականների համար ընտրվեցին Հալեպի շրջանի գյուղերը... Շատ հայեր տեղավորվեցին այդ գյուղերում, և նրանցից շատերն սկսեցին աշխատել»¹²⁷: Արամ Անտոնյանը, ով հաղորդել է այդ տեղեկությունը և հաստատել, որ հայերը տեղավորվել էին «Հալեպում և այդ [սահանգի] Այազ, Քիլիս, Բաբ, Մաարա ու Մուրբուջ քաղաքներում», նշել է, որ ինքը չգիտի,

122 DE/PA-AA/Bo.Kons., h. 169, Հալեպի հյուպատոս Ռյուպերի զեկույցը Գերմանիայի դեսպանություն, թվագրված 1915 թ. հունիսի 3:

123 Shemmassian, "Humanitarian Intervention," 17.

124 Նույն տեղում, 20:

125 Նույն տեղում, 18-19:

126 Նույն տեղում, 18:

127 Արամ Անտոնյան, Մեծ ոճիրը (Բոստոն, Պահակ, 1921), 89: Ընտրիակալությունն են հայտնում Արամն Միրիջանյանին հայերեն բնօրինակից այս հատվածների իր թարգմանության համար:

«... այս հարցով կառավարության որոշում իրոք եղել է, թե ոչ»¹²⁸: Ինչո՞ւն էր Գևորգյանը, հիմնականում հենվելով հայկական արխիվալայն նյութերի վրա, նույնպես հաղորդում է, որ Ռաքան ու Դեր Զորը (և Բաս ու Այնը, որը վարչականորեն կցված էր Դեր Զորին) վերաբնակեցման շրջաններ են եղել: Գևորգյանը գրում է, որ Ռաքայում, որտեղ Հայոց պատրիարքարանը և ամերիկյան ու շվեյցարական կազմակերպություններն օգնություն էին բաժանում, մարզպետը կառավարական օգնություն էր ստանում հազարավոր տեղահանվածներին տեղավորելու համար. «Մի քանի ամսում [տեղահանվածների] մի փոքր մասին հաջողվեց արհեստանոցներ կամ խանութներ բացել... Մինչև 1916 թ. հունիս ամիսը այդ բնակիչներն ինչ-որ կերպ նորմալ կենսապայմաններ գտան և անկասկած այն զգացումն ունեցան, որ կարողանան այնտեղ մշտական ապրել»¹²⁹:

Մոտ հիսուն հազար հայ էր տեղավորվել Դեր Զոր քաղաքում, և, «ինչպես Ռաքայում... չհապաղեցին վերականգնելու տեղական առևտուրն ու արհեստները՝ խրախուսվելով գավառապետ Ալի Սուադ բեյի կողմից»¹³⁰: Նոր գավառապետ Սալիհ Զեքին, որին 1916 թ. ամռանը Դեր Զոր էին ուղարկել ցեղասպանության երկրորդ փուլը կազմակերպելու համար, այցելել է «շուկան, որտեղ նա մասնավորապես նշարդայնացավ՝ տեսնելով հայերի ծաղկուն վիճակը», հիշում է ակառատներից մեկը: «Վերջիններս իսկական Հայաստան էին ստեղծել դրանից, ինչպես Դամասկոսում, Համայում ու Հոմսում, և շուկան նկատելիորեն նրանց ձեռքերում էր»¹³¹:

Ռաս ու Այնում, որը վարչական առումով կապված էր Դեր Զորին, երեսուն չեչեն ընտանիք կար, որոնք այդտեղ էին հաստատվել 1878 թ. ռուս-թուրքական պատերազմից հետո: 1914 թ. բնակչության օսմանյան պետական տվյալներում Ռաս ու Այնի բնակչությունը նշվում է 2,667 մարդ: Շատ փոքրիկ այդ քաղաքը վերածվել էր մի ճամբարի, ուր ապաստան էր գտել մոտ հիսուն հազար մարդ: «Տեղի մարզպետ Յուսուֆ Զիյա բեյը, որն իր պաշտոնում մնաց մինչև 1916 թ. փետրվարը... միջոցներ ունեցող գաղթականներին թույլ տվեց ապրել քաղաքում. նա արտոնեց նաև տեղական մանր առևտուրը...

128 Նույն տեղում, 22:

129 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 36.

130 Նույն տեղում, 38:

131 Նույն տեղում:

Հինգ ամսվա ընթացքում՝ 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. փետրվարը, այդ ճամբարը, տարածաշրջանի միևնույն դրության մեջ գտնվող մյուս ճամբարների համեմատ, գործեց այնպիսի պայմաններում, որոնք նման կառույցի համար գրեթե նորմալ էին»¹³²:

Այստեղ հարկ կա կանխելու հնարավոր թյուրըմբռնումը: «Բնակեցման քաղաքականության» առկայությունը չի նշանակում, թե Սիրիա եկող տեղահանվածների վիճակը լավ էր, կամ թե մահեր չէին լինում: Ճիշտ հակառակը: Հյուպատոս Լիթենը, որի նկարագրած Դեր Ջորի վարդագույն պատկերը նշեցինք վերը, Դեր Ջորի և Սաքհայի (Սեքքա?) միջև ընկած տարածքը բնութագրել է իբրև «ղիակների վայր»: Ռյուսլերը, որն ուղարկել էր հյուպատոսի զեկույցը, նշել է, որ իրեն հաղորդել են, որ 1916 թ. հունվարին Բաբում գտնվող համակենտրոնացման մեկ այլ ճամբարում 1.029 հայ է մահացել¹³³: Ըստ վերը հղված գերմանացի բժշկի, Դեր Ջորում աշխատող օսմանյան պետական մի բժիշկ իրեն հայտնել է, որ այնտեղ օրական մոտավորապես 150-200 մարդ էր մահանում¹³⁴:

Հայկական աղբյուրները մանրամասն տեղեկություն են հաղորդում կանգառի ու բաշխման ժամանակավոր ճամբարներում տիրող իրավիճակի մասին: Ուտելիքի սակավությունը, համաճարակները և կացարանի բացակայությունը զանգվածային մահացությունների հիմնական պատճառներից էին: Քննարկենք ճամբարները արևմուտքից արևելք: Օսմանիայից կես ժամ հեռավորության վրա գտնվող Մամուրայում, որտեղ օգոստոս, սեպտեմբեր ու հոկտեմբեր ամիսների ընթացքում միջին հաշվով մոտ ութսուն հազար հայ է ապաստանել ժամանակավոր վրաններում, «ամեն օր մահանում էր վեց-յոթ հարյուր մարդ... Մահացածների մարմինները առանց թաղվելու դիզվում էին կույտերով: Դաշտը ծածկված էր դրանցով»¹³⁵:

Իրավիճակը շատ տարբեր չէր Իսլահիյեում. «Օրեր կային, երբ տասնյակ հազարավոր վրանների տակ մարդիկ մեռնում էին ոչ թե

տասնյակներով, այլ հարյուրներով: Այլևս առողջ տղամարդիկ չկային, որ հավաքեին դիակներն ու այրեին դրանք... Առաջին զոհերը լինեց փոքր երեխաներն էին... Կարելի էր կարծել, թե ռազմի դաշտով էլիք անցնում. Իսլահիյեի դիմացի ամբողջ հարթավայրը պատված էր տարբեր չափերի բլրակներով: Դրանք հիսուն կամ հարյուր միատեղ թաղված հայերի շիրիմներն էին... Ավանդ. մի մասը բլուրների շափ բարձր էին»¹³⁶:

Ռադշոյում, Քաթմայում ու Ազազում «ղիակները խմբերով վեր էին բարձրանում հին կտորներից սարքված վրանների տակ... Ամենուր դիակներ էին»: Աստոնյանը նշում է, որ 1915 թ. աշնանն այդ ճամբարներում տիֆից ու սովից մահացել է վաթսուն հազար մարդ¹³⁷: Հեռագայում այդ ճամբարները փակվել են ռազմական նկատառումներով¹³⁸: Իրադրությունը նույնն էր Բաբում: Տեր Տաճատ Արսլանյանը, որը եկել էր 1915 թ. նոյեմբերին, զարհուրել էր՝ տեսնելով, որ «վրանների կողքերով ձգվում էր մահացածների ու մահացողների բազմությունը, որոնց իշխանությունների կողմից տեղահանված հայերի միջից ընտրած գերեզմանափորները չէին հասցնում հեռացնել... Իբրև գերեզմանոց ծառայող դաշտու[մ] չթաղված մեռելներ կային, որոնք ամբողջ օրերով այդպես մնում էին այդտեղ, շատերը՝ կիսամերկ կամ քրվ մերկ: Աստված իմ, ինչ տեսարան էր»¹³⁹: Տեր Արսլանյանը, որն այդ ճամբարում ստանձնել էր մեռելներին հնարավորինս արժանավայել և ավանդույթով թաղելու պարտականությունը, հաղորդել է, որ 1915 թ. նոյեմբերի վերջից մինչև 1916 թ. փետրվարի վերջը մոտ հիսուներից վաթսուն հազար հայ է մահացել: Ռաս ու Այնի վերը նկարագրված ճամբարում, որի պայմանները լավն էին համարվում, 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. փետրվարը զոհվել է մոտ տասնչորս հազար մարդ: Ռեյմոնդ Գևորգյանը, որը խիստ հանգամանալիորեն ուսումնասիրել է սիրիական ճամբարները, ասում է, որ մինչև 1916 թ. փետրվար ամիսը «1915 թ. աշնանն ու 1916 թ. ձմռանը տեղահանվածների ընդհանուր ութ հարյուր հիսուն հազար թվից ավելի քան երեք

132 Նույն տեղում, 30-31:

133 DE/PA-AA/R 14090, Հալեպի հյուպատոս Ռյուսլերի 1915 թ. փետրվարի 9-ի զեկույցը կանցյեր Բեթման Հոլվեգին, հյուպատոս Լիթենի 1916 թ. փետրվարի 6-ի կցված զեկույցի հետ միասին:

134 DE/PA-AA/R 14089, Կապիտան բժիշկ Շախտի 1915 թ. նոյեմբերի 11-ի զեկույցը, կցված Հալեպի հյուպատոս Ռյուսլերի զեկույցին կանցյեր Բեթման Հոլվեգին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 16:


135 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 19.

136 Նույն տեղում, 20:

137 Նույն տեղում, 22:

138 DE/PA-AA/R 14090, Հալեպի հյուպատոս Ռյուսլերի զեկույցը կանցյեր Բեթման Հոլվեգին, թվագրված 1915 թ. փետրվարի 9:

139 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 87.



Քարտեզ 5. Միրիայի քարտեզը, որ երևում են վերաբնակեցման վայրերն ու ճամբարները: Վերանշակված է Ջորջ Աղջայանի քարտեզից, որը տրամադրել է «Armenian Weekly» շաբաթաթերթը:

հարյուր հազարը մահացել է Միրիայի ու Միջագետքի ճանապարհին կամ համակենտրոնացման ճամբարներում»¹⁴⁰:

Օսմանյան փաստաթղթերը ևս հաստատում են, որ սովի ու հիվանդությունը Միրիա հասած հայերի մեջ մեծ թվով մահերի պատճառ են դարձել: 1915 թ. հոկտեմբերի 7-ին Դամասկոսի նահանգ ուղարկված հեռագրում հաղորդվում է, որ շրջանում ամեն օր առնվազն յոթանասուներեք ութսուներեք գաղթական է մահանում այնպիսի հիվանդություններից, ինչպիսին են տենդը, տիֆն ու դիզենտերիան, և անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու նպատակով հարկավոր էր կապվել Հալեպում ՑՆԿՎ տնօրեն Քայայի հետ¹⁴¹: Այդպես նաև 1915 թ. հոկտեմբերի 26-ին Հալեպ ուղարկված հեռագիրն է նշում, որ «հայերի քարավաններում ամեն օր սովից մարդիկ են մեռնում», և հաղորդում է, որ փող է հատկացվել «Չորրորդ քանակի հրամանատարության կողմից... նրանց սննդամթերք հայթայթելու համար»¹⁴²:

140 Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History* (London, I. B. Tauris, 2011). Մեջբերումը գտնվում է 9-րդ՝ «The Decision to Liquidate the Last Deportees» գլխում: Ընդհակադրությունս նմ հայտնում Ռեյնոլդին այդ գլուխն ինձ տրամադրելու համար:

141 BOA/DH.SFR, №57/71, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 17:

142 BOA/DH.SFR, №57/110, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

Համատարած այս մահերը պետք է ընկալվեն իբրև սահմանափակ բնակեցման քննարկվող քաղաքականության մի մասը: Սահմանափակ բնակեցման քաղաքականության առկայությունն սկզբում, ի հակադրություն Թուրքիայի պաշտոնական պատմություններում հաճախակի կատարվող պնդումների, չի ապացուցում, թե հայերի հանդեպ քաղաքականության նպատակը այդ համայնքի ոչնչացումն էր: Նվազ բան է եղել, և մյուս կողմից էլ ճիշտ չէ այս ցեղասպանության մասին խոսել սուկ ֆիզիկական բնաջնջման տեսանկյունից և, այդ նպատակի համար, չնշել բնակեցման քաղաքականությունը:

Ցեղասպանությունն իբրև միայն ֆիզիկական բնաջնջում դիտարկելը գերիշխող պատկերացումը մինչև ներկա ժամանակներս արտացոլված է Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխատություններում, որտեղ բնակեցման քաղաքականությունը կամ չի նշվում, կամ վերագրվում է տեղական բարյացակամ պաշտոնյաների գործողություններին: Թեև տեղական որոշ պաշտոնյաների բարի մտադրություններն, անշուշտ, կասկածի ենթակա չեն, ես գտնում եմ, որ սահմանափակ բնակեցումը, որը հետագայում դադարեցվեց, և ուծացումը Հայոց ցեղասպանության անբաժանելի բաղադրիչներն են: Ուծացման քաղաքականությանը կանդրադառնանք առանձին: Անմիջական հարցն այն է, թե ինչն է դադարեցվել սահմանափակ բնակեցման այդ ծրագիրը:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՅԱՄԱՐՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԶԱՆԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Ինչն էրիտթուրքերը, հրաժարվելով սահմանափակ բնակեցման քաղաքականությունից, որոշեցին վերապրած հայերի մեծ մասին վերջնական ոչնչացման համար Դեր Ջորից տանել արևելք: Քաղաքականության այս կտրուկ փոփոխության ակներև պատճառն այն էր, որ Միրիա հասած տեղահանվածների թիվը գերազանցում էր վերաբնակեցման 10 տոկոս ծրագրված համամասնությունը, որի շեմից այն կողմ որևէ ապրող հայ համարվելու էր սպառնալիք ազգային անվտանգությանը: Դրա հետևանքով մեկնարկեց կոտորածների երկրորդ ալիքը, Թալեաթի բառերով՝ «այնքան, որքան հնա-

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 26:

րավոր է՝ նվազեցնելու համար [հայերի] թիվը»¹⁴³, և ՄԱԿ գործիչների քննարկման հիմնական նյութն այն էր, թե «ինչպես են նվազեցնելու հայերի թիվը»¹⁴⁴: Հստակ չէ, թե որքանով կարող է ռազմական անհրաժեշտությունն ազդած լինել տեղահանությունների երկրորդ փուլի վրա. մի արդարացում, որ գտնուում ենք գերմանացիների որոշ գեկույցներում և օսմանյան հեռագրերում: Ստորև քննարկելու են բնաջնջման գործընթացի երկրորդ փուլը:

1916 թ. հուլիսի 10-ին Գերմանիայի դեսպանը հաղորդել է, որ «արևելյան նահանգներում հայերի հալածանքը հասել է իր վերջնական փուլին»¹⁴⁵: Ռեյմոնդ Գևորգյանը, հենվելով հայ լրագրող Արամ Անտոնյանի վկայության վրա, գրում է, որ բնակեցման քաղաքականությունը դադարեցվել է՝ սկսած 1915 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. հունվարը: Տեղահանությունների գծով պատասխանատու պաշտոնյա Նախմ բեյը գրանցել է, որ հայերի բնակեցման վայրերը փոխելու հրամանը եկել է 1915 թ. նոյեմբերին. «Երբ Մաարան, Բաբը և Հալեայի մյուս շրջաններն իբրև տեղի հայերին [վերա]բնակեցնելու տարածքներ նշող կառավարության որոշումը փոխվեց՝ [նշելով] Դեյր-էլ-Ջորի Խաբուր գետի շրջակա տարածքը, ես հասկացա, որ իրադրությունը պարզ ողբերգություն չէ, այլ որ ավելի զարհուրելի բաներ են կատարվելու»¹⁴⁶: Բնակեցման վայրերի փոփոխության մասին տեղական պաշտոնյաներին իրազեկող հեռագիրը հետևել է Թալեաթ փաշայի վերը հիշված այն հեռագրին, ուր ասվում էր «այնքան, որքան հնարավոր է՝ նվազեցնելու համար [հայերի] թիվը»: Վերհիշելով Աբդուլահադ Նուրիի 1916 թ. հունվարի այն հեռագիրը, որ հղված էր վերը («ձեզ տեղեկացնում ենք, որ աշխատում ենք մինևնույն արդյունքն ստանալ նրանց նկատմամբ, ովքեր դեռևս ողջ են՝ կիրառելով խիստ միջոցներ»¹⁴⁷), կարելի է եզրակացնել, որ քաղաքականության այդ փոփոխությունը տեղի է ունեցել 1915 թ. դեկտեմբերի և 1916 թ. հունվարի միջև:

143 Aram Andonian, *Memoirs of Naim Bey*, 4.

144 Նույն տեղում, 4-6:

145 DE/PA-AA/R 14092, Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մեթերնիխի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. հուլիսի 10:

146 Անտոնյան, Մեծ ոճիրը, 22:

147 Aram Andonian, *The Memoirs of Naim Bey*, 57-58.

Ասիրաժեշտ նախապատրաստություններից հետո Սիրիայի ճամբարները դատարկվեցին, և սկսվեց Հայոց ցեղասպանության երկրորդ փուլը, որն իր կիզակետին հասավ 1916 թ. ամռանը՝ Դեր Ջորում մտտ երկու հարյուր հազար մարդու ոչնչացմամբ: Հուլիսի վերջից մինչև դեկտեմբերի վերջն ընկած հնգամսյա ժամկետում գավառապետ Ջեքիի առաջնորդությամբ մտտ երկու հարյուր հազար հայ կոտորվեց այդ տարածքում¹⁴⁸: 1919 թ. հունվարին, երբ Բրիտանիայի արշավային ջոկատները մտան Դեր Ջոր, այնտեղ գտան ընդամենը 980 հայի¹⁴⁹:

Օսմանյան Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչությունը հետևում էր այդ զարգացումներին: Որոշ կոահումներ կարելի է անել այն մասին, թե ինչու է դադարեցվել սահմանափակ բնակեցման քաղաքականությունը, և կազմակերպվել է կոտորածների երկրորդ փուլը: Մասնավորապես, բավական ապշեցուցիչ է հայերին իրենց տեղավորման վայրերից արմատախիլ անելով հանելն սկսելու և տարածքի բնակչության թվային տվյալների միջև կապը: Ինչպես ավելի վաղ հանգամանորեն քննարկեցինք, Ներքին գործերի նախարարությունը խստագույն տնօրինության ու վերահսկողության տակ էր պահում տեղահանությունների գործընթացը և տեղահանության բոլոր փուլերում հարցին առնչվող յուրաքանչյուր տարածքից անմիջապես մշտական գեկույցներ էր պահանջում փոփոխվող բնակչության մասին: Այդ տնօրինությունն ու վերահսկողությունը Հալեայի ու դրա շրջակայքի դեպքում հատուկ ուժգնությամբ էր գործում:

Հուլիսի 29-ին Հալեայ ուղարկված հեռագրում նշվում է, որ «քանի որ հայերը տեղահանվում են զանազան ճանապարհներով ու փոխադրամիջոցներով, հնարավոր չէ տեղահանությունները վարել կենտրոնից և բնակեցման [կենտրոնական կառավարության կողմից] որոշվելիք վայրերից»: Փոխարենն այդ բաշխումները պետք է կատարվեին տարածքային հիմունքով¹⁵⁰: Հալեայը նշանակվել էր հայերի

148 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 24, 33, 44. Ռեյմոնդ Գևորգյանի ուսումնասիրությունն ուղղված է ճամբարների պարզմանն ու հայերի բնաջնջմանը: Այստեղ, հենվելով օսմանյան փաստաթղթերի վրա, կենտրոնանալու են հարցի այն մասի վրա, որը վերաբերում է բնակչության թվերին:

149 T. H. Greenshield, "The Settlement of Armenian Refugees in Syria and Lebanon, 1915-1939," PhD dissertation, University of Durham, 1978, 56.

150 BOA/DH.SFR, № 54-A/167, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հալեայի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 29:

ժամանումն ու բաշխումը կազմակերպելու վարչական կենտրոն¹⁵¹։ Նոր ճյուղային գրասենյակ հիմնելու նպատակով ՑՆԿՎ տնօրեն Շուքրու Քայան օգոստոսի վերջին մեկնել է Հալեպ, իսկ Նուրին նշանակվել է նրա օգնական¹⁵²։ Առնչակից բոլոր նահանգային ու գավառային պաշտոնյաները տեղեկացվել են իրադրության մասին¹⁵³։ Տարածքային վարիչները տեղահանությանն առնչվող հարցերով պետք է կապվեին Քայայի հետ և հետևեին նրա հրահանգներին¹⁵⁴։ Բացի այդ, որոշ գավառապետեր հոկտեմբերի սկզբին Հալեպում ժողովի են հրավիրվել՝ ուղիղ քննարկումների համար¹⁵⁵։

Տարածքի համար առաջին որոշումը եղել է ճամբարների նպատակների ու դրանց վարչական հարաբերությունների կանոնավորումը։ Պատրաստվել և կառավարության հաստատմանն են ներկայացվել համապատասխան հանձնարարականներ։ Ստամբուլից 1915 թ. սեպտեմբերի 20-ին Հալեպ՝ Քայային ուղարկված հեռագրում նշվում է, որ քանի որ «տեղահանության կազմակերպման ու օրենսդրության վերաբերյալ հանձնարարականները պատշաճ են նկատվում գլխավոր կոմիտեի կողմից, [որ նշանակում է կամ օսմանյան կառավարության, կամ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի կողմից], հաղորդվել է այն նահանգներում ու գավառներում դրանց կիրառման կարիքը, որոնք [դրա] հարկն ունեն»¹⁵⁶։ Խոսքը հավանաբար վերա-

բերում է վերոհիշյալ հրահանգներին, որոնք 1915 թ. հոկտեմբերի 7-ին ուղարկվել էին շրջաններ¹⁵⁷։ Երբ մայիսի կեսերին գաղթականների առաջին քարավանները ժամանեցին Հալեպ, որևէ լուրջ նախապատրաստություն կատարված չէր հայերին բնակեցնելու համար։

Ընդունվել են երկու այլ կարևոր որոշումներ։ Առաջինը Հալեպ եկած հայ գաղթականներին «առանց բացառության դեպի Ռաքա, Ջոր ու Քերեք տեղահանելն» էր։ Ստամբուլն ընդունել էր Քայայի ցանկությունը¹⁵⁸, և Ներքին գործերի նախարարությունը Հալեպի նահանգ ուղարկված առանձին հեռագրով հաղորդել էր, որ ձեռնարկվեն համապատասխան քայլեր¹⁵⁹։ Երկրորդ որոշումը ամբողջ տարածքով մեկ բնակչության լայնատարած մարդահամար անցկացնելն էր։ 1915 թ. դեկտեմբերի 8-ին Հալեպի ու Դամասկոսի նահանգներ և Ուրֆայի գավառ ուղարկված մի հեռագրում թվարկվում են այն վայրերը, որտեղ պետք է կատարվեր մարդահամարը. մեծամասամբ դրանք այն վայրերն էին, որտեղ գոյություն ունեին ճամբարներ, ինչպես Հարանը, Մաարան, Իդլիբը, Մենջիքն ու Ռաքան։ Հատուկ հանձնարարվում էր փորձել գրանցել տարածքի քոչվոր ցեղերին¹⁶⁰։

Մարդահամարի համար անհրաժեշտ գումարներ են ուղարկվել Հալեպի ու Դամասկոսի նահանգներ։ Յուրաքանչյուրը պետք է «միջոցներ ձեռնարկել գրանցման [մարդահամարի] իրականացման հրամանը պատշաճ ու արագ և տեղի կարիքներին համապատասխան կատարելու համար, և այս հարցով, եթե անհրաժեշտ նկատվեր,

151 BOA/DH.ŞFR, №54-A/389, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը, թվագրված 1915 թ. օգոստոսի 13:

152 BOA/DH.ŞFR, №56/385, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության քարտուղարության ծածկագրված հեռագիրը Հալեպի ՑՆԿՎ տնօրեն Քայային, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 12:

153 BOA/DH.ŞFR, №55-A/16, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի, Անկարայի, Տյուրքմենչիգարի, Ադանայի ու Հալեպի նահանգներ և Իզմիրի, Էսքիշեհիրի, Քյութահյայի, Կարահիսար-ի Սահիրի ու Մարաշի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 31:

154 BOA/DH.ŞFR, №56/69, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մոսուլի ու Դամասկոսի նահանգներ և Ուրֆայի, Ջորի ու Այնթապի գավառներ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 18:

155 BOA/DH.ŞFR, №56/173, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ուրֆայի ու Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 26:

156 BOA/DH.ŞFR, №56/85, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

գրված հեռագիրը Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության տնօրեն Քայային, որն այդ ժամանակ Հալեպում էր, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 20:

157 BOA/DH.EUM.VRK.15/71-1-6, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ տնօրեն Քայայի գրությունը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 8:

158 BOA/DH.ŞFR, №57/53, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 17:

159 BOA/DH.ŞFR, №57/5, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 17:

160 Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ (BOA/DH.ŞFR, №58/231), Ուրֆայի գավառ (BOA/DH.ŞFR, №58/230), թվագրված 1915 թ. դեկտեմբերի 8:

կապվեր Չորրորդ բանակի հրամանատարության հետ»¹⁶¹: 1915 թ. դեկտեմբերի 11-ին Դեր Ջորի գավառապետարանը մայրաքաղաքին տեղեկացրել է, որ «ներկա բնակչության գրանցումները գավառի քարտեզների հետ միասին, ըստ հրամայվածի», ուղարկվել են Ստամբուլ¹⁶²:

Ի լրումն մարդահամարի, որ շրջանային պաշտոնյաները պետք է ուղղակիորեն անցկացնեին, Ներքին գործերի նախարարությունը, ինչպես նշվել է վերը, շարունակում էր շրջաններից գրեթե շաքաթական գեկույցներ ստանալ, որոնք վերաբերում էին հայերի քարավանների տարբեր ուղղություններով շարժվելու հետևանքով բնակչության փոփոխվող համամասնությանը: 1916 թ. հունվարի 13-ին երկու հեռագրով Բեյրութից ու Ջորից պահանջվել է քսանչորս ժամում ուղարկել բնակչության թվային տվյալները, ինչպես նաև Դամասկոսի նահանգից պահանջվել է տեղեկություններ տրամադրել «օտար հայերի թվի մասին, որոնք, ըստ լուրերի, դրսից են գալիս, Դամասկոսում գտնվող տեղացի հայերի հետ միասին, և թե նրանց ուր են տեղահանում»¹⁶³:

Եկել էր տեղահանումների ժամանակը. Դեր Ջորի ուղղությամբ ճամբարները պարավում էին: 1916 թ. վերջերից սկսած, Ներքին գործերի նախարարությունը կանոնավոր գրանցումներ էր պահում ալիք առ ալիք Դեր Ջորում խոնավող շարասյուների վերաբերյալ: 1916 թ. հունվարի 31-ին «Հալեպի ճանապարհով ևս հազար հինգ հարյուր եկավ»¹⁶⁴: 1916 թ. մարտի 7-ին «երեկ Այնթափից ու Իզմիրից երկու

հազար հինգ հարյուր հայ ժամանեց [Դեր] Ջոր»¹⁶⁵: 1916 թ. մարտի 8-ին «Այնթափի, Թեքվուրդաղի, Կարահիսարի [ու] Աքշեհիի հայերից հազար չորս հարյուր քառասուն մարդ երեկ ժամանեց [Դեր] Ջոր»¹⁶⁶: 1916 թ. մարտի 11-ին «Իզմիրից ու Սամսունից չորս հարյուր հայ ժամանեց»¹⁶⁷: 1916 թ. մարտի 12-ին գեկույցվել է. «Երեկ ժամանեցին ևս երկու հարյուր հայեր Մարաշից, Բուրսայից ու Ադապազարից»¹⁶⁸: Երայ տվեք այստեղ ընթերցողին հիշեցնել, որ նախորդող ամիսներին հայերի թիվը Դեր Ջորում արդեն անցել էր բնակչության 10 տոկոսը, և հրամաններ էին արձակվել, որ ոչ մի հայ այնտեղ չուղարկվեր:

Նմանատիպ տեղեկություններ կարելի է գտնել գերմանական ու հայկական աղբյուրներում: Հալեպի հյուպատոս Վալտեր Ռյոպերը գեկույցել է, որ Հալեպի ու Ադանայի միջև գտնվող ճամբարների պարպումն սկսվել է դեկտեմբերի սկզբին, և գաղթականներն ուղարկվել են Բաքի ու Դեր Ջորի ուղղությամբ¹⁶⁹: Ռեյմոնդ Գևորգյանը, հենվելով Անտոնյանի տվյալների վրա, նույնպես նշել է. «Այն բանից հետո, երբ Կոստանդնուպոլսի իշխանությունները որոշեցին հյուսիսային Սիրիան մաքրել գաղթական հայերից, 1915 թ. դեկտեմբերի ու 1916 թ. հունվարի միջև... Մամուրայի, Իսլահիյեի, Ռաջոյի, Քաթմայի, Ազազի, Բաքի, Ախթերիմի, Մունբուջի ու Մարայի ճամբարները, որոնք բոլորն էլ գտնվում էին Հալեպի շրջագծում, այդ ժամանակ մեկը մյուսի հետևից փակվեցին, և այդ ճամբարների վերապրածներն ուղարկվեցին Եփրատի ափի երկայնքով կամ Ռաս ուլ-Այն»¹⁷⁰:

161 Ներքին գործերի նախարարության ծածկագրերի վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ (BOA/DH.SFR, №69/239) և Դամասկոսի նահանգ (BOA/DH.SFR, №69/241), թվագրված 1915 թ. նոյեմբերի 12:

162 BOA/DH.EUM.KLU, №10/36, Ջոր գավառից հեռագիր Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 11: Թեև Դեր Ջորի քարտեզն ու դրա բնակչության գրանցման տետրը պետք է գտնվեին արխիվի համապատասխան տեղում, այս գրանցումը չկա, և գործում տեղեկություն կա միայն Գյոքսուն ու Մեդինա քաղաքների բնակչության մասին: Տետրը չի դրվել այս գործի մեջ:

163 Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Բեյրութի նահանգ, Ջորի գավառ (BOA/DH.SFR, №60/32) և Դամասկոսի նահանգ (BOA/DH.SFR, №60/35) թվագրված 1916 թ. հունվարի 16:

164 BOA/DH.EUM, 2.Տսե, №69/5, Գավառապետ Ալի Սուադի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. հունվարի 31:

165 BOA/DH.EUM, 2.Տսե, №69/6, Գավառապետ Ալի Սուադի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. մարտի 7:

166 BOA/DH.EUM, 2.Տսե, №69/7, Գավառապետ Ալի Սուադի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. մարտի 9:

167 BOA/DH.EUM, 2.Տսե, №69/8, Գավառապետ Ալի Սուադի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. մարտի 11:

168 BOA/DH.EUM, 2.Տսե, №69/9, Գավառապետ Ալի Սուադի ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. մարտի 12:

169 DE/PA-AA/R 14090, Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոպերի գեկույցը կանցելի Բեթման-Շուվեզին, թվագրված 1916 թ. փետրվարի 9:

170 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 24, 32-33.

1916 թ. մարտին արդեն սկսել են պարպվել Ռաս ուլ Այնի և Հալեպից արևելք ընկած մյուս վայրերի ճամբարները, և դրանց ժամանակավոր բնակիչներն ուղարկվել են Դեր Զոր: Ապրիլի սկզբին Ռաս ուլ Այնում մեծ կուտակում էր գոյացել: Դեր Զորի գավառապետարանին ասվել է, որ «լուրեր են հասել, որ [Դեր] Զոր տեղահանվելու նպատակով Ռաս ուլ Այնում հավաքված հայերի քարավաններից մինչև այժմ շատ քչերն են տեղահանվել, և նրանց մեծ մասը դեռ այնտեղ է»: Ներքին գործերի նախարարությունը կարգադրել է. «նրանց... տեղահանությունը սահմանված վայրեր՝ ամբողջությամբ, նախընտրելի է արագ ու եռանդով, կարճ ժամանակում»¹⁷¹:

Բնաջնջման երկրորդ ալիքի կազմակերպման հաջորդ քայլը շրջանն արգելափակված հայտարարելն էր: Օտարերկրացիներին ու ոչ-մահմեդական վաճառականներին արգելվեց որևէ նպատակով շրջել այդ տարածքում: Անվտանգության հրահանգ արձակվեց, որ «քանի որ այնպիսի վայրերում, ուր տեղահանվում ու տեղավորվում են հայերը, որոշ օտարերկրացիների գալն ու գնալը և, օրինակ, ամերիկյան քաղաքացիություն ունեցող առևտրականների կամ նույնիսկ օսմանյան որոշ ոչ-մահմեդական վաճառականների կողմից առևտրի նպատակով տարածքում թափառելը հարմար չի նկատվում, ովքեր չունեն կառավարության վստահությունը, նրանց չի թույլատրվում ճանապարհորդել և ուղևորություն կատարել նման հատվածներում»¹⁷²: Արգելվեց նաև որևէ օգնություն ցուցաբերել գաղթականներին: Մարդասիրական կազմակերպությունների աշխատողներն ու կառավարական այն պաշտոնյաները, ովքեր այք կփակեին այդ բաշխումների վրա, պետք է «խստիվ կպատժվեն»¹⁷³:

Քանի որ 1915 թ. դեկտեմբերի քարտեզն ու մարդահամարի տվյալներն անբավարար դուրս եկան, 1916 թ. մարտին սկսվեցին նոր

մարդահամար կազմակերպելու վերաբերյալ պաշտոնական թղթակցություններ: Հարկավոր է կրկին ընդգծել, որ մինչ Ստամբուլը որոշում էր տարածաշրջանային նոր մարդահամար անցկացնել, պաշտոնյաներն անընդմեջ շարունակում էին տեղեկություններ պահանջել հայերի գտնվելու վայրերի փոփոխության և դրա հետևանքով առաջացած բնակչության նոր համամասնության վերաբերյալ: Այսպես, 1916 թ. մայիսի 11-ի ընդհանուր մի հաղորդագրությամբ պահանջվել է «շտապ ուղարկել պահանջված տեղեկությունը... մարդկանց թվի և տեղահանության ու բնակեցման վայրի մասին»¹⁷⁴: 1916 թ. մայիսի 31-ին Դեր Զորի գավառապետարանից պահանջվել է «արագ հաղորդել այն հայերի թիվը, որոնք եկել են այլ վայրերից, և որոնց թողնում են գավառում, և նրանց, ովքեր այլ վայրեր տեղահանվելու ճանապարհին են»¹⁷⁵:

«Սկսվել է հայ ազգաբնակչության գրանցում[ը]», 1916 թ. ապրիլի սկզբին հաղորդել է Դեր Զորի գավառապետարանը: Տարածքային այս մարդահամարի վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել հայկական աղբյուրներում ևս: Գրիգոր Անգութը, որը 1916 թ. մայիսին եղել է Ռաքայում, իր հուշերում գրում է. «Ֆահրիի [Ռաքայի մարզպետ] վարչակազմի ժամանակ սկսվեց տեղահանությունների հաշվառումը և շարունակվեց իր հետնորդի ժամանակ ևս»¹⁷⁶: Մինաս Թիլբեյանն ասում է, որ այդ ամիսներին մարդահամար է անցկացվել Այրանի ու Իսթիլի ճամբարներում. «1916 թ. մայիսի ընթացքում ժանդարմերիայի հրամանատարը, Օսմանիյեի մարզպետն ու Բաղչեում իր [վերջինիս] օգնականը Ադանայի նահանգի անունից եկան Այրանի ու Իսթիլի՝ հայերին հաշվելու համար. նրանք գտան, որ նրանց թիվը մեծ է»¹⁷⁷:

Մարդահամարի համար նշանակալի գումար էր պահանջվում տարածաշրջանի մակարդակով: Դեր Զորի գավառը խնդրել է «հրա-

171 BOA/DH.ŞFR, №62/199, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 1:

172 BOA/DH.ŞFR, №61/32, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի, Ադանայի Մոսուլի ու Դիյարբեքիի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Զորի գավառներ, թվագրված 1916 թ. փետրվարի 13:

173 Ներքին գործերի նախարար Թալեաթի հաղորդագրությունը Օսմանյան բանակի հրամանատարությանը, թվագրված 1916 թ. մարտի 25, հղված հետևյալ տեղում. Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 2, 5:

174 BOA/DH.ŞFR, №63/289, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության Վիճակագրության ու պաշտոնյաների գրասենյակի ծածկագրված հեռագիրը Բոնյայի, Ադանայի, Հալեպի, Դամասկոսի ու Մոսուլի նահանգներ և Զորի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 11:

175 BOA/DH.ŞFR, 64/165, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 31:

176 Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 165.

177 Նույն տեղում, 67:

մայել վճարել տասնվեց հազար հինգ հարյուր դուրուշ, ծախս, որ անհրաժեշտ է՝ վճարելու համար գրանցման [մարդահամարի] հանձնաժողովի երկու ամսվա աշխատավարձի և [գավառին] ենթակա վայրեր ճամփորդության ու զանազան ծախսերի համար»¹⁷⁸: Ներքին գործերի նախարարության Բնակչության գործերի վարչությունը, նկատելով, որ «գավառապետարանի կողմից շարունակ[աբար] հաղորդվել է [Դեր] Զորի գավառ ժամանող հայերի գրանցման [մարդահամարի] համար տասնվեց հազար հինգ հարյուր դուրուշ վճարելու հրամանի խնդրանքը, իսկ ընթացիկ տարվա բյուջեի մեջ բնակչության գրանցման համար հատկացումներ չկան», խնդրել է, որ վճարումը կատարվի հայեցողական ֆոնդից¹⁷⁹: Հունիսի վերջին իրոք վճարումը կատարվեց գաղտնի ֆոնդերից և Դեր Զորի գավառային կառավարությունը տեղեկացվեց դրա մասին¹⁸⁰:

Կառավարությունը դիմել է խորհրդարան՝ հարկ եղած հատկացումներն անելու համար: 1916 թ. մարտի 8-ին օրինագիծ է առաջադրվել «Հայկաի ու Դամասկոսի նահանգներում և Ուրֆայի գավառում... բնակչության գրանցման համար Ներքին գործերի նախարարության 1916 թ. բյուջեում 890.000 դուրուշ ավելացնելու վերաբերյալ»: Սակայն խորհրդարանը մերժել է առաջարկը¹⁸¹: Այդ պատճառով վճարումը կատարվել է գաղտնի հատկացումներից:

Տեղահանությունից ու մահից փրկվելու համար Դեր Զորում շատ հայեր կարողացել են կաշառել մարդահամարն անցկացնողներին և գրանցվել մահացած մարդկանց անուններով: Գավառապետ Զեքին, որը նշանակվել էր շրջանում կոտորածներ կազմակերպելու համար, ցանկացել է, որ «այս գրանցումները, որոնք, միևնույնն է, որևէ պաշտոնական արժեք չունեն, համարվեն բնավ չկատարված», և գրել է,

178 BOA/DH.SN.THR, № 69/46, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչությանը գրված «գաղտնի» մակագրությամբ հաղորդագրությունը, թվագրված 1916 թ. ապրիլի 6:

179 BOA/DH.SN.THR, № 69/46, Ներքին գործերի նախարարության Բնակչության գրանցման քարտուղարության գրությունը, թվագրված 1916 թ. հունիսի 20:

180 BOA/DH.SFR, № 65/105, Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. հունիսի 28:

181 ՕՊՊԱ, Ժամկետ 3, գումարման 2-րդ տարի, հ. 2, 1331թ. փետրվարի 24 (1916 թ. մարտի 8), սիստ 41, 392, 397:

որ «եթե աստված կամենա, մեկ կամ երկու ամսվա ընթացքում, ցանկալի բնակեցման ավարտից հետո, կկատարվի այն, ինչ դա պահանջում էր, և կներկայացվի դրա ստեղծած իրադրությանը համապատասխան»: Այլ կերպ ասած, Զեքին ցանկանում էր, որ ճշմարիտ իրավիճակ համարվեն բնակչության այն տվյալները, որոնք գեկուցվելու էին կոտորածներից հետո¹⁸²: Ներքին շրջաններում մնացած հայերին վերջապետ արտաքսել են Դեր Զոր: Տեղահանության հրամանը 1916 թ. հուլիսի 10-ին հեռագրով ուղարկվել է Քոնյա, իսկ 1916 թ. հուլիսի 18-ին՝ Դիյարբեքիր¹⁸³:

Այլևս խոչընդոտ չէր մնացել: Թալեաթ փաշայի 1916 թ. հուլիսի 19-ի հեռագիրը կարծես կոտորածներն սկսելու ազդակ է դարձել. «Նպատակահարմար է վսասակար հայ մարդկանց արգելել ռազմական ճանապարհների շուրջ հավաքվելը և վերջիններիս անմիջապես տեղահանել դեպի խորքերը»: Թալեաթն իրադրության մասին հաղորդել է նաև Բարձրագույն հրամանատարության գրասենյակ¹⁸⁴: 1916 թ. հուլիսի 29-ին նա բացեփրաց գրել է, որ բանակի հրամանատարությունը Վեցերորդ բանակին տեղեկացրել է այն քայլերի մասին, «որոնք պահանջվում են հայերին բաշխելու և հարմար վայրերում տեղավորելու համար, որոնց [հայերի] կուտակումը Եփրատ գետի ավազանում և ռազմական ճանապարհին վտանգավոր է լինելու ռազմական փոխադրումների համար»¹⁸⁵:

Հայերն այլևս գնալու տեղ չունեին: Կոտորածները շարունակվել են ամբողջ ամառն ու աշունը: Նախատեսելով, որ սպանության գործողությունների համար հավելյալ աշխատուժ է պետք լինելու՝ Զեքին Ստամբուլից խնդրել է Չորրորդ բանակից հավելյալ ժանդարմներ

182 BOA/DH.SN.THR, № 69/46, Դեր Զորի գավառապետ Սալիի Զեքիի հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1916 թ. հուլիսի 20:

183 Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 10 (BOA/DH.SFR, № 65/176), և Դիյարբեքիրի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 18 (BOA/DH.SFR, № 66/21):

184 BOA/DH.SFR, № 66/19, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. հուլիսի 19:

185 BOA/DH.SFR, № 66/94, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. հուլիսի 29:

ուղարկել Դեր Զոր¹⁸⁶: Երկու շաբաթ անց նա ևս երեք հարյուր զինվոր է խնդրել Վեցերորդ բանակից¹⁸⁷:

Այս կետից սկսած կառավարության համար հայերն ավելին չէին, քան թվերի մի շարք: Համակարգված կոտորածների միջոցով նրանց քանակի մաթեմատիկական նվազեցումը վերահսկվում էր բնակչության ամենավերջին վիճակագրական տվյալների պաշտոնական պահանջների մշտական հեղեղով: 1916 թ. օգոստոսին Դեր Զորի գավառապետի գրասենյակ ուղարկած հատուկ հեռագրով Թալեաթը թարմ տեղեկություն է պահանջել այնտեղ տիրող իրադրության մասին.

1. Ներկայումս քանի հայ կա [Դեր] Զորի գավառում: 2. [Շրջանի] ճի հատվածներում են գտնվում այդ մարդիկ ներկայումս, և ճի՞ն է [տեղի բնակչության հետ] նրանց համամասնությունը: 3. Քանի հայ է ժամանել շրջան տեղահանությունների սկզբից ի վեր, և ճի՞ր են ուղարկվել նրանք: 4. Այս անգամ քանիսն են եկել Հալեպից ու մյուս շրջաններից: Որքան է ամբողջ հայ բնակչությունը՝ ներառյալ այդ [հայերը]¹⁸⁸:

1916 թ. «հրատապ» մի հեռագրով նա խնդրել է «գավառում/նահանգում հայերի թվի... [իրադրության մասին] պահանջված աղյուսակային ցանկի հեռագրային տեղեկություն և առաքում առաջին փոստով՝ առանց հետագա հաղորդագրությունների անհրաժեշտություն ստեղծելու»¹⁸⁹:

Ռազմական նկատառումները դեր խաղացել են արքտրավայրեր ժամանող հայերի բնաջնջման մեջ: Այս հարցի վերաբերյալ տեղեկու-

186 BOA/DH.ŞFR, № 66/118, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1916 թ. հուլիսի 30:

187 BOA/DH.ŞFR, № 67/7, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Վեցերորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1916 թ. օգոստոսի 14:

188 BOA/DH.ŞFR, № 66/170, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը (Դեր) Զորի գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 8:

189 BOA/DH.ŞFR, № 70/190, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքի, Դամասկոսի ու Մամուրեթյուպահի նահանգներ և (Դեր) Զորի գավառ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 5:

թյուններ կան Գերմանիայի հյուպատոսական զեկույցներում: Ըստ Թալեաթի, Ադանայից Հալեպ ձգվող տարածքում հայերը «պետք է հեռացվեն» դեպի Ռաս ու Այն ու Դեր Զոր «ռազմական պատճառներով, որպեսզի հաղորդակցության գծերը [երկաթուղին] ազատվի և կանխվի վարակիչ հիվանդությունների տարածումը բանակում»¹⁹⁰:

Օսմանյան փաստաթղթերը ևս նշում են, որ ռազմական նկատառումները գործոն են հանդիսացել Սիրիայում հայերի որոշ վերատեղավորումների հարցում: 1915 թ. հունիսի 18-ին Հալեպի նահանգային կառավարությանն ուղղված հեռագրում Թալեաթ փաշան ասել է, որ ինչ վերաբերում է «դրսեցի հայերի առաքմանը Դամասկոսի ու Մոսուլի նահանգներ, որոնց այլ ուղղությամբ փոխադրումն ու արտաքսումը որոշվել է բանակի կողմից, պատերազմի ներկա պայմանների պատճառով համարվել է վտանգավոր, անհրաժեշտ է նրանց տեղահանել [Դեր] Զոր»¹⁹¹: 1916 թ. հուլիսին ու օգոստոսին Դեր Զոր ուղարկված իր հեռագրերում Թալեաթը կրկնել է այն հիմնավորումը, որ ռազմական ճանապարհների երկայնքով հայերի կուտակումը ցանկալի չէ և կարող է խոչընդոտել ռազմական փոխադրումները: Անհրաժեշտ է նկատել, որ մեկ տարի առաջ նա հրամայել էր ռազմական պատճառներով հայերին տեղահանել դեպի Դեր Զոր. մեկ տարի անց նա հրամայում է հայերին դուրս հանել Դեր Զորից՝ դարձյալ ռազմական պատճառներով:

Մինչ Չորրորդ ու Վեցերորդ բանակների հրամանատարություններին հավելյալ ժանդարմների խնդրանք էր ուղղվում, Թալեաթը ևս մեկ անգամ վկայակոչել է ռազմական անհրաժեշտությունը՝ «հանրային կարգի պահպանման ու կարգապահության ապահովման համար, այսօր համակենտրոնացված ու ամփոփված վիճակում Զոր տեղահանված հայերի հետևանքով»¹⁹²: Թալեաթն ակնհայտորեն բանակի հրամանատարներից թաքցնում էր «հայերին Դեր Զորից դուրս հանելու» Դեր Զորի գավառապետին ուղղված իր հրամաններն ու

190 DE/PA-AA/R 14090, Հալեպի հյուպատոս Ռյուպերի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. փետրվարի 9:

191 BOA/DH.ŞFR, № 65/32-1, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. հունիսի 18:

192 Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագրերը Չորրորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1916 թ. հուլիսի 30 (BOA/DH.ŞFR, № 66/118) և Վեցերորդ բանակի հրամանատարությանը, թվագրված 1916 թ. օգոստոսի 14 (BOA/DH.ŞFR, № 67/7):

այն հանգամանքը, որ Դեր Զորը դատարկվում էր: Մինևույն ժամանակ, նա Դեր Զորում հայերի կենտրոնացումը գործածում էր՝ արդարացնելու համար ժանդարմների իր պահանջը: Այս ակներև հակասականությունը կարող է բացատրվել որպես Թալեաթի կողմից ռազմական անհրաժեշտության պատճառաբանության կիրառում իր գործողությունների համար: Դրանով հանդերձ, «ռազմական անհրաժեշտության» գաղափարը հավելյալ ուսումնասիրության կարիք ունի: Թշվառ գաղթականների փոքրացող խումբը՝ հիվանդ, սոված ու ուժասպառ, ի վիճակի չէր լինի մարտահրավեր նետել օսմանյան բանակին: Ինչո՞ւ էին նրանք սպառնալիք համարվում: Եվ ինչո՞ւ այդ հրամանները չէին արձակվում զինվորական հրամանատարական շղթայի կողմից:

Վերապրողների հուշերը, ինչպես նաև օսմանյան փաստաթղթերը ցույց են տալիս, որ Դեր Զորի բնաջնջման խնդիրը լուրջ անհամաձայնություն է հարուցել բանակային ու քաղաքացիական իշխանությունների միջև¹⁹³: Օսմանյան Վեցերորդ բանակը, որը պատրաստվում էր Միջագետքում (Իրաքում) դիմագրավելու անգլիական ուժերին, աշխատուժի կարիք ուներ՝ ճանապարհների կառուցման և այլ գործերի համար: Դեր Զորում զինվորական իշխանությունները փորձել են Վեցերորդ բանակին կից աշխատանքային գումարտակ (amele taburu) կազմել և բանակի կարիքների համար մոտ վեց հարյուր հայ են առանձնացրել, որոնք զինվոր էին, բանվոր ու արհեստավոր: Այդ փորձին հակառակվելու համար գավառապետ Զեքին այդ հայերից ոմանց ձերբակալել է, տեղահանել և նույնիսկ սպանել¹⁹⁴:

193 Իրականում, շրջանում զինվորական ու քաղաքացիական իշխանությունների միջև տարաձայնություններն ու անհամաձայնությունը լուրջ խնդիր են եղել տեղահանությունների ողջ ընթացքում: Այսպես, Լեռնալիբանանի գավառապետ Ալի Մյունիֆը շրջանի մասին Ներքին գործերի նախարարությանը գրած իր զեկույցում պետությանն ասում է, որ «այս շրջանում խերկայիս Սիրիայում՝ նախարարության ու բանակի հրամանատարության միջև հաճախ փոխադարձաբար տարբեր դիրքորոշումներ ու ընդդիմություն կան հայերի տեղահանության ու վտարման հարցի շուրջ», և հայտնում է, որ դա պետական աշխատողների մեջ երկմտություն է հարուցում: BOA/DH.SFR, № 488/80, Ծածկագրված հեռագիր Հալեպի նահանգից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 10:

194 Միջադեպի մանրամասնությունները կարելի է գտնել Արամ Զիրեպյանի և Արամ Աստուխյանի հուշերում (Kévorkian, "L'extermination des déportés arméniens," 175-82):

Այդ բախման հետքերը պահպանված են Ներքին գործերի նախարարության փաստաթղթերում:

Զեքին նեղսրտել է Վեցերորդ բանակի նախաձեռնությունից և 1916 թ. հուլիսի 26-ին բողոք է ուղարկել Ստամբուլ: Զինվորական իշխանությունների հետ հանդիպելուց հետո Թալեաթը հետևյալ պատասխանն է ուղարկել. «Բարձրագույն հրամանատարության գրասենյակից եկած պատասխանում հաղորդվում է, որ Վեցերորդ բանակի հրամանատարությանը հրամայվել է, որ [Դեր Զորի] կայանի հրամանատարը իրավասություն չունի իր կամքով հայերի միջից արհեստավորներ ընտրելու, և որ անհրաժեշտ է ապահովել քաղաքացիական վարչակազմի ու զինվորական ծառայության [գրասենյակի] գործողությունների միասնականությունը»¹⁹⁵: Թեև Զեքին ուղարկած հետագա հրահանգով շեշտվել է այդ հարցը Վեցերորդ բանակի հետ համակարգելու կարևորությունը¹⁹⁶, գոյություն ունեցած խոչընդոտը Դեր Զորում գտնվող զինվորական իշխանության հետ, որն աշխատում էր կոտորածները կանխել իր սեփական կարիքների համար, կարծես թե հաղթահարվել էր: Այդ հակադրության վերջնական լուծումն այստեղ կարևոր չէ: Կարևորն այն է, որ այն փաստարկը, թե կոտորածներն իրականացվել են ռազմական պատճառներով, առանձնապես քննություն չի բռնում:

Թերևս կարևոր հարցը ռազմական իրադրությունն է ոչ թե Սիրիայի արևելքում ու արևմուտքում, այլ, ավելի շուտ, Անատոլիայում: 1916 թ. փետրվարին Էրզրումը ռուսների ձեռքն անցնելու հանգամանքը կարող է ավելի մեծ դեր խաղացած լինել, քան ռազմական կարիքները Սիրիայում: Հստակ չէ, թե արդյո՞ք ռուսների առաջխաղացումն ու Էրզրումի գրավումը վերակենդանացրել են 1914 թ. փետրվարի Հայկական բարենորոգումների համաձայնության վախը: Թերևս, Սիրիայում «ավելցուկ» հայ բնակչությունն անվտանգության հանդեպ սպառնալիք է դիտվել նաև այս պատճառով՝ ի լրումն երիտթուրքերի ժողովրդագրական տագնապների: Եթե պատերազմը տա-

195 BOA/DH.SFR, № 66/159, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 6:

196 BOA/DH.SFR, № 67/220, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հատուկ հեռագիրը Զորի գավառ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 10:

նույն տրվեր, վերադարձող հայերը կարող էին տարածաշրջանում հայկական վարչակազմի հիմքը կազմել:

10 ՏՈԿՈՍԻ ԿԱՐԳԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՈՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴՅՈՒՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հայերի բնակեցումը 10 տոկոսի չափանիշին համապատասխան և այդ թվի նշանակալի դերը նրանց բնաջնջման գործում քննարկվել են նաև գերմանական ու ամերիկյան փաստաթղթերում: Ամերիկյան հյուպատոս Լեզլի Դեյվիսը 1915 թ. նոյեմբերի 30-ին Խարբերդից հաղորդել է. «Մեկ տարի առաջ այս վիլայեթում եղած գրեթե հարյուր հազար հայերից հիմա հավանաբար չորս հազարից ավելին չի մնացել: Վերջերս տեղեկություն է ստացվել, որ պետք է մնա հինգ տոկոսից ոչ ավելի հայ: Կասկածելի է, թե հիմա այդքան մնացած լինի»¹⁹⁷:

Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռյոսլերը 1916 թ. ապրիլի 27-ին նույնպես գեկուցել է հետևյալը. «Համաձայն նրա, ինչ իմացա 1916 թ. ապրիլի 20-ին Դեր Ջորից եկած թուրք մի պաշտոնյայից, Դեր Ջորի գավառապետը հրաման է ստացել [միայն այնքան] հայ թողնել, որ կազմեն տեղի [ամբողջ] բնակչության [ոչ ավելի քան] 10 տոկոսը, իսկ մնացածները պետք է ուղարկվեն Մոսուլ»: «Դեր Ջորի բնակչությունը կարող է հաշվվել մոտավորապես 20.000 հոգի: Ասում են, որ նրանցից առնվազն 15.000-ը այն հայերն են, որոնք այդտեղ են ուղարկվել, ինչը նշանակում է, որ նրանցից առնվազն 13.000-ը պետք է աքտորվի [որևէ այլ տեղ]»¹⁹⁸:

1916 թ. հուլիսի 29-ին Ռյոսլերը Գերմանիայի դեսպանությանը տեղեկացրել է, որ ամսի 17-ին հրամայվել է Դեր Ջորի գավառի հայերին հանել շրջանից. «Հայերի թշվառության մեջ նույնիսկ այդ դեռևս գրեթե իդիլիան արագ փոխվեց դժոխքի մի կետի, երբ հրամայվեց, որ բնակիչների միայն 10 տոկոսին է թույլատրվում հայ լինել, և նախևառաջ մարդասեր Մուադ բեյը փոխադրվեց Բաղդատ ու փո-

197 NA/RG 59, 867.4016/269, Խարբերդի հյուպատոս Լեզլի Դեյվիսի գեկույցը Կոստանդնուպոլսում դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 30: Գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 473:

198 DE/PA-AA/R 14091, Հալեպի հյուպատոս Ռյոսլերի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. ապրիլի 27:

խառնվեց դաժան չերքեզ Ջեքի բեյով»: Հյուպատոսն ավելացրել է, որ «անհրաժեշտ է լինելու վերացնել նրանց, ովքեր ավելացել են»: Այդ նպատակի համար Դեր Ջորի գավառապետ Մուադ բեյն ազատվել է իր պաշտոնից և տեղափոխվել Բաղդատ. նրա փոխարեն գալիսն «անգութ մի հետնորդ ստացավ»¹⁹⁹:

Ամերիկյան հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնն ամփոփել է այդ ամբողջ ժամանակաշրջանը՝ գրելով. «Տեղի ունեցան ամենազարհուրելի սպանդները, որ կարելի է երևակայել, որի փաստերն ինձ են հայտնել մի քանի ողջ մնացածներ, ովքեր հրաշքով փախել են, և ում ապաստան են տվել բարեկամ արարները, իսկ ապա, հսկայական դժվարություններ կրելուց հետո, վերադարձել են Հալեպ»²⁰⁰:

Դեր Ջորի ոճրագործությունների գլխավոր ճարտարապետ Ջեքի ձեռքակալման հրաման է արձակվել 1918 թ.²⁰¹, իսկ 1920 թ. ապրիլի 28-ին նա հեռակա կարգով դատապարտվել է մահվան²⁰²: Սալիհ Ջեքին հետագայում դարձել է Թուրքիայի Կոմունիստական կուսակցության հիմնադիրներից մեկը և, իբրև այդ կուսակցության ներկայացուցիչ, եկել է Էրզրում՝ քեմալիստ ազգայնականների հետ դաշինքի շուրջ բանակցելու համար²⁰³:

199 DE/PA-AA/R 14093, Հալեպի հյուպատոս Ռյոսլերի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված հուլիսի 29:

200 NA/RG 59, 867.4016/373, Ամերիկյան հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի գեկույցը, որ նախկինում գտնվում էր Հալեպում, այնուհետև՝ Վաշինգտոնում, թվագրված 1918 թ. մարտի 4:

201 BOA/DH.ŞFR, № 94/6, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության Հետաքննչական հանձնաժողովի ծածկագրված հետազոտող Մերդինի գավառ, թվագրված 1918 թ. դեկտեմբերի 1:

202 Dadrian and Akçam, "Tehcir ve Taktik," 170 և 715-17:

203 Mete Tunçay and Erden Akbulut, Türkiye Halk İştirakiyun Fırkası (1920-1923) (Istanbul, Sosyal Tarih Yayınları, 2007), 391 n. 333.

9

ՈՒՃԱՑՈՒՄ. ԶՐԻՍՏՈՆՅԱ ԵՐԵՄԱՆԵՐԻ
ՀԱՎԱՏԱՓՈԽՈՒՄՆ ՈՒ ԲՈՒՆԻ ԱՄՈՒՄՆԱՑՈՒՄԸ

Ռաֆայել Լեմկինը, որը ներմուծել է «ցեղասպանություն» տերմինը, իր «Բոլորովին անպաշտոն մարդ» ինքնակենսագրականում վերհիշում է Միացյալ Ազգերի Կազմակերպությանը «մշակութային ցեղասպանությունը» ճանաչել տալու իր ճիգերը: Լեմկինը գրում է, որ դա «մի խմբի մշակութային պատկերը՝ լեզուն, ավանդույթները, հուշարձանները, արխիվները, գրադարանները, եկեղեցիները, կարճ ասած՝ ազգի հոգու սրբությունները ոչնչացնելու» հասկացությունն է: Այն փաստաթղթի, որը հետագայում դառնալու էր Ցեղասպանության ոճրի կանխարգելման ու պատժի ՄԱԿ-ի կոնվենցիան (1948 թ.), երրորդ հոդվածի բնօրինակում մշակութային ցեղասպանությունը սահմանվում էր հետևյալ կերպ. ա) երեխաների բռնի տեղափոխումը մարդկանց մեկ այլ խումբ, բ) խմբի մշակույթը ներկայացնող անհատների բռնի ու համակարգված արտաքսումը, գ) ազգային լեզվի գործածության արգելքը նույնիսկ մասնավոր շփումներում, դ) ազգային լեզվով տպագրված գրքերի կամ կրոնական աշխատությունների համակարգված ոչնչացումը կամ նոր հրատարակությունների արգելումը, կամ ե) պատմական կամ կրոնական հուշարձանների համակարգային ոչնչացումը կամ դրանց հանձնումը օտար գործածության, պատմական, գեղարվեստական կամ կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի ու առարկաների և կրոնական պաշտամունքի համար գործածվող առարկաների ոչնչացումն ու ցրումը²: Սակայն քննարկումների ընթացքում ցեղասպանության սահմանու-

1 John Docker, "Are Settler-Colonies Inherently Genocidal? Rereading Lemkin," in *Empire, Colony Genocide: Conquest, Occupation and Subaltern Resistance in World History*, ed. Dirk Moses (New York and Oxford, Berghahn Books, 2008), 82.

2 Կոնվենցիայի առաջին նախագիծը, ներառյալ Հոդված 3-ը, պատրաստվել է ՄԱԿ-ի քարտուղարության կողմից 1947 թ. մայիսին: Տես <http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>:

միջ ջնջվել է այդ 3-րդ հոդվածը³: «Ես այն հաջողությանը պաշտպանեցի երկու նախագծերում», գրում է Լեմկինը, սակայն «հանձնաժողովում այս գաղափարը բավարար օժանդակություն չստացավ... Մատին, ծանր սրտով, որոշեցի չպնդել»⁴:

Թեև մշակութային ցեղասպանության «մի խմբի երեխաներին բռնի կերպով մեկ այլ խումբ տեղափոխելու» տարրը մտցվել է 1948 թ. կոնվենցիայի տեքստի մեջ, Լեմկինն ստիպված է եղել հրաժարվելու այդ գաղափարից, «որը շատ թանկ էր ինձ համար»:

Մշակութային ցեղասպանությունից բացի, Լեմկինի գաղափարի ցեղորինակը ՄԱԿ-ի սահմանումից տարբերվում էր ևս մեկ՝ նվազ հայտնի առումով: 1948 թ կոնվենցիան ցեղասպանության հասկացությանը իրավական տեսք է տալիս իբրև միասնական գործողություն, մինչդեռ Լեմկինն այն հասկանում էր նաև իբրև կապակցված գործողությունների շարք, իբրև գործընթաց, որ ծավալվում է ժամանակի ընթացքում: Իր «Առանցքային օրենք գրավված Եվրոպայում» աշխատության մեջ, ուր ներմուծվել է տերմինը, Լեմկինը գրում է. «Ընդհանուր առմամբ, ցեղասպանությունն անպայմանորեն չի նշանակում մի ժողովրդի անմիջական ոչնչացում»⁵: Տեսական գործընթացի մասին Լեմկինի մտապատկերը նեղացվել է՝ հասցվելով «ազգային, էթնիկ, սոցիալական կամ կրոնական խմբի» անմիջական ոչնչացման:

ՄԱԿ-ի կոնվենցիան, մեկնաբանման որոշ արահետ թողնելով հանդերձ, նաև միտված է ցեղասպանությունը բնութագրելու հիմնականում իբրև ֆիզիկական ոչնչացման գործողություն: Սակայն բառը ներմուծողի համար ֆիզիկական ոչնչացումը ցեղասպանության գործընթացի կողմերից միայն մեկն էր: Լեմկինը հասկանում էր, որ,

3 Մշակութային ցեղասպանության գաղափարի քննարկումների վերաբերյալ հավելյալ մանրամասների համար տես Matthew Lippman, "The 1948 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide: Forty-Five Years Later," in *Temple International and Comparative Law Journal* 8, №1 (1948) կամ "The Drafting of the 1948 Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide," *Boston University of International Law Journal* 3, №1 (1985), 1-66:

4 John Docker, "Are Settler-Colonies Inherently Genocidal? Rereading Lemkin," in *Empire, Colony Genocide: Conquest, Occupation and Subaltern Resistance in World History*, ed. Dirk Moses (New York and Oxford, Berghahn Books, 2008), 82.

5 Stiu Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe* (New York, Carnegie Endowment for International Peace, 1944), 79:

իբրև սոցիալական իրողություն, ցեղասպանությունը որքան ոչնչացնում է, նույնքան էլ կառուցում է: Նա գրում է. «Ցեղասպանությունն ունի երկու փուլ. առաջինը ճնշվող խմբի ազգային տեսակի ոչնչացումն է, մյուսը՝ ճնշողի ազգային տեսակի հարկադրումը»⁶:

Թեև ցեղասպանության երկրորդ փուլը կարող է զանազան ձևեր ստանալ, թիրախ դարձած խումբն ի վերջո ստիպված է լինում ընդունելու գերիշխող խմբի կենսակերպը, մշակույթն ու կառույցները: Ուծացումն, անկասկած, այդ արդյունքին հասնելու ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Ցեղասպանության մասին գիտական քննարկումներում երկար ժամանակ անտեսվել է ցեղասպանության այդ կառուցման փուլը:

Ցեղասպանության ուսումնասիրությունից ուծացման երևույթը անջատելու ևս երկու պատճառ կար: Նախ, Հայոց ցեղասպանության հետազոտությունները տուժել են նոր ձևավորվող դաշտի տկարություններից: Այդ քննարկումներում իբրև *sine qua non* կենտրոնական տեղ գրավող Հոլոքոսթը դարձել էր այն չափանիշը, որի համեմատությամբ որևէ իրադարձություն կարող էր դիտվել իբրև ցեղասպանություն կամ ոչ: Դրա հետևանքով հետազոտողները հսկայական եռանդ էին վատնում՝ ջանալով ապացուցել, որ զանգվածային բռնությունների դեպքերը ինչ-որ կերպ համեմատելի են Հոլոքոսթի հետ⁷: Այդ ընդհանուր խնդիրը բարդանում էր Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության տևական ժխտմամբ: Հայերի ֆիզիկական բնաջնջման առնչությամբ 1948 թվականին ընդունված կամ որևէ այլ սահմանում կիրառելու կամ չկիրառելու հարցը դարձավ բոլոր քննարկումների փորձաքարը: Այն վախը, թե 1915 թ. իրադարձությունների, ինչպես և զանգվածային այլ բռնությունների հանրագումարը ցեղասպանություն չի համարվի, եթե չսմանվի Հոլոքոսթին, բացառել է սոցիալական դինամիկ գործընթացների լուրջ վերլուծությունը: Մինևույն ժամանակ, համաձայնեցված ջանքեր են գործադրվել անտեսելու համար բոլոր այն տարբերությունները, այդ թվում և բռնի ուծացումը, որոնք կարող են ծագել զանգվածային բռնությունների որևէ երկու տարբեր դրվագների միջև:

6 Նույն տեղում:

7 Հոլոքոսթի և մյուս ցեղասպանությունների հարաբերության հարցը մեծապես քննարկված նյութ է: Այդ հարցով գրականության ակնարկի համար տես Dirk Moses, "The Holocaust and Genocide," in *The Historiography of the Holocaust*, ed. Dan Stone (New York, Palgrave Macmillan, 2004), 533–55:

Երկրորդ, Հայոց ցեղասպանության մեջ ուծացման, իբրև գործընթացի, մեր պատկերացումը խոչընդոտվել է մատչելի աղբյուրների բացակայի պատճառով, որոնք հիմնականում եղել են Գերմանիայի ու Ամերիկայի հյուպատոսական զեկույցները, ինչպես նաև միսիոներների ու վերապրածների պատմությունները: Այդ պատմությունները հավելված են ընդհանրացնելու և խտացնելու երկար ժամանակաշրջանները. ցայտուն կերպով հաղորդելով հանդերձ տեղի ունեցող արհավիրքն ու քաոսը՝ դրանք չեն լուսաբանել ետնաբեմում ընթացող ստոնասրտորեն համակարգված քաղաքական հենքը: Առանց կառավարության կողմից որոշումների կայացման ուղղակի իմացության՝ հյուպատոսները, միսիոներներն ու վերապրածները չէին կարող ժամանակագրական ճգնաժամային ընկալել այդ պահին ընթացքի մեջ գտնվող վարչական փոփոխությունները: Օսմանյան արձանագրությունների անհասանելիությունը այդ դիտորդների, ինչպես նաև հետազայում նրանց ընթերցողների համար մասամբ մթագնել է կառավարվածի պատկերը:

Վերը ներկայացված հայեցակարգային, ճարտասանական ու հայեցողական սահմանափակումներն իրենց հերթին ստվերել են 1915 թ. դեպքերի ընթացքում կատարված կրոնական հավատափոխության ու բռնի ուծացման ըմբռնումը: Հավատափոխությունը դիտվել է իբրև մի գործ, որ, կախված տեղի վարչակազմի հայեցողությունից, տարբեր շրջաններում տարբեր բնույթ է կրել և հիմնականում պայմանավորվել է մահմեդական մոլեռանդությամբ: Ենթադրել են նաև, թե հայերը չէին կարող փրկվել հավատափոխության միջոցով, որովհետև հավատափոխվածները նույնպես բնաջնջվել են: «Հավատափոխության հնարավորությունն, անշուշտ, տեղահանվածների մեջ առասպելի պես մի բան է եղել ցեղասպանության քաղաքականությունից ի վեր, որպեսզի կարողանան մտածել, թե իրենք դեռևս ելքի դուռ ունեն», գրում է Ռեյմոնդ Գևորգյանը և ավելացնում. «Հայերի բռնի հավատափոխությունը Իթթիհադական կոմիտեի կողմից երբևէ ոչ մի պահի լուրջ այլընտրանք չի համարվել»⁸: Դրա հետևանքով

8 Kévorkian, "L'extermination des déportés arméniens ottomans," 55. Այդ հարցի վերաբերյալ Արա Սարաֆյանի գնահատումները բացառություն են կազմում: Առանց տեսած լինելու օսմանյան համապատասխան փաստաթղթերը՝ նա իրավացիորեն գտնում է, որ թե կրոնափոխությունը և թե մահմեդական ընտանիքների վրա երեխաների բաշխումը պետության ծրագրված քաղաքականության մաս են կազմել և հետևաբար պետք է

գիտական վերլուծությունները մեծապես անտեսել են այդ հարցը, որն արժանի է հանգամանալից հետազոտության: Հենվելով օսմանյան աղբյուրների փաստագրական նոր վկայությունների վրա՝ ես ստորև ցույց կտամ, որ հավատափոխությունը և հայ երեխաներին մահմեդական ընտանիքներում ձուլելը Հայոց ցեղասպանության կառուցվածքային ամենաուժեղ բաղադրիչներից են:

Հայերն ուծացվել են տարբեր միջոցներով. կրոնափոխությամբ, ցրված բնակեցման ժամանակավոր քաղաքականությամբ, երեխաներին քրիստոնեությունից մահմեդականության դարձնելով և երիտասարդ քրիստոնյա կանանց մահմեդական տղամարդկանց հետ բռնի ամուսնացնելով կամ հարճերի վերածելով: Ինչպես ցույց կտրվի ստորև, տեղահանությունների ու բնաջնջման ամբողջ ընթացքում օսմաներեն temsil և temessil հասկացությունները, որ նշանակում են «ուծացում», բացեիքաց առնչվել են Սիրիայում հայ վերապրածներին և, հարմար դեպքերում, գործածվել են նաև հայ տղաների ու աղջիկների կապակցությամբ: Իսկ bakım ve terbiye արտահայտությունը, որ նշանակում է «խնամք և դաստիարակություն», գործածվել է հատկապես երեխաների ուծացման կապակցությամբ: Ուշագրավ է ուծացման քաղաքական կուրսի և դրա կրած փոփոխությունների միջև առկա հստակ տարբերությունների դրսևորումը: Օսմանյան փաստաթղթերի միջոցով հնարավոր է հետևել այդ տարբերություններին ու փոփոխություններին⁹:

Եթե ուծացումը հայերի տեղահանությունների ու վերացման անբաժան մասն էր, ապա որն էր ուծացման և ֆիզիկական բնաջնջման միջև եղած հարաբերությունը: Ելնելով 8-րդ գլխում քննարկված 5-10 տոկոսի սկզբունքից և ստորև ներկայացվելիք այլ փաստաթղթերից, ես գտնում եմ, որ երիտթուրքերը *կառավարելիությունն* ընդունել են

համարվեն ցեղասպանության կառուցվածքային տարր (Ara Sarafian, "The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide," in *In God's Name: Genocide and Religion in the Twentieth Century*, ed. Omer Bartov and Phyllis Mack [New York, Berghahn Books, 2001], 209–21):

9 Ստորև ներկայացնելիք տեղեկություններս հարկավոր է ընթերցել որոշակի զգուշավորությամբ: Թեև վկայակոչելու եմ կենտրոնական կառավարության հրամանները և քննարկելու եմ կառավարության համապատասխան քաղաքականությունը, այն ծավալն ու կերպը, որով այդ հրամաններն իրականացվել են նահանգներում, առանձին աշխատանքի նյութ են:

իբրև իրենց կենտրոնական սկզբունք: Այնտեղ, ուր հայերը կարող էին լուծվել մահմեդական մեծամասնության մեջ, թույլատրվել է կրոնափոխություն: Իսկ այնտեղ, ուր ուծացումը վտանգ է ներկայացրել, երիտթուրքերը հրաժարվել են այդ քաղաքականությունից և փոխաբենն անցել ֆիզիկական բնաջնջման: Սակայն նույնիսկ այդ փուլում թույլատրվում էր ուծացնել հայերին (ասենք, կրոնափոխ անելու միջոցով), եթե նրանք «կառավարելի» էին համարվում:

Տեղահանությունների ողջ ընթացքում էական կարևորություն է ունեցել ուծացման և բնաջնջման միջև հավասարակշռությունը, սակայն կշեռքի ծանր կողմում էր կառավարելիությունը: Այդ տեսակետից նույնպես ազգաբնակչության վիճակագրությունը նշանակալի դեր է ունեցել, և կարելի է ասել, որ հայերի մշտական հաշվումը կարևոր ազդեցություն է ունեցել կրոնափոխության իթթիհադական քաղաքականության վրա: Անկախ իրենց ընտրած միջոցներից՝ իթթիհադականները ջանացել են հայերի մնացուկները պահել կառավարելի մակարդակի վրա: Պետք է արգելվեր վերապրածների հավաքական գործունեությունը կամ ազգության ու մշակույթի պահպանումը:

ԿՐՈՆԱՓՈՒՆՈՒՄԸ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

Տեղահանությունների սկզբում կրոնափոխությունն արտոնված էր, և հավատափոխ հայերը սփռված էին իրենց հայրենի նահանգների տարբեր քաղաքներում ու գյուղերում: Բայց 1915 թ. հուլիսի 1-ին կրոնափոխությունն արգելվեց և նորից արտոնվեց միայն չորս ամիս անց, սակայն՝ որոշակի սահմանափակումներով: Նման գործընթաց տեղի ունեցավ Սիրիայում՝ շարասյունների նշանակման վայրերում: Սկզբում գործում էին բնակեցման և դրան առնչվող ուծացման ծրագրերը, սակայն առանց կրոնափոխման: Սիրիայում ևս 1915 թ. վերջին արտոնվեց կրոնափոխությունը: Սակայն հաջորդ գարնանը Սիրիայի շրջանում քաղաքականության հստակ տեղաշարժ նկատվեց: Այսպես ասած՝ Ջեմալ փաշայի հայերին՝ այն վերապրածներին, որոնք ավելի վաղ տեղավորվել էին Համայի, Հոմսի ու Դամասկոսի շրջակայքում, ստիպեցին ընտրություն կատարել կրոնափոխության և Դեր Ջոր տեղահանվելու միջև, որը համագոր էր ստույգ մահվան: Բռնի մահմեդականացումը գործում էր բնաջնջմանը զուգահեռ¹⁰:

10 Ցանկանում եմ զգուշացնել, որ այս ամփոփումը հարկավոր է ընթերցել սևեռուն ուշադրությամբ: Նախ, պատկերի հիմքում ընկած են օսմանյան

Նախնական այս փուլում զանգվածային մահմեդականացումը ոչ միայն արտոնվում, այլև խրախուսվում էր: Հավատափոխման վերաբերյալ հայտնի ամենավաղ փաստաթուղթը 1915 թ. հունիսի 22-ի ծածկագրված «գաղտնի» հեռագիրն է՝ ուղարկված այն յոթ նահանգները (Էրզրում, Վան, Մամուրեթյուլազիզ, Դիյարբեքիր, Սվազ, Բիթլիս ու Տրապիզոն), որոնցում, ռուսների հետ 1914 թ. փետրվարի համաձայնությամբ, խոստացել էին բարենորոգումներ կատարել: Դրանով տեղական պաշտոնյաներին հրահանգվում էր. «Այն հայերը, որոնք ձեր նահանգից տեղահանվել են հարավ [և] մահմեդականություն ընդունել, պետք է անհատապես կամ հավաքականորեն կասեցվեն, իսկ նրանց, ում կգտնեք միասին հավաքված, պետք է ցրել նահանգում»: Խիստ հետաքրքրական է վերջին հրահանգը. «Տեղեկացրեք նրանց, ովքեր գործադրելու են մեր հաղորդագրության [իրամանները]. այս հեռագրի պատճենը վերցնել հեռագրատնից և վերացնել»¹¹: Սա մեկն է օսմանյան մեզ հայտնի արխիվային երեք փաստաթղթերից, որոնցում ընթերցողին կարգադրվում է ոչնչացնել հեռագիրը, և երեքն էլ ուժացման հարցին վերաբերող հեռագրեր են:

Գերմանական ու ամերիկյան փաստաթղթերը ցույց են տալիս, որ կրոնական հավատափոխությունն սկսվել և ջերմեանդորեն իրականացվել է այդ իրամանից առաջ: Դեռևս 1915 թ. հունիսի 2-ին Գերմանիայի հյուպատոս Շոյբներ-Ռիխտերը Էրզրումից զեկուցել է, որ «այն հայերը, որոնք կրոնափոխվում են, իրենց տեղերից չեն արտաքսվում»¹²: Ամերիկյան հյուպատոս Վիլյամ Փիթերի 1915 թ. հու-

պաշտոնական փաստաթղթեր. օգտակար կլինի ուշադիր քննելը, թե այդ գործերն ինչպես են իրականացվել նահանգներում: Երկրորդ՝ տեղեկությունների պակաս կա այն հայերի ճակատագրերի մասին, որոնք մահմեդականություն են ընդունել մինչև հուլիսի 1-ը: Թեև հյուպատոսական զեկույցներում նշվում է, որ այդ մարդիկ ողջ են մնացել, այնուամենայնիվ, այդ հարցի, մասնավորապես վերապրած հայերի հուշերի, հավելյալ հետազոտություն է պահանջվում:

11 BOA/DH.SFR, № 54/100, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Ջևդեղ բեյին (Վանի նահանգապետին), Ջենալ Ազմի բեյին (Տրապիզոնի նահանգապետին), Թաշին բեյին (Էրզրումի նահանգապետին), Մուստաֆա բեյին (Բիթլիսի նահանգապետին), Մաբիթ բեյին (Մամուրեթյուլազիզի նահանգապետին), Ռեշիդ բեյին (Դիյարբեքիրի նահանգապետին) և Մուամեր բեյին (Սվազի նահանգապետին), թվագրված 1915 թ. հուլիսի 2:

12 DE/PA-AA/Bo.Kons., h. 168, Էրզրումում հյուպատոս Շոյբներ-Ռիխտերի զեկույցը, թվագրված հունիսի 2:

նիսի 10-ի զեկույցից հասկացվում է նաև, որ կրոնափոխումը թափով առաջ էր ընթանում. «Մինչև այժմ մոտ 150 ընտանիք հավատափոխվել է մահմեդականության, իսկ մնացածն ուղարկվել են ներքին շրջանները»: Այնուհետև հյուպատոսն ավելացնում է. «Այն մարդկանց մեծ մասը, ովքեր գնացել են, հիմա ցանկանում են հետևել այդ 150 ընտանիքի օրինակին»: 1915 թ. հունիսի 25-ին Սամսունում Գերմանիայի հյուպատոսը զեկուցել է, որ «կատավարությունը մոլեռանդ, խիստ հավատացյալ մահմեդական տղամարդկանց ու կանանց ուղարկել է բոլոր հայերի տները, որպեսզի քարոզչություն տարածեն մահմեդականության հավատադարձվելու օգտին՝ անշուշտ, իրենց հավատքներին հավատարիմ մնացողների հանդեպ ծանր հետևանքների սպառնալիքով: Որքան ես գիտեմ, շատ ընտանիքներ մինչև այժմ արգեն հավատափոխվել են, և դրանց թիվն օրեցօր աճում է»: Համաձայն հյուպատոսի, «Սամսունում ու շրջակայքում հայկական [բ]ոլոր գյուղերը մահմեդականացվել են»¹³:

Սամսունից տեղահանված մի հայ կին իր հուշերում վկայում է, որ տեղահանության հոչակումից հետո մի խոջա (hoca. այս դեպքում նշանակում է իմամ կամ մահմեդական կրոնական առաջնորդ՝ հիմնականում մզկիթի հետ առնչվող) շաբաթական երկու-երեք անգամ այցելել է իրենց տուն՝ ստիպելու մահմեդականություն ընդունել¹⁴: Մարզվանում (քաղաք և շրջան Սվազի նահանգում) «հրապարակավ հայտարարվեց, որ մարդիկ կարող են իրենք իրենց փրկել, եթե մահմեդական դառնան: Մեծ թվով մարդիկ, ասում են՝ 1000 ընտանիք, խնդրագրեր ներկայացրին կատավարությանը»¹⁵: Ամերիկացի միսիոներ դր. Ջ.Բ. Մարդենը, որն այդ ժամանակ նույն քաղաքում էր գտնվում, գրել է. «Մարզվան քաղաքում 13.000 հայերից ավելի քան 11.500-ը տեղահանվեց, իսկ մոտ 1.500-ը մահմեդականություն ընդու-

13 DE/PA-AA/R 14086, Սամսունում հյուպատոս Քուրթոֆի զեկույցը դեսպան Վանգենիային, թվագրված 1915 թ. հուլիսի 4 (Քուրթոֆը զեկույցին կցել է հունիսի 25-ով թվագրված հեռագիրը), որն ամփոփված է դեսպան Վանգենիային 1915 թ. հուլիսի 16-ի զեկույցի մեջ:

14 Pailadzo Captanian, 1915 Der Völkermord an den Armenien: Eine Zeugin berichtet (Leipzig, Gustav Kiepenheuer 1993), 20.

15 Օտարերկրացի (ամերիկացի) ճանապարհորդ օրիորդ Քեյջի հայտարարությունը՝ հաղորդված հայերի ու առօրինների ամերիկյան նպաստամատուց կոմիտեի կողմից, հետևյալ տեղում. Bryce and Toyne, The Treatment of Armenians, 371:

նեց՝ իբրև ստույգ մահվան այլընտրանք»¹⁶: Մարզվանի քոլեջի ամերիկացի մի ուսուցիչ նշել է. «Ահաբեկչության այս տիրապետության ընթացքում ծանուցում տրվեց, որ ովքեր մահմեդականություն են ընդունել, նրանց կթույլատրվի ապահով կերպով մնալ տանը: Դիմումները գրանցող իրավաբանների գրասենյակներում խոնաված էին մահմեդական դառնալու հայցեր ներկայացնող մարդիկ: Շատերն այդ անում էին հանուն իրենց կանանց ու երեխաների՝ մտածելով, թե մինչև օգնության հասնելը ընդամենը մի քանի շաբաթվա խնդիր է»¹⁷:

Գերմանիայի հյուպատոսը հունիսի 26-ի Տրապիզոնից ուղարկած իր գեկույցում նշել է «գանգվածային կրոնափոխությունների» մասին¹⁸: Հուլիսի առաջին շաբաթվա ընթացքում դեսպան ֆոն Վանզենհայմը գրել է իր վերադասներին, որ «տեղահանություններից խուսափելու և իրենց կյանքն ու ունեցվածքը փրկելու համար Տրապիզոնում հայերը գանգվածաբար մահմեդականություն ընդունեցին»¹⁹: Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուն իր կողմից հուլիսի 10-ին «հույժ գաղտնի» հեռագիր է ուղարկել Պետքարտուղարություն, որի մեջ նկարագրել է հայերի գանգվածային տեղահանություններն ու սպանությունները և նշել. «Բազմաթիվ հայեր մահմեդական են դառնում՝ հալածանքից խույս տալու համար»²⁰:

Հավատափոխներին նունիսկ եթե չէին տեղահանում, թույլ չէին տալիս մնալ իրենց տներում: Համաձայն Սամսունի գավառապետի, հավատափոխվածներին պետք է ցրեին հարևան նահանգում ու շրջաններում. այդ հրամանը տրվել էր հունիսի 22-ի հեռագրով²¹:

16 NA/RG 59, 867.4016/292, Կոպենհագենում ամերիկյան դեսպանությունից Մորիս Ֆրենսիս Իգանի գեկույցը պետքարտուղարին, թվագրված 1916 թ. հուլիսի 3, ներառյալ դր. Ջ. Բ. Մարդենի (չթվագրված) հայտարարությունը՝ հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 525:

17 NA/RG 59, 867.4016/106, Դեսպան Մորգենթաունի գեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1915 թ. հուլիսի 26, հետևյալ տեղում. United States Official Record, ed. Sarafian, 143:

18 DE/PA-AA/R 14086, Դեսպան Վանզենհայմի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. հուլիսի 7:

19 DE/PA-AA/R 14086, Դեսպան Վանզենհայմի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. հուլիսի 7:

20 NA/RG 59, 867.4016/74, Դեսպան Մորգենթաունի հեռագիրը Պետական քարտուղարությանը, թվագրված 1915 թ. հուլիսի 10: Գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 52.

21 Վիլյամ Փիթերից (Սամսունից) Հենրի Մորգենթաունին. United States Official Records, ed. Sarafian, 62 (LC/HM[Sr.]/Reel 7/619):

Գաշնակցության բալկանյան մասնաճյուղը 1915 թ. օգոստոսին մի քանի թիվ է ներկայացրել Մորգենթաունին. «Օրդուում 250 ընտանիքից 150-ը մահմեդականություն ընդունեց, Քիրասունդեում [ներկայիս Գիրեսուն]՝ 400 ընտանիքից 200-ը»²²: Ամերիկացի միսիոներ դր. Քարքը, որը տեղակայված էր Սվազում, գեկույցել է, որ քաղաքի 25.000 հայերից 1000-ը 1915 թ. ամռանը ընտրեցին մահմեդականությունը²³:

Այլ հյուպատոսներ գեկույցել են, որ հավատափոխ եղած հայերը չեն տեղահանվել²⁴: 1915 թ. հոկտեմբերի 15-ին գերմանացի նշանավոր եռզևոր հովիվներ, որոնք կոչ էին արել դադարեցնել կոտորածները, նշել են, որ «հարյուրավոր քրիստոնյա ընտանիքներ, որոնք որոշեցին մահմեդականություն ընդունել, ազատվեցին տեղահանությունից»²⁵: Կեսարիայում գտնվող մի միսիոներ գրել է. «Մեր բանակատեղիից վերցված կանայք տեղահանվեցին, որովհետև մահմեդական չլարեան... Նրանց, ովքեր ընդունեցին մահմեդականությունը, թույլատրվեց մնալ, բայց ուղարկեցին գյուղերը»²⁶: 1915 թ. դեկտեմբերի 12-ին Գերմանիայի գլխավոր հյուպատոսը Ստամբուլից գեկույցներ է ուղարկել Տրապիզոնում, Ադանայում ու Քոնյայում տեղ գտած կրոնափոխությունների մասին²⁷:

22 NA/RG 59, 867.4016/122, Գաշնակցություն կոմիտեի գեկույցը. Balkan Section, Sofia, "№5: The Extermination of the Armenian People," թվագրված 1915 թ. օգոստոսի 2 [sic] 1915 թ. հուլիս, կցված պետքարտուղարին ուղղված դեսպան Մորգենթաունի նամակին, թվագրված 1915 թ. օգոստոսի 10. գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 163:

23 NA/RG 59, 867.4016/288, Դր. Քլարքի գեկույցը, թվագրված 1916 թ. մայիսի 31, կցված Ստամբուլում ամերիկյան դեսպանությունից Հոֆման ֆիլիպի պետքարտուղարին ուղղված գեկույցին, թվագրված 1916 թ. հունիսի 12:

24 Օրինակ, Սվազում Գերմանիայի հյուպատոսության քարտուղար Վերթի 1916 թ. հունիսի 28-ին ուղարկած գեկույցից տեղեկանում ենք, որ Սվազում կրոնափոխ եղածներին թույլատրվում էր մնալ իրենց բնակության վայրերում (DE/PA-AA/Bo.Kons./Band 172):

25 DE/PA-AA/Bo.Kons./Band 171, Գերմանիայի կանցլեր Բեթման-Հոլվեգը դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատարին (Նոյրաթին), 1915 թ. նոյեմբերի 15:

26 Ստեփան Լորիջի գեկույցը՝ հետևյալ տեղում. "Turkish Atrocities": Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, comp. James L. Barton (Ann Arbor, MI, Gomidas Institute, 1998), 117:

27 DE/PA-AA/Bo.Kons./Band 172, Գլխավոր հյուպատոս Մորթմանի անձնա-

Ջանգվածային կրոնափոխություններ են կատարվել հատկապես սևծովյան տարածքում: Օրդուից, Սամսունից ու Ֆայթսայից ուղարկված հեռագրերով տեղական պաշտոնյաները, կրոնական առաջնորդները՝ իմամներն ու մուֆտիները (müftüs) կամ հայերի խմբերը կառավարությանը խնդրում էին նոր հավատափոխ եղածներին ընդունել իբրև մահմեդականներ և չտեղահանել նրանց: Օրդումում հավատափոխ եղածները հոչակել են, որ իրենք բոլորովին «որևէ ձևով որևէ առնչություն չունեն այն հայերի հետ, որոնք ամբողջովին կեղտոտ են [mülevves] և հայրենիքի հայերին դավաճանած»՝ ավելացնելով. «Քանի որ մենք անմեղ ենք, եթե մահմեդական երեք հարյուր գյուղերից յուրաքանչյուրի վրա երեքից հինգ ընտանիք բաշխելով մեր մալը հայրենիքում հարմար չէ, խնդրում ենք մեզ տեղահանել երկրի խորքում հարմար ու մոտակա վայր՝ մեր ընտանիքներն ու երեխաներին թողնելով տեղում և միայն ընտանիքի առաջնորդներին [ցրելը] համարելով բավարար»²⁸:

1915 թ. հուլիսի 9-ին Ջանիկի գավառից ուղարկված մի հեռագրից երևում է, որ այդ տարածքից հայերի տեղահանությունն ավարտվել է, և որ կրոնափոխ եղած հայերին սփռել են շրջանի բնակավայրերում.

Ներկայացվել է, որ Սամսունից արտաքսվող հայերի վերջին քարավանը մեկնել է չորս օր առաջ [իրենց] կրոնական առաջնորդների և ավելի վաղ Ալաչամից [հանվողների] վերջին քարավանի հետ, որովհետև նրանք խոտվարարներ էին, նաև այսօր տեղահանվել է Քավաք Հավզայի ճանապարհով. և այսպիսով վտարման գործընթացն ավարտվել է, իսկ մնացածները, որոնք մնում էին իրենց կրոնափոխության ցուցադրմամբ, այն պայմանով, որ անմիջապես տեղափոխվեն քաղաք ու գյուղեր, մեկական կամ երկուական բաշխվել են մահմեդական ու գյուղական վայրերում, և նրանց տեղերում բնակեցվում են փախստականներ ու գաղթականներ և մահմեդական մարդիկ²⁹:

կան գրառումները, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 21:

28 BOA/DHEUM, 2. Şube, №8/61-a/2, Օրդուից Օլմեզօղլու Ալի Քեմալի և Մուիթար Բունիադօղլու Ահմեդ Նիյազիի հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հուլիսի 30: Այլ հեռագրերի համար տե՛ս BOA/DHEUM, 2. Şube, №8/61-a/1, a/3 և 8/70/1:

29 BOA/DHEUM, 2. Şube, №10/78/1, Ջանիկի գավառապետ Նեջմի բեյի ծածկագրված հեռագիրը, թվագրված 1915 թ. հուլիսի 9:

Մինչև 1915 թ. հուլիսը հստակ էր, որ մահից փրկվելու համար շատ մեծ թվով հայեր էին ցանկանում հավատափոխ լինել, ուստի և կրոնափոխումն արգելվել է: «Պարզվում է, որ արտաքսվող հայերից մեծ մասը խնդրել են զանգվածաբար կամ անհատապես հավատափոխվել և այդ ձևով ապահովել իրենց մալը հայրենի հողերում», նկատել է Թալեաթը նահանգային իշխանավորներին ուղղված մի հեռագրում: Նշելով, որ հայերն այդ ուղին ընտրել են, որովհետև «իրենց... վտանգված են զգացել», ներքին գործերի նախարարը հրահանգել է, որ «այդ տեսակի մարդկանց դիմումներին կտրակապապես պետք է նպաստավոր կարևորություն չտալ»: Ապա ավելացրել է, որ այդ մարդկանց «տեղահանությունները դեպի նշանակված վայրեր, նույնիսկ եթե կրոնափոխ են լինում», պետք է շարունակվի³⁰: Ինչպես հուլիսի 9-ին զեկույցել է Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը, կրոնափոխություն ցանկացող հայերին Տրապիզոնի ընդհանուր նահանգապետն ասել է, որ «մահմեդականություն ընդունած հայը կտեղահանվի իբրև մահմեդական հայ»³¹:

Ի պատասխան նահանգներից հնչող հարցերի, կրոնափոխությունն արգելող ընդհանուր շրջաբերականն ամրապնդվել է առանձին հրամաններով: 1915 թ. հուլիսի 13-ին Կեսարիան տեղեկացվել է, որ «հայերի հավատափոխությունը [մահմեդականության] չպետք է հետաձգի նրանց տեղահանությունը, քանի որ նրանց հավատափոխությունը կատարվել է միայն անձնական առավելություն ապահովելու նպատակով»³²: Որոշ տարածքներում մահմեդականության ընդունումը կարծես թե այնուամենայնիվ շարունակվել է՝ տեղական պաշտոնյաների խրախուսանքով: Ամերիկացի միսիոներները հաղորդել են, որ, չնայած արգելքին, որոշ հարուստ մարդիկ կամենում էին աչք փակել դրա վրա³³:

30 BOA/DH.ŞFR, №54/254, Ներքին գործերի նախարարության Ասվտանգույան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադա-նայի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքիրի, Տրապիզոնի, Սամսունի, Սամսունի, Մուսուլի, Վանի, Ուրֆայի, Քյութահյայի, Մարաշի, Իչելի ու Էսքիշեհիրի նահանգներ, թվագրված 1915 թ. հուլիսի 1:

31 NA/RG 59, 867.4016/118, Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Հայրիխ Բերգֆելդի զեկույցի թարգմանությունը, թվագրված 1915 թ. հուլիսի 9: Գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 154:

32 BOA/DH.ŞFR, №54/427, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1915 թ. հուլիսի 13:

33 Միրթըլ Օ. Շեյնի զեկույցը՝ հետևյալ տեղում. "Turkish Atrocities," Barton, 9:

Այդ պատճառով անմիջապես բոլոր շրջաններն է ուղարկվել «գաղտնի, կատարել անձամբ» մակագրությամբ մի նոր հրաման: Կրոնափոխության ոչ մի արտոնություն բացարձակապես չպետք է տրվեր, իսկ կրոնափոխվածներն անմիջապես պետք է տեղահանվեին: Մատնացույց անելով այն հանգամանքը, որ «արտաքսվող որոշ հայեր մնացել են իրենց տեղերում՝ իրենց կրոնափոխության պատճառով... և... պարզվում է, որ քաղաքացիական ծառայության մեջ գտնվող որոշ պաշտոնյաներ նրանց օգնել են», հրահանգվում էր.

Ինչպես տեղեկացվել է 1915 թ. հուլիսի 1-ի ծածկագրված հեռագրով, այն նկատառման հիման վրա, որ այդ տեսակի կրոնափոխությունները, որոնք տեղի են ունեցել միայն [սեփական] շահի թելադրանքով, պաշտոնական արժեք չունեն, և ուրեմն հավատափոխների հետ վարվելու հարցում բացառություն անելը անբողջապես անթույլատրելի է: Հետևաբար, նախորդ հաղորդագրությունների հրամանների բացարձակ պահպանմամբ, շրջաբերականով հայտարարված է նման կեղծավոր ու ժամանակավոր հավատափոխություններին նպաստավոր կարևորություն չտալու կարիքը³⁴:

Չնայած կրկնվող այս ընդհանուր հրամաններին՝ տարբեր շրջաններում կրոնափոխությունները պետք է որ շարունակված լինեն՝ խիստ վրդովեցնելով կենտրոնական կառավարությանը: Անբողջ ամառ Ստամբուլից գայրացկոտ հեռագրեր են առաքվել՝ նահանգներին դժգոհությամբ հիշեցնելով, որ «կրոնափոխության ընդունումն անհնար է» հրահանգը «հաղորդվել է բազմաթիվ անգամներ³⁵: 1915 թ. օգոստոսի 3-ին Անկարայի նահանգապետին ուղարկված «անձնապես հոգ տանելու» նշումը կրող հեռագրում Թալեաթ փաշան վերահաստատել է, որ «քանի որ անհատական այդ

34 BOA/DH.ŞFR, № 54-A/49, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Ջանիկի, Նիդդեի, Քյութահյայի, Մարաշի, Իչնի, Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 20:

35 BOA/DH.ŞFR, № 55-A/85, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 5:

կրոնափոխությունները կատարվել են միայն անհատական առավելություն ապահովելու նպատակով, դրանք պաշտոնապես չեն ճանաչվում», և ավելացրել է, որ «բացարձակապես ոչ մի հատուկ վերաբերմունք չպետք է ցույց տրվի այն կրոնափոխվածներին, որոնք այս մեղով փորձել են մնալ տեղում [և խուսափել տեղահանությունից], և... այս հարցում թերանալու ոչ մի հնարավորություն չպետք է տրվի»³⁶: «Նման կրոնափոխություններին ուշադրություն չդարձնելուն վերաբերող» ցուցումների հոսքով շրջաններին հրամայվել է «հավատարիմ մնալ նախորդ հաղորդագրություններին»³⁷:

Ի լրումն ունևորներից վերցրած կաշառքների ու հատուցումների, նահանգային պաշտոնյաները թերևս ազդվել են տեղահանված հայերի ողբալի վիճակից: «Փրկեք մեզ: Մենք կղաճաճենք մահմեդականներ», ճչացել է Էրզինջանից մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող շարայունից մի կին. «Մենք գերմանացի կղաճաճենք: Կղաճաճենք ինչ ուզեք, միայն փրկեք մեզ: Մեզ տանում են Քեմաի կիրճը՝ մեր կոկորդները կտրելու»³⁸:

Չնայած հստակ և կայսրությունով մեկ իրականացվող քաղաքականությանը՝ տեղական պաշտոնյաները շարունակել են դիմել մայրաքաղաք և հատուկ թույլտվություն խնդրել կրոնափոխ եղածների համար: Բոլոր պարագաներում նման թույլտվություն շտրեղելու կամ մերժելու որոշումը կայացնում էր անձամբ Թալեաթ փաշան: 1915 թ. օգոստոսի 18-ին Նիդդեի գավառ ուղարկված հեռագրում Թալեաթը նշել է, որ «այն հայ աղջիկներին, որոնք իսլամ են ընդունել, կարելի է ամուսնացնել մահմեդականների հետ՝ պայմանով, որ [կրոնափոխման քաղաքականության] բացարձակ ոչ մի խախտում չթույլատրը-

36 BOA/DH.ŞFR, № 54-A/232, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 5:

37 BOA/DH.ŞFR, № 56/88, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էսքիշեհիրի գավառ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 22: Այդ նյութին կապված ևս երկու ակնհայտ օրինակ. BOA/DH.ŞFR, № 54-A/277, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 5, BOA/DH.ŞFR, № 55/93, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 18:

38 DE/PA-AA/Bo.Kons./Band 170, Վեդել-Յարլսբերգի զեկույցը, որի մեջ պատմում է իր տեսածները, թվագրված 1915 թ. հուլիսի 28:

վի»³⁹: Միևնույն օրը Քոնյա ուղարկած հեռագրում, սակայն, ներքին գործերի նախարարը հայտարարել է, որ «հայերի կրոնափոխությունն ընդունելի չէ»⁴⁰: Մերժվել են նաև Կեսարիայի ու Ուրֆայի գավառներից եկած հայցերը, այդ թվում և «եկեղեցին մզկիթի վերածելու» խընդրանքը⁴¹:

Թալեաթն էր որոշում նաև, թե ուր տեղավորեն հավատափոխված և հավատափոխվելիք հայերին՝ թե՛ անհատապես և թե՛ խմբերով: «Կարիք չկա, որ զեկուցված 156 բողոքականները հավատափոխվեն մահմեդականության», 1915 թ. օգոստոսի 30-ին Սվազ ուղարկած հեռագրով տեղեկացրել է նա: «Թող մասն այնտեղ, որտեղ գտնվում են»⁴²: Վեց օր անց, նկատելով, որ «չնայած բազմաթիվ անգամներ հաղորդվել է, որ [նրանց] հավատափոխությունն անընդունելի է, Մանուսաջիյանն ու Դադիլյանը հավատափոխվել են», Թալեաթը պահանջել է անմիջապես զեկուցել, թե «ինչ ձևով են [այս մարդիկ] հավատափոխվել, և թե պաշտոնական քայլ ձեռնարկվել է նրանց նկատմամբ, թե՛ ոչ»⁴³: Նա նաև բողոքել է Ադանայի նահանգապետին, որ «Պողոս Քալթաբջյանին, որն, ըստ լուրերի, Տարսուսում է և մահմեդականություն ընդունելու պատճառով իր անունը փոխել-դարձրել է Յուսուֆ Բեդրի, թույլատրվել է վերադառնալ Իզմիր»⁴⁴:

ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԿԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է

1915 թ. հոկտեմբերի վերջին վերացվում է կրոնափոխության վրա դրված արգելքը: Բոլուի գավառը հոկտեմբերի 25-ին տեղեկություն է ստացել, որ «հայերի հավատափոխման ընթացակարգի պատշաճ

ձևով վարույթը պատեհ է»⁴⁵: Հաջորդ օրը հրահանգ է ուղարկվել Ադանա այն մասին, որ «հոկտեմբերի վերջին պատշաճ ձևով [մահմեդականության] հավատափոխվելու ընթացակարգի կատարման անհրաժեշտությունը յոզղաթցի Չոլաքօղլու Ղազարոսյանի և նրա ընտանիքի նկատմամբ, ով նշված էր այն հեռագրում... որը 1915 թ. հոկտեմբերի 14-ին Հանրային անվտանգության վարչություն [ստիկանություն] էր ուղարկել Իսլահիյեի քաղի [մահմեդական օրենքի դատավոր] Քեմալեդին էֆենդին, հաղորդվի այն խնդրողներին»⁴⁶:

Բոլոր նահանգներին ու գավառներին, ինչպես նաև ներկայիս Միջրիայի ու Իրաքի բնակեցման վայրերին այս փոփոխության մասին ծանուցվել է նոյեմբերի 4-ի «գաղտնի» հեռագրով, որն սկսվում էր հետևյալ կերպ. «Պետք է հաշվի առնել հայերի հավատափոխությանը վերաբերող ստորև նշված կետերը»: 1. Ընդունելի է նրանց հավատափոխումը [մահմեդականության], ովքեր մնացել են շրջակայքում, որ ապրել են հնուց և չեն տեղահանվել: 2. Ընդունելի է նրանց հավատափոխումը, ովքեր ընդհանուր ընթացակարգով տեղահանվելիս կասեցվել են և տեղահանություններից շեղվել՝ կենտրոնից հաղորդած հատուկ հրամանի հետևանքով, և կամ վերադարձել են իրենց բնակության նախկին վայրերը, կամ մնացել են տեղերում»⁴⁷:

Կրոնափոխությունը կազմակերպվել և ընդունվել է որոշակի սկզբունքների համաձայն և բոլորին չի ընդգրկել: Զանազան պատճառներով ճանապարհին ուշացած տեղահանվածների վրա այն չի տարածվել: Այդ իրավունքից կարող էին օգտվել միայն նրանք, ում տեղահանությունը հետաձգվել էր նախարարի հրամանով: Պատասխանելով նահանգներից ուղարկված հարցերին՝ Ներքին գործերի

39 BOA/DH.ŞFR, № 55/92, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 18:

40 BOA/DH.ŞFR, № 55/93, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 18:

41 BOA/DH.ŞFR, № 55/94 և 55/100:

42 BOA/DH.ŞFR, № 55/336, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 31:

43 BOA/DH.ŞFR, № 55-A/83, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 5:

44 BOA/DH.ŞFR, № 62/35, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 16:

45 BOA/DH.ŞFR, № 57/115, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Բոլուի գավառ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 25:

46 BOA/DH.ŞFR, 57/124, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 26:

47 BOA/DH.ŞFR, № 57/281, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադիսի, Հյուդավենդիզարի, Տրապիզոնի, Վանի, Ադանայի, Բիթլիսի, Դիյարբեքի, Քոնյայի, Ասկարայի, Հալեայի, Մամուրեթյուլագիզի, Սվազի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Ջորի, Կեսարիայի, Մարաշի, Իզմիրի, Կարահիսար-ի Սահիբի, Քարեսի, Էսքիշեհիբի, Ջանիկի, Քալե-ի Սուլթանիյեի, Նիդդեի ու Քյութահյայի գավառներ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 4:

նախարարությունը հստակեցրել է այն պայմանները, որոնց դեպքում կրոնափոխությունն ընդունելի էր լինելու: «Քանի որ հավատափոխությանը վերաբերող հրահանգների առաջին ու երկրորդ հոդվածների թույլտվությունը վերաբերում է նախարարության հատուկ հրամանով տեղահանությունից ազատված սահմանափակ թվով մարդկանց, որոնց անունները հաղորդվել են», գրված էր 1916 թ. մարտի 16-ին Քոնյայի նահանգ ուղարկած հեռագրում, «այն հայերի հավատափոխության սատարումը, ովքեր պարզապես իրենց տեղահանության ուշացման պատճառով են մնացել Էրեղլիում և տեղահանվելու են ճանապարհները բացվելուն պես, բնականաբար, չի կարող պատշաճել [այս] քաղաքականությանը»⁴⁸:

Ճիշտ ինչպես և կրոնափոխության արգելքի ժամանակ, ներքին գործերի նախարար Թալեաթը շարունակում էր ինքը վճիռներ կայացնել անհատական դեպքերի վերաբերյալ: 1915 թ. նոյեմբերին նա Մենթեշեի գավառին տեղեկացրել է, որ «ոչ մի արգելք չկա ճանաչելու այն հայերի հավատափոխությունը, ովքեր խնդրել են այն»⁴⁹, մինչդեռ Աֆյոնի գավառին հայտնել է, որ «անթույլատրելի է այն հայ կանանց հավատափոխության ճանաչումը, որոնց ամուսինները դեռևս ողջ են և ծառայում են բանակում»⁵⁰: Տրամադրության փոփոխությունից բացի ուրիշ ինչը կարող էր դրդել նման իրարամերժ վճիռների: Այդ հարցի ընդհանուր գնահատականը կտրվի ստորև:

Գերմանացի դիվանագետները նույնպես նշել են կրոնափոխության արտոնման վերականգնումը: «Կեսարիայի հայերին Սվազ ուղարկելու հրաման[ն] արձակվել է», 1916 թ. Հունվարին գրել է Հալեայի հյուպատոս Ռյոսլերը և ավելացրել. «Այդ արտաքսումը մահ է նշանակում: Թերևս մութեսարիֆը [գավառապետը] հայտարարել է, որ մահմեդականություն ընդունողները կազատվեն՝ նրանց [հայերին] փրկելու մտադրությամբ: Շատ մարդիկ հավատափոխվեցին»⁵¹:

Միևնույն ժամանակ, օսմանյան բանակում ծառայող հայ զինվորներին ստիպում էին մահմեդականություն ընդունել: «Մի քանի օր առաջ Պատերազմի նախարարությունը հրաման տվեց, որ բանակում ծառայող բոլոր հայերը պետք է մահմեդական դառնան», 1915 թ. նոյեմբերի 16-ին նշել է Գերմանիայի դեսպանության գլխավոր հյուպատոս Մորդթմանը: «Նրանք [հայերը] այժմ պարզապես պետք է մահմեդական անուններ ստանան՝ կրոնափոխության իրական ձևակառուցությունները [թուլացնելով], ելնելով պատերազմական պայմաններից, թողնելով ավելի ուշ ժամանակի»: Համաձայն Մորդթմանի, Մոսամբուլի հայ ընտանիքներին ևս ստիպում էին հրաժարվել քրիստոնեությունից⁵²: Արդեն սեպտեմբերին ու հոկտեմբերին Դաշնակցության Բուխարեստի կոմիտեն գեկուցում է. «[Քոնյայի նահանգում] երկաթուղու վրա աշխատող հայ զինվորներին մահվան սպառնալիքով ստիպել են մահմեդականություն ընդունել: Արդեն ավելի քան 1500 զինվոր բռնի հավատափոխվել է»⁵³:

ՈՒՃԱՑՈՒՄՆ ՈՒ ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵԿ ՏԵՂԱՋԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԵՏ

Սիրիայում ողջ մնացած հայերից հավատափոխում էր ակնկալվում, սակայն սկզբում այն գործընթացի մաս չէր դիտվում: 1915 թ. ամռանը Մոսուլ ու Դեր Ջոր ուղարկված հեռագիրը լույս է սփռում Սիրիա ողջ հասածների հանդեպ սկզբնական ծրագրերի վրա:

Այդ հեռագրում կարևոր է այն հանգամանքը, որ այն ուղարկվել է մինչև տեղահանվածների քարավաններից շատերը նույնիսկ կհասնեին Սիրիայի անապատները և, այդ առումով, այն պետք է համարել նախապես ծրագրված քաղաքականության դրսևորում: Հունիսի 23-ի այդ հեռագիրը, որն ուղարկված էր «հոգ տանել անձնապես» մակագրությամբ, հետևյալ հրամանն էր պարունակում.

48 BOA/DH.SFR, №61/252, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 7:

49 BOA/DH.SFR, №57/344, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մենթեշեի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 7:

50 BOA/DH.SFR, №58/146, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիրի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 29:

51 DE/PA-AA/R 14090, Հալեպում հյուպատոս Ռյոսլերի գեկույցը Գերմանիայի կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. հունվարի 31:

52 DE/PA-AA/Bo.Kons./Band. 172, Կոստանդնուպոլսի դեսպանությունում գլխավոր հյուպատոսի (Մորդթման) գրառումները, 1915 թ. դեկտեմբերի 16:


53 NA/RG 59,867.4016/226, Դաշնակցություն կոմիտեի բալկանյան մասնաճյուղի (Բուխարեստ) «Հայ ժողովրդի քաղաքացույցումը Թուրքիայում» գեկույցը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 28/15, կցված հետևյալ փաստաթղթին. «The Extermination of the Armenian People in Turkey» («Հայ ժողովրդի քաղաքացույցումը Թուրքիայում»), դեսպան Մորգենթաուն պետական քարտուղարին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 9, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 342:

[Նահանգի] մինևույն մարզերի ու շրջանների հայ բնակչությանը պետք է մասնատել և տեղավորել տարբեր շրջաններում, և նրանց տեղավորման վայրերում հայկական դպրոցներ բացելու ոչ մի տարածք կամ թույլտվություն չպետք է տրվի. այդպիսով, նրանց երեխաներին պետք է ստիպել ուսումը շարունակել պետական դպրոցներում, և պետք է հոգ տանել ու ուշադրություն դարձնել, որ այն գյուղերը, որոնցում նրանք պետք է տեղավորվեն, միմյանցից առնվազն հինգ ժամվա հեռավորության վրա լինեն, և նրանք այնպիսի տեղում կամ պայմաններում չլինեն, որը թույլ կտա ինքնակառավարում կամ պաշտպանություն... [Այս հեռագիրը] պետք է ոչնչացնել՝ դրա բովանդակությունը հարկ եղած կողմերին հաղորդելուց հետո»⁵⁴:

Կրոնափոխությունն արտոնող հունիսի 2-ի հեռագրից մեկ օր անց ուղարկած այս հեռագիրը երկրորդն է ուժացմանն առնչվող օսմանյան այն երեք փաստաթղթերից, որոնք կարգադրվում էր ոչնչացնել:

Հաջորդ շաբաթ «հայերի վերաբերյալ որոշումների» ևս մի փունջ ուղարկվել է Զինվորական գերագույն հրամանատարության կողմից՝ հանգամանալից մի հաղորդագրությամբ.

1. Ներքին ու օտարերկրյա հաղորդագրությունների լեզուն ու նամակագրությունը պետք է թուրքերեն լինեն այն հայերի համար, որոնք տեղահանվել ու ցրվել են այդտեղ կամ նոր են տեղահանվելու ու ցրվելու արևելյան Անատոլիայի ռուսական սահմանին կից [նահանգներից], Զեյթունից, Դամասկոսից, Ադանայից և ծովափնյա շրջաններից:
2. Բացարձակ ոչ մի թույլտվություն չպետք է տրվի հայկական դպրոցներ հիմնելու այն տարածքներում, ուր պետք է տեղավորվեն հայերը, և բոլոր հայ երիտասարդները պետք է կրթվեն պետական դպրոցներում:
3. Ներկայումս հայալեզու թերթ հրատարակել թույլատրվել է միայն Ստամբուլում. մյուս նահանգներում հայկական թերթերը պետք է արգելվեն»⁵⁵:



Նկար 9.1. Օսմանյան 54/122 փաստաթուղթը. Ներքին գործերի նախարարության 1915 թ. հունիսի 23-ի հեռագիրը, ուր գրված է. «Հայերին չպետք է տալ իրենց բնակեցման վայրերում դպրոցներ բացելու տարածքներ կամ թույլտվություն... [Այս հեռագիրը] պետք է ոչնչացվի՝ անհրաժեշտ կողմերին դրա բովանդակությունը հաղորդելուց հետո»:

54 BOA/DH.ŞFR, № 54/122, Ներքին գործերի նախարարության ՅՆԿՎ ծածկագրված հեռագիրը Մոսկովի նահանգ և (Դեր) Զորի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 23:

55 BOA/DH.ŞFR, № 54/261, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

1915 թ. ամռանը Սիրիային մոտեցող հայերն ուժացվելու էին՝ սփռվելու, լեզվի ու կրթության միջոցով, սակայն ո՛չ կրոնափոխությանը: Ինչևէ, այդ քաղաքականությունը փոխվեց նոյեմբերի 4-ի հրամանով: Դեկտեմբերի 21-ի հրահանգով, որն ուղղված էր հենց վերաբնակեցման վայրերին, հաստատվում էր նոր մոտեցումը. «Ծրագրի համաձայն, ընդունել այլ վայրերից բնակվելու նպատակով ժամանած այն հայերի հավատափոխությունը, ովքեր ցանկանում են [դա]՝ նոր վայրեր նրանց ժամանելու օրից հետո»⁵⁶:

Մինչև 1915 թ. աշունը կրոնափոխության արտոնությունը դեռևս չէր նշանակում բռնի մահմեդականացում: Ըստ տեղահանված որոշ հայերի հուշերի, այս փուլում հարկադրանք առհասարակ չկար: Ստամբուլի հայալեզու «Ժամանակ» թերթի խմբագիր Երվանդ Օտյանը վկայակոչում է հայերի հիմնականում արհեստավորներից բաղկացած մի խմբի պատմածը, որոնց վերաբնակեցման համար Սիրիայի նահանգապետ ու Օսմանյան չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի հրամանով հավաքել էին Դամասկոսի ու Համայի մերձակայքում: «Իբրև արհեստավորներ, մենք գնում էինք այստեղ պետական գործարաններում աշխատելու», պատմել են նրանք Օտյանին: «Նրանք հատկապես փնտրում էին դերձակների, կոշկակարների, մետաղագործների, աստղձագործների ու ջուլիակների»⁵⁷:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

ՄԱՅՄԵԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆ

1916 թ. գարունը կարևոր փոփոխություն մտցրեց կրոնափոխության քաղաքականության մեջ: Թե՛ Անատոլիայում մնացած հայերին և թե՛ Սիրիայում իբրև քրիստոնյաներ հաստատվելու արտոնություն ստացածներին հնարավորություն տրվեց ընտրություն կատարելու մահմեդականության և Դեր Ջոր տեղահանվելու միջև: Նրանք, ովքեր հասկանում էին, որ տեղահանությունը մահ էր նշանակում, ստիպված էին ընդունելու հարկադիր կրոնափոխությունը:

գրված հեռագիրը Դամասկոսի, Հալեպի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. հունիսի 1:

56 BOA/DH.SFR, № 59/83, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի, Դամասկոսի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 21:

57 Odian, Accursed Years, 97.

Այն հանգամանքը, որ հարկադիր կրոնափոխությունը կատարվեց մինևնույն ժամանակ, ինչ քաղաքականության մեկ այլ փոփոխություն, նշանակալի գուգադիպություն է: 1916 թ. գարնանն էր, որ Հալեպում ու դրա շրջակայքում սկսվեց հայերի տեղավորման բոլոր վայրերի ու ճամբարների պարպումը, և այդ ամռանը կազմակերպվեց երկրորդ մեծ կոտորածը: Կարելի է ուղիղ կապ տեսնել կոտորածի որոշման և հարկադիր մահմեդականացմանը ուժացման նոր քաղաքականության միջև:

Այդ քաղաքականության փոփոխության վկայությունը կարելի է գտնել Գերմանիայի ու Ամերիկայի հյուպատոսությունների 1916 թ. գարնանը գրված զեկույցների մեջ: Այնթափ քաղաքի երեքից չորս հարյուր հայկական ընտանիքներ առաջին տեղահանության ժամանակ չեն հեռացվել քաղաքից: Ամերիկյան հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնը փետրվարի 8-ին զեկույցել է, որ «Այնթափում մնացած այդ ընտանիքներին հայտնել են, որ կարող են մնալ, եթե մահմեդական դառնան»⁵⁸: Տեղում մնալու համար պահանջվող միակ բանը քրիստոնեությունից հրաժարվելն էր: Նման զեկույցներ են ուղարկվել Սվազից: Հունիսի 28-ին Գերմանիայի հյուպատոսության քարտուղար Վերթը գրել է. «Երեկ առավոտյան դեռևս այստեղ մնացող հայերին, որոնք պատկանում են ճանապարհաշինության, շինարարական ու ինժեներական գորագնդերին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր առևտրի դպրոցում են, և նաև բոլոր հույներին փակեցին այստեղի հայկական եկեղեցում: Այն հույներին ու հայերին, ովքեր մահմեդականություն ընդունեցին, կատաղի ձաղկումներից հետո բաց թողեցին: Մյուս հայերին իշխանությունները խորհուրդ տվեցին մահմեդականություն ընդունել. եթե չընդունեն, կտեղահանվեն և անհայտ վայր կուղարկվեն: Հայերը վախենում են չորրորդ ջարդից»⁵⁹: Հուլիսի 23-ի դրությամբ, «բոլոր հայ բժիշկներին սպանում են և ստիպում մահմեդական դառնալ:

58 NA/RG 59, 867.4016/275, Հալեպում հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի զեկույցը ամերիկյան դեսպանությանը, թվագրված 1916 թ. փետրվարի 8, գտնվում է United States Official Documents on the Armenian Genocide, vol. 1, The Lower Euphrates, ed. Ara Sarafian (Boston, MA, Armenian Review, 1993), Doc. № 61, 117:

59 DE/PA-AA/R 14092, Սվազում հյուպատոսության քարտուղար Վերթի հեռագրային հաղորդումը Ստամբուլում Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. հունիսի 28:

Բոլորին ստիպում են [կրոնը] փոխել: Առողջապահության ոլորտի մի հայ աշխատողի ժամանակավորապես բանտարկել են»⁶⁰:

Նույն զարգացումներն էին տեղի ունենում Սիրիայում: Դամասկոսում ՄԱԿ պատասխանատու քարտուղար Ալի Քեմալ բեյը անձնապես էր ստանձնել բռնի մահմեդականացման առաջադրանքի կատարումը և ճամփորդում էր տարածաշրջանում՝ գործընթացն արագացնելու համար: «Գործողությունը շատ պարզ էր: Իթթիհադը [ՄԱԿ] հազարավոր դիմումներ էր պատրաստել, որոնց մեջ միայն հին ու նոր անունները պետք է ավելացվեին ու ստորագրվեին, որի փոխարեն նոր մահմեդական անունով և ինչ-որ համարով թղթի մի կտոր էր տրվում նրանց... Այդպես, Համայում այս ձևով չորս թե հինգ օրում 5.000 հայ գաղթական դարձավ մահմեդական»⁶¹:

Երբ Չերքես Հասան Ամջան (Չերքեզ քեռի Հասանը), որին հանձնարարված էր Հարանի դաշտավայրի հայերին ուղարկել Դամասկոս ու Երուսաղեմ, 1916 թ. օգոստոսի վերջին սկսել է այդ աշխատանքը, նրա առաջին հրահանգները վերաբերել են «բոլոր գաղթականների հավատափոխման հրամանը կատարելուն»⁶²: Կրոնի հատուկ ուսուցիչներ են նշանակվել: Այն հայերին, ովքեր մերժել են հրաժարվել քրիստոնեությունից, թողել են սովամահ լինելու⁶³: Այդ ժամանակաշրջանում Համայի ու Դամասկոսի միջև սփռված մոտավորապես 150.000 հայ, որոնց Ռեյմոնդ Գևորգյանը «Ջեմալի հայեր» է անվանում, բռնությամբ մահմեդականացվել են⁶⁴: Թե ինչ չափով է ուժացված այդ հայերին թույլատրվել ողջ մնալ Ջեմալ փաշայի անձնական միջամտությունների արդյունքում, այլ քննարկման առարկա է⁶⁵:

Սիրիայում 1916 թ. զարնան սկսված բռնի հավատափոխումների ալիքը իր հետքերն է թողել նաև հյուպատոսական զեկույցներում:

60 DE/PA-AA/Bo.Kons./Band 172, Սվազում հյուպատոսության քարտուղար Վերթի հետագրային հաղորդումը Ստամբուլում Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. հուլիսի 23:

61 Oodian, Accursed Years, 114–15.

62 Çerkes Hasan Bey'in Hâtıratı: Tehcîrin İc Yüzü," Alemdar, 1919 թ. հունիսի 28 :

63 Alemdar, 1919 թ. հունիսի 20:

64 Kévorkian, "L'extermination des déportés arméniens ottomans," 51.

65 DE/PA-AA/R 14093, Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 18:

«Փետրվարի վերջին ու մարտի սկզբին Հալեպի աշխատանքային գումարտակի զրեթե բոլոր հայերը, որոնց հաջողությամբ պարտազրել էին, մահմեդականություն ընդունեցին», գրել է հյուպատոս Ռյուպերը: «Մարտ ամսվա ընթացքում ոստիկանությունը, տեղահանության պատրաստության համար, կազմում էր Հալեպում գտնվող հայերի ցուցակներ, և լուր տարածեց, թե տեղահանությունից փրկվելու միակ ուղին մահմեդականություն ընդունելն է: Հետո, երբ ընտանիքները շարքով դիմեցին կրոնափոխության համար, նրանց հետ այնպես վարվեցին, կարծես այդ խնդրանքի կատարումը մեծ լավություն էր»⁶⁶: Մայիսին դեսպան Վոլֆ-Մաթերնիխն ասել է, որ գերմանացիներին լուր է հասել հայերին ստիպողաբար մահմեդական դարձնելու նոր ալիքի վերաբերյալ: Այդ հարցը Վոլֆ-Մաթերնիխը քննարկել է իթթիհադական առաջնորդներ Հալիլ Մենթեշեի ու Թալեթ փաշայի հետ, բայց նրանք վճռականորեն հերքել են լուրը⁶⁷: Մակայն 1916 թ. հունիսի 30-ին Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսը զեկույցել է, որ այդ շրջանում «բոլոր հայերին ավելի կամ պակաս բռնությամբ մահմեդական են դարձնում»⁶⁸: Նման զեկույց է ուղարկվել նաև Հալեպից. «Համաձայն Համայից, Հոմսից, Դամասկոսից և այլ տեղերից եկող փոխլրացնող լուրերի, վերջին շաբաթներին զանգվածաբար դուրս հանվողներին [հայերին] հետագա տեղահանությունների սպառնալիքով ստիպել են հավատադարձվել մահմեդականության: Դա [հավատափոխման գործընթացը] կատարվել է զուտ բյուրակրատական ձևով. դիմելով, ապա անունը փոխելով»⁶⁹: Հալեպում Ամերիկայի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնը հաստատել է, որ «Համայում, Հոմսում ու Մարաշում [և] այլն հազարավորների ստիպել են դառնալ մահմեդական»⁷⁰:

66 DE/PA-AA/R 14091, Հալեպում հյուպատոս Ռյուպերի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. ապրիլի 27:

67 DE/PA-AA/R 14091, Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. մայիսի 11:

68 DE/PA-AA/Bo.Kons./Band 173, Դամասկոսում հյուպատոս Լոյթվեդ Հարդեգի զեկույցը Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. հունիսի 30:

69 DE/PA-AA/R 14093, Հալեպում հյուպատոս Հոֆմանի զեկույցը Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. հունիսի 29:

70 NA/RG 59, 867.4016/298, Հալեպում հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի կնոջ՝ տիկին Ջեսի Ջաքսոնի նամակը Պետական քարտուղարությանը, թվագրված

Երուսաղեմից ուղարկված հաղորդագրությունները ներկայացնում էին միևնույն պատմությունը: Հյուպատոս Բրոդը զեկուցել է, որ, համաձայն հայոց պատրիարքի, «արևելյան Հորդանանի տարածքում տեղավորված հայերին ստիպողաբար հավատափոխել են մահմեդականության»: Հյուպատոսը հայտնել է նաև, որ «քանի որ [Հյուսեյին] Քազիմ բեյը՝ այն պաշտոնյան, որին վստահված էր հայերի տեղավորումը, համարվում էր շատ մեղմ, նրան հեռացրին պաշտոնից, իսկ նրա փոխարեն բերված մարդը՝ Քեմալը, դաժան մեթոդներ էր կիրառում, և այդ ճշումների արդյունքում հավատափոխվեց 3.500 մարդ»⁷¹:

Հյուպատոսական այդ զեկույցը հաստատում է Երվանդ Օտյանի ու Չերքեզ քեռի Հասանի ավելի վաղ հղված վկայությունը: Կոտորումն ու բռնի մահմեդականացումը համընկել են Հայոց ցեղասպանության վերջին փուլին: Զուգահեռ այդ գործողությունները միասին նպատակ ունենին ավարտին հասցնելու հայերի վերացումը:

**ԿՐՈՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊԱՅՄԱՆԱԿՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ**

Պատասխանի է ծարավի այն հարցը, թե կրոնափոխության ու մշակութային ուժացման փոփոխվող քաղաքականությունների մեջ կարելի է արդյոք որևէ տրամաբանություն գտնել, թե ոչ: Ինչո՞ւ են օսմանյան պաշտոնյաները սկզբում թույլատրել կրոնափոխությունը, ապա արգելել այն, հետո կրկին բռնությամբ պնդել, թե մահից բացի միակ ընտրանքը մնում էր մահմեդականությունը:

Ինչպես երևում է այդ անկայունությունից, կրոնափոխության քաղաքականությունը չի կարող վերագրվել սոսկ մահմեդական մոլեռանդությանը: Ճիշտ հակառակը. որքան էլ այդ քաղաքականությունը կիրառվելու սկզբնական փուլում անկատար լիներ, հիմնված էր սառնասիրտ հաշվարկի վրա: Այս խնդրի շուրջ կարևոր դիտարկումներ է կատարել Վոլֆ-Մաթերնիխը: 1916 թ. հուլիսի 10-ին Գերմանիայի

ղեսպանը զեկուցել է, որ «չնայած պաշտոնական բոլոր ժխտումներին, մահմեդականությունը հսկայական դեր խաղաց հայերի հալածանքների վերջին փուլում»: Վոլֆ-Մաթերնիխը, որն ասել է նաև, որ «միևնույն ժամանակ, մահմեդական մոլեռանդությամբ հրահրված ոչ մի միջոցառում չպետք է տեսնել հայերի բռնի մահմեդականացման մեջ», եզրակացրել է, որ «նման զգացումները պետք է օտարոտի լինեն երիտթուրք ղեկավարների համար»: Հիմնվելով կառավարության իշխանավորների հետ իր հանդիպումների վրա՝ Վոլֆ-Մաթերնիխը նշել է. «Հայերի ստիպողական կրոնափոխության վճռական շարժառիթը ոչ թե կրոնական մոլեռանդությունն է, այլ հայերի միաձուլումը կայսրության մահմեդական ժողովրդի հետ»⁷²: Գլխավոր հյուպատոս Մորդթանը, որը գտնում էր, որ «հայերի ստիպողական մահմեդականացումն ինքնին նպատակ չէ, այլ միայն նպաստում է հավատափոխների թյուրքացմանը», նույնպես շեշտել է, որ նպատակը ուժացումն էր⁷³:

1915 թ. հուլիսի 1-ից հետո կրոնափոխությունն արգելող փաստաթղթերում գործածված այնպիսի բառակապակցություններից, ինչպիսին էին «ապահովել իրենց հայրենի հողերում մնալու միջոցներ» (memleketlerinde kalmak çâresini temin), «շահի հարկադրանք» (ilcâ' i menfa'at) և «կեղծ ու ժամանակավոր» (ca'li ve muvakkat), հեշտ է հասկանալ, որ երիտթուրքերը մտահոգված էին, որ հայերն իրենց կրոնից հրաժարվելու անկեղծ մտադրություն չեն ունեցել, այլ ավելի շուտ նպատակ են ունեցել պահպանելու իրենց անձը:

Իր վերոհիշյալ զեկույցում Վոլֆ-Մաթերնիխը շեշտել է նաև այդ պահը: Նշելուց հետո, որ հայերը հավատափոխվում էին իրենց սեփական կամքով՝ փրկվելու համար տեղահանությունից ու մահից և կանխելու համար իրենց ունեցվածքի հափշտակումը, նա գրել է, որ «պաշտոնյաներին այս շարժումը դուր չէր գալիս, և կրոնափոխվածներին, այնուամենայնիվ, տեղահանում էին»: Քաղաքականության

72 DE/PA-AA/R 14092, ղեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. հուլիսի 10: Մեպտեմբերի 18-ով թվագրված զեկույցում Վոլֆ-Մաթերնիխը կրկնում է միևնույն տեղեկությունը: Տե՛ս DE/PA-AA/R 14093, Գերմանիայի ղեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 18:

73 DE/PA-AA/Bo.Kons./Band 101, Մարդթանի նշումները Հալեպում հյուպատոս Ռյոսլերի 1917 թ. ապրիլի 20-ին Գերմանիայի ղեսպանություն ուղարկած զեկույցի լուսանցքում:

1916 թ. հոկտեմբերի 13: Տե՛ս. Զաքսոնը պատճենել է տեղեկությունն իր ամուսնու նամակից և ուղարկել այն, քանի որ ամուսինը փոստն առաքելու հարցում դժվարություններ է ունեցել: Վերարտադրված է հետևյալ տեղում. United States Official Documents, ed. Sarafian, Doc. №61, 119:

71 DE/PA-AA/R 14092, Երուսաղեմում հյուպատոս (դր.) Բրոդի զեկույցը, թվագրված 1916 թ. հունիսի 26:

փոփոխությունը նա բացատրում է հետևյալ կերպ. «Ակնհայտորեն, վախ կա, որ զանգվածային հետագա հավատափոխումների պատճառով հայերի տեղահանությունների իրական նպատակը՝ հայ ժողովրդի լիակատար վնասագերծումը, կարող է խափանվել»⁷⁴:

Գերմանիայի դեսպանը բացատրել է, որ գերմանացի ու ամերիկացի միսիոներների ղեկավարած որբանոցների, հիվանդանոցների ու դպրոցների տիպի բարեգործական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը այն վախի հետևանքն էր, որ հայերը կարող էին պահպանել իրենց ազգային ինքնությունը: Հիշեցնելով, որ նախապես այդ հաստատությունների աշխատանքի մասին ոչինչ չի ասվել, Վոլֆ-Մաթերնիխը կարևոր դիտարկում է կատարել դրա պատճառի մասին՝ միաժամանակ հաղորդելով, որ հայերի բնաջնջման վերջին փուլում այդ հաստատությունները ևս թիրախի են վերածվել. «Թուրքիայի կառավարությունն իրավամբ հասկացավ, որ օտարերկրացիների ղեկավարած դպրոցներն ու որբանոցները մեծ ազդեցություն ունեն հայերի ազգային զգացումների զարթոնքի ու զարգացման վրա: Նրանց տեսակետից, տրամաբանական է՝ նաև դրանք խիստ վերահսկողության տակ առնելը կամ ամբողջովին փակելը»⁷⁵:

Այդ պատճառով, թվերը կարևոր էին: Նահանգների հետ թղթակցությունների ընթացքում պարբերաբար պահանջվում էին հավատափոխ եղած հայերի թվերը՝ հատկապես մնացած հայերի ու մահմեդական ազգաբնակչության համեմատությամբ: Կարելի է բերել մի քանի օրինակ: 1915 թ. հոկտեմբերի 28-ին Ջանիկի գավառապետարան ուղարկված հեռագրով պահանջվել է «հաղորդել այն հայերի թիվը, որոնք ղեռնա չեն ավարտել հավատափոխության գործընթացը»⁷⁶: 1916 թ. փետրվարի 13-ին Ջանիկից ուղարկված հեռագրում պահանջվում էր «հաղորդել, թե փախուստի վայրերից ու թաքստոցներից դուրս եկածներից քանի հայ է հայտարարվել իբրև հավատափոխություն խնդրող»⁷⁷:

1916 թ. հուլիսին բոլոր նահանգներն ու շրջաններն ուղարկած հրամանով պահանջվում էր այդ թվերով աղյուսակներ կազմել և ուղարկել. «Շրջաբերականով հաղորդվել է, որ կարիք կա, որ շրջանը [kaza] արագ պատրաստի և ուղարկի աղյուսակագրված ցուցակ, որը պարունակի 1. տեղի հայերի, 2. դրսի հայերի, 3. կաթոլիկ ու բողոքական մնացածների, 4. իբրև զինվորների ընտանիքներ տեղերում թողածների [և] 6. հատուկ հրամանների պատճառով մնացող հայերի քանակները նահանգում/շրջանում»⁷⁸:

Փաստաթղթերը բացահայտում են, որ, ազգաբնակչության մասին ընդհանուր մտահոգությունից բացի, կրոնափոխության հարցում մեկ այլ գործոն է եղել անվտանգության նկատառումը: Համաձայն 1916 թ. հունվարի 31-ի Նիդդեի նահանգային կառավարությանն ուղարկած հեռագրի, այն ժամանակաշրջանում, երբ կրոնափոխությունը կրկին արտոնվում էր, այն ընդունելու համար պահանջվել է Քատերազմի նախարարության հատուկ թույլտվությունը: Հեռագրում ասվում է. «Գերագույն զինվորական հրամանատարության տեղակալը ի պատասխան տեղեկացրել է, որ հայերի կողմից իրենց խղճի ցանկություններով կրոնափոխության խնդրանքների ընդունումը հարմար է»⁷⁹:

Կրոնափոխության խնդրանքները երբեմն, անվտանգության նկատառումներով, մերժվում էին: 1916 թ. փետրվարի 20-ին Քալե-ի Մուլթանիյե (ներկայիս Չանաքքալե) ուղարկված հեռագրում ասվում էր. «Ըստ էության, կրոնափոխությունը տեղահանության համար խոչընդոտ չէ: Եթե այդտեղ ոչ-մահմեդականների ներկայությունը արգելված վտանգ է, այդ արգելքը չի կարող վերացվել: Նկատի ունե-

գրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 13:

78 BOA/DH.SFR, № 68/112, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեսի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Բաղդադի, Բեյրութի, Հալեպի, Հյուդավնեղիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բուրսի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի, Երուսաղեմի, Քալե-ի Մուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշի, Թեքեի, Կարա-հիսար-ի Սահիբի, Իչնի, Մարաշի, Նիդդեի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 24:

79 BOA/DH.SFR, № 60/183, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 31:

74 DE/PA-AA/R 14092, դեսպան Վոլֆ-Մաթերնիխի գեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. հուլիսի 10:

75 Նույն տեղում:

76 BOA/DH.SFR, № 59/119, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 28:

77 BOA/DH.SFR, № 59/267, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

նալով, որ նման [մարդկանց] տեղահանությունը ռազմական տեսակետից անհրաժեշտ է նկատվել, կրոնափոխության պայմանով մնալու խնդրանքները չեն կարող համարվել ընդունման արժանի»⁸⁰:

Ներքին գործերի նախարարությունը հրամայել է, որ ոստիկանությունը մանրակրկիտ կերպով հետաքննի յուրաքանչյուր հեռանկարային կրոնափոխի, և իր որոշումները հիմնել է հետաքննությունների արդյունքների վրա: Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչությունը 1916 թ. ապրիլի 24-ին Արդարադատության նախարարության Դատական և Ազանդների բաժանմունքներին տեղեկացրել է, որ, քանի որ «Սահակի որդի Թաթևուր՝ քնիկ Կեսարիայից, որ ցանկանում է կրոնափոխվել», կապի մեջ է հայ հեղափոխականների հետ, և «հետաքննությամբ պարզվել է, որ նրա հավատափոխության պատճառը վախն է», ցանկալի է մերժել նրա խնդրանքը⁸¹: Բոլոր այդ հետաքննությունների մեջ, կրկին ու կրկին, գտնում ենք Թալեաթ փաշայի անունը⁸²:

Չնայած կրոնափոխությունն ընդհանուր առմամբ սկսել էր արտոնվել, Էդիրնեի բոլոր հայերի խմբակային կրոնափոխությունը չի թույլատրվել: Այդ հարցում, ի լրումն անվտանգության ու թվերի նկատառումների, կարող են դեր խաղացած լինել օտարերկրյա դեսպանների ճշումները: 1916 թ. մարտի 6-ին Էդիրնե ուղարկված հեռագրում նշվում է, որ «Էդիրնեի շրջանում հայերի զանգվածային հավատափոխությունները շատ տգեղ են, և հնարավոր չի լինի դա համաձայնեցնել պետության ներկայիս քաղաքականության հետ», ուստի անմիջապես «անհրաժեշտ է վերջնականորեն ուղղել այն [վերոհիշյալ կրո-

80 BOA/DH.SFR, № 61/61, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 20:

81 BOA/DH.EUM, 2. Şube, № 20/42, Ներքին գործերի նախարարության Հանրային անվտանգության վարչության «գաղտնի» մակագրությամբ գրությունը Արդարադատության ու ազանդների նախարարությանը, թվագրված 1916 թ. ապրիլի 24: Կրոնափոխության մեկ այլ համանման հետաքննության և մերժման համար տե՛ս BOA/DH.EUM, 2. Şube, № 21/14:

82 BOA/DH.EUM, 2. Şube, № 30/49, «Երանոս օղլու Դաբաթի մասին, որը ցանկանում է կրոնափոխվել», ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի անունից մշտական փոխնախարարի օգնական (Müsteşar Muavini) Օսման բեյի գրությունը ոստիկանության ընդհանուր տնօրեն Ահմեդ բեյին, թվագրված 1916 թ. օգոստոսի 17:

նափոխությունները)»⁸³: Երեք օր անց կառավարությունն իր մտահոգությունը հայտնել է շատ ավելի հստակորեն. քանի որ «զանգվածային կրոնափոխությունը Էդիրնեի պես մի վայրում, որը կոչվում է Եվրոպայի դարպաս, անհամատեղելի է պետության քաղաքականության ուղղությանը», պաշտոնյաներից պահանջվել է համարել, «թե կրոնափոխության գործողությունը երբեք գոյություն չի ունեցել»⁸⁴:

Էդիրնեում ամերիկյան հյուպատոսը 1916 թ. մարտին փաստորեն հաստատել է հայերին բռնի կերպով քրիստոնեության վերադարձնելու հանգամանքը. «Այս մարդկանց [կրոնափոխված հայերին] վերջին մի քանի օրվա ընթացքում հավաքել են դոյակում [konak], և նրանց արտոնություն է տրվել վերստանձնելու իրենց քրիստոնեական անուններն ու կրոնը: Քանի որ պարզ չէ, թե հայերի վերջնական ճակատագիրն ինչ է լինելու, նրանցից ոմանք մերժել են օգտվել այդ արտոնությունից և պնդել են, որ մնում են մահմեդական»⁸⁵: Ասվում է, որ վարքի այդ փոփոխությունը տեղի է ունեցել Ավստրիայի ճնշման տակ:

Ընդհուպ մինչև 1918 թվականը կրոնափոխ եղած հայերը ենթարկվում էին հետաքննության, և վերահսկվում էին նրանց շարժերը: Այդ տարվա ապրիլին բոլոր նահանգներից ու շրջաններից պահանջվել է պատրաստել «աղյուսակային մանրամասն ցուցակ ներկայումս նահանգում/շրջանում ապրող այն հայերի անուններով, ովքեր կրոնափոխ են եղել, կրոնափոխման ամսաթիվն ու ձևը, նրանց ընտանիքների անդամների անունները, ընտանիքի գլխավորի հետ հարաբերության աստիճանը, իրենց կրոնափոխությունից հետո նրանք ինչ գործով են զբաղված եղել, կրոնափոխությունից առաջ ու հետո իրենց հանգամանքներով ու շարժերով ինչպես են նրանք հայտնի դարձել տեղական պաշտոնյաներին»: Շրջաբերականում «խնամ-

83 BOA/DH.SFR, № 61/211, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 6:

84 BOA/DH.SFR, № 61/257, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 9:

85 NA/RG 59, 867.00/786, Կոստանդնուպոլսում Ամերիկայի գլխավոր հյուպատոս Ջ. Բի Ռաֆայի գեկույցը, թվագրված 1916 թ. մարտի 18, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 495:

քով» խորհուրդ էր տրվում այդ տեղեկություններն ուղարկել «պատշաճ ձևով և հնարավոր լամենալմեծ արագությամբ»⁸⁶:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԶԱՍՈՒՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՈՒՃԱՑՈՒՄԸ

Այն հանգամանքը, որ ուժացումը Հայոց ցեղասպանության բաղադրիչ մասն է, հատկապես հստակ է երևում հայ երեխաների հանդեպ վերաբերմունքից: Օսմանյան փաստաթղթերը պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ Միություն և առաջադիմություն կոմիտեի կառավարությունը նպատակ էր դրել համակարգված կերպով և առավել կամ նվազ հաջողությամբ հայ երիտասարդությանը լուծել մահմեդական մեծամասնության մեջ: Աղջիկներն ու փոքր տղաները բռնությամբ մահմեդականացվել են, այնուհետև տեղավորվել մահմեդական որբանոցներում կամ բաշխվել մահմեդական ընտանիքների վրա: Կարևոր է այն հանգամանքը, որ ուժացումը ծրագրված է եղել մինչև տեղահանությունների սկսվելը:

Սա չի նշանակում, թե հայ երեխաներին ոչնչացնելու քաղաքականություն չի տարվել: Տեղահանությունների ամբողջ ընթացքում հազարավոր երիտասարդ աղջիկների ու տղաների են ուղղակիորեն սպանել կամ թողել, որ մեռնեն սովից ու հիվանդությունից⁸⁷: Որոշ

վայրերում մայրերի հետ միասին նրանց խեղդել են Սև ծովի մեջ: Պատերազմից հետո Տրապիզոնի դատավարության չորրորդ նիստի ժամանակ՝ 1919 թ. ապրիլի 3-ին, «մի կնոջ հաստատված ցուցմունքից» պարզվել է, որ «Ջենալ Ազմի բեյը ժանդարմներին կարգադրել էր հավաքել հայ տղամարդկանց և նրանց նավով Քումբալե տանել: Ճանապարհին բոլորին սպանել են՝ ոմանց կրակելով, իսկ ոմանց՝ ծովը նետելով»⁸⁸: «Դեղիրմենդերի շուրջ երեխաներին ու կանանց լցրեցին նավերը, տարան, թափեցին ծովը, խեղդեցին», ասվում է միննոյն մեղադրականում⁸⁹:

Այդպես, լայնորեն տարածված էր հայ կանանց բռնաբարությունը, սեռական բռնությունն ու պոռնկացումը: «Նրանց հետ արեք՝ ինչ ուզում եք», հայտարարում էին շարայուններն ուղեկցող զինվորական հրամանատարները՝ իրենց զինվորներին «լիակատար իրավունք տալով օգտագործելու [հայ] կանանց»⁹⁰: Դեր Ջորում գերմանական բանակի անդամներն ուղղակիորեն խրախուսել են և օգնել հասարակաց տուն բացելուն⁹¹: Անսահմանափակ արտոնությունները տեղահանությունների ողջ ընթացքը՝ սկզբից մինչև վերջ, վերածել էին «լիակատար տիրակալության լաբորատորիայի»⁹²:

Սեռական բռնությունն իշխում էր ամենուր: «Կանանց ու աղջիկների բռնաբարություն[ը] սովորական ու առօրյա փաստեր են», նշել

86 BOA/DH.SFR, №86/45, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Ասկարայի, Այդինի, Բիթլիսի, Բեյրութի, Հալեպի, Հյուդավնդիզարի, Դիյարբեքրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի (Էլազիզ) ու Մուսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բոլուի, Ջանկիլի, Չաթաջայի, Ջոքի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Մենթեշեի, Թեքեի, Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի, Էսքիշեհիբի, Իչելի, Քյութահյայի, Մարաշի, Նիղդեի ու Լեռնալիբանանի գավառներ, թվագրված 1918 թ. ապրիլի 3:

87 Մասնավորապես կանանց ու երեխաների ֆիզիկական քննաշնչման վերաբերյալ կարելի է հետազոտել հետևյալ աղբյուրները. Wolfgang Gust, *Der Völkermord an den Armeniern 1915/16: Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes* (Springe, Germany, Verlag zu Klampen, 2005), 22–25; V. N. Dadrian, “Children as Victims of Genocide: The Armenian Case,” *Journal of Genocide Research* 5, №3 (September 2003), 421–27; Matthias Bjørnlund, “‘A Fate Worse than Dying’: Sexual Violence during the Armenian Genocide,” in *Brutality and Desire: War and Sexuality in Europe’s Twentieth Century*, ed. Dagmar Herzog (New York, Palgrave Macmillan, 2009), 16–58; Donald E. Miller and Lorna Touryan Miller, *Survivors: An Oral History of the Armenian Genocide* (Berkeley, University of California Press, 1993), 94–117; Sarafian, “Absorption of Armenian Women and Children,” 209–21; Katharine

Derderian, “Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915–1917,” *Holocaust and Genocide Studies* 19, №1 (2005), 1–25; Donald E. Miller and Lorna Touryan Miller, “Women and Children of the Armenian Genocide,” in Hovhannissian, *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, 152–72:

88 Alemdar, 1919 թ. ապրիլի 4: Նման հայտարարություններ են արվել դատավարության յոթերորդ նիստի ժամանակ, տես Alemdar, 1919 թ. ապրիլի 9: Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919–1921 թթ. ընթացքում տեղի ունեցած դատավարությունների մեջ ամենանշանակալիցը Տրապիզոնի դատավարությունն էր:

89 Alemdar, 1919 թ. ապրիլի 16:

90 DE/PA-AA/R 14086, Գերմանացի միսիոներ Բլանքի վկայությունը՝ կանցլեր Բեթման-Հոլվեգին դեսպան Վանզենհայմի 1915 թ. մայիսի 27-ի գեկույցին կցված հավելված 3-ը: Գերմանացիների գեկույցներում նման պատմությունների համար տես Gust, *Völkermord an den Armeniern*, 36–39:

91 Odian, *Accursed Years*, 196–97, 209–11.

92 Hannah Arendt, *Essays in Understanding, 1930–1954* (New York, Houghton Mifflin Harcourt, 1994), 304, մեջբերված հետևյալ տեղում. Matthias Bjørnlund, “‘A Fate Worse than Dying,’” 24:

է մի ականատես⁹³: Կիլիկիայում «Հնարավոր չէ նունիսկ մոտավորապես հաշվել կամ նկարագրել երկու սեռերի երեխաների բռնաբարությունները»⁹⁴: Ութ-տաս տարեկան աղջիկներին բռնաբարում, ապա սպանում էին⁹⁵: Տեղահանությունների ու կոտորածների մեջ ընդգրկված գրեթե բոլոր ավագ սպաների կողմից հարեմի ստեղծման, սեռական խրախճանքների կազմակերպման⁹⁶, երիտասարդ աղջիկներին իբրև «նվեր» մատուցելու⁹⁷ և երիտասարդ կանանց ու աղջիկներին էլ ավելի հոռի չարաշահումների դեպքերի մասին կարելի է անվերջ խոսել: Տրապիզոնում Գերմանիայի հյուպատոս Բերգֆելդը, խոսելով զանգվածային բռնաբարությունների և մյուս դաժանությունների մասին, արդարացիորեն ասել է հետևյալը. «Թուրքիայի

93 Bryce and Toynbee, *The Treatment of Armenians*, Doc. №138, 551.

94 NA/RG 59, 867.4016/190, Դաշնակցություն կոմիտեի քալկանյան մասնաճյուղի գեկույցը Բուխարեստից, «The Extermination of the Armenian People in Turkey», թվագրված 1915թ. 22/5 և կցված պետական քարտուղարին ուղղված դեսպան Սիրգենթաուի 1915թ. սեպտեմբերի 17 թվագրված նամակին, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 259:

95 Նույն տեղում, փաստ. №24, 128: Այլ օրինակների համար տես Miller and Miller, *Survivors*, 102–103:

96 Տրապիզոնի Կարմիր մահիկի հիվանդանոց, օրինակ, վերածվել էր «հանույքի տան», որտեղ ընդհանուր նահանգապետ Ջենալ Ազմին և այլ պաշտոնյաներ երիտասարդ աղջիկներին իբրև հարճեր էին գործածում: Այդ հարցը եղել է Տրապիզոնի ռազմական տրիբունալի մարտի 26-ի նիստի օրակարգում, և դատավորը դիմել է մեղադրյալների ու ականատեսների վկայություններին: Տես Yeni Gazete, 1919թ. մարտի 27: Այլ օրինակների համար տես Matthias Bjørnlund, «A Fate Worse than Dying», 23 և ծան. 53:

97 «Ավելի հասուն աղջիկներից լավագույն տեսք ունեցողներին... պահում են տներում այն հրոսակախմբի անդամների հաճույքների համար, որը կարծես թե այստեղ իշխում է... Միություն և առաջադիմություն կոմիտեի մի անդամ այստեղ քաղաքի կենտրոնական մասում մի տան մեջ իր և իր ընկերների գործածության համար տասն ամենազեղեցիկ աղջիկներն ունի», գրել է Տրապիզոնում ամերիկյան հյուպատոսը (NA/RG 59, 867.4016/128, Օսկար Ս. Հայգերի գեկույցը դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915թ. հուլիսի 28, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 180): Հաղորդվել է նաև, որ Թեյ Էրիադի կայանկամը (մարզպետը) գիշերվա համար Բաղդադի երկաթուղու գերմանացի երեք պաշտոնյայի առաջարկել է մեկական հայ աղջիկ (DE/PA-AA/R 14087, Deutsche Hilfsbund für christliches Liebeswerk im Orient-ի [Գերմանիայի օգնություն Արևելքում քրիստոնեական քարեգործական աշխատանքի համար] տնօրեն Ֆրիդրիխ Շուխարդտի նամակը Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1915թ. օգոստոսի 20): Այլ օրինակների համար տես Dadrian, «The Armenian Genocide», 83–84:

կառավարությունը բնավ չէր ցավում՝ տեսնելով հայերի դեմ հարձակումները, որոնք հանգեցրին նրանց գրեթե լիակատար ոչնչացմանը արևելյան Անատոլիայում, և այսօր ևս նույն կերպ է նայում երևույթներին»⁹⁸:

Բռնաբարությունների համակարգված կազմակերպման հարցը քննարկվել է 1919–1922թթ. Ստամբուլի դատավարության ընթացքում և ընդգծվել է 1919թ. մայիսի 22-ին Տրապիզոնի դատավարության դատավճռի ընթերցման ժամանակ⁹⁹: Բռնաբարությունը պատճառ է դարձել նաև մահվան դատավճռի, որը կայացվել է 1920թ. օգոստոսին Բայբուրտի մարզպետ (kaymakam) Նուսրեթի գործով¹⁰⁰: Էվերեքի մարզպետ Սալիհ Ջեքին մեղադրվել է խոշտանգումների, կաշառակերության ու բռնաբարության մեջ¹⁰¹: Ամփոփելով ասեմք, որ սեռականացված այդ ամբողջ դաժանության սցենարակապ ու քաղաքական կերտվածքը և այն հարցը, թե արդյո՞ք դա կազմակերպված էր կենտրոնական կառավարության կողմից իբրև Հայոց ցեղասպանության կառուցվածքային բաղադրիչ՝ կարևոր խնդիրներ են հետագա հետազոտության համար:

Այստեղ, առանց կանգ առնելու ֆիզիկական բնաջնջման կողմի վրա, ինչը բազմաթիվ վերապրածների պատմությունների ու ուսումնասիրությունների նյութ է, ես կփորձեմ օսմանյան փաստաթղթերի հիման վրա ցույց տալ, որ տեղահանությունների ժամանակաշրջանում ուծացումը ցեղասպանության բաղադրիչ տարր էր՝ ճիշտ նույնքան, որքան և ֆիզիկական ոչնչացումը: Զանգվածային բռնությունն իր ծայրահեղ ձևով՝ ցեղասպանությամբ, խիստ բարդ, բազմաշերտ գործընթաց է, որը չի կարող կրճատվել-հավասարեցվել իր սուկ մեկ բաղադրիչին: Հետևաբար, ուծացումն ու բնաջնջման մյուս ձևերը պետք է դիտվեն միասնաբար:

98 DE/PA-AA/R 14104, Տրապիզոնում հյուպատոս Բերգֆելդի գեկույցը կանցլեր Հերթլինգին, թվագրված 1918թ. սեպտեմբերի 1:

99 Akçam and Dadrian, «Tehcir ve Taktik», 706.

100 Նույն տեղում, 667–68:

101 Կեսարիայի տեղահանությունների ռճիրների հետաքննության արդյունքների համար տես Çalika, Rifat Çalika'nın Anıları, 33–35: Սալիհ Ջեքին հետազայում իբրև կայանկամ ուղարկվել է Դեր Ջոր և այստեղ ջարդեր կազմակերպել: Այդ ոճրի համար Ստամբուլի ռազմական տրիբունալը նրան հետակա կարգով դատապարտել է մահվան: Դատավարության որոշման համար տես Akçam and Dadrian, «Tehcir ve Taktik», 715–716:

Երեխաներին ու ավելի հասուն աղջիկներին հավաքելն ու նրանց թուրքերի տների վրա բաշխելն իրականացվել են պաշտոնական ու անպաշտոն միջոցներով: Երեխաները «կամավոր կերպով» հանձնվում էին մահմեդական ընտանիքներին կամ «գնվում» ճանապարհների վրա, առևանգվում, ինչի վրա պաշտոնյաները փակում էին իրենց աչքերը, կամ խլվում ու վաճառվում էին ստրկության¹⁰²: Շարասյուններն ուղեկցող ժանդարմների համար հայ աղջիկների ու կանանց առքուվաճառքը (trafficking) եկամտի ամենակարևոր աղբյուրներից մեկն էր: Բազմաթիվ հուշերի մեջ ասվում է, որ «ժանդարմների թույլտվությամբ» տեղի մահմեդականները գալիս էին կայանման վայրերը: «Gavurlar satılık çocuklarınız var mı?» (Գյավուրներ, երեխաներ ունե՞ք վաճառելու»), գոռում էին նրանք: «Մենք ցանկանում ենք նրանց գնել»¹⁰³: Կիլիկիայում «աղջիկներն ու կանայք վաճառվում են՝ յուրաքանչյուրը վաթսուն պիաստրով»¹⁰⁴: «Տեղահանվածներին վաճառում էին աճուրդով՝ իբրև սեռական ստրուկներ, վաճառքի էին հանվում Դամասկոսում, որպեսզի գնորդներն ավելի լավ դատեն նրանց արժեքը... հայ աղջիկներին ու կանանց մերկացրած էին դնում աճուրդի, և մեծաքանակ կերպով իրացնում՝ երբեմն երկու, երեք ու չորս ֆրանկով: Գնել թույլատրվում էր միայն մահմեդականներին»¹⁰⁵:

Արաբական ցեղերի մեջ «հայ կանայք վաճառվում էին հին կահույքի կտորների նման, ցածր գներով, որ տատանվում էին մեկից տասը լիրայի միջև կամ մեկից հինգ ոչխարի»¹⁰⁶: Մոսուլում Գերմանիայի դեսպան Հոլշտայնն այցելել է այնպիսի շրջաններ, ուր մեկ կնոջ առավելագույն գինը եղել է 5 պիաստր (95 փֆենիգ*)¹⁰⁷: Խար-

քերդում ամերիկյան հյուպատոս Լեզլի Ա. Դեվիսը Խարքերդի (Մամուրեթյուլագիզ) սահանգով անցնելիս դիտել է տեղահանվածների ճամբարը. «Երբ մեկն անցնում է ճամբարով, մայրերն առաջարկում են իրենց երեխաներին և աղաչում նրանց վերցնել: Թուրքերն, իրապես, իրենց ընտրությամբ վերցնում էին այդ երեխաներին ու աղջիկներին՝ իբրև ստրուկներ կամ ավելի վատ: Թուրքերն իրականում նայսիսկ իրենց բժիշկներն ունեին այդտեղ, որպեսզի գննեն ավելի գեղեցիկ աղջիկներին և այդպիսով ապահովեն լավագույններին»¹⁰⁸:

Երեխաների ընտրությունն ու բաշխումը երբեմն տեղի էին ունենում հենց կառավարության շենքերի առջև: Ականատեսների վկայությամբ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը 1915 թ. օգոստոսի 15-ին պատմել է, որ

երբ տեղահանվածները... եկան... քարավան[ը] կանգ առավ կառավարության շենքի առջև, բոլոր տղաներին ու աղջիկներին խլեցին իրենց մայրերից և սենյակներ տարան. քարավանին ստիպեցին շարունակել ճամփան: Շրջակա գյուղերում հայտարարություններ տարածվեցին բոլորի համար, որ գան և այդ երեխաների միջից ընտրություն կատարեն... Այսպես, հենց որ կանանց ու երեխաների քարավան էր գալիս քաղաք կամ ավան, նրանց ցուցադրում էին կառավարության շենքի առջև, որպեսզի տեղի մահմեդականները կարողանան իրենց ընտրությունը կատարել¹⁰⁹:

Ի լրումն վերը նկարագրված ընթացակարգի, կառավարական պաշտոնյաները փոքրիկ հայ երեխաներին հավաքում էին որոշակի կենտրոններում և, այնտեղ բռնությամբ մահմեդականացնելուց հետո, տեղավորում կամ որբանոցներում, կամ մահմեդականների ընտանիքներում:

102 Այդ հարցով մի քանի օրինակների համար տես Miller and Miller, *Survivors*, 100–103; Richard G. Hovannisian, “Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide” նրա *The Armenian Genocide: History, Politics, Ethics* գրքում, 173–208:

103 Abraham H. Hartunian, *Neither to Laugh nor to Weep: An Odyssey of Faith; A Memoir of the Armenian Genocide*, 3rd ed. (Belmont, MA, NAASR, 1999), 102.

104 NA/RG 59, 867.4016/190, Դաշնակցություն կոմիտե, “The Extermination of the Armenian People,” 1915 թ. սեպտեմբերի 22/5:

105 Katharine Derderian, “Common Fate, Different Experience,” 11–12.

106 Faiz el-Ghusein, *Martyred Armenia*, 33–34.

107 DE/PA-AA/R 14090, Հայեպոստի հյուպատոս Ռյուպերի դեսպան Վոլֆ-Մաթերնիխին ուղարկած գեկույցի 2-րդ հավելվածը՝ Հոլշտայնի 1915 թ. նոյեմբերի 15-ի նամակը, թվագրված 1916 թ. հունվարի 3:

* Գերմանական մանրադրամ:

108 NA/RG 59, 867.4016/127, Մամուրեթ-ուլ-Ազիզում (Խարքերդ) հյուպատոս Լեզլի Ա. Դեվիսի գեկույցը Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. հուլիսի 11, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 172:

109 Zaven Der Yeghiayan, *My Patriarchal Memoirs* (Barrington, RI, Mayreni, 2002), 88.

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՅԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՈՒՏԱՑՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Ստամբուլի վարչապետական արխիվը լի է փաստաթղթերով, որոնք ցույց են տալիս, որ բռնի ուժացումը եղել է կենտրոնի կողմից ծրագրված պետական քաղաքականություն: Արխիվի աղբյուրները հաստատում են, որ քրիստոնյա տղաներին ու աղջիկներին խլում էին իրենց ընտանիքներից ու մեծացնում մահեմդական սովորույթներով ու ավանդույթներով: Նրանց տարածում էին մահմեդական այն գյուղերում, որտեղ հայեր չկային, ստիպում էին ամուսնանալ մահմեդականների հետ և կամ տեղավորում որբանոցներում:

Հայ երեխաների և փոքր-ինչ ավելի հասուն աղջիկների նկատմամբ քաղաքականության հրահանգները շրջաններ են հեռագրվել 1915 թ. հունիսին և հուլիսի սկզբին՝ ճիշտ այն ժամանակ, երբ սկսել էին ծավալվել զանգվածային տեղահանությունները: Այլ կերպ ասած, բռնի ուժացումը պատահական հետևանք կամ չծրագրված արդյունք չէր: Ճիշտ հակառակը, այն նախորդել է տեղահանություններին թե՛ իբրև գաղափար և թե՛ իբրև ծրագիր: Օսմանյան արխիվային փաստաթղթերում ուժացման քաղաքականությունը հստակորեն նկարագրված է իբրև նախապես «նկատի առնված» կամ «քննարկված» (düşünülmüş):

Նման առաջին հեռագիրը նահանգներ է ուղարկվել հունիսի վերջին (ճշգրիտ լինելու համար՝ 1915 թ. հունիսի 26-ին): Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այն ուղարկվել է ոչ թե Ներքին գործերի նախարարության կողմից, որը սովորաբար տեղահանությունների պատասխանատուն էր, այլ Կրթության նախարարության կողմից: Սա ցույց է տալիս, որ երեխաների և ավելի հասուն աղջիկների հարցը քննարկվել է կառավարությունում, որոշում է կայացվել, և միջոցառումների իրականացումը հանձնարարվել է Կրթության նախարարությանը: Ուղիղ Կրթության նախարարությունից ուղարկված «գաղտնի» և «[վերծանել] Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի [վարչության կողմ]» մակագրություններով հեռագրերը պարունակում էին հետևյալ հրահանգները.

Քանի որ քննարկվել է տեղափոխված կամ ինչ-որ ձևով տեղահանված հայերի տասը տարեկանից փոքր երեխաների կրթության ու դաստիարակության [միտքը]՝ կամ որբանոց հիմնելով,

կամ նրանց հավաքելով արդեն գոյություն ունեցող որբանոցում, [պահանջվում է] մեծ արագությամբ զեկուցել, թե քանի [նման որբ] երեխա կա նահանգում, և կամ արդյոք գոյություն ունեցող հարմար շենք՝ որբանոց հիմնելու համար¹¹⁰:

Մոտ երկու շաբաթ անց մեկ այլ հեռագիր է ուղարկվել բազմաթիվ նահանգներ ու գավառներ, այս անգամ՝ Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ից.


Այն երեխաների խնամքի ու դաստիարակության նպատակով [bakım ve terbiye], որոնք հայերի տեղափոխության ու տեղահանության ընթացքում հավանաբար կթողվեն առանց խնամակալի [իմա՝ կորբանան], նպատակահարմար է համարվում նրանց [երեխաների] բաժանումը երևելի ու համբավվող մարդկանց այն գյուղերում ու մարզերում, որտեղ հայեր ու օտարներ չեն գտնվում, և ամսական երեսուն դուրուշի վճարումներ ներգաղթողների հատուկ հատկացումներից այն երեխաների համար, ովքեր կմնան բաշխումից հետո, որը կտրվի նրանց, ովքեր կեցության միջոցներ չունեն: Շրջաբերականով ծանուցվել է, որ սա հաղորդվի նրանց, ում անհրաժեշտ է, և իրականացվի պահանջվածի պես, և ծածկագրված այս հեռագիրը ում որ հարկն է ցույց տալուց հետո այն վերացվի¹¹¹:

Սա ուժացմանն ուղղակիորեն առնչվող երրորդ հեռագիրն է, որը պահանջվում էր վերացնել: Թե ինչն էր դա ցանկալի, դժվար է հասկանալ, և հարցը բաց է մեկնաբանությունների համար:

Խիստ կարևոր է «այն երեխաների... որ հավանաբար կորբանան» արտահայտությունը: Հստակ է, որ նախապես հայտնի է եղել և հաշվի է առնվել տեղահանությունների նման արդյունքը. այլ կերպ

110 BOA/DH.ŞFR, № 54/150, Կրթության նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքի, Ադանայի, Հալեայի, Տրապիզոնի, Էրզրումի, Սվազի, Բիթլիսի, Մամուրեթյուլազիզի ու Վանի նահանգներ և Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 26:

111 BOA/DH.ŞFR, № 54/411, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեայի, Դիյարբեքի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Տրապիզոնի, Սվազի, Հյուսիսային Բուրսայի, Էյիթնեի ու Մոսուլի նահանգներ և Իզմիրի, Ջանիկի, Կեսաբիայի, Մարաշի, (Դեր) Ջորի ու Ուրֆայի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 12:



Նկար 9.2. Օսմանյան 54/411 փաստաթուղթը. Ներքին գործերի նախարարության 1915 թ. հուլիսի 12-ի հեռագիրը, որով հրամայվում է, որ հայ երեխաները բաժանվեն մահմեդական ընտանիքներին՝ «խնամքի ու դաստիարակության [bakim ve terbiye] նպատակով», և որ «ծածկագրված հեռագիրը ում անհրաժեշտ է ցույց տալուց հետո այն ոչնչացնել»:

ասած՝ այն եղել է ծրագրված: Թերևս, հեռագրերի ոչնչացումը հետապնդել է հայկական ընտանիքները ջարդելու պաշտոնական քաղաքականությունը կոծկելու նպատակը: Անկախ այն հանգամանքից, թե ինչպես էր կազմակերպվելու «երեխաների խնամքն ու դաստիարակությունը», Ստամբուլը նրանց ուժացնելու մտադրություն ուներ:

Ավելին, քրտնաջան աշխատանք էր տարվում՝ մահմեդական ընտանիքներին համոզելու համար, որ որդեգրեն հայ մանուկներին և ընդունեն հայ հարսնացուներին: «Ուժացումը խրախուսելու ծրագրի» դրդապատճառը տնտեսական էր. այն ընտանիքները, որոնք

հայ երիտասարդներ էին վերցրել, պետք է ճանաչվեին իբրև նրանց ժառանգորդներ: 1915 թ. օգոստոսի 1-ին Լքված գույքի հանձնախմբի բոլոր նախագահներին ուղարկված հեռագրում քաջատրվում էր. «Կրթելու ու դաստիարակելու նպատակի համար վստահության արժանի մարդկանց մոտ թողնելիք երեխաների, ինչպես նաև կրոնավորականների ու ամուսնացողների անձնական ունեցվածքը կպահպանվի և, եթե նրանց կտակարարները մահացել են, կտրվեն նրանց ժառանգական մասնաբաժինները»¹¹²:

Այս հրամանի կարևորությունն ավելի լավ է ընկալվում համառոտի մեջ: Համաձայն ամերիկյան միսիոներ Հենրի Ռիգսի, Խարբերդ նահանգի (Մամուրեթյուլազիզ) նահանգապետ-կառավարիչը «առանց ամաչելու ասաց... «կառավարությունը քսոք ուղարկվող կլուրաքանցյուր մարդու համարում է մեռած»»¹¹³: Հայերի ունեցվածքի նախշտակումը մրցարշավի մեկնարկային կրակոցն էր: Չնայած Լքված գույքի հանձնախմբի պաշտոնյաներն առաջինները եղան, տեղական վարչակազմի անդամներն ու երևելիները առաջ էին ընկնում՝ որդեգրելով հայ նշանավոր ընտանիքների երեխաներին կամ բռնի կերպով ամուսնանալով ավելի տարիքով աղջիկների և այն կանանց հետ, որոնց ամուսինները տեղահանվել էին: Խարբերդի աղջկա ժառանգությանը տեղ կանգնելու նպատակով նրան բռնությամբ թուրք երևելու հարեմ մտցնելու կամ էրզրումի շարայունից նարուստ կանանց բռնի ամուսնության փաստերը այս կողպուտի օրինակներից մի քանիսն են միայն¹¹⁴:

112 BOA/DH.ŞFR, № 54-A/382, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ Վիճակագրության բաժանմունքի ծածկագրված հեռագիրը Ադանայի, Ասկարայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիգարի, Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Մամուրեթյուլազիզի, Մուսուլի, Տրապիզոնի ու Վանի նահանգներ և Իզմիրի, Ուրֆայի, Էսքիշեհիրի, Ջորի, Ջանիկի, Կեսարիայի, Մարաշի, Քարեսիի, Քալե-ի Սուլթանիյեի, Նիղդեի ու Կարահիսար-ի Սահիբի գավառներ և Ադանայի, Հալեպի, Մարաշի, Մամուրեթյուլազիզի, Դիյարբեքիրի, Տրապիզոնի, Սվազի, Ջանիկի ու Իզմիրի Լքված գույքի հանձնախմբի նախագահություններին, թվագրված 1915 թ. օգոստոսի 11:

113 Henry H. Riggs, Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoot, 1915-1917 (Ann Arbor, MI, Gomidas Institute, 1997), 93.

114 Մեջբերված է հետևյալ տեղում. Hans-Lukas Kieser, Der Verpasste Friede: Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Turkey, 1939-1938 (Zurich, Chronos Verlag, 2000), 426-27:

Հայ երեխաներին «խնամելու ու դաստիարակելու» ծրագրում առաջինը պետական դպրոցներում նրանց ուսուցումն էր: Կրթության նախարարի 1915 թ. հունիսի 26-ի ուղերձից երեք օր առաջ ու հինգ օր հետո Ներքին գործերի նախարարությունը, ինչպես արդեն տեսանք, ուղարկել է վերապրող հայերի տեղավորման քաղաքականության վերաբերյալ հրահանգներ: Նախարարությունը կարգադրել է, որ «[հայ] երեխաներից պահանջվի շարունակել պետական դպրոցներում»¹¹⁵, և «այն տարածքներում, որոնցում տեղավորվելու են հայերը, բացարձակապես ոչ մի թույլություն չտրվի հայկական դպրոցներ հիմնելու, և բոլոր հայ երիտասարդները պետք է կրթվեն պետական դպրոցներում»¹¹⁶:

Հետագա հրահանգներում հստակեցվել է «խնամք ու դաստիարակություն» բառերի նշանակությունը: Հայ երիտասարդները պետք է մեծանային մահմեդական կրոնի կիրառմամբ ու սովորույթներով այդ նպատակով, բռնի մահմեդականացումն ու բռնի ամուսնությունները սահմանվել են իբրև «անհրաժեշտություն»: 1915 թ. դեկտեմբերի 30-ին Նիդդեի գավառ ուղարկված իր հեռագրում Թալեաթ փաշան նշել է. «Անհրաժեշտ է, որ օգնություն տրամադրվի նրանց, ովքեր մնացել են առանց խնամակալների կամ [ողջ մնացած] ազգականների, որ երեխաները տեղավորվեն որբանոցներում ու մահմեդական գյուղերում, որոնցում հայեր կամ օտարերկրացիներ չկան, և որ երիտասարդ կանայք ու աղջիկներն ամուսնացվեն մահմեդականների հետ, որպեսզի մեծանան իսլամական սկզբունքներին համաձայն»¹¹⁷:

Պաշտոնյաները գիտակցել են, որ այդ միջոցառումներն իրենցից ներկայացնում են բռնի ուժացում: Բացեիքաց գործածվում էին temsil և temessil բառերը, որոնք նշանակում էին ուժացում: Այսպես, 1916 թ. ապրիլի 20-ին Ներքին գործերի նախարարությունը Կաստամունուի նահանգին բացեիքաց հրահանգել է, որ «հայկական այն ընտանիք-

ներին, որոնց տղամարդիկ դուրս են ուղարկված, պետք է ստիպել ուժանալ [temessil] այն տարածքներում, որոնցում գտնվում են իրենց գրեման ու վերաբնակեցման հետևանքով՝ այն գյուղերում ու քաղաքներում, որոնցում հայեր կամ օտարերկրացիներ չկան»¹¹⁸: Հեռագրում ուղղակիորեն հայտարարվում է, որ միայն տղամարդիկ են տեղահանվելու, և ցույց է տրվում, որ ընտանեկան կապերի վերացումը պետական քաղաքականություն է եղել:

Երեխաներին ուժացնելու համար ընտրվել էին որոշակի շրջաններ: 1915 թ. փետրվարի 15-ին Սվազի նահանգ ուղարկված մի հեռագրում նշվում է, որ ընտրվել են հայ որբեր ու ողջ մնացած ազգականներ չունեցող երեխաներ: «Հարմար չէ, որ ներկայումս Հալեպում գտնվող հայ որբերն այնտեղ մնան. նրանց հարկավոր է հետ ուղարկել և մեկտեղ հավաքել այդտեղ [ձեր նահանգում]», հրահանգվել է պաշտոնյաներին: «Նրանց դաստիարակության ու ուժացման համար Սվազը շատ հարմար միջավայր է [terbiye ve temsillerine]: Ձեզ հրամայվում է կապվել Հալեպի [պաշտոնյաների] հետ, որպեսզի կարողանաք դրանց [որբերին] հավաքել այդտեղ ու տեղավորել որբանոցներում»¹¹⁹: Հաջորդ շաբաթ (փետրվարի 22-ին) Սվազ ուղարկված մեկ այլ հեռագրում նշվում է, որ «Հալեպում գրեթե 500 որբ կա», և կարգադրվում, որ «հարկ եղած ծախսերը կատարվեն ներգաղթողների համար [նախատեսված] հատկացումներից»՝ հիմնված «այնտեղ առկա թվերի վրա և նրանց կրթության ու ուժացման համար»¹²⁰: Քոնյան ևս մեկ նման վայր էր: 1916 թ. սկզբին Մոսուլի հյուպատոս Հոֆմանը պետական մի պաշտոնյայից, որը պատասխանատու էր քաղաքում հայերի տեղավորման համար, տեղեկացել է, որ շուտով որբ երեխաներին ուղարկելու էին Քոնյայում հիմնված մի որբանոց¹²¹:

Համաձայն Դեր Ջորիի հետ հաղորդագրությունների փոխանակման՝ միայն որոշակի շրջաններ էին սահմանված երեխաների ուժաց-

115 BOA/DH.ŞFR, № 54/122, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ և (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 23:

116 BOA/DH.ŞFR, № 54/261, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դամասկոսի, Հալեպի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 1:

117 BOA/DH.ŞFR, № 59/150, Թալեաթ փաշայի ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 30:

118 BOA/DH.ŞFR, № 63/60, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Կաստամունուի նահանգ, թվագրված 1916 թ. ապրիլի 20:

119 BOA/DH.ŞFR, № 61/20, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 15:

120 BOA/DH.ŞFR, № 61/79, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 22:

121 DE/PA-AA/R 14093, Մոսուլում հյուպատոս Հոֆմանի գեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպանություն, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 5:

ման համար, և տեղական պաշտոնյաներին չէր թույլատրվում կամայական կերպով նրանց որևէ այլ տեղ ուղարկել: Ներքին գործերի նախարարությունը, որը Դեր Ջորի գավառային վարչակազմին 1915 թ. հոկտեմբերի 27-ին հարցրել է, թե ինչ է արվել հայ որբերի համար, ստացել է հետևյալ պատասխանը. «Քանի որ տեղահանությունները դեռևս ավարտի չեն բերվել, և տեղավորման ու կերակրման ոլորտները լիովին ապահովված չեն, մինչև հիմա ոչինչ հնարավոր չի եղել անել առանց խնամողների մնացած հայ երեխաների կրթության ու դաստիարակության նպատակով»¹²²: Ի պատասխան, «քանի որ անմայր ու անհայր երեխաների դեպի հյուսիս տեղահանումը վասակար կլինի նրանց դաստիարակության ու ուժացման համար [terbiye ve temsilleri], Ներքին գործերի նախարարությունը նոյեմբերի 3-ին պահանջել է «նրանց չընդգրկել ընդհանուր տեղահանության մեջ [և] արագ հաղորդել նրանց թվերը՝ պահպանության ու գաղթականների համար հատկացումներից նրանց կերակրելու ու պահելու հետ միասին»¹²³: Երկու օր անց կրկին ներկայացվել է «առանց խնամողների մնացած հայ երեխաների մոտավոր թվի հաղորդման» պահանջը¹²⁴:

Նորարաց որբանոցներում երեխաների բաշխումը կազմակերպվել է կամ ուղղակի տեղերում, կամ Ստամբուլի հետ համակարգմամբ: 1915 թ. նոյեմբերին Դամասկոսի ու Հալեպի նահանգներ ուղարկված մի հեռագրում պահանջվում է, որ «եթե... նահանգում կան երեխաներ, որ ոչ ոք չունեն, կրթության ու դաստիարակության համար նրանց ուղարկել Ստամբուլ»¹²⁵: 1917 թ. սկզբին Երրորդ բանակի հրամանատարությանը հարցում է արվել, թե Սամսունից տեղահանված հայերի երեխաները բաշխվել են գոյություն ունեցող որբանոցների վրա, և

122 BOA/DH.SFR, № 503/50, Ծածկագրված հեռագիր Դեր Ջորի գավառից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 31:

123 BOA/DH.SFR, № 60/230, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Դեր Ջորի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 3:

124 BOA/DH.SFR, № 59/214, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Դեր Ջորի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 5:

125 BOA/DH.SFR, № 58/34, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դամասկոսի ու Հալեպի նահանգներ և Մեդիսայի խնամակալություն, թվագրված 1915 թ. նոյեմբերի 16:

թե միջոցներ ձեռնարկվել են արդյոք նրանց դաստիարակության ուղղությամբ¹²⁶:

Բացի այդ, կարևոր է նաև հասկանալ, թե երեխաները որբանոցներում արդյոք տեղավորվում էին ըստ տարիքային խմբերի: Պահանջվել էր մահմեդական ընտանիքների վրա բաժանել շատ փոքր երեխաներին, իսկ մյուսներին տեղավորել կացարաններում: 1915 թ. օգոստոսի 25-ին Սվազ ուղարկված մի հեռագրում նշվում է, որ «ինչպես հաղորդել ենք ավելի վաղ և հատուկ շեշտել՝ անհրաժեշտ է միայնակ հայ երեխաներին բաշխել մահմեդական գյուղերի վրա: Որբերի կացարաններում նրանց տեղավորումը հետո պարտադրում է շատ անհարմարություններ»¹²⁷: Մինևույն ժամանակամիջոցում (1915 թ. օգոստոսի 30-ին) Անկարա ուղարկված մեկ այլ հեռագրում ասվում է. «Ճիշտ չէ, որ հայ երեխաները գտնվեն պաշտոնական հաստատություններում», և հրահանգվում, որ «մնացածները բաշխվեն մահմեդական գյուղերի վրա»¹²⁸: Նահանգներից հաճախակի պահանջվում էր «արագ հաղորդել, թե մինչև այժմ ինչ է արվել առանց խնամողների մնացած հայ երեխաների կրթության ու դաստիարակության համար, և առաջատար երևելիներին բաժանվածների ու այսօր ներկաների թվերը»¹²⁹:

Հայկական ընտանիքների միտումնավոր կործանման վերաբերյալ ամենահամապարփակ ու հանգամանալից փաստաթուղթը Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի կողմից 1916 թ. ապրիլի 30-ին գրեթե բոլոր նահանգներն ուղարկված հեռագիրն է.

1. Առանց խնամակալների այն ընտանիքների, որոնց տղամարդիկ տեղահանված են կամ բանակում, ցրված կերպով բաշխումը

126 BOA/DH.SFR, № 77/5, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Երրորդ բանակի հրամանատարին, թվագրված 1917 թ. հունիսի 2:

127 BOA/DH.SFR, № 55/206, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

128 BOA/DH.SFR, № 55/323, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 30:

129 BOA/DH.SFR, № 55/206, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

գյուղերի ու քաղաքների վրա, որոնցում հայեր կամ օտարեկրացիներ չկան, և նրանց պահպանման ապահովումը ներգաղթյալների հատկացումներից, նրանց ծանոթացումը տեղական սովորույթներին, 2. երիտասարդ ու այրի կանանց անուսնության տալը, 3. մինչև տասներկու տարեկան երեխաների բաշխումը տեղական որբանոցներում ու կացարաններում, 4. եթե որբանոցների թիվը բավարար չլինի, տեղական սովորույթների համաձայն դաստիարակության ու ուժացման նպատակով [terbiye ve temsillerine] նրանց [երեխաների] հանձնումը մահմեդականներին, և 5. եթե չգտնվեն նրանց մեծացնող մահմեդականներ, նրանց բաշխումը գյուղերի վրա՝ պայմանով, որ ներգաղթյալների հատկացումներից երեսուն դուրուշ տրվի պահպանման ծախսերի համար:

Այդ ծրագրի մեջ էին մտնում «նախորդ [նշված] կարգով կատարվելիք գործողությունների ու միջոցառումների [հետևանքով առաջացած] թվերի ու քանակների վրա հիմնված» «քայլ առ քայլ» գեկույցները¹³⁰:

Ողջ մնացած կանայք ու երեխաները չպետք է տեղավորվեն քաղաքային շրջաններում, քանի որ դա կարող էր խանգարել նրանց ուժացմանը: Հալեպի նահանգապետ Բեքիր Սամիին 1916 թ. օգոստոսի 9-ին նախագրուշացրել են, որ «անընդունելի է, որ տղամարդ անդամներից զրկված հայ կանայք ու ընտանիքները տեղավորվեն մեծ քաղաքներում», և նրան հիշեցրել են, որ «այն տղաներն ու աղջիկները, որոնք դեռևս երիտասարդ են և ազգականներից զուրկ, կարող են փոքր թվերով և ցրված կերպով տեղավորվել մահմեդական գյուղերում»¹³¹:

Այս հարցում բացարձակ հետևողականություն պահպանելու հանգամանքը երևում է հետևյալ հեռագրերից: 1916 թ. փետրվարի 16-

130 BOA/DH.ŞFR, № 63/142, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրումի, Էդիրնեի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Սվազի, Դիյարբեքիրի, Մամուրեթյուլազիզի (Էլազիզ), Քոնյայի, Կաստամունուի ու Տրապիզոնի նահանգներ և Իզմիրի, Ջանիկի, Էսքիշեհիրի, Կարահիսար-ի Սահիրի, Մարաշի, Ուրֆայի, Կեսարիայի ու Նիդդեի գավառներ, թվագրված 1916 թ. ապրիլի 30:

131 BOA/DH.ŞFR, № 54-A/325, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգապետ Բեքիր Սամի րեյին, թվագրված 1916 թ. օգոստոսի 9:

ին Դեր Ջորի գավառին ասվել է. «Բացարձակապես անընդունելի է, որ որբացած այն հայ աղջիկներին, որոնց մեծացնելու նպատակով վերցրել են որոշակի պաշտոնյաներ, [թույլատրվի] ճամփորդել Ստամբուլ»¹³²: Իսկ 1916 թ. մայիսի 13-ին Նիդդե ուղարկված հրահանգում ասվել է. «Ճիշտ չէ, որ երեխաները պահվեն [քաղաքի] կենտրոնում: Այլ վայրերի վրա բաշխումն ավելի պատշաճ է: [Պահանջվում է] բաշխումը կատարել համապատասխանաբար»¹³³:

Որոշ պաշտոնյաներ հարցրել են, թե իրենց վերցրած երեխաներին կարճ են արդյոք բերել Ստամբուլ: Դեր Ջորից ուղարկված մի հեռագրում նշվում է, որ «որոշ պաշտոնյաներ թույլտվություն են խնդրում առանց ընտանիքի ու բարեկամների մնացած հայ աղջիկներին մեծացնել ցանկանալով նրանց կամ իրենց գնացած վայրերը, կամ Ստամբուլ տանելու վերաբերյալ», և խնդրել են տեղեկացնել, թե ինչ պետք է արվի¹³⁴: Նման խնդրանքներն ընդհանրապես մերժվել են. «Խնդրո առարկա երեխաներին Ստամբուլ բերելը հարմար չէ: [Պետք է] նախաձեռնել վերոնշյալ նորածիններին գավառի ու մոտակա նահանգների որբանոցներում տեղավորումը»¹³⁵: Թեև մեկ այլ հեռագրում կարդում ենք, որ «որոշ պաշտոնյաների կողմից մեծացնելու համար վերցված առանց ընտանիքի ու բարեկամների հայ աղջիկներին Ստամբուլ ուղարկելը բացարձակապես անթույլատրելի է», «առարկություն չկա նրանց այլ նահանգներ տանելու հարցում»¹³⁶:

Այն հայ կանանց Ստամբուլ ժամանումը, ովքեր մահմեդական դառնալուց հետո ամուսնացել էին զինվորների հետ, նույնպես ցանկալի չէր: Այդպիսի կանանց թույլատրվել է այլ քաղաքներ ճամփորդել միայն այնպիսի փաստաթղթեր ունենալու դեպքում, որոնք կապացուցեին, որ իրենց ամուսինները սպաներ են. «Ի պատասխան, Պա-

132 BOA/DH.ŞFR, № 61/23, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 16:

133 BOA/DH.ŞFR, № 64/8, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 13:

134 BOA/DH.ŞFR, № 509/48, Ծածկագրված հեռագիր Դեր Ջորից Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 13:

135 BOA/DH.ŞFR, № 64/82, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 20:

136 BOA/DH.ŞFR, № 61/23, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դեր Ջորի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 16:

տերազմի նախարարությունը հաղորդել է, որ երբ հայ կանայք, ովքեր մահմեդականություն ընդունելուց հետո ամուսնացել են սպաների հետ, ձեռքի տակ ունենան բանակային կորպուսի հրամանատարության տված վավեր փաստաթուղթ սպա ամուսին ունենալու մասին, խոչընդոտ չպետք է լինի Ստամբուլից բացի այլ վայրեր նրանց մեկնելու հարցում»¹³⁷:

Չարտոնված անձանց Ստամբուլ բերելու դեպքում հետաքննություն էր հարուցվում: Թե որքան լուրջ է ընդունվել այս հարցը, կարելի է հասկանալ 1916 թ. հոկտեմբերի 22-ին մայր Հայրի բեյի դեմ հարուցված հետաքննությունից. մայրը Հալեպից մի քանի հայ աղջիկ էր բերել Ստամբուլ: Էսվերի հետ «ծայրագույնս գաղտնի ու հրատապ» թղթակցությամբ Թալեաթը կոչ է արել սպային խստիվ պատժել¹³⁸: Պատճառն այն էր, որ հայերին Ստամբուլ բերելը օգնում էր նրանց փախչել և, վերջին հաշվով՝ փրկվել ցեղասպանությունից: Նրանց Ստամբուլ գալն արգելելու իրականնպատակը այդ հնարավորությունը կասեցնելն էր:

Երեխաների ուծացման պետական քաղաքականությանը կարելի է հետևել Գերմանիայի ու Ամերիկայի հյուպատոսական փաստաթղթերով: Տարածաշրջանից ուղարկված զեկույցները ցույց են տալիս, որ հայկական ընտանիքներին թույլատրվել է իրենց երեխաներին թողնել կառավարության ընտրած վայրերում: Աղբյուրները նույնն են ասում նաև այն երեխաների տարիքային խմբերի մասին, որոնք պետք է ուսում ու դաստիարակություն ստանային որբանոցներում: 1915 թ. սկզբներին ամերիկյան հյուպատոսը Տրապիզոնից գրել է. «Եթե ծնողները ցանկանում էին, երեխաներին թողնում էին, և նրանց տեղավորում էին քաղաքի տարբեր մասերի մեծ տներում: Մոտավորապես երեք հազար նման երեխա կա այդ տներում, որոնք թուրքերը «որբանոց» են կոչում: Ընդունվում են մինչև 15 տարեկան դարձած աղջիկներն ու մինչև 10 տարեկան դարձած տղաները. այդ

137 BOA/DH/\$FR, № 81/151, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնսյայի նահանգ, թվագրված 1917 թ. նոյեմբերի 14: Համանման մի հեռագիր Մամուրեթյուլազիզի նահանգ է ուղարկվել 1917 թ. նոյեմբերի 12-ին (BOA/DH/\$FR, № 82/87):

138 BOA/DH/EUM, 2. Şube, № 8/61, ներքին գործերի նախարար Թալեթ բեյի «հույժ գաղտնի և հրատապ» մակագրությամբ գրությունը գործող գլխավոր հրամանատար Էսվեր փաշային, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 22:

տարիքներն անցածները ստիպված են գնալու իրենց ծնողների հետ»¹³⁹: Ամերիկացի միսիոներ Մերի Լ. Գրաֆամը, որին թույլատրվել է ուղեկցել Սվազից դուրս եկած մի շարասյան, 1915 թ. օգոստոսի 7-ին Մալաթիայից գրել է. «Տասը տարեկանից ցած հայ տղաներին և տասնչորս տարեկանից ցած աղջիկներին այստեղ ընդունում են իբրև որբերի»¹⁴⁰:

Տարիքային տարբեր խմբերի երեխաների հետ վարվելու վերաբերյալ հավելյալ անհրաժեշտ տեղեկություններով օսմանյան փաստաթղթերը լրացնում են այս հաղորդումները: 1916 թ. օգոստոսի 29-ին Հալեպում Գերմանիայի հյուպատոսն ամփոփել է շվեյցարական, ամերիկյան ու գերմանական լուծարված որբանոցների ութ հարյուրի չափ անմայր երեխաների ճակատագիրը.

Տեղական կառավարությունը հատուկ հանձնակատար է նշանակել այս որբանոցների համար, որը պետք է իրականացնի նրանց փոխանցումը Թուրքիայի կառավարմանը: Ըստ գաղտնի կատարված հարցումների, կիրառվելու են հետևյալ սկզբունքները. տասներեք տարեկանից մեծ տղաները հեռացվելու են, տասներեք տարեկանից մեծ երիտասարդ աղջիկներն ամուսնացվելու են (քնականաբար՝ մահմեդականների հետ): Տասից մինչև տասներեք տարեկան երեխաները, քանի որ դեռևս իրենց հետ կատարվածի տպավորության տակ են, առանձնացվելու են ավելի երիտասարդներից և տեղավորվելու են թուրքական որբանոցներում՝ արհեստ սովորելու համար: Տասը տարեկանից փոքր երեխաներին մեծացնելու են հատուկ որբանոցներում: Այլ կերպ ասած՝ սա նշանակում է, որ տասներեք տարեկանից մեծ տղաները կտեղահանվեն և հավանաբար կապանվեն, իսկ այդ տարիքի աղջիկներին կտանեն հարեմները... ավելի երիտասարդ երեխաները կմահմեդականացվեն, եթե ողջ մնան թուրքական որբանոցային կառավարման ներքո¹⁴¹:

139 NA/RG 59, 867.4016/103, Տրապիզոնում հյուպատոս Օսկար Ս. Հայզերի զեկույցը դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. հուլիսի 7, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 126:

140 NA/RG 59, 867.4016/187, Մորգենթաուի Պետական քարտուղարության ուղղված 1915 թ. սեպտեմբերի 13-ի զեկույցի հավելված, նույն տեղում, 244:

141 DE/PA-AA/R 14093, Հալեպում հյուպատոսական գործակալ Հոֆմանի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. օգոստոսի 29:

Ողջ մնացած երեխաների հուշերից երևում է, որ հյուպատոսը չէր չափազանցնում¹⁴²: Խարբերդի (Մամուրեթյուլագիզի) նահանգի Փերի մարզից Համբարձում Մարտիրոս Չիթճյանն իր ընտանիքի տեղահանությունից հետո երեք եղբայրների հետ միասին մնացել է մի դպրոցում, որը նրանք անվանում էին «գարհուրելի շենք»¹⁴³: Բոլոր մոտակա գյուղերից չորսից տասնվեց տարեկան երեխաների բերելուց հետո նրանց խումբը շուտով դարձել է ավելի քան երկու հարյուր հոգի¹⁴⁴: Համաձայն ծրագրի, երեխաների վրա ճշում է բանեցվել նրանց ուժացնելու համար: «Մենք պետք է թուրքանայինք», հիշում է Համբարձումը: «Ամենառաջին բանը, որ նրանք արեցին, մեր հայկական անունները թուրքականի փոխելն էր: Իմ անունը դարձավ Ռուշտի [Rüşti]: Հետո պահանջեցին, որ այլևս հայերեն չխոսենք: Պնդեցին, որ միայն թուրքերեն խոսենք»: Համբարձումին չի զարմացրել, թե ինչ արագ են սովորել լեզուն. «Ինձ ավելի զարմացրեց այն, թե ինչ արագ ու անգիտակցաբար մենք լրիվ մոռացանք հայերեն խոսելը»¹⁴⁵: Այնուհետև սկսվել է մահմեդականացման փուլը. «Մի օր մոլլա էր գալիս, իսկ մյուս օրը՝ խոջա»: Հետո «ավելի քան երկու շաբաթ վաղ առավոտյան և երեկոյան մեզ ստիպում էին արտասանել իրենց մահմեդական աղոթքները: Ամեն շաբաթվա վերջում մեզ քննում էին»¹⁴⁶:

Մյուս քայլը երեխաներին նրանց տարիքային խմբերով առանձնացնելն էր. «Երեք շաբաթ անց, առանց զգուշացնելու, մոտավորա-

պես առավոտյան ժամը տասին, երեք ժանդարն ներս մտավ... առանց մի բառ ասելու, նրանք արագ սկսեցին տղաներին առանձնացնել ըստ նրանց ֆիզիկական չափի ու տարիքի»: Համբարձումն ինձնացել է, թե ինչու է կատարվում այդ բաժանումը. «[Ի]նչպես պարզվեց, ավելի մեծ տղաները խմբից անջատվում էին, քանի որ ծրագրված էր նրանց այդ օրը սպանել: Թուրքերը գիտեին, որ մեծ տղաները չէին հավատափոխվելու ու թուրք դառնալու, և ուրեմն շարունակելու էին սպառնալիք լինել... Մենք գիտեինք, որ մեզ ծրագրել էին սպանել»: Համբարձումը կարողացել է փախչել, բայց «մինչև այսօր»՝ 102 տարեկանում, նա ցավով հիշում է. «Ես մյուս տղաների ճակատագրի մասին ոչինչ չեմ լսել: Ութսունութ տարի ես ապարդյուն փնտրել եմ նրանց»¹⁴⁷: Որբանոցում մնացած մյուս երեխաներին հետագայում բաշխել են մահմեդական ընտանիքների վրա՝ իբրև քանաշմա (yanaşma)՝ մի տեսակ ծառա կամ ճորտ, աշխատելու համար՝ բացի չափազանց երիտասարդներից, որոնք ոչ մի տեսակի աշխատանքի համար օգտակար չէին: Այդ փոքրիկ երեխաներին, ներառյալ Համբարձումի ամենակրտսեր եղբորը, սպանել են մեծերի հետ միասին¹⁴⁸: Համբարձում Չիթճյանի պատմությունը լուսաբանում է իրադարձությունների հերթագայության ընդհանուր պատկերը, որը կարելի է տեսնել օսմանյան, հյուպատոսական և վերապրածների պատմություններում: Բոլոր այդ աղբյուրները լրացնում ու հաստատում են միմյանց:

Իսկ ինչ է կատարվել այն երեխաների հետ, որոնք, ուժացվելու փոխարեն, ապաստան են գտել և թաքնվել մահմեդական ընտանիքներում: Կառավարությունը վստահ էր, որ այդ երեխաները պահպանելու էին իրենց հայկական ինքնությունը և ապագայում խնդիրներ հարուցեն: Խոսելով այդ լուրջ հարցի մասին՝ Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշան տեղեկացրել է. «Երկրի ներքին նահանգները տեղահանվող հայերին թաքցնողների մահապատժի մասին հաղորդվել է: [Սրա համար] պատիժը... չի տարածվում... նրանց վրա, ովքեր պահում են ներկա կառավարության կողմից պաշտոնապես հանձնարարված... կանանց ու երեխաներին: Սակայն նրանք, ովքեր առանց կառավարության գիտության իրենց տներում թաքցնում են որևէ սեռի ու կրոնի հայերի, և որոնց տներում գտնվում

142 Մահմեդական սկզբունքներով մեծանալու և ապա նախորդ ինքնությանը վերադառնալու վերաբերյալ գրվել են բազմաթիվ հուշեր: Հայ որբերի մասին ամենաձավալուն՝ եռահատոր աշխատանքն է Լիպարիտ Ազատեան, Հայ որբերը Մեծ Եղեռնի (Լոս Անջելես, Կալիֆոռնիա, տպարան Ապրիլ, 1995): Այդ հարցի մասին լրացուցիչ աշխատանքների համար տես Aram Arkun, "A Preliminary Overview of Armenian-Language Primary Sources Published on the Armenian Genocide," գեկուցումը, որ ներկայացվել է հետևյալ գիտաժողովում. "The State of the Art of Armenian Genocide Research: Historiography, Sources, and Future Directions," Clark University, April 2010:

143 Այսօր այն կոչվում է Աբալագար: Այն քաղաք է Թունջելի նահանգի Մեծկերտ (Mazgirt) [Մազկերտ] մարզում, որ հիշատակվում է նաև իբրև Չարսանջակ:

144 Hampartzoum Mardiros Chitjian, A Hair's Breadth from Death (London and Reading, Taderon Press, 2003), 98–99.

145 Նույն տեղում, 100:

146 Նույն տեղում, 101:

147 Նույն տեղում, 103–105:

148 Նույն տեղում, 156–57:

են պաշտոնապես չամուսնացած աղջիկներ կամ կանայք, կպատժվեն վերոհիշյալ ձևով»¹⁴⁹:

Ուժացման ամբողջ քաղաքականությունն ուղղված էր միայն հայ երեխաների, ո՛չ քրիստոնեական մյուս դավանանքների ու ազգային խմբերի դեմ: Հուլիսի վերջին Մոսուլ ուղարկված մի հեռագրում կարդում ենք հետևյալը. «Հարմար է նկատվում ասորի ու քաղկեդոնական այն կանանց ու երեխաների, որոնք հայ չեն, իրենց սեփական համայնքների կողմից դաստիարակության ու պահպանման ընդունելը»¹⁵⁰:

ՄԻՍԻՈՆԵՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օսմանյան կայսրությունում օտարերկրյա միսիոներների բացած դպրոցները խոչընդոտ էին ուժացման քաղաքականության հաջող իրականացման համար, քանի որ դրանք շարունակում էին պաշտպանել իրենց հայ աշակերտների ազգային-մշակութային ինքնությունը: Հետևաբար, անհրաժեշտ էր փակել այդ դպրոցները, և այդպես էլ արվեց. դպրոցները փակվեցին, իսկ դրանց շենքերն առգրավվեցին: Թեև օսմանյան վարչակազմը խիստ անբարեհաճ էր տրամադրված միսիոներների գործունեության հանդեպ, պատերազմից առաջ այն չափազանց թույլ էր՝ դրանց հակառակվելու համար¹⁵¹: 1914թ. նոյեմբերին պատերազմի հայտարարումը հնարավորություն ընձեռեց արտաքսելու թշնամական երկրների օտարեկրացիներին, և դա արվեց առանց հապաղելու¹⁵²: Ժամանակի ընթացքում արգելվեց նաև ամերիկացի ու գերմանացի միսիոներների գործունեությունը:

149 ԵՀՊԱ, տուփ 17, գործ H, փաստ. № 309, Երրորդ քանակի հրամանատարության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915թ. օգոստոսի 1:

150 BOA/DH.SFR, 54-A/154, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1915թ. հուլիսի 28:

151 Միսիոներական դպրոցներն ու դրանց ճակատագիրն ինքնին առանձին աշխատության նյութ են և այստեղ չեն ընարկվի: Այդ հարցի վերաբերյալ ավելի հանգամանալի տեղեկությունների համար տե՛ս Kieser, Der Verpasste Friede, 327–359 և Şamil Mutlu, Osmanlı Devletinde Misyoner Okulları (Istanbul, Gökkuşbu, 2005), 333–371:

152 Kieser, նույն տեղում, 345:

Էսվեր փաշան 1918թ. «Atı» լրագրում հայտնել է օսմանյան ղեկավարների ընդհանուր կարծիքը միսիոներական գործունեության մասին: Ըստ նրա, միսիոներները չէին ցանկանում «աշխարհիս երեսին որևէ մահմեդական կառավարություն թողնել», օտար կառավարությունները նույնպես մտադիր էին «մեզ [օսմանցիներին կամ մահմեդականներին] վերացնել երկրի վրայից»: Էսվերը, որն ասում էր «ոչ մի օտար կառավարություն իրավունք չունի և չի կարող ունենալ միսիոներներ ուղարկելու այս մայրցամաք և դպրոցներ բացելու», գտնում էր, որ Անատոլիան հարկավոր էր փրկել «օտար ազդեցությունից ու միջամտությունից»¹⁵³: Եվ այդպես էլ արվեց:

Սկզբում ամերիկյան ու գերմանական միսիոներական դպրոցներին թույլ տրվեց անարգել գործել: 1915թ. օգոստոսի 17-ին Սվազը տեղեկացվել է, որ «առայժմ վստահ չկա որբանոցում կին ուսուցիչների ու երեխաների մնալուց»¹⁵⁴, իսկ Ադանային մինևնույն օրն ասվել է, որ «առարկություն չկա որբանոցի հայ երեխաների առնչությամբ»¹⁵⁵: 1915թ. հոկտեմբերին համանման հրահանգ է ուղարկվել Կեսարիա «այն հայ երեխաների [առնչությամբ], որոնք, ըստ տեղեկությունների, ամերիկյան միսիոներների ներկայության տակ են և միջամտության չեն ենթարկվում և առայժմ մնում են»¹⁵⁶:

Միսիոներական դպրոցների դեմ առաջին հարվածն ուղղվել է տեղացի ուսուցիչներին, անձնակազմին և աշակերտներին: Այդ դրպրոցներին թույլ չի տրվել նաև գործել իբրև որբանոցներ: «Ամերիկյան կրոնական և ուսումնական նշանակալից հաստատությունները կորցնում են իրենց դասախոսներին, ուսուցիչներին, օգնականներին ու ուսանողներին, և նույնիսկ որբանոցները պետք է դատարկվեն իրենց հարյուրավոր երեխաներից, ինչը կործանում է այդ ոլորտում անխոնջ աշխատանքի 50 տարիների պտուղները»¹⁵⁷:

153 Ամբողջական հոդվածը տե՛ս նույն տեղում, 561-564:

154 BOA/DH.SFR, № 55/42, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915թ. օգոստոսի 17:

155 BOA/DH.SFR, № 55/43, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915թ. օգոստոսի 17:

156 BOA/DH.SFR, № 57/270, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1916թ. հունվարի 1:

157 NA/RG 59, 867.4016/126, Հալեպում հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի զեկույցը

«Որքան հասկանում ենք, ամերիկյան ու գերմանական դպրոցները, որոնք հայերի արտագաղթից հետո ի վիճակի չեն եղել աշակերտներ գտնելու, որբանոցների վերածվելուց հետո կրկին լցվում են հայ երեխաներով», նահանգներ ուղարկած իր գաղտնի հեռագրով զգուշացրել է կրթության նախարարը: «Ավելին, դպրոցների փոխարկումը որբանոցների կախված է բարձր [իմա՝ կայսերական] հրամանով արտոնություն ձեռք բերելուց, այնպես որ անհրաժեշտ է արգելել այն դպրոցները, որոնք համարձակվում են նման վարք [ցուցաբերել]՝ առանց արտոնություն ձեռք բերելու»¹⁵⁸: Հայտարարելով, որ կառավարության իրական նպատակը միսիոներական գործունեությունից ձերբազատվելն է՝ նախարարը շարունակել է. «Ես մեծագույն հրատապությամբ պահանջում եմ միջոցներն ու հնարավորությունները բաց չթողնել երկիրը փրկելու համար այն հաստատություններից, որոնք օտարերկրացիների խեղաթյուրումների աղբյուր են»¹⁵⁹:

Աստիճանաբար մեկը մյուսի հետևից փակվել են միսիոներական դպրոցներն ու մյուս հաստատությունները, իսկ նրանց շենքերը հատկացվել են կառավարության գործառնությանը՝ պատերազմական անհրաժեշտությունների պատրվակով: Այս ձևով փակված առաջին դպրոցներն էին Մերսինի, Թարսուսի ու Ադանայի ամերիկյան դպրոցները¹⁶⁰: Կեսարիայում առգրավված որբանոցը վերածվել է հիվանդանոցի¹⁶¹: Ավելի ուշ վերացվել են նաև Բիթլիսի ամերիկյան հաստատությունները¹⁶²: Մնացած հաստատություններն իրենց աշ-

Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. օգոստոսի 3, հղված է հետևյալ տեղում United States Official Records, ed. Sarafian, 170:

158 BOA/DH.SFR, № 55-A/155, Կրթության նախարարի ծածկագրված հեռագիրը Մանուրեթյուլագիզի, Սվազի ու Դիյարբեքիի նահանգներ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 9:

159 Նույն տեղում:

160 Ամերիկայի կառավարության բողոքի համար տե՛ս BOA/HR.HMS.İŞO, 71/1-4 և Şamil Mutlu, նույն տեղում, 333:

161 BOA/DH.SFR, № 63/265, Կրթության նախարարի ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 10: Փակման առաջին աշխատանքներն սկսվել են 1915 թ. նոյեմբերին, ինչպես նշվում է Կեսարիայում ամերիկյան միսիոներ Հոնրի Ք. Վինգեթի 1915 թ. նոյեմբերի 16-ին դեսպան Մորգենթաուին գրած նամակում (տե՛ս LC/HM[Sr.]/Reel 7/770, United States Official Records, ed. Sarafian, 349):

162 BOA/DH.SFR, № 68/148, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

խատանքը կատարել են խիստ դժվարին պայմաններում, իսկ 1917 թ. գարնանը՝ այն բանից հետո, երբ Ամերիկյան մտավ պատերազմի մեջ, դրանք հատկացվել են գերմանական ու շվեյցարական կազմակերպություններին¹⁶³: Այդ հաստատություններն այլևս ի վիճակի չէին խոչընդոտելու ուժացման քաղաքականությունը: Նույն ընթացքում որոշ նահանգների կրկին զգուշացվել է, որ «որբացած երեխաները [պետք է] տեղավորվեն ամերիկյան միսիոներների տեսադաշտից հնարավորինս մեծ հեռավորության վրա»¹⁶⁴: 1917 թ. գարնանը Հալեպում փակվել է նաև Գերմանիայի վերահսկողության տակ գտնվող մի որբանոց, և երեխաներին բաշխել են Բեյրութում նոր բացվող մի որբանոցի և Անատոլիայի տարբեր վայրերի վրա¹⁶⁵: Դրանից հետո հայ երեխաների մահմեդականացման առջև այլևս խոչընդոտ չէր մնում:

«Մեզ մոտից վերցված կանանց տեղահանեցին, քանի որ նրանք մահմեդական չդարձան: Նրանցից վերցրին նրանց զավակներին ու փոքր մանկիկներին: Նրանց, ովքեր մահմեդականություն ընդունեցին, թույլ տվեցին մնալ, բայց ուղարկեցին գյուղերը, երեխաներին հեռացրին նրանցից, և այն դեպքերում, որոնք ես գիտեմ, ստիպեցին ամուսնանալ թուրքերի հետ»¹⁶⁶: Ամերիկյան միսիոներ Ստեփա Լորիջի այս բառերն ըստ էության ուժացման քաղաքականության հիմնական ուղղությունների ամփոփումն են:

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Բիթլիսի նահանգ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 1:

163 Kieser, Der Verpasste Friede, 432.

164 BOA/DH.SFR, № 63/276, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Կեսարիայի գավառ, թվագրված 1916 թ. մայիսի 11:

165 Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունում բավական թղթակցություն կա Հալեպի որբանոցը փակելու հարցի վերաբերյալ: Տե՛ս DE/PA-AA/R 14095, Հալեպում հյուպատոս Ռյուսերը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1917 թ. փետրվարի 14, DE/PA-AA/R 14095, Արտաքին գործերի փոխնախարար Շտումը Կոստանդնուպոլսի դեսպանությանը, թվագրված 1917 թ. մարտի 1, DE/PA-AA/R 14095, դեսպան Քյուլմանը Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1917 թ. մարտի 7:

166 Stella Loughridge's report, in "Turkish Atrocities," Barton, 117.

ԹՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Ոչ որ չգիտի, թե քանի երեխա է բաժանվել մահմեդականների տների վրա: Շատ աշխատություններում հաշվված է, որ օսմանյան հայերի 5-ից 10 տոկոսը 1915 թվականի ընթացքում հավատափոխվել է և ներձուկվել մահմեդական ընտանիքների մեջ: 5-10 տոկոսը հարյուր հազարից մինչև երկու հարյուր հազար մարդ է¹⁶⁷:

Անհայտ է նաև, թե երեխաներից քանիսն են մնացել որբանոցներում կամ բաժանվել մահմեդական ընտանիքների: Ձեռքի տակ եղած թվերը խիստ անհամատեղելի են: Համաձայն Թալեթ փաշային պատկանող ծոցատետրի մի փաստաթղթի, որի վրա պաշտոնական ամսաթիվ չկա, մահմեդականներին բաժանված հայ երեխաների թիվը եղել է 6.768, իսկ որբանոցների երեխաների թիվը՝ 3.501: Մակայն հեշտությամբ կարելի է ցույց տալ, որ այդ թիվը խիստ նվազեցված է¹⁶⁸: 1917 թ. օսմանյան սենատում որբանոցների վերաբերյալ առաջարկված օրենքների վերաբերյալ տեղի ունեցած քննարկումների ընթացքում ազգային կրթության նախարարը հայտարարել է, որ 1917 թ. մարտի դրությամբ եղել է ընդամենը վաթսուներեք որբանոց, իսկ դրանց մեջ գտնվող երեխաների թիվը եղել է քսան հազար: Նրանցից հինգ հազարը աղջիկներ են եղել, մնացածը՝ տղաներ¹⁶⁹: Գեներալ Հարբոթը, որին 1919 թ. նախագահ Վիլսոնն ուղար-

կել էր Անատոլիա ու Կովկաս՝ Հայաստանի վրա ամերիկյան մանդատի հնարավորության վերաբերյալ զեկույց պատրաստելու նպատակով, հաղորդել է, որ իր անցած վայրերում «ամբողջ 50.000 որբ այսօր կառավարական կամ այլ տեսակի կազմակերպված խնամք է ստանում»¹⁷⁰: Հարբոթն այդ թիվը հավանաբար ստացել է թուրքական քանակի հրամանատար Քազիմ Կարաբեքիրից, որին հանդիպել էր Էրզրումում¹⁷¹: Ստամբուլի Հայոց պատրիարքարանի 1921 թ. պատրաստած զեկույցագրի մեջ նշվում է, որ «մահմեդական ընտանիքներում դեռևս հայ որբեր ու երիտասարդ աղջիկներ կան, որոնք չեն ազատվել», և ասվում է, որ նրանց թիվը 63.000 է¹⁷²:

Առանց մտնելու մտավոր գնահատումների վրա հիմնված թվերի մասին բանավեճի մեջ՝ ապահով կերպով կարելի է պնդել, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Դաշնակիցների ուժերը գրավել էին Ստամբուլը, մահմեդական տներին բաշխված երեխաների ու աղջիկների վերականգնումը շատ լուրջ հարց է եղել¹⁷³: Դաշնակից ուժերը, օսմանյան կառավարությունն ու Հայոց պատրիարքարանը առնվազն երեք տարբեր խողովակներով փորձել են կազմակերպել մահմեդականների տներից կանանց ու երեխաների հավաքումը. հիմնվել են նաև զանազան միացյալ հանձնախմբեր՝ դրա հետ կապված խնդիրները լուծելու համար: Օրինակ, Անգլիայի քարձրագույն հանձնակատարի կառույցում ստեղծվել է հայ-հունական բաժին, որն աշխատել է կառույցի մյուս պաշտոնյաների հետ՝

խարարը նշել է, որ հայտնի չէ, թե այդ երեխաներից քանիսն են զոհված զինվորների զավակներ, և քանիսն են մնացածը, հետևաբար ենթադրել է, թե կարող են «կես-կես» լինել:

170 Գեներալ մայոր Ջեյմս Գ. Հարբոթը, Հայաստանում Ամերիկայի ռազմական առաքելության զեկույցը (Washington, DC, Government Printing Office, 1920), 8:

171 Քազիմ Կարաբեքիրն իր հուշերում միննույն թիվն է նշում (մեջբերված հետևյալ տեղում. İbrahim Ethem Atnur, Türkiye'de Ermeni Kadınlar ve Çocuklar Meselesi [1915–1923] [Ankara, Babil Yayıncılık, 2005], 129):

172 NA/RG 59, 867.4016/398, հղված հետևյալ տեղում. Özdemir և այլք, Sürgün ve Göç, 120–26:

173 Կրոնափոխ եղած և մահմեդական ընտանիքներին բաժանված հայերի հարցը դուրս է տույն աշխատության շրջանակից և, այդ պատճառով, այստեղ չի քննարկվի: Հավելյալ տեղեկությունների համար տես Akçam, A Shameful Act, 272–80; Atnur, Kadınlar ve Çocuklar, 129–94:

167 Sarafian, "Absorption of Armenian Women and Children," 211; Lepsius, Deutschland und Armenien, I; Özdemir et al., Sürgün ve Göç, 5–53.

168 Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, 89. 1918 թ. պատրաստված այս փաստաթղթի թվերը, լավագույն դեպքում, թերի են: Գոյություն ունեին օսմանյան 46 նահանգ ու անկախ գավառ (25 նահանգ և 21 անկախ գավառ), և մինչ տեղահանումներն ու բաշխումներն ուղղակիորեն ազդել են դրանցից մոտ 35-ի վրա, Թալեթ փաշայի ցուցակն ընդգրկում է 16 քնակավայր (10 նահանգ և 6 գավառ), իսկ մյուսների մասին որևէ տեղեկություն չի տալիս: Մեծ կարևորություն ներկայացնող այնպիսի նահանգների բացակայությունն այդ ցուցակում, ինչպիսին են Դամակոսը, Անկարան, Մամուրեթյուլագիզը, Կաստամունուն, Քոնյան ու Բեյրութը, ընդամենը ավանդը հաստատող մեկ օրինակ է: Ցանկում բերվող վերաբնակեցման տարածքների թվերը ևս պակասավոր են: Այսպես, ցանկում ցույց չի տրվում, որ Կեսարիայի, Դեր Ջորի, Ուրֆայի, Իզմիրի, Մոսուլի և Հալեպի պես վայրերում մահմեդական քնակչության վրա երեխաներ են բաշխվել, և պարզ է, որ դա ճիշտ չէ:

169 MAZC (Օսմանյան Երևելիների պալատի արձանագրություններ), 3-րդ նստաշրջան, գումարման 3-րդ տարի, 1917 թ. մարտի 27-ի նիստ, 397: Նա-

հավաքելու համար մահմեդական տներում ցրված հայ երեխաներին¹⁷⁴:

ժամանակի մամուլում հայտնվել են խիստ հոգվածներ, որոնք քննադատել են մահմեդական տներում պահված երեխաների աղքատությանը իթթիհադականների քաղաքականությունը: Հետևյալ բնույթի հայտարարություններով այդ հոգվածները պահանջում էին, որ նոր կառավարությունը համարժեք քայլեր ձեռնարկի. «Խեղճ հայ ժողովրդին ճշելիս Միություն և առաջադիմություն [կոմիտեի] ջեյլիները [celâli' 16-17 դարերի օսմանյան ապստամբներ], որոնք այս կապակցությամբ այլանդակություններ են արել՝ չբավարարվելով իրենց հեղած արյամբ և իրենց գողացած ահռելի հարստությամբ, իրենց ձեռքերը երկարացրել են ընդհուպ մինչև առանց ընտանիքի ու բարեկամի մնացած անմեղ աղջիկները, որ մնացել էին այստեղ ու այնտեղ»: Կառավարությունը, զգալով այդ ճշումների ներքո քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, վերացրել է հայերին վերադարձնելու առջև ծառայած բոլոր խոչընդոտները և նրանց վերադարձնելու պաշտոնական թույլտվություն տվել¹⁷⁵: Նա նաև մահմեդական ընտանիքների պահած երեխաներին հավաքելու հրամաններ է ուղարկել բոլոր շրջանները՝ պահանջելով «անհապաղ իրենց խնամակալների կամ համայնքներին հանձնել հայ որբերին, աղջիկներին ու կանանց, որոնք գտնվում են մահմեդական ընտանիքներում և պաշտոնական ու մասնավոր հաստատություններում»¹⁷⁶: Հայտարարվել

174 Հանձնախմբի գործունեության և դրա նիստերի արձանագրությունների համար տես Vartkes Yeghiayan, *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919-1922: The Greek-Armenian Section* (Glendale, CA, Center for Armenian Remembrance, 2007):

175 Իրականում, սահմանափակ թվերով հայերի վերադարձն իրենց տները սկսել է արտոնվել 1918 թ. օգոստոսին: Վերդառնալու համար անհրաժեշտ էր ոստիկանական հետաքննության ենթարկվել: Այդ հարցի վերաբերյալ առաջին հրամանը, որ կարողացել են գտնել, թվագրված է 1918 թ. օգոստոսի 19-ով (DH.ŞFR, № 90/176): 1918 թ. հոկտեմբերի 18/20-ին ընդհանուր մի հրամանով հայտարարվել է, որ Նախարարների հոբրիուրդը որոշել է «բոլոր այն մարդկանց, որոնք, պատերազմական պայմանների հետևանքով կայացված ռազմական որոշմամբ, մի տեղից հանվելով տեղահանվել են այլ վայրեր, թույլատրվի վերադառնալ այն վայրերը, որտեղից արտաքսվել են» (DH.ŞFR, 92/187):

176 BOA/DH.ŞFR, № 92/196. Երկրորդ փաստաթուղթը հղված է հետևյալ տեղում. Atnur, Kadınlar ve Çocukları, 143-45 (BOA/DH.EUM.ECB, № 21/63):

է, որ այն մարդկանց դեմ, ովքեր չեն հանձնի իրենց մոտ ունեցած երեխաներին, կիրականացվի դատական հետաքննություն¹⁷⁷: Այդ գործերը շատ հաջող չէին: Ինչպես հայտարարվում է Հայոց պատերազմարանի 1921 թ. գեկուցագրում, «հայերից շատերը մահմեդականություն են ընդունել՝ ազատվելու համար Իթթիհադի և շատ արիշների կազմակերպած անասելի ոճրագործություններից ու հալածանքներից... ծպտված ապրում էին տարբեր շրջաններում... Շատ հայեր դեռևս թաքնվում են... և չեն համարձակվում հայտնվել՝ նույն լույսի հիմա հալածանքների ենթարկվելու վախից»¹⁷⁸:

ԵՐԻՏԹՈՒՐԵՐՆ ՈՒ ՈՒԾԱՑՈՒՄԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԼԱՅԱՏԱԿԱՆ

Իբրև ընդհանուր դիտարկում, կարող ենք ասել, որ «զոհերի խմբից երեխաների փոխանցումը ոճրագործների համայնք ընդհանուր երևույթ է ցեղասպանության մեջ, սակայն քիչ է հասկացված, թե ինչն է դա կատարվում»¹⁷⁹: Շատ հեշտ կլիներ այդ երևույթը բացատրել «պատերազմի տրամաբանական ավարտով» կամ «ներքին թշնամու» հանդեպ «հաղթանակողի» վերաբերմունքով¹⁸⁰: Սակայն պետք է որ այդ երևույթը բացատրելու ավելի խորքային պատճառներ լինեն, և ես կցանկանայի այստեղ մի քանի ընդհանուր դիտարկում կատարել և նյութի վերաբերյալ մի քանի դրույթ ներկայացնել: Պատասխանի կարիք ունեցող հարցերը հետևյալն են. իթթիհադականներն առհասարակ ինչն են թույլատրել կրոնափոխությունը, և ինչն է ուժացման նրանց քաղաքականությունը եղել հայ երեխաներին մահմեդական ընտանիքների վրա բաշխելը՝ երեխաներին բռնու-

177 Ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆի գաղտնի նամակը Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1918 թ. նոյեմբերի 1, հղված հետևյալ տեղում. Devlet Arşivleri Genel Müdürlüğü [Պետական արխիվների ընդհանուր վարչություն], Osmanlı Belgelerinde Ermeniler (1915-1920), փաստաթուղթ թիվ 210 (BOA/HR.MÜ, № 43/34):

178 NA/RG 59, 867.4016/398, հղված հետևյալ տեղում. Özdemir և այլք, Sürgün ve Göç, 126:

179 Keith David Watenpaugh, "The League of Nations' Rescue of Armenian Genocide Survivors and the Making of Modern Humanitarianism, 1920-1927," *American Historical Review* 115, № 5 (December 2010), 1315-1339.

180 Նույն տեղում:

թյամբ մահմեդականացնելով և աղջիկներին բռնությամբ ամուսնացնելով: Այդ հարցերին պատասխանելուց առաջ օգտակար կլինի հետևյալ հստակեցումը: Բռնի ուժացումը՝ դրա այն տեսակը, որը քննարկվում է այստեղ, գործածվել է իբրև ազգային-կրոնական մի խմբի վերացման միջոց: Ավելին, բռնի ուժացումն ու ֆիզիկական բնաջնջումը գոյություն են ունեցել ցեղասպանության իրականացման ողջ ընթացքում: Այդ այլընտրանքները և նրանց միջև փոխատեղումները երիտթուրքերի կողմից պարտադրվել, կարգավորվել ու կիրառվել են իբրև պետական քաղաքականություն: Բացի այդ, բռնի ուժացման որոշ մեթոդներ ինքսին արդեն համագոր էին բնաջնջման: Օրինակ, այն, ինչ կատարվել է երիտասարդ աղջկա հետ, որը բռնությամբ մահմեդականացվել է և հակառակ իր կամքի ամուսնացել, վաճառվել, տրվել պոռնկության կամ սեռական այլ կարգի հալածանքների ենթարկվել, կարող է սահմանվել իբրև ոչնչացման ձև, և, այդ առումով, ուժացումը կարելի է համարել «կառուցվածքային բռնության» մի տեսակ:

Այն հանգամանքը, որ երիտթուրքերը հայ երեխաներին մահմեդական ընտանիքներին բաժանելիս փոխշղթայված կերպով գործածել են բռնի ուժացումն ու ֆիզիկական ոչնչացումը, լույս է սփռում ցեղասպանության դրդապատճառների վրա: Ավելին, ուժացման համակարգված քաղաքականության գոյության փաստը սատարում է հետազոտողների միջև առկա համաձայնությունն այն հարցում, որ ռասիզմը, ինչպես այն հասկացվում է ներկայումս, երիտթուրքերի քաղաքականության հիմքը չի եղել, ոչ էլ եղել է հայերի բնաջնջման դրդապատճառը:

1915 թվականի վերաբերյալ քննարկումներում այս կետն առանձնապես ծանրակշիռ հարց չի եղել: Նույնիսկ այն հեղինակների համար, որոնք պնդում են, որ ցեղասպանության որոշումը կայացվել է պատերազմից շատ ավելի վաղ՝ ընդհուպ Աբդուլ Համիդի ժամանակ, հարցը շատ հստակ է. «Վերջին հաշվով, շատ քիչ ֆաշիզմ կա այն գաղափարախոսության մեջ, որն արտոնել և օրինականացրել է հայերի ցեղասպանությունը»¹⁸¹: Տվյալ ժամանակաշրջանում «ոսաս» (irk) տերմինը հաճախ ընկալվել է կենսաբանականից ավելի լայն

իմաստով և, համատեքստից կախված, այն կարող էր նշանակել նաև «ծագում» կամ «ազգություն»¹⁸²:

Թեև այստեղ ռասայի գաղափարը նեղ կենսաբանական իմաստով չի գործածվում, ռասիզմի ու երիտթուրքերի մտադրության միջև կապը պահանջում է ավելի հանգամանակից ու բժայխնդիր քննարկում, և մենք պետք է ընդունենք, որ ռասիզմի ու ուժացման և ռասիզմի ու ազգայնականության միջև հարաբերությունը շատ ավելի խրթին է, քան պատկերված է այստեղ: Նյութն իրականում ուղղակիորեն կապված է նրան, թե ինչ է պետք հասկանալ ռասիզմի փաստացի սահմանման տակ: Հնարավոր է բխեցնել համապարփակ ռասիզմի սահմանումներ, որոնք ընդգրկեն ազգային ու կրոնական այլ խմբերի ուժացումը՝ միաժամանակ հիմնված լինելով «մաքուր արյան» դրույքի վրա, որը, սակայն, տարբերվում է «բացառիկության» ռասիզմից: Իբրև դրա օրինակ կարելի է բերել Էթիեն Բալիբարի «գաղութային ռասիզմի» դրույթը¹⁸³: Պան-թյուրքիզմը, որը կարելի է սահմանել իբրև ռասիստական մտադրության մի ձև, նույնպես «բացառիկային» չէ: Որոշ հետազոտողներ առաջարկել են մի գաղափար, որը «համապարփակ» ռասիզմի մի ձև է¹⁸⁴:

Տեսական այս ընդհանուր վերապահությունն աչքի առջև ունենալով և շարունակելով ըստ այդմ՝ ես պնդում եմ, որ թեև իթթիհական որոշ շրջանակներ իրոք հակված էին ռասիզմի կամ սոցիալական դարվինիզմի¹⁸⁵, երիտթուրքերի հիմնական մտածողությունը ստեղծվում էր այլ աղբյուրներից: Երիտթուրքերն ընդհանուր առմամբ քրիստոնյաներին համարում էին երկրորդ կարգի քաղաքացիներ, և այդ քամահրանքը դարավոր արմատներ ուներ: Մեծացած լինելով

182 Այս հարցի քննարկման համար տես Suavi Aydın, "Nazan Maksudyan'in kitabı 'Türklügü Ölçmek' üzerine," Tarih ve Toplum 2 (Fall 2005): 155-84 և Nazan Maksudyan, "The Turkish Review of Anthropology and the Racist Face of Turkish Nationalism," Cultural Dynamics 17 (2005), 291-322:

183 Étienne Balibar and Immanuel Maurice Wallerstein, Race, Nation, Class: Ambiguous Identities (New York, Verso, 1991), 37-69.

184 Nizam Önen, İki Turan, Macaristan ve Türkiye'de Turancılık (Istanbul, İletişim Yayıncılık, 2005), 27.

185 Օսմանյան մտավորականության վրա այնպիսի գաղափարախոսությունների ազդեցության համար, ինչպիսին են սոցիալական դարվինիզմն ու ռասիզմը, տես Atilla Dogan, Osmanlı Aydınları ve Sosyal Darwinizm (Istanbul, Bilgi Üniversitesi Yayınları, 2006):

181 V. N. Dadrian, "The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians," Holocaust and Genocide Studies 1, №2 (1986), 184.

այնպիսի մթնոլորտում, որն ընդունում էր մահմեդականների մշակութային, քաղաքական ու իրավական գերակայությունը՝ նրանք չունեին օսմանյան հանրությունն ու հաստատությունները նման խորքային մակարդակով փոխելու ունակությունը: Դրան հակառակ, օսմանյան մահմեդականության վրա հենված «իշխող ազգի» (millet-i hakime) հասկացությունը հեշտությամբ վերասահմանվեց իբրև ժամանակակից թուրքականության վրա հիմնված ազգայնական գաղափար: Հայերի, իբրև քրիստոնյաների, ավանդական ստորակարգումը թույլ տվեց երիտթուրքերին ավելի հեշտությամբ թիրախավորել նրանց՝ ոչ սոսկ իբրև պետության թշնամիների, այլ նաև իբրև ժողովրդի համար օտարների:

Ցեղասպանության նման ոճրագործությունների հասցնող առելությունն ու վրդովմունքը այս դեպքում բոցավառվել են օսմանյան մահմեդականության մշակույթի հենքի, այլ ոչ թե ժամանակակից ռասիստական մտածողության հիման վրա: Ավելին. կայսրությունում ոչ-թուրք մահմեդական խմբերի առկայությունը և էթնիկ «թուրքականությունը» հստակ ու ակնառու օբյեկտիվ չափանիշներով սահմանելու դժվարությունը երիտթուրքերին մղել են դեպի մշակութային ազգայնականություն: Կրոնական, ոչ ռասիստական հողի վրա սոցիալական «ուրիշությունը» կառուցելու և բացառելու ժառանգված ավանդույթն է, որ հնարավոր է դարձրել փիլիսոփայական այդ տեղաշարժը: Դրա արդյունքն այն էր, որ երիտթուրքերն ի վիճակի էին ճանաչելու «ուրիշի» ապրելու իրավունքը, սակայն միայն երբ այդ «ուրիշը» հրաժարվեր իր «ուրիշությունից»: Այդպիսին էր ՄԱԿ-ի ուժացման քաղաքականության գաղափարաբանական հիմքը Հայոց ցեղասպանության ընթացքում:

Միություն և առաջադիմություն կոմիտեի քաղաքական մտածողությունն իր բնույթով ոչ միայն սինթետիկ էր, այլև գործնական: Երբ իթթիհադականներն իրենց ձեռքն առան ավելի քան վեցդարյա պետական ավանդույթով կայսրության տիրապետումը, նրանց առջև ծառայավ կենտրոնական այն հարցը, թե ինչպես պաշտպանել այն: Նրանց համար հարցերի հարցը պետությունը փրկելն էր, և բոլոր մյուս սկզբունքները վճռորոշ այդ նպատակին ծառայող միջոցներն էին: Հետևաբար, երիտթուրքերը ոչ թե դոգմատիկ, այլ նպատակային հայացք էին դրսևորում այնպիսի գաղափարախոսությունների նկատմամբ, ինչպիսին էին օսմանիզմը, թուրքականությունը (և թու-

րանիզմը), մահմեդականությունը և արևմտականացումը: Նրանք խեղձի չունեին մեկից մյուսին անցում կատարելու հարցում, եթե անցումն արդարացվում էր պետության կարիքներով¹⁸⁶:

Անշուշտ, կային նաև ազգայնականները, սակայն, ինչպես ասվեց, նրանց քաղաքական փիլիսոփայությունը կարելի է բնութագրել իբրև մշակութային ազգայնականություն, որն իր բոլոր կապերը չի թողել կրոնի հետ՝ ի տարբերություն էթնիկ ազգայնականության, որը հիմնված է հստակ, էլ չասած՝ «օբյեկտիվ» չափանիշների վրա¹⁸⁷: Նրանց ազգայնականությունը սահմանվում էր ոչ թե նրանց ընտրած սահմունքներով, այլ ավելի «պետության շահերով», որով երիտթուրքերը դառնում էին մի տեսակ «պետական ազգայնականներ»: Պետականակենտրոն ազգայնականության և ազգայնականության՝ իբրև քաղաքական ու մտավորական շարժման միջև տարբերությունը կարևոր է՝ հասկանալու համար երիտթուրքերի քաղաքական որոշումները¹⁸⁸:

186 Միություն և առաջադիմություն կուսակցության կապը զանազան գաղափարախոսությունների հետ լայնորեն քննարկված նյութ է: Այդ հարցի ավելի հանգամանալից քննության ու գրականության համար տես Taner Akçam, *A Shameful Act*, 82–109:

187 Թուրքական ազգայնականության ծննդի, դրա անցած տարբեր փուլերի, իթթիհադական ու քեմալական ազգայնականության և ռասիզմի հետ թուրքական ազգայնականության հարաբերության լայնորեն քննարկված հարցերի վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ աշխատություններ: Sün Masami Arai, *Jön Türk Dönemi Milliyetçiliği (Istanbul, İletişim Yayınları, 1994)*; Masami Arai, “The Genç Kalemler and the Young Turks: A Study in Nationalism,” *METU Studies in Developments* 12, №№ 3–4 (1985): 194–244; Tanıl Bora, “Nationalist Discourses in Turkey,” in *Symbiotic Antagonisms: Competing Nationalisms in Turkey*, ed. Ayşe Kadioglu and Fuat Keyman (Salt Lake City, University of Utah Press, 2011); Ahmet Yıldız, “Ne Mutlu Türküm Diyebilene”: *Türk Ulusal Kimliğinin Etno-Seküler Sınırları (1919–1938) (Istanbul, İletişim Yayınları, 2001)*, 47–87; Dündar, *Modern Türkiye'nin Şifresi*, 41–85; Ayhan Aktar, *Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları (Istanbul, İletişim, 2000)*, 71–101; Ayhan Aktar, *Türk Milliyetçiliği, Gayrimüslimler ve Ekonomik Dönüşüm (Istanbul, İletişim 2006)*; Etienne Copeaux, *Tarih Ders Kitaplarında (1931–1993) Türk Tarih Tezinden Türk-İslam Sentezine (Istanbul, Tarih Vakfı Yurt Yayınları, 1998)*; Büşra Ersanlı Behar, *İktidar ve Tarih: Türkiye’de “Resim Tarih” Tezinin Oluşumu (1929–1937) (Istanbul, Afa Yayınları, 1992)*:

188 Իրականում, Թուրքիայի քաղաքական կյանքում միշտ գոյություն են ունեցել ազգայնականության այդ տարբեր ձևերը և բացատրվել են զանազան հասկացություններով: Օրինակ, մի աշխատության մեջ *Türk ulusçuluğu*

Երիտթուրքերի կողմից մշակութային ու պետական ազգայնականության որդեգրումը օգնում է բացատրելու, թե ինչն է նրանց դրդել բնաջնջել հայերին: «Պետությունը պահպանելու» կանխադրությամբ առաջնորդվող պետականակենտրոն մտայնությունը նրանց մտածել է տվել, թե նման որոշումն անհրաժեշտ է: Այն պահից, երբ երիտթուրքերն ստանձնեցին իշխանությունը, իրենց առաջին պարտականությունը համարեցին կայսրությունը փրկել վերանալուց: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանք սկսեցին հայերին դիտել իբրև գոյատևման սպառնալիքի: Այդ սպառնալիքի վերացումը, հետևաբար, դարձավ առաջնային խնդիր:

Գիտության, հատկապես բնական գիտությունների հանդեպ հավատը կենտրոնական տեղ էր զբաղեցնում երիտթուրքերի մոդեռնիստական փիլիսոփայության մեջ: Նրանք իրենց պատկերացում էին պատմական առաքելության մեջ, որն իրենց էր վստահված իրենց իսկ հանրությունից դուրս եղող ուժի, այսինքն՝ «գիտության» կողմից: Ճիշտ այնպես, ինչպես բժիշկներն են իրենց հիվանդներին բուժում դեղերի միջոցով, իթթիհադականները հանրության հիվանդությունները կբուժեին գիտության պատշաճ կիրառմամբ:

Գիտության այս աղճատումը նրանց հանգեցրեց գործելու իբրև «հանրության ինժեներներ», և այդ հարցում նրանց քաղաքականությունը կարելի է կոչել «հանրային ինժեներություն»¹⁸⁹: Թերևս, 5-10

(թուրքական ազգայնականություն) և Türkçülük (թուրքականություն) գաղափարները գործածվում են իբրև երկու տարբեր հասկացություններ՝ հանրապետական ժամանակաշրջանի քննալիզմը և դրա պետականակենտրոն ազգայնականությունը գանազանելու համար թուրքականության գաղափարախոսությունը պաշտպանող (ժողովրդական) ազգայնական շարժումներից: Stiu Günay Göksu Özdoğan, "Turan"dan "Bozkurt": Tek Parti Döneminde Türkçülük (Istanbul, İletişim Yayınları, 2006).

189 Ընդարձակ գրականություն կա հանրային ինժեներության վերաբերյալ: Օրինակ, տես Milica Zarkovic Bookman, *The Demographic Struggle for Power: The Political Economy of Demographic Engineering in the Modern World* (Portland, OR, Frank Cass, 1997); John McGarry, "Demographic Engineering: The State-Directed Movement of Ethnic Groups as a Technique of Conflict Regulation," *Ethnic and Racial Studies* 21, № 4 (July 1998): 613-638: Օսմանյան Թուրքիայի հարցով տես Nesim Şeker, "Demographic Engineering in the Late Ottoman Empire and the Armenians," *Middle Eastern Studies* 43, № 3 (2007): 461-74; Uğur Ümit Üngör, "Geographies of Nationalism and Violence: Rethinking Young Turk 'Social Engineering,'" in *European Journal of Turkish Studies* № 7 (2008): Stiu unguşung՝ [http:// ejts.revues.org/index2583.html](http://ejts.revues.org/index2583.html):

տոկոսի բանաձևը նրանք այդ նպատակով են հորինել: Երբ հայերի թվերն այն աստիճան էին նվազել, որ այլևս կայսրությանը սպառնալիք չէին ներկայացնում, երիտթուրքերը համաձայն էին հայության մնացորդը լուծելու օսմանյան հանրության մեջ: Նրանց նպատակն էր լիակատար վերահսկողություն սահմանել «խնդրահարույց» խմբի՝ հայերի վրա՝ նրանց բռնի ուժացման ու բնաջնջման միջոցով: Բացի այդ, հայերի որոշակի խմբի հավատափոխումը մահմեդականության և թուրքացումը կամ հայ երեխաների ներծուլումը մահմեդական ընտանիքների մեջ իթթիհադականներին ռազմական, տնտեսական ու քաղաքական առավելություններ էին ընձեռում:

Երիտթուրքերի տեսանկյունից, Անատոլիայի ռազմավարական շրջաններում քրիստոնյա մեծամասնության գոյությունը հսկայական սպառնիք էր ներկայացնում երկրի անվտանգության դեմ, ինչը սաստկանում էր ընթացող պատերազմի ու Ռուսաստանի սպառնալիքի պատճառով: Բացի այդ, 1914թ. փետրվարի Բարենտրոգումների համաձայնությամբ, որը հայերի տեղահանության կարևորագույն պատճառներից մեկն էր, նախատեսվում էր հայկական ինքնավար նահանգների կազմավորում: Հետևաբար խիստ կարևորվում էր քրիստոնյաների փոխարինումը թուրք մահմեդական մեծամասնությամբ: Իթթիհադականները, սակայն, գիտեին, որ հայերին այդ տարածքներից հեռացնելը կտրուկ նվազեցնելու էր տեղական ազգաբնակչությունը: Խնդիրն ավելի էր բարդանում նրանով, որ կովելու տարիքի (քսանից քառասունհինգ տարեկան) տղամարդկանց բանակ էին տարել, և հստակ չէր, թե երբ էին նրանք վերադառնալու: Այդ տեսանկյունից, հարցին հեռանկարային ռազմավարական լուծում էր տալիս հայ երեխաների մահմեդականացումը:

Անվտանգության սպառնալիքին գումարվում էր տարածքում ամրակազմ բանվորների լուրջ պակասությունը: Տղամարդիկ հաճախ բանակ էին զորակոչվում բերքահավաքից առաջ, և հայերը տեղահանվում էին տարվա միննույն եղանակին: Հետևաբար, մահմեդականություն ընդունած հայ երեխաները տնտեսական առումով մեծ հաջողություն էին՝ երկարաժամկետ օգտակարությամբ: Նույնիսկ խաղաղ ժամանակներում արևելյան Անատոլիայի հողագործ բնակչությունը մշտապես էժան աշխատուժի պակաս ուներ: Տողերիս հեղինակը, որը մեծացել է այդ միջավայրում, շատ լավ հիշում է աշխատուժի բացը լրացնելու նպատակով երեխաներին աշխատեցնելու

սովորությունը, այդ թվում և հանրության սահմանած morbed, nöker և yanasma դերերով: Մորբեղը սեզոնային աշխատողի մի տեսակ է, որին վարձում էին կարճ ժամկետով՝ հատուկ վճարի դիմաց: Նոքերը կամ նոքարը համեմատաբար աղքատ երեխա էր, ասենք՝ որը կամ կիսաորր, որը «որդեգրվում էր»՝ աշխատելու համար հարուստ ընտանիքում, թեև շատ դեպքերում հայտնի ընտանիքի երեխան կամ ազգականը նույնպես կարող էր պահվել իբրև նոքար: Մոցիալական կարգավիճակով ամենացածրը յանաշման էր, ինչպես ֆեոդալական հասարակության մեջ՝ ճորտը: Եթե նոքարն ընտանիքում կարող էր գրեթե ընտանիքի անդամ համարվել, նման բան հնարավոր չէր յանաշմայի դեպքում: Իրեն տանը պահելու դիմաց յանաշման պետք է ամեն տեսակի գործ աներ: Դրանով հանդերձ, յանաշման նաև սոցիալական համերաշխության ինչ-որ աստիճան էր նշանավորում, քանի որ այս ձևով պահպանվում էին այն երեխաները, որոնք այլապես մեռնելու էին: Մահմեդականացված հայերը, նայած ընտանիքի վերաբերմունքին, կարող էին ստանալ նոքարի ու յանաշմայի սոցիալական կարգավիճակ:

Վերջապես, մահմեդականացված հայ երեխաները բաշխվում էին ոչ թե իբրև սոսկ տնտեսական ապրանք, այլև քաղաքական դրդապատճառներով: Քանի որ երիտթուրքերը հասարակության մեջ լայնատարած օժանդակություն չէին վայելում, նրանց հակահայ քաղաքականությունը կարող էր ժողովրդականություն չունենալ գյուղացիների միջավայրում, որոնք իրենք էլ գոյության պայքար էին մղում: Մահմեդական լայն զանգվածներին, որոնք հայերին նայում էին իբրև կրոնական ու մշակութային առումով «ուրիշի», կարելի էր սիրաշահել նյութական բավարար խրախուսմամբ: Հայ երեխաներ «նվիրելը» հավատարմություն գնելու մի միջոց էր, այլ կերպ ասած՝ կաշառքի ձև: Հետագա իրադարձությունները ցույց էին տալու, որ երիտթուրքերի հաշվարկները ճիշտ էին¹⁹⁰:

190 Հայ երեխաներին մահմեդական ընտանիքներին բաժանելու համար իթթիհադականների դրդապատճառների վերաբերյալ տարբեր բացատրություններ կան: «Ի տարբերություն ռասիստական նացիստների, օրինակ, օսմանյան թուրքերը բավական բարձր են գնահատել հայ երեխաների մարմնավորած գենոֆոնդի արժեքը» (Dadrian, "Children as Victims of Genocide," 423), կամ «Ըստ ժամանակակից արևմտյան որոշ դիտորդների, պատճառներից մեկը, որ ՄԱԿ-ը որոշ դեպքերում կրոնավորիտունը նախընտրել է սպանելուց, այն է, որ հայերի ենթադրյալ «ոռասայական» հատ-

Վերջին կետը, որը կարելի է ավելացնել այս պատկերին, վերաբերում է մասնավորապես երիտասարդ աղջիկներին և Օսմանյան կայսրությանը՝ պատմական խորունկ արմատներով: Լայնորեն տարածված էր երիտասարդ աղջիկներին ունևոր տների ու ընտանիքների խնամքի տակ դնելու սովորույթը: Այդ երևույթը կոչվում էր besleme (խնամքի հանձնված դուստր/ծառա): Ցեղասպանության ընթացքում մահմեդական ընտանիքների մեջ աղջիկներին բաշխելու գործում այդ սովորույթի կարևորությունն ու ազդեցությունը հետագա ուսումնասիրության նյութ է¹⁹¹:

կանիշները ցանկալի են համարվել, եթե ինչ-որ կերպ տարանջատվեին իրական «հայկականությունից» (Matthias Bjørnlund, "A Fate Worse than Dying," 38): Այս տեսակի բացատրությունները ոչ միայն բավարար չեն, այլև ռասիստական մտածողության խրախուսման վտանգ են պարունակում, ինչն, անշուշտ, ոչ ընդունելի է, ոչ էլ ճիշտ:

191 Այդ սովորույթի ծավալումն ուսումնասիրության համար տես Nazan Maksudyan, "Foster-Daughter or Servant, Charity or Abuse in the late Ottoman Empire," *Journal of Historical Sociology* 21, №4 (December 2008): 488–512; Ferhunde Özbay et al., "Adoption and Fostering: Turkey," in *Encyclopedia of Women and Islamic Cultures*, vol. 2, Family, Law, and Politics, gen. ed. Suad Joseph (Leiden, 2005):

10

ՀԱՅԵՐԻՑ ԲՈՒՆԱԳՐԱԿԿԱՏ ԳՈՒՅՔԻ ՀԱՐՅԸ

Տեղահանություններից հետո հայերը թողել էին հսկայական քանակությամբ լքված գույք ու ունեցվածք: Հարց էր առաջացել, թե կառավարությունն ու տեղական պաշտոնյաները ինչ քաղաքականություն պետք է որդեգրեին դրանք պահպանելու կամ լուծարելու համար: Իրենց հայկական քաղաքականության հիմնական նպատակների բացահայտման իմաստով խիստ ուսուցողական է երիտթուրքերի կառավարության վերջնական պատասխանն այդ հարցին: Ներքին գործերի նախարարության տվյալ ժամանակաշրջանին առնչվող փաստաթղթերի հիման վրա կարելի է վստահությամբ պնդել, որ ՄԱԿ-ի նպատակը չի եղել Անատոլիայի հայ ազգաբնակչության վերաբնակեցումը և ստիպողաբար լքված սեփականության ու ունեցվածքի արդար փոխհատուցումը: Ընդհակառակը, բռնագրավումն ու հայերի ունեցվածքի հետագա գործածումը հստակորեն ցուցադրում են, որ երիտթուրքերի կառավարության քաղաքականության նպատակը եղել է հայերին զրկել իրենց գոյությունը շարունակելու բոլոր հնարավորություններից:

ԻՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՅՆԵՐԸ

Տեղահանված հայերին իրենց բնակեցման նոր վայրերում հատկացվելիք օգնության խնդրի կարգավորման նպատակով, հայերի թողած գույքի ու ունեցվածքի գործածության ու վաճառքի վերաբերյալ ընդունվել են մի շարք օրենքներ ու օրենսդրական ակտեր: Օսմանյան կառավարությունը հետագայում կառչելու էր այդ օրենքներից՝ իբրև հիմնական ապացույց այն բանի, որ նպատակ չի հետապնդել բնաջնջելու հայ ազգաբնակչությանը: Կառավարությունը պնդել է, որ թեև կարող են եղած լինել չարաշահման ու թալանի դեպքեր, որոնց լիակատար կանխարգելումն իր ուժերից վեր է եղել, պետությունը միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու ու պահպանելու հայերի ունեցվածքն ու գույքը, և այն վայրերում, ուր տեղավորվել են հայերը,

կորուստները փոխհատուցվել են զանազան ձևերով: Տեղ գտած օրինախախտումներն ու անօրենսությունները, պնդում էին նրանք, կառավարության գիտակցված քաղաքականության արգասիք չեն եղել, այլ կատարվել են հակառակ պետական քաղաքականության, քանի որ կառավարությունը հնարավոր ամեն միջոց ձեռնարկել է դրանք կանխելու համար:

Իրականում, այդ հարցով մեծ թվով օրինագծեր են ընդունվել՝ հիմնականում ժամանակավոր օրենքների ու հրամանների տեսքով: Դրանցից առաջինը 1915 թ. մայիսի 31-ին օսմանյան Նախարարների խորհրդի ընդունած որոշումն է, ուր ասվում էր, որ բնակության նոր վայրերում գույքն ու հողը բաժանվելու էին հայերին՝ համապատասխան մինչ այդ ունեցած նրանց նյութական ու տնտեսական կարգավիճակի: Բացի այդ, կառավարությունն անտունների համար կացաքաններ էր կառուցելու, ազարակատերերին սերմացու էր բաժանելու, լավ արհեստավորներին տալու էր գործիքներ ու նյութեր: Լքված գույքի արժեքը որոշելուց հետո այն բաժանելու էր այդ վայրերում բնակեցված մահմեդական գաղթականներին: Պետք է կազմվեին այդ անշարժ գույքերի արձանագրություններ, որոնց մեջ պետք է գրանցվեին այդ առարկաների տեսակը, արժեքն ու քանակը, ինչից հետո դրանք ևս պետք է բաժանվեին մահմեդական գաղթականներին: Եկամտաբեր այնպիսի գույքեր, ինչպիսին էին հողերը, խանութները, գործարանները, շուկաներն ու պահեստները, ներկայացվելու էին հանրային աճուրդի կամ տրվելու էին վարձով, և դրանցից ստացված շահույթը հանձնվելու էր հավատարմագրային կառավարման և տրվելու էր դրանց հայ սեփականատերերին: Կանխատեսվող բոլոր այդ գործողությունների կատարման նպատակով օրենսդրական ակտեր էին պատրաստվելու, և նույնիսկ հանձնախմբեր էին ստեղծվելու, որոնց կազմում Ներքին գործերի ու Ֆինանսների նախարարությունների պաշտոնյաների վրա էր դրվելու տուժած շրջաններում օրենսդրական այդ ակտերի կատարումը:

Նախարարների խորհրդի մայիսի 31-ի որոշումների մեջ էր նաև տասնհինգ հոդվածից բաղկացած օրենսդրական ակտը, որը հաջորդ

1 Որոշման ամբողջական տեքստի համար տե՛ս Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 131-33, 427-31 և Azmi Süslü, Ermeniler ve 1915, 111-13: Այն ավելի հասկանալի դարձնելու նպատակով, իմ բացատրությունը հիմնել եմ շտաբների պետերի (genelkurmay) հրատարակած տեքստի արդիականացված «թուրքերենով» տարբերակի վրա:

օրն ուղարկվելու էր Ներքին գործերի, Ֆինանսների ու Պատերազմի նախարարություններ²: Այդ ակտի տարբեր հատվածներն իրականում մեծ մասամբ վերոնշյալ օրենսդրական հրամանի վերաշարադրանքն էին: Դրա մեջ հատուկ նշված էին այն ուղենիշներն ու սկզբունքները, որոնց համաձայն հայերը պետք է վերաբնակություն հաստատեին իրենց նոր վայրերում, և որևէ հրահանգ չկար այն մասին, թե ինչ պետք է արվեր նրանց թողած գույքի ու ունեցվածքի հետ, ինչպես պետք է որոշվեին դրանց գները, և թե, դրանք տարածքի նոր բնակիչներին վաճառելու կամ տալու դեպքում, այդ ունեցվածքի վաճառքից ստացված եկամուտը կամ շահույթը ինչպես պետք է փոխանցվեր ունեցվածքի սկզբնական տերերին:

Այդ հարցերին վերաբերող 1915 թ. հունիսի 10-ին պատրաստված առաջին հանգամանակից կանոնակարգը բաղկացած էր երկարաշունչ ներածականից և 34 առանձին հոդվածներից³: Այդ օրենքների քննությունից տեսնում ենք հետևյալ պատկերը: Առաջին տասը կետերում խոսվում էր այն մասին, թե ինչ պետք է անել հայերի լքված ունեցվածքի հետ: Դրանք պարունակում էին հետևյալ ցուցումները. պետք էր գրանցել ունեցվածքների ցանկերը, ինչպես նաև յուրաքանչյուրի տեսակը, թիվը և հաշվարկային արժեքը, դրանք պետք էր հավաքել ու պահել այնպիսի տեղերում, ինչպիսին են շուկաները, եկեղեցիներն ու պահեստները, իսկ դրանց սեփականատերերի ինքնությունները պետք էր պահպանել հստակորեն ամրագրված, այն ապրանքներից ստացված եկամուտը, որոնք հարկ կլինեն վաճառել, պետք էր հատկացնել դրանց սկզբնական տերերին, իսկ այդ ամենը պետք է վերահսկեր ու կառավարեր Լքված գույքի կառավարման հանձնախումբը:

2 Մյուս նախարարություններին ուղարկված տեքստի ամբողջական տարբերակի համար տես Azmi Süslü, Ermeniler ve 1915, 115–16: Ազմի Սյուսլյուն ասում է, որ Ներքին գործերի նախարարության ՅՆԿՎ-ն առանձին հրատարակել է քննարկվող հրամանը (113):

3 «Հրահանգներ պատերազմական ժամանակաշրջանի պայմանների և քաղաքական արտակարգ անհրաժեշտությունների պատճառով տեղափոխված հայերին պատկանող գույքի, ունեցվածքի և անշարժ գույքի վարչական կարգավիճակի վերաբերյալ» վերնագրված ամբողջական տեքստի համար [Ahval-i Harbiye ve Zaruret-i Fevkalade-i Siyasiye dolayısıyla Mahall-i Ahire Nakilleri İcra Edilen Ermenilere Ait Emval ve Emlak ve Arazinin Keyfiyet-i İdaresi Hakkında Talimatname] տես Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. I, 139–42, 433–38; և Süslü, Ermeniler ve 1915, 117–21:

Բոլոր կետերի մեջ առանձնանում է տասներորդ կետը. «Տեղահանված ազգաբնակչությանը պատկանած անշարժ գույքի գործառնության կապակցությամբ հավելյալ քայլեր չեն ձեռնարկվի լիազորագրերի առնչությամբ, որոնք գրվել են, երբ այդ գույքերը օրինականորեն օտարվել են իրենց սեփականատերերից»: Այլ կերպ ասած՝ հայերին արգելվում էր որևէ իրավական քայլ ձեռնարկել իրենց թողած վայրերում մնացած ունեցվածքը պահանջելու ուղղությամբ: Բացի այդ, նրանք չէին կարող մտահոգվել այն գույքով ու ունեցվածքով, որոնց համար հավատարմագրային կառավարում էր նշանակվել: Ինչպես ցույց կտանք ստորև, հայերի կողմից իրենց գույքի ու ունեցվածքի տնօրինման կամ կառավարման ուղղությամբ հավատարմագրային կառավարման կամ այլ գործառնության որևէ ակտ գործնականորեն համարվում էր անվավեր՝ անկախ այն բանից, թե այն կատարվել էր նրանց տեղահանությունից առաջ, թե՛ հետո: Նրանք, ովքեր այսօր ջանում են տեղահանության գործողությունները ներկայացնել իբրև ոչ ավելին, քան կայսրության հայ բնակիչների վերատեղաբաշխում, ստիպված են տրամաբանական պատասխան տալու նշված իրադրության համար: Այդ ինչ տեսակի «վերատեղաբաշխում» է, որի ընթացքում դրան ենթարկվող մարդիկ կորցնում են իրենց սեփականության վրա ունեցած բոլոր իրավունքներն ու հսկողությունը՝ ընդհուպ մինչև օրենքի ուժով գրկվելով դրանք հետ պահանջելու իրավունքից:

Տասնմեկից մինչև քսանմեկերորդ կետերը վերաբերում են հայերից պարպված վայրերում մահմեդական փախստականներ ու գաղթականներ վերաբնակեցնելուն: Դրանք մեծամասամբ կանոնակարգում են այն հարցերը, թե ինչ չափանիշներով են տեղավորվելու որոշ մարդիկ ու խմբեր, և թե հողն ու շենքերը որտեղ և ինչպես են բաժանվելու նրանց: Դրանք առնչվում են նաև այն հարցերին, թե ինչպես վարվել այն հողերի, գույքի ու ջարդվող առարկաների հետ, որոնք չեն կարող բաժանվել, և ինչպես վարվել առանձին առարկաների ու վարձավճարների գների բնական աճի դեպքում:

Քսանչորսերորդ կետից սկսած խոսվում է տուժած շրջաններում հաստատվելիք Լքված գույքի կառավարման հանձնախմբերի իշխանության, իրավասությունների և աշխատանքային պայմանների, աշխատավարձերի ու հանձնախմբի մյուս հարցերի մասին: Հիշատակման արժանի է քսանյոթերորդ կետը, որով այդ հանձնախմբերից

պահանջվում է յուրաքանչյուր տասնհինգ օրը մեկ իրենց որոշումների ու քայլերի մասին «ամփոփիչ զեկույցներ» ուղարկել կենտրոնական կառավարության նախարարական պաշտոնյայի կամ նահանգային իշխանությունների գրասենյակ:

Ամբողջ հաղորդագրության մեջ մի եզակի կետ իսկ չկա, որ առնչվի այն եղանակին կամ մեխանիզմին, որը կարող է գործածվել գույքի սկզբնական՝ հայ սեփականատերերին իրենց լքված գույքի ու ունեցվածքի արժեքի դիմաց դրամական կամ որևէ այլ տեսակի փոխհատուցում տալու համար, կամ թե ինչ կարգ ու չափանիշներ են նախատեսվում նման դեպքերում: Միայն քսաներկուերորդ կետում տեսնում ենք հետևյալ նշումը. «Վաճառքի ու վարձակալության գնից ստացված գումարները տերերի անուններով կզետեղվեն ապահով հավատարմագրային հիմնադրամներում և հետագայում կհանձնվեն տերերին՝ համաձայն հոչակվելիք օրենսդրական ակտերի ու կարգերի»: Սակայն ոչ մի տեղեկություն չկա հետագա ամիսներին արձակված որևէ հրահանգի մասին, և ոչ էլ այս կապակցությամբ որևէ կարգ է սահմանվել: Ընդունված բոլոր որոշումները վերաբերել են լքված ունեցվածքի օտարմանը, գործածությանը, վաճառքին և այլն: Իթթիհադական կառավարությունը երբեք հիմնավոր չի զբաղվել այդ հարցով և, իհարկե, հետևողական կամ ամբողջական ծրագիր չի ունեցել հայ ազգաբնակչության տեղահանության գործողությունից ծագող խնդիրների հարցում:

Ինչպես վարը կտեսնենք ամենայն մանրամասնությամբ, Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը բառացիորեն հարյուրավոր վավերագրեր են պարունակում լքված ունեցվածքի պատշաճ գործածության ու հանձնման հարցերի վերաբերյալ և նկարագրում են այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ (և առաջացել են) այդ գործընթացում, և դրանց պատշաճ լուծումները, սակայն գրեթե ոչ մի այնպիսի փաստաթուղթ կամ գրագրություն չկա, որ վերաբերի հայերի վերաբնակեցմանը կապված խնդիրներին կամ նրանց լքված ունեցվածքի դիմաց փոխհատուցմանը: Այլ կերպ ասած՝ օսմանյան վարչակազմում նման հարց գոյություն չի ունեցել:

Հավասարապես կարևոր է նաև այն հանգամանքը, որ ոչ մի փաստաթուղթ կամ տեղեկություն չկա, որ վկայի, թե կարգավորումների մեջ նկարագրված և որոշումների ընդունման պատճառ դարձած հանգամանալի գործողությունները իրականում կատարվել են: Այս-

պես, օրինակ, թեև հրահանգներ կան այն ունեցվածքի ու գույքի տեսակի, քանակի, գնի ու սկզբնական տերերի տվյալներով գրանցամատյաններ պահելու մասին, որոնք հայերն ստիպված են եղել լքելու, և նախատեսվում է, որ այդ գրանցամատյանների բնօրինակները սահմանված կարգով պետք է հանձնվեին կառավարությանն ու լքված գույքի հանձնախմբերին, որևէ վկայություն չկա նման արձանագրությունների ճակատագրի կան ներկայումս դրանց գտնվելու վայրի մասին: Ավելին. թեև որոշված էր, որ վերոհիշյալ բոլոր հանձնախմբերը յուրաքանչյուր տասնհինգ օրը մեկ պետք է կենտրոնական կամ նահանգային կառավարությանը զեկույցեին իրենց որոշումների և գործողությունների մասին, ոչ մի տեղեկություն չկա այն մասին, թե արդյո՞ք նման որևէ զեկույց իրականում պատրաստվել է, ինչ ճակատագրի են դրանք արժանացել, կամ առհասարակ այս հարցերով որևէ թղթակցություն եղել է արդյոք այդ հանձնախմբերի ու կառավարության միջև: Այն հանգամանքը, որ այդ ժամանակից գրեթե մեկ դար է անցել, և դրանց իրական գոյության ու գործածության եզակի ապացույցի ծվեն իսկ չի հայտնվել, պարարտ հող է նախապատրաստել շահարկումների համար:

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայերի թողած ունեցվածքի ու գույքի կառավարման հարցի շուրջ բավական թղթակցություն է կատարվել կենտրոնի ու ծայրամասերի միջև: Հաճախ գրություններ են փոխանակվել՝ հստակեցնելու համար տեղական պաշտոնյաների համար անհատակ ինչ-ինչ կետեր կամ լուծելու համար խնդիրներ, որոնք ծագել են նշված կանոնակարգերը գործածելու ընթացքում: Օրինակ, 1915 թ. հուլիսի 5-ին նահանգային որոշ վայրեր ուղարկված հեռագրում, ուր խոսվում է արդեն ցանքսի ենթարկված դաշտերի մասին, Բնակեցման վարչությունը եշել է, որ «տեղեկություն ունենք, որ հայերի թողած տարածքներից որոշ շրջաններում հնարավոր չի եղել իրագործել հրահանգների ձեռնարկում թվարկված որոշ հատվածներ, որոնք վերաբերում են լքված դաշտերի օտարմանն ու ձեռքբերմանը», և հետևաբար պատշաճ կլինի «դրանք, Լքված գույքի հանձնախմբերի վերահսկողության ներքո, տալ [մահմեդական] գաղթականներին հատկացված [հողերի]ից, որոնցում կառավարությունը հունձք ու բերքահավաք է իրականացրել»: Այդ մտադրությամբ, Վերաբնակեցման գրասենյակը

պահանջել է, որ երկու օրվա ընթացքում զեկույց ներկայացվի «բանակի կամ տեղի բնակչության կողմից՝ կանոնավոր հետազոտմամբ ու գնահատումներով, թե որքան աշխատանք ու ինչ տեսակի մեքենաներ, գործիքներ ու ապրանք է հարկավոր վերոնշյալ ապրանքները բաշխելու համար»⁴:

Մինչև օրը՝ հուլիսի 5-ին Տրապիզոնի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրից երևում է, որ «լքված գույքի կառավարման ու պահպանման մասին» պատրաստվել է ութ կետանոց հատուկ հրահանգների ցանկ: Այդ հրահանգներում առանձին-առանձին բացատրվում է, թե ինչպես պետք է գրանցվի լքված գույքը, ինչպես պետք է պահպանվեն գրանցամատյանները, որտեղ պետք է պահվի շարժական գույքը, ում պետք է տրվեն գույքն ու փչացող ունեցվածքը, ինչպես պետք է վաճառվի անշարժ գույքը, ուր պիտի պահվի նման գործառնություններից ստացված եկամուտը, և ինչպես պետք է գրանցվի վերաբնակեցվող գաղթականներին տրված ունեցվածքը⁵:

Հուլիսի 13-ին բոլոր նահանգներն իրազեկվել են, որ, լքված գույքի հանձնախմբերի ձևավորումից հետո, «պետք է այդ հանձնախմբերին վստահվի ոչ միայն հայերի թողած ունեցվածքին հետևելու և այն հսկելու գործառնությամբ, այլև պարպված գյուղերում ու քաղաքներում ներգաղթողներին ու [քրդական] ցեղերին տեղավորելու հետ կապված զանազան հանգամանքներով զբաղվելը»: Այդ հանձնախմբերը հարկ եղած դեպքերում կարող էին կազմել ենթահանձնախմբեր, որոնք «պատասխանատու կլինեն [իրենց գործողությունների մասին] յուրաքանչյուր 15 օրը մեկ նախարարական գրասենյակներ զեկուցելու հարցում»⁶:

Կարգադրությունների ու որոշումների մեջ հատուկ կարևորություն է ներկայացնում 1915 թ. հուլիսի 11-ին Տրապիզոն ուղարկված հեռագրի-

ընդ նույն բովանդակությամբ այլ հեռագրեր հետագայում ուղարկվել են նաև մյուս շրջաններ⁷: Տրապիզոնի հեռագրի էությունը հետևյալն էր: Հայերի ձեռքերին եղած սեփականության մուրհակների հետ կապված բոլոր փաստաթղթերն ու հայտարարագրերը պետք է հավաքվեն ու արձանագրվեն գրանցամատյաններում, իսկ հայերին պետք է թույլատրվի ինչ-որ շինծու ձևերով դրանք փոխանցել ուրիշներին: Չպետք է թույլատրվի նաև գույքի վաճառք, որով այդ գույքը կարող է անցնել օտարերկրացիների կամ ուրիշների ձեռքը: Հեռագրում ասվում է նաև, որ, կենդանիներից ու «ժամանակի ընթացքում փչանալու ենթակա» գույքից բացի, մնացած ամբողջ ունեցվածքը պետք է դրվի պահպանության տակ: Այստեղ ևս տեսնում ենք, որ պետությունը հրամաններ է արձակում, որոնցով բացեփրաց մերժում է իրենց ունեցվածքն ազատորեն տնօրինելու իր քաղաքացիների իրավունքը և բռնի կերպով յուրացնում հայերին պատկանող ունեցվածքը:

Գոյություն ունեն նաև փաստաթղթեր, որոնցից երևում է, որ ուժի մեջ մտած այդ կարգն ու կարգադրությունները չեն սահմանափակվել միայն Տրապիզոնով: Այսպես, 1915 թ. օգոստոսի 28-ին գրեթե բոլոր նահանգներն ու գավառներն ուղարկված մի հեռագրով պահանջվել է, որ «շտապ կարգով երեք օրվա ընթացքում զեկուցվի, թե նահանգի այն հայերի կողմից, ովքեր տեղահանվել են, եղել է արդյոք գույքի կամ հողի վաճառք օտարերկրացիներին՝ սկսած այն ժամանակից,

7 BOA/DH.SFR, № 54/393, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 11: Հեռագրի բնօրինակում, որը գրվել է ի պատասխան Տրապիզոնի նահանգապետարանից հունիսի 8-ին կատարված հարցման, ասվում է. «Ներքին շրջաններ ուղարկված հայերին պատկանելու պաշտոնների հետ կապված փոխանցումների կալվածագրերի [senet] ամսաթվերն ու տեսակները պետք է արդեն գրանցվեն գրանցամատյաններում, ինչպես արվել է գույքի լուծարման ընթացքում: Այդ գործարքների հետևանքով նախօրոք գծագրված (շինծու) փոխանակումներ [danışıklı döğüs] չպետք է թույլատրվեն, ոչ էլ պետք է թույլատրվի հայերի սեփականության տակ գտնվող գույքերի անցումը օտարերկրացիների ձեռքը, և չպետք է հաստատվեն հավանական շինծու փոխանակումները: Շարժական գույքի մեջ եղած այդ առարկաները, բացի կենդանիներից և այն առարկաներից, որոնք ժամանակի ընթացքում կարող են կորցնել իրենց զինը կամ փչանալ, պետք է պահպանվեն: Բանկերի և կոմերցիոն հաստատությունների հայտերը պետք է պահպանվեն և իրագործվեն՝ դատարանների կողմից հաստատվելուց հետո»:

4 BOA/DH.SFR, № 54/301, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Սվազի, Դիյարբեքրի ու Մամուրեթյուլագիզի նահանգներ, թվագրված 1915 թ. հուլիսի 5:

5 BOA/DH.SFR, № 54/310, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 5:

6 BOA/DH.SFR, № 54/442, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Էրզրումի, Բիթլիսի, Դիյարբեքրի, Մամուրեթյուլագիզի, Տրապիզոնի, Սվազի, Հյուղավենդիզարի (Բուրսա) ու Էդիրնեի նահանգներ և Մարաշի, Ջանիկի, Իզմիրի, Կեսարիայի, (Իեր) Ջորի ու Ուրֆայի գավառներ, թվագրված 1915 թ. հուլիսի 13:

երբ հայտարարվել է նշված մարդկանց տեղահանումը [mübaşeret], մինչև ութ օր առաջ կամ մինչև նրանց [բուն] տեղահանությունը: Եթե եղել է, խնդրում ենք հայտնել [այդ գույքի] քանակն ու տեղը»⁸:

Կառավարության կողմից այդ տեղեկություններն ստանալու մտադրությունն ակնհայտ է տասն օր անց՝ սեպտեմբերի 8-ին Ադանայի նահանգ ուղարկված հեռագրից.

Կասկած չկա, որ այն օրից, ինչ հրապարակվեց տեղահանության հրամանը, մինչև նրանց բուն տեղահանության իրականացումը, այն հայերը, որոնց որոշված էր տեղահանել, դիմել են ամեն տեսակի խաբեբայությունների ու խորամանկությունների, որպեսզի իրենց տրամադրության տակ գտնվող շարժական ու անշարժ ունեցվածքը վերածեն դրամի: Այդ համաձայնություններն ու գործառնությունները, որոնց կործանարար ազդեցությունն ակնհայտ է, անշուշտ չեն կարող պաշտոնապես ճանաչվել. անհրաժեշտ է օրինականորեն չընդունել այդ պայմանագրերն ու փոխանցումները, որոնք կատարվել են այն օրից, երբ առաջին անգամ հրապարակվել է տեղահանության հրամանը, և մինչև տեղահանությունն սկսելն ու դրանից հետո»⁹:

Այս փաստաթղթերը հսկայական կարևորություն են ներկայացնում՝ այն առումով, որ ցույց են տալիս, որ օսմանյան կառավարությունը առաջիկայում տեղահանվելիք հայերին թույլ չի տվել մուրհակներ վերցնել, վաճառել իրենց ունեցվածքը կամ այն հանձնել երրորդ կողմի: Բացի այդ, որոշ ունեցվածքի «ժամանակի ընթացքում գինը կորցնելու կամ փչանալու ենթակա» դասակարգումը տեղի բնակիչների ու պաշտոնյաների առջև հսկայական չափերի հասնող կողոպուտի և

8 BOA/DH.SFR, № 55/280, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահի, Վանի ու Քոնյայի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Էսքիշեհիրի ու Նիդդեի գավառներ և Հալեպի, Ադանայի, Սվազի ու Տրապիզոնի Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. օգոստոսի 28:

9 BOA/DH.SFR, № 55-A/171, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 8:

ապօրինի ինքնահարստացման դուռ է բացել: Հսկայական կարևորություն ունեցող փաստ է տեղահանությունների առաջին ազդարարումից մինչև դրանց բուն իրագործումը կատարված հայերի շարժական ու անշարժ գույքի բոլոր վաճառքների ու փոխանցումների անվավեր հայտարարումը: 1915 թ. սեպտեմբերի 26-ին ընդունված կարգադրությունը հետագայում կրկնվելու է՝ ընդգրկվելով հայերի ունեցվածքի գործածության վերաբերյալ օրենքի ամենավճռորոշ հատվածներում:

Պետության կողմից կատարված այդ քայլը, որն արդյունավետ կերպով կանխում էր մինչև իրենց տեղահանությունը պետության հայագրի քաղաքացիների կողմից սեփական գույքի ու ունեցվածքի տնօրինումը, շատ բան է ասում այդ տեղահանման իրական նպատակների մասին: Վերջում կառավարությունն ինքն էր յուրացնելու հայերից մնացած գույքի առյուծի բաժինը: Հետագայում, երբ սկսեցին լուրեր հասնել այն մասին, որ լքված գույքերն ու ունեցվածքը տնօրինվում են շատ ցածր գներով, մի ընդհանուր հաղորդագրություն է ուղարկվել նահանգներ, որով պահանջվում էր նման բոլոր գործառնություններն անվավեր համարել, և կարգադրվում էր, որ «ոչ մի օտարերկրացու կամ կասկածելի ու անհայտ մարդու թույլ չտրվի մուտք գործել կամ ճամփորդել այն տարածքներ ու դրանց շուրջ, [որոնցից հայերն] արտաքսվում են, իսկ նրանց, ովքեր մուտք են գործում, անհապաղ հեռացնել»¹⁰:

Տեղահանությունների նպատակը, այն է՝ հայերի ունեցվածքի բռնագրավումը պետության համար, հստակորեն բացատրվում է 1915 թ. օգոստոսի 24-ին Սվազ ուղարկված հեռագրում. «Պետությունը որոշել է բռնագրավել տեղահանված հայերի անշարժ գույքն ու ունեցվածքը և վճարել նրանց [չմարված] պարտքերը: Հետևաբար, անհրաժեշտ է պահպանել կառավարությանը հանձնելու իրավունքը

10 BOA/DH.SFR, № 54-A/388, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահի, Միտոլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Էսքիշեհիրի ու Նիդդեի գավառներ և Ադանայի, Հալեպի, Մարաշի, Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահի, Էրզրումի ու Իզմիրի Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. օգոստոսի 11:

և [այդ գործողությունները] համաձայնեցնել ունեցվածքի փոխանցման օրենքների հետ»¹¹:

Բացի այդ, ամբողջ այդ ընթացքում օսմանյան վարչակարգը ստիպված է եղել մի շարք օրենսդրական ակտեր ընդունել, որոնք մասնավորապես ուղղված են եղել իր իսկ պաշտոնյաների չարաշահումները կանխելուն: Այսպես, 1915 թ. հուլիսի 24-ին Սվազի նահանգ ուղարկված հեռագրում նշվում է, որ «լքված գույքի ու ունեցվածքի վաճառքը [պետական] պաշտոնյաներին անհարիր է համարվում, քանի որ այն դուռ կրացի նենգամիտ բամբասանքների ու չարաշահումների համար»¹²: Օգոստոսի 3-ին նույն բովանդակությամբ հեռագիր է ուղարկվել բոլոր շրջաններն ու նահանգները՝ նշելով, որ կառավարությանը լուրեր են հասել, որ հանրային աճուրդներին բացեփրաց մասնակցում են պետական պաշտոնյաներ և զանազան միջոցներով տիրանում աճուրդի հանված գույքին: Այդ պատճառով, այդուհետև պետական պաշտոնյաներին արգելվում էր գնել հայերի ունեցվածքը¹³: Կառավարական առանձին գերատեսչությունների ու գրասենյակների առնչությամբ հատուկ կարգադրություններ են ուղարկվել որոշ շրջաններ: Օրինակ, Հալեպի Լքված գույքի հանձնախմբի նախագահին մի հեռագիր է ուղարկվել, ուր նշվում էր, որ «Արդարադատության նախարարության պաշտոնյաների մասնագիտական կանոնադրությունը թույլ չի տալիս նրանց ընդգրկվել լքված ունեցվածքի հարցերի մեջ»¹⁴: Այդուհանդերձ, որոշ շրջաններում թույլատրվել է կառավար-

րական պաշտոնյաներին գնել հայերի տները՝ պայմանով, որ վճարումը կատարվի նախապես»¹⁵:

Բացի տեղական մակարդակում պատահող բարդություններից, ինչպիսին էին թալանն ու ունեցվածքի յուրացումը, մեկ այլ մեծ խնդիր էր այն հանգամանքը, որ պետական կարգադրությունների ցանկում չէր բացատրվում, թե օտարերկրյա ընկերությունները, մեծամասամբ՝ գերմանական, ինչպես պետք է բավարարեին իրենց հայ հաճախորդների պահանջները: Գերմանիայի բազմաթիվ հյուպատոսներ զբաղված էին իրենց տեղակայման նահանգներում սեփական ընկերությունների պահանջները պարունակող ցանկեր կազմելով¹⁶: Նրանք այդ հայցերը բավարարելու ուղիներ էին փնտրում: Տեղահանությունների սկզբից ի վեր Գերմանիան այդ հարցով բազմաթիվ խնդրանքներ էր հղել օսմանյան կառավարությանը: Այսպես, 1915 թ. օգոստոսի 8-ին Գերմանիան կառավարությանը պաշտոնապես հայտնել էր, որ «կրած կորուստների համար պատասխանատու է նկատում օսմանյան վարչակազմին»: Այդ ջանքերը ցանկալի արդյունքի չեն հանգեցրել, և սեպտեմբերի 13-ին Բեռլինը բողոքի պաշտոնական նամակ է հղել օսմանյան կառավարությանը¹⁷:

Վերջապես, սեպտեմբերի 26-ին՝ օսմանյան Խորհրդարանը բացելուց երկու օր առաջ, Նախարարների խորհուրդը, հայերի թողած ունեցվածքի գործածությունը կարգավորելու նպատակով, հրապար-

11 BOA/DH.SFR, № 55/196, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 24:

12 BOA/DH.SFR, № 54/382, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 24:

13 BOA/DH.SFR, № 55-A/259, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էդիրնեի, Էրզրումի, Բիթլիսի, Դիյարբեքրի, Հալեպի, Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա), Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահի ու Վանի նահանգներ և Իզմիրի, Ջանիկի, Չաթալջայի, Կեսարիայի, Քարեպի (Բալիքեսիր), Մարաշի, Քալե-ի Մուլթանիյեի (Չաթալջայի) ու (Դեր) Ջորի գավառներ և Ադանայի, Էրզրումի, Հալեպի, Մարաշի, Տրապիզոնի, Ջանիկի, Սվազի, Մամուրեթյուպահի ու Դիյարբեքրի Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. օգոստոսի 3:

14 BOA/DH.SFR, № 54/160, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Լքված գույքի հանձնախմբի նախագահությանը, թվագրված 1915 թ. հունիսի 26:

15 BOA/DH.SFR, № 55/107, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հյուսիսային Կիլիկիայի (Բուրսա) նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 11:

16 DE/PA-AA/R 14086, Սամսունում Գերմանիայի հյուպատոս Քուրթոֆի զեկույցը, թվագրված հուլիսի 4, կցված Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Վանգենսայմի կողմից կանցլեր Բեթման-Հոլվեգին ուղղված 1915 թ. հուլիսի 16-ով թվագիր զեկույցին. «Ըստ նահանգապետերի պատմածի, կոմերցիոն հարցերը դրվելու են մի հանձնախմբի վրա: Ես պատրաստում եմ գերմանական ընկերությունների ու նրանց [անհատների] հայտերի ցանկ, որոնք եկել են բանկերից ու հանձնակատարներից: Ես ցանկեր եմ ստացել Օստոման բանկից, Մալոնիկի բանկից և Հոխշորասեր բանկից, որոնք ցույց են տալիս պարտատերերին և նրանց պարտքերի չափերը: Այդ հարցով ձեռնարկելիք անհրաժեշտ միջոցների վերաբերյալ խոսել եմ գավառապետի հետ»:

17 Hilmar Kaiser, "1915-1916 Armeni Soykırımı Sırasında Armeni Mülkleri, Osmanlı Hukuku ve Milliyet Politikaları", İmparatorluktan Cumhuriyete Türkiye'de Etnik Çatışma, ed. Erik Jan Zürcher (Istanbul, İletişim Yayınları, 2005), 137-38.

րակել է տասնմեկ կետից բաղկացած ժամանակավոր մի օրենք¹⁸։ Ամբողջ օրենքն այն մասին էր, թե ինչպես պետք է գործածվեր լքված ունեցվածքը՝ առանց որևէ ցուցումի կամ գեթ մեկ նշման, թե տեղահանվածների գույքի ու ունեցվածքի վաճառքից ստացված եկամուտն ինչպես պետք է փոխանցվի տեղահանվածներին։ Այդ օրենքի միակ կարևոր հատվածը (ինչպես բացատրել ենք վերը) թերևս այն դրույթն է, որով ժխտվում է տեղահանված հայերի կողմից իրենց սեփական ունեցվածքը տնօրինելու իրավունքը։ Համաձայն այդ օրենքի, «որտեղ դատարանը հաստատել է վերոնշյալ անձանց տեղահանությանը նախորդած տասնհինգօրյա ժամկետում ունեցվածքը հանձնելու հետ կապված շինծու գործառնության կամ խաբերայական գործարքի առկայություն, այդ պայմանավորվածություններն ու համաձայնությունները համարվում են րեկանված ու անվավեր»։

Երբ հաջորդ տարի օսմանյան Խորհրդարանն սկսել է իր նիստերը, Սենատի նախագահ Ահմեդ Ռիզան ծանր քննադատության է ենթարկել ժամանակավոր օրենքն ու դրա հիմքում ընկած իրական նկատառումը՝ այն անվանելով «ճշում։ Ձեռքիցս բռնիր, ինձ իմ գյուղից դուրս նետիր, իսկ հետո վաճառիր իմ գույքն ու ունեցվածքը. նման բանը երբեք թույլատրելի և պատշաճ չէ։ Ո՛չ օրենքը, ո՛չ օսմանների խիղճը չեն կարող դա ընդունել»¹⁹։ Այնուամենայնիվ, օրենքը րեկանելու և դրա կատարումը դադարեցնելու սենատորի բոլոր ջանքերն անցել են ապարդյուն։ Բացի այդ, չնայած ժամանակավոր օրենքն ուղարկված էր խորհրդարանական հանձնաժողովի քննությանը, այն երբեք չի քննարկվել բուն Խորհրդարանում։

Վաշինգտոն ուղարկված մի զեկույցի մեջ դեսպան Մորգենթաուն հետաքրքիր մանրամասնություն է հաղորդել օսմանյան Խորհրդարանի քանակների ու քննարկումների մասին։ Ըստ դեսպանի, Թալեաթ փաշան հսկայական ճշում է քանեցրել Ահմեդ Ռիզայի վրա, որպեսզի վերջինս դադարեցնի իր ջանքերը, և երբ սենատորը շա-

18 Օրենքը հրապարակվել է օսմանյան TV լրագրի 1915թ. սեպտեմբերի 27-ի համարում (թիվ 2303)՝ իբրև «Ժամանակավոր օրենք այլ շրջաններ տեղափոխված անձանց լքած ունեցվածքի ու գույքի և չմարած պարտքերի վերաբերյալ» [Áhir Mahallere Nakledilen Eshâsin Emvâl ve Düyûn ve Matlûbât-ı Metrukesi Hakkında Kanun-ı Muvakkat]:

19 Օսմանյան Խորհրդարանի կողմից այս հարցի քննարկումների ու քանակների համար տես Bayur, Türk İnkılabı Tarihi, h. 3, մաս 3 (Ankara, Türk Tarih Kurumu, 1983), 48:

րունակել է մնալ հայերի հանդեպ համակրալից իր դիրքորոշմանը, ներքին գործերի նախարարը սպառնացել է. էլ ավելի դաժան միջոցներ կիրառել նրանց դեմ։ Մորգենթաուն այս հարցի մասին գրել է հետևյալը. «Այլ աղբյուրներից հաղորդում են, որ կառավարությունը խոստացել է փոխել հայերի հանդեպ իր վարվելակերպը, եթե Ահմեդ Ռիզան ու նրա ընկերները համաձայնվեն հարցապնդումների չենթարկել կառավարությանը։ Ահմեդ Ռիզան ու նրա ընկերներն այդպես էլ վարվել են»²⁰։

Այստեղ հարկ կա հիշատակելու սեպտեմբերի 26-ի օրենքի հետ կապված ևս մեկ որոշում, որն ընդունվել է 1915թ. նոյեմբերի 8-ին։ Այդ որոշման մեջ խիստ հանգամանալից կերպով բացատրվում է, թե օրենքում արծարծված կետերն ինչպես են իրականացվելու։ Կարևորն այն է, որ սեպտեմբերի 26-ի օրենքն ու նոյեմբերի 8-ի որոշումը օրենսդրական հիմք են ստեղծել, որպեսզի կառավարությունը հետագայում հանրապետական ժամանակաշրջանում, վերահսկի ու բաշխի հայերի ունեցվածքները։ Այդ օրենքն ու որոշումն ուժի մեջ են մնացել բազմաթիվ տարիներ²¹։

ՀԱՅԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵՒ ԵՆ ԻՐԵՆՑ ԳՈՒՅԸԻ ԵՎ ՈՐԵՆՑՎԱԾԸԻ ԴԻՄԱՑ

1915թ. մայիսի 30-ին, հունիսի 10-ին ու սեպտեմբերի 26-ին ընդունված վերն ամփոփված օրենքներն ու օրենսդրական ակտերը հաճախ ներկայացվում են իբրև ամենաուժեղ վկայությունները հոգուտ այն փաստարկի, թե օսմանյան կառավարությունը հայերին ոչնչացնելու մտադրություն չի ունեցել²²։ Սակայն օսմանյան կառավարության ու ծայրամասերի միջև թղթակցությունը և առաջինի ուղարկված հրամանները հստակորեն վկայում են, որ կառավարության հիմնական նպատակը եղել է տեղահանված հայերի թողած գույքի ու

20 NA/RG 59, 867.00/797.5, Օսմանյան կայսրությունում դեսպան Մորգենթաունի «մասնավոր և խիստ զաղտնի» մակագրված զեկույցը պետական քարտուղար Լանսինգին, թվագրված 1915թ. նոյեմբերի 4, հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 317: Հարցի վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար տես Dadrian, "Genocide as a Problem," 267-69:

21 TV, 1915թ. նոյեմբերի 8, թիվ 2343:

22 Halaçoğlu, Ermeni Tehciri ve Gerçekler, 68-69; Süslü, Ermeniler ve 1915, 109-22.

ունեցվածքի բռնագրավումը և դրանով հայկական համայնքը նյութապես կործանելը: Սեպտեմբերի 26-ի օրենքի ընդունումից հետո Անատոլիական երկաթուղային ընկերության տնօրեն Արթուր Գվիները, որն այդ ժամանակ Բեռլինում էր, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանն է ներկայացրել այդ օրենքի ֆրանսերեն թարգմանությունը: Օսմանյան կառավարության կողմից օգոստոսի 24-ին Սվազ ուղարկված հեռագրից (նշված ծանոթ. 11-ում) հավանաբար անտեղյակ՝ Գվիները, բացահայտ ծաղրով, նոր օրենքն ամփոփել է հետևյալ կերպ. «[Այդ օրենքը] կարելի է պարզ ու հստակ ներկայացնել երկու դրոյթով. առաջին դրոյթ՝ հայերի սեփականությունը պետք է յուրացվի, երկրորդ դրոյթ՝ [օսմանյան] կառավարությունը պետք է տիրանա տեղահանվածների ունեցվածքին և կվճարի կամ չի վճարի [սրանց] պարտքերը»²³: Հիմնվելով Ստամբուլում գտնվող գործարարների տեղեկությունների ու կարծիքների վրա՝ Գերմանիայի դեսպանության իրավաբան փորձագետները (որոնք կատարել էին նշված օրենքի իրավական վերլուծությունը) այդ օրենքը բնութագրել են իբրև «դիակապտության օրինականացում». մի բնորոշում, որը ճշմարտությունից հեռու չէր²⁴:

Օտարերկրյա այն դիվանագետները, որոնք տեսել են, թե նահանգներում ինչպես է իրականացվել այդ թալանը, իրենց մայրաքաղաքները ողողել են զեկույցների մի իսկական հեղեղով, որոնք պարունակում են կատարվող դեպքերի մասին ականատեսների վկայություններ ու փաստացի տեղեկություններ²⁵: Այդ զեկույցների ընդհանուր բովանդակությունը լավ արտահայտված է Հալեպում Ամերիկայի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի զեկույցում, որը եղել է տարածաշրջանի իրադարձությունների ականատեսը: Նա իրադարձությունները բնորոշել է իբրև «վիթխարի թալանի ծրագիր և մի ժողովուրդ վերացնելու վերջնական հարված»²⁶:

23 DE/PA-AA/R 14088, Անատոլիական երկաթուղիների ընկերության տնօրեն Արթուր Գվիների նամակը Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 7:

24 Hilmar Kaiser, "1915–1916 Ermeni Soykırımı Sirasında Ermeni Mülkleri," 141.

25 Այդ խնդրի հանգամանալիքն արևմտյան համար տես Gust, Völkermord an den Armeniern, 44–50; Taner Akçam, A Shameful Act, 272–74; Hilmar Kaiser, նույն տեղում, 141:

26 NA/RG 59, 867.4016/148, Հալեպում հյուպատոս Ջեյմս Բ. Ջաքսոնի զեկույցը դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. օգոստոսի 19, գտնվում

Սակայն այստեղ ոչ թե փորձելու եմ պատասխանել այն հարցերին, թե ինչ զանազան միջոցներ են կիրառվել, կամ թե ինչպես են թալանվել հայերի լքած գույքերը, այլ հետևյալ շատ ավելի էական հարցերին: Ինչ են ասում օսմանյան առկա փաստաթղթերը հայերի վերաբնակեցման վայրերում կիրառված միջոցառումների մասին: Թղթակցության ինչպիսիք եղանակ է կիրառվել, որ նշված է 1915 թ. մայիսի 31-ի որոշման մեջ՝ հողերի, տների և վերաբնակեցվող հայերին իբրև փոխհատուցում տրվելիք այլ գույքի հարցում: Ինչ փաստաթղթեր գոյություն ունեն, որոնք առնչվում են տեղահանված հայերի թողած ունեցվածքի ֆինանսական կամ նյութական հատուցմանը և նման գործառնություններ իրականացնելիս անխուսափելիորեն ծագող խնդիրներին:

Օսմանյան արխիվներում այս հարցերն ուսումնասիրող ոչ մի հետազոտող ի վիճակի չի եղել մեկ նշանակալի փաստաթուղթ իսկ գտնելու, որ վերաբերի վերաբնակեցման, հողերի բաշխման կամ իրենց նոր բնակեցման վայրերում հայերի կացարանների կամ իրենց ունեցվածքը լքել ստիպված հայերին փոխհատուցում տալու հարցերին: Սակայն, ինչպես մահմեդական գաղթականների տեղավորումը դյուրացնելու նպատակով կառավարության զանազան գործողությունների առնչությամբ ցույց կտրվի ստորև, գոյություն ունեն բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վերաբերում են խնդրո առարկա նահանգներ տեսուչներ ուղարկելուն, այն բանին, թե նրանք ինչպես պետք է զբաղվեին վերաբնակեցմամբ, և թե տեսուչների զեկույցների հիման վրա ինչ միջոցներ է ձեռնարկել օսմանյան վարչակազմը: Այդ հարցով առկա է հատուկ հաղորդագրություն, որը պարունակում է տասնվեց առանձին կետ, որոնցում ընդարձակ հրահանգներ են տրվում, թե ինչպես ապահովել գաղթականների առողջությունը, ուտելիքը, հագուստը, վերականգնողական և մյուս կարիքները, և թվարկվում են այն պայմանները, որոնք պետք է կիրառվեն այդ ընթացքում²⁷:

Միայն Բաֆրայում (Մամսունի նահանգ) գտնվող մահմեդական գաղթականների վերաբերյալ առնվազն չորս թե հինգ փաստաթուղթ

է United States Official Records, ed. Sarafian, 207:

27 BOA/DH.SFR, № 62/100–101, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ-ի Վիճակագրության մասնաճյուղի ծածկագրված հեռագիրը Մոսկովի նահանգ, թվագրված 1917 թ. մարտի 23:

կա, որ վերաբերում է վերաբնակեցման ընթացքում հանդիպող գանազան խնդիրներին: Այսպես, 1916 թ. դեկտեմբերի 25-ին Ջանիկի (Մամսուն) գավառապետին ուղարկված մի հեռագրում նշվում է, որ «արտահանման առարկան ապահովելու հարցում պատասխանատու պաշտոնյա Հիլմի բեյը, որը գտնվում է Թերմեում, իրադարձությունները ղեկավարելու ընթացքում զեկուցել է օրական վճարների ու ապրանքի բաշխման հարցում տեղ գտած բազմաթիվ խախտումների մասին»: Հեռագրով պահանջվում է, որ «այս կարևոր հարցով անհպաղ հետաքննություն կատարվի», և խնդիրը լուծվի²⁸:

1917 թ. հունվարի 30-ին Ջանիկ ուղարկված մեկ այլ հեռագիր տեղական պաշտոնյաներին իրազեկում է, որ շրջան ուղարկված տեսուչներից տեղեկություն է ստացվել, որ «Բաֆրայի [մահմեդական] ներգաղթողներն ու փախստականները ոչ միայն վատ են տեղավորված՝ իրենց պատշաճորեն տներ, հողեր ու սերմնացու չտրամադրելու պատճառով, այլև, ի լրումն դրա, արդեն իսկ տեղավորված ներգաղթողներին հանել են իրենց տներից»: Ցեղային ու ներգաղթային հարցերի վարչությունը պահանջում է, որ «կարգադրվեն և շտկվեն Բաֆրայի ներգաղթողների ու փախստականների գործերը, և վերջ դրվի Բաֆրայից եկող բողոքների անվերջ [հոսքին]»²⁹:

Սակայն ապարդյուն է նման հեռագրերի որոնումը տեղահանված հայերի բնակեցման հարցով: Կրկնենք՝ չի երևում, թե իթթիհադական ղեկավարների մտքում որևէ լուրջ մտահոգություն է եղել հայերի վերաբնակեցման քաղաքականության, նրանց թողած գույքի փոխհատուցում փոխանցելու կամ այն խնդիրների առնչությամբ, որոնք ծագելու էին այդ ընթացքում: Եվ դա է հիմնական պատճառը, որ այդ նյութի վերաբերող ոչ մի փաստաթուղթ հնարավոր չի գտնել: Միայն այդ փաստն արդեն բավական է՝ ցույց տալու համար, թե ո՞րն է եղել տեղահանության քաղաքականության իրական նպատակը:

Մի գործում, որը գրվել է Թուրքիայի պատմության պաշտոնական վարկածը պաշտպանելու նպատակով, Յուսուֆ Հալաչոլուն պնդում

է, թե «[լքված] գույքի վաճառքներից ստացված փողը Լքված գույքի հանձնախմբերի կողմից ուղարկվել է [համապատասխան] սեփականատերերին: Նաև, տեղահանված [հայերը], որոնք ժամանել են վերաբնակեցման վայրեր, իրենց փոխանցված այդ փողով բիզնեսներ են հիմնել և դրանով կարողացել հարմարվել իրենց նոր միջավայրին»³⁰: Քանի որ այդ պնդումը այստեղ ներկայացվող փաստարկման ճիշտ հակառակն է, պետք է ուսումնասիրվի ավելի հանգամանորեն:

Իբրև իր պնդման ապացույց, Հալաչոլուն երեք տարբեր փաստաթուղթ է հղում՝ երեքն էլ հեռագրեր: Հետաքրքիրն այն է, որ նա մեջբերում չի անում դրանցից և ոչ մեկից և նույնիսկ, թեկուզ հպանցիկորեն, չի շարադրում դրանցից որևէ մեկի բովանդակությունը: Եթե դա աներ, ի հայտ կգար հետևյալ տեղեկությունը. բոլոր փաստաթղթերը մինևնույն դեպքին են վերաբերում, և երեքն էլ ուղարկվել են մինևնույն օրը՝ երեք տարբեր ուղղությամբ: Եվ, ամեն բանից առաջ, այդ հեռագրերից և ոչ մեկը որևէ կերպ չի առնչվում հայերի լքված գույքի ու ունեցվածքի վաճառքից որևէ փոխհատուցում վերադարձնելու հարցին:

Ըստ արխիվային համարակալման, առաջին՝ թիվ 50/348 հեռագիրն ուղարկվել է ՑՆԿՎ-ի կողմից՝ այդ վարչության տնօրեն Քայային, որն այդ ժամանակ գտնվում էր Հալեպում: ՑՆԿՎ-ն հեռագրով նրան տեղեկացնում էր, որ «Հալեպում լքված գույքի [վաճառքից ստացված] շահույթից վեց հարյուր հազար դուրուշ՝ ևս երկու հարյուր հազար դուրուշ շահույթի հետ միասին, ուղարկվելու է Էսքիշեհիրից, և կարող է ծախսվել հայերին հատկացնելու ու տեղահանելու վրա»³¹: Երկրորդ հեռագիրը, որ կրում է 50/349 թիվը, ուղարկվել է Հալեպի նահանգապետի պաշտոնակատարին և տեղեկացնում է, որ փողը գալու է Էքիշեհիրից, և որ նա «լիազորված է [այդ փողը] ծախսելու հայերին հատկացնելու ու տեղահանելու վրա»³²: Երրորդ հեռագիրն ուղարկվել է Էսքիշեհիրի գավառապետին՝ խնդրելու համար, որ

30 Yusuf Halaçoğlu, Ermeni Tehciri ve Gerçekler, 69.

31 BOA/ŞFR.DH, №57/348, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հալեպի ներգաղթային հարցերի (Muhacirin Müdüri) տնօրեն Քայային, թվագրված 1915 թ. նոյեմբերի 8:

32 BOA/ŞFR.DH, №57/349, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հալեպի գործող նահանգապետին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 8:

28 BOA/DH.ŞFR, №71/70, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 25:

29 BOA/DH.ŞFR, №72/124, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1917 թ. հունվարի 30:

վերոհիշյալ դրամներն ուղարկվեն Հայկաի Գրանցումների գրասենյակ³³:

Ինչպես կարելի է տեսնել, երեք հեռագրում էլ խոսվում է միևնույն դեպքի մասին. Էսքիշեհիրի գավառապետին խնդրում են հայերի լքված գույքից առաջացած որոշակի գումար ուղարկել Հայկաի նահանգ՝ հոգալու համար հայերի տեղահանության ընթացքում ծագող ծախսերը: Նույն օրը Հայկա ուղարկված մեկ այլ հեռագրից, որի մասին Յուսուֆ Հալաչոլուն չի նշում, պարզ է դառնում, որ այդ ամբողջ գումարը ծախսվելու էր կառավարության ծախսերը հոգալու վրա. «նահանգը տեղեկացված է, որ հարմար է նկատվում, որ ձեր հեռագրի մեջ զեկուցված 645.000 դուրուշից [որն ստացվել է հայերի] լքված գույքի կենդանիների վաճառքից, 600.000-ը ծախսվի տեղահանությունների ծախսերի ու հայերին հատկացնելու վրա»³⁴:

Խիստ պերճախոս է այն հանգամանքը, որ օսմանյան արխիվներում իբրև գլխավոր տնօրեն աշխատող անձը, որը հնարավորություն ունի օգտվելու արխիվում պահվող յուրաքանչյուր թղթից ու փաստաթղթից, չի կարողանում նույնիսկ մեկ փաստաթուղթ մատնանշել, որն իրոք ցույց տա մի դեպք, երբ հայերը վերաբնակեցման իրենց վայրերում փոխհատուցվել են իրենց թողած գույքի ու ունեցվածքի դիմաց, և որ միակ աղբյուրները, որ նա գործածում է իր պնդումն արդարացնելու համար, քննարկվող հարցի հետ որևէ առնչություն չունեցող մի քանի փաստաթուղթ են:

Եզրափակենք: Օսմանյան փաստաթղթերում ոչ մի հաստատում չի գտնում այն պնդումը, թե տեղահանված հայերին տվյալ ժամանակի օսմանյան տարբեր օրենքներով ու որոշումներով հողերի, տների, սերմնացուի, ապրանքների և գոյության այլ միջոցների խոստումները երբևիցե կատարվել են:

ԻՆՉՊԵՍ ԵՆ Ի ՎԵՐՉՈ ԳՈՐԾԱԾՎԵԼ ՀԱՅԵՐԻ ԳՈՒՅՔԵՐԻ ՎԱՃԱՈՔԻՑ ԱՍԱՑՎԱԾ ՀԱՍՈՒՅԹՆԵՐԸ

Թեև օսմանյան աղբյուրներում փաստաթուղթ չի հայտնաբերվել, որ վերաբերեր տեղահանված հայերին իրենց թողած գույքի դիմաց փոխհատուցելուն, մեծ թվով փաստաթղթեր կան, որոնք առնչվում են հենց այդ գույքի տնօրինմանը, ինչպես նաև այն մարդկանց, ում դրանք պետք է տրվեին, գույքի լուծարմանը և հասույթի գործածմանը: Փաստաթղթերում վեր է հանվում հետևյալ իրականությունը. հայերի թողած գույքի գործածման առնչությամբ ժամանակի օսմանյան ղեկավարությունը հետևել է նախապես ծրագրված ու հանգամանորեն համակարգված քաղաքականության՝ անկախ այն հանգամանքից, թե այդ քաղաքականությունը որքանով է հաջող ընթացել տեղական լայնատարած կոռուպցիայի պայմաններում: Երիտթուրքերի վարչակազմն այդ գույքն ու դրամներն այնքան հիմնավորապես է շահագործել, որ այլևս ոչինչ չի մնացել հայերին տալու համար: Այդ ունեցվածքներն ու դրանց վաճառքից ստացված հասույթը գործածվել են վեց հիմնական նպատակի համար. 1. մահմեդական գաղթականների կարիքների, 2. մահմեդական բուրժուազիայի ստեղծման, 3. քանակի կարիքների, 4. տեղահանությունների վրա կառավարության կատարած ծախսերը հոգալու, 5. կառավարության զանազան կարիքների և 6. աշխարհագրային ջոկատների կազմակերպման վրա: Այս կետերին ուշադիր նայելու դեպքում կարելի է հասկանալ, թե կատարվածն ինչն էր հայերի ունեցվածքի պետականորեն կազմակերպված կողոպուտ, և թե ինչն էր հայերին տալու համար ոչինչ չէր մնում:

ԱՄՅՍԵՂԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ինչպես ասվեց ավելի վաղ՝ կառավարության կողմից տեղահանությունների ու վերաբնակեցման քաղաքականության ակունքների առիթով, հայ ազգաբնակչության տեղահանումն ու նրանց փոխարեն մահմեդականների բնակեցումը որոշված են եղել շատ ավելի վաղ, քան սկսվել է այդ քաղաքականության կենսագործումը: Ըստ որոշ փաստաթղթերի, մահմեդականներ գաղթականներին ու փախստականներին որտեղ տեղավորելու հարցերը որոշված են եղել նույնիսկ մինչև հայերի տեղահանումը: Դրա հետևանքով, հենց սկսվեցին հա-

33 BOA/\$FR.DH, №57/350, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էսքիշեհիրի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 8:

34 BOA/DH.\$FR, №57/342, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Հայկաի Լքված գույքի կառավարման հանձնախմբի նախագահությանը, թվագրված 1915 թ. նոյեմբերի 8:

յերի տեղահանությունները, գրեթե անմիջապես սկսվեց մահմեդականների բնակեցումը, և հայերից մնացած հողերի, գույքի ու ունեցվածքի հանձնումը նորեկներին լրիվ բնական էր: Այն եղանակը, որով պետք է կատարվեր այդ վերաբաշխումը, կարգավորվել է 1915 թ. մայիսի 30-ի ու հունիսի 15-ի որոշումներով:

Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության պահպանված փաստաթղթերի մեջ նահանգներ ուղարկված բառացիորեն հարյուրավոր հեռագրեր կան, որոնք վերաբերում են մահմեդական գաղթականների ու փախստականների վերաբնակեցմանը հայերից մնացած տներում և վերջիններիս ունեցվածքը նորեկների մեջ բաժանելուն: Այսպես, 1916 թ. փետրվարի 26-ին Հալեպ, Ուրֆա ու Մարաշ ուղարկված և «գաղտնի պահել» մակագրած հեռագիրը պարունակում է հետևյալ հատվածը.

Փախստականների մի մասը, որ է պատերազմի գոտուց քշվել է դեպի Դիյարբեքիր, պետք է ուղարկվի Այինթաբ (Այնթափ), Մարաշ ու Ուրֆա և տեղավորվի այնտեղ: Ճիշտ ինչպես փախստականների կողմից այս ձևով գործածվելու են [հայերից] մնացած տները, փախստականներին ապահովելու և հագցնելու համար լքված ունեցվածքի գները որոշելուց հետո գաղթականների տեղավորման մասը ևս պետք է հաշվարկվի, և կարող է նաև իրենց հանձնվել: [Լքված գույքի] լուծարման հանձնախմբերին գրավոր հաշվետվություն է ներկայացված այս իրավիճակի վերաբերյալ³⁵:

Նույն օրը նմանատիպ մի հրաման է հեռագրվել Տրապիզոն, կրկին՝ «գաղտնի պահել» գրառմամբ: Երկու հեռագրերի միջև միակ տարբերությունն այն է, որ «Դիյարբեքիր» բառը փոխարինվել է «Սվազ, Ջանիկ ու Չորում» բառերով, որտեղից մահմեդական ներգաղթողները «պետք է ուղարկվեն հարևան նահանգներն ու գավառները և տեղավորվեն այնտեղ»³⁶:

35 BOA/DH.ŞFR, № 61/117, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ և Ուրֆայի ու Մարաշի գավառներ, թվագրված 1916 թ. փետրվարի 26:

36 BOA/DH.ŞFR, № 61/122, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 26:

Բիթլիսի գավառապետը ևս հատուկ ձևով տեղեկացվել է, որ պետք է գործածի «լքված ունեցվածքի մեջ առկա պաշարները, հագուստներն ու մյուս իրերը»՝ նոր ժամանող մահմեդականներին հագցնելու և նրանց մյուս կարիքների համար³⁷: Այդ նպատակով հատուկ հեռագրեր են ուղարկվել նաև Լքված գույքի լուծարման հանձնախմբերին: 1916 թ. մարտի 4-ին տարբեր նահանգներ ուղարկված հեռագրում պահանջվում է «վերամշակված ու չվերամշակված նյութերը տեղավորել լքված գույքի պահեստատներ ու պահեստներ՝ հագցնելու համար նահանգի ներգաղթողներին»³⁸: Մի քանի նահանգ ու շրջան ուղարկված մեկ այլ հեռագրով Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչությունը պահանջել է, որ «անօգնական այն մարդիկ, որոնք ոչ մեկին չունեն [որ իրենց օգնեն] և փախել են պատերազմական գոտիներից... ինչպես նաև նրանք, ովքեր կարիքի մեջ են», տեղավորվեն «լքված գույքերի մեջ եղած տներում», և որ, ի լուծում «[վերոհիշյալ] լքված գույքերից [նրանց համար] ունեցվածքի ու մթերքի տրամադրման... շրջանային կառավարություններն ու համայնքները պետք է փորձ անեն աշխատանք գտնելու այդ մարդկանց համար և հավաստիանալու, որ նրանց բարօրության համար գործադրվել է ամեն միջոց ... որպեսզի կարողանան [նրանց] ապահովել օրավճարով»³⁹: Ներգաղթած մահմեդականներն իրավունք ունեին մերժելու հայերի լքած ունեցվածքի ստացումն ու գործածումը: Եթե տեղական իշխանությունները չէին հետևում այդ կարգադրություններին կամ գիտակցաբար անտեսում դրանք, զգուշացում էին ստանում կենտրոնական կառավարությունից: Օրինակ, 1916 թ. հունիսին կայսրության գրեթե բոլոր շրջաններն ուղարկված մի հեռագրով պահանջվում է «պատերազմական գոտիներից եկած փախստական-

37 BOA/DH.ŞFR, № 61/120, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Բիթլիսի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 26:

38 BOA/DH.ŞFR, № 61/247, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի Լուծարման հանձնախմբին, թվագրված 1916 թ. մարտի 4:

39 BOA/DH.ŞFR, № 63/261, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Անկարայի, Ադանայի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոյի (Բուրսա), Դիյարբեքիրի, Կաստամունուի, Մամուրեթյուլագիզի, Սվազի ու Տրապիզոնի նահանգներ և Իզմիրի, Էսքիշեհիրի, Ուրֆայի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի ու Նիղդեի գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 10:

ներին արտոնյալ կարգով հատկացնել այն դատարկ տները, որոնք գտնվում են լքված գույքերի մեջ»⁴⁰:

Որոշ դեպքերում, երբ հայերի թողած գույքերն էժան գներով գնել կամ վարձել են տեղի երևելիները կամ պետական ծառայողները, տեղական պաշտոնյաներին կարգադրվել է դրանք անհապաղ վերատնօրինել և հանձնել ներգաղթողներին:

Որոշ նահանգներից եկող զեկույցների բովանդակությունից տեղեկանում ենք, որ լքված տները զբաղեցվել են տեղացիների, մասնավորապես [տեղի] երևելիների ու պետական որոշ ծառայողների կողմից՝ դրանք էժան գնով գնելու և [կամ] վարձակալելու նպատակով: Քանի որ բացարձակապես անընդունելի է նման տները [այդ համայնքների] ազդեցիկ մարդկանց ու երևելիներին տալը, երբ այդքան շատ փախստականներ ու գաղթականներ կարիքի մեջ են և արժանի պաշտպանության ու օգնության, պետք է հայտարարվի, որ հնարավոր բոլոր տները պետք է անհապաղ պարպվեն և հատկացվեն ներգաղթողներին ու փախստականներին՝ լիովին անտեսելով որևէ դիմադրություն կամ հակառակություն [որ կարող է դրսևորվել այդ մարդկանց կողմից]⁴¹:

Քանի որ տեղացիների կողմից տների յուրացումները շարունակվել են, 1916 թ. հոկտեմբերին նահանգներ է ուղարկվել ավելի

40 BOA/SFR, №65/36, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Բիթլիսի, Բեյրութի, Դամասկոսի, Քոնյայի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Իջևի, Բոլոսի, Թեքեի, Լեռնալիբանանի, (Դեր) Ջորի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մենթեշեի, Մարաշի գավառներ, թվագրված 1916 թ. հունիսի 19: Տե՛ս. See BOA/DH.SFR, №65/37:

41 BOA/DH.SFR, №68/155, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի, Ադանայի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Մամուրեթյուպահի, Էրզրումի, Այդինի, Բիթլիսի, Բեյրութի, Դամասկոսի, Քոնյայի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Էսքիշեհի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Նիղդեի, Իջևի, Բոլոսի, Թեքեի, Լեռնալիբանանի, (Դեր) Ջորի, Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Քյութահյայի, Մենթեշեի ու Մարաշի գավառներ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 3:

վաղ արձակված հրամանի ավելի խիստ ձևակերպումներով կրկնությունը, որով տեղական պաշտոնյաներին ասվում էր, որ «լքված այն տները, որոնք զբաղեցվել են պետական ծառայողների ու տեղի բնակիչների կողմից, պետք է անմիջապես պարպվեն և հանձնվեն ներգաղթողներին ու փախստականներին՝ առանց հաշվի առնելու որևէ խոչընդոտ կամ [տեղացիների ներկայացրած որևէ] խնդրանք», և ավելացվում, որ «այդ հարցի վերաբերյալ հրահանգները չեն կրկնվելու: Խնդրում ենք զեկույցել [այդ ջանքերի] արդյունքների մասին»⁴²:

Որոշ շրջաններում լքված տները վարձակալության էին տրվել նորեկներին, սակայն երբ պարզվել է, որ փախստականներից կամ ներգաղթածներից ոմանք, ովքեր չէին կարողացել վարձը վճարել, վտարվել են տներից, մեկ այլ ընդհանուր հրաման է ուղարկվել բոլոր նահանգներ՝ կարգադրելով անհապաղ վերջ տալ նման վտարումներին: Այսպես, 1917 թ. սեպտեմբերի 1-ի հեռագրով հայտարարվում է.

պարզվել է, որ... այն փախստականներից ու ներգաղթածներից, ովքեր տեղավորվել են լքված գույքերում, [վարձ է պահանջվել] և հրամայվել, որ վարձը չվճարողները դուրս վճարվեն, և տները պարպվեն... [Հրամայված է, որ] փախստականներին ու ներգաղթածներին հանձնված լքված գույքերը չպետք է պարպվեն... անշարժ գույքերը պետք է հատկացվեն ներգաղթողներին ու փախստականներին և, հնարավորության սահմաններում, չվճարվեն, և ներգաղթողներն ու փախստականները չպետք է վտարվեն իրենց տներից⁴³:

42 BOA/DH.SFR, №69/148, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի, Սվազի, Դիյարբեքի, Ադանայի, Քոնյայի ու Հալեպի նահանգներ և Նիղդեի, Կեսարիայի, Ուրֆայի, Մարաշի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 14:

43 BOA/DH.SFR, №79/172, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի, Անկարայի, Այդինի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Քոնյայի, Մոսուլի ու Կաստամունուի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի, Մենթեշեի, Կեսարիայի, Թեքեի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Իջևի, Քյութահյայի, Էսքիշեհիի, Մարաշի ու Նիղդեի գավառներ, թվագրված 1917 թ. սեպտեմբերի 1:

Ինչպես վերը նշվեց, մահմեդական որոշ խմբերի, ըստ էության՝ քաղաքական պատճառներով, հեռացրել էին հատկապես որոշ շրջաններից, որոնք գտնվում էին Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի վերահսկողության տակ: Որոշ փաստաթղթերից կարելի է հասկանալ, որ այդ խմբերին տեղավորելու ու տներով ապահովելու վերաբերյալ հատուկ հրահանգներ են արձակվել: «Հրատապ» մակագրված և 1916 թ. ապրիլի 13-ին համապատասխան նահանգներ ուղարկված մի հրահանգով պահանջվել է «մեծ ուշադրություն հատկացնել, որ Չորրորդ բանակի հրամանատարության կողմից դուրս ուղարկված ընտանիքները որևէ տեսակի բողոքի կամ անհարմարավետության պատճառ չունենան», և «նրանց անմիջապես ապահովել լքված գույքերի այն տներով, որոնք հարմար են և համապատասխանում են նրանց նախկին տնտեսական ու սոցիալական դիրքին, և նրանց լավ հոգ տանել՝ ձեռք բերելով ու մատակարարելով առաջին անհրաժեշտության [զանազան] պարագաներ»⁴⁴: Ջեմալ փաշան նույնպես տեղեկացված էր իրադրությանը և վերջին իրադարձություններին, ինչի մասին իմացել էր իրեն հասցեագրված և «անձնական» մակագրված հանգամանալից գեկույցից⁴⁵: Դրանից կարճ ժամանակ անց Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչությունը պատրաստել և ուղարկել է տասնչորս կետից բաղկացած հրահանգների հատուկ ցանկ, որը «վերաբերում է այն եղանակին, որով Չորրորդ բանակի իրավասության ներքո գտնվող տարածքից հանված այդ ընտանիքները պետք է տեղավորվեն ու մատակարարվեն» տուժած նահանգներում⁴⁶:

44 BOA/DH.ŞFR, №62/307, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քյուլթահյայի, Ցոզղաթի, Անկարայի, Չորումի, Սվազի, Ամասիայի, Թոքատի, Քոնյայի, Սպարտայի, Բոլուի, Կաստամունուի ու Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգներ ու գավառներ, թվագրված 1916 թ. ապրիլի 13:

45 BOA/DH.ŞFR, №62/308, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը ռազմածովային նախարար և Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1916 թ. ապրիլի 13:

46 BOA/DH.ŞFR, №63/123, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քյուլթահյայի, Ցոզղաթի, Անկարայի, Չորումի, Սվազի, Ամասիայի, Թոքատի, Քոնյայի, Էրթուրդուլի, Սպարտայի, Բոլուի, Կաստամունուի ու Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգներ ու գավառներ, թվագրված 1916 թ. ապրիլի 26:

ՄԱՐՄԵԴԱԿԱՆ ԲՈՒԹՈՒՄԱԶԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հայերից մնացած գույքն ու ունեցվածքը մահմեդականներին կամ նրանց հաստատություններին բաժանվել են երբեմն անվճար, երբեմն՝ խիստ ցածր գներով կամ ցածր վճարումներով կատարվելիք մարումներով. բոլոր դեպքերում նպատակը եղել է «մահմեդական թուրքազիայի» ստեղծումը: Ըստ այդմ, ինչպես տեսանք վերը՝ համապատասխան հատվածներում, կազմվել են այն բիզնեսների և առևտրական ձեռնարկությունների հանգամանալի ցուցակները, որոնք պատկանել են Ստամբուլի հայերին կամ օտարերկրացիներին, կամ ղեկավարվել են տեղահանված հայերի կողմից, և կամ որոնց տնօրենների խորհուրդներում հայեր են եղել⁴⁷:

Օսմանյան Ներքին գործերի նախարարությունը հայերի թողած հողերը, գույքն ու բիզնեսները մահմեդական ընկերություններին փոխանցելու վերաբերյալ հեռագրային բազմաթիվ հրահանգներ է հղել նահանգներ: Այդ հեռագրերից շատերի նպատակը կամ եղել է այն ընդհանուր գծերի հստակեցումը, որոնց համաձայն պետք է կատարվեր այդ գործը, կամ այն զանազան խնդիրների լուծումը, որոնք ծագում էին առանձին փոխանցումների ընթացքում:

Այդ առումով խիստ կարևոր փաստաթուղթ է լքված գույքի նահանգային բոլոր հանձնախմբերին Թալեթաֆ փաշայի 1916 թ. հունվարի 6-ին ուղարկած հեռագիրը, ուր նշվում են այդ հարցում կատարված քաղաքականության ընդհանուր գծերն ու ուղենիշային սկզբունքները: Այդ հեռագրում ներքին գործերի նախարարը բացելիք հայտարարում է, որ հայերի լքած գույքի իրացման նպատակներից մեկը «մեր երկրում մահմեդական ձեռնարկությունների բազմացումն է», և, այդ նպատակի համար, «[պետք է] ընկերություններ ձևավորվեն, որոնք բաղկացած լինեն մահմեդականներից»: Նա հրահանգում է. հայերի լքած «շարժական գույքը պետք է հանձնել նրանց [մահմեդականներին]՝ համապատասխան դրույթներով ու պայմաններով»:

47 BOA/DH.ŞFR, №57/24, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեպի, Մարաշի, Հյուսիսային Բուրսայի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Ջանիկի, Մամուրեթյուլագիզի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Էսքիշեհիրի, Նիդղեի, Կեսարիայի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառների Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. նոյեմբերի 1:

Թալեաթը հատուկ նշում է, որ «հանուն [կազմվելիք այդ ընկերությունների] ապագայի, հոգ տանել, որ հիմնադիրները, տնօրենների խորհուրդն ու ներկայացուցիչներն ընտրվեն [իրենց համապատասխան համայնքների] հարգված ու հզոր անդամների շարքերից»։ Պետք է հատուկ ուշադրություն դարձվեր «հավաստիանալուն, որ կապիտալը չընկնի օտարերկրացիների ձեռքը, և, մահմեդական երևելիների կողմից ավելի մեծ թվով նոր ընկերություններ ձեռք բերելու համար ուղի հարթելու նպատակով, անվանական փոքր արժեքներով բաժնետոմսեր են տպվել»։ Այնուհետև Թալեաթը պահանջում է, որ տեղական իշխանությունները «ուշադրություն հատկացնեն մահմեդական ազգաբնակչության մեջ կոմերցիոն կյանքի զարգացմանը», որ «այդ ուղղությամբ ջանքեր [գործադրեն], և որ նախարարությանը տեղեկացնեն այդ գործողությունների ու գործառնությունների արդյունքների մասին»⁴⁸։

Վերջնական նպատակը, սակայն, հայերի գույքը պարզապես մահմեդական ընկերություններին փոխանցելը չէր, այլ խնդիրը դիտվում էր իբրև սոցիալական մեծ ծրագիր՝ կայսրության մահմեդական ազգաբնակչության խթանման ու զարգացման հեռանկարով։ Այդ հարցով Օսմանյան կայսրության գրեթե բոլոր նահանգներն ուղարկված 1916 թ. փետրվարի 16-ի հեռագիրը շեշտում էր այդ ձգտումը և կրկնում, որ այդ գործողության նպատակը «մահմեդականներին կոմերցիոն կյանքին վարժեցնելն է և մահմեդական ձեռնարկությունների թիվն ավելացնելը»։ Հեռագրում ընդգծվում էր, որ, չնայած այդ նպատակին, ըստ ստացված լուրերի, շատ շրջաններում հայերի գույքը

պարզապես մեծաքանակ ձևով տրվում է գոյություն ունեցող մահմեդական ընկերություններին՝ առանց հանրային աճուրդների մահմեդական մնացած ազգաբնակչության մասնակցությունը և դրանով նրանց ունեցվածքի ընդլայնումը խրախուսելու փորձի։ Այնուհետև նշվում էր, որ նման քայլերը սխալ են։ Բացի այդ, ըստ հեռագրի, տեղեկություն էր ստացվել, որ «այդ ընկերությունների մեծ մասի գնածները հետո ուրիշների են վաճառվել դրանց [սկզբնական գնման] արժեքից մի քանի անգամ բաձր գներով, և որ «[այդ ընկերությունների տերերը] դրանով արագ հարստացել են»։ Հեռագրում կրկնվում է, որ նման գործողությունները պետք է դադարեցվեն, և մահմեդական ազգաբնակչությանը պետք է խրախուսել, որ իրենք հիմնեն կոմերցիոն ձեռնարկություններ, և այդ նպատակի համար նրանց լիակատար օգնություն ու պաշտպանություն տրամադրվի⁴⁹։

Նույն հրահանգները կրկնվում են մեկ այլ հեռագրում ևս, որը 1916 թ. մայիսի 16-ին ուղարկվել է օսմանյան գրեթե բոլոր նահանգներ.

Կանխավ հաղորդվել է, որ, որպեսզի հայերի թողած [կոմերցիոն] հաստատությունները, ինչպիսին են գործարանները, խանութներն ու ջրաղացները, դատարկ ու անգործածական չմնան, դրանք [այդ ձեռնարկությունները] պետք է պատշաճ պայմաններով հանձնվեն մահմեդական ընկերություններին, և այդ նպատակի համար պետք է տրամադրել ամեն տեսակի դյուրացում ու աջակցություն։ Հանձնարարվում է դրանք ցածր գներով վարձակալության տալ կամ վաճառել մահմեդական դիմորդներին և [դրա համար] նրանց հարկ եղած օժանդակություն ցուցաբերել⁵⁰։

49 BOA/DH.ŞFR, № 61/31, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Հալեայի, Ադանայի, Մոսուլի ու Դիյարբեքիրի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1915 թ. փետրվարի 16:

50 BOA/DH.ŞFR, № 64/39, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեայի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլազիզի ու Քոնյայի նահանգներ, Իզմիրի, Էսքիշեհիրի, Նիդդեի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Կեսարիայի, Ուրֆայի, Մարաշի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Ջանիկի գավառներ և Լուծարման (Լքված գույքի) հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1916 թ. մայիսի 16:

48 BOA/DH.ŞFR, № 59/239, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեայի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլազիզի, Քոնյայի ու Էդիրնեի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Էսքիշեհիրի, Նիդդեի, Քյութահյայի ու Մարաշի գավառներ և Թեքֆուրդաղիի, Ադանայի, Ջերե-ի Բերեքեթի, Քոզանի, Յոզղաթի, Անկարայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեայի, Մարաշի, Անթաքյայի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Ջեմիկի, Բիլեջիկի, Դիյարբեքիրի, Սվազի, Մարզվանի, Թոքաթի, Սամսունի, Օրդուի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի, Իզմիրի, Ադապազարի, Էսքիշեհիրի, Սիվրիհիսարի, Կեսարիայի, Դեվելյուի, Նիդդեի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) ու Ուրֆայի Լուծարման (Լքված գույքի) հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1916 թ. հունվարի 6:

Քանի որ այդ ամենի նպատակը «արտադրական ու կոմերցիոն հաստատությունները մեծաքանակ ձևով մահմեդականներին փոխանցելն» էր, կարգադրվել է, որ «խանութներն ու պահեստները կամայական ու շփոթ ձևով չվաճառվեն, որ դրանց գնի ընդունելի հատվածով կանխավճար տրվի [դրանք գնելու համար], և դրանք դրվեն առևտրով ոգևորված պատվարժան երիտասարդների ձեռքերում, երբ վերջիններս ի վիճակի լինեն հանդես գալու [իրենց ունեցվածքների դիմաց] հուսալի ապահովությամբ»⁵¹: Մյուս եղանակը, որով իրականացվում էին որոշ գործառնություններ, տնտեսական այդ ձեռնարկությունները շատ ցածր գներով մահմեդական ընկերություններին վարձու տալն էր⁵²:

Տնտեսական այս տեսակի փոխանցումներն իրականում առաջին անգամ սկսվել էին կայսրության Էգեյանի ծովափնյա շրջաններից հույն ազգաբնակչության վտարման ընթացքում: Միայն հետագայում, տեղահանման գործողությունների ընթացքում, այդ քաղաքականությունը կիրառվեց հայերի ու նրանց ունեցվածքի նկատմամբ: 1914 թ. նոյեմբերի 19-ին Ալդինի Էգեյան նահանգ ուղարկված մի հեռագիր, որով առաջարկվում էր հույների գույքը հանձնել Անատոլիայի բամբակի ընկերությանը, կարելի է բերել իբրև այդ քաղաքականության վաղ կիրառման օրինակ⁵³: Հետաքրքրական է, որ հայերի տեղահանությունների ընթացքում (1915 թ. սեպտեմբերի 16-ին) Ադանա

ուղարկված մի ուղերձում առաջարկվում է հայերից մնացած որոշ հողեր ու գույք տալ միննույն ընկերությանը⁵⁴:

ԲԱՆԱԿԻ ԿԱՐԻՔԵԼԵՐԸ

Հայերի թողած գույքից ամենանշանակալի օգուվողներից մեկը զինվորականությունն էր, որն այդ գույքը, հարկ եղած դեպքերում, օգտագործել է նյութական իր կարիքները բավարարելու համար. կարիքներ, որոնք պատերազմի ձգվելուն զուգընթաց աճում էին երկրաչափական պրոգրեսիայով: Օգտագործման երկու հիմնական ձևերն էին լքված շենքերի ու կառույցների գործածությունը և դաշտերի, խաղողի ու մյուս այգիների արտադրանքի վաճառքից ստացված հասույթի ստացումը: Ռազմական նպատակների համար գործածությունը հայերից մնացած որոշակի առարկաների վաճառքն արգելելու հիմնական խթանն էր: 1915 թ. օգոստոսի 13-ին բազմաթիվ նահանգներ ուղարկված ընդհանուր հրահանգում հստակորեն խոսվում էր այդ մասին և նույնիսկ թվարկվում տարբեր առարկաներ, որոնք հարկավոր էին զինվորականությանը և վաճառքի ենթակա էին.

Լուրեր ստանալուց [ի]ետո, որ բանակի հատուկ կարիք ներկայացնող զանազան առարկաներ, որոնք հայերն ի վիճակի չեն եղել իրենց հետ տանելու, որոնցից են կոշիկները, շարֆերը, կոշիկի կաշին, տրեխները, մորթին և այլն, վաճառվում են չնչին գներով. հրամայվում է, որ զինվորական միավորումներին խիստ անհրաժեշտ այդ և նման առարկաները, իրենց համապատասխան արժեքներով ու գներով բժախնդորեն հատուկ ցուցակների կամ աղյուսակների մեջ մտցնելուց և ստացականներ կազմելուց հետո, ուղարկվեն Ստամբուլ՝ ընդհանուր մատակարարման ու հատկացման նպատակով⁵⁵:

51 BOA/DH.SRF, №60/129, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի Լուծարման (Լքված գույքի) հանձնախմբերի նախագահին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 26: Հետագայում միննույն բովանդակությամբ մեկ այլ հեռագիր է ուղարկվել շատ ուրիշ շրջաններ: Տևս Օրդուի Լուծարման (Լքված գույքի) հանձնախմբերի նախագահին ուղարկված հեռագիրը՝ BOA/DH.SRF, №60/277:

52 BOA/DH.SFR, №64/39, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Էրզրումի, Հալեպի, Հյուսիսվենդիզարի (Բուրսա), Դիյարբեքիի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Էսքիշեհիի, Նիդդեի, Կարահիսար-ի Մահիբի (Աֆյոն Կարահիսար), Կեսարիայի, Ուրֆայի, Մարաշի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Ջանիկի գավառներ և (Լքված գույքի) Լուծարման հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1916 թ. մայիսի 16:

53 BOA/DH.SFR, №47/87, Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության ծածկագրված հեռագիրը Ալդինի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 19:

54 BOA/DH.SFR, №56/50, ներքին գործերի նախարար Թավեթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 16: 1913-1915 թթ. օսմանյան արդյունաբերության վիճակագրական տվյալների մեջ փաստաթղթային որևէ տեղեկանք չկա «Անատոլիայի բամբակի ընկերության» վերաբերյալ: Հարավոր է, որ այն իրականում եղել է իթթի-հադականների ինչ-որ «տանիք-ընկերություն»:

55 BOA/DH.SFR, №54-A/390, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի ու Անկարայի նահանգներ և Իզմիրի,

Ընդհանուր այս հրահանգն առանձին ուղարկվել է նաև Երրորդ ու Չորրորդ բանակների ռազմական իրավասության տակ գտնվող նահանգներ ու գավառներ, և տեղական իշխանություններին հանձնարարվել է նշված ապրանքների ցանկերով իրենց տետրերը հանձնել իրենց համապատասխան բանակների հրամանատարներին⁵⁶:

Ներքին գործերի նախարարությունը նույն բովանդակությամբ հեռագրեր է ուղարկել մեծ թվով նահանգներ և կարգադրել կազմել այն ապրանքների ցուցակները, որոնք հեշտությամբ կարելի է գտնել հայերի լքած ունեցվածքի մեջ. դրանցից են գործվածքեղենը, ընդեղենն ու հացահատիկը, որոնք կարող են գործածվել զինվորականության կարիքների համար, և դրանք պետք է հանձնել ամբարների ու շտեմարանների համար պատասխանատու տեղական պաշտոնյաներին: Ապրանքների ցանկը կամ հաշիվը պետք է կազմվեր ու ներկայացվեր բանակին, եթե վերջինս դա պահանջեր⁵⁷: Ելնելով հարցի կարևորությունից՝ Պատերազմի նախարարությունն ինքը տեղական պաշտոնյաներին ու խորհուրդներին ուղիղ հաղորդել է Լուծարման հանձնախմբերի աշխատանքի պատշաճ կարգը: Այսպես, 1915 թ. սեպտեմբերի 9-ին Էսվեր փաշայի ուղարկած հեռագիրն այսպիսի հատված է պարունակում.

Այստեղ վերահաստատում ենք, որ, կանխելու համար այդ առարկաների [մասնավոր անձանց] ձեռքն ընկնելը և հոգալու համար բանակի մնացած կարիքները, այդ ապրանքները և նրանք, որոնք գտնվում են տեղափոխվող հայերի այդ առարկա-

Էսքիշեհիրի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 13: Հեռագրի շարադրանքից հստակ չէ, թե Ստամբուլ պետք է ուղարկվեն ցուցակները, թե ցուցակագրված փաստացի առարկաները:

56 BOA/DH.ŞFR, № 54-A/390-1, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Բիթլիսի, Տրապիզոնի, Սվազի, Հալեայի, Դիյարբեքիրի ու Մամուրեթյուպահիզի նահանգներ և Մարաշի ու Ուրֆայի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 13:

57 BOA/DH.ŞFR, № 55/210, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեայի, Հյուսիսային Էրզրումի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Էսքիշեհիրի ու Նիղդեի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 25:

ների ու ունեցվածքի մեջ, և որոնց կարիքն ունի բանակը, Ռազմական գանձույթների հանձնախմբերի կողմից դրանց գները որոշելուց հետո պետք է գնվեն հատուկ օրենքի համաձայն, և, գործառնությունների կատարմանը զուգընթաց, պետք է քայլ առ քայլ [աստիճանաբար] զեկուցվեն գնված ապրանքների տեսակն ու քանակը⁵⁸:

1916 թ. հունվարի 6-ի որոշման (որն ավելի վաղ հիշատակել էինք այս գլխում՝ մահմեդական բուրժուազիա կերտելու առնչությամբ) չորրորդ պարբերությունը նվիրված էր այդ նյութին: Այդ պարբերությամբ պահանջվում է, որ «լքված ունեցվածքի ու գույքի մեջ գտնվող փչացող առարկաներից ու կենդանիներից նրանք, որոնք ռազմական անհրաժեշտություն են», պետք է տրվեն «հատուկ ստացականի դիմաց»⁵⁹:

Ընդհանուր սկզբունքների կրկնությունից բացի, հաղորդակցություն է պահպանվել նաև շատ առանձին շրջանների հետ, և հրահանգներ են ուղարկվել այն մասին, թե այդ ապրանքներն ինչպես կարող են և ինչպես պետք է փոխանցվեն զինվորականությանը: Հաղորդագրություններում ամենից հաճախ քննարկված նյութերից մեկն այն հարցն էր, թե հայերից մնացած դաշտերի բերքահավաքն ինչպես էր պետք կատարել: Հեռագրերից մեկում ասվում է, որ բերքահավաքն անելու է կառավարությունը, ապա հասույթը հանձնելու է զինվորականությանը.

58 BOA/DH.ŞFR, № 55/A-143, Էսվեր փաշայի ծածկագրված հեռագիրը Քյութահայի գավառ՝ ուղարկված Պատերազմի նախարարության քարտուղարության Ծածկագրերի վարչությունից, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 9:

59 BOA/DH.ŞFR, № 59/239, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հյուսիսային Էրզրումի (Բուրսա), Դիյարբեքիրի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուպահիզի, Քոնյայի ու Էդիրնեի նահանգներ, Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Էսքիշեհիրի, Նիղդեի, Քյութահայի ու Մարաշի գավառներ և Թեքֆուրդաղիի, Ադանայի, Ջերե-ի Բերեքեթի, Քոզանի, Յոզղաթի, Անկարայի, Էրզրումի, Բիթլիսի, Հալեայի, Մարաշի, Անթաթայի, Հյուսիսային Էրզրումի (Բուրսա), Ջանիկի, Բիլեջիկի, Դիյարբեքիրի, Սվազի, Մարզանի, Թոքաթի, Սամսունի, Օրդուի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուպահիզի, Իզմիրի, Ադապազարիի, Էսքիշեհիրի, Սիվրիհիսարի, Կեսարիայի, Դեվլեյուի, Նիղդեի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) ու Ուրֆայի (Լքված գույքի) Լուծարման հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1916 թ. հունվարի 6:

Հայերից դատարկված տարածքների մի մասում լքված մշակված հողերը... որոնք հատկացված են [մահամեղական նոր] ներգաղթածների [ու փախստականների] կարիքների համար [և] դրված են Լքված գույքի հանձնախմբերի տնօրինության տակ, պետք է գնահատվեն ու բաժանվեն, իսկ ապա՝ բերքահավաք արվի կառավարության կողմից: Հարկավոր է [այդ հողամասերից] ստացված մնացած բերքը հանձնել զինվորականությանը՝ այն գներով, որով կգնահատվի: Երբ զինվորականությունն աշխատանքային գումարտակների միջոցով գործուն աջակցություն ապահովի, պետք է արագ քննություն ու գնահատում կատարել և երկու օրվա ընթացքում զեկուցել նշված բերքը հանելու ու փոխադրելու համար զինված ուժերի կամ տեղական բնակչության գործածած աշխատանքի չափը, մեքենաների ու գործիքների և [այլ] սարքավորումների տեսակը⁶⁰:

Նման գործողություններ էին նշվում խաղողի և մյուս այգիների ստնչությամբ: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել Չանաքքալե («խաղողի լքված այգիներում խաղողի արժեքի գնահատման վերաբերյալ, և [երբ] գնահատման զեկույցը պատրաստ է, պետք է հանձնվի զինվորականությանը»⁶¹), մյուս նահանգներ («հույների լքված ունեցվածքում գտնվող խաղողն ու թուզը զինվորականությանը նվիրաբերելու վերաբերյալ») և Լուծարման տարբեր հանձնախմբերին ուղարկված հեռագրերից⁶²:

60 BOA/DH.SFR, № 54/301, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Սվազի, Դիյարբեքիի ու Մամուրեթյուլագիզի նահանգներ, թվագրված 1915 թ. հուլիսի 5: Համանման հեռագրեր են ուղարկվել նաև այլ վայրեր: 1915 թ. հուլիսի 12-ին Ուրֆա ուղարկված հեռագրի համար տե՛ս BOA/DH.SFR, № 54/382:

61 BOA/DH.SFR, № 67/106, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե) գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 27:

62 BOA/DH.SFR, № 68/178, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի ու Հյուդավենդիզարի (Բուրսա) նահանգներ, Քարեսիի (Քալիքեսի) գավառ և Բուրսայի (Հյուդավենդիզար) ու Քարեսիի Լուծարման հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 4:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Հայերից մնացած գույքի վաճառքից ստացված շահույթը գործածվել է նաև հայերի տեղահանությունների ժամանակ պահանջվող ծախսերը հոգալու վրա: Իրեն օրինակ կարելի է բերել Յուսուֆ Հալաչոլուի առնչությամբ վերը մեջբերված հեռագրերը: Հալեպ ու Էսքիշեհիի ուղարկված այդ հեռագրերը տեղական պաշտոնյաներին տեղեկացնում էին, որ անհրաժեշտ էր հայերի ունեցվածքի վաճառքից ստացված հասույթը հանձնել եկամուտներով զբաղվող իշխանություններին՝ հոգալու համար կառավարության ծախսերը⁶³:

Այդ փաստաթղթերում բացեիքաց նշվում է, որ որոշ իրադրություններում ակնկալվում է, որ տեղահանված հայերն իրենք կվճարեն իրենց տեղահանության ծախսերը, իսկ կառավարությունը կվճարի միայն իր ծախսերը: Այս քաղաքականության առաջին դեպքը, որ գտել են, կիրառվել է 1915 թ. ապրիլին Ջեյթունից Քոնյա տեղահանված հայերի նկատմամբ. «Քանի որ ոչ հնարավոր է, ոչ էլ պատշաճ, որ Ջեյթունից տեղահանված հայերը մատակարարվեն կառավարության կողմից, անհրաժեշտ է, որ [այսուհետև] իրենք ապահովեն ու հայքայթեն իրենց պահելու ու գոյության միջոցները: Խնդրում ենք հաղորդել նրանց վերատեղավորման ու պահելու համար մինչև այժմ ծախսված գումարը, որպեսզի այն ուղարկվի»⁶⁴:

Նույն երևույթը կարելի է տեսնել Հալեպում ու հարակից շրջաններում 1915 թ. մայիսի դեպքերում: Անվտանգության վարչությունը նահանգապետին ուղարկած հեռագրում վերջինիս կարգադրել է «տեղահանված հայերին նախ վերատեղավորել գյուղերում ու լեռներում առանձին համայնքներում՝ որը որ տեղական պայմանների հիման վրա ավելի հարմար է... և, քանի որ կառավարության համար հնարավոր չի լինի հոգալ նրանց մատակարարման հարցերը, հետագայում նրանք իրենք պետք է ապահովեն այն»⁶⁵: Ներգաղթող-

63 BOA/SFR.DH, № 57/342, 348–49, and 350, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Հալեպի ներգաղթային գործերի տնօրեն Քայային, Հալեպի գործող նահանգապետին և Էսքիշեհիի գավառ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 8:

64 BOA/DH.SFR, № 52/292, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 9:

65 BOA/DH.SFR, № 52/335, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

ների գործերի տնօրեն Շուքրու Քայային (որն այդ ժամանակ Հալեպում էր) 1915 թ. նոյեմբերին ուղարկած հեռագրով նման գործողության վերաբերյալ հաղորդվել է հետևյալ հանձնարարությունը. «Այն հայերին, որոնք ցանկանում են [գնալ] Համայի, Հոմսի ու Դամասկոսի գյուղերը, իրենց ճանապարհածախսը վճարել տալու ձեռք ծրագիրն ընդունելի է»⁶⁶: Խիստ կարևոր է այն հանգամանքը, որ պետությունը բռնազրավել է իր տեղահանած հայերից մնացած գույքը, իսկ հետո մերժել է վճարել նրանց ծախսերը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՉԱՆԱՉԱՆ ԾԱԽՍԵՐ

Որոշ դեպքերում, զանազան նպատակների համար, կառավարությունը յուրացնում էր հայերից մնացած այն շենքերը, որոնք հարմար էր նկատում: Եթե այդ շենքերը չէին հանձնվում զինված ուժերին, գործածվում էին որևէ նպատակով՝ դպրոցներից ու բանտերից սկսած, վերջապահած ոստիկանատներով ու բժշկական հիմնարկներով: Բերենք մի քանի օրինակ:

Բանակեր. 1916 թ. մայիսին Ներքին գործերի նախարարությունը նահանգային պաշտոնյաներին խնդրել է «արագ հաղորդել, թե այն շրջաններում, ուր բանտերի կարիք կա, հայերի լքած շենքերը կարող են գործածվել իբրև բանտեր, և, եթե այո, ինչ պայմաններում են դրանք և ինչ տեսակի վերանորոգում կարող է պահանջեն»⁶⁷:

Դպրոցներ. Տեղահանությունների առաջին ամիսներին գրեթե բոլոր նահանգներն ուղարկված մի հեռագրում Ցեղային ու ներգաղթային հարցերի կարգավորման վարչությունն ասել է,

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. մայիսի 12:

66 BOA/DH.SFR, № 57/54, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեպի ներգաղթային գործերի տնօրեն Քայային, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 18:

67 BOA/DH.SFR, № 64/18, Ներքին գործերի նախարարության վարչական շենքերի ու բանտերի վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Դիյարբեքիրի, Սվազի, Քոնյայի, Մամուրեթյուպահի, Ուրֆայի, Իզմիրի, Բուրսայի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր), Քալե-ի Մուլթանիյեի (Չանաքքալե), Կեսարիայի, Մարաշի, Իչելի, Քյութահյայի, Էսքիշեհիրի, Նիդդեի ու Կարահիսարի նահանգներ ու գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 14:

որ «անհրաժեշտ է, որ հայերից պարպված քաղաքներում ու գյուղերում դպրոցները վերածվեն մահմեդական ներգաղթածների համար դպրոցների, որոնք պետք է այդտեղ տեղավորվեն, իսկ ուսումնական գործիքների ու սարքավորումների գումարը և արժեքը, որոնք կազմում են շենքի [մի մասը], պետք է արձանագրվեն և առանձին մատյանների մեջ դրվեն»⁶⁸: Որոշ շրջաններից պահանջվել է, որ հավաքված և Լքված գույքի հանձնախմբերում պահվող փողի մի մասը նվիրվի դպրոցներ կառուցելուն կամ գոյություն ունեցող դպրոցների ծախսերը փակելուն⁶⁹:

Հիվանդանոցներ ու կլինիկաներ. 1915 թ. օգոստոսի 1-ին Առողջապահության վարչությունը տեղական իշխանություններին հեռագրով խնդրել է, որ «մեկնող ոչ-մահմեդականների թողած շենքերի և առողջապահական ու բժշկական հաստատությունների սպասարկման ու կառավարման համար պայմանները լիովին տեղին լինեն, որպեսզի դրանց բարելավումը [շարունակվի], և թեթևացվեն տեղի բժշկական կարիքները»⁷⁰:

Ոստիկանատներ. 1917 թ. հուլիսի վերջին Անկարա ուղարկած իր մի հեռագրում Ներքին գործերի նախարարությունը պահանջել է «Անկարայի Ոստիկանական նախարարությունից կատարել տեղահանվածներին պատկանող և [ներկայումս] իբրև ոստիկանատուն գործածվող երկու շենքերի վարձի դրամական փոխանցումը»⁷¹:

68 BOA/DH.SFR, № 54/101, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի ու Մարաշի Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, Ադանայի, Էրզրումի, Բիթլիսի, Դիյարբեքիրի, Հալեպի ու Հյուսիսային Բուրսայի (Բուրսա) նահանգներ և Մարաշի, Կեսարիայի ու Քարեսիի (Բալիքեսիր) գավառներ, թվագրված 1915 թ. հունիսի 22:

69 «Լքված գույքի [հանձնախմբի եկամուտների] մի մասը բժշկական դպրոցին հատկացնելու» հարցով հեռագրի համար տե՛ն BOA/DH.SFR, № 57/59, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուպահիի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 18:

70 BOA/DH.SFR, № 54-A/218, Ներքին գործերի նախարարության Առողջապահության գլխավոր վարչության ծածկագրված հեռագիր [?] Էրզրումի, Բիթլիսի, Մամուրեթյուպահի, Սվազի, Մուսուլի ու Տրապիզոնի նահանգներ և Առողջապահության վարչություններ և (Դեր) Ջորի ու Մամուտի առողջապահական կենտրոններ ու գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոս:

71 BOA/DH.EUM.MH, 148/17, Ներքին գործերի նախարարության Հաշվապա-

ԱՃԽԱՐՅԱԶՈՐԱՅԻՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ

1915 թ. օգոստոսին Մամուրեթյուլազիզի նահանգ ուղարկված հեռագիրը պարզաբանում է, որ Դերսիմում ու շրջակայքում ձևավորված աշխարհագորային խմբավորումների կատարած ծախսերը փակվել են հայերի լքած գույքի վաճառքից ձեռք բերված միջոցներից:

Դերսիմում աշխարհագորային կազմավորումների վերաբերյալ [ձեր] արժեքավոր գաղափարները պատշաճ են և ճշգրիտ: Այն առաջնորդներին, որոնց շնորհվելու են ռազմական կոչումներ, անհրաժեշտ է ընտրել այն անձանց շարքերից, որոնց կապվածության զգացումը և հավատարմությունը կառավարության նկատմամբ հուսալի են, և որոնց [քրդական] տարբեր ցեղերի վրա ունեցած իշխանությունն ու ազդեցությունը կարող են խկապես գործածվել պետության կողմից, և այս տեսանկյունից լիովին պատրաստել ու պայմաններն այնպես լրացնել, որ նման անձինք անկարող լինեն հետագայում չարաշահելու իրենց դիրքն ու ազդեցությունը: Նպատակահարմար է նրանց տրվելիք հատկացումները վերցնել [հայերի] լքած ունեցվածքից⁷²:

Հեռագրի շարունակության մեջ պահանջվում է տեղեկություններ հաղորդել աշխարհագորային կազմավորումների գործողությունների և դրանց ազդեցության մասին:

Ընդհանուր առմամբ, այս փաստաթղթերը բացահայտում են, որ իթթիհադականները խիստ համակարգված կերպով ջանացել են հայերի լքած գույքը գործածել՝ հստակ նպատակներ հետապնդելով, և իրենց իշխանությունն ու ազդեցությունը կիրառել են՝ կանխելու համար մասնավոր անձանց կողմից այդ գույքի կողոպուտը: Այսպիսով, այն պատկերը, որ հատնում է մեր առջև, շատ լավ բացատրում է, թե ինչու տեղահանություններից հետո ողջ մնացած հայերը երբևէ չհատուցվեցին իրենց գույքի ու ունեցվածքի դիմաց, որոնք ստիպված էին եղել թողնել ետևում: Օսմանյան կառավարության արձանագրու-

հական վարչության ծածկագրված հեռագիրը Ասկարայի նահանգ, թվագրված 1917 թ. հուլիսի 23:

72 BOA/DH.SFR, № 54-A/354, Ներքին գործերի նախարարության Ասվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Դերսիմ՝ Մամուրեթյուլազիզի գավառապետ Սարիթ բեյ էֆենդուն, թվագրված 1915 թ. օգոստոսի 10:

թյուններն իրոք հաստատում են ամերիկյան հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի այն խոսքը, թե հայերի լքված գույքի ու ունեցվածքի յուրացումը «վիթխարի թալանի ծրագիր էր և մի ժողովուրդ վերացնելու վերջնական հարված»⁷³:

73 NA/RG 59, 867.4016/148, Հալեպի հյուպատոս Ջեյմս Բ. Ջաքսոնի գեկույցը դեսպան Հենրի Մորգենթաուին, թվագրված 1915 թ. օգոստոսի 19, գտնվում է հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 207:

11

ԹՈՒՐԹԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԺԱՏՄԱՆ ՈՐՈՇ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումների մեջ կան դրույթներ, որոնք այն աստիճան են կրկնվել, որ բոլորն այլևս անգիր գիտեն: Դրանցից է արդեն դասական դարձած այն թեզը, թե հայ կաթոլիկներն ու բողոքականները և Իզմիրի հայերը չեն տեղահանվել, ձեռք չեն տվել զինվորների ընտանիքներին, և, չնայած պատերազմական ժամանակներին, կառավարությունը հետաքննություն է անցկացրել պետական այն պաշտոնյաների նկատմամբ, որոնք տեղահանությունների ընթացքում վատ են վարվել հայերի հետ: Կառավարությունը դատ է բացել 1.397 մարդու դեմ, երկարատև բանտարկության դատավճիռներ է կայացրել և նույնիսկ ոմանց մահապատժի ենթարկել: Տեղահանությունների ընթացքում ճանապարհներին և ժամանման վայրերում հնարավոր ամեն տեսակի օգնություն ցուցաբերվել է հայերին, ինչպես նաև ընդունվել է օտար երկրների օգնությունը: Վերջին տարիներին լասպարեզ եկած կարևոր փաստարկներից մեկն այն է, թե Հատուկ կազմակերպություն անվամբ հայտնի կառույցը, որը Պատերազմի նախարարության հետ իր կապով փաստորեն պաշտոնական կարգավիճակ ուներ, առհասարակ որևէ առնչություն չի ունեցել հայերի բնաջնջման հետ: Նրանք պնդում են նաև, որ հնարավոր չէ գտնել որևէ փաստաթուղթ, որը ցույց տա նման առնչություն: Այս գլխում ես հանգամանալից կերպով քննարկելու եմ այդ փաստարկները և ներկայացնելու եմ նյութի շուրջ Օսմանյան վարչապետական արխիվում եղած տեղեկությունները: Ինչպես ցույց կտամ մեկ առ մեկ, Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը հստակորեն բացահայտում են, որ բոլոր այդ պնդումներն անհիմն են:

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՅԵՈՒԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԿԱԹՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԸ

Իբրև Թուրքիայի վարչակազմի այս ժամանակաշրջանի «պաշտոնական պատմությունը» հաստատող հիմնական ապացույց է ներկայացվում հեռագրերի մի խումբ, որոնք Թալեաթ փաշան ինքն է ուղարկել նահանգները՝ հավաստիանալու համար, որ տեղահանություններն ընթանում են պատշաճորեն: Ասվում է, թե այդ հեռագրերի գոյությունը ցույց է տալիս, որ տեղահանությունները բնավ հայերին չէնչացնելու մտադրությամբ չեն կատարվել, և որ Թալեաթը հրամայել է հայ կաթոլիկներին ու բողոքականներին զերծ պահել տեղահանություններից:

Նախ և առաջ, սպանելու վերաբերյալ թղթագրության համար պաշտոնական խոդովակներ չեն գործածվել: Սա մի իրողություն է, որ պատմության մեջ հաճախ է պատահել նաև այլ ցեղասպանությունների դեպքերում: Պատասխանատուները հաճախ մեծ ջանքեր են գործադրում՝ «կոծկելու համար իրենց հետքերը»: Իսկ իթթիհադական ռեժիմը ստիպված էր նույնիսկ իր իսկ դաշնակիցներից թաքցնելու իր գործողությունները:

Օսմանյան արխիվային նյութերը հստակորեն ցույց են տալիս, որ Թալեաթ փաշան իրոք նման հրամաններ ուղարկել է նահանգներ: Այդուհանդերձ, ինչպես կտեսնենք ստորև, այդ կերպ վարվելու նրա հիմնական նպատակը եղել է Գերմանիայի ու Ավստրիայի ճշումներից խուսափելը: Երբ Անատոլիայից կոտորածների մասին լուրերն սկսել էին հաճախանալ, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի և Ավստրիայի դեսպաններն սկսել են ավելի հաճախակի հորդորներ ներկայացնել օսմանյան կառավարությանը, որ այդ գործողությունները դադարեցվեն: Գերմանիայի կառավարությունը օսմանյան կառավարության վրա ճշում է բանեցրել ամեն գնով առնվազն կաթոլիկ ու բողոքական դավանանքի հայերին զերծ պահելու տեղահանություններից: Տեսնելով, որ խնդրանքները չեն բավարարվում, և որ սպանությունների մասին լուրերն ահագնանում են, Բեռլինն ստիպված է եղել հուլիսի 4-ին ու օգոստոսի 9-ին երկու տարբեր նոտա հղելու օսմանյան վարչակազմին¹: Իբրև թե Գերմանիայի ցան-

1 Այս հարցում գերմանացիների գործադրած ջանքերի վերաբերյալ, որոնք սկսվել են 1916թ. հունիսի վերջին, տես Gust, Der Völkermord an den Armeniern, 76–97; Lepsius, Deutschland und Armenien, xxvi–xxxiii:

կությանն ընդառաջելու համար, Թալեաթը նահանգներին կարգադրել է տեղահանություններն արդար կատարել, սակայն մինևույն հասցեատերերը շուտով ստացել են նրա երկրորդ հեռագիրը, որը չեղյալ էր դարձնում նախորդ հրահանգները:

Նման գործելակերպը կարելի է ցույց տալ հայ կաթոլիկների ու բողոքականների տեղահանության օրինակով: Ինչպես արդեն նշեցինք, 1915 թ. տեղահանությունների ընթացքում ցեղասպանության որևէ մտադրություն ժխտողները սովորաբար պնդում են, թե նշված խմբերը չեն տեղահանվել: Այսպես, Յուսուֆ Հալաչօղլուն, որը 1989-1992 թթ. ծառայել է Վարչապետական (իմա՝ օսմանյան) արխիվի տնօրենի պաշտոնում և 1993-2008 թթ. եղել է Թուրքիայի պատմաբանների ընկերության նախագահը, գրում է. «Ճիշտ ինչպես չեն տեղահանվել տկարներն ու կոյրերը, այդպես էլ տեղահանություններից ազատվել են նաև կաթոլիկ ու բողոքական դավանանքներին պատկանող [հայերը], բանակում ծառայող զինվորների ընտանիքները, պետական պաշտոնյաները, առևտրականները և որոշ բանվորներ ու արհեստավորներ»²: Վերջին տարիներին այլ հետազոտողներ ևս սկսել են պնդել, թե օսմանյան կառավարությունը, Գերմանիայի կառավարության ու հասարակական կարծիքի ճնշման տակ, իսկապես կաթոլիկ ու բողոքական հայերին ազատել է տեղահանություններից: Այսպես, Գյունտեր Լևին իր աշխատության մեջ շարունակ պնդում է, որ կաթոլիկ ու բողոքական հայերի տեղահանությունը կասեցվել է՝ հիմնականում Գերմանիայի կառավարության գործադրած ճնշման հետևանքով³: Ֆուատ Դյունդարը գրում է. «Երեք խմբերի ընտանիքների՝ արհեստավորների, զինվորների և բողոքականների ու կաթոլիկների ընտանիքներին թույլ է տրվել մնալ Անատոլիայում»⁴: Ճշմարտությունը, սակայն այն է, որ այդ խմբերը ևս տեղահանվել են: Նրանց ձեռք չտալու վերաբերյալ նահանգներ ուղարկված հրամաններն արձակվել են գերմանացիներին բավարարելու համար և արագ չեղյալ հայտարարվել հաջորդող հեռագրերով:

Այստեղ հիմնականում հետաքրքրված են բողոքական ու կաթոլիկ հայերին առնչվող իրադրությամբ և մյուս երկու խմբերի հարցը

չեն քննարկելու: Բավական է ասել, որ որոշ շրջաններում, խիստ սահմանափակ կերպով, առաջին անհրաժեշտության արհեստագործներին բանակը գերծ է պահել տեղահանվելուց: Սակայն մյուս արհեստավորներն արտաքսվել են: Երվանդ Օսյանի հուշերը, որի մասին նշել ենք 9-րդ գլխում, ցույց են տալիս, թե Չորրորդ բանակն ինչպես է հավաքել դեպի Սիրիա տեղահանված արհեստավորներին և նրանց տեղավորել Համայի ու Հոմսի շրջաններում: Տարբեր չէր նաև զինվորների ընտանիքների վիճակը: Նրանց մեծ մասը տեղահանվել է՝ հատկապես, երբ բանակում ծառայող հայերը սպանվել են: Այն հատուկնա՞տ մարդիկ, որոնց թույլ է տրվել մնալ իրենց տներում, հիմնականում գտնվել են արևմտյան Անատոլիայի նահանգներում, որտեղ պարտադրված էր 5 տոկոսի կարգը: Մինևույն ժամանակ, Ներքին գործերի նախարարության Անվտանգության գլխավոր վարչության երկրորդ բաժանմունքը ողողված էր հայ զինվորների հայցագրերով, որոնք ինչ-որ կերպ շարունակում էին ծառայել բանակում և հարցնում էին իրենց տեղահանված ընտանիքների գտնվելու վայրի մասին⁵: Ներքին գործերի նախարարությունը բոլոր շրջաններին հրահանգել էր, որ զինվորների տեղահանված ընտանիքները չեն կարող վերադառնալ առանց հատուկ թույլտվության⁶:

Ինչ վերաբերում է բողոքական ու կաթոլիկ հայերին, տեղահանությունների առաջին ամիսներին բոլոր նահանգներն ուղարկված հրամաններում բացեիբաց և հստակորեն ասվում էր, որ բոլոր հայերը՝ անկախ իրենց կրոնից, պետք է տեղահանվեն: Ես արդեն բազմաթիվ փաստաթղթեր եմ ներկայացրել՝ ցույց տալու համար, որ անհրաժեշտ է դիտվել «նահանգի քաղաքներում ու գյուղերում գտնվող բոլոր հայերին, առանց բացառության, տեղահանել՝ իրենց

5 Ընդամենը մի քանի օրինակ է անհրաժեշտ քերել այստեղ. BOA/DH, 2, Şube, №№ 20/48, 20/57, 21/35, and 22/31.

6 BOA/DH,ŞFR, № 58/89, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Էրզրոմի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարթագոնի (Բուրսա), Դիյարբեքիրի, Դամասկոսի Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի, Մոսուլի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանկիլի, Չաթալայի, Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Քալե-ի Մուլթանիյեի (Չանաքքալե), Կեսարիայի, Մարաշի, Իչելի, Կարահիսար-ի Սահիրի (Աֆյոն Կարահիսար), Էսքիշեհիրի, Նիդդեի ու Քյութահիայի գավառներ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 22:

2 Yusuf Halaçoğlu, *Ermeni Tehciri (Istanbul, Babiali Kültür Yayıncılığı, 2004)*, 82.

3 Guenter Lewy, *The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide* (Salt Lake City, University of Utah Press, 2005), 176, 184-86, 206-8.

4 Fuat Dündar, *Modern Türkiye'nin Şifresi*, 298.

ընտանիքների հետ միասին»⁷: Օսմանյան փաստաթղթերից տեղեկացել եմ նաև, որ առնվազն տեղահանությունների սկզբից՝ մայիսից, մինչև օգոստոսի սկիզբը օսմանյան կառավարությունն արտաքսել է բոլոր հայերին անխտիր՝ չնայած կաթոլիկ ու բողոքական հայերի համար Գերմանիայի գործադրած դիվանագիտական ջանքերին⁸:

Սակայն, հետզհետե մեծացող ճնշումների ներքո, Թալեաթը կարծես տեղի է տվել իր դաշնակիցների պահանջներին: 1915 թ. օգոստոսի 4-ին ներքին գործերի նախարարը կարգադրել է, որ «այն կաթոլիկ հայերը, որոնք *դեռևս մնում են*, պետք է ազատվեն տեղահանությունից»⁹ (շեղագիրը՝ հեղինակի): Տասնմեկ օր անց ուղարկված նման մի հեռագրում նշվում է, որ «*դեռևս չտեղահանված* այն հայերը, որոնք պատկանում են բողոքական դավանանքին, պետք է ազատվեն տեղահանությունից»¹⁰ (շեղագիրը՝ հեղինակի): Արժե նշել, որ երկու հրահանգով էլ այդ խմբերն ազատվում էին, «եթե դեռևս մնացել են»: Բացի այդ, այս հեռագրերից որևէ կերպ չի բխում, թե արդեն իսկ տեղահանված կաթոլիկ ու բողոքական հայերին թույլ է տրվելու վերադառնալ իրենց տները. ընդհակառակը՝ դա պարզորոշ կերպով արգելվում էր:

7 BOA/DH.\$FR, №54/87, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի, Սվազի ու Դիյարբեքիի նահանգներ և Ջանիկի գավառ, թվագրված 1915 թ. հունիսի 20:

8 Այս հարցում միակ քաղաքությունը, որ կարողացա գտնել, 1915 թ. հունիսի 17-ին էրգրում ուղարկված մի հեռագիր է: Դրանով քաղաքի «կաթոլիկ հայ միսիոներներին» թույլ է տրվում առայժմ մնալ տեղում՝ գրանցման թղթերով (BOA/DH.\$FR, №54/55, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1915 թ. հունիսի 17):

9 BOA/DH.\$FR, №54-A/252, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Դիյարբեքիի, Սվազի, Տրապիզոնի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Ջանիկի ու Մարաշի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 3:

10 BOA/DH.\$FR, №54/20, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուսիսային Կարիսի (Բուրսա), Դիյարբեքիի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Վանի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Ջանիկի, Քարեսիի (Բալիքեսիր) ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ և Մարաշի, Նիզդեի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1915 թ. օգոստոսի 15:

Այս ձևով իր դաշնակիցներին առնվազն ժամանակավորապես ծանոթարտեցնելով՝ Թալեաթ փաշան առանց ժամանակ կորցնելու փոխել է իր նախորդ հրամանները: Օգոստոսի 4-ին այն նահանգներն ուղարկված իր հեռագրով, որոնցից հայ կաթոլիկներ էին տեղահանվել, նա կարգադրել է, որ «Ադանայի, Սիսի ու Մերդինի հայերը, որոնց տեղահանությունը նախապես հետաձգված էր հայտարարվել, պետք է լինվին հեռացվեն նահանգում մնացած մյուս հայերի հետ միասին և տեղահանվեն նշանակված վայրերը»¹¹: Միաժամանակ նման մի հեռագիր է ուղարկվել Մարաշ, որը տարածքի մյուս հիմնական քաղաքն էր¹²: Հայ կաթոլիկների ենթադրյալ ազատումը տևել է մեկ օրից պակաս:

Չբավարարվելով ամեն անգամ մեկ քաղաքի տեղեկացնելուց՝ Թալեաթը օգոստոսի 11-ին հաջորդ «շրջաբերական» հեռագիրն է ուղարկել համապատասխան բոլոր նահանգները՝ տեղական պաշտոնյաներին հիշեցնելով, որ «կաթոլիկ հայերին տեղահանեն մյուսների հետ միասին», և պահանջելով, որ «գործողությունը կատարվի այդ եղանակով»¹³: Նույն օրը նա հրամայել է, որ «Անկարայի նահանգի կաթոլիկ բնակչությունը դուրս հանվի և արտաքսվի՝ մյուս հայերի նման»¹⁴:

Պատասխանելով նահանգային կառավարիչների հարցերին՝ Թալեաթը հստակեցրել է, որ տեղահանությունները դադարեցնելու հրամանը չի վերաբերել արդեն դուրս հանված կաթոլիկներին ու բո-

11 BOA/DH.\$FR, №54-A/271, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը նահանգապես Իսմայիլ Հաքի բեյին, թվագրված 1915 թ. օգոստոսի 4:

12 BOA/DH.\$FR, №54-A/272, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 4:

13 BOA/DH.\$FR, №54-A/384, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի ու Հալեպի նահանգներ և Ադանայի, Հալեպի ու Մարաշի (Լքված գույքի) Հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. օգոստոսի 11:

14 BOA/DH.\$FR, №55-A/373, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 11: Մյուս կողմից, 1916 թ. հունիսի 4-ին Անկարա ուղարկված մեկ այլ հեռագրից երևում է, որ որոշ հայ կաթոլիկներ դեռևս մնացել էին Անկարայում: Թալեաթ փաշան խնդրում է «արագ հաղորդել, թե ինչ վերաբերմունք է դրսևորվում կաթոլիկների նկատմամբ ներկայումս, և թե արդյոք Անկարայի բոլոր կաթոլիկներին թույլատրվում է կրոնական ծեսեր կատարել ժամանակավորապես այստեղ [Անկարայում] գտնվող գերմանացի քահանայի միջոցով» (BOA/DH.\$FR, №64/210):

դրքականներին: Օգոստոսի 14-ին Իզմիրի գավառ ուղարկած իր հեռագրում նա ասում է, որ Էսքիշեհիրի ճանապարհին գտնվող բողոքականներին ու կաթոլիկներին չպետք է թույլ տալ վերադառնալ¹⁵: Հետո, օգոստոսի 30-ին, Էսքիշեհիր հրահանգ է ուղարկվել, որ «կարիք չկա, որ այն կաթոլիկ ու բողոքական հայերը, որոնք Իզմիրից ու այլ վայրերից [ձեր շրջան] են ուղարկվել, վերադառնան [իրենց տները]: [Կաթոլիկ ու բողոքական հայերին] չտեղահանելու հրամանը չի տարածվում նրանց վրա, ովքեր [արդեն] գնացել են»: Նման հրահանգները կասկած չեն թողնում, որ քրիստոնեական այս երկու համայնքների տեղահանված անդամներին տուն չէին վերադարձնելու¹⁶:

Արևմտյան տերություններին խաբելու Թալեաթի փորձերը, բնականաբար, երկար հաջողություն չեն ունեցել, քանի որ Բեռլինը շուտով տեղեկացել է իրականությանը և նոր ճշում բանեցրել Բարձր դռան վրա: Դրա հետևանքով Թալեաթը օգոստոսի 29-ին երկրորդ «ընդհանուր հաղորդագրությունն» է ուղարկել նահանգներ՝ պահանջելով դադարեցնել կաթոլիկների ու բողոքականների տեղահանումը: Այս անգամ նա այցելել է Գերմանիայի դեսպանություն և դեսպանին ցույց տվել հեռագիրը: Գերմանիայի իշխանությունները, որոնք հավատացել էին ներքին գործերի նախարարին, նահանգներում իրենց ներկայացուցիչներին պատշաճ կարգով տեղեկացրել են, որ տեղահանությունները դադարեցվել են¹⁷: Իրականում, հայկական այդ համայնքները չտեղահանելու Թալեաթի հրամանում գործածված էին խրթին ու անհասկանալի արտահայտություններ: Եվ թերևս շատ կարևոր է այն հանգամանքը, որ նոր հրամանը բացարձակապես հետադարձ ուժ չուներ, այլ պարզապես վերաբերում էր այն «հայերին, որոնք [արդեն] արմատախիլ չեն արված ու տեղահանված»¹⁸:

Սակայն հեռագրի ձևակերպումների անորոշությունը դեռևս ամենը չէ: Թալեաթի հաջորդ հեռագիրը հստակեցնում էր, թե տեղական իշխանություններն ինչպես պետք է հասկանան օգոստոսի 29-ի հեռագիրը: Առանց անորոշ ձևակերպումների՝ Թալեաթը նահանգային իր պաշտոնյաներին հարահանգել է անտեսել իր ուղարկած հրահանգը, որը գերմանացիներին ցույց էր տվել՝ իբրև ապացույց, որ կաթոլիկներն ու բողոքականներն այլևս չեն տեղահանվում: Մեպտեմբերի 2-ին Ադանայի նահանգապետին ուղարկած իր հեռագրում, որին կցված էր «հարցը լուծել անձամբ» գրությունը, ներքին գործերի նախարարը բացատրել է, թե ինչպես է պետք հասկանալ չորս օր առաջ ուղարկած ընդհանուր հաղորդագրությունը: Տեղյակ լինելով, որ նահանգը պարպված է հայ կաթոլիկներից ու բողոքականներից՝ Թալեաթը հրահանգում է, որ, եթե որևէ մեկը մնացել է, տեղական իշխանությունները պետք է ձևացնեն թե «տեղահանությունները հետաձգելու հրամանը «տեղ է հասել» միայն նրանց արդեն իսկ տեղահանելուց հետո»: Բացի այդ, այդ կաթոլիկներին ու բողոքականներին պետք էր «տեղահանել իրենց ընտանիքների հետ միասին»¹⁹: Նահանգներ ուղարկված այդ հրահանգի էությունը, փաստորեն, սա էր. հայ կաթոլիկների ու բողոքականների տեղահանությունը պետք է շարունակվի, բայց եթե գերմանացիները շատ ճշշեն կառավարությանն ու տեղական իշխանություններին, վերջիններս պետք է ձևացնեն, թե նոր հրամանը շատ ուշ է տեղ հասել, և հետևաբար իրենք ոչինչ ավելին չէին կարող անել:

Մեկ այլ հեռագրից, որը Մարաշ էր ուղարկվել հոկտեմբերի 24-ին, կարծես նշմարվում է, որ Թալեաթը ամռան ընթացքում նահանգներին հրահանգել է, թե ինչպես վարվել կաթոլիկների ու բողոքականների տեղահանության հարցում: Այդ հեռագրում ներքին գործերի նախարարը նշում է, որ ինքը օգոստոսի 5-ին ու սեպտեմբերի 2-ին (համապատասխանաբար՝ թիվ 4917 և 5945) ծածկագրված հեռագրեր է ուղարկել նահանգներ, որոնք վերաբերել են հայերին առանց բա-

15 BOA/DH.ŞFR, №55-A/55, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 14:

16 BOA/DH.ŞFR, №55/321, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էսքիշեհիրի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 30:

17 DE/PA-AA/Bo.Kons./170, Ստամբուլում Գերմանիայի դեսպանության իրավաբանական խորհրդական Գյուլիերթի գրությունը, թվագրված 1915 թ. օգոստոսի 31:

18 BOA/DH.ŞFR, №55/292, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հյուդավեդիզար (Բուրսա), Անկարա, Քոնյա, Իզմիր, Ադանա, Մարաշ ու Հալեպ (նահանգներ) և Ջոզ, Սվազ, Ֆյուրթահյա, Քարեսի (Բալիքեսիր), Նիդդե, Մամուրեթյուլազիզ, Դիյարբեքիր, Կարահիսար-ի Սահիր (Աֆյոն Կարահիսար), Էրզրում ու Կեսարիա (գավառներ), թվագրված 1915 թ. օգոստոսի 29:

19 BOA/DH.ŞFR, №55-A/22, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 2:

ցառության, ներառյալ բողոքականներին ու կաթոլիկներին, տեղահանելու անհրաժեշտությանը: Հիշեցնելով այդ մասին՝ Թալեաթն ասել է, թե «չենք հասկանում այն փաստի պատճառները, որ, չնայած արդեն տեղեկացում էր տրվել Մարաշի հայերին տեղահանելու և նրանց նշանակված վայրերն ուղարկելու մասին... հենց Մարաշում մնացել են ավելի քան 2.500 հայ և ավելի քան 3.000 բողոքական քրիստոնյա», և բացատրություն է պահանջում այդ իրավիճակի համար²⁰:

Սակայն Թալեաթը հեռագրային հաղորդակցությամբ չի սահմանափակվել. նա նաև «տեսուչներ» է ուղարկել տարբեր նահանգներ: Այդ շրջանների մեջ մեծ կարևորություն էր ներկայացնում Ադանան, քանի որ տեղում Գերմանիայի հյուպատոսությունը մասնավոր ուշադրություն էր հատկացնում հարցին: Հյուպատոս Օյզեն Բյուզեն իր վերադասներին զեկուցել է, որ Թալեաթը իբրև տեսուչ նահանգ է ուղարկել Ալի Մյունիֆ (Չեթինքայա) բեյին, և վերջինս եկել է տեղական պաշտոնյաներին քերած այն ուղերձով, որ տեղահանությունները դադարեցնելու մասին նախորդ հեռագրերը չեղյալ են համարվում և անվավեր են: Այդ պատճառով, գրել է Բյուզեն, «օգոստոսի 31-ին Բարձր դռան կողմից կանցլերի դեսպանությանը տրված բացատրությունը պարզապես մի մեծ խաբեություն է»²¹,

20 BOA/DH.ŞFR, № 57/96, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 24: Մի քանի ամիս անց (1916 թ. ապրիլի 22-ին) մինետյն գավառն ուղարկված մեկ այլ հեռագրից կարելի է հասկանալ, որ որոշ կաթոլիկներ դեռևս բնակվում էին Մարաշ քաղաքում: «Ես կապվել եմ Չորրորդ բանակի հրամանատարության հետ», գրել է Թալեաթը: «Կաթոլիկները բոլորը պետք է ման»: Սակայն, ելնելով այն փաստից, որ մնացած կաթոլիկներին տեղահանելու հրամանն ուղարկվել էր 1915 թ. հոկտեմբերին, հավանական է, որ այդ ժամանակ Մարաշում մնացածներն ավելի վաղ տեղահանված են եղել այլ շրջաններից (BOA/DH.ŞFR, № 63/76, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1916 թ. ապրիլի 22):

21 Թալեաթը 1915 թ. օգոստոսի 31-ին Գերմանիայի դեսպանությանն ասել է, որ համապատասխան հեռագրերը վերցրել և ուղիղ դեսպանություն է եկել՝ դրանք դեսպանին ցույց տալու և իրական իրադրությունը բացատրելու համար: Այս օրինակը կարևոր է, որովհետև ցույց է տալիս, որ օգոստոսի 29-ին այդ հարցով նահանգներ ուղարկված հաղորդագրությունը հետագայում անվավեր է հայտարարվել ոչ միայն հեռագրային հրահանգների, այլև շրջան ուղարկված տեսուչների միջոցով:

քանի որ «պետական ծառայողները» գործել են տեսուչների և Թալեաթի հետագա հրամանների համաձայն, և «տեղահանությունները շարունակվում են՝ անկախ այն բանից, թե ինչ կարելի է կարծել»²²: Եվ իրոք. Ալի Մյունիֆն իր հուշերում ընդունում է, որ ինքն անձամբ է պատրաստել այն հայերի ցանկը, որոնք պետք է տեղահանվեին Ադանայից²³: Ինչևէ. սեպտեմբերին արդեն տարբեր նահանգների պաշտոնյաներ զեկուցում էին, որ իրենց տարածքներում այլևս հայեր չեն մնացել²⁴:

Ադանայից եկող լուրերի հետևանքով, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան իշխան Հոսստ Վիլիելմ Հոհենլոհե-Լանգենբուրգը 1915 թ. սեպտեմբերի 25-ին գրություն է ուղարկել Բեռլին.

Ադանայում ու Հալեպում կայսերական հյուպատոսների հետագա զեկույցները հաստատում են, որ տեղահանված հայերի ճակատագիրը բարելավելու համար Բարձր դռան հեռագրային հայտնի հրահանգներն ընդհանուր առմամբ չեն ծառայել իրենց նպատակին՝ շնորհիվ արտոնությունների մեջ զանազան բացառությունների պատճառով, որոնք Բարձր դռուն ինքն արեց սկզբում և հետո, ինչպես նաև նահանգային իշխանությունների բռնակալության պատճառով: Ադանայում, ինչպես դր. Բյուզեն է հաղորդել ամսի 13-ին, այրիները, որբերը, զինվորների ընտանիքները, նույնիսկ հիվանդներն ու կույրերը պետք է տեղահանվեն²⁵:

Այդ պատճառով, դեսպանի զեկույցում Թալեաթը հղվում է իբրև «ստախտ»: Օսմանյան կայսրության Ծածկագրերի վարչության

22 DE/PA-AA/Bo.Kons./Band 170, Ադանայում Գերմանիայի հյուպատոս Բյուզենի հեռագիրը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 10:

23 Taha Toros, ed., "Eski Nafia Nazırı Ali Münif Yegane'nin Hatıraları: İstibdattan Cumhuriyet'e," Akşam, 26 October–21 December 1955, part 47.

24 Նման հեռագրեր են ուղարկվել Դիյարբեքիրի նահանգից 1915 թ. սեպտեմբերի 5-ին, Իզմիրի ու Էսքիշեհիրի գավառներից՝ 1915 թ. սեպտեմբերի 17-ին, և Նիդդեից՝ 1915 թ. սեպտեմբերի 18-ին: Դրանք բոլորը կարելի է գտնել հետևյալ հրատարակության մեջ. Devlet Arşivleri Genel Müdürlüğü [Պետական արխիվների ընդհանուր վարչություն], Osmanlı Belgelerinde Ermeniler (1915–1920), 94–97:

25 DE/PA-AA/R 14088, Դեսպան Հոհենլոհե (-Լանգենբուրգի) զեկույցը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 25:

փաստաթղթերի մեջ գտնվող բազմաթիվ այլ հաղորդագրություններ ցույց են տալիս, որ նախորդ հրամանը չեղյալ հայտարարելու համար երկրորդ հեռագիր ուղարկելու սովորությունը Թալեաթ փաշայի համար աշխատանքային ոճ է եղել:

Իբրև մեկ այլ օրինակ, կարելի է բերել 1914 թ. ապրիլի 16-ին Թալեաթի կողմից Թեքֆուրդաղիի (Թեքիրդաղ) գավառ ուղարկված հեռագիրը.

Վիզեի մետրոպոլիտանի [եպիսկոպոսի] խնդրանքով, իրեն խորհուրդ տալու նպատակով, Պատրիարքարանի կողմից ուղարկված 4-5-հոգանոց պատվիրակությանը երեկ տրված գրավոր երաշխավորագրերի բովանդակությունը պետք է անտեսել: Մյուս կողմից, Էրեղլիի գաղթականներին առաջին իսկ հնարավոր պահին պետք է տեղավորել շոգենավի վրա և արագացնել Էրեղլիից նրանց մեկնումը: Վերոհիշյալ պատվիրակությանը պետք է հսկողության տակ պահել, և մեծ միջոցներ պետք է ձեռնարկել՝ [վստահանալու համար], որ [այս պատվիրակության] ջանքերն ի չիք դառնան, և դա արվի՝ առանց նրանց կողմից այդ մասին որևէ բառ իմանալու²⁶:

Այստեղ տեսնում ենք, որ օսմանյան շրջանային պաշտոնյաներին Թալեաթը հրահանգում է անտեսել նախորդ կարգադրությունները, ինչպես նաև առաջարկների ցանկը, որ ինքն էր տվել Հունական պատրիարքարանի կողմից տարածաշրջան ուղարկված պատվիրակությանը. նա միևնույն ժամանակ կարգադրում է, որ պատվիրակությանը ուշադիր հետևեն և չթողնեն հասնի իր նպատակներին: Այս արժեքավոր հեռագիրը բացահայտում է այդ ժամանակահատվածում օտարերկրյա պատվիրակությունների և իր իսկ երկրի փոքրամասնությունների հանդեպ օսմանյան ներքին գործերի նախարարի վարքի հիմքում ընկած մարտավարությունը:

Գերմանական արխիվներում իմ գտած փաստաթուղթը վստահաբար վերջ կտա Ադանայի վերաբերյալ բոլոր վիճարանություններին: «Նահանգային գրասենյակից» արձակված հրահանգը մանրամասնորեն բացատրում է, թե Ադանայից կատարվող տեղահանություններն ինչպես պետք է իրականացվեն:

1. Քանի որ որոշված է, որ Ադանայի կենտրոնի տեղացի ու օտար հայերը մինչև օգոստոսի 24-ը ամբողջովին պետք է տեղահանվեն, յուրաքանչյուր անձի կապն ու հարաբերություններն Ադանայի հետ պետք է այսուհետև կտրվեն՝ ուժի մեջ մտնելով անմիջապես:
2. Նրանց դիմումները, ովքեր տեղում մնալը պահանջում են երկարացնել այն հիմնավորմամբ, թե իրենց կապն ու հարաբերությունը դեռևս չեն կտրվել, բացարձակապես անվավեր են:
3. Այս պահից սկսած, բոլոր հայերը գրանցվելու են՝ դիմելով ոստիկանություն, և ձեռք են բերելու տեղահանման փաստաթղթեր:
4. Նրանք, որոնք նշանակված օրը չեն գնա, կձերբակալվեն, կդրվեն հսկողության տակ և առանց դադարի կտեղահանվեն պահակախմբի հսկողությամբ:
5. Հայտարարվել է, որ, քանի որ ոստիկանությունն ամեն գիշեր մինչև առավոտ զբաղված է գրանցմամբ, գրանցումները կատարվում են նաև դիմումներով, գիշերները ևս, վերոնշյալ [ոստիկանության] բաժնում²⁷:

Բոլոր հայերը, առանց բացառության, պետք է արտաքսվեն Ադանայից: Այս փաստաթուղթն այնքան հստակ է, որ այն վերլուծելու կարիք չկա:

Այս ամենի լույսի ներքո հեշտ է հասկանալը, թե ինչու էին Թալեաթին նույնիսկ թուրքական աղբյուրները հաճախ անվանում «փաշեբա» կամ «ստախոս»: Պատմաբան Իսմայիլ Համի Դանիշմենդը գրել է, որ Թալեաթը «ընդարձակել է մասնավորապես իր հոշակն իբրև ստախոս»²⁸: Թուրքական «Սարահ» թերթի խմբագիրը հաղորդում է, որ Թալեաթը գրեթե մեքենայաբար «ստեր էր խոսում»²⁹: Ստամբուլից Թալեաթի փախուստից հետո նրա ժամանակակիցը՝ լրագրող Սյուլեյման Նազիֆը, նրան նկարագրել է իբրև մեկը, ով

27 DE/PA-AA/Bo.Kons./Band 170, Ադանայում հյուպատոս Բյուզեի գեկույցը Ստամբուլի դեսպանությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 6:

28 İsmail Hami Danişmend, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi (İstanbul, Türkiye Yayınevi 1961), 448. Այս և հաջորդ երկու օրինակները վերցված են հետևյալ տեղից. Dadrian, "Pitfalls of a 'Balanced' Analysis," 125:

29 Sabah, 1915 թ. մայիսի 15:

26 BOA/DH.ŞFR, №40/17, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Թեքֆուրդաղիի գավառ, թվագրված 1914 թ. ապրիլի 16:

«խաբերայությունից բացի այլ հատկանիշ չունի»³⁰: Ասում են, որ Մուստաֆա Քեմալին (Աթաթյուրք) նույնպես բաժին է հասել Թալեաթի ստերից³¹:

Նույնիսկ Թալեաթի մերձավոր քաղաքական գործընկերները նրան բնութագրել են իբրև ստախոսի: Նրա ամենամտերիմ ընկեր Հյուսեյին Ջահիթը (Յալչին) ընդունում է, որ Թալեաթը «պետական ու քաղաքական հարցերում ստում է»³²: Թալեաթի անձնական քարտուղար Ֆալիհ Ռիֆքի Աթայը նրա մասին խոսելիս ասում է, որ նա մի մարդ էր, «որն անբարոյական ոչինչ չէր գտնում ո՛չ ստերի և ո՛չ էլ դաժանությունների մեջ»: Աթայը հիշում է նաև, որ իր նախկին ղեկավարը հաճախ թելադրում էր պաշտոնական բաց հեռագիր, իսկ ապա, դրանից հետո՝ ծածկագրված հեռագիր, որով անվավեր էր դարձնում նախորդ հաղորդածը³³: Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուն և իթթիհադական պատգամավոր Խալիլ Մենթեշեն հիշում են, որ Թալեաթը, որն իր վաղ տարիքում աշխատել էր էդիբնեում իբրև հեռագրային գործակալ, իր սեփական տանը հեռագրային անձնական գիծ էր դրել, որով հաճախ հեռագրեր էր առաքում ու ստանում³⁴: Թուրք լրագրող Մուրատ Բարդակչիի հետ 1982թ. հոկտեմբերի մի հարցազրույցում ներքին գործերի նախարարի այրին՝ Հայրիյե Թալեաթը, հաստատել է այդ տեղեկությունը: Լրագրողի այն հարցին, թե «հայկական միջադեպերի ընթացքում փաշայի տանը, այսինքն՝ ձեր տանը, հեռագրային մեքենա կա՞ր», նա պատասխանել է. «Այո, կար»: Այնուհետև Բարդակչին հարցրել է. «Նա ինքն էր գործածում մեքենան», ինչին կինը պատասխանել է. «Ե՛վ նա էր գործածում, և՛... ահ, չեմ կարողանում նրա անունը հիշել... նա հետո կուրացավ... վերջերս մահացավ... Լավ, ով որ է. նա ևս գործածում էր դա, իհարկե: Նահրամաններ էր տալիս բոլոր նահանգապետերին»³⁵:

30 Hadisat, 1918թ. նոյնքերի 5:

31 Falih Rifki Atay, Atatürk'ün Bana Anlattıkları (Istanbul, Sel Yayınları, 1955), 9–10.

32 Yalçın, Siyasi Anılar, 148.

33 Falih Rifki Atay, Zeytindağı (Istanbul, Bateş A.Ş., 1981), 24–25.

34 Menteşe, Osmanlı Mebusan Meclisi Reisi, 216; Morgenthau, Դեսպան Մորգենթաունի պատմությունը, 143–44:

35 Bardakçı, Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, 211.

Հրամաններ ուղարկելը և ապա անմիջապես դրանք բեկանելը, փաստորեն, օսմանյան ղեկավարների սովորական գործելակերպն է եղել: Գերմանացի սպա Հանս ֆոն Ջիքթը, որը պատերազմի ժամանակ օսմանյան բանակի շտաբի պետ էր, պատմել է, որ «պաշտոնական հրամանները», որպես կանոն, բեկանվել են երկրորդական հրամաններով, որոնք իրենցից ներկայացնում էին օսմանյան վարչակազմի գաղտնի որոշումները³⁶: Կապիտան Սեվահաթինը հիշում է, որ գերմանացիներին հանդարտեցնելու նպատակով պաշտոնական խողովակներով պատերազմի նախարարի ուղարկած հեռագիրը անվավեր է հայտարարվել հաջորդող մի ուղերձով, որն ուղարկվել էր էնվեր փաշայի անձնական տան «հեռագրային գրասենյակից»³⁷:

ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԿԱՇ ՅԵՏԱՔԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԱՐՑԸ

Լայնորեն տարածված հիմնական փաստարկումներից մեկն այն է, թե օսմանյան կառավարությունը հետաքննության է ենթարկել պետական այն պաշտոնյաներին, որոնք բռնության են ենթարկել տեղահանված հայերին կամ շահագործել նրանց, հարձակվել են շարասյունների վրա կամ սպանություններ և այլ ծանր հանցագործություններ են կատարել: Ըստ այս տեսակետի, որոշ պաշտոնյաներ իսկապես մեղավոր են եղել տեղահանությունների ընթացքում կատարված բռնությունների համար, սակայն «[այն անձինք] ովքեր չեն ենթարկվել [կառավարության] հրահանգներին, և ովքեր մեղավոր են եղել, ձերբակալվել են և դատի տրվել: Հետաքննչական հատուկ խորհուրդ է ձևավորվել Պատերազմի նախարարությունում, որպեսզի քննի այդ խախտումները... Նրանց, ովքեր պարզվել է, որ մեղավոր են, ուղարկել են ռազմական դատարաններ: Նման մարդկանց թիվը... 1.397 է: Նրանց նկատմամբ տարբեր դատավճիռներ են կայացվել, ներառյալ՝ մահապատիժ»³⁸:

36 Հղված է՝ V. N. Dadrian, "Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources," in Charney, Bibliographic Review, 109–10:

37 İlhan Selçuk, Yüzbaşı Selahattin'in Romanı, h. 1 (Istanbul, Remzi Kitabevi 1993), 292:

38 Kamuran Gürün, Armenian File: The Myth of Innocence Exposed (London, K. Rustem and Weidenfeld & Nicolson, 1985; New York, St. Martin's Press, 1986). <http://www.eraren.org/index.php?Lisan=en&Page=YayinIcerik&IcerikNo=217/>

Օսմանյան վարչապետական արխիվում և, ամենակարևորը՝ Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության փաստաթղթերի մեջ, որտեղ պետք է գտնվի այդ կյուրիին առնչվող փաստաթղթերի մեծ մասը, հետազոտողն ապարդյուն է որոնելու այնպիսիք, որոնք հաստատեն տեղահանված հայերի սպանությունների կամ նրանց հանդեպ այլ ծանր հանցագործություններ կատարելու մեջ մեղադրվող պետական պաշտոնյաների նկատմամբ հետաքրքրություններ սկսած լինելու հանգամանքը: Իրականում, ինչպես ցույց կտանք ստորև, Միություն և առաջադիմություն կոմիտեն, զանազան պատրվակներով ու արդարացումներով, ժամանակի ընթացքում վերացրել է իր տխրահռչակ Հատուկ կազմակերպության անդամներին, որոնց նկատմամբ այն մտավախությունը կար, որ հետագայում կարող են խնդիրներ հարուցել կոմիտեի համար: Սակայն նրանք երբեք համակարգված որևէ հետաքննություն չեն վարել պետական գործիչների կամ կառավարական պաշտոնյաների կատարած խախտումների հարցով:

Բացի այդ, փաստաթղթերը բացահայտում են, որ իթթիհադական կառավարությունը հատուկ մտահոգություն ու զգայնություն է դրսևորել հայերի «լքված» գույքի նկատմամբ, որը որևէ կերպ չի տարածվել գույքի տեղահանված սեփականատերերի վրա: Օսմանյան վարչակազմը, որը ծրագրել էր գործածել հայերի ունեցվածքն ու դրավաճառքից ստացվող եկամուտը, մեծ ճիգեր է գործադրել՝ կանխելու համար դրանց կողոպուտն ու յուրացումը: Այն պաշտոնյաները, որոնք իսկապես հետաքննվել ու դատվել են խախտումների մեղադրանքով, մեղադրվել են ոչ թե հայերին հալածելու, այլ հայերի ունեցվածքը անձնական շահի համար գործածելու պատճառով:

Տեղահանությունների մեջ ցեղասպանության մտադրության բացակայությունը պնդողները իրենց պնդումները հաստատող դեռևս ոչ մի փաստաթուղթ չեն հրապարակել՝ այն պարզ պատճառով, որ որևէ փաստաթուղթ հայտնի չէ, որը վկայի հայերի հանդեպ բռնարարքներ կատարած պաշտոնյաների հանդեպ իրավական հետաքննության փաստը: Քամուրան Գյուրյունը, որն առաջ է քաշել դատված պետական գործիչների 1.397 թիվը, այդ մասին վկայող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Փոխարենը, օսմանյան առանձին նահանգների մասին թվեր ներկայացնելով՝ նա ակնհայտորեն բավարար է համարում մի հատիկ օսմանյան փաստաթուղթ հղելը՝

«Որևէ մեջբերում անելու դրանից: Նույն իրավիճակն է Յուսուֆ Հալաչոլլուի դեպքում, որը, հենվելով Գյուրյունի գործի վրա, կրկնում է միևնույն թվերը: Պնդելուց հետո, որ մեղադրված պետական պաշտոնյաները «դատվել են ռազմական տրիբունալում և խիստ պատիժներ ստացել»³⁹, Հալաչոլլուն իբրև ապացույց տասներկու փաստաթուղթ է նշում, սակայն ոչ մի տեղեկություն չի տալիս դրանց ընդմիջի ու բովանդակության մասին:

Ուշադիր հայացք նետելով այդ տասներկու փաստաթղթին՝ պարզում ենք, որ դրանցից և ոչ մեկը որևէ կերպ չի առնչվում հայ ժողովրդի հանդեպ բռնություններին: Դրանք վերաբերում են այնպիսի հանցագործությունների, ինչպիսին են հայերից մնացած գույքի կողոպուտը, գողությունը, կաշառակերությունն ու բռնազավթումը, և փաստաթղթերի մեծ մասում խոսք չկա դատական հետապնդման մասին:

Այդ փաստաթղթերի մի մասը պարզապես վերաբերում է գույքի բռնազավթման հարցերով զեկույցներ պահանջելուն, ինչպես, օրինակ. «Անվտանգության ընդհանուր վարչության կողմից էսքիշեհիրի գավառապետին ուղարկված հեռագիրը՝ Միհալիչիկի մարզպետ Յովանաքի էֆենդու վերաբերյալ, որը, պարզվում է, հայերին ստիպել է հանձնել իրենց ունեցվածքը»⁴⁰, կամ պարզապես կողոպուտի, բռնազավթման ու կաշառքի դեպքերին, ինչպես. «Անվտանգության ընդհանուր վարչության կողմից Նիդդեի գավառապետին ուղարկած հեռագիրը, որը վերաբերում է Փոզանթիից Ներգաղթողների գործերի տնօրեն Շուքրու բեյի ուղարկած հեռագրին, որին վստահված էր հայերի տեղահանությունը. այդ հեռագրում նա պահանջում է, որ հետաքննություն անցկացվի Ուլուքիշլայում կատարված իրադարձության վերաբերյալ»⁴¹: Այլ հեռագրերում քննարկվում է ապօրինի հատկացումների ու յուրացումների համար դատելու թույլտվություն տալու հարցը. «Անվտանգության ընդհանուր վարչության կողմից

39 Yusuf Halaçoğlu, Ermeniler Tehciri ve Gerçekler (Ankara, Türk Tarih Kurumu, 2005), 62.

40 BOA/DH.ŞFR, № 59/196, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը էսքիշեհիրի գավառ, թվագրված 1916 թ. հունվարի 4:

41 BOA/DH.ŞFR, № 55-A/156, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Նիդդեի գավառ, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 8:

Մամուրեթյուլազիզի նահանգ հեռագրով ուղարկված պատասխանը Բենսիի մարզպետ Էդիեմ Քադրի բեյին ռազմական տրիբունալի հանձնելու մասին. հետաքննության արդյունքում պարզվել է, որ նա չտեսնելու է տվել պետական պաշտոնյաների կողմից հայերի գույքի գործածումը և ինքն էլ մի շարք ապրանքներ է ստացել անվճար»⁴²:

Հալաչոլուն այդ փաստաթղթերը հղում է նաև իբրև «ռազմական տրիբունալով [կատարված] դատավարությունների» և «ծանր պատիժներ կիրառելու» օրինակներ, սակայն, չբավարարվելով վերը նշված խեղաթյուրումներով, նա, իր պնդումները հաստատելու համար, նույնիսկ այնպիսի փաստաթղթեր է ներկայացնում, որոնցում գովասանքներ են շոայլվում պետական պաշտոնյաների հասցեին՝ հայերի դեմ կատարած նրանց գործողությունների համար: Այդ փաստաթղթերից մեկը վերաբերում է մարզային մի պաշտոնյայի, որը, պաշտոնից հեռացված լինելով ռազմածովային նախարար ու Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշայի կողմից, հետագայում արժանացել է ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի գովասանքին և վերականգնվել իր պաշտոնում: 1915 թ. նոյեմբերի 28-ի մի հեռագրով Թալեաթը Ջեմալ փաշային հիշեցրել է, որ մեկ այլ պաշտոնյա ևս նրա (Ջեմալի) պահանջով պաշտոնանկ է արվել, և որ Ջեմալն իրավասու չէր ինքնագլուխ հեռացնելու մարզային ևս մեկ պաշտոնյայի:

Ռազմածովային նախարարին Թալեաթը տեղեկացրել է, որ «պետական պաշտոնյաները, ինչպիսին են մարզպետները (kaymakam) [և] գավառապետերը (mutasarrif) չեն կարող հանկարծակի հեռացվել իրենց պաշտոններից՝ նույնիսկ նահանգապետերի կողմից հաղորդելու կամ կարգադրելու դեպքերում. նրանց հեռացումն ու փոխարինումը կարելի է կատարել միայն նախնական հետաքննություն անցկացնելուց և [տվյալ խախտման հարցում] նրանց պատասխանատվությունը հաստատելուց հետո»⁴³: Այնուհետև Թալեաթը նախագգուրուցրել է, որ, այդ պատճառով, պատշաճ չէ, որ տվյալ

մարզպետն «իր պաշտոնական դիրքից հեռացվի» սուկ բանակային մի սպայի գեկույցի հիման վրա, և նշել է, որ ինքը փոխել է ազատման հրամանը և մարզպետին վերականգնել իր պաշտոնում⁴⁴: Ջեմալը չպետք է միջամտի նման գործերին, զգուշացրել է Թալեաթը, քանի որ հայերի տեղահանությունների հետ կապված միջոցառումներն ու գործողությունները Ներքին գործերի նախարարության և Հալեայի կառավարության գործն են:

Ավելի ուշ Ադանայի նահանգ ուղարկված մի հեռագրով Թալեաթը պահանջել է, որ «նախ պետք է [Ներքին գործերի] նախարարությանը հարցնել, երբ անհրաժեշտ է դառնում Իսլահիյեի ղեկավարին, որին վերցրել և հայերի տեղահանությունների ընթացքում կատարած խախտումների պատճառով ուղարկել էին մայրաքաղաք, վերադարձնել իր պաշտոնին՝ նրա [աչքի ընկնող] ջանքերի պատճառով, կամ երբ նման վիճակում գտնվող այլ մարզպետներ են հեռացվում իրենց պաշտոններից և ապա վերադարձվում»⁴⁵: Այս փաստաթուղթը մեջբերել իբրև այն բանի օրինակ, թե ինչպես էին հայերի դեմ կատարած հանցանքների մեջ մեղավոր պետական պաշտոնյաները «պատժվում տարբեր բանտարկություններով և նույնիսկ մահավճռով», ոչ այլ ինչ է, քան սկանդալային հայտարարություն, և արժանի չէ գիտական աշխատություն կոչվելու:

ՆԱՅԱՆԳՆԵՐ ԵՆ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ՅԵՏԱՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԽՄԵՐ

Եթե մի բան կա, որ հստակորեն երևում է բոլոր այս փաստաթղթերից, այն է, որ, մտադիր լինելով համակարգված կերպով շահագործելու տեղահանված հայերի գույքն ու ապրանքը և դրանց վաճառքից ստացվող հնարավոր ողջ եկամուտը, օսմանյան կառավարությունը մեծ ջանքեր է գործադրել՝ կանխելու համար դրանց օրինական կամ ապօրինի ձեռքբերումն ու գործածումը մասնավոր անձանց կողմից: Ինչպես ցույց կտանք 12-րդ գլխում, այդ պատճառով են հիմնվել և ուշի ուշով հսկվել Լքված գույքի կառավարման հանձնախմբերը, որոնք պարտավոր էին իրենց գործունեության մասին

42 BOA/DH.ŞFR, № 61/165, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 1:

43 BOA/DH.ŞFR, № 58/141, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1915 թ. նոյեմբերի 28:

44 Նույն տեղում:

45 BOA/DH.ŞFR, № 58/196, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 4:

յուրաքանչյուր տասնհինգ օրը մեկ զեկույցներ ուղարկել մայրաքաղաք⁴⁶:

Այդ գույքի նկատմամբ կայսրության տեղական պաշտոնյաների ոտնձգությունները կանխելու նպատակով ընդունվել են դրանք արգելող օրենքներ ու որոշումներ: Բացի այդ, վարչակազմը նահանգներին կարգադրել է զեկույցել գանցանքների մասին: 1915 թ. օգոստոսի 26-ին Մամուրեթյուլազիզի նահանգապետին լուր է հասել, որ «Քանգալի վարչական կենտրոնից հեռագրային հաղորդում է ստացվել, որը ստորագրել է Աքչադաղի մարզի հետաքննիչ դատավոր Էդհեմը, [ասելով, որ] Մալաթիայի ու Աքչադաղի պաշտոնյաներն ու ժանդարմները մոտ հինգ հազար լիրա արժողության լքված գույք են կողոպտել: [Հարկավոր է] անհապաղ հետաքննություն սկսել ու ջանասիրաբար իրագործել կարգավորող օրենքի դրույթները և զեկույցել [արդյունքների մասին]»⁴⁷: Ցավոք, նույնիսկ Ներքին գործերի նախարարության փաստաթղթերի համաձայն, թալանն ու գողությունը շուտով այնպիսի չափերի են հասել, որ որոշ դեպքերում մեկ կամ երկու պաշտոնյա կարողացել են իրենցը դարձնել հայերից մնացած գյուղի բոլոր պարտեզները, այգիներն ու շենքերը⁴⁸:

Երբ պարզ է դարձել, որ միայն հեռագրային հաղորդակցությամբ նահանգներում իրադրությունը վերահսկելու կենտրոնական կառավարության փորձերը հաջողության չեն հասել և դժվար թե հետագայում հասնեն, Ստամբուլը հանձնախմբեր է ուղարկել՝ հետաքննելու

46 BOA/DH.ŞFR, № 54/442, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ադանայի, Հալեպի, Բիթլիսի, Դիյարբեքիրի, Մամուրեթյուլազիզի, Տրապիզոնի, Սվազի, Հյուդավենդիզարի (Բուրսա) ու Էդիրնեի նահանգներ և Մարաշի, Ջանիկի, Իզմիրի, Կեսարիայի, (Դեր) Ջորի ու Ուրֆայի գավառներ և Ադանայի ու Հալեպի Լքված գույքի հանձնախմբերի նախագահներին, թվագրված 1915 թ. հուլիսի 13:

47 BOA/DH.ŞFR, № 55/255, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ և Մամուրեթյուլազիզի Լքված գույքի հանձնախմբի նախագահին, թվագրված 1915 թ. օգոստոսի 26:

48 Իբրև այդ երևույթի օրինակ կարելի է բերել «Կաստամոնուի Աքքայա ենթաշրջանում [գտնվող] Կարաբյուք ավան[ից] հայերի տեղահանության ընթացքում վարչական որոշակի պաշտոնյաների կողմից շատ ցածր գներով հայերի գույքի ձեռքբերումն ու գնումը»: Այս դեպքում, «լքված [գույքն] ամբողջությամբ ձեռք են բերել երկու պաշտոնյաներ և առել իրենց սեփական պաշտպանության տակ: Գույքի այդ ձեռքբերման հետաքննության համար տե՛ն BOA/DH.ŞFR, № 94/20, 1918 թ., ղեկտնմբերի 3:

համար նահանգային պաշտոնյաների կողմից կողոպուտի, գողության ու բռնության բնույթի խախտումները: Մեծ վեզիրի գրասենյակից 1915 թ. սեպտեմբերի 30-ին Պատերազմի նախարարությանն ուղարկած հաղորդագրությունից երևում է, որ երեք այդպիսի հանձնախմբեր է կազմվել⁴⁹:

Դրանից չորս օր առաջ Ներքին գործերի նախարարությունը մյուս նախարարություններին տեղեկություն էր հաղորդել այդ հանձնախմբերի բնույթի մասին: Բիթլիսի նախկին նահանգապետ Մազհար բեյը նշանակվել էր կազմված հանձնախմբի ղեկավար՝ «ռազմական տրիբունալ բերելու համար այն պաշտոնյաներին ու ժանդարմներին, որոնց կողմից հայերի տեղահանությունների ընթացքում Սվազի, Տրապիզոնի, Էրզրումի, Մամուրեթյուլազիզի, Դիյարբեքիրի ու Բիթլիսի նահանգներում և Ջանիկի գավառում կատարած ապօրինի գործողություններն ու բռնությունները վկայված են, և որոնց հանցանքը հաստատված է հարկ եղած հետաքննությամբ»⁵⁰: Հետաքննչական դատարանի առաջին նախագահը՝ Ասիմ բեյը, նշանակվել էր այն հանձնախմբի ղեկավար, որը հիմնվել էր՝ «հետաքննելու համար Ադանայի, Հալեպի ու Դամասկոսի նահանգներում և Ուրֆայի, [Դեր] Ջորի ու Մարաշի գավառներում կատարված խախտումները»⁵¹: Իսկ երրորդ հանձնախմբի համար Իզմիրի, Բալիքեսիրի, Էսքիշեհիրի, Աֆյոնի նահանգներ և Նիդդե էր ուղարկվել վերաքննիչ դատարանի նախագահ Հույուսի բեյը՝ ղեկավարելու համար այդ տարածքով զբաղվող հանձնախմբը:

Սակայն այդ հանձնախմբերն իրավասու չէին հետաքննելու բոլոր հանցագործությունները. նրանք լիազորված էին զբաղվելու միայն տնտեսական խախտումներով: Դրա մասին վկայող ամենահստակ ապացույցն էր հայտ եկավ Բողազլիյանի մարզպետ Քեմալի դատավարության ընթացքում: Դատավարության 1919 թ. մայիսի 6-ի նիստի ժամանակ դատարանը վկայակոչել է երկու վկայի ցուցմունք-

49 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 1, 233.

50 BOA/DH.ŞFR, № 56/179, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազում գտնվող Բիթլիսի նախկին նահանգապետ Մաժար բեյին (Սվազի նահանգապետարանի միջոցով), թվագրված 1915 թ. սեպտեմբերի 26:

51 BOA/DH.ŞFR, № 56/186, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգի քաղաքացիական ծառայության տեսուչ Մուխտար բեյին, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 26:

ները: Առաջինը հանձնախմբի անդամ Ազիզ Նեդիմն էր, որին հանձնարարվել էր Բողազլիյանում Քեմալի գործերի հետաքննությունն անցկացնել՝ հասկանալու համար Քեմալի կատարածի պատերազմական ժամանակաշրջանի հետաքննության արդյունքները և դատավարության արդյունքը: Երկրորդը Մազհար բեյի գրավոր վկայությունն էր, որը ղեկավարել էր շրջանային հետաքննությունը և մինչ այդ արդյունքները ներկայացրել հանձնախմբին, որը հիմնվել էր 1918 թ. նոյեմբերին՝ պատերազմի տարիներին կատարված հանցագործությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով⁵²:

Նեդիմը վկայել է, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում իր ստացած հրամանի համաձայն, նա իրավասու էր հետաքննելու միայն տնտեսական խախտումները, և «բոլորովին իրավունք չունեի հետաքննելու կոտորածները»: Միևնույն նիստի ժամանակ մեղադրող դատախազ Սամի բեյը Նեդիմի վկայությունը հետևյալ կերպ է գնահատել. «[Նրա] վկայությունից հասկացանք այն, որ Ազիզ Նեդիմը ցանկացել է հստակեցնել այն հարցը, թե ճիշտ որոնք են եղել այն ստուգման սահմանափակումները, որ ինքը պետք է ստանձներ, և [որն է եղել] իր իրավասությունն այդ հարցում, և իրեն տեղեկացրել են, որ կոտորածներն [իր] հետաքննության շրջանակից դուրս են»⁵³:

Թուրքական «Իլերի» օրաթերթի 1918 թ. դեկտեմբերի 20-ի համարում այդ հանձնախմբերում ծառայած մի պաշտոնյա որոշ լույս է սփռել է իրենց գործունեության վրա: Այդ պաշտոնյան (որի անունը թերթը չի տալիս) նշել է, որ հետաքննիչ հանձնախմբի իրավասությունների շրջանակը խիստ սահմանափակ է եղել և չի ներառել ո՛չ բարձրաստիճան պաշտոնյաներին հետաքննելը, ո՛չ էլ հետագա հետաքննության կամ դատի համար վերջիններիս ռազմական տրիբունալ ուղարկելը: Նա բողոքել է, որ, ավելին, ոչ ոք ուշադրություն չի դարձրել իրենց զեկույցներին: Ինչ վերաբերում է նրանց ունեցած լիազորություններին, «հանձնախմբերն ուղարկվել էին նախնական հետաքննության հանձնարարությամբ և հետագա հետաքննություն պահանջող զանցանքների համար միայն փոքր պաշտոնյաներին կարող էին ուղարկել ռազմական տրիբունալ, քանի որ [ավելին անելու] իրավասություն չունեին: Ինչ վերաբերում է մյուսներին [հանձ-

նախմբերին], կարելի է նաև ասել, որ նրանց ներկայացրած զեկույցները գրեթե ոչ մի ազդեցություն չեն ունեցել»⁵⁴:

Հարկավոր է ավելացնել, որ մինչև անօրենությունների ու խախտումների վերաբերյալ բողոքները ռազմական տրիբունալ ներկայացնելը, նույնիսկ մարզպետների (kaymakam) դեպքում, հանձնախմբերից պահանջվել է արտոնություն ստանալ Ստամբուլի համապատասխան նախարարությունից: Այդ հարցով 1915 թ. հոկտեմբերին Թալեաթ փաշայի ուղարկած հեռագիրը Մազհար բեյին, որը հենց նոր նշանակվել էր հետաքննիչ հանձնախմբերից մեկի ղեկավար, հստակորեն բացատրում է, որ «նահանգապետերի, գավառապետերի ու մարզպետների հետաքննությունների արդյունքները նախ ներկայացվելու են նախարարական գրասենյակներ, և հետագա քայլերը... ձեռնարկվելու են այն հրամանների ու զեկույցների համաձայն, որոնք կուղարկվեն [նախարարական գրասենյակից]»⁵⁵:

Օսմանյան Ներքին գործերի նախարարության պահպանված գրությունների մեջ առկա են մի շարք փաստաթղթեր, որոնք վերաբերում են այդ հետաքննությունների համար տրված թույլտվությունների: Բերենք մեկ օրինակ.

Ներկա հետաքննություններից պարզվել է, որ Բեսնիի մարզպետ Քադրի բեյը իր շքախմբի անդամներին թույլ է տվել հայերին վերաբերող հարցերում չարաշահել իրենց պաշտոնները և ինքն էլ որոշակի ապրանքներ է ստացել անվճար: Պատշաճ է համարվում, որ այդ պատճառով նա հանձնվի պատասխանատու ռազմական տրիբունալի: Հարկ եղած ցուցումները հաղորդվել են Հետաքննիչ հանձնախմբի ղեկավար Մազհար բեյին⁵⁶:

54 İleri, 1918 թ. սեպտեմբերի 20:

55 BOA/DH.SFR, № 56/267, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազում գտնվող Բիթլիսի նախկին նահանգապետին (Սվազի նահանգապետարանի միջոցով), 1915 թ. հոկտեմբերի 3:

56 BOA/DH.SFR, № 61/165, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916 թ. մարտի 1: Մեկ այլ փաստաթղթի համար, որը վերաբերում է խախտումների պատճառով Թենոսի մարզպետ Ջեմալ բեյին իր պաշտոնից հեռացնելու և նրան ռազմական տրիբունալ հանձնելու համար տրված թույլտվությանը, տե՛ս BOA/DH.SFR, № 57/105, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. նոյեմբերի 24: Մաժար բեյն այդ իրադրությանը տեղեկացվել է մեկ այլ հեռագրով:

52 Memleket, 1919 թ. մարտի 7:

53 V. N. Dadrian, "Pitfalls of a 'Balanced' Analysis," 73-130 և 121-12.

Տնտեսական օրինազանցումներն, այնուամենայնիվ, շարունակվել են հանձնախմբերի գործունեության ամբողջ ընթացքում, և կենտրոնական կառավարությունը բազմաթիվ հետագրեր է ուղարկել նահանգներ՝ ջանալով կասեցնել անզուսպ ապօրինի գործողությունները:

Այսպիսի բազմաթիվ փաստաթղթեր կարելի է գտնել Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչությունում: Դրանցից մեկում, օրինակ, նշվում է, որ «հաղորդվել է... որ Կարաջաբեյի մարզում հայերի լքած գույքը զանազան կողմերի ձեռքն է անցել: Խնդրում ենք՝ հետաքննելուց [հետո] շտապ գեկուցել»⁵⁷: Մեկ այլ հետագրում նշվում է, որ «խախտումներ են կատարվել... Միլիվրիիում գտնվող գույքի առնչությամբ, և այդ [խախտումների համար պատասխանատուները] հիմնականում ժանդարմներն են և նրանց հրամանատարները», և հանձնախմբերը պետք է հետաքննեն այդ զանցանքները⁵⁸: Հինգերորդ բաժանմունք (5.Şube) անվամբ հայտնի ետպատերազմյան խորհրդարանական հետաքննչական հանձնախմբի առջև տված իր վկայության մեջ նախկին մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան ընդունել է, որ հետաքննիչ հանձնախմբերի գործունեությունը, վերջին հաշվով, ոչ մի կամ գրեթե ոչ մի արդյունք չի տվել: Նրա բառերով՝ «հետաքննիչ հանձնախմբերը կազմվեցին հայերի կոտորածներից (Ermeni kitâli) հետո: Դրանք կատարեցին իրենց գործն ու հետ եկան: Սակայն Ներքին գործերի նախարարությունը չցանկացավ հայտնել հետաքննությունների արդյունքները: Չնայած ամեն տեսակի խնդրանքներին ու համառ պահանջներին, [նախարարությունը] համառեց ճշմարտությունը թաքցնելու հարցում... ամբողջ այն ժամանակաշրջանում, որ Թալեաթ փաշան ներքին գործերի նախարար էր, որոշել էր, որ հետաքննությունները ոչ մի հետևանք չէին կարող ունենալ և չէին ունենալու»⁵⁹:

Հետաքննիչ հանձնախմբերի մայրաքաղաք ուղարկած մի քանի գեկույցների օրինակներ կարելի է գտնել Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում: Անկարայի հանձնախմբի գեկույցներում

57 BOA/DH.ŞFR, №57/208, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հետազիբը Բուրսայի (Հյուղավեղիգար) Լքված գույքի հանձնախմբի նախագահին, թվագրված 1915թ. դեկտեմբերի 31:

58 BOA/DH.ŞFR, №61/276, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հետազիբը Էսքիշեհիրի գավառ, թվագրված 1916թ. մարտի 13:

59 Kocahanoğlu, İttihat ve Terakki'nin Sorgulanması ve Yargılanması, 84.

գտնվող պատմություններից մի քանիսը խիստ խոսուն են: Դրանցից մեկում մի ակնատեսի խնդրել են պատմել ամեն բան, ինչ իրեն հայտնի է կատարված անօրենությունների մասին: «Պարոն, ես շատ ավելի զարհուրելի բաներ եմ տեսել, քան սրանք են», - պատասխանել է նա: «Ես տեսել եմ զինված հրոսակախմբերի ու ժանդարմների, որոնք շարայունների մեջ կացիններով ու բրիչներով սպանում էին հայերին: Ես քեզ դրա մասին չեմ հարցնում: Միայն հարցիս պատասխանիր», զգուշացնում է խորհրդարանական հանձնախմբի ղեկավարը:

«Պարոն, ես դրան էլ կպատասխանեմ, — պնդում է ակնատեսը, — բայց, խնդրում եմ, հանուն արդարության, ականջ դրեք այս բաներին, որ ստիպված եմ ասելու. ես տեսել եմ ճիշտ մեզ նման մարդկանց սայլի մեջ, որոնք սպանվել են կացիններով ու բրիչներով»: Այդ բառերից հետո նրան սենյակից դուրս են հանել⁶⁰:

Ծածկագրերի վարչության թղթերի մեջ բազմաթիվ փաստաթղթեր վերաբերում են նաև այն ղեկաբերին, երբ հարցումներ են արվել հայերի ունեցվածքը պարզապես կողոպտելու, պաշտոնյաների չարաշահումների և մյուս ապօրինությունների մասին: Բերենք մեկ օրինակ: Հետաքննչական գործունեության ժամանակ հանձնախմբի նախագահ Մազհար բեյը, որը հետաքննություն էր անցկացնում Մալաթիայի շրջանում, թույլվություն է խնդրել պաշտոնական դիրքի չարաշահման կասկածով հետաքննելու մի մարզպետի: Իմանալով այդ մասին՝ Թալեաթ փաշան հաղորդագրություն է ուղարկել Մամուրեթյուլագիզի նահանգ, որից արժե երկար մեջբերում կատարել.

Երբ Քահթայի մարզպետ Հաքքի բեյը թողել է իր պաշտոնական դիրքը և ապօրինաբար սահմանն անցել ու մտել մարզ՝ Էրզրումից ու Մալաթիայից եկող հայերի շարայունն ընդունելու, դա չի արել Հիսնիմանսուրի մարզպետի հրամանով կամ արտոնությամբ, որին հանձնարարված էր տեղահանության [գործողությունը]: Դրա հետևանքով այդ երկուսի միջև լարվածություն է բռնկվել: Քանի որ այդ իրադրության պատճառով շարայունը հարկադրված է եղել երեք օր մնալու լեռան ստորոտին, և նրանց գույքն ու ունեցվածքը կողոպտվել են, շարայունը մնացել է խառնիճադանջ վիճակում: Իր սեփական հայտարարագրից,

60 Dadrian, "Pitfalls of a 'Balanced' Analysis", 124.

որը հաստատվել է գեկույցներով ու աներկբա ապացույցով պարզ է դարձել, որ թեև Հաքի բեյի գործածած խողովակներով հսկայական չափի փող ու ունեցվածք է վերցվել, գանձարանին է հանձնվել միայն 10.000 դուրուշի չափ գումար: Դրա հետևանքով Հետաքննիչ հանձնախմբի նախագահ Մազհար բեյը հայտարարել է վերոհիշյալ Հաքի բեյին ռազմական տրիբունալի տալու անհրաժեշտության մասին: Խնդրեմ ներկայացրեք ձեր կարծիքն այդ մասին⁶¹:

Ինչպես կարելի է հասկանալ այս հեռագրից, Թալեաթը բոլորովին չի մտահոգվել շարասյունների հայերի ճակատագրով. նրա միակ հետաքրքրությունը Հաքի բեյի այդ 10.000 դուրուշից ավելի վերցրած փողի և ունեցվածքի ճակատագիրն է: Միևնույն բնույթի մի քանի տասնյակ փաստաթղթերի մեջ, որոնք կարելի է մեջբերել այստեղ, որևէ տեղեկություն չկա հայերի տեղահանությունների ընթացքում սպանությունների կամ մարդկանց դեմ կատարված այլ հանցագործությունների մասին:

Համեմատության համար, նկատի առնենք հետևյալը: 1918թ. նոյեմբերից հետո կատարված հետաքննությունների արդյունքներում կարելի է բազմաթիվ այսպիսի արտահայտություններ գտնել. «Հայտնի է դարձել, որ [տվյալ անձինք] ներգրավված են եղել տեղահանությունների ընթացքում կատարված հանցագործությունների մեջ»⁶², կամ «փորձեր են արվել բռնելու Աքյազիլի Արազա Քազիմին ու Քուրու Իբրահիմին, որոնք Ադափազարից տեղահանությունների ընթացքում ներգրավված են եղել անհատ տեղահանվածների հալածանքների ու խոշտանգումների մեջ և պատասխանատու են նրանց մահվան համար»⁶³: Մյուս կողմից, Ներքին գործերի նախարարության

փաստաթղթերի և պատերազմական ժամանակաշրջանի հետաքննություններին առնչվող թղթերի մեջ մարդ մեծ ջանքեր պիտի գործածի՝ գտնելու համար տեղահանված հայերի դեմ իրագործված հանցանքների համար մտահոգության որևէ նման դրսևորում, էլ ասած դատական կարգով հետապնդման մասին:

Արժե արխիվային աղբյուրներից մի քանի օրինակ բերել այստեղ այն պայմանների մասին, որոնց ներքո, փաստորեն, թույլ է տրվել հետաքննել տեղական պաշտոնյաներին.

Թենոսի մարզի գլխավոր պաշտոնյա Ջեմիլ բեյը հիմա պետք է հանվի իր պաշտոնից և մեկուսացվի բոլոր խնդիրներից՝ հայերի տեղահանությունների ընթացքում իր ոչ պատշաճ գործողությունների պատճառով: Հետաքննիչ հանձնախմբի նախագահ Մազհար բեյը գրավոր տեղեկացված է, որ վերոնշյալ [կասկածյալների] վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են ռազմական տրիբունալ⁶⁴:

[Ազիզիյե Քյաիմ-ի մաքամի Համիդը] պետք է անհապաղ հեռացվի իր պաշտոնից և մեկուսացվի բոլոր խնդիրներից՝ [հայերի] տեղահանությունների ընթացքում իր ոչ պատշաճ գործողությունների և դեպքերի պատճառով: Հետաքննիչ հանձնախմբի նախագահ Մազհար բեյը գրավոր տեղեկացված է, որ վերոնշյալ [կասկածյալների] վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվել են ռազմական տրիբունալ⁶⁵:

Հետաքննիչ հանձնախմբի նախագահին պատասխան է տրվել Գյոթյուն մարզի գլխավոր պաշտոնյա Շուայիբ էֆենդուն ռազմական տրիբունալ հանձնելու անհրաժեշտության մասին՝ հայերի [տեղահանության] ընթացքում նրա անպատշաճ քաղաքականության ու գործողությունների պատճառով: Նահանգային կառավարության կողմից վերոնշյալը նաև պետք է հեռացվի իր պաշտոնից⁶⁶:

61 BOA/DH.SFR, № 59/146, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1916թ. դեկտեմբերի 29:

62 BOA/DH.SFR, № 96/270, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիրի գավառ, թվագրված 1919թ. մարտի 8:

63 BOA/DH.EUM.AYŞ, № 21/95, Ստամբուլի ռազմական տրիբունալի գլխավոր դատախազի տեղակալի գրավոր հաղորդումը [Dersaadet'ten Divan-ı Harbi Örfi Mütte-i Umumi Muavini] Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1919թ. սեպտեմբերի 27:

64 BOA/DH.SFR, № 57/105, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915թ. հոկտեմբերի 14:

65 BOA/DH.SFR, № 57/116, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915թ. հոկտեմբերի 25:

66 BOA/DH.SFR, № 57/413, Ներքին գործերի նախարարության Անվտան-

Խնդրեմ հստակ ձևով գեկուցեք գնդի հրամանատար կապիտան Սալիի էֆենդու վերաբերյալ հետաքննության արդյունքները, որպեսզի դրանք հիմք ծառայեն հարկ եղած քայլեր ձեռնարկելու համար. նա, ըստ լուրերի, [Դեր] Ջորից եկող հայերից 5.000 լիրա կաշառք է վերցրել⁶⁷:

Ծածկագրերի վարչության փաստաթղթերից բխող մյուս իրականությունն այն է, որ հետաքննություններ իրոք կատարվել են պետական այն ծառայողների նկատմամբ, ովքեր կասկածվել են տեղահանությունից փրկելով հայերին օգնելու մեջ: Արխիվային աղբյուրներից կարելի է բերել նման հետաքննությունների օրինակներ.

[Խնդրեմ] հաղորդեք [գնացքի] կայարանի դիսպետչեր պաշտոնյա լեյտենանտ Թահսին էֆենդու հետաքննության և հետապնդման արդյունքները, որի մասին հայտնի է, որ որոշ հայերի, նրանց համար կեղծ փաստաթղթեր սարքելուց հետո, գաղտնի Ստամբուլ է տարել⁶⁸:

[Դեր] Ջորի գավառապետի գրասենյակից հաղորդել են, որ իրենց հայտնի է դարձել, որ Ստամբուլից [Դեր] Ջոր արքայապետ յոթ հայերից [միայն] երկուսն են [տեղ] հասել, իսկ Հալեպից [Դեր] Ջոր ուղարկված յոթանասուններկու հայերից՝ երեքը, իսկ մյուսներն ազատվել են նրանց պաշտպանելու համար դրված ժանդարմների կողմից, փողի դիմաց: Խնդրեմ ավարտեք որևէ և բոլոր պատրաստությունները, որպեսզի արագ ավարտվի պահպանող ժանդարմների անհրաժեշտ հետաքննությունը, և նրանց գործերը հանձնվեն ռազմական տրիբունալ, և գեկուցեք, թե ինչ է արվում նման միջադեպերի կրկնությունը կանխելու համար⁶⁹:

գրության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Սվազի նահանգ, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 13: Պարզ է, որ նախորդ երկու փաստաթղթերում նշված պաշտոնանկությունները կատարվել են Մաժար բեյի թույլտվությամբ ու կամքով, որը ցանկանում էր նշանակվել ու աշխատել Սվազում:

67 BOA/DH.\$FR, № 66/55, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը (Դեր) Ջորի գավառ, թվագրված 1916 թ. հուլիսի 22:

68 BOA/DH.\$FR, № 66/167, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Բոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. օգոստոսի 8:

69 BOA/DH.\$FR, № 66/43, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-

Հայտնի է դարձել, որ դեռևս 3.845 տղամարդ և 5.000-ից փոքր-ից պակաս կին կա Մարաշում, որոնք չեն տեղահանվել, և դրանց մեջ 3.500-ի չափ լուսավորչական քրիստոնյա կա, իսկ մյուսները կաթոլիկ են կամ բողոքական: Կարծիք կա, որ լուսավորչական քրիստոնյաները դեռևս այնտեղ են՝ իրենց տեղահանությունից ազատման վերաբերյալ վերջերս [ուղարկված] հաղորդագրության հետևանքով: Ելնելով այդ իրադրությունից՝ դժվար է հասկանալ, թե գավառապետը աստարել կամ պաշտպանել է [խնդրո առարկա] հայերին, թե ոչ: Ամեն դեպքում, քաղաքացիական վարչության տեսուչ Հեյդար բեյն ուղարկվել է Մարաշ՝ հետաքննելու⁷⁰:

ՄԱՅԱՊԱՏԺ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԸ

Որոշ փաստեր կան այն մասին, որ տեղահանությունների ընթացքում իրոք մի շարք քրեական հետաքննություններ են կատարվել որոշ անձանց դեմ, այդ թվում և ՀԿ անդամների, որոնց հետո մահապատժի են ենթարկել: Ինչպես կտեսնենք Թալեաթ փաշայի ստորև ներկայացվող հեռագրերից, այդ անձանց (և մասնավորապես ՀԿ գործիչներին) «վերացնելու» հիմնական դրդապատճառներից մեկը այն մտահոգությունն է եղել, որ նրանք ապագայում կարող էին խնդիրներ հարուցել կառավարության համար: Բերենք մի քանի օրինակ:

Չերքեզ Ահմեդ. Դերակատարություն է ունեցել Վանի, Ուրֆայի, Դիյարբեքիի ու Դամասկոսի շրջաններում հայերի կոտորածների, ինչպես նաև, Ջենալ փաշայի հրամանով, օսմանյան Պատգամավորների պալատի անդամ երկու հայերի՝ Գրիգոր Զոհրապի ու Վարդգես Մերենգույանի սպանության մեջ: Թալեաթ փաշայի կողմից 1915 թ. օգոստոսի 21-ին Դիյարբեքիի նահանգ ուղարկված հեռագրից երևում է, որ Չերքեզ Ահմեդի ավագակախումբն արդեն սկսել էր տարածքի համար լուրջ վտանգ ներկայացնել: Թալեաթ փաշան ցանկացել է այդ խնդիրը լուծել՝ Չերքեզ Ահմեդին հետ ուղարկելով Ստամբուլ: Հեռագրում նա նշում է, որ «քանի որ հայտնի է դարձել, որ իրենց ավագակախմբերի հետ միասին Ուրֆա ուղարկված գավառապետ

գրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. հուլիսի 20:

70 BOA/DH.\$FR, № 63/110, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջենալ փաշային, թվագրված 1916 թ. ապրիլի 26:

Աիդե Հալիլ բեյն ու Սիրոզլու Չերքեզ Ահմեդը սկսել են գավառի ընդհանուր խաղաղության ու կարգուկանոնի համար սպառնալիք ներկայացնել, խնդրեմ հաղորդեք, որ նրանց պետք է անհապաղ ետ կանչել»⁷¹: Մայրաքաղաք վերադառնալու ճանապարհին, Հաքիշեհիր հասնելուն պես, Չերքեզ Ահմեդը Թալեաթ փաշայի հրամանով ձերբակալվել է և ուղարկվել Հալեպ՝ Ջեմալ փաշայի մոտ: 1915 թ. օգոստոսի 27-ին Քոնյա ուղարկված հեռագրում Թալեաթը բացատրել է իրադրությունը. «Սիրոզի Ահմեդն ու իր ուղեկից Հալիլը, որոնք սպանել են հայերին ու թալանել նրանց ունեցածը, այսօր ուղարկվել են Քոնյա, որպեսզի դատվեն Չորրորդ բանակի ռազմական տրիբունալով: Նրանց բացարձակապես հնարավորություն չպետք է տրվի փախչելու. մինչև Ջեմալ փաշայի հրամաններն ու հրահանգները տեղ հասնեն, նրանց պետք է բանտարկված պահել Քոնյայում»⁷²:

Չերքեզ Ահմեդին հետագայում Հալեպում դատել են ռազմական տրիբունալով, մահապատիժ սահմանել և այն ի կատար ածել 1915 թ. սեպտեմբերի 17-ին: Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան հաստատել է տրիբունալի դատավճիռը՝ Ջեմալ փաշային հեռագրով խորհուրդ տալով, որ «նրա վերացումն անհրաժեշտ է բոլոր առումներով: Այլապես նա կարող է հետագայում վսաս պատճառել»⁷³: Ջեմալ փաշայի շտաբի պետ գեներալ Ալի Ֆուաթ Էրդենն իր հուշերում գրում է, որ «սպանողների ու մարդասպանների հանդեպ երախտագիտության պարտքը ծանր է... Կեղտոտ գործի մեջ կիրառված միջոցներն անհրաժեշտ են դառնում կարիքի ժամանակ և պետք է գործածվեն, սակայն, գործածելուց հետո, դրանք չպետք է հանդուրժել, այլ դեն նետել (զուգարանի թղթի պես)»⁷⁴:

Յաքուփ Ջեմալի. Լինելով հատուկ համաներմամբ բանտից ազատված դատապարտյալներից կազմված ՀԿ միավորման անդամ

71 BOA/DH.ŞFR, №55/132, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիրի նահանգ, թվագրված 1915 թ. օգոստոսի 21:

72 BOA/DH.ŞFR, №55-A/177, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 9:

73 Ziya Şakir, Yakın Tarihte Üç Büyük Adam (İstanbul, Ahmet Sait, 1946), 58.

74 Ali Fuad Erden, Birinci Dünya Harbinde Suriye Hatıraları, h. 1 (İstanbul, Halk, 1954), 216. Հայոց ցեղասպանության մեջ Չերքեզ Ահմեդի դերակատարության մանրամասների համար տե՛ս Dadrian, "Documentation in Turkish Sources," 118-20:

նա կենտրոնական դեր է խաղացել պատերազմի ընթացքում արևելյան Անատոլիայում հայերի կոտորածի մեջ⁷⁵: Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության թղթերի մեջ թղթակցական մի շարք փաստաթղթեր կան, որ վերաբերում են Տրապիզոնի շրջանում Յաքուփ Ջեմալի գործողություններին և հետագայում նրանց Բիթլիսից Իրաք տեղափոխելուն⁷⁶: Պատերազմից հետո կազմվել է Հանցանքների հետաքննություն (Tedkik-i Seyyiyat) անվամբ մի հանձնախումբ⁷⁷ ուսումնասիրելու համար հայերի տեղահանությունն ու կոտորածները: Այդ հանձնախումբը Պատերազմի նախարարությանը հարցեր է ուղղել այն կոտորածների վերաբերյալ, որոնց մասնակցել է Յաքուփ Ջեմալը, որը մեղավոր էր ճանաչվել իթթիհադական առաջնորդների դեմ հեղաշրջում կազմակերպելու համար և 1916 թ. սեպտեմբերի 11-ին մահապատժի էր ենթարկվել «հայրենիքի դեմ դավաճանության» մեղադրանքով⁷⁸:

Քրդական զինված ալազակախմբի ղեկավար Ծաֆթանլի Ամերո. Դիյարբեքիրի գավառապետ դր. Ռեշիդը և նահանգապետի պաշտոնակատար Ֆեյզին նրան հանձնարարել էին սպանել նահանգի 636 հայ առաջնորդների: Կենդանիների փչած մաշկից պատրաստված լողացող հարմարանքներով Տիգրիս գետով հայերին տեղափոխել և բերել են Բեզուանի հովիտը, որտեղ նրանց մերկացրել են և տվել նրա ցեղի անդամներին, որպեսզի սպանեն: Հազիվ երկու շաբաթ անց դր. Ռեշիդն ու Ֆեյզի բեյը Ամերոյին կանչել են Դիյարբեքիր՝ նրան շքանշան ու պարգևատրում հանձնելու համար: Ժամա-

75 Aziz Samih, Büyük Harpte Kafkas Cephesi Hatıraları (Ankara, Genelkurmay Yayınları, 1934), 68. Ազիզ Սամիհը, որը պատերազմի ժամանակ ծառայում էր պահեստային հեծելազորում, Յակուբ Ջեմալի «խելագար, սնրարոյական [çilgin, ahıksız]» խումբը ընտրագրել է իբրև «դառնախումբ, մարդասպան դատապարտյալների» հավաքածու:

76 BOA/DH.ŞFR, №55-A/95, ՀԿ գրասենյակից (Teşkilât-ı Mahsûsa'ya Memur) մայրո Ջեմալի ծածկագրված հեռագիրը մայրո Յակուբ Ջեմալի բեյին՝ Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմի բեյի միջոցով, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 5, BOA/DH.ŞFR, №58/58, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Բիթլիսի նահանգապետարան՝ Յակուբ Ջեմալի բեյին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 13: Այդ հեռագրում Թալեաթը Ջեմալին տեղեկացնում է, որ «Էնվեր փաշան համապատասխան կողմերին հրաման է տվել, որ դուք Իրաքում միանաք Հալիլ բեյին»:

77 Vakıf, 1918 թ. նոյեմբերի 24:

78 AAPJ, տուփ 21, գործ M, փաստ. №555:

ներուն պես նա սպանվել է տասը չերքեզի կողմից, որոնց հանձնարարված է եղել այդ գործը⁷⁹:

«Քուրդ» Մարզա քեյ. Կազմակերպել է Էրզիջանի ու Էրզրոմի հայերի սպանությունները, երբ վերջիններս գտնվում էին Քեմալի կիրճի տարածքում: Իթթիհադականները հետագայում նրան ձերբակալել են տվել ժանդարմի խփելու մեղադրանքով, սակայն իրական պատճառն այն է եղել, որ «մտածում էին, որ նա կարող է վտանգավոր դառնալ»: Կալանքի տակ եղած ժամանակ «նրան գաղտնի սպանեցին»⁸⁰:

Գերմանիայի հյուպարտաների զեկույցները. Դամասկոսի Գերմանիայի հյուպատոս դր. Ռյուսլերը իր զեկույցներից մեկում ելն է, որ Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան կախաղան է հանել մի քանի քրդի, որոնք հարձակում էին կազմակերպել Իսլահիյեի շրջանում տեղավորված ճամբարի վրա, որը նրանք գերմանացի ինժեներների աչքի առջև թալանել էին, կողոպտել և սպանել այդտեղ գտնվող հայերին⁸¹: Գերմանիայի դեսպան Վոլֆ Մեթերնիխը 1915 թ. դեկտեմբերի զեկույցում գրել է. «Այսօր ես Անատոլիայից վերադարձած Թալեաթ քեյի հետ խոսեցի հայերի պայմանների մասին: Նա համապարփակ միջոցներ է ձեռնարկել տեղահանված հայերի մատակարարման համար: Հայերի ունեցվածքի կամ անձանց դեմ չարագործությունները խստորեն պատժվել են: Նման անվայել արարքների համար վերջերս ավելի քան քսան հոգի մահապատժի է դատապարտվել»⁸²:

79 Թովմաս Մկրտիչեան, Տիկրանակերտի նահանգի ջարդերը և քիւրտերու զազանութիւնները. Ականատեսի պատմութիւն (Կահիրե, Ջիհանես 1919), 57–61, մեջբերված հետևյալ տեղում. Dadrian and Akcam, “Tehcir ve Taktıl.” Այդ իրադարձություններին նման պատմություններ կան չիրապարակված “Haver Delal” աշխատության մեջ (նշված սույն հատորի գլուխ 7, ծան. 20-ում), որը գրել է քրդական ռաման ցեղի անդամներից մեկը: Այդ իրադարձությունները նկարագրված են 70-71 էջերում:

80 FO 371/2781/264888, Բրիտանական բանակում ծառայող հնդիկ մահմեդական Սաիթ Ահմետ Մուխտարի վկայության վրա հիմնված զեկույցը, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 28, թիվ 2, 7: Տե՛ս նաև Current History 5 (February 1917), մեջբերված (հղելով [London] Times-ը) հետևյալ տեղում. Dadrian and Akcam, “Tehcir ve Taktıl,” 210:

81 DE/PA-AA/R 14090, Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս դր. Վալտեր Ռյուսլերի զեկույցը, թվագրված 1916 թ. հունվարի 3:

82 DE/PA-AA/R 14089, Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մեթերնիխի զեկույցը

Ջոռ (Կույր) Նուրի. Տեղահանությունների ընթացքում կապիտալ ծառայել է իբրև Շարքիշայի ժանդարմերիայի հրամանատար: Հետագայում ձերբակալվել է գրեթե երկու հազար հայ ժանդարմի (որոնք ծառայել են աշխատանքային գումարտակներում) անվտանգության պատճառով, իսկ ապա Երրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան նրան ուղարկել է ռազմական դատարան, որը նրան դատապարտել է մահվան: Ստամբուլում հետաքննիչ հանձնախմբին հետագայում տված իր գրավոր վկայության մեջ Վեհիպ փաշան հրամանատար տեղեկություններ է հաղորդել այդ գործի մասին⁸³:

Ժանդարմերիայի սերժանտ Թահսիր. Մասնակցել է Մոսուլի հրամանագում և դրա շրջակայքում հայերի սպանություններին: Հետագայում նրան հանձնել են ռազմական տրիբունալ, սակայն մահվան է դատապարտվել մինչև իր դատավարության ավարտը: Նախագահող տրիբունալը փաստորեն ստիպված է եղել մահվան դատավճիռը հաստատել մահապատժի ի կատար անվելուց հետո: Այդ տեղեկությունը հայտնի է դարձել պատերազմական ժամանակաշրջանի ժանդարմների երկու տարբեր դատավարությունների ընթացքում, որոնք տեղի են ունեցել 1919-ից 1921 թվականներին: Մոսուլի ժանդարմական հրամանատար Նևզաթ քեյի դատավարության 1919 թ. ապրիլի 19-ի նիստի ժամանակ Ներքին գործերի նախարարության Մասնավոր քարտուղարության նախկին տնօրեն Ֆուադ քեյի իր վկայության ընթացքում հաղորդել է հետևյալ տեղեկությունը. «Երբ զինվոր հարբած ժամանակ սպանություն էր գործել: Մենք նրան պատեցինք ռազմական տրիբունալով: Նա մահապատժի ենթարկվեց մինչև մահապատժի վճիռը հայտնելը, որը մեզ հաղորդվեց և վավերացվեց փաստից հետո: Եթե բողոքեինք, մեզնից յուրաքանչյուրը կազարի միևնույն բաժինը կստանար ինչ ստացել էր զինվորը»⁸⁴:

կանցյելը Բեթման- Հոլվեզին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 18: Այստեղ բերվող Թալեաթի տված տեղեկությունն արժանի է հատուկ ուշադրության: Հալեայում Ամերիկայի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնը զեկույցել է, որ օսմանյան մի շարք քաղաքացիներ, որոնք հայերին օգնել են, զանազան պատրվավանքով մահապատժի են ենթարկվել (NA/RG 59, 867.4016/301, դեսպան Մորգենթաուի «հույժ գաղտնի» մակագրությամբ զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 15, հետևյալ տեղում. United States Official Records, ed. Sarafian, 550–51):

83 AAPJ, Box 7, File H, Doc. № 171–82, Անվտանգության ընդհանուր վարչության գրասենյակում Քրեական հետաքննության հանձնախմբին տված Վեհիպ փաշայի գրավոր վկայությունը, թվագրված 1918 թ. դեկտեմբերի 5:

84 Yeni Gazete, 1919 թ. ապրիլի 20:

1919-1921 թթ. Մոսուլին աննչվող մեկ այլ դատավարություն է ընթացել կապիտան Ֆերիթ բեյի դեմ: Մոսուլի Ծանր հանցանքներ գործերով դատարանի նախկին նախագահ Հասան բեյն այդ դատավարության ժամանակ վկայություն է տվել Ֆերիթ բեյի դեմ, որը մեղադրվում էր կենտրոնական հրամանատար Նևզաթ բեյի հանցանքներին մասնակից լինելու և «Մոսուլում պատահած վայրագությունների» մեջ: Ի թիվս այլ բաների, Հասան բեյը պնդել է, որ սեփական թախսի հանցանքը, որը մահվան էր դատապարտվել «ավազակությունն» է եղել⁸⁵: Ըստ այդ դատավարության մասին մեկ այլ լրագրի հաղորդման, Հասան բեյը նշել է, որ «ինչ վերաբերում է Թահիրին, որը մահապատժի է ենթարկվել, նա մի մարդ էր, որը շատ սպանություններ է գործել»⁸⁶: Նույնիսկ, եթե հնարավոր չէ վստահորեն ասել, թե սերժանտ Թահսինն ինչ հանցանքի համար է մահապատժի ենթարկվել, կարծես թե նա դերակատարություն է ունեցել հայերի սպանությունների և նրանց հանդեպ այլ հանցագործությունների մեջ:

Ամփոփենք: 1915-1917 թթ. կառավարությունը չէր հետաքննում ու պատժում սպանություններին մասնակցած անձանց (լինեն նրանք պետական ծառայողներ, թե անհատ քաղաքացիներ): Դրան հակառակ, իսկապես հետաքննության էր ենթարկվում հայերի ունեցվածքի ապօրինի սեփականացումը: Որոշ դեպքերում «վերացրել» են նաև տխրահռչակ մարդասպանների, որոնք կարող էին վտանգ ներկայացնել ՄԱԿ-ի գործողությունների համար:

ՍՏԱՄԲՈՒԼԻՑ ՈՒ ԻԶՄԻՐԻՑ ԿԱՏԱՐԿԱԾ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԾԸ

Հայ ազգաբնակչությանը բնաջնջելու գիտակցական փորձը հերքողների հիմնական փաստարկներից մեկն այն է, որ եթե օսմանյան իշխանություններն իրոք մտադիր լինեին բնաջնջելու մի ամբողջ ազգաբնակչություն, կտեղահանեին նաև Ստամբուլի ու Իզմիրի հայերին, ինչը, ինչպես նրանք են պնդում, չի կատարվել: Սակայն Ծածկագրերի վարչությունում առկա փաստաթղթերը ցույց են տալիս, որ իրականում այդ նահանգներից ևս հայերը տեղահանվել են:

85 Alemdar, 1919 թ. հունիսի 3:

86 Yeni Gazete, 1919 թ. հունիսի 3:

ՍՏԱՄԲՈՒԼԸ ԵՎ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստամբուլից կատարված տեղահանություններ ասելով՝ նկատի ենք միայն 1915 թ. ապրիլի 24-ին սահմանափակ թվով հայ մտավորականների ձերբակալությունը և նրանց աքսորը Այաշ ու Չանքիրի, այլ նաև դրանից հետո և պատերազմի հետագա ընթացքում կայսրության մայրաքաղաքից հայերի փոքրածավալ տեղահանությունները: Իրականում ծրագրված է եղել ժամանակի ընթացքում տեղահանելու Ստամբուլի ամբողջ հայությանը, սակայն այդ ծրագիրը չի իրագործվել՝ հիմնականում Գերմանիայի սկզբնական ճնշումների, ապա նաև Օսմանյան կայսրության համար պատերազմի հետագա ընթացքի պատճառով: Այսպես, 1915 թ. օգոստոսի իր գեկույցում Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգն իր վերադասներին ասել է, որ ինքը Թալեթաֆ փաշայի մեղքն է հանձնել օգոստոսի 9-ով թվագրված մի նոտա, որը բողոք էր հայտնում հայերի դեմ շարունակվող ոճրագործությունների կապակցությամբ և պահանջում, որ Բարձր դուռը հետագա միջադեպերը կանխելու միջոցներ ձեռնարկի: «Ստամբուլը երաշխիք է տվել, որ Ստամբուլի հայերը չեն տեղահանվի», նշել է նա⁸⁷:

Արքեպիսկոպոս Զավեն Տեր-Եղիայանը, որը 1913-1922 թթ. եղել է Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը, իր հուշերում ասում է, որ Ստամբուլահայերի տեղահանությունն ի վերջո կանխվել է միայն Գերմանիայի ճնշման հետևանքով: 1916 թ. հունվարին ու փետրվարին Գերմանիայի խորհրդարանական մի պատվիրակություն էր գտնվում օսմանյան մայրաքաղաքում, որը, ըստ Տեր-Եղիայանի, հայտնել է Գերմանիայի կառավարության մտահոգությունները: Եվ պատվիրակության ներկայությունը, և՛ այդ ուղերձը բավական ազդեցություն են գործել, և երկու երկրներին հանգեցրել են այն փոխըմբռնման, որ Ստամբուլի հայերը չեն տեղահանվի⁸⁸:

Գերմանական, բրիտանական ու ամերիկյան աղբյուրները վկայում են, որ պատերազմի ողջ ընթացքում Ստամբուլից կատարվել են ավելի քիչ՝ աստիճանական տեղահանություններ: Նման տեղահանությունների վերաբերյալ արձակված հրամանների փաստը

87 DE/PA-AA/R 14087, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հոհենլոհե-Լանգենբուրգի գեկույցը կանցիտր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. օգոստոսի 12:

88 Der Yeghiayan, My Patriarchal Memoirs, 105-6.

հաստատող տեղեկություններ կարելի է գտնել օսմանյան Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության արխիվներում: Զանազան արխիվների փաստաթղթերը ոչ միայն մեկը մյուսին չեն հակասում, այլև մեծապես հաստատում են և լրացնում միմյանց:

Այս հարցով առաջին փաստաթուղթը, որ կրննարկենք, գտնվում է Ջեյմս Բրայսի Անտոլ Թոյնբիի կողմից 1916 թ. հրատարակած «Կապույտ գրքում»: 1915 թ. օգոստոսի 15-ին մի նամակում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը մայրաքաղաքից տեղահանությունների հարցի վերաբերյալ հաղորդել է հետևյալը.

Կարգը ուրեմն եկած է Պոլսո և արդեն վայրկյանեվայրկյան ժողովուրդը ասիոդոլի մեջ կսպասե իր մահավճռին գործադրության: Ձերբակալություններն անպակաս են, և ձերբակալվածները անմիջապես կհեռացվին մեր քաղաքեն, որոնք մեծ մասը անշուշտ ողջ պիտի չմնա: Վերջին օրերուն մեջ գավառացի աչքառու վաճառականներն են, որ կհեռացվին... Աշխատություն կթափվի գոնե Պոլսո հայությունը փրկելու այս հայակուլ աղետքեն, գոնե ապագային համար թրքահայության ոտքի կովան մը ունենալու համար⁸⁹:

Մեկ այլ նամակում, գրված Հայ հեղափոխական դաշնակցության քաղկանյան մասնաճյուղի կողմից 1915 թ. հոկտեմբերի 28-ին, տեղահանությունների մասին ասվում է հետևյալը.

Կոստանդնուպոլսից արքայազն հազարավոր խեղճ հայերի, երբ արդեն իրենց ամբողջ ունեցվածքը հանձնել էին ժանդարմներին, ներառյալ իրենց կոշիկները, ստիպում են Իսմիդից ոտքով ընթանալ դեպի Քոնյա և նույնիսկ ավելի հեռու: Նրանք, ովքեր կարող են իրենց թույլ տալ գնացքով ճամփորդել, նույնպես կողոպտվել են ժանդարմների կողմից, որոնք ոչ միայն պահանջում են Կոստանդնուպոլսից մինչև նշանակման վայրերի տոմսի արժեքը, այլև շորթում են նրանց ամբողջ փողը՝ հրեշավոր գներով ուտելիք վաճառելով նրանց: Փող են պահանջում նույնիսկ զուգարանի դուռը բանալու համար⁹⁰:

89 Bryce and Toynbee, *The Treatment of Armenians*, Doc. №7, 53, Նամակ Ստամբուլի հայոց պատրիարքից, թվագրված [1915 թ.] օգոստոսի 15:

90 Նույն տեղում, Doc. № II, 65: Դաշնակցության նամակը ստանալուց հետո

Ամերիկացի միսիոներ Վիլիամ Ս. Դոդդը, որն այդ ժամանակ տեղակայված էր Քոնյայում, հաստատում է տեղահանությունների վերաբերյալ այդ պատմությունները.

Տեղափոխման մյուս եղանակը՝ ոտքով, գործադրվում էր հիմնականում Կոստանդնուպոլսի այն տղամարդկանց դեպքում, որոնք այնտեղ աշխատում էին առանց ընտանիքների. նրանց ընտանիքներն ապրում էին երկրի խորքերի քաղաքներում ու գյուղերում: Թեև Թուրքիայի կառավարությունը մշտապես պնդում էր, թե իրենք Կոստանդնուպոլսի հայ ազգաբնակչությանը տեղահանության չեն ենթարկել, ձերբակալել ու հեռացրել են հազարավոր այն տղամարդկանց, որոնք իրենց ապրուստն էին վաստակում ընտանիքները պահելու համար: Նրանց մեջ կային նաև կանայք⁹¹:

Գերմանական արխիվները նույնպես Ստամբուլից կատարված այնաժամակալ տեղահանությունների մասին հաղորդումներ են պատմում: Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քարտուղար Յագոֆը զեկույց է ուղարկել դեսպան Վոլֆ-Մեթերնիխին, որը վերջինս ստացել է Դաշնակցության Սոֆիայի մասնաճյուղից: Այդ զեկույցի համաձայն, «Թուրքիայի կառավարությունը, ի հակազդություն իր նախապես տված խոստումների, սկսել է Ստամբուլի հայերին ևս տեղահանել: Այս պահի դրությամբ, ասում են, 10.000-ի չափ մարդ է տեղափոխվել, և նրանց մեծ մասին սպանել են Իզմիրի շեններում: Մի ցուցակ է պատրաստվել, որը [տեղահանվելիք] 70.000 մարդու [անուն] է պարունակում»: Այնուհետև Յագոֆը Վոլֆ-Մեթերնիխին տալիս է հետևյալ հրահանգը. «Եթե այդ լուրերը ճիշտ դուրս գան, խնդրեմ, ետանդագին բողոքեք [օսմանյան կառավարության վարքի դեմ]»⁹²:

Գեկտեմբերի 7-ի իր պատասխանի մեջ Գերմանիայի դեսպանը հաստատել է տեղահանությունների շարունակման մասին լուրերը՝

Պետական քարտուղարությունն այն իրրև զեկույց ուղարկել է Ամերիկյան նպաստամատույց կոմիտեին:

91 William S. Dodd, "Report of Conditions Witnessed in the Armenian Deportations in Konia, Turkey," in "Turkish Atrocities," Barton, 147.

92 DE/PA-AA/Bo.Kons./կապոց 171, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քարտուղար Յագոֆի հեռագիրը Բարձր դոմար Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մեթերնիխին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 5:

Ստամբուլի անվտանգության տնօրենից ստացած տեղեկության հիման վրա ասելով, որ մայրաքաղաքից արդեն տեղահանվել է մոտ 30.000 հայ. «Խիստ վստահելի մի աղքյորից իմացել եմ, որ, համաձայն տեղի ոստիկանապետից ստացած տեղեկության, որն աղաչում եմ գաղտնի պահեք, վերջերս Կոստանդնուպոլսից ևս մոտ 4.000 հայ է տեղահանվել դեպի Անատոլիա, և որ դեռևս Կոստանդնուպոլսում ապրող մնացած 80.000 հայերը պետք է աստիճանաբար մաքրվեն, 30.000-ն արդեն տեղահանվել էր ամռան ընթացքում, իսկ 30.000 մարդ էլ փախել է: Եթե սրան պետք է վերջ տրվի, ուրեմն ավելի խիստ միջոցներ են անհրաժեշտ»⁹³:

Այս բոլոր փաստաթղթերից կարելի է հասկանալ, որ Ստամբուլից հայերի տեղահանությունը կատարվել է մաս-մաս և երկար ժամանակամիջոցում: Ստամբուլից կատարված փոքրածավալ տեղահանությունների նյութի շուրջ կարելի է տեղեկություններ գտնել ինչպես 1919-1921 թթ. Ստամբուլում տեղի ունեցած ռազմական տրիբունալների, այնպես էլ ժամանակի մամուլի նյութերում: Ահա մի քանի օրինակ: 1919 թ. դեկտեմբերի 18-ին Ստամբուլի ռազմական տրիբունալում տեղի ունեցած և Մարզերի տնօրենների գործ (Nahiye Müdürleri Davası) անվամբ հայտնի դատավարության յոթերորդ նիստի ժամանակ մի հայ, որը տեղահանվել էր Ստամբուլից, իր վկայության մեջ ասել է, որ ինքը մեկն է եղել այն երկու հարյուր մարդուց բաղկացած շարասյունի, որը տեղահանել են 1915 թ. հուլիսին ու օգոստոսին⁹⁴: Ջելալ բեյը, որը տեղահանությունների ժամանակ ծառայել էր իբրև Քոնյայի գավառապետ, պատմել է, որ Ստամբուլից իրոք կատարվել են տեղահանություններ, և տեղահանվածների թիվը եղել է «հազարներով».
«Հայդար փաշայից մեկնող գնացքները ամեն օր հազարավոր հայերի էին տանում: Նրանց պետք է հավաքեին Քոնյայում: Մշտապես Ստամբուլից հրաման էր գալիս նրանց ավելի հեռու ուղարկելու մասին: Իսկ երբ գնացքի վագոններ չէին տրամադրվում, ես նրանցից ներողություն էի խնդրում՝ ասելով, որ ավելի տեղահանություն հնարավոր չի անել»⁹⁵:

93 DE/PA-AA/R 14089, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մեթերնիխի հեռագիրը կանցյել Բեթման-Հոլվեզին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 7:

94 Alemdar, Atı, 1919 թ. սեպտեմբերի 19:

95 Celal Bey, "Ermeni Vakâyi-i."

Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը հաստատում են վերը բերված այն տեղեկությունը, որ Ստամբուլի հայերը տեղահանվել են 1915 թ. 1916 թ. ընթացքում: Այսպես, 1916 թ. հունիսին նահանգներ ուղարկված մի հեռագրով պահանջվել է «այն հայերին, որոնք պետք է տեղահանվեն Ստամբուլից ու այլ վայրերից և ուղարկվեն [Դեր] Ջոր, հարկավոր է այնտեղ ուղարկել Քոնյայի, Քարամանի ու Թարսուսի վրայով՝ Կարս-Մարաշ-Բազարջիք ուղիով»⁹⁶: Ինչպես կարելի է հասկանալ այդ հեռագրից, Ստամբուլից տեղահանությունները շարունակվել են առնվազն 1916 թ. ամռան ընթացքում:

Ներքին գործերի նախարարության թղթերից պարզվում է նաև, որ տեղահանության համար հստակ չափանիշներ կային, և որ տեղահանվածներին հիմնականում ուղարկում էին Դեր Ջորի շրջան: Այդ փաստաթղթերն, ըստ էության, ցույց են տալիս, որ մարդիկ տեղահանվում էին չորս հիմնական չափանիշներից ելնելով. 1. եթե ծնված էին Ստամբուլից դուրս, 2. ամուսնացած չէին, 3. գործազուրկ էին, 4. պատկանում էին տարբեր կազմակերպությունների: Բերենք մի քանի օրինակ: 1915 թ օգոստոսին Ներքին գործերի նախարարության Անվտանգության վարչությունը Իզմիթի շրջան ուղարկված մի հեռագրով տեղական պաշտոնյաներին հայտնում է, որ իզմիթցի այն հայերը, որոնք ապրում են Ստամբուլում, պետք է համարվեն Իզմիթի բնակիչներ և տեղահանվեն: Ասվում է նաև, որ ոստիկանապետը նույնպես տեղեկացված է, որ «այն հայերը, որոնք Իզմիթից ու հարակից տարածքից են, սակայն ներկայումս ապրում են Ստամբուլում, և ովքեր ցանկանում են գնալ վերոհիշյալ տարածքները», պետք է լքեն «[Ստամբուլը] և հետ չվերադառնան. նրանք պետք է արտաքսվեն մյուսների հետ միասին, քանի որ այդ վայրերի բնակիչներ են»: Վերջում հեռագրով պահանջվում է «գործողությունը կատարել համաձայն [այս կարգի]»⁹⁷:

96 BOA/DH.ŞFR, №65/95, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Հյուդավենդիզարի (Բուրսա) ու Քոնյայի նահանգներ և Իզմիթի, Բուլուի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Գյոթթահայի, Էսքիշեհիրի, Նիդղեի, Մարաշի ու Իչելի գավառներ, թվագրված 1916 թ. հունիսի 26:

97 BOA/DH.ŞFR, №54-A/343, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիթի գավառ, թվագրված 1915 թ. օգոստոսի 9:

Մեկ այլ հեռագրից, որն ուղարկել էր անձամբ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան, երևում է, որ իզմիթցի հայերին մաքրաքաղաքից արտաքսելու համար ոստիկանապետը հատուկ փաստաթղթեր է հանձնել. «Իզմիթի գավառին տեղեկացվել է, որ հարկ կա տեղահանելու իզմիթցի այն հայերին, որոնց չեն կարողացել տեղահանել, քանի որ տեղահանությունների ժամանակ նրանք Ստամբուլում են եղել և հետագայում Ոստիկանական վարչության փաստաթղթերով ուղարկվել են Իզմիթ»։ Հեռագիրը Քոնյա է ուղարկվել նահանգապետի խնդրանքով, որ հայերի այդ նոր խումբը «տեղավորվի որևէ վայրում [նահանգի վարչական] կենտրոնից բացի»⁹⁸:

1916 թ. նոյեմբերին Մոսուլ ուղարկված այն հեռագիրը, որը վերաբերում է «բիթլիսցի արդյունահանող» Սմբատ Գիրգորյանին, որը գավառից է [taşralı], չամուսնացած և բռնվել է կեղծ անձնագրով Բուլղարիա փախչելու փորձ անելիս և 1915 թ. հուլիսի 20-ին ուղարկվել երկրի խորքը», կարելի է բերել իբրև չամուսնացած հայ տղամարդու և ոչ բնիկ ստամբուլցու տեղահանման օրինակ⁹⁹:

Ջինադադարի ժամանակամիջոցում Ստամբուլի ռազմական տրիբունալի առջև հայտնված գործերից մեկը եղել է այն անձանց դատավարությունը, ովքեր, ի թիվս այլ բաների, մեղադրվում էին չամուսնացած տղամարդկանց Ստամբուլից տեղահանելու մեջ: Մեղադրող դատախազը կոչ է արել պաշտպանյալին՝ Հիդայեթ էֆենդի անվամբ ոստիկանական մի պաշտոնյայի, դատապարտել ու դատել՝ «Ուսկյուդարի շրջակայքից չամուսնացած հայ տղամարդկանց տեղահանելու պատրվակներ գտնելու և ապա նրանց տները մտնելու և ոմանց գույքն ու ունեցվածքը բռնագրավելու համար»¹⁰⁰:

Ներքին գործերի նախարարության մեկ այլ հեռագիր, որը 1915 թ. հուլիսին ուղարկվել է Կաստամոնուի նահանգ, ցույց է տալիս, որ համանման գործողություններ են կատարվել 1915 թ. ապրիլի 25-ին Ստամբուլից Չանքիրի ու Այաշ տեղահանված հայերի նկատմամբ:

98 BOA/DH.ŞFR, №60/308, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 13:

99 BOA/DH.ŞFR, №70/119, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 28:

100 Հիդայեթ էֆենդու դատավարության հավելյալ մանրամասների համար տես Alemdar, 1919 թ. հունիսի 17, 19 և հուլիսի 9, Yeni Gazete, 1919 թ. հունիսի 24 June և հուլիսի 16:

Ըստ այդ հեռագրի, ստեղծվել է ստամբուլահայերի ցուցակ, որի մեջ արձանագրվել է, թե նրանք բնիկ գավառացի են, թե ոչ: Ոչ-բնիկների համար այստեղ ևս պահանջվել է մինևույն տեսակի գործողություն. «Նախապես [Չանքիրի ու Այաշ] ուղարկված այն հայերի մեջ, որոնք քնտրոշվել են իբրև մարդիկ, որոնց հարկ է ազատել, եթե կան ոմանք, որոնց անվան առջև գրանցամատյաններում նրանց ծագման վայրը գավառ [taşralı] լինելու մասին նշում կա, ովքեր այդ պատճառով պետք է հետ ուղարկվեն իրենց բնակավայրերը, նրանց պետք է թույլ տրվի հրաժարվել իրենց տները վերադառնալուց և փոխարենն ուղարկել Ստամբուլ»¹⁰¹: Այս հեռագրի առիթը պարզ է. տեղահանություններից ազատված հայերից նրանք, ովքեր Ստամբուլից չէին, այլ գավառներից, սովորաբար պետք է ուղարկվեին իրենց ծագման վայրերը, սակայն այս հեռագրում այդ մարդկանց համար հատուկ բացառություն է արվել:

Այլ հեռագրերից երևում է, որ տեղահանվելիք մարդկանց մեջ սահմանված էին նաև հատուկ «զուգորդված» կարգեր, ինչպես՝ «չամուսնացած, գավառներից» և «գործազուրկ, գավառներից»: Ահա մի քանի օրինակ նման փաստաթղթերից: «Կարապետի որդի Գրիգոր Կարազյոզյանը, որը ծագումով Բուրսայից [Հյուդավենդիզարից] է, տեղահանվել է «գործազուրկ» և «գավառներից» կարգերի տակ»¹⁰²: Ասատուրի որդի Նազարեթը Ստամբուլից Քոնյա է տեղահանվել՝ ամուրի և գավառներից լինելու պատճառներով¹⁰³: Այդպես, օրինակներ կան նաև, երբ մարդիկ տեղահանվել են՝ քաղաքական որոշ կազմակերպությունների իրենց անդամակցության պատճառով, ինչպես՝ «Գրիգորի որդի Սերգին Ստամբուլից Քոնյա է տեղահանվել, երբ պարզվել է, որ նա Դաշնակցություն հայկական կոմիտեի անդամ է»¹⁰⁴:

Հայկական աղբյուրներում կարելի է առատ տեղեկություններ գտնել այն ճշգրիտ չափանիշների մասին, որոնց հիման վրա կատարվել են տեղահանությունները: Օրինակ, կարելի է նշել Ալեքսան Դարբինյանի հուշերը, որն իր վեց ընկերների հետ ձերբակալվել է

101 BOA/DH.ŞFR, №54-A/150, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Կաստամոնուի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 29:

102 BOA/DH.EUM, 2. Şube, №16/16.

103 Նույն տեղում, №15/16:

104 Նույն տեղում №15/4:

1915 թ. օգոստոսի 15-ի երեկոյան ժամը 6-ին, երբ նրանք մնալիս են եղել Ստամբուլի Առնավուտքոյ թաղամասում, ապա տեղահանվել են Սիրիա: Իր ձերբակալությանը հաջորդած շրջանի մասին Դարբինյանը նշում է. «Նրանք մեզ հարցաքննության ենթարկեցին՝ մասնավորապես ցանկանալով իմանալ, թե ամուրի էինք, թե ոչ: Վեցս էլ ամուրի էինք»: Այդ իմանալով՝ կայացվել է նրանց տեղահանելու որոշումը¹⁰⁵:

Այդ տեղահանություններին ակնատես օտարերկրացիները նշել են այն հանգամանքը, որ Ստամբուլի հայերի տեղահանությունները կատարվել են որոշակի հատուկ չափանիշների հիման վրա: Գերմանական «Kölnische Zeitung» օրաթերթի լրագրող ֆոն Թիսզկան 1915 թ. սեպտեմբերի 5-ի և 6-ի հույժ գաղտնի գեկույցներում հաղորդել է, որ ակնատես է եղել Ստամբուլից հայերին համակարգված կերպով հանելուն: «Սկզբում՝ չամուսնացած տղամարդկանց (որոնց մասին կարծում էին, որ Սվազից ու արևելյան Անատոլիայի նահանգներից են), դրանից հետո բոլոր տղամարդկանց՝ ամուսնացած ու ամուրի, որոնք ծնվել էին հայկական նահանգներում... Մինչև այժմ տեղահանվել է 200 տղամարդ ու 50 ընտանիք»: Այնուհետև ֆոն Նամերը հաղորդել է, որ տեղահանություններն այդ կերպ են ընթացել՝ Ստամբուլում տարբեր տերությունների ղեկավարությունների առկայության պատճառով, և ինքը օսմանյան կառավարության հետ շփումներ ունեցող գերմանացիներից լսել է, որ երբ Անատոլիայի հայերի տեղահանություններն ավարտվեն, կհասնի Ստամբուլում գտնվողների հերթը¹⁰⁶:

ԻԶՄԻՐՆ ՈՒ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն պնդումը, թե հայերը Իզմիրից չեն տեղահանվել, պարզապես ճիշտ չէ: Տարբեր փաստաթղթեր, ներառյալ Ստամբուլի վարչապետական արխիվի թղթերը, ցույց են տալիս, որ հայերին Իզմիրից տեղահանել սկսել են դեռևս 1915 թ. ամռանը, սակայն՝ փոքր խմբերով: Այդ տեղահանությունները դադարեցվել են 1916 թ. նոյեմբերին՝ գերմանացի զենքերալ Լիման ֆոն Ջանդերսի միջամտության հետևանքով:

105 Kévorkian, "L'extermination des déportés arméniens." Ալեքսան Դարբինյանի վկայության համար տես <http://www.imprescriptible.fr/rhac/tome2/p2t01/>:

106 DE/PA-AA/R 14087, Kölnischen Zeitung-ի լրագրող ֆոն Թիսզկայի գեկույցը Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 5-6:

քով: Իզմիրի գավառապետ Ռահմի բեյի 1915 թ. մայիսի 26-ին Թալեթ փաշային գրած նամակում նշվում է, որ «հասել է Պատերազմի նախարարության հրամանը... [կառավարության հանդեպ] թշնամանքով տրամադրված համայնքների մեծաքանակ տեղահանման վերաբերյալ»: Գավառապետն ավելացնում է, որ այն մարդիկ, ում տեղահանությունը ցանկալի է, «նրանք են, ովքեր ծնվել են այստեղ [իմա՝ Իզմիրում], մեծացել ու հարստացել են այստեղ և նպաստել են երկրի տնտեսության զարգացմանը: [Նրանք] օգնություն են հատկացրել նրանց, ովքեր օգնության կարիք են ունեցել, և արժանապատիվ ու պատվավոր մարդիկ են. կարող ենք նույնիսկ ասել, որ նրանց թուրքականության զգացումն ավելին է, քան որոշ թուրքերինը»: Ռահմիի կարծիքով, «սխալ է այս մարդկանց անջատել իրենց կանանցից ու երեխաներից և անբնակելի վայրեր ուղարկել նրանց, ովքեր մտածել են, որ կառավարության ղեկավարումը պատվավոր ձեռքերում է, և որ այս վարչակազմի կողմից հետապնդումներ ու ճնշումներ չեն լինի իրենց նկատմամբ, և [այդ պատճառով] կարիք չեն զգացել երկրից դուրս գալու»: Ապավինելով ներքին գործերի նախարարի հետ իր երկարատև ընկերությանը՝ Ռահմին խնդրել է դադարեցնել տեղահանությունները. «Ուստիև, հանուն մեր ընկերության, խնդրում եմ քեզ ու էսվեր փաշային, որ դու խոսես նրա հետ ու նրան տեղեկացնես, որ պետք է հրաժարվել [Իզմիրի] գավառում նման միջոցառումների կիրառումից»¹⁰⁷:

Միայն գավառապետի նամակից հնարավոր չի իմանալ, թե ընդհանուր առմամբ քանի մարդու է նախատեսված եղել տեղահանել, նրանք վերոհիշյալ խմբերից որոնց են պատկանել, կամ ի վերջո ինչ է եղել նրանց ճակատագիրը: Եվ սակայն, որոշ դեպքերում, տարբեր հեռագրերից կարելի է իմանալ հայերի սահմանափակ տեղահանությունների մասին, իսկ ուրիշ հեռագրերից՝ նրանց վերադառնալու համար տրված հատուկ թույլտվությունների մասին: Այսպես, 1915 թ. սեպտեմբերի 1-ի մի հեռագրով պահանջվում է գեկույցել «[ներկայումս] էրեղլիում գտնվող Աշյան ու Բուլոյան ընտանիքների Իզմիր վերադառնալու մասին»¹⁰⁸: Սեպտեմբերի 30-ին Թալեթի ուղարկված

107 BOA/DH.EUM, 5. Şube, 20/62, Իզմիրի գավառապետ Ռահմի բեյի «Թալեթ բեյ էֆնդուն» ուղերձը, թվագրված 1915 թ. մայիսի 26:

108 BOA/DH.SFR, №55/345, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 1:

մեկ այլ հեռագրում խոսվում է «կապիտան Տիգրան էֆենդու կնոջ և հոր՝ Գասպարի, Իզմիր վերադառնալու» նպատակահարմարության մասին¹⁰⁹: Նույն օրն ուղարկված այլ հեռագրերում Իզմիրից ընտրված պատգամավոր Օսիկ էֆենդու ազգականներին թույլատրվում է վերադառնալ Իզմիր կամ հաստատվել Էսքիշեհիրում: Սրանց կարելի է ավելացնել 1915 թ. հոկտեմբերի 3-ի, 5-ի, 10-ի ու 25-ի և նոյեմբերի 14-ի հիմնականում համանման բովանդակություն ունեցող հեռագրերը¹¹⁰:

Առկա փաստաթղթերը ցույց են տալիս, որ Իզմիրում հայերի առաջին զանգվածային ձերբակալությունն ու տեղահանությունը կատարվել է 1915 թ. նոյեմբերին: Անվտանգության վարչությունից 1915 թ. դեկտեմբերի 2-ին Այդինի նահանգ ուղարկված հեռագիրը տեղեկացնում է, որ «[Աֆյոն] Կարահիսարի գավառապետի գրասենյակից հաղորդել են, որ հատուկ ծառայողների պահակախմբի հսկողությամբ Իզմիրից 60 հայեր են եկել [Աֆյոն] Կարահիսար, որպեսզի ուղարկվեն իրենց վերջնական վայրերը: [Խնդրեմ] բացատրեք նրանց հանելու ու աքսորելու պատճառները»¹¹¹: Վեց օր անց Աֆյոն ուղարկված մի հեռագրում հաղորդվում է, որ «Իզմիրից դուրս հանված 61 հայերը Դիյարբեքիրի ճանապարհով ուղարկվել են Մոսուլ»¹¹²: Նշված 61 հոգու ձերբակալություններին հաջորդել է մեկ այլ ալիք՝ այս անգամ Իզմիրից 95 հոգու տեղահանելով Մոսուլ. «[Խնդրում ենք] այն 61 մարդկանց, ովքեր, լինելով վտանգավոր մարդիկ, Իզմիրից ուղարկվել են [Աֆյոն] Կարահիսար, իսկ այնտեղից էլ՝ Քոնյա, որտեղ գտնվում են հսկողության տակ, պահակախմբի հսկողությամբ Դի-

109 BOA/DH.\$FR, №56/271, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիրի գավառ (Աֆյոն Կարահիսար), թվագրված 1915 թ. սեպտեմբերի 30:

110 BOA/DH.\$FR, №56/270, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիրի գավառ (Աֆյոն Կարահիսար), թվագրված 1915 թ. սեպտեմբերի 30: Այլ փաստաթղթերի համար տես BOA/DH.\$FR, №№56/291, 56/301, 56/345, 57/29, 57/121 և 58/6:

111 BOA/DH.\$FR, №58/191, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Այդինի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 2:

112 BOA/DH.\$FR, №Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիրի գավառ (Աֆյոն Կարահիսար), թվագրված 1915 թ. դեկտեմբերի 8:

յարբեքիրի ճամփով ուղարկեք Մոսուլ՝ ևս 95 հայի հետ միասին, որոնք դեռևս ուղարկվելու են»¹¹³:

1916 թ. հոկտեմբերին ուղարկված մի հեռագրից երևում է, որ Իզմիրից Քոնյա տեղահանված հայերի մի խմբի Քոնյայից հանել են 1915 թ. դեկտեմբերի 25-ին և ուղարկել Փոզանթի՝ այնտեղ տեղավորելու նպատակով¹¹⁴: Հեռագրից անհնար է հասկանալ, թե դա արդեն հիշված խմբերից մեկն էր, թե՛ ուրիշ մի խումբ: 1916 թ. փետրվարի 9-ին Աֆյոնից ուղարկված մեկ այլ հեռագրում նշվում է, որ «Մանիսայի տեքստիլ գործարանի տեր Սարիյանը, որը Դաշնակցություն կոմիտեի անդամ լինելու պատճառով տեղահանվել էր Իզմիրից, ըստ Այդինի նահանգից իմ ստացած գրավոր պատասխանի՝ ներկայումս [Աֆյոն]ում է, իրենից առաջ եղածների նման, պետք է Դիյարբեքիրի ճամփով ուղարկվի Մոսուլ: [Խնդրեմ] զեկուցեք [երբ դա արված կլինի]»¹¹⁵: Ասվածից, ինչպես նաև 1916 թ. աշնանը Իզմիրի տեղահանությունների մեջ Գերմանիայի ներգրավվածությունից, կարելի է եզրակացնել, որ Իզմիրում ձերբակալություններն ու տեղահանությունները 1916 թվականին դեռևս շարունակվել են:

Իզմիրի տեղահանությունների և այդ հարցում Գերմանիայի ներգրավվածության վերաբերյալ առաջին տեղեկությունը գտնում ենք Իզմիրում Գերմանիայի հյուպատոս իշխան ֆոն Շփիի 1916 թ. նոյեմբերի զեկույցում: Այդ զեկույցի մեջ ֆոն Շփին ասում է, որ Իզմիրի գավառապետ Ռահմի բեյն իրեն ասել է, որ Իզմիրի ՄԱԿ անդամներն իրենից բողոքել են կենտրոնական կառավարությանը՝ իր գավառի հայերի նկատմամբ «մեղմ» քաղաքականության պատճառով: Դրան ի պատասխան, Ստամբուլի իթթիհադական ղեկավարներն սկսել են նրա վրա ճշումներ քաննեցնել, որպեսզի տեղահանի Իզմիրի հայ ազգաբնակչությանը: Այդ ճշումների հետևանքով Ռահմին հետագայում Իզմիրի ոստիկանության կոմիսարին լիակատար իրավասություն է տվել ձերբակալելու կասկածելի համարվող

113 BOA/DH.\$FR, №59/20, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. հունվարի 16:

114 BOA/DH.\$FR, №69/58, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 21:

115 BOA/DH.\$FR, №60/282, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Կարահիսար-ի Սահիրի գավառ (Աֆյոն Կարահիսար), թվագրված 1916 թ. փետրվարի 9:

հայերին: 1916 թ. նոյեմբերի 8-ին մեկնարկել է ձերբակալությունների առաջին փուլը, որի ընթացքում 300 հայերի իրենց ընտանիքներով հանդերձ լցրել են գնացքները և ուղարկել երկրի խորքերը¹¹⁶: Գերմանիայի հյուպատոսը զեկուցել է նաև, որ Իզմիրի բանակի հրամանատար գեներալ Լիման ֆոն Ջանդերսը Ռահմի բեյին հայտնել է, որ ինքն այլևս նոր տեղահանություն թույլ չի տա, որովհետև դա ավելի կվտանգի երկրի ռազմական դրությունը:

Գեներալ Լիման ֆոն Ջանդերսը, որը նոյեմբերի 12-ին անձամբ էր Ստամբուլին տեղեկացրել իրադրության մասին, նույն օրը գրած իր զեկույցում նշում է, որ Իզմիրի գավառապետն իրեն ասել է, որ ինքն անձամբ իր գավառի հայերին տեղահանելու հրաման է ստացել Թալեաթից, և ավելացնում է. «Ես գավառապետին զգուշացրեցի, որ սրանից հետո [ոչ մի նման գործողություն] թույլ չեմ տա, և նրան զգուշացրեցի, որ [ապագայում] անհրաժեշտ է գերծ մնալ այդ ծավալի ձերբակալություններից ու տեղահանություններից: Այնուհետև գավառապետին տեղեկացրեցի, որ այն դեպքում, եթե նման դեպք կրկնվի, ես այն կկանխեմ գենրի ուժով¹¹⁷:

Անկախ նրանից, թե ֆոն Ջանդերսը որքան է պնդել, որ իր որոշման պատճառը զուտ ռազմական է, խոսակցություններ էին շրջում, որ Իզմիրից հայերին տեղահանելու որոշումն իրականում կայացվել է Գերմանիայի կառավարության կողմից, և այդ հանգամանքը, ամենայն հավանականությամբ, ավելի մեծ դեր է խաղացել ֆոն Ջանդերսի քայլերի վրա ազդելու առումով, քան որևէ ռազմական նկատառում: Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան դր. Ռիչարդ Քյուլմանը Բեռլինին տեղեկացրել է իրադրության մասին և խնդրել է, որ հայտարարվի, որ Լիման ֆոն Ջանդերսի որոշումն արժանացել է Գերմանիայի կառավարության օժանդակությանը: Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունը 1916 թ. դեկտեմբերի 14-ի իր պատասխանի մեջ հայտարարել է, որ սատարում է իր գեներալին¹¹⁸: Ինչ վերաբերում է ֆոն Քյուլմանին, նա մի քանի

116 DE/PA-AA/Bo.Kons./Band 174, Իզմիրում Գերմանիայի հյուպատոս (իշխան ֆոն) Շայի զեկույցը, թվագրված 1916 թ. նոյեմբերի 10:

117 DE/PA-AA/Bo.Kons./Band 174, Լիման ֆոն Ջանդերսի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1916 թ. նոյեմբերի 12:

118 Դեսպանի՝ օժանդակություն խնդրող ուղերձի համար տե՛ս DE/PA-AA/R 14094, Գերմանիայի դեսպանության ներկայացուցիչ Ռադոլֆիցի զեկույցը,

շաբաթ առաջ (նոյեմբերի 25-ին) գրություն է ուղարկել, որում ասում է, որ «Իզմիրից հայերի տեղահանությունը հետաձգվել է: Պետք է կարծել, որ հարցը փակված է»¹¹⁹:

Օսմանյան Ներքին գործերի նախարարության արխիվներով կարելի է հետևել 1916 թ. նոյեմբերին Իզմիրում կատարված տեղահանությունների ընթացքին: Ըստ այդ արխիվների փաստաթղթերի, առաջին փուլի ընթացքում ձերբակալված հայերի թիվը, որը գերմանական աղբյուրներով նշվում է 300, իրականում եղել է 256 հոգի, որոնք տեղահանվել են իրենց ձերբակալությունից գրեթե անմիջապես հետո: Ձերբակալություններից հինգ օր անց մի հեռագիր է ուղարկվել Կարահիսարի գավառ, որում ասվում էր. «Բարձր հրամանատարության գրասենյակը հրահանգ է ուղարկել, որով պահանջում է Հայ [հեղափոխական] կոմիտեի Իզմիրից [դեպի Կարահիսար] տեղահանված 256 անդամներին Ադանայի ճամփով ուղարկել Մարաշ և [այդ նպատակով] գնացք նստեցնել»¹²⁰: Կան այլ հեռագրեր ևս, ինչպես Ադանա ուղարկված հեռագիրը, որով պահանջվում էր «Իզմիրից տեղահանված Հայկական կոմիտեի 256 անդամներին, որոնք [Դեր] Ջոր ուղարկվելու նպատակով հասնելու են Ադանա, [այնտեղ] ուղարկել պահակախմբի հսկողությամբ և Մարաշի ճամփով»¹²¹, և Մարաշ ուղարկված հեռագիրը, որով կարգադրվում էր «Իզմիրից տեղահանված Հայ կոմիտեի 256 անդամները, որոնք հասնելու են այդտեղ [Մարաշ], որպեսզի ուղարկվեն [Դեր] Ջոր, պետք է [Դեր] Ջոր ուղարկվեն պահակախմբի հսկողությամբ»¹²². այս

թվագրված 1916 թ. նոյեմբերի 13: Ֆոն Ջանդերսի դիրքորոշումն օժանդակելու մասին Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության հայտարարությունը գտնվում է DE/PA-AA/R 14094՝ Գերմանիայի Արտաքին գործերի քարտուղար Ցիմերմանի գրությունը, թվագրված 1916 թ. նոյեմբերի 14:

119 DE/PA-AA/R 14094, Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան ֆոն Քյուլմանի զեկույցը, թվագրված 1916 թ. նոյեմբերի 25:

120 BOA/DH.SFR, № 69/260, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Կարահիսարի Սահիրի (Աֆյոն Կարահիսար) գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 13:

121 BOA/DH.SFR, № 69/262, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 13:

122 BOA/DH.SFR, № 69/261, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Մարաշի գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 13:

հեռագրերը մեզ թույլ են տալիս քայլ առ քայլ հետևելու տեղահանվածներին և հասկանալու, որ սկզբից նեթ նրանց ճանապարհի վերջնակետը եղել է Դեր Զորը:

ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (TEŞKİLAT-I MAHSUSA) ԴԵՐԸ

Իր 2005 թ. «Հայերի կոտորածներն Օսմանյան Թուրքիայում. Վիճարկվող ցեղասպանություն» աշխատության մեջ Գյունտեր Լևին պնդում է, որ որևէ կապ չկա Հատուկ կազմակերպության և հայերի տեղահանության ու սպանությունների միջև: Այդ պնդումը, սակայն, բացարձակ անհիմն է¹²³:

Ըստ հեղինակի, այդ կապը հիմնավորող ոչ մի փաստաթուղթ չի հայտնվել 1919-1921 թթ. ընթացքում, ներառյալ նախկին իթթիհադական ղեկավարների դատավարության մեղադրական ակտում՝ բացի մի քանի անձնական վկայություններում ու հայտարարություններում տրվող նկարագրություններից¹²⁴: Լևին պնդում է նաև, որ դատավարության նիստերի ընթացքում «ամբաստանյալները ժխտել են ՀԿ [Հատուկ կազմակերպություն] և ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի միջև որևէ կապ, ինչպես նաև ՀԿ դերը հայերի տեղահանությունների ու կոտորածների մեջ¹²⁵: Խիստ կարևոր են Լևինի փաստարկները և մասնավորապես նրա գրքի ընկալումը: Դա կատարյալ օրինակն է այն բանի, թե ինչպես է գործում ժխտման բիզնեսը, ուստի արժե հանգամանորեն քննարկել այն:

Լևինի գիրքը և այդ տեսակի փաստարկներն ուրիշների կողմից լավ ընդունելություն են գտել Թուրքիայի պետական շրջանակներում:

123 Lewy, Armenian Massacres. Այս հեղինակի կողմից Լևինի գրքի հանգամանալից քննադատությունը շարքով լույս է տեսել Թուրքիայի հայկական «Ակոս» թերթի 2006 թ. 84-85 թվերում: Հողվածի անգլերեն տարբերակի համար տե՛ս “Guenter Lewy’s ‘The Armenian Massacres in Ottoman Turkey,’” in Genocide Studies and Prevention 3, №1 (April 2008), III-45:

124 Լևինի բառերով՝ «Հիմնական դատավարության մեղադրականից բացի ոչ մի հավաստի վկայություն չկա այն ամբաստանությունների վերաբերյալ, թե ՀԿ-ը [Հատուկ կազմակերպությունը], բազմաթիվ դատապարտյալների ընդգրկելով իր շարքերում, կոտորածներում առաջնորդող դեր է խաղացել... ոչ մի տեղ վկայություն չկա, թե... որևէ... ՀԿ ստորաբաժանում է ներառվել հայերի տեղահանությունների հետ կապված պարտականությունների մեջ», նույն տեղում, 84-85:

125 Նույն տեղում, 86:

Հեղինակն ինքն արժանացել է զանազան պարգևների ու դրվատանքների: Թուրքիայի կառավարության պաշտոնական տեսակետի քարոզչությունը տարածող ու սատարող հիմնական բազուկը՝ Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնը (Avrasya Stratejik Araştırmalar Merkezi: ASAM)¹²⁶, «Մարդկության դեմ ոճիրներ» աշխատության համար Լևինի պարգևատրել է իր ամենաբարձր մրցանակով: Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ (TBMM) Բյուլենթ Առինչը նրան պարգևատրել է Ազգային մեծ ժողովի շքանշանով¹²⁷: Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը ֆինանսավորել է Լևինի գրքի միջազգային մատակարարումը՝ այն անվանելով իրենց «պաշտոնական տեսակետը», իսկ թուրքական մամուլում Լևինի մասին բազմաթիվ հոդվածներ են լույս տեսել, որտեղ գովասանքներ են շոյվել նրա հասցեին¹²⁸:

Հետևաբար, արժե մի քիչ կանգ առնել ՀԿ-ի և հայերի դեմ գործված ոճիրների միջև կապի վերաբերյալ հեղինակի պնդումների վրա՝ տեսնելով, թե այդ մասին ինչ են ասում օսմանյան փաստաթղթերը:

Ինչպես արդեն նշվել է, ՀԿ-ը վերահիմնվել է 1914 թ. օգոստոսին: Կազմակերպությունը երկու նպատակ է հետապնդել. Ռուսաստանի ու Մեծ Բրիտանիայի դեմ մահմեդական խռովություն հրահրել, և երկրի ներսում միջոցներ ձեռնարկել հայերի դեմ: Որոշվել է այդ

126 ASAM-ը ստեղծվել է 1999 թվականին: Հայկական հարցերի հետազոտական ինստիտուտը, որը նույնպես հիմնվել է ASAM-ի շրջանակներում 2001 թ., այժմ ծառայում է իբրև հայերի հետ կապված պատմության Թուրքիայի պաշտոնական վարկածի օժանդակման հետազոտական ու քարոզչական կենտրոն: 2005 թ. անվանափոխվելուց հետո այն այժմ հայտնի է իբրև Մարդկության դեմ հանցանքների հետազոտման ինստիտուտ (İnsanlığa Karşı İşlenen Suçlar Araştırma Enstitüsü): 2005 թ. նոյեմբերի 24-26-ին Անկարայում գումարված համաժողովի ընթացքում Լևին պարգևատրվել է ASAM-ի «Մարդկության դեմ հանցանքների քննազատի ամենաբարձր պարգևով» (Gündüz Aktan, “Rövanş [I],” Radikal, 2005 թ. նոյեմբերի 29):

127 http://www.meclishaber.gov.tr/develop/owa/haber_portal.haber_detay?p1=30684:

128 Բերնեք երկու օրինակ. «Այդ երկու՝ մեծ ցեղասպանագետ Գյունտեր Լևինի «Հայերի կոտորածներն Օսմանյան Թուրքիայում» և գեղապետ Էդվարդ Ջ. Էրիկսոնի «Թշնամիներ ներսում» գրքերում մանրամասն ապացույցներ կան, որ Հատուկ կազմակերպությունը իբրև պետական կազմակերպություն [հայերի] տեղահանությունների մեջ չի ներգրավվել»: Gündüz Aktan, “Bir Şey Söyle de,” Radikal, 2007 թ. մարտի 22: Տե՛ս նաև Şahin Alpay, “‘Soykırım’ tezinin zaafı,” Zaman, 2005 թ. սեպտեմբերի 3:

նպատակների համար աշխարհագրային ուժեր ձևավորել, ինչն սկսել է իրականացվել անմիջապես: Այդ գինված միավորումների շարքերը կազմվել են երեք տարբեր խմբերից՝ քրդական ցեղերից, Բալկաններից ու Կովկասից եկած մահմեդական գաղթականներից և դատապարտյալներից մարդկանց հավաքագրելով: Իթթիհադական ղեկավարների հետպատերազմյան դատավարության միայն չորրորդից մինչև յոթերորդ նիստերի ընթացքում այդ միավորումների կազմավորմանն առնչվող մոտ քսան տարբեր փաստաթուղթ է ընթերցվել¹²⁹:

Սեպտեմբերից սկսած ՀԿ աշխարհագրային միավորումները ծառայել են Կովկասում ու Իրանում: Պատերազմի սկզբին կրած ձախողումներից հետո ՀԿ միավորումների վերահսկողությունը վերցվել է բանակից ու Պատերազմի նախարարությունից, որոնց ենթակայության տակ էին մինչ այդ, և հանձնվել է ՄԱԿ-ի ուղիղ վերահսկողությանը: Միավորումները վերակազմակերպվել են, և նրանց հանձնարարվել է հայերի շարայությունների ոչնչացումը¹³⁰:

Իր հերթին, Լևին չի վիճարկում ՀԿ միավորումների գոյությունը կամ այն փաստը, որ նրանք Կովկաս ու Իրան էին ուղարկվել խոտվություններ հրահրելու նպատակով: Նա վիճարկում է այն պնդումները, որ այդ միավորումները գործածվել են հայերին բնաջնջելու համար: Նա գտնում է, որ ոճիրները հիմնականում իրականացրել են քրդական ցեղերը, ժանդարմներն ու միլիցիան, ավագակախմբերը և կամավորներն ու անկանոն ուժերը, որոնցից և ոչ մեկին նա ամբողջությամբ չի մատնանշում և չի ցանկանում սերտ կապի մեջ դնել ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի հետ. «Ընդհանուր տարրն այն է, որ «չեթենները» անկանոն ուժեր էին, որոնք (անկախ այն բանից, թե ինչպես էին հավաքագրվել, ուղղորդվել կամ ինչ կազմով) մասնակցել են տեղահանված հայերի կողոպուտին ու սպանություններին»¹³¹:

Ըստ Լևիի, չնայած այդ տարբերը (որոնց բնույթն ու ինքնությունը երբեք ամբողջովին չեն հստակեցվել) լիովին կարող էին կատարած լինել այդ ոճիրները, ոճիրներն իրենք հնարավոր են դարձել ոչ թե

129 Նիստի արձանագրության համար տե՛ս Dadrian and Akçam, “Tehcir ve Taktik,” 471–599:

130 ՀԿ ստորաբաժանումների ավելի հանգամանալից քննության համար տե՛ս Taner Akçam, A Shameful Act, 130–40 և 149–59:

131 Lewy, Armenian Massacres, 228.

Ստամբուլի իթթիհադական կենտրոնի որևէ գործողությամբ կամ մտադրությամբ, այլ տեղական առանձին պաշտոնյաների գործողություններով, որոնց նա ճանաչում է իբրև մեղավոր կողմ. «Աշխարհագրային այդ միավորումները սովորաբար կազմակերպվում էին տեղական իշխանությունների կողմից՝ հաճախ ՄԱԿ ակումբների ռազմատենչ (անձանց) ազդեցության ներքո»¹³²:

Լևիի հիմնական նպատակն է ցույց տալ, որ հայերի սպանությունները կենտրոնական որոշման ու գործողության արգասիք չէին, և ուրեմն պատճառ չկա խոսելու ցեղասպանության մասին: Սպանությունները տեղական իրադարձություններ էին, իսկ կենտրոնական կառավարությունը դրանց հետ ուղղակի կապ չի ունեցել: Հետևաբար, օգտակար կլինի այստեղ համառոտակի քննել որոշ տեղեկություններ, որոնք երևան են եկել մասնավորապես Ստամբուլի դատավարությունների ընթացքում, և ցույց տալ, որ դրանք պարունակում են միևնույն տեղեկություններն ու բովանդակությունը, ինչ Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության փաստաթղթերը, և ցուցադրում են քննարկվող գործողությունների մեջ զինվորականության ու Ներքին գործերի նախարարության ընդգրկվածությունը:

ՄՇՏԱԿԱՆ ԿԱՊ ՏԱՐԲԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը և Ստամբուլի ռազմական տրիբունալում երևան եկած որոշ փաստեր հստակորեն վկայում են, որ մշտական ու լայնածավալ կապ է եղել ՀԿ հրամանատարական կենտրոնի և օսմանյան Պատերազմի նախարարության, Ներքին գործերի նախարարության ու ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի միջև: Ճիշտ է, որ մինչև իթթիհադական ղեկավարների գլխավոր դատավարության հինգերորդ ու վեցերորդ նիստերը ամբաստանյալները հերքել են ՀԿ-ի և վերը թվարկված մյուս հաստատությունների միջև եղած որևէ կապ: Սակայն հինգերորդ և վեցերորդ նիստերի ժամանակ արձանագրության համար ընթերցվել են մի շարք փաստաթղթեր, որոնք ամբաստանյալներին ցույց են տվել, որ ՀԿ-ն իսկապես կապի մեջ է եղել ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի, Պատերազմի նախարարության, կուսակցական տեղական

132 Նույն տեղում, 223:

կազմակերպությունների ու կամավոր զինված միավորումների հետ, որից հետո ամբաստանյալներն սկսել են ընդունել, որ այդ փաստաթղթերն իրենք իրենց ձեռքով են գրել, և դադարել են հերքել այդ կապերի գոյությունը:

Տարբեր հաստատությունների միջև կատարված համակարգման մասին ամենալիարժեք բացատրությունը տվել է Բյույրյուք Թալեաթը.

Հնարավոր է, որ Միություն և առաջադիմություն [կոմիտեն] կապի մեջ էր Հատուկ կազմակերպության հետ՝ ճիշտ այնպես, ինչպես կապի մեջ էր... բոլոր հաստատությունների հետ... Հնարավոր է, որ Հատուկ կազմակերպությունը դիմել է ՄԱԿ Կենտրոնական կոմիտեին: Ձեր իսկ կուսակցությունն ասաց, որ մեզ օգնել է ձեր կազմակերպության միջոցներով: Բնական է, որ Կենտրոնական կոմիտեն, որը չէր կարող անտարբեր մնալ... բուն նախարարության անունով այս ձևով արված դիմումին՝ լինել դա Պատերազմի նախարարությունից, թե Հատուկ կազմակերպությունից, հնարավոր է, որ առաջարկած լինել... կազմակերպության որոշ անդամների, որ գործեն Պատերազմի նախարարության, Հատուկ կազմակերպության կամ Ներքին գործերի նախարարության պահանջների համաձայն¹³³:

ԱԿԱՆԱՏԵՍՆԵՐԻ ՈՒ ԱՄՔԱՍՏԱՆՅԱԼՆԵՐԻ ՑՈՒՑՈՒՆԵՐԸ

Ստամբուլի ռազմական տրիբունալի տարբեր դատավարությունների ընթացքում տասնյակ ամբաստանյալներ ու ակնատեսներ վկայել են, որ ՀԿ միավորումները ներգրավված են եղել հայերի տեղահանությունների ու կոտորածների մեջ, և որ ուրեմն դրանք պատասխանատու են այդ ոճիրների համար: Գլխավոր դատավարության հինգերորդ նիստին, օրինակ, նախագահող դատավորը հարց է ուղղել Յուսուֆ Ռիզային՝ ասելով. «Ձեր տված վկայությունից պարզ է, որ տեղահանությունների ու կոտորածների մեջ ներգրավվածների կազմում են եղել նաև այդ ստորաբաժանումները, այլ կերպ ասած՝ Հատուկ կազմակերպության գործերը»: Ի պատասխան, Յու-

133 TV, 1919 թ. մայիսի 25, թիվ 3557, Հաղորդում դատավարության վեցերորդ նիստի մասին (1919 թ. մայիսի 14):

սուֆ Ռիզան ասել է, որ իսկապես եղել են այդ տեսակի ՀԿ տեղական ստորամիավորումներ, որոնք գտնվել են տեղական կառավարիչների (այս դեպքում՝ նահանգապետների) և ՄԱԿ-ի այսպես կոչված պատասխանատու քարտուղարների ենթակայության ներքո, և որ այդ ստորամիավորումները ուղղակիորեն ներգրավված են եղել տեղահանության գործողությունների մեջ¹³⁴: Մինևույն դատավարության յոթերորդ նիստին, երբ Յուսուֆ Ռիզայի համար ընթերցվել են ոճիրների մեջ ՀԿ միավորումների ներգրավվածությունը մերկացնող որոշ վկայություններ ու փաստաթղթեր, նա պատասխանել է, որ «խայտառակություն է, որ հիմա, այսօր, պայմաններն այնպիսի վիճակի են հասել [որ ցույց տան], որ Հատուկ կազմակերպությունը [ՄԱԿ] Կենտրոնական կոմիտեի հրամանների տակ բոլոր այդ ոճիրները կատարելու միջոց էր դարձել: Ձեր [խոնարհ] ծառան բառեր չի գտնում պատասխանելու այս [իրավիճակին], Ձերդ ազնվություն»: Կարճ ասած, անժխտելի փաստաթղթերի ծանրակշռության ներքո Յուսուֆ Ռիզան ստիպված է եղել ընդունելու, որ թե՛ ՄԱԿ Կենտրոնական կոմիտեն և թե՛ ՀԿ-ն կարևոր դեր են խաղացել հայերի և ուրիշների հանդեպ պատերազմական շրջանում գործած զանազան ոճիրների մեջ¹³⁵:

Տարբեր դատավարությունների զանազան նիստերի ընթացքում շատ ուրիշներ՝ օսմանյան պետական ծառայողներից մինչև բանակային սպաներ, վկայություններ են տվել և հաստատել այն փաստը, որ ՀԿ ստորաբաժանումներն ուղղակի մասնակցություն են ունեցել հայերի դեմ իրականացրած ոճիրներին: Այդ վկայություններն այնուհետև հաղորդվել են ժամանակի լրագրերում և հաճախ վերահաստատել դատարանների վճիռները: Այսպես, Մամուրեթյուլազիզի դատավարության 1919 թ. օգոստոսի 2-ի նիստին Էրզրումի նախկին

134 TV, 1919 թ. մայիսի 21, թիվ 3554, Հաղորդում դատավարության հինգերորդ նիստի մասին (1919 թ. մայիսի 14): Յուսուֆ Ռիզայի այն պնդումը, թե երկու ՀԿ կար, ըստ ամենայնի, իրեն մեղսակցությունից ազատելու փորձ էր: Իր վկայության ժամանակ նա հայտարարել էր, թե ՀԿ այն ստորաբաժանումները, որոնք տեղական պաշտոնյաների (նահանգապետների) և իթթի-հաղական քարտուղարների տնօրինության տակ էին, Պատերազմի նախարարությանը կապված ՀԿ ստորաբաժանումները չէին, որոնց շարքերում ինքը ծառայել է:

135 TV, 1919 թ. մայիսի 29, թիվ 3561, Հաղորդում դատավարության յոթերորդ նիստի մասին (1919 թ. մայիսի 17):

նահանգապետ Թահսինն ասել է, որ ՀԿ միավորումներն են (որոնք գտնվում էին Բահաեդին Շաքիրի տնօրինության ու վերահսկողության տակ) պատասխանատու եղել հայերի բնաջնջման համար.

Հայերի տեղահանության ժամանակ ես Էրզրումում էի... Շարայունները, որոնք կոտորածի են ենթարկվել, կատարվել է նրանց կողմից, ովքեր հավաքվել էին Հատուկ կազմակերպության անունից: Հատուկ կազմակերպության երկու մաս կար: Այն ժամանակ, երբ ես դուրս եկա Էրզրումից, [այնտեղի] Հատուկ կազմակերպությունը բավական նշանակալի ուժ էր: Եվ այդ [միավորումները] մասնակցում էին պատերազմին: Բանակը տեղյակ էր դրանից: Հետագայում ուրիշ Հատուկ կազմակերպություն կար, որը ենթարկվում էր Շաքիր բեյի հրամաններին, որը ասում են, հեռագրեր էր ուղարկում այստեղ ու այնտեղ, որոնք ստորագրում էր [որպես] «Հատուկ կազմակերպության ղեկավար»... Բահաեդին Շաքիր բեյը նաև ծածկագրերի մեքենա ուներ: Նա կապի մեջ էր և Բարձր դռան հետ, և Պատերազմի նախարարության հետ: Տեղահանությունների ընթացքում նրանք կապի մեջ էին բանակի հետ ևս... Բահաեդին Շաքիր բեյը ծածկագրերի երկու մեքենա [ուներ], որպեսզի կարողանար հաղորդակցվել և Բարձր դռան, և Պատերազմի նախարարության հետ¹³⁶:

Այս գործի վերջնական դատավճռի մեջ բավական տեղ է հատկացված ինչպես բազմաթիվ փաստաթղթերի, այնպես էլ մահմեդական թուրք ականատեսների վկայություններին, որոնք պնդել են, որ հայերի դեմ ոճիրները գործվել են ՀԿ-ի կողմից¹³⁷:

ՀԿ-ի և հայերի տեղահանությունների միջև կապի վերաբերյալ մեկ այլ վկայություն կա Կաստամոնուի նահանգապետ Ռեշիդ փաշայի գրավոր ցուցմունքում, որն ընթերցվել է իթթիհադական պատասխանատու քարտուղարների դատավարության հինգերորդ նիստի ժամանակ (1919թ. հոկտեմբերի 27-ին): Իր ցուցմունքի մեջ նահանգապետը պատմել է, որ մի անգամ մի հուշագիր է ստացել Բա-

136 Alemdar, 1919թ. օգոստոսի 3:

137 TV, 1920թ. փետրվարի 9, թիվ 3771. Խարբերդի դատավարության դատավճիռն արձակվել է 1920թ. հունվարի 13-ին:

հաեդին Շաքիրից («Հատուկ կազմակերպության ղեկավար» ստորագրությամբ), որտեղ վերջինս հայտնում էր, որ Կաստամոնուի հայերը պետք է տեղահանվեին, իսկ նահանգապետին հեռացնում էին պաշտոնից՝ այդ հրամանը չկատարելու պատճառով¹³⁸:

Բայրուրտի դատավարության ժամանակ արձակված դատավճռի մեջ մեծ թվով մեջբերումներ են արված ՀԿ-ի կատարած սպանությունների և այլ հանցագործությունների վերաբերյալ մահմեդական ականատեսների վկայություններից: Էրզրումի գնդի հրամանատար Ադիլ բեյն, օրինակ, ասել է, որ հայերին «սպանել են... Հատուկ կազմակերպության անդամները», և որ ինքն այդ մասին իմացել է կատարված հետաքննություններից և Բայրուրտի ժանդարմերիայի հրամանատարից իր ստացած գրավոր պատասխանից¹³⁹:

1919թ. հուլիսի 3-ին սկսված դատավարությունը մամուլը կոչել է «Կրեոական սրճարանի տեր Նեջաթի էֆենդու դատավարություն»: Նեջաթի էֆենդու սրճարանը պատկերվել է իբրև «Միություն և առաջադիմության հրոսակախմբերի գործունեության ամենակարևոր հենակետերից մեկը»: Այն ուղղակիորեն առնչվել է ՀԿ այն ստորաբաժանումների ոճիրներին, որոնք գործել են Դիյարբեքիրի ու Ուրֆայի շրջակայքում: Ամբաստանյալները Էշրեֆ բեյի ավագակախումբ անվամբ հայտնի Դիյարբեքիրի զինված հրոսակախմբի անդամներն էին: Նրանցից մեկը հետևյալ նկարագրությունն է ներկայացրել. «Ես չգիտեի, որ մեր զորագունդը կոչվում էր զինված բանդա: Մեր հագուստները, գլխարկները, մեր ունեցած ամեն բանը զինվորականի նման էր. մենք զինվորներ էինք, Ձերդ ազնվություն»: Դատավարության շարունակության ընթացքում, ականատեսների վկայությունների հետ միասին, ընթերցվել են շրջանից ուղարկված բազմաթիվ ծածկագրված հեռագրեր, որոնք վերաբերում էին տեղի ունեցած սպանություններին ու կողոպուտին¹⁴⁰: Կարելի է էջեր շարունակ թվարկել ապացույցները:

138 Atı, Alemdar, 1919թ. հոկտեմբերի 28: Այդ վկայությունների հատվածները, որոնք տեղ են գտել ժամանակի օրաթերթերում, գործածվել են հետագա գործերի մեջ՝ իթթիհադական քարտուղարների դատավարության դատավճիռների և իթթիհադական ղեկավարների հիմնական դատավարության տարրեր նիստերի ընթացքում:

139 Tercüman-ı Hakikat, 1920թ. օգոստոսի 5: Vakit, 1920թ. օգոստոսի 6:

140 Atı, Alemdar, 1919թ. հոկտեմբերի 27:

ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՏԱՐԲԵՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Դատավարությունների ընթացքում պարզվել է, որ տարբեր անուններ են տրվել ՀԿ միավորումներին, որոնք եղել են բազմաթիվ զինված հրոսակախմբերի ու կամավոր աշխարհագրայինների առանցքը: Այդ տեղեկությունը դատավարությունների ժամանակ հենց այնպես չի հայտնվել: Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության արխիվները լեցուն են նման տեղեկություններով: Բերենք մի քանի օրինակ: Իթթիհադական ղեկավարների գլխավոր դատավարության չորրորդ՝ 1919 թ. մայիսի 8-ի նիստի ժամանակ, նախագահող դատավորը հարցրել է ամբաստանյալներին. «Ո՞րն էր «զինված բանդա» տերմինը գործածելու ձեր նպատակը: Պատշաճ է [զինվորական] ստորաբաժանմանը, գումարտակին, Պատերազմի նախարարությանը կամ բանակին կից գորաբաժանմանը տալ «զինված բանդա» անունը»: Ամբաստանյալներից մեկը՝ Ջևադը, պատասխանել է, որ այդ տեսակի տարբեր անուններն այդ ստորաբաժանումներին տրվել են «Պատերազմի նախարարությունից եկած հրամաններով», և որ «դրանք երբեմն կոչվում էին կամավոր գորամիավորումներ, երբեմն՝ զինված հրոսակախմբեր»¹⁴¹:

Պատերազմի նախարարության, ՀԿ, ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի և տեղական կազմակերպությունների հեռագրերում ու նամակներում, որոնք արձանագրության համար ընթերցվել են դատավարության ժամանակ, ՀԿ միավորումների առնչությամբ հաճախ է գործածվում «զինված բանդա» տերմինը: Այսպես, դատավարության հինգերորդ նիստին ընթերցվել է Սամսունում ՄԱԿ քարտուղարության պաշտոնական թղթակցությունը ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի հետ, որով կոմիտեն տեղեկացվում էր, որ «Արթվիլի [քնիկ Արթվիլից] Թուֆան աղայի հրամանատարության ներքո գտնվող 55 հոգանոց զինված բանդան՝ այդպիսի հրոսակախմբերից հինգերորդը, ուղարկվել է մոտորային փոխադրամիջոցով»¹⁴²:

Նույն նիստի ժամանակ տասնյակներով փաստաթղթեր են ընթերցվել, որոնցում ՀԿ միավորումներն անվանվում էին «կամավոր

141 TV, 1919 թ. մայիսի 15, թիվ 3549, Հաղորդում դատավարության չորրորդ նիստի մասին (1919 թ. մայիսի 8):

142 Նույն տեղում:

քական»: Նույնն են վկայել նաև մի շարք ականատեսներ: Այսպես, դատավարության հինգերորդ նիստին ամբաստանյալ Ջևադն այդ ստորաբաժանումներն անվանել է «կամավորական ջոկատներ» և «կամավորական կազմակերպություններ» և նույնիսկ մի քանի հեռագիր է ընթերցել՝ ցույց տալու համար, որ այդ տերմինները գործածվել են նաև պաշտոնական թղթակցության մեջ¹⁴³: Զիյա Գյոքալփին իր հերթին նշել է, որ «ընդհանուր գորահավաք հայտարարելուց հետո Պատերազմի նախարարությունն ստեղծեց Հատուկ կազմակերպությունը և սկսեց կամավոր ջոկատներ ձևավորել»:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության փաստաթղթերը հստակորեն ցուցադրում են, որ օսմանյան Ներքին գործերի նախարարությունն ուղիղ մասնակցություն է ունեցել ՀԿ միավորումների կազմավորման մեջ: «Զինված բանդա», «կամավոր» և «Հատուկ կազմակերպության մարդիկ» տերմինները բոլորն էլ փաստորեն փոխնիփոխ գործածվել են: Բացի այդ, բավական պարզաբանվում է այդ միավորումները կազմելու նպատակը: 1914 թ. սեպտեմբերի 6-ին Վան ուղարկված հեռագրում (որ նշված է 4-րդ գլխում) Անվտանգության վարչությունը բացեիքաց գրում է, որ Իրանի ներսում հարձակումներ կատարելու նպատակով կազմավորվել են զինված հրոսակախմբեր. «Ներկայիս մեր քաղաքական իրադրությունն ավելի ապահով է դառնում և ամուր հիմքերի վրա [է]: Բուլղարացիների հետ բոլոր հարցերում հանգել ենք փոխըմբռնման: Իրանում զինված հրոսակախմբերն արդեն պետք է ինքնակազմակերպված լինեն: Գործելու հրամանը կտրվի առանձին»¹⁴⁴:

1914 թ. սեպտեմբերի 12-ին Ներքին գործերի նախարարության Անվտանգության վարչության մի շարք շրջաններ ուղարկված հեռագրում, դարձյալ բացեիքաց, ասվում է, որ զինված հրոսակախմբեր ստեղծելու նպատակը «թշնամու տարածքների վրա հարձակվելն» է,

143 TV, 1919 թ. մայիսի 21, թիվ 3554, Հաղորդում դատավարության հինգերորդ նիստի մասին (1919 թ. մայիսի 14):

144 BOA/DH.SFR, № 44/201, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, փակագրված 1914 թ. սեպտեմբերի 6:

և այդ նպատակով հրամայվում է դատարկել բանտերը և ազատված բանտարկյալների ցուցակներն ուղարկել Ստամբուլ.

Ցեղերի անդամները կամ ազդեցիկ այլ մարդիկ, որոնք անցյալի հանցանքների համար այսօր կալանավայրերում ու բանտերում են փակված, կամ ուլքեր դատապարտվել են, բայց փախել են, և ում վերաբերյալ հույս կա, որ կարող են գործածվել ռազմական գործողությունների համար՝ բոլորը պետք է համընդհանուր ներում ստանան. այնուհետև նրանց ղեկավարությամբ պետք է զինված հրոսակախմբեր կազմավորվեն, անհրաժեշտության դեպքում պետք է հարձակվեն թշնամական տարածքի վրա: Դա հարմար կլինի՝ ապագայում երկիրն այդ բանդիտների բեռից փրկելու համար, և նպատակահարմար կլինի, որ այդ մարդիկ, ուլքեր կարող են նման գործ կատարել, [զինվորական] հրամանատարների հետ համագործակցությամբ նշանակվեն: Քանի որ, ելնելով Կայսերական բանակի Բարձրագույն հրամանատարության կողմից հայտարարված լինելու [հանգամանքից], նկատի է առնվել այդ միջոցառման կարևորությունը, և [վերջնական] որոշումը հետագայում կկայացվի այդտեղ: Եթե ներկայումս կան անձինք, որոնց կարելի է գործածել համաներման հրամանագրով, նրանց անունները պետք է արձանագրվեն և ուղարկվեն¹⁴⁵:

Առկա փաստաթղթերից կարելի է հասկանալ, որ «կամավորական զորախմբերն» օգոստոսի առաջին օրերից, երբ տրվել է ընդհանուր զորահավաքի հրամանը, արդեն սկսել էին ձևավորվել, և այդ հարցը հիմնականում դրված է եղել օսմանյան Երրորդ բանակի վրա: Դա, իրականում, ամրագրված է պաշտոնական փաստաթղթերում. «Կամավորական զորախմբեր կազմավորելու հարկավորությունը Պատերազմի նախարարությունը թողել է [տեղական] կարիքներին»¹⁴⁶: Մինևույն տեղեկությունը կրկնվում է մեկ այլ հեռա-

145 BOA/DH.SFR, № 44/224, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Վանի, Բիթլիսի, Միտսի, Էրզրումի ու Դիյարբեքիրի նահանգներ, թվագրված 1914թ. սեպտեմբերի 12: Հաջորդ օրը համանման մի հեռագիր է ուղարկվել Տրապիզոնի նահանգ: Տե՛ս BOA/DH.SFR, № 44 և BOA/DH.SFR, № 44/232:

146 BOA/DH.SFR, № 44/41, Ներքին գործերի նախարարության Անվտանգու-

գրում, որը Մամուրեթյուլազիզի նահանգ է ուղարկվել մոտ վեց ամիս անց՝ 1915թ. փետրվարի 13-ին. «Պատերազմի նախարարությունը հայտնել է, որ առանձին ցեղերի [մինչև այժմ] զինվորական ծառայությունից խուսափած անդամներից կամավորական զորամիավորումներ կազմելու թույլտվությունը պետք է թողնել Երրորդ բանակի հրամանատարության հայեցողությանն ու հաստատմանը, և առկա իրադրության մասին պետք է հաղորդվի նշված հրամանատարությանը»¹⁴⁷:

1914թ. օգոստոսի 15-ին Վանի նահանգ ուղարկված մեկ այլ հեռագրից պարզվում է, որ միայն վերջին ժամանակներում ձևավորված կամավորական բանակները չեն, որ օգոստոսի դրությամբ դրվել են Երրորդ բանակի հրամանատարության իրավասության տակ, այլ նաև «ցեղային զորախմբերը», որոնք համիդյան շրջանի տխրահռչակ «համիդիյե» զորախմբերի իթթիհադական հաջորդներն էին. «Արևելյան Անատոլիայում ցեղային հեծելազորային միավորումները պետք է դրվեն Էրզրումում [գտնվող] Երրորդ բանակի հրամանատարության տակ, քանի որ նրանց ծառայության եղանակն ու վայրը պետք է որոշվի վերոհիշյալ բանակի հրամանատարի կողմից, հրամայվում է, որ գործեք այն եղանակով, որը կորոշվի [Երրորդ բանակի հրամանատարության հետ] կապով»¹⁴⁸:

Այն շրջանում, երբ կազմավորվում էին այդ զինված հրոսակախմբերը, Թալեաթ փաշան, իբրև ներքին գործերի նախարար, ստանձնել էր ՄԱԿ Կենտրոնական կոմիտեի, տեղական պաշտոնյաների ու բանակի հրամանատարների միջև գործողությունների համակարգումը: Օրինակ, 1914թ. նոյեմբերի 29-ին Իզմիթի գավառ ուղարկված մի հեռագրում ասելուց հետո, որ «նպատակահարմար կլինի, որ Իզմիթում վերացվեն այն կալանավորների նկատմամբ մեղադրանքները, որոնք կամ արդեն դատապարտված են, կամ սպասում են դատին, և որոնք կարող են գործածվել իբրև զինված հրոսակախմբեր ու

թյան ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քարեսիի (Բալիքեսիր) գավառ, թվագրված 1914թ. օգոստոսի 18:

147 BOA/DH.SFR, № 49/263, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1915թ. փետրվարի 13:

148 BOA/DH.SFR, № 44/24, Ներքին գործերի նախարարության Հաղորդակցությունների գլխավոր վարչության առաջին ճյուղի ծածկագրված հեռագիրը Վանի նահանգ, թվագրված 1914թ. օգոստոսի 15:

ավագակներ՝ նրանց նկատմամբ համաներման հրաման ձեռք բերելով [հանուն Օսմանյան կայսրության մղվող պատերազմի ընթացքում] այն ծառայության ու գործողությունների [դիմաց], որոնք նրանք հետագայում կկատարեն», Թալեաթը հրամայում է, որ այդ մարդիկ պետք է ազատվեն բանտարկությունից և ուղարկվեն Ստամբուլ¹⁴⁹:

Բացի այդ, Թալեաթն ուշադրության կենտրոնում էր պահում այդ նախաձեռնության զանազան ոլորտները, ինչպես, օրինակ, թե արդյո՞ք ապահովվում էր հարկ եղած պարենի հատկացումը կազմավորվող ավագակախմբերին, և արդյո՞ք նրանք հասնում էին իրենց նշանակման վայրերը: Կարելի է ասածը հաստատող քազմաթիվ վկայություններ բերել, որոնցից է, օրինակ, 1914թ. դեկտեմբերի 24-ին Տրապիզոն ուղարկված նրա հեռագիրը, որով պահանջում էր, որ ժանդարմերիայի կապիտան Ահմեդ բեյի հրամանատարության տակ գտնվող հինգ հարյուր հոգանոց աշխարհագրային ստորաբաժանման կարիքներն ապահովվեն, իսկ երբ նրանց Սամսունից ուղարկեն Կովկաս, Տրապիզոն հասնելու համար նրանք ապահովվեն շոգենավով¹⁵⁰: Տրապիզոն ուղարկված մեկ այլ հեռագրում, որն առաքվել է երկու օր անց, Թալեաթը հարցնում է, թե Սվազում բանտարկյալ Չարշամբալիի (բնիկ Չարշամբայից) Հաջի բեյի ղեկավարության տակ երկու հարյուր կամավորներն արդյո՞ք հավաքվել են արդեն¹⁵¹: Այս հեռագրերում «գինված հրոսակախմբերի» փոխարեն գործածված է «Հատուկ կազմակերպության ստորաբաժանումներ» տերմինը:

Շատ ուրիշ փաստաթղթեր կան, որոնք վկայում են ներքին գործերի նախարարի ու նահանգներում ՀԿ ղեկավարների միջև հաղոր-

դակցության մասին: Այսպես, առատ նամակագրություն գոյություն ունի Թալեաթ փաշայի և ոմն Ռիզայի¹⁵² միջև, որը եղել է Տրապիզոնի շրջանում ՀԿ գործունեության պատասխանատու անձը. այդ թղթակցությունից հասկացվում է, որ ՀԿ անդամներն իրենց հաղորդակցություններում նույնպես գործածել են Ներքին գործերի նախարարության ծածկագրման գաղտնագրերը: Օրինակ, 1915թ. նոյեմբերի 18-ին Թալեաթ փաշան Տրապիզոնի նահանգապետին կարգադրել է, որ այն հեռագիրը, որն ուղարկել է «Հատուկ կազմակերպության պատվիրակության ղեկավար Ռիզա բեյը՝ մարզային վարչական կենտրոն Արհավիի ծածկագրությամբ», անմիջապես ուղարկվի՝ «գործածելով [Տրապիզոնի] նահանգի ծածկագրումը»¹⁵³: Մյուս օրինակը, որ այս կապակցությամբ կարելի է բերել, Թալեաթ փաշայի հաղորդակցությունն է Սյուլեյման Ասկերիի հետ, որը մինչև Միջագետքի ճակատ մեկնելը եղել է ՀԿ-ի առաջին ղեկավարը¹⁵⁴:

Այդ հաղորդակցության մեջ հիշատակման արժանի մյուս պահն այն է, որ դրա մեջ նշվում է հետևյալ փաստը. ՄԱԿ Կենտրոնական կոմիտեն գործածում էր Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության հաղորդակցության կապուղիները: 1914թ. նոյեմբերի 20-ին Տրապիզոնի նահանգ ուղարկված հեռագիրը կրում է «[ՄԱԿ] Կենտրոնական կոմիտեից» մակագրությունը և նշում, որ այն «Ռիզա բեյի համար» է: Հեռագրում այսպիսի հատված կա.

Խնդրում ենք ձեզ [որ մեզ համար գտնեք] մի քանի մարդ, որ գիտեն Փոթիից մինչև Սոխում առափնյա տարածքը և այնտեղ ներգրավված են եղել մաքսանենգ գործունեության մեջ, ինչպես նաև մի քանի ճարտար մարդու, որոնք ծանոթ են Բուլթայիսի, Թիֆլիսի, Դաղստանի, Թաքաթայի [?] ու Ռիզոդարի [?] շրջաններին: Բացի այդ, մենք կարիք կունենանք երկու կամ երեք

152 Սա այն նույն Ռիզան է, որը մինչ այս շարադրանքում նշված էր իբրև Յուսուֆ Ռիզա: Նա հետագայում ձեռքբերակալվել է և իբրև անբաստանյալ հայտնվել պատերազմից հետո իթթիհադական ղեկավարների հիմնական դատավարության մեջ:

153 BOA/DH.SFR, № 47/73, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1914թ. նոյեմբերի 18:

154 BOA/DH.SFR, № 48/250, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Բասրայի գավառապետ և Իրաքի ու շրջակայքի հրամանատար Սյուլեյման Ասկերի բեյին, թվագրված 1915թ. հունվարի 3:

149 BOA/DH.SFR, № 47/245, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Իզմիթի գավառ, թվագրված 1914թ. նոյեմբերի 29:

150 BOA/DH.SFR, № 48/150, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1914թ. դեկտեմբերի 24: «Քանիև զավատապետարանի հետ կապվելուց տեղեկացել ենք, որ ժանդարմերիայի կապիտան Ահմեդ բեյի ղեկավարությամբ 500-հոգանոց մի ուժ է ի մի բերվել և լրիվ սպառազինվել, որպեսզի մասնակցի Կովկասում գինված գործողություններին [çete müsâdemâti], և մենք ի պատասխան ձեզ տեղեկացնում ենք, որ վերոնշյալ ուժը պետք է անմիջապես ուղարկվի Տրապիզոն: Սպասվում է գեներալի ու ապրանքի քանակության ուղիղ առաքում այդ նահանգ»:

151 BOA/DH.SFR, № 48/155, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1914թ. դեկտեմբերի 26:

քրիստոնյա վրացու: Խնդրեմ զեկուցեք, թե կարո՞ղ եք գտնել մինչև 100 մարդ, որ գիտեն Կովկասյան լեռները և ի վիճակի են մասնակցելու ավազակությանն ու [զինված] հրոսակախմբերի գործողություններին, և թե կարո՞ղ եք նրանց ամենաառաջը մեկ շաբաթվա մեջ հավաքել Տրապիզոնում. ըստ այդմ կարող ենք լավ գաղափար կազմել, թե այստեղ ինչ ուժեր են [մեզ մատչելի]¹⁵⁵:

Ինչպես կարող ենք տեսնել այս բոլոր և շատ ուրիշ օրինակներից, «զինված բանդա», «կամավոր» և մյուս տերմինները բոլորն էլ ակնհայտորեն փոխնիփոխ գործածվել են ՀԿ տարբեր ստորաբաժանումների առնչությամբ: Օրինակ, 1915 թ. հունվարի 13-ին էրզրում ուղարկված հեռագրում, բանտերը դատարկելու մասին խոսելիս, զինված հրոսակախմբերի համար գործածվում է «կամավորներ» տերմինը և նշվում կովի մեջ այդ կամավորների խիստ հաջողակ լինելը. «Ինչպես հասկացել ենք, այն անձինք, որոնք նահանգային կալանավայրերում ու բանտերում պահվելուց հետո ազատվել են ու [մտել] զինված հրոսակախմբերի մեջ և ուղարկվել պատերազմի թատերաբեմ, [մեր ջանքերի համար] մեծ օգուտ են ապահովել»: Այդ պատճառով հեռագրում հրամայվում է, որ «նոր «կամավորներ» հավաքվեն և, այդ հարցով Երրորդ բանակի հրամանատար Հաֆիզ Հաքի փաշայի հետ կապվելուց հետո, նրանց ուղարկեն [ռազմաճակատ]»¹⁵⁶: Այդպես նաև, 1914 թ. դեկտեմբերի 16-ին գրեթե բոլոր նահանգապետներին ուղարկված հեռագրում Թալեաթը գրում է, որ «զինված հրոսակախմբերում ծառայելու նպատակով մարդկանց հավաքելու» աշխատանքը շարունակվում է մեծ հաջողությամբ¹⁵⁷:

155 BOA/DH.ŞFR, №DH.ŞFR, №47/96 and 47/96-1, Ներքին գործերի նախարարության ծածկագրված հեռագիրը Տրապիզոնի նահանգ, թվագրված 1914 թ. նոյեմբերի 20:

156 BOA/DH.ŞFR, №48/344, Ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էրզրումի նահանգ, թվագրված 1915 թ. հունվարի 13:

157 BOA/DH.ŞFR, №48/28, Ներքին գործերի նախարարության Ավտանդության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Անկարայի, Այդինի, Հյուսիսկովկասի (Բուրսա), Սվազի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Բուրսի, Չաթաջայի, Քարեսիի (Բալիքեսիր), Քալե-ի Սուլթանիյեի, Մենթեշեի, Թեքեի ու Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) գավառներ, թվագրված 1914 թ. դեկտեմբերի 16:

Ծածկագրերի վարչության թղթերի մեջ առկա են մի շարք պաշտոնական փաստաթղթեր, որոնցում բացելիքաց գործածված է «Հատուկ կազմակերպություն» տերմինը, և որոնց մեջ նշվում է, որ այդ միավորումները հատուկ գործածվել են հայերի դեմ: Ստամբուլի բանակային շտաբից 1915 թ. հունիսի 2-ին Մամուրեթյուլազիզի նահանգ (Ներքին գործերի նախարարության ծածկագրությամբ) ուղարկված հեռագիրը կարելի է բերել իբրև այդ երևույթը հաստատող օրինակ: Այդ հեռագիրն ուղարկողը՝ գեներալ-լեյտենանտ Ջևդեղը, որն այդ տարածքի համար պատասխանատու ՀԿ անդամն էր (հետագայում, պատերազմից հետո՝ իթթիհադականների գլխավոր դատավարության ամբաստանյալներից մեկը), նահանգապետի կարծիքն է հարցնում շրջանի քրդերի ու հայերի մասին՝ ՀԿ ստորաբաժանումներ ուղարկելու նպատակով:

Ապավինելով Դերսիմի քրդերի մեջ տիրող հայտնի կացությանը՝ հայերը խուսափել են հետապնդող ջոկատներից և, մտքներին հատուկ հեղափոխական նպատակ դրած, մտել են Դերսիմ՝ խառնաշփոթ առաջացնելու համար, արագ շահագործելու քրդերի թալանի, կողոպուտի հակումն ու ապստամբ միտումները, որոնցով նրանք վաղուց են հայտնի... և այնպիսի իրադրություններ, ինչպիսին են հազարավորների կողմից հայերին թաքցնելն ու կերակրելը, լավ հայտնի են, այդ երկու խմբերը նույնիսկ այնպիսի հարաբերություններ են դրսևորել, որոնք հասնում են միմյանց նկատմամբ սիրո. գործն այնտեղ է հասել, որ [երկու կողմերի] անպաշտոն, նույնիսկ չափազանց ազատ ու թեթև պահվածքը դրսևորվում է հրապարակավ: Այդ պատճառով կուզեի, որ հայտնիք իրադրության մասին ձեր տեսակետներն ու կարծիքները, որպեսզի իմանանք, որ, երբ ժամանակը պահանջի, կարող են ձեռնարկվել Հատուկ կազմակերպության նախատեսված քայլերը¹⁵⁸:

Այս բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև այստեղ նշելու համար չափազանց մեծաքանակ մյուս օրինակները հստակորեն ցույց են

158 BOA/DH.ŞFR, №53/222, Բանակային շտաբի (Ստամբուլում) լեյտենանտ գնդապետ Ջևդեղի ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի նահանգ, թվագրված 1915 թ. հունիսի 2:

տալիս, որ «ավագակախմբեր» ու «կամավորականներ» տերմիններն իրոք գործածվել են ՀԿ ստորաբաժանումների առնչությամբ, որոնց մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը շատ հստակ է: Բացի այդ, Ստամբուլի ռազմական տրիբունալների արձանագրությունները և սհաստատում են այն, ինչ տեսնում ենք Ստամբուլի Վարչապետական արխիվում պահպանված Ներքին գործերի նախարարության փաստաթղթերում:

ԸՆԴՄԱՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԵՐԺՎՈՒՄ ԵՐ ՈՐԵՎԷ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Նրանք, ովքեր պնդում են, թե տեղահանությունների ընթացքում հայերի կրած կորուստները կենտրոնացված քաղաքականության արգասիք չեն եղել, փորձում են մահերը կապել այնպիսի ընդհանուր պատճառների հետ, ինչպիսին են համաճարակներն ու սովը: Համաճայն այդ պնդումների, համաճարակներն ու սովն այնպիսի ընդհանուր խնդիրներ էին, որոնք ծառայում են եղել նաև մահամեղականների առջև: Նրանք ասում են, որ, չնայած դժվարին պայմաններին, օսմանյան կառավարությունն իր հնարավորությունների սահմաններում ամեն բան արել է և փորձել է օգնել հայերի շարասյուններին: Կառավարությունը նույնիսկ ընդունել է օտար երկրների կողմից օգնություն բաժանելու առաջարկը և աշխատել հայերի տառապանքները մեղմել: Ուսումնասիրենք Ներքին գործերի նախարարության իմ հավաքած փաստաթղթերը և տեսնենք, թե դրանք ինչ են բացահայտում այս հարցի վերաբերյալ:

Ճիշտ է, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում համաճարակները մեծաթիվ կյանքեր են խլել¹⁵⁹: Եվ իրոք ճիշտ է նաև այն, որ այդ ժամանակաշրջանում սովից ու հիվանդություններից տուժել են ոչ միայն հայերը, այլև մեծ թվով օսմանյան զինվորներ ու ամբողջ բնակչությունն առհասարակ: Այդուամենայնիվ, պատերազմի տարիներին հայերի առողջության և նրանց օգնության բաշխման խնդիրներին տարբեր վերաբերմունք է ցուցաբերվել: Օսմանյան կառավարությունը գիտակցաբար ու միտումնավոր կերպով որոշել է տեղահանված հայերի համար օգնության աշխատանքներ չկազմակերպել և մերժել է օտար երկրների օգնության առաջարկները՝ նույն-

իսկ հետագայում իրավական գործընթացներով սպառնալով այն մարդկանց ու հաստատություններին, որոնք մեղադրվում էին հայերին օգնելու մեջ կամ օգնության ցանկության մեջ: Ներքին գործերի նախարարության թղթերի մեջ այդ հարցի վերաբերյալ չափազանց կարևոր փաստաթղթեր կան: Դրանք հաստատում են այն պնդումները, որ օսմանյան կառավարությունը մերժել է արտասահմանից օգնության բոլոր առաջարկները և մտադիր է եղել ամբողջությամբ բնաջնջելու տեղահանվածների շարասյունները. պնդումներ, որոնք հաճախ են կրկնվում գերմանական ու ամերիկյան աղբյուրներում¹⁶⁰:

Այդ առումով, սխալ չի լինի խոսել աղբյուրների երեք տարբեր խմբերի միջև առկա ներքին հետևողականության մասին: Բացի այդ, Թուրքիայի կառավարության մի շարք պաշտոնյաներ, որոնք տվյալ ժամանակաշրջանում ծառայել են տարածաշրջանում, իրենց հուշերում պատմություններ են պատմում, որոնք համահունչ են օսմանյան Ներքին գործերի նախարարության և օտար երկրների (այն է՝ գերմանական ու ամերիկյան) արխիվներում գտնվող տվյալներին:

Հալեպի գավառապետ Ջելալ բեյն իր հուշերում (որոնք շարքով տպվել են «Vakit» օրաթերթում) գրել է.

Ես ընդունում եմ, որ չեմ հավատացել, որ այդ հրամանները, այդ գործողությունները պատվել են հայերին բնաջնջելու շուրջ: Ես երբեք չեմ պատկերացրել, որ որևէ կառավարություն կարող է հանձն առնել իր իսկ քաղաքացիների բնաջնջումն այս եղանակով՝ ըստ էության ոչնչացնելով իր մարդկային կապիտալը, ինչը պետք է համարվի երկրի մեծագույն գանձը: Ես ենթադրել եմ, որ իրականացվող գործողությունները եղել են հայերին պատե-

160 Օտարերկրյա օգնության առաջարկների և օսմանյան իշխանությունների կողմից դրանց մերժման վերաբերյալ կան մի շարք աշխատություններ: Դրանց մի քանի օրինակների համար տես Suzanne Elizabeth Moranian, *The American Missionaries and the Armenian Question: 1915–1927* (doctoral dissertation, University of Wisconsin-Madison, 1994); Barton, “Turkish Atrocities”; Rouben Paul Adalian, “American Diplomatic Correspondence,” Suzanne Elizabeth Moranian, “The Armenian Genocide and the American Missionary Relief Effort,” in *America and the Armenian Genocide of 1915*, ed. Jay Winter (Cambridge, Cambridge University Press, 2003), 146–214; Hilmar Kaiser, in collaboration with Luther and Nancy Eskijian, *At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915–1917* (Princeton and London, Gomidas Institute, 2002).

159 Պատերազմի ընթացքում բռնկված համաճարակների և դրանց պատճառած մահացությունների վերաբերյալ տես Hikmet Özdemir, *Salgın Hastalıklardan Ölümler, 1914–1918* (Ankara, Türk Tarih Kurumu, 2005):

րազմի թատերաբեմից ժամանակավորապես հեռացնելու միջոցառումներ և կատարվել են պատերազմական ժամանակաշրջանի թելադրանքով¹⁶¹:

Հետագայում նա ընդունել է, որ սխալվել է: Նա պնդում է, որ ոչ մի ուշադրության չեն արժանացել այն հեռագրերը, որոնք «գրել են Ներքին գործերի նախարարությանը»՝ խնդրելով «հատկացումներ տեղահանվելիք հայերի համար կացարաններ կառուցելու նպատակով»: Օգնության փոխարեն վարչակազմն ուղարկել է «մի պաշտոնյայի, որն ասել է, որ իրեն հանձնարարված է գաղթականների վերաբնակեցումը, սակայն որին իրականում հանձնարարված էր հայերին իրենց կանանց ու երեխաների հետ միասին տեղահանելու խնդիրը»: Ըստ Ջելալի, կատարվածը հայերին «բնաջնջելու փորձ» էր¹⁶²:

Հյուսեյին Քյազիմը, որին Ջեմալ փաշան նշանակել էր Սիրիա և Լիբանան համառոտ հայերին հատկացվելիք օգնության համակարգող, Դամասկոսում Գերմանիայի հյուպատոսությանը մի առիթով հայտնել է, որ «կառավարությունը բնավ ցանկություն չունեի օգնելու տեղահանված հայերին, և բոլորը վախենում էին, որ ծրագրված էր նրանց համակարգված բնաջնջումը. ոչնչացման այդ բարբարոս քաղաքականությունը Թուրքիայի համար խայտառակության խնդիր էր»¹⁶³: Իր հետագայում շարադրած հուշերում Հյուսեյին Քյազիմը, որն ի վերջո հրաժարական էր տվել, գրել է, որ «կառավարության դավադրությանը զոհ գնացած մարդկանց թիվը միայն Լիբանանում 200.000 էր»¹⁶⁴:

Չերքեզ Հասան բեյը (նույն ինքը՝ Չերքեզ բեռի Հասանը), որին նշանակել էին փոխարինելու Հյուսեյին Քյազիմին, կառավարության վերաբերմունքի մասին միևնույն բանն է ասում: Իր հուշերում նա նշում է, որ երբ անցել է պարտականությունների կատարմանը, տեղի քաղաքացիական ղեկավարներն իրեն ասել են. «Ուշադիր եղիր, որ այս գաղթականների հետ կապված հարցը վերջացնես այնպես,

161 Celal Bey, "Ermeni Vakâyi-i," Vakit.

162 Նույն տեղում:

163 DE/PA-AA/R 14092, Դեսպան Վոլֆ-Մեթերնիխի գեկույցը, թվագրված 1916 թ. հունիսի 19, դրան կցված Լոյթվեդ Հարդեգի գեկույցով, թվագրված 1916 թ. մայիսի 30:

164 Hüseyin Kâzım Kadri, Türkiye'nin Çöküşü (Istanbul, Hikmet Neşriyat, 1992), 255.

ինչպես հանգամանքներն են պահանջում», և բացատրել, որ ուզում են «հարցը լուծվի [հայերի] «գտնամբ»»¹⁶⁵: Ջեմալ փաշայից ստացած հաստուկ հրամանի համաձայն, կանտնավոր կերպով հայերի տեղահանությունները կազմակերպելուց հետո, Չերքեզ Հասան բեյն իմացել է, որ «այդ արդար ու մարդասիրական... քայլերը», որոնք ինքը կատարել է «թշվառ այդ զանգվածների համար... որոնց ցանկացել է մահից փրկել», համարվել են «հայրենիքի դավաճանություն»: «Դավաճան լինելու մեջ» մեղադրվելուց հետո նա ի վերջո ստիպված է եղել հրաժարվելու իր պաշտոնից¹⁶⁶:

Գերմանական ու ամերիկյան աղբյուրներում լեցուն ապացույցներ կան, որոնք ցույց են տալիս, որ կառավարության կողմից տեղահանվածներին համակարգված որևէ օգնություն չի ցուցաբերվել, իսկ օգնության դրսի փորձերը հետևողականորեն մերժվել են: Տեղահանությունների առաջին օրերին իսկ Ստամբուլում Գերմանիայի դեսպանությունն սկսել է զեկույցներ ուղարկել Բեռլին, որոնցում նշում էր, որ օսմանյան կառավարությունը «տեղահանության [շարայուններին] ոչ փողի, ոչ ուտելիքի և ոչ էլ որևէ այլ տեսակի օժանդակություն» չի տրամադրել¹⁶⁷: Գերմանացի պաշտոնյաները տարածաշրջանից հաճախ էին լուրեր հաղորդում այն մասին, որ «կառավարությունը ճկույթն էլ չի շարժել տեղահանվածների օգնության փշրանք տրամադրելու համար, իսկ ոստիկանները, որոնք որդեգրել են իրենց հրամայողների կեցվածքը, եթե ինչ-որ բան էլ արել են, իրենց ձեռքից եկածն արել են՝ հայերի առանց այդ էլ կրած տառապանքներն ու դաժանությունը սաստկացնելու համար»¹⁶⁸:

Գերմանացի միսիոներները նույնպես հաղորդել են, որ «Թուրքիայի կառավարությունը... անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել՝ կանխելու համար տեղահանվողների սովամահությունը», և մերժել է «կանանց ու երեխաներին, նույնիսկ ծանր վիճակում գտնվողներին

165 "Tehcirin İç Yüzü," 1919 թ. հունիսի 26:

166 Alemdar, 1919 թ. հունիսի 27:

167 DE/PA-AA/R 14086, Դեսպան Վանգենհայմի գեկույցը կանցելը Բեթման-Հովեգին, թվագրված 1915 թ. հունիսի 17:

168 DE/PA-AA/Bo.Kons., vol. 170, Լեյտենանտ գնդապետ Շտանգելի (Ստամբուլում) գեկույցը Գերմանիայի ռազմական առաքելությանը, թվագրված 1915 թ. օգոստոսի 23:

օգնություն հասցնելու ջանքերը»¹⁶⁹։ Օսմանյան կառավարությունում Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մեթերնիխը 1915 թ. դեկտեմբերի 27-ի իր զեկույցում գրել է, որ օսմանյան կառավարությունն ահռելի խոչընդոտներ է հարուցել օգնության բոլոր առաջարկների առջև¹⁷⁰։

Այդ երևույթի մասին համեմատաբար մեծաքանակ տեղեկություններ կան նաև Միացյալ Նահանգների արխիվներում։ Ամերիկյան միսիոներները և տարածաշրջանում տեղակայված ուրիշներն իրենց վերադասներին զեկույցել են իրենց տարածքներ հասած կարիքավոր հայերին օգնելու հարցում օսմանյան պաշտոնյաների անզիջողականության մասին։ Օրինակ, այդ ժամանակամիջոցում Քոնյայում ծառայող դր. Վիլյամ Ս. Դոդդը 1915 թ. մայիսի 6-ին դեսպան Մորգենթաուին գրել է հետևյալը.

Ես գնացի ոստիկանության մուդիրի (կոմիսարի) մոտ, նրանց տեսնելու թույլտվություն խնդրեցի և մերժվեցի։ Երկրորդ անգամ գնացի, թույլտվությունը տրվեց՝ ոստիկանական պաշտոնյայի ներկայությամբ, որպեսզի շատ քիչ տեղեկություն կարողանամ ստանալ։ Ես նորից գնացի և թույլտվություն խնդրեցի նրանց Կարմիր խաչի անունից օգնություն տալու... Մուդիրը մերժեց թույլտվությունը՝ ասելով, որ սպասեմ, մինչև վալին [գավառապետը] գա։ Վալին անցյալ գիշեր եկավ, և ես նրան այցելեցի այսօր։ Նա ինձ ասաց, որ նրանք ոչ մի բանի կարիք չունեն, և ինձ թույլ չի տրվի օգնություն տալ։ Խնդրեցի նրանց տեսնել, և նա ինձ մերժեց¹⁷¹։

Այդ զեկույցների հիման վրա դեսպան Մորգենթաուն Վաշինգտոնի իր վերադասներին գրել է, որ ամերիկացի միսիոներները

169 DE/PA-AA/Bo.Kons., h. 171, Կանցլեր Բեթման-Հոլվեգի զեկույցը Ստամբուլում Գերմանիայի դեսպանությանը, թվագրված 1915 թ. նոյեմբերի 10: Այդ նամակում վարչապետը Գերմանիայի դեսպանին ատում է. «Ես խորհուրդ կտայի հայերի հարցով գործածել ձեր ազդեցությունը Բարձր դռան վրա, և մասնավորապես մեծ ուշադրություն դարձրեք, որ Բարձր Դռան [վարքի] չափանիշներն այնպես չընդլայնվեն, որ ընդգրկեն Թուրքիայի մնացած քրիստոնյա բնակչությանը»:

170 DE/PA-AA/R 14089, Դեսպան Վոլֆ-Մեթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 27:

171 Վիլյամ Ս. Դոդդի զեկույցը (Քոնյայից), թվագրված 1915 թ. մայիսի 6, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 37 (LC/HM/Sr./Reel 7/555):

զրկված են հայերին հարկ եղած որևէ օգնություն ցուցաբերելու հնարավորությունից¹⁷²։

Հարկավոր է ավելացնել, որ օսմանյան կառավարությունը չէր էլ թաքցնում իր այդ քաղաքականությունը։ Պաշտոնյաները բացեփառ և հաճախակի կրկնում էին, որ որևէ օգնություն չեն ընդունի։ 1915 թ. օգոստոսի 20-ի իր զեկույցում դեսպան Մորգենթաուն գրել է, որ կառավարությունը կանխել է Ուրֆա ուղարկված նպաստամատույց ապրանքների բաշխումը, և որ ներքին գործերի նախարար Թալեթ փաշան փաստորեն իրենից պահանջել է, որ հետ կանչվեն շրջաններում տեղակայված այն հյուպատոսները, որոնք կփորձեն օգնություն հասցնել շրջան¹⁷³։ Գրեգ Յանգը, որը պատերազմի ժամանակ ծառայել է Դամասկոսի ամերիկյան հյուպատոսությունում, պատմել է, որ մի խոսակցության ընթացքում նա Ջեմալ փաշային ասել է, որ «եթե [օսմանյան] կառավարությունը թույլ տա... կարող եմ Ամերիկյան կարմիր խաչից ֆոնդեր ապահովել՝ օգնելու համար այն մարդկանց, ովքեր անկասկած խիստ կարիքավոր կլինեն»։ Ջեմալ փաշան պատասխանել է, որ «կառավարությունը նման բան թույլ չի տա, և որ կառավարությունը հնարավոր ամեն բան անում է՝ մատակարարելով ուտելիք, վրաններ և այլն»¹⁷⁴։

Յանգը ճամփորդել է Դամասկոսի մոտ գտնվող այն շրջանը, որը գործածվում էր իբրև տեղահանված հայերի ճանապարհային կայանատեղի, և անմիջականորեն տեղեկություններ է հավաքել. մի քայլ, որը նրան բոլորովին չի դարձրել իթթիհադական ղեկավարների սիրեցյալը։ Երբ Ջեմալ փաշան Պատերազմի նախարարությանը զեկույցել է, որ ամերիկյան հյուպատոսը «մտահոգված է հայերի հարցով», օսմանյան ներքին գործերի նախարարի տեղակալը կապվել է դեսպան Մորգենթաուին հետ և փոխանցել Բարձր դռան պահանջը, որ դեսպանը կայսրությունում գտնվող ամերիկյան բոլոր հյուպատոսներին հրահանգի չխառնվել Օսմանյան կայսրության ներքին

172 Օրինակ, տե՛ս NA/RG 59, 867.4016/90, Դեսպան Մորգենթաուի զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1915 թ. օգոստոսի 11, նույն տեղում, 77:

173 NA/RG 59, 867.4016/100, Դեսպան Մորգենթաուի զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1915 թ. օգոստոսի 20, նույն տեղում, 122:

174 NA/RG 59, 867.4016/212, Միացյալ Նահանգների Դամասկոսում հյուպատոսության պաշտոնյա Գրեգ Յանգի զեկույցը դեսպան Մորգենթաուին (Ստամբուլում), թվագրված 1915 թ. սեպտեմբերի 20, նույն տեղում, 296:

գործերին: Մորգենթաուն, որը իրադրության մասին զեկուցել է իր վերադասներին, 1915 թ. նոյեմբերի 29-ին գրել է, որ «պատերազմի և արտաքին գործերի նախարարները բազմիցս ինձ ասել են, որ առարկում են ամերիկացիների կողմից հայերին օգնության բաշխմանը, քանի որ օտարերկրացիների օգնությունը խրախուսում է հայերի նման իդեալիստների դիմադրությունը կառավարությանը, թեև ուրիշ դեպքերում կառավարությունն ընդունել է, որ հայերն ի վիճակի չեն արդյունավետ կերպով ընդդիմանալու կառավարությանը»: Նա ավելացրել է, որ օսմանյան պաշտոնյաները պահանջում են հայերի համար օգնությունները տալ ուղղակի օսմանյան վարչակազմին¹⁷⁵:

Օսմանյան պաշտոնյաների ու քաղաքական գործիչների հետ դեսպան Մորգենթաունի զեկուցած անհամար հանդիպումներից մեկը տեղի է ունեցել օսմանյան Պատգամավորների պալատի խոսնակ Հալիլ Մենթեշեի հետ, 1915 թ. նոյեմբերի 12-ին: Նա հաղորդել է, որ Հալիլ Մենթեշեն կրկնել է հարցի շուրջ կառավարության դիրքորոշումը, հղել է պատերազմի նախարարի բառերը. «Էսվեր փաշայի կարծիքն այն է, որ ոչ մի օտարերկրացի չպետք է օգնի հայերին: Նրա պատճառները ճիշտ են, թե սխալ՝ ես ձեզ եմ հաղորդում այնպես, ինչպես կան: Էսվեր փաշան նշում է, որ հայերը իդեալիստներ են, և հենց որ իրենց մոտեցող ու օգնող օտարերկրացի տեսնեն, կխրախուսվեն նրանց ազգային իդեալները: Այդ պատճառով նա ցանկանում է կտրել և ընդմիշտ խզել հայերի ու օտարերկրացիների միջև բոլոր հարաբերությունները»¹⁷⁶:

Սիրիայում Ջեմալ փաշային ուղղված խնդրանքները կտրակապապես մերժվել են՝ այն պատճառաբանությամբ, որ դրա դեմ մայրաքաղաքից խիստ հրամաններ են ստացել: Այդ բացատրությունն, ի թիվս այլոց, տրվել է Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյթվեյին, որն առաջարկել էր տեղահանվողներին մարդասիրական օգնություն հատկացնել. «Երեք շաբաթ առաջ Դամասկոսում հաստատված գերմանացի միսիոներ Հանտերի խորհրդով ես ցանկացա Դամասկոսի ու շրջակայքի հայերի համար ճաշարան, բաղնիք ու որ-

բանոց հիմնել: Ջեմալ փաշային տեղեկացրի դրա մասին: Նա ինձ ասաց... որ Ստամբուլից հստակ ցուցումներ է ստացել՝ կանխելու գերմանացիների ու ամերիկացիների մասնակցությունն օգնության գործողություններին¹⁷⁷: Երբ հարցրեցի, թե ինչու են օգնության նման առաջարկները մերժվում, Ջեմալ փաշան բացատրեց, որ «հայերն ընդդիմանում են Թուրքիայի կառավարությանը, և եթե նրանց ցույց տրվի, որ այլևս օգնություն չեն կարող ակնկալել օտար երկրների կառավարություններից, նրանց ոգին կկտորվի»¹⁷⁸:

Ոչ միայն անհատական դիմումները, այլև օգնություն տրամադրելու մասին Գերմանիայի ու Ամերիկայի կառավարությունների պաշտոնական առաջարկները դեմ էին առնում փակ ականջների: 1916 թ. ապրիլի 28-ին գրած զեկույցում Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մաթերնիխը Բեռլինում իր վերադասներին տեղեկացրել է, որ օսմանյան կառավարությունը մերժել է տեղահանվող շարասյուններին օգնելու իր առաջարկը՝ բացատրելով, որ «[կառավարությունը] ոչ մի կերպ չի կարող հայերին օտարերկրյա օգնություն թույլ տալ, քանի որ դա միայն կմեծացնի դրսից օգնություն ստանալու նրանց հույսերը»: Այնուհետև դեսպանն ավելացրել է, որ «այս պատասխանը բառ առ բառ նույնն է, ինչ Դամասկոսում հյուպատոս Լոյթվեյին Ջեմալ փաշայի տված պատասխանը»¹⁷⁹:

Տեղահանվող հայերին օգնություն տրամադրելու ամերիկյան կառավարության առաջարկը նույնպես մերժվել է: Դեսպան Մորգենթաուն, որը 1916 թ. հուլիսի 26-ին այդ հարցի վերաբերյալ երկար զեկույց է ուղարկել Վաշինգտոն, մանրամասն հաղորդել է օգնության իր առաջարկի մերժման մասին օսմանյան կառավարությունից ստացած պատասխանը: Դեսպանի պատմության մեջ կարևոր նշանակություն ունի նրա խնդրանքը մերժած Իթթիհադական կուսակցության մի բարձրաստիճան անդամի այն պնդումը, թե տեղահանությունների ընթացքում հայերը զոհվում են սովի պատճառով: Եվ նախարարը Անտանտի ուժերին մեղադրել է հայերի մահերի ու կրած փորձությունների մասին լուրերը չափազանցնելու մեջ, որն արվում է

175 NA/RG 59, 867.48/199, Դեսպան Մորգենթաունի զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1915 թ. նոյեմբերի 29, նույն տեղում, 388:

176 Արտաքին գործերի նախարար Խալիլ բեյի հետ դեսպան Մորգենթաունի զրույցը Ամերիկայի դեսպանությունում 1915 թ. նոյեմբերի 12-ին, նույն տեղում, 346 (LC/HM[Sr.]/Reel 22/560-61):

177 DE/PA-AA/R 14090, Դեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. մարտի 29:

178 Նույն տեղում:

179 DE/PA-AA/R 14091, Դեսպան Վոլֆ-Մաթերնիխի զեկույցը կանցլեր Բեթման-Հոլվեգին, թվագրված 1916 թ. ապրիլի 28:

երկու տարբեր նպատակի հասնելու համար: Առաջինը Միացյալ Նահանգների ու Օսմանյան կայսրության հարաբերություններում ճեղքվածք առաջացնելն է՝ քարոզչություն ստեղծելով, թե վերջինս մերժում է օգնության առաջարկները, իսկ երկրորդ նպատակը Մի-րիայի ու Լիբանանի բնակչության աչքին Անտանտի տերություններին ավելի մարդասեր ու բարեգութ ներկայացնելն է: Սովերի մահերի և նման բաների մասին ամբողջ աղմուկ-աղաղակը բարձրացվում է՝ Մեքքայում բռնկվածի նման մի ապստամբություն էլ Մի-րիայում սադրելու համար¹⁸⁰:

Բացի այդ, նման բացատրություն տալով, օսմանյան նախարարը փաստորեն ժխտել է, որ սով է եղել: Կառավարությունը մերժել է օգնություն բաժանելու չեզոք կողմերի առաջարկները, որովհետև այդ մարդիկ (ովքեր օգնություն կատանային) կենթարկվեին օտարերկրյա քարոզչության, իսկ դա կհանգեցներ կայսրության ներքին գործերին օտարերկրացիների միջամտության¹⁸¹: Ստամբուլում ամերիկյան դեսպանության մեկ այլ, 1916 թ. օգոստոսի 12-ով թվագրված զեկույ-ցից երևում է, որ օսմանյան արտաքին գործերի նախարարը ևս կրկնել է, որ օսմանյան կառավարությունը երբեք չի արտոնի, որ չեզոք հանձնախումբը Միրիայում ու Լիբանանում օգնություն բաժա-նի¹⁸²:

Ամերիկացիների զեկույցներում օսմանյան արտաքին գործերի նախարարին վերագրվող միևնույն բառերը, իբրև կառավարության քաղաքականություն, Թալեաթ փաշան կրկնել է Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային ուղղված իր հեռագրում: 1916 թ. հուլիսի 12-ին նա գրել է, որ «[Միացյալ Նահանգներում] սիրիացիները, վշտացած սովից մեռնող հազարավոր սիրիացիների մասին ամե-րիկյան մամուլում իրենց տեսած հաղորդումներից, դիմել են ամե-րիկյան կառավարությանը, որ օգնի իրենց հայրենակիցներին»՝ խնդրելով փող ու նյութական օգնություն: Մեկ այլ տեղ ներքին գոր-

ծերի նախարարը հաղորդում է, թե «Միրիայում ոչ ոք սովից չի մահացել, և [օսմանյան] արտաքին գործերի նախարարը բանավոր դրվատվել է Միրիայի տնտեսական պայմանների համար», և ասում է, որ ամերիկացիներին տրվել է հարկ եղած տեղեկությունը¹⁸³: Ի վերջո, կարծես թե, արտաքին գործերի նախարարը Թալեաթի խոս-քերն է հաղորդել դեսպան Մորգենթաուին:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՅԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ Ե ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ

Իրադրության զարգացումներին կարելի է հետևել Ներքին գոր-ծերի նախարարության արխիվներում գտնվող փաստաթղթերով: Իր կողմից օգնություն հատկացնելու կամ այլոց այդ անել արտոնելու հարցում կառավարության վերաբերմունքը պարզորոշ կերպով ներ-կայացրել է Թալեաթ փաշան 1916 թ. ապրիլի 8-ին Ջեմալ փաշային ուղղած և «հրատապ, գաղտնի ու անձնական» մակագրած իր հեռա-գրում:

Ես խոսեցի Էնվեր փաշայի հետ: Մենք չենք ուզում թույլատրել երրորդ կողմերին օգնություն տալ հայերին և չենք ցանկանում նրանց այն զգացումը հաղորդել, թե օգնություն ու պաշտպա-նություն կատանան օտարներից: Այդ պատճառով նպատակա-հարմար է, որ նրանց տրվեն վճարման ստացականներ այն փո-ղի դիմաց, որ ցանկանում են բաժանել, իսկ բուն փողը [կրածանվի] կամ տեղական վարչակազմի, կամ պետական պաշտոնյաների միջոցով և այն ձևով, որ նրանք հարմար կհա-մարեն¹⁸⁴:

Թալեաթի և Էնվերի միջև թղթակցությունից բխում է, որ օսման-յան վարչակազմը ոչ թե սուկ մերժել է օգնության առաջարկները, այլև ջանացել է ապահովել, որ օտարերկրացիները չկարողանան ազատ շրջել Անատոլիայում և Միրիայի ու Իրաքի անապատներում,

180 NA/RG 59, 867.48/362, Կոպենհագենում ամերիկյան դեսպանորդ Հոֆման Ֆիլիպի (Կոստանդնուպոլսից՝ ուղարկված Կոպենհագենով) զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1916 թ. հուլիսի 26, գտնվում է United States Official Records, ed. Sarafian, 529:

181 Նույն տեղում:

182 NA/RG 59, 867.48/390, Հոֆման Ֆիլիպի (Կոստանդնուպոլսից՝ ուղարկված Կոպենհագենով) զեկույցը Պետական քարտուղարությանը, թվագրված 1916 թ. օգոստոսի 12, United States Official Records, ed. Sarafian, 531:

183 BOA/DH.SFR, № 65/180, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-գրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1916 թ. հուլիսի 12:

184 BOA/DH.SFR, № 62/276, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկա-գրված հեռագիրը Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային, թվագրված 1916 թ. ապրիլի 8:

որպեսզի կանխվի տեղահանված հայերի շարասյունները սեփական աչքերով տեսնելու և նրանց հետ շփման մեջ մտնելու հնարավորությունը: Բազմաթիվ հեռագրեր են ուղարկվել նահանգներ՝ ճշգրիտ տեղեկություններ հաղորդելով որոշակի օտարերկրացիների ու օսմանյան քաղաքացիների շարժերի վերաբերյալ, այդ թվում և նրանց մեկնումի և ակնկալվող ժամանման ամսաթվերն ու երթուղին, և պահանջվել է, որ տեղական պաշտոնյաները ձեռնարկեն հարկ եղած քայլերը՝ ապահովելու համար, որ այդ մարդիկ իրենց ճամփորդության ընթացքում չհանդիպեն տեղահանված հայերի թափոռներին:

Բերենք մեկ օրինակ. Ուրֆայի գավառապետին ուղղված 1915 թ. դեկտեմբերի 20-ի իր հեռագրում Թալեաթ փաշան նշել է, որ «ներկայումս Ուրֆայում գտնվող թշնամական պետությունների քաղաքացիների մի մասին պետք է ուղարկել Կեսարիա ու Նիղդե: Նշված անձինք իրենց ճամփորդությունների ընթացքում չպետք է հանդիպեն հայերի շարասյուններին»¹⁸⁵: Համանման բովանդակությամբ մեկ այլ հեռագիր ուղարկվել է բոլոր նահանգների, շրջանների ու մարզերի պաշտոնյաներին¹⁸⁶:

Անատոլիայում ու Լևանտում ճամփորդող օտարերկրացիների կողմից տեղահանված հայերին հանդիպելու հնարավորությունը կանխելու համար ձեռնարկված քայլերին զուգահեռ, միջոցներ են ձեռնարկվել նաև ճանապարհին ընկած մահացած գաղթական տեսնելու հավանականությունից խուսափելու ուղղությամբ, քանի որ հատուկ ուշադրություն է հատկացվել օտարերկրացիների ուղևորության ճանապարհներից դիակները հավաքելուն: Ճանապարհներից դիակները հեռացնելու վերաբերյալ Առաջին գլխում հղված փաստաթղթերից բացի, արևելյան Անատոլիայում գտնվող միսիոներների զեկույցները մասնավորապես լեցուն են այդ ուղղությամբ ձեռնարկված արտակարգ ջանքերի մասին ականատեսների պատմություններով: Օրինակ, Խարբերդում (Մամուրեթյուլագիզ) գործող ամերիկյան միսիոներ Հենրի Ռիզան իր հուշերում գրել է Խարբերդ ուղևորվելիս իրեն պատահած դիակների մասին: Նա բացատրել է նաև, որ ինքն անցել է շատ տեղերով, որոնք ակնհայտորեն վերջերս «մաքրված» են եղել, ինչի մասին էին վկայում բազմաթիվ նոր փորված գերեզ-

մանները, իսկ ավելի հաճախ՝ մակերեսային գերեզմաններն ու հապճեպ (և վատ) թաղված դիակները: Բացի այդ, Ռիզաը գրել է նաև, որ այն գյուղերի բնակիչները, որոնցով իրենք անցել են, իրեն պատմել են, որ կառավարական աշխատողներ են եկել և իրենց ստիպել դիակները մի տեղ հավաքել և այրել՝ ասելով, որ «[օտարերկրյա] որոշ հյուպատոսներ պետք է գան այդ ճամփով»¹⁸⁷:

Ներքին գործերի նախարարության փաստաթղթերի մեջ կան այնպիսիք, որոնք վերաբերում են այն օտարերկրացիների դեմ անցկացված հետաքննություններին, որոնք ցանկացել են հայերի շարասյուններին օգնություն հատկացնել: Այսպես, 1915 թ. դեկտեմբերի 11-ին Հալեայի գավառապետին ուղարկված հեռագրում Թալեաթ փաշան գրել է, որ «Գաղթականների գործերի տնօրեն Շյուքրյու բեյը զեկույցել է, որ մի քանի գերմանացի ինժեներներ ներկայումս գտնվում են [Դեր] Ջորի շրջակայքում և պատրաստվում են գործի անցնել՝ ապահովելու համար վերջին ամիսներին տեղահանված չորս-հինգ հարյուր հայերի վերադարձն իրենց տները՝ իրենց ընտանիքների անդամների հետ միասին»: Թալեաթը շարունակել է՝ ասելով, որ «համաձայն Պատերազմի նախարարությունից եկած պատասխանի, այդ մարդկանց ինքնությունը և այս տեսակի քայլով միջամտելու նրանց նպատակն անհայտ է մնում»: Այնուհետև նա պահանջել է, որ գավառապետը շարունակի այդ գործի հետաքննությունը և դրա արդյունքների մասին տեղեկություններն ուղարկի իրեն»¹⁸⁸:

Երբ լուրեր են ստացվել, թե ամերիկյան դեսպանությունը փորձում է տեղահանվածներին օգնելու աշխատանքներ կազմակերպել, օսմանյան Պատերազմի նախարարությունը 1916 թ. հունվարի 21-ին Ներքին գործերի նախարարությանը մի գրություն է ուղարկել՝ տեղեկացնելով, որ իրեն հայտնի է դարձել, որ հայերին «գաղտնի կերպով» փող ու նյութական օգնություն է բաժանվում, և պահանջել է «այդ հարցով հանգամանալի հետաքննություն անցկացնել և արդյունքների մասին զեկույցել [Պատերազմի նախարարություն]»¹⁸⁹:

187 Leslie A. Davis, *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, ed. Susan K. Blair (New Rochelle, NY, Aristide D. Caratzas, 1989), 25.

188 BOA/DH.SFR, № 58/258, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեայի նահանգ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 11:

189 «Ալի Սելդի» ստորագրությամբ փաստաթուղթը՝ ուղարկված ներքին գոր-

185 BOA/DH.SFR, № 59/40, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Ուրֆայի գավառ, թվագրված 1915 թ. դեկտեմբերի 20:

186 BOA/DH.SFR, № 59/46, 47, 49.

Դրան ի պատասխան, Թալեաթ փաշան հունվարի 30-ին հեռագիր է ուղարկել բոլոր նահանգներն ու շրջանները՝ հրամայելով, որ այդ իրադրության առնչությամբ գաղտնի հետաքննություն իրականացվի:

Հաղորդվել է, որ ավելի վաղ, ինչպես նաև վերջերս, Ամերիկայում ապրող հայերը հսկայական գումարների փող են ուղարկել՝ բավարարելու համար օսմանյան տիրույթների հայերի կարիքները, և որ այդ փողերը բաժանվում են գաղտնի միջոցներով: Այդ հարցով խիստ գաղտնի ու հանգամանալի հետաքննություն անցկացնելուց հետո զեկուցեք, թե այդ միջոցներով փող ուղարկվել է արդյոք այնտեղ, և ովքեր են եղել եկող փողերը հայերին բաժանողները¹⁹⁰:

Հետաքննության այդ պահանջին 1916 թ. փետրվարի 6-ին հաջորդել է մեկ այլ հրաման՝ պահանջելով, որ ամերիկյան հյուպատոսության կամ միսիոներների կողմից հայերին բաժանված փողը բռնագրավվի, որպեսզի կառավարությունը այն բաժանի¹⁹¹:

Հատուկ ծանուցում է ուղարկվել հայերի շարասյուների տարածքներին մոտեցող օտարերկրացիներին, և երբ նման դեպքերի մասին լուրեր են ստացվել, տեղական պաշտոնյաներին հրահանգներ են հղել՝ պահանջելով անմիջական քայլեր ձեռնարկել, որպեսզի օտարերկրացիները կապի մեջ չմտնեն տեղահանվածների հետ: Թալեաթ փաշան խնդրո առարկա նահանգներ ու շրջաններ ուղարկած մի հեռագրով պաշտոնյաներին հայտնել է հետևյալը:

ծերի նախարարությանը, թվագրված 1916 թ. հունվարի 21, գտնվում է հետևյալ տեղում. Askeri Tarih Belgeleri Dergisi 32, № 83 (մարտ 1983), 161, փաստ. № 1923:

190 BOA/DH.SFR, № 60/178, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Ասկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուդավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Քոնյայի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Կարահիսար-ի Մահիբի (Աֆյոն Կարահիսար), Իչելի, Նիդեի, Ջանկի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Բյուրսայի, Էսքիշեհիրի ու Մարաշի գավառներ, թվագրված 1916 թ. հունվարի 30:

191 BOA/DH.SFR, № 60/281, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ և Կեսարիայի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 6:

Քանի որ անընդունելի է, որ ամերիկյան քաղաքացիություն ունեցող որոշ օտարերկրացիներ ու վաճառականներ գնան ու գան այն տարածքներով, ուր տեղահանված ու վերաբնակեցված են հայերը, կամ նույնիսկ օսմանյան որոշ ոչ-մահմեդական վաճառականներ առևտրական նպատակներով շրջեն այդ վայրերում, կառավարությունը այդպիսի անվստահելի մարդկանց պետք է չտա ճամփորդելու ու տեղաշարժվելու որևէ արտոնություն¹⁹²:

Ձեռնարկված այս միջոցների մասին Թալեաթ փաշան անձամբ, 1916 թ. մարտի 26-ով թվագրված պաշտոնական գրությամբ, զեկուցել է օսմանյան Բարձրագույն հրամանատարությանը: Թալեաթը գրել է, որ «[տեղացի] հայերի կարիքների բավարարման համար [արտասահմանից] ուղարկված փողերի բաժանման մեջ ներգրավված մարդկանց ու մեթոդների մասին լուրերը հետաքննվել են և հաղորդվել համապատասխան նահանգներ և այն շրջաններ, որոնք ոչ մի նահանգի կապված չեն», ապա ավելացրել է, որ «այդ հարցով հրահանգներն ու վերջնական որոշումը [թե ինչ անել] Բարձր հրամանատարության գրասենյակի առանձնաշնորհն են»¹⁹³:

Օսմանյան զինված ուժերի հրամանատար Էնվեր փաշան իր պատասխանի մեջ պահանջել է «խստիվ պատժել պետական այն ծառայողներին ու պաշտոնյաներին, որոնք կամ թույլատրել են հայերին գաղտնի փող բաժանել, կամ տեղյակ են դրան»¹⁹⁴: Այն հանգամանքը, որ այս թղթակցությունն ու որոշումները տեղի են ունեցել 1916 թ. մարտին, շատ կարևոր է: Ինչպես վերը տեսանք, սա համընկնում է տեղահանության վայրերում ճամփորդող ինժեներների հանդեպ արգելքին: Հստակ է, որ այդ քայլերը ձեռնարկվել են՝ ցեղասպանության երկրորդ փուլը կազմակերպելու համար:

192 BOA/DH.SFR, № 61/32, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեպի, Ադանայի, Մոսուլի ու Դիյարբեքիի նահանգներ և Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1916 թ. փետրվարի 13:

193 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 2, 5. Փաստաթղթի ամսաթիվը սխալ է վերադասարկված՝ իբրև 1916 թ. մարտի 25: Ճիշտ ամսաթիվն է մարտի 26, տե՛ս 299:

194 Genelkurmay Başkanlığı, Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, h. 2, 5. Փաստաթուղթը պատճենելիս սխալ է տեղի ունեցել. փաստաթղթի իրական ամսաթիվն է 1916 թ. մարտի 28, մինչդեռ վերադասարկված է իբրև 1917 թ. հունվարի 28 (նույն տեղում, 300):

Երբեմն գաղտնի հետաքննություններ էին պատվիրվում կապալակելի համարվող անձանց նկատմամբ: Օրինակ, 1916 թ. փետրվարին Անկարայի նահանգ ուղարկված մի հեռագրով պահանջվում է «հոց գաղտնի ձևով հետաքննություն [սկսել] Դրավիերդանքլի [?] անունով մի ամերիկացու հանդեպ, որը Չորումից նամակ է ուղարկել ամերիկյան դեսպանին՝ ներփակելով [հավաստելով] իր ինքնությունը ինչ է այդ տարածքներում նրա ճանփորդելու նպատակը, և նա հայերին մթերք բաժանում է արդյոք»¹⁹⁵: Եվ սակայն, չնայած կառավարության կողմից կանխարգելիչ զանազան միջոցառումներին, գերմանական և ամերիկյան նպատամատուց գործակալությունների միջոցով շարունակվում էր տեղահանված հայերին դրամական և նյութական օգնությունը:

Արձագանքելով այդ հարցով շարունակվող լուրերին՝ մարտի 23-ին բազմաթիվ նահանգներ ու շրջաններ է ուղարկվել մեկ այլ հրաման, որի մեջ կրկնվում էր նման գործողությունները կասեցնելու մասին կառավարության պահանջը. «Հայտնի է դարձել, որ որոշ շրջաններում ամերիկյան ու գերմանական հաստատությունների կողմից [շարունակվում է] փողի բաժանումը հայերին: Քանի որ անհրաժեշտ է, որ հայերին բաժանվելիք ամբողջ փողը բաշխվի վարչական պաշտոնյաների ղեկավարության ներքո գործող ծառայողների միջոցով, չի թույլատրվում բաժանումը կատարել որևէ այլ ձևով»¹⁹⁶: Նույն բովանդակության հրաման է ուղարկվել երեք օր անց՝ ի պատասխան տարածքում ամերիկյան հյուպատոսների գործունեության վերաբերյալ զեկույցների, որոնցով տեղեկություն էր հաղորդվում, որ ամերիկացիները, փող բաժանելու նպատակով, ցանկանում էին մի շարք մարդկանց ուղարկել այն տարածքներ, որտեղ

195 BOA/DH.SFR, №61/48, Ներքին գործերի նախարարության Ավտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916 թ. փետրվարի 19:

196 BOA/DH.SFR, №62/90, Ներքին գործերի նախարարության Ավտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլազիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Իչելի, Քյութահյայի, Էսքիշեհիրի, Բոլուի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Մարաշի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար) ու Նիդղեի գավառներ, թվագրված 1916 թ. մարտի 23:

իրենք հյուպատոսություններ չունեին: Հրամանում շեշտվում էր, որ դրամական կամ նյութական որևէ օգնություն պետք է բաժանվի տեղական կառավարական պաշտոնյաների միջոցով¹⁹⁷:

Շատ հաճախ էին հեռագրեր ուղարկվում նահանգներ, որոնցով պահանջվում էր տարածաշրջան հասնող օգնության աղբյուրների և դրանց բաշխման մեջ կասկածվող մարդկանց ու հաստատությունների հետաքննություն անցկացնել: 1916 թ. մարտի 30-ին Թալեաթ փաշայի ուղարկված ընդհանուր հաղորդագրությամբ, օրինակ, պահանջվում էր հետաքննություն սկսել մի ընկերության (և դրա աշխատողների) գործով, որն օգտագործվում էր հայ գաղթականներին օգնություն բաժանելու նպատակով:

Խնդրեմ հանգամանալի հետաքննություն կատարեք և զեկույցեք, թե Արբոնասյան առևտրի տունն արդյոք մասնաճյուղեր ունի ձեր նահանգում/գավառում, թե նրանք գործել են իբրև օտար քաղաքացիությամբ հայերի կամ ամերիկյան հյուպատոսությունների ուղարկված փողերի առաքման ու բաժանման միջնորդներ, և [պետական] այն պաշտոնյաների կարգավիճակն ու գործողությունները, որոնք նրանց օգնել են [իրենց գործերում]¹⁹⁸:

Երեք ամիս անց ուղարկված մեկ այլ հեռագրում տեղական պաշտոնյաներին կարգադրվում է հետևել հայերի համար ուղարկված փողերի դատավարությանը. «Իմացել ենք, որ ամերիկյան դեսպանությունը Օտոման բանկի միջոցով 50.000 լիրա է ուղարկել՝ Սիրիայի շրջակայքի տեղահանված հայերի մեջ բաժանելու համար, և որ այդ փողը հասել է Երուսաղեմ: Խնդրեմ արագ հետաքննություն անց-

197 BOA/DH.SFR, №62/129, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Անկարայի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Չաթալջայի, Քարեսիի (Բալիքեսիր), Մենթեշեի, Քյութահյայի, Իչելի, Էսքիշեհիրի ու Նիդղեի գավառներ, թվագրված 1916 թ. մարտի 26:

198 BOA/DH.SFR, №62/181, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Ադիսի, Բիթլիսի, Հալեպի, Հյուղավենդիզարի (Բուրսա), Դիյարբեքրի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի ու Մամուրեթյուլազիզի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, (Դեր) Ջորի, Քարեսիի (Բալիքեսիր) Կեսարիայի, Մարաշի, Նիդղեի, Քյութահյայի, Էսքիշեհիրի ու Իչելի գավառներ, թվագրված 1916 թ. մարտի 30:

կացրեք և հաղորդեք այն մարդկանց ինքնությունը, որոնց բաժանվել են փողերը, և բաժանման նրանց միջոցները»¹⁹⁹:

Կառավարության համար կարևոր փորձություն էր տեղի այնպիսի պաշտոնյաների գոյությունը, որոնք կամ շարունակում էին օգնել գաղթական հայերին, կամ այք էին փակում այդ բանն անողների հանդեպ: 1916 թ. ապրիլի 3-ին ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան ընդհանուր հրաման է ուղարկել նահանգները և պահանջել, որ տեղահանվածներին օգնելու կամ օգնության բաշխումը թույլ տալու մեջ բռնված պաշտոնյաները խստորեն պատժվեն:

Բարձր հրամանատարության գրասենյակի հաղորդագրության մեջ նշված է, որ թե՛ այն պետական պաշտոնյաները, որոնք ամերիկյան կամ գերմանական հաստատություններին արտոնել են գաղտնի և ուղիղ փող բաժանել հայերին՝ առանց կառավարության պաշտոնյաների միջամտության կամ միջնորդության, թե՛ նրանք, ովքեր դրա մասին կամ տեղեկացված են եղել, կամ իմացել են [և ոչինչ չեն արել կանխելու համար], պետք է խստորեն պատժվեն²⁰⁰:

1916 թվականի ամռանը, երբ հաղորդվել է Դեր Զորի շրջանում գաղթականներին գաղտնի կերպով փող բաժանող երկու հայի ներկայության մասին, Անվտանգության վարչությունը հուլիսի 22-ին հեռագիր է ուղարկել Հալեպի նահանգապետին և պահանջել հավելյալ տեղեկություններ այդ դեպքի մասին:

Տեղեկացել ենք, որ Փափագ Սահակ [քահանա Սահակ] և Էրգաջի Սերգիս [դեղագործ Սարգիս] անունով երկու հայ ճամ-

199 BOA/DH.ŞFR, №65/25, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Երուսաղեմի գավառ, թվագրված 1916 թ. հունիսի 18: BOA/DH.ŞFR, №65/25, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Երուսաղեմի գավառ, թվագրված 1916 թ. հունիսի 18:

200 BOA/DH.ŞFR, №62/210, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադա-նայի, Ասկարայի, Բիթլիսի, Հալեպի, Տյուրքմենչիգարի (Բուրսա), Դիյար-բեքիրի, Դամասկոսի, Սվազի, Տրապիզոնի, Կաստամունուի, Քոնյայի, Մամուրեթյուլագիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Իզմիրի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Նիզդեի, Բոլուի, Ջա-նիկի, (Դեր) Զորի, Քարեսիի (Բալիքեսիր), Կեսարիայի, Իչելի, Քյութահ-այի ու Էսքիշեհիի գավառներ, թվագրված 1916 թ. ապրիլի 3:

փորդել են [Դեր] Զոր և գաղտնի փող բաժանել [այնտեղի] հայերին: Խնդրեմ արագ և հանգամանալից զեկույց ներկայացրեք, թե ինչ կարիք է եղել այդ մարդկանց թույլ տալու գալ [Դեր] Զոր²⁰¹:

Երկու օր անց դրան հաջորդել է մեկ այլ հեռագիր՝ պահանջելով ձերբակալել խնդրո առարկա երկու մարդուն և ուղարկել Հալեպ, ինչպես նաև հաստատել նրանց ժամանումը²⁰²:

Գաղթական հայերին դրսից օգնություն հասցնելը հսկելու և կանխելու կառավարության փորձերի պատճառով, որքան էլ դրա արդյունքները միանշանակ չլինեին, նման օգնություն հատկացնել ցանկացողներն ստիպված էին գաղտնիություն պահպանել: Պետական որոշ մահմեդական պաշտոնյաներ նույնպես ներգրավված էին այդ գործում: Հալեպում օգնություն կազմակերպել ջանացողները գտնվում էին կառավարության գործիչների ուշադրության կենտրոնում. նրանց տները ենթարկվում էին հաճախակի ներխուժումների, և իրենք էլ երբեմն ձերբակալվում էին²⁰³: Տեղի ամերիկյան հյուպատոսություններից օգնություն ստանալ փորձող հայերը հաճախ ձերբակալվում էին, ինչպես տեսնում ենք 1916 թ. նոյեմբերին Անվտանգության վարչությունից Հալեպի նահանգ ուղարկված հեռագրում. «Հալեպում ոմն «Դյովիկի» հասցեագրված հեռագրային հաղորդագրություն է ստացվել՝ ստորագրված «Իսհակ Թերոնի» կողմից, որը բնակվում է Տիգրանյանի տանը. [հեռագրային հաղորդագրության մեջ] նշվում է, որ ամերիկյան դեսպանությունից ստացվել է 1.000 լիրա, և ստացվել է 10.000 դոլար: [Նա] կալանավորվել է, քանի որ պարզ չէ [այդ փողերի] նպատակը»²⁰⁴:

Օսմանյան Ներքին գործերի նախարարության Ծածկագրերի վարչության արխիվներում բազմաթիվ փաստաթղթեր կան, որոնք

201 BOA/DH.ŞFR, №54-A/71, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. հունիսի 22:

202 BOA/DH.ŞFR, №54-A/91, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը (Դեր) Զորի գավառ, թվագրված 1916 թ. հուլիսի 24:

203 Նյուրթի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Hilmar Kaiser, At the Crossroads of Der Zor, 37–52:

204 BOA/DH.ŞFR, №69/210, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 7:

վերաբերում են 1916 թ. գարնանը Հալեպի նահանգում կատարված «ավագակության» դեպքերին: Օրինակ, 1916 թ. մայիսի 3-ին Անվտանգության վարչության հեռագրում նշվում է, որ «Հալեպի նահանգից հաղորդել են, որ [նահանգում գտնվող] արտասահմանցի հայերի կողմից սկսել են կազմավորվել զինված հրոսակախմբեր», և կարգադրվում է «այդ հրոսակախմբերին թույլ չտալ գործել. զեկուցել [դրանց նկատմամբ ձեր ձեռնարկած միջոցների] արդյունքների մասին»²⁰⁵: Տասն օր անց մեկ այլ՝ այս անգամ Թալեաթի ուղարկած հեռագրով, Հալեպի նահանգապետին հաղորդվել է, որ «կաթուղիկներից ու բողոքականներից բացի, Հալեպում գտնվող օտար երկրների հայերին» Չորրորդ բանակի հրամանատարությունը համարում է տեղահանության համար պիտանի, և կարգադրվել է, որ «նշված հայերից այն անձանց, որոնց վերաբերյալ այն ըմբռնումը կա, որ ներգրավված են եղել այդ ավագակային կազմակերպությունների մեջ, կամ նրանց, ում պետք ունենք հավաքելու՝ ավագակության մասին գիտե՛նալու պատճառով, պետք է թողնել այդտեղ կալանված» և հետաքննել²⁰⁶:

Հավելյալ որևէ տեղեկություն երևան չի եկել, որը պարզեր, թե այդ փաստաթղթերում «զինված հրոսակախմբերի գործունեությունն» ինչ է նշանակում: Բացի այդ, այն հարցին, թե այդ գործողություններն արդյո՞ք որևէ կերպ առնչվում են տարածաշրջանում կազմակերպվող օգնության բաշխմանը, հնարավոր չէ պատասխանել, և հարցը հավելյալ հետազոտության կարիք ունի²⁰⁷:

Բանակն ու կառավարությունը դատարկ տեղը չէին սպառնում: Անհրաժեշտության դեպքում նրանք չէին երկնչում անգամ սպառնալ օտարերկրյա դիվանագետներին: Հալեպում Ամերիկայի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնը անուղղակի ճանապարհով՝ գերմանական խողովակ-

ներով ուղարկած իր նամակում պատմում է իր հետ կատարված միջադեպի մասին. «Ես փորձում եմ քաղաքից դուրս գտնվողներին ևս ողջ պահել, բայց դա ահավոր խնդիր է, որովհետև նպաստամատույց օգնություն բաժանելու համար շատերին ծեծելով սպանել են, իսկ ոմանց կախել են կամ կրակել... Երեք օր առաջ այնտեղ ուղարկեցի Բերնոյին... Ջեմալ փաշան սպառնաց նրան հանձնել ռազմական տրիբունալ, եթե նա հայերին փող տա»²⁰⁸:

Նա նաև հաղորդել է, որ օգնություն բաժանելու համար Դեր Ջորի շրջանում օսմանյան մի շարք քաղաքացիներ են ծեծի ենթարկվել և որոշ դեպքերում անգամ սպանվել, իսկ ոմանք նույնիսկ մահվան են դատապարտվել ու մահապատժի ենթարկվել այլ պատրվակներով: «[Դեր] Ջորում (օսմանցի) մի շարք անձինք ձերբակալվել են օգնություն բաժանելու համար, ոմանց ծեծելով մահվան են հասցրել, ոմանց՝ կախաղան հանել՝ իրականում այդ պատճառով, բայց ուրիշ պատճառներ են ասում»²⁰⁹: Նման վարքագիծ պարզապես չի կարող դրսևորել մի կառավարություն, որը փորձում է սոսկ տեղափոխել իր քաղաքացիներին:

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեղահանությունների ընթացքում և գաղթականների ճամբարներում օգնություն բաժանելու և վարակների դեմ պայքարի հարցերով Ծածկագրերի վարչությունում գոյություն ունեցող մի քանի փաստաթղթերի հիման վրա կարելի է վստահորեն պնդել, որ խիստ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել մահմեդական փախստականների և հայ գաղթականների նկատմամբ: Հեռագրային հաղորդագրությունների թվի, բովանդակության ու լեզվի վրա հիմնվելով՝

205 BOA/DH.SFR, №63/175, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Ադանայի նահանգ և Մարաշի, Ուրֆայի ու (Դեր) Ջորի գավառներ, թվագրված 1916 թ. մայիսի 3:

206 BOA/DH.SFR, №63/306, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1916 թ. մայիսի 13: Մինչև նույն ուղերձն ուղարկվել է նաև Ջեմալ փաշային (տես BOA/DH.SFR, №63/307):

207 Հալեպում ավագակային գործողությունների մասին հաղորդող մի քանի այլ հեռագրերի համար տես BOA/DH.SFR, №63/241, 248, 263, 282 և 307: Հայերենի գիտակ Էսաթ Ուրասն ուղարկվել էր Հալեպ՝ հարցի շուրջ հետաքննություն անցկացնելու նպատակով:

208 NA/RG 59, 867.4016/298, Հալեպի հյուպատոս Ջ. Բ. Ջաքսոնի կնոջ նամակը Պետական քարտուղարությանը, թվագրված 1916 թ. հոկտեմբերի 13. պարունակում է Ջ. Բ. Ջաքսոնի նամակը տիկին Ջեսի Ջաքսոնին, գտնվում է հետևյալ տեղում. United States Official Documents, ed. Sarafian, Doc. №61, 119:

209 NA/RG 59, 867.4016/301, Ստամբուլում ամերիկյան դեսպանության հույժ գաղտնի զեկույցը պետական քարտուղարին, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 15՝ կցված Ջեսի Ջաքսոնի գերմանական խողովակներով ուղարկված նամակով, թվագրված 1916 թ. սեպտեմբերի 3, գտնվում է United States Official Documents, ed. Sarafian, 124:

կարելի է ասել, որ նշվածներից առաջին խմբի հանդեպ դրսևորվել է հատուկ հոգածություն և ուշադրություն:

Մահմեդական փախստականներին տեղավորելու ընթացքում առաջացած բարդությունների նկատմամբ կառավարության ցուցաբերած հատուկ մտահոգությունից բացի, նորեկներն ապահովվում էին ձրի տներով, արտերով, ուտելիքով ու հագուստով և ամեն անձի համար առանձին թոշակով: Գրավված տարածքներից երկրի ներքին նահանգները եկող պետական ծառայողներին ներգրավում էին գաղթականների տեղավորմանն առնչվող զանազան հարցերում օգնելու հատուկ հանձնարարությունների մեջ²¹⁰: Բոլոր նահանգներ հաղորդագրություններ էին ուղարկվում՝ հարցնելով, թե արդյո՞ք նորեկներին օժանդակելու բոլոր նախապատրաստություններն ավարտված են, և թե այդ խնդրում մնացել են արդյո՞ք այլ անելիքներ:

Իմացել ենք, որ, չնայած նման ջանքերին, դժբախտաբար հնարավոր չի եղել ամբողջովին բավարարել գրավված նահանգներից ժամանող գաղթականների կարիքները: Հետևաբար, խնդրեմ արագ և մանրամասն հաղորդեք, թե նրանց համար էլի ինչ տեսակի օգնություն և մատակարարման միջոցներ պետք է ապահովել, ինչպես նաև տեղափոխման եղանակն ու հատկացումը, և թե դուք ըստ ձեզ ինչի կարիք կունենաք [այդ նպատակի համար]²¹¹:

Ցեղային ու ներգաղթային հարցերի կարգավորման ընդհանուր վարչության ղեկավար Քայայից բացի, ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան ևս նահանգների կանոնավոր ստուգումներ էր անցկացնում և ուղղակիորեն զբաղվում վերատեղավորվող մահմեդական փախստականների խնդրով: Մինչ նրանցից առաջինը շրջում էր երկրում, երկրորդը միանման բովանդակությամբ առանձին հեռա-

գրեր էր ուղարկում կան բանակային հրամանատարներին, կան այն նահանգների ու շրջանների տեղական վարչակազմերի ղեկավարներին, ուր այցելելու էր Քայան²¹², և նրանց հրահանգում էր «օգնել և թեթևացնել Ներգաղթայինի գլխավոր տնօրեն Շյուբրյու բեյի [գործերը], որը ժամանելու է այդտեղ՝ փախստականների ու գաղթականների վերաբնակեցման ու պարենավորման հող նախապատրաստելու համար»²¹³:

Թալեաթն այդ գործերին հետևում էր անձնական ստուգայցերի միջոցով: Ստամբուլից ուղարկված հեռագրերում ներքին գործերի նախարարը տեղական ղեկավարներին գրել էր, որ ինքը «Անատոլիայում էր՝ ստուգիչ շրջագայություններ կատարելու նպատակով», և հրամայել նրանց իր համար պատրաստել «անհրաժեշտ փաստաթղթերն ու միջոցները՝ գաղթականների պայմանների և նրանց ուղարկելու ու վերաբնակեցնելու եղանակի մասին պահանջված տեղեկությունները տրամադրելու համար»²¹⁴: Այդպիսի հեռագրերը զատ-զատ ուղարկվում էին վարչական գրեթե բոլոր շրջանները՝ նահանգներից սկսած մինչև առանձին մարզեր՝ հիմնականում այն պատճառով, որ այդպես ընդգծվում էր հետաքրքրության աստիճանը և այն ներգրավվածությունը, որ օսմանյան կառավարությունն էր դրսևորում երկիր եկող մահմեդական ազգաբնակչության վիճակի հարցում²¹⁵:

Բացի այդ, պարբերաբար ու հետևողականորեն փողեր էին ուղարկվում նահանգներ՝ հստակ հրահանգներով, որ դրանք գործածվեին միայն նորեկների կարիքների համար: Ներքին գործերի

212 BOA/DH.ŞFR, №66/180, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Երկրորդ, Երրորդ ու Չորրորդ բանակների հրամանատարների գրասենյակներ, թվագրված 1916 թ. օգոստոսի 8:

213 BOA/DH.ŞFR, №66/181, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեայի, Դիյարբեքիրի, Մամուրեթյուլազիզի, Սվազի ու Տրապիզոնի նահանգներ և Ուրֆայի ու Ջանիկի գավառներ, թվագրված 1916 թ. օգոստոսի 8:

214 BOA/DH.ŞFR, №69/266, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Մամուրեթյուլազիզի ու Դիյարբեքիրի նահանգներ և Ուրֆայի գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 13:

215 Գաղափար կազմելու համար, թե որքան ուշադրություն էր հատկացվում այդ հարցին, բավական է միայն նշել հարցին առնչվող փաստաթղթերի արխիվային համարները. BOA/DH.ŞFR, №№69/163, 166, 167, 169, 171, 173, 177, 179, 181, 185 և 186:

210 BOA/DH.ŞFR, №66/150, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Անկարայի, Քոնյայի, Մոսուլի, Սվազի, Դիյարբեքիրի, Էրզրումի, Տրապիզոնի ու Կաստամունուի նահանգներ և Ուրֆայի, Ջանիկի ու Կեսարիայի գավառներ, թվագրված 1916 թ. օգոստոսի 5:

211 BOA/DH.ŞFR, №66/154, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Էրզրումի, Տրապիզոնի, Սվազի, Քոնյայի, Անկարայի, Ադանայի, Հալեայի, Դիյարբեքիրի, Մամուրեթյուլազիզի ու Մոսուլի նահանգներ և Ուրֆայի, Կեսարիայի ու Ջանիկի գավառներ, թվագրված 1916 թ. օգոստոսի 6:

նախարարության փաստաթղթերի մեջ միայն 1916 թ. օգոստոս ամսին գրված բառացիորեն տասնյակներով հեռագրեր կան, որոնք նահանգներ են ուղարկվել այդ հարցերով: Դրանցից է Ջանիկի շրջան ուղարկված հետևյալ հեռագիրը.

Վերաբնակեցման ընդհանուր ծախսերից այսօր փոստով ուղարկվել է տասը հազար լիրա: Մեծ մասը հինգ դուրոշանոց թղթադրամներով են: Համաձայն տնտեսական իրավիճակին ու առկա կարիքներին՝ փախստականների պարենավորման համար օրական մեկ անձին մինչև երեք դուրոշ հատկացում կարող է տրվել: Պետք է հոգ տանել՝ ապահովելու համար [որ փախստականներն ստանան] պարենը, մինչև փողը տեղ հասնի: Բացարձակ փող չպետք է հատկացվի կամ ծախսվի փախստականների ու գաղթականների ծախսերից բացի որևէ այլ ոլորտի վրա²¹⁶:

Նման վիճակ ենք տեսնում նաև վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ասպարեզում: Մահմեդական գաղթականներին բնակեցնելու տարիներ տևած ջանքերի ընթացքում նահանգների հետ ահռելի թվով հաղորդագրություններ են փոխանակվել զանազան վարակների բռնկումների ժամանակ կատարվելիք գործողությունների վերաբերյալ: 1916 թ. նոյեմբերի 12-ի ստորև բերվող հեռագրի նման բազմաթիվ հեռագրեր կան, որ պահանջում են «անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ բարելավելու և վերակազմակերպելու համար փախստականների սանիտարական պայմանները, որոնք հիմա Չորումում դժվարին պայմանների մեջ են գտնվում»: Վարակիչ հիվանդություններ էին տարածվել նորեկների մեջ, որոնք ապրում էին սովորականից վատ պայմաններում, որի հետևանքով անմիջապես մասնագետներ են ուղարկվել շրջան: Հրահանգն ավարտվում էր այն կարգադրությամբ, որ «արագությամբ իրականացվեն ու կատարվեն [սանիտարական տեսուչի] առաջարկած միջոցառումները»²¹⁷: Մեկ

այլ հեռագիր ուղարկվել է Անկարա՝ պահանջելով, որ սանիտարական միջոցառումներն իրականացվեն այդ նույն օրը²¹⁸:

Սյուս օրինակը, որ կարելի է բերել, վերաբերում է Հարանում հաստատված մահմեդական փախստականների մեջ բռնկված խոլերայի ու տիֆի համաճարակների նախնական փուլին և այն միջոցառումներին, որ կառավարությունը խորհուրդ էր տալիս ձեռնարկել դրանց դեմ: Հեռագրերից մեկն սկսվում էր այսպես. «Դիյարբերքի Ներգաղթյալների [ու փախստականների] տեսչությունից ստացված մի հեռագրով միայն հիմա է հաղորդվում, որ Հարանի փախստականների մեջ երկու մահ է եղել խոլերայից և երեք [այլ՝ չպարզաբանված, սակայն] կասկածելի մահ», և ապա երկար թվարկվում են սպառնալիքի դեմն առնելու համար անհրաժեշտ միջոցները: Հաղորդվում է նաև, որ տարածքի մյուս նահանգները, ինչպես նաև Երկրորդ ու Չորրորդ բանակների հրամանատարությունը տեղեկացվել են խնդրի մասին²¹⁹: Եվ իրոք. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու մասին տեղեկացնող հեռագրերը միևնույն օրն ուղարկվել են հարևան նահանգները²²⁰:

Արխիվներում կան նաև նահանգներ ուղարկված բազմաթիվ այլ հեռագրեր, որոնք վերաբերում են փախստականների առողջապահական ու սանիտարական այլ հարցերի և նրանց մյուս կարիքներին: Դրանցից մեկն ուղարկվել է «Յոզղաթի գավառ... Յոզղաթում [գտնվող] փախստականների օրական հատկացումների գումարն ավելացնելու և նրանց մերկ ու խիստ աղքատացած վիճակի պատճառով նրանց հագնվելու կարիքն ապահովելու վերաբերյալ»²²¹,

գրված հեռագիրը Չորումի գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 12:

218 BOA/DH.\$FR, № 69/234, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 12:

219 BOA/DH.\$FR, № 69/257, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը ներքին գործերի նախարար Թալեաթին, թվագրված 1916 թ. նոյեմբերի 13:

220 Սվագ ուղարկված հեռագրի համար տես BOA/DH.\$FR, № 69/256: Երկրորդ ու Չորրորդ բանակների հրամանատարություններ ուղարկված հեռագրի համար տես BOA/DH.\$FR, № 69/257: Ուրֆա ուղարկված հեռագրի համար տես BOA/DH.\$FR, № 70/17:

221 BOA/DH.\$FR, № 70/18, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկա-

216 BOA/DH.\$FR, № 66/197, Ներքին գործերի նախարարության ՑՆԿՎ ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1916 թ. օգոստոսի 10: Նման այլ հեռագրերի համար տես BOA/DH.\$FR, № 66/26, 199, 204, 205, 209, 210, 212, 214, 216, 217 և 240:

217 BOA/DH.\$FR, № 69/233, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկա-

մյուսն ուղարկվել է Անկարայի նահանգ և վերաբերում է Չորունում գտնվող փախստականներին, «որոնք խիստ աղքատացած վիճակում են, չունեն հազուստ և վառելիքայտ ու այլ վառելիք», և նրանց դժվարությունները թեթևացնելու նպատակով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել²²², և, վերջապես, մեկ այլ հեռագիր, որն ուղարկվել է «Դիյարբեքիի նահանգ... բարելավելու համար Միլվանում ու Միվերեքում գտնվող փախստականների վիճակը, որոնք արտակարգ աղքատացած և ընչազուրկ վիճակում են»²²³:

Շատ դեպքերում վարակիչ հիվանդությունների ու նման խնդիրների դեմ պայքարելու համար տեսուչներ, սանիտարական ծառայողներ ու դեղամիջոցներ էին ուղարկվում շրջաններ: 1916 թ. նոյեմբերին Մամսուն ուղարկված մի հեռագրում Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչությունը գրել է, որ «հաղորդվել է, որ շուտով առողջապահական տեսուչ է գալու այդտեղ՝ հետազոտելու և իրագործելու համար գավառում փախստականների սանիտարական ու առողջապահական պայմանները բարելավելու համար անհրաժեշտ միջոցները, և որ շուտով, պահանջված խինինի հետ միասին, ուղարկվելու են հարկ եղած թվով սանիտարական ծառայողներ»²²⁴:

Նույն վարչության մեկ այլ հեռագրում, որը 1917 թ. մարտի 23-ին ուղարկվել է Մասուլի նահանգ, նշվում է, որ ի լրումն առանձին նահանգներ ուղարկված նման հեռագրերի, պատրաստվել է մի «ընդհանուր հաղորդագրություն»՝ «ապահովելու համար պատերազմի թատերաբեմից փախած բնակչությանը կերակրելու ու պարենավորելը, և վերակազմակերպելու ու կարգավորելու այն եղանակը, որի միջոցով դրանք հասցվում են այն շրջաններ, ուր կենտրոնացված են նրանք», և որ այդ հրահանգները «հաղորդվել են անհրաժեշտ կողմերին»: Տասնվեց կետանոց այդ հաղորդագրության մեջ ամփոփված

գրված հեռագիրը Յոզղաթի գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 15:

222 BOA/DH.SFR, №70/57, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Անկարայի նահանգ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 21:

223 BOA/DH.SFR, №71/53, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Դիյարբեքիի նահանգ, թվագրված 1916 թ. դեկտեմբերի 21:

224 BOA/DH.SFR, №70/20, Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Ջանիկի գավառ, թվագրված 1916 թ. նոյեմբերի 5:

են ընդհանուր տեղեկություններ սանիտարական դրության, ուտելիքի, հագուստի ու բնակեցման և դրանց տրամադրման միջոցների մասին, ինչպես նաև կատարելիք առանձին քայլերի մի ցուցակ: Դրանցից են.

2. Դաղարի վայրերում, որոնք համընկնում են պատերազմական գոտիներից փախստականների կենտրոնացման կետերին, պետք է հիմնվեն պաշտպանված հանգստյան տարածքներ, և պետք է հոգ տարվի նրանց պարենավորման համար, որքանով որ հանգամանքները թույլ կտան: 3. Այդ պաշտպանված հանգստյան տարածքներում սանիտարական ծառայողների ներկայությամբ պետք է հնարավորություն չտրվի, որ փախստականների մեջ վարակիչ հիվանդություններ բռնկվեն... իսկ նրանք, ովքեր վարակիչ հիվանդությամբ [վարակված] կգան, պետք է անմիջապես մեկուսացվեն... : 5. Յուրաքանչյուր շարայունը կազմող մարդկանց թիվը և նրանց կենտրոնացման ու հավաքման կետերը պարունակող բացատրական ցուցակ պետք է հանձնվի շարայուներն [իրենց ճամփորդության ընթացքում] ուղարկելու համար պատասխանատու պաշտոնյաների ձեռքը...: 7. Երբ շարայուներն ուղարկվում են մեկ շրջանից մյուսը, շարայուների համար պատասխանատու պաշտոնյաները պետք է պատասխանատու լինեն այդ մարդկանց երկու օրվա պարեն ու մթերք տրամադրելու համար...: 10. Նրանց, ովքեր ուժ չունեն ոտքով գնալու, ինչպիսին են կանայք ու երեխաները, պետք է հատկացվի փոխադրամիջոց: 11. Պարենի ու օգնության համար պատասխանատու պաշտոնյան պաշտպանված հանգստյան տարածքում պետք է փոխարինվի տարածքի պաշտոնյայով: 12. Դաղարի վայրերի հարմար տեղերում պետք է հիմնվեն ժամանակավոր հիվանդանոցներ, և այդտեղ պետք է տեղակայվեն տեղացի բժիշկներ, իսկ վատառողջ փախստականները պետք է դրվեն նրանց հսկողության տակ... : 14. Պարենի, հագուստի և շարժական գույքի մյուս առարկաների արժեքը պետք է գնահատվի և վերցվի ներգաղթյալների [ու փախստականների] հատկացումներից և հանձնվի փախստականներին: 15. Նահանգապետերը, գավառապետերն ու մարզպետները ուղղակիորեն պատասխանատու են փախստականներին ուղարկելու և վերաբնակեցնելու

համար: Քաղաքացիական ծառայության տեսուչները պետք է տեղակայվեն հատուկ վայրերում և պետք է օգնեն ու ղեկավարեն այդ միջոցառումների պատշաճ իրականացումը, ինչպես նաև նահանգային ու պետական նախարարության պաշտոնյաներին տեղյակ պահեն առկա իրադրության մասին: Այս հարցի առընչությամբ, քաղաքացիական ծառայողների տեղակայման համար կարող են հատկացվել ներգաղթյալների հիմնադրամի պաշարները²²⁵:

Ի հակադրություն մահմեդական փախստականների ու գաղթականների վրա ծախսված ահռելի ջանքերի, հոգսերի ու պաշարների՝ ապարդյուն են արխիվներում տեղահանությունների ամբողջ ընթացքի համար այնպիսի հրահանգների որոնումները, որոնցում արտացոլվի տեղահանված հայերի նկատմամբ հոգածության ու պաշտպանության սրան մերձեցող որևէ նշույլ, էլ չենք խոսում հրահանգների ու պաշարների հատկացման հանգամանալի ցանկի մասին: Չնայած նրանց կյանքի ծանր բեռին՝ ողջ մնացած տեղահանված հայերի մեջ վարակիչ հիվանդությունների տարածմանն առնչվող միջոցառումների վերաբերյալ կենտրոնի ու ծայրամասերի միջև թղթակցության սակավությունը՝ սակավություն, որ հասնում է լիակատար բացակայության, ևս մեկ անգամ ընդգծում է տեղահանված հայերի նկատմամբ օսմանյան կառավարության խիստ տարբեր վարքագիծը մահմեդական փախստականների համեմատությամբ: Այդ տարբերությունն ավելի ակնառու կարելի է տեսնել ներքին գործերի նախարար Թալեթ փաշայի ու Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչության ընդհանուր տնօրեն Քայայի միջև տեղի ունեցած թղթակցությունից: Քայան Հալեպ էր մեկնել՝ տեղում իրականացնելու տեղահանման գործողությունների վերահսկողությունը: Նա ներքին գործերի նախարարին տեղեկացրել է, որ Համայնում տեղահանված հայերը մեռնում էին մի շարք հիվանդություններից, հետևաբար նրանց հարկավոր էր ուրիշ տեղ ուղարկել: Իր պատասխանի մեջ Թալեթը նշել է, որ «տեղեկություններ են ստացվել, որ Համայն մոտ 20.000 տեղահանվածների մեջ տենդը, տիֆն ու դիզենտերիան պատճառում են օրական 70-80 մահ»: Շարունակելով՝ նա ասել է,

225 BOA/DH.SFR, №62/100-101, Ներքին գործերի նախարարության ՑՆԿԿ ծածկագրված հեռագիրը Մոսուլի նահանգ, թվագրված 1917 թ. մարտի 23:

հարկավոր է տեղահանվածներին «Դամասկոսի նահանգի հետ կապվելով, հնարավոր առաջին հարմար պահին, ուղարկել հատուկ տարածքներ՝ հանուն հանրային առողջության պահպանման», և խնդրել է իրեն տեղյակ պահել այդ գործողությունների արդյունքների մասին²²⁶: Կառավարության համար կարևորը տարբեր հիվանդություններից հայերի մահը չէր, այլ այն սպառնալիքը, որ այդ հիվանդությունները ներկայացնում էին նահանգի մյուս բնակիչների համար: Դրան հետևել է այն պահանջը, որ հիվանդ մարդկանց հնարավորինս շուտ ֆիզիկապես հեռացնեն նահանգից:

Նման ոճ ու բովանդակություն կարելի է տեսնել նաև այն հակառակ ուղղությամբ ուղարկված հեռագրերում: Նահանգապետերը չեն պահանջել, որ վարակիչ հիվանդություններով տառապող հայերի բուժման համար միջոցներ ձեռնարկվեն. նրանք պարզապես պահանջել են, որ հայերն ուրիշ ինչ-որ տեղ ուղարկվեն, որպեսզի վարակը չտարածվի քանակում կամ քաղաքացիական բնակչության մեջ: 1915 թ. սեպտեմբերի 22-ին, օրինակ, Կարահիսարի գավառապետը հետևյալ հեռագիրն է ուղարկել.

[Ե]րեկ երեկոյան հայերով լցված 44 սայլ եկավ՝ նրանց ընդհանուր թիվը, ներառյալ [արդեն] այստեղ եղողներինը, հասցնելով կայանատեղիում հավաքած 10.170 մարդու: Այդ մարդկանց մեջ իշխող դիզենտերիայի և ուղարկվող զինվորական անձնակազմի մեջ այս կամ այն հիվանդության տարածման հնարավորության պատճառով զինվորական ճյուղը խստով շեշտել է այդ [տեղահանվածներին] այլ տարածքներ արագ ուղարկելու ու տեղափոխելու կարիքը:

Բացի այդ, գավառապետը խնդրել է «թույլտվություն տալ բոլոր հայերին բռնի կերպով ոտքով երթով ընթանալու կամ սայլերով տեղափոխվելու, որի համար կվճարվի գաղթականներին հատկացված [Muhacirin Tahsisati] հատուկ ֆոնդերից», քանի որ հնարավոր չէր լինի նրանց գնացքով ուղարկել²²⁷:

226 BOA/DH.SFR, №57/51, ներքին գործերի նախարար Թալեթի ծածկագրված հեռագիրը (Ցեղային ու) Ներգաղթային (հարցերի կարգավորման գլխավոր վարչության) տնօրեն Քայային, որն այդ ժամանակ գտնվում էր Հալեպում, թվագրված 1915 թ. հոկտեմբերի 17:

227 BOA/DH.EUM, 2. Şube, №68/81, Կարահիսարի գավառապետ Շնքեթի

Հայերի շարասյունների մեջ տարածված վարակիչ հիվանդությունների ու մահացությունների պատճառով նկատի առնված մյուս լուծումը եղել է նրանց ճանապարհները փոխելը: 1916 թ. փետրվարի 3-ին Թալեաթ փաշան Դեր Զորի նահանգապետին հեռագիր է ուղարկել՝ տեղեկացնելով, որ «քանի որ դեպի Մոսուլ իրենց ճանապարհին Ռաս ու Այն հասնող տեղահանված հայերը վարակված են տիֆով և վարակիչ այլ հիվանդություններով», Վեցերորդ բանակի հրամանատարությունը խնդրել է (Թալեաթից), որ «Ռաս ու Այնով դեպի Մոսուլ ճանապարհը չգործածվի՝ զինվորական անձնակազմի կողմից հիվանդություններով վարակվելը կանխելու համար»: Այդ պատճառով, նա խնդրել է, որ «մեկ այլ [ճանապարհ գործածվի], որպեսզի տեղահանվող հայերը դեպի Մոսուլ ճանապարհին հետագայում չանցնեն Ռաս ու Այնի հանգստյան կետով»²²⁹: Նորից, որևէ ջանք չի գործադրվում, և նկատի չի առնվում վարակիչ հիվանդություններից տառապող հայերին բուժելը. մտահոգությունը միայն այն է, որ այդ մարդիկ կարող են վարակել զինվորականներին:

Մահմեդական գաղթականների ու փախստականների վերաբերյալ Երրորդ բանակի հրամանատարությանն ուղարկված հրահանգն էլ ավելի է արտացոլում տեղափոխված մահմեդականների նկատմամբ օսմանյան իշխանությունների ցուցաբերած տարբեր վերաբերմունքը.

Պատերազմի նախարարությանը մի հաղորդագրություն է ուղարկվել՝ [խնդրելով, որ] զինվորական ստորաբաժանումները, որոնք գտնվում են այն շրջաններում, որոնցով մինչև իրենց [վերա]բնակեցման վայրերը հասնելն անցնում են փախստականները, պետք է օգնություն ցուցաբերեն [փախստականներին] և հատկապես [նրանց] հիվանդ ու տկար [անդամներին]: Առընչվող նահանգներին հաղորդվել է նաև ջանքեր գործադրել՝ բարելավելու փախստականների ընդհանուր վիճակը:

Հեռագրի վերջում ասվում է, որ «անհրաժեշտ է [այդ մարդկանց] օգնություն հատկացնել ինչ ձևով որ [իրենք կ]խնդրեն]: Հնարավոր

Ծածկագրված հեռագիրը Ներքին գործերի նախարարությանը, թվագրված 1915 թ. սեպտեմբերի 22:

228 BOA/DH.ŞFR, №60/219, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը (Դեր) Զորի գավառ, թվագրված 1916 թ. փետրվարի 3:

կլինի բարելավել նրանց վիճակը և նրանց [անհրաժեշտ] մթերքով ապահովելը», և եզրափակվում է խրախուսելով, որ հնարավոր ամեն քայլ պետք է ձեռնարկվի՝ բավարարելու համար բոլոր կարիքները, որ կարող են առաջանալ²²⁹:

Վարչապետական արխիվի առցանց կայքը մի հատուկ բաժին ունի, որ կոչվում է «Հայկական հարցը ըստ արխիվային փաստաթղթերի»: Բաժնում ներկայացվում են հայերի տեղահանությունների վերաբերյալ ընտրովի փաստաթղթեր, որոնք սատարում են իրադարձությունների Թուրքիայի պետական տարբերակը: Տեղահանված մահմեդական ու հայ ազգաբնակչությունների նկատմամբ կըտրականորեն տարբեր այն վերաբերմունքի պատճառով, որ նշված է վերը, շատ դժվար էր լինելու տեղահանված հայերի առողջության, սանիտարական վիճակի ու վարակիչ հիվանդությունների և այդ առնչությամբ կառավարության ձեռնարկած քայլերի վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելը: Այդ կայքում, որը ներկայումս պարունակում է մոտավորապես հազար հինգ հարյուր փաստաթուղթ, «Տեղահանությունների ենթարկված հայերի պաշտպանությունը և նրանց առողջապահական խնդիրների բուժումը» խորագիրը կրող խմբում միայն վեցն է զետեղված, և դրանցից ոչ մեկը որևէ առնչություն չունի վարակիչ հիվանդությունների դեմ ձեռնարկված կամ ձեռնարկվելու պետք ունեցած միջոցների հետ: Միայն երեք փաստաթուղթ է առնչվում հարցին: Առաջինը վերաբերում է քաղաքապետարանի բժիշկներին արտոնություն տալուն, որ ուղարկվեն «բուժելու [Ռաս ու Այն] եկող հայերից նրանց, ովքեր հիվանդ են»²³⁰: երկրորդն Անվտանգության վարչության մի հեռագիր է, որով Քոնյայի պաշտոնյաներին ասվում է, որ Էրեղլիում (Քոնյայի նահանգում) գտնվող այն հայերին, որոնք կարող է թվալ, թե տառապում են դիզենտերիայով ու մալարիայով, չթողնել «գետնին ընկած», այլ «կարանտինի տակ պահել հայերի լքած տներում»²³¹: Երրորդ փաստաթուղթն այն մասին

229 BOA/DH.ŞFR, №71/171, Ներքին գործերի նախարարության Տեղային և ներգաղթային հարցերի կարգավորման գլխավոր վարչության ծածկագրված հեռագիրը Երրորդ բանակի շտաբի պետի օգնականին, թվագրված 1917 թ. հունվարի 4:

230 BOA/DH.ŞFR, №54-A/153, ներքին գործերի նախարար Թալեաթի ծածկագրված հեռագիրը Հալեպի նահանգ, թվագրված 1915 թ. հուլիսի 28:

231 BOA/DH.ŞFR, №57/337, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Քոնյայի նահանգ,

է, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել հայերի առողջության ու սանիտարական պայմանների վերաբերյալ ստացվող լուրերի կապակցությամբ²³²: Հարցին անտեղյակ մարդը սուկ հաղորդագրությունների բացակայությունից կարող էր եզրակացնել, թե տեղահանված հայերի մեջ վարակիչ հիվանդությունների հետ կապված լուրջ խնդիր պարզապես գոյություն չի ունեցել: Իրականում այդ երևույթն ամենայն հստակությամբ ցույց է տալիս հայերի նկատմամբ իթթիհադական վարչակազմի վարած փաստացի քաղաքականությունը:

12

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Քսաներորդ դարի առաջին մեծածավալ զանգվածային կոտորածը՝ Հայոց ցեղասպանությունը, պետք է դնել նոր համատեքստի մեջ և այն ըմբռնել այդ նոր՝ Օսմանյան կայսրությունը ազգ-պետությունների մասնատվելու սկզբնավորման համատեքստում: Հայերի բնաջնումը ոչ թե սուկ ազգային-կրոնական մեկ խմբի դեմ իրականացվող արշավանք էր, այլ խիստ ծավալուն գործողության մի մասը, որն իրագործվել է կայսրությունը փրկելու նպատակով: Այդ պատճառով, ճիշտ չէ Հայոց ցեղասպանությունը մեկնաբանել իբր բախում մի կողմից կայսրության մահմեդականության (թուրքերի, քրդերի, չերքեզների և մյուսների), որ սովորաբար արտահայտվում է «թուրք» հասկացությամբ, և մյուս կողմից քրիստոնյա տարրերի (հայերի, հույների ու ասորիների) միջև: Հայոց ցեղասպանությունը պետք է ըմբռնել և մեկնաբանել իբրև օսմանյան պետության և նրա հպատակների միջև գոյություն ունեցած խնդիր, որն առաջացել էր վարչակազմի հետապնդած հատուկ քաղաքականության հետևանքով: Կայսրության ղեկավարները օսմանյան քաղաքացիների մի խմբի, նրանց կրոնական ու ազգային կերտվածքի պատճառով, համարում էին խնդիրների աղբյուր և իրական սպառնալիք: Այդպիսով, նրանք մտադրվել էին այդ խումբը հեռացնել Անատոլիայից և, այդ հարցում ձախողվելով՝ սպանել նրանց:

Թեև մինչև 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմը Անատոլիայի ազգային-կրոնական միատարրացումը կարող էր գոյություն ունեցած լինել իբրև գաղափար, սակայն, իբրև որոշակի կուսակցական ու պետական քաղաքականություն, այն հանել է ռազմական պարտության մոխիրներից: Ես այն անվանել եմ ժողովրդագրական քաղաքականություն, և դրա նպատակը, որն աստիճանաբար համակարգայնացվել է և կիրառման մեջ դրվել 1913 թվականից հետո, եղել է Անատոլիայում թուրք-մահմեդական մեծամասնության ստեղծումը: Սոցիալական ճարտարագիտության այդ ահռելի ծրագրի գործարկման

թվագրված 1915 թ. նոյեմբերի 7:

232 BOA/DH.ŞFR, № 65/92, Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության ծածկագրված հեռագիրը Էդիրնեի, Ադանայի, Անկարայի, Այդինի, Հյուղավենդիզարի (Բուրսա) Դամասկոսի, Սվազի, Կաստամունուի ու Քոնյայի նահանգներ և Իզմիրի, Բոլուի, Ջանիկի, Քարեհի (Բալիքեսիր), Քալե-ի Սուլթանիյեի (Չանաքքալե), Կեսարիայի, Կարահիսար-ի Սահիբի (Աֆյոն Կարահիսար), Մարաշի, Քյութահայի, Նիդդեի ու Էսքիշեհիրի գավառներ, թվագրված 1916 թ. հունիսի 26:

նպատակները եղել են ոչ-թուրք ծագումով մահմեդականների ուժացումը (temsil կամ temessil) և քրիստոնյաների նվազեցումն այնքան, որ մահմեդականների մեջ կազմեն ամբողջ բնակչության 5-10 տոկոսից ոչ ավելին:

Առաջին թիրախը Թրակիայի և Էգեյանի ափի հույներն էին, որոնց ուժով, սպառնալիքներով ու կոտորածներով արտաքսել էին Հունաստան: Հայերն արժանացել են քրիստոնյա մյուս խմբերից տարբեր վերաբերմունքի՝ մասամբ նրանց դեմ վարչակազմի կարծած հակամարտության բնույթի պատճառով, բայց հատկապես Ռուսաստանի սահմանին նրանց հայրենիքի մերձավորության պատճառով: Ռուսաստանի պաշարման սպառնալիքը և բարենորոգումների միջազգային համաձայնության գոյությունը վտանգի մեջ էին դրել հայերի գոյատևումը: Օսմանյան կայսրությունն անհրաժեշտ էր համարում կանխել նրանց միավորումը ինքնավար վարչակարգի ներքո, որը կարող էր մի օր հառնել իբրև անկախ Հայաստան: Հետևաբար, իթթիհադականների քաղաքականությունը վերածվեց ցեղասպանության:

Այս թեզը օսմանյան աղբյուրների միջոցով վավերագրելը եղել է սույն գրքի առաջնային նպատակը: Ես ջանացել եմ ցույց տալ, որ իրական հակասություն չկա օսմանյան աղբյուրների և արևմտյան գանազան աղբյուրների նյութերի միջև՝ չնայած հակառակի մասին հաճախակի և շարունակական պնդումներին: Փաստագրական բոլոր աղբյուրները, իրենց դիտանկյունների գանազանությամբ հանդերձ, ցուցադրում են, որ ցեղասպանությունն իրագործվել է իբրև ժողովրդագրական քաղաքականություն: Այն սկզբունքը, որ մնացող հայերը արևմտյան Ասատոլիայի սահանգներում չպետք է գերազանցեին մահմեդական ազգաբնակչության 5 տոկոսը, իսկ տեղահանված հայերը իրենց տեղափոխման վայրերում չպետք է գերազանցեին մահմեդականների 10 տոկոսը, հավասարագոր է նրանց գրեթե լիակատար բնաջնջման հրամանի:

Վերջում ցանկանում եմ ընդգծել այս պատմության մի կողմը, որը խորապես սխալ է ընկալվում Թուրքիայում և թերևս այլուրեք: 1915թ. իրադարձությունների վերաբերյալ գանազան բանավեճերում հաճախ ենթադրվում է, որ պատասխանելիք հիմնական հարցն այն է, թե արդյո՞ք տեղահանություններն ու հարակից միջոցառումներն իրենցից ցեղասպանություն են ներկայացրել: Քաղաքական պա-

հանջները, մասնավորապես միջազգային ասպարեզում, որ Թուրքիան այդ իրադարձությունները ճանաչի իբրև ցեղասպանություն, անկասկած, փոքր դեր չեն խաղացել լայնորեն տարածված այդ համոզումն առաջ բերելու գործում:

Թե ինչպես կբնութագրվեն այդ իրադարձությունները, և թե միջազգային քրեական օրենքի ո՞ր հոդվածի համաձայն դրանք լավագույնս կներկայացվեն, իրավագիտական առումով, անշուշտ, կարևոր հարցեր են: Ես կարող եմ անվարան հաստատել, որ, ելնելով առկա փաստաթղթերից, այդ իրադարձությունները ցեղասպանությունից բացի որևէ այլ կերպ չեն կարող սահմանվել: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ հիմնական հարցը ոչ թե իրավագիտական է, այլ բարոյական: Եվ հայերի հետ կատարվածի անարդարությունը ճանաչելու և դրա հարուցած վնասի հնարավորինս հատուցման միջոցով եղածը շտկելու բարոյական պատասխանատվությունը ուղիղ կապ չունի 1915թ. դեպքերի համար գործածվելիք իրավաբանական տերմինի հետ: Անկախ այն բանից, թե ո՞ր տերմինը հարմար կնկատվի, հայ ժողովրդին պատճառած հսկայական անարդարությունը պետք է շտկվի: Թեև պատշաճ տերմինի իրավական կողմը կարող է և պետք է քննարկվի, այդ բանավեճի ներկա կաղապարումը, հատկապես Թուրքիայում, ցույց է տալիս, որ սկզբունքային բարոյական հարցը դեռևս լիովին չի հնչեցվում:

1915 թվականի բնութագրումը միջազգային քրեական իրավունքի առկա կարգերի համաձայն խելամիտ կերպով քննարկել կարողանալու համար նախևառաջ, անհրաժեշտ է ընդունել, որ տեղի է ունեցել *ոճրագործություն*: Առանց դա ընդունելու՝ անիմաստ է բանավիճել այնպիսի տերմինների շուրջ, ինչպիսին են «ցեղասպանությունը», «մարդկության դեմ իրականացրած ոճրագործությունները» կամ «պատերազմական հանցագործությունները»: Հարցն այն է, թե 1915թ. իրադարձությունները համարվում են արդյո՞ք այնպիսի գանգանք, որը մտնում է քրեական օրենսդրության շրջանակների մեջ:

Հարկավոր է հասկանալ, որ Օսմանյան կայսրության վերջին տարիները և Թուրքիայի Հանրապետության վերածվելու առաջին տարիները պարուրած իրադարձությունները Թուրքիայում իբրև «պաշտոնական վարկած (իսկ այլ տեղերում՝ իբրև «հակա-ցեղասպանության» տեսակետ) բնութագրող թեզի մեկնարկային կետն այն ենթադրությունն է, որ 1915թ. դեպքերը բխել են կառավարության

գործողություններից, որոնք, ըստ էության, տեղավորվում են այն սահմաններում, որոնք պետական միավորի համար համարվում են սովորական և օրինական քայլեր և, հետևաբար, չեն կարող բացատրվել քրեականության կամ քրեական օրենսդրության օգնությամբ: Ըստ այդ ենթադրության, կառավարությունը կամ պետությունը որոշակի պայմաններում կարող են դիմել այնպիսի գործողությունների, որոնցից է «բռնի տեղահանությունը», նույնիսկ եթե դրանք հանգեցնեն իր իսկ քաղաքացիների մահվանը, և չկան բարոյական կամ իրավական այնպիսի հիմքեր, որոնցով նման գործողությունները կարող են դատապարտվել:

Ես գտնում եմ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչպես ենք բնութագրում, պետք է ընդունվի բարոյական ճանաչումը. այն է՝ տեղի է ունեցել անարդարացի գործողություն՝ այնքան մեծ ու լուրջ, որ բարոյական կշռամբանքի է արժանի: Եթե ելակետն այն չլինի, որ օսմանյան կառավարության կողմից 1915 թ. իրադարձությունները բարոյականության ու էթիկայի առումով աններելի գործողությունների հետևանք են, խնդրո առարկա դեպքերի վերաբերյալ ոչ մի լուրջ ու արդյունավետ քննարկում չի կարող տեղի ունենալ:

«Ցեղասպանություն» այնպիսի տերմին չէ, որի քննարկումն առնչվում է զուտ քրեական օրենսդրությանը: Այն լայնորեն գործածվում է նաև հասարակական գիտություններում: Այդ առումով, լիովին արդարացված է 1915 թ. տեղի ունեցած զանգվածային սպանությունների բնորոշումն այդ տերմինով: Հասարակագետները Հայոց ցեղասպանության նման զանգվածային սպանությունով սովորաբար զբաղվում են՝ դրանք հասկանալու կամ բացատրելու մտադրությամբ: Նրանց հիմնական շարժառիթներից մեկն այն է, որ լույս սփռեն այն պայմանների վրա, որոնց ներքո առաջանում են նման վայրագությունները, և, հետևաբար՝ տեսնել, թե ինչպես կարելի է դրանցից խուսափել ապագայում:

Անկախ գործածվող տերմինից, անհրաժեշտ է դեմ հանդիման կանգնել մարդկային վիթխարի ողբերգությանը, որի կրկնությունն աներկբայորեն պետք է կանխարգելվի: Իր ոչ վաղ անցյալին դիմագրավելը մերժելիս Թուրքիայի կառավարության շոշափելի, նույնիսկ կրքոտ ցասումը և սեփական պատմության հետ հաշտվելու հարցում Թուրքիայի հասարակության դրսևորած դժվարությունը խիստ մտահոգիչ են և հույժ տագնապալի: Պետության ու հասարակության

հակազդեցությունը ենթադրել է տալիս, որ նրանք կրկին կարողեն դիմել նման գործողությունների, իսկ դա իսկապես զարհուրելի հեռանկար է:

Քանի դեռ չի մշակվել անցյալի դառը դեպքերը հասկանալու ու քննարկելու և կրոնական կամ ազգային զանազանությունները թիրախավորող բոլոր հանցագործությունները դատապարտելու լեզուն, խնդիրը լուծելու ուղղությամբ առաջընթացն անհնար է լինելու: Ես հավատում եմ, որ Թուրքիայում վերջերս բարձրացած ժողովրդավարացման հզոր ալիքը ուղի է հարթել այդ ճանաչման համար, և, այդ առումով, ապագան փոքր-ինչ ավելի լավատեսական է թվում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱՆ

Թեև ցեղասպանության ու էթնիկ զտումների վերաբերյալ լիակատար գրականության ցանկը դուրս է սույն աշխատության շրջանակներից, ստորև թվարկում եմ այն աղբյուրները, որոնք խիստ օգտակար են համարել: Հավելյալ աղբյուրները հղված են ծանոթագրություններում:

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՀԱՎԱՔԱՃՈՒՆԵՐ

Յուրաքանչյուր մեծ հավաքածուի անվանը հաջորդում է գրքի մեջ գործածված հապավումը:

ԱՎՍՏՐԻԱ

Haus- Hof- und Staatsarchiv, Politisches Archiv [Պալատական, արքունի և պետական արխիվներ]. HHStA Politisches Archiv: HHStA PA

ԳԵՐՄԱՆԻԱ

Politisches Archiv des Auswärtiges Amt [Արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվ]. DE/PA-AA

Botschaft Konstantinopel: DE/PA-AA/Bo.Kons. Reich: DE/PA-AA/R

ԻՍՐԱՅԵԼ

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվ. AAPJ տուփեր 7, 17 և 21

ԹՈՒՐԿԻԱ

Օսմանյան վարչապետական արխիվ [Başbakanlık Osmanlı Arşivi]. BOA

Արտաքին գործերի նախարարություն [Hariciye Nezareti]

Harciye Hukuk Müşavirliği Odası [Արտաքին գործեր, Իրավական խորհրդատվության գրասենյակ]. HR.HMS.İŞO

Hariciye Nezareti Siyasî Kısım [Արտաքին գործերի նախարարություն, Քաղաքական բաժանմունք]. HR.SYS

Ներքին գործերի նախարարություն [Dahiliye Nezareti]

Dahiliye Nezareti Dahiliye Kalem-i Mahsus Evrakı [Ներքին գործերի նախարարություն, Մասնավոր քարտուղարության արձանագրությունների գրասենյակ]. DH.KMS

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Asayiş Kalemî [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգություն, Հասարակական կարգի քարտուղարություն]. DH.EUM.AYŞ

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Beşinci Şube [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգության հինգերորդ բաժանմունք]. DH.EUM, 5.Şube

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Birinci Şube [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգության առաջին բաժանմունք]: DH.EUM, 1. Şube

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Emniyet Şubesi Evrakı [Ներքին գործերի նախարարության Անվտանգության մասնաճյուղի արձանագրությունների գրասենյակ]. DH.EUM.EMN

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Evrak Odası Kalemî Evrakı [Ներքին գործերի նախարարության Ընդհանուր անվտանգության փաստաթղթային գրասենյակի գրանցումների սենյակ]. DH.EUM.VRK

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye İkinci Şube [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգության երկրորդ բաժանմունք]. DH.EUM, 2. Şube

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Kalemî Umumi [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգության ընդհանուր քարտուղարություն]. DH.EUM.KLU

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Memurin Kalemî Evrakı [Ներքին գործերի նախարարություն, ընդհանուր անվտանգության պաշտոնյաների արձանագրությունների գրասենյակ]. DH.EUM.MEM

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Muhasebe Kalemî Evrakı [Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության հաշվապահական գրասենյակ]. DH.EUM.MH

Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye Üçüncü Şube [Ներքին գործերի նախարարություն, Ընդհանուր անվտանգության երրորդ բաժանմունք]. DH.EUM, 3. Şube

Dahiliye Nezareti Sicill-i Nüfus Tahrirat Kalemî [Ներքին գործերի նախարարություն, Ազգաբնակչության արձանագրությունների քարտուղարություն]. DH.SN.THR

Dahiliye Nezareti Şifre Kalemî [Ներքին գործերի նախարարություն, Ծածկագրերի վարչություն]. DH.ŞFR

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Foreign Office Archives: FO

Class 371. Political: General Correspondence, 1919–1920.

Geographic Classification: 44. Turkey and the Ottoman Empire. Files 2480, 2781, 4172, and 4174.

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԽԻՎՆԵՐ

National Archives and Records Administration (Washington, D.C.),

Record Group: NA/RG

Record Group 59. General Records of the Department of State. Series 867. Internal Affairs of Turkey, 1910–1929. File 867.4016. Race Problems.

Private Papers

Ernst Jäckh Papers. Yale University Library.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ

Արտարին գործերի նախարարություն [Auswärtiges Amt]. *Die grosse politik der europäischen kabinette, 1871–1914. Sammlung der diplomatischen akten des Auswärtigen amtes, im auftrage des Auswärtigen amtes.* Խմբ. Johannes Lepsius, Albrecht Mendelssohn-Bartholdy և Friedrich Thimme. Berlin, Deutsche veragsgesellschaft für politik und geschichte, 1922–1927

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հնդհանուր շտաբ. Ռազմական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչություն [Genelkurmay Başkanlığı. Askeri Tarih ve Stratejik Etüt ve Denetleme Başkanlığı]: *Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, 1914–1918* [Հայերի գործողությունները արևիվային փաստաթղթերում, 1914–1918]. 8 հատոր, Ankara, Genelkurmay Basimevi, 2005–2007

———. *Askeri Tarih Belgeleri Dergisi* [Ռազմական պատմության փաստաթղթեր], 1982–1999

Թուրքիայի Ազգային մեծ ժողով. *TBMM Gizli Celse Zabıtları* [Դոկումենտների արձանագրություններ], Ankara, Türkiye İş Bankası Yayınları, 1985

Թուրքիայի Ազգային մեծ ժողով *TBMM Zabıt Cerideleri* [Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արձանագրություններ], Ankara, TBMM Matbaası, 1958

Ներքին գործերի նախարարություն, Հանրային ընդհանուր վարչության գրասենյակ [Dahiliye Nezareti İdare-i Umumiye-i Dahiliye Müdüriyeti], *Teşkilat-ı Hazıra-i Mülkiyeyi ve Vilayet, Liva, Kaza ve Nahiyelerin Huruf-i Heca Sırasıyla Esamisini Havi Cedvelidir* [Նահանգների, գավառների, մարզերի ու ավանների այբբենական գրանցում], İstanbul, Matbaa-i Âmire, [1331] 1915

Օսմանյան խորհրդարան, Պատգամավորների պալատ. *Meclis-i Mebusan Zabıt Ceridesi* [Պատգամավորների պալատի արձանագրություններ], Ankara, TBMM Basimevi, 1992

———. Երևելիների պալատ. *Meclis-i Ayan Zabıt Ceridesi* [Երևելիների պալատի արձանագրություններ], Ankara, TBMM Basimevi, 1990

Վարչապետարան. Օրենսդրության մշակման և հրատարակության գլխավոր վարչություն [Başbakanlık Mevzuatı Geliştirme ve Yayın Genel Müdürlüğü], *Resmî Gazete* [Պաշտոնական տեղեկագիր], 1934–1935

———. Պետական արխիվների ընդհանուր վարչություն [Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü], *Osmanlı Belgelerinde Ermeniler, 1915–1920* [Հայերն օսմանյան փաստաթղթերում, 1915–1920], Ankara, Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü, 1994

———. Պետական արխիվների ընդհանուր վարչություն [Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü]. *Arşiv Belgelerine Göre Kafkaslar'da ve Anadolu'da Ermeni Mezalimi* [Հայերի թունությունն ու կոտորածը Կովկասում ու Անատոլիայում՝ հիմնված արխիվների վրա], 4 հատոր, Ankara, Başbakanlık Basimevi, 1995–1998

———. Պետական արխիվների ընդհանուր վարչություն [Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü]. *Ermeniler Tarafından Yapılan Katliam Belgeleri* [Փաստաթղթեր հայերի իրականացրած կոտորածի վերաբերյալ], 2 հատոր, Ankara, Başbakanlık Basimevi, 2001

———. Պետական արխիվների ընդհանուր վարչություն [Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü]. *Osmanlı Belgelerinde Ermenilerin Sevk ve İskanı* [Հայերի տեղահանումն ու տեղավորումը (ըստ) օսմանյան փաստաթղթերի], Ankara, Başbakanlık Basimevi, 2007

Takvim-i Vekayi [Դեպքերի ժամանակագրություն], Օսմանյան կառավարության պաշտոնական տեղեկագիր. 1915, 1918–1922

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ԱՎԱՏՐԻԱ

Ohandjanian, Artem. *Österreich-Armenien, 1872–1936: Faximiliesammlung Diplomatischer Aktenstücke.* Vienna, Ohandjanianverlag, 1995. 12 հատոր

ԳԵՐՄԱՆԻԱ

Gust, Wolfgang, ed. *Der Völkermord an den Armeniern 1915/16: Dokumente aus dem Politischen Archiv des deutschen Auswärtigen Amts.* Springe, Zu Klampen Verlag, 2005

Lepsius, Johannes. *Deutschland und Armenien, 1914–1918: Sammlung diplomatischer Aktenstücke,* Potsdam-Berlin, Tempel Verlag, 1919

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Bryce, James, and Arnold Toynbee. *The Treatment of the Armenians in the Ottoman Empire, 1915–1916: Documents Presented to Viscount Grey of Fallodon by Viscount Bryce.* Princeton, NJ, Gomidas Institute, 2000

Yeghiayan, Vartkes, ed. *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919–1922: The Armenian-Greek Section.* Glendale, CA, Center for Armenian Remembrance, 2007

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Adalian, Rouben, ed. *The Armenian Genocide in the U.S. Archives, 1915–1918* (microform). Alexandria, VA, Chadwyck-Healey, 1991

- . *Guide to the Armenian Genocide in the U.S. Archives, 1915–1918*. Alexandria, VA, Chadwyck-Healey, 1994
- Sarafian, Ara, ed. *United States Official Documents on the Armenian Genocide*. 3 vols. Boston, MA, Armenian Review, 1993–95
- . *United States Official Records on the Armenian Genocide, 1915–1917*. Princeton and London, Gomidas Institute, 2004

ԼՐԱԳՐԵՐ

- Akşam
Alemdar
Ati
Hadisat
İkdam
İleri
Memleket
Peyam-i Sabah
Renaissance
Sabah
Tercüman-ı Hakikat
Vakit
Yeni Gazete

ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՃԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրքերը, ամսագրերը, թերթերի հոդվածներն ու չիրատարակված ձեռագրերը դասակարգված են ըստ լեզուների և հեղինակների:

ՀԱՅԵՐԵՆ

- Աստուսեան, Արամ, Մեծ ոճիրը, Բոստոն, Պահակ տպագրատուն, 1921
- Ազատեան, Լիպարիտ, Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անջելես, Տպարան Ապրիլ, 1995
- Բրիգեր (կեղծանուն. Գրիգոր Կերկերեան), Յոզղաթի հայասպանութեան վառերական պատմութիւնը, Նյու Յորք, 1980

ԱՆԳԼԵՐԵՆ

- Adalian, Rouben Paul. "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: The United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire." *Journal of Genocide Research* 3, №1 (2001): 31–48
- Ahmad, Feroz. *The Committee of Union and Progress in Turkish Politics, 1908–1914*. Oxford, Clarendon Press, 1969
- Akçam, Taner. *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*. New York: Metropolitan Books, 2006

———. *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide*. London, Zed Publishing, 2004

- . "Guenther Lewy's *The Armenian Massacres in Ottoman Turkey*." *Genocide Studies and Prevention* 3, №1 (April 2008), 111–45
- Aktar, Ayhan. "Homogenizing the Nation; Turkifying the Economy: Turkish Experience of Population Exchange Reconsidered." In *Crossing the Aegean: An Appraisal of the 1923 Compulsory Exchange between Greece and Turkey*, edited by Renée Hirschon, 79–95. New York and Oxford, Berghahn Books, 2003
- Andonian, Aram. *Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed*. Translated and edited by Rita Soulahian Kuyumjian. London, Gomidas Institute and Tekeyan Cultural Association, 2010
- . *The Memoirs of Naim Bey*. 1920. 2nd repr., Newton Square, PA, Armenian Historical Research Association, 1965
- Arai, Masami. "The Genç Kalemler and the Young Turks: A Study in Nationalism." *METU Studies in Developments* 12, №№ 3–4 (1985): 194–244
- Arkun, Aram. "A Preliminary Overview of Armenian-Language Primary Sources Published on the Armenian Genocide." Paper presented at "The State of the Art of Armenian Genocide Research: Historiography, Sources, and Future Directions" conference, Clark University, Worcester, MA, April 2010
- Astourian, Stephan H. "The Road Ahead for Armenian Genocide Studies." Paper presented at "The State of the Art of Armenian Genocide Research: Historiography, Sources, and Future Directions" conference, Clark University, Worcester, MA, April 2010
- Balakian, Grigoris. *Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide, 1915–1918*. Translated by Peter Balakian and Aris Sevag. New York, Alfred A. Knopf, 2009
- Barton, James L., ed. "Turkish Atrocities": *Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915–1917*. Ann Arbor, MI, Gomidas Institute, 1998
- Bessel, Richard. "Functionalists vs. Intentionalists: The Debate Twenty Years On or Whatever Happened to Functionalism and Intentionalism?," *German Studies Review* 26, №1 (February 2003), 15–20
- Bjørnlund, Matthias. "'A Fate Worse than Dying': Sexual Violence during the Armenian Genocide." In *Brutality and Desire: War and Sexuality in Europe's Twentieth Century*, edited by Dagmar Herzog, 16–58. New York, Palgrave Macmillan, 2009
- . "The 1914 Cleansing of Aegean Greeks as a Case of Violent Turkification." *Journal of Genocide Research* 1, №2 (2006), 41–58
- Blokhman, Donald. *The Great Game of Genocide, Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*. Oxford, Oxford University Press, 2005
- Bookman, Milica Zarkovic. *The Demographic Struggle for Power: The Political Economy of Demographic Engineering in the Modern World*. London, Frank Cass & Co., 1997

- Bora, Tanil. "Nationalist Discourses in Turkey." In *Symbiotic Antagonisms: Competing Nationalisms in Turkey*, edited by Ayse Kadioglu and Fuat Keyman. Salt Lake City, University of Utah Press, 2011
- Browning, Christopher R. "The Decision-Making Process." In *The Historiography of the Holocaust*, edited by Dan Stone, 173–97. New York, Palgrave Macmillan, 2004
- Chitjian, Hampartzoum Mardiros. *A Hair's Breadth from Death*. London, Taderon Press, 2003
- Dadrian, Vahakn N. "The Armenian Genocide: An Interpretation." In *America and the Armenian Genocide of 1915*, edited by Jay Winter, 52–102. New York, Cambridge University Press, 2003
- . "Children as Victims of Genocide: The Armenian Case." *Journal of Genocide Research* 5, №3 (September 2003), 421–27
- . "The Convergent Roles of the State and a Governmental Party in the Armenian Genocide." In *Studies in Comparative Genocide*, edited by Levon Chorbajian and George Shirinian, 92–125. London, Macmillan; New York, St. Martin's Press, 1999
- . "Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources." In *Genocide: A Critical Bibliographic Review*, edited by Israel W. Charny. Vol. 2, 77–125. New York, Facts on File, 1991
- Dadrian, Vahakn N. "Documentation of the Armenian Genocide in Turkish Sources." In *Genocide: A Critical Bibliographic Review*, edited by Israel W. Charny. Vol. 2, 86–138. London, Mansell Publishing; New York, Facts on File, 1991
- . "Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications." *Yale Journal of International Law* 14, №2 (Summer 1989), 221–334
- . *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity*. Cambridge, MA, Blue Crane Books, 1996
- . *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. Providence, RI, Berghahn Books, 1995
- . "The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide." *International Journal of Middle East Studies* 18, №3 (August 1986), 311–36
- . "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide." In *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, edited by Richard Hovannissian, 280–310. New York, St. Martin's Press, 1992
- . "Party Allegiance as a Determinant in the Turkish Military's Involvement in the World War I Armenian Genocide." *Hakirah Journal of Jewish and Ethnic Studies* 1, №1 (2003), 57–67
- . "The Pitfalls of a 'Balanced' Analysis: A Response to Ronald Grigor Suny." *Armenian Forum* 1, №2 (Summer 1998), 73–130
- . "The Role of Turkish Military in the Destruction of Ottoman Armenians." *Journal of Political and Military Sociology* 20, №2 (Winter 1992), 257–88.
- . "The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians." *Holocaust and Genocide Studies* 1, №2 (1986), 169–192.
- . *Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict*. New Brunswick, NJ, Transaction Publishers, 1999
- Davis, Leslie A. *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915–1917*. Edited by Susan K. Blair. New Rochelle, NY, Aristide D. Caratzas, 1989
- Davison, Roderic H. "The Armenian Crisis, 1912–1914." *American Historical Review* 53, №3 (April 1948), 481–505.
- Derderian, Katharine. "Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915–1917." *Holocaust and Genocide Studies* 19, №1 (2005), 1–25
- Der Yeghiayan, Zaven. *My Patriarchal Memoirs*. Barrington, RI: Mayreni Publishing, 2002
- Docker, John. "Are Settler-Colonies Inherently Genocidal? Rereading Lemkin." In *Empire, Colony, Genocide: Conquest, Occupation, and Subaltern Resistance in World History*, edited by Dirk Moses, 81–102. New York, Berghahn Books, 2008
- Dündar, Fuat. *Crime of Numbers: The Role of Statistics in the Armenian Question (1878–1918)*. New Brunswick, NJ, Transaction Publishers, 2010
- Ecumenical Patriarchate of Constantinople. *Persecution of the Greeks in Turkey, 1914–1918*. Constantinople [London, Hesperia Press], 1919
- Erickson, Edward. *Ordered to Die: A History of the Ottoman Army in the First World War*. Westport, CT, Greenwood Press, 2001
- Fotiadis, Konstantinos Emm. *The Genocide of the Pontus Greeks by the Turks. Vol. 13, Archive Documents of the Ministries of Foreign Affairs of Britain, France, the League of Nations and S.H.A.T.* Thessaloniki, Herodotus, 2004
- Gaunt, David. *Massacres, Resistance, Protectors: Muslim-Christian Relations in Eastern Anatolia during World War I*. Piscataway, NJ, Gorgias Press, 2006
- Ghusein, Faiz el-. *Martyred Armenia*. New York, Tankian, 1975
- Gürün, Kamuran. *The Armenian File: The Myth of Innocence Exposed*. London, K. Rustem and Weidenfeld & Nicolson, 1985; New York, St. Martin's Press, 1986
- Hanioglu, Şükrü. *A Brief History of the Late Ottoman Empire*. Princeton, Princeton University Press, 2008
- . *Preparation for a Revolution: The Young Turks, 1902–1908*. Oxford, Oxford University Press, 2001
- . *The Young Turks in Opposition*. New York, Oxford University Press, 1995

- Hartunian, Abraham H. *Neither to Laugh nor to Weep: An Odyssey of Faith: A Memoir of the Armenian Genocide*. 3rd ed. Belmont, MA, National Association for Armenian Studies and Research, 1999
- Hirschon, Renée, ed. *Crossing the Aegean: An Appraisal of the 1923 Compulsory Exchange between Greece and Turkey*. New York, Berghahn Books, 2003
- Holquist, Paul. "‘Information Is the Alpha and Omega of Our Work’: Bolshevik Surveillance in Its Pan-European Context." *Journal of Modern History* 69, №3 (September 1997): 415–450
- Hovannisian, Richard, ed. *The Armenian Genocide, Cultural and Ethical Legacies*. New Brunswick, NJ, Transaction Publishers, 2007
- . *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York, St. Martin's Press, 1992
- . *Armenian Karin/Erzurum*. Costa Mesa, CA, Mazda Publishers, 2003
- . *Armenian Van/Vasurakan*. Costa Mesa, CA, Mazda Publishers, 2000
- . *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*. New Brunswick, NJ, Transaction Publishers, 2003
- . *Remembrance and Denial*. Detroit, MI, Wayne State University Press, 1998
- Huttenbach, Henry R. "Towards a Conceptual Definition of Genocide." *Journal of Genocide Research* 4, №2 (2002), 167–176
- Kaiser, Hilmar. *At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915–1917*. In collaboration with Luther and Nancy Eskijian. Princeton, Gomidas Institute, 2002
- Kaligian, Dikran. *Armenian Organization and Ideology under Ottoman Rule: 1908–1914*. New Brunswick, NJ, Transaction Publishers, 2009
- Karpat, Kemal. *Ottoman Population, 1830–1914: Demographic and Social Characteristics*. Madison, University of Wisconsin Press, 1985
- Kennan, George F. *The Other Balkan Wars: A 1913 Carnegie Endowment Inquiry in Retrospect with a New Introduction and Reflection on the Present Conflict*. Washington, DC, Carnegie Endowment for International Peace; Brookings Institution Publications, 1993
- Kieser, Hans-Lukas. *A Quest for Belonging: Anatolia beyond Empire and Nation (19th–21st Centuries)*. *Analecta Isisiana: Ottoman and Turkish Studies*, 97. Istanbul, Isis, 2007
- Kontogiorgi, Elisabeth. "Forced Migration, Repatriation, Exodus: The Case of Ganos-Chora and Myriophyto-Peristaris Orthodox Communities in Eastern Thrace." *Balkan Studies* 35, №1 (1995), 15–45
- Lades, Stephen. *The Exchange of Minorities: Bulgaria, Greece and Turkey*. New York, Macmillan, 1932
- Lemkin, Raphael. *Axis Rule in Occupied Europe*. New York, Carnegie Endowment for International Peace, 1944
- Lewy, Guenter. *The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide*. Salt Lake City, University of Utah Press, 2005
- Marashlian, Levon. *Politics and Demography: Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire*. Toronto, Zoryan Institute, 1991
- McCarthy, Justin. *Death and Exile: The Ethnic Cleansing of Ottoman Muslims, 1821–1922*. Princeton, NJ, Darwin Press, 1995
- . *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*. New York, New York University Press, 1983
- . *Population History of the Middle East and the Balkans*. İstanbul, Isis Press, 2002
- McCarthy, Justin, and Carolyn McCarthy. *Turks and Armenians: A Manual on the Armenian Question*. Washington, DC, Publication of Committee on Education, Assembly of Turkish American Associations, 1989
- McGarry, John. "Demographic Engineering: The State-Directed Movement of Ethnic Groups as a Technique of Conflict Regulation." *Ethnic and Racial Studies* 21, №4 (July 1998), 613–638
- Miller, Donald E., and Lorna Touryan Miller. *Survivors: An Oral History of the Armenian Genocide*. Berkeley, University of California Press, 1993
- Morianan, Suzanne Elizabeth. "The Armenian Genocide and the American Missionary Relief Effort." In *America and the Armenian Genocide of 1915*, edited by Jay Winter, 146–214. Cambridge, Cambridge University Press, 2003
- . "The American Missionaries and the Armenian Question: 1915–1927." PhD dissertation, University of Wisconsin–Madison, 1994
- Morgenthau, Henry. *Ambassador Morgenthau's Story*. Garden City, NY, Doubleday, Page & Co., 1918
- . *United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau, 1913–1916*. Compiled, edited, and introduced by Ara Sarafian. London, Taderon Press with Gomidas Institute, 2004
- Moses, Dirk. "The Holocaust and Genocide." In *The Historiography of the Holocaust*, edited by Dan Stone, 533–55. New York, Palgrave Macmillan, 2004
- Mourellos, Yannis G. "The 1914 Persecutions and the First Attempt at an Exchange of Minorities between Greece and Turkey." *Balkan Studies* 26, №2 (1985): 389–413
- Nalbandian, Louise. *The Armenian Revolutionary Movement: The Development of Armenian Political Parties through the Nineteenth Century*. Berkeley, University of California Press, 1975
- Odian, Yervant. *Accursed Years: My Exile and Return from Der Zor, 1914–1919*. London, Gomidas Institute, 2009
- Orel, Şinasi, and Süreyya Yuca. *The Talat Pasha Telegrams: Historical Fact or Armenian Fiction?* Nicosia, K. Rustem & Brother, 1986
- Papadopoulos, Alexander. *Persecution of the Greeks in Turkey before the European War*. New York, Oxford University Press, 1919

- Riggs, Henry H. *Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoon, 1915–1917*. Ann Arbor, MI, Gomidas Institute, 1997
- Safi, Polat. “The Ottoman Special Organization—Teşkilat-ı Mahsusa: A Historical Assessment with Particular Reference to Its Operations against British Occupied Egypt (1914–1916).” Master’s thesis, Institute of Economics and Social Sciences, Bilkent University, Ankara, Turkey, September 2006.
- Sarafian, Ara. “The Ottoman Archives Debate and the Armenian Genocide.” *Armenian Forum* 2, №1 (Spring 1999), 35–44
- Sarafian, Sara. “The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide.” In *In God’s Name: Genocide and Religion in the Twentieth Century*, edited by Omer Bartov and Phyllis Mack, 209–22. New York, Berghahn Books, 2001
- Schabas, William A. *Genocide in International Law*. London, Cambridge University Press, 2000
- Şeker, Nesim. “Demographic Engineering in the Late Ottoman Empire and the Armenians.” *Middle Eastern Studies* 43, №3 (2007), 46–474
- Semelin, Jacques. *Purify and Destroy: The Political Uses of Massacre and Genocide*. New York, Columbia University Press, 2007
- Shemmassian, Vahram L. “Humanitarian Intervention by the Armenian Prelacy of Aleppo during the First Months of the Genocide.” Unpublished manuscript, n.d.
- Strauss, Scott. “Contested Meanings and Conflicting Imperatives: A Conceptual Analysis of Genocide.” *Journal of Genocide Research* 3, №3 (2001), 349–375
- Suny, Ronald Grigor. “Empire and Nation: Armenians, Turks, and the End of the Ottoman Empire.” *Armenian Forum* 2 (Summer 1988), 17–51
- Suny, Ronald Grigor, Fatma Müge Göçek, and Norman Naimark, eds. *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*. Oxford, Oxford University Press, 2011
- Toynbee, Arnold. *The Western Question in Greece and Turkey: A Study in the Contact of Civilization*. New York, Howard Fertig, 1970
- Üngör, Uğur Ümit. “Geographies of Nationalism and Violence: Rethinking Young Turk ‘Social Engineering.’” *European Journal of Turkish Studies* 7 (2008). <http://ejts.revues.org/index2583.html>
- Winter, Jay, ed. *America and the Armenian Genocide of 1915*. Cambridge, Cambridge University Press, 2003
- Yalman, Ahmet Emin. *Turkey in the World War*. New Haven, Yale University Press, 1930
- Yeghiayan, Vartkes. *British Reports on Ethnic Cleansing in Anatolia, 1919–1922: The Armenian-Greek Section*. Glendale, CA, Center for Armenian Remembrance, 2007
- Yeldan, A. Erinç. “Assessing the Privatization Process in Turkey: Implementation, Politics and Performance Results.” *Global Policy Network*, 12 April 2006. http://www.gpn.org/research/privatization/priv_turkey_en.pdf

Zürcher, Erik. *Turkey: A Modern History*. London, Tauris & Co. Ltd., 2005

ՖՐԱՆՍԵՐԵՆ

Kévorkian, Raymond, ed. “L’extermination des déportés arméniens ottomans dans les camps de concentration de Syrie-Mésopotamie (1915–1916).” *Revue d’histoire arménienne contemporaine* 2 (1998)

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Bihl, Wolf Dieter. *Die Kaukasus-Politik der Mittelmächte. Teil I: Ihre Basis in der Orient-Politik und ihre Aktionen, 1914–1917*. Vienna, Cologne, und Graz, Böhlau, 1974

Captanian, Pailadzo. *1915 Der Völkermord an den Armenien: Eine Zeugin berichtet*. Leipzig, Gustav Kiepenheuer, 1993

Dinkel, Christopher. “Der Einfluss hoher deutscher Offiziere im Osmanischen Reich auf die zum Völkermord and den Armeniern führenden Massnahmen. Ratgeber und/oder Vollzugsgehilfen.” Չիբասարակված ձեռագիր, անսուց անսաթիվ

Kieser, Hans-Lukas. *Der Verpasste Friede: Mission, Ethnie und Staat in den Ostprovinzen der Türkei, 1939–1938*. Zurich, Chronos Verlag, 2000

———. *Vorkämpfer der “neuen Türkei”: Revolutionäre Bildungseliten am Genesee (1870–1939)*, Zürich, Chronos, 2005

Kieser, Hans-Lukas, and Dominik J. Schaller, լսւթ. *Der Völkermord an den Armeniern und die Shoah*. Zürich, Chronos Verlag, 2002

Lepsius, Johannes. *Der Todesgang des Armenischen Volkes: Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges*. Potsdam, Missionshandlung und Verlag, 1919

Mandelstam, André. *Das Armenische Problem im Lichte des Volker und Menschenrechts*. Berlin, G. Stilke, 1931

ԹՈՒՐԿԵՐԵՆ

Akçam, Taner. *İnsan Hakları ve Ermeni Sorunu, İttihat ve Terakki'den Kurtuluş Savaşı*. Ankara, İmge Yayınevi, 1999

———. *1915 Yazıları*. İstanbul, İletişim yayımları, 2010

———. “Soykırım Suçunda Kasıt Unsuru Konusunda Bazı Notlar.” *Birikim* 199 (2005թ. նոյեմբեր), 34–42

Akhanlı, Doğan, լսւթ. *Talat Paşa Davası Tutanakları*. İstanbul, Belge Yayınları, 2003

Aktan, Gündüz. “Bir Şey Söyle de.” *Radikal*, 2007թ. մարտի 22

———. “Rövanş (I).” *Radikal*, 2005թ. նոյեմբերի 29

Aktar, Ayhan. *Türk Milliyetçiliği, Gayrimüslimler ve Ekonomik Dönüşüm*. İstanbul. İletişim, 2006

———. *Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları*. İstanbul: İletişim Yayınları, 2000

- Gedikli, Fethi. "Osmanlı Devletinin kuruluşunun 700. yılında Osmanlı Arşivlerinin Durumu." *Osmanlı Araştırmaları Vakfı*, www.osmanli.org.tr/web/makaleler/017.asp
- Güler, Ali, Suat Akgül. *Sorun Olan Ermeniler*. Ankara, Berikan, 2003
- Gürün, Kamuran. *Ermeni Dosyası*. Ankara, Bilgi Yayınevi, 1988
- Habiçoğlu, Bedri. *Kafkasya'dan Anadolu'ya Göçler*. İstanbul, Nart Yayıncılık, 1993
- Halaçoğlu, Ahmet. *Balkan Harbi Sırasında Rumeli'den Türk Göçleri (1912-1913)*. Ankara, Türk Tarih Kurumu, 1994
- Halaçoğlu, Yusuf. *XVIII. Yüzyılda Osmanlı İmparatorluğu'nun İskan Siyaseti ve Aşiretlerin Yerleştirilmesi*. Ankara, Türk Tarih Kurumu, 1988
- . *Ermeni Tehciri ve Gerçekler (1914-1918)*. Ankara, Türk Tarih Kurumu, 2001
- . *Sürgünden Soykırıma Ermeni İddiaları*. İstanbul, Babiali Kültür Yayıncılığı, 2007
- "Halep Valisi Celal'in anıları." *Vakit*, 1918 j. 10-13
- Hür, Ayşe. "Bu İmha Edilen Kaçınıcı Arşiv." *Radikal*, 2004 j. 19
- İçimsoy, Oğuz. "Özelleştirme uygulamaları ve özelleştirilen kamu kuruluşlarının arşivleri." Զեկուցումը ներկայացվել է Թուրքիայի տնտեսական ու սոցիալական պատմության հիմնադրամի [Türkiye Ekonomik ve Toplumsal Tarih Vakfı] Սեփականչությունը և հաստատությունների արխիվները խմբի քննարկմանը, 1998 j. հոկտեմբեր
- İpek, Nedim. *Rumeli'den Anadolu'ya Türk Göçleri*. Ankara, Türk Tarih Kurumu, 1994
- İslamoğlu, Mustafa. "Şahbabanın Kemikleri Sızlamaz mı?" *Yeni Şafak*, 1999 j. հոկտեմբերի 10
- Kadri, Hüseyin Kazım. *Türkiye'nin Çöküşü*. İstanbul, Hikmet Neşriyat, 1992
- Karaca, Taha Niyazi. *Ermeni Sorununun Gelişim Sürecinde Yozgat'ta Türk Ermeni İlişkileri*. Ankara, Türk Tarih Kurumu 2005
- Karay, R. H. *Minelbab İlelmihrab (Mütareke Devri Anıları)*. İstanbul, İnkilap Kitabevi, 1992
- Karpat, Kemal. *Osmanlı Nüfusu (1830-1914): Demografik ve Sosyal Özellikleri*. İstanbul, Tarih Vakfı Yayınları, 2003
- Kaymaz, İhsan Şerif. *Musul Sorunu*. İstanbul, Otopsi Yayınları, 2003
- Kocahanoğlu, Osman Selim. *İttihat ve Terakki'nin Sorgulanması ve Yargılanması*. İstanbul, Temel Yayınları, 1998
- Kutay, Cemal. *Birinci Dünya Harbinde Teşkilat-ı Mahsusa ve Hayber'de Türk Cengi*. İstanbul, Ercan, 1962
- . *Etniki Etarya'dan Günümüze, Ege'nin Türk Kalma Savaşı*. İstanbul, Boğaziçi Yayınları, 1980
- Mardin, Şerif. *Jön Türkler ve Siyasi Fikirleri*. İstanbul, İletişim Publications, 1983
- McCarthy, Justin. *Müslümanlar ve Azınlıklar*. İstanbul, İnkilap, 1998
- . *Ölüm ve Sürgün*. İstanbul, İnkilap, 1998
- Menteşe, Halil. *Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe'nin Anıları*. İstanbul, Hürriyet Vakfı Yayınları, 1986
- Mil, A. "Umumi Harpte Teşkilat-ı Mahsusa." *Vakit*, 1933 j. փետրվարի 2-1934 j. ապրիլի 18
1934. Mutlu, Şamil. *Osmanlı Devletinde Misyoner Okulları*. İstanbul, Gökkubbe, 2005
- Nesimi, Abidin. *Yılların İçinden*. İstanbul, Gözlem Yayınları, 1977
- Orhonlu, Cengiz. *Osmanlı İmparatorluğunda Aşiretlerin İskanı*. İstanbul, Eren, 1987
- Ortaylı, İlber. *İmparatorluğun En Uzun Yüzyılı*. İstanbul, Hil Yayınları, 1983
- . *Son-İmparatorluk Osmanlı*. İstanbul, Tımas Yayınları, 2006
- Özdoğan, Günay Göksu. "Turan'dan "Bozkurt"a: Tek Parti Döneminde Türkçülük." İstanbul: İletişim Yayınları, 2006
- Özdemir, Hikmet. *Salgın Hastalıklardan Ölümler, 1914-1918*. Ankara, Türk Tarih Kurumu, 2005
- Özdemir, Hikmet, Kemal Çiçek, Ömer Turan, Ramazan Çalık, Yusuf Halaçoğlu. *Ermeniler: Sürgün ve Göç*. Ankara, Türk Tarih Kurumu, 2004
- Özdemirci, Fahrettin. "Arşivlerimizin Kurumsal Yapılanma Gereksinimleri." Ասկարայի համալսարան, Լեզուների, պատմության և աշխարհագրության ֆակուլտետ, http://80.251.40.59/humanity.ankara.edu.tr/odemirci/diger_sayfa_metinleri/fo/ars_kurumsl_yap_grksnm.pdf
- "Osmanlı Arşivi'nin Belgeleri Kâğıt Yapılsın Diye SEKA'ya Gönderildi." *Yeni Şafak*, 2000 j. հունիսի 17
- Öztürk, Kazım. *Türk Parlamento Tarihi: TBMM-II. Dönem, 1923-1927*. h. 3. Ankara, TBMM Vakfı Yayınları, No. 3, 1995
- Pamukciyan, Kevork. "Zamanlar, Mekânlar, İnsanlar." *Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar*. h. 3. İstanbul, Aras Yayıncılık, 2003
- Parmaksızoğlu, İsmet, խմբ. *Ermeni Komitelerinin İhtilal Hareketleri ve Besledikleri Emeller*. Ankara, DSİ Basım ve Foto, 1981
- Şahin, Necmettin (Sılan). *Said Halim ve Mehmet Talat Paşalar Kabinelerinin Divanı Ali'ye sevkleri hakkında Divaniye Mebusu Fuat Bey merhum tarafından verilen takrir üzerine berayı tahkikat kura isabet eden Beşinci Şube tarafından icra olunan tahkikat ve zabt edilen ifadatu muhtevidir. Meclisi Mebusan, Numara: 521, Devrei İntihabiyye 3, İctima 5*. İstanbul, İstanbul Meclisi Mebusan Matbaası [1334] 1918
- Sakarya, İhsan. *Belgelerle Ermeni Sorunu*. Ankara, Genel Kurmay Başkanlığı, 1984
- Şakir, Ziya. *Yakın Tarihte Üç Büyük Adam*. İstanbul, Ahmet Sait, 1946
- Samih, Aziz. *Büyük Harpte Kafkas Cephesi Hatıraları*. Ankara, Genel Kurmay Yayınları, 1934

- Sarihan, Zeki. *Kurtuluş Savaşı Günlüğü: Mondros'tan Erzurum Kongresine*, 4 հատոր (hh. 1-3, Ankara, Öğretmen Yayınları, 1986; h. 4, Ankara, Türk Tarih Kurumu, 1996)
- Saydam, Abdullah. *Kırım ve Kafkas Göçleri (1856-1876)*. Ankara, Türk Tarih Kurumu, 1997
- Selçuk, İlhan. *Yüzbaşı Selehattin'in Romanı*. h. 1. İstanbul: Remzi Kitabevi, 1993
- Şimşir, Bilal. *Rumeli'den Türk Göçleri*. 3 հատոր, Ankara, Türk Tarih Kurumu, 1988
- Söylemezoğlu, Galip Kemal. *Canlı Tarihler, Galip Kemal Söylemezoğlu Hatıraları, Atina Sefareti (1913-1916)*. İstanbul, Türkiye Yayınevi, 1946
- Süslü, Azmi. *Ermeniler ve 1915 Tehcir Olayı*. Van, Yüzüncü Yıl Üniversitesi Rektörlüğü Yayını, Yayın, No. 5, 1990
- Taçalan, Nurdoğan. *Ege'de Kurtuluş Savaşı Başlarken*. İstanbul, Milliyet Yayınları, 1970
- Toprak, Zafer. *Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950): Milli İktisat-Milli Burjuvazi*. İstanbul, Tarih Vakfı Yurt Yayınları, 1995
- Toros, Taha. *Ali Münif Bey'in Hatıraları*. İstanbul, İsis Yayınları, 1996
- Toros, Taha. "Eski Nafia Nazırı Ali Münif Yegane'in Hatıraları, İstibdattan Cumhuriyet'e." *Akşam*, 1955թ. հոկտեմբերի 26-դեկտեմբերի 21
- Tunaya, Tarık Zafer. *Türkiye'de Siyasal Partiler*. 3 հատոր, İstanbul, Hürriyet Vakfı Yayınları, 1986
- Tunçay, Mete, Erden Akbulut. *Türkiye Halk İştirakiyon Fırkası (1920-1923)*. İstanbul, Sosyal Tarih Yayınları, 2007
- Tunçel, Harun. "Türkiye'de İsmi Değiştirilen Köyler." *Fırat Üniversitesi Sosyal Bilimler Dergisi* 10, № 2 (2000), 23-34
- Yalçın, Hüseyin Cahit. *Siyasi Anılar*. İstanbul, Türkiye İş Bankası Kültür Yayınları
- Yalman, Ahmet Emin. *Yakın Tarihte Gördüklerim ve Geçirdiklerim*. h. 1, 1888-1918. İstanbul, Yenilik Basımevi, 1970
- Yerasimos, Stefanos. *Milliyetler ve Sınırlar, Balkanlar, Kafkasya ve Orta-Doğu*. İstanbul: İletişim Yayınları, 1994
- Yıldız, Ahmet. "Ne Mutlu Türküm Diyebilene": *Türk Ulusal Kimliğinin Etno-Seküler Sınırları (1919-1938)*. İstanbul, İletişim Yayınları, 2001
- Zürcher, Erik Jan, Juúp. *İmparatorluktan Cumhuriyete Türkiye'de Etnik Çatışma*. İstanbul, İletişim Yayınları, 2005

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՑԱՆԿ

- 10 տոկոսի կարգ xx, xxi, 11, 62, 63, 310-312, 314-317, 320, 327, 343, 552
- 1909 թ. Կոտորածներ 162
- 5-10 տոկոսի սկզբներ xviii, xxi, 61-63, 285, 302-304, 314-315, 317, 358, 408, 417, 552
- Աղանա 5, 11, 20, 26, 45, 46, 48, 50, 51, 55, 64-67, 71-74, 76, 78, 95, 131-133, 145, 162, 169, 176, 177, 187, 189, 190, 219, 220, 223, 224, 226, 232, 234-236, 238, 240, 241, 259, 276, 279, 283, 286, 288, 289, 291, 292, 294, 295, 298-302, 312, 315, 322, 324, 325, 340, 343-345, 349, 363, 368, 369, 384, 391, 393, 398, 405, 406, 426, 428-430, 441-443, 445-451, 454, 455, 461-463, 465-469, 475-477, 495, 503, 532, 533, 535, 538, 540
- Ազազ 335, 343
- Ազատում տեղահանությունից 292, 295, 305, 306, 363, 370, 462
- Ազգաբնակչության փոխանակման համաձայնություն xxviii, 38, 80, 84
- Ազգաբնակչության փոխանակում x, xx, 50, 81-84, 88, 99, 100, 120
- Ազգաբնակչության փոխանակում/փոխանակություն 80
- Ազգաբնակչության քարտեզ 40, 45
- Ազգային անվտանգության սպառնալիք xii, 86, 158, 284, 337
- Ազգային մեծ ժողով 13, 31, 229, 505, 558
- Ազգային պատկանելություն 41, 53, 293
- Ազգային-կրոնական խմբեր 6, 42, 62, 85, 186, 412, 551
- Ազիզ 17, 478, 487,
- Ալի (Զեթիքայա) Մյունիֆ 466
- Ալի Մյունիֆ քեյ (Ալի Մյունիֆ Զեթիքայա) 25, 26, 350, 467
- Ալի Սուաթ 18, 247
- Ախեթերիմ
- Ականատեսի պատմություններ xxix, 152, 227, 238, 249, 255, 273, 333, 386, 389, 434, 481, 488, 498, 508, 510, 511, 513, 530
- Անադոլու Էսաթ (Էսաթ Ուրաս) 18, 19, 23, 246, 538
- Անադոլու Ռիզա 432, 433, 508, 509
- Անադոլու Ռիֆաթ Չալքբա 26, 27
- Աղջիկներ 238, 358, 367, 384-386, 388-390, 393, 394, 398-401, 404, 408-410, 412, 419
- Անթրալի գործողություն xv
- Անուանություն 41, 293, 394, 398
- Այլն Հյուր 28
- Անատոլիա xv-xxi, xxiii-xxv, xvii, xviii, 8, 11, 29, 33, 37-42, 44, 54-57, 61, 61, 68, 70, 73-76, 80, 87, 88, 98, 104, 109-114, 116, 117, 119, 122, 127, 129, 139, 141, 152, 153, 157, 158, 161-163, 165, 171, 175, 181, 192, 208, 219, 221, 228, 237, 241, 254, 282, 284, 304, 316, 351, 372, 374, 387, 405, 407, 409, 417, 420, 434, 448, 449, 459, 460, 461, 487, 488, 494, 498, 515, 529, 530, 541, 551, 552, 559
- Անկարայի կառավարություն 14
- Անհամաձայնություն քննադատման հրամաններին 350
- Անունների թուրքականացում 67
- Անպաշտոն խողովակը xxviii, 88, 388
- Անվտանգության ընդհանուր վարչության (ԱԸՎ) փաստաթղթեր xxiii, 4, 84, 90-93, 103, 128, 129, 132-135, 179, 182, 184, 185, 187, 190, 192-194, 210, 216, 217, 226, 231, 232, 236-239, 246, 248, 259, 281, 290-298, 300, 305, 306, 308-310, 314, 315, 320, 328, 330, 337, 340-342, 344-347, 351, 353, 365-367, 369, 374, 381-383, 396-400, 404, 405, 407, 453, 454, 456, 461, 462, 464-466, 473, 474, 482, 484, 489, 495, 500, 503, 513-516, 518, 532, 534, 536-538, 549, 550
- Անտանտ 24, 87, 126, 139, 194, 197, 527, 528
- Աշխատանքային գումարտակներ 90, 121, 122, 142, 172, 180, 189, 191, 206, 350, 377, 452, 489
- Ապացույցների ոչնչացման վերաբերյալ վկայություններ 15, 25
- Առաջին համաշխարհային պատերազմ xx, 14, 28, 37, 43, 44, 48, 68, 82, 111, 113, 114, 119, 123, 127, 157, 158, 181, 309, 385, 409, 416, 520, 575
- Առգրավում 88, 193, 264, 404, 406
- Ավազակություն 196, 198, 490, 518, 538
- Արաբներ xviii, 47, 56, 59, 353
- Արդարացումներ 198, 472

Արիֆ Ջեմալի 228

Արխիվներ xv, xxv-xxvii, xiv, xivi, xviii, 6, 7, 14, 23, 27, 28, 30-35, 110, 158, 160, 169, 208, 209, 221, 251, 260, 319, 354, 411, 435, 438, 467, 468, 492, 493, 503, 512, 521, 524, 529, 538, 543, 546, 556, 557, 559, 571, 575

Արհեստավորներ 309, 351, 374, 421, 460, 461

Արձանագրություններ xv, xxv-xxvii, xxx, xxxvii, xxxviii, xiv, xivi-xiviii, 6-9, 12, 13, 17, 27, 32, 33, 44, 46, 47, 66, 67, 144, 203, 242, 246, 247, 251, 270, 286, 322, 324, 331, 357, 408, 410, 421, 425, 457, 520, 556, 557, 558

Արտագաղթ 38, 70, 76, 84, 85, 90, 92-98, 105, 113-116, 118, 119, 121, 128, 148, 256, 406

Բաք 332, 334, 335, 338, 343

Բալկանյան պատերազմներ xv-xvii, 14, 37-40, 66, 80, 82, 85, 105, 106, 110, 111, 113, 120, 122, 162, 551

Բալկաններ x, xvi, xviii, 70, 85, 110, 111, 123, 126, 225, 229, 239, 506

Բահաեղին Շաքիր 142, 171, 188, 228, 229, 242, 245, 246, 250, 252, 303, 309, 510, 511

Բաղդադի պայմանագիր 163

Բայար, Ջելալ 86, 89, 113, 114

Բանդիտներ կամ ավազակախմբեր / հրոսակախմբեր 89, 92, 122, 175, 176, 181-185, 187, 188, 191, 201, 205, 206, 212, 218, 241, 252, 263, 271, 272, 276, 278, 386, 481, 485, 487, 506, 511-516, 518, 520, 538

Բեդի Նուրի 245

Բեդրի բեյ 120

Բեթման-Հոլվեզ (Գերմանիայի կանցլեր) 111, 168, 221, 223, 225, 256, 258, 259, 323, 330, 334, 335, 338, 343, 349, 352, 353, 362, 363, 370, 376, 377, 379, 380, 385, 407, 431, 489, 491, 494, 523, 524, 527

Բիթլիս xxiv, 5, 10, 11, 19, 20, 43, 45, 51, 53, 54, 64-66, 71, 73, 76, 176, 177, 179, 187, 189, 190, 192, 194, 198, 201, 204, 205, 214-217, 232-235, 237, 240, 279, 280, 283, 286, 289-292, 294, 295, 298, 299, 309, 310, 312, 322, 324, 325, 329, 360, 365, 366, 369, 381, 384, 391, 393, 406, 407, 426, 428-430, 441-443, 445, 446, 447, 450, 451, 455, 461, 462, 476, 477, 479, 487, 496, 514, 532, 534, 535, 536

Բյուզե, Օյզե 220, 224, 446, 466, 467, 469

Բնակչության հաշվումներ 40, 41

Բնաջնջման հրամաններ 36, 242, 246, 248, 552, 572,

Բնաջնջման նախապատրաստություն 73, 339

Բնաջնջում xi, xiii, xix-xxi, xxv, xxix-xxxi, xxxiv, xxxvi, xxxvii, 18, 36, 39, 118, 123, 153, 157, 158, 161, 162, 165, 166, 169, 171-173, 175, 198, 203, 228, 230, 241-244, 246-248, 250-252, 254, 255, 259, 260, 262, 281, 284, 285, 303, 313, 327, 337-339, 344, 348, 350, 352, 356-359, 371, 380, 384, 387, 412, 416, 417, 420, 458, 490, 506, 510, 521, 522, 552, 574-576

Բողոքական հայեր 460, 462, 464

Բողոքականներ 306, 310, 368, 458, 459, 460, 464-466, 538

Բոսնիացիների վերաբնակեցում 62, 70

Բուլղարացիներ 82, 93-95, 97, 99, 106, 117, 120, 125, 184, 513

Բուլղարիա xxviii, 29, 38, 80-83, 94, 106, 117, 123, 124, 164, 178, 496

Բոնաբարություն 130, 255, 385-387

Բոնագրավում 87, 420, 429, 434

Բոնագրավված զույք 420

Բոնի մահմեդականացում 359, 374, 376, 378, 379, 394

Բոնություն և ահաբեկում x, xiv, xxviii, xxxi-xxxiii, xxxv, xxxvi, 33, 64, 70, 76, 80, 85-89, 92, 93, 102, 104, 105, 107, 110, 119, 121-123, 127-131, 141, 158, 199, 206, 248, 356, 362, 377, 378, 384, 385, 387, 389, 393, 412, 471, 473, 477, 559

Բրայս, Ջեյմս 492

Բրիտանիա 25, 49, 83, 109, 111, 112, 139, 162, 163, 213, 225, 226, 339, 505, 557, 559, 576, 579

Բրուզե, Ֆերնանդ ix

Գալիպոլի 87, 105, 116, 149, 197

Գաղտնիություն xxix, 5, 39, 537

Գերմանացիներ 17, 86, 95, 169, 183, 188, 214, 223, 226, 227, 251, 252, 259, 262, 272, 306, 321, 330, 334, 338, 363, 367, 370, 377, 380, 385, 386, 404, 459, 460, 463, 465, 471, 488, 198, 523, 526, 527, 531

Գերմանացիների ու ամերիկացիների դիտարկումներ 122, 252, 330, 378

Գերմանիա xix, 17, 18, 34, 73, 86, 87, 107, 109, 111, 114, 115, 126, 127, 131, 152, 153, 162-165, 168, 169, 172, 200, 201, 220, 223-225, 229, 245, 251, 255, 256, 258, 259, 261-263, 280, 319, 320, 323, 332, 338, 343, 349, 352, 357, 360-363, 365, 370, 371, 375-380, 386, 388, 395, 400, 401, 407, 431, 434, 459, 460, 462, 464, 466, 467, 488, 491, 493, 494, 498, 501-503, 522-524, 526, 527, 556, 558, 559, 575, 576, 579, 582

Գևորգյան, Ռեյմոնդ 327, 329, 333, 335, 338, 339, 343, 357, 376

Գյուրալի, Ջիյա 15, 16, 513

Գնում 41, 264, 476

Գույք 41, 44, 48, 51, 71, 78, 82, 84, 87, 91, 92, 94, 122, 138, 148-152, 256, 264, 268, 286, 289, 297-299, 301, 312, 319, 393, 420-430, 432, 433, 435-449, 451-457, 463, 472-476, 480, 481, 196, 545

Գույքի բռնագրավում 87, 122, 420

Գվինեթ, Արթուր 434

Գրիգոր Ասգույթ 345

Դամասկոս 5, 11, 45, 52, 53, 72, 132, 133, 165, 189, 197, 232, 240, 283, 285, 291, 292, 294, 295, 297-302, 307, 310-313, 317, 318, 323, 333, 336, 340-342, 345, 346, 348, 349, 359, 372, 374, 376, 377, 381, 384, 388, 393, 394, 396, 408, 429, 442, 454, 461, 477, 485, 488, 522, 525-527, 532, 534, 536, 547, 550

Դաշնակցություն կոմիտե 363, 371, 386, 388, 497, 501

Դասալիքներ 180, 181, 187, 191, 198, 204, 206, 211, 212, 218, 220-223, 274

Դասալքություն 201

Դատավարություն xxvii, 7-9, 23, 248, 250, 275, 277, 287, 385, 474, 489, 490, 496, 507-509, 511, 512

Դ ա տ ա վ ա ր ո թ յ ո Ւ ն է ր ի արձանագրություններ 7

Դեյվիս, Լեզլի U. 352, 389

Դեր Ջոր xxii, xxxvii, 18, 20, 55-57, 173, 236, 247, 250, 298, 300, 311-313, 318, 319, 323, 327-330, 333, 334, 337, 339, 342-353, 359, 371, 374, 385, 387, 395, 396, 399, 408, 495, 504, 536, 539, 548, 576

Դիակների վերացում/հեռացում 250

Դիմադրություն 101, 158, 200, 274, 442, 526

Դիյարբեքի xxiii, xxiv, 5, 11, 19, 20, 45, 46,

51, 53-58, 61, 64, 65, 70, 76, 95, 121, 128, 131-133, 141, 169, 176, 177, 180, 187, 189, 190, 192, 201, 216, 217, 232, 234, 235, 244, 245, 250, 256, 259, 260-265, 279, 281, 283, 286, 287, 289-292, 294-300, 302, 309, 311, 312, 320, 322, 324, 325, 344, 347, 348, 360, 365, 366, 369, 381, 384, 391, 393, 398, 406, 426, 428-430, 445-448, 450-452, 454, 455, 461, 462, 465, 467, 476, 477, 485-487, 500, 501, 511, 514, 532-536, 540, 541, 544, 576

Դիյարբեքի միջադեպ 256

Դիսք, Արատ xiii

Դիսք, Հրանտ xii, xiii

Դյորթոլ 73, 74, 216, 219, 220, 221, 224, 226, 235, 238, 288

Դյուտար, Ֆուաթ 304, 460

Դոդդ, դր. Վիլյամ U. 493, 524

Ետպատերազմյան ռազմական տրիբու-նալ 7

Ետպատերազմյան ռազմական տրիբու-նալի դատավարություններ 7

Երեխաներ xxxvii, 20, 47, 78, 104, 142, 143, 190, 191, 193, 207, 249, 288, 310, 335, 354, 355, 357, 358, 362, 364, 372, 384, 385, 386, 388-412, 417, 418, 499, 522, 523, 545

Երեխաների ուժացումը 310, 354, 358, 384, 390, 395, 400, 403

Երեխաների տեղահանություններ 191, 193, 288, 354, 355

Երկնոտ մեխանիզմ 35, 39, 85-87, 90, 108, 121, 230, 241, 242,

Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի ար-խիվ 480, 556

Երվանդ Օտյան 313, 374, 378, 461

Ջանդերս, Լիման Ֆոն 498, 502, 503

Ջեյթոն 71, 72, 74, 197, 216, 221-228, 233, 235, 236, 238, 239, 285, 372, 453

Ջենքեր 90, 105, 172, 175, 186, 198, 200, 201, 204, 206, 208, 222, 226, 233, 234, 235, 502, 516

Ջեքի 339, 346, 347, 350, 351, 353

Ջեքի, Սալիհ 333, 347, 387

Ջիսաթափում 172

Ջիքթ, Հանս Ֆ. Լ. 17, 471

Ջորախավաթ 175, 183, 189, 207, 213-215, 513, 515

Ջտում 34, 38, 166

Էդինս Բադրի բեյ 474, 476

Էթնիկ զտում ix, x, xix, xxx, 31, 85, 86, 158, 284, 556
 Էսվեր փաշա xvi, 8, 56, 80, 141, 166, 198, 206, 234, 400, 405, 450, 451, 471, 487, 499, 526, 529, 533
 Էսաթ Ուրաս (Ահմադ Էսաթ) 18, 19, 23, 246, 538
 Էվերեթ, Վիլյամ xix
 Էրզնեսկոն xii
 Էրզրում 5, 10, 11, 19, 20, 45, 51, 53, 54, 59, 60, 61, 64-66, 73, 76, 131-133, 141, 169, 176-180, 182, 187, 189-192, 194, 201, 213, 214, 216, 217, 229, 232, 234, 235, 237-240, 252, 259, 279, 283, 286, 289-291, 294, 308-310, 312, 322, 324, 325, 329, 351, 353, 360, 365, 366, 369, 391, 393, 397, 409, 426, 428-430, 442, 445-448, 450, 451, 455, 461, 462, 465, 477, 481, 488, 509-511, 514, 515, 518, 540
 Էֆենդի, Ալի Ֆուադ 309
 Էֆենդի, Էֆկալիդիս 118
 Էֆենդի, Թահսին 484
 Էֆենդի, Հիդայեթ 496
 Էֆենդի, Միխայի Օհանես 273
 Էֆենդի, Յովանաթի 473
 Էֆենդի, Նեզլակո Չոլակով 117
 Էֆենդի, Նեջաթի 511
 Էֆենդի, Շուայիթ 483
 Էֆենդի, Պարսամյան 282
 Էֆենդի, Սալիհ 484
 Էֆենդի, Օսման Նուրի 23
 Թալեաթ xxiv, 6, 17, 21, 46, 54, 58, 63, 73-75, 77, 78, 86, 107-109, 132, 136, 137, 139-141, 143, 148, 162, 166, 168-170, 174, 182, 190, 194, 210, 217, 218, 220, 229, 230, 232, 234, 235, 238-241, 248, 250, 252, 254, 255, 258-267, 271, 276-283, 287, 289, 293, 295, 296, 298-302, 306, 310, 328, 329, 337, 340, 344, 347-351, 360, 365, 367-370, 372, 380, 382, 394, 399, 400, 446, 449, 454, 460, 462-470, 474, 475, 477, 479, 482-489, 495, 496, 499, 500-502, 508, 515-518, 529, 530, 532, 533, 535, 538, 540, 541, 543, 546-549
 Թալեաթ փաշա xii, xxix, 10, 13, 15, 17, 19, 20, 23, 45, 46, 57-59, 77, 90, 95, 99, 100-102, 118, 126, 127, 139, 143, 148, 157, 169, 171, 179, 180, 190, 194, 210, 217, 223, 228, 239, 241, 252, 261, 264, 266, 271, 272, 275-277, 284, 287, 295, 298, 299, 301, 302, 316, 320, 322, 324, 338, 347, 349, 366, 367, 377, 382, 394, 408, 432, 445, 459, 463, 468, 474, 479-481, 485, 486, 491, 496, 499, 515, 517, 525, 528, 530-533, 535, 536, 540, 546, 548
 Թալեաթ փաշա, Մեհմետ 13
 Թալեաթի զեկույց 107, 162
 Թալեաթի հրամանները xxix, 19, 194, 248, 463-465, 468, 486, 502
 Թահսին (ժանդարներիայի սերժանտ) 490
 Թահսին քեյ 213, 214
 Թեոտակաս (հույն ներկայացուցիչ) 112
 Թիլբեյան, Մինաս 345
 Թոյնքի, Առնոլդ 110, 111, 121, 122, 127, 321, 492
 Թուրք և հույն ազգաբնակչությունների փոխանակում xx, 81-84
 Թուրքականացում 67
 Թուրքիայի Հանրապետության վարչապետական արխիվ xivi, 228, 254, 260, 458, 472, 498, 520, 549, 556
 Թուրքիայի հույներ 113
 Ժխտում xii, xiii, 379
 Ժողովրդագրական քաղաքականություն xvii-xxi, xxiii, xxv, 38, 157, 162, 284, 285, 302, 551, 552
 Իդլիթ 332, 341
 Իզեթ փաշա, Ահմեդ 18, 23, 241
 Իզմիր 25, 48, 82-84, 89, 100, 102, 104, 108, 109, 112, 113, 118, 120, 121, 135, 140, 368, 458, 490, 498, 499, 500-503
 Իթթիհադականներ. Տես Միություն և առաջադիմություն կոմիտե (ՄԱԿ) xi, ziv, 17, 25, 35, 161, 165, 166, 211, 228, 237, 250, 284, 285, 359, 410, 411, 416-418, 449, 456, 488, 519, 552
 Ինքնություն x, xxxii, 54, 59, 77, 138, 179, 180, 265, 380, 402-404, 422, 506, 531, 534, 536
 Իսլահիյե 314, 315, 334, 335, 343, 369, 475, 488
 Իսմաիլ Համի Դանիշմենդ 469
 Իսմեթ Ինյույու 236
 Իտալիա 49, 78, 107, 162
 Իրաք xx, 47, 63, 230, 236, 285, 304, 317, 350, 369, 487, 517, 529
 Լեմկին, Ռաֆայել xxxii-xxxiv, 354, 355

Լևի, Գյունտեր 460, 504-507
 Լիթեն, Վիլհելմ 330, 334
 Լոզանի պայմանագիր x
 Լրված գույքի հատկացում զինվորականությանը 449-452
 Խոտվություններ 74, 177, 183, 199, 204, 207, 211, 213, 220, 224, 231, 236, 256, 279, 505, 506, 578
 Ծածկագրերի վարչություն xxiii, xviii, 3, 4, 44, 70, 116, 118, 123, 175, 181, 183, 186, 198, 209, 213, 216, 226, 260, 266, 278, 313, 339, 342, 346, 440, 451, 467, 472, 480, 481, 484, 490, 492, 507, 512, 513, 517, 519, 537, 539, 557, 578
 Ծրագրում ու նախապատրաստումը 71, 73, 140, 158, 191, 339, 540, 541
 Կաթոլիկ հայեր 259, 306, 324, 325, 460-463
 Կաթոլիկներ 255, 291, 306, 310, 325, 458-460, 463-466, 538
 Կամավոր արտագաղթ 84, 113, 114
 Կանայք 143, 207, 363, 388, 394, 398, 400, 404, 493, 545
 Կանանց ու երեխաների վաճառք 388
 Կանխամտածվածություն 36
 Կաշառք 367, 418, 473, 484
 Կառավարելիություն xvii, 358, 359
 Կարավնեզելիս, Գերմանոս 143
 Կեղծիք 34
 Կենտրոնական կառավարության քաղաքականություն 128, 129, 131, 252, 269
 Կտորածներ ix-xiv, xix-xxii, xxviii-xxx, 10, 23, 25, 35, 36, 80, 82, 86, 104, 109, 123, 153, 162, 164, 237, 241, 246, 248, 251, 252, 255, 256, 260, 262, 265, 279, 280, 303, 315, 327, 337, 339, 346-348, 351, 363, 386, 459, 478, 480, 485, 487, 504, 505, 508, 552, 574
 Կրթություն 20, 32, 44, 46, 47, 50, 192, 374, 390, 391, 394-397, 406, 408
 Կրոնափոխություն/հավատափոխություն xxxvii, 21, 357-360, 362-372, 374, 375, 377-383, 411
 Հարերմաս, Յուրգեն xxxi
 Հայաջողու, Յուսուֆ 436, 438, 453, 460, 473
 Հայեալ xxi, xxii, xxiv, xxxvii, 5, 9, 11, 20, 45, 51, 64, 66, 72, 73, 76, 87, 95, 128, 131-133, 138, 169, 170, 189, 190, 197, 198, 201, 216, 217, 220, 223, 224, 226, 227, 232, 234-241, 248, 259, 276, 283, 285, 286, 288-295, 297-299, 301, 302, 306, 307, 310-325, 328-332, 334-344, 346, 348-350, 352, 353, 365, 366, 369, 370, 374, 375, 377, 379, 381, 384, 388, 391, 393-396, 398, 400, 401, 405, 407, 408, 426, 428, 429, 430, 434, 437, 438, 440, 441, 442, 443, 445-448, 450, 451, 453-455, 457, 461-463, 465, 467, 475-477, 484-486, 489, 521, 531-541, 546, 547, 549
 Հալիլ քեյ 486, 487
 Հալիլ Ռեջաի 209, 211, 251, 266
 Հալիմ, փաշա Սաիդ 13, 107, 110, 178, 179, 480
 Հաղորդակցություն xxviii, xxii, 4, 5, 12, 22, 35, 42, 43, 52, 69, 84, 95, 149, 181, 188, 189, 216, 349, 451, 466, 476, 515, 517
 Համակենտրոնացման ճամբարներ 336
 Համաճարակներ 334, 520, 539, 543
 Հայ երիտասերի բաշխում 288, 357, 389, 391, 396, 398, 399
 Հայ զինվորներ 188, 189, 191, 198, 218, 371, 461, 489
 Հայ կանանց վաճառք 388, 389
 Հայ հեղափոխական դաշնակցություն 173, 199, 205, 207, 363, 371, 388, 492, 493, 497, 501
 Հայերի արտաքսում 39, 153, 349
 Հայերի գույք/ունեցվածք 51, 71, 78, 151, 256, 268, 301, 420-457, 472-476, 480, 481
 Հայերի կոտորած xi, xxi, 246, 248, 265, 303, 480, 485, 487, 504, 505
 Հայերի պաշտպանություն 549
 Հայերի սպանալիք 70, 86, 158, 164, 284, 337, 350, 351, 403, 416, 417, 551
 Հայերի տեղահանություն xxviii, 6, 13, 23, 25, 26, 34, 45, 51, 82, 86, 119-121, 153, 157, 167, 168, 170, 203, 210, 212, 220, 221, 229, 230, 240, 243, 246, 256, 259, 260, 268, 269, 281, 284-286, 289, 304, 309, 311, 321, 322, 324, 350, 358, 364, 380, 417, 438, 440, 448, 453, 460, 473, 475-477, 482, 483, 487, 491, 494, 498, 503, 504, 508, 510, 523, 549
 Հայկական բարենորոգումներ xvi, xviii, xix, xxi, xxii, 62, 157, 158, 162, 163, 166, 172, 174, 214, 284
 Հայկական բարենորոգումների համաձայնություն xv, xx, 165, 351

Հայրի քեյ 400
 Հայրիյե Թալեաթ (Bafra) diacrit) xxix, 470
 Հանտեր (գերմանացի միսիոներ) 526
 Հաշիմ, Հյուսեյին 22
 Հայի Ալի Օղլու (Բուրդ Ալո) 271, 272, 275, 276, 278
 Հասան քեյ 490
 Հավրան 52, 78, 311, 329
 Հատուկ կազմակերպություն (ՀԿ) xvi, xlv, 7, 8, 14, 15, 88, 167, 183, 191, 207, 248, 252, 458, 472, 504, 505, 508–513, 516, 519
 Հարան 341, 376, 543
 Հարբորդ, Ջեյնս 408, 409
 Հարդեգ, Լոյթվեդ 377, 522
 Հեղաշրջում 32, 487
 Հեղաշրջումներ, ռազմական xxxii, 31, 171
 Հեռագրերի ոչնչացման հրահանգները 18, 20, 21, 392
 Հետաքննություն 9, 13, 27, 30, 48, 50, 51, 53, 55, 65, 112, 129, 143, 180, 187, 191, 205, 210, 218, 222, 224, 243–245, 247, 248, 259, 263, 264, 266, 268, 271–273, 280, 281, 283, 302, 315, 382, 383, 387, 400, 410, 411, 436, 458, 471–474, 476–485, 487, 489, 490, 511, 529, 531, 532, 534, 535, 538
 Հինգերորդ բաժանմունք xlvii, 12, 12, 203, 480, 557
 Հիվանդություններ xvii, xxi, 279, 316, 327, 336, 349, 384, 416, 520, 539, 542, 544–550
 Հիքմեթ Բայուր xi, 186
 ՀԿ xvi, xlv, 8, 14, 15, 23, 87, 89, 120, 183, 188, 189, 196, 228, 245, 252, 485–487, 504–513, 516–520
 ՀԿ անդամների քրեական հետաքննություններ 8, 485, 511, 512
 ՀԿ ստորաբաժանումներ 188, 196, 245, 504, 506, 509–512, 516, 518–520
 Հյուսամտին Ջինդորուք 31
 Հյուսեյին Ջահիթ (Յալչն) 245, 470
 Հչյակյան կուսակցություն 174
 Հոլորոսթ xxxv, xxxvi, 327, 356
 Հոհեյնի-Լանգեյնբուրգ, իշխան Էռնստ Վիլհելմ 258, 259, 467, 491
 Հովսեփ Բշտիկյան 222
 Հուման, Հանս 126, 127
 Հոյներ xix–xxi, xxiii, xxv, xxviii, xxx, 43, 48, 49, 50, 70, 71, 78, 80, 82–84, 86,

88, 89, 92, 94, 95, 98, 99, 106, 107, 109, 110, 112, 113, 115–123, 126, 127, 129–137, 139–145, 147–153, 156, 157, 180, 187, 189, 190, 206, 284, 285, 325, 375, 448, 452, 551, 552
 Հոյների տեղահանություն 78, 82, 107, 119, 121, 126, 135, 136, 139, 140, 143, 148
 Հունաստան xix, xx, xxviii, 38, 70, 80, 83, 84, 87, 96, 100–103, 106, 109, 111–119, 123, 126, 127, 129, 130–132, 134, 139, 140, 164, 552
 Հուրշիթ Չալքլեա 26
 Հոֆման (Գերմանիայի հյուպատոս) 220, 319, 320, 363, 377, 395, 401, 528
 Հոետորարանություն 208
 Հրեաներ xxxvii, 77, 172, 325
 Հրեաների տեղահանություն 77, 172
 Հրոսակախմբեր 89, 92, 122, 175, 176, 181–185, 187, 188, 191, 201, 205, 205, 218, 241, 252, 263, 386, 481, 511–518, 538
 Չերքակալություններ xxi, 26, 27, 88, 129, 208, 230, 235, 270, 271, 491, 492, 498, 500–503
 Ճամբարներ xxvii, 34, 320, 327, 329, 334–336, 339–345, 375, 539
 Ճամփորդելու արգելքներ 235
 Ճանապարհներ xi, 11, 122, 179, 180, 201, 250, 280, 291, 293, 296, 339, 347, 349, 350, 370, 388, 458, 530, 548
 Մաարա 332, 338, 341
 ՄԱԿ xvi, xvii, xix, xxi, xxii, xxv, xxvii–xxx, xlv, 7, 15, 15, 18, 19, 25, 26, 35, 37–39, 62, 73, 89, 106, 120, 133, 142, 144, 169, 173–175, 183, 219, 230, 241, 242, 244, 248, 250, 277, 303, 338, 340, 354, 355, 376, 414, 418, 420, 490, 501, 504, 506–509, 512, 513, 515, 517
 Մակեդոնիա 81, 83, 84, 88, 99, 114
 Մահեր 42, 43, 334, 336, 337, 520, 527, 528
 Մահմեդական բուրժուազիա 439, 445, 451
 Մահմեդական փախստականներ 63, 75, 88, 91, 136, 144, 145, 146, 239, 423, 539, 540, 543, 546
 Մահմեդական փախստականների տեղավորում 75, 144, 145, 146, 239, 423, 540
 Մամուրա 334, 343
 Մարաշ II, 21, 45, 46, 51, 55, 57, 59, 64, 66, 72, 74, 131, 145, 169, 221, 222, 227, 228, 232, 234–236, 238–241, 279, 283, 286,

287, 289–292, 294, 298, 299, 301, 302, 312, 322, 324, 326, 340, 343, 365, 366, 369, 377, 381, 384, 391, 393, 398, 426, 428–430, 440, 442, 443, 445, 446, 448, 450, 451, 454, 455, 461–463, 465, 466, 476, 477, 485, 495, 503, 532, 534–536, 538, 555
 Մարդահամար 39, 41, 42, 62, 312, 316–318, 337, 341, 342, 344–346,
 Մարդահամար և քաղաքականություն 41, 337
 Մարդահամարի և վիճակագրական տրվյալների 39, 312, 316–318
 Մարդասիրական օգնության արգելք 365
 Մարմինների հեռացում/վերացում 265, 334
 Մեթոդներ/միջոցներ xiii, xix, xxviii, xxix, xxxiv, 4, 18, 30, 38, 57, 70, 73, 85, 87, 90, 107, 110, 120–122, 165–169, 186, 187, 192, 193, 207, 208, 217, 220, 246, 261, 315, 316, 348, 356, 357, 374, 378, 412, 417, 452, 486, 532
 Մեծ Բրիտանիա 163, 225, 226, 505, 557, 559
 Մեհմեդ Էմին քեյ, Հազիֆ 24, 249
 Մեղուտ քեյ 242
 Մենթեշ, Հալիլ xxix, 86, 89, 113, 166, 229, 377, 526
 Մենջիթ 341
 Մեսթան, Իսմաիլ 245
 Մեսթեն 329, 330
 Մերժման/միտման քաղաքականություն xxxi, 304, 327, 458
 Միատարրացում xvii, xxvii, 37, 38, 157, 161, 171, 551
 Միացյալ Ազգերի Կազմակերպության կոնվենցիա 354, 355
 Միդիաթ, Շուքրու 15, 16
 Մինաս Թիլբեյան 345
 Միություն և առաջադիմություն կոմիտե (ՄԱԿ) xvi–xxviii, xiv, 15, 35, 37, 122, 159, 272, 303, 384, 386, 414, 472
 Միսիոներ 153, 357, 361, 363, 365, 380, 385, 393, 401, 404–407, 462, 493, 523, 524, 526, 530, 532
 Միսիոներների դպրոցներ 404–406
 Մյուսթազ 221, 222, 227
 Մշակութային ցեղասպանություն xxxiii, 354, 355

Միլեոսնդություն 357, 378, 379
 Միսուլ xxiii, xxiv, 5, 11, 20, 45, 54, 60, 66, 121, 180, 185, 189, 192, 201, 232, 240, 241, 245, 262, 283, 286, 287, 292, 295–299, 301, 302, 307, 309–312, 317–320, 323, 328, 340, 344, 345, 349, 352, 365, 366, 369, 371, 372, 374, 381, 384, 388, 391, 393–395, 404, 408, 429, 435, 442, 443, 447, 455, 461, 489, 490, 496, 500, 501, 514, 533, 534, 536, 540, 546, 548
 Միրթեման, Յոհաննես 87, 168, 252, 371, 379
 Միրզենթաու, Հենրի xxix, 107, 112, 120, 121, 122, 152, 153, 168, 223, 227, 323, 352, 362, 363, 371, 386, 389, 401, 406, 432–434, 457, 470, 489, 524, 525, 526, 529
 Մունրուջ 332, 343
 Մուստաֆա (ժանդարներիայի հրամանատար) 251
 Մուստաֆա Քեմալ (Աթաթյուրք) 25, 236, 470,
 Մուրատ Բարդալեյի 298, 299, 320, 470
 Մուրզա քեյ «Բուրդ» 488,
 Մուղղություն xx, xxii, xxvii, 90, 144, 157, 161, 172, 173, 175, 183, 248, 250, 254, 370, 392, 413, 433, 459, 460, 472, 507
 Մքքարթի, Ջաթին 39, 208, 286, 316–318
 Յագոֆ, Գոթլիբ ֆոն 251, 493
 Յալչն (Հյուսեյին Ջահիթ) 470
 Յակուփ Ջեմիլ 486, 487
 Յանգ, Գրեգ 525
 Յոզդաթ 8, 18, 19, 56, 208, 209–212, 234, 244, 247, 251, 265–269, 287, 288, 444, 446, 451, 543, 544, 560
 Յոզդաթ, խոտկություններ կամ ապստամբություններ 208, 210, 212
 Յոզդաթի դատավարություն 8, 18, 211, 244, 247, 251, 265, 267, 268
 Յուսոֆ Ռիզա 188, 508, 509, 517
 Նազիմ, դր. 15, 16, 120, 121, 170, 250
 Նաթան, Էդուարդ 73,
 Նաիլ քեյ 246
 Նաիմ քեյ 332, 338
 Նախնական միջոցառումներ 186
 Նեջաթի քեյ 19, 224
 Նեջաթի Էֆենդի 511
 Նեսիմի, Աբիդին 244, 245

Նեսիմի, Հյուսեյին 244
 Ներգաղթ Թուրքիա 37, 39, 40, 50, 62, 66, 82, 91, 99, 110, 111, 114, 123, 289, 294, 301, 309, 426, 436, 440-443, 452, 453, 455, 543
 Ներքին բաշխում
 Ներքին գործերի նախարարության Անվտանգության ընդհանուր վարչության գրասենյակ xxiii, xiv, 4, 5, 84, 90, 91, 92, 93, 103, 128, 129, 132-137, 141, 143, 145-147, 149, 150, 153, 175-177, 179, 182, 184, 185, 187, 190, 192-194, 210, 216, 217, 226, 231, 232, 236, 237-239, 246, 259, 281, 290-298, 300, 305, 306, 308-310, 314, 315, 320, 328, 336, 337, 340-342, 344-347, 351, 353, 365-367, 369, 374, 381-383, 396, 397-400, 404, 405, 407, 453, 454, 456, 461, 462, 464-466, 473, 474, 482, 484, 489, 495, 500, 503, 513, 514-516, 532, 534, 536-538, 549, 550, 574
 Ներքին գործերի նախարարության Ցեղային և ներգաղթային հարցերի կարգավորման վարչություն Տևս ՏՆԿԿ (Ցեղային կարգավորման վարչություն) xiv, II, 20, 40, 46, 47, 51, 53-55, 59, 60, 62, 65, 71-73, 76, 82, 94-100, 111, 120, 124, 125, 138, 141, 142, 144, 145, 147, 148, 150-152, 289, 294-297, 302, 304, 305, 312, 313, 320, 329, 336, 339, 341, 345, 349, 372, 391, 393-399, 407, 422, 426-431, 435-438, 440-452, 455, 463, 476, 480, 540-544, 546, 549
 Ներքին գործերի նախարարության փաստաթղթերը 253, 254, 281, 351, 424, 458, 476, 483, 495, 507, 520, 531, 542
 Ներքին ցրում / բաշխում 304, 308
 Նևգաթ բեյ 489, 490
 Նշանակման վայր 55, 235, 258, 294, 296, 298, 304, 312, 359, 492, 516
 Նորոգում կուսակցություն 15, 16
 Նուարեթ 246, 247, 387
 Նուրեդին բեյ 273, 274
 Նուրի բեյ, Արդուլահադ 248
 Շաքիր բեյ, Բահանդին 188, 219, 228, 229, 242, 268, 510
 Շաֆթանլի Ամերո 487
 Շելենդորֆ, Բրոնսարտ ֆոն 226
 Շուքրու բեյ 16, 313, 473
 Շուքրու Քայա 82, III, 120, 313, 314, 329, 340, 454

Ոճիրների / հանցանքների հետաքննություն 9, 210, 247, 248, 387, 487
 Ոճրագործությունների հետաքննության հանձնախումբ 243, 244
 Ռչ-թուրք մահմեդականներ xvii, xviii, 38, 52, 54, 67, 414
 Ռնչացված կամ արխիվներից կորած փաստաթղթեր 23, 30, 34
 Ռրբ երեխաներ 395
 Ռրբանոցներ xxxiii, 331, 380, 384, 389-391, 394-401, 403, 405-408, 527
 Ռրոշումներ xv, xvii, 34, 35, 41, 72, 84, 96, 158, 161, 167, 169, 170, 183, 188, 191-195, 229, 232, 241, 246, 269, 284, 341, 350, 357, 372, 382, 415, 421, 424-426, 438, 440, 471, 476, 533
 Ռոմացման այլընտրանք 357, 412
 Ռոմացում xxxiv, xxxvii, 52, 54, 55, 57, 75, 310, 313, 337, 354, 356-360, 371, 372, 374-376, 378, 379, 384, 387, 390-392, 394-396, 398, 400, 402-404, 407, 411-414, 417, 552
 Ռննցվածքի / գույքի առգրավում 88, 193, 264, 404, 406
 Ռրիշություն 414
 Ռրֆա xxiv, 5, 21, 45, 55-57, 59, 64, 66, 72, 75, 76, 132, 169, 189, 232, 234-236, 240, 241, 250, 259, 279, 283, 286, 290-292, 295-300, 302, 309-312, 314, 320, 326, 340, 341, 344, 346, 365, 366, 368, 369, 374, 381, 384, 391, 393, 394, 398, 408, 426, 428, 440-443, 446, 448, 450-452, 454, 461, 462, 476, 477, 485, 511, 525, 530, 532, 534-536, 538, 540, 541, 543
 Չափանիշները 67, 414, 415, 423, 424, 495, 497, 498
 Չերքեզ Ահմեդ, Սիրոզու 485, 486
 Չերքեզ Հասան Անյա (Չերքեզ բեռի Հասան) 9, 376, 378, 522, 523
 Չիթճյան, Համբարձում Մարտիրոս 402, 403
 Չիլինկիրյան, Ռուբեն, բժ. 259, 269, 270, 275
 Պաշտոնական վարկած 35, 208, 210, 221, 436, 505, 553
 Պառակտումներ 173
 Պարպումը 80, 90, 95, 102, 133, 142, 152, 238, 239, 276, 343, 375
 Պետական քաղաքականություն 390, 395, 412, 551

Ջավիթ բեյ 229
 Ջարսոն, Ջեսի Բ. 223, 227, 323, 353, 375, 377, 378, 405, 434, 457, 489, 538, 539
 Ջեղա Բայար (բեյ) 86, 89, 113, 114
 Ջեղա բեյ 9, 223, 494, 521
 Ջեմալ Ազմի 19, 117, 180, 249, 360, 385, 386, 487
 Ջեմալ փաշա 71, 74, 77, 78, 165, 196, 227, 235, 236, 239, 240, 295, 296, 309, 310, 359, 374, 376, 444, 485, 486, 488, 522, 523, 525, 529, 538, 539,
 Ջեմալ Օղուզ 271-275
 Ջևղեղ բեյ 184, 237, 360
 Ջրախեղղ անելն իբրև ոչնչացման միջոց 58, 385
 Թաղջո 335
 Թագմական խողովակները 266
 Թագմական հեղաշրջում 31, 174
 Թագմական տրիբունալ xiv, 10, 22, 92, 234, 272, 274, 275, 277, 386, 473, 474, 477-479, 482-484, 486, 489, 494, 539
 Թահմի բեյ 89, 108, 109, 499, 501, 502
 Թաջո 343
 Թաս ուլ Այն 329, 333, 335, 344, 349, 548, 549
 Թասիզմ 412, 413, 415
 Թաքա 329, 330, 333, 341, 345
 Թեշադ Հիքմետ 104
 Թեշիդ Արիֆ փաշա 241, 242
 Թեշիդ բեյ, դր. 19, 121, 245, 261, 262, 360
 Թեսեսի Նազիմ 250
 Թեֆիկ Հալիդ Քարայ 24
 Թիզա, Հենրի 393, 530, 531
 Թիզա, Ահմեդ 432, 433
 Թիզա, Յուսուֆ 188, 508, 509, 517
 Թյուրեր, Վալտեր 223, 225, 323, 332, 334, 335, 343, 349, 352, 353, 370, 377, 379, 388, 407, 488
 Թուսատան xvi, 49, 75, 77, 123, 139, 162-164, 171, 175-179, 182-187, 193, 207, 208, 213, 214, 225, 237, 285, 308, 417, 505, 552
 Մարիթ 19, 216, 245, 309, 310, 360, 456
 Մահակ Խարայան 222
 Մանիտարական միջոցառումներ 543
 Մարիդամիշ 34, 195-198, 204, 212, 219, 284
 Մելահաթին 471

Մեռական բնություն 385
 Մերթիա xxviii 38 83 110 164
 Մերոքյան, Սարգիս xiii
 Միրիա xx, xxii, xxiii, xxv, 52, 63, 74, 163, 230, 236, 278, 285, 303, 304, 309, 314, 317, 323-325, 327, 328, 331, 334-337, 339, 343, 349-351, 358, 359, 369, 371, 374, 376, 461, 498, 522, 526, 528, 529, 535
 Մյուլեյման, Նազիֆ, 264, 469
 Մյուլեմնզոլու (Գալիբ Քեմալի բեյ) 83, 100
 Մով xxi, 122, 316, 327, 335, 336, 350, 376, 384, 520, 523, 527-529
 Մոցիա-տեստական տվյալներ 44
 Մոցիական ինժեներություն xviii
 Մուադ բեյ, Ալի 333, 352, 353
 Մուլթան Արդուլահամիդ 303
 Մուամրուլ xxvi, xxvii, xxix, xxxvii, 3, 7-15, 19, 23, 25, 27, 29, 30, 34, 38, 41, 42, 49-51, 70, 77, 78, 81, 88, 90, 92, 97, 101-103, 105, 108, 110, 112-115, 116, 117, 120, 126, 130, 133, 134, 136, 142, 143, 153, 163, 164, 170, 175, 176, 178-180, 182, 185, 186, 188, 194-197, 200, 203, 205, 209, 210, 213, 219, 220, 223-225, 228-230, 237, 243, 245, 246, 248, 249, 252, 255, 256, 258, 259, 264-271, 274, 275, 284, 285, 287, 288, 299, 321, 323-325, 331, 340-342, 345, 347, 351, 363, 366, 371, 372, 374-376, 387, 390, 392, 395, 396, 399, 400, 401, 409, 434, 445, 449, 450, 464, 469, 476, 479, 482, 484, 485, 489, 490-498, 501, 502, 507, 508, 514, 516, 519, 520, 523-525, 527-539, 541
 Մուամրուլի ռազմական տրիբունալ xxvii, xxix, 7, 8, 13, 15, 27, 38, 188, 237, 246, 265, 270, 271, 275, 287, 387, 482, 496, 507, 508, 520
 Վան 5, 10, 19, 20, 45, 53, 63, 64, 66, 73, 76, 103, 107, 121, 164, 165, 168, 176, 177, 179, 182-185, 187, 189, 190, 192-194, 196, 199-201, 205, 213, 214, 216-218, 220, 223-225, 230, 232-237, 240, 245, 256, 262, 276, 279, 286, 289-291, 310, 311, 319, 321, 329, 360-362, 365, 366, 369, 385, 391, 393, 428-431, 442, 450, 461, 462, 485, 513-515, 523
 Վան դեր Ջի, Ալֆրեդ 121
 Վանզենհայմ, Հանս ֆոն 107, 164, 165, 168, 220, 223-225, 245, 256, 262, 361, 362, 385, 431, 523, 584
 Վեհիպ փաշա 9, II, 242, 248, 249, 489

Վենիզելոս (Հունաստանի վարչապետ), , 83, 99, 100, 101, 114, 118, 126, 130–132
 Վերաբաշխում 440
 Վերաբնակեցման տարածքներ 11, 55, 58, 311, 408
 Վերաբնակեցման քաղաքականություն 61, 67, 69, 75, 436, 439
 Վերապրածներ 343, 357–359, 387, 403
 Վերթ (Գերմանիայի հյուպատոսության քարտուղար) 363, 375, 376
 Վերջնական որոշում 96, 228, 533
 Վիճակագրություն 41, 303, 304, 317, 318, 320, 345, 359, 393, 435
 Վոլֆ-Մաթերնիխ, Պոլ Գրաֆ 527
 Տատրյան, Վահագն Ն. 10, 33, 34, 127, 159, 208, 211, 272
 Տեղական իշխանություններ 55, 76, 111, 185, 194, 220, 232, 241, 256, 258, 275, 297, 299, 329, 441, 446, 450, 455, 465, 507
 Տեղահանություն ix, x, xiii, xx, xxv, xx-viii, xxix, xxx, xxxvii, 6, 9, 13, 18, 25–27, 34–36, 44, 45, 50, 51, 69, 74–77, 79, 81, 82, 86, 87, 90, 93, 101, 102, 109, 119–121, 241, 245–247, 251, 252, 255, 259, 260, 262, 263, 269, 281, 282, 284, 286, 288–296, 298, 299, 304–306, 308, 311, 315, 319, 321–324, 328, 332, 338, 339, 344–346, 348, 350, 358, 359, 362–365, 367, 369, 370, 371, 374, 377, 379, 380, 382, 384–387, 390, 391, 396, 402, 420, 423, 428, 429, 431, 438–440, 448, 453, 454, 456, 458–468, 471–473, 475, 477, 482–485, 487, 489–500, 502–505, 508, 510, 520, 523, 527, 539, 546, 552, 554
 Տեղահանությունների կազմակերպում 170
 Տեղահանությունների նախապատրաստում 140, 193, 384
 Տեղահանություններից ազատումը xxxvii, 305, 306, 363
 Տեղանքները ցույց տվող քարտեզներ 45, 342
 Տեսույներ 435, 436, 466, 467, 544, 546
 Տեր Եղիայան, Զավեն 389, 491
 Տիգրան Քելեզյան (Տիրան Քելեքյան) xxi
 Տստեսական բոլկոս 106, 108, 109
 Տստեսական տվյալներ 44
 Տրապիզոն 5 8 11 19 20 28 45 46 48 49 51 53 56 64 65 71 76 95 98 109 128 131 136 144 145 150 177 179 180 188 189 192 216 217 232

234 243 245 246 248 249 276 279 281 283 286 290 292 294 299 302 309 312 322 324 325 360 362 365 366 369 381 384 387 391 393 398 400 426 428 430 440 442 445 448 450 451 455 461 462 476 477 487 514 516 518 532 534 536 540 541
 Տրապիզոնի նահանգային արխիվ 28
 Տեղասպանության դրոշապատճառներ 412
 Տեղասպանության կառուցվածքային տարր 358
 Տեղասպանության ոճրի կանխարգելման ու պատժի ՄԱԿ-ի կոնվենցիա 254
 Տեղասպանության քաղաքականություն xxx 315 357
 ՏԹԱԶ 29 32
 ՏՆԿՎ (Տեղային կարգավորման վարչություն) xiv 11 20 40 46 47 51 53 55 59 60 62 65 71 72 73 76 82 94 100 111 120 138 144 145 151 289 294 297 304 305 312 313 319 320 329 336 339 341 349 372 391 393 399 407 422 426 431 437 438 440 431 437 438 440 453 455 463 476 480 542 546 582 585
 Փամուկ, Օրհան xii
 Փաստաթղթեր xv xxii xxiii xxv xxvii xxx xxxvii xxxviii xiv xlvii 3 7 9 10 12 19 21 36 44 48 49 52 58 61 65 69 70 74 77 84 86 90 92 107 112 113 117 118 123 124 127 130 134 136 144 147 148 157 160 161 175 177 183 186 191 193 194 198 203 205 207 208 210 213 216 219 221 225 231 233 234 243 246 247 253 254 260 266 268 271 275 276 278 279 281 286 293 298 299 304 304 308 313 316 319 322 324 328 332 336 339 349 350 352 354 357 358 360 372 379 381 384 387 390 400 401 420 424 427 428 435 437 440 444 453 456 458 461 462 468 469 472 476 479 480 482 484 487 490 492 494 498 500 503 505 507 510 512 514 516 519 521 529 531 537 539 541 542 549 553 558 559 570
 Փաստաթղթեր պարունակող արխիվներ xv, xxv–xxvii, xiv, xivi, xiviii, 6, 7, 14, 23, 27, 28, 30–35, 110, 158, 160, 169, 208, 209, 221, 251, 260, 319, 354, 411, 435, 438, 467, 468, 492, 493, 503, 512, 521, 524, 529, 538, 543, 546, 556, 557, 559, 571, 575
 Փաստաթղթերի վաճառք 29
 Փաստաթղթերի վերացում/ոչնչացում 13 15 19 21 27 29 32 35
 Փարիզի Խաղաղության կոնֆերանս 114
 Փափազյան, Վահան 205

Փերթևն Դեմիրիան (Փերթև փաշա) 89 212
 Փոխադրամիջոցներ 40 134 339
 Քազիմ բեյ, Հյուսեյին 378
 Քազիմ Կարաբեքիր 409
 Քաթմա 329 330 335 343
 Քաղաքական դրոշապատճառներ 74 418
 Քաղաքական մտահոգություններ 74
 Քաղաքացիական պատերազմ 208 285 286
 Քամիլ փաշա, Մահմուդ 199 201 205 403
 Քամուրան Գյուրյուն 472
 Քայա, Շուքրու 82 111 120 313 314 320 329 336 340 341 437 454 540 541 546 547
 Քելեկյան, Տիգրան (Տիրան Քելեկյան) 303 304
 Քենալ 12 18 19 211 247 265 269 477 478
 Քենալի բեյ, Գալիբ (Սյոյլեմեզօղլու) 83 100 101
 Քենան բեյ 245
 Քլարք, դր. (ամերիկացի միսիոներ) 363
 Քյոո (կոյր) Նուրի 489
 Քյոո Ալի Իսասան բեյ 25
 Քյույուկ Թալեթ 15
 Քոնյա 5 29 46 51 55 56 60 61 63 66 70 71 73 75 78 95 128 131 134 140 145 147 169 170 189 224 227 228 232 234 235 259 276 283 291 295 301 302 305 308 322 324 325 340 345 347 363 367 371 381 384 395 398 400 408 428 442 448 451 453 454 461 462 465 484 486 492 497 499 501 518 524 532 534 536 540 549 550
 Քուշուրաշի Էլռեֆ xvi, xvii, 86, 87, 89, 108, 114
 Քուրդ Ալո 271, 272, 275, 276, 278

Քուրդ Ալոյի ավազակախումբը 271, 276, 278
 Քրդեր xviii 46 47 53 62 75 185 214 217 218 271 279 519 551
 Քրդերի վերաբնակեցում 54 62
 Քրիստոնյա x–xiii, xv–xix, xxiii–zzv, xxvii, 38, 44, 47, 48, 51, 52, 63, 70, 73, 86, 87, 89–91, 94, 97, 100, 103, 104, 111, 118, 121, 126, 157, 168, 185, 189, 194, 214, 245, 258, 260–263, 325, 344, 358, 363, 374, 390, 413, 414, 417, 466, 485, 518, 524, 551, 552
 Օգնություն 74, 193, 278, 303, 328, 331–333, 344, 386, 394, 447, 458, 499, 520, 523–529, 531, 534, 535, 537, 539, 540, 548
 Օգնություն տեղահանվածներին 328, 331–333, 344, 394, 458, 520, 523–529, 531, 534, 535, 537, 548
 Օսման Նուրի Էֆենդի 23
 Օսմանյան Խորհրդարան xxix, 12, 13, 118, 203, 431, 432, 558
 Օսմանյան պատգամավորների պալատ xiv, 13, 113, 249, 485, 526
 Օսմանյան պատերազմ 203, 311, 507, 531
 Օրհան Քուլօղլու 31
 Ֆալիհ Ռիֆքի Աթայ 470
 Ֆենսի, Հասան xii, 244
 Ֆեյզի բեյ 487
 Ֆերիթ բեյ 490
 Ֆիզիկական ոչնչացում xxxiii, xxxvii, 355, 387, 412
 Ֆինանսավորում 505
 Ֆուադ Էրդեն 486
 Ֆուաթ Գյուլդար 304, 460
 Ֆրանսիա ix, 85, 97, 125, 162, 163, 226

